 34 Եւ էր Եսաւ ամաց քառասնից, և առ
 իւր կին զՅուզիթ դուստր Բէկերայ Գե-
 տացուոյ, և զՄասեմաթ դուստր Ելով-
 35 մայ Խեւացուոյ: Եւ զառնացուցանէին
 զԻսահակ և զԹերեկա:

ԳԼ ԻԷ

1 Եւ եղև իբրև ծերացաւ Իսահակ,
 և վատեցին աչք նորա ի տեսանելոյ,
 կոչեաց զԵսաւ զորպի իւր զերէց և ա-
 սէ ցնա, Որդեակ իմ. և նա ասէ ցնա,
 2 Ահաւասիկ եմ: Եւ նա ասէ ցնա, Ահա-
 շտակ ես ծերացեալ եմ, և ոչ գիտեմ
 3 զօր վախճանի իմոյ. Արդ առ գու զգոր-
 ծի քո՝ գաղեզն և զկապարճս, և ել
 4 ի գաշտ և որսա ինձ որս. և արա ինձ
 խորտիկս որպէս և ես սիրեմ, և բեր
 մատ ինձ զի կերայց, և օրհնեցէ:

զքեզ անձն իմ մինչև և մեռեալ իցեմ:
 5 Եւ լուաւ Թերեկա զի խօսէր Իսահակ
 ընդ որդւոյ իւրում. ցնաց Եսաւ ի գաշտ
 որսայ որս ³հօր իւրում:
 6 Եւ խօսեցաւ Թերեկա ընդ Յակոբայ
 որդւոյ իւրում և ասէ, Ահա լուայ ես
 ի հօրէ քումնէ, զի խօսէր ընդ կզրօր
 7 քում և ասէր, Բեր ինձ որս և արա
 ինձ խորտիկս, զի կերայց և օրհնեցից
 զքեզ առաջի Տեառն մինչև և մեռեալ
 8 իցեմ: Եւ արդ, որդեակ իմ, լուր ինձ,
 9 որպէս ես պատուիրեմ քեզ. Գնա գու
 ի խաչն, և առ ինձ անտի երկուս ուլս
 փափուկս և ընտիրս, և արարից ցնո-
 սա խորտիկս հօր քում որպէս և սիրէ:
 10 Եւ մատուցես հօր քում և կիրիցէ. զի
 օրհնեցէ զքեզ ⁴հայր քո՝ մինչև և մե-
 11 սեալ իցէ: Եւ ասէ Յակոբ ցմեռեկա
 մայր իւր, Եզրայր իմ Եսաւ՝ այր թաւ-
 12 է, և ես լերկ. Գուցէ չօչախիցէ զիս
 հայր իմ, և լինիցիմ առաջի նորա իւ-
 րև արհամարհոտ, և ամիցեմ ի վերայ
 13 իմ անէծս և ոչ օրհնութիւն: Եւ ասէ
 ցնա մայրն իւր, Յիմ վերայ անէծքն այն,
 որդեակ. բայց միայն լուր ձայնի իմում
 14 և երթ ամ ինձ: Գնաց և առ ամ մօր
 իւրում. և ⁵արար խորտիկս, որպէս և
 15 սիրէր հայր նորա: Եւ առեալ Թերեկայ
 զպատմուճանն զաղնիւ որդւոյ իւրոյ ե-
 րիցու՝ որ կայր առ նմա ի տան, զգե-
 16 նոյց Յակոբայ որդւոյ իւրում կրտսերոյ:
 Եւ զուրեման սպուց ի բաղուկս նորա,
 և ի վերայ մերկոյ պարանոցի նորա:
 17 Եւ ետ զխորտիկն և զհացն զոր արար
 ի ձեռս Յակոբայ որդւոյ իւրոյ:
 18 Եւ տարաւ հօր իւրում և ասէ, Հայր
 իմ. և նա ասէ, Աւասիկ եմ. և ասէ,
 19 Ո՞վ ես գու, որդեակ: Եւ ասէ Յակոբ
 ցնայրն, Ես եմ Եսաւ անգրանիկն քո.
 արարի որպէս և խօսեցար ընդ իս. արի
 նիստ և կեր յորսոյ իմնէ, զի օրհնեցէ
 20 զիս անձն քո: Եւ ասէ Իսահակ ցորգին
 իւր, Ձի՛ է զի վաղվաղակի գտեր, որ-
 դեակ. և նա ասէ, որպէս պատրաս-
 21 տեաց Տէր ⁶Աստուած առաջի իմ: Եւ
 ասէ Իսահակ ցՅակոբ, Մօս եկ և չօ-
 չափեցից զքեզ, որպէս, եթէ գնւ ի-
 22 ցես որպի իմ Եսաւ, թէ ոչ: Մատեաւ
 Յակոբ առ Իսահակ հայր իւր, և չօչա-

¹Եբր. Արբաճամու հօր ²Եբր. բարեկամ

³Եբր. և բերել ⁴Յեբր. պատե ⁵Եբր. արար մայր նորա ⁶Եբր. Աստուած քո

փեաց զնա եւ ասէ, Չայնդ՝ ձայն Յա-
 23 կորայ, եւ ձեռքդ՝ ձեռք Յաւաւայ: Եւ ոչ
 ծանկաւ զնա. զի էին ձեռք նորա իւր-
 24 րեւ զձեռան Յաւաւայ եղբոր իւրոյ թաւ.
 25 Եւ օրհնեաց զնա, եւ ասէ, Դո՞ւ ես որ-
 26 զի իմ Յաւաւ. եւ նա ասէ, Ես եմ: Եւ
 ասէ, Մատո ինձ եւ կերայց յորտոյ քում-
 մէ, որդեակ, զի օրհնեացէ զքեզ անձն
 իմ. առ մատոյց նմա եւ կերաւ. եւ ե-
 26 բեր նմա զինի, եւ արբ: Եւ ասէ ցնա
 Իսահակ հայր իւր, Մօտ եկ եւ համբու-
 27 րեա զիս, որդեակ: Եւ մատեաւ համ-
 բուրեաց զնա. եւ առ զնոտ հանդերձից
 նորա, եւ օրհնեաց զնա եւ ասէ, Ահա
 հոտ որդւոյ իմոյ իբրեւ զհոտ անգոյ լիոյ
 28 զոր օրհնեաց Տէր: Եւ ասցէ քեզ Աս-
 տուած ի յօգոյ երկնից եւ ի սարարտու-
 թենէ երկրի, եւ բաղմութիւն ցորենոյ
 29 եւ զինւոյ. Եւ ծառայեսցեն քեզ ազգք,
 եւ երկիր սպազցեն քեզ իշխանք. եւ ե-
 զկես տէր եղբոր քում, եւ երկիր սպազ-
 ցեն քեզ որդիք՝ չոր քո. որ անիծանի-
 ցէ զքեզ՝ անիծեալ լիցի, եւ որ օրհնեա-
 ցէ զքեզ՝ օրհնեալ լիցի:
 30 Եւ եղև յետ գաղարկոյն Իսահակոյ
 յօրհնելոյ անտի զՅակոբ զօրդի իւր, իւր-
 րեւ ել Յակոբ յերեսաց Իսահակոյ հօր
 իւրոյ, եւ եկն Յաւաւ եղբայր նորա յոր-
 31 տոյ: Արար եւ նա խորտիկս, եւ մատոյց
 հօր իւրում, եւ ասէ ցնայ իւր, Յարի-
 ցէ հայր իմ եւ կերիցէ յորտոյ որդւոյ իւ-
 32 րոյ, զի օրհնեացէ զիս անձն քո: Եւ ա-
 սէ ցնա Իսահակ հայր իւր, Ո՞վ ես դու.
 Եւ նա ասէ, Ես եմ որդին քո անդրա-
 33 նիկ Յաւաւ: Եւ զարմացաւ Իսահակ զար-
 մացումն՝ մեծ յոյժ, եւ ասէ, Իսկ այն
 ո՞վ էր որ որսացաւ ինձ որս, եւ երևր
 մատոյց, եւ կերայ յամենայնէ մինչչեւ
 քո եկեալ էր, եւ օրհնեցի զնա, եւ ե-
 34 զիցի օրհնեալ: Եւ եղև իբրեւ լուաւ Ն-
 սաւ զբանսն՝ Իսահակայ հօր իւրոյ, ա-
 զազակեաց ի ձայն մեծ գաննացեալ յոյժ,
 եւ ասէ ցնայրն իւր, Օրհնեա սրբ եւ
 35 զիս, հայր: Եւ ասէ նա, Եկն եղբայր քո
 ննկուութեամբ եւ առ զօրհնութիւնս քո:
 36 Եւ նա ասէ, Յիրաւի կոչեցաւ անուսն
 նորա Յակոբ, զի այս երկինս խարեաց
 զիս. առ զանդրամտութիւնս իմ, եւ արդ
 առ զօրհնութիւնս իմ: Եւ ասէ Լուաւ
 ցնայր իւր, Եւ ոչ մի՞ ինչ օրհնութիւն

37 թողեր ինձ, հայր: Պատասխանի եւ Ի-
 սահակ եւ ասէ ցնաւ, Որովհետեւ տէր
 արարի զնա քեզ, եւ զամենայն եղբայրս
 նորա արարի նմա ծառայս, ցորենով եւ
 զինւով հաստատեցի զնա, քեզ զինչ ա-
 38 րարից, որդեակ: Ասէ Յաւաւ ցնայրն իւր,
 Միթէ մի՞ օրհնութիւն իցէ քո, եւ հայր.
 օրհնեա եւ զիս, հայր. եւ իբրեւ սարջա-
 ցաւ Իսահակ,՝ ամբարձ զձայն իւր եւ
 39 սաւ եւ ելաց: Պատասխանի եւ Իսահակ
 հայր նորա եւ ասէ ցնա, Ահա ի սա-
 րարտութենէ երկրի եղիցի բնակութիւն
 40 քո, եւ ի յօգոյ երկնից ի վերուստ. Եւ
 սրով քով կեցցես. եւ եղբօր քում ծա-
 ռայեսցես, եւ եղիցի յորժամ քակեա-
 ցես, եւ լուծցես զլուծ նորա ի սարաւ-
 նոցէ քումմէ:
 41 Եւ պահէր Յաւաւ յիս Յակոբայ վասն
 օրհնութեանն զոր օրհնեաց զնա հայր
 իւր. եւ ասէր Յաւաւ ի մտի իւրում,
 Մերձեսցին աւուրք կարեաց հօր իմոյ,
 42 զի սպանից զՅակոբ զեղբայր իմ: Ազգ
 եզեն Ռերեկայ բանքն Յաւաւայ որդւոյ
 իւրոյ երկցու. եւ յիւսաց կոչեաց զօրդի
 իւր զերեսեր զՅակոբ եւ ասէ ցնա, Ա-
 հա Յաւաւ եղբայր քո սպանայ սպանա-
 43 նել զքեզ: Արդ լուր, որդեակ, ձայնի
 իմում, եւ արի զնա ի Միջագետս՝ առ
 44 Լարան եղբայր իմ ի Սաւան. Եւ բնա-
 կեսցես ընդ նմա աւուրս՝ արագումս, մին-
 չև անցցէ սրտմտութիւն բարկութեան
 45 եղբօր քո ի քէն. եւ ապա առաքեցից կո-
 չեցից զքեզ անտի. զուցէ անգաւակի-
 ցիմ յերկօցանց ի ձէնջ ի միում աւուր:
 46 Եւ ասէ Ռերեկա ցԻսահակ, Չանձ-
 րացեալ է անձն իմ ի գատերաց որդւոց
 Քիտայ. եթէ անուրցու Յակոբ կին
 ի գատերաց անտի Քիտայ, ի գատերաց
 երկիրս այսորիկ, եւ ընդէր իցէ ինձ կեալ:

ԳԼ . ԻԸ

1 Արցեաց առ ինքն Իսահակ զՅակոբ,
 օրհնեաց զնա եւ սպտուրեաց նմա եւ
 ասէ, Մի տոնուցուս կին ի գատերաց
 2 աստի Քանանացուց: Այլ սրի զնա ի Մի-
 ջագետս Ասորւոց, ի աւուս Բաթուելի հօր
 մօր քո, եւ առ անտի քեզ կին ի գատե-
 3 րաց Լարամու եղբօր մօր քո: Եւ Աս-

1 Եբ. մօր 2 Եբ. երկեաւ Իսահակ երկեւզ
 3 Եբ. պաւտ
 4 Եբ. ինչ 5 Եբ. քո. (45) Միջեւ անցցէ
 սրտմտութիւն եղբօր քո ի քէն, եւ

տուած ՚իմ օրհնեսցէ զքեզ, եւ աճե-
 ցուայցէ զքեզ եւ բազմացուացէ զքեզ,
 4 եւ եղիցես ի ժողովս ազգաց. եւ տայցէ
 քեզ զօրհնութիւնն Արքանամու՝ 2 հօր ի-
 մոյ՝, քեզ եւ զաւակի թում յետ քո,
 5 ժառանգել քեզ զերկիր պանդխտութեանն
 քո՝ զոր ես Աստուած Արքանամու։ եւ
 արձակեաց Իսահակ զՅակոբ, եւ գնաց
 ի Միջագետս Ասորոց առ Լաբան որդի
 Բաթուելի Ասորոց, եղբայր Ռերեկայ,
 6 մօր Յակոբայ եւ Եսաւայ։
 7 եւ իբրև ետես Եսաւ եթէ օրհնեաց
 Իսահակ զՅակոբ, եւ 3 գնաց ի Միջա-
 գետս Ասորոց ամուլ իւր անտի կին,
 եւ յօրհնելն զնա պատուիրեաց եւ ասէ,
 Մի՛ աննուցուս կին ի գտերաց աստի
 8 Քանանացոց, եւ ունկնդիր եղև Յա-
 կոբ հօր եւ մօր իւրում, եւ գնաց ի
 9 Միջագետս Ասորոց. եւ ետես Եսաւ ե-
 թէ չար թուին գտերք Քանանացոցն
 10 առաջի Իսահակայ հօր իւրոյ, Գնաց Ե-
 սաւ առ Իմայէլ, եւ առ զՄայելէթ
 11 զուտար Իմայելի որդւոց Արքանամու,
 զքոյր Նարէութայ, ի վերայ այլոց կա-
 նանց իւրոց իւր կնութեան։
 12 եւ ել Յակոբ ի Ջրհորայ անտի երգ-
 13 ման, եւ գնաց ի Ռաոան. եւ եհաս ի
 սեղի մի եւ ննջեաց անդ, քանզի արեւն
 ի մուտս էր. եւ առ ի քարանց տեղւոյն
 եւ եղ ընդ մարս իւր, եւ ննջեաց ի
 14 տեղւոյն յայնմ։ եւ ետես տեսիլ. եւ ա-
 նա սանգուղք հաստատեալ յերկրի, որոյ
 զլուս իւր հասանէր յերկինս, եւ հրեշ-
 15 տակք Աստուծոյ երանէին եւ իջանէին
 ընդ նա։ եւ Տէր հաստատեալ կայր ի
 նմա, եւ ասէ, Ես եմ Տէր, Աստուած
 Արքանամու հօր քո, եւ Աստուած Իսա-
 16 հակայ. 2 մի՛ երկնչիր, զի՛՞ զերկիրդ յու-
 րում զուզ ննջեցեր, քեզ տաց զգա եւ
 17 զաւակի թում։ եւ եղիցի զաւակ քո իբ-
 րև զաւակ երկրի, եւ ընգարձակեսցի
 ՚ի ծովափովն եւ ընդ արեւելս եւ ընդ
 հիւսիսի եւ ընդ հարաւ. եւ օրհնեսցին
 ի քեզ ամենայն ազգք երկրի եւ ի գա-
 18ւակի թում։ եւ ես աւասիկ ընդ քեզ եմ
 պահել զքեզ յամենայն ճանապարհս քո
 յոր եւ գնացես. եւ զարձուցից զքեզ
 յերկիրս յայս. զի ոչ թողից զքեզ մին-
 չեւ սրարից զամենայն ինչ զոր խօսե-

16 ցայ ընդ քեզ, եւ զարթեալ Յակոբ ի
 քնոյ անտի իւրմէ եւ ասէ, Տէր է ի
 17 տեղւոյն յայսմիկ, եւ ես ոչ գիտէիս Չա-
 հի հարաւ եւ ասէ, Ահեղ իմն է տեղիս
 այս. եւ ոչ է սա եթէ ոչ տուն Աստու-
 18ծոյ, եւ այս է դուռն երկնից։ եւ յա-
 րեալ Յակոբ ընդ առաւան եւ առ
 զվէնն զոր եղ ընդ մարս իւր, եւ կանդ-
 նեաց զնա արձան, եւ արկ եւզ ի գլուխ
 19 նորա. եւ կոչեաց Յակոբ զանուն տեղ-
 ւոյն այնորիկ՝ 2 Տուն Աստուծոյ. եւ յառաջ
 անուն էր քաղաքին այնորիկ Լուզա։
 20 եւ ուխտեաց Յակոբ ուխտ եւ ասէ, Ե-
 թէ եղիցի 2 Տէր Աստուած ընդ իս, եւ
 ապրեցուցէ զիս ի ճանապարհս յայս-
 միկ զոր ես երթամ, եւ տացէ ինձ հաց
 21 ուսելոյ եւ հանգերձ զգեւոյ, եւ գար-
 ձուցէ զիս ողջութեամբ ի տուն հօր
 22 իմոյ, եւ եղիցի ինձ Տէր յԱստուած. եւ
 վէմս զոր կանգնեցի արձան՝ եղիցի 2 ինձ
 Տուն Աստուծոյ. եւ յամենայն զոր տա-
 ցես ինձ՝ աաց քեզ տասանորոյս։

ԳԼ . ԻԹ

1 Եւ զոսս իւր ամբարձեալ Յակոբայ
 գնալ յերկիրն արեւելից, 2 առ Լաբան սր-
 գի Բաթուելի Ասորոց, եղբայր Ռերե-
 2 կայ, մօր Յակոբայ եւ Եսաւայ՝ եւ հա-
 յեցաւ եւ հաւ ջրհոր մի ի գաշտի անդ.
 եւ էին անդ երեք հօտք խաշանց մա-
 կազեալք ի նմա, եւ ի ջրհորոյն յայն-
 մանէ արբուցանէին զխաշինսն. եւ վէմ
 մի մեծ կայր ի վերայ բերանոյ ջրհորոյն.
 3 եւ անդր ժողովին ամենայն հօտք, եւ
 տապալէին զվէնն ի բերանոյ ջրհորոյն,
 եւ ասյին ջուր խաշանցն, եւ կափու-
 4 րէն ի տեղի իւր։ եւ ասէ ցնոսս Յա-
 կոբ, Եղբարք, ուսալ՞ էք զուք. եւ նո-
 5 քա ասեն, Ի իստանէ եմք։ Ասէ ցնոսս,
 Գիտէ՞ք զուք զԼաբան զորդի Նաբալոյայ.
 6 եւ նոքա ասեն, Գիտեմք։ Ասէ ցնոսս,
 Ո՞ղջ իցէ, եւ նոքա ասեն, Ողջ է. եւ
 անհ Բաբել զուտար նորա 6 զայր ընդ խա-
 7 շինան։ եւ ասէ Յակոբ, Դեռ աւուր չաս
 կայ, չեւ եւս է ժամ խաշանցդ ժողո-
 վելոյ. սորուցէք խաշանցդ, եւ երթայք
 8 արածեցէք, եւ նոքա ասեն, Չէ հնար
 թէ մինչ ոչ ժողովիցին ամենայն հալիւք,

1 Էբր. Ամենակալ
 2 Յիբր. պահուի 3 Էբր. ա-
 ռաքեաց զնա 4 Կամ, ընդ արեւմուտս 5 Էբր. Բեթէլ 6 Էբր. գայ

և տապալիցեն զվեմզ ի բերանոյ ջրհորոյ , և արբուցանիցեմք խաշանցս :
 9 Մինչդեռ նա ընդ նստա խօսէր , ահա Ռաքէլ դուստր Լարանու գայր ընդ խաշինս հօր իւրոյ , քանզի նա արածէր
 10 զխաշինս հօր իւրոյ : Եւ եղև իբրև և տես Յակոբ զՌաքէլ գուստր Լարանայ եղբոր մօր իւրոյ , և զխաշինս Լարանայ եղբոր մօր իւրոյ , և մատուցեալ Յակոբ տապալիցոյց զվէմն ի բերանոյ ջրհորոյ , և արբուց խաշանցն Լարանայ
 11 նու եղբոր մօր իւրոյ : Եւ համբուրեաց Յակոբ զՌաքէլ , և ձայն երարձ և և
 12 լաց : Եւ պատմեաց Յակոբ Ռաքելոյ և թէ եղբայր հօր նորա է , և որդի Ռեբեկայ , և ընթացաւ պատմեաց հօր իւրում
 13 լում ¹ ըստ բանիցս այսոցիկ³ : Եւ եղև իբրև լուաւ Լարան զանուն Յակոբոյ որդւոյ քեռ իւրոյ , ընթացաւ ընդ առաջ նորա , զիրիս արկ և համբուրեաց զնա , և տարաւ զնա ի տուն իւր . և պատմեաց Լարանու զամենայն գրանս զայս
 14 սոսիկ : Եւ ասէ ցնա Լարան , Յոսիերացս իմոց և ի մարմնացս իմոց ևս զու : Եւ էր ընդ նոն ամօրեալ մի ժամանակ :
 15 Եւ ասէ Լարան ցՅակոբ , Չի եղբայր իմ ևս զու , ² ոչ ծառայեացես ինձ ձրի⁴ . յայտ արա ինձ զինչ իցես վարձք քո :
 16 Եւ Լարանայ էին երկու գտաւքք . առնուն երիցուս Լիա , և անուն կրտսեւ
 17 ըսն Ռաքէլ : Եւ աչք Լիայ զԻջազոյնք , լայց Ռաքէլ լարի էր տեղեամբ և զեւ
 18 զեցիկ երեսօք : Եւ սիրեաց Յակոբ զՌաքէլ . և ասէ , Ծառայիցիք քեզ և լին ամ վասն Ռաքելոյ գտտեր քո կրտսեւ
 19 ըսն : Եւ ասէ ցնա Լարան , Լաւ իցէ՛ քեզ տալ զնա քան տալ զնա առն օտարի .
 20 բնակեա գու ընդ իս : Եւ ծառայեաց Յակոբ վասն Ռաքելոյ ամս և լին . և էին յաչս նորա իբրև աւուրք սակաւք , քանզի սիրէր զնա :
 21 Եւ ասէ Յակոբ ցԼարան , Տուր ինձ զկին իմ , յցեա ևս աւուրք , զի մտից
 22 առ նա : Եւ ժողովեաց Լարան զամենայն արս տեղւոյն , և արար հարտաւ
 23 նիս : Եւ եղև երեկոյ , տեսալ Լարանու զԼիա գուստր իւր տարաւ առ Յակոբ ,
 24 և ևս տեսաւ առ նա Յակոբ : Եւ ևս Լարան զՉիլիա զազախին իւր նաժիշտ
 25 գտտեր իւրում Լիայ : Եւ իբրև այդ և

զև , և անա Լիա էր . և ասէ Յակոբ ցԼարան , Չինչ գործեցեր զայս . ո՛չ վասն Ռաքելի ծառայեցի քեզ . ընդէր խաքեւ
 26 ցեր զիս : Ասէ Լարան , Չեն օրէնք յաշխարհի մերում տալ նախ զկրտսերն քան
 27 զերէց : Արդ կատարեա ³ և լին և ևս ամ ընդ նորա⁴ , և տաց քեզ և զնա փոխանակ վաստակոցն զոր վաստակեացես
 28 ինձ զև լին ամ և ևս այլ : Արար այնպէս Յակոբ , և կատարեաց ⁴ և լին և ևս ամ ընդ նորա⁵ . և ևս նմա Լարան զՌաքէլ
 29 ընդ գուստր իւր կնու լեան : Եւ ևս Լարան Ռաքելի գտտեր իւրում զԲայլա զազախին իւր նաժիշտ : Եւ ևս տեսաւ Ռաքէլ , և սիրեաց զՌաքէլ քան զԼիա . և ծառայեաց նմա այլ ևս և լին ամ :
 31 Իբրև և տես Տէր եթէ ատելի է Լիա , երաց զարգանդ նորա . լայց Ռաքէլ ա՛մու էր : Եւ յղացաւ Լիա , և ծնաւ որդի Յակոբայ , և կոչեաց զանունն նորա⁶ Ռուբէն . ասէ , Չի և տես Տէր զտառապանս
 33 իմ , արդ սիրեցէ զիս այր իմ : Յղացաւ զարձեալ ¹ Լիա և ծնաւ երկրորդ որդի Յակոբայ , և ասէ , Չի լուաւ Տէր եթէ ատեցեալ եմ , և յաւել ինձ զսա . և կոչեաց զանունն նորա ⁶ Շմուսն : Եւ յղացաւ և ծնաւ որդի , և ասէ , Արդ առ իս եղիցի այր իմ , զի ծնալ նմա երիս որդիս . վասն այսորիկ կոչեաց զանունն
 35 նորա ⁷ Դեբի : Եւ յղացաւ զարձեալ , ծնաւ որդի , և ասէ , Չայս միւսամոզամ զահացայց զՏեառնէ . և կոչեաց զանունն նորա ⁸ Յուզա . և եկաց ի ծննդոց :

Գ Լ . Լ

1 Իբրև և տես Ռաքէլ եթէ ոչ ծնաւ որդի Յակոբայ , նախանձեցաւ Ռաքէլ ընդ քեան իւրում , և ասէ ցՅակոբ , Տուր ինձ որդիս , ապա թէ ոչ մեռաւ
 2 նիմ : Բարկացաւ Յակոբ Ռաքելոյ և ասէ ցնա , Միթէ փոխանակ Աստուծոյ իցեմ ևս , որ արդէլ զպտուղ որովայնի
 3 քո : Եւ ասէ Ռաքէլ ցՅակոբ , Աւանիկ ազախին իմ Բայլա . մուտ առ նա , և ծնցի ի վերայ ծնկաց իմոց , և արարից
 4 և ևս որդիս ի նմանէ : Եւ ևս նմա զԲայլա զազախին իւր կնու լեան , և

³ Եր . զև լին երրորդն սորա ⁴ Եր . զև լին երրորդն նորա ⁵ Այսինչն , տես որդի ⁶ Այսինչն , լին ⁷ Այսինչն , յարումն ⁸ Այսինչն , գոհու թիւն

18Եր . գուստր 2Եր . միթէ ծառայեացես ինձ ձրի⁹

5 մուտ առ նա Յակոր : Եւ յզացաւ Բայլա՝
 6 նաժիշտ Ռաքելայ , եւ ծնաւ որդի Յա-
 7 նուն նորա : Բանս : Եւ յզացաւ զարձեայ
 8 Բայլա նաժիշտն Ռաքելայ , եւ ծնաւ որ-
 9 զի երկրորդ Յակորայ : Եւ սաէ Ռաքել ,
 10 Օգնեաց ինձ Աստուած , զի գուժարեցայ
 11 ընդ քեզ իմում եւ յաղթեցի . եւ կոչ-
 12 եաց զանուն նորա ³Եփեթագիմ :
 13 Իրբեւ ետես Լիա եթէ եկաց ի ծննդ-
 14 զննէ , առ զԶիզիա գնաժիշտ իւր եւ ետ
 15 Յակորայ կնութեան : Յզացաւ Զելփա
 16 նաժիշտն Լիայ , եւ ծնաւ որդի Յակո-
 17 րայ : Եւ սաէ Լիա , Առ իս բախա իմ .
 18 եւ անուանեաց զանուն նորա ⁴Գադ :
 19 Յզացաւ Զելփա նաժիշտն Լիայ , եւ
 20 ծնաւ եւս որդի երկրորդ՝ Յակորայ : Եւ
 21 սաէ Լիա , Երանելի եմ ես , զի երա-
 22 նեցնել զիս կանայք . եւ կոչեաց զանուն
 23 նորա ⁵Ասեր , ⁶մեծութիւնս :
 24 Գնաց Ռուբէն յաւուրս հնձոց զորե-
 25 նոց , եւ եղիս խնձար մանրագորաց յան-
 26 զի , եւ երբ զայն առ Լիա մայր իւր .
 27 սաէ Ռաքել յլիա քոյր իւր , Տաւր ինձ
 28 ի մանրագորաց որդւոց քո : Եւ սաէ
 29 Լիա , Ո՛չ իցէ քեզ շատ զի ատեր զայրն
 30 իմ , միթէ եւ զմանրագորս որդւոց իմոց
 31 անուոցուս . եւ սաէ Ռաքել , ⁷Ոչ այգ-
 32 պէս է՝ ննջեաց ընդ քեզ զայս գիշեր
 33 փոխանակ մանրագորաց որդւոց քո : Եւ
 34 իրբեւ ետես Յակոր յանդէ ընդ երեկս ,
 35 ել Լիա ընդ առաջ նորա եւ սաէ , Առ
 36 իս մտցես այսօր . քանզի ի վարձու կա-
 37 լայ զքեզ փոխանակ մանրագորաց որդ-
 38 ւոց իմոց . եւ ննջեաց ընդ նմա զայն գի-
 39 շեր : Եւ լուաւ Աստուած Լիայ . յզացաւ
 40 եւ ծնաւ Յակորայ որդի հինգերորդ : Եւ
 41 սաէ Լիա , Ետ ինձ Աստուած զվարձս
 42 իմ , փոխանակ զի ետու զազախինն իմ
 43 առն իմում . եւ կոչեաց զանուն նորա
 44 Դուաքար , ⁸որ է վարձս : Եւ յզացաւ
 45 մեծանամ Լիա , եւ ծնաւ որդի վեցե-
 46 րորդ՝ Յակորայ : Եւ սաէ Լիա , Պար-
 47 զեւեաց ինձ Աստուած սպարեւ բարի .
 48 յայսմ հեռէ ⁹սիրեացէ զիս՝ այր իմ , զի
 49 ծնայ նմա որդիս վեց . եւ կոչեաց զա-

21 նուն նորա ⁹Չարուզոն : Եւ յետ այնո-
 22 րիկ ծնաւ զուսար , եւ կոչեաց զանուն
 23 նորա ¹⁰Գիլայ :
 24 Եւ յիշեաց Աստուած զՌաքել . եւ
 25 լուաւ նմա Աստուած , եւ երայ զար-
 26 զանոց նորա . եւ յզացաւ ծնաւ որդի ¹¹Յա-
 27 կորայ . եւ սաէ ¹²Ռաքել , Ենան յինէն
 28 Աստուած զնախատինս իմ : Եւ կոչեաց
 29 զանուն նորա ¹³Յովսէփ . սաէ , Յաւել-
 30 ցէ ինձ ¹⁴Աստուած որդի մեւս եւս :
 31 Եւ եղեւ իրբեւ ծնաւ Ռաքել զՅով-
 32 սէփ , սաէ Յակոր յԼարան , Արձակեա
 33 զիս զի երթայց յեղի իմ եւ յերկիր
 34 իմ . եւ ատեր զկանայս եւ զմանկունս
 35 իմ , վասն որոց ծառայցել քեզ , զի
 36 գնացից . զի զու ինքնին իսկ զիտես
 37 զծառայութիւնն զոր ծառայցելի քեզ :
 38 Ասէ զնա Լարան , Եթէ գաի հորս ա-
 39 ռաջի քո , հմայցելի զի օրհնեաց զիս ¹⁵Աս-
 40 տուած յոտին քում : Եւ սաէ Լարան ,
 41 Յայտ արա զվարձս քո յինէն , եւ տայ
 42 Ասէ զնա Յակոր , Դու զիտես որչափ ինչ
 43 ծառայցելի քեզ , եւ որչափ խաչն էր քո առ
 44 իս . Սակաւիկ ինչ էր յառաջ քան զիս
 45 եւ աճեաց ի բազմութիւն , եւ օրհնեաց
 46 զքեզ Տէր ¹⁶Աստուած յոտին իմում . եւ սրդ
 47 ես երբ առնիցեմ ինձ ատուն Եւ սաէ զնա
 48 Լարան , Զինչ տայց քեզ : Եւ սաէ զնա
 49 Յակոր , Մի ինչ տար ինձ , բայց զայս
 50 եւեթ բանս արասցես ինձ . զարձեայ ա-
 51 րածեցից զխաչինս քո եւ պահեցից . ¹⁷Եւ
 52 անցնես այսօր ամենայն խաչինքդ առաջի
 53 քո , եւ զատո ի միմեանց զամենայն ոչխար
 54 զխաչտախարիւ եւ զգորշ , եւ զամենայն
 55 արօտական զհամակ յօղեաց . եւ ամենայն
 56 խաչտախարիւն յօղեաց եւ սիւտսին յայ-
 57 ձեաց եղիցին վարձք : Եւ երեւեացի ար-
 58 զարութիւն իմ ի վաղիւ օր թէ գոն իմ
 59 վարձք առաջի քո . ամենայն որ ոչ իցէ
 60 խաչս եւ սիւտակ յայձեաց , եւ գորշա-
 61 խաչս յօղեաց , ի գողոնս համարեալ
 62 իլիցի ինձ : Եւ սաէ զնա Լարան , Եղիցի
 63 ըստ բանի քում : Եւ զատոց յաւուր

¹ Յեբր. գլխաւ ² Այլննն , գատուար ³ Այլ-
 ննն , գուպարած իմ ⁴ Այլննն , բախտ
⁵ Այլննն , երանելի ⁶ Եբր. Ապա ⁷ Այլննն
 վարձ ⁸ Եբր. բնակեացէ ընդ իս

⁹ Այլննն , բնակութիւն ¹⁰ Այլննն , գա-
 տատան ¹¹ Այլննն , յուրելցէ ¹² Եբր.
 Տէր ¹³ Եբր. Անցից այսօր ընդ ամենայն խա-
 շինս քո , եւ զատուցից անտի զամենայն ոչխար
 պիտակ եւ խաչտախարիւ , եւ յօղեաց զամե-
 նայն ոչխար սեւաւ , եւ զխաչտախարիւն եւ զպի-
 տակ յայձեաց , եւ սորս եղիցին վարձք իմ
¹⁴ Եբր. պիտակ եւ խաչտախարիւ յայձեաց առ
 իս , եւ որ ոչ իցէ սեւաւ յօղեաց

յայնմիկ գքազս ¹կապոյտս եւ զպիտակս, եւ զամենայն այծս կապոյտս եւ զպիտակս, եւ զամենայն սպիտակս ի նոցանէ եւ զամենայն համակս՝ յօղեաց, եւ ի

36 ձեռս որդւոցն իւրոց: Եւ մեկնեցոյց ճանապարհ երկց աւուրց ընդ մէջ նոցա եւ ընդ մէջ Յակորայ. եւ Յակոր արածէր զխաչինսն Լարանու զմիացեալս:

37 Եւ առ Յակոր գաւազան՝ շիր դալար եւ ընդուզի եւ սօսուր, եւ կեղեւեկաց զնոսա Յակոր, եւ եղև սպիտակ. եւ երեք զգալարն ի գաւազանաց անտի, եւ երեւէր ի գաւազանսն սպիտակն զոր

38 քերծոյր՝ նկարէն: Եւ գնէր զգաւազանսն զոր քերծոյր՝ յաւազանս ջրարբից ջրոցն. զի իբրեւ գայցեն խաչինքն ըմպել ջուր, հանդէպ գաւազանայն զկծիցին, յոր-

39 ժամ գայցեն ըմպել ջուր: Եւ զկծէին խաչինքն ի գաւազանսն, եւ ծնանէին խաչինքն գորշխայտս եւ պիտակս եւ

40 խայտախարիւս: Եւ զորովն ուրոցն գատանէր Յակոր, եւ ²կացուցանէր յանդիման մաքեացն, եւ զիտոյ կապոյտ եւ զամենայն գորշխայտսն յօղեաց՝. եւ զատանէր իւր հօտս առանձինն, եւ ոչ իրանէր զնոսա ի խաչինս Լարանու:

41 Եւ լինէր յորժամ զկծէին խաչինքն ³ի խառնան եւ յղենային՝, գնէր Յակոր զգաւազանսն յանդիման խաչանցն յաւազանսն, առ ի զկծիւոյ նոցա ըստ գաւազանացն: Եւ յորժամ ⁴ծնանէին խաչինքն ոչ գնէր. եւ լինէր ⁵աննշանն Լարանու, եւ ⁶աննաւորն Յակորայ:

43 Եւ մեծացաւ այրն յոյժ յոյժ, եւ եղև նորա ոչխար եւ արջառ յոյժ, ծառայք եւ ազախնայք, ուղարք եւ էչք:

Գ Լ Լ Ա

4 Եւ լուաւ ⁷Յակոր զրանս որդւոցն Լարանու զի ասէին եկիէ, Առ Յակոր գամենայն ինչս հօր մերոյ, եւ ի հօր մերոյ ընչից արար իւր զայն ամենայն

2 վատս: Եւ ետես Յակոր զերեսս Լարանու, եւ ահա ոչ էին ընդ նմա որպէս

3 յերէին եւ յեռանդ. Եւ ասէ Տէր ⁷Աս-

տուած ցՅակոր, Գարձիր յերկիր հօրքո եւ յազգ քո, եւ եղէց ընդ քեզ:

4 Եւ յղեայ Յակոր եւ կոչեաց զՌաբէլ եւ զԼիւս ի որպէս անոր ուր խաչինքն

5 էին, Եւ ասէ ցնոսա, Տեսանես ու զերեսս հօր ձերոյ, զի ոչ են ընդ իս որպէս յերէին եւ յեռանդ. եւ Աստուած

6 հօր իմոյ էր ընդ իս: Եւ զուրք ինքնին զիտէք զի յամենայն զօրութիւնէ իմմէ

7 ծառայեցի հօր ձերում. Եւ հայր ձեր ընդհարուս ընդ իս, եւ փոխեաց զվարձս իմ

8 զտանն թմացոյ՝, եւ ոչ ետ նմա Աստուած առնել ինձ չար: Եկիէ ⁹ասիցէ, նկարէնքդ՝ եղիցին քո վարձք, ամենայն խաչինքս ¹⁰նկարէնս ծնանին՝. եւ եկիէ ¹¹ասիցէ թէ Սպիտակքդ՝ եղիցին քո վարձք, ամենայն խաչինքս ¹²սպիտակս ծնանին՝: Եւ եհան Աստուած ¹³գամենայն

9 խաչինս՝ հօր ձերոյ եւ ետ ինձ, Եւ լինէր յորժամ զկծէին խաչինքն, տեսանէի աչօք իմովք յերազի, եւ ահա քազք եւ խոյք ¹⁴եղանէին ի վերայ մաքեաց եւ այծից, պիտակք եւ խայտախարիւրք եւ գորշխայտք: Եւ ասէ զիս հրեշտակ Աստուծոյ ի տեսլանն, Յակոր. եւ ես աւսեմ, Զի է: Եւ ասէ, Հայեաց աչօք քովք, եւ տես զքազսն եւ զխոյս որ ելանեն ի մաքիան եւ յայծս. զիարգ պիտակք եւ զգորշխայտք եւ խայտախարիւրք են. քանզի տեսի որչափ ինչ աւսնէր ընդ քեզ Լարան: Ես եմ ¹⁵Աստուած որ երեւեցայ քեզ ի տեղու՞ն Աստուծոյ՝, ուր օծեր ինձ զարձանն, եւ եզիր ¹⁶ուխտս. եւ արգ արի ել յերկրէս յայսմանէ, եւ երթ յերկիր ծննդեան քո, եւ եղէց ընդ քեզ:

14 Պատասխանի ետուն Ռաբէլ եւ Լիւս եւ ասեն ցնա, Միթէ դո՞ն եւս մեր այստուհետեւ բաժին եւ ժառանգութիւն ի

15 տան հօր մերոյ. Ո՞չ ապաքէն իբրեւ զօտարտախ համարեալ եմք նմա. զի վաճառեաց զմեզ եւ եկիր ուտելով զար-

16 ծախժ մեր. Ամենայն մեծութիւն ¹⁷եւ փառք՝ զոր եհան Աստուած ի հօրէ մերմէ, ¹⁷մեզ եղիցի՝ եւ որդւոց մերոց. արգ զոր ինչ ասաց քեզ Աստուած՝ արա:

¹ Եբբ. գորշխայտս եւ խայտախարիւս, եւ գամենայն այծս պիտակս եւ խայտախարիւս, գամենայն յորում իցէ սպիտակ, եւ զամենայն սեւս
² Եբբ. գարձուցանէր զերեսս խաչանցն առ գորշխայտսն եւ առ ամենայն սեւս որ էին ի խաչինսն Լարանու
³ Եբբ. ուժեղք
⁴ Եբբ. տարանային
⁵ Եբբ. տկարն
⁶ Եբբ. ուժեղն
⁷ Յեբբ. պատիւ

⁸ Եբբ. տաննիցս
⁹ Եբբ. ասէր պայպէս, Պիտակքդ
¹⁰ պիտակս ծնանէին
¹¹ Եբբ. ասէր թէ Գորշխայտքդ
¹² Եբբ. գորշխայտս ծնանէին
¹³ Եբբ. զխաչինս
¹⁴ Եբբ. որ եղանէին
¹⁵ Եբբ. Աստուած թէ թեւայ
¹⁶ Եբբ. ուխտ ընդ իս անդ
¹⁷ Եբբ. մեր է

17 Յարեալ Յակոբ, առ զկանայս իւր եւ զմանկուսնս իւր, եւ եհան զնոսա յուզատս:

18 Եւ խաղաղոցոյ զամենայն ինչս իւր եւ զամենայն ստացուածս իւր զոր արար ի Միջագետս Ասորոց, երթալ առ Իսահակ հայր իւր յերկիրն Քանանացոց:

19 Եւ Լարան երթեալ էր ի կաւարս խաչանց իւրոց, եւ զողացաւ Ռաբէլ զկուսս:

20 հօր իւրոց, եւ զողացաւ Յակոբ զսիրտ Լարանու ՚աներոյ իւրոյ՝ չոգասուել նմա:

21 Թէ գնացել է եւ գնաց ինքն եւ ամենայն որ ինչ իւր էր, եւ յարուցեալ անց ընդ Գետ եւ զիմեաց ի լեռոն Գաղատա:

22 Ազգ եղև Լարանու ՝Ասորոց յաւուրն:

23 Երրորդի, եթէ գնաց Յակոբ, եւ առեալ զեղբարս իւր ընդ իւր, սնդեցաւ զինի նորա ճանապարհ զեւթն սուուր, եւ եւ:

24 հաս նմա ի լերինն Գաղատայու, եւ եկն Աստուած առ Լարան Ասորի ի տեղեան զլէշերոյ եւ ստէ ցնա, Զգոյշ լեր անձին քում, գուցէ խօսիցիս ընդ Յակոբայ:

25 ՚անզգամութեամբ: Եւ եհաս Լարան Յակոբայ, եւ Յակոբ հար զխորան իւր ի լերինն, եւ Լարան կացոյց զեղբարս իւր ի լերինն Գաղատայու:

26 Եւ ստէ Լարան ցՅակոբ, Ընդէր աւարեր զայդ, ընդէր զազատահաց եղեր յինէն, ՝եւ զողացար զիս,՝ եւ վարեցեր:

27 զդասերս իմ իբրեւ զղերեալս սրոյ, ՝Եւ եթէ ազգ արարեալ էր ինձ,՝ առաքելի զքեզ սուրխութեամբ եւ արուեստակա:

28 նօք թմրիկաց եւ քնարաց: Եւ ՝էլք արդեւք արժանի՝ համբուրել զորդեակս իմ եւ զդասերս իմ, եւ արդ անմտութեամբ աւարերս: Եւ այժմ ձեռնհաս էի առնել քեզ չար, բայց Աստուած հօր քո երէկ ասաց ցիս, ստէ, Զգոյշ լեր գուցէ խօսիցիս ընդ Յակոբայ ՝անզգամութեամբ:

30 Եւ արդ գնացեալ երթաս, զի ցանկաւ նալով ցանկացեալ ես երթալ ի տուն հօր քո, եւ ընդէր զողացար զաստուածան իմ: Պատասխանի ետ Յակոբ եւ ստէ ցԼարան, Քանզի երկեաց, ասացի թէ գուցէ հանիցես զգոսերս քո յինէն, ՝եւ:

32 զամենայն ինչ զիմ: Եւ ստէ Յակոբ, ՝Առ որում զսցես զաստուածան քո, ՝մի կեցցէ առաջի՝ եղբարցս մերոց, եւ արդ

ձանիր ինչ ի քոց ընչից առ իս, եւ առցես: Եւ ոչ ՝ձանեալ առ նմա եւ ոչ ինչ, եւ ոչ՝ զխէր Յակոբ թէ Ռաբելայ:

33 ՝կնոջ իւրոյ՝ զողացեալ էր գնաս, եւ մտեալ Լարան յուզէր ՝ի տան Յակոբայ, եւ ՝ի տան Լիայ, եւ ՝ի տան երկոցուն հարձիցն, եւ ոչ զամէր, եւ ելեալ ՝ի տանէ անտի Լիայ եմուտ ՝ի տուն Ռաբելի: Իսկ Ռաբելի առեալ զկուսնս եղ ընդ ուզատս պատաստու, եւ նստաւ ի վերայ նոցա, եւ յուզեաց Լարան զամենայն ստղաւարն եւ ոչ եղիտ: Եւ նաստէ ցհայր իւր, Մի ինչ ձանր թուեսցի քեզ, տէր, ոչ կարեմ յոսն յառնել առաջի քո, քանզի ի կանանց օրէնս եմ: Եւ յուզեաց ՝Լարան զամենայն զսուսն՝ եւ ոչ եղիտ զկուսնս:

36 Բարկացաւ Յակոբ եւ կաղէր ընդ Լարանու, պատասխանի ետ Յակոբ եւ ստէ ցԼարան, Զինչ վեաս է իմ, կամ զինչ յանցանք են իմ, զի սնդեցար:

37 գնեա իմ: Եւ յուզեցեր զամենայն զինչս իմ, զինչ գտեր յամենայն ընչից ՝քոց ի տան իմում՝, զի առաջի եղբարցս իմոց եւ եղբարց քոց, եւ յանցիմանես:

38 ցես ի մէջ միւր երկոցունց: Այս քսան ամ է զի էի ընդ քեզ, ոչխարք քո եւ այժիք ոչ ՝ստերջացան, եւ վիսոյս մաքեաց քոց ոչ կերայ: Զգազանաբեկն ոչ բերի առ քեզ, այլ ես յանձնէ տուէի:

39 ՝զողուսնի տուրնքեան եւ զողուսնի գիշերոյ, Զցերեկ այրեալ լինէի ի սօթոյ, եւ զցայոց ի ցրտոյ, հատալ էր քուն:

41 յաչաց իմոց: Այս քսան ամ է ի տան քում էի, զչորեքտասան ամ փոխանակ զստերաց քոց վաստակեցի, եւ զվեց ամ ի խաչինս քո, եւ ՝խարեցեր զիս ի վարձս:

42 տանս բճացս՝ եթէ ոչ Աստուած հօր իմոյ, Աստուած Արբանամու եւ Երկեզն Իսահակայ էր ընդ իս, այժմ թերեւս ունայն իսկ արձակէիր զիս, այլ զատաւարանս իմ եւ զվաստակս ձեռաց իմոց հաս Աստուած, եւ յանցիմանեաց զքեզ երէկ:

43 Պատասխանի ետ Լարան եւ ստէ ցՅակոբ, Իտտերքդ՝ զստերք իմ են, եւ ուստտերքդ՝ ուստտերք իմ են, եւ խաչինքդ՝ խաչինք իմ են, եւ ամենայն ինչ զոր

1 Եբր. Ասորոց 2 Եբր. գաւառ 3 Եբր. բարի կամ չար 4 Եբր. Ընդէր թարգմանցեր զփախուստ քո, 5 Գողացար զիս, 6 Ե ոչ ազգ աւարեր ինձ, 7 Եբր. ոչ թողեր ինձ 8 Եբր. մի կեցցէ, որոնեա առաջի

7 Եբր. ի խորանի 8 Եբր. ի խորանէ 9 Եբր. ի խորան 10 Եբր. տան քո 11 Եբր. վիժեցին 12 Եբր. ի ձեռանէ իմմէ պահանջէիր զզողուսնի 13 Եբր. փոխեցեր զվարձս իմ տաննիցս

զու տեսանես՝ իմ է եւ գասերացդ իմոց . եւ արդ զի՞նչ արարից զոցա այսօր , կամ որդւոց զոցա զոր ես ծնայ՝ :

44 Բայց արդ եկ ուխտ զիցուք ես եւ զու , եւ եղիցի ի վկայութիւն ընդ իս եւ ընդ քեզ : ²Եւ ասէ ցնա , Ահա ոչ ոք է ի միջի մերում , բայց Աստուած վկայ ընդ իս

45 եւ ընդ քեզ : ³Եւ ասեալ Յակոբայ վէմ՝

46 կանգնեաց արձան : Եւ ասէ ցեղբարան իւր , Կուտեցէք քարինս . եւ կուտեցին քարինս եւ արարին բլուր , եւ կերան եւ

47 քարին անդ ի վերայ բլրոյն : Եւ կոչեաց զնա Լաբան ⁴Կարկառ վկայութեան՝ . եւ

48 Յակոբ կոչեաց զնա ⁵Կարկառ վկայ : Եւ ասէ ցնա Լաբան , Բլուրս այս վկայ է ընդ իս եւ ընդ քեզ այսօր : ²Եւ կոչեաց զնա Լաբան Բլուր վկայութեան , եւ Յակոբ կոչեաց զնա Բլուր վկայ . եւ ասէ Լաբան ցՅակոբ , Ահա բլուրս այս եւ արձանս այս՝ զոր կանգնեցի ընդ իս եւ ընդ քեզ , վկայ է բլուրս այս , վկայ է արձանս այս : ⁶ Իսնայ այնորիկ կոչեցաւ ա-

49 նուն բլրոյն ⁴Վկայութիւն , եւ ⁵Տեւին զորմէ՝ ⁶ասաց թէ տեսցէ ⁶Աստուած ընդ իս եւ ընդ քեզ , զի մեկնիմք ըսկեր ցնն , կերէ : Եթէ վշտացուցես զդասերս իմ , եթէ առցես կանայս առ դասերօք իմովք , զգոյշ լը՛ր՝ զի ոչ ոք է ընդ մեզ որ տեսանէ . Աստուած լիցի վկայ ընդ իս եւ

51 ընդ քեզ : Եւ ասէ Լաբան ցՅակոբ , Ահա կարկառս այս եւ ահա արձանս զոր

52 հաստատեցար ընդ իս եւ ընդ քեզ . Եւ զիցի վկայ կարկառս , եւ վկայ արձանս , զի ոչ ես անցից ըստ կարկառս , եւ մի զու անցանիցես ըստ բլուրս եւ ըստ ար-

53 ձանս ըստ այս՝ չարութեամբ : Աստուած Աբրահամու եւ Աստուած Եսքովրայ եւ զիցի դատաւոր ի միջի մերում , Աստուած հարցն նոցա : Եւ երդուաւ Յակոբ

54 յերկեզ հօր իւրոյ Իսահակայ : Եւ եղեն Յակոբ զենկիս ի լերինն , եւ կոչեաց զեղբարս իւր ուտել հաց . կերան եւ ար-

55 բին , եւ սգան ի լերին անդ : Եւ յարուցեալ Լաբան ի վաղիւ անդր համբուրեաց զորդիս իւր եւ զզստերս իւր եւ օրհնեաց զնոսա , եւ զնաց՝ դարձարարեալ Լաբանայ ի տեղի իւր :

¹ Եբբ. իմ է , եւ գասերաց իմոց զի՞նչ արարից զոցա այսօր , կամ որդւոց նոցա զորս ծնան
² Եբբ. պոխտե
³ Բաբ. Եկար. սահտուութե
⁴ Եբբ. Գազատոց
⁵ Եբբ. Մասիա (դիտանոց) , զի
⁶ Եբբ. Տէր

1 Եւ Յակոբ զնայ զձանապարհ իւր ²Եւ հայեցեալ ետես զբանակ Աստուծոյ բանակեալ . ³ Եւ ընդ առաջ եղեն նմա հրեշ-

2 տակը Աստուծոյ : Եւ ասէ Յակոբ իբրեւ ետես զնոսա , Այս բանակ Աստուծոյ է : Եւ կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ ⁷Բանակս :

3 Եւ առաքեաց Յակոբ հրեշտակս յառաջ քան զինքն առ Եսաւ եղբայր իւր յերկիրն ի Մէջի , յայտարհն Եդովմայ .

4 Պատուէր ետ նոցա եւ ասէ , Այսպէս առաջիք տեսն իմում Եսաւայ , թէ Այսպէս ասէ ծառայ քո Յակոբ , Ընդ Լաբանայ կեցի եւ յամեցի մինչեւ ցայժմ .

5 Եւ եղեն իմ արջառ եւ ոչխար եւ էջը , ծառայք եւ ազակնայք . եւ առաքեցի պատմել տեսնն իմում Եսաւայ զի դոցէ

6 ծառայ քո չտորն առաջի քո : Եւ դարձեալ հրեշտակացն առ Յակոբ՝ ասեն , Չոգար առ Եսաւ կիրայր քո , եւ դայ ընդ առաջ քո , եւ չորեք հարեւր այր ընդ նմա :

7 Չահի հարաւ Յակոբ , եւ տարակուսեալ էր . եւ զատոց զժողովուրդն որ ընդ նմա էր , եւ զարջառ եւ զոչխար եւ

8 զուզտս յերկուս բանակս . Եւ ասէ Յակոբ , Եթէ եկեացէ Եսաւ յառաջին բանակն եւ հարցէ զնա , ապրեացի երկրորդ

9 բանակն : Եւ ասէ Յակոբ , Աստուած հօր իմոյ Աբրահամու եւ Աստուած հօր իմոյ Իսահակայ , Տէր , որ ասացեր ցնա թէ երթ յերկիր ծննդեան քո եւ բարի ա-

10 բարից քեզ . Չեմ բաւական ամենայն արդարութեանն եւ ճշմարտութեանն զոր արարեր ընդ ծառայի քում . զի ցուպ ի ձեռն անցի ընդ այս Երդանան , եւ

11 արդ աւտօրիկ եղէ յերկուս բանակս : Եւ ապրեցո զիս ի ձեռոց եղբոր իմոյ Եսաւայ . զի գահի հարեալ եմ ես ի նմանէ , զուցէ եկեալ հարկանիցէ զիս , մայր առ

12 մանկան : Եւ զու ասացեր թէ ⁸Բարի արարից քեզ , եւ եղից զգաւակ քո իբրեւ գաւաւազ ծովու որ ոչ թուրցի ի բաղձութենէ :

13 Եւ ննջեաց անդ զայն զիչեր . եւ առ յորոց ամէէն ձեռամբ իւրով պատարագս , եւ առաքեաց Եսաւայ եղբոր իւրում ,

14 Այժմ երկերիւր , քազս քսան , մարխոս

15 երկերիւր , խոյս քսան , Ուղտս ⁹ճննայս

⁷ Եբբ. Մանայիմ
⁸ Եբբ. Առնելով արարից քեզ բարի
⁹ Եբբ. ստնտուս

կողմամբը հանգերձ՝ երեսուն, կոխ քա-
 16 մարուսի սասն : Եւ ետ ի ձեռս ծառա-
 լից խրոց հօտս հօտս սասնձինն : Եւ ա-
 սէ ցճառայան խւր, երթայր զուք յառաջ
 17 նկցիք հօտս ի հօտից : Պատուիրեաց ա-
 ռաջնայն եւ ասէ, Եթէ պատանիցէ քեզ
 ետաւ եղբայր իմ, եւ հարցանիցէ թէ Ո՞չը
 ես եւ յո՞ երթաս եւ ո՞չը է այդ որ ա-
 18 ռաջի քո երթայ, Ասացես, թէ Ծառայի
 քո Յակորայ պատարազք են, զոր ա-
 ռաքեաց տեսան իւրում Ետաւայ : Եւ
 19 ինքն զկնի մեր գայ : Պատուիրեաց Վա-
 ռաջնուն եւ երկրորդին եւ երրորդին,
 եւ ամենեցուն որ երթային յառաջ զհետ
 խաշանոյն՝ ասէր, Ըստ բանիս այսմիկ
 խօսեսցիք ընդ Ետաւայ, յորժամ գտա-
 20 նիցէք զնա : Եւ առաջիք, Անա ծառայ
 քո Յակոր գայ զհետ մեր : Քանզի ասաց
 թէ Յածուցից զերեսս նորա պատարա-
 21 զօք որ երթան առաջի, եւ սպաս տե-
 սից զերեսս նորա, թերեւս արասցէ մե-
 22 ծարանս երեսաց իմոց : Եւ երթային յա-
 ռաջապոյն ընծայքն քան զնա : Եւ ինքն
 ննչեաց զայն զիչեր անդէն ի բանակին
 23 Եւ յարուցեալ ինմին զիչերն առ զերկուս
 կանայան եւ զերկուս ազախնայան եւ
 զմետասան որդիս իւր, եւ անց ընդ հունն
 24 Յարոկայ : Եւ առ անցոյց զնոսս ընդ
 ձորն, եւ զամենայն ինչ որ իւր էր :
 25 Եւ մնաց Յակոր միայն : Եւ մարտեաւ
 այր մի ընդ նմա մինչեւ ցառաւօտ : Եւ
 իրրեւ ետես թէ ոչ յազթէ նմա, բունն
 եհար զամուրալից զբառն նորա, եւ ըն-
 զարմացոյց զամուրալի զբառն Յակորայ
 26 ի կուռեչն իւրում ընդ նմա : Եւ ասէ
 ցնա, Արձակեա զիս, քանզի այդ եղեւ :
 եւ նա ասէ, Ոչ արձակեցից զքեզ, ե-
 27 թէ ոչ օրհնեսցես զիս : Եւ նա ասէ ցնա,
 Զի՞նչ անուն է քո : Եւ սա ասէ ցնա,
 28 Յակոր : Եւ ասէ ցնա, Յայսմ հեռէ ոչ
 կոչեսցես զանուն քո Յակոր, այլ ²Իս-
 րայել եղիցի անուն քո : զի ժուժկայե-
 ցեր ընդ Աստուծոյ եւ ընդ մարդկան,
 29 ³Պօրաւոր լիջիր : Եհարց Յակոր եւ ասէ,
 Պատմեա ինձ զանուն քո : Եւ ասէ, Զի՞
 հարցանես զանուանէ իմմէ : Եւ օրհնեաց
 30 զնա անդ : Եւ կոչեաց Յակոր զանուն
 տեղւոյն այնորիկ ⁴Տեսիլ Աստուծոյ : զի

տեսի զԱստուած զէմ յանդիման, եւ
 ապրեցաւ անձն իմ :
 31 Եւ ծարեաց նմա արեւ իրրեւ ⁵անց
 Տեսիլն Աստուծոյ : Եւ նա կազայր եր-
 32 թայր ի զբառէ անտի : Վասն այնորիկ
 ոչ ուսան որդիքն Իսրայելի զամուրալի
 զոր ընդարմացոյց, որ է ի վերայ տախ-
 ասակի զբառն, մինչեւ ցայսօր : զի բառն
 եհար զտախասակէ զբառն Յակորայ, եւ
 ընդարմացոյց զամուրալի նորա :

ԳԼ . ԼԳ

1 ⁹Զաչս իւր ի վեր երարձ Յակոր եւ ե-
 սես, Եւ հնա Ետաւ ¹Եղբայր իւր՝ գայր,
 եւ ընդ նմա արք չորեք հարեւր : Եւ
 թաչխեաց Յակոր զմանկուսն ի Լիա եւ
 2 յԹաքէլ, եւ յերկուս ազախնայան : Եւ
 արար զերկուս ազախնայան եւ զորդիս
 նոցա առաջի, եւ զԼիա եւ զորդիս նո-
 րա զինի, եւ զԹաքէլ եւ զՅովսէփ հուսկ
 3 յետոյ : Եւ ինքն անց յառաջ քան զնո-
 սա, եւ երկիր եպագ եւթն անգամ ի
 վերայ երկրի՝ մինչեւ մերձենալ առ եղ-
 4 բայն իւր : Եւ ընթացաւ Ետաւ ընդ ա-
 ռաջ նորա : զիրկս արկ նմա ¹Եւ համ-
 բուրեաց, եւ անկաւ ի վերայ պարա-
 նոցի նորա եւ համբուրեաց զնա : Եւ լա-
 5 ցին երկրքեան : Եւ հայեցեալ ի վեր ե-
 տես զկանայան եւ զմանկուսն, եւ ա-
 սէ, Դոքա զինչ են քո : Եւ նա ասէ,
 Մանկուսք իմ են, որովք ողորմեցաւ
 6 Աստուած ծառայի քում : Եւ մատեան
 ազախնայքն եւ որդիք նոցա, եւ երկիր
 7 պագին նմա : Եւ մատեաւ Լիա եւ որ-
 դիք իւր եւ երկիր պաղին նմա : յետոյ
 մատեա Յովսէփ եւ Թաքէլ եւ երկիր
 8 պագին նմա : Եւ ասէ, Զի՞նչ էր այն
 ամենայն չու որ ինձ դիպեցաւ : Եւ նա
 ասէ, Զի գտցէ շնորհս ծառայ քո ա-
 9 ռաջի քո : Եւ ասէ Ետաւ, Կայ եւ իմ
 10 շատ, եղբայր, քեզ լիցի քոյդ : Եւ ասէ
 Յակոր, Մի այգալէս, եթէ գար շնորհս
 առաջի քո, ընկալ զընծայան ի ձեռաց
 իմոց : Քանզի այնպէս տեսի զերեսս քո՝
 որպէս ոք տեսանիցէ զերեսս Աստուծոյ,
 11 եւ զուարթացիս ընդ իս : Եւ առ զօրհ-
 նութիւնսդ իմ զոր մատուցի քեզ : զի
 ողորմեցաւ ինձ Աստուած, եւ է իմ ա-
 մենայն ինչ : Եւ բանագատեաց զնա, եւ
 12 առ : Եւ ասէ, Զուրեցուք զնացուք եւ
 13 ⁶Երթիցուք զուղղորդն : Եւ ասէ ցնա,

¹Յեբր. գալուստ ²Այլն, որ մարտնի ընդ Աս-
 տուծոյ ³Եբր. և զօրաւոր եղեր ⁴Եբր. Փանուել

⁵Եբր. անց ընդ ⁶Եբր. երթայց առաջի քո

Տէր իմ ինքնին գիտէ, զի մանկուներս մատաղ են, եւ ոչխարի եւ արջառոյ ծրնունդ արձակեալ է. եւ եթէ մի օր ստիպեմ զդոսա, մեռանին ամենայն խաւ:

14 չինքդ, Այլ յառաջեցէ տէր իմ քան զծառայ իւր, եւ ես ՚բստ կարի եւ բստ պարապոյ ճանապարհիդ՝ առաջի իմ, եւ բստ կաղորդել մանկանց ՚բմոց խաղացից, մինչեւ եկից առ տէր իմ ի Սէիր:

15 Եւ ասէ Եսաւ, իսկ թողից առ քեզ ի ժողովրդենէ աստի որ ընդ իսկն. եւ նա ասէ, Ընդէր իցէ ինձ այդ, շատ է:

16 զի գտի չնորհս առաջի քո, տէր: Եւ զարձաւ յաւուր յայնմիկ Եսաւ. ընդ ճանապարհ իւր ի Սէիր:

17 Եւ Յակոբ չուեաց ի Պորանս եւ արար իւր սնոց տունս, եւ խաչանոց իւրոց արար զպաշարս. վասն այնորիկ կոչեաց զանուն սեղեղն այնորիկ Պորանս:

18 Եւ եկն Յակոբ ի Սաղէմ քաղաք Սիկիմացոց, որ է յերկրին Քանանացոց, իրրեւ եկն ի Միջագետաց Ասորոց, եւ

19 քնակեցաւ յանդիման քաղաքին: Եւ ստացաւ զվիճակ անպին ուր եհար զիտւրան իւր՝ յեմովրայ Տորէ Սիւքիմայ հաւ:

20 Եւ Երեմ Դոնարի: Եւ չինեաց անդ սեղանս, եւ կարգաց զԱստուած Իսրայելի:

ԳԼ . ԼԻ

1 Եւ ել Դինա զուստր Լիայ՝ զոր ծնաւ Յակոբայ, ի դինն գատերայ աշխարհին:

2 Եւ ետես զնա Սիւքեմ որդի Եմովրայ Քոռեցի, որ իշխանն էր երկրին, եւ առ զնա, եւ ննջեաց ընդ նմա, եւ տառապեցոյ զնա: Եւ ուշ եղեալ Դինայի գատերն Յակոբայ՝ սիրեաց զկոյսն, եւ խօսեցաւ բստ մտաց կուսին: Եւ խօսեցաւ Սիւքեմ ընդ Եմովրայ Տոր իւրոց եւ ասէ, Առ զու ինձ զազջիկս զայս 5 կնութեան: Եւ լուաւ Յակոբ եթէ պրզծեաց որդի Եմովրայ զԴինա զզուստր նորա. եւ որդիք նորա էին ի խաչինս ի զաչտի. լուռ եղեւ Յակոբ մինչեւ եկին նոքա: Եւ ել Եմովր հայր Սիւքեմայ առ Յակոբ խօսել ընդ նմա: Եկին եւ որդիքն Յակոբայ ի զաչտէ. իբրեւ լուան, ստրջացան արքն, եւ տրտմու-

թիւն էր նոցա յոյժ. զի խայտառակութիւն արար յԻսրայելի, մասնելով առ զուստրն Յակոբայ, եւ ոչ այնպէս զճարիցի: Եւ խօսեցաւ ընդ նոսա Եմովր եւ ասէ, Սիւքեմ որդի իմ սիրեաց ոգւովք չափ զզուստրն ձեր. արդ տուք 9 գնա նմա կնութեան, Եւ արարէք ընդ մեզ իննամութիւն. զզատերս ձեր տուք մեզ, եւ զգատերս մեր ասէք որդւոց 10 ձերոց. Եւ քնակեցէք ի միջի մերում, եւ երկիրդ անա ընդարձակ է առաջի ձեր, եւ քնակեցէք եւ շահեցարուք ի դմա, եւ ստացարուք ստացուածս ի 11 դմա: Եւ ասէ Սիւքեմ ցնայր նորա եւ ցեղբարս նորա, Գաից չնորս առաջի 12 ձեր, եւ զոր ինչ ասիցէք՝ տացուք: Յաճակեցէք յոյժ զվարձանս եւ զօժիտս, եւ սայ՝ որչափ եւ ստիցէք. եւ տուք 13 ինձ զազջիկն զայն կնութեան, Պատասխանի ետուն որդիքն Յակոբայ Սիւքեմայ եւ Եմովրայ Տոր նորաննկութեամբ, եւ ասնն ցնոսա՝ (վասն զի պղծեցին 14 զԴինա զքոյր նոցա) Եւ ասնն Տմաւոն եւ Դեւի եղբորքն Դինայ՝ որդիքն Լիայ՝, Ոչ կարեմք ասնեկ զայդ բան, տալ զքոյրն մեր ասն անթլխասի, քանզի նախատինք 15 են մեզ. Բայց այսու նամանեցուք ձեզ, եւ քնակեցուք ի միջի ձերում, եթէ լինիցիք իրրեւ զմեզ եւ զուք ի թլխա- 16 տիկ ձեզ զամենայն արու, Եւ տացուք զգատերս մեր ձեզ, եւ ի գատերաց ձերոց տացուք մեզ կանայս, եւ քնակեցուք առ ձեզ, եւ եղիցուք իրրեւ սզգ մի:

17 Այսա թէ ոչ լսիցէք մեզ թլխասել, առ 18 եայ զգատերս մեր ի բաց գնացուք: Եւ հաճոյ թուեցան բանքն առաջի Եմովրայ, եւ առաջի Սիւքեմայ որդւոց Եմովրայ:

19 Եւ ոչ յամեաց պատամինն ասնեկ զբանն, զի յոյժ հարեալ էր ի գատերն Յակոբայ. եւ նա էր պատուականագոյն քան զամենեւեանն որ ի տան Տոր նորա էին:

20 Եւ եկին Եմովր եւ Սիւքեմ որդի նորա ի գուռն քաղաքին իւրեանց, եւ խօսեցան ընդ արս քաղաքին իւրեանց եւ 21 տանն, Որեարն այն խաղաղութեամբ են ընդ մեզ. արդ քնակեցեան յերկրիս եւ շահեցցին ի սմա. զի երկիրս ընդարձակ է առաջի նոցա, զգատերս նոցա առցուք մեզ կանայս, եւ զգատերս մեր

1 Եբբ. մեղմով բստ գնացից խաչանցդ 2 Սեբբ. գլխոս 3 Եբբ. Սոկբովթ, ոչ-ի-ն-ն, փարսեք 4 Կամ, արծաթեայ 5 Եբբ. կոչեաց գնա Աստուած, Աստուած Իսրայելի 6 Եբբ. Խեւացի 7 Եբբ. խօսեցան 8 Եբբ. ցնոսա 9 Եբբ. հաւանեցուք ձեզ 10 Եբբ. զզուստր

22 տացուք նոցա: Բայց միայն այսու համանկեցն մեզ որեարն՝ ընակել ընդ մեզ լինել արզ մի, ի թլփատել մեզ զամուհայն արու, որպէս նոքայն թլփատեալ

23 են: Եւ ինչք նոցա եւ անասունն նոցա եւ չորքոտանի նոցա ոչ ապաքէն մեր լինիցի: Բայց այսու եւեթ համանկեցուք նոցա, եւ ընակեացն ի միջի մերում:

24 Եւ լուան Եմովրայ եւ Սիւքեմայ որդւոյ նորա ամենեքին որ ելանէին ընդ գուան քաղաքին իւրեանց. եւ թլփատեցին զմարմին անթլփատութեան իւրեանց ամենայն արու, ամենեքին որ ելանէին ընդ գուան քաղաքի նորա:

25 Եւ եղեւ յաւուրն երրորդի մինչդեռ էին նոքա ի ցաւան, առին երկու որդիքն Յակորայ, Եմաւոն եւ Դեւի եղբարք Դինայ՝ իւրաքանչիւր զսուր իւր, եւ մտին ի քաղաքն կազմութեամբ, եւ կուտարեցին զամենայն արու. Եւ զԵմովր եւ զՍիւքեմ զորդի նորա սպանին ի սուր սուսերի. եւ առին զԴինա ի տանէ Սիւքեմայ եւ ելին: Եւ որդիքն Յակորայ մտին ի վերայ վիրաւորացն, եւ առին աւար զքաղաքն, յորում պղծեցին զԴինա

28 զքոյրն նոցա. Զարջաու եւ զոչխար եւ զէչս նոցա որ էին՝ ի քաղաքին, եւ որ

29 ինչ ի բացի էր՝ առին. Եւ զամենայն մարդագրի նոցա, եւ զամենայն՝ զկահ եւ զկարասի նոցա, եւ զկանայս նոցա զերեցին, եւ յախչտակեցին որ ինչ էր

30 ի քաղաքին եւ որ ինչ՝ ի տունս եւ աւսէ Յակոր գճմաւոն եւ ցլեւի, Ստելի արարէք զիս, երեւել անդամ ամենայն՝ ընակչաց երկրիս ի մէջ Քանանացւոց եւ Փերեգացւոց. եւ ես սակաւաւոր եմ թուով, արդ եթէ ժողովցին ի վերայ իմ եւ հարկանիցեն զիս, սատակելով սատակիցիմ եւ ես եւ տուն իմ: Եւ ասեն,

31 Իսկ զիմորդ զի իբրեւ զբող քարչեցին զքոյրն մեր:՝

ԳԼ. ԼԵ

1 Եւ ասէ Աստուած ցՅակոր, Արի եյ ի տեղին ի Բեթէլ, եւ անդ ընակեացիս,

եւ արացես անդ սեղան Աստուծոյ որ երեւեցան քեզ ի փախչելն քո յերեսոց

2 Եսաւայ եղբոր քո: Եւ ասէ Յակոր ցընտանիս իւր եւ ցամենակն որ ընդ նմա էին, Ի բաց առէք զաստուածսդ օտարոտիս որ ընդ ձեզ են ի միջոյ ձերմէ, եւ սրբեցարուք, եւ փոխեցէք զպատուճանս ձեր. Եւ յարուցեալ կցուք ի Բեթէլ, եւ արացուք անդ սեղան Աստուծոյ, որ լուաւ ինձ յաւուր նեղութեան, որ էր ընդ լս եւ ասրեցոց զիս

3 ի ճանապարհին՝ զոր գնացի: Եւ ետուն ցՅակոր զաստուածսն օտարոտիս որ էին ի ձեռս նոցա, եւ զլինդս որ յականջս իւրեանց. եւ ծածկեաց զնոսա Յակոր ի ներքոյ բեւեկոտն ի Սիկիմ, եւ կորոյս զնոսա մինչեւ ցայսօր ժամանակի: Եւ չուեաց Իսրայէլ ի Սիկիմայ՝. եւ եղեւ ան Աստուծոյ ի վերայ քաղաքացն որ չուրջ զնուաւ, եւ ոչ ելին զձեռս որդւոցն իսրայելի: Եւ եկն Յակոր ի Լուզ, որ է յերկրին Քանանացւոց, այն ինքն է Բեթէլ, ինքն եւ ամենայն ժողովուրդն որ ընդ նմա. Եւ շինեաց անդ սեղան, եւ կոչեաց զանուն տեղւոյն՝ Բեթէլ. զի անդ երեւեցաւ նմա Աստուած ի փախչել նորա յերեսաց Եսաւայ եղբոր իւրոյ:

8 Եւ մեռաւ Դեբուրա դայեակն Ռեբեկայ, եւ թաղեցաւ ի ներքոյ Բեթելայ ընդ կաղնեաւն. եւ կոչեաց զանուն նորա Կաղնի սոյոյ:

9 Եւ երեւեցաւ Աստուած Յակորայ՝ մինչդեռ անդ էր ի Լուզ, յորժամ եկն ի Միջագետաց Ասորոց, եւ օրհնեաց զնա Աստուած: Եւ ասէ ցնա Աստուած, Անունդ քո Յակոր՝ ոչ եւս կոչեսցի Յակոր, այլ Իսրայէլ եղիցի անուն քո. եւ կոչեաց զանուն նորա Իսրայէլ: Եւ ասէ ցնա Աստուած, Ես եմ Աստուած զքաւական՝. աճեսլիք եւ բազմաջիր. աղգք եւ ժողովք ազգաց եղիցին ի քէն,

12 եւ թագաւորք յերանաց քոց կցին: Եւ զերկիրդ զոր ետու Արրահամու եւ Իսահակայ՝ քեզ տաց զգա, քեզ եղիցի, եւ զաւակի քում յետ քո տաց զերկիրդ զայդ:

13 Եւ վերացաւ ի նմանէ Աստուած ի տեղւոյնէն ուր խօսեցաւ ընդ նմա: Եւ կանգնեաց Յակոր արձան ի տեղուոյն ուր

1 Եբր. հաւանեցին 2 Եբր. հաւանեցուք 3 Եբր. նորա 4 Եբր. համարձակութեամբ 5 Եբր. եւ որ ինչ էր 6 ՅԵբր. ոչ-ի-տէ 7 Եբր. և զամենայն մանկուան նոցա և 8 Եբր. Տագնապեցուցէք զիս յինել զարշեի 9 Եբր. Միթէ Իբրեւ ընդ բող՝ պարտ էր գնալ ընդ քեռ մերում:

10 Եբր. ի Սիւքեմ (5) եւ չուեցին 11 Եբր. Յակորայ 12 Եբր. Աստուած Բեթելայ 13 Եբր. Ամենակալ

խօսեցաւ ընդ նմա , արձան քարեղէն ,
և նստիբնաց ի նմա նուէրս , և արկ ի
15 վերայ նորա եւզ : Եւ կոչեաց զանուն
տեղւոյն ուր խօսեցաւ ընդ նմա Աս-
տուած՝ Բեթէլ :

16 Եւ չուեաց ի Բեթելայ . և եղև
իրբևե մերձեցաւ ի Քարբաթա երկիր ,
մտանել՝ յԵփրաթա , ծնաւ Ռաքէլ , և

17 գժուարածին եղև ի ծննդեաննս և եղև
ի վշտանայն նորա ի ծննդեանն , և ասէ
ցնա ծնուցիչն , Քաջարեկաց , զի և

18 այդ ևս քո ուսոր է : Եւ եղև ընդ
հանել ուրոցն , քանզի մեռաւ , կոչեաց
զանուն նորա Ուրի վշտաց խոց , և

19 հայրն կաշեաց զնա Յենիթամին : Մեռաւ
Ռաքէլ և թաղեցաւ ի ծանապարհին Եփ-
20 րաթայ , այն խոյ է Բեթլղեհնս և կանդ-
նեաց Յակոբ արձան ի վերայ շիրմին նո-
րա , այն է արձան շիրմի Ռաքելայ մինչ-
չեւ ցայսօր ժամանակի :

21 Եւ չուեաց Իսրայել և ևհար զխորուն
22 իւր յայնիկոյ աշտարակին Գաղերայ : Եւ
եղև իրբև բնակեաց Իսրայել յերկրին
յայնմիկ , զնաց Ռուբէն և ննջեաց ընդ
Բալլայ հարձի հօր իւրոյ . յուա Իսրայել
Յեւ չար թուեցաւ ստաջի նորա՝ :

Եւ էին որդիք Յակոբայ երկոտասանք .
23 Որդիք Լիայ , անդրանիկ Յակոբայ՝ Ռու-
բէն , Շմուոն , Ղեւի , Յուդա , Իսաքար ,
24 Զարուզն . Եւ որդիք Ռաքելի՝ Յովսէփ
25 և Բենիթամին . և որդիք Բալլայ նա-
ժըլայն Ռաքելայ՝ Դան և Նեփթալիմ :

26 Եւ որդիք Սելյայ նաժշտին Լիայ՝ Գաղ
և Ասեր : Այս են որդիք Յակոբայ , որ
եղևն նմա ի Միջագետս Ասորոց :

27 Եւ եկն Յակոբ առ Իսահակ հայր իւր
ի Մամբրէ՝ ՚ի քաղաք դաշտին՝ , այն է
Քերթն , յերկրին Քանանացոց ,՝ ուր
պանդխտեցան Արբաճամ և Իսահակ :

28 Եւ եղևն ամենայն աւուրք Իսահակայ
զոր երկեաց՝ ամք հարկայ և ութսուն :

29 Եւ պակասեալ Իսահակայ մեռաւ , և
յաւելաւ յազգ իւր , ծերացեալ և լի
աւուրք . և թաղեցին զնա Եսաւ և
Յակոբ որդիք իւր :

ԳԼ . 19

1 Եւ այս են ծնունդք Եսաւայ , նա է Ե-

1 Եբր. չուեցին ի Բեթելայ , և էր տակաւին ճա-
նապարհ ի մտանել . 2 Այս է Եսաւ , որդի աջոյ
3 Եբր. գալտե 4 Եբր. ի քաղաքին Աբրոկայ
(տես ԳԼ . ԻԿ . 2)

2 զովմ : Եւ առ իւր Եսաւ կանայս ի զըս-
տերաց Քանանացոց , զԱղգա զգուսոր
Ելոնայ Քետացոյ , և զՈղիբամա գուսոր
Անայի՝ որդւոյ Սերեղովնի Խեացոյ ,

3 Եւ զԲասեմաթ զգուսոր Իամայիլի՝ զքոյր
4 Նարէութայ : Եւ ծնաւ Աղգա Եսաւայ
զԵղիբայ , և Բասեմաթ ծնաւ զՌա-

5 գուէլ , և Ողիբամա ծնաւ զՅէուս և
զԵղզոմ և զԿորիս . սքաւ են որդիք Ե-
սաւայ , որ եղևն նմա յերկրին Քանա-
նացոց :

6 Եւ առ Եսաւ զկանայս իւր և զու-
տերս և զգասերս իւր և զամենայն
մարդիկ տան իւրոյ , և զամենայն ինչս
և զանասուն , և զամենայն ինչ զոր
ստացաւ Յեւ զոր արար՝ յերկրին Քանա-
նացոց , և գնաց յերկրէն Քանանա-

ցոց յերեսաց Յակոբայ եղբօր իւրոյ :
7 Զի էին բազում ինչք նոցա ի միասին
բնակերոյ . և ոչ կարէր երկիրն պան-
զըլատուիւնս հանդարտել նոցա ի բազ-

8 մաթևնէ ընչից իւրեանց : Եւ բնակե-
ցաւ Եսաւ ի լերինս Սէիր . Եսաւ՝ որ նա
ինքն է Եղովմ :

9 Եւ այս են ծնունդք Եսաւայ՝ հօրն Ե-
10 զովմայեցոց , ի լերինս Սէիր : Եւ այս
են անունք որդւոցն Եսաւայ . Եղիբազ
որդի Աղգայի կնոջ Եսաւայ , և Ռա-
գուէլ որդի Բասեմաթայ կնոջ Եսաւայ :

11 Եւ եղևն որդիք Եղիբազայ՝ Թեման ,
Ուլմար , Սովքար , Գոթոմ և Կենէղ :
12 Եւ Թամնա էր հարձ Եղիբազու որդւոյ
Եսաւայ , և ծնաւ Եղիբազու զԱմազէկ .
սքաւ են որդիք Աղգայի կնոջ Եսաւայ :

13 Եւ այս են որդիք Ռագուէլի՝ Նաքովթ ,
Զարեն , Սամնա և Մեդա . սքաւ են որ-

14 դիք Բասեմաթայ կնոջ Եսաւայ : Եւ այս
են որդիք Ողիբամայ գասեր Անայի որդւոյ
Սերեղովնի կնոջ Եսաւայ , և ծնաւ Ե-
սաւայ զՅէուս և զԵղզոմ և զԿորիս :

15 Սքաւ են իշխանք՝ որդիք Եսաւայ .
որդիք Եղիբազու անդրանկանն Եսաւայ ,
իշխան Թեման , իշխան Ուլմար , իշխան
Սովքար , իշխան Կենէղ , իշխան Կորիս ,
իշխան Գոթոմ , իշխան Ամազէկ . սքաւ
են իշխանք Եղիբազու յերկրին Եղով-

16 մայեցոց . սքաւ են որդիք Աղգայի և
այս են որդիք Ռագուէլի որդւոյ Եսաւայ .
իշխան Նաքովթ , իշխան Զարեն , իշխան
Սամնա , իշխան Մոզէ . այս են իշխանք
Ռագուէլի յերկրին Եղովմայ . սքաւ են որ-

17 դիք Բասեմաթայ կնոջ Եսաւայ : Եւ այս
են որդիք Ողիբամայ գասեր Անայի որդւոյ
Սերեղովնի կնոջ Եսաւայ , և ծնաւ Ե-
սաւայ զՅէուս և զԵղզոմ և զԿորիս :

18 Սքաւ են իշխանք՝ որդիք Եսաւայ .
որդիք Եղիբազու անդրանկանն Եսաւայ ,
իշխան Թեման , իշխան Ուլմար , իշխան
Սովքար , իշխան Կենէղ , իշխան Կորիս ,
իշխան Գոթոմ , իշխան Ամազէկ . սքաւ
են իշխանք Եղիբազու յերկրին Եղով-

19 մայեցոց . սքաւ են որդիք Աղգայի և
այս են որդիք Ռագուէլի որդւոյ Եսաւայ .
իշխան Նաքովթ , իշխան Զարեն , իշխան
Սամնա , իշխան Մոզէ . այս են իշխանք
Ռագուէլի յերկրին Եղովմայ . սքաւ են որ-

20 դիք Բասեմաթայ կնոջ Եսաւայ : Եւ այս
են որդիք Ողիբամայ գասեր Անայի որդւոյ
Սերեղովնի կնոջ Եսաւայ , և ծնաւ Ե-
սաւայ զՅէուս և զԵղզոմ և զԿորիս :

21 Սքաւ են իշխանք՝ որդիք Եսաւայ .
որդիք Եղիբազու անդրանկանն Եսաւայ ,
իշխան Թեման , իշխան Ուլմար , իշխան
Սովքար , իշխան Կենէղ , իշխան Կորիս ,
իշխան Գոթոմ , իշխան Ամազէկ . սքաւ
են իշխանք Եղիբազու յերկրին Եղով-

22 մայեցոց . սքաւ են որդիք Աղգայի և
այս են որդիք Ռագուէլի որդւոյ Եսաւայ .
իշխան Նաքովթ , իշխան Զարեն , իշխան
Սամնա , իշխան Մոզէ . այս են իշխանք
Ռագուէլի յերկրին Եղովմայ . սքաւ են որ-

են որդիք Ողիբամայ կնոջ Եսաւայ . իշխան Յէուս , իշխան Յեզղոմ , իշխան Կորիս . այս են իշխանք Ողիբամայ գտեր

19 Անայի կնոջ Եսաւայ : Այս են որդիք Եսաւայ , եւ այս են իշխանք նոցա , ¹եւ

20 այս են որդիք՝ Եղովմայ Եւ այս են որդիք Սէիրայ Քոռացւոյ որ ընակեալ էր յերկրին . Դովտան , Սերաղ , Սերեզովե , Անա ,

21 Դեսոն եւ Ասեր եւ Ռիտոն . սաքա են իշխանք Քոռեցւոյն , որդւոյ Սէիրայ յերկրին Եղովմայ : Եւ եղեն որդիք Դովտանայ՝ Քոռի եւ Եման , եւ քոր Դովտանայ՝

23 Թաման : Եւ սաքա են որդիք Սորաղայ . Գողոմ եւ Մանաքաթ եւ Գերաղ եւ

24 Մովիար եւ Ովեան : Եւ այս են որդիք Սերեզովի . Այիէ եւ Ովեան . այս Ովեանն է որ եղիտ ²զաղբերն յանապատի՝ մինչ արածէր զէջն Սերեզովի հօր

25 իւրոյ : Եւ այս են որդիք Անայի . Դեսոն

26 եւ Ողիբամա զուսար Անայի . Եւ այս են որդիք Դեսոնայ . Անազան եւ Եսրան

27 եւ Յեթրան եւ Քառան : Եւ այս են որդիք Ասերայ . Բալլան եւ Զուկան եւ

28 ³Ոմեիկան եւ՝ Ուկամ : Եւ այս են որդիք ⁴Ռիտոնի . Ովս եւ Առան : Եւ այս են իշխանք Քոռեայ . իշխան Դովտան , իշխան Սովբաղ , իշխան Սերեզոն , իշխան

30 Անա , իշխան Դեսոն , իշխան Ասեր , իշխան ⁵Ռիտոն . այս են իշխանք Քոռեայի պետութիւնս իւրեանց յերկրին Եղովմայ :

31 Եւ այս թագաւորք են որ թագաւորեցին յերկրին Եղովմայիցոց , մինչչեւ թագաւորեալ էր թագաւոր յԻսրայելի :

32 Եւ թագաւորեաց յեղովմ Բաղա որդի Սեպփուրայ . եւ անուն քաղաքին նորա Դեննարա : Եւ մեաւ Բաղա , եւ թագաւորեաց ընդ նորա Յովբար որդի Զաւ

34 ընի ի Խոորայ : Եւ մեաւ Յովբար , եւ թագաւորեաց ընդ նորա Ասով յերկրէ

35 ըէ Թեմանացոց , Եւ մեաւ Ասով , եւ թագաւորեաց ընդ նորա Աղազ որդի Բաղաղայ , որ կոտորեաց զՄազիամ ի գաշտին Մովբացոց . եւ անուն քաղաքի նորա Գեթէմ : Եւ մեաւ Աղազ , եւ թագաւորեաց ընդ նորա Մամաղա ի

37 Մասեկիայ , Եւ մեաւ Մամաղա , եւ թագաւորեաց ընդ նորա Սաւուզ յԻսրայելայ՝

38 որ առ Դեսեղերն : Եւ մեաւ Սաւուզ , եւ թագաւորեաց ընդ նորա Բալլայենն

39 որդի Ոքսորայ : Եւ մեաւ Բալլայենն որդի Ոքսորայ , եւ թագաւորեաց ընդ նորա Աղազ Յորդի Բարաղայ՝ . եւ անուն քաղաքի նորա Փոգով , եւ անուն կնոջ նորա Մետարէէլ զուսար Մաւուսանք ³որդւոյն Մաւուսայ եւ՝ իշխանացն Եսաւայ յաղէ իւրեանց , ըստ տեղիս իւրեանց՝ ³յաշխարհս իւրեանց , եւ ի տոհմս իւրեանց՝ ըստ անուանց նոցա . իշխան Թաման , իշխան Դովտան , իշխան Յեթաթ , իշխան Ողիբամաս , իշխան Հեկայ , իշխան Փենոյիս , իշխան Կենէզ , իշխան Թեման , իշխան Մաղար ,

43 իշխան Մազէղիէլ , իշխան Զարային : Սաքա են իշխանք Եղովմայիցոց ըստ ընակութեան յերկրի ստացուածոց իւրեանց . եւ այս է Եսաւ հայր Եղովմայ :

ԳԼ . ԼԷ

1 Եւ ընակէր Յակոբ յերկրին ուր պանդրեաւեցաւ հայր նորա , յերկրին Քանանաւ

2 յւոց : Եւ այս են ծնունդք Յակոբայ . Յովսէփ եւ Թեմեաւանանայ էր մինչ արածէր եզրարքն հանգիւրծ խաչինս . եւ էր կրտսեր ընդ որդիսն Բալլայ եւ ընդ որդիսն Զեբուլայ կանանց հօր իւրոյ . եւ ⁶բերէին համբաւ չար զՅովսէփայ առ Իսրայէլ

3 հայրն իւրեանց : Բայց՝ Իսրայէլ սիրէր զՅովսէփի սաւաւել քան զամենայն որդիսն իւր , քանզի որդի ընտելեան էր նոցա . եւ արար նմա սլատմուճան ծաղկեաց :

4 Իրեւ տեսին եղբարքն նորա թէ սիրէ զնա հայրն քան զամենայն որդիս իւր , ատեցին զնա , եւ ոչ կարէին խօսել ինչ ընդ նմա խաղաղութեամբ :

5 Ետես երազ Յովսէփի եւ պատմեաց եզրարցն իւրոց . եւ յաւելին եւս ասել զնա : Եւ ասէ ցնոսա , Լուսորուք զերազն զոր տեսի . Թուէր եթէ որայ կայէաք ի գաշտի միում , եւ կանգնեցաւ որայն իմ եկաց ուղղորդ . եւ դարձան որայքն ձեր եւ պաղին երկիր իմում

8 որայոյն : Եւ ասեն զնա եղբարքն իւր , Միթէ թողաւորիցով թագաւորեցես ի վերայ մեր , կամ տիրիցով տիրեսցես մեզ . եւ յաւելին եւս ասել զնա փասն երազոյն նորա եւ վասն բանիցն նորա :

¹ Եբբ. սյսինքն ² Եբբ. զՅեթմուկան ³ Յեբբ. Գուլուտ ⁴ Եբբ. Դեսոնայ ⁵ Եբբ. Դեսոն

⁶ Եբբ. բերէր Յովսէփ համբաւ չար զնոցանէ առ հայր նոցա : (3) Եւ

9 Եւ հսեա մեւս եւս երազ, եւ պատմեաց
 10 1^{հօր} իւրում եւ՝ եղբարց իւրոց, եւ ա-
 սէ, Ահա տեսնէի մեւս եւս այլ երազ,
 որպէս թէ արեգակնց եւ լուսին եւ մե-
 11 1^{սաստեաց} նմա հայրն իւր եւ ասէ,
 2^{հնչ} է երազն գոր տեսեր. արդ զարով
 զայցեմք ես եւ մայր քո եւ եղբարք
 12 քո եւ երկիր պաղանկցեմք քեզ: Եւ նա-
 խանձեցան ընդ նմա եղբարքն իւր.
 13 Եւ զնազն եղբարքն նորա արածեի
 4^{գեստեաց} հօրն իւրեանց ի Սիււքեմ: Եւ
 ասէ Իսրայէլ զՅովսէփ, Ո՛չ աւանիկ եզ-
 րարք քո արածեն զխայնսն ի Սիււքեմ. եկ
 ստաքեցից զքեզ առ նոսա: Եւ ասէ ցնա,
 14 Ահաւասիկ ես: Ասէ ցնա Իսրայէլ, Երթ
 տես եթէ ո՞ղջ իցեն եղբարքն քո եւ
 խայնք, եւ բեր ինձ գրոց. եւ ա-
 15 ւաքեաց զնա ի ծործորոյն Քերոսի:
 16 Եւ երբ ի Սիււքեմ: Եւ եղև զնա այր մի՝
 մուրեալ ի դաշտն. հնարց ցնա այրն
 17 եւ ասէ, 2^{հնչ} ինզրեա: Եւ նա ասէ,
 2^{եղբարսն} իմ ինզրեմ. պատմեա ինձ
 18 ո՞ւր արածիցեն: Եւ ասէ ցնա այրն,
 Բարձին աստի. եւ լուայ զի ասէին,
 19 Երթիցուք ի Դովթայիմ: Եւ զնաց Յով-
 սէփ զհետ եղբարց իւրոց, եւ եղև
 20 2^{գնտա} ի Դովթայիմ: Տեսին զնա 1^{եզ-}
 րարքն յառաջագոյն՝ ի հեռաստանէ՝ մինչ-
 21 չեւ մօտ եկեալ էր առ նոսա, խորհուրդ
 22 վատ ի մէջ առին սպանանել զնա: Եւ
 ասեն իւրաքանչիւր ցեղբայր իւր, Ահա
 23 երազատեան զայ. Եկայք սպանուք
 զնա, եւ ընկեցուք ի մի ի գրոց աստի,
 եւ ասեցուք եթէ Գաղան չար եկեր զնա,
 եւ տեսցուք զինչ լինիցին երազն նորա:
 24 Իբրեւ լուաւ Ռուբէն, կորզեաց զնա
 ի ձեռաց նոցա եւ ասէ, Մի հարցուք
 25 զզա յողի: Եւ ասէ ցնտա Ռուբէն, Մի
 հեղցուք արևն, այլ արկէք զզա ի գուր
 մի յանապատի աստ, եւ ձեռն մի ար-
 կանէք ի նա. զի թափեացէ զնա ի ձե-
 26 րաց նոցա, եւ հասուցանիցէ զնա առ
 հայր իւր:
 27 Եւ եղև իբրեւ եկն Յովսէփ առ եզ-
 բարսն իւր, մերկացին զպատմուճանն
 28 նորա ծաղկեայ ի նմանէ. Եւ առին ըն-
 կիցին զնա ի գուրն. եւ գուրն ունայն

25 էր, եւ ջուր ոչ գոյր ի նմա: Եւ նստան
 ուտել հաց. զաչս ի վեր բարձեալ տե-
 սին, եւ ահա ճանապարհորդք Իսմայե-
 լացիք զային ի Գաղաազէ, եւ ուլտը
 նոցա լի էին ինկովք, ստաչխամր եւ
 26 փանսիւ, եւ երթային ի ջուրանել յե-
 զիպտոս: Եւ ասէ Յուզա ցեղբարսն
 իւր, 2^{հնչ} ոչ օրուտ է եթէ սպանանի-
 ցեմք զեղբայրն մեր, եւ թաքուցանի-
 27 ցեմք զարևն նորա. Եկայք վաճառե-
 ցուք զնա Իսմայելացուոցն, եւ ձեռք մեր
 մի չաղախեցին ի նմա, զի եղբայր
 եւ մարմն մեր է. եւ լուան նմա եզ-
 28 բարքն իւր: Եւ անցանէին արք Մա-
 դանայիք, վաճառականք, եւ ձգեցին
 հանին զՅովսէփ ի գրոց անտի, եւ վա-
 ճառեցին զՅովսէփ Իսմայելացուոցն քսան
 3^{գահեկանի}. եւ ի ջուրն զՅովսէփ յե-
 29 զիպտոս: Դարձաւ Ռուբէն ի գուրն, եւ
 ոչ եղև զՅովսէփ ի գրի անդ. պա-
 30 տանեաց զՅանդերձս իւր: Դարձաւ առ
 եղբարսն իւր եւ ասէ, Պատանեալն չէ
 անդ. եւ ես արդ յս երթայց:
 31 Եւ առեալ զպատմուճանն Յովսեփայ՝
 զենին ուլ այծեաց, եւ թաթաւեցին
 32 զպատմուճանն յարեանն: Եւ աւաքեցին
 զպատմուճանն ծաղկեայ տանել առ հայրն
 իւրեանց, եւ ասեն, 2^{այդ} գտաք. ծա-
 նիր եթէ որդւոյ քո իցէ պատմուճանդ
 33 եւ եթէ ոչ: Եւ ծանեաւ զնա եւ ասէ,
 Պատմուճանս որդւոյ իմոյ է. գազան
 չար եկեր զնա, գազան յափշտակեաց
 34 զՅովսէփ: Եւ սրտառեաց զհանդերձս
 իւր, եւ քուրձ զղեցաւ ի վերայ միջոյ
 իւրոյ. եւ սուղ ունէր ի վերայ որդւոյն
 35 իւրոյ աւուր բազումս: Եւ ժողովեցան
 ամենայն ուստերք նորա եւ ամենայն
 զստերք նորա, եւ եկին միտիմարել զնա,
 եւ ոչ կամէր միտիմարել. ասէ, 2^ի իմից
 ես սովին սզով առ որպի իմ ի դժոխս:
 36 Եւ ելաց զնա հայրն իւր: Իսկ Մագիա-
 նայիքն վաճառեցին զՅովսէփ յեղիպ-
 տոս Պետափրեայ ներքինուց զահճապե-
 տի Փարաւոնի:

ԳԼ . ԼԸ

1 Եւ եղև ի ժամանակի յայնմիկ էջ
 Յուզա յեղբարց իւրոց, եւ չորաւ առ
 ոմն Ոգոզումայի որում անուն էր Իրաս

1^{հօր} ք. պատմ. 2^{եզ} ք. Իբրեւ պատմեաց զայս հօր
 իւրում եւ եղբարց իւրոց, սաստեաց

3^{եզ} ք. արծաթոյ

2 Եւ ետես անդ Յուզա գրուարտ անն Քանանացոյ, որում անուն էր Շաւա, եւ առ զնա իւր կին, եւ եմուտ առ նա:

3 Եւ յղացաւ եւ ծնաւ որդի, եւ կոչեաց 4 զանուն նորա էր: Եւ յղացաւ. զարձեակ եւ ծնաւ որդի, եւ կոչեաց զանուն նորա Սելովմ:

5 Եւ նա էր ի Քարթի յորժամ ծնաւ ՚հնոսա:

6 Եւ առ Յուզա կին էրայ անդրանկի 7 իւրում, որում անուն էր Թամար: Եւ եղեւ էր անդրանկին Յուզայ՝ չար առաջի Տեանն, եւ սպան զնա՝ Աստուած:

8 Եւ ասէ Յուզա յԱւնան, Մուտ առ կին եղբոր քո, եւ ամուսնացիս ընդ նմա, եւ յարուսչես դաւակ եղբոր քում:

9 Իրբեւ զիտաց Աւնան թէ ոչ լինի նմա զաւակն, լինէր յորժամ մտանէր առ կին եղբոր իւրոյ, հեղոյր՝ զսերմն յեր-

10 կիր, չապ զաւակ եղբոր իւրում: Եւ չար թուեցաւ առաջի Աստուծոյ զործն

11 զոր արար, եւ սպան եւ զնա եւս: Եւ ասէ Յուզա զԹամար նու իւր, Նիստ այրի ի տան հօր քո՝ մինչեւ եղիցի մեծ Սելովմ որդի իմ. զի ասէր թէ՛ զուցէ եւ նա եւս մտանիցի որպէս եւ եղբարքն նորա: Գնաց Թամար եւ նստաւ ի տան հօր իւրոյ:

12 Իագմացան աւուրքն, եւ մտաւ զուարես Շաւայ, կին Յուզա. միխթարեցաւ Յուզա եւ զնայ ի կտուրս խաչանց իւրոյ, ինքն եւ Իրաս՝ հովիւ իւր

13 Ոզոզումացի ի Թամնա: Ազգ եղեւ Թամարայ՝ նուոյ նորա՝ եւ ասեն, Ահա սկեսրայր քո ելանէ ի Թամնա՝ կտրել

14 զիւրաչինս իւր: Եւ եհան զհանդերձս այրութեան իւրոյ յինքննէ, արկաւ տեղ եւ զարկարեցաւ, եւ նստաւ առ դրան Ենանու յանցս Թամնայ. զի ետես կթէ մեծ եղեւ Սելովմ, եւ նա ոչ տայր զնա

15 նմա կին: Իրբեւ ետես զնա Յուզա, համարեցաւ թէ՛ բող իցէ, քանզի ծածկեալ էր զերեսս իւր՝ եւ ոչ ծանեաւ

16 զնա՝: Ստորեցաւ առ նա ի ճանապարհէ անտի եւ ասէ, Թոյլ տուր ինձ մտանի առ քեզ: զի ոչ ծանեաւ թէ՛ նուն նորա իցէ: Եւ նա ասէ, Զինչ տացես

17 ինձ կթէ մտանիցես առ իս: Եւ ասէ, Ես տաղ ածել քեզ ուլ այծեաց ի խաչանց խոյ. եւ նա ասէ թէ՛ Տսն զրա-

18 ւական մինչեւ տացես ածել: Եւ նա ասէ, Զինչ գրաւական տաց քեզ. Եւ ասէ, Զմատանիւ եւ զզինդ եւ զզաւազանդ որ ի ձեռնն ՚քում. եւ եմուտ

19 առ նա, եւ յղացաւ ի նմանէ: Եւ յարեաւ զնայ, եւ եհան ի բաց զձորձն իւր յինքննէ, եւ զղեցաւ զհանդերձս

20 այրութեան իւրոյ: Եւ առաքեաց Յուզա ուլ այծեաց ի ձեռն՝ հովուին իւրոյ Ոզոզումացոյ անուլ զգրաւականն ի կնո-

21 շէ անտի. եւ ոչ եղիտ զնա: Եհարց զարս տեղւոյն եւ ասէ ցնոսա, Ո՛ւր է բողն որ էր յինան ի վերայ ճանապարհիս. եւ ասեն, Զէր աստ ուրեք բող:

22 Եւ զարձաւ առ Յուզա եւ ասէ, Ոչ գտի, եւ արք տեղւոյն ասեն թէ՛ Զիք

23 աստ բող: Ասէ Յուզա, Նմա լիցի այն, այլ զի մի՛ ծաղր կացցուք. ես ետու

24 տանել զուլդ, եւ զու ոչ գտեր: Եւ եղեւ յետ երից ամսոց ազգ եղեւ Յուզայի եւ ասեն, Պոռնկեցաւ նու քո Թամար, եւ ահա յղի է ի պոռնկութեանէ. եւ ասէ Յուզա, Հանէք զնա ար-

25 տաքս, եւ այրեսցի: Եւ մինչդեռ տանէին զնա, առարեաց առ սկեսրայրն իւր եւ ասէ, Յառնէ՛ ոյր այդ գրաւականք են՝ յղի եմ ես. եւ ասէ, Ծանիր ո՞յր իցէ մատանիդ եւ զինդ եւ զաւա-

26 զանդ: Ծանեաւ Յուզա եւ ասէ, Արգարացեալ է նա քան զիս. զի ոչ ետու զնա որզւոյ իմում Սելովմայ. եւ ոչ եւս յաւել զիտել զնա:

27 Եւ եղեւ իրբեւ ծնանէր, եւ էին եր-

28 կու որդիք յորովայնի նորա: Եւ եղեւ ի ժամանակի ծնողեան նորա, մին յառաջագոյն եհան զձեռն իւր. եւ առ ծնուցիչն՝ կապեաց կարմիր ի ձեռն նո-

29 րա, եւ ասէ, Նախ սա՝¹⁰ եկեսցէ: Իրբեւ ամիտիեաց զձեռն անդրէն, եկն ել վազվազակի եղբայր նորա. եւ նա ասէ, Զի՞ է զի՞¹¹ իրամատեցաւ վասն քո ցանդ՝, եւ կոչեաց զանուն նորա՝¹² Փարէս: Եւ յետոյ եկն ել եղբայր նորա, յորոյ ձեռն կապեալ էր զկարմիրն, եւ կոչեաց զանուն նորա Զարա:

Գլ. 1Թ

1 Եւ զՅովսէփ ի Ղուցին յեղիպոտս, եւ

1 Նբբ. զնա 2 Նբբ. Տէր 3 Նբբ. դաւաւ 4 Նբբ. Տեանն 5 Նբբ. բարեկամ

6 Նբբ. զմապաւէնդ 7 Նբբ. քում. և ես նմա 8 Նբբ. բարեկամին 9 Նբբ. մապաւէնդ 10 Նբբ. եւ 11 Նբբ. իրամատեցեր. եղիցի իրամատոր ի վերայ քո 12 Այլ յինչ, իրամատ

զնեաց զնա Պետափրէս ներքինի Փա-
 րաւոնի , զահճապետ , այր Եզրիպտացի ,
 Ի ձեռաց Իսմայիլացւոցն որք իջուցին
 2 զնա անդր : Եւ էր Տէր ընդ Յովսեփայ ,
 եւ էր այր աջողակ , եւ եղև ի տան
 3 տեան իւրոյ յԵզրիպտոս : Իբրև՝ զիտաց
 տէրն նորա թէ Տէր ընդ նմա է , եւ
 զամենայն զինչ եւ անէր՝ Տէր յաջողէր
 4 ի ձեռս նորա : Եւ եզրե Յովսեփի շնորհս
 առաջի տեան իւրոյ , զի հաճոյ էր նմա .
 եւ կացոյց զնա ի վերայ տան իւրոյ , եւ
 զամենայն ինչ որ իւր էր՝ եւ ի ձեռս Յով-
 5 սեփայ : Եւ եղև յետ կացուցանելոյ
 զնա ի վերայ տան իւրոյ եւ ի վերայ
 ամենայն իրիք որ ինչ էր նորա , եւ
 օրհնեաց Տէր զտուն Եզրիպտացւոցն փան
 Յովսեփայ . եւ եղև օրհնութիւն Տեառն
 ի վերայ ամենայն ընչից նորա ի տան եւ
 6 յանդի : Եւ եթող զամենայն որ ինչ իւր
 էր՝ ի ձեռս Յովսեփայ . եւ ոչ զիտէր
 զամենայն որ ինչ կայր ի տան իւրում ,
 բայց միայն զհացն զոր ուտէր : Եւ էր
 Յովսեփի ազնիւ երեսօք եւ զեղեցիկ
 տեսեալք յոյժ :
 7 Եւ եղև յետ բանիցս այսոցիկ եւ արկ
 կին տեան իւրոյ զահս իւր ի վերայ
 Յովսեփայ , եւ ասէ զնա , Քունեա ընդ
 8 իս : Եւ նա ոչ կամեցաւ , եւ ասէ զին
 տեան իւրոյ , Զի եթէ անէ իմ ոչ ճա-
 նաչէ ինչ ի տան իւրում ՚վասն իմ՝ . եւ
 9 զամենայն ինչ ետ ի ձեռս իմ . եւ չիք
 ինչ ի տան աստ որ մեծ է քան զիս .
 եւ չիք ինչ զտտեալ յինչն բայց ի քէն՝
 զի կին նորա ես . եւ զիտիք անեղևմ
 զբանդ զայց զչար եւ զմեծ , եւ մե-
 10 զանչիցիմ ասաջի Աստուծոյ : Եւ եղև
 իբրև խօսէր ընդ Յովսեփայ օր ըստ
 օրէ , եւ ոչ անայր քունէր ընդ նմա ,
 11 եւ ոչ հուպ յինկ : Եւ եղև օր ինչ այն-
 զիսի , մտեալ Յովսեփի ի տունն զորմեկ
 12 ամուսնոց անտի ի ներքս : Ինուն եհար
 զձորձոց նորա եւ ասէ , Ենչեա ընդ իս :
 Եւ նորա թողեալ զձորձս իւր ի ձեռս
 նորա , եւ փախեաւ եւ ել արտաքս :
 13 Եւ եղև իբրև ետեա կիթէ կիթող զձորձս
 իւր ի ձեռս նորա եւ փախեաւ ել ար-
 14 տաքս , Կոչեաց զբնտանիս տանն եւ ասէ ,
 Տեսէք զի ամ մեկ ծառայ Եբրայեցի իտղ
 ասնկ զմեկ . եւ ուտտ առ իս եւ ասէ ,
 Ենչեա ընդ իս . եւ ես աղաղակեցի ի

15 ձայն բարձր . Եւ իբրև լուա թէ մե-
 ծաբարբառ աղաղակեցի , եթող զձորձս
 իւր առ իս եւ փախեաւ ել արտաքս :
 16 Եւ եզ զձորձն առ իւր՝ մինչեւ եկն
 17 տէրն ի տուն իւր : Եւ խօսեցաւ ընդ
 նմա ըստ բանիցս այսոցիկ , եւ ասէ ,
 Եմտտ առ իս ծառայն Եբրայեցի զոր
 18 ամեր մեկ իտղ անեղ զիս . Յեւ ասէ
 18 զիս՝ Քունեա ընդ իս : Եւ իբրև լուա
 թէ բարձրացուցի զբարբառ իմ եւ ա-
 ղաղակեցի , եթող զձորձս իւր յիս եւ
 փախեաւ ել արտաքս :
 19 Եւ եղև իբրև լուա տէրն նորա
 զբանս կնոջն իւրոյ զոր խօսեցաւ ընդ
 նմա եւ ասէ , թէ Այսպէս արար ընդ
 իս ծառայն քո , բարկացաւ սրամտու-
 20 թեամբ : Եւ ան տէրն Յովսեփայ , արկ
 զնա ի բանա , ի տեղի ուր կայանաւորքն
 արքունի կապեալ կային ի բանտին :
 21 Եւ էր Տէր ընդ Յովսեփայ , եւ արկ
 զնովաւ ողորմութիւն , եւ ետ նմա շնորհս
 22 առաջի բանտապետին : Եւ ետ բանտա-
 պետն զբանտն ի ձեռս Յովսեփայ , Յեւ
 զամենայն կալանաւորան որ էին ի բան-
 տի անդ . եւ զամենայն որ ինչ զործէին
 23 անդ , նա էր որ զործէր : Եւ ոչ ինչ զի-
 տէր բանտապետն զբանտին փան նորա ,
 զի ամենայն ի ձեռս Յովսեփայ էր . քան-
 զի Տէր էր ընդ նմա , եւ զոր ինչ զոր-
 ձէր նա՝ Տէր յաջողէր ի ձեռս նորա :

Պ . Խ

1 Եւ եղև յետ բանիցս այսոցիկ , յան-
 ցեաւ տակառապետ արքային Եզրիպտա-
 ցոց , եւ մատակարար տեանն նոցա
 2 արքային Եզրիպտացոց : Եւ բարկացաւ
 Փարաւոն ի վերայ երկացունց ներքին-
 եացն իւրոց , ի վերայ տակառապետին
 3 եւ ի վերայ մատակարարին . Եւ եզ
 զնոտա ի բանտի առ զահճապետին , յայնմ
 բանտի ի տեղում ուր Յովսեփն կայր :
 4 Եւ յանձն արար զնոտա զահճապետն
 Յովսեփայ , եւ կայր նոցա ի սպասու .
 եւ էին առուրս ինչ ի բանտի անդ :
 5 Եւ անտին երազ երկօքն , զիւրաքան-
 չիւր երազ ի միում զիշերի , Յտեսիլ ե-
 րազոյ տակառապետին եւ մատակարա-
 րին՝ որ էին արքային Եզրիպտացոց ,

1Եբր. Եզրիպտացոց : (3) Եւ 2Եբր. ընդ իս

3ՅԻբր. պիտե 4 Եբր. կային . և մտաց անդ 5Եբր. իւրաքանչիւր ըստ մեկնութեան երազոյ իւրոյ , տակառապետն և մատակարարն

6 մինչ էին ի բանտի անդ : Եմուտ առնուսա
 Յովսէփ ընդ առաւօտն , եւ ետես զնոսա,
 7 եւ էին խոռովեալք : Ենարց ցնեքքինիսն
 Փարաւոնի որ էին ընդ նոսա ի բանտի անդ
 առ տեսան նորա եւ ասէ, Ընդէր արտում
 8 են երեսք ձեր այսօր : Եւ նորա ասեն
 ցնա , Երազ տեսաք , եւ ոչ ոք է որ
 մեկնիցէ զնա . եւ ասէ ցնոսա Յովսէփ ,
 11 Ո՞չ ապաքէն ի ձեռս Աստուծոյ իցէ մեկ-
 նութիւն նոցա . պատմեցէք ինձ :
 9 Եւ պատմեաց տակառապետն զերազն
 իւր Յովսեփայ եւ ասէ , Թուէր ինձ ի
 տեսեան իմում որթ մի առաջի իմ .
 10 Եւ յորթն երեք ¹ուռք կանաչք յոյժ .
 եւ ունէր երիտ ողկոյզս նասալ , ողկոյզ
 11 խաղողոյ . Եւ բաժակն Փարաւոնի ի
 ձեռին իմում . առնուի զխաղողն եւ ճօղէի
 ի բաժակն Փարաւոնի , եւ տայի զբա-
 12 ժակն ի ձեռս Փարաւոնի : Եւ ասէ ցնա
 Յովսէփ , Այս է մեկնութիւն նորա . երեք
 13 ուռքն՝ երեք աւուրք են . Այլ եւս երեք
 աւուրք , ²եւ յիշեացէ Փարաւոն զիշխա-
 նութիւնն քո , եւ անդէն ի նոյն տակա-
 ռապետութեան քում կացուցէ զքեզ .
 եւ տացես զբաժակն Փարաւոնի ի ձեռս
 նորա , ըստ առաջնոյ ³իշխանութեանն
 քո՝ որպէս եւ էիրն տակառապետս :
 14 Այլ զիս յիշեցիր յորժամ բարի լինիցի
 քեզ , եւ արասցես ինձ ողորմութիւն .
 եւ յիշեցցես զիս առաջի Փարաւոնի ,
 եւ նանցես զիս ի բանտէ աստի յայս-
 15 մանէ . Ձի զողանալով զողացան զիս
 յերկրէն Երբայեցուց . եւ աստ ինչ ոչ արա-
 16 րի , եւ արկին զիս ի տուն զբոյս այսօրիկ :
 Իբրեւ ետես մատակարարն եթէ ⁴ու-
 զիզ մեկնեաց , ասէ ցնովսէփ , Եւ ես
 տեսանէի յերազի , եւ թուէր ինձ ի՞նչ
 երիս խանս ⁵նաչոյ ունէի ի գլուխ իմ .
 17 Եւ ի վերնում խանին յամենայնէ զոր
 ուտէր արքայ Փարաւոն՝ գործ մատա-
 կարարաց . եւ թուչուքք ուտէին զնա ի
 խանէ անտի որ էր ի վերայ զլիսոյ իմոյ :
 18 Պատասխանի ետ Յովսէփ եւ ասէ ցնա ,
 Այս է մեկնութիւն նորա . երեք խանքն
 19 երեք աւուրք են . Յետ երկց աւուրց
 բարձցէ Փարաւոն զգլուխ քս ի քէն , եւ

կախեացէ զքեզ զփայտէ . եւ կերիցեն
 թուչուքք երկնից զմարմինս քո ի քէն :
 20 Եւ եղև յաւուրն երրորդի , օր ծննդոց
 էր Փարաւոնի , եւ առնէր ուրախութիւն
 ամենայն ծառայից իւրոց . եւ յիշեաց
 զիշխանութիւն՝ տակառապետին եւ ⁶զիշ-
 խանութիւն մատակարարին ի մէջ ծա-
 21 րայից իւրոց : Եւ կացոյց զտակառա-
 պետն անդէն ⁷յիշխանութեան իւրում ,
 եւ ետ զբաժակն ի ձեռն Փարաւոնի :
 22 Եւ զմատակարարն կախեաց զփայտէ ,
 որպէս մեկնեացն Յովսէփ :
 23 Եւ ոչ յիշեաց տակառապետն զՅով-
 սէփ , այլ մոռացաւ զնա :

ԳԼ . ԽԼԽ

1 Եւ եղև յետ երկուց ամաց աւուրց
 ետես Փարաւոն երազ . թուէր թէ կայցէ
 2 առ եղեր զետոյ : Եւ ահա որպէս թէ ի
 գետոյ անտի ելանէին եւթն երինջք զե-
 3 զեցիկ տեսանելով եւ ընտիրք մարմնով ,
 3 եւ արածէին ի խաղի անդ : Եւ ահա այլ
 եւս եւթն երինջք ելանէին յետ նոցա ի
 գետոյ անտի , զաղիքք տեսեամբ եւ
 4 փոխք մարմնովք , եւ արածէին առ այլ
 4 երնջովքն առ եզերք գետոյն . Եւ ուտէին
 եւթն երինջքն զազիքք տեսեամբ եւ
 5 փոխք մարմնովք զեւթն երինջան զե-
 զեցիկս տեսեամբ եւ զընտիրս : Չարթ-
 6 եաւ Փարաւոն : Եւ անդէն ի քունս եմուտ,
 եւ ետես երազ երկրորդ . եւ ահա եւթն
 7 հասկ ելանէին ի միում փնջի ընտիրք
 6 եւ զեզեցիկք : Եւ ահա եւթն այլ նասկք
 ոսինք եւ խորչակահարք ելանէին յետ
 7 նոցա . Եւ կանէին եւթն հասկքն ոսինք ⁸եւ
 խորչակահարք՝ զեւթն հասկան զընտիրս
 եւ զատորս : Չարթեաւ Փարաւոն , եւ
 8 էր երազ : Եւ եղև առաւօտ , եւ խոռ-
 վեցաւ անձն նորա , եւ առաքեաց կոչ-
 եաց զամենայն երազանամոս Եգիպտոսի
 եւ զամենայն իմաստաւորն նորա . եւ
 պատմեաց Փարաւոն զերազան իւր , եւ
 ոչ ոք էր որ մեկնէր զերազան Փարաւոնի :
 9 Եւ խօսեցաւ տակառապետն առաջի
 Փարաւոնի եւ ասէ , Ձյանցանս իմ ⁹ յիշե-
 10 ցուցանեմ այսօր : Բարկայաւ Փարաւոն
 ծառայից իւրոց , եւ եզ զմեկ ի բանտի
 ի տան զահճապետին , զիս եւ զմատակա-

¹ Եբբ. ուռք . և ընդ բողբոջն ել ի վեր ծաղիկ
 նորա . Տասուցին ողկոյզք նորա խաղողս ² Եբբ.
 բարձրացուցէ Փարաւոն զգլուխ քո , և զար
 ձուցէ զքեզ ի բարձ.քո ³ Եբբ. օրինակին
⁴ Եբբ. յաւուրն նորա ⁵ Եբբ. բարուք ⁶ Եբբ.
 գերմակ հացի

⁷ Եբբ. բարձրացոց զգլուխ ⁸ Եբբ. զգլուխ
⁹ Եբբ. ի մատառակութեան ¹⁰ Եբբ. պատմե
¹¹ Եբբ. յիշեմ

41 րարն . Եւ տեսաք երկօքին երազ ի միում դիչերի , ես եւ նա . իւրաքանչիւր
 42 շտա երազոյ իւրում՝ տեսանէաք : Եւ էր անդ ընդ մեզ պատանի մի մանուկ
 Երբայեցի , ծառայ դահճապետին , եւ պատմեցաք նմա , եւ մեկնեաց մեզ դե-
 րազոն մեր , առն ըստ իւրաքանչիւր
 43 երազոյ մեկնեաց : Եւ եղև որպէս մեկ-
 նեացն մեզ՝ նոյնպէս եւ պատահեաց .
 2ինձ զայ հասանել յիշխանութիւն , եւ նմա կախել զփայտէ՝ :
 44 Առաքեաց Փարաւոն եւ կոչեաց զՅով-
 սէփ . եւ հանին զնա ի բանտէ անտի , եւ փոքրեցին զհերս նորա , եւ փոխեցին զպատմուճան նորա՝ , եւ եկն առաջի
 45 Փարաւոնի : Եւ ասէ Փարաւոն ցՅովսէփի , Երազ տեսի , եւ չիք ոք որ մեկնէ զնա . բայց ես լուայ զքէն , ասնն , եթէ յես
 46 զերազս , մեկնես : Պատասխանի ետ Յով-
 սէփ եւ ասէ ցՓարաւոն , Առանց Աստու-
 ծոյ ոչ ինիցի պատասխանի փրկութեան՝ Փարաւոնի :
 47 Խօսեցաւ Փարաւոն ընդ Յովսէփայ եւ ասէ , Թուէր ի տեսեան իմում , եթէ
 48 կայի առ եղեր զեւոյ . Եւ որպէս թէ ի գեւոյց անտի ելանէին եւ թն երինջք ընտիրք մարմնովք եւ զեղեցիկք տեսա-
 49 նելով , եւ արածէին ի խազի անդ : Եւ անա այլ եւս եւ թն երինջք ելանէին զհնի նոցա 5 ի գետոյ անտի՝ , ժանդք եւ զաղիրք տեսանելով յոյժ եւ փոխք մարմնովք , որպիսի ոչ տեսի յամենայն երկրիս Եղիպ-
 20 տացուց զաղբարդյան քան զնոսա : Եւ ուտէին եւ թն երինջքն վտիարք եւ զաղիրք զեւ թն երինջան զառաջինս՝ 6 զզեղեցիկան
 21 եւ՝ զընտիրս . Եւ մտանէին յորովայնս նոցա եւ 7 ոչ երեւէին՝ . եւ երեսք նոցա զաղիրք իրբեւ զառաջինն : 7 Չարթեայ
 22 եւ զարձեալ ննջեցին՝ : Եւ տեսանէի միւտանդամ յերազի , որպէս թէ եւ թն հասկը ելանէին ի միում վնջի լիք :
 23 զեղեցիկք . Եւ այլ եւս եւ թն հասկը ապականեալք , ապաղուք եւ խորչա-
 24 կահարք ելանէին 8 մօտ առ նոսա՝ . Եւ կլանէին եւ թն հասկըն ազաղուք 9 եւ

խորչակահարք՝ զեւ թն հասկան զզեղեցիկս 10 եւ զառաքս՝ : Եւ պատմեցի երազահանացն , եւ ոչ ոք էր որ մեկնէր ինձ :
 25 Եւ ասէ Յովսէփ ցՓարաւոնն , Երազն Փարաւոնի մի է . զոր ինչ Աստուած
 26 աննկոյց է՝ եցոյց Փարաւոնի : Եւ թն երինջքն զեղեցիկք՝ եւ թն ամ են , եւ եւ թն հասկըն զեղեցիկք՝ եւ թն ամ են .
 27 երազն Փարաւոնի մի է . Եւ եւ թն երինջքն տգեղք եւ վտիարք որ ելանէին զհետ նոցա՝ եւ թն ամ են , եւ եւ թն հասկըն ոսինք եւ խորչակահարք՝ 9 լիցի զեւ թն
 28 ամ սով՝ : Բանն զոր ասացի Փարաւոնի՝ այն է , զոր ինչ Աստուած աննկոյց է՝
 29 եցոյց Փարաւոնի : Ահա ամք եւ թն եկեսցեն բազում լիութեան յամենայն երկ-
 30 րիս Եգիպտացուց . Եւ յետ այնորիկ եկեսցէ եւ թն ամ սովոյ , եւ մոռացցին զլիութիւնն յամենայն երկրիս Եգիպտացուց .
 31 եւ սպառեացէ սովն զերկիր . Եւ ոչ ծանրցի 10 լիութիւնն յերեսաց սովոյն որ գայցէ յետ այնորիկ . քանզի սաստիկ լինիցի
 32 յոյժ : Այլ յանն կրկնելոյ երազոյն Փարաւոնի երկիրս անգամ , զի ճշմարիտ իցէ լամն առ ի Աստուծոյ , եւ փութացի
 33 Աստուած աննել զնա : Եւ արգ տես , ինչորեա այր մի իմաստուն եւ խորհրդա-
 կան Փարաւոնի , եւ կացուցես զնա ի
 34 վերայ երկրիս Եգիպտացուց : Եւ արացէ , եւ կացուցէ զորձակայս Փարաւոնի ի վերայ երկրիս , եւ նինպարողեացեն զարմտիս երկրիս Եգիպտացուց զեւ թն ա-
 35 մայն լիութեան : Եւ ժողովեացեն զամենայն կերակուրս 10 զեւ թն ամացն բարեաց եկելոց , եւ ժողովեացի ցորեանն ընդ ձեռամբ Փարաւոնի , եւ կերակուրք
 36 ի քաղաքս պահեցին : Եւ եղիցին կերակուրքն սահեալ երկրիս յեւ թն ամ սովոյն որ լինիցին յերկրիս Եգիպտացուց , եւ մի ստատակացի երկիրս ի սովոյ :
 37 Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի Փարաւոնի եւ առաջի ամենայն ծառայից
 38 իւրոյ : Եւ ասէ Փարաւոն յամենայն ծառայս իւր , Միթէ գտանիցև՝ ոք այր այնպիսի որ ունիցի զոգի Աստուծոյ
 39 յանձին իւրում : Եւ ասէ Փարաւոն ցՅովսէփի , Արովհեաեւ եցոյց քեզ Աստուած զայդ ամենայն , չիք այր իմաստ-
 40 նաղայն եւ խորհրդական քան զքեզ . Դու

1) Եբ. ըստ մեկնութեան երազոյ իւրոյ 2) Եբ. զարձայց զիս յիմ բարձ , ե զնա կախեաց 3) Եբ. փորքեաց զհերս իւր . ե փոխեաց զպատմուճան իւր 4) Եբ. Աչ ես . Աստուած տացէ պատասխանի ի խաղաղութիւն 5) Յեբ. պիտե 6) Եբ. ոչ գիտացաւ թէ մտեալ էին յորովայն նոցա 7) Եբ. եւ զարթեայ 8) Եբ. յետ նոցա

9) Եբ. լիցին եւ թն ամք սովոյ 10) Եբ. լիութեան յերկրին

լիցին ի վերայ ամն իմոյ, եւ բերանոյ քում հնազանդ լիցի ամենայն ժողովորդ իմ. բայց միայն աթոռովս ի վերայ եղէց ես քան զքեզ: Եւ ասէ Փարաւոն ՅՅովսէփի, Ահաւասիկ կացուցի զքեզ այսօր ի վերայ երկրիս Եգիպտաց: Եւ հանեալ Փարաւոնի զմատանին իւր ի ձեռանէ իւրմէ՝ եզ ի ձեռին Յովսէփայ, եւ զգեցոյց նմա պատմութեան բնեղեայ, եւ արկ մանեակ ոսկի ի պարանոց նորա: Եւ եհան զնա յերկրոց կառս իւր. եւ քարոզ կարոյար առաջի նորա. եւ կացոյց զնա ի վերայ երկրիս Եգիպտացոց: Եւ ասէ Փարաւոն ՅՅովսէփի, Ահաւասիկ ես Փարաւոն, առանց քո ոչ ոք համարձգէ զձեռս իւր եւ զոտս իւր ի վերայ ամենայն երկրիս Եգիպտացոց: Եւ կոչեաց Փարաւոն զանուն Յովսէփայ Քառմիթումփանէ, եւ ես նմա զԱսանէթ զուսար Պետարեայ քրմի Արեզ քաղաքի կուլթեան. եւ ել Յովսէփ յերկրս քաղաքի Փարաւոնի: Եւ էր Յովսէփ ամաց երեսնից՝ յորժամ ընծայեցաւ առաջի Փարաւոնի արքային Եգիպտացոց: Ել Յովսէփ յերեսաց Փարաւոնի, եւ չրջեցաւ ընդ ամենայն Եգիպտոս: Եւ արար երկիրն յեւթնաման իրութեանն արդիւս: Եւ ժողովեաց զամենայն կերակուրս ամայն եւ լծանց, յորս էր իրութիւն՝ յերկրին Եգիպտացոց. եւ համարեաց կերակուրս ի քաղաքս, զկերակուրս գաւտաց քաղաքին որ շուրջ վնովաւ, համարեաց ի նմա: Եւ ժողովեաց Յովսէփ զչորեան իբրեւ զաւազ ծովու բազում յոյժ, մինչեւ ոչ կարէր համարել, քանզի ոչ գոյր թիւ: Եւ եզեն Յովսէփու երկու որդիք՝ մինչչեւ եկեալ էր եւթն ամացս սովոյ, զորս ծնաւ նմա Ասանէթ զուսար Պետարեայ քրմի Արեզ քաղաքի: Եւ կոչեաց Յովսէփ զանուն անդրանկանն Մանասէ. զի ասէ՝ թէ Մոռացոյց ինձ Աստուած զամենայն վիշտս իմ, եւ զամենայն զվիշտս հօր իմոյ: Եւ զանուն երկրորդին կոչեաց Դեբուս, զի ասէ՝ թէ Աճեցոյց զես Աստուած յերկրի տառապանաց իմոց: Եւ անցին եւթն ամր իրութեանն որ

54 եզեն յերկրին Եգիպտացոց: Եւ սկսան զայ եւթն ամք սովոյն, որպէս եւ ասաց Յովսէփ. եւ եզեւ սով յամենայն երկրին, զի՝ յամենայն երկրին Եգիպտացոց ոչ գտանէր հաց: Եւ սովեցաւ ամենայն երկիրն Եգիպտացոց, եւ ասացալեաց յամենայն ժողովուրդն առ Փարաւոն վասն հացի. եւ ասէ Փարաւոն յամենայն Եգիպտացիսն, Երթաք առ Յովսէփ, եւ զոր ինչ ասիցէ ձեզ՝ արաջիք: Եւ էր սով ի վերայ երեսաց ամենայն երկրի. եւ երաց Յովսէփ զամենայն շտեմարանս ցորենոյ, եւ վաճառէր ամենայն Եգիպտացոցն. եւ ոստացաւ սովն յամենայն երկրին՝ Եգիպտացոց: Եւ ամենայն աշխարհք զայն յեգիպտոս գնել ի Յովսէփայ, զի զօրանայր սովն ընդ ամենայն երկիր:

ԳԼ. ԽԲ

1 Եւ ետես Յակօր եթէ զոյ լվաճառ յերկրին Եգիպտացոց, ասէ Յակօր ցորդին 2 իւր, Ընդէր հեղապք. Ահա լսեմ եթէ զոյ ցորեան յեգիպտոս. իլէք անդր եւ զնեցէք մեզ սակաւ մի կերակուր, զի 3 կեցցուք եւ մի մեռցուք: Եւ իլին եզբարքն Յովսէփայ առնեքին՝ գնել ցորեան յեգիպտոս: Եւ զԲեհեմայն զեզբայն Յովսէփայ ոչ արձակեաց Յակօր ընդ եզբարն. քանզի ասէր թէ Գուցէ պատահիցէ նմա ի հաւանագութիւն: 5 Եւ եկին որդիքն Իսրայելի գնել ընդ այլ երթեւեկսն. քանզի էր սով յերկրին 6 Քանանացոց: Եւ Յովսէփ էր իշխան երկրին, եւ նա վաճառէր ամենայն ժողովրդեան երկրին. եւ եկեալ եզբարքն Յովսէփայ երկիր պաղանէին ի վերայ երեսաց խոնարճ յերկիր: Եւ իբրեւ ետես Յովսէփ զեզբարն իւր, ծանեաւ. եւ օտարանայր ի նոցան, եւ խօսեցաւ ընդ նոսա խտաղոցն, եւ ասէ, Աւստի գայք. եւ նորս ասեն, Յերկրէն Քանանացոց՝ 8 գնել կերակուրս: Ծանեաւ Յովսէփ զեզբարն իւր, եւ նոքա ոչ ծանեան զնա: 9 Եւ յիշեաց Յովսէփ զերազնս իւր զոր ետես, եւ ասէ զնոսա, Լրտեսք էք զուրք, եւ գիտել լիցի եւ զմուս՝ աշխարհիս եկեալ էք: Եւ նոքա ասեն, Ոչ, տէր, ծա-

1|Եբ. նորա, Գիբ ծուր 2 Այսինքն, փրկիչ երկրին 3|Եբ. յնդ երկիրն Եգիպտացոց 4|Եբ. որ եզեն 5|Այսինքն, մոռացուցի 6|Եբ. տուն 7|Այսինքն, պողաքեր

8|Եբ. յամենայն երկիրս, այլ 9|Եբ. գլխու 10|Եբ. յերկրին 11|Եբ. ցորեան 12|Եբ. վտանգ 13|Եբ. զեզբարն

ուայք քո եկեալ եմք զնել կերակուրս :
 41 Ամենեքին մեք եմք որդիք անն միոյ .
 արք խաղաղութեան եմք , եւ չեն ծա-
 42 ուայք քո լրտեսք : Ասէ ցնոսա , Ոչ , այլ
 ՚հել եւ զմուս՝ երկրիս եկեալ էք ան-
 43 սանել : Եւ նոքա ասեն , Երկոտասան եղ-
 բարք եմք ծառայք քո , որդիք անն միոյ ,
 յերկրին Քանանացւոց . եւ կրտսերն առ
 հօր իւրուս է այսօր , եւ մեւան չէ ի միջի :
 44 Ասէ ցնոսա Յովսէփ , Այդ իսկ է զոր ա-
 45 սացի ձեզ , թէ լրտեսք էք . Եւ զովին
 յայտ արարէք . երզուեալ յարեւն Փա-
 րաւոնի , ոչ ելանէք աստի , եթէ ոչ եւ-
 46 կեսցէ եղբայրն ձեր կրտսեր այսր : Արդ
 առաքեցէք զմի ոք ի ձէնջ եւ ածցէ
 զեղբայրն ձեր , եւ զուք կացէք ի զի-
 պահոջ , մինչեւ յայտնի լինիցին բանք
 ձեր եթէ արդար խօսիցիք եւ թէ ոչ . ապա
 թէ ոչ , երզուեալ յարեւն Փարաւոնի՝
 47 թէ ոչ լրտեսք էք զուք : Եւ եղ զնոսա
 ի բանտի զերիս աւուրս :
 48 Եւ ասէ ցնոսա Յովսէփ յաւուրն եր-
 բորդի , Չայս արարէք եւ ապրիք . զի
 49 եւ ես յԱստուծոյ երկիւղած եմ : Եթէ
 արք խաղաղութեան էք , եղբայր մի ի
 ձէնջ աստ մնացէ ի բանտի , եւ զուք
 20 տարայք զվաճառ ցորենոյ՞ ձերոյ . Եւ
 զեղբայրն ձեր կրտսեր ածէք առ իս , եւ
 հաւատարիմ լինիցին բանք ձեր . ՚ասպա
 21 թէ ոչ , մեռանիք : Արարին՝ այնպէս : Եւ
 ասեն իւրաքանչիւր ցեղբայր իւր , Այո ,
 քանզի ի մեղս եմք վասն եղբօրն մե-
 րոյ . զի արհամարհեցաք զնեղութիւն
 ոգւոց նորա յորժամ աղաչէրն զմեզ , եւ
 ոչ լուար նմա . վասն այնորիկ եկն ի վե-
 22 ռայ մեր այս նեղութիւն : Պատասխանի
 ետ Ռուբէն եւ ասէ ցնոսա , Ո՛չ խօսե-
 ցայ ընդ ձեզ եւ ասեմ , թէ Մի՛ մեղան-
 չէք մանկանդ . եւ ոչ լուարուք ինձ . եւ
 23 անա արիւն նորա ինզորի : Եւ նոքա ոչ
 զիտէին թէ լսէր Յովսէփ , զի թարգման
 24 կայր ի միջի : Եւ անցեալ մեկուսի ի
 նոցանէ՛ կրց Յովսէփ . եւ եկն մեռանու-
 զամ առ նոսա , եւ խօսեցաւ ընդ նոսա .
 եւ առ ի նոցանէ զՇմաւոն եւ կապեաց
 առաջի նոցա :
 25 Եւ ետ հրաման Յովսէփ շոււլ զա-
 մանս նոցա ցորենով , եւ սնել զարծաթն
 իւրաքանչիւր ի քրձի իւրում , եւ տալ

նոցա պաշար ի ճանապարհ : Եւ եղև
 26 նոցա այնպէս : Եւ նոցա բարձեալ ՚իւ-
 27 ռաքանչիւր իչոյ՝ գնացին անտի : Եւ
 լուծեալ միոյ զքուրձ իւր տալ կիրա-
 կուր զրաստու իւրում յիջաւանին , ետես
 զծրար արծաթոյն իւրոյ զի կայր ի բերան
 28 քրձի իւրոյ : Ասէ ցեղբարս իւր , Իարձու-
 ցաւ ինձ այսքէն արծաթն , եւ անա աստէն
 կայ ի քրձի իմում . եւ զարմացան միտք
 նոցա , խոռիցան ընդ միմեանս եւ ասեն ,
 29 Ձի՛նչ է այս զոր արար ընդ մեզ Աստուած :
 Եւ եկին առ Յակոբ հայրն իւրեանց
 յերկիրն Քանանու , եւ պատմեցին նմա
 զամենայն ինչ որ անց ընդ նոսա , եւ ա-
 30 սեն , Խօսեցաւ այրն , անր երկրին , ընդ
 մեզ խստագոյնս , եւ ՚եզ զմեզ ի բան-
 31 տի՝ իրբեւ լրտեսա երկրին : Եւ ասեմք
 ցնա , Արք խաղաղութեան եմք , եւ չեմք
 32 լրտեսք . Երկոտասան եղբարք եմք որ-
 դիք հօր մերոյ . մին չէ ի միջի , եւ
 կրտսերն այժմ ընդ հօր մերում է յեր-
 33 կրին Քանանացւոց : Ասէ ցմեզ այրն ,
 տէր երկրին , Այսու զիտացից թէ արք
 խաղաղութեան էք , եթէ զեղբայր մի ձեր
 աստ առ իս թողուցուք , եւ զվաճառս
 ցորենոյդ ի տունս ձեր առեալ տանիցիք ,
 34 եւ զեղբայրն ձեր կրտսեր ածիցէք առ
 իս , եւ զիտացից եթէ չէք լրտեսք , այլ
 արք խաղաղութեան էք . եւ զայս եւս
 եղբայր տաց ցձեզ , եւ յերկրի աստ առ-
 35 նիցէք վաճառ : Եւ եղև ի թափելն նոցա
 զքուրձս իւրեանց , եւ կայր իւրաքան-
 չիւր ուրուք ծրար արծաթոյ ի քրձի
 իւրեանց . եւ իրբեւ տեսին զծրար ար-
 ծաթոյ իւրեանց , ինքեանք եւ հայր իւ-
 36 թեանց , երկեանս յոյժ : Եւ ասէ ցնոսա
 Յակոբ հայրն իւրեանց , Ձիս անորդի ա-
 րարէք . Յովսէփ չէ ի միջի , Շմաւոն չէ
 ի միջի , եւ զԲենիամին եւս առնուցուք .
 37 յիմ վերայ եկն այս ամենայն : Խօսեցաւ
 Ռուբէն ընդ հօր իւրում եւ ասէ , Չեր-
 կոսին զորդիսն իմ սպանջիւր , եթէ ոչ ածից
 զղա առ քեզ . տուր զղա յիմ ձեռս , եւ ես
 38 ածից զղա առ քեզ : Եւ նա ասէ , Ոչ ի-
 ջանէ որդի իմ ընդ ձեզ . զի եղբայր սորա
 մեռաւ , եւ տա միայն մնացեալ է . եւ զէպ
 լինիդի ամս⁶ հիւանդանալ ի ճանապարհին
 զոր երթայցէք , եւ իջուցանիցէք⁷ զձե-
 րո թիւնս իմ արտուութեամբ : Ի զժոխս :

¹Եբ. զմերկութիւն ²Եբ. ձերոյ վասն սովոյ տանց ձերոց ³Եբ. եւ մի՛ մեռանիցիք : Եւ արարին

⁴Եբ. գցորեան իւրեանց ի վերայ իչոյ իւրեանց ⁵Եբ. համարեցաւ զմեզ ⁶Եբ. վասնզ ⁷Եբ. զայլս

ԳԼ. ԽԳ

1 Եւ սոյն եւս քան զեւս սաստկանայր
 2 ի վերայ երկրին : Եւ եղև իրբև սպա-
 3 սակաւ մի կերակուր : Սօսեցաւ ընդ
 4 նմա Յուզա եւ ասէ , վկայութեամբ եղ
 5 ընդ մեզ վկայութիւն այրն եւ ասէ ,
 6 Մի տեսանիցէք զերեսս իմ , եթէ ոչ եղ-
 7 բայրն ձեր կրտսեր ընդ ձեզ իցէ : Արդ
 8 եթէ արձակես զեղբայրդ մեր ընդ մեզ ,
 9 իջցուք եւ ¹գնեսցուք կերակուրս . Ապա
 10 թէ ոչ արձակես ²զեղբայրդ մեր ընդ մեզ ,
 11 ոչ երթիցուք . զի այրն խօսեցաւ ընդ
 12 ձեզ եւ ասէ , Մի տեսանիցէք զերեսս
 13 իմ , եթէ ոչ եղբայրն ձեր կրտսեր ընդ
 14 ձեզ իցէ : Եւ ասէ Իսրայէլ , ²Զի՞նչ չա-
 15 րիս հասուցէք ի վերայ իմ , զի պատ-
 16 մեցէք առնն թէ զուցէ ձեր եղբայր :
 17 Եւ նորա ասեն , Հարցանելով ենարց
 18 զմինջ այրն , եւ զազգէ մերմէ , եւ թէ
 19 Տակաւին կենդանի իցէ հայրն ձեր , եւ
 20 եթէ իցէ ձեր եղբայր . եւ պատմեցաք նմա
 21 ըստ հարցանելոյն նորա . միթէ զիտէսք
 22 թէ ասելոց է ցմեզ՝ Ածէք զեղբայրն
 23 ձեր : Ասէ Յուզա ցիւրայէլ հայրն իւր ,
 24 Արձակեա ընդ իս զպատանեակդ , եւ
 25 յարուցեալ գնասցուք , զի կեցողք եւ
 26 մի մեռցուք , եւ մեք եւ զու եւ ³ստաց-
 27 ուածք մեր : Ես սնունւմ զբա յերաչխի .
 28 ի ձեռայ իմոյ խնդրեսլիր զպա . եթէ
 29 ոչ ածից զպա առ քեզ եւ կացուցից ա-
 30 ռաջի քո , յանցաւոր ⁴եղէց զամենայն
 31 աւուրս : Զի եթէ չէաք յամեալ , արդ
 32 երկիցս իսկ զարձեալ էր այսբէն : Ասէ
 33 ցնոսա Իսրայէլ հայրն իւրեանց , ⁵Այդ
 34 պէս իցէ , արարէք զայդ . առէք ի պտղոյ
 35 երկիրն յամանս ձեր , եւ տարայք առնն
 36 պատարագս , ռեախն եւ մեզր եւ խուճկս
 37 եւ ստաչին եւ բեւեկն եւ ընկոյզ . Եւ
 38 արձաթ կրկին առէք ի ձեռս ձեր , եւ
 39 զարձաթն որ զարձաւ յամանս ձեր՝ տա-
 40 րայք ընդ ձեզ , զուցէ ընդ խարս ինչ ի-
 41 3 գէ . Եւ զեղբայրդ ձեր առէք , եւ արիք
 42 իջէք առ այրն . Եւ Աստուած ⁶իմ տացէ
 43 ձեզ չնորհս առաջի առնն , եւ արձա-
 44 կեսցէ ընդ ձեզ զեղբայրն ձեր զմեւս

եւ զԲենիամին . բայց ես որպէս ան-
 զաւակեցայ , անզաւակեցայ :
 15 Եւ առեալ արանցն զպատարագսն եւ
 16 արձաթ կրկին ի ձեռս իւրեանց եւ զԲե-
 17 նիամին , յարուցեալ իջին յեգիպտոս ,
 18 եւ կային յանդիման Յովսեփայ : Իբրև
 19 ետես ⁷ցնոսա Յովսէփ , եւ զԲենիամին
 20 եղբայր իւր , ասէ ցնաղարարպետ տանն
 21 իւրոյ , Տար զարսպ ի սուճն , եւ զեն
 22 զենլիս եւ պատրաստեա . զի ընդ իս
 23 ուտելոց են արքդ այդքիկ հաց ի մի-
 24 27 ջօրէի : Եւ արար այրն որպէս եւ ասաց
 25 Յովսէփ . եւ սարաւ ցարսն ի սուճն
 26 Յովսեփայ : Եւ տեսեալ արանցն եթէ
 27 տարան ցնոսա ի սուճն Յովսեփայ , ասեն ,
 28 Վասն արձաթոյն որ զարձաւ յամանս
 29 մեր զառաջինն՝ մտանեմք մեք անպր
 30 առ ի ⁸խուզելոց զմեզ , արկանել՝ ի վե-
 31 րայ մեր , եւ առնուլ զմեզ ի ծառայս եւ
 32 34 զէչս մեր : Մատուցեալ առ այրն , վե-
 33 րակացու տանն Յովսեփայ , խօսեցան առ
 34 20 զրանն , եւ ասեն , Աղաչեմք զքեզ , տէր ,
 35 21 իջաք զառաջինն զենլ կերակուրս . Եւ ե-
 36 զե իբրև հասաք յիջալմանս եւ լացան
 37 զամանս մեր , եւ արձաթն իւրաքանչիւր
 38 յամանի իւրում էր . արդ զարձաթն այս-
 39 րէն կչող զարձուցաք , եւ աւասիկ ի ձե-
 40 22 ղին մերում է . Եւ այլ արձաթ բերաք ընդ
 41 մեզ , գնել՝ կերակուրս . եւ ոչ զիտեմք ո՛վ
 42 23 եզ զարձաթն յամանս մեր : Եւ ասէ ցնո-
 43 սա , Սաղազութիւն ընդ ձեզ , մի երկնչիք .
 44 Աստուածն ձեր եւ հարցն ձերոս եւ ձեզ
 45 զանձս յամանս ձեր . այլ իմ զձեր ար-
 46 ձաթն առեալ եւ հաճեալ եմ : Եւ եհան
 47 առ նոսա զԸմաւուն :
 48 24 Եւ տարաւ ի ներքս այրն զորեարն ի
 49 սուճն Յովսեփայ , եւ բերին ջուր լուա-
 50 նալ զոսա նոցա , եւ ետ կերակուր
 51 25 զրաստուց նոցա : Եւ նոքա պատրաստե-
 52 ցին զպատարագսն մինչև եկեալ էր
 53 Յովսէփ ի միջօրէին . քանզի լուան թէ
 54 26 անդ ճաչելոց է : Եմուս Յովսէփ ի սուճն ,
 55 եւ մատուցին նմա զընծայան զոր ու-
 56 նէին ի ձեռս իւրեանց՝ ի տան անդ , եւ
 57 երկիր պաղին նմա ի վերայ երեսաց իւր-
 58 27 եանց յերկիր : Եհարց ցնոսա եւ ասէ ,
 28 Զիմրդ կայք . եւ ասէ ցնոսա եթէ Ո՞ղջ
 29 իցէ հայրն ձեր ձերուճի , զորմէ ասացէք
 30 28 թէ տակաւին կենդանի է : Եւ նոքա
 31 ասեն , Ողջ է ծառայ քո հայր մեր , տա-

¹Իբր. գնեսցուք քեզ ²ՅԻբր. գուտ ³Եբր. մանկուճք ⁴Եբր. եղէց քեզ ⁵Եբր. եթէ այդ պէս ⁶Եբր. Ամենակալ

⁷Եբր. ընդ նոսա Յովսէփ զԲենիամին ⁸Եբր. գլուրելոյ ի վերայ մեր , և անկանելոյ

կաւին կենդանի է. 'եւ ասէ, Օրհնեալ է այրն այն յԱստուծոյ." եւ խոնարհե-
 29 ցան երկիր պագին նմա: Ամբարձ գաչս իւր եւ ետես գինեխամին զեղբայր իւր զհամամայր, եւ ասէ, Այդ է եղբայրն ձեր կրտսեր զորմէ ասացէք ածել առ իս. եւ ասէ, Աստուած որորմնացի քեզ,
 30 որդեակ: Եւ խռովեցաւ Յովսէփ, եւ գալարէին աղիք նորա ի վերայ եղբորն իւրոյ, եւ խնդրէր լալ մտեալ ի սենեակ
 31 սնոր երայ: Եւ լուացեալ զերեսս իւր ել, պնդեաց զանձն եւ ասէ, Արկէք
 32 հաց: Եւ արկին նմա միայնոյ, եւ նոցա իւրաքանչիւր ումեք, եւ Եգիպտացոցն որ ճաշէին ընդ նմա՝ իւրաքանչիւր ասան-
 33 ձինն. զի ոչ կարէին Եգիպտացիքն ուսել հաց ընդ Երրայեցիսն, քանզի գար-
 33 չելի էին Եգիպտացոցն: Նստաւ առաջի նորա անդրանիկն՝ ըստ երիցութեան իւրում, եւ կրտսերն՝ ըստ կրտսերութեան իւրում. եւ զորմոցեալ էին արքն իւ-
 34 րաքանչիւր ընդ եղբոր իւրում: Եւ առին իւրեանց մասունս ի նմանէ, եւ մեծացաւ մասն Բենիամինի քան զմասունս ամենեցուն հնգասրտիկ քան զնոցայն. արբին եւ արեցան ընդ նմա:

ԳԼ ԽԴ

1 Եւ հրաման ետ Յովսէփ հազարապետին իւրում եւ ասէ, Լցէք զամանս արանցն կերակրով որչափ եւ կարիցեն բառնալ, եւ զիք զարծաթն իւրաքանչիւր ի բե-
 2 րան ամանոյ իւրոյ: Եւ զսկիհն իմ արծաթի գիշիք յամանի կրտսերոյն, եւ զզինս ցորենոյ նորա: Եւ եղեւ ըստ բանին Յովսեփայ որպէս եւ ասաց:
 3 Եւ իբրեւ առաւօտ եղև, արձակեցան
 4 արքն, ինքեանք եւ էչք իւրեանց: Եւ իբրեւ ելին ըստ քաղաքն, եւ չէին մեկնեալ ի բաց, ասէ Յովսէփ ցհազարապետն իւր, Արի՛, պնդեաց զհետ աւրանցն, եւ հասցես նոցա, եւ ասացես ցնոսա, Զի՛ է զի հատուցէք չար փոխանակ բարեաց: ¹Ընդէ՛ր գողացայք
 5 զսկիհն արծաթի:՝ Ո՞չ այն էր որով ըմպէր տէրն իմ, եւ նովաւ ինքն հմայելով հմայէր. եւ արդ չար գործեցէք զոր
 6 արարէքդ: Եւ իբրեւ եկիտ գնոսա, ասէ
 7 ըստ բանիցս այսոցիկ: Եւ նոքա ասեն ցնա, Ընդէ՛ր խօսիցի տէր այդպիսի

բանս. քաւ լիցի ծառայից քոց աննել
 8 ըստ բանիդ այդմիկ: Զի եթէ զարծաթն զոր գտաք յամանս մեր՝ զարծուցաք առ ձեզ յերկրէն Քանանացոց, զիսոր գողանայաք ի տանէ տեառն քո արծաթ
 9 կամ ոսկի: Եւ արդ առ որում գտցի ի ծառայից քոց սկիհն՝ մեռցի, եւ մեք
 10 եղիցուք տեառն մերում ծառայք: Եւ նա ասէ, Այդպէս եղիցի որպէս ասացէքդ. առ որում գտցի սկիհն՝ եղիցի իմ ծառայ,
 11 եւ զուք անպարտք լինիցիք: Եւ փութացան իջուցին զբեռն իւրաքանչիւր ի գետին, եւ բացին իւրաքանչիւր զաման
 12 իւր: Եւ յուզեալ սկսեալ յերիցուէն մինչեւ եկն կատարեաց ի կրտսերն, եւ եղիտ զսկիհն յամանի Բենիամինի:
 13 Եւ պատահեցին զհանդերձս իւրեանց, եւ եղին իւրաքանչիւր զբեռն իւր ի վերայ իշոյ իւրոյ, եւ դարձան ի քա-
 14 ղաքն: Եւ եմուտ Յուզա եւ եղբարք իւր առ Յովսէփ, մինչդեռ անդէն էր, եւ անկան առաջի նորա ի վերայ երկրի:
 15 Ասէ ցնոսա Յովսէփ, Զինչ են իրքդ զոր արարէք. ո՞չ զիտէք թէ հմայելով
 16 հմայէ այր որ իբրեւ զիս է: Ասէ Յուզա, Զինչ տացուք պատասխանի տեառն, կամ զինչ խօսիցիմք, կամ զոր իրաւունսս ցուցանիցեմք. եգիտ Աստուած զյանցանս ծառայից քոց. արդ աւարիկ կամք ծառայք տեառն մերոյ, եւ մեք եւ
 17 առ որում սկիհն դտաւ: Եւ նա ասէ, Քաւ լիցի ինձ աննել զբանդ զայդ. այրն առ որում սկիհն գտաւ՝ նա եղիցի իմ ծառայ, եւ զուք ելէք ողջութեամբ առ հայրն ձեր:
 18 Մատուցեալ առ նա Յուզա եւ ասէ, Աղաչեմ, տէր, խօսեցի ծառայ քո բան մի առաջի քո. մի բարկացիտ ծառայի
 19 քում, զի զու ես յես Փարաւոնի: Տէր, զու հարցեր ցծառայս քո եւ ասացեր, եթէ կայցէ՛ ձեր հայր կամ եղբայր:
 20 Եւ մեք ասեմք տեառն, կայ մեր հայր ծերացեալ, եւ մանուկ մի կրտսեր, որդի ծերութեան նորա, եւ եղբայր նորա մեռաւ, եւ նա միայն մնաց մօր իւրոյ,
 21 եւ հայրն սիրէ զնա: Եւ ասացեր ցծառայս քո, Ի՞ջուցէք զնա առ իս եւ ²իննա-
 22 մարկեցից նմա՝: Եւ ասացաք ցտէր, Ոչ կարէ մանուկն թողուլ զհայր իւր. ապա թէ թողուցու զհայրն իւր՝ մեռանի:
 23 Եւ զու ասացեր ցծառայս քո, Եթէ ոչ

¹Եբբ. պատ

²Եբբ. եղից զսկիս իմ ի վերայ նորա

իջանիցէ եղբայրն ձեր կրտսեր ընդ ձեզ,
 մի՛ յաւելուցուք տեսանել զերեսս իմ :
 24 Եւ եղև իբրև ելաք մեք առ ծառայ
 քո հայր մեր, պատմեցաք նմա զրանս
 25 տեսան մերոյ : Եւ ասէ հայրն մեր,
 Երթալք դարձեալ զնեցէք մեզ սակաւ
 26 մի կերակուր : Եւ մեք ասացաք թէ Ոչ
 կարեմք իջանել անդր, եթէ ոչ եղբայրդ
 մեր կրտսեր իջանիցէ ընդ մեզ, եւ ա-
 պա իջանիցեմք . զի ոչ կարեմք տեսա-
 նել զերեսս առնն, եթէ եղբայրդ մեր
 27 կրտսեր ընդ մեզ ոչ իցէ : Եւ ասէ ցմեզ
 ծառայ քո հայր մեր, Դուք իսկ գիտէք
 28 զի երկուս ծնաւ ինձ կին իմ : Մին ել
 յինէն եւ Վասացէք թէ՛ գազանակուր
 եղև, եւ ոչ եւս տեսանեմ զնա մինչեւ
 29 ցայժմ : Արդ եթէ զսա եւս անուցուք
 յերեսաց իմոց, եւ պատահիցէ ամա
 3 ՚հրեանդուժիւն ի ճանապարհի՞, իջու-
 ցանէք 3 զձերուժիւնս իմ արտուժեմամբ
 30 ճանդերձ ի դժոխս : Եւ արդ եթէ եր-
 թայցեմք առ ծառայ քո հայր մեր, եւ
 պատանեակս չիցէ ընդ մեզ, եւ նորա
 31 ոգին կտինեալ կայ զգորա ողւոյգ . Եւ
 լինիցի իբրև ոչ տեսանիցէ ընդ մեզ
 գմանուկդ, վախճանիցի . եւ իջուցանի-
 ցին ծառայք քո 3 զձերուժիւն ծառայի
 քո հօր մերոց չարչարանօք ճանդերձ ի
 32 դժոխս : Զի ծառայի քո առեալ է յե-
 րաչխի գմանուկդ ի հօրէ իւրմէ . ասեմ,
 եթէ ոչ ամից զգա առ քեզ Վե կացու-
 ցից առաջի քո՞, յանցաւոր եղէց առ
 33 հայր իմ զամենայն աւուրս : Եւ արդ
 կացից ես ծառայ քո փոխանակ ման-
 կանդ սարուկ տեսան իմոյ, եւ պա-
 34 տանեակդ ելցէ ընդ եղբայրս իւր . Քան-
 զի զիսորդ ելանիցեմ առ հայրն իմ, եթէ
 պատանեակդ չիցէ ընդ մեզ . զի մի՛ տե-
 սից զչարիան որ գտանիցեն զհայրն իմ :

ԳԼ . ԽԵ

1 Եւ ոչ կարաց Յովսէփ ժոյժ ունել առա-
 ջի ամենեցուն որ չուրջ գնովաւն կային,
 6 այլ ասէ՞, Հանէք զամենեփն արտաքս
 յինէն . եւ չկայր եւս ոք անդ առ նմա,
 յորժամ ետ ծանօթս եղբարցն իւրոց :
 2 Եւ ձայն 6 արձեալ լալով ճանդերձ՝ մինչ
 լուան Եգիպտացիքն, եւ ազգ եղև ի
 3 տուն Փարաւոնի : Ասէ Յովսէփ ցեղ-

բարն իւր, Ես եմ Յովսէփ . արգարեւ
 տակաւին կենդանի՞ իցէ հայր իմ . եւ ոչ
 կարէին եղբարքն նորա տալ նմա նպ-
 տասխանի, զի խառնեցան յերեսաց նո-
 4 րա : Ասէ Յովսէփի ցեղբարն, Մօտ եւ
 կայք առ իս . եւ չուան մօտ, եւ ասէ,
 Ես եմ Յովսէփի եղբայրն ձեր, զոր դուք
 5 վաճառեցէք յեգիպտոս : Բայց մի՛ ինչ
 տրտմիք, եւ մի՛ խիստ թուեացի ձեզ զի
 վաճառեցէք զիս այսր : Քանզի ի փրկու-
 թիւն առաքեաց զիս Աստուած առաջի
 6 ձեր : Զի այս երկրոց ամ է սովոյս ի
 փրայ երկրի, եւ այլ եւս հինգ ամ՝
 7 յորս ոչ լինիցի վար եւ ոչ հունձ : Եւ
 զիս առաքեաց Աստուած առաջի ձեր
 առ ի թողոյ ձեզ զաւակ յերկրի, եւ
 7 կերակրել զձեր՝ մնացորդս մեծամեծս :
 8 Եւ արդ ոչ եթէ դուք առաքեցէք զիս
 այսր, այլ Աստուած . եւ արար զիս
 հայր Փարաւոնի եւ տէր ամենայն տան
 նորա, եւ իշխան ամենայն երկրիս Ե-
 9 գիպտացոց : Արդ փութացեալ ելէք առ
 հայրն իմ եւ ասացէք ցնա, Այսպէս ա-
 սէ որդի քո Յովսէփի, Արար զիս Աս-
 տուած տէր ամենայն երկրիս Եգիպտաց-
 10 ոց . արդ եկ էջ առ իս, եւ մի՛ հեղզար-
 10 Եւ րնակեցես յերկրիս Գոսեմ՝ ՆԱրա-
 րիա, եւ եղիցես մօտ առ իս, դու եւ որ-
 զիք քո եւ որդիք որդւոց քոց, եւ ոչխար
 քո եւ արջառ քո եւ որ ինչ քո իցէ :
 11 Եւ կերակրեցից զքեզ անդ . զի այլ եւս
 հինգ ամ կայ սովոյս . զի մի՛ ստատակի-
 ցիս, դու եւ որդիք քո եւ ամենայն
 12 ստացուածք քո՞ : Ահաւասիկ աչք ձեր
 տեսանն եւ աչք Բենիամիսի եղբօր
 իմոյ, զի բերան իմ խօսի ընդ ձեզ :
 13 Արդ պատմեցէք հօր իմում զամենայն
 զրիառս իմ որ են յեգիպտոս, եւ որչափ
 ինչ տեսէք դուք . եւ փութացեալ ի-
 14 ջուցէք զհայրն իմ այսր : Եւ անկեալ ի
 վերայ պարանոցին Բենիամիսի եղբօր
 իւրոյ ելաց, եւ Բենիամիս ելաց ի վերայ
 15 պարանոցի նորա : Եւ համուրեաց զա-
 մենայն եղբարան իւր, եւ ելաց ի վերայ
 նոցա . յեա այնորիկ խօսեցան եղբարք
 նորա ընդ նմա :
 16 Եւ հնչեաց համբաւն ի տուն Փարա-
 ւոնի, եւ ասնն, Եկին եղբարք Յովսե-
 փու . ուրախ եղև Փարաւոն եւ ծա-
 17ւայք նորա : Ասէ Փարաւոն ցՅովսէփի,

1Եբբ. ասացի 2Եբբ. վտանգ 3Եբբ. զայնս
 4Յեբբ. դուրս 5Եբբ. և գուշաց 6Եբբ. երարձ

7Եբբ. կեցուցանել ձեզ 8Եբբ. չբաւորեցի
 դու և տուն քո և ամենայն որ ինչ քո է

Ասա ցեղբարս քո , Այսպէս արարէք .
 18 Գնանապաշտոն : Եւ առեալ զհայրն ձեր եւ
 'դասացուածս ձեր' եկեսցիք առ իս . եւ
 տաք ձեզ յամենայն բարութեանցս եղիպ-
 1 տացւոց , եւ կերիջիք զուզիզ երկրիս :
 49 Եւ զու գայս հրաման տացես' . առնուլ
 յերկրէս եղիպտացւոց սայլս մանկանց
 . եւ կանանց ձերոց , եւ առեալ զհայրն
 20 ձեր ածիցէք : Եւ մի ազահիցեն աչք ձեր
 ի կահ ձեր , զի բարութիւն ամենայն
 երկրիս եղիպտացւոց ձեզ լինիցի :
 21 Եւ արարին այնպէս որդիքն Իսրայելի .
 եւ ետ նոցա Յովսէփ սայլս ըստ բա-
 նիցն Փարաւոնի արքայի , եւ ետ նոցա
 22 պաշար ի ճանապարհ : Եւ ամենեցուն
 ետ կրկին պատուածանս , եւ Բենիամինի
 ետ երեք հարեւր ³զահեկան եւ հինգ
 23 պատուածան փոխանակաւ : Եւ հօրն
 իւրում ետ տանել 'նոյնպէս , տանն իշոյ
 ընտնա յամենայն բարութեանց եղիպ-
 տացւոց , եւ տանն ջորի նպարակաւոր ,
 եւ' կերակուր հօրն իւրում ի ճանապարհ :
 24 Եւ արձակեաց զեղբարս իւր եւ զնազին .
 եւ ասէ ցնոսա , Մի գայրանայցէք ինչ
 ի ճանապարհի :
 25 Ելին յեղիպտոսէ , եւ չոգսն յերկրին
 Քանանացւոց առ Յակոբ հայրն իւրեանց :
 26 Եւ պատմեցին նմա եւ ասեն , Որդի քո
 Յովսէփ կենդանի է , եւ նա է իշխան
 ամենայն երկրին եղիպտացւոց : Եւ
 27 'գարմաղաւ ի միտս իւր Յակոբ' , զի
 ոչ հաւատայր նոցա : Եւ խօսեցան ընդ
 նմա զամենայն ինչ զոր տաց Յովսէփի .
 իրրեւ ետես զսայլսն զոր առաքեաց
 Յովսէփի առնուլ զնա , արժարձեցաւ ու-
 28 զին Յակոբայ հօր նոցա : Եւ ասէ Իս-
 րայել , Մեծ է ինձ եթէ արդարեւ տա-
 կաւին կենդանի իցէ որդի իմ Յովսէփի . եր-
 թաց տեսից զնա մինչչեւ մեռեալ իցեմ :

ԳԼ . ԽԶ

4 Չուեաց Իսրայել , ինքն եւ ամենայն որ
 ինչ իւր էր , եւ եկն ի Ջրհորն երզրման ,
 եւ մատոյց պատարազ Աստուծոյ հօր
 2 իւրոյ Իսահակայ : Սոսեցաւ Աստուած

ընդ Իսրայելի ի տելեան զիշերոյ , եւ
 ասէ , Յակոբ , Յակոբ . եւ նա ասէ ,
 3 ⁵Ո՞վ ես' : Ասէ , Ես եմ Աստուած 'հարցն
 քոց' . մի երկնչիք իջանել յեղիպտոս ,
 4 զի յազդ մեծ արարից զքեզ անդ : Ես
 իջից ընդ քեզ յեղիպտոս , եւ ես հանից
 զքեզ ի սպառ , եւ Յովսէփի զիցէ զձեռս
 5 իւր ի վերայ աչաց քոց : Յարեաւ Յակոբ
 ի Ջրհորայ անի երզման , եւ առին որդիքն
 Իսրայելի զՅակոբ հայրն իւրեանց եւ
 8 զկազմած եւ զկանայս իւրեանց ի սայլսն
 զոր առաքեաց ⁹Յովսէփի առնուլ զնա :
 6 Եւ առեալ ¹⁰զինչս իւրեանց եւ զամենայն
 ստացուածս զոր ստացան յերկրին Քա-
 նանացւոց , մոյն յեղիպտոս Յակոբ եւ
 7 ամենայն զաւակ նորա ընդ նմա , Որդիք
 նորա եւ որդիք որդւոց նորա ընդ նմա ,
 զստերք նորա եւ զստերք ¹¹զստերաց
 նորա , եւ զամենայն զաւակ իւր ած
 յեղիպտոս¹² :
 8 Եւ այս են անուանք որդւոցն Իսրա-
 յելի որ մոյն յեղիպտոս . Յակոբ եւ որ-
 դիք իւր . անդրանիկ Յակոբու՝ Ռուբէն .
 9 Եւ որդիք Ռուբէնի՝ Ենոփք եւ Փալլուս ,
 10 Ասրոփէ եւ Քարմի : Եւ որդիք Շմաւո-
 նի՝ Յամուէլ եւ Յամփն եւ Անոփք եւ
 Յաքին եւ Սահառ եւ Սաւուզ որդի
 11 Քանանացւոցն : Եւ որդիք Ղեւեայ՝ Գեր-
 12 տոն եւ Կահաթ եւ Մերարի : Եւ որդիք
 Յուդայ՝ Էր եւ Աւնան եւ Սելուփ եւ
 Փարէս եւ Չարա . եւ մեռան էր եւ
 Աւնան յերկրին Քանանացւոց . եւ եղեն
 որդիք Փարտի՝ Ասրոփմ եւ Յամուէլ :
 13 Եւ որդիք Եսաքարայ՝ Թովլա եւ Փուա
 14 եւ Յատուր եւ Չամամ : Եւ որդիք Չա-
 15 լուզոնի՝ Սերեզ եւ Ալոն եւ Էէլ : Սո-
 քա են որդիք Լիայ զոր ծնաւ Յակոբայ ի
 Միջագետս Ասորոց , եւ զԴինա զուստր
 նորա . ամենայն որդիք , ուստերք եւ
 16 զստերք , երեսուն եւ երեք : Եւ որդիք
 Գադայ՝ Սափոն եւ Մեղիս եւ Սաւնիս
 եւ Թաւտրամ եւ Այեզիս եւ Արոյէլիս
 17 եւ Արիէլիս : Եւ սոքա են որդիք Ասերայ՝
 Յեմնա եւ Յեսուսա եւ Յէուլ եւ Բարիս
 եւ Սարա քոր նոցա . եւ որդիք Բարիայ՝
 18 Քորոր եւ Մեզբիէլ : Սոքա են որդիք
 Չիլիայ , զոր ետ Լարան Լիայ զստերն
 իւրում , որ ծնաւ զսոսա Յակոբայ , վեչ-

¹Եբբ. զընտանիս ²Եբբ. հրամայեալ քեզ
³Եբբ. արժամի ⁴Եբբ. զայս օրինակ . տանն
 իշոյ բեռնին ի բարութեանց եղիպտացւոց , և
 տանն էլ մատակ որ բառնային ցորեանն հաց եւ
⁵Եբբ. նուազեցաւ սիրտ նորա
⁶Եբբ. Աւասիկ եմ ⁷Եբբ. Աստուած հօր քո
⁸Եբբ. զմանկուանս ⁹Եբբ. Փարաւոն ¹⁰Եբբ.
 զանասունս ¹¹Եբբ. որդւոց ¹²Եբբ. այնչէն
 յաւելւալ , ընդ իւր

19 ատանն ¹որդիս : ևւ որդիք Ռաբելայ ևն՝
 20 ևւ եզեն որդիք Յովսեփայ յերկրին ևւ-
 զիստացւոց , զորս ծնաւ նմա Ասանէթ
 զուսար Պետափրեայ յրմի Այելք քաղա-
 քի , զՄանասէ ևւ զԵփրեմ : ²ևւ եզեն
 որդիք Մանասէի զոր ծնաւ նմա հարժն
 Ատորի , զՄաքիր , ևւ Մաքիր ծնաւ զՄա-
 զաաղ : ևւ որդիք Եփրեմի եզրօրն Մա-
 նասէի՝ Սուտաղաամ ևւ Տաամ , ևւ որդի
 21 Սուտաղաամայ Եզեմ : ևւ որդիք Բենիա-
 մինի՝ Բազա ևւ Բոքոր ևւ Ասբէ , ²ևւ
 եզեն որդիք Բազայ՝ Գէհրա ևւ Նէհեման
 ևւ Սնաքիս ևւ Իսօս ևւ Մամիրիմ ևւ
 22 Ուփրմին , ևւ ³Գէհրա ծնաւ զՍրազ : Ասքա
 ևւ որդիք Ռաքելի զոր ծնաւ Յակոբայ ,
 23 ամենայն ողիք ⁴ուլ ևւ ասնն : ևւ որդիք
 24 Դանայ՝ Ատոմ : ևւ որդիք Նեփթաղեմի՝
 25 Ասրէլ ևւ Գոնիլի ևւ Ասար ևւ Սեղիմ : Աս-
 քա ևւ որդիք Բաղայ զոր եւ լարան Ռա-
 քելի գտեր իւրում , ևւ ծնաւ զտոսս
 26 Յակոբայ . ամենեքին ողիք ևւ լին ևւ
 ամենայն ողիք որ մտին ընդ Յակոբայ
 յեղիպտոս , որ ելիալ էին յերանայ նորա ,
 աւանդ կանանց որդւոցն Յակոբայ , ա-
 27 մենայն ողիք զաթսոււն ևւ վեց : ևւ որ-
 զիք Յովսեփայ որ եզեն նմա յեղիպտոս ,
 ողիք երկու . ևւ ամենայն ողիք ասնն
 Յակոբու որ մտին յեղիպտոս՝ ևւ լիմաս-
 սուսն ⁵ևւ ՚ննգ :
 28 ևւ զՅուդա յառաջագոյն առաքեաց առ
 Յովսէփ , ⁶զալ նմա ընդ սոսմ զՔաջաց
 քաղաքաւն , յերկրին Ռամեսսա . ևւ ինքն
 29 եկն՝ յերկրին Գեսեմ : Կաղմնաց Յովսէփ
 զկառս իւր , ևւ ել ընդ առաջ Բարայելի
 հօր իւրոյ ⁶զՔաջաց քաղաքաւն . ևւ իւր-
 րեւ յանգրիման եզեւ նմա , անկաւ ի վե-
 րայ պարանոցի նորա , ևւ երայ ի յայեւն
 30 մեծ : ևւ ասէ Բարայէլ զՅովսէփ , Մեռաց
 այսուհետեւ , որովհետեւ տեսի զերեսս
 31 քո զի տակաւին կենդանի ես : ևւ ասէ
 Յովսէփ զեզբարս իւր ևւ զտուն հօր
 իւրոյ , ևւ իմաց պատմեցից Փարաւոնի ,
⁷եթէ եզբարք՝ իմ ևւ ասուն հօր իմոյ որ
 էին յերկրին Քանանացւոց՝ եկին առ իս :
 32 ևւ արք հովիւք են , ևւ արք խաշաւ-
 դարմանք են , ևւ զանասուն ևւ զարջաւս
 ևւ զամենայն ինչ իւրեանց ամին այսր :

33 Արդ եթէ կոչիցէ զձեզ Փարաւոն ևւ ասի-
 34 զէ , Ձինչ զործ է ձեր , Ասաջիք եթէ ,
 Արք խաշաւարմանք եմք ծառայք քո
 ի մանկութենէ մինչև զյայժմ , ևւ մեք
 ևւ հարք մեր . զի լմակիցէք յերկրին Գե-
 սեմ . քանզի զարշիլի է եղիպտացւոց
 ամենայն հովիւ խաշանց :

ԳԼ . ԽԵ

1 Եւ երեսոյ Յովսէփ պատմեաց Փարաւոնի ,
 ևւ ասէ , Հայր իմ ևւ եզբարք , ևւ խա-
 շինք ևւ առջառ նոցա , ևւ ամենայն որ
 ինչ նոցա , եկին յերկրէն Քանանացւոց ,
 2 ևւ աճա են ի Գեսեմ : ևւ յեզբարց սնտի
 իւրոց առ ընդ իւր ՚ննգ այր , ևւ կազոց
 3 զնոսա առաջի Փարաւոնի : ևւ ասէ Փա-
 րաւոն զեզբարսն Յովսեփու , Ձինչ զործ է
 ձեր . ևւ նոքա ասնն զՓարաւոն , Հովիւք
 խաշանց են ծառայք քո , ևւ մեք ևւ հարք
 4 մեր : ևւ ասնն զՓարաւոն , Պանդիստանալ
 եկաք յերկիրս յայժմիկ , զի ոչ գոյր ճարակ
 խաշանց ճառայից քոց , քանզի ստատկա-
 ցաւ սոյն յերկրին Քանանացւոց . ևւ արդ
 ընակեցուք ծառայք քո յերկրին ի Գե-
 5 սեմ : ևւ խօսեցաւ Փարաւոն ընդ Յով-
 սեփու ևւ ասէ , Հայր քո ևւ եզբարք քո
 6 եկին առ քեզ . Աճա երկիրս եղիպտաց-
 ւոց առաջի քո է . ի բարեք երկրի բնա-
 կեց կեց յերկրին ի Գեսեմ . ապա թէ զբան
 թէ իցեն ի նոսա արք զօրաւորք , կայր
 զնոսա իշխանս ի վերայ իմոց խաշանց :
 7 ևւ աժ Յովսէփ զՅակոբ հայր իւր , ևւ
 կազոց առաջի Փարաւոնի . ևւ օրհնեաց
 8 Յակոբ զՓարաւոն : ևւ ասէ Փարաւոն
 զՅակոբ , Քանիք են ամք աւուրց կենաց
 9 քոց : ևւ ասէ Յակոբ զՓարաւոն , Աւուրք
 ամաց կենաց իմոց զպա պաղխտեղայ՝
 հարեւր ևւ երեսուն ամ է . սակաւք ևւ
 զժուարինք եզեն աւուրք ամաց կենաց
 իմոց , ևւ ոչ հասին յաւուրս ամաց կե-
 նաց հարց իմոց , զոր աւուրս պանդխտե-
 10 յան : ևւ օրհնեաց Յակոբ զՓարաւոն ևւ
 ել ի նմանէ :
 11 ևւ բնակեցոց Յովսէփ զհայրն իւր ևւ
 զեզբարս իւր , ևւ եւ նոցա բնակութիւն
 յերկրին եղիպտացւոց ի բարուք երկրի ,
 յերկրին Ռամեսայ , որպէս հրամայեաց
 12 Փարաւոն : ևւ ապա Յովսէփ առձիկս հօրն
 ևւ եզբարց իւրոց , ևւ ամենայն ասն հօր
 իւրոց ցորեան ըստ բերան :

1) Էր. ողիք 2) Յի. Գ-Լ-Կ 3) Էր. Արադ
 4) Էր. Լորէքտասան 5) Էր. ցուցանել առա-
 ջի իւր զԳեսեմ , և եկին 6) Էր. ի Գեսեմ
 7) Էր. ևւ ասացից զնա , եզբարք

13 Եւ կերակուր ոչ զոյր յամենայն երկրին, զի սաստկացաւ սոյն յոյժ. եւ նուազեաց երկիրն Եզրպտացւոց եւ երկիրն

14 Քանանացւոց ի սոյն անախ: Եւ ժողովեաց Յովսէփ զամենայն արծաթ զոտակ յերկրն Եզրպտացւոց եւ յերկրն Քանանացւոց ընդ ցորենոցն զոր վաճառէր, ¹եւ տայր նոցա կերակուր՝. եւ տարաւ Յովսէփ զամենայն արծաթն ի տուն Փարաւոնի: Եւ նուազեաց արծաթ յերկրէն Եզրպտացւոց եւ յերկրէն Քանանացւոց. եկին ամենայն Եզրպտացիք առ Յովսէփ եւ ասեն, **Տուր մեզ հաց, ընդէր մեռանիմք առաջիք. զի պակասեաց արծաթ:**

16 Ասէ ցնոսա Յովսէփ, **Աձէք զանասունս ձեր, եւ տաց ձեզ հաց փոխանակ անասնոց ձերոց, եթէ պակասեաց արծաթ:**

17 Եւ ամէն զանասունս առ Յովսէփ, եւ ես նոցա Յովսէփ հաց փոխանակ ձերոց եւ փոխանակ ոչխարի եւ փոխանակ արջառոց եւ փոխանակ իշոյ. եւ կերակրեաց զնոսա հացիւ փոխանակ ամենայն անասնոց նոցա յամին յայնմիկ:

18 Եւ այն ամ, եւ եկին առ Յովսէփ յերկրորդ ամին եւ ասեն զնա, ²Քուցէ սառաակիցիմք՝ ի տեսնէ մերմէ. եթէ արծաթ էր՝ պակասեաց, եւ եթէ խաչինք եւ ստացուածք, առ քեզ են, տէր. եւ չէինչ մնացեալ մեր առաջի տեսնն, բայց

19 միայն անձինք եւ երկուր մեր. Արդ ³զի մի՞ մեռանիցիմք առաջիք, եւ մեք, եւ ⁴երկիրս աւերեսցի՞. ստացիր զմեզ եւ զերկիրս մեր փոխանակ հացի, եզրցուք մեք եւ երկիրս մեր ծառայք Փարաւոնի. առւր սերմն ⁵զի սերմանեացուք՝, եւ կեցցուք եւ մի մեռցուք, եւ երկիրս մի աւերեսցի: Եւ ստացաւ Յովսէփ զամենայն երկիրն Եզրպտացւոց Փարաւոնի. քանզի վաճառեցին Եզրպտացիքն զերկիրն իւրեանց Փարաւոնի, զի սաստկացաւ ի վերայ նոցա սոյն, եւ եզեւ երկիրն Փարաւոնի: Եւ զժողովուրդն ⁶ճառայեցոյց իւր ի սարուկս՝, ի ծագաց սահմանաց

22 Եզրպտոսի մինչեւ ի ծագս նորուն: Բաց յերկրէ քրմացն, զի ոչ ստացաւ զնոսա Յովսէփ. քանզի տալով պարզեւս քրմացն Փարաւոն, եւ ուսէին զպարզեւան զոր տայր նոցա Փարաւոն. վասն այնորիկ ոչ վաճառեցին զերկիրն իւրեանց:

23 Ասէ Յովսէփ ⁶ցամենայն Եզրպտացիսն՝, Ահա ստացայ զձեզ այսօր եւ գերկիր ձեր Փարաւոնի. սառէք ձեզ սերմանս եւ սերմանեցէք զերկիրոց: Եւ եզրցին արցիւնք զորս, եւ տալէք զչինգերորդ մասն Փարաւոնի, եւ չորք մասունքն ձեր եզրցին ի սերմն երկրից եւ ի կերակուր ձեզ եւ ամենայն ընտանեաց ձերոց, եւ ի կերակուր տղայոց ձերոց: Եւ ասեն, **Կեցուցեր զմեզ, գտաք չնորհս առաջի տեսնն մերոց, եւ եզրցուք ծառայք Փարաւոնի:**

26 Եւ եզ նոցա օրէնս Յովսէփ մինչեւ ցայսօր յերկրն Եզրպտացւոց՝ չհնդկորդել Փարաւոնի, բայց յերկրէ քրմացն որ չէր Փարաւոնի:

27 Եւ ընտանեաց Իսրայէլ յերկրն Եզրպտացւոց յերկրն ի Գեսեմ. եւ ժառանգեցան ի նմա, եւ ամեցին եւ բազմացան յոյժ:

28 Եւ եկեաց Յակոբ յերկրն Եզրպտացւոց ամս եւթին եւ տասն, եւ եզեն աւուրք Յակոբայ ամաց կեանց նորա հարեւր եւ քառասուն եւ եւթն ամ: Եւ մերձեցան աւուրք Իսրայելի մեռանելոյ, եւ կոչեաց զորդի իւր զՅովսէփ եւ ասէ ցնա, **Եթէ պի չնորհս առաջիք, զիր զձեռն քո ընդ երանօք խնայք, եւ արասցես ի վերայ իմ սղորմութիւնս եւ ճշմարտութիւնս,**

30 **յթապէլ զիս յեզրպտոս. Այլ ննջեցիք ընդ հարսն իմ, եւ բարձցեն զիս յեզրպտոսէ, եւ թաղեցեն զիս ի գերեզմանի նոցա: Եւ նա ասէ, Ես արարից ըստ բանի քում:**

31 Եւ ասէ, Երգուիր ինձ. եւ երգուաւ նմա: Եւ երկիր եպարզ Իսրայէլ ի վերայ զլիտոյ ⁷գուտպանի իւրոյ:

ԳԼ . ԽԸ

1 Եւ եզեւ յետ բանիցս այսոցիկ ազգ եզեւ Յովսեփայ եթէ Յակոբ հայր քո նեղեալ է. եւ ⁸առեալ Յովսեփայ՝ զերկուս որդիսն իւր ընդ իւր, զՄանասէ եւ զԵփրեմ,

2 ¹եկն առ Յակոբ:՝ Ազգ եզեւ Յակոբայ եւ ասեն, Ահա որդի քո Յովսէփ դայ առ քեզ. եւ զօրացաւ Իսրայէլ եւ նստաւ

3 ի մահիճս: Եւ ասէ Յակոբ ցՅովսէփ, Աստուած ⁹իմ երեւեցաւ ինձ ի Լուզ, յերկրն

4 Քանանացւոց. օրհնեաց զիս. Եւ ասէ զիս, Ահա ես ամեցուցից զքեզ, եւ բազմացուցից զքեզ, եւ արարից զքեզ ի ժո-

¹Յէբբ. գլխակ 2Յբբ. Աի՛ ինչ թարգմտուցուք
³Յբբ. ընդէր 4Յբբ. երկիր մեր 5Յբբ. փոխեաց ի քաղաքս

⁶Յբբ. ցժողովուրդն 7Գա՛մ. մահճացն (Տե՛ս ԳԼ. ԽԸ. 2) ⁸Յբբ. Յովսէփ առ ⁹Յբբ. Ամենակալ

զովս ազգաց. և ևս սոց ¹քեզ զերկիրս զայս”

5 Ի ժառանգութիւն յաւրանականս : Արդ երկու որդիք քո որ եզեն յեղիպտոս մինչ-
չեւ եկեալ էր իմ յեղիպտոս իմ են, եփրեմ
և Բանասէ իրրեւ զիտութենն և զժմաւոն

6 Եղիցին ինձ : Եւ այլ ծնունդք զոր ծնա-
նդիցս յետ ²այսորիկ՝ քեզ եղիցին . յա-
նուն եղբարց իւրեանց կոչեսցին ի նոցա

7 Ժառանգութիւնն : Եւ ևս յորժամ գայի ի
Միջագետաց Ասորոց, մեռաւ ³մայր քո”
Ռաբէլ յերկրին Քանանացոց, ⁴ի մերձե-
նալ ինձ յասպարէզ երկրին Քարրաթայ,
ի գաղն” յեփրաթայ . և թաղեցի զնա
⁵երկրի ասպարիսն” , այն է Բեթղեհնմ :

8 Իրրեւ ետես Իսրայէլ զորդիսն Յով-
9 սեփայ, առէ, Չիւնչ են սոքք քո : Ասէ
Յովսէփ ցնայրն իւր, Որդիք իմ են զոր
ևս ինձ Աստուած աստ . և ևս ասէ Յա-
կոր, Մատո առ իս զդոսա, զի օրհնեցից
10 զդոսա : Եւ աչք Իսրայելի ծանրացեալ
էին ի ծերութենէ անտի, և ոչ կարէր
տեսանել . և մատոյց զնոսա առ նա,
և համբուրեաց զնոսա, և ի զիրկս իւր

11 առ զնոսա : Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ, և
⁶Ահա յերեսաց քոց ոչ կարօս եղէ, և”
եցոյց ևս ինձ Աստուած զգաւակ քո :

12 Եւ եհան զնոսա Յովսէփ ի ծնոցաց նորա
և Դերկիր պողին նմա ի վերայ երեսաց
13 իւրեանց” յերկիր : Եւ առեալ Յովսե-
փայ զերկուս որդիսն իւր, զԵփրեմ
ընդ աջմէ՝ ի ձախմէ Իսրայելի, և զՄա-
նասէ ի ձախմէ՝ յաջմէ Իսրայելի, մա-
14 աոյց զնոսա առ նա : Եւ ձգեալ Իսրա-
յելի զաջ ձեռն իւր՝ արկ զյլստօն եփրե-
մի, և նա էր կրտսեր, և զձախմ՝ զյլ-
ստօն Մանասէի, և փոփոխեաց ⁸զձեռնն,

15 զի Մանասէ էր անդրանիկ և օրհնեաց
⁹զնոսա և ևս ասէ, Աստուած, որում հա-
ձոյ եղեն հարքն իմ առաջի նորա, Ար-
րահամ և Իսահակ, Աստուած՝ որ կե-
րակոչէ զիս ի մանկութենէ իմմէ մինչև
16 ցայսօր, Հրեշտակն որ փրկեաց զիս
յամենայն չարեաց, օրհնեաց զմանկունս
զայստիկ, և կոչեսցի ի սոսա անուն
իմ և անուն հարց իմոց, Արրահամու
և Իսահակայ, և օրհնեացին ի բազմու-

17 Թիւն յոյժ ի վերայ երկրի : Եւ առեալ
Յովսեփայ եթէ արկ հայրն զաջ իւր
զյլստօն եփրեմի, ծանր թուեցաւ նմա.
և օրհնեաց Յովսէփ ձեռին հօրն իւրոյ,
հանել զնա ի զյլստն եփրեմի ի զլուին

18 Մանասէի : Ասէ Յովսէփ ցնայրն իւր, Ոչ
այդպէս է, հայր. քանզի սա է անդրանիկ.

19 զիւր զաջ քո ի վերայ զյլստյ սորա : Եւ ոչ
կամեցաւ հայրն նորա, Այլ առէ, Գիսեմ
որդեակ, զիսեմ. և զա եղիցի ի ժողո-
փուրդ, և զա բարձրասցի. այլ եղբայրս
զորս կրտսեր՝ եղիցի մեծ քան զգա, և
զաւակ սորա եղիցի ի բազմութիւն աչ-
20 զայց : Եւ օրհնեաց զնոսա յաւուր յայն-
միկ, և ևս ասէ, ¹⁰Ի ձեզ օրհնեողի՞” Իս-
րայէլ . սասացին, թէ Արայցէ զքեզ Աս-
տուած իրրեւ զԵփրեմ և զՄանասէ . և
եղ զԵփրեմ յառաջ քան զՄանասէ :

21 Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ, Ես աւասիկ
մեռանիմ, և Աստուած եղիցի ընդ ձեզ
և զարձուցցէ զձեզ յերկիր հարցն ձերոց :

22 Եւ ևս ետու քեզ ¹¹զՍիկիմ սեպհական,
սրտաքոյ եղբարց քոց” , զոր ասի ի ձեռաց
Ամոլիւհացոց սրով իմով և ազեղամբ :

ԳԼ. ԽԹ

1 Առջեաց Յակօբ զորդիսն իւր և ևս ասէ,
Ժողովեցարուք, զի պատմեցից ձեզ ինչ,
որ պատահիցէ ձեզ ի վախճանի աւուրց :

2 Ժողովեցարուք, և լուարուք, որդիք Յա-
կօբայ . լուարուք Իսրայելի հօր ձերում :

3 Ռուբէն, անդրանիկ իմ, զու զօրու-
թիւն իմ և սիկզն ¹²որդւոց իմոց,
խստութեամբ գնացեր և խստութեամբ
4 յանդգնութեամբ թշնամանեցեր : Իրրեւ
զլուր մի՞ եռասցին” . զի Էլեր յանկողինս
հօր քո, յայնժամ սղծեցեր . ¹³զանկո-
ղինս յոր ելեր” :

5 Ծմաւոն և Դեւի եղբարք . ¹⁴կատարե-
ցին զանկորաւութիւն ի կամաց իւրեանց” :

6 Ի խորհուրաց նոցա մի՞ մտցէ անձն իմ,
և ի ժողովս նոցա ոչ հաճեսցին մխոք
իմ . զի սրտմտութեամբ իւրեանց սպա-
նին զարս, և ցանկութեամբ իւրեանց
7 կարթակտոր արարին զյուս : Անի-
ծեալ սրտմտութիւն նոցա, զի յանպուզն

¹Եբ. զերկիրս զայս զաւակի քում յետ քո
²Եբ. նոցա ³Յիբ. առնիմ էր ինձ ⁴Եբ. ի
ճանապարհին, մինչ էր տակաւին վայր ի մոտ-
նել ⁵Եբ. անդ ի ճանապարհին եփրաթայ
⁶Եբ. Ոչ ակն ունէի տեսանել զերեսս քո, և ահա
⁷Եբ. երկիր եպագ ի վերայ երեսաց իւրոց
⁸Եբ. զձեռնս խորհրդով ⁹Եբ. զՅովսէփ

¹⁰Եբ. Ի քեզ օրհնեացէ ¹¹Կմ. մեւս եւս
բամին, ի վերայ եղբարց քոց
¹²Եբ. զօրութեան իմոյ, առաւելութիւն բարձ-
րութեան և առաւելութիւն մեծութեան :
(4) Եսացեր իրրեւ զլուր, մի՞ առաւելուցուս
¹³Եբ. . յանկողի՞նս իմ ել ¹⁴Եբ. անօթք ա-
նիրաւութեան սուսերք նոցա

էր. եւ սխուժիւն նոցա, զի խիտա էր. 24
բաժանեցից զնոսա ի մէջ Յակորայ, եւ
ցրուեցից զնոսա ի մէջ Իսրայելի :
8 Յուզա, գբեզ օրհնուցեցն եզրարք քո.
ձեռք քո ի վերայ թիկանց թշնամեաց
քոց. երկիր պատգան քեզ որդիք հօր
9 քո : Կորիւն առիւծու Յուզա. Ի չա-
ռաւիղէ ելեր, որգեակ իմ. ելեր բազ-
մեցար, ննջեցեր իբրեւ զառեւծ եւ իբրեւ
զկորիւն առիւծու. ո՞ յարուցանէ զնա :
10 Մի սպիակասեցէ իշխան ի Յուզայ, եւ մի
պետ յերանաց նորա, մինչեւ ²եկեացեն
նմա հանդերձեալքն, եւ նա է ակնկա-
11 լութիւն հեթանոսաց : Կապեղեզ զորթոյ
գլաւանակ իւր, եւ զգոհակէն՝ ոչաւանակ
իշոյն. լուացէ զինուով զպատմուճան
իւր, եւ արեամբ խաղողոյ զհանդերձս
12 իւր : Զուարթաղին են աչք նորա ի զին-
ւոյ եւ սպիտակ առամուկք իւր քան
զկաթն :
13 Զարուզոն յեզերս ծովու ընակեացէ, եւ
ինքն նաւահանդիստ նաւաց, եւ ձգեցի
մինչեւ ի Սիզոն :
14 Իսաքար ³բարւոյ ցանկացաւ, հան-
15 զուցեալ ի մէջ ⁴վիճակաց. Տեսեալ
զհանդիսան զի զեղեցիկ էր, եւ զեր-
կիրն զի սպարաթ էր, եզ զուս իւր յաշ-
խաակ, եւ եզեւ ⁵այր արգիւնարար :
16 Դան գառտեց զժողովուրդ իւր իւր-
17 բեւ ⁶զմի այր ի մէջ՝ Իսրայելի : Եւ ե-
զիցի Դան օձ ⁷գարանակալ ի ճանապար-
հի, հարկանել զգարչապար երթիարի, եւ
18 ընկենու զհեծեալն յիտս : ⁸Եւ մնալ
19 փրկութեան Տեսան : ⁹Գագ հինի կիցէ, եւ
ինքն կիցէ հինիւ զհեա նոցա :
20 Ասերայ սպարաթ հաց իւր, եւ ինքն
տացէ կերակուր իշխանաց :
21 Նեփիմաղիմ ¹⁰ձառ բարձրացեալ, ա-
ճեցուցանել արմտեօք, զզեցուցանել
արմտեօք զգեղեցկութիւն :
22 Որգեակ աճեցեալ Յովսեփ, որդեակ
աճեցեալ նախանձելի. որդեակ իմ մա-
23 տալ, առ իս գարձիր : Զոր բննաարկուք
բամբասէին եւ դատափեսա առնէին, եւ

24 սխանային ընդ նմա արք ազեղանց : Եւ
փշրեցան զօրութեամբ ազեղուհք իւր-
եանց, եւ լուծան ջիւղք բազկաց նոցա
ձեռամբ Հզօրին Յակորայ. անտի որ զօ-
25 բացոյց զԻսրայել, ՅԱստուծոյ հօրն քո,
եւ օգնեաց քեզ Աստուած իմ, եւ օրհ-
նեաց զքեզ օրհնութիւն երկնից եւ զիւ-
րուստ, եւ զօրհնութիւն երկրի լի ամե-
նայնիւ. լսան օրհնութեանց ստեանց եւ
26 արգանդի : Օրհնութեանց հօր քո եւ մօր
քո, որ զօրացան քան զօրհնութիւնս
լերանց մշտնջենաւորաց, եւ քան զօրհ-
նութիւնս բլրոց յաւիտենականաց, եղիցի
ի վերայ գլխոյ Յովսեփայ, եւ ի վերայ
գլխոյ եղբայրն որոց առաջնորդեաց :
27 Բենիամին գալլ յախշտակոյ, զալ-
գուցն գեռ եւս ուտիցէ, եւ առ երեկս
բաշխիցէ ¹¹կերակուրս :
28 Ամենեքեան սօքա ¹²որդիք Յակորայ՝
ազդք՝ երկոտասան. եւ այս է զոր
խօսեցաւ ընդ նոսա հայրն իւրեանց, եւ
օրհնեաց զնոսա. իւրաքանչիւր ըստ
օրհնութեան իւրում օրհնեաց զնոսա :
29 Եւ սրատուիրեաց նոցա եւ ասէ զնոսա,
Ես յաւելում առ ժողովուրդ իմ. թաղե-
ցէք զիս ընդ հարս իմ յայրի անդ որ է
30 յաղարակին Եփրայի Քեռացուց. Յայրին
որ յանդի անդ է, ¹³ի կրկնում, յանդի-
ման Մամբրէի յերկրին Քանանացոց՝
զոր ստացաւ Արքանում ¹⁴զայրն յեփրո-
նէ Քեռացուց ի ստացուածս չիրմի :
31 Անդ թաղեցին զԱրքանում եւ զՍաա
զկին նորա. անդ թաղեցին զԻսահակ
եւ զԵրեկա կին նորա. անդ ¹⁵թաղե-
32 ցին զԼիա : Ի ստացուածի ազարակին
եւ այրին որ է ի նմա առ ի յորդոցն
33 Քեռաց : Եւ զազարեաց Յակոր ի պա-
տուիրելոյ որդւոցն իւրոց, եւ առեալ
զուս իւր անդրէն ի մահիճան՝ պակա-
սեաց, եւ յաւելաւ առ ժողովուրդ իւր :

¹Եբր. յաւարէ ²Եբր. եկեացէ Սելով ³Եբր. էշ
ուժեղ ⁴Վաժ. գոմեց ⁵Եբր. հարկատու ծառայ
⁶Եբր. զմին ի ցեղեց ⁷Եբր. ի ճանապարհի եւ ի ծ
յուղեոյ ⁸Եբր. Սպասեցի փրկութեան քում.
Տէր ⁹Եբր. Գագ՝ ելցէ ի նա Տէն ¹⁰Եբր.
եզն արձակեալ, որ տայ բանս գեղեցկութեան :
(22) Յովսեփ շառաւիղ պտղատու, շառաւիղ
առ աղբեր. գտտեք (տաք) նորա ելանել զոր-
մով : (23) Աղեղնաւորք զառնացուցին զնա,
նետաձիգ լինէին եւ ասէին զնա : (24) Այլ ա-

զէզն նորա բնակեաց ի հօտի, ե զօրացան
բազուկք ձեռաց նորա ի ձեռաց Հզօրին Յակո-
րայ : Անտի հովիւն, զէմ Իսրայելի : (25) ՅԱս-
տուծոյ հօրն քո, եւ նա օգնեացէ քեզ, յԱմե-
նականէն՝ եւ նա օրհնեացէ զքեզ, օրհնութիւն
երկնից ի վերուստ. օրհնութիւնք անդոյ ոչ որ
ընկողմանին ի ներքոյ. օրհնութիւնք ստեանց եւ
արդանդի : (26) Օրհնութիւնք հօր քո զօրացան
քան զօրհնութիւնս ծնանկեաց լմից մինչեւ ի
կատար բլրոց յաւիտենականաց. եղիցի ի գլուխ
Յովսեփայ, ի գագաթն քան քանակէն իւր
եղբայր
իւրոց : ¹¹Եբր. կողողուս ¹²Եբր. ազգք
Իսրայելի ¹³Եբր. ի Մաքիեղա ¹⁴Եբր. զարան
¹⁵Եբր. թաղեցի


ԳԼ . Ծ

1 Եւ անկեալ Յովսէփ ի վերայ երեսաց հօր
 իւրոյ կ'այ գնա , եւ համբարեաց գնա :
 2 Եւ հրաման ետ Յովսէփ ծառայից իւրոյ
 3 ՚գրազարգաց պատել գնայրն իւր . եւ
 4 արանեցին ՚գրապատարիքն զԻւրայել : Եւ
 5 լցան նորա աւուրք քառասուն , զի այն-
 6 պէս թուէին աւուրք ՚թաղելոց . եւ սուղ
 7 առ վանն նորա եղիպատոս աւուրս եւ-
 8 թանասուն : Եւ իրրեւ անցին աւուրք
 9 սգոյն , խօսեցաւ Յովսէփ ընդ ՚իշխանան
 10 Փարաւոնի եւ ասէ , իթէ՛ գաի հորհոս
 11 առաջի ձեր , խօսեցարուք ընդ Փարա-
 12 շոնի եւ ասայէք , Հայր իմ երգմնեցոյց
 13 զիս եւ ասէ , Ահաւատիկ ես մեռանիմ . ի
 14 չիրան անդ զոր փորեցի ես ինձ յերկրին
 15 Քանանացոց , անդ թաղեցես զիս . արդ
 16 ելեալ թաղեցից գնայրն իմ , եւ եկից :
30 կիր : Եւ դու եւ ծառայք քօ զիտեմ թէ չեւ եւս երկերուք ի Տեառնէ Աստուծոյ :

31 Կտաւն եւ գարին հարաւ . զի դարին յոժ

32 կայր եւ կտաւն սերմանացեալ էր : Եւ ցորեանն եւ հսճարօջ հարան , զի անաղան էին :

33 Եւ ել Մովսէս ի Փարաւոնէ արտաքս քսն զքաղաքն , եւ ձգեսց զձեան իւր առ Տէր , եւ գաղարեցին ձայնքն եւ կարկուտն , եւ անձրեւ ոչ եւս կաթեաց յեր-

34 կիր : Իրբեւ ետես Փարաւոն եթէ զաղարեսց անձրեւն եւ կարկուտն եւ ձայնքն , յաւել ի մեղանչել , եւ ծանորացոյց զսիրտ

35 իւր ¹⁰եւ զժառայից իւրոց¹⁰ : Եւ խստացաւ սիրան Փարաւոնի եւ ոչ արձակեաց զօրդիան Իսրայելի , որպէս խօսեցաւ Տէր ի ձեան Մովսիսի :

¹Եբր. գովուտ ²Եբր. և կացին առաջի ³Եբր. եղիսպատացիս
⁴Եբր. յարուցի զքեզ ⁵Եբր. խրոխտանս ի վերայ ժողովրդեան ինչ չարձակել
⁶Եբր. սատակեսցին

⁷Եբր. զգաւապան ⁸Եբր. Մեղաց զպս նուագ
⁹Եբր. Տէր ¹⁰Եբր. որպէս և ծառայք նորա

Պ Լ . Ժ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 Մուտ առ Փարաւոնն , զի ես իտաացուցի
 զպիրտ նորա եւ զսիրտ ծառայից նորա , զի
 կարգաւ եկեացեն նշանքն իմ ի վերայնո-
 2 ցա . Որպէս զի պատմիցէք յականջս որդ-
 ւոց ձերոց , եւ որդւոց որդւոց ձերոց , որ-
 չափ խաղացի ընդ Եգիպտացիսոք , եւ
 զնշանս իմ զոր արարի ի նոսա , եւ ծանի-
 3 ջիք թէ ես եմ Տէր :
 Մտին Մովսէս եւ Ահարոն առաջի Փա-
 րաւոնի , եւ ասենցնա , Այսպէս ասէ Տէր
 Աստուածն Երբայից քոց , Մինչև երբ ոչ
 կամիցիս ¹ամաչիլ յինէն . արձակեա զԺու-
 4 ղովուրդ իմ զի պաշտեսցեն զիս : Ապա թէ
 ոչ կամիցիս դու արձակել զԺողովուրդ իմ ,
 ահաւասիկ ես ամից ի սոյն ժամու վաղիւ
 մարախ ²աստիկ ի վերայ ²ամենայն ոսն-
 5 մանաց քոց . եւ ծածկեողէ ³զամենայն եւ-
 րեսա երկրի , եւ ոչ կարիցես ⁴տեսանել զեր-
 կիր . եւ կերիցէ զամենայն նշխարն զոր
 եմոզ ձեզ կարկուտն , եւ կերիցէ զամե-
 նայն փայտ բուսեալ ձեզ ի վերայ երկրի :
 6 Եւ լցցին տունք քո եւ տունք ամենայն
 ծառայից քոց , եւ տունք յամենայն երկրիկ
 Եգիպտացւոց . զոր ոչ երբեք տեսին հարք
 ձեր եւ ոչ հաւք նոցա , յորմէ օրէ եղեն
 յերկրի մինչև երայսօր : Եւ խոյս տուեալ
 ել ի Փարաւոննէ :
 7 Ասենցնա ծառայքն Փարաւոնի , Մին-
 չև երբ իցէ մեզ խոչոյ այդ . արձակեա
 զմարտիկն զի պաշտեսցեն զՏէր Աստուած
 իւրեանց . եթէ զբաժնի կամիցիս զի կորեա .
 8 Եգիպտոս : Եւ զարձուցին զՄովսէս եւ
 զԱհարոն առ Փարաւոնն . եւ ասէցնոսա ,
 9 Երթայք պաշտեցէք զՏէր Աստուած ձեր .
 Բայց ո՞վ եւ ո՞վ իցեն որ երթայցեն : Եւ
 ասէ Մովսէս , Երիտասարդք հանցերձ եւ
 ձերովք մերովք երթիցուք . ուստերօք եւ
 դստերօք մերովք , արջառով եւ ոչխարով
 մերով երթիցուք , զի տօն ⁵է Տեառն Աս-
 10 տուծոյ մերոյ : Եւ ասէցնոսա , Եզիցի
 այդպէս , Տէր ընդ ձեզ , ⁵քանզի արձակեմ
 զձեզ . միթէ եւ զստացուածս ձեր . տեսա-
 11 նէք զի չարիք կան ի ձեզ : Մի այդպէս . այլ
 երթիցեն արք եւ եթ , եւ ⁶պաշտեսցեն զԱս-

տուած . քանզի զայդ իսկ ինզրէիք զուր-
 12 Եւ ասէ Տէր զՄովսէս , Չգեա զձեռն քո
 ի վերայ երկրիկ Եգիպտացւոց , եւ ելց
 մարախ ի վերայ երկրիկ Եգիպտացւոց ,
 եւ կերիցէ զամենայն բանջար երկրիկ ,
²եւ զամենայն պտուղ ծառոց զոր եմոզ
 13 կարկուտն : Եւ ամբարձ Մովսէս ⁷զձեռն
 իւր յերկինս . եւ ամ Տէր հողմ ⁸հարաւոյ
 յերկիր զսփուս ամենայն եւ զզիչերն ամե-
 նայն . իրրեւ առաւօտ եղեւ , եւ հողմ ⁸հա-
 14 րաւոյ առ զմարախն : Եւ ⁹եհան յամենայն
 երկիրն Եգիպտացւոց , եւ ¹⁰զաղարեցոյց
 ի վերայ ամենայն սահմանաց Եգիպտա-
 ցւոց . յառաջ քան զայն ոչ եղեւ այնպիսի
 մարախ , եւ յետ անորիկ ոչ ¹¹եղեւ այն-
 15 պիսի : Եւ ծածկեաց զամենայն երեսա
 երկրին , եւ ¹²ապականեցաւ երկիրն , եւ
 եկեր զամենայն բանջար երկրին եւ զա-
 մենայն պտուղ ծառոց որ մնաց ի կարկտէ
 սնտի . եւ ոչ մնաց կանաչ , ոչ ի ծառս եւ
 ոչ յամենայն բանջար զայտի յամենայն
 երկիրն Եգիպտացւոց :
 16 Եւ փութացաւ Փարաւոն կոչել զՄով-
 սէս եւ զԱհարոն , եւ ասէ , Մեղայ առաջի
 17 Տեառն Աստուծոյ ձերոց եւ ձեզ . Արդ նե-
 րեցէք այսմ եւս յանցանաց իմոց , եւ ա-
 զաչեցէք առ Տէր Աստուած ձեր , եւ ¹³փա-
 18 րատեսցէ յինէն զմարախս՝ զայս : Եւ ել
 Մովսէս ի Փարաւոննէ , եւ եկաց յաղօթս
 19 առ ¹⁴Աստուած : Եւ զարձոյց Տէր հողմ
 սաստիկ ¹⁵ի ծովէ , եւ առ զմարախն եւ ա-
 մաց ի ծովն կարմիր . եւ ոչ մնաց մարախ
 20 յամենայն երկիրն Եգիպտացւոց : Եւ
 խտացոյց Տէր զսիրտն Փարաւոնի , եւ ոչ
 արձակեաց զորպիսն Բարայիլի :
 21 Եւ ասէ Տէր զՄովսէս , Չգեա զձեռն
 քո յերկինս , եւ ելցից իսաւար ի վերայ
 երկրիկ Եգիպտացւոց , խաւար չօշափիցի :
 22 Չզեաց Մովսէս զձեռն իւր յերկինս , եւ
 եղեւ խաւար եւ մէզ եւ մութ ի վերայ
 ամենայն երկիրն Եգիպտացւոց զերես ա-
 23 ռուրս . Եւ ոչ ոք տեսանէր զեղբայր իւր
²զերես առուրս , եւ ոչ յարեաւ ոք յան-
 կողմէ իւրմէ զերես առուրս . բայց ամե-
 նայն որդւոցն Բարայիլի լոյս էր յամենայն
 բնակուած իւսն իւրեանց :

¹Եբր. խնարհել առաջի իմ ²Յեբր. պիտե
³Եբր. զերես երկրի . եւ չիցէ մարթ ⁴Եբր.
 Տեսան է մեզ ⁵Եբր. եթէ տրձակեցից զձեզ
 և զաղի ձեր , տեսէք զի չարիք կան առաջի
 ձեր ⁶Եբր. պաշտեցէք զՏէր

⁷Եբր. զգաւազան իւր ի վերայ երկրին Եգիպ-
 տացւոց ⁸Եբր. արեւելից ⁹Եբր. երին ¹⁰Եբր.
 հանգեան ¹¹Եբր. եղից . եղեւ խա-
 ւար յերկրին ¹²Եբր. եղեւ խա-
 ւար յերկրին ¹³Եբր. բարձգէ միայն յինէն
 զմոսս ¹⁴Եբր. Տէր ¹⁵Եբր. յարեւմտից

24 Եւ կոչեաց Փարաւոն զՄովսէս ¹եւ զԱհարոն՝ եւ ասէ ²հնտաւ, երթա՛ցք պաշտեցէ՛ք զՏէր՝ Աստուած ձեր՝, բայց զարջառ եւ զոչխար ձեր աստէն թողէ՛ք, եւ
 25 այլ ազխոյ ձեր երթիլոցն ընդ ձեզ : Եւ ասէ Մովսէս, Նա եւ զու եւս ասցես մեզ ողջակէզս եւ զոհս զոր ասնիրցեմք
 26 Տեասն Աստուծոյ մերում : Այլ մեր աստուծն իսկ երթիցէ ընդ մեզ, եւ ոչ թողուցու՞ք եւ ոչ կծոյակ մի . քանզի ի նոցանէ ասնուցու՞ք պաշտել զՏէր Աստուած մեր . եւ մեք ոչ գիտեմք զինչ մատուցանիլցեմք Տեասն Աստուծոյ մե.
 27 րում՝՝ մինչեւ անոր հասանիրցեմք : Եւ խտտացոյց Տէր զսիրան Փարաւոնի, եւ
 28 ոչ կամեցաւ արձակել գնտանս եւ ասէ Փարաւոն, Ի բաց գնա յինէն . զդոյչ լեր անձին քում, մի եւս յաւելուցուս ասասնել զերեսս իմ . գի յորում աւուր երեւիս
 29 զու ինձ , մեռանիս : Եւ ասէ Մովսէս ,
²Ասացիր . ոչ եւս երեւեցայց երեսաց քոց :

Վ Լ . ԺԱ

1 Եւ ասէ Տէր զՄովսէս, Այլ մեւս եւս հարուածս ամից ի վերայ Փարաւոնի եւ ի վերայ եգիպտոսի, եւ ասպ արձակեցէ զձեզ աստի . այլ յորժամ արձակեցէ զձեզ , ա-
 2 մենեւին հանցէ զձեզ աստի : Արդ խտեաց ³զազառ յականջս ժողովրդեանն , եւ ինդրեսցեն իւրաքանչիւր ոք յրնկերէ իւրմէ եւ կին ի գրացոյ իւրմէ անօթս ոսկեղէնս եւ անօթս արծաթեղէնս ⁴Եւ հան-
 3 զերձս՝՝ եւ ետ Տէր շնորհս ժողովրդեան իւրում առաջի եգիպտացոցն , ⁵Եւ ետուն նոցա ի գորգ .՝՝ եւ այլն Մովսէս մեծարոյ եղև յոյժ ⁶առաջի եգիպտացոցն եւ առաջի Փարաւոնի , եւ առաջի ամենայն ծառայից նորա՝ , եւ յաչս ժողովրդեանն :
 4 Եւ ասէ Մովսէս , Այսպէս ասէ Տէր ,
 5 Զհասարակ զիշերաւ ես մաից ի մէջ ե-
 6 զիպտոսի . Եւ ստատկեսցի ամենայն անգրանիկ յերկրից եգիպտացոց , յանգրանիկ անաթի Փարաւոնի որ նստի յաթոս նորա , մինչեւ ցանդրանիկ ազախնոյն որ կայցէ առ երկանս , եւ մինչեւ ցանդրանիկ ամենայն անասնոց : Եւ եղիցի ազազակ մեծ յամենայն երկրից եգիպտացոց , որպիսի ոչ եղև եւ ոչ եւս յաւելուցու լինել նոյն
 7 պիտի : Եւ ⁸ի մէջ ամենայն՝՝ արդւոցն Իս-

րայելի ոչ կանչեսցէ եւ ոչ շուն մի լեզուալուրով, եւ ոչ ի մարդոյ մինչեւ յանասուն . զի ⁹գիտասցես որչափ ինչ սքանչելիս արասցէ՝՝ Տէր ի մէջ եգիպտացոց եւ ի մէջ
 8 Իսրայելի : Եւ ինչցեն ամենայն ծառայրսքս այսորիկ աս իս , եւ երկիր պաղցեն ինձ եւ ասացեն , Ել զու եւ ամենայն ժողովուրդ քս , որում զուզ ատաջնորդես . եւ այդա ելից : Եւ ել Մովսէս ի Փարաւոնէ լի բարկութեամբ :
 9 Եւ ասէ Տէր զՄովսէս , Ոչ լուիցէ ձեզ Փարաւոն , զի յաճախեցից գնչանս իմ ¹⁰Եւ զարուեստս՝՝ յերկրից եգիպտացոց : Եւ Մովսէս եւ Ահարոն արարին զամենայն նշանս ¹¹եւ զարուեստս զայստիկ յերկրին եգիպտացոց՝՝ առաջի Փարաւոնի . եւ խտտացոյց Տէր զսիրան Փարաւոնի, եւ ոչ կամեցաւ արձակել զորդանս Իսրայելի յերկրէն ¹²եգիպտացոց :

Վ Լ . ԺԲ

1 Եւ խտեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ընդ Ահարոնի յերկրին եգիպտացոց , եւ ասէ,
 2 Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց . առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյ : ³Պօսեաց ընդ ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայելի եւ ⁴ասացես , Ի սասնեորդու՞մ ամենանա այսորիկ ասցեն իւրեանց իւրաքանչիւր ⁵ուչխար ըստ տունս ազգացն
 4 իւրեանց , ⁶ուչխար ըստ երդ : Եւ եթէ սակաւք իցեն ի տանն՝ որպէս թէ չիցեն բաւական լինի ⁷ուչխարին , աոցէ ընդ իւր զզրացի իւր եւ զընկեր իւր ըստ մտրպաթուի . իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում համարեցի ⁸յոչխարնս Ոչխար՝՝ կատարեալ՝՝ արու , տարւեոր , անարատ լիցի
 6 ձեզ . յօբեաց եւ յայժեաց ասնուցուք : Եւ եղիցի ձեզ պոհեալ մինչեւ ի չորս եւ ի տասն աւուր ամսոցս այսորիկ . եւ զենցեն զնա ամենայն բազմութիւն ժողովրդեան որդւոցն Իսրայելի ընդ երեկս : Եւ ասցեն յարենէ անաթի եւ զիցեն ի վերայ երկուց սեւոցն եւ բարաւորին տանցն յորս ուտիցեն զնա ի նոստ : Եւ կերիցեն զմիսն ի զիշերիս յամիկ . խորովեալ հրով, եւ բա-
 9 զարջ լնոյ եղելի կերիցեն . Եւ ոչ ուտիցէք ի նոցանէ հում , եւ ոչ պտիս երկաղ ջրով ,

5|Էբ. գիտասցէք ելի՞ ըստ անցէ 6|Էբ. զու-
 տակ 7|Էբ. իւրմէ 8|Էբ. Խտեցարսք
 9|Էբ. ասացէք 10|Կաւ, գառն 11|Կաւ, գառն
 12|Կաւ, ի գառնն (5) Գառն

1|ՅԷբ. գառն 2|Էբ. Ա զիւր ասացիր 3|Էբ. յերկրին եգիպտացոց, յաչս ծառայից Փարաւոնի 4|Էբ. ումք յամենայն

այլ խորովեալ հրով. զգուլին ստուքն հան-
 40 զերձ, եւ զփորոտին նորա. եւ ոչ թողու-
 ցուք ի նմանէ յայդ . ¹եւ ոսկր մի՛ բեկա-
 նիցէք ի նմանէ .” եւ որ ինչ մնայցէ ի նմա-
 41 նէ յայդ՝ հրով այրեսցիք : Եւ այսպէս ու-
 տիցէք . զօտիք ձեր ընդ մէջս , եւ կօշիկք
 ձեր յոտս , եւ ցուսք ձեր ի ձեռին . փու-
 թանակի ուտիցէք , զի ²զօտիկ Տեաան է :
 42 Եւ անցից ընդ ամենայն երկիրոյ եղիպ-
 տացւոց ի գիշերիս յայսմիկ , եւ հարից զա-
 մենայն անդամնիկ երկրիդ եղիպտացւոց
 ի մարդոյ մինչեւ յանասուն . եւ յամենայն
 դիւան եղիպտացւոց արարից յրէժինդրու-
 43 թիւն . զի ես եմ Տէր . եւ եղիցի ձեզ արիւնդ
³նշանակեալ ի վերայ տանց՝ յորս իցէք
 ցուք անդ . եւ տեսից զարիւնդ եւ ⁴սպրե-
 ցուցից զձեզ” . եւ ոչ լինիցին ի ձեզ հար-
 ուածք . ի սատակել՝ յորժամ հարկանիցեմ
 44 յերկրիդ եղիպտացւոց . եւ եղիցի ձեզ օրդ
 այդ ի յիշատակ , եւ տօնեցէք զզա՝ տօն
 Տեաան . յազգս ձեր օրէն յաւիտեանս
 45 տօնեցէք զզա՝ Չեւիւն օր բազարջ ուտի-
 ցէք . յառաջնումէ իսկ օրէ անտի անհետ
 ասնիջիք զխմոր ի տանց ձերոց . ամենայն
 որ ուտիցէ խմորեալ՝ սատակեսցի աճնն
 այն յիտրայելէ՝ յառաջնումէ օրէն մինչեւ
 46 յօրն եւ թնորդ . եւ ⁵օրն առաջին կոչես-
 ցի սուրբ , եւ օրն եւ թնորդ նուիրեալ
 եղիցի ձեզ՝ սուրբ . զամենայն գործ սպա-
 սու մի՛ գործիցէք ի նմա , բայց միայն ⁶որ
 գործիցի ամենայն անձին” այն միայն գոր-
 47 ծեսցի ձեզ . եւ պահեսցիք ⁷զպատուիրանս
 իմ զայս” . զի յաւուր յայսմիկ ⁸հանից զզօ-
 րու թիւն՝ ձեր յերկրէս եղիպտացւոց . եւ
 48 տանիցէք զորս զայս յազգս ձեր օրէն յաւի-
 տեանս : Ի սկսանել չորեքստասանե-
 րորդի աւուր ամսայն առաջնոյ յերեկորեայ
 բազարջ ուտիցէք մինչեւ ցքսան եւ մի օր
 49 ամսոյն ցերեկոյ Չեւիւն օր մի՛ զտցի խմոր
 ի տունս ձեր . ամենայն որ ուտիցէ խմոր-
 եալ՝ սատակեսցի անձն այն ի ժողովրդինէ
 Իտրայելի յեկայ եւ ի բնակաց երկրին :
 20 Խմորեալ մի՛ ⁹ուտիցին . յամենայն ընա-
 կու թեան ձերում ուտիցէք բազարջ :
 21 Եւ կոչեաց Մովսէս զամենայն ծերա-
 կոյտ որդւոցն Իտրայելի , եւ ստէ գնոսա

և ի խայր անէք ձեզ ¹⁰ոչխար ըստ ազգս
 22 ձեր , եւ զնշիք ի զատիկ : Եւ անուցուք
 մշակի զսպայի թաթաւեալ յարեան որ
¹¹առ գրօքն՝ իցէ , եւ սրսկեսցիք զբարա-
 ւորսն եւ զերկիքումսք սեւովքն յարենէ
 անտի որ ¹²առ գրօքն” . բայց զուք մի՛ կա-
 նիցէք իւրաքանչիւր ըստ գուռն տան իւ-
 23 րոյ մինչեւ ցառաւօտ . եւ անցցէ Տէր հար-
 կանել զեղիպտացիս , եւ տեսանիցէ զա-
 րիւնն որ ի վերայ բարաւորին եւ ի վերայ
 երկուդ սեւոց , եւ զանց առնիցէ Տէր
 զգրօքն , եւ ոչ տայցէ թոյլ սատակչին
 24 մտանել ի տունս ձեր հարկանելի : Եւ պա-
 հեսցիք զբանս զայս , օրէն քեզ եւ որդւոց
 25 քոց մինչեւ ցառաւօտն : Եւ եթէ մաւ-
 նիցէք յերկիրն զոր տայցէ ձեզ Տէր , որ-
 պէս եւ իստեցաւ , պահեսցիք զպաշտօնդ
 26 զայդ : Եւ եղիցի եթէ ասիցեն զձեզ որ-
 27 զէք ձեր , Չինչ է պաշտօնս այս ձեզ , Ա-
 սասցիք նոցա , եթէ Չո՞ն զատիկ Տեաան է
 այս , յորժամ ¹³պահեսցա զտունս” որդւոցն
 Իտրայելի յեղիպտոս , մինչ հարկանել զե-
 զիպտացիս , եւ զտունս մեր ապրեցոյց :
 28 Եւ այգ . եւ գնացեալ որդիքն Իտրայելի տ-
 րարին որպէս պատուիրեաց Տէր Մովսէսի
 եւ Ահարոնի , նոյնպէս եւ արարին :
 29 Եւ եղև ի հասարակ գիշերի եւ Տէր ե-
 հար զամենայն անդրամիկ յերկրին եղիպ-
 տացւոց , յանդրամիկանէ անտի Փարաւոնի
 որ նստէր յաթոս նորա , մինչեւ յանդրա-
 նիկ գերեզն որ կայր ի վիրտի , եւ զա-
 30 մենայն անդրամիկ անտնոց : Եւ յարեաւ
 Փարաւոն զիշերայն , ինքն եւ ամենայն
 ծառայք իւր եւ ամենայն եղիպտացիք ,
 եւ եղև ազագակ մեծ յամենայն երկրին
 եղիպտացւոց . զի ոչ զոյր տուն յորում ոչ
 զոյր մեռեալ ի նմա :
 31 Եւ կոչեաց Փարաւոն զՄովսէս եւ զԱ-
 հարոն զիշերայն , եւ ասէ ցնոսա , Արիք
 եւ ելէք ի ժողովրդեն իմնէ , եւ զուք եւ
 որդիքն Իտրայելի . երթալ եւ պաշտեցէք
 զՏէր ¹⁴Աստուած ձեր” , որպէս ասացէք .
 32 Եւ զարջառ եւ զոչխար ձեր առեալ գնա-
 ցէք , որպէս եւ ասացէքն . բայց եւ զիս
 33 օրհնեցէք : Եւ ընտրատէին եղիպտացիքն
 զժողովուրդն փութանակի հանել զնոսա
 յերկրէ անտի . բանդի ասէին թէ Ամենե-
 34 քին իսկ մեռանիւք : Եւ առ ժողովուրդն
 զհայն իւրեանց մինչեւ խմորեալ էր ,

¹Յէբր. գ-լ-տ-է ²Եբր. փեստի , այսինչն անցա-
 նել , (Գեհ Յաւօթն-թիւն 4) : ³Եբր. ի նշանս
⁴Եբր անցից զձեզ ⁵Եբր. յաւուրն առաջնում
 եղիցի ժողով սուրբ , եւ յաւուրն եւ թնորդի
 եղիցի ձեզ ժողով ⁶Եբր. զօր ուտիցէ ամե-
 նայն անձն ⁷Եբր. զտօն բազարջն ⁸Եբր.
 հանի ⁹Եբր. ուտիցէք

¹⁰Լւմ , գառն ¹¹Եբր. ի կնիքին ¹²Եբր. զանց
 արար զտամբք

զգանգուածս իւրեանց ծրարեալ ի կտաւս
 35 իւրեանց , ի վերայ ուսոց իւրեանց : Եւ որդիքն Իսրայելի արարին որպէս եւ հրաման եւ նոցա Մովսէս . եւ խնդրեցին յեզրիպտացւոցն անօթս ոսկեզէնս եւ անօթս
 36 արծաթեղէնս եւ հանդերձս : Եւ ետ Տէր շնորհս ժողովրդեան իւրում առաջի Եզրիպտացւոցն , եւ ետուն նոցա ՚ի զարդ . եւ կողովատեցին զԵզրիպտացիսն :
 37 Եւ չուեցին որդիքն Իսրայելի յիւամուսայ ի Սոկրոթ : Վեց հարեւր հազար այր
 38 հետեւակ , թող զայլ աղիս եւ խտնիճազանձ բազում ել ընդ նոսա , եւ արջաւ եւ
 39 ոչխար եւ անասուն բազում յոյժ : Եւ եւփեցին զհայնս զոր հանին յեզրիպտոսէ՝ նկանս բազարջս , քանզի ոչ խնորեցաւ . զի հանին զնոսա Եզրիպտացիքն , եւ ոչ կարէին մնալ : Եւ ոչ պաշար արարին իւրեանց ճանապարհին :
 40 Եւ քնակութիւն որդւոցն Իսրայելի զոր քնակեցին յերկրին Եզրիպտացւոց՝ եւ յերկրին Քանանացւոց՝ ինքեանք եւ հարք իւրեանց՝ , ամբ չորեք հարեւր եւ երեսուն :
 41 Եւ եղև յետ չորեք հարեւր եւ երեսուն ամի , յաւուր յայնմիկ ելին ամենայն զօրութիւնք Տեառն յերկրէն Եզրիպտացւոց :
 42 Պփոքրի որէ յառաջապահեստ Տեառն՝ հանել՝՝ զնոսա յերկրէն Եզրիպտացւոց . ՚այն զիչեր յառաջապահեստ Տեառն՝ լինել՝՝ ամենայն որդւոցն Իսրայելի յաղաք նոցա :
 43 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ Ահարոնի եւ ասէ , Այս է որէն զատկի . ամենայն այլազգի մի կերիցէ ի նմանէ . եւ զամենայն ծառայ ուրու . եւ զարծաթաղիսն թլփատեսցես , եւ ապա կերիցէ ի նմանէ :
 45 Պանդուխանս եւ վարձկանն մի կերիցէ ի նմանէ : Ի տան միում կերիցի . եւ մի հանիցէք ի մտց անտի արտաքս քան զտունն ,
 47 եւ ոսկր մի բեկանիցէք ի նմանէ : Ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայելի անտիկեկամուտ եւ աննիցէ զզատիկն Տեառն , թլփատեսցես զամենայն արու մանուկ նորա , եւ ապա մերձեսցի աննել զնա , եւ եղիցի իրբու զքնակ երկրին . ամենայն անտիկատ մի կերիցէ ի նմանէ : Օրէն՝ մի եւ նոյն կացցէ քնակին եւ եկին որ զայցէ
 50 մերձենալ ի ձեզ , Եւ արարին ամենայն որդիքն Իսրայելի , որպէս սլատու իրեանց

Տէր Մովսիսի եւ Ահարոնի , նոյնպէս արարին : Եւ եղև յաւուր յայնմիկ եւ հան Տէր զորդիսն Իսրայելի յերկրէն Եզրիպտացւոց հանդերձ զօրութեամբ իւրեանց :

Գ Լ Ժ Գ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 2 Արբեա զու ինձ զամենայն անդրանիկ Պաիսիս որ բանայ զամենայն արգանդ ի մէջ որդւոց Իսրայելի , ի մարդոյ մինչեւ
 3 յանասուն , քանզի իմ է : Եւ ասէ Մովսէս յժողովուրդն , Յիշեսջիք զօրս զայս յորում ելէք յեզրիպտոսէ ի տանէ ծառայութեան , զի հզօր ձեռամբ եհան զձեզ Տէր
 4 աստի . եւ ոչ ուտիցէք խմորուն : Զի յայտ աւուր կանէք զուք յամենանս կանխոց :
 5 Եւ եղիցի յորժամ ՚եթէ տանիցի զքեզ Տէր ՚Աստուած քո՝ յերկիրն Քանանացւոց եւ Քետացւոց եւ Ամովրհացւոց եւ Ելեացւոց եւ Յեբուսացւոց՝ եւ Փերզացւոց եւ Գերզեսացւոց՝ , զոր երզուաւ հարցն քոց տալքեզ , երկիր որ բլխէ զկաթն եւ զմեղր , եւ արասցես զպաշտօնս զայս յամենանս
 6 յայսմիկ : Զեթն որ բաղարջ կիրիջիք , եւ
 7 յաւուրն եւ թնբորդի տօն Տեառն : Բաղարջ կերիջիք զեւթն օր , ոչ երեւեսցի առ քեզ խմորուն , եւ ոչ եղիցի խմոր ամենայն սահմանս քո : Եւ պատմեսցես որդւոյ քում յաւուր յայնմիկ եւ ասասցես , Վասն այնորիկ արար ինձ Տէր ՚Աստուած ,
 9 մինչ ելանէի յեզրիպտոսէ : Եւ եղիցի քեզ նշան ի վերայ ձեռին քո , եւ յիշատակ առաջի աչաց քոց , զի լինիցին որէնք Տեառն ի բերանի քում . զի հզօր ձեռամբ եհան
 10 զքեզ Տէր յեզրիպտոսէ : Եւ պահեսջիք զօրէնս զայս ՚ի ժամանակաց ի ժամանակս ,
 11 եւ՝ աւուրց յաւուրս : Եւ եղիցի յորժամ տանիցի զքեզ Տէր ՚Աստուած քո՝ յերկիրն Քանանացւոց , որպէս երզուաւ քեզ եւ
 12 հարցն քոց , եւ տացէ զնա քեզ , Եւ զատուցես Տեառն զամենայն շարու որ բանայ զարգանդ , եւ զամենայն որ բանայ զարգանդ յանդէոց եւ յանասնոց քոց որ լինիցի քեզ . արուքն շարուք Տեառն լինիցին : Եւ զամենայն որ բանայցէ զարգանդ իչոյ , փոխանակեսցես ընդ ոչխարի , եւ եթէ ոչ փոխանակեսցես ,⁶ փրկեսցես զնա . զամենայն անդրանիկս որդւոց քոց փրկես
 14 յետ այտորիկ եւ ասիցէ թէ Զհնչ է սյղ .
¹ Եւ Ք . ի ժամանակի իւրում ,
⁶ Եւ Ք . փողատեսցես

¹Եւ Ք . զոր խնդրեցին ²Եւ Ք . 7-1-1-1 ³Եւ Ք . Քիչեր պահպանութեան է այն Տեառն , զի եհան ⁴Եւ Ք . այս իսկ է գիշեր պահպանութեան

ասացես ցնա , Ձի հօր ձեռամբ եհան
 45 զմեզ Տէր յերկրէն Եգիպտացւոց ի տանէ
 ծառայութեան . Յորժամ խտտացաւ Փա-
 րաւոն չարձակել զմեզ , կտտորեաց Տէր
 զամենայն անդրանիկս յերկրին Եգիպտա-
 ցւոց , յանդրանիկ մարդոյ մինչեւ ցանդրա-
 ցանեմ Տեառն զամենայն արու որ բանայ
 զարգանդ , եւ զամենայն անդրանիկս որդ-
 46 ւոց իմոց փրկեցից : Եւ եղիցի նշան ի վե-
 րայ ձեռին քո , եւ ¹անշարժ առաջի աչաց
 քոց , քանզի հօր ձեռամբ եհան զմեզ
 Տէր յեգիպտոսէ :
 47 Եւ իրբեւ արձակեաց Փարաւոն զժողո-
 վուրդն , ոչ առաջնորդեաց նոցա Աստուած
 ընդ երկիրն Փղշտացւոց , ընդ կարճոյ ճա-
 նապարհ . քանզի ասաց Աստուած թէ
 Գուցէ զանգիտիցէ ժողովուրդն յորժամ
 տեսանիցէ զպատերազմն , եւ դառնացէ
 48 յեգիպտոս : Եւ պատեաց ած Աստուած
 զժողովուրդն ընդ ճանապարհ անապատին՝
 առ Կարմիր ծովուն . եւ ²ի հինգերորդ ազ-
 գի՝՝ ելին որդիքն Իսրայելի յերկրէն Եգիպ-
 49 տացւոց : Եւ առ Մովսէս զսոսկերան Յով-
 սեփի զորդին Իսրայելի , եւ ասէ , եթէ այ-
 ցելու թեամբ այց արասցէ ձեզ ³Տէր , հան-
 ջիք աստի զսոսկերս իմ ընդ ձեզ :
 20 Եւ չուեայ որդւոցն Իսրայելի ի Սոկ-
 քովթայ , բանակեցան յՈթոմ առ անա-
 21 պատուն : Եւ ⁴Աստուած առաջնորդէր նո-
 ցա ցերեկ սեամբ ամպոյ , ցուցանել նոցա
 զճանապարհն , եւ ցրպից սեամբ հրոյ ,
 լուստառւ լինել նոցա ի գնայն՝ գցայց եւ
 22 զցերեկ : Եւ ոչ սրկատէր սիւն ամպոյն ի
 տուէ եւ սիւն հրոյն ի գիշերի առաջի ամե-
 նայն ժողովողեանն :

Գ Լ . Ժ Կ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 2 Խօսեաց ընդ որդին Իսրայելի , եւ զարձ-
 ցին բանակեցին զէմ յանդիման ⁵Հանդ-
 րուանին , ընդ Մագդովզ եւ ընդ ծովն .
 հանդէպ Բէնգուեպիփովայ , յանդիման նո-
 3 ցա բանակեցիս առ ծովեզերրն : Եւ ա-
 սացէ Փարաւոն զորդւոցդ Իսրայելի թէ
 Մոյորեայ են յերկրին , քանզի պատեաց
 4 զնոսա անապատն : Եւ են խտտացուցից

զսիրան Փարաւոնի եւ պնդեցի զհետ գո-
 ցա . եւ փառաւորեցայց ի Փարաւոն , եւ
 յամենայն զօրո նորա , եւ ծանիցեն ⁶ամե-
 նայն Եգիպտացիքն թէ ես եմ Տէր : Եւ
 արարին այնպէս :
 5 Եւ ազդ եզեւ արքային Եգիպտացւոց
 եթէ փախեաւ ժողովուրդն . եւ չըջեցաւ
 սիրան Փարաւոնի եւ ծառայից իւրոց ի
 վերայ ժողովողեանն , եւ ասեն , Ձի՞նչ
 զործեցաք զայն , զի արձակեցաք զորդին
 6 Իսրայելի , զի մի՞ ծառայեացին մեզ : Եւ
 հանդերձեաց Փարաւոն զկառս իւր , եւ
 7 տարաւ ընդ իւր զամենայն ժողովուրդն՝
 7 իւր . Եւ առ վեց հարեւր կառս ընտիրս ,
 եւ զամենայն ⁸երկրայ Եգիպտացւոց , եւ
 8 սպառագէշս ի վերայ ամենեցուն : Եւ
 խտտացոյց Տէր զսիրան Փարաւոնի ար-
 քային Եգիպտացւոց , եւ պնդեցաւ զհետ
 որդւոցն Իսրայելի . եւ որդիքն Իսրայելի
 9 ելանէին բարձրացեալ ձեռամբ Եւ պնդե-
 ցան Եգիպտացիքն զհետ նոցա , եւ գտին
 զնոսա բանակեալս առ ծովեզերրն . եւ ա-
 մենայն երկարք եւ կտոք Փարաւոնի եւ
 հեծեալք նորա եւ զօրք նորա յանդիման
 5 Հանդրուանին , հանդէպ Բէնգուեպիփովայ :
 10 Եւ եհաա մօտ Փարաւոն , եւ համբար-
 ձեալ սրղւոցն Իսրայելի զաչս իւրեանց
 9 տեսնէին զի բանակեցան Եգիպտացիքն
 ի թիկանց՝՝ նոցա , եւ երկեան յոյժ , եւ բո-
 11 զուրեցին որդիքն Իսրայելի առ Տէր : Եւ
 ասեն ցՄովսէս , Իրբեւ թէ ո՞չ գոյին գե-
 րեզմանք յերկրին Եգիպտացւոց , հաներ
 զմեզ սպանանալ յանապատի աստ . զի՞նչ
 զործեցեր զայս ընդ մեզ , զի հաներ զմեզ
 12 յեգիպտոսէ : Ո՞չ այս այն բանք են զոր խօ-
 սեցաք ընդ քեզ յերկրին Եգիպտացւոց , թէ
 13 Թոյլ տուր մեզ զի ծառայեսցուք Եգիպ-
 տացւոցն . զի լաւ էր մեզ ծառայի Եգիպ-
 տացւոցն , քան մեռանի յայսմ անապա-
 13 տի : Եւ ասէ Մովսէս ցժողովուրդն , Քա-
 ջարկեցարուք , պինդ կացեք , եւ տեսա-
 նիցեք զփրկութիւն ի Տեառնէ զոր արասցէ
 ձեզ այսօր . զի զոր օրինակ տեսէք զԵգիպ-
 տացիան այսօր , ոչ եւս յաւելուցուք տե-
 սանել զնոսա յաւիտեանս ժամանակաց :
 14 Տէր տայ պատերազմ ընդ ձեր , եւ զուր-
 ք լուցեք :
 15 Եւ ասէ Տէր ցՄովսէս , Ձի՞ գոչես առ
 իս . խօսեսց ընդ որդիւդ Իսրայելի եւ

¹Եբբ. գրապանակ ²Եբբ. գուեղ կազմեայ
³Եբբ. Աստուած ⁴Եբբ. Տէր ⁵Եբբ. Փիայ-
 րոթայ ⁶Եբբ. գ-լ-տ-տ ⁷Եբբ. առ ընդ իւր զժողովուրդ
⁸Եբբ. կառս ⁹Եբբ. եւ աչս Եգիպտացիք պնդե-
 ին զհետ

46 չուեացեն . Եւ դու առ զգաւազանդ քո եւ ձգեա զձեռն քո ի վերայ ծովուն եւ պատահա զնա . եւ մայրն որդիքն Իսրայելի
 47 ի մէջ ծովուն ընդ ցամաք : Եւ ա՜նա եւ խտացուցից ՚՛զգիրտն Փարաւոնի եւ զԵգիպտացւոցն ամենեցուն ,” եւ մտցեն զԼինի դոցա . եւ փառաւորեցայց ի Փարաւոն եւ յամենայն զօրս նորա եւ ի կառս նորա
 48 եւ յերիվարս նորա : Եւ ծանխցեն ամենայն Եգիպտացիքն ի՞՛է ես եմ Տէր , ի փառաւորել իմում ի Փարաւոն եւ ի կառս նորա եւ յերիվարս նորա :
 49 Եւ ամարձաւ հրեշտակն Աստուծոյ որ երթայր առաջի բանակի որդւոցն Իսրայելի , եւ չոգաւ զԼինի նոցա , եւ վերացաւ սիւն ամպոյն յերեսաց նոցա եւ եկաց ի թիկանց նոցա . եւ եմուտ ի մէջ բանակի Եգիպտացւոցն եւ ի մէջ բանակի Իսրայելացւոցն , եւ եղև խաւար 2 մէգ , եւ անց գիշերն” . եւ ոչ խառնեցան ընդ միմեանս զամենայն գիշերն :
 21 Եւ ձգեաց Մովսէս զձեռն իւր ի վերայ ծովուն , եւ ՚՛զարձոյցանդէն զծովն լանութեամբ հոգմոյ ՚՛հարաւոյ զամենայն գիշերն , եւ արար զծովն ցամաք , եւ պատահեցաւ ջուրն : Եւ մտին որդիքն Իսրայելի ի մէջ ծովուն ընդ ցամաք . եւ եղև ջուրն պարիսպ ընդ աջմէ նոցա , եւ ընդ ա՛նկէ իւրեանց :
 23 Պնդեցան Եգիպտացիքն եւ մայն զԼինի նոցա , ամենայն երիվարք Փարաւոնի եւ կառք նորա եւ հեծեալք նորա ի մէջ ծովուն : Եւ եղև յառաւօտուն պահուն հայեցաւ Տէր ի բանակն Եգիպտացւոց սեամբ հրոյ եւ ամպոյ , եւ խռովեաց դրամակն Եգիպտացւոցն . Եւ կապիսցաւ զանիւր կառաց նոցա , եւ վարէր զնոսա բռնութեամբ . ասեն Եգիպտացիքն , Փախիցուք յերեսաց Իսրայելի , զի Տէր պատերազմի վասն նոցա ընդ Եգիպտացիս :
 26 Եւ ասէ Տէր զՄովսէս , Չգեա զձեռն քո ի վերայ ծովուդ , եւ կարկատեսցի անդրէն ջուրդ , եւ ծածկեսցէ զԵգիպտացիսդ , եւ զհառս զոցա եւ զհեծեալս իւրեանց : Եւ ձգեաց Մովսէս զձեռն իւր ի վերայ ծովուն , եւ դարձաւ ջուրն ընդ առաւօտն ի տեղի իւր , եւ Եգիպտացիքն փախեան յերեսաց ջրոյն . եւ թօթափեաց Տէր զԵգիպտացիս :

28 ասցին ի մէջ ծովուն : Եւ դարձուցեալ զջուրն՝ ծածկեաց զկառս եւ զհեծեալս եւ զամենայն զօրութիւն Փարաւոնի , որ մտեալ էին զհետ նոցա ի ծով անդր . եւ ոչ մնաց ի նոցանէ եւ ոչ մի : Եւ որդիքն Իսրայելի գնացին ընդ ցամաք ի մէջ ծովուն , եւ ջուրն պարիսպ էր ընդ աջմէ նոցա եւ ընդ ա՛նկէ իւրեանց : Եւ ասլրեցոյց Տէր զԻսրայել յաւուր յայնմիկ ի ձեռաց Եգիպտացւոցն , եւ ետես Իսրայել զԵգիպտաւոցն : Եւ ետես Իսրայել զձեռն մեծ զոր արար Տէր ընդ Եգիպտացիսն . եւ երկեաւ ժողովուրդն ի Տեառնէ , եւ հաւասացին ՚՛յԱստուած եւ ի Մովսէս ծառայ նորա :

Վ Լ . Ժ Ե

1 Յայնժամ երգեաց Մովսէս եւ որդիքն Իսրայելի զօրհնութիւնս զայս 6 Աստուծոյ , եւ ասեն , 7 Օրհնեսցուք զՏէր , զի փառօք է փառաւորեալ . ՚՛զերիվարս եւ զհեծեալս նոցա ընկէց ի ծով : Օրհնական ընդունելի իմ” Տէր , եւ եղև ինձ փրկութիւն . սա է իմ Աստուած եւ փառաւոր արարից զսա . Աստուած հօր իմոյ , եւ յարձր արարից զսա : Տէր 9 յորտակէ զպատերազմունս , 4 Տէր՝ անուն նորա Չկառս Փարաւոնի եւ զզօրութիւնս նորա ընկէց ի ծով , զընտիրս հեծելոց եւ զսպառազէսս . ընկղմեցան ի ծով Կարմիր : Խորք ծածկեցին զնոսա , ընկան յանգուստս իրրեւ զվէմ : Աջ քո , Տէր , փառաւորեալ է զօրութեամբ . 7 աջ քո , Տէր , խորտակեաց զթնամին : Եւ բազմութեամբ փառաց քոց մանրեցեր զհակառակորդս . առաքեցեր զբարկութիւն քո եւ եկեր զնոսա իրրեւ զեզէզն : 8 Եւ հոգմով սրտմտութեամբ քով պատանեցան ջուրք , պաղեցան իրրեւ զսարիսպ 9 ջուրք . պաղեցան ալիք ի մէջ ծովուն : Ասաց թնամին , Հալածեցից եւ հասից , բաժանեցից զաւարն , եւ լցուցից ի նոցանէ զանձն իմ” 10 սատակեցից սրով իմով , տիրեացէ նոցա” ձեռն իմ : Առաքեցեր զհոգմն քո , եւ ծածկեաց զնոսա ծով . ընկղմեցան իրրեւ զկապար ի ջուրս սաստիկս : 11 Ո՛վ իցէ նման քեզ յաստուածս , Տէր ,

1 Եբր. զերտ Եգիպտացւոցն 2 Եբր. մէգ եգէպտացւոցն 3 Եբր. զարձոյց Տէր 4 Եբր. արեւելից

5 Եբր. ի Տէր 6 Եբր. Տեառն 7 Եբր. Օրհնեսցից 8 Եբր. զերիվարն եւ զհեծեալն նորա ընկէց ի ծով (2) Չօրութիւն իմ եւ գովութիւն 9 Եբր. է այր պատերազմի , ԵՀՈՎԱՅ 10 Եբր. մեղաջուրեց զսա ը իմ , սատակեացէ զնոսա

1 Եւ կամ ո՞վ մանրիցէ քեզ, փառաւորեալ ի սուրբս, սքանչելի փառօք՝, որ առնես
 12 զնշանս: Ձգեցիր զաջ քո, եւ եկուլ զնոսա
 13 երկիր: Առաջնորդեցիր արգարութեամբ ժողովրդեան ջուժ այսմ զոր փրկեցեր. 2 մխիթարեցիր զօրութեամբ քով ի բանա-
 14 կետդ սրբութեան քո: Լուան ազգք եւ 3 բարկացան. եւ երկունք կայան գբնա-
 15 կիչս 4 Քանանացւոց: Յայնժամ տագնապեցան զատաւորք եղովմայ եւ իշխանք Մովսրացւոց, կալա. զնոսա զողումն. հայեցան ամենայն ընակիչք Քանանա-
 16 ցւոց: Անկցի ի վերայ նոցա ա՛ն եւ երկեւզ. մեծութեամբ բազկի քո քարացին, մինչեւ անցցէ ժողովուրդ քո, Տէր, մինչեւ անցցէ ժողովուրդ քո այս զոր ստացար:
 17 Տարեալ տնկեացես զնոսա ի յետն ժառանգութեան քո, 5 ի պատրաստութիւն բնակութեան քո, զոր արարիր, Տէր, սրբութիւն, Տէր, զոր պտորասեցին
 18 ձեռք քո: Տէր թագաւոր յաւիտեան եւ յաւիտեանս եւ եւս:
 19 Ձի մտին երիվարք Փարաւոնի կառօք եւ հեծելովք նորա ի ծով, եւ ած ի վերայ նոցա Տէր զջուրս ծովուն, եւ որդիքն Իսրայելի զնացին ընդ ցամաք ի մէջ ծովուն:
 20 Եւ աւ Մարիամ մարգարէ քոյրն Ահարոնի զթմրուկն ի ձեռն իւր, եւ ելին ամենայն կանաչք զհետնորա թմրկօք եւ պա-
 21 րուք: Եւ յառաջէր Մարիամ եւ ասէր, 6 Օրհնեսցուք զՏէր, զի փառօքէ փառաւորեալ. 7 զերիվարս եւ զհեծեալս՝ ընկէց ի ծով:
 22 Եւ իսաղապոյց Մովսէս զորդին Իսրայելի ի Կարմիր ծովէ անտի, եւ ած զնոսա յանապատս ի Սուր. եւ զնացին երեքօրեայ ձանապարհ յանապատի անդ, եւ ոչ
 23 զտանէին ջուր ըմպելոյ: Եկին ի 8 Մեուա, եւ ոչ կարէին ըմպել ջուր ի Մեուայն, քանզի գառն էր. վասն այնորիկ անուանեաց զա-
 24 նուն անղւոյն անորիկ Դատնութիւն: Եւ տրտնջեաց ժողովուրդն զՄովսիսէ եւ ա-
 25 սնն, 9 Ձինչ արբուք: Ազգակեաց Մովսէս առ Տէր, եւ եցոյց նմա Տէր փայտ, եւ արկ զայն ի ջուրն, եւ քաղցրացաւ ջուրն: Եւ անդ զնմա իրաւունս եւ զա-
 26 տաստանս. եւ անդ փորձեաց զնա, եւ ասէ, Եթէ լսելով լուիցես ձայնի Տեառն

Աստուծոյ ջուժ, եւ զհաճոյս առաջի նորա արասցես, եւ ունկնդիր լիցիս պատուիրանաց նորա, եւ պահեսցես զամենայն իրաւունս նորա, զամենայն զախտն զոր ածի ի վերայ Եզրիպտացւոցն, ոչ ածից ի վերայ քո. զի ես եմ Տէր որ բժշկեմ զքեզ:
 27 Եւ եկին յեղիմ. եւ էին անդ երկուտասան ազրեւր ջրոց եւ եւթմասսուն ծառ արմաւենեաց. եւ անդ բանակեցան առ ջրովն:

Գ Լ Ժ Զ

1 Չուեցին յեղիմայ, եւ եկին ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայելի յանապատս ի Սին, որ է ընդ Եղիմ եւ ընդ Սինա, յաւուրն հնգետասաներորդի յերկրորդի ամսեան ելանելոյ նոցա յերկրէն Եզրիպտա-
 2 ցւոց: Տրտնջեաց ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայելի զՄովսիսէ եւ զԱհարոնէ 3 յանապատս անդ: Եւ ասնն ցնոսա որդիքն Իսրայելի, Լաւ էր թէ մեռալ էաք 9 հարուածովքն ի Տեառնէ՝ յերկրէն Եզրիպտացւոց, մինչ նստէաք առ կաթասոյս մտոյն եւ ուտէաք հաց յող, քան հանէք զմեզ յանապատս յայս՝ սպանանել զամենայն ժողովուրդս ի ստույ: 4

Եւ ասէ Տէրց Մովսէս, Ահա ես տեղացից ձեզ հաց յերկնից, եւ ելցէ ժողովուրդ 10 իմ եւ ժողովուրդն զօրրստօրէն, զի փորձեցից զնոսա եթէ գնացցեն յօրէնս իմ եթէ ոչ:
 5 Եւ եղիցի յաւուրն վեցերորդի պատրաստեցին զորինչ բերիցենն, եւ եղիցի կրկին քան զայն զոր օրրստօրէն ժողովցին:
 6 Եւ ասնն Մովսէս եւ Ահարոն ցամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայելի, Ընդ երեկոյս զիտաջիք եթէ Տէր եհան զձեզ 7 յերկրէն Եզրիպտացւոց: Եւ առաւօտուց տեսիլք զփառն Տեառն, ի լսել նորա զարտունջ ձեր 11 զԱստուծոյ. այլ մեք ո՞վ
 8 եմք զի տրտնջէք զմէնջ: Եւ ասէ Մովսէս, Ի տալ ձեզ Տեառն ընդ երեկոյս միս ուտելոյ, եւ ընդ առաւօտս հաց յող, վասն լսելոյ Տեառն զարտունջ ձեր զոր դուք տրտնջեցէք 12 զմէնջ. քանզի մեք ո՞վ եմք. զի ոչ զմէնջ է տրտունջդ ձեր, 9 այլ 11 զԱստուծոյ: Եւ ասէ Մովսէս ցեւհարոն, Ասա ցամենայն ժողովուրդ որդւոց Իսրայելի, Մատերուք առաջի Տեառն, քանզի լուաւ զարտունջ ձեր: 10 Մինչդեռ խօսէր Ահարոն ընդ ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայելի, զարձան
 9 Եբբ. ձեռամբ Տեառն 10 Յեբբ. պիտե 11 Եբբ. զՏեառնէ 12 Եբբ. զմաննէ

11 Եբբ. ո՞վ իւրեւլ զքեզ փառաւորեալ ի սրբութեան, ահեղ գողութեամբք 2 Եբբ. ածեր 3 Լամ, խառվեցան 4 Եբբ. Փղըշացւոց 6 Եբբ. ի տեղի 6 Եբբ. Սրճնեցէք 7 Եբբ. զերիվարս եւ զհեծեալ նորա 8 Այլսեթ, զառնութիւն

յանապատն, եւ աճափառք Տեառներեւել-
 41 ցան ամպով: Եւ խօսեցաւ Տէր ընդ Մով-
 42 սիսի եւ ասէ, Լուս պտրտունն ճորղոցն
 Իսրայելի. արգ խօսեցաւ ընդ նոսա եւ
 ասասցես, Ընդ երեկոյս միս կերիջիք,
 եւ ընդ առաւօտս հայիւ յագեսջիք. եւ
 ծանիջիք թէ ես եմ Տէր Աստուած ձեր:
 43 Եւ եղև ընդ երեկոյսն, եւ ել լորա-
 մարդին եւ ծածկեաց զբանալն. եւ ե-
 ղև ընդ առաւօտն՝ ընդ արկանել ցօ-
 44 ղոյն՝ շուրջ զբանակաւն, ² Եւ ահա՝ ի
 վերայ երեսաց անապատին մանր ³ իրբեւ
 զգինձ, սպիտակ՝ իրբեւ զեղեանն ի վե-
 45 րայ երկրին: Իբրև տեսին զայն որդիքն
 Իսրայելի, ասին ընկեր ցընկեր, ⁴ Ձի՞նչ
 է այս. քանզի ոչ զիտէին զինչ խցէ. եւ
 ասէ ցնոսա Մովսէս, Այդ է հացն զոր
 46 ետ ձեզ Տէր ուտելոյ: Եւ այս բան է
 զոր պատուիրեաց Տէր. Ժողովեցէք ի
 զմանէ իւրաքանչիւր ըստ բաւականի
 իւրում, ⁵ չափով ըստ զլուխ, ըստ թուղ
 անձանց ձերոց, ըստ իւրաքանչիւր ըստ
 47 վրանս ձեր ժողովեցէք: Եւ արարին այն-
 պէս որդիքն Իսրայելի. եւ ժողովեցին,
 48 որ շատ եւ որ սակաւ: Եւ չափեցին
⁶ չափովն. որոյ շատն էր՝ ոչ յաւելաւ,
 եւ որոյ սակաւն էր՝ ոչ պակասեաց. իւ-
 49 րաքանչիւր ըստ բաւականի իւրում ժո-
 թողեցին: Եւ ասէ ցնոսա Մովսէս, Մի՞ ոք
 20 թողուցու այսի յայդ: Եւ ոչ լուան Մով-
 սիսի, այլ թողին ոմանք ի նմանէ յայդ, եւ
 եւաց ի նմա որդն եւ նիխեցաւ. եւ զառ-
 21 նացաւ ի նոսա Մովսէս: Եւ քաղէին այդուն
 այդուն իւրաքանչիւր ըստ բաւականի իւ-
 22 րում. եւ իբրև արեւն ջեռնոյր, հոյէր:
 Եւ եղև յաւուրն վեցերորդի ժողովե-
 ցին զպէտան կրկին՝ երկուս ⁷ չափս առ
 մի մի. եւ մտին ամենայն ի իխանք ժո-
 23 ղովորդեանն եւ պատմեցին Մովսիսի: Ասէ
 ցնոսա Մովսէս, Այս բան է զոր խօսե-
 ցաւ Տէր. Շարաթ հանդիստ սուրբ Տեառն
 վաղիւ, որ ինչ եփելոց էք՝ եփեցէք, եւ
 որ ինչ հասուցանելոց էք՝ հասուցէք, եւ
 զամենայն զաւելորդն թողուցուք յա-
 24 մանս մինչև ցառաւօտ: Եւ թողին ի
 նմանէ յայդ, որպէս հրամայեաց նոցա
 Մովսէս. եւ ոչ նիխեցաւ, եւ ոչ եղև

25 ի նմա որդն: Եւ ասէ Մովսէս, Կերայք
 զայդ այսօր, քանզի շարաթ Տեառն է
 այսօր. ոչ գտանէք այսօր զայդ ի դաշ-
 26 տի: Զվից օր ժողովեցէք զայդ, եւ յա-
 27 ի նմա, Եւ եղև յաւուրն եւ թներորդի
 ելին ոմանք ի ժողովորդնէ անտի քաղել,
 28 եւ ոչ գտին: Եւ ասէ Տէր ցՄովսէս,
 Մինչև յերբ ոչ կամիր լսել պատուի-
 29 րանաց իմոց եւ օրինաց: Տեսէք զի Տէր
 ետ ձեզ զօրս զայս շարաթ, վասն այ-
 նորիկ ինքն ետ ձեզ յաւուրն վեցերորդի
 հաց երկուց աւուրց. նստարուք իւրա-
 քանչիւր ⁸ ի տունս ձեր, եւ մի՞ ոք ե-
 լանիցէ ի տեղուցէ իւրմէ յաւուրն եւ թ-
 30 ներորդի: Եւ շարաթացաւ ժողովուրդն
 31 յաւուրն եւ թներորդի: Եւ անուանեցին
 որդիքն Իսրայելի զանուն նորա Ման. եւ
 նա էր իբրև զսերմն զնձոյ՝ սպիտակ,
 եւ համ նորա իբրև զխորիստ մեղու:
 32 Եւ ասէ Մովսէս, Այս բան է զոր հրա-
 ման ետ Տէր. Լցէք ⁹ ի չափով զմա-
 նանայդ յաման մի, եւ սահեցէք՝ յագգս
 ձեր, զի ¹⁰ ստեանիցէք զհացդ զոր ¹¹ կե-
 րայք զուք՝ յանապատի աստ ի ժամա-
 նակի իրբեւ ¹² Էհան զմեզ Տէր՝ յերկրէն
 33 Եզիպտացուոց: Եւ ասէ Մովսէս ցԱհարոն,
 Առ սափոր մի ¹³ ոսկի, եւ արկցես ի նա
 լի ⁶ չափովդ մանանայ, եւ զիցես զգա
 առաջի ¹⁴ Աստուծոյ ի սահեստ յագգս ձեր:
 34 Որպէս հրաման ետ Տէր Մովսիսի, եւ
 եղ զայն Ահարոն առաջի Վկայութեանն
 35 ի սահեստ: Եւ որդիքն Իսրայելի կերան
 զմանանայն զքառասուն ամ, մինչև ե-
 36 մինչև Էհան ¹⁵ ի կողմն Փիւնիկեցոց՝ Եւ
¹⁶ չափն էր տամերորդ ¹⁷ երկուց զրուաց՝:

ԳԼ . ԺԷ

1 Եւ չուեաց ամենայն ժողովուրդ որդ-
 ւոցն Իսրայելի ի Սինն անապատէ ըստ
 բանակս իւրեանից բանիւ Տեառն, եւ
 բանակեցան յիսայիլիմ. եւ ոչ գոյր ջուր
 2 ըմպել ժողովորդեանն: Եւ բամբասէր ժո-
 ղովուրդն զՄովսէս եւ ասէին, Տուր մեզ

¹ Եբբ. հանդեաւ ցօղն ² Եբբ. եւ իրբեւ վերա-
 ցաւ ցօղն որ հանդեաւ, ահա էր ³ Եբբ. թի-
 փաձեւ ինչ, մանր ⁴ Եբբ. Մանհու (յորմէ Մ-
 նանայ) ⁵ Եբբ. օսէր ⁶ Եբբ. օսէրիւ ⁷ Եբբ.
 օսէրի

⁸ Եբբ. ի տեղուց իւրում ⁹ Եբբ. զօմերն անտի
 պահել ¹⁰ Եբբ. տեսանիցեն ¹¹ Եբբ. ետու
 ձեզ ուտել ¹² Եբբ. հանի զձեզ ¹³ Եբբ.
 պիտի ¹⁴ Եբբ. Տեսուն ¹⁵ Եբբ. ի սահմանս
 երկրին Գանանացոց ¹⁶ Եբբ. օսէրն ¹⁷ Կա-
 արգուի

ջուր զի արբցուք . եւ ասէ ցնոսա Մովսէս, Ձի՞ բամբասէք զիս , եւ զի՞ փորձէք զՏէր : Եւ ծարաւեաց անդ ժողովուրդն ի ջրոյ . եւ տրանջեաց ժողովուրդն զՄովսիսէ, եւ ասեն, Ընդէ՞ր հաներ զմեզ յեգիպտոսէ, կոտորել զմեզ եւ զորդիս մեր եւ զխաչինս մեր ի ծարաւոյ :

4 Եւ բողոքեաց Մովսէս առ Տէր եւ ասէ, Ձի՞նչ արարից ժողովրդեանս այսմիկ , սակաւիկ մեւս եւս, եւ քարկոծ

5 ասնիցեն զիս : Եւ ասէ Տէր ցՄովսէս, Երթ առաջի ժողովրդեանդ, եւ առ ընդ քեզ ի ծիրոց ժողովրդեանդ . եւ զգաւազանն քո որով հարկը զգեան՝ առ ի ձեռին քում, եւ երթիցես : Եւ ես հասուակ կայցեմ անդ յաստջառոցն քան զքեզ ի վերայ վիտին ի Քորեք . եւ հարցես զվէմն եւ կյցէ ի նմանէ ջուր, եւ արբցէ ժողովուրդդ : Եւ արար այնպէս Մովսէս առաջի ի որդւոցն Իսրայելի : Եւ անուանեաց զանուն տեղւոցն այնորիկ ՝ Փորձութիւն եւ Բամբասանս . վասն բամբասանաց որդւոցն Իսրայելի եւ վասն փորձելոյ նոցա զՏէր եւ ասելոյ, Եթէ իցէ ի մեզ Տէր եւ եթէ ոչ :

8 Եկն Ամազէկ, եւ ասայ պատերազմ ընդ Իսրայելի յԻսափիզիմ : Եւ ասէ Մովսէս ցՅեսու, Ընտրեալ որ ՝ Քեզ արս զօրաւորս՝, եւ ելեալ տացես պատերազմ ընդ ՝Ամազելայ առ վազիւ . եւ ահա ես եկեալ՝ կայցեմ ի վերայ զիւրոյ բլրոցն, եւ զաւազանն Աստուծոյ ի ձեռին իմում :

10 Եւ արար Յեսու որպէս ասաց նմա Մովսէս, եւ ճակատեցաւ յանդիման Ամազելայ . եւ Մովսէս եւ Ահարոն եւ Ովր

11 եկին ի գլուխ բլրոցն : Եւ լինէր յորժամ ամբասնայր Մովսէս զձեռս իւր, զօրանայր Իսրայել . եւ յորժամ խոնարհեցուցանէր զձեռս իւր, զօրանայր Ամազէկ :

12 Եւ ծանրէին ձեռքն Մովսիսի, եւ ասուակ վէմ զնէին ընդ նոխաւ, եւ նստէր ի վերայ նորա . եւ Ահարոն եւ Ովր հաստակէին զձեռս նորա, մի աստի եւ մի անտի, եւ լինէին ձեռքն Մովսիսի հաստատակաք մինչեւ ցմտանել արեգակսնն :

13 Եւ եհար Յեսու զԱմազէկ եւ զամենայն

14 զօրս նորա կոտորմամբ սրոյս եւ ասէ Տէր ցՄովսէս, Գրեալ զայց սու ի յիշատակ ի զիրս, եւ տուր յակնաջա Յեսուայ, զի ջնջելով ջնջեցից զիշատակ Ամազելայ :

15 յերկրէ ի ներքոյ երկնից : Եւ յինեաց Մովսէս սեղան ՝ Տեառն, եւ անուանեաց զանունն նորա՝ Տէր ասպաւէն իմ, Եւ ասէ, Ձի՞ ճածուկ ձեռամբ Տեառն պատերազմի Տէր՝ ընդ Ամազելայ աղբաց յազգս :

Գ Լ ԺԸ

1 Եւ լուաւ Յոթոր քուրմ Մագիամուսներ Մովսիսի զամենայն զոր արար Տէր ընդ Մովսիսի եւ Իսրայելի ժողովրդեան իւրում, զի եհան Տէր զԻսրայել 2 յեգիպտոսէ : Եւ առ Յոթոր աներ Մովսիսի զՍեպտուորա զկին Մովսիսի՝ յետ 3 թողլոյն զնա . Եւ զերկուս որդիս նորա, յորոց միումն անուն էր Գերամ, 4 ասէ, Պանդուխտ էի յօտար երկրի . Եւ անուն երկորդին Նեղիազար, ասէ, Աստուած հօր իմոյ օգնական իմ, եւ ապրեց 5 ցոյց զիս ի ձեռաց Փարաւոնի : Եւ եկն Յոթոր աներն Մովսիսի եւ որդիք նորա եւ կին նորա առ Մովսէս յանապատն, ուր բնակեալ էր ի լերինն Աստուծոյ :

6 Այդ եղև Մովսիսի եւ ասեն, Թէ Ահա աներ քո Յոթոր դայ սու քեզ, եւ կին 7 քո եւ երկու որդիք քո ընդ նմա : Ել Մովսէս ընդ ասաջ աներոյն իւրոյ, եւ երկիր եպազ նմա եւ համբուրեաց զնա . եւ ողջոյն ետուն միմեանց ի խազաղու 8 թիւն, եւ տարաւ զնոսա ի խորանն : Եւ պատմեաց Մովսէս աներոյն իւրում զամենայն ինչ զոր արար Տէր ընդ Փարաւոն եւ ընդ Եգիպտացիսն վասն Իսրայելի, եւ զամենայն աշխատութիւնս որ եղև նոցա ի ճանապարհի, եւ զի ապրեցոյց 9 զնոսա Տէր : Եւ ՝ զարմացաւ Յոթոր ի վերայ ամենայն բարեացն զոր արար նոցա Տէր, եւ զի ապրեցոյց զնոսա ի ձեռաց Նեղիպտացւոցն ՝ եւ ի ձեռաց Փարաւոնի՝ :

10 Եւ ասէ Յոթոր, Օրհնեալ է Տէր որ ապրեցոյց ՝ զզոսա ի ձեռաց Նեղիպտացւոցն եւ ի ձեռաց Փարաւոնի . զի վրկեաց զժողովուրդդ ի ներքուստ ձեռինն Եգիպտացւոց : Այդ զիտեմ թէ մեծ է Տէր քան զամենայն աստուածս . ¹⁰ վասն այնորիկ զի բնանային ի վերայ զոցա՝ :

12 Եւ առ Յոթոր աներն Մովսիսի ողջա-

1 Եբբ. ձերոցն 2 Եբբ. Աստու եւ Մերկայս
3 Եբբ. մեզ արս 4 Եբբ. Ամազէկոյ. առ վազիւ ես

5 Եբբ. Գ-Լ-Ի-Ե 6 Եբբ. ձեռն ի վերայ ամբողջ Տեառն, պատերազմ՝ Տեառն 7 Եբբ. յղեցոյն
8 Եբբ. ուրտի եղև 9 Եբբ. զձեզ 10 Եբբ. զի յորում ամբարտաւանէինն՝ եղև ընդդէմ՝ նոցա

կէզս եւ զոճս Աստուծոյ . եւ զնային Մովսէս եւ Ահարոն եւ ամենայն ծերքն Իսրայելի՝ ուտել հաց ընդ աներոյն Մովսիսի առաջի՝ ¹Տեսան :

13 Եւ եղև ի վաղիւ անդր նստաւ Մովսէս դասել զժողովուրդն . եւ կայր ամենայն ժողովուրդն շուրջ զՄովսիսիս ,

14 յառաւօտէ մինչև ցերեկոյ : Եւ տեսաւ Յոթորայ զամենայն ինչ զոր առնէր ժողովրդեանն , եւ ասէ , Չինչ է բանդ այդ զոր առնես զու ժողովրդեանդ . ընդէր զու նստիս միայն , եւ ամենայն ժողովուրդդ կայ շուրջ գրեւ յառաւօտէ մինչև ցերեկոյ : Եւ ասէ Մովսէս ցաներն իւր , Բանդի դայ ժողովուրդդ առ իս

16 խնդրել իրաւունս յԱստուծոյ : Յորժամ լինիցի ինչ զոցս հակառակութիւն , զան առ իս , եւ ես ընտրեմ ի մէջ իւրաքանչիւր ուրուք , եւ իմացուցանեմ զոցս զհրամանս Աստուծոյ եւ զօրէնս նորա :

17 Եւ ասէ ցնա աներն Մովսիսի , Ոչ է ու-

18 չիդ բանդ զոր առնես : Անհարկն տանվանօք տանջիս զու եւ ամենայն ժողովուրդդ որ է ընդ քեզ . ծանր է քեզ բանդ այդ , ոչ կարես միայն առնել :

19 Բայց արդ լուր ինձ , եւ տաղ քեզ խրատ , եւ եզիցի Աստուած ընդ քեզ : Կեր զու ժողովրդեանդ առ ի յԱստուծոյ , եւ տար-

20 ցես զու զբանս զոցս առ Աստուած . Եւ զիցես զոցս վկայութիւն զհրամանացն ²Աստուծոյ եւ զօրինաց նորա՝ , եւ զուցցես զոցս ճանապարհս յորս քնայցեն , եւ

21 զգործս զոր գործիցեն : Եւ զու տես քեզ յամենայն ժողովրդեանէդ արս զօրաւորս , աստուածապաշտս , արս արզարակորոյս որ ասիցեն ³զհպարտութիւն , եւ կացուցես զնոսս ի վերայ զոցս հազարապետս եւ հարիւրապետս եւ յիննապետս

22 եւ տաննապետս . եւ դատեսցին զժողովուրդդ յամենայն ժամ . եւ զբան ինչ մեծ առ քեզ հասուցանիցեն , եւ զվտքր ինչ դատաստան՝ ինքեանք դատեսցին . եւ թիթեւացուցեն ի քէն , եւ եղիցին քեզ

23 օգնականք : Եթէ դասս բան արացես , զօրացուցէ զքեզ Աստուած , եւ կարացես տոկալ , եւ ամենայն ժողովուրդդ երթիցէ ի տեղի իւր խաղաղութեամբ :

24 Եւ լուաւ Մովսէս ձայնի աներոյն իւրոյ , եւ արար զամենայն որ միանդամ

25 ասաց նմա : Եւ ընտրեաց Մովսէս յա-

մենայն Իսրայելէ արս զօրաւորս , եւ արար զնոսս ի վերայ նոցս հազարապետս եւ հարիւրապետս եւ յիննապետս եւ տաս-

26 նապետս : Եւ դատէին՝ զժողովուրդն յամենայն ժամ . բայց զբան ինչ մեծ հասուցանէին տո Մովսէս , եւ զամենայն բան

27 թիթեւաց ինքեանք դատէին եւ արձակեաց Մովսէս զաներն իւր , եւ գնաց յերկիր իւր

Գ Լ . ԺԹ

1 Յամեսանն երրորդի ելանելոյ որդւոցն Իսրայելի յերկրէն Եգիպտացոց , յաւուրն

2 յայնմիկ եկին յանապատն Սինայ , Չուեցին յմափիղիմայ եւ եկին յանապատն Սինայի , եւ բանակեցան յանապատի անդ . եւ բանակեցաւ Իսրայել անդ հան-

3 գէպ լերինն : Եւ Մովսէս ել ՚ի լեռանն Աստուծոյ՝ . եւ կոչեաց զնա ⁵Աստուած ի լեռնէ անտի եւ ասէ , Այսպէս ասացես տանն Յակորայ , եւ պատմեսցես

4 որդւոցն Իսրայելի . Դուք ձեզէն տեսէք որչափ ինչ արարի ընդ Եգիպտացիսն , եւ սոի զձեզ իրիւս ի վերայ թեւոց

5 արծուոյ եւ յարեցի զձեզ առ իս : Եւ արդ՝ եթէ յսելով լուիցէք ձայնի իմում , եւ պահիցէք զուխան իմ , եղև իւր զուք ինձ ժողովուրդ սեսրական յամենայն ազգաց .

6 զի իմ է ամենայն երկիր : Եւ զուք եղև ջիւր ինձ ի Թագաւորութիւն ⁶եւ ի քահանայութիւն՝ եւ յազդ սուրբ . զայս բանս խօսեսցիս ընդ որդիսն Իսրայելի :

7 Եկն Մովսէս եւ կոչեաց զձերս ժողովրդեանն , եւ եղ առաջի նոցս զամենայն զբանս զայստօիկ զոր պատուիրեաց նմա

8 ⁵Աստուած : Պատասխանի ես ժողովուրդն միահամուռ եւ ասեն , Չամենայն ինչ զոր ասաց ⁵Աստուած , արասցուք ⁷և լուրացուք՝ : Եւ տարաւ Մովսէս զպատգամս ժողովրդեանն առ ⁵Աստուած :

9 Եւ ասէ Տէր զՄովսէս , Ահաւասիկ ես եկից տո քեզ ⁸սեամբ անոյոյ , զի լուիցէ ժողովուրդն մինչ ես ընդ քեզ խօսիցիմ , եւ հաւատացին քեզ յաւատեան : Եւ պատմեաց Մովսէս զբանս

10 ժողովրդեանն առ Տէր : Եւ ասէ Տէր զՄովսէս , ⁹Եջ զիւր վկայութիւն ժողովրդեանն՝ եւ սրբեա զնոսս սչսոր եւ վաղիւ , եւ լուացեն զձորձս իւրեանց ,

¹ Եբբ. Աստուծոյ ² Եբբ. և զօրինաց ³ Եբբ. զշարաղութիւնս

⁴ Եբբ. առ Աստուած ⁵ Եբբ. Տէր ⁶ Եբբ. քահանայից ⁷ Եբբ. դուրս ⁸ Եբբ. ի միմեկեանս ⁹ Եբբ. երթ առ ժողովուրդն

11 Եւ պատրաստեցին աւուրն երրորդի . զի յաւուրն երրորդի իջցէ Տէր յանդիման ամենայն ժողովրդեանդ ի լեառնդ Սի-

12 նա : Եւ զատուցես զժողովուրդն շուրջ՝ եւ ասացես , Զդոյշ կացէք անձանց յեւրանելոյ ի լեառնն եւ մերձենալոյ ի նա . զի ամենայն որ մերձեացի ի լեառնն՝ մա-

13 հու սատակեացի : Մի մերձեացի ի նա ձեռն . քանզի քարամբ քարկոծեացի եւ նետիւք խոցոտիցի . եթէ անասուն իցէ եւ եթէ մարդ , մի կեցցէ . այլ յորժամ ձայնքն եւ փողն եւ ամպս վերացցին ի լեռնէ անտի ,՝ ելանլոցեն նորա ի լեառնն :

14 Եւ էջ Մովսէս ի լեռնէ անտի առ ժողովուրդն , եւ սրբեաց զնոսա . եւ լուս-

15 ցին զձործս իւրեանց : Եւ ասէ ցժողովուրդն , Պատրաստ լերուք ՝ զերբիս աւուրս՝ . ի կանայս մի մերձենայք :

16 Եւ եղև յաւուրն երրորդի ընդ առաւօտան ձայնք եւ փայլատակուէք եւ ամպ միգլախառն ի վերայ լերինն ՝ Սինայի լինէին , եւ ձայն փողոյն հնչէր մեծաձայն , եւ դարհուրեցաւ ամենայն ժո-

17 ղովուրդն որ էր ի բանակի սնդ : Եւ եհան Մովսէս զժողովուրդն ընդ առաջ Աստուծոյ ի բանակէ անտի , եւ կացոյց

18 շուրջ՝ զատորոտով լերինն ՝ Սինայի : Եւ լեառն Սինա ծխէր առ հասարակ , քանզի լջէալ կայր ՝ Աստուած ի վերայ նորա հրով , եւ ելանէր ծուխ նորա իրբեւ զծուխ հնոցի , եւ զարհուրեցաւ ամենայն ժո-

19 ղովուրդն յոյժ . Քանզի՝ հասանէին ձայնք փողոյն ի բաց , յառաջացեալք եւ ասատակացեալք յոյժ , Մովսէս խօսէր , եւ Աս-

20 տուած տայր նմա ձայն : Եւ էջ Տէր ի լեառնն Սինա , ի գլուխ լերինն , եւ կոչեաց Տէր զՄովսէս ի գլուխ լերինն , եւ

21 ել անդր Մովսէս : Եւ խօսեցաւ ՝ Աստուած ընդ Մովսիսի եւ ասէ , էջ , զիր վիպութիւն ժողովրդեանդ , զուցէ մերձենայցեն հայել առ ՝ Աստուած , եւ ան-

22 կանիցին բազումք ի նոցանէ : Եւ քահանայքն որ մերձենան առ ՝ Աստուած՝ սրբեացին , զուցէ սատակիցէ ի նոցանէ՝

23 Տէր : Եւ ասէ Մովսէս ՝ ցԱստուած , Ոչ կարէ ժողովուրդն ելանել ի լեառնն Սինա . զի զու ինքնին ուխտեցեր մեզ եւ ասացեր , եթէ Զատուցես զլեառնս եւ

24 սրբեցես զգա : Եւ ասէ ցնա Տէր , Երթ էջ , եւ ել այսրէն զու եւ Ահարոն ընդ քեղ . բայց քահանայքն եւ ժողովուրդն մի ժտեցին երանել առ ՝ Աստուած ,

25 զուցէ սատակիցէ ի նոցանէ Տէր : Էջ Մովսէս առ ժողովուրդն եւ ասէ ցնոսա՝

ԳԼ . Ի

1 Խօսեցաւ ՝ Տէր զամենայն զպատգամս զայստոսիկ եւ ասէ ,

2 Ես եմ Տէր Աստուած քո որ հանի զքեզ յերկրէն եգիպտացոց ի տանէ ծառայութեան :

3 Մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յինն :

4 Մի արացես զու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան որ ինչ յերկինս ի վեր է , եւ որ ինչ յերկրի ի խոնարհ ,

5 եւ որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի . Մի երկիր պաղանկեցն նոցա , եւ մի պատեցես զնոսա . զի ես եմ Տէր Աստուած քո , Աստուած նախանձոս , որ հատուցանեմ զմեզս հարանց որդոց , յերբս եւ

6 ի նորս ազգս ատելեաց իմոց . Եւ առնեմ զդորմութիւն ի հազար ազգս սիրելեաց իմոց , եւ ոչք պահեն զհրամանս իմ :

7 Մի անուռցուս զանուն Տեառն Աստուծոյ քո ի վերայ մտտեաց . զի ոչ սրբեցէ Տէր զայն որ անուռցու զանուն նորա ի վերայ մտտեաց :

8 Յիշեալիբ զօրն շարաթուց սրբել զնա ,

9 Զվեց օր դործեցես , եւ արացես զամենայն զգործս քո . Յաւուրն եւ թներորդի շարաթ Տեառն Աստուծոյ քո . մի գործեցես ի նմա զամենայն գործ քո , զու եւ ուսար քո եւ զուսար քո , ծառայ քո եւ աղախին քո , զեզն քո եւ էջ քո եւ ամենայն անասուն քո , եւ եկն՝ քո եւ պանդուխտն

11 որ ի քեղ . Զի զվեց օր արար Տէր Աստուած զերկինս եւ զերկիր , եւ զծով եւ զամենայն որ ի նոսա , եւ հանդեաւ յաւուրն եւ թներորդի . վասն այնորիկ օրհնեաց Տէր զօրն եւ թներորդ եւ սրբեաց զնա :

12 Պատուեա զհայր քո եւ զմայր քո ՝ զի քեզ բարի լիցի , եւ՝ զի երկայնակեաց լինիցիս ի վերայ երկրին ՝ բարութեան զոր Տէր Աստուած քո տացէ քեզ :

1 Եբբ . յերկարել փողոյն 2 Եբբ . յօրն երրորդ
 3 Եբբ . գլխու 4 Եբբ . կացին 5 Եբբ . Տէր 6 Եբբ .
 զողայր ամենայն լեառնն , (19) եւ 7 Եբբ .
 ցՏէր

8 Եբբ . Աստուած 9 Եբբ . և անասուն

46 Մի սուտ վկայութիւն վկայեր զընկերէ քու մէջ :

47 Մի ցանկանար սան ընկերի քո, ¹ Եւ մի անդոյ նորա :² մի ցանկանար կնոջ ընկերի քո, եւ մի ծառայի նորա, եւ մի աղախնոյ նորա, եւ մի եղին նորա, եւ մի իշոյ նորա, ³ Եւ մի ամենայն անասնոյ նորա⁴ Եւ մի ամենայնի զինչ ընկերի քո խցէ :

48 Եւ ամենայն ժողովուրդն տեսանէր զձայնն եւ զճառագայթանն եւ զբարբառ փողոյն եւ զլեռանն ծխեալ : Զահի հարաւ ամենայն ժողովուրդն եւ խորչեցաւ :

49 Եկաց ի հեռաստանէ . Եւ ասնն ցՄովսէս, Դու խօսեաց ընդ մեզ եւ լուիցուք, եւ մի խօսեցի ընդ մեզ Աստուած, գուցէ մե-

20 ասնիցիմք : Եւ ասէ ցնոստ Մովսէս, Քաջալերեցարուք, զի վասն փորձելոյ զձեզ եկն աս ձեզ Աստուած, որպէս զի լինիցի երկեզ նորա ի ձեզ, զի մի՛ մեղանչիցէք :

21 Եւ կայր ժողովուրդն ի հեռաստանէ . եւ Մովսէս եմուտ ի մէջն ուր էր Աստուած :

22 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Այսպէս աւսացես զու ¹սանդ Յակոբայ, եւ պատմացես² որդւոցդ Բարայելի, Դուք ձեզէն

23 տեսք, զի յերկնից խօսեցայ ընդ ձեզ : Մի անիցէք ձեզ աստուածս ոսկեղէնս եւ

24 աստուածս արծաթեղէնս : Սեղան հողեղէն արասլիք ինձ, եւ մատուցիք ի նմա զողջակէզս ձեր եւ ²զվրկութիւնս ձեր, զոչխարս ձեր եւ զարջառս ձեր, յամենայն տեղիս ուր անուանեցից զանուն իմ անդ, եւ կից իս քեզ եւ օրհնելից զքեզ :

25 Ապա եթէ սեղան ի քարանց առնիցես ինձ, մի չհնեցես զնոսա կոփածոցս քանզի զձեռնիցործին քո մերձեցուցի ի նա,

26 եւ պղծեալ է : Մի՛ ելանիցես ընդ աշտիճանս ի սեղան իմ, զի մի՛ մերկասցին առականք քո ի վերայ նորա :

Գ Լ Ի Ա

1 Եւ այս իրաւունք են զոր զիցես առաջի նոցա :

2 Եթէ գնեսցես ծառայ երբայցի, զվեցամ ծառայեսցէ քեզ, եւ յամին եւթ-

3 ներորդի գնասցէ աղատ ձրի Եթէ ինքն միայն մտեալ իցէ, միայն գնացցէ . եւ եթէ կնու հանդերձ մտեալ իցէ, կցէ եւ

4 կինն ընդ նմա Ապա եթէ տէրն իւր տացէ նմա կին, եւ ծնանիցի նմա ուստերս եւ զստերս, կինն եւ որդիք՝ տեսան նորա

5 եղիցին, եւ նա միայն կցէ : Ապա եթէ պատասխանի տուեալ ասիցէ ծառայն, Սիրեցի զաէր իմ եւ զկին իմ եւ զորդիս իմ, եւ ոչ զնամ յազատութիւն,

6 Տարցի գնա տէրն իւր յատենս Աստուծոյ, եւ ապա մատուցէ գնա առ սեռմս գրանն . եւ ծակեսցէ զունկն նորա հերեամբ, եւ ծառայեսցէ նմա յաւիտեանս :

7 Իսկ եթէ վաճառեսցէ ոք զզուսոր իւր յազախնութիւն, մի գնացէ որպէս

8 ելանիցին ³ազախնայք : Եթէ ոչ լինիցի հաճոյ յաչս տեսնն իւրոյ որում հաստատեցան, փրկեսցէ գնա . բայց յազգ օտար չէ իշխան վաճառի, զի անար-

9 զեաց գնա : Ապա թէ որդւոյ իւրում հաստատեսցէ գնա, ըստ օրինաց գտերաց

10 արտացէ նմա : Ապա թէ առ նոյաւ այլ սանուցու, ⁴ զօրէնն եւ գնանդերձ նորա եւ զմերձաւորութիւն մի հասցէ ի նմանէ :

11 Ապա թէ վերին զայստիկ ոչ առնիցէ նմա, ձրի իսկ կցէ առանց արծաթոյ :

12 Եթէ հարցէ ոք զոք եւ մեռանիցի,

13 մահու մեռցի եւ նա : Իսկ որ ոչ կամաւ այլ Աստուած մատնեաց ի ձեռս նորա, տացի նմա տեղի ուր վախիցէ

14 սպանօցն : Իսկ եթէ մտարերեսցէ ոք յընկեր իւր սպանանել գնա նենդութեամբ եւ վախիցէ, եւ ի սեղանոյ իմ մէ առնուցուս գնա եւ սպանանիցես :

15 Որ հարկանէ գնայր իւր կամ զմայր իւր, մահու մեռցի :

16 Որ ոք զողացի ⁵ յորդուցն Իսրայելի՝ եւ վաճառեսցէ գնա, եւ գացի առ նմա, մահու մեռցի :

17 Որ ⁶ բամբասեսցէ գնայր իւր կամ զմայր իւր, մահու մեռցի :

18 Եթէ կագիցին արք երկու, եւ հարկանիցէ ոք ի նոցանէ զընկեր իւր քարիւ կամ բնցի, եւ ոչ մեռանիցի, այլ

19 զնիցի ի մահճս, Եթէ յառնիցէ սյրն եւ չրջիցի արտաքոյ ի ցպոյ, անպարտ լիցի որ եհարն, բայց զխտախնածոյ նորա եւ զբժշկութեանն սուժեսցի :

20 Եթէ ոք հարցէ զծառայ իւր կամ զազախին իւր զաւագանաւ, եւ մեռցի ի ձեռանէ նորա, պատաստանաւ վրէժ-

21 ինորութիւն լիցի . Բայց թէ մի օր կամ երկուս կեցցէ, մի խորեցի վրէժն . զի զինք արծաթոյ իւրոյ են :

22 Իսկ եթէ կուրիցին արք երկու, եւ

¹ Եթէ. գովո-տ ² Եթէ. գիտազազական ³ Եթէ. ծառայք ⁴ Եթէ. անիճոց ⁵ Եթէ. զկերակուր ⁶ Եթէ. մարդ

հարկանիցեն զկին յղի եւ եղանիցէ սաղմն
 1 աննկար , կէս վնասու՝ տու ժեսցի , որ-
 23 տացէ ²աղաչելով Ապա եթէ ³կերպարան-
 24 եալ իցէ՝, տացէ անձն ընդ անձին, Ակն ընդ
 ական, առամն ընդ աստաման, ձեան ընդ
 25 ձեալին, ոտն ընդ ոտին, Սարան ընդ խարա-
 նի, վէր ընդ վիրի, հարուած ընդ հարուածոյ
 26 Իսկ եթէ հարցէ ոք զակն ծառայի
 իւրոյ կամ զակն աղախնոյ իւրոյ , եւ
 կուրացուցէ , արձակեսցէ ⁴զնոսս ա-
 27 զատս՝ փոխանակ ական ⁵նոցա : Եւ եթէ
 զատամն ծառայի իւրոյ , կամ զատամն
 աղախնոյ թափեսցէ , արձակեսցէ ⁶ա-
 զատս փոխանակ ատաման ⁷նոցա :
 28 Իսկ եթէ հարցէ ցու զայր կամ զկին,
 եւ մեռանիցին , ցուլն քարկոծ լիցի , եւ
 մնա նորա մի կերիցի . եւ տէր ցլուն
 29 անպարտ լիցի : Ապա թէ ցուլն հարկա-
 նօղ իցէ յերկին եւ յեռանդն , եւ բողոք-
 եալ իցէ ⁸տեառն նորա , եւ նորա չիցէ ի
 միջոյ բարձեալ , եւ սպանանիցէ զայր կամ
 զկին , ցուլն քարկոծ լիցի , եւ տէր ցլուն
 30 առ նմին մեացի : Իսկ եթէ փրկանք ան-
 կանիցին ի վերայ նորա , տացէ փրկանս
 ընդ անձին իւրում , ըստ ամենայնի որ-
 31 չափ ինչ արկանիցեն նմա զին , Եւ եթէ
 զուստ կամ զղուստը հարկանիցէ , ըստ
 32 նմին օրինակի արասցեն նմա Իսկ եթէ
 զծառայկամ զաղախին հարկանիցէ ցուլն,
 երեսուն ⁹կրկին սատեր՝ արծաթ տացէ
 տեառն նոցա , եւ ցուլն քարկոծ լիցի :
 33 Իսկ եթէ բացցէ ոք հոր , կամ փո-
 րեսցէ ջրհոր , եւ ոչ խփանիցէ զնա , եւ
 34 անկանիցի անդ արջառ կամ էշ , Տէր
 հորոյն տու ժեսցի արծաթ եւ տացէ
 տեառն նորա , եւ չաղիղն նորա լիցի :
 35 Իսկ եթէ հարցէ ցու ուրուք զցուլ
 ընկերի իւրոյ եւ մեռցի , վաճառեսցեն
 զցուլն կենդանի , եւ բաժանեսցեն զզինս
 նորա , եւ զցուլն սպանեալ՝ բաժանես-
 36 ցեն : Ապա եթէ յերկին եւ յեռանդն
 զիտելին զցուլն , եւ ⁸բողոքեալ իցէ
 տեառն նորա , եւ նորա չիցէ ի միջոյ
 բարձեալ զնա ,՝ տու ժեսցի ցուլ ընդ
 ցլուն , եւ սպանեալն նորա լիցի :

1 Իսկ եթէ զողացի ոք արջառ կամ ոչ-
 խար , եւ սպանցէ կամ վաճառեսցէ ,
 հինգ արջառ ընդ արջառոյն տու ժեսցի ,
 2 եւ չորս ոչխար ընդ ոչխարին : Իսկ ե-
 թէ յական գտանիցի գող , եւ խոցեալ
 մեռանիցի , չէ այն նմա ի սպանութիւնս
 3 Ապա եթէ արեւն ի վերայ նորա ծագի-
 ցէ , մահապարտ է , ⁹փոխարէն մեռցի՝ .
 ապա թէ ոչինչ գտանիցի նորա , վա-
 ճառեսցի փոխանակ գողութեանն իւ-
 4 րոյ : Իսկ եթէ ըմբռնեսցի եւ գտցի ի
 ձեռին նորա գողօմն՝ յարջառոյ եւ յիշոյ
 մինչեւ ցոչխար , կրկին տու ժեսցի :
 5 Եթէ արածիցէ ոք զանդ կամ զայգի,
 եւ թող տացէ խաչին իւրում արածել
 զանդ այրոց , ¹⁰յիւրմէ անգոյ անտի տու-
 ժեսցի ըստ արդեանն : Ապա թէ զամենայն
 իսկ զանդն արածիցէ , զընտիր կողմնանոցոյ
 իւրոյ եւ զընտիր այգւոյ իւրոյ տու ժեսցի
 6 Իսկ եթէ երանիցէ հուր եւ գտանիցէ
 փուշ , եւ ընդ նմին այրիցէ զկալ կամ
 զօրան կամ զանդ , տու ժեսցի տու ժեսցի
 որոյ զհրդեհն հանեալ իցէ :
 7 Իսկ եթէ ոք տացէ ընկերի իւրում
 արծաթ կամ այլ ինչ կորստի զիւր յա-
 ճանդ , եւ գողացայցի ի տանն անն ,
 եթէ գտցի որ զողացաւն , կրկին տու-
 8 ժեսցի . Ապա եթէ ոչ գտցի որ զողա-
 ցաւն , մատիցէ տէր տանն առաջի ¹¹Աս-
 տուծոյ , եւ երպուլիցի եթէ իւր չէ նեն-
 գեալ ամենեւին զաւանդ ընկերի իւրոյ :
 9 Ըստ ամենայն ¹²վնասակար բանի՝ , յար-
 ջառոյ եւ յիշոյ եւ յոչխարէ եւ ի հան-
 գերձէ , եւ յամենայն կորստինն ¹³որում
 վնասակար աւնիցեն , որ զինչ իցէ՝ ա-
 ռաջի ¹⁴Աստուծոյ եկեսցէ զատաստան
 երկոցուն , եւ ¹⁵որ ոք ի նոցանն
 ըմբռնեսցի ի ձեռն Աստուծոյ՝ , կրկին
 տու ժեսցի ընկերի իւրում :
 10 Եւ եթէ տացէ ոք ընկերի իւրում էշ
 կամ եզն կամ ոչխար կամ այլ ինչ ա-
 նասուն ի պահեստ , եւ բեկցի կամ մեռ-
 ցի կամ գերի վարեսցի , եւ ոչ ոք զի-
 11 տացէ , Երգումն ¹⁵Աստուծոյ լիցի ի մէջ
 երկոցուն , եթէ նենդանօք ինչ չիցէ

1 Եբբ. նորա , ե չար ինչ ոչ պատահիցէ , տու-
 ժեսցի 2 Եբբ. ըստ զատուսորաց 3 Եբբ. չար
 ինչ պատահիցէ 4 Եբբ. զնա ազատ 5 Եբբ.
 նորա 6 Այտիւն , ցաւեր 7 Եբբ. սիկզ 8 Եբբ.
 տեառն նորա չիցէ պահեալ զնա , տու ժեսցի

9 Եբբ. զի մարթ էր նմա տու ժեսցի տու ժես-
 10 Եբբ. պիտե 11 Կա , զատուսորաց 12 Եբբ.
 բանի անիրաւութեան 13 Եբբ. գործէ անիցէ
 թէ այս է այն 14 Եբբ. զոր զատուսորացեացէ
 Աստուած , կամ , զատուսորացեացէ զատուսոր-
 15 Եբբ. Տեառն

11 զնացեալ ամենեւին ընդ աւանդ ընկերին իւրոյ . ապա յանձն տոցէ տէրնորա, եւ մի՞
 12 տուժեացի : Իսկ եթէ գողութեամբ գողա-
 նայցի ի նմանէ , տուժեացի սեւան նորա :
 13 Ապա թէ գաղանարեկ լինիցի , չածցէ
 վկայ ի գէշ անոր , եւ մի՞ տուժեացի :
 14 Իսկ եթէ ինպրեպէ սք ²անօթ յըն-
 կերէ իւրմէ , եւ բեկցի կամ մեռցի ³կամ
 գերի գնասցէ , եւ տէր նորա չիցէ ընդ
 15 նմա , տուժելով տուժեացի . Ապա թէ
 տէր նորա ընդ նմա իցէ , ոչ տուժեացի .
 ապա թէ ի վարձու առեալ իցէ , ընդ
 վարձուց իւրոց եղիցի նմա :
 16 Իսկ եթէ ոք խարեացէ զկոյս զոչ խօս-
 եալ եւ ննջեացէ ընդ նմա , վարձանօք
 17 վարձեացի զնա իւր կնութեան : Եւ եթէ
 ոչ առնուցու յանձն հայր նորա տալ գնա
 նմա կնութեան , տուժեացի արձամ ³օր
 նորա՞ որպէս իցեն վարձանք կուսից :
 18 ⁴Զկախարդս մի՞ ապրեցուցանիցէք :
 19 Զամենայն որ խառնակիցի ընդ անա-
 սուն՝ մահու սպանանի՞ջիք :
 20 Որ զից զոչիցէ՝ սատակեացի , բայց
 միայն Տեառն :
 21 Զպանդուխտն մի՞ չարչարիցէք եւ մի՞
 նեղիցէք զնա , զի եւ գուք պանդուխտը
 22 էիք յերկրին Եգիպտացուց : Զամենայն
 23 գայրի եւ զորը մի՞ չարչարիցէք : Ապա
 եթէ չարչարելով չարչարիցէք զնոսա ,
 եւ բողոք բարձեալ ազազակիցեն առ
 24 իս , լսելով լուսայց ազազակի նոցա . Եւ
 բարկացայց սրամտութեամբ եւ կոտո-
 րեցից զձեզ սրով , եւ եղիցին կանայք
 ձեր այրիք եւ մանկունք ձեր որբք :
 25 Եւ եթէ արձաթ փոխ տայցես ⁵եզրօր
 քու՞մ՞ որ աղքատ իցէ առ քեզ , մի՞ ⁶ձե-
 պեցես զնա , եւ մի՞ սրկանիցես նմա տո-
 26 կոսիտ : Եւ եթէ գրաւեացես զբաձկոն ըն-
 կերի քո , նախ քան զմասնել արեւու զար-
 27 ձուսցես անգրէն . Զի այն է վերարկու ու-
 րա , եւ այն է հանգերձ ⁷առականաց նորա
 որով ննջիցէ . եւ եթէ բողոքիցէ առ իս ,
 լուսայց նմա , քանզի ողորմած եմ :
 28 ⁸Զաստուածս քո՞՞ մի՞ բամբասիցես , եւ
 զիշխան ժողովրդեան քո մի՞ հայնոցեստ :
 29 Զպտուզ կալոյ քո եւ զհնձանի մի՞
⁹հատանիցես . զանդրանիկս որդւոց քոց

30 ինձ տացես : Նոյնպէս արասցես զար-
 ջաս քո եւ զօչխար քո ³եւ զէշ քո՞ .
 զեւթն օր եղիցի ընդ մարդ իւրով , եւ
 յաւուրն ութերորդի տացես զնա ինձ :
 31 Եւ մարդը սուրբը լինի՞ջիք ինձ . եւ
 զմիս գաղանարեկին ի բացի՞ մի՞ ուտի-
 ցէք , այլ շան ընկես՞իք :

ԳԼ . ԻԳ

1 Եւ զհամրաւ սուտ մի՞ ¹⁰րոպուռիցիս :
 Մի՞ հաւանիցի ընդ անիրաւի՞ լինել
 2 վկայ անիրաւ : Մի՞ յօժարեացիս ընդ բա-
 զուճս ի չարիս :
 Մի՞ յաւելուցուս ի բազմութիւն միտել
 ընդ բազուճս առ իխոտորեւոյ զիրաւունս :
 3 Եւ մի՞ ողորմեացիս անանկին ի գատաս-
 տանի :
 4 Եւ եթէ պատահեացես եղին թ շնամուց
 քո , կամ իչոյ նորա մորթեալ , զարձուճ-
 5 ցես եւ հասուցես զնա առ նա : Եւ եթէ
 սեռանիցես զգրաստ ¹¹ընկերի քո անկ-
 եալ ընդ բեռամբ , մի՞ զանց առնիցես
 զնովաւ , այլ յարուսցես զնա ընդ նմա :
 6 Մի՞ խոտորեացես զիրաւունս անան-
 7 կին ի գատաստանի իւրում : ¹²Յամե-
 նայն ի զուր բանէ՞ ի բաց լինիցիս , եւ
 զանպարտն եւ զարդարն մի՞ սպանանի-
 ցես . ¹³եւ զամպարիչտն մի՞ աղրեցու-
 ցանիցես վանն կաշառի՞ :
 8 Եւ կաշառ մի՞ առնուցուս . զի կաշառ
 կուրացուցանէ զաչս համարձակահայե-
 ցաց , եւ ապականէ ¹⁴զբանս արդարս :
 9 Եւ զպանդուխտն մի՞ նեղիցես . քան-
 զի ճանաչէք զուք զանձինս պանդխտաց .
 զի եւ գուք պանդուխտք էիք յերկրին
 Եգիպտացուց :
 10 Զվկայ մօ սերմանեացես զերկիր քո , եւ
 11 ժողովեացես զարմախս նորա . Եւ յամին
 եւթներորդի թողութիւն արասցես , եւ
 հանգուցես զնա , եւ կերիցեն անանկը
 ազգի քո , եւ զմնացեալն ի նոցանէ կե-
 րիցեն զազանք վայրի . այնպէս սրաս-
 ցես զայլի քո եւ զձիթնի քո :
 12 Զվկայ օր զորձեացես զզորձ քո , եւ
 յաւուրն եւթներորդի ¹⁵հանգիցէ եզն քո
 եւ էշ քո , եւ հանգիցէ որլի ազալնոյ
 քո եւ ¹⁶պանդխտին :

11 ԲԵՐ. բերցէ զնա վկայ 12 ԲԵՐ. ինչ 13 ՅԵՐ. զ-
 րկուսէ 14 ԲԵՐ. Զկին կախարդ 15 ԲԵՐ. ումիք
 ի ժողովուրդ են իմէ 16 ԲԵՐ. լիցես նմա իբրեւ
 վաշխառու 17 ԲԵՐ. մերկութեան 18 ԲԵՐ. զԱ-
 տուած , կամ զգատաւորս 19 ԲԵՐ. յամեցուցես

10 ԲԵՐ. հանցես 11 ԲԵՐ. թ շնամուց 12 ԲԵՐ. ի
 բանէ ստութեան 13 ԲԵՐ. զի ոչ արդարա-
 ցուցից զամպարիչտն 14 ԲԵՐ. գրանս արդա-
 րոց , կամ զիրաւունս արդարոց 15 ԲԵՐ. դատա-
 րեացիս , զի հանգիցէ 16 ԲԵՐ. պանդուխտն

13 Զամենայն զոր ասացի ձեզ՝ պահեսցիք .
 և և զանունն աստուածոց օտարաց մի՛ յի-
 14 շխցէք , և մի՛ լուիցի ի բերանոց ձերմէ :
 15 Երբս ժամանակս ի տարւոջ արասցիք
 ինձ տօնս : Զտօն բազարձակերացն պա-
 16 հեսցիք . զեւթին օր բազարջ կերի՛ջիք ,
 որպէս պատուրեցի ձեզ ըստ ժամա-
 նակի ամսոցն կանխոց . զի ի նմա ելէք
 17 զուր յերկրէն եգիպտացուոց . ոչ երևեսու-
 18 ցիս առաջի իմ գատարկածեան . Եւ զտօն
 19 ամարայնոյ , առաջնոյ այմտեաց քոց ,
 20 2արսացես զգործոց քոց :՝ որ ինչ վար-
 21 նալ իցէ յանդի քում , և զտօն 3կատա-
 22 րածի ելից՝ տարւոյն՝ ի ժողովել զործոց
 23 17 քոց յանգէ : Երբս ժամանակս ի տարւոջ
 24 յանդիման լիցի ամենայն արու քո ա-
 25 ռաջի Տեառն 4Ատուածոյ :
 26 Եւ մի՛ զոհեսցես ի վերայ խմորոց զու-
 27 րլուն զոհից 5քոց , և մի՛ ազցի ճարպ
 28 տօնի իմոց մինչև երեսուցս : Զպտուզս
 29 առաջին արմեաց քոց բերցես ի տուն
 30 Տեառն Ատուածոյ քո :
 31 Եւ մի՛ եփեսցես 6զգամն ի կաթն մօր
 32 իւրոյ :
 33 Եւ ահա ես առաքեմ զհրեշտակ իմ
 34 առաջի երեսաց քոց , զի պահեսցէ զքեզ
 35 ի ճանապարհի . որպէս զի տարցի զքեզ
 36 յերկիրն՝ զոր պատրաստեցի քեզ : Զգոյշ
 37 լիւր անձին քում եւ լուիցես նմա , և մի՛
 38 անհաւան լինիցիս նմա . զի ոչ 7խորշիցի ի
 39 քէն՝ , քանպի անունն իմ ի վերայ նորա
 40 22 է : Եւ եթէ լսելով լուիցես ձայնի իմում ,
 41 և արսացես զամենայն զոր ինչ ասացի
 42 քեզ , իզէց թշնամի թշնամեաց քոց , և
 43 հակառակ կացից հակառակորդաց քոց :
 44 Զի երթիցէ հրեշտակ իմ առաջնորդ քեզ ,
 45 և տարցի զքեզ առ Ամոլրհայնիս եւ
 46 Քետացի եւ Փերեզացի եւ Քանանացի եւ
 47 2Գերզեկացի եւ՝ 8Եւրացի եւ Յերուսա-
 48 24 ցից , և աստակեացի զնոսա : Մի՛ պազա-
 49 նիցես երկիր աստուածոց նոցա , և մի՛
 50 պաշտեսցես զնոսա , և մի՛ անեիցես ըստ
 51 գործոց նոցա . այլ քակելով քակեսցես
 52 զնոսա , և մանրելով մանրեսցես զար-
 53 25 ձանս նոցա : Եւ պաշտեսցես զՏէր Աս-
 54 26 ատուած քո , և 9օրհնեցից զհաց քո եւ
 55 զլուր քո , և զարձուցից ի ձէնջ պախա
 56 Եւ մի՛ եղիցի անտերմնս եւ ամուլ յերկրի

27 քում . զթիւ աւուրց քոց լցուցից : Եւ
 28 զահ իմ առաքեցից առաջնորդել քեզ ,
 29 և զարհուրեցուցից զամենայն ազգս յորս
 30 մասնիցես ի նոսա , և ասց զամենայն
 31 Տեառնակորդս քո փախստականս : Եւ
 32 առաքեցից առաջի քո զպիծակ , և մեր-
 33 ժեսցէ 2զԱմոլրհայնիս եւ՝ զԵւեւացին եւ
 34 զՔանանացին եւ զՔետացին յերեսաց
 35 29 քոց : Եւ ոչ մերժեցից զնոսա յերեսաց
 36 քոց ի միում ամի , զի մի՛ երկիրն անա-
 37 պատ լինիցի , և բազմանայցես ի վերայ
 38 30 քո զագանք երկրին : Առ սակաւ սա-
 39 կաւ մերժեցից զնոսա ի քէն , մինչև
 40 31 ածեսցես եւ ժառանգեսցես զերկիր : Եւ
 41 ելից զսահմանս քո ի Կարմիր ծովէ մինչ-
 42 չև եւ ի ծովն Փշտացուոց , և յանապա-
 43 սէն մինչև ի գեան մեծ Եփրատ . և
 44 մասնեցից ի ձեռս ձեր զբնակիչս երկրին ,
 45 32 և մերժեցից զնոսա ի քէն : Եւ զու մի՛
 46 զնիցես ընդ նոսա եւ ընդ զիս նոցա
 47 33 ուխտ : Եւ մի՛ բնակեսցին յերկրի քում ,
 48 զի մի՛ յանցուցանիցին զքեզ առ իս . զի
 49 եթէ ծառայեսցես զից նոցա , նոքա լի-
 50 ցին քեզ ի պայծազուութիւն :

Գ Լ Ի Գ

1 Եւ ասէ ցՄովսէս , Ել առ Տէր , զու եւ
 2 Ահարօն եւ Նաբալ եւ Արիուզ եւ եւ-
 3 թանատուն այր ի ճերտոց Իսրայելի , և
 4 9երկիր պազցին Տեառն՝ ի հեռաստանէ :
 5 Եւ մերձեցի Մովսէս միայն առ 10Ատու-
 6 7ուած , և նոքա մի՛ մերձեցին . բայց
 8 ժողովուրդն մի՛ ելցէ ընդ նոսա :
 9 Եւ եւմու Մովսէս եւ պատմեաց ժո-
 10 զովրդեանն զամենայն պատգամս 11Աս-
 11 ատուածոց եւ զամենայն իրաւունս . պա-
 12 տասխանի կտ ամենայն ժողովուրդն ի
 13 մի ձայն եւ ասին , Զամենայն պատգամս
 14 զոր խօսեցաւ Տէր՝ արասցուք 12Եւ լուի-
 15 ցուք՝ : Եւ զրեաց Մովսէս զամենայն
 16 զպատգամն Տեառն , և կանխեալ Մով-
 17 սիս ընդ առաւօտն , շինեաց սեզան ի
 18 ստորտուրիին , և երկտասան վէմկանգ-
 19 նեաց ըստ երկտասան ազգայն Իսրայելի
 20 5 Եւ առաքեաց զերիտասարգս որդւոցն
 21 Իսրայելի , և հանին ողջակէզս , և զօհե-
 22 ցին զօհս 12վրկութեան Ատուածոց՝ որթս
 23 6 Եւ առեալ Մովսիսի զկէս արեանն արկ
 24 ի խառնելիսն , և զկէս արեանն եհեզ

11:բբ. հնձոց 2Յ:բբ. Գ-Կ-Ե 3:բբ. ժողովե-
 4լոյ յեւլ 4:բբ. Եհովայի 5:բբ. իմոց 6:բբ.
 7զուլ 7:բբ. թողուցու զյանցանս ձեր 8:բբ.
 9օրհնեցէ

9:բբ. երկիր պազանիցէք 10:բբ. Տէր 11:բբ.
 Տեառն 12:բբ. խաղաղութեան Տեառն

7¹ առաջի սեղանոյն : Եւ առեալ զգիր ուխտին ընթերցաւ յախանջս ժողովրդեանն : Եւ ասին , Չամենայն զոր խօսեցաւ Տէր՝ 8 արասցօք եւ լուխցօք : Եւ առեալ Մովսիսի վարիւնն՝ ցանեաց զԺողովրդեամբն եւ ասէ , Անա այս արիւն է ուխտին զոր ուխտեաց Տէր ընդ ձեզ վասն ամենայն բանիցս այսօրիկ :

9 Եւ ելին Մովսէս եւ Ահարոն եւ Նարայ եւ Արփուդ եւ եւթանասունք ի ծերացն 10 Իսրայելի , Եւ ասին ² զտեղին ուր կայր Աստուած՝ Իսրայելի . եւ ընդ սօրբնորս իրբեւ զգործած ազիւտոյ շափիղայ , եւ իրբեւ ³ զանոյ շաստատութեան երկնից 11 սրբութեամբն : Եւ յընտրելոցն Իսրայելի ոչ ծախեցաւ եւ ոչ մի . եւ երեւեցան ի տեղուն Աստուծոյ՝ , եւ կերան եւ արբին : 12 Եւ ասէ Տէր զՄովսէս , Ել առ իս ի լեառնն , եւ անդ լինիջիր , եւ տայ քեզ տախտակս . քարեղէնս եւ օրէնս եւ սրատուիրանս զորս գրեցի , ⁴ լինիջ նոցա օրէնս : 13 զիր՝ : Յարեաւ Մովսէս եւ Յեսուս պաշտօնեայ նորա , եւ ⁵ ելին ի լեառնն Աստուծոյ . 14 Եւ ասէ զԾերան , Իտպարեցէք այգր մինչեւ զարձցուք առ ձեզ . եւ անա Ահարոն եւ Ովր ընդ ձեզ են . եւ եթէ ուրուք գատաստան ինչ լինիցի , երթիցեն առ նոսա : 15 Եւ ել Մովսէս ի լեառն , եւ ծածկեաց 16 ամպն զլեառնն : Եւ իջին փառքն Աստուծոյ ի լեառնն Սինա , եւ ծածկեաց զնա ամպն զվից օր . եւ կոչեաց Տէր զՄովսէս յաւուրն եւթներորդի ի միջոյ 17 ամպոյն : Եւ տեսիլ փառացն Տեառն իրբեւ զճուր բորբոքեալ ի վերայ զխոյ լերինն : 18 յանդիման որդւոցն Իսրայելի : Եւ եմուտ Մովսէս ի մէջ ամպոյն , եւ ել ի լեառնն , եւ էր Մովսէս ի լերին անդ զքառասուն տիւ եւ զքառասուն զիշեր :

ԳԼ . ԻԵ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ , Ասացես յորդինն Իսրայելի . եւ ասէք ինձ ⁶ պտուղ ի նոցանէ , որոց հաճոյ թուեացի ի սիրտս խրեանց եւ անուշ 3 յուր ⁶ զպտուղս իմ : Եւ այս է ⁶ պտուղն զոր անուշցօք ի նոցանէ . ոսկի եւ ար-

4 ծախ եւ սղիւնձ , Եւ կապուտակ եւ ծխուսնի , եւ կարմիր կրկին , եւ բնեզ մանեայ , եւ մազ այծեաց , Եւ մորթս խոցոց կարմիր ներկեալ , եւ մորթս ⁷ կապուտակեայ , եւ վայսա ⁸ անխուտա , Եւ եւզ լուսայ եւ խուսիկ՝ յեւզ օծման եւ ի ⁷ ճանդերձանս խնկոց , Եւ սկանս սարգիտնս , եւ սկանս գրոյ ի գործ ⁹ վախասին , եւ ¹⁰ զպճղնաւորն :

8 Եւ ¹¹ արասցես ինձ սրբութիւն , եւ ¹² երեւեցայց ի ձեզ : Եւ արասցես ինձ ըստ՝ ամենայնի գոր ցուցի . քեզ ¹³ ի լերինն՝ օրինակ խորանի եւ օրինակ ամենայն սպասուց նորա , եւ սպալէս ¹⁴ արասցես : 10 Արասցես սասպանակ վրայս թեան յանուտս վայտից . յերկուց կանգնոց եւ ի կիսոյ զերկայնութիւն նորա , եւ ի կանգնոց եւ ի կիսոյ զլայնութիւն նորա , եւ ի կանգնոց եւ ի կիսոյ զբարձրութիւն նորա : Եւ պատեացես զնա ոսկեով սրբով , ներքոց եւ արտաքոյ ¹⁵ օձիցս զնա . եւ արասցես նմա ճնօտս ոսկիս շուրջ շրջանակաւ : Եւ ձուլեացես նմա չորս օղամանեակս ոսկիս , եւ զիցես ի չորեցունց կողմանց նորա , երկուս օղամանեակս ի միջէ կողմանէ , եւ երկուս օղամանեակս ի միւսմէ կողմանէ : Եւ արասցես լծակս յանուտս վայտից , եւ պատեացես զնոսա ¹⁴ ոսկեով : Եւ ազուսցես զլծակն յօղամանեակն ի կողմանս սասպանակին , բառ : 15 նալ նորօք զտասպանակն . Չի յօղամանեակս տասպանակի կտակարանացն կայցեն լծակն . անշարժք անգատին ի նմանէ : Եւ զիցես ի տասպանակին զվիպուութիւնն զոր ես տայ քեզ :

17 Եւ արասցես զքաւութիւնն ¹³ ինկակալ յօսկոյ սրբոյ , յերկուց կանգնոց եւ ի կիսոյ զերկայնութիւն նորա , եւ ի կանգնոց եւ ի կիսոյ զլայնութիւն նորա : Եւ արասցես երկուս քերթէս ոսկիս ¹⁶ ձախարակեայ , եւ զիցես զնոսա ի վերայ 19 երկոցունց կողմանց քաւութեանն . Եւ լինիցին քերթէքն՝ մի ի միւսմէ կողմանէ , եւ մի ի միւսմէ կողմանէ քաւութեանն . եւ արասցես երկուս քերթէս ի վերայ 20 երկոցունց կողմանց նորա : Եւ իցէ քերթէիցն տարածեալ զվեւս խրեանց ի վե-

¹ Եբբ. ի վերայ ² Եբբ. զԱստուած ³ Եբբ. զբուն երկինս ըստ յասակութեան : (11) Եւ յընտրեալսն որդւոցն Իսրայելի ոչ ձգեաց զձեռն իւր . եւ ասին զԱստուած ⁴ Եբբ. ուսուցանելի նոցա ⁵ Եբբ. Էլ Մովսէս ⁶ Եբբ. նուէր , կամ ընծայ

⁷ Եբբ. թէ հաշիս , այսպէս իմ եւ ուլուր ⁸ Եբբ. սատիմ , այսպէս ընթերցել զանգատ քայր ⁹ Այսբառ , եփուտին ¹⁰ Եբբ. տախտակին (կրծանոցին) ¹¹ Եբբ. արասցես ¹² Եբբ. բնակեցայց ի միջի նոցա (9) Ըստ ¹³ Եբբ. պատու ¹⁴ Եբբ. արասցիք ¹⁵ Եբբ. պատեցես ¹⁶ Կամ , կռածոյս

րուստ , եւ հովանի ունիցին թեւօք իւր-
 եանց ի վերայ քաւութեանն . եւ երեսք
 նոցա յանդիման միմեանց , զի ի քաւու-
 21 թիւնն հայեացին երեսք քերորէիցն : Եւ
 զիցես զքաւութիւնն ի վերայ տապանա-
 կին ի վերուստ կողմանէ . եւ զիցես ի
 տապանակի անդ զվկայութիւնն զոր ես
 22 տաց քեզ : Եւ յայանցայց քեզ անտի ,
 եւ խօսեցայց ընդ քեզ ի վերուստ ի քա-
 ւութենէ անտի , ի միջոյ երկուց քերո-
 քէիցն՝ որ իցեն ի վերայ տապանակին
 վկայութեան , ըստ ամենայնի զոր պա-
 23 սուրբեցից քեզ առ որդիսն Իսրայելի :
 Եւ արասցես սեղան յանփուտ փայ-
 տից . յերկուց կանգնոց զերկայութիւն
 նորա , եւ ի կանգնոց զլայնութիւն նորա ,
 եւ ի կանգնոց եւ ի կիսոյ զբարձրութիւն
 24 նորա : Եւ պատեցես զնա սսկւով սրբով ,
 եւ արասցես նմա ծնօտս ոսկիա չրջա-
 25 նակաւ չորջանակի : Եւ արասցես նմա
 պսակ ուղկեան չորջանակի . եւ արաս-
 26 ցես պսակին ¹ծնօտս չրջանակաւ չոր-
 ջանակի : Եւ արասցես նմա չորս օ-
 ղամանեակս ոսկիա , եւ զիցես զօղամա-
 նեակսն ի չորեալն կողմանսն , որ իցեն
 չորեցսնց օտից նորա , ի ներքոյ պսա-
 27 կին : Եւ եզիցին օղամանեակքն լամբք
 28 լծակացն՝ բառնոյ նոքօք զսեղանն : Եւ
 արասցես զլծակն յանփուտ փայտից ,
 եւ պատեցես զնոսա սսկւով ²սրբով .
 29 եւ բարձցի նոքօք սեղանն : Եւ արաս-
 ցես ³զինկաղացան եւ զտուփս նորա ,
 եւ զճաշակս եւ զնուիրանոցս նորա ու-
 րովք նուիրեցես , յոսկւոյ սրբոյ ա-
 30 րասցես ⁴զայն : Եւ զիցես ի վերայ ⁵սե-
 ղանոյ հացին երեսոց հաց՝ յանդիման
 իմ հանապազօրոյ :
 31 Եւ արասցես աշտանակ յոսկւոյ սրբոյ .
⁶ճախարակեայ գործնցես զաշտանակն .
 բունն եւ ստեղունքն եւ սկահքն եւ
 գնդակքն եւ շուշանքն անդստին ի նմա-
 32 նէ իցեն : Վեց ստեղունք արձակեալք ի
 կողմանց նորա . երեք ստեղունք աշտա-
 նակին ի միտջէ կողմանէ , եւ երեք ստե-
 ղունք աշտանակին ի միւսմէ կողմանէ :
 33 Եւ երեք սկահածեք ընկուզազարդք
 յօրինեալք ի միում ստեղանն , եւ գնդակ
 եւ շուշան . եւ երեք սկահածեք ընկու-
 զազարդք յօրինեալք ի միւսում ստե-

ղանն , եւ գնդակ եւ շուշան . նոյնպէս
 վեցեցունց ստեղանցն արձակելոց յաշ-
 34 տանակէ անտի : Եւ յաշտանակի անդ չորք
 սկահածեք ընկուզազարդք յարդարեալք ,
 35 եւ գնդակք եւ շուշանք նորա : Գնդակ
 ի ներքոյ երկուց ստեղանցն անդստին ի
 նմանէ , եւ գնդակ ի ներքոյ երկուց եւս
 ստեղանցն անդստին ի նմանէ . նոյնպէս
 արասցես վեցեցունց ստեղանցն արձա-
 36 կելոց յաշտանակէ անտի : Զի գնդակք
 նոցա եւ ստեղունք անդստին ի նմանէ
 իցեն , համակ ⁶ճախարակեայ ի միտջէ
 37 ոսկւոյ սրբոյ : Եւ արասցես նմա ճրա-
 գարանս եւթն , եւ ⁷զիցես զճրագարանն
 ի վերայ աշտանակին , եւ տայցն լոյս
 38 ի միտջէ՝ կողմանէ երեսաց նորա : Եւ
⁸զբազմակալս նորա եւ զնեցուկսն՝ ա-
 րասցես յոսկւոյ սրբոյ . ի տաղանդէ միոյ
 յոսկւոյ սրբոյ արասցես զայն ամենայն
 39 սպաս : Զլոյշ լեր , որպէս ցուցաւ քեզ
 օրինակ ի լերինն՝ արասցես :

Գ Լ Ի Զ

1 Եւ արասցես խորան տանփեղկեան ,
 ի թեհեղոյ մանկոյ եւ ի կապուտակէ եւ
 ի ծիրանոյ եւ ի կարմրոյ կրկնելոյ . ⁹քե-
 րոր՝ գործ անկուածոյ՝ գործեցես զնոսա :
 2 Երկայնութիւն միոյ փեղկին ի քսան եւ
 յութ կանգնոյ , եւ լայնութիւն ի չորից
 կանգնոց փեղկի միոյ լինիցի . չափ՝ նոյն
 3 եղիցի ամենայն փեղկիցն : Հինգ փեղկ
 ընդ միմեանս կցեալ , եւ հինգ եւս այլ
 4 ընդ միմեանս խառնեալ : Եւ արասցես
 ճարմանդս կապուտակեայս առ եզերք
 միոյ փեղկին ի միտջէ կողմանէ ի խառ-
 նուածս . նոյնպէս արասցես եւ առ եզերք
 արտաքնոյ փեղկին , երկրորդի խառ-
 5 նուածոյն : Յիսուս ճարմանդ արասցես
 միում փեղկի , եւ յիսուն ճարմանդ ա-
 րասցես ի կողմանէ փեղկին ըստ երկրորդի
 խառնուածոյն . զէմ ընդ զէմ միմեանց
 իւրաքանչիւր խառնիցին ճարմանդքն :
 6 Եւ արասցես յիսուն օղս ոսկիա , եւ խառ-
 նեացես զփեղկսն ընդ միմեանս աղսիւքն .
 եւ եզիցի խորան մի :
 7 Եւ արասցես վկայնափեղկս մաղեղէնս
 նուարտան խորանին , մետասան փեղկ
 8 գործեացես զնոսա : Երկայնութիւն միոյ

¹ Եբբ. ծնօտս ոսկիա ² Յեբբ. Գ-Լ-Կ-Ե ³ Եբբ. զսկւուտեղան ⁴ Եբբ. գնոսա ⁵ Եբբ. սեղա- նոյն հաց երեսոց ⁶ Կ-Լ, կուածոյ

⁷ Եբբ. բարձցէ զճրագարանս իւր, և տայցէ լոյս ի ⁸ Եբբ. գուռնիս նորա և զբազմակալս նորա ⁹ Եբբ. քերորէիւք գործ ճարտարի

փեղկի՝ լինիցի յերեսուն կանգնոյ . եւ
 1 լայնութիւնն միոյ փեղկի ի չորից կանգնոց .
 չափ նոյն եղիցի մեաստանեցունց փեղ-
 9 կիցն . եւ խառնեցես ընդ միմեանս զհինգ
 փեղկան ի միասին , եւ զվից փեղկին ի միա-
 սին . եւ կրկնեցես զվիցերորդ փեղկին
 10 առաջոյ կողմանէ խորանին : եւ արաս-
 ցես ճարմանոց յիսուն առ եղերբ միոյ
 փեղկին ի մէջ խառնուածոցն . եւ յիսուն
 ճարմանոց արասցես առ եղերբ փեղկին
 11 երկրորդի խառնուածոցն : եւ արասցես
 օղս պղնձիս յիսուն , եւ խառնեցես զօղսն
 ընդ ճարմանոցն , եւ կցեսցես զփեղկին ,
 12 եւ եղիցին մի : եւ հիցես զաւելորդ փեղ-
 կիցն ի ներքոյ խորանին . կիսով փեղկին
 աւելորդաւ մնացելով ծածկեցես զա-
 պարտանս փեղկից խորանին յետոյ կող-
 13 մանէ՞ , Կանդնա՞՝ յայսմ կողմանէ , եւ
 կանգնաւ՝ յայնմ կողմանէ , յաւելորդէ
 երկայնութեան փեղկից խորանին եղիցի
 ծածկիչ զատարունս խորանին աստի ան-
 14 տի : եւ արասցես զվիժակս խորանին
 ի շիկակարմիր մորթոյ խոյոց , եւ ծած-
 կելիս՝ ի կապուտակ՝ մորթոյ ի վերուստ :
 15 եւ արասցես զսիւնակս խորանին յան-
 16 փոտ փայտից կանգնաւորս : ի տասն
 կանգնոց զերկայնութիւնն միոյ յսինակին
 աւանիցես , եւ ի միոջէ կանդնոց եւ ի կիսոյ
 զվժանձրութիւնն եւ՞ զլայնութիւնն միոյ
 17 յսինակին : եւ երկուս ՚ափուիչս միում
 յսինակին՝ զաղուցեալ ընդ միմեանս՞ .
 այնպէս արասցես ամենայն յսինակից
 18 խորանին : եւ յարասցես քսան սինակս
 19 խորանին ի հիւսիսոյ կողմանէ՞ : եւ քա-
 րասուն խարիսիս սրծաթիս արասցես
 11 քսանեցունց սեանցն՞ . երկու խարիսիք
 12 առ մի սին յերկոցունց կողմանց՞ , եւ
 երկու խարիսիք 13 առ մի սին յերկոցունց
 20 կողմանց խորանին՞ : եւ յերկրորդէ կող-
 մանէ խորանին ընդ 13 արաւ քսան սին՞ ,
 21 եւ քառասուն խարիսիք նոցա արծա-

թիք . երկու խարիսիք 14 առ մի սին
 22 յերկոցունց կողմանց՞ : եւ յետուստ խա-
 րանին 15 ի ծովակողմն կուսէ՞ արասցես
 23 վեց 16 սին : եւ երկուս 17 սինս արաս-
 ցես յանկիւնս խորանին ի թիկանց կող-
 24 մանէ : եւ եղիցին 18 ճասարակ ի ներ-
 քուստ , եւ ըստ նմին օրինակի լինիցին
 19 զոյգք խոյակաց նորա ի մի խառնուած .
 նոյնպէս արասցես երկոցունց անկեանցն
 25 կանգնաւորս՞ . եւ եղիցին ութ 20 սին .
 եւ խարիսիք նոցա արծաթիք՞ վեցա-
 սան խարիսիք . երկու խարիսիք 14 առ
 մի սին յերկոցունց կողմանց նորա , եւ
 26 երկու խարիսիք առ մեւս եւս սին՞ : եւ
 արասցես նիգս յանփուտ փայտից . հինգ
 նիգ առ 21 մի սին՞ ի միոջէ կողմանէ խա-
 27 րանին , եւ հինգ նիգ առ 21 մեւս եւս սին՞
 յերկրորդ կողմանէ խորանին . եւ հինգ նիգ
 առ 21 մի սին՞ ի թիկանց խորանին ընդ
 28 ծովակողմն . եւ նիգ մի ի մէջ 22 սեանցն՞
 29 թափանցանց ի միոջէ ի մեւս կողմն : եւ
 23 զսինանս պատեցես ոսկւով . եւ ա-
 րասցես օղս ոսկին՝ յորս աղուցանիցես
 զնիգսն . եւ պատեցես զնիգսն ոսկւով :
 30 եւ կանդնեցես զխորանն ըստ օրինա-
 կին որ ցուցաւ քեզ ի իւրին անդ :
 31 եւ արասցես վարադոյր ի կապուտակէ
 եւ ի ծիրանեոյ եւ ի կարմրոյ մանկոյ եւ
 ի բնկեղոյ նիւթկոյ . զործ 24 անկուածոյ
 32 զործեցես զնա քերութիւն : եւ զիցես զնա
 ի փերայ չորեցունց անփուտ եւ ոսկիա-
 սրատ սեանցն . եւ 25 խոյակք նոցա ոս-
 33 կիք , եւ խարիսիք նոցա արծաթիք : եւ
 ձղեացես զվարադոյրն 26 սինէ ի սինն՞ ,
 եւ տարցիս ի ներքս քան զվարադոյրն
 զտապանակ վկայութեանն . եւ անջրպե-
 տիցէ ձեզ վարադոյրն ի մէջ սրբութեանն ,
 34 եւ ի մէջ սրբութեան սրբութեանցն : եւ
 27 ծածկեացես վարապուրան զտապա-
 նակ՞ վկայութեանն ի սրբութիւն սրբու-
 35 թեանցն : եւ զիցես զսեղանն արտաքոյ
 վարապուրին , եւ զաշտանակն յանդիման

1 ԼԷՐ. աւելորդն փեղկից վրանին , կէս փեղկին՝
 աւելորդն , յետոյ կողմանէ խորանին կայցէ
 կախեալ 2 ԼԷՐ. վիժակ (ծածկոյթ) 3 ԼԷՐ.
 վիժակ ի թեհաշի 4 ԼԷՐ. զտախտակս 6 ԼԷՐ.
 տախտակին 6 ԼԷՐ. զփփուտ 7 ԼԷՐ. ձեռս ,
 այլն : աղոյցս 8 ԼԷՐ. համեմատս միմեանց
 9 ԼԷՐ. տախտակոց 10 ԼԷՐ. արասցես զտախ-
 տակս խորանին . քսան տախտակս ի հարաւոյ՝
 ի հարաւ կոյս 11 ԼԷՐ. ընդ քսաներումբ
 տախտակոցն 12 ԼԷՐ. ընդ միով տախտակաւ
 վրան երկուց աղուցից 13 ԼԷՐ. հիւսիսի քսան
 տախտակք

14 ԼԷՐ. ընդ միով տախտակաւ , եւ երկու խա-
 րիսիք ընդ միով տախտակաւ 15 Ս. յեւնէս ,
 յարեւմտեց 16 ԼԷՐ. տախտակ 17 ԼԷՐ. տախ-
 տակս 18 ԼԷՐ. կրկին , կա՛մ , կցեալք 19 ԼԷՐ.
 կցեալ ի վերուստ ի մի ճարմանոց . նոյնպէս
 եղիցի երկոցունց նոցա . յերկուսն անկեանն ե-
 ղիցին 20 ԼԷՐ. տախտակք 21 ԼԷՐ. տախ-
 տակն 22 ԼԷՐ. տախտակոցն 23 ԼԷՐ. զտախ-
 տակն 24 ԼԷՐ. զործ ճարաարի զործեցի
 քերութիւք 25 Կա՛մ , ճարմանոցք 26 ԼԷՐ. ի
 ներքոյ ճարմանոցիցն 27 ԼԷՐ. զիցես զբաւու-
 թիւնն ի վերայ տապանակի

սեղանոյն՝ ի կողմանէ խորանին ընդ հա-
րաւ. եւ զսեղանն զիցես ի կողմանէ՝ ¹խո-
րանին ընդ հրւսիսի :

- 36 Եւ արասցես սրահակ գրան խորանին
ի կայուսակէ եւ ի ծիրանուոյ եւ ի կար-
մրոյ մանկւոյ եւ ի բեհեզոյ նիւթկոյ, գործ
- 37 նկարակերպ : Եւ արասցես վարագուրին
հինգ սիւնակ յանփուտ փայտից, եւ ²օձցես
զնոսս սուկուով, եւ ³խոյակք նոցա սսիւք.
եւ ձուլեսցես նոցա հինգ խարխիս պղնձի :

Գ Լ . Ի Է

- 1 Եւ արասցես սեղան յանփուտ փայտից, և
ի հինգ կանգնոյ զերկայնութիւնս եւ ի
հինգ կանգնոյ զլայնութիւնս . չորեքկու-
սի լինիցի սեղանն . եւ յերկոյ կանգնոց
- 2 զբարձրութիւնս նորա : Եւ արասցես զեղ-
ջևերս նորա ի վերայ չորեքունց անկեանց
իւրոց, զի անպատին ³նարեալ իցեն եղ-
- 3 ջևերքն . եւ պատեսցես զնա պղնձով : Եւ
արասցես ⁴սրակ սեղանոյն, եւ զնուար-
տանն՝ նորա, եւ զտաշտան եւ զմաս-
հանսն եւ զկրակարանսն, եւ զամենայն
- 4 սպասն արասցես սղնձի : Եւ արասցես
նմա գահաւորակ վանդակակերպ պղնձի .
եւ արասցես զտահաւորակին չորս օղա-
մանեակս պղնձիս ի չորեքունց կողմանէ :
- 5 Եւ զիցես ⁶զնոսս ընդ գահաւորակաւ՝
սեղանոյն ի ներքոյ . եւ եղիցի գահաւո-
- 6 րակն մինչեւ ի մէջ սեղանոյն : Եւ արաս-
ցես լծակս սեղանոյն՝ լծակս յանփուտ
փայտից . եւ պատեսցես զնոսս պղնձով .
- 7 եւ սրկցես զլծակն ընդ օղան, եւ եղի-
ցին լծակքն յերկոցունց կողմանց սեղա-
- 8 նոյն՝ առ ի բաւնալ զնա : Խոր ատիտա-
կամածս արասցես զնա . բոս օրինակին
որպէս ցաւցաւ քեզ ի լերին անդ, այն-
պէս արասցես զնա :
- 9 Եւ արասցես ⁷սրահ խորանին . ի կողմ
հարաւոյ գատագատս ⁸սրահին ի բեհեզոյ
մանկուոյ, հարեւր կանգուն յերկայնու-
- 10 թիւն միւր կողմանն, Եւ սիւնք նորա
քսան, եւ խարխիսք նոցա պղնձիք քսան,
եւ օլք նոցա եւ ⁹խոյակք նոցա արծա-
- 11 թիւք : Եղնալէս եւ ի կողմանն որ ընդ հիւ-
սիսի՝ առադաստիս հարեւր կանգուն յեր-
կայնութիւնս . եւ սիւնք նոցա պղնձիք :

- քսան, եւ խարխիսք նոցա պղնձիք քսան,
եւ ¹⁰խոյոզք նոցա եւ խարխիսք սեանցն,
- 12 եւ խարխիսք պատեալ արծաթով : Եւ
ի լայնութիւնս ⁸սրահին ընդ ծալակողմն
առադաստք ի յիսուն կանգնոյ, սիւնք
նոցա տանս եւ խարխիսք նոցա տանս :
- 13 Եւ լայնութիւնս ¹¹առաջին սրահին՝ որ ընդ
արեւելս՝ ¹առադաստք ի յիսուն կանգնոյ .
¹սիւնք նոցա տանս եւ խարխիսք նոցա
14 տանս՝ Եւ ի հնդետասան կանգնոյ բարձ-
րութիւնս առադաստիցն ի միօջէ կողմա-
նէ . սիւնք նոցա երեք եւ խարխիսք նոցա
15 երեք : Եւ յերկրորդում կողմանն՝ հնդե-
տասան կանգուն առադաստիցն ի բարձ-
րութիւնս սիւնք նոցա երեք եւ խարխիսք
16 նոցա երեք : Եւ զրանս ⁸սրահին վարագոյր՝
քսան կանգուն ի բարձրութիւնս, ի կա-
պուսակէ եւ ի ծիրանուոյ եւ ի կարմրոյ
մանկուոյ եւ ի բեհեզոյ նիւթկոյ, նկա-
րէն յապնագործաց . եւ սիւնք նոցա չորք
17 եւ խարխիսք նոցա չորք : Ամենայն սիւնք
⁸սրահին չորքջանակի՝ ¹²արծաթապատք,
եւ խոյակք՝ նոցա արծաթիք, եւ խո-
18 թիսիք նոցա պղնձիք : Եւ երկայնութիւնս
¹³սրահին հարեւր առ հարեւր, եւ լայ-
նութիւնս յիսուն առ յիսուն, եւ բարձրու-
թիւնս ¹⁴հնդետասան կանգուն, ի բեհեզոյ
մանկուոյ . եւ խարխիսք նոցա պղնձիք :
- 19 Եւ ամենայն կահ խորանին ¹⁵եւ ամե-
նայն գործի նորա՝ եւ ամենայն ցիցք
⁸սրահին՝ պղնձիք :
- 20 Եւ զու պատուիրեա որպէոցն Բարա-
յելի, եւ առցնն քեզ ձէթ ի ձիթենեաց
պարզ, ¹⁶սուրբ, խակակով,՝ ի լոյս . զի
21 եղիցի ճրագ հանապարզ : Ի խորանին
վկայս թեան՝ արտաքոյ վարագուրի ուլա-
սին, լուցանիցէ զնա Ահարոն եւ որդիք
իւր յերկրեւոյ մինչեւ ցառաւօտ առաջի
Տեաւն . օրէն յաւիտենական յազգս ձեր
առ ի յորպէոցն Բարայելի :

Գ Լ . Ի Ը

- 1 Եւ գու մատուցես առ քեզ զԱհարոն
զեղբայր քո, եւ զորդիս նորա ընդ նմա՝
յորպէոցն Բարայելի, քահանայանալ ինձ .
զԱհարոն եւ զԵարազ եւ զԱրիւղ եւ
զԵղիալաար եւ զԻթամար զորդիս Ահա-

- զԱհարոն, եւ զօսիք նոցա արծաթիք

¹ ՅԷՐ. ՎԻՐԻԷ ² ԵՐ. պատեսցես ³ ԵՐ. ճարմանդք ⁴ ԵՐ. ի նմանէ ⁵ ԵՐ. գահովս մտիւրջ նորա եւ գրահս ⁶ ԵՐ. զնա ընդ ծնօտաւ ⁷ ԵՐ. գուլիթ ⁸ ԵՐ. գաւլիթ ⁹ ԵՐ. գօտիք

¹⁰ ԵՐ. օլք սեանցն եւ գօտիք նոցա արծաթիք ¹¹ ԵՐ. գաւլիթն առաջակողմն ¹² ԵՐ. գօտ եօր արծաթի կօք, եւ օլք ¹³ ԵՐ. գաւլիթն հարեւր կանգուն ¹⁴ ԵՐ. հինգ ¹⁵ ԵՐ. առ ամենայն սպաս նորա, եւ ամենայն ցեցք նորա ¹⁶ ԵՐ. ծեծեալ

2 րոնի : Եւ արասցես ¹պատմութեան սուրբ Ահարոնի եղբոր քում ի պատիւ եւ ի վաստ :

3 Եւ զու խօսեսցես ընդ ամենայն իմաստունս մտօք , զորս լլուցից նոզուլ ի մաստութեան , եւ արասցես պատմութեան ²սուրբ Ահարոնի ի սրբութիւնս , սրովք քան ⁴հանալանայցէ ինձ : Եւ այս ³օրինակ պատմութեանսցին՝ զոր աճնիցեն . ⁴զպճնաւորն եւ զվախս զուսովք եւ զլամնօք , եւ զպատմութեանն բննիզեայ՝ եւ խոյր եւ կամար . եւ արասցեն պատմութեան սուրբ Ահարոնի եղբոր քում եւ արդուց նորա՝ քանալանայ ինձ :

5 Եւ առցեն նորա սկիւ եւ կապուտակ եւ ծիրանի եւ կարմիր մանեալ եւ բննիզ :

6 Եւ արասցեն զվախանս յոսիւոյ ²սրբոյ եւ ի կապուտակէ եւ ի ծիրանուոյ եւ ի կարմրոյ մանիւոյ եւ ի բննիզոյ նիւթելոյ , զործ ⁷նստայնի նկարակերպ՝ : Երկու ⁶վախաք ընդ միմեանս խաճնեալք , եւ եղիցին ի վերայ երկուցեց կողմանց նորա հաս :

8 Խոտեակք : Եւ ⁷զործ վախախն օր իցէ ի վերայ նորա , ըստ նմին օրինակի զործ անդտին ի նմանէ լինիցի , յոսիւոյ ²սրբոյ եւ ի կապուտակէ եւ ի ծիրանուոյ եւ ի կարմրոյ մանիւոյ եւ ի բննիզոյ նիւթելոյ :

9 Եւ առցես երկուս ականս զբմբուխս , եւ զբնոցես ի նոսա զանուսնս որդուցն :

10 Իսրայելի : Զվից անուն նոցա ի միւռմ ականս , եւ զայն եւս վից յերկորորում ¹¹ականն , ըստ ⁸ազգս իբրեանց . Գործ ճարտարութեան ակնագործաց , քանդակ կնքոյ քանդակեսցես զերկուսին ականան՝ ըստ անուանց օրդուցն Իսրայելի . ³տալաւորեալս եւ քանդակեալս սսկուլ՝՝ արաս :

12 ցես զնստս : Եւ զբնոցս զերկուս ականանս ի վերայ ուսոց վախանին , զի լինիցին աւկանքն յիշատակ օրդուցն Իսրայելի . եւ բանալայցէ Ահարոն զանուանս որդուցն Իսրայելի առաջի Տեսուն ի վերայ երկուց ¹³ուսոց իւրոց ի յիշատակ վասն նոցա : Եւ ¹⁴արասցես ¹⁰վանանակս յոսիւոյ ²սրբոյ : Եւ արասցես երկուս վերջս յոսիւոյ սրբոյ , մանուածոյս ծաղկեալս՝ զործ հիւսկէն , եւ զբնոցս զվերջսն մանուածոյս ի վերայ

¹¹երկուցուն վանանակայն սա վասաւկօքն նոցա առաջոյ կողմանէ՝ :

15 Եւ արասցես զտախտակն զատաստանաց զործ ¹²նկարակերպ . ըստ ձեւոյ՝ վախախն արասցես զնա , յոսիւոյ եւ ի կապուտակէ եւ ի ծիրանուոյ եւ ի կարմրոյ ¹⁶մանիւոյ եւ ի բննիզոյ ¹³նիւթելոյ : Եւ արասցես զնա չորեքանկիւնն՝ , թլուս յերկայնութիւնս եւ թլուս ի լայնութիւնս : Եւ ընդերուցցես ի նմա ընդերուզածս , ըստ չորեքկարգեան ականց . կարգ ականցն , առաջին՝ զըմբուխս եւ սարգիմն եւ տպաւ ¹⁸զիմն , կարգ մի . Եւ կարդն երկորորդ՝ ¹⁹կարկեճան եւ չափիղա եւ յասպիս . Եւ կարգն երրորդ՝ զոճաղմ եւ ականս եւ ուսուտակ . Եւ կարդն չորրորդ՝ յակինթ եւ բիւրեղ եւ եղունգն , ¹⁴ընդերուզեալ , յոսկի կապեալ յերաքանչիւր կարգս կացնն՝ : Եւ եղիցին ականքն յանուանց օրդուցն Իսրայելի երկուսանս , ըստ անուանց նոցա գրեալք քանդակաւ իւրաքանչիւր ըստ անուանս իւրում լիցին , ըստ ²²ազգայն երկուսանից : Եւ արասցես ¹⁵տախտակ մի հիւսկէն վերջիւք , զործ ²³չղթայագործ՝ յոսիւոյ սրբոյ . Եւ արասցես ի վերայ տախտակին երկուս օղս սսկիս , եւ զիցես զերկուս օղսն սսկիս ի ²⁴վերայ երկուց ծայրից տախտակին : Եւ զիցես զերկուս ¹⁶չղթայագործան սսկիս ի վերայ երկուցուն օղցն սա ծայրիւք ²⁵տախտակին . Եւ զերկուս ծայրս երկուց ¹⁷չղթայագործիցն տացես ի վերայ երկուցուց ¹⁸մաճ . եւ զիցես ի վերայ թիկանց ²⁶վախախն ի ճակատս երեսաց նորա : Եւ արասցես երկուս օղս սսկիս , եւ տացես զնստս ի վերայ երկուց ծայրից տախտակին , առ եզերքն՝ օր իցէ հանդէպ վախախն ի ներքոյ կողմանէ : Եւ արասցես երկուս օղս սսկիս , եւ տացես զնստս ի վերայ երկուց ուսոց վախախն ի ներքոյ կողմանէ՝ յանկիման ¹⁹միմեանց միարան . եւ զաղիս նորա ի վերայ մինքննայից՝ ²⁸վախախն : Եւ պինդ ունիցին զտախտակն յօղոց նորա մինչեւ ցօղս վախախն , ի նիւթոյ կապուտակէ . զի իցէ ի վերայ

¹⁰Պատմութեան, սուրբ Եղեմ եւ Բաղդասարէ, Եղեմ-իւս ազանելիս (սմ զգեստ սու հասարակ) ²Յեբբ. Գլ-իւս ³Եբբ. Են ազանելիքն ⁴Եբբ. տախտակ (կրճանոց) եւ վախս (եփուտ), եւ պարեգօտ եւ շապիկ նկարէն ⁵Եբբ. ճարտարի ⁶Եբբ. վաստակք (ուսանոց) ⁷Եբբ. ժապուէն ⁸Եբբ. ծնունդս ⁹Եբբ. ընդերուզեալս ի խորշս սսկիս ¹⁰Եբբ. խորշս

¹¹Եբբ. խորշիցն ¹²Եբբ. ճարտարի . ըստ գործոց ¹³Եբբ. նիւթելոց արասցես զնա : (16) ¹⁴Եբբ. ընդերուզեալք ի խորշս սսկիս ¹⁵Եբբ. տախտակին չղթայս ողորեալս , զործ հիւսկէն ¹⁶Եբբ. հիւստածան ¹⁷Եբբ. հիւստածոցն ¹⁸Եբբ. խորշիցն ¹⁹Եբբ. խոտեւածոց նորա ի վերուս ժապուէնի

1 մենքնայից վախասին , եւ մի՛ զերծա-
 29 նիցի տախտակն ի վախասէ անտի : Եւ առցէ Ահարոն զանուն որդւոցն Իսրայելի ի վերայ տախտակի դատաստանին ի լանջս իւր , ի մտանել իւրում ի սրբութիւնն ի յիշատակ հանապարդ առաջի 2 Աստու-
 30 ծոյ : 3 Եւ զիցես ի վերայ տախտակի գատաստանին զվերջն չղթայագործս , յերկոցունց կողմանց տախտակին զիցես . եւ զերկուս վաճանակն զիցես ի վերայ երկուց ուսոց վախասին յերեսաց կողմանէ ի ներքուստ : Եւ զիցես ի վերայ տախտակի դատաստանին 4 զՅանդիմանութիւն եւ զճշմարտութիւն . եւ եղիցի ի վերայ լանջացն Ահարոնի յորժամ մասնիցէ ի 3 սրբութիւնն առաջի Տեառն . եւ տարցի Ահարոն զգատաստանս որդւոցն Իսրայելի ի վերայ լանջաց իւրոց առաջի Տեառն հանապաղ :
 31 Եւ արասցես 5 վառակս պճղնաւորս :
 32 համակ կապուտակ : Եւ 6 զօճիւն գրասրահնաւ արարեալ , բոլորակ ձեւեցես չուրջանակի՝ գործ անկուածոյ , եւ զխառնուածան անկեալ անդատին ի նմանէ . զի
 33 մի՛ արատիցի՛ : Եւ արասցես 7 առ ստորուտով վառակացն ի ներքոյ կողմանէ՛ իբրեւ նունաձեւս ծաղկեալս՛ , ի կայուտակէ եւ ի ծիրանուոյ եւ ի կարմրոյ մանելոյ 3 եւ ի բնեկոյ նիւթեկոյ՛ , առ ստորուտով 8 վառակացն չուրջանակի , եւ տեսիլ նորա նունաձեւ . եւ զանգակս ոսկիս
 34 ի մէջ նոցա չուրջանակի : Զանգակ ոսկի եւ 9 նունաձեւ՝ ծաղկեալ առ ստորով վտա-
 35 ւակացն՛ չուրջանակի : Եւ եղիցի ի վերայ Ահարոնի , յորժամ պաշտիցէ , հնչիւն բարբառոյ ի մտանել իւրում ի սրբութիւնն առաջի Տեառն եւ յիւանել նորա , զի մի՛ մեռանիցի :
 36 Եւ արասցես թիթեղն յոսկւոյ սրբոյ , եւ քանդակեացես ի նմա քանդակ կնքոյ՛ :
 37 ՍՐԲՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ : Եւ զիցես զնա ի վերայ
 38 իայ 10 կապուտակին մանելոյ՛ : Եւ եղիցի

11 իուրին յերեսաց կողմանէ՛ ի վերայ ձակատուն Ահարոնի , եւ բարձցէ Ահարոն զմեզս նուիրայն , որչափ ինչ նուիրեցին որդիքն Իսրայելի , ըստ ամենայն սրոց սրբութեանցն իւրեանց . եւ եղիցի ի վերայ ձակատուն Ահարոնի հանապաղ յնդունելութիւն նոցա առաջի Տեառն :
 39 Եւ 12 զպճղնաւոր պատմուճանն՛ ի բնեկոյ , եւ սրասցես 13 ապարօշ բնեկեզէն , եւ կամար՝ գործ նկարակերպ : Եւ որդւոցն Ահարոնի արասցես 14 պատմուճանս եւ կամարս եւ խոյրս՛ , ի պատիւ
 41 եւ ի փառս : Եւ զգեցուցես զայն Ահարոնի եղբօր քում , եւ որդւոց նորա ընդ նմա , եւ օճցես զնոսա , եւ 15 լցցես զձեռս՛ նոցա , եւ սրբեցես զնոսա զի քանա-
 12 նայասցին ինձ : Եւ արասցես նոցա անդրավարտիս կտաւիս , ծածկել զառականս մարմնոյ իւրեանց , միջովք չափ եւ բար-
 43 ձիւք չափ : Եւ ունիցի զայն Ահարոն եւ որդիք նորա , յորժամ մասնիցեն ի խորանն վիպութեան , կամ յորժամ մերձենայցեն ի սեղանն սրբութեան պաշտել , եւ մի՛ անիցեն ի վերայ իւրեանց մեզս , զի մի՛ մեռանիցին . օրէն յաւիտեանական նմա եւ զաւակի իւրում յետ նորա :

Գ Լ Ի Թ

1 Եւ այս ինչ է զոր անիցես նոցա , 16 եւ սրբեցես՛ զնոսա քանանայանալ նոցա ինձ . առցես զուարակ մի յանուոյ , եւ խոյս
 2 երկուս անարատս , Եւ պանս բազարջս , եւ չօթս բազարջս զանդեալ իւզով , եւ քարարս բազարջս օժեալ իւզով . նաչի՛ն զորնոյ՛ 17 զանդեալ իւզով արասցես զայն՛ :
 3 Եւ զիցես ի վերայ խանի միոյ . եւ մասուտսն զայն խանիւն , եւ զղուարակն
 4 եւ զերկուս խոյսն : Եւ զԱհարոն եւ զորդիս նորա մատուցես ի զուան խորանին վիպութեան , եւ լուացես զնոսա ջրով :
 5 Եւ տեսեալ զպատմուճանն՛ զգեցուցես Ահարոնի 18 եղբօր քում , եւ զպարեգօտս պճղնաւորս ի վերայ ներքնակացն՛ , եւ զվականս եւ զտախտակն , եւ պնդեացես

1) ԲԲ. Ժապաւենի 2) ԲԲ. Տեառն 3) ԲԲ. պո-
 4) ԲԲ. զՈւրիմ՝ եւ զՅուրիմ՝ . այնքան զոյսն եւ զկատարելութիւնն 5) ԲԲ. զպարեգօտն վախասին 6) ԲԲ. եղիցի բերան զիւրոյ նորա ի միջոցն նորա . չըթ ունիք եղիցին բերանայ նորա չուրջանակի , գործ անկուածոյ իրբեզբերուն զբաժի եղիցին նմա , զի մի՛ պատասուտսն 7) ԲԲ. ի քղանցս նորա նունաձեւս 8) ԲԲ. քղանցիցն չուրջանակի 9) ԲԲ. նունաձեւ , զանգակ ոսկի եւ նունաձեւ ի վերայ քղանցից պարեգօտին 10) ԲԲ. Ժապաւենի կապուտակին

11) ԲԲ. ի վերայ իուրին . յերեսաց կողմանէ իուրին եղիցի (38) Եւ եղիցի 12) ԲԲ. անկցես զչապիկն 13) ԲԲ. խոյր 14) ԲԲ. շապիկս , եւ արասցես նոցա կամարս , եւ ապարօշս արասցես նոցա 15) Նուր զձեռս՛ շաւախի սոր սրպեւ եւ այւլ , նախել ի Ժահարոյս թիւն 16) ԲԲ. սրբել 17) ԲԲ. արասցես զնոսա 18) ԲԲ. զչապիկն եւ զպարեգօտ վախասին

6 գտախտատկն ՚ընդ վահանն՝: Եւ զիցես զխոյնն ի վերայ զխոյ նորա, եւ զիցես
7 զթիթիեզնն սուրբ ի վերայ խուրինն: Եւ
8 առցես յիւզոյ անտի օծման, եւ արկցես
9 ի զուռն նորա եւ օծցես զնա: Եւ զոր-
10 զիս նորա մատուցես, եւ զգեցուցես
11 նոցա ՚պատմուծանս: Եւ ամցես նոցա
12 կամարս, Ահարոնի եւ որդւոց նորա, եւ
13 ամցես նոցա սպարօշս: Եւ եղիցի նոցա
14 ՚այն ինձ ի քահանայութիւնն՝ յաւիտե-
15 նական, եւ ՚կատարեսցես զձեռս Ահա-
16 րոնի եւ զձեռս որդւոց նորա:
17 Եւ մատուցես զգուարակն առ զբանն
18 խորանին վկայութեան, եւ զիցեն Ահա-
19 րոն եւ որդիք նորա զձեռս իւրեանց ի վե-
20 րայ զխոյ զուարակին՝ առաջի Տեառն՝ առ
21 զբանն խորանին վկայութեան: Եւ սպանե-
22 ցես զգուարակն առաջի Տեառն առ զբանն
23 խորանին վկայութեան: Եւ առցես յա-
24 րենէ զուարակին, եւ զիցես ի վերայ եղ-
25 ջերաց սեզանոյն մատամբ քով: Եւ զայլն
26 ամենայն արխն ցանեսցես առ յատակաւ
27 սեղանոյն: Եւ առցես զամենայն ճարպ
28 թագանիթոյ քաղրթին եւ զլիբրոարոյթին եւ
29 զերկուս երկամուռնն ճարպոյթին, զիցես
30 ի վերայ սեզանոյն: Եւ զմիս զուարակին
31 եւ զմորթ նորա եւ զապաւանն այրե-
32 ցես արտաքոյ բանակին: զի այն խկ է
33 վանն մեղաց:
34 Եւ զխոյն զմի՝ առցես, եւ զիցեն Ահա-
35 րոն եւ որդիք նորա զձեռս իւրեանց ի վե-
36 րայ զխոյ խոյնն: Եւ զեւեցես զխոյնն եւ
37 առեալ զարխն նորա ՚հեզցես շուրջ գե-
38 զանովն: Եւ զխոյն յօշեսցես անգամ ան-
39 գամ, եւ յուսացես զփորոտին եւ զոսսն ու-
40 րա ջրով, եւ զիցես ի վերայ յօշուածոյն՝
41 հանգիւրձ զխոյնն նորա: Եւ հանցես բո-
42 վանդակ զխոյնն ի վերայ սեզանոյն յոջա-
43 կէջ Տեառն ի հոռ անուշից, զոր Տեառն է:
44 Եւ առցես զխոյնն զերկորդ, եւ զիցեն
45 Ահարոն եւ որդիք նորա զձեռս իւրեանց
46 ի վերայ զխոյնն խոյնն: Եւ սպանցես զխոյնն,
47 եւ առցես յարենէ նորա, եւ զիցես ի վե-
48 րայ բլթակի աջոյ ունկանն Ահարոնի, եւ
49 ի վերայ բլթակի աջոյ ունկանն որդւոց
50 նորա, եւ ՚ի վերայ ծայրից ձեռին նորա
51 աջոյ, եւ ՚ի վերայ ծայրից աջոյ ռախնն նո-
52 րա, եւ ՚ի վերայ աջուց լլթակաց սկսուն-

ջաց որդւոց նորա, եւ՝ ի վերայ ծայրից
աջոյ ձեռաց նոցա, եւ ՚ի վերայ ծայրից
աջոյ ռախնն նոցա: Եւ ՚հեզցես զարխնն
21 շուրջ գեզանովն: Եւ առցես յարենէն
որ ի վերայ սեզանոյն իցէ, եւ յիւզոյ օծու-
թեանն, եւ ցանեսցես ի վերայ Ահարոնի
եւ ՚ի վերայ պատմուծանի նորա, եւ ՚ի
վերայ որդւոց նորա եւ ՚ի վերայ սպա-
մուծանաց որդւոց նորա ընդ նմա: Եւ
սրբեսցի ինքն եւ պատմուծան իւր, եւ
որդիք նորա եւ պատմուծանք որդւոց
նորա ընդ նմա: Եւ զարխնն խոյնն ցա-
22 նեսցես շուրջ գեզանովն: Եւ առցես ի
խոյնն անտի զճարսն եւ զգմակն եւ զճարպ
թագանիթոյ քաղրթին, եւ զլիբրոարոյթին
եւ զերկուս երկամուռնն ճարպոյթին, եւ
զերինն աջոյ: զի այն է ՚կատարումն:
23 Եւ սպան մի եւ շօթ մի իւզով զանգեալ,
եւ քաքար մի ի խանէ անտի բազարջոցն
24 եպիւրոց առաջի Տեառն, եւ զիցես զայն
ամենայն ի վերայ ձեռացն Ահարոնի: Եւ ՚ի
վերայ ձեռաց որդւոց նորա, եւ ՚նուր-
25 րեսցես զայն նուէր՝ առաջի Տեառն: Եւ
առցես ի ձեռաց նոցա եւ ՚հանցես ի սե-
զանն՝ ողջակիցաց ի հոռ անուշից առաջի
26 Տեառն: զի ՚պատու Տեառն է: Եւ առ-
ցես զերբուծն ի խոյնն անտի ՚կատար-
ման՝ որ է Ահարոնի, եւ ՚նուրբացես
զայն նուէր՝ առաջի Տեառն: Եւ եղիցի
27 քեզ ի մասն: Եւ սրբեսցես զերբուծն ՚ի
նուէր, եւ զերբի նուրբինն որ նուրբիցի,
եւ որ ինչ հանիցի ի խոյնն կատարման
28 Ահարոնի եւ յորդւոցն՝ նորա: Եւ եղիցի
Ահարոնի եւ որդւոց նորա օրէն յաւի-
տանականն առ ի յորդւոցն Իսրայելի: զի
այն է ՚նոցա հաս, եւ եղիցի նուէր յորդ-
ւոցն Իսրայելի ի զենկաց փրկութեանց
իւրեանց, նուէր՝ նոցա Տեառն:
29 Եւ պատմուծանն սրբութեանն որ է Ա-
հարոնի, եղիցի որդւոց նորա յետ նորա,
օծանել զնոսս նոքօք, եւ ՚կատարել նու-
30 քօք զձեռս նոցա: Զեւթն օր զգեհուցու
զայն քահանայն որ փոխանակ նորա կայ-

11 ԲԲ. ժապաւախն վակախն 2 ԲԲ. շապիկս
13 ԲԲ. քահանայութիւնն օրէն 4 ԲԲ. լցցես,
ԹԵ՝ ԿԸ. ԻԸ. 41: 8 ԲԲ. ԳԻ. ԳԻ. ԳԻ. ԳԻ.
այրեսցես 7 ԲԲ. սրբակցես

8 ԲԲ. բուրթի 9 ԲԲ. խոյնն, յարխն՝ նու-
րման 10 ԲԲ. երբեսցես զոսս երբուծն
11 ԲԲ. այրեսցես ի վերայ սեզանոյն 12 ԲԲ. պա-
տարագ 13 ԲԲ. լրման, ԿԸ. ԿԸ.՝ նուրբման
14 ԲԲ. երբեսցես զայն երբուծն 15 ԲԲ. երբ-
ման, եւ զերին վերացման, որ երբեսցէ եւ որ
վերացեալ իցէ, ի խոյնն անտի նուրբման որ վանն
Ահարոնի եւ որ վանն որդւոց 16 ԲԲ. վերա-
ցումն, եւ վերացումն իցէ յորդւոցն Իսրայելի
ի զօհից խաղաղութեանն իւրեանց, վերացումն
17 ԲԲ. լուռ, ԹԵ՝ ԿԸ. ԻԸ. 41:

ցէ յորգւոց իւրոց , որ մտանիցէ ի խո-
 րանն վկայութեան պաշտել ի սրբու-
 31 թիւնսն : Եւ զխոյն ¹կատարման առցես ,
 եւ եփեսցես զմիս նորա ի սրբում տեղ-
 32 ւոջ . Եւ կերիցեն Ահարոն եւ որդիք նո-
 րա զմիս խոյնն , եւ զսաման որ ի խանի
 անդ՝ առ զբան խորանին վկայութեանն :
 33 Եւ կերիցեն զնոսա , որովք սրբեցանն ի
 կատարել զձեռս նոցա եւ սրբել զնոսա ,
 օտարագլի ոք մի կերիցէ ի նոցանէ , զի
 34 սրբութիւնք են : Ապա թէ մնացէ ի մտոյ
 զոհին կատարման եւ ի հացէ անտի յայդ ,
 այրեսցես զնշխարն հրով , եւ մի կերի-
 ցի , զի սրբութիւն ²Տեառն է :
 35 Եւ արսացես Ահարոնի եւ որդւոց նորա
 այսպէս , ըստ ամենայնի զոր միանգամ
 պատուիրիցի քեզ , զեւթն որ կատարես :
 36 Կես զձեռսնոցա : Եւ ³զգլուարակն զվամն՝
 մեզաց՝ արսացես յաւուրն ⁴սրբութեանն .
 եւ մաքրեսցես զսեղանն ի ⁵սրբել քեզ ի
 վերայ՝ նորա , եւ օծցես զնա առ ի սրբե-
 37 լոյ զնա : Զեւթն որ ⁶մաքրեսցես զսե-
 զանն եւ սրբեսցես զնա . եւ եղիցի սե-
 զանն սուրբ սրբոյն . ամենայն որ մեր-
 ձնացի ի սեղանի՝ սրբեսցի :
 38 Եւ այս ինչ իցէ զոր անիցես ի վերայ
 սեղանոյն . երկուս զատինս տարեւորս
²անարատս՝ առ օր ի վերայ սեղանոյն
 յաճախութեամբ . ²զի պտուղ յաճախու-
 39 թեան է : Չմի զատնն անիցես ընդ առա-
 ւօսս , եւ զերկրորդ զատնն անիցես ընդ
 40 երեկոյս : Եւ տասանորդ նաչնոյ մղեալ
 իւղով թրմեալ , եւ զչորրորդ գորակի , եւ
 նուէր ըստ չորրորդ գորակի գինւոյ առ
 41 մի գանն : Եւ զգանն երկրորդ արտա-
 ցես ընդ երեկոյս՝ ըստ ասուօտին զո-
 հին , եւ ըստ նորին նուիրին անիցես նմա
 42 ի հոտ անուշից ⁷պտուղ Տեառն : Զո՛ն յա-
 ճախութեան յազդս ձեր , առ զբան խո-
 րանին վկայութեան ասոցի Տեառն , ⁸ո-
 րովք ծանուցայց քեզ անդ խօսել ընդ քեզ :
 43 Եւ ⁹ժամանակեցիցի անդ որդւոցն Իսրա-
 44 յելի : Եւ ¹⁰սրբեցայց փառօթ իմովք : Եւ
 սրբեցից զիսրան վկայութեանն եւ զսե-
 զանն , եւ զԱհարոն եւ զորդիս նորա սրբե-
 45 ցից ինձ ի քահանայութիւն : Եւ ¹¹անուա-
 նեցայց յորդին Իսրայելի , եւ եղէց նոցա

46 Աստուած . Եւ ծանիցեն թէ ես եմ Տէր
 Աստուած նոցա , որ հանի զնոսա յերկ-
 րէն Եզրիսայսցւոց , ¹²անուանել նոցա եւ
 լինել նոցա Տէր Աստուած” :

ԳԼ . Լ

1 Եւ արսացես սեղան ինկակալ ինկոց
 2 յանիւուս փայտից . Եւ արսացես զնա
 կանգնու յերկայնութիւն եւ կանգնու ի
 յայնութիւն , չորեքկուսի լինիցի , եւ յեր-
 կուց կանգնոց բարձրութիւն նորա . եւ
 եղջերք իւր անդտալին ի նմանէ լինի-
 3 ցին : Եւ պատեսցես զնա ոսկւով սրբով ,
¹³զվանդակն նորա եւ զկողմանս շուր-
 ջանակի եւ զեղջերս նորա . եւ արսացես
 նմա սյակ ոսկի չրջանակաւ շուրջանա-
 4 կի : Եւ երկուս օգս ոսկիս ²սուրբս ա-
 րսացես ընդ չրջանակաւ սյակի նորա
 յերկողունց կողմանց . եւ արսացես յեր-
 կոսին անկիւնս նորա , եւ եղիցին լծակք
 5 օղալամբացն բառնալ զնա նոքօք : Եւ
 արսացես զլծակն յանիւուս փայտից ,
 6 եւ պատեսցես զնոսա ոսկւով . Եւ զիցես
 զնա յանդիման վարագուրին , որ իցէ ա-
 ռաջի տապանակին վկայութեան , ընդ-
 դէմ ¹⁴վկայութեանն որ իցէ առ վկայու-
 թեամբն , որովք՝ երեւեցայց քեզ անդ :
 7 Եւ արկցէ ի վերայ նորա Ահարոն ¹⁵խուճկ
 հանդերձեալ՝ ազացեալ մանր՝ ընդ առա-
 ւօսս առաւօսս , յորժամ զճրագսն հան-
 դերձիցէ , ծխեսցէ խուճկ ²ի վերայ նորա” :
 8 Եւ յորժամ լուցանիցէ Ահարոն զճրագսն
 երեկորին , ծխեսցէ ²ի վերայ նորա՝
 խուճկ յաճախութեան հանուպազորդ ա-
 9 տաջի Տեառն յազդս ¹⁶Իւրեանց . Եւ ոչ
 հանիցէք ի վերայ նորա խուճկ օտար , եւ
¹⁷պտուղս եւ զոհս” , եւ նուէրս մի նուիր-
 10 րիցէք ի վերայ նորա : Եւ քաւեսցէ Ահա-
 րոն ի վերայ եղջերաց նորա միանգամ ի
 տարւոջ . յարնէ՛ս առ ի վասն մեզացն
²սրբութեան եւ” քաւութեան միանգամ
 ի տարւոջ ¹⁸սրբեսցէ զնա յազդս ¹⁹նոցա .
 զի սրբութիւնս սրբութեանց Տեառն է :
 11 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 12 Եթէ՛ ունիցիս զճամար որդւոցն Իսրայելի
 ի հանդիսի Իւրեանց , տացն իւրաքան-
 չիւր փրկանս ընդ անձին իւրոյ Տեառն

1) Եբր. լրմանն պիտի՝ նուիրմանն 2) Եբր. պոլտե
 3) Եբր. զուարակ վասն 4) Եբր. վասն քաւութեանն
 5) Եբր. քաւել քեզ վասն 6) Եբր. քաւեսցես 7) Եբր.
 պատարագ 8) Եբր. ուր 9) Եբր. հանդիպեցայց
 10) Եբր. սրբեսցի իսրանն 11) Եբր. բնակեցայց

12) Եբր. բնակել ի նոսա. ես եմ Տէր Աստուած
 նոցա 13) Եբր. գյարկ 14) Եբր. քաւութեանն
 որ իցէ առ վկայութեամբն, ուր 15) Եբր. խուճկս
 անուշուհ 16) Եբր. ձեր 17) Եբր. ողջակէզ
 եւ ընծայս 18) Եբր. քաւեսցէ

ըստ հանդիսին իւրեանց , եւ մի լինիցի
 ի նոսա մահ ի հանդիսի անդ իւրեանց :
 43 Եւ այս ինչ է գոր տացին որք անցանիւ-
 ցեն եւ հանդիսի անդ . զկէս ¹երկգրամնին
 որ իցէ ըստ սրբութեան ¹երկգրամնին .
 քսան դանդ է ²երկգրամնան . եւ կէս
 44 ¹երկգրամնին եղիցի հաս Տեառն : Ամե-
 նայն որ անցանիցէ ի հանդիսի անդ ի քա-
 նամնից եւ ի վեր սացեն հաս Տեառն :
 45 Մեծատունն մի յաւելցէ , եւ սնանկն մի
 պակասեցուցէ ի կիսոյ ¹երկգրամնին ի
 տայ անդ զհաս Տեառն ³յորպոչն Բարա-
 յելի , առնել քաւութիւն վասն անձանց
 46 ձերոց : Եւ առցես զարծաթ ¹հասին յորդ-
 ւոցն Բարայելի , եւ տացես զնա ի զործ
 խորանին վկայութեան , եւ եղիցի որդ-
 ւոցն Բարայելի յիշատակ առաջի Տեառն ,
 քաւել վասն անձանց նոցա :
 47 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ սաէ ,
 48 Արա աւազան պղնձի , եւ զխարիսի նո-
 րա պղնձի , առ ի լուսնայոյ ի նմա . եւ
 զիցես զնա ընդ խորանն վկայութեան եւ
 49 ընդ սեղանն , եւ սրկցես ի նա ջուր : Եւ
 լուսացին Ահարոն եւ որդիք նորա ի
 20 նմանէ զձեռս եւ զոտս իւրեանց : Յոր-
 ժամ մտանիցեն ի խորանն վկայութեան
 լուսային ջրով եւ մի մեռանիցին , կամ
 յորժամ մերձենայցեն ի սեղանն պաշտել :
 21 Եւ հանել զողջակէզան Տեառն . կուսա-
 ցեն զձեռս եւ զոտս իւրեանց , զի մի մե-
 րանիցին . եւ եղիցի նոցա օրէն յաւիտե-
 նական , նմա եւ ազգաց նորա յեա նոցա :
 22 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ սաէ ,
 23 Եւ դու առ քեզ խուճեկս անուշաւնս , ծա-
 զիկ ընտիր զմեռնեանց հինգ հարեւրսիկդ ,
 եւ կինամոմնն զանոյշ զկէս այնորիկ՝ եր-
 24 կեբիւր եւ յիսուն , եւ զխուճեկզէզն դա-
 նոյշ՝ երկեբիւր եւ յիսուն , եւ հրիկի հինգ
 հարեւր սիկդ ըստ սրբութեանն , եւ եւզ
 25 ի ձիթենեաց հիմնաւ միով . եւ արաւ-
 ցես զայն եւզ յօծուին սրբութեան , եւզ
 եփեսցի ըստ արուեստի իւզազործաց , եւզ
 26 յօծուին սրբութեան լինիցի : Եւ օճցես
 ի նմանէ զխորան վկայութեանն եւ զաւ-
 27 պանակ վկայութեանն , եւ զսեղանն եւ
 զամենայն զկահ նորա , եւ զաշտամակն
 եւ զամենայն զկահ նորա , եւ զսեղանն
 28 խնկոցն , եւ զսեղանն ողջակիկացն եւ
 զամենայն զկահ նորա , եւ զաւազանն
 29 եւ ⁵զյատակ նորա : Եւ սրբացես զնոսա ,

եւ եղիցի սրբութիւն սրբութեանց . ա-
 մենայն որ մերձենայցէ ի նոսա՝ սրբես-
 30 ցի : Եւ զԱհարոն եւ զորդիս նորա օճ-
 ցես եւ սրբացես զնոսա ինձ ի քահանա-
 31 յութիւն : Եւ ընդ որդիսն Բարայելի խօ-
 սեսցիս եւ ասացես , Եւզ յօծուին օծու-
 32 թեան սրբոյ եղիցի ձեզ յազգս ձեր : Ի
 մարմնն մարդոյ ոչ օծանիցի , եւ ըստ
 այգմ հանցերձանի ոչ առնիցէք ձեզ այդ-
 պիսի , զի սուբբ է , եւ ի սրբութիւն եղիցի
 33 ձեզ : Ար ոք առնիցէ այդպիսի , եւ որ ոք
 տացէ ի գմանէ այլազգոյ , սատակեսցի
 ի ժաղպրզենէ իւրմէ :
 34 Եւ սաէ Տէր զՄովսէս , Առ դու քեզ
 խուճեկս անուշաւնս , ստաչին եւ եզուճն
 եւ զքաղբանն զանոյշ եւ զկնգրուկ զե-
 35 րեւելի . զի հասարակ առ հասարակ լի-
 ցնիցին . Եւ արաւցես զայն խուճեկ եփ-
 եալ , զործ իւզազործաց հանցերձանի ,
 36 զործ մաքուր ի սրբութիւն : Եւ աղաւ-
 ցես ի նոցանէ մանր , եւ զիցես ի նմա-
 նէ յանդիման վկայութեանն ի խորանն
 վկայութեան , ուստի երեւեցայց քեզ
 անախ . ի սրբութիւն սրբութեանցն ե-
 զիցի ձեզ խուճեկն այն զոր առնիցէք :
 37 Ըստ այնմ հանցերձանի մի առնիցէք ձեզ
 խուճեկս . զի սրբութիւն Տեառն եղիցի
 38 ձեզ : Այր ոք որ առնիցէ ըստ այնմ
 օրինակի՝ առնուլ հոտ ի նմանէ , կորիցէ
 ի ժաղպրզենէ իւրմէ :

Գ Լ Լ Ա

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ սաէ ,
 2 Ահաւազիկ յանուանէ կոչեցեալ է իմ զԲե-
 սելիէլ զԱրիեան , զորդի Ուրայ յազգէ
 3 Յուզայ . եւ լցուցի զնա աստուածեղէն
 4 Հողուով իմաստութեան եւ հանձարոյ եւ
 5 զիսութեան ամենայն զործոյ , ինկամուս
 լինել եւ ճարտարապետել , զործել զոս-
 6 կին եւ զարծաթ եւ զպղնձ , ⁶ զկապու-
 տակն եւ զժիրանին եւ զկարմիրն ման-
 եալ . եւ զականակապն ի լրութիւն զոր-
 7 ծոյն , եւ զհիւսնութիւնն փայտից , զործել
 8 ըստ ամենայն զործոյ : Եւ ես ահա ետու
 զնա եւ զԵղիար Աքիտամայ յազգէ Դա-
 նայ . եւ ի սիրտ ամենայն իմաստնոյ ետու
 զիմաստութիւն , եւ արաւցեն զամե-
 նայն զոր միանգամ պատուիրեցի քեզ :
 9 Զխորանն վկայութեան եւ զաւազանակ
 կտակարանայն եւ զքաւութիւնն որ ի
 վերայ նորա , եւ զամենայն զպատա խու-
 10 ճեկս . եւ զականակապն ի լրութիւն

¹Էբ . սկեզն ²Էբ . սիկզն ³Էբ . դ-1-տ ⁴Էբ . քաւութեանն ⁵Էբ . զխարիսի , ԽԵ ԳԼ ԼԱ . 91

⁶Էբ . եւ զականակապն ի լրութիւն

8 բռնին ¹Եւ զգոհանոցսն՝, Եւ զսեղանն
 եւ զամենայն զկահ նորա, եւ զաշտա-
 նակն սուրբ եւ զամենայն զկահ նորա,
 9 եւ զսեղան խնկոցն, Եւ զսեղան ողջա-
 կիզայն եւ զամենայն զկահ նորա, եւ
 10 զաւազանն եւ զխարխիս նորա, Եւ
 զպատմութեանս պաշտամանն, եւ զհան-
 դերծս սրբութեանն զԱհարոնի քահա-
 նայի, եւ զպատմութեանս որդւոց նորա ի
 11 քահանայանայ ինձ, Եւ զեւզն օծու-
 թեան եւ զխոնկս հանդերձանաց սրբ-
 բութեանն, եւ զամենայն զոր միանգամ
 պատուիրեցի քեզ՝ ²արասցես :
 12 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
 13 Եւ զու խօսեաց ընդ որդիսն Իսրայելի եւ
 ասացես, Չգոյ՛ կացէք պահելոյ զչա-
 բաթս իմ. զի նշանակ է ընդ իս եւ ընդ
 ձեզ յազգս ձեր, զի ծանխիք թէ ես
 14 եմ Տէր որ սրբեմ զձեզ : Եւ պահեալիք
 զչարաթս, զի սրբութիւն է այն ³Տեառն
 եւ՝ ձեզ. որ պղծեացէ զնա՝ մահու մեռ-
 ցի . ամենայն որ գործեցէ ի նմա գործ,
 սատակեսցի սնձն այն ի միջոյ ժողովրդ-
 15 զեան իւրոյ : Զվեց որ գործեսցես գործ,
 եւ յաւուրն եւթներորդի չարաթ հան-
 դրստեան սրբութիւն Տեառն . ամենայն
 որ գործեսցէ գործ յաւուր չարաթու՝
 16 մահու մեռցի : Եւ պահեսցեն որդիքն
 Իսրայելի ³զչարաթս՝ առնել զնոսա յազգս
 17 ձեր՝ ուխտ յաւիտեանական : Ընդ իս եւ
 ընդ որդիսն Իսրայելի, նշանակ իմ է
 յաւիտեանական . զի զվեց որ արար Տէր
 զերկին եւ զերկիր, եւ յաւուրն եւթնե-
 րորդի զազարեաց եւ հանգեաւ :
 18 Եւ ես Մովսիսի, իրբեւ զազարեաց ինքն
 ի խօսից իւրոյ ի լերինն Մինա, գերկուս
 տախտակսն վկայութեան, տախտակս
 քարեզէնս պրեալս մատամբն Աստուծոյ :

Գ Լ Բ

1 Եւ տեսեալ ժողովրդեանն եթէ յամեաց
 Մովսէս ի իմանել ի լեռնէ անտի, կուտե-
 ցաւ ժողովուրդն ի վերայ Ահարոնի եւ
 ասենցնա, Արի եւ արա մեզ աստուածս
 որ առաջնորդեացին մեզ . զի այրն այն
 Մովսէս որ եհան զմեզ յեգիպտոսէ, ոչ
 2 զիտեմք զի՛ հզեւ նմա : Եւ ասէցնոսա
 Ահարոն, Կողոպտեցէք զգլխոս ոսկիս
 յականջաց կանանց ձերոց եւ ուստերաց

եւ զստերաց ձերոց, եւ բերէք առ իս :
 3 Եւ կողոպտեաց ամենայն ժողովուրդն
 զգլխոս ոսկիս յականջաց իւրեանց, եւ
 4 բերին առ Ահարոն : Եւ ընկալաւ ի ձե-
 ւաց նոցա, եւ ձուլեաց զայն քանդա-
 կազործով, եւ արար որթ ձուլածոյ : Եւ
 ասին, Այս են աստուածք քո, Իսրայէլ,
 որ հանին գքեզ յերկրէն Եգիպտացոց :
 5 Եւ իրբեւ ետես Ահարոն, շինեաց սեղան
 առաջի նորա . եւ քարոզ կարգաց Ահա-
 րոն եւ ասէ, Տօն Տեառն առ վաղիւ :
 6 Եւ կանխեալ ի վաղիւ անդր եհան ող-
 ջակէզս, եւ մատոց զոսն ⁴փրկութեան .
 եւ նստաւ ժողովուրդն յուսել եւ յըմ-
 պել, եւ յարեան ի խաղալ :
 7 Եւ Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ
 ասէ, Գնա է՛լ զու աստի ⁴վաղվաղակի,
 զի անօրինեցաւ ժողովուրդն քո զոր
 8 հաներ յերկրէն Եգիպտացոց : Անցին
 վաղվաղակի զճանապարհաւն զոր ⁵պատ-
 ուիրեցիք նոցա . արարին իւրեանց որթ
 ձուլածոյ, եւ երկիր պաղին նմա, եւ
 զոհեցին նմա եւ ասին, Այս են աստ-
 ուածք քո, Իսրայէլ, որ հանին գքեզ
 9 յերկրէն Եգիպտացոց : Եւ ասէ Տէր
 զՄովսէս, Տեսի՛ զժողովուրդն զայն, եւ
 10 ահա ժողովուրդ խտասպարանոց է : Եւ
 Արգ թոյլ տուր ինձ, եւ բարկացեալ
 սրտովութեամբ իմով ի նոսա՝ սատակե-
 ցից զնոսա, եւ արարից զքեզ յազգ մեծ :
 11 Եւ աղաչեաց Մովսէս առաջի Տեառն
 Աստուծոյ իւրոյ եւ ասէ, Ընդէ՛ր, Տէր,
 բարկանաս սրտովութեամբ քով ժողո-
 վրդեան քուս, զոր հաներ յերկրէն
 Եգիպտացոց զօրութեամբ մեծաւ եւ
 12 բարձր բազկաւ. ⁶Գուցէ խօսիցին Եգիպ-
 տացիքն եւ ասիցեն, Առ չսրբութեան
 եհան զնոսա, կոտորել զնոսա ի լերինս
 եւ ջնջել զնոսա յերկրէ . զազարեա ի
 բարկութենէ սրտովութեան քո, եւ
 13 ցածիր ի չարեաց ժողովրդեան քո Յիշեա
 զու զԱբրահամ եւ զԻսահակ եւ զՅակոբ
 զճառայ քո, որոց երգուար յանձն քո,
 խօսեցար ընդ նոսա եւ ասես, ⁷Առաւել
 բազմացուցից զզաւակ ձեր իրբեւ զաս-
 տեկս երկինց բազմութեամբ . եւ զամե-
 նայն յերկիրն զայն զոր ⁷ասացեր տալ
 զաւակի նոցա՝ կայցին զնա յաւիտեան :
 14 Եւ յածեաւ Տէր ի չարեանց զոր ասաց
 աննել ժողովրդեան իւրում :

¹Եբբ. պահեալ Գլխոսն Գլխոսն Գլխոսն Գլխոսն
 բաթն՝ առնել զչարաթն յազգս իւրեանց
 Գլխոսն Գլխոսն Գլխոսն Գլխոսն
 Գլխոսն Գլխոսն Գլխոսն Գլխոսն
 Գլխոսն Գլխոսն Գլխոսն Գլխոսն

15 Եւ դարձաւ Մովսէս էջ ի լեռնէ անտի,
 եւ երկու տախտակքն վրայու թեան ի ձեռս
 նորա . տախտակք ¹ քարեղէնք, գրեալք
 յերկոցունց կողմանց , աստի եւ անտի
 16 գրեալք Եւ տախտակքն գործ Աստուծոյ
 էին . եւ զիրն Գիր Աստուծոյ գրոշմապ ի
 17 տախտակսն : Եւ լուեալ Յեսուայ զձայն
 ժողովրդեանն ազազակելոյ , ասէ զՄով-
 սէս , Չայն պատերազմի է ի բանակի
 18 անդ : Եւ ասէ , Այ է ձայն նահատակաց
 զօրութեան , եւ ոչ բարբառ նահատակաց
² քաջութեան , այլ ձայն յանդապելոց ի
 19 զինուոյ՝ լսեմ ես : Եւ իրբև մերձեցաւ ի
 բանակ անդ , եւ ետես գործին եւ զպա-
 րաւորսն , յարկացեալ ստամտութեամբ
 Մովսէս ընկէց ի ձեռաց իւրոց զտախ-
 տակսն ¹ երկուսին , եւ խորտակեաց զնոսա
 20 առ ստորտոով լերիննս : Եւ ասեալ զորին
 զոր արարին՝ այրեաց հրով , եւ խարտեաց
 զնա մանր , եւ զանեաց ի վերայ ջրոցն
 եւ արրոց որդոցն Իսրայելի :
 21 Եւ ասէ Մովսէս զԱհարոն , Ձի՛նչ ա-
 րար քեզ ժողովուրդդ , զի ամեր ի վե-
 22 լայ զոցա զանհարին մեզազ : Եւ ասէ
 Ահարոն զՄովսէս , Մի բարկանար սրտ-
 մտութեամբ , տէր իմ , զի զու ինքնին
 գիտես զյանդգնութիւն ժողովրդեանդ .
 23 Ձի ասացին թէ Արա մեզ աստուածս
 որ առաջնորդեացեն մեզ , զի այրն այն
 Մովսէս որ եհան զմեզ յեղիպտոսէ՝ ոչ
 24 գիտեմք զի եղև նմա : Եւ ասեմ ցնո-
 սա , եթէ իցէ ուրուք ոսկի , կողոպտե-
 ցէք եւ բերէք . եւ հտուն ցիս . եւ ըն-
 կեցի զայն ի հուր , եւ ել սրթդ այդ :
 25 Եւ ետես Մովսէս եթէ յանցեաւ ժո-
 ղովուրդն , քանզի յանցոյց զնոսա Ահա-
 րոն յատնարութիւն թ չնամեացիւրեանց ,
 26 Եւ եկաց Մովսէս առ զբան բանակին եւ
 ասէ , Որ ոք Տեառն իցէ՛ առ իս մատիցէ .
 հասանէին առ նա ամենայն որգիքն Դեւ-
 27 եայ : Եւ ասէ ցնոսա , Այսպէս ասէ Տէր
 Աստուած Իսրայելի , Դիք իւրաքանչիւր
 զսուր իւր յազգեր իւրում . անցէք եւ
 այսրէն դարձարուք զբանէ ի դուռն բա-
 նակիդ , եւ կտտորկեցէք իւրաքանչիւր զեղ-
 28 իւրաքանչիւր զմերձաւոր իւր : Եւ արա-
 ըին որգիքն Դեւեայ որպէս ասաց Մով-
 սէս . եւ անկան ի ժողովրդինէ անտի յա-
 29 լուր յայնմիկ իրբև երբք հաղար այր Եւ

ասէ ցնոսա Մովսէս , ³ Այցք զձեռս ձեր
 այսոր Տեառն իւրաքանչիւր յորդի իւր ,
 եւ իւրաքանչիւր յեղբայր իւր , ապ ի
 վերայ ձեր այսոր օրհնութիւն :
 30 Եւ եղև ի վազիւ անդր , եւ ասէ Մով-
 սէս ցժողովուրդն , Դուք մեզայք զմեզոց
 զայդ զմեձ . բայց ես արդ ելից առ ⁴ Աս-
 տուած , զի գածուցից վասն մեզայք ձե-
 31 րոց : Դարձաւ Մովսէս անդրէն առ Տէր
 եւ ասէ , Ազաչեմ զքեզ , Տէր , մեզաւ
 ժողովուրդն այն մեզս անհարինս , եւ
 արարին իւրեանց աստուածս ոսկեղէնս :
 32 Արդ եթէ թողուս նոցա զմեզս իւրեանց ,
 թող . ապ թէ ոչ , ջնջեալ գիս ի զպրու-
 33 թեանէ քումմէ յոր գրեցեր Եւ ասէ Տէր
 զՄովսէս , Եթէ ոք մեղաւ առաջի իմ ,
 34 ջնջեցից զնա ի պարութեանէ իմմէ : Բայց
 արդ երթ էջ եւ առաջնորդեա ժողովրդ-
 րեանն այնմիկ ի տեղին յոր ասացի քեզ .
 եւ ահա հրեշտակ իմ երթիցէ առաջի
 երեսաց քոց . բայց յաւուր յորում այց
 արարից , ամից ի վերայ նոցա զմեզս իւր-
 35 եանց : Եւ եհար Տէր զժողովուրդն վասն
 տանելոյ զորին զոր արար Ահարոն :

Գ Լ Գ

1 Եւ ասէ Տէր զՄովսէս , Երթ ել աստի,
 զու եւ ժողովուրդն քո զոր հաներ
 յերկրէն Եգիպտացոց , յերկիրն զոր երզ-
 ուայ Արբահամու , Իսահակայ եւ Յա-
 կոբայ , ասեմ , Չաւակի ձերում տաց զնա
 2 Եւ առաքեցից առաջի երեսաց քոց ⁵ զհրեշ-
 տակ իմ , եւ մերժեսոյ՛է՝ զՔանանացին
 եւ զՍմովրճային եւ զՔետացին եւ զՓե-
 3 րեզացին եւ ¹ զԳիրզեզեացին եւ՝ զՍեւա-
 3 յին եւ զՅերուսացին : Եւ տարցի զքեզ
 յերկիրն որ բղխէ զկաթն եւ զմեղր . բայց
 ես ոչ ելից ընդ քեզ , վասն խստապարա-
 նոց ինեկոյ ժողովրդեանն . զի մի՛ սատա-
 4 կիցեմ զքեզ ի ճանապարհի : Եւ լուեալ
 ժողովրդեանն զբանն զայն չար , սուգ առին
¹ սղաւորօք . եւ ոչս՛տ այր զզարդ զանձամբս
 5 Եւ ասէ Տէր զՄովսէս , Ասա զու ցորդին
 Իսրայելի , Դուք ժողովուրդ խստապարա-
 նոց էք . զզոյ լերուք , զուրցէ եւ այլ
 եւս հարուած ամիցեմ ի վերայ ձեր , եւ
 սատակիցեմ զձեզ . արդ մերկացարուք
 զպատմուճանս վառաց ձերոց , ¹ եւ զզարդ
 քո ի քէն ,՝ եւ ⁶ ցուցից քեզ՝ զինչ առ-

¹ Բէր . գլխի 2) Բէր . պարտութեան , սյլ ձայն երգոց ³ Այսինքն՝ նուիրեցէք ⁴ Բէր . Տէր ⁵ Բէր . հրեշ- տակ , եւ մերժեցից ⁶ Բէր . գիտացից

6 Նիցեմ քեզ : Եւ մերկացան որգիքն Իս-
 րայելի զգարզ իւրեանց , ¹եւ զպատմու-
 ճանս իւրեանց՝ ի Քորեբ լերին :

7 Եւ առեալ Մովսիսի ²զխորան իւր՝
 եհար արտաքոյ լանախին , մեկուսի ի
 քանակէ անտի , եւ ³կոչեցաւ այն Խո-
 րան վկայութեան՝ . եւ լինէր ամենայն
 ոք որ ինզրէր ⁴ինչ ի Տեառնէ՝ , երանէր
 ի խորանն վկայութեան արտաքոյ բա-
 8 Նակին : Եւ յորժամ երթայր Մովսէս ի
 խորանն , կայր ամենայն ժողովորդն
 գէտակն կայեալ իւրաքանչիւր ուրուք
 առ գուրս խորանի իւրոյ , եւ հայէին ընդ
 Մովսէս մինչ երթայր մտանէր ի խորանն .

9 Եւ յորժամ մտանէր Մովսէս ի խորանն ,
 իջանէր սիւն ամպոյն եւ կայր առ գուրս
 խորանին , եւ խօսէր ⁵Տէր ընդ Մովսիսի :

10 Եւ տեսանէր ամենայն ժողովուրդն զսիւն
 ամպոյն որ կայր առ գուրս խորանին .
 եւ կային ամենայն ժողովուրդն յոտն , եւ
 երկիր պագանէին իւրաքանչիւր առ
 11 գուրս խորանի իւրոյ : Եւ խօսէր Տէր
 ընդ Մովսիսի գէմ յանդիման , որպէս
 ոք զի խօսիցի ընդ բարեկամի իւրում .
 եւ գառնայր ի բանակ անդր . բայց սյաշ-
 տօնեայն նորա Յեսու որգի Նաւեայ ոչ
 երանէր ի խորանէ անտի :

12 Եւ ասէ Մովսէս ցՏէր , Անա ասես ցիս ,
 Հան զժողովուրդդ զայգ . եւ զու ոչ
 ցուցիր ինձ զո՞ առաքիցես ընդ իս . եւ
 զու ցիս ասացիր , թէ ճանաչեմ զքեզ
⁶քան զամենեօսին՝ , եւ ունիս շնորհս յի-

13 նէն : Արդ եթէ զտի շնորհս առաջի քո ,
⁷ցոյց ինձ զանձն քո յայտնապէս , զի
 զխտացից թէ իւ գտեալ իցէ իմ շնորհս
 առաջի քո . եւ զի ծանեայց թէ ժողո-

14 վուրդս քո այս՝ յագգ մեծ լինիցի : Եւ
 ասէ , Ես ինքնին երթայցա առաջի քո , եւ
 15 զետեղեցից զքեզ : Եւ ասէ ցնա , Եթէ
 ոչ զու ինքնին երթայցես՝ ընդ մեզ , մի՞
 16 հաներ զմեզ աստի : Եւ զխաբոզ յայտնի
 լինիցի , եթէ արդարեւ զտի շնորհս ա-
 ռաջի քո , եւ ես եւ ժողովուրդս քո , այլ
 յերթալն քո ընդ ⁸մեզ փառաւորեայուք՝ ,

եւ ես եւ ժողովուրդս քո ⁸քան զամե-
 նայն ազգս՝ որ իցեն ի վերայ երկրի :

17 Եւ ասէ Տէր ցՄովսէս , Եւ զայգ եւս
 զքո բան զոր ասացիր՝ արարից . քանզի
 զտեր շնորհս առաջի իմ , եւ ճանաչեմ
 18 զքեզ ⁹քան զամենեօսան՝ : Եւ ասէ ,
 19 Յոյց ինձ զփառս քո : Եւ ասէ , Ես ⁹ան-
 ցից առաջի քո փառօք իմովք՝ , եւ կոչե-
 ցից յանուն Տեառն առաջի քո , եւ ողոր-
 մեցայց որում ողորմեցայց , եւ զթացայց
 20 յոր զթացայց : Եւ ասէ , Ոչ կարես տե-
 սանել զերեսս իմ , զի ոչ տեսանէ մարդ
 21 զերեսս իմ եւ ապրի : Եւ ասէ Տէր , Անա
 տեղի մի առաջի իմ , եւ կացցես ի վե-
 22 ռայ վիմին . Յորժամ անցանիցեն փառքն
 իմ , եւ եղից զքեզ ի ծերպի վիմին , եւ
 ծածկեցից զքեզ ձեռամբ իմով մինչեւ
 23 անցից ես . եւ բարձից զձեռն իմ ¹⁰ի
 քէն , եւ սպա տեսցես զյետոյսն իմ ,
 բայց երեսք իմ քեզ մի երեւեսցին :

ԳԼ ԼԳ

1 Եւ ասէ Տէր ցՄովսէս , Կոփեա զու քեզ
 երկուս տախտակս քարեղէնս ըստ ա-
 ռաջին տախտակացն , ¹եւ ել առ լա ի
 լեանն .՝ եւ գրեցից ի վերայ տախտա-
 կացն զստազաման որ էին յառաջին տախ-
 2 տակն զոր խորտակեցերն : Լեր սյառ-
 բատս առ վապիւ , եւ ելանիցես ընդ ա-
 ռաւօտս ի լեանն Սինա , եւ մնացես
 3 ինձ անդ ի վերայ զլտոյ լերինն : Եւ մի
 ոք ելանիցէ ընդ քեզ , եւ մի ոք երե-
 ւեսցի ամենեւին ի լերինն , եւ արջառ
 եւ ոչխար մի արածեսցին մօտ ի լեաննն :

4 Եւ կովեաց երկուս տախտակս քարե-
 զէնս ըստ օրինակի առաջնոցն . եւ կանխ-
 եալ Մովսիսի ընդ առաւօտն ել ի լեանն
 Սինա , որպէս հրամայեաց նմա Տէր , եւ
 առ Մովսէս ընդ իւր զերկուս տախտակն
 5 քարեղէնս : Եւ էջ Տէր ամպով , եւ կայր
 յանդիման նորա անդ . եւ կոչեաց յա-
 6 նուն Տեառն : Եւ անց Տէր առաջի նո-
 րա . եւ կարգաց , ¹⁰Տէր Աստուած՝ զլմած
 եւ ողորմած , երկայնամիտ , բազում-
 7 ողորմ եւ ճշմարիտ , Որ սրանէ՝ զարդա-
 բութիւն , եւ ասնէ՝՝ զողորմութիւն ի
 հազար ազգս , բառնայ զանօրէնութիւնս
 եւ զանիրաւութիւնս եւ զմեզս , եւ ոչ

¹ՅԷբր. պատե 2|Էբր. զխորանն ³Էբր. կոչեաց
 զայն Խորան ժողովոյ (խորան ժողովոյ Բ-բէհնէ-տ
 է Բ-զ Բ-աււ-տ անգամ խորան վկայութեան) ⁴Էբր.
 զՏէր ⁵Էբր. յանուանէ ⁶Էբր. տուր ինձ զիտել
 զճանապարհ քո , և զխտացից զքեզ , զի գտից
 շնորհս յայս քո , եւ տես զի ազգս այս ժողովուրդ
1 Եբբ. մինխայ, որ յձեռնէ բազար՝ սրբէ և ուււեր Լու ընծայ որ լինի սուրբ սրբան 2 Եբբ. պատար 3 Եբբ. սյրեաց 4 Եբբ. Տեառն 5 Եբբ. սյրեաց 6 Եբբ. խաղաղութեան

7 Եբբ. սրկեացեն 8 Եբբ. կորզեացէ : (5) Եւ սյրեացեն 9 Եբբ. մատուցէ 10 Եբբ. սպանցէ 11 Եբբ. սյրեացէ զնոսա քահանայն ի վերայ սեղանոյն կերակուր պատարագի ի հոտ անուշից ամենայն ճարպ Տեառն է

տենական յազգս ձեր, յամենայն ընա-
կութեան ձերում. զամենայն ճարպ եւ
զամենայն արիւն մի ուտիցէք:

ԳԼ. Գ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
 2 Խօսեաց զաւ ընդ որդիսդ Իսրայելի եւ
 ասասցիս, Անձն եթէ մեղիցէ ¹առաջի
 Տեառն՝ ակամայ յամենայն հրաժանաց
 Տեառն յորոց չէ արժան անել եւ առ-
 3 նիցէ ինչ ի նոցանէ, եթէ ²քահանայա-
 պետս օժեակ մեղանչիցէ առ ի զժողո-
 վուրդն յանուցանելոյ, մատուցէ վանն
 մեղաց իւրոց զոր մեղաւ՝ զուարակ
 յանդուց անարատ Տեառն՝ վանն մեղաց.
 4 Եւ ասցէ զզուարակն ի գուռն խորանին
 վկայութեան առաջի Տեառն, եւ զիցէ
 զձեռս իւր ի վերայ գլխոյ զուարակին
³առաջի Տեառն, եւ սպանցեն՝ զզուա-
 5 րակն առաջի Տեառն: Եւ ասեալ քա-
 հանային օժեկոյ ⁴Կոտարելոյ ի ձեռս իւր՝
 յարենէ զուարակին, եւ սարցի զայն ի
 6 խորանն վկայութեան: Եւ թացցէ քա-
 հանայն զմասն իւր յարեանն, եւ ցու-
 նեսցէ յարենէ անտի եւթն անգամ մա-
 տավին իւրով առաջի Տեառն առ վա-
 7 րագուրան սրբութեան: Եւ գիցէ քա-
 հանայն յարենէ զուարակին ի վերայ եզ-
 ջերաց սեղանոյ ինկոյն հանդերձանաց
 առաջի Տեառն որ իցէ ի խորանին վկա-
 8 յութեան, եւ զամենայն արիւն զուա-
 րակին հեղցէ առ յատակաւ սեղանոյն
 ողջակիզաց, որ կայցէ առ զբան խորա-
 9 նին վկայութեան: Եւ զամենայն ճարպ
 զուարակին մեղաց կորցեսցէ ի նմանէ,
 զճարպ թաղանթ քաղթին եւ զամե-
 10 նայն ճարպ փորտուոյն, եւ զերիկա-
 մուռնան երկաթն, եւ զճարպն որ ի նո-
 սա որ առ մասնամբքն, եւ զբերդարոյթն
 11 երիկամամբքն հանդերձ կորցեսցէ, Զոր
 օրինակ անուցու ի զուարակէ զոհի
⁵փրկութեանն, եւ հանցէ՝ քահանայն
 12 ի սեղանն ողջակիզաց: Եւ զմտթ զուա-
 րակին եւ զամենայն մարմին նորս հան-
 դերձ գլխովն եւ ստիւք եւ քաղթմանն
 13 եւ ապակառան ⁶Հանցն ողջոյն զզուա-
 րակն արտաքոյ բանակին ի տեղի մի
 սուրբ, ուր զմոխիրն հեղուցուն, եւ

այրեսցեն զնա ի վերայ փայտի հրով.
 ի վերայ մոխրակուտին այրեսցի:
 13 Ապա թէ ամենայն ժողովուրդ որդուրն
 Իսրայելի անգլատանայցէ ակամայ, եւ
⁶մոռանայցի բանն յաչաց ժողովրդեանն,
 եւ ասնիցեն ինչ մի յամենայն պատուի-
 րանաց Տեառն որ ոչ անիցի, եւ յան-
 14 ցանիցեն, Եւ յայանիցի նոցա մեղքն
 որ մեղան նովաւ, մատուցէ ժողո-
 վուրդն զուարակ անարատ յանդուց վանն
 մեղաց, եւ ասցէ զնա ի գուռն խո-
 15 րանին վկայութեան: Եւ զիցեն ձերք
 ժողովրդեանն զձեռս իւրեանց ի վերայ
 գլխոյ զուարակին առաջի Տեառն, եւ
 սպանցեն զզուարակն առաջի Տեառն:
 16 Եւ սարցի քահանայն օժեակ յարենէ
 զուարակին ի խորանն վկայութեան:
 17 Եւ թացցէ քահանայն զմասն իւր յա-
 րենէ զուարակին, եւ ցանեսցէ եւթն
 անգամ առաջի Տեառն յանդիման վա-
 18 րագուրին ⁷արբութեան: Եւ զիցէ յարե-
 նէ անտի քահանայն ի վերայ եզջերաց
 սեղանոյն ⁸ինկոյն հանդերձանաց, որ
 կայցէ առաջի Տեառն ի խորանին վկա-
 9 յութեան, եւ զամենայն զարիւնն հեղ-
 ցէ առ յատակաւ սեղանոյն ողջակիզաց
 որ է առ զբան խորանին վկայութեան:
 19 Եւ զամենայն ճարպն կորցեսցէ ի նմա-
 20 նէ եւ ⁹հանցէ ի սեղանն: Եւ արտացէ
 զզուարակին զոր օրինակ արար զուա-
 րակին մեղաց, նայնպէս արտացէ եւ
 նմա, եւ քաւեսցէ վանն նոցա քահա-
 21 նայն, եւ թողցին նոցա մեղքն: Եւ
⁸հանցեն զզուարակն ողջոյն արտաքոյ
 բանակին, եւ ⁹այրեսցեն զզուարակն,
 զոր օրինակ ¹⁰սպրեցին զառաջին զուա-
 րակն, զի վանն մեղաց ժողովրդեանն է:
 22 Եւ եթէ իշխանն մեղիցէ, եւ արտացէ
 մի ինչ ի պատուիրանաց Տեառն Աստուծոյ
 որ ոչ անիցի, եւ յանցանիցէ ակամայ,
 23 Եւ յայանիցին նմա մեղքն զոր մեղաւ,
 մատուցէ զպատարագն իւր նոխաց յայժ-
 24 ևայ՝ արու անարատ. Եւ գիցէ զձեռս
 իւր ի վերայ գլխոյ նոխացին, եւ ¹¹սպան-
 ցեն զնա ի տեղուով ուր սպանանիցեն
 զողջակիցան առաջի Տեառն. քանզի մե-
 25 ղաց է: Եւ ասցէ քահանայն յարենէ
 անտի ¹²մեղացն մատամբ իւրով եւ զիցէ
 ի վերայ եզջերաց սեղանոյն ողջակիզաց,

¹Յէբբ. գ-ի-տէ ²Եբբ. քահանայն ³Եբբ. և սպանցէ
⁴Եբբ. խաղտութեան, և այրեսցէ զնոսա ⁵Եբբ.
 Հանցէ

⁶Եբբ. ծածկեսցի ⁷Եբբ. այրեսցէ ի վերայ սեղա-
 նոյն ⁸Եբբ. հանցէ ⁹Եբբ. այրեսցէ ¹⁰Եբբ.
 այրեսց ¹¹Եբբ. սպանցէ ¹²Եբբ. մեղացայոյն

և զամենայն արիւն նորա հեղցէ առ
 26 յատակաւ սեղանոյ ողջակիզացն : Եւ զամենայն զճարպ նորա ՚հանցէ ի սե-
 զանն՝ իրրեւ զճարպ զոճի 2 փրկութեանն .
 և քաւեսցէ վասն նորա քահանայն ի
 մեղաց անտի 3 իւրոց , և թողցի նմա :
 27 Եւ եթէ մեղիցէ անձն ակամայ ի ծո-
 զովբենէ երկրին՝ յառնել նմա մի ինչ
 յամենայն պատուիրանացն Տեառն որ
 28 ոչ առնիցի , և յանցանիցէ , Եւ յայտնես-
 ցին նմա մեղքն զոր մեղաւ , մատուցէ
 զպատարապ իւր ալ ոչ մտաւ զամն
 29 մեղացն զոր մեղաւ : Եւ զիցէ զձեռս
 իւր ի վերայ գլխոյ նորա , և 4 սպանցեն
 զալոջն՝ զվասն մեղացն ի սեղուչ ուր
 30 սպանանիցեն զողջակէզան : Եւ աւցէ
 քահանայն յարեւնէ նորա մատաւր իւ-
 րով , և զիցէ ի վերայ եղջերաց սեղա-
 նոյն ողջակիզաց , և զամենայն արիւն
 նորա հեղցէ առ յատակաւ սեղանոյ ող-
 31 ջակիզացն : Եւ զամենայն զճարպն կոր-
 զեսցէ՝ զոր օրինակ կորզիցի ճարպ յող-
 ջակիզէ 2 փրկութեանն . և 5 հանցէ զայն
 քահանայն ի սեղանն ի հոտ անուշից
 Տեառն . և քաւեսցէ վասն նորա քա-
 32 հանայն , և թողցի նմա : Եւ եթէ ոչ-
 խար մատուցանիցէ զպատարագն իւր ,
 33 էջ անարատ մատուցէ զնա . և զիցէ
 զձեռն իւր ի վերայ գլխոյ նորա որ վասն
 մեղացն իցէ . և 6 սպանցեն զնա ի
 սեղուչն ուր սպանանիցեն զողջակէզան :
 34 Եւ առեալ քահանային յարեւնէ այնր սր
 վասն մեղացն իցէ մատաւրն իւրով , և
 զիցէ ի վերայ եղջերաց սեղանոյ ողջա-
 կիզացն . և զամենայն արիւն նորա հեղ-
 ցէ առ յատակաւ սեղանոյն ողջակիզաց :
 35 Եւ զամենայն զճարպ նորա կորզեսցէ՝
 զոր օրինակ կորզիցի ճարպ սչխարին
 2 փրկութեանն . և զիցէ զայն քահանայն
 ի վերայ սեղանոյն յողջակէզ Տեառն . և
 քաւեսցէ վասն նորա քահանայն ի մե-
 զաց անտի զոր մեղաւ , և թողցի նմա :

ԳԼ . Ե

1 Եւ եթէ մեղիցէ անձն , և յուրից
 զբարբառ երգման , և նա իցէ վկայ , կամ
 թէ ետես կամ թէ իրազէտ իցէ , եթէ
 2 ոչ հանցէ ի վիր , մեղս ընկալցի : Եւ

անձն որ մերձեսցի յիրս պղծութեան ,
 կամ ի մեռելոտի , կամ ի զազանարեկ ,
 կամ ի պիղծ ինչ , կամ ի մեռելոտիս
 տնանոց պղծոց , կամ ի մեռելոտիս սող-
 նոց պղծոց , և անցանիցէ գնովաւ , և
 3 ինքն պղծիցի և յանցանիցէ . կամ
 մերձենացցէ ի պղծութեան մարդոց կամ
 յամենայն պղծութեան նորա , յոր թէ
 մերձեցեալ պղծիցի , և մոտացօնք լինի-
 ցին նմա , և յետ այնորիկ ի վերայ հա-
 4 սանիցէ , և յանցանիցէ : Եւ անձն որ
 ուխտիցէ չար ինչ առնել կամ բարի ,
 բառ տաննային որ ինչ ուխտիցէ մարդ
 երգմամբ չափ , և 6 մոտանայցի այն յա-
 չաց նորա , և ապա ի վերայ հասանիցէ ,
 և մեղանչիցէ միով իւրիք ի նոցանէ .
 5 և 7 խոստովան լինիցի զմեղսն՝ զոր մե-
 6 զաւ . 8 Մատուցէ վասն յանցանայն զոր
 յանցեաւ Տեառն , և՝ վասն մեղացն զոր
 մեղաւ , էջ յօգեաց որոջ , կամ ալ ոչ մի
 յայժևոց վասն մեղացն . և քաւեսցէ
 վասն նորա քահանայն ի մեղաց անտի ,
 9 և թողցին նմա մեղքն :
 7 Ապա թէ չիցէ ձեաննաւ լինել բաւա-
 հան ոչխարաւ , մատուցէ վասն մե-
 զացն զոր մեղաւ երկուս տատարակո
 կամ երկուս ձագս աղաւնեաց , մին վասն
 8 մեղացն , և մին յողջակէզ : Աձցէ առ
 քահանայն , և տարցի ի ներքս քահա-
 նայն նախ զվասն մեղացն , և խոսեսցէ
 քահանայն զլուրին յուրանէ անտի և
 9 մի հասցէ . և զանեսցէ յարեւնէ անտի
 այնր որ վասն մեղացն իցէ՝ զորմով սե-
 զանոյն , և զմնացեալ արիւնն քամես-
 ցէ առ յատակաւ սեղանոյն . քանզի
 10 վասն մեղաց է . Եւ զերկրորդն արասցէ
 յողջակէզ որպէս և օրէն իցէ . և քա-
 ւեսցէ վասն նորա քահանայն ընդ մե-
 զացն զոր մեղաւ , և թողցի նմա :
 11 Եւ եթէ ոչ գտանիցին ընդ ձեռամբ
 նորա զոյգք տատարակաց կամ երկու
 ձագք աղաւնեաց , բերցէ զպատարագն
 իւր վասն որոյ մեղան զասանորդ գրուի
 միոյ նաչիս վասն մեղացն . և եւզ մի
 օրկիցէ ի նա , և կնդրուկ մի գիցէ ի վերայ
 12 նորա , զի վասն մեղաց է : Եւ տարցի զայն
 առ քահանայն . և առեալ քահանային ի
 նմանէ լի ափով զառ ի յիշտտակէն նորա ,

1 Եբբ. սյրեսցէ ի վերայ սեղանոյն 2 Եբբ. խա-
 զաղու-թեանն 3 Եբբ. նորա 4 Եբբ. սպանցէ
 5 Եբբ. սյրեսցէ

6 Եբբ. ծածկեսցի 7 Եբբ. եղիցի թէ մեղուցեալ
 իցէ միով իւրիք ի նոցանէ , և խոստովան 8 Եբբ.
 և մատուցէ Տեառն զվասն յանցանայն 9 Եբբ.
 գ-լ-տ

1 զիցէ ի վերայ սեղանոյ ողջակիրաց”
 13 Տեանն. քանզի վասն մեզաց է : Եւ քա-
 լեսցէ վասն նորա քահանայն զմեզոն զոր
 մեզաւ՝ որով իւր եւ իցէ ի նոցանէ ,
 եւ թողցի նմա . եւ մնացեալն՝ քահա-
 նային եղիցի իրիւս զո՞ն նաչնոյ :
 14 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 15 Անձն որ լի է վրիպեցի եւ մեղիցէ ա-
 կամայ ի սրբութեանդ սնաի Տեանն՝ մա-
 տուցէ վասն յանցանացն իւրոց Տեանն
 իոյ սնարաս յօգեաց՝ ²զնոց արծաթոյ
 ի յիտուն սկեզէ՝՝ ըստ սրբութեան սկեզն ,
 16 վասն որոյ յանցուցեալն իցէ : Եւ զոր
 մեզաւն ի սրբութիւնն , հատուցէ , եւ
 զհինգերորդ եւս մասնն յաւելցէ ի նոյն ,
 եւ ատցէ ցքահանայն . եւ քաւեսցէ ի
 նմանէ քահանայն իսոյնն որ վասն յան-
 ցանայն իցէ , եւ թողցի նմա :
 17 Եւ անձն որ մեղիցէ , եւ արասցէ մի ինչ
 յամենայն պատուիրանաց Տեանն զոր չիցէ
 պարտ առնել , եւ ոչ իմանայցէ եւ յան-
 18 ցանիցէ եւ ընդունի ինչ մեզաւ , Ածցէ իոյ
 սնարատս ի խաչանց ³զնոց արծաթոյ՝ վասն
 յանցութեանն սա քահանայն . եւ քաւեսցէ
 վասն նորա քահանայն վասն անգիտու-
 թեանն զոր անգիտացաւ եւ ինքն ոչ գի-
 19 տէր , եւ թողցի նմա . ⁴Քանզի յանցեաւ
 յանցութիւնն յանցանաց առաջի Տեանն :

ԳԼ . 9

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 2 Անձն ոք եթէ մեղիցէ , եւ արհամար-
 հելով արհամարհիցէ զպատուիրանս
 Տեանն , եւ ստեսցէ ընկերի իւրում , եւ
 թէ՛ յաւանդի , եթէ ի զովորութեանն եւ
 եթէ ի յափշտակութեանն , եւ եթէ վնա-
 3 սեսցէ ինչ ընկերի իւրում , Եւ եթէ ե-
 գիտ կորուստ ինչ եւ ժխտիցէ ի վերայ
 նորա , եւ երգնուցու սուտ վասն միոյ
 իրիք , յամենայնէ զոր եւ ասնիցէ մարդ
 4 առ ի մեզանչելոյ նորա նոքօք , Եւ ե-
 զիցի յորժամ մեզանչիցէ եւ յանցանիցէ ,
 հատուցէ զյափշտակութիւնն զոր յա-
 5 փշտակեաց , կամ զվնասն զոր վնասեաց ,
 կամ զաւանդն որ աւանդեցաւ նմա ,
 5 կամ վիրուստն զոր եղիտ . Յամենայն
 իրաց վասն որոյ երգուեալ սուտ , սուտ
 ժեսցի զպատանն , եւ զհինգերորդ մասն
 յաւելցէ ի նոյն . եւ ոյր իցէ՝ հատուցէ

6 նմա յաւուր յորում յանդիմանեցի : Եւ
 ընդ յանցանաց իւրոց մատուցէ Տեանն
 իայ սնարատ ի հօսից՝ ³զնոց արծա-
 7 թոյ՝՝ վասն որոյ յանցեաւն եւ քաւես-
 ցէ վասն նորա քահանայն առաջի Տեանն ,
 եւ թողցի նմա վասն միոյ իրիք յամե-
 նայնէ զոր արար եւ յանցեալ նա :
 8 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 9 Պատուէր սուր Ահարոնի եւ որպէս
 նորա եւ սասացես , Այս օրէն է ողջա-
 կիցին . ⁵վասն այրելոյ նորա ի վերայ՝
 սեղանոյն զամենայն գիշերն մինչեւ ցա-
 10 վերայ նորա՝ մին չիջցի : Եւ զգիցցի քա-
 հանայն պատմուճան կառախ , եւ անդ-
 րափարտիս կառախ զգիցցի ի վերայ
 մարմնոյ իւրոյ , եւ հանցէ ⁶զընծայս ող-
 ջակիցին ի վերայ սեղանոյն զոր հուրն
 ծախիցէ՝ , եւ զիցէ առնիժեր սեղանոյն :
 11 Եւ մերկացի զպատմուճանն իւր , եւ
 զգիցցի այլ պատմուճան , եւ հանցէ
 12 սուրբ : Եւ հուրն որ սրբիցի ի վերայ
 սեղանոյն՝ մին չիջցի , եւ այրեսցէ ի վե-
 րայ նորա քահանայն փայտ ընդ առա-
 ւօսս , եւ զիցէ ի վերայ նորա զողջա-
 կէզն , եւ ⁸իցցէ ի նմա զճարդ ⁹փրկու-
 13 թեանն : Եւ հուր հանապաղ այրեսցի ի
 վերայ սեղանոյն , եւ մին չիջցի :
 14 Եւ այս օրէն է ¹⁰զոհին՝ զոր մատու-
 ցանիցեն՝ որդիքն Ահարոնի ¹¹քահանայքն
 15 առաջի Տեանն յանդիման սեղանոյն Առջէ
 ափով իւրով ի նաչնոյ զոհին հանդերձ իւ-
 զով նորա եւ կնորկաւն որ իցէ ի վերայ
 զոհին , եւ ¹²հանցէ ի սեղանն՝՝ պտուղ ի
 16 հատ անուշիկ յիշատակ նորա Տեանն : Եւ
 զմնացեալն ի նմանէ կերիցին Ահարոն եւ
 որդիք նորա . բազարջ կերիցի ի սուրբ
 սեղուոյ , ¹³ի արահի խորանին վկայութեան
 17 կերիցեն ցնա : Այ եփեսցի խմորեաց .
 մասն ետու զայն նոցա ի պտոցն ¹⁴Տեանն .
 սրբութիւննք սրբութեանոց են , որպէս
 վասն մեզայն իցէ , նոյնպէս եւ վասն
 18 յանցանայն : Ամենայն արու քահանա-
 յիցն կերիցէ զայն . օրէն յաւիտեանական
 յազգս ձեր ի պտոցոյ սնաի Տեանն . ա-
 մենայն որ մերձեցի ի նոսա՝ սրբեսցի :

⁵ Եբբ. ողջակէզն կացցէ ի վերայ հրոյ ⁶ Եբբ. զմո-
 խիրն որ ի ծախելոյ հրոյն զողջակէզն որ ի վերայ
 սեղանոյն ⁷ Եբբ. զմոխիրն ⁸ Եբբ. սրբեսցէ
⁹ Եբբ. խաղաղութեանն ¹⁰ Եբբ. զօհին մատու-
 ցանիցեն զնա ¹¹ Եբբ. դ-լուտ ¹² Եբբ. սրբեսցէ
 ի վերայ սեղանոյն ¹³ Եբբ. ի գաւթի ¹⁴ Եբբ. իմոց

¹ Եբբ. սրբեսցէ ի վերայ սեղանոյն ի վերայ պատա-
 րագաց ² Եբբ. ըստ գնոց բոց սկեզ արծաթոյ
³ Եբբ. ըստ գնոց բոց ⁴ Եբբ. վասն յանցանաց է այս .

49 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
 20 Այս է պատարագ Ահարոնի եւ որդւոց
 նորա զոր մատուցանիցեն Տեառն յաւուր
 յորում օծանիցեն զնա . զտասանորդ
 զրուի միոյ նաչնոյ զոհ հանապազօրոյ,
 զկէս նորա՝ այգուռն , եւ զկէս նորա՝ եւ
 21 բրկուռնն : Ի տապակի իւզով զանդեալ
 գործեսցի . եւ մատուցէ զայն մաքրեալ
 զոհ ի պատուոյ , զոհ ի հոտ անուշից
 22 Տեառն : Քահանայն օծեալ փոխանակ նո-
 րա յորդւոց իւրոց՝ արասցէ զայն , օրէն
 յաւիտեանական Տեառն . ամենեւին՝ ¹կա-
 23 տարեսցի : Եւ ամենայն զոհ քահանային
 ողջակէզ լինիցի , եւ մի ուտիցի :
 24 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
 25 Խօսեալ ընդ Ահարոնի եւ ընդ որդիս
 նորա եւ աստայսն , Այս օրէն իցէ վասն
 մեղացայոցն . ի տեղւոջ ուր սպանանի-
 ցեն զողջակէզն՝ սպանցեն եւ զվասն
 մեղացն առաջի Տեառն . սրբութիւն
 26 սրբութեանց է : Քահանայն որ մատու-
 ցանիցէ զայն՝ կերիցէ . ի սուրբ տեղ-
 ւոջ կերիցի , ²ի սրահի խորանին վկայու-
 27 թեան : Ամենայն որ մերձենայցէ ի միս
 նորա՝ սրբեսցի . եւ յոր ձորձոց վերայ
 սրակեսցի ի նմանէ արիւն՝ լուսացի ի
 28 սուրբ տեղւոջ : Եւ անօթ կաւեզէն յօ-
 րում եփեսցի , փշրեսցի . եւ եթէ ի
 պզնձի անօթ եփեսցի , քերեսցէ զնա եւ
 29 ջրով ողողեսցէ : Ամենայն արու քահա-
 նայիցն կերիցէ զայն . սրբութիւն սրբու-
 30 թեանց է ³Տեառն : Եւ ամենայն վասն
 մեղացն , յորոց մասնիցէ յարենէ նոցա ի
 խորանն վկայութեան քաւել ի սրբու-
 թիւնան , մի կերիցի , այլ հրով այրեսցի :

ԳԼ Ե

4 Եւ այս օրէն իցէ խոյին որ վասն յան-
 ցանացն իցէ . ⁴զի սրբութիւն սրբու-
 2 թեանց է . Ի տեղւոջ ուր սպանանիցեն
 զողջակէզն՝ սպանցեն եւ զխոյն յան-
 ցանաց ⁴առաջի Տեառն , եւ զարիւնն
⁵հեզցէ առ յատակաւ՝ սեզանոցն շուր-
 3 ջանակի . Եւ զամենայն զճարպ նորա
 առցէ ⁶եւ զմկանն , եւ զամենայն ըզ-
 ճարպ թազանթ քաղթին եւ զամենայն
 4 ճարպ փորտուոցն . Եւ զերիկամունն
 զերկոսին եւ զճարպն որ ի վերայ նոցա
 առ մասնամբն , եւ զլերզարթիւն երի-

5 կամամբն հանգերձ կորզեսցէ . Եւ ⁷հանցէ
 զայն քահանայն ի սեզանն՝ պտուղ Տեառն .
 6 զի վասն յանցանաց է : Ամենայն արու
 քահանայիցն կերիցէ զայն . ի սուրբ տեղ-
 ւոջ կերիցին զայն , քանզի սրբութիւն
 7 սրբութեանց է : Արպէս զվասն մեղացն
 նոյնպէս եւ զվասն յանցանացն . օրէն՝ մի
 եւ նոյն կայցէ նոցա . եւ քահանայն որ
 8 քաւիցէ նովաւ՝ նմա լիցի : Եւ քահանայն՝
 որ մաստ յանիցէ զողջակէզ ինչ մարդոյ ,
 մորթ ողջակիլին զոր մատուցանէ՝ նմա
 9 եղիցի : Եւ ամենայն ⁸զոհ որ գործիցի ի
 թնորի , եւ ամենայն որ գործիցի ի կաս-
 կարայս կամ ի տասպակի , քահանային որ
 10 մատուցանիցէ զայն՝ եղիցի : Եւ ամե-
 նայն զոհ զանդեալ իւզով եւ որ չիցէ
 զանդեալ , ամենեցուն որդւոցն Ահարոնի
 իւրաքանչիւր ումեք եզիցի հասարակաց :
 11 Այս օրէն է զոհիցն ⁹փրկութեան զոր
 12 մատուցանիցեն Տեառն . Իսկ եթէ վասն
 զոհութեան մատուցանիցէ զայն , մա-
 տուցէ վասն զոհի զօտութեանն պանս
 բապարսս ⁴ի նաչնոյ զանդեալ իւզով , եւ
 13 նաչի՝ զանդեալ իւզով , չօթիւք Բաղարջ
 հացիւ մատուցէ զպատարագն իւր ի
 վկայ զոհին զօտութեան ⁹փրկութեան :
 14 Եւ մատուցէ մի ինչ յամենայն պատա-
 րագաց իւրոց նուէր Տեառն . եւ այն ,
 քահանային որ հեղուցու զարիւնն
 15 ⁹փրկութեան՝ լինիցի : Եւ միս զոհին գո-
 հութեան ⁹փրկութեան՝ նորին լինիցի ,
 յորում աւուր պատարագիցի՝ կերիցի ,
 16 եւ մի թողուցուն ի նմանէ յայդ : Եւ
 եթէ ¹⁰կամաւ ոք ուխտս մատուցանիցէ
 զպատարագն իւր՝ , յաւուր յորում մա-
 տուցանիցէ զզոհն՝ կերիցի , եւ ի վաղիւ
 17 ¹¹անդր . Եւ մնացեալն ի մոյզ զոհին մին-
 18 չեւ յորն երրորդ՝ հրով այրեսցի : Ապա
 թէ ուտելով ուտիցի ի մոյզ զոհին
⁹փրկութեան իւրոյ յաւուրն երրորդի ,
 մի լինիցի ընդունելի , ¹²մատուցանել-
 ւացն , եւ՝ մի համարեսցի նմա այն .
 քանզի ⁴ապակաւ եւ՝ պզնութիւն է , եւ
 19 անձն որ կերիցէ ի նմանէ՝ մեղս առցէ : Եւ
 միս որ մերձեսցի յամենայն պղծութիւն՝
 մի կերիցի , այլ հրով այրեսցի . ամենայն

⁷Եբբ. այրեսցէ զնոսա քահանայն ի վերայ սեզա-
 նոցն ⁸Տեա ԳԼ Բ. 4 : ⁹Եբբ. խաղաղու-
 թեան ¹⁰Եբբ. ուխտ կամ՝ կամաւոր քնձայ
 իցէ զօջ պատարագի նորա ¹¹Եբբ. անդր մնաց-
 եալն ի նմանէ կերիցի ¹²Եբբ. որում մատու-
 ցանէն զայն :

¹Եբբ. այրեսցի ²Եբբ. ի գաւթի ³Եբբ. այն ⁴ՅԵբբ.
 պակաւ ⁵Եբբ. որակեսցէ ի վերայ ⁶Եբբ. զըմակն
 եւ զճարպն որ ծածկէ զփորտոսին

20 սուրբ կերիցէ զմինս : Եւ անձն որ կե-
 րիցէ ի զո՛հէ ¹փրկութեանն որ իցէ Տեառն,
 եւ սգծութիւնն նորա ի նմա իցէ, կորիցէ
 21 անձն այն ի ժողովրդենէ իւրմէ : Եւ
 անձն որ մերձեացի յամենայն իրս սգծու-
 թեան , ի սգծութիւնս մարդոյ կամ յա-
 նանապ սգծոյ , կամ յամենայն զարչե-
 լիս պիղծս , եւ կերիցէ ի մտոյ զո՛հին
¹փրկութեանն որ իցէ Տեառն , կորիցէ
 անձն այն ի ժողովրդենէ իւրմէ :
 22 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ սաէ,
 23 Խօսեաց ընդ որդիսդ Իսրայելի եւ ա-
 սասցես , Չամենայն զճարպ զարջատոյ
 եւ զոչխարի եւ զայծեաց մի՛ ուտիցէք :
 24 Եւ ճարպ մեռերատոց եւ զտգանարե-
 կաց լինիցի յամենայն գործ , բայց ի կե-
 25 բակուր մի՛ ուտիցի : Եւ ամենայն որ ու-
 տիցէ ի ճարպոյ անասնոց զոր մատուցա-
 նիցէք պտուղ Տեառն՝ կորիցէ անձն այն
 26 ի ժողովրդենէ իւրմէ : Չամենայն արևն
 մի՛ ուտիցէք յամենայն բնակութիւնս
 ձեր , ի թռչնոց եւ յամենայն անասնոց :
 27 Ամենայն անձն որ կերիցէ արևն՝ կա-
 րիցէ ի ժողովրդենէ իւրմէ :
 28 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ սաէ,
 29 Խօսեաց ընդ որդիսդ Իսրայելի եւ ա-
 սասցես , Ար մատուցանիցէ զո՛հ ¹փրկու-
 թեան Տեառն , աճցէ զպատարագն իւր
 30 Տեառն ի զո՛հէ ¹փրկութեանն իւրոյ : Չեւք
 նորա մատուցին ²պտուղ Տեառն . ³զճարպ
 երրոմոյ եւ զլերգորոյթն մատուցէ զմեկ
 31 առաջի Տեառն եւ հանցէ զայն քահա-
 նայն ի սեզանն՝ . եւ եղիցի երբու՛ծն Ա-
 32 հարոնի եւ որդւոց նորա : Եւ զերին զաջոյ
 տայցէք ⁴հաս քահանային ի զո՛հոց
 33 ¹փրկութեանն ձերոյ : Ար մատուցանիցէ
 զարիւնն ¹փրկութեանն եւ զճարպն առ ի
 յորդոցն Ահարոնի , նորա լիցի երին աջոյ
 34 ի մասն : Զի զերու՛ծն ⁵վերադրաց եւ
 զերին ⁶ուտարայն առի եւ յորդոցն Բա-
 րայելի ի զո՛հին ⁷փրկութեանն ձերոյ , եւ
 ետու զայն՝ Ահարոնի քահանայի եւ որդ-
 ւոց նորա , օրէն յաւիտեանական յորդոցն
 35 Իսրայելի : Այս օժու՛մն է Ահարոնի եւ
 որդւոց նորա ի ⁸պաղոց անախ Տեառն ,

յաւուր յորում ⁹մատուցանէր զնոսա՛՛ ,
 36 Արպէս պատախրեաց Տէր տոյ նոցա
 յաւուր յորում օժ զնոսա յորդոցն Բարա-
 յելի , օրէն յաւիտեանական յազգս նոցա :
 37 Այս օրէն է ոչջուկիլոպոյն եւ զո՛հոց , եւ
 վասն մեկոցն , եւ վասն յանցանաց , եւ
 վասն ¹⁰կատարմանն եւ զո՛հին փրկու-
 38 թեանն՝ , Արպէս պատախրեաց Տէր Մով-
 սիսի ի լերինն Սինայ , յաւուր յորում
 պատախրեաց Տէր որդւոցն Իսրայելի ,
 մատուցանել զպատարագս իւրեանց ա-
 ռաջի Տեառն յանսպասմն Սինայ :

Գ Լ . Ը

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ սաէ ,
 2 Առ զԱհարոն եւ զորդիս նորա , եւ
 զպատմու՛ծանս նոցա եւ զեւզն օժու-
 թեան , եւ զզուարակն զվասն մեզաց
 եւ զխոյսն զերկուսին եւ զխանն բա-
 3 զարջաց . Եւ զամենայն ժողովուրդն
 եկեղեցայտուցիս ի զու՛ռն խորանին վկա-
 4 յութեանն Եւ արար Մովսէս որպէս հրա-
 մայեաց նմա Տէր . եւ եկեղեցայոցոյ զժո-
 յովուրդն ի զու՛ռն խորանին վկայու-
 5 թեան : Եւ սաէ Մովսէս ցժողովուրդն ,
 Այս բան է զպր պատախրեաց Տէր սաւ-
 6 նել : Եւ մասաց Մովսէս զԱհարոն եւ
 զորդիս նորա , եւ լուսաց զնոսա շրոյ .
 7 Եւ զպեցոց ¹¹Ահարոնի զպատմու՛ծանն՝ ,
 եւ աճ ընդ մէջ նորա զկամարն , եւ
 արկ զնոյ՛ւաւ ¹²զվտաւակն , եւ եզ ի
 վիրայ նորա զվականն , եւ խառնեաց ի
 նմա ¹³քստ գործուածոյ՝՝ վակապին , եւ
 8 պնդեաց զնա ի նմա : Եւ եզ ի վիրայ
 նորա զապետակն , եւ եզ ի վիրայ
 9 տախտակին ¹⁴զՅանդիմանութիւնն եւ
 զճճմարտութիւնն՝ : Եւ եզ ի վիրայ զլլոց
 նորա զխոյնն , եւ եզ ի վիրայ խուրին
 յերեսաց կողմանէ զթիթեզնն ոսկի ,
 զնուիրեակն եւ զսուրբ , որպէս պատ-
 10 ուիրեաց Տէր Մովսիսի : Եւ սաեւոյ Մով-
 սիսի ¹⁵յիւզոյ օժութեանն՝ զանեաց ի
 11 վիրայ սեզանոցն եւ թն անդում . Եւ օժ
 զսեզանն եւ սրբեաց զնա եւ զամենայն

¹ Եբբ. խաղաղութեան ² Եբբ. պատարագ ³ Եբբ. զճարպն հանդերձ երբ ծովն մատուցէ . երբու՛ծն երբեման երբեքոցն առաջի Տեառն , (31) Եւ զճարպն պրեւոցէ քահանայն ի վերայ սեզանոցն ⁴ Եբբ. ի վերացումն ⁵ Եբբ. երբեման ⁶ Եբբ. վերացման ⁷ Եբբ. խաղաղութեան նոցա , եւ ետու զնոսա ⁸ Եբբ. պատարագաց

սպաս նորա, եւ զուսուզանն եւ զխարխիս
 նորա, եւ սրբեաց զնոսա, եւ ոճ զխո-
 րանն եւ զամենայն ինչ որ ի նմա, եւ
 12 սրբեաց զնա: Եւ արկ Մովսէս յիւզոյ
 օժութեանն ի գլուխն Ահարոնի եւ ոճ
 13 զնա, եւ սրբեաց զնա: Եւ մատոյց Մով-
 սէս զորդինն Ահարոնի եւ զբեցոյց նոցա
 1 զսրատուճանն, եւ ոճ ընդ մէջ նոցա
 զկամարն, եւ 2 եզ նոցա զխոյրան, որ-
 պէս եւ հրամայեաց Տէր Մովսիսի:
 14 Եւ մատոյց Մովսէս զզուարակն զվասն
 մեղացն, եւ եղին Ահարոն եւ որդիք
 նորա զձեռս իւրեանց ի վերայ գլխոյ
 15 սրտարկին մեղաց: Եւ սպան զնա, եւ
 ան Մովսէս յարնէ անտի, եւ եզ ի վե-
 րայ եղջերաց սեզանոյն չուրջանակի մա-
 տամբ իւրով, եւ սրբեաց զսեզանն, եւ
 զարիւնն եւնեզ առ յատակաւ սեզանոյն,
 եւ սրբեաց զնա առնել քաւութիւն ի
 16 վերայ նորա: Եւ սա զամենայն ճարպ
 փորտուոյն, եւ զլեյզարոյթիւն եւ զեր-
 կտոն զերիկամունն, եւ զամենայն
 ճարպն որ ի վերայ նոցա, եւ 3 եհան
 17 Մովսէս ի սեզանն: Եւ զզուարակն եւ
 զկաշի նորա եւ զմիսն եւ զապաւառն
 այրեաց հրով արտաքոյ բանակին, որ-
 պէս հրամայեաց Տէր Մովսիսի:
 18 Եւ մատոյց Մովսէս զխոյն որ յողջա-
 կէզ, եւ եղին Ահարոն եւ որդիք նորա
 19 զձեռս իւրեանց ի վերայ գլխոյ խոյինն եւ
 սպան 4 Մովսէս զխոյն, եւ եհեզ՝ զա-
 20 րիւնն չուրջ զսեզանովն: Եւ զխոյն յօշեաց
 անդամ անդամ, եւ 5 ան Մովսէս զգլուխն
 21 եւ զանդամովիւնն եւ զճարպն, եւ զքա-
 զիրթն եւ զտան լուաց ջրով, եւ 6 եհան
 Մովսէս զխոյն սղջոյն 6 ի սեզանն ողջակէզ
 ի հոտ անուշից, 7 բանդի սրտուճ՝ Տեառն
 է, որպէս հրամայեաց Տէր Մովսիսի:
 22 Եւ մատոյց Մովսէս զխոյն երկրորդ,
 զխոյն 8 կատարման, եւ եղին Ահարոն եւ
 որդիք նորա զձեռս իւրեանց ի վերայ
 23 գլխոյ խոյինն, եւ սպան զնա, եւ ան
 Մովսէս յարնէ նորա, եւ եզ ի վերայ
 ըլծակի աջոյ ունկանն Ահարոնի, եւ ի
 վերայ 9 ծայրի աջոյ ձեւին նորա, եւ ի
 24 վերայ 9 ծայրի աջոյ ռախն նորա: Եւ մա-
 տոյց Մովսէս զորդինն Ահարոնի, եւ եզ

Մովսէս յարնէ անտի ի վերայ ըլծա-
 կաց աջուց ախանջաց նոցա, եւ ի վե-
 րայ 10 ծայրից աջուց ձեռաց նոցա, եւ ի
 վերայ 10 ծայրից աջուց ռախն նոցա, եւ
 11 եհեզ Մովսէս զարիւնն չուրջ զսեզա-
 25 նովն: Եւ սա զճարպն եւ 12 զմիսն, եւ
 զճարպն որ ի վերայ քաղցրթին, եւ
 զլեյզարոյթիւն եւ զերիկամունն զեր-
 կտոնն, եւ զճարպն որ ի վերայ նոցա,
 26 եւ զերինն աջոյ, եւ ի խանէն 13 կա-
 տարմանն որ կայր աւաջի Տեառն՝ ան
 սպան մի բազարջ եւ պան մի յիւզոյ
 14 անտի, եւ եզ ի վերայ ճարպոյն եւ ի
 27 վերայ երւոյն աջոյ, եւ եզ զամենայն
 ի վերայ ձեռացն Ահարոնի, եւ ի վերայ
 ձեռաց սրբուց նորա, եւ 15 մատոյց զայն
 28 նուէր՝ առաջի Տեառն: Եւ սա զայն
 Մովսէս ի ձեռաց նոցա, եւ 16 եհան ի
 սեզանն յողջակէզ կատարման, որ է ի
 հոտ անուշից սրտուճ Տեառն, որպէս
 29 պատուիրեաց Տէր: Եւ առեալ Մովսիսի
 զկրուճն՝ 17 եհան նուէր՝ առաջի Տեառն
 ի խոյէ անտի 18 կատարման, եւ՝ եզ եւ
 Մովսիսի ի մասն, որպէս պատուիրեաց
 30 Տէր Մովսիսի: Եւ առեալ Մովսիսի յիւ-
 զոյ օժութեանն, եւ յարնէն որ ի վե-
 րայ սեզանոյն, ցանեաց զԱհարոնիւ
 եւ զպատմուճանօք նորա, եւ զորդուք
 նորա եւ զպատմուճանօք նոցա, եւ
 սրբեաց զԱհարոն եւ զպատմուճանս
 նորա, եւ զորդիս նորա եւ զպատմու-
 ճանս որբուց նորա ընդ նմա:
 31 Եւ սաէ Մովսէս ցԱհարոն եւ ցորդիս
 նորա, եւ փեկեք զմիտ ի 19 սրահի խո-
 րանին վկայութեան ի սուրբ տեղուճ՝,
 եւ անդ ուտիցէք զայն, եւ զպանն որ
 ի խանի 8 կատարմանն իցին, զոր օրի-
 նակ հրամայեաց ինձ Տէր եւ սաէ, Ա-
 հարոն եւ որդիք նորա կերիցեն զայն:
 32 Եւ զնշխար հացի եւ մսոյ հրով այրես-
 33 ջիք: Եւ ի զրանէ խորանին վկայու-
 թեան մի ելանիցէք զեւթն օր, մինչեւ
 յօր լրման աւուրց կատարմանն ձերոյ:
 34 զի զեւթն օր լցցէ զձեռս ձեր: Որպէս
 եւ արարն յաւուրն յայնմով, որպէս
 պատուիրեաց Տէր օտնէս, առ ի բաւելոյ

1 Եբբ. զշապիկան 2 Եբբ. ոճ նոցա զսպարոջան 3 Եբբ. սրբեաց Մովսէս ի վերայ սեզանոյն 4 Եբբ. եւ րուսն ի վերայ սեզանոյն 5 Եբբ. սրբեաց 6 Եբբ. ի վերայ սեզանոյն 7 Եբբ. պատարագ 8 Այսինքն, նուիրման 9 Եբբ. բուժոյ

10 Եբբ. բուժոյ 11 Եբբ. սրբեաց 12 Եբբ. զղ մակն 13 Եբբ. բազարջ 14 Եբբ. անտի եւ բաբար 15 Եբբ. երբեաց զնոսա երբուսն 16 Եբբ. սրբեաց ի վերայ ողջակիցն որ ի սեզանին, սորա են նուիրումն ի հոտ անուշից պատարագ Տեառն 17 Եբբ. երբեաց զայն երբուսն 18 Այսինքն, նուիրման սյս 19 Եբբ. զրան խորանն ժողովոյ

35 վասն ձեր: Եւ առ զրան խորանին վիւ-
յութեան նստիցիք զեւթն օր, զցայց եւ
զցերեկ, եւ պահեալիք զարձարանութիւնս
Տեառն զի մի մեռանիցիք: զի այնոյէս
36 պատուիրեաց ինձ Տէր: Եւ արար Ահա-
բոն եւ որդիք նորա զամենայն զրանս
զոր պատուիրեաց Տէր Մովսիսի:

ԳԼ . Թ

1 Եւ եղև յաւուրն ութերորդի կոչեաց
Մովսէս զԱհարոն եւ զորդիս նորա եւ
2 զձերակոյտն Իսրայելի: Եւ ասէ Մովսէս
ցԱհարոն, Աս զու քեզ զարարակ մի
յանդոյ վասն մեզաց եւ խոյ յողջակէզ,
անարատս. եւ մասս զնոսս առաջի
3 Տեառն: Եւ ընդ ձերակոյտն Իսրայելի
խօսեսցիս եւ ասասցես, Առէք զուք ձեզ
նոխազ մի յայծեաց վասն մեզաց, ²եւ
խոյ եւ զուարակ եւ զտան ասրեւոր
4 յողջակէզ անարատս. եւ զուարակ եւ
խոյ յողջակէզ ³փրկութեան ասաջի
Տեառն, եւ ⁴զոհ նաչի՛ճ զանդեալ իւզով-
զի այսօր երևեսցի Տէր ի միջի ձե-
5 բու՛մ: Եւ ասին որպէս եւ հրամայեաց
Մովսէս առաջի խորանին վիւյութեան,
եւ մատենն ամենայն ժողովուրդն եւ
6 կացինն առաջի Տեառն: Եւ ասէ Մով-
սէս, Այս բան է զոր ասաց Տէր ասնկ-
եւ երևեսցին ի ձեզ փառք Տեառն:
7 Եւ ասէ Մովսէս ցԱհարոն, Մտաիր սա
սեղանն, եւ արա զվասն մեզայն քո
եւ զողջակէզն քո, եւ քաւս վասն
քո եւ ⁵տան քո՛: Եւ արա զպատարազս
ժողովրդեան ²քո, եւ քաւս վասն
նոցա, որպէս պատուիրեաց Տէր ²Մով-
8 սիսի: Եւ մատեաւ Ահարոն առ սեղանն,
եւ սղան զզուարակն զվասն մեզայն
9 իւրոց: Եւ մատուցին որդիքն Ահարոնի
զարևանն առ նա, եւ եկոց զմասն
յարևանն, եւ եզ ի վերայ եղջերաց սե-
ղանոյն, եւ զարիւնն եհեզ առ յատակաւ
10 սեղանոյն: Եւ զճարպն եւ զերիկամունան
եւ զլերդարոյն զվասն մեզացայոյն՝
⁶եհան ի սեղանն՝, որպէս պատուիրեաց
11 Տէր Մովսիսի: Եւ զմիսն եւ զկաչին ⁷ալ-
12 սեցին հրով արտաքոյ բանակին: Եւ
սղան զողջակէզն. Եւ մատուցին որ-
դիքն Ահարոնի զարիւնն առ նա, եւ

13 ⁸եհեզ չուրջ զսեղանոյն: Եւ զողջակէզն
մատուցին առ նա անգամ անգամ՝ եւ
14 զզլուխն, եւ ⁷եզ ի վերայ սեղանոյն: Եւ
յուսաց զքաղիթին եւ զտան ջրով, եւ
⁷եզ ի վերայ ողջակիլին ի սեղանն:
15 Եւ ⁹մատուցին զպատարազ ժողո-
վրդեանն, եւ առ զնոսայն զվասն մե-
զաց ժողովրդեանն եւ սղան ¹⁰զնա իրբև
16 զատաջինն: Եւ մատուց զողջակէզն, եւ
17 արար զնա որպէս եւ օրէն էր: Եւ մա-
տոյց ⁴զզոհն, եւ ելից զձեռս ի նմանէ,
եւ ⁷եզ ի վերայ սեղանոյն ուրայն յա-
18 ռաւօտին ողջակիլէն: Եւ սղան զպաւ-
րակն եւ զխոյն զոհի ³փրկութեան ժողո-
վրդեանն, եւ մատուցին որդիքն Ահարոնի
զարիւնն առ նա, եւ ⁸եհեզ զայն չուրջ
19 զսեղանոյն: Եւ զճարպն օր ի զօտարա-
կէն եւ ի խոյն ¹¹եւ զմկանն՝, եւ զճարպ
թագանթ քաղրթին, եւ զերիկովն երի-
կամունն ²ճարպովն, եւ զերկարայթն:
20 Եւ եզին զճարպն ի վերայ երբժոյցն, եւ
⁷հանին զճարպն ²հանդերձ երբժովքն,
եւ եզին զճարպն՝ ի վերայ սեղանոյն:
21 Եւ զերբուժան եւ զերին զայժոյ ¹²նոր-
եաց նուէր՝ առաջի Տեառն, որպէս
պատուիրեաց ¹³Տէր Մովսիսի՛:

ԳԼ . Ժ

1 Եւ ասեալ երկուց որդւոյն Ահարոնի,
Նաբադայ եւ Արիուգայ, զիւրօքանչիւր
բուրուս՝ եզին ի նոսա հուր, եւ ար-
կին խաւկս եւ մատուցին ասաջի Տեառն
հուր օտար, զոր ոչ հրամայեաց նոցա
2 Տէր: Եւ ել հուր ի Տեառնէ եւ եկի
3 զնոսա, եւ մեռան առաջի Տեառն: Եւ ասէ
Մովսէս ցԱհարոն, Այս է զոր ասաց Տէր:

¹Եբբ. որդիանն ²Յեբբ. զ-
տըւթեան ³Տե- Գլ . Բ. 4: ⁵Եբբ. վասն ժո-
ղովրդեան ⁶Եբբ. այրեաց ի վերայ սեղանոյն
⁷Եբբ. այրեաց

⁸Եբբ. սրակեաց ⁹Եբբ. մատոյց ¹⁰Եբբ. զնա եւ
արար զնա վասն մեզաց ¹¹Եբբ. զղմակն ¹²Եբբ.
երբեհաց երբուժան ¹³Եբբ. Մովսէս ¹⁴Եբբ.
յես մատուցանելոյ ¹⁵Եբբ. զխաղաղութեանն

ասէ , ի մերձաւորս իմ սրբեցայց , եւ առաջի ամենայն Յողովրդեան իմոյ փառաւորեցայց . եւ սարջացաւ Ահարոն :

4 Եւ կոչեաց Մովսէս զՄիսազայի եւ զԵղիափան , զորդիս Ողիւլի , զորդիս հօրեկբօր Ահարոնի , եւ ասէ ցնոսա , Մատիք եւ բարձէք զեղբարս ձեր , հանդերձ պատմուճանօքն իւրեանց՝ յերեսաց սրբութեանցդ արտաքոյ քան զրանսովն :

5 Մասեան եւ բարձին զնոսա հանդերձ պատմուճանօքն իւրեանց արտաքոյ լանակին , զոր օրինակ ասաց Մովսէս :

6 Եւ ասէ Մովսէս ցԱհարոն եւ ցԵղիազար եւ ցԻթամար ցորդիս նորա մնացեալս , Ձգուխս ձեր մի ապրիտուէք , եւ զհանդերձս ձեր մի պատառէք , զի մի մեռանիցիք , եւ ի վերայ Յողովրդեանդ լինիցի բարկութիւն , բայց եզբարք ձեր եւ ամենայն սուռնն Իսրայելի լացցեն զհրայրեացն որ այլեցան ի Տեառնէ : Եւ ի զրանէ խորանիդ վկայութեան մի ելանիցէք , զի մի մեռանիցիք . զի եւ զնօժութեան որ ի Տեառնէ է՝ ի վերայ ձեր է . եւ արարին ըստ բանին Մովսիսի :

8 Խօսեցաւ Տէր ընդ Ահարոնի եւ ասէ ,

9 Գինի եւ ցբի մի ըմպիցէք զու եւ որդիք քո ընդ քեզ յորժամ մտանիցէք ի խորանն վկայութեան , հիտմ յորժամ մերձենայցէք ի սեզանն , զի մի մեռանիցիք . օրէն յաւիտեանս յազգս

10 ձեր , Ձատանկ ի մէջ սրբոց եւ պղծոց , եւ ի մէջ պարկեշտից եւ անպարկեշտից :

11 Եւ իմացուցանել որդւոցն Իսրայելի զամենայն զօրէնս զոր խօսեցաւ Տէր ընդ նոսա ի ձեռն Մովսիսի :

12 Եւ ասէ Մովսէս ցԱհարոն եւ ցԵղիազար եւ ցԻթամար ցորդիս նորա ցմնացեալս , Առէք զգոհն մնացեալ ի պտղոց անտի Տեառն , եւ կերայք բազարջ առաջի սեղանոյն . զի սրբութիւն սրբու

13 թեանց է . Եւ կերիջիք զայն ի սուրբ տեղւոյ , զի օրէն քեզ լինիցի այն , եւ օրէն որդւոց քոց ի պտղոց անտի Տեառն :

14 զի այնպէս հրամայեալ է ինձ : Եւ զերբուժ զնուիրին եւ զերի հասին՝ կերիջիք ի սուրբ տեղւոյ զու եւ որդիք քո եւ հտուն քո ընդ քեզ . զի օրէն քեզ է այն , եւ օրէն որդւոց քոց տուաւ ի զոհից զիրկութեան որդւոցն Իսրայելի :

15 Զերին զհասի եւ զերբուժն նուիրի ի վերայ ընծայից՝ ճարպոյն մատուցեն նուէրնուիրել՝ առաջի Տեառն . եւ եղիցի քեզ եւ որդւոց քոց եւ զստերաց քոց ընդ քեզ՝ օրէն յաւիտեանսին , զոր օրինակ հրամայեաց Տէր Մովսիսի :

16 Եւ զնախաջն զլամն մեղաց ինպրեւ լով խնդրեաց Մովսէս , եւ այն էր այլեցեալ . եւ բարկացաւ Մովսէս Եղիազարու եւ Իթամարայ որդւոցն Ահարոնի :

17 Ինացելոց եւ ասէ , Ընդէր ոչ կերայք զլամն մեղայն ի սուրբ տեղւոյ . զի սրբութիւն սրբութեանց է , եւ զայն ետ ձեզ ուտել , զի բաննայցէք զմեզս ժողովրդեանն . եւ անհիցէք քառութիւն

18 վամն նոցա առաջի Տեառն : Քանզի ոչ եմուտ յարնէ նորա ի սրբութիւնն յանդիման երեսացն՝ ի ներքս , արդ կերայք՝ զնա ի սուրբ տեղւոյ՝ զոր օրինակ հրամայեցաւ ինձ : Խօսեցաւ Ահարոն ընդ Մովսիսի եւ ասէ , Ձի եթէ այսօր մատուցին զլամն մեղացն իւրեանց եւ զողջակէզս իւրեանց առաջի Տեառն , եւ այսպիսի անցք սնցին ընդ իս . եւ ուտիցեմ այսօր զվամն մեղացն ,

20 զուցէ չլինիցի հաճոյ առաջի Տեառն եւ լուաւ Մովսէս եւ հաճոյ թուեցաւ նմա :

ԳԼ . ԺԱ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ

2 Ահարոնի եւ ասէ , Խօսեցարուք ընդ որդիսդ Իսրայելի եւ սասցէք , Այս առաջառնք են զոր ուտիցէք յամենայն առաջնաց որ են ի վերայ երկրի , Ձամենայն անասուն թաթաներձ եւ կճղակաւոր որոյ յերկուս բաժանեալ իցեն թաթքն եւ որոճիցէ , յանասնոց՝ զայն կերիջիք :

4 Բայց յայնցանէ մի ուտիցէք , որք որոճիցին եւ կճղակահերձ ոչ իցին . ուղտ զի որոճայ եւ կճղակն ոչ լաժմանի , պիղծ իցէ նա ձեզ : Եւ նապաստակ զի որոճայ եւ թաթքն ոչ լաժմանի , պիղծ իցէ նա ձեզ : Եւ ձագար զի որոճայ եւ թաթքն ոչ լաժմանի , պիղծ իցէ նա ձեզ : Եւ խոզ զի թաթաներձ է եւ կճղակս ունի եւ որոճայ ոչ , պիղծ իցէ նա ձեզ : Ի մոյն նոցա մի ուտիցէք , եւ ի գէշ նոցա մի մերձենայցէք . քանզի պիղծ իցէ ձեզ այն :

9 Եւ այս է զոր ուտիցէք յամենայնէ որ

13Եբբ. գոհտ. 2Տե. ԳԼ. Բ. 4. 3Եբբ. զերբուժն երբմանն եւ զերին վերացմանն 4Եբբ. գոտերք 5Եբբ. խաղաղութեանն 6Եբբ. վերացմանն 7Եբբ. երբմանն հանդերձ պատարագք 8Եբբ. յերբուժն երբմանն 9Եբբ. պարտ էր ձեզ ուտելով ուտել

ի ջուրս իցեն. ամենայնի որոյ իցեն թեւք
 եւ թեփի ի ջուրս եւ ի ծովս եւ ի վտակս,
 10 զայնս ուտիցէք: Եւ ամենայնի որոյ ոչ
 իցեն թեւք եւ թեփի 'ի ջուրս եւ" ի ծովս
 եւ ի վտակս, մի ուտիցէք, յամենայնէ զոր
 ջուրքն բոխիցեն, եւ յամենայն շնչոյ
 կենդանւոյ որ ի ջուրս. քանզի պիղծ է
 11 այն, պիղծ լինիցի ձեզ: Ի մտոց նոցա մի
 ուտիցէք, եւ ի մեռելոց նոցա զարչեա՞ծիք:
 12 Զի ամենայնի որոյ ոչ իցեն թեւք եւ թեփի
 որ ի ջուրս իցեն, պիղծ իցէ ձեզ այն,
 13 եւ այս իցեն ի թռչնոց յորոց զար-
 չիջիք, եւ ոչ ուտիցի, այլ պիղծ իցէ ձեզ.
 արծուի, եւ պատկուծ, եւ զետարծուի,
 14 եւ անղղ, եւ ցին, ²եւ որ ինչ նման իցէ
 15 նոցա", եւ աղտաւ, եւ որ ինչ նման ի-
 16 ցէ նմա, եւ ջայլեամիս, եւ բու, եւ որոր,
 եւ որ ինչ նման իցէ նոցա, եւ լազէ,
 17 եւ որ ինչ նման իցէ նմա, եւ հաւապա-
 18 տիր, եւ հողամալ, եւ քաջահաւ, եւ
 19 սոխակ, եւ հաւալուան, եւ կարասպ, եւ
 արագիլ, եւ քարապր, եւ աւ ինչ նման
 իցէ նոցա, եւ յօպոպ, եւ չիղջ:
 20 Եւ ամենայն զեռուն թռչունս որ զը-
 21 նայցէ ի չորս՝ պիղծ եղիցի ձեզ, Այլ
 զայն ուտիցէք ի զեռնոց թռչնոց որ
 գնայցեն ի չորս, որոյ իցեն կարթք ի
 վերոյ քան զոտս ոստոստել նոքօք յերկ-
 22 ըէ: Եւ այս իցէ զոր ուտիցէք ի նոցանէ.
 զՋորանկզ, եւ որ ինչ նման է նմա. եւ
 զխարազուլ, եւ որ ինչ նման է նմա.
 եւ զմարախ, եւ որ ինչ նման է նմա. եւ
 զօձամարտ, եւ որ ինչ նման իցէ նմա:
 23 Ամենայն զեռուն թռչունս, որոյ իցեն
 24 չորք ոտք, պիղծ իցէ ձեզ. Մի նոքօք
 պղծիցիք. ամենայն որ մերձենայցէ ի
 մեռեալ նոցա՝ պիղծ լիցի մինչեւ ցերե-
 25 կոյ: Եւ ամենայն որ բառնայցէ զմեռ-
 եալ նոցա, լուսացէ զձորձս իւր, եւ
 25 պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ: Յամենայն
 անասնոց որ կճղակահերձ իցէ եւ մա-
 զիւս սփոխցէ եւ որոճիցէ ոչ, պիղծ լիցի
 ձեզ այն ամենայն. որ մերձեսցի ի մեռ-
 եալ նոցա՝ պիղծ լիցի 'մինչեւ ցերեկոյ":
 27 Եւ ամենայն որ գնայցէ ի ձեռս իւր,
 յամենայն զաղանաց որ գնայցէ ի չորս,
 պիղծ լիցի ձեզ այն. ամենայն որ մեր-
 ձեսցի ի մեռեալ նոցա՝ պիղծ լիցի մին-
 28 չեւ ցերեկոյ: Եւ որ բառնայցէ ի մեռե-
 լոյ նոցա, լուսացէ զձորձս իւր, եւ

պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ. զի այն
 ամենայն պիղծ իցէ ձեզ,
 29 Եւ այս իցէ ձեզ պիղծ յամենայն սոյ-
 նոց որ սոյլիցին ի վերայ երկրի. աքիս եւ
 30 մուկն եւ ³տիտեան յատին", եւ մկնաքիս
 եւ գեանառեւծ եւ կոխաղիաց եւ մողէզ
 31 եւ խուրդ: Այն ամենայն պիղծ իցէ ձեզ
 յամենայն սողնոց որ սոյլին ի վերայ երկրի.
 ամենայն որ մերձեսցի ի մեռեալ նոցա՝
 պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ:
 32 Եւ յամենայն յորոց վերայ անկանիցի
 ի մեռելոյ նոցա՝ պիղծ լիցի. յամենայն
 փայտեղէն անօթոյ կամ ի հանդերձէ կամ
 ի մաշկէ կամ ի քրձէ, ամենայն անօթ
 յորում գործ ինչ զորձիցի ի նմա, ի ջուր
 թացցի եւ պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ,
 33 եւ ապա սուրբ լինիցի: Եւ ամենայն
 անօթ խեցեղէն յոր անկանիցի ինչ ի նո-
 ցանէ, եւ որ ինչ ի ներքսն կայցէ, պիղծ
 34 լիցի, եւ զայն բեկանիջիք: Եւ ամե-
 նայն կերակուր որ ուտիցի, եւ անկա-
 նիցի ի վերայ նորա ի ջրոյ անտի, պիղծ
 լիցի. եւ ամենայն բմայելի որ ըմպիցի յա-
 35 մենայն ամանի՝ պիղծ լիցի: Եւ ամենայն
 յոր ինչ անկանիցի ի մեռելոյ նոցա՝ պիղծ
 լիցի. եւ թոնիրք եւ կատկարայք քա-
 կեոյին. քանզի պղծեալ են, եւ պիղծք
 36 իցեն ձեզ: Բայց 'յազբերաց ջրոց եւ ի
 ջրհորոց եւ ի ջրակուսաց, որ՝ սուրբ
 լինիցին ձեզ, եւ ամենայն որ մերձենայցէ
⁵ի պղծուծ իւրան շնչոյ մեռելոյ՝ նոցա, պիղծ
 37 լիցի: Իսկ եթէ անկանիցի ինչ ի մեռե-
 լոյ նոցա ի վերայ ամենայն սերման
 սերմանիւոյ որ սերմանիցի, սուրբ լիցի:
 38 Ապա թէ հեղուցու ջուր ի վերայ ամե-
 նայն սերման, եւ անկանիցի ինչ անղր
 ի մեռելոյ նոցա, անսուրբ լիցի ձեզ:
 39 Եւ եթէ մեռանիցի ինչ յանասնոց որ
 ձեզ ուտելն են, որ մերձենայցէ ի մեռեալ
 40 նոցա՝ պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ: Եւ ⁶որ
 բառնայցէ ի մեռելոյ նոցա՝ լուսացէ զձորձս
 իւր, եւ պղծեալ լիցի մինչեւ ցերեկոյ:
 41 Եւ ամենայն սողուն որ սողի ի վե-
 րայ երկրի, պիղծ լիցի ձեզ, եւ մի կե-
 42 ըիցի: Ամենայն որ սողի ի վերայ որո-
 վայնի իւրոյ, եւ ամենայն որ դնայցէ
 ի չորս, մինչեւ ցամենայն բազմոտանիս,
 յամենայն զեռնոց որ զեռայցեն ի վերայ

¹Յեբբ. գլոստե ²Յեբբ. ըստ ազգի իւրում. այս-
 ցին եւ է ներոյ

³Յեբբ. տիտեան ըստ ազգի իւրում ⁴Յեբբ. աղ-
 բեւբբ ե գուբբ, ջրակայոք ⁵Յեբբ. ի մեռելոսի
⁶Յեբբ. որ ուտիցէ ի մեռելոյ նոցա՝ լուսացէ զձորձս
 իւր եւ պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ, եւ որ

երկրի , մի ուտիցէք : զի պիղծ է այն
 43 ձեզ . եւ մի գարշեցուցանիցէք զանձինս
 ձեր ամենայն սողնովք որ սողիցին ի
 վերայ երկրի . եւ մի պղծիցիք նոքօք :
 44 եւ մի լինիցիք անսուրբ նոքօք : Ես եմ
 Տէր Աստուած ձեր . եւ սրբիցիք եւ
 սուրբք լինիցիք , զի սուրբ եմ ես՝ Տէր
 Աստուած ձեր” . եւ մի պղծիցէք զան-
 45 ձինս ձեր ամենայն գեղձովք որ չարմի-
 ցին ի վերայ երկրի : Զի ես եմ Տէր
 ՝Աստուած որ հանի գձեզ յերկրէն եւ
 զիսպաղչեաց լինել ձեզ Աստուած , եւ
 եղիջիք սուրբք , զի ես սուրբ եմ :
 46 Այս օրէն լինիցի վասն անասնոց եւ
 թռչնոց եւ ամենայն շնչոյ որ չըջիցի ի
 ջուրս , եւ ամենայն շնչոյ որ չըջիցի ի վե-
 47 րայ երկրի . Արտշիլ ի մէջ սրբոյն եւ ի մէջ
 անսրբոյն , եւ խելամուտ առնել զոր-
 զիսպ Բարայելի ի մէջ ուտելեացն կեն-
 զանածնայց եւ ի մէջ չուտելեաց անասնոց :

ԳԼ . ԺԲ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ստէ ,
 2 Խօսեաց ընդ սրբիան Իսրայելի եւ ա-
 սացես ցնտա , կին սք եթէ սերմն առ-
 ցէ եւ ծնանիցի արու , պիղծ լիցի զեւթն
 օր . ըստ աւուրց զասանելոյ զաշատնին
 3 իւրոյ պիղծ լիցի . եւ յաւուրն ութ եւ-
 ըրորի թլլիվածեաց զմարմին սնթլլիա-
 4 ստթեան նորա : Եւ զերեսուն եւ զերիս
 աւուրս նսացի ի սրբութեան արեան
 իւրոյ . յամենայն ինչ սուրբ նա մի մեր-
 ձենայցէ , եւ ի սրբութիւնն մի մտցէ ,
 մինչեւ լցցին աւուրք սրբութեան նորա :
 5 Ապա թէ էզ ծնանիցի , պիղծ լիցի ՝ զեւթն
 օր” ըստ դաշտանին , եւ զվաթսուն եւ
 6 զվեց օր նսացի ՝ ի սուրբ արեանն իւ-
 սրբութեան նորա ի վերայ ուտելն կամ
 գտելն , ածցէ զան սարեւոր յողջակէզ ,
 եւ ՝ զպոք ապաւնուց կամ տատրակի” փան
 մկալց ի գուն խորանին վիպութեան
 7 առ քահանայն , եւ մատուցցէ առաջի
 Տեսուն , եւ քաւեացէ վասն նորա քա-
 հանայն , եւ սրբեացէ զնա յողբերէ արեան
 նորա Այս օրէն իցէ այնորի որ ծնանիցի
 8 արու կամ էզ : Ապա թէ ոչ գտանիցէ
 ձեան նորա բաւական լինել զաւամբ ,

առցէ երկուս տատրակս կամ երկուս
 ձագս աղաւնեաց . զմին յողջակէզ եւ
 զմեան վասն մկալց , եւ քաւեացէ վասն
 նորա քահանայն , եւ սրբեցի :

ԳԼ . ԺԳ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ
 2 Ահարոնի եւ ստէ , Մարգոյ ուրուք եթէ
 լինիցի ի մորթ մարմնոյ իւրոյ նշան
 սպոյ , կամ սլար , կամ պաղպաջ ,
 եւ լինիցի ի մորթ մարմնոյ նորա արած
 բորոտութեան , եկեացէ առ Ահարոն
 3 քահանայից : Եւ տեսցէ քահանայն զա-
 րածն ի մորթ մարմնոյ նորա , եւ ՝ կամ թէ”
 մազ արածին ի սպիտակ գարձեալ իցէ ,
 եւ տեսիլ արածին զնստագոյն իցէ քան
 զմորթ մարմնոյն , արած բորոտութեան
 է . եւ տեսցէ քահանայն եւ ՝ պղծեացէ
 4 զնա” : Ապա թէ սլապաջն սպիտակ իցէ
 ի մորթ մարմնոյ նորա , եւ զնստագոյն
 չիցէ տեսիլ նորա քան զմորթն , եւ
 մազն ի սպիտակ չիցէ գարձեալ , ՝ եւ
 ինքն չլապոյն իցէ ,” զասուցէ քահա-
 5 նայն զարածն զեւթն օր : Եւ տեսցէ
 քահանայն յաւուրն եւթներորդի , եթէ
 կայցէ նայնպէս արածն առաջի նորա ,
 եւ չիցէ ՝ փոխեալ արածն ի մորթն , զա-
 սուցէ զնա քահանայն այլ եւս աւուրս
 6 եւթն : Եւ տեսցէ քահանայն յաւուրն
 եւթներորդի մեւս անպամ , եւ անա չա-
 պոյն իցէ արածն , եւ ՝ յայլապոյն չիցէ ՝ փոխ-
 եալ ի մորթն , սրբեացէ զնա” քահանայն .
 զի ՝ նշան ինչ” է այն . եւ լուացեալ զձորձս
 7 իւր եղիցի սուրբ : Ապա թէ ՝ չըջելով
 չըջեացի նշանն” ի մորթն յետ տեսանե-
 8 ըրեւոցի մեւս անպամ քահանային : Եւ
 տեսցէ քահանայն , եւ անա ՝ ալլապոյն-
 եալ իցէ նշանն” ի մորթն , պղծեացէ զնա
 քահանայն , զի յորոտութիւն է :
 9 Եւ արած բորոտութեան եթէ լինիցի
 մարգոյ , ՝ եկեացէ առ Ահարոն քահանայ” .
 10 Եւ տեսցէ քահանայն . եւ անա պալար
 սպիտակ իցէ ի մորթն , եւ մազ նորա
 ի սպիտակ գարձեալ իցէ , եւ ՝ յառողջ
 11 եւ ի կենդանի մարմնոյ ի պալար” , Բո-

1 Թեք . Գոհուի 2 Թեք . երկուս եւթներորդս 3 Թեք .
 ի վերայ արեան սրբութեանն 4 Թեք . ձագ ա-
 ղաւնուց կամ տատրակ

5 Թեք . ձանուցէ թէ պիղծ է 6 Թեք . տարածեալ
 7 Թեք . ձանուցէ թէ սուրբ է 8 Թեք . բոս 9 Թեք .
 տարածելով տարածեացի բոսն 10 Թեք . տա-
 րածեալ իցէ բոսն 11 Թեք . տարցի առ քա-
 հանայն 12 Թեք . առողութիւն մազ կենդան-
 ւոյ ի պալարի անդ

րոտութիւն հնացեալ իցէ ի մորթ մարմնոյ նորա . պղծեացէ զնա քահանայն , եւ չգատուցէ զնա զի պիղծ է :

42 Ապա թէ փութելով փութեցի բորստու-թիւնն ընդ մորթն , եւ ծածկեաց թորստութիւնն զամենայն մորթ իրանայն ի գլխոյ մինչեւ ցտա , ըստ ամենայն անոց² :

43 քահանային , եւ անսանիցէ քահանայն եւ անա ծածկեաց բորստութիւնն զամենայն մորթ մարմնայն , ³սրբեացէ քահանայն զարածն . քանզի ամենայն ի

44 սպիտակ դարձաւ , սուրբ է : եւ յորում աւուր երեւեսցի ի նմա մարմին կենդանի ,

45 պղծեցի : եւ անոցէ քահանայն զմարմինն կենդանի , եւ պղծեաց զոչ մարմինն . եւ պիղծ լիցի , քանզի բորստու-

46 թիւն է : Ապա թէ անդրէն հաստատեցի մարմինն ողջ եւ զարձցի ի սպիտակ , եկեսցէ առ քահանայն . եւ անսանիցէ զնա քահանայն , եւ անա զարձեալ իցէ արածնորա ի սպիտակ , սրբեացէ քահանայն զարածն . քանզի ուրբ է :

48 Եւ մարդոյ եթէ լինիցի ի մորթ նորա

49 կեղ եւ ողջացի , եւ եղիցի ի անդի կեղոյն սպիտակ փայլուն , լսնացեալ կամ կար-

20 մրացեալ , եւ երեւեսցի քահանային եւ անսանիցէ քահանայն , եւ անա անտիւն խորագոյն քան զմորթն իցէ , եւ մազն ի սպիտակ դարձեալ իցէ , պղծեաց զնա քահանայն . զի բորստութիւնն ընդ կեղոյն

21 բորբոքեալ : Իսկ եթէ անսանիցէ քահանայն եւ չիցէ ի նմա մազ սպիտակ , եւ ոչ խորագոյն իցէ քան զմարմինն , եւ ինքն չլագոյն իցէ , գատուցէ զնա քահանայն

22 զեւթն օր : եթէ փութեցի ընդ մորթն , պղծեաց զնա քահանայն . քանզի արած ⁴բորստութեան ընդ կեղոյն բորբոքեցաւ :

23 Ապա եթէ անդէն ի անդու ի կացցէ փայլիւնն եւ ոչ տարածեցի , սպի կեղոյն է . սրբեացէ զնա քահանայն :

24 Եւ մարմնոյ եթէ լինիցի ի մորթ նորա այրեցած հրոյ , եւ լինիցի ողջացեալ մորթ նորա յայրեցածէ անտի , եւ լինիցի անդի այրեցածին փայլուն կամ պաղպաղ սպիտակ , կամ կարմրացեալ ,

25 կամ լսնացեալ , եւ անսանիցէ զնա քահանայն , եւ անա փութեալ իցէ մազն ի սպիտակ ի փայլուն , եւ անտի նորա զիջագոյն իցէ քան զմորթն , բորստու-

թիւն է ընդ այրեցածին բորբոքեալ . եւ պղծեացէ զնա քահանայն , զի արած

26 բորստութեան է : եւ եթէ անսանիցէ քահանայն , եւ անա չիցէ ի նմա փայլիւն ինչ կամ մազ սպիտակ , եւ ոչ զնաստագոյն քան զմորթն , լայց չլագոյն իցէ , գատուցէ զնա քահանայն զեւթն

27 օր : եւ տեսցէ զնա քահանայն յաւուրն եւթներորդի , եթէ փութելով փութեալ իցէ ընդ մորթն , պղծեացէ զնա քահանայն . զի արած բորստութեան է ⁵ընդ

28 կեղոյն բորբոքեալ : եւ եթէ ի նմին անդու կացցէ փայլիւնն եւ ոչ փութեցի ընդ մորթն , եւ ինքն չլագոյն իցէ , սպի այրեցածոյն է . սրբեացէ զնա քահանայն . զի զրոյժ այրեցածոյն է :

29 Եւ անն կամ կնոջ⁶ եթէ լինիցի արած ⁷բորստութեան ի զլուսի կամ ի մորուս ,

30 եւ անսանիցէ քահանայն զարածն , եւ անա տեսիլ նորա զնաստագոյն իցէ քան զմորթն , եւ ի նմա մազ աղուամզ խարտեչացեալ , պղծեաց զնա քահանայն . քանզի ⁸հարած է , բորստութիւն զլուսի է ,

31 կամ բորստութիւն մորուսոյ : եւ եթէ անսանիցէ քահանայն զարած հարածոյն , եւ անա չիցէ զնաստագոյն անտիւն քան զմորթն , եւ ոչ մազ ⁹խարտեչացեալ ի նմա , գատուցէ քահանայն զարած հա-

32 րածին զեւթն օր : եւ անսանիցէ քահանայն զարածն յաւուրն եւթներորդի . եւ անա չիցէ աարածեալ հարածն ընդ մորթն , եւ մազ խարտեչացեալ չիցէ ի նմա , եւ ոչ անտիլ հարածոյն զնաստագոյն իցէ

33 քան զմորթն , ¹⁰Գերծցէ զնա , բայց զհարածն մի զերծցէ . եւ գատուցէ քահանայն զարածն զեւթն օր կրկին անդամ

34 Եւ անսանիցէ քահանայն զարածն յաւուրն եւթներորդի . եւ անա չիցէ փութեալ հարածն ընդ մորթն ¹¹յեա զերծանելոյն զնա , եւ անտիլ հարածոյն չիցէ զնաստագոյն քան զմորթն , սրբեացէ զնա քահանայն . եւ լուսեցեալ զձորձս իւր՝ եղիցի

35 սուրբ : Ապա թէ փութելով փութեցի հարածն ընդ մորթն յեա ¹²զերծելոյն զնա ,

36 եւ անսանիցէ զնա քահանայն . եւ անա փութեալ իցէ հարածն ընդ մորթն , մի զարմանեացէ քահանայն վասն խարտեչ

37 մագոյն , զի պիղծ է : Իսկ եթէ կացցէ ի անդու ¹³հարածն , եւ մազ թուսի

¹ Եբբ. մի՛ փակեցէ ² Եբբ. անդէն յաւուրն , աչաց ³ Եւ յաւուրն սրբեացէ թէ ուրբ է : ⁴ Եւ յաւուրն ⁵ Եբբ. է այն

⁶ Եբբ. զ-ի-ի-ի ⁷ Եբբ. զ անդու թիւն . յաղիւն է ⁸ Եւ սրբեացէ ⁹ Եբբ. թուսի ¹⁰ Եբբ. Գերծցի ¹¹ Եբբ. սրբեցի

եկեացէ ի նմա, ողջացաւ հարածն. սուրբ է, և սրբեսցէ զնա քահանայն :

38 Եւ առն կամ կնոջ եթէ լինիցի ի մորթ մարմնոյ իւրոյ փայլուն ինչ փայ-

39 լածիւն ընացեալ, Եւ տեսանիցէ քահա- նայն, և ահա ի մորթ մարմնոյ նորա փայ- լիւն փայլածուն ընացեալ, թեփուկ է տա- րածեալ ի մորթ մարմնոյ իւրոյ. սուրբ է :

40 Եւ եթէ մաշտեսցի զլուխ ուրուք՝

41 կունա է, սուրբ է : Եւ եթէ յերեսաց կողմանէ մաշտիցի զլուխ նորա՝ ձեզ է,

42 սուրբ է : Ապա թէ լինիցի ի կնտութեան նորա կամ ի ձեզութեան արած սպիտակ կամ կարմրացեալ, բորտութիւն թա- քուցեալ է ի կնտութեան նորա կամ ի

43 ձեզութեան : Եւ տեսանիցէ զայն քա- հանայն. և ահա տեսիլ արածին սպի- տակ իցէ կամ կարմրադոն ի կնտու- թեան նորա կամ ի ձեզութեան, իբրև զտեսիլ բորտութեան ի մորթ մարմնոյ

44 նորա, Այբ բորտեալ է, պիղծ է. պղծելով պղծեսցէ զնա քահանայն. զի ի զլուխ իւրում է արածն իւր :

45 Եւ բորտ յորում իցէ արած, հան- զերծ նորա քակեալ լիցի, և զլուխ նո- րա մերկ, և զբերան իւր պատեսցէ,

46 և պիղծ կոչեսցի՝ : Չամենայն աւուրս որչափ իցէ ի նմա արածն, պիղծ եկիցի. և պիղծ է, մեկնեալ նստցի. և արտա- քոյ բանակին եկիցի բնակութիւն նորա :

47 Եւ ձորձ յորում լինիցի արած բորտ- ատութեան, եթէ ի ձորձ ասուի, եթէ ի

48 ձորձ կաւուի, եթէ յառէջ, եթէ ի թե- զան, եթէ ի կաւուիս և եթէ յասուիս, եթէ ի մորթ և եթէ յամենայն մաշկ

49 գործոյ, Եւ լինիցի արած կանաչացեալ կամ կարմրացեալ ի մորթ կամ ի հան- զերծ, կամ յառէջ կամ ի թեզան, կամ յամենայն մորթ գործոյ, կամ յանօթ ինչ, արած բորտութեան իցէ, և

50 ցուցցէ քահանային : Եւ տեսցէ քահա- նայն զարածն, և զատուցէ քահանայն

51 զարածն զեւթն օր : Եւ տեսցէ քահա- նայն զարածն յաւուրն եւթնկորովի. եթէ տկուեալ իցէ արածն ընդ ձորձն կամ ընդ առէջ կամ ընդ թեզան կամ ընդ կաւուիս կամ ընդ ասուիս կամ՝ ընդ մորթ, ըստ ամենայնի որպէս և զոր- ծիցի մորթ ի գործ, ճնակ բորտու-

52 թիւն է արածն. պիղծ է և սպրեացէ

զձորձան եթէ առէջ իցէ, և եթէ թե- զան, յատուեաց կամ ի կաւուեաց կամ յամենայն մաշկեղէն նիւթոյ, յորում իցէ արածն. քանզի՝ ճնակ բորտութիւն

53 է, հրով այրեսցի : Ապա թէ տեսանիցէ քահանայն և չիցէ տկուեալ հարածն ընդ հանդերձն կամ ընդ առէջն կամ ընդ թեզանն կամ ընդ յաւուն կամ ընդ կր- ատուն կամ ընդ՝ ամենայն անօթ մաշ-

54 կեղէն, Հրաման տացէ քահանայն, և լուսացն յորում իցէ արածն. և զա- տուցէ քահանայն զարածն զեւթն օր

55 երկիցս անդամ : Եւ տեսցէ քահանայն յաւ լուսնայոյ զարածն. եթէ չիցէ փոխեալ տեսիլ արածին, և ոչ տկուեալ իցէ արածն, պիղծ է, հրով այրեսցի. զի հաստատեալ է ի հանդերձին կամ

56 յառէջն կամ ի թեզան : Եւ եթէ տե- սանիցէ քահանայն և չլազոյն իցէ ա- րածն յաւ լուսնայոյն զնա, պատա- ւեսցէ զայն ի հանդերձէ անտի կամ ի մորթոյն կամ յառիջէ կամ ի թեզանոյ :

57 Ապա թէ զարձեալ երևեսցի ի հանդեր- ձին կամ յառէջ կամ ի թեզան կամ յամենայն անօթ մաշկեղէն, բորտու- թիւն բորտքեալ է. հրով այրեսցի յո- րում իցէ արածն : Եթէ հանդերձ իցէ, և եթէ առէջ, և եթէ թեզան, և եթէ ամենայն անօթ մաշկեղէն որ լուս- նայցի և ելանիցէ ի նմանէ արածն,

59 կրկին լուսացի և սուրբ լիցի : Այս օ- րէն իցէ արածի բորտութեան ասուեաց հանդերձի կամ կաւուոյ կամ առիջոյ կամ թեզանոյ կամ ամենայն մաշկեղէն անօթոյ, ի սրբել կամ ի պղծել զնա :

ԳԼ. ԺԴ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և առէ,

2 Այս օրէն եկիցի բորտի յաւուր յորում

3 սրբեսցի. Աձցի առ քահանայն. Եւ ել- ցէ քահանայն արտաքոյ բանակին, և տեսանիցէ քահանայն. և ահա բժշկե- ցեալ իցէ արած բորտութեանն ի բորտ-

4 սէ անտի, Հրաման տացէ քահանայն, և առցն սրբելոյն երկուս հուս կնու- զանիս սուրբ, և փայտ եղեւնեալ և

5 կարմիր մանեալ՝ և զուպա Եւ հրաման տացէ քահանայն, և սպանցեն զմի հաւն յանօթ խեցեղէն ի վերայ ջրոյ կնու-

6 զանուոյ : Եւ զհաւն կնեզանի առցէ, և

1 Եբբ. գոչեսցէ՝ Պիղծ, պիղծ 2 Յեբբ. զ-տ-տ 4 Եբբ. փտութիւն է ի ներքոյ նորա, կամ արտա- քոյ նորա 5 Եբբ. որդան կարմիր

զիպայն եղեւնեաց եւ ¹զկարմիրն մանեալ¹ եւ զգոպայն, եւ թացցէ զնոսա եւ զհաւն կենդանի յարիւն հաւուն սպանեւ 7 յոյ ի վերայ ջրոյն կենդանուոյ : Եւ ցանեացէ ի վերայ սրբերոյն ի բորտաութենէ եւ թն անգամ, եւ սրբեացէ զնա : եւ սրբ 8 ձակեացէ զհաւն կենդանի ի գաշտ : Եւ լուսացէ ²սրբեալն զձորձա իւր, եւ զերծցէ զամենայն զմագ իւր, եւ լուսայլի ջրով եւ սուրբ լիցի : եւ ապա մացէ ի բանակն, եւ լիցի արտաքոյ ասան իւրոյ զեւթն օր : 9 Եւ յաւուրն եւ թն երորդի զերծցէ զամենայն զմագ իւր եւ զգլուխ եւ զօրուս եւ զշոնս, եւ զամենայն զմագ իւր զերծցէ : եւ ողորկեացէ զհանդերձա իւր, եւ լուսացէ զմարմին իւր ջրով, եւ սուրբ լիցի :

10 Եւ յաւուրն ութ երորդի առցէ երկուս զատինս անարատա ³տարեւորս, եւ որով մի անարատ տարեւոր, եւ երկու տասանորդս նաչնոյ ի զոճ իւզով զանգեալ, եւ 11 ճաշակ մի իւզոյ : Եւ կացուացէ քահանայն որ սրբիցէ՝ զայրն որ սրբիցի, եւ ⁴զայն՝ առաջի՝ խորանին վրայութեան :

12 Եւ առցէ քահանայն զմի զոճն, եւ մասուսացէ զնա վասն յանցանաց, եւ զճաշակն իւզոյ, եւ ⁵նուիրեացէ զայն նուէր՝

13 առաջի՝ Տեառն : Եւ սպանցէ զգառնն ³զմեւս ի տեղուջն ուր սպանանիցին զողջակէզն եւ զվասն մեղացն ի սուրբ տեղուջն : զի որպէս որ վասն մեղացն իցէ, նոյնպէս եւ որ վասն յանցանացն իցէ, եւ եզիցի քահանայն : զի սրբութիւնս 14 սրբութեանց է : Եւ առցէ քահանայն յարեւնէ այնր որ վասն յանցանացն իցէ, եւ զիցէ քահանայն յարեւնէ անտի ի վերայ բլթակի աջոյ ունկան այնորիկ որ սրբիցին, եւ ի վերայ ⁶ծայրի աջոյ ձեռին նորա

15 եւ ի վերայ ⁶ծայրի ոտին նորա աջոյ : Եւ առեալ քահանային ի ճախոյէ անտի իւզոյ՝ արկցէ ի ճախոյ ձեռն քահանային :

16 Եւ թացցէ քահանայն զմասն իւր աջոյ յիւզոյ անտի որ իցէ ի ձեռին իւրում ձախոյ, եւ ցանեացէ մասամբ իւրով եւ թն 17 անգամ առաջի Տեառն : Եւ զմնացեալ եւզն ի ձեռին իւրում՝ զիցէ քահանայն ի վերայ բլթակի աջոյ ունկան այնորիկ որ սրբիցին իցէ, եւ ⁷ի ծայրի աջոյ ձե-

ռին նորա, եւ ⁷ի ծայրի աջոյ ոտին նորա, ի տեղուջն արեանն յանցանաց : Եւ զմնացեալ եւզն ի ձեռին քահանային՝ զիցէ քահանայն ի վերայ գլխոյ սրբեցելոյն, եւ քաւեացէ վասն նորա քահանայն 19 առաջի Տեառն : Եւ արասցէ քահանայն զվասն մեղացն, եւ քաւեացէ քահանայն վասն այնորիկ որ սրբիցին իցէ ի մեղաց իւրոյ, եւ ապա սպանցէ քահանայն զողջակէզն : Եւ նանցէ քահանայն զողջակէզն եւ զպոճն ³առաջի Տեառն՝ ի սեւզանն, եւ քաւեացէ վասն նորա քահանայն, եւ սրբեցի :

21 Եւ եթէ ազքատ իցէ եւ չգտանիցէ ձեռն իւր, առցէ գառն մի վասն յանցանաց ⁸զոր յանցեաւ ի նուէր՝ ի քաւելոյ վասն նորա, եւ զտասանորդ նաչնոյ իւզով զանգեալ 22 ի զոճ, եւ ճաշակ մի իւզոյ : Եւ երկուս տատրակս կամ երկուս ձագս աղաւնեաց, որչափ ինչ ելիտ ձեռն նորա, եւ եզիցի 23 մին վասն մեղաց, եւ մին յողջակէզ : Եւ տարցի զայն յաւուրն ութ երորդի տա քահանայն, առ ի սրբելոյ զնա առ զրան խո 24 րանին վրայութեանս առաջի Տեառն : Եւ առեալ քահանային զգառնն զվասն յանցանաց, եւ զճաշակն իւզոյ, եւ ⁹զիցէ նուէր՝ առաջի Տեառն : Եւ սպանցէ զգառնն զվասն յանցանաց, եւ առցէ քահանայն յարեւնէ անտի՝ որ վասն յանցանացն իցէ, եւ զիցէ ի վերայ բլթակի աջոյ ունկան սրբեցելոյն, եւ ⁷ի ծայրի աջոյ ձեռին նորա, եւ ⁷ի ծայրի աջոյ ոտին 26 նորա : Եւ յիւզոյ անտի արկցէ քահանայն ի ճախոյ ձեռն քահանային : Եւ ցանեացէ քահանայն մասամբն աջոյ յիւզոյ անտի որ իցէ ի ճախոյ ձեռին իւրում՝ 28 եւ թն անգամ առաջի Տեառն : Եւ զիցէ քահանայն յիւզոյ անտի որ իցէ ի ձեռին իւրում ի վերայ բլթակի աջոյ ունկան սրբեցելոյն, եւ ի վերայ ⁶ծայրի աջոյ ձեռին նորա, եւ ի վերայ ⁶ծայրի աջոյ ոտին նորա, ի տեղուջն արեանն որ վասն 29 յանցանացն իցէ : Եւ զմնացեալ եւզն որ իցէ ի ձեռին քահանային՝ արկցէ ի գլուխ սրբեցելոյն, եւ քաւեացէ վասն նորա քահանայն առաջի Տեառն : Եւ արասցէ զմի ի տատրակայ անտի կամ ի ձագուցն աղաւնեաց՝ ըստ ընչին զոր ելիտ ձեռն 31 իւր, Զմին՝ վասն մեղաց, եւ զմին յողջակէզ զանգեալ զոճն : Եւ քաւեացէ քա-

¹ Եբբ. զորքան կարմիրն ² Եբբ. որ սրբին ³ Եբբ. զիւրեւ ⁴ Եբբ. զնոսա առաջի Տեառն ի զրոն ⁵ Եբբ. երեւեացէ զնոսա երեւումն ⁶ Եբբ. բուծոյ ⁷ Եբբ. ի բուծի

⁸ Եբբ. յերեւումն ⁹ Եբբ. երեւեացէ զնոսա քահանայն յերեւումն

հանայն վասն սրբեցելոյն առաջի Տեառն :
 32 Այս օրէն իցէ յորում իցէ արած բորոտութեան , եւ այս ոչ գտանիցի ի ձեռին բաւական լինելոյ ի սրբութիւն իւր :
 33 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ
 34 Ահարոնի եւ ասէ , Յորժամ մտանիցէք յերկիրն Քանանացոց զոր ես ասայ ձեզ ի ստացում , եւ մտցցեմ արած բորոտութեան ի տունս երկիրն ստացուածոյ
 35 ձերոյ , եւ զայցէ որոյ տունն իցէ , եւ պատմիցէ քահանային եւ ասիցէ , եթէ
 36 Արած ինն երեւեցաւ ի տան իմում : Հրաման տայէ քահանայն թափել զառնն , մինչև եւ մտեալ իցէ քահանային տեսանել զառնն , եւ մի պղծեացէ զամենայն ինչ որ ի տանն կայցէ . եւ ասայ մացէ
 37 քահանայն սրտնել զառնն . եւ տեսանիցէ քահանայն զարածն յորմս տանն , զնստագոյնս , կանաչս կամ կարմրացեալս , եւ տեսից նորա զնստագոյն իցէ
 38 քան զորմոցն , եւ ելեալ քահանայն ի տանն անտի ի դռնն տանն , զատուցէ
 39 քահանայն զառնն զեւթն օր : եւ եկեաց զարձեալ քահանայն յառուրն եւթնբորոգի , եւ տեսանիցէ զառնն . եթէ սպիւնայ
 40 իցէ սպածն ընդ որմս տանն , Հրաման տայէ քահանայն , եւ քակեացին զքարինսն յորս արածն իցէ , եւ հանցին զնստարտաքոյ քաղաքին ի տեղի անսուրբ :
 41 եւ քերեացին զառնն ի ներքոյ շուրջանակի , եւ հեցցին զքերուածն արտաքոյ
 42 քաղաքին ի տեղի անսուրբ : եւ ասցին այլ քարինս ¹ քերածոյս , եւ զիցին փոխանակ այնց քարանց , եւ այլ հող սու
 43 ցին եւ ձեփուցցին զառնն : եւ եթէ անգրէն կրկնեացի արածն , եւ երեւեացի ի տանն յետ զքարինսն քակելոյ եւ զառնն
 44 քերելոյ եւ ¹ միւտանգամ ձեռելոյ , Մացէ քահանայն եւ տեցէ , եթէ սպիւնայ իցէ արածն ընդ տունն , զնախ բորտութիւն
 45 է ի տանն , պիղծ է : Քակեացին զառնն եւ զփայտ նորա եւ զքարինս նորա եւ զամենայն հող տանն , եւ հանցին ար
 46 տաքոյ քաղաքին ի տեղի անսուրբ : եւ որ մտանիցէ ի տունն զամենայն աւուրս զառննելոյ նորա , պիղծ լիցի մինչև երկ
 47 րեկոյ : եւ որ ննջիցէ ի տան անդ լուսացէ զձորձս իւր , ¹ եւ պիղծ լիցի մինչև երկ
 րեկոյ . եւ որ կերիցէ ի տանն լուսացէ զձորձս իւր , ¹ եւ պիղծ լիցի մինչև երկ

րեկոյ :
 48 Եւ եթէ եկեալ մտանիցէ քահանայն եւ տեսանիցէ , եւ ահա չիցէ սպիւնայ արածն ընդ տունն յետ ձեփուրց զառնն , սրբեացէ քահանայն զառնն ,
 49 զի բժշկեցաւ արածն : եւ ասացէ առ ի սրբելոյ զառնն երկուս հաւս ¹ կենդանիս սուրբս , եւ փայտ եղեւնեայ եւ ³ կար
 50 միր մանեայ" եւ զոպայ : եւ սպանցէ զմի հաւն յաման խեցեղէն ի վերայ ջրոյ կեն
 51 զանուոյ : եւ ասացէ զփայտն եղեւնեայ եւ ⁴ զկարմիրն մանեայ" եւ զգոպայն եւ զհաւն կենդանի , եւ թացցէ զնստա յարեան հաւուն սպանելոյ եւ ի վերայ ջրոյ կենդանուոյ , եւ յամեացէ նորք զտամբն
 52 եւ թն սնդամ . եւ սրբեացէ զառնն արեամբ հաւուն եւ ջրովն կենդանեաւ եւ հաւուն կենդանեաւ եւ փայտին եղեւնեաւ եւ զոպային եւ ⁵ կարմրովն ման
 53 նելով" . եւ արձակեացէ զհաւն կենդանի արտաքոյ քաղաքին ի դաշտ , եւ քաւեացէ վասն տանն , եւ մաքրեացի ¹ եւ
 54 սուրբ եղիցի" : Այս օրէն լիցի ըստ ամենայն արածոյ բորտութեան եւ հաւ
 55 րածի , եւ բորտութեան հանդերձի եւ
 56 տան , եւ սպւոյ եւ պալարի եւ սպաղ
 57 պաջոյ : Նշանակելոյ թէ յորում աւուրս պղծիցի եւ յորում աւուրս սրբիցի , այս օրէն լիցի բորտութեան :

ԳԼ . ԺԵ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ Ա
 2 հարոնի եւ ասէ , Խօսեաց ընդ որդեաց Իսրայելի եւ ասացանց ցրտաց , Առն ուր
 3 նոյ իւրոյ , ծորումն իւր պիղծ է : եւ այս
 4 օրէն լիցի սրբութեան նորա , որոյ ծորիցէ սերմն ի մարմնոյ իւրմէ , կամ թէ հայիցի մարմին նորա ի ծորելոյնս . պղծութիւն իւր ի նմա է զամենայն աւուրս ծորելոյ մարմնոյ իւրոյ , կամ թէ հայիցի մարմին նորա ի ծորելոյ անտի" , պղծու
 5 թիւն մարմնոյ է այն : Ամենայն անկողին յորում ննջիցէ սերմնակաթն՝ պիղծ եղիցի . եւ ամենայն յորոյ վերայ նստիցի՝
 6 պիղծ լիցի : եւ մարդ որ մերձեացի յանկողին նորա՝ ողորկեացէ զձորձս իւր , եւ լուսացի ջրով , եւ պիղծ լիցի մինչև երկ

1 ՅԵՐ. Գ-Կ-ԻԷ 2 ԵՔ. զայրացեալ

³ ԵՔ. որդան կարմիր ⁴ ԵՔ. զորդան կարմիրն
⁵ ԵՔ. որդան կարմիրն ⁶ ԵՔ. լինիցի պղծութիւն նորա ի ծորման իւրում . եթէ հասեացէ մարմին նորա զծորումն իւր , կամ թէ կացցէ մարմին նորա ի ծորելոյն

6 րեկոյ : Եւ որ նստիցի ի վերայ անօթոյ յորում նստեալ իցէ սերմնակաթին , ոգոզեացէ զհանգերծս իւր եւ լուսացի ջրով ,
 7 եւ պիղծ լիցի մինչև երեկոյ : Եւ որ մերձեացի ի մարմին սերմնակաթին , ոգոզեացէ զձործս իւր , եւ լուսացի ջրով ,
 8 եւ պիղծ լիցի մինչև երեկոյ : Եւ եթէ թուք սերմնակաթին հասանիցէ ի սուրբն , ոգոզեացէ զձործս իւր , եւ լուսացի ջրով ,
 9 եւ պիղծ լիցի մինչև երեկոյ : Եւ ամենայն համեա ՚իչոյ յորոյ վերայ նստիցի սերմնակաթին՝ պիղծ լիցի ՚մինչև երեկոյ :
 10 Եւ ամենայն որ մերձեացի յամենայն որ ինչ ՚ի ներքոյ նորա իցէ , պիղծ լիցի մինչև ²երեկոյ : Եւ յոր ինչ մերձեացի սերմնակաթին եւ զձեռս իւր ոչ լուսնացէ ջրով , ոգոզեացէ զհանգերծս իւր , եւ լուսացէ զմարմին իւր ջրով , եւ
 12 պիղծ լիցի մինչև երեկոյ : Եւ անօթ խեցեղէն յոր մերձեացի սերմնակաթին , փշրեսցի , եւ ամենայն անօթ փայտեղէն լուսացի ջրով , ՚և եղիցի սուրբ :
 13 Եւ եթէ սրբեցի սերմնակաթին ի բլղումանէ իւրմէ , համարեսցի իւր եւ ի՞նչ որ ի սրբութիւն իւր , եւ ոգոզեացէ զհանգերծս իւր , եւ լուսացէ զմարմին իւր
 14 ջրով կենդանեալ , եւ եղիցի սուրբ . Եւ յաւուրն ութերորդի ասցէ երկուս աստրակա կամ երկուս ձաղա ազաւնեաց , եւ տարցի զայն առաջի Տեառն ի դուսն խորանին վկայութեան , եւ տացէ յբաշտ :
 15 Նայն : Եւ արտացէ քահանայն զմին վտան մեղաց , եւ զմին՝ յողջակէլ , եւ քաւեացէ վտան նորա քահանայն առաջի Տեառն ի բլղումանէ անտի նորա :
 16 Եւ այր ոք յորմէ ելանիցէ արութիւն սերման , լուսացէ զամենայն մարմին իւր
 17 ջրով , եւ պիղծ լիցի մինչև երեկոյ : Եւ ամենայն հանգերձ եւ սնուչ յորոյ վերայ հասանիցէ արութիւն սերման , լուսացին ջրով , եւ պիղծ լիցին մինչև երեկոյ :
 18 Եւ կին ընդ որում հարկանիցի այր արութեամբ սերման , լուսացին ջրով , եւ պիղծ լիցին մինչև երեկոյ :
 19 Եւ կին որոյ ³բլղիցէ արիւն , եւ լիւնիցի բլղուտն արեան՝ նորա ի մարմնի իւրմէ , դեւթն որ եղիցի ի գաշտանի իւրում . ամենայն որ հարկանիցի ընդ նա ,

20 պիղծ լիցի մինչև երեկոյ : Եւ ամենայն յորոյ վերայ ննջիցէ ի գաշտանին իւրում , եւ ամենայն յորոյ վերայ նստիցի՝ պիղծ
 21 լիցի : Եւ ամենայն որ մերձենայցէ յանկողին նորա , ոգոզեացէ զհանգերծս իւր , եւ լուսացէ զմարմին իւր ջրով , եւ պիղծ
 22 լիցի մինչև երեկոյ : Եւ ամենայն որ մերձենայցէ յամենայն անօթ յորոյ վերայ նստիցի նա , ոգոզեացէ զհանգերծս իւր , եւ լուսացի ջրով , եւ պիղծ լիցի
 23 մինչև երեկոյ : Եւ եթէ ասկաւին յանկողին իւրում իցէ , եւ կամ թէ ի վերայ անօթոյ իրիք յորոյ վերայ նստեալ իցէ , ի մերձեացոյ ուրուք ի նա՝ պիղծ
 24 լիցի մինչև երեկոյ : Եւ եթէ ննջեալ ոք ննջեացէ ընդ նմա , եւ պղծութիւն նորա ի նմա իցէ , պիղծ լիցի վեւթն որ , եւ ամենայն անկողին յորոյ վերայ եւ ննջիցէ՝ պիղծ լիցի ՚մինչև երեկոյ :
 25 Եւ կին որ բլղիցէ զբլղուտն արեան գաւուրս բարուսն , ոչ ի ժամանակի գաշտանի իւրոյ , եւ եթէ բլղիցէ յետ գաշտանին իւրոյ , ամենայն աւուրք բլղուտն պղծութեան իւրոյ , այնպէս իցեն իրբեւ դուստրս զաշտանին իւրոյ , եւ
 26 եղիցի պիղծ : Եւ ամենայն անկողին յորոյ վերայ ննջիցէ զամենայն աւուրս բլղուման իւրոյ , ըստ անկողնի գաշտանին իւրոյ լիցի անսուրբ , եւ ամենայն անօթ յորոյ վերայ նստիցի՝ պիղծ լիցի ըստ պղծութեան աւուր գաշտանին իւրոյ :
 27 Եւ ամենայն որ մերձեացի ի նա՝ պիղծ լիցի , եւ ոգոզեացէ զձործս իւր , եւ լուսացէ զմարմին իւր ջրով , եւ պիղծ
 28 լիցի մինչև երեկոյ : Այս թէ սրբեցի ի բլղումանէ անտի , համարեսցի իւր աւուրս եւ ինչ , եւ ասոս սրբեցի : Եւ յաւուրն ութերորդի ասցէ իւր երկուս աստրակա կամ երկուս ձաղա ազաւնեաց , եւ տարցի զայն առ քահանայն ի դուսն
 30 խորանին վկայութեան : Եւ արտացէ քահանայն զմին վտան մեղաց , եւ զմին յողջակէլ . եւ քաւեացէ վտան նորա քահանայն առաջի Տեառն ի բլղումանէ պղծութեան նորա :
 31 Եւ զգուշապոյնս աննիցէք զսրբիւն Իսրայելի ի պղծութեանց իւրեանց . եւ ոչ մեռանիցին վտան անարութեան իւրեանց , առ ի պղծելոյ նոցա զխորանն իմ
 32 որ է ի նոստ : Այս օրէն իցէ սերմնակաթին , եւ եթէ կլանիցէ յաւուրք սրբութիւն սերման՝ առ ի պղծելոյ նովալ , եւ
 33 թիւն սերման՝ առ ի պղծելոյ նովալ , եւ

¹ Յեբր. զաւուրս ² Յեբր. երեկոյ Եւ որ բառնայցէ զնոստ՝ լուսացէ զձործս իւր . Եւ լուսացի ջրով , եւ պիղծ լիցի մինչև երեկոյ ³ Յեբր. իցէ բլղուտն , արիւն իցէ բլղուտն

տեոստեոսի ի դաշտանի իւրում, եւ սերմնակաթմին ի բզլաման իւրում, արուին եւ իզի, եւ առն որ ննջիցէ ընդ դաշտանի:

ԳԼ . ԺԶ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի ¹ եւ ասէ՛, յետ վախճանելոյ ² որդւոցն Ահարոնի, ³ ի մատուցանել նոցա զհօւրն օտար՝ առաջի
 2 Տեառն եւ սատակել . եւ ասէ Տէր ցՄովսէս, Խօսեաց ընդ Ահարոնի ընդ եղբօր քում, եւ մի ⁴ մտոցն յամենայն ժամ ի սրբութիւնն ի ներքս քան զվարագոյրն յանդիման քաւութեանն, որ է ի վերայ ստապանակի վկայութեանն, եւ ոչ մեռանիցի . զի ամոյով երեւեցայց ի վերայ
 3 քաւութեանն: ⁵ Եւ ասպա՛ մտանիցէ Ահարոն ի սրբութիւնն . զուարակաւ յանդուոյ վասն մեղաց, եւ խոյլս յողջակէզ:
 4 Եւ ⁶ պատմուծան կտաւ ի սրբեայ զզեցիցի, եւ անդրափարտիս կտաւ իս ունիցի յանդամս իւր, եւ զօտի կտաւ ի ամեայ ընդ մէջ իւր, եւ խոր կտաւ ի եզեայ ի զլուխ, զի հանդերձ սրբութեան են . եւ լուսացէ ջրով զամենայն մարմին իւր,
 5 եւ զզեցի զնոսա: Եւ ի ժողովրդենէ որդւոցն Բարայելի աոցէ երկուս նոխազս յայծեաց վասն մեղաց, եւ խոյ մի յողջակէզ: Եւ մատուցէ Ահարոն զզուարակն վասն մեղաց իւրոց, եւ քաւեսցէ
 7 վասն իւր եւ վասն սան իւրոց: Եւ աոցէ երկուս նոխազս եւ կացուոցէ զնոսա առաջի Տեառն առ դրան խորանին վախճութեան: Եւ արիցէ Ահարոն ի վերայ երկուց նոխազացն վիճակս, վիճակ մի
 9 Տեառն եւ վիճակ մի արձակելոյ: Եւ մատուցէ Ահարոն զնոխազն յորոյ վերայ լիցէ վիճակն արձակելոյ, եւ կացուցէ
 10 զնա առաջի Տեառն կենդանի, Քաւել՝ նովա՝ առ արձակելոյ զնա յարձակումն, եւ թողոյ զնա յանապատ . ¹ եւ աոցէ նոխազն յինքն զանօրէնութիւնս նոցա յանկոխն՝:
 11 Եւ մատուցէ Ահարոն զզուարակն զվասն մեղաց զիւր, եւ քաւեսցէ վասն իւր եւ վասն սան իւրոց, եւ սպանցէ

12 զզուարակն զվասն մեղացն զիւր: Եւ աոցէ լի բուրուառաւ կայծակունս հրոյ ի սեզանոյ անտի որ է առաջի Տեառն, եւ լցցէ զձեռս իւր խնկով հանդերձանացն մանր ազացելով, եւ տարցի ի ներքս
 13 քան զվարագոյրն: Եւ զիցէ զիտունկն ի վերայ հրոյն առաջի Տեառն, եւ ծածկեսցէ ծուր խնկոյն զքաւութիւնն որ իցէ ի վերայ վկայութեանցն, եւ ոչ մեռանիցի: Եւ աոցէ յարենէ զուարակին, եւ ցանեսցէ մատամբ իւրով ի վերայ քաւութեանն ընդ կողմն արեւելից ընդզէմ քաւութեանն, եւ ցանեսցէ եւթն անգամ յարենէ անտի մատամբ իւրով:
 15 Եւ սպանցէ զնօխազն զվասն մեղաց, որ վասն ժողովրդեանն իցէ ¹ առաջի Տեառն՝ . եւ տարցի յարենէ անտի ի ներքս քան զվարագոյրն, եւ արասցէ զարիւն նորա զոր օրինակ արար զարիւն զուարակին . եւ ցանեսցէ զարիւն նորա ի վերայ ⁸ սեզանոյն յանդիման քաւութեանն:
 16 Եւ քաւեսցէ զսրբութիւնն ի պղծութեանց որդւոցն Բարայելի եւ յանիրաւութեանց նոցա, վասն ամենայն մեղաց նոցա . եւ այսպէս արասցէ ի խորանին վկայութեան, ⁹ ստապելոյ ի նոսա ի մէջ
 17 պղծութեան նոցա: Եւ ամենեւին մարդ ոչ յինիցի ի խորանին վկայութեան ի մըտանել նորա քաւել ի սրբութեանն, մինչև կանիցէ եւ քաւեսցէ վասն իւր եւ վասն սան իւրոց, եւ վասն ամենայն ժողովրդեան որդւոցն Բարայելի: Եւ ելցէ ի սեզանն որ առաջի Տեառն, եւ քաւեսցէ ի վերայ նորա, եւ աոցէ յարենէ զուարակին եւ յարենէ նոխազին, եւ զիցէ ի վերայ եղջերաց սեզանոյն շուրջանակի: Եւ ցանեսցէ յարենէ անտի մատամբ իւրով ի վերայ նորա եւ թն անգամ, եւ մաքրեսցէ զնա, եւ սրբեսցէ զնա ի պղծութեանց որդւոցն Բարայելի:
 20 Եւ վախճանեսցէ առ ի քաւելոյ զսրբութիւնն, եւ զսեզանն, ¹ եւ վասն քահանայիցն սրբեսցէ, ² եւ մատուցէ զնօխազն կենդանի . Եւ զիցէ Ահարոն զձեռս իւր ի վերայ զլսոյ նոխազին կենդանուոյ, եւ խոստովան լիցի ի վերայ նորա զամենայն անօրէնութիւնս որդւոցն Բարայելի, եւ զամենայն անիրաւութիւնս նոցա եւ զամենայն զմեղս նոցա . եւ զիցէ զնոսա ի

¹ Յէբ. գաւ-տ ² Յէբ. երկուց որդւոցն ³ Յէբ. ի մատուցել նոցա ⁴ Յէբ. մաց ⁵ Յէբ. Այսու ⁶ Յէբ. շապիկ ⁷ Յէբ. էլ վիճակն Տեառն, եւ արասցէ զնա վասն մեղաց . (10) Եւ զնօխազն յորոյ վերայ էլ վիճակն արձակելոյ՝ կացուցէ կենդանի՝ առաջի Տեառն, քաւել

⁸ Յէբ. քաւութեանն . ⁹ Յէբ. բնակելոյ

վերայ գլխոյ նոխապին կենդանւոյ . եւ արձակեացէ ի ձեռն տան սրատրատելոյ՝
 22 յանապատ : Եւ սոցէ նոխապն յանձն իւր զանօրէնութիւնս նոցա յերկիր սնկոխ . եւ արձակեացէ զնոխապն յանապատ :
 23 Եւ մոցէ Ահարոն ի խորանն վկայութեան , եւ մերկացի զպատմութեանն կրտաւի զոր զդենայր ի մասնեցն իւրում
 24 ի սրբութիւնն , եւ զիցէ զայն սնկ : Եւ լուսոցէ զմարմին իւր ջրով ի տեղւոջն սրբութեան , եւ զգեցցի զպատմութեանն իւր . եւ կեպ սրտացէ զողջակէզն իւր եւ զողջակէզ ժողովրդեանն , եւ քաւեացէ վասն իւր եւ վասն տան իւրոյ եւ՝ վասն ժողովրդեանն ¹ որպէս վասն քահանայիցն՝ : Եւ զճարպն որ վասն մեղացն իցէ՝ ² հանցեն ի սեղանն՝ :
 26 Եւ որ արձակիցէ զնոխապն ³ ուխտեալ յարձակումն , ողոգեացէ զձորձս իւր , եւ լուսոցէ զմարմին իւր ջրով , եւ ապա մոցէ ի բանակն :
 27 Եւ զղուարակն որ վասն մեղաց , եւ զնոխապն զվասն մեղաց , որոց արիւնն մուծաւ քաւել ի սրբութեանն , հանցեն արտաքոյ բանակին եւ այրեցեն զնոսս հրով , եւ զմորթս նոցա եւ զմխ նոցա
 28 եւ զապաւստ նոցա : Եւ որ այրիցէն զնոսս՝ ողոգեացէ զճանդերձս իւր , եւ լուսացէ զմարմին իւր ջրով . եւ ապա մոցէ ի բանակն :
 29 Եւ եղիցի ձեզ այն օրէն յաւիտենական , յամենանն եւ թնկորդի ի տանն ամսոյն , լլկեսջիք զանձինս ձեր , եւ զամենայն զորձ մի՛ զործիցէք , բնակն եւ
 30 պանդուխտն որ յեցեալ իցէ ի ձեզ : Զի յաւուրն յայնմիկ լինիցի քաւութիւն վասն ձեր՝ առ ի սրբելոյ զձեզ իսմենայն մեղաց ձերոց առաջի Տեառն , եւ սրբես
 31 ջիք : Զի չարաթ չարաթուց է , եւ եւ զիցի ձեզ այն ի հանգիստ . եւ լլկեսջիք զանձինս ձեր , զի օրէն յաւիտենական է :
 32 Եւ քաւեացէ քահանայն զոր օժանիցեն , եւ զորոյ կատարիցեն զձեռս նորա քահանայանալ յետ հօր իւրոյ , եւ զգեցցի զպատմութեանն կտաւի՛ սրատմութեանն
 33 սուրբ . եւ քաւեացէ զսրբութիւն սրբութեանն , եւ զխորանն վկայութեան եւ զսեղանն , եւ քաւեացէ վասն քահանայիցն , եւ վասն ամենայն ժողովրդեանն
 34 քաւեացէ : Եւ եղիցի ձեզ այն օրէն յա-

ւիտենական՝ քաւել վասն որպէսն Իսրայելի յամենայն մեղաց նոցա մի անգամ ³ ի տարւոջ առնիցի .՝՝ որպէս հրամայեաց Տէր Մօսիսիս :

ԳԼ . ԺԵ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մօսիսիս եւ սաէ ,
 2 Խօսեաց զու ընդ Ահարոնի եւ ընդ որպիս նորա եւ ընդ ամենայն որպիսն Իսրայել
 3 լի , եւ ստացեսցն զնոսս , Այս բան է զոր պատաւիրեաց Տէր եւ սաէ . Այր ոք այր յորպէսն Իսրայելի որ սպանանիցէ արջա կամ ոչխար կամ այծ ի բանակի , եւ որ ոք սպանանիցէ արտաքոյ բանակին , ⁴ եւ ի զուսն խորանին վկայութեանն ոչ ածիցէ զայն , առ առնելոյ զնա յողջակէզ վասն վրկութեանն Տեառն ընդունելի ի հոտ սնուչից . եւ որ սպանանիցէ ⁵ արտաքոյ ,՝՝ Եւ ի զուսն խորանին վկայութեանն ոչ ածիցէ առ ի մատուցանելոյ սրատարաք Տեառն յանգիման խորանին վկայութեանն Տեառն , յարիւն համարեցի մարդոյն այնմիկ . որպէս թէ արիւն եւ հեղ . ստատակեցի անձն այն ի ժողովրդիցն իւրմէ . որպէս զի ածիցեն որպիքն Իսրայելի զզոսն իւրեանց՝ զոր ինքեանք սպանանիցեն ի գաշտ , եւ մատուցեն առաջի Տեառն ի զուսն խորանին վկայութեանն առ քահանայն , եւ զենուցուն զնոսս զենուսն վրկութեանն՝ Տեառն :
 6 Եւ ⁶ հեղցէ քահանայն զարիւնն առ սեղանովն յանգիման Տեառն , առ զբան խորանին վկայութեանն , եւ ⁷ հանցեն զճարպն
 7 ի հոտ սնուչից Տեառն : Եւ ոչ եւս զոչիցեն զզոսն իւրեանց սնտակեաց զորոց զհեա ինքեանք սրունկէին . օրէն յաւիտենականն եղիցի ձեզ յազգս ձեր : Եւ ստացեսցն զնոսս , Մարդ ոք մարդ յորպէսն Իսրայելի , եւ յորպէսց կիսց յեցելոց ի ձեզ , որ առնիցէ ողջակէզ կամ ⁹ զո՛հ , Եւ ի զուսն խորանին վկայութեանն ոչ ածիցէ տանկ զնա Տեառն , ստատակեցի մարդն այն ի ժողովրդեանն իւրմէ :
 10 Եւ մարդ ոք մարդ յորպէսց Իսրայելի կամ յեկաց յեցելոց ի ձեզ , որ ուտիցէ զամենայն արիւն , հաստատեցից զերեսս իմ ի վերայ սնձինն որ ուտիցէ զարիւնն , եւ կորուսից զնա ի ժողովրդեանն իւրմէ :
 11 Զի չունչ ամենայն մարմնոյ արիւն իւր

¹ Եբբ. գ-ի-տ-ի ² Եբբ. այրեացէ ի վերայ սեղանոյն

³ Եբբ. ի տարւոջ , եւ տարբ ⁴ Եբբ. սրակեացէ ⁵ Եբբ. այրեացէ

է. եւ ես ետու զայն ձեզ ի սեղանն՝ քա-
 եւել վասն անձանց ձերոց . զի արիւն
 12 ցէ : Վասն այնորիկ սասացի ցորգիւն Լա-
 րայելի , Սամնայն անձն ի ձէնջ արիւն մի՛
 կերիցէ . եւ եկն որ եկեալ յեցեալ իցէ
 13 ի ձեզ՝ արիւն մի՛ կերիցէ : Եւ մարգ ոք
 մարգ յորդուոցն Լորայելի կամ յեկաց յե-
 ցելոց ի ձեզ , որ որսացէ որս երէ ինչ
 կամ թռչուն որ ուտիցի , հեղցէ զարիւն
 14 նորա եւ ծածկեացէ հողով : Զի շունչ ա-
 մենայն մարմնոց արիւն իւր է . եւ սասացի
 ցորգիւն Լորայելի , Զարիւն ամենայն
 մարմնոց մի՛ ուտիցէք , զի շունչ ամե-
 նայն մարմնոց արիւն իւր է . ամենայն
 որ ուտիցէ զայն՝ սաստկեացի :
 15 Եւ ամենայն անձն որ ուտիցէ զմեռե-
 լոտի կամ զգաղանարեկ , ի բնակաց կամ
 ի պանդխտաց , ողորկեաց զհանդերձս իւր ,
 եւ լուսացէ զմարմին իւր , եւ պիղծ լիցի
 մինչեւ ցերեկոյ , եւ սպա սուրբ լիցի :
 16 Եւ եթէ ոչ ողորկեաց զհանդերձս իւր ,
 եւ ոչ լուսացէ զմարմին իւր ջրով , բն-
 կացի զանօրէնութիւնս յանձն իւր :

ԳԼ . ԺԷ

1 Թօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ստէ ,
 2 Խօսեաց ընդ որդիան Լորայելի եւ սասա-
 ցես ցնտա , Ես եմ Տէր Աստուած ձեր :
 3 Ըստ ամենայն գնացից երկրին Եգիպ-
 տացւոց յորում պանդխտեցարուք՝ մի՛
 անիցէք , եւ ըստ գնացից երկրին Քա-
 նանացւոց յոր ես տարայց զձեզ՝ մի՛ առ-
 նիցէք , եւ ըստ օրինաց նոցա մի՛ գնաց-
 4 ցէք : Զիրաւունս իմ արասջիք , եւ
 զհրամանս իմ պահեալիք , գնալ ի նոսա :
 5 Ես եմ Տէր Աստուած ձեր : Եւ պահեա-
 չիք զամենայն հրամանս իմ եւ զամե-
 նայն գիրաւունս իմ , եւ արասջիք զնո-
 սա , զոր արարեալ մարդոց՝ կեցցէ նո-
 քօք . ես եմ Տէր Աստուած ձեր :
 6 Մարգ ոք մարգ առ ամենայն բնու-
 անութիւն մարմնոց իւրոց մի՛ մերձեցի՛
 յայտնել զառականս նորա . ՚Ղի ես եմ
 7 Տէր : Զառականս հօր քո եւ զառականս
 մօր քո մի՛ յայտնեացես . զի մայր քո է ,
 եւ մի՛ յայտնեացես զառականս նորա :
 8 Զառականս կնոջ հօր քո մի՛ յայտնե-
 9 ցես . զի ստականք հօր քում են : Զա-
 րականս քեռ քո , թէ՛ առ ի հօրէ իցէ

կամ առ ի մօրէ , ի տան ճնեալ կամ ար-
 տաքոյ , մի՛ յայտնեացես զառականս նո-
 10 րա : Զառականս դստեր ուստեր քո կամ
 զգտտեր դստեր քո , մի՛ յայտնեացես զա-
 րականս նոցա . զի ստականք քո են :
 11 Զառականս դստեր կնոջ հօր քո մի՛ յայտ-
 նեացես , զի համհօրեայ քոյր քո է . մի՛
 12 յայտնեացես զառականս նորա : Զառա-
 կանս հօրաքեռ քո մի՛ յայտնեացես . զի
 13 բնտանի հօր քո է : Զառականս մօրաքեռ
 քո մի՛ յայտնեացես , զի բնտանի մօր քո
 14 է : Զառականս հօրեղբօր քո մի՛ յայտնե-
 ցես , եւ առ կին նորա մի՛ մտանիցես , զի
 15 սղգական քո է : Զառականս նուոյ քո
 մի՛ յայտնեացես , զի կին որդւոյ քո է .
 մի՛ յայտնեացես զառականս նորա : ՚ՍԵ
 զգուստր ուստեր նորա , կամ զգուստր
 գտտեր նորա մի՛ առնուցուս՝ յայտնել զա-
 րականս նոցա , զի բնտանի են քո . ամ-
 16 պարչտութիւն է : Զառականս կնոջ եղ-
 17 եղբօր քո մ են : Զառականս կնոջ եւ
 զգտտեր իւրոց մի՛ յայտնեացես . զգուստր
 ուստեր նորա եւ զգուստր գտտեր նորա
 մի՛ առնուցուս՝ յայտնել զառականս նո-
 րա , զի բնտանի քո են . ամպարչտու-
 18 թիւն է : Կին առ քերթ իւրով մի՛ առնու-
 ցուս նախանձընդդէմ՝ յայտնել զառա-
 կանս նորա առ նովաւ կենդանւոցն :
 19 Եւ առ կին ի զաշտանի պղծութեան
 իւրոյ մի՛ մտանիցես՝ յայտնել զառականս
 նորա :
 20 Եւ ի կին ընկերի քո մի՛ տացես զա-
 րութիւն սերման քո , առ ի պղծելոյ ընդ
 21 նմա : Եւ ի սերմանէ քումմէ մի՛ տացես
 3ձտոտայել իչխանի՛ , եւ մի՛ պղծեացես զա-
 22 նուն կամ սուրբ . զի՛ ես եմ Տէր : Եւ
 ընդ արուի մի՛ մտանիցես զմուտ կանա-
 23 ջի . զի պղծութիւն է այն : Եւ յամենայն
 անտառն ոչ տացես զարութիւն սերման
 քո առ ի պղծելոյ ընդ նախ . եւ կին մի՛
 կացցէ առաջի ամենայն անաւնոյ մտա-
 րերել ի նա . զի գորչելի է այն :
 24 Եւ մի՛ պղծիցիք այնու ամենայնիւ , զի
 այնու ամենայնիւ պղծեցանս ազգքն , զոր
 25 ես մերժեցիցի յերեսաց ձերոց , եւ ե-
 զեւ գորչելի երկիրն , եւ հանդէս արարի
 սնիրաւութեանց նորա ի նմանէ . եւ
 ստաղակացաւ երկիրն ի բնակչաց իւրոց :
 26 Եւ պահեցէք զօրէնս իմ եւ զամենայն

1ՅԵբ. Գոլոտե

2Եբ. Կին հօրեղբօր 3Եբ. անցուցանել ընդ հաւ
վասն Մոզբայ 4Եբ. Աստուծոյ քո .

հրամանս իմ, եւ մի՛ սոնիցէք յամենայն պզծութեանցն այնոցիկ, ընտկն եւ եկն 27 եւ պանդուխան որ ի ձեզ իցէ . Ձի զայն ամենայն պզծութիւնս արարին մարդիկ երկրին որ էին անդ յառաջ քան զձեզ, 28 եւ պզծեցաւ երկիրն : Ձի մի՛ տագակահայցէ եւ ձեւք երկիրն ի պզծել ձեր գնա, որպէս տագակացաւ ազդօրն որ էին յառաջ քան զձեզ : Ձի ամենայն մարդ որ արասցէ յամենայն պզծութեանցն այնոցիկ, սատակեացին անձինքն որ աւնիցեն զայն ի միջոյ ժողովրդեան իւր- 30 եանց : Եւ պահեա՛լիք զպահպանութիւնս իմ, զի մի՛ սոնիցէք յամենայն պզծութեան օրինացն որ գործեցան յառաջ քան զձեզ . եւ մի՛ պզծիցիք նորօք, զի ես եմ Տէր Աստուած ձեր :

Ղ. ԺԹ

1 Իսուեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ սակ, 2 Խօսեաց ընդ ժողովրդեան որպէս իւրացելի եւ ասացեսցնոսա, Սուրբ եզերութք, զի ես սուրբ եմ Տէր Աստուած ձեր : 3 Իւրաքանչիւր ¹ի հօրէ եւ ի մօրէ՝ իւր մէ երկնչի՛լիք . եւ զչարքախ իմ պահեալիք . զի ես եմ Տէր Աստուած ձեր : 4 Մի՛ երթայցէք գնեա կոոց, եւ աստուածս ձուլածոյս մի՛ սոնիցէք ձեզ . ես եմ Տէր Աստուած ձեր : 5 Եւ եթէ՛ գոհիցէք գոհ ²փրկութեան Տեան, զընդունելիսն ձեր գոհեալիք : 6 Յաւուր յորում մատուցանիցէք՝ կերիցի, եւ ի վազիւ անդր . եւ եթէ՛ մատուցէ մին- 7 չեւ ցօրն երրորդ, հրով այրեսցի : Ապա թէ՛ ուսելով ուսիցի յաւուրն երրորդի, 8 ³անգոհ է, մի՛ ընկալցի : Եւ որ ուսիցէ զայն՝ մեզս աոցէ, զի զարբութիւն Տեան պզծեաց, եւ սատակեացին անձինքն որ ուսիցեն՝ ի ժողովրդեանէ իւրեանց : 9 Եւ ի հնձիկ հնձողաց ձերոց գոհունձս երկրին ձերոց, մի՛ սպառիցէք գոհունձս անոց ձերոց մաս հնձելով . եւ զան- 10 կեայն ի հնձոց քոց մի՛ սպողիսցես : Եւ զայդի քո ճաքազ մի՛ սոնիցես, եւ պողաքազ այգւոյ քո մի՛ լինիցիս . սոնակին եւ պանդխտին թողցես զայն . ես եմ Տէր Աստուած ձեր : 11 Մի՛ գողանայցէք, եւ մի՛ ստիցէք, եւ

մի՛ զրպարտիցէք իւրաքանչիւր զընկեր 12 իւր : Եւ մի՛ երգունցուք սուտ յանուն իմ, եւ մի՛ պզծիցէք զանուն ⁴Տեան Աստուծոյ ձերոյ . ես եմ Տէր ⁵Աստուած ձեր : Մի՛ զրկեսցես զընկեր քո, եւ մի՛ յափշտակեսցես : մի՛ սոնիցէ վարձեկանին առ ըեզ մինչեւ ցաւաւօս : 14 ⁶Չհամրն մի՛ զգուրցես . եւ առաջի կուրին զայթակղութիւն մի՛ գնիցես . եւ երկնչիցիս ⁶ի Տեանէ՛ Աստուծոյ՝ քում մէ . ես եմ Տէր ⁷Աստուած քո՝ : 15 Անիրաւութիւն ի զատաստան մի՛ սոնիցես, եւ սկն աղքատի մի՛ սոնուցուս, եւ մի՛ երեսաց աշտիցես հարստի . արգարութեամբ զատակցիս զընկեր քո : 16 Եւ նենգութեամբ ընդ ազգի քում մի՛ գնայցես . յարիւն ընկերի քո մի՛ յօժարիցես . ես եմ Տէր ⁸Աստուած ձեր : Մի՛ ստեսցես զեզբայր քո ի մտի քում . յանգիմանութեամբ յանդիմանեցես զընկեր քո, եւ մի՛ ընդունիրիս վասն նորս զմեզս : 18 Մի՛ խնդրեսցէ վրէժ ձեան քո . եւ ընդ որպէս ժողովրդեան քո սկս մի՛ ունիցիս, եւ սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո, զի ես եմ Տէր : 19 Չօրէնս իմ պահեալիք . զանասուն քո յօտարխառնս մի՛ խանիցես . եւ ⁷զայլիս քո մի՛ վարեսցես այլեւայլ, եւ ⁸զձորձս երկրիմիս գարշելիս՝ մի՛ արկահիցես զրեւ : 20 Եթէ՛ ոք ննջեացէ ընդ կնոջ արութեամբ սերման, եւ նա իցէ ազախին ⁹պահեալ առն, եւ փրկանօք չիցէ փրկեալ եւ ազատութեամբ չիցէ ազատեալ, հարց եւ փորձ լիցի նոցա . եւ մի՛ մեռանիցին, 21 զի չիցէ ազատեալ : Եւ մատուցէ ընդ յանցանացն իւրոց Տեան առ զրան խոքաւեացէ վասն նորա քահանայն խոյուն յանցանաց ստա՛լի Տեան վասն մեզացն զոր մեզաւ . եւ թողցին նմս մեզքն զոր մեզաւ : 23 Եւ յորժամ մատնիցէք ձերկիրն ⁴զոր Տէր Աստուած տացէ ձեզ, եւ անկիցէք զամենայն վայտ ուսելի, սրբեալիք զպզծութիւն նորա . եւ պառզ նորա զերեամ պիղծ լիցի ձեզ եւ մի՛ կերիցի : 24 Եւ յամին չորրորդի եզիցի ամենայն պառզ նորա սուրբ, օրհնեալ Տեան :

¹Եբբ. ի մօրէ եւ ի հօրէ ²Եբբ. խաղաղութեան ³Եբբ. պիղծ

⁴Եբբ. պ-վ-տ ⁵Լւմ. Ձխուրն ⁶Եբբ. յլլասու- ⁷ծոց ⁸Եբբ. զարտ ⁹Եբբ. ձորձ երկդիմի այլայլախառն ⁹Եբբ. խօսեալ

25 Եւ յամին հինգերորդի կերիջիք զպտուղ նորա . յաւելուած ձեզ լիցին բերք նա-
 26 րա . ես եմ Տէր Աստուած ձեր . ի վերայ ՚լերանց մի՛ սւտիցէք . եւ մի՛ հմա-
 յիցէք . եւ մի՛ հաւանարց եւ մի՛ հուա-
 27 զէաք լինիցիք : Տցունս ի վարսից զլսաց ձերոց մի՛ աննիցէք , եւ մի՛ սպականիցէք
 28 զտեսիլ մօրուաց ձերոց : Եւ վէաս ի վերայ ողւոյ մի՛ աննիցէք ի մարմինս ձեր . եւ գիր կտեալ մի՛ աննիցէք ի ձեզ , ես եմ Տէր ՝Աստուած ձեր՝ :
 29 Մի՛ պղծիցես զգոռատր քո պոռնկեցուցանելով զնա , զի մի՛ պոռնկացի երկիրն , եւ լցի երկիրն անօրէնութեամբ :
 30 Չարաթս իմ պահեսձիք , եւ ի սրբութեանց իմոց երկնիձիք , ՝զի ես եմ Տէր :
 31 Չհետ վհկաց մի՛ երթայցէք եւ ի դէտս մի՛ յարիցիք պղծել նոքօք . ես եմ Տէր Աստուած ձեր :
 32 Առաջի արեաց յաննիցես , եւ պատուեսցես զերես ծերոյն , եւ երկնիցիս յԱստուծոյ բումմէ . ես եմ Տէր ՝Աստուած քո՝ :
 33 Եւ եթէ յարեսցի առ ձեզ եկ յերկրին
 34 ձերում , մի՛ նեղիցէք զնա : Իրբեւ զընամին ձեր լինիցի ձեզ եւ եկն յարեալ ի ձեզ , եւ սիրեսցես զնա իրբեւ զանձն քո . զի պանդուխտք եղերաւք եւ զուք յերկրին Եգիպտոսացոց . ես եմ Տէր Աստուած ձեր :
 35 Մի՛ աննիցէք անիրաւութիւն ի գաւառաւանի , ի չափա եւ ի կշիռս եւ ի
 36 զոյդս : Չոյդք արդարք եւ կշիւք արգարք , եւ ՝չափք արդարք , եւ կասի՞՞ արգար լինիցի ձեր , ես եմ Տէր Աստուած ձեր որ հանի զձեզ յերկրէն Եգիպտա-
 37 ցոց : Եւ պահեսձիք զամենայն զօրէնս իմ եւ զամենայն զհրամանս իմ , եւ արաձիք զնոսա . զի ես եմ Տէր ՝Աստուած :

Գ Լ Ի

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 2 Խօսեաց ընդ սրգիսց Իսրայելի եւ ասասցես , եթէ ոք յորգւոցց Իսրայելի կամ յեկեղոց պանդխտացն Իսրայելի տացէ ՝զգերմն իւր իշխանի՞ , մահու մեռցի . եւ ազգք երկրին քարկոծ արասցեն զնա
 3 քարամբ : Եւ ես հաստատեցից զերեսս իմ ի վերայ մարդոյն այնորիկ , եւ կո-

րուսից զնա ի ժողովրդենէ իւրմէ . զի ես ՝ի սերմանէ իւրմէ իշխանին՝ պղծել զարքս թիւն իմ , եւ զարչեցուցանել զանունն ՝սրբեցելոցն իմոց՝ : Ապա թէ ակնա՞ծելով ակնա՞ծեացն ընակիչք երկրին աչօք իւրեանց յառնէն յայնմանէ՞ ի տալ նորա ՝զգերմն իւր իշխանին՝ չապանանել զնա , Հաստատեցից զերեսս իմ ի վերայ ամեն այնորիկ եւ ի վերայ ազգի նորա , եւ կորուսից զնա եւ զամենայն միաբանեալն ընդ նմա առ ի պոռնկեցուցանելոյ զնոսա ընդ ՝իշխանին՝ ի միջոյ ժողովրդեան իւրեանց : Եւ անձն որ երթիցէ զհետ վհկաց կամ գիտաց՝ պոռնկել զկնի նոցա , հաստատեցից զերեսս իմ ի վերայ անձինն այնորիկ , եւ կորուսից զնա ի ժողովրդենէ իւրմէ : Եւ սրբեաձիք եւ եղիձիք սուրբք , զի ՝սուրբ եմ ես՝ Տէր Աստուած ձեր : Եւ պահեսձիք զհրամանս իմ եւ արաձիք զնոսա . ես եմ Տէր ՝Աստուած ձեր՝ որ սրբեմ զձեզ :
 9 Մարդ ոք մարդ որ հայնցեսցէ զհայր իւր կամ զմայր իւր՝ մահու մեռցի . զհայր իւր կամ զմայր իւր թէ բամբասեսցէ՝
 10 մահապարտ է : Եւ այր ոք եթէ շնացի ընդ առնակնոջ կամ շնացցէ ընդ կնոջ ընկերի իւրոյ , մահու մեռցին եւ շնացողն
 11 եւ շնացեալն : Եւ այր ոք որ ննջիցէ ընդ կնոջ հօր իւրոյ , զառականս հօր իւրոյ յայանեսց . մահու մեռցին երկուքին , զի ամպարչեսցան , եւ մահապարտք են :
 12 Եւ եթէ ննջեսցէ ոք ընդ նուոյ իւրում , մահու մեռցին երկուքին , զի ամպարըչս
 13 սեցան եւ մահապարտք են : Եւ այր ոք եթէ ննջեսցէ ընդ արուի զզործ կանացի , պղծութիւն գործեցին , մահու մեռ-
 14 ցին երկուքին , զի՞ մահապարտք են : Եւ այր ոք որ անուցու զկին եւ զմայր նուրա , անօրէնութիւն է , հրով պղեսցեն զնա եւ զնոսա . եւ մի՛ լինիցի ի ձեզ ա-
 15 նօրէնութիւնս : Եւ այր ոք որ տացէ զարութիւն իւր յանասուն՝ մահու մեռցի ,
 16 եւ զանասունն սպանանիձիք : Եւ կին որ մատչիցի յամենայն անասուն պղծել նմա ի նմանէ , սպանանիձիք զկինն եւ զանասունն . մահու մեռանիցին , զի մահա-
 17 պարտք են : Եւ այր ոք որ անուցու զքոյր իւր զառ ի հօրէ կամ զառ ի մօրէ , եւ տեսանիցէ զառականս նորա , եւ նա տեսանիցէ զառականս նորա , նախա-

1 Եբբ. արեան 2Յեբբ. Գ-1-1-1 3Եբբ. արգու. արգար և հիմեն 4Եբբ. ի գաւազէ իւրմէ Մողբ. 5Եբբ. սրբութեան իմոց 6Եբբ. Մողբաց 7Եբբ. ես եմ

տինք են . սատակեսցին յերեսաց որզւոց ազգին իւրեանց . զի զառականս քեւ իւրոյ յայսնեսաց . ¹Ընկալցին զմեզս իւր-
 18 եանց՝ և ւայր որ ննջիցէ ընդ կնաջ գաշտանի և ւայսնեսցէ զառականս նորա , զի զազրեւր արեան նորա յայսնեսաց , և սա՛ յայտնեսաց զբոլորսն արեան իւրոյ , սատակեսցին ևրկոքիան յազգէ իւրեանց :
 19 և զառականս ճորարեա քո և զօրաւ քեռ քո մի՛ յայսնեսցես . զի զընտանութեան տտականս յայսնեսցին , զմեզս իւրեանց տարցին , ²և անորդիք մեռցին :
 20 և մարդ սք որ ննջիցէ ընդ կնաջ ³քեռուայ իւրոյ , զառականս ³քեռուոյ իւրոյ յայսնեսաց . զմեզս իւրեանց ընկալցին .
 21 և անորդիք մեռցին : և մարդ սք որ առնուցու զկին ելլայր իւրոյ՝ պղծութիւն է . զառականս եզրօր իւրոյ յայսնեսաց . անորդիք մեռցին :
 22 և պահեսցիք զամենայն հրամանս իմ և զամենայն զիրաւունս իմ , և արտաւ ջիք զնոսս , և ես ոչ տալականացի ձեւք երկիրն յոր ևս տարբայ զձեզ ընակել ի
 23 նմա : և մի՛ գնացէք ըստ օրինաց ազգաց զորս մերժեցից ես ի ձէնջ զի զայն ամենայն արարին , և գորչեցայ ես ի
 24 նոցանէն . և ասացի ցձեզ , Դուք ժառանգեցէք զերկիրն զայն , և ես տաց ձեզ զնա ի ստացուած , երկիր որ բզխէ զկաթն և զմեղր . և ես Տէր Աստուած ձեր որ մեկնեցի զձեզ յամենայն ազգաց :
 25 և զատուցիք ²զանձինս ձեր՝ ի մէջ առնանոց սրբոց և անսրբոց , և ի մէջ թռչնոց սրբոց և անսրբոց . և մի՛ պղծեցէք զանձինս ձեր անասնովք և թռչնովք և ամենայն սողնովք երկրի , զոր ես
 26 զատուցի ձեզ ի պղծութիւն : և ելլի՛ջիք ինձ սուրբք , զի սուրբ եմ ես Տէր ³Աստուած ձեր՝ , որ զատուցի զձեզ յամենայն ազգաց լինել ինձ :
 27 և ւայր կամ կին որ լինիցի վնուկ կամ զէտ , մահու մեռցի . քարամբք քարկոծեցէք զնոսս զի մահապարսք են :

ԳԼ. ԻԱ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ , Խօսեաց ընդ որպիսզ Ահարոնի ընդ քահանայս և ասացիս ցցոսս . զի մի՛
 2 պղծիցին յոգիս ազգի իւրեանց , կամ

յրնտանի կամ ի զրացի իւրեանց . այլ կամ ի հայր կամ ի մայր՝ կամ յուստերս
 3 կամ ի գտաերս կամ յեղբայր , կամ ի ⁵քոյր կամ ի զուսար մերձաւոր իւր՝ զոր ասն
 4 չիցէ սուեալ , նոքօք ⁶պղծեսցին : և մի՛ պղծեսցին վայրապար ի ժողովրդեան
 5 իւրում ի պղծութիւն իւրեանց : և մի՛ զերժուցուն զզուլիս իւրեանց ²ի վերայ մեռելոյ՝ ի կնատ ի իւն , և ⁷գտեսիլ մօրուաց մի՛ զերժուցուն , և ի մարմինս
 6 իւրեանց վէտս մի՛ հասանիցեն . Չի սուրբ լինիցին Աստուծոյ իւրեանց , և մի՛ գարչեցուցեն զանուն Աստուծոյ իւրեանց , զի զզոնն Տեսնն , պատարագ Աստուծոյ իւրեանց , նորս մատարացանն . և
 7 եղիցին սուրբք : կին պոսնիկ և պղծեալ մի՛ առնուցուն , և զկին հանեալ յասնէ իւրմէ մի՛ ստնուցուն . զի սուրբ է Տեսնն
 8 Աստուծոյ իւրում : և ⁸արիսցէ զանձն , զի զպատարացն Տեսնն Աստուծոյ ձեւոյ՝ նա մատուցանէ . սուրբ եղիցի , զի
 9 սուրբ եմ ես Տէր՝ որ սրբեմ ⁹զնոսս : և զուսար ասն քահանայի , եթէ ի պոսնըկութեան պղծեսցի , զանուն հօր իւրոյ յամրասեաց . հրով այրեսցի :
 10 և քահանայն մեծ յեղբայր իւրոց , յորոց վերայ զլիտն արկեալ իցէ զիւզն օծութեան և կատարեալ զձիսս նորս զգինույ զպատամուձանն , զզուլիս իւր մի՛ տալտուրեացէ , և զհանպերձս իւր մի՛
 11 պատուեսցէ . և յանձն վախճանեալ մի՛ մայցէ . ի հայր իւր կամ ի մայր իւր մի՛
 12 պղծիցի : և ի սրբութեանց անտի մի՛ ելանիցէ , և մի՛ պղծեսցէ զսրբութիւն Աստուծոյ իւրոյ . զի սուրբ և զն օծութեան որ յԱստուծոյ՝ ի վերայ նորս է .
 13 ²զի ես եմ Տէր : և կին կոյս յազգէ
 14 իւրմէ առնուցու . Չայրի և զհանեալ և զպոսնիկ մի՛ առնուցու . այլ կոյս յազգէ
 15 իւրմէ առնուցու կին , և մի՛ պղծեսցէ զսերմն իւր ի ժողովրդեան իւրում . զի ես եմ Տէր որ սրբեմ զնա :
 16 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ ,
 17 Խօսեաց ընդ Ահարոնի և ասացիս , Այր սք յազգէ քուամէ , յամենայն ազգս ձեր ,

¹Խբբ. ընկալցի զմեզս իւր ²ՅԽբբ. գ-ի-տ-ի ³Կ-մ-Ն ⁴ՅԽբբ. պղծիցի զանն ուրուք ի ժո-

զպղդեան իւրում, (2) Բայց եթէ վասն ազգականի որ մերձաւոր իւր իցէ , ի մայր կամ ի հայր ⁵Խբբ. քոյր կոյս որ մերձաւոր իցէ նմա ⁶Խբբ. պղծեսցի : (4) և մի՛ պղծեսցի , իշխան է ի ժողովրդեան իւրում. ի պղծել զանձն : ⁷Խբբ. զանկիւն ⁸Խբբ. սրբեսցեն զնա , զի զհանցն Աստուծոյ քո ⁹Խբբ. զձեզ

յորում իցէ արատ , մի՛ մատիցէ մատուցանել ¹պատարազ Աստուծոյ իւրոյ .
 18 Զի ամենայն այր յորում իցէ արտա՛ մի՛ մատիցէ , այր կազ կամ կայր կամ կարծ-
 19 ունչ կամ ականջատ , կամ այր ձեռնրեկ
 20 կամ սանրեկ , կամ սասարառոյն կամ ²չիլ կամ սրողակն , կամ այր յորում իցէ քոս
 21 կամ քաղցկեղ կամ միտրձի . Ամենայն այր յորում իցէ արտա , ի զաւակէ Ահարոնի քահանայի , մի՛ մերձեացի մատուցանել զո՞ս ³Աստուծոյ քում . զի արտա զոյ ի նմա , եւ զպատարազն Աստուծոյ
 22 մի՛ մտաչիցի մատուցանել , ⁴Զի պատարազքն Աստուծոյ՝ սրբութիւնք սրբութեանց են . ի՛ սրբութեանց անտի կե-
 23 ըիցէ . Բայց ի վարագոյնն մի՛ մերձեացի , եւ առ սեղանն մի՛ մատիցէ , զի արատաւոր է , եւ մի՛ պղծեացէ զսրբութիւն ⁵Աստուծոյ իւրոյ , զի ես եմ Տէր որ սրբեմ
 24 զնոսա : եւ խօսեցաւ Մովսէս ընդ Ահարոնի եւ ընդ սրգիս նորա , եւ ընդ ամենայն սրգիսն Իսրայելի :

ԳԼ ԻԲ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 2 Աստացիս զԱհարոն եւ զորգիս նորա , եւ զզոյչ լինիցին սրբութեանց որդւոցն Իսրայելի , եւ մի՛ պղծեցեն զանոն իմ սուրբ , զորս նոքայն սրեն ինձ . ⁶զի ես
 3 եմ Տէր : Աստացիս ցնոսա , Յազգս ձեր ամենայն այր լամենայն զաւակէ ձերմէ որ մերձենայցէ ի սրբութիւնն , զոր սրգիցեն որդիքն Իսրայելի Տեառն , եւ պղծութիւն իւր ի նմա իցէ , ստտակեացի անձնն այն յերեսաց իմոց . ⁶զի ես եմ
 4 Տէր : եւ այր ոք ի զաւակէ Ահարոնի քահանայի , եթէ բորոտ կամ սերմնակաթ իցէ , ի սրբութեանց անտի մի՛ կերիցէ մինչեւ սրբեացի . եւ որ մերձեացի յամենայն պղծութիւնն ոգւոյ , եւ կամ այր
 5 յորմէ ելանիցէ արտութիւն սերման , կամ որ մերձենայցէ յամենայն սողուն պիղծ յոր պղծիցեն , կամ ի մարզ որով պղծիցեն զնա՝ ըստ ամենայն պղծութեանն նո-
 6 քա , Անձն որ մերձենայցէ ի նա՝ պիղծ լիցի մինչեւ ցերեկոյ , եւ մի՛ կերիցէ ի սրբութեանց անտի , եթէ ոչ լուանայցէ

7 զմարմին իւր ջրով . եւ մտանիցէ արեգակն , սուրբ լիցի , եւ ասպ կերիցէ ի սրբութեանց անտի , զի նայ նորա է այն :
 8 Զմտեցտի եւ զգազանարեկ մի՛ ուարիցէ՝ պղծել նմա նոքօք . ⁶զի ես եմ Տէր :
 9 եւ պահեցեն զպահպանութիւնս իմ , զի մի՛ ընդունիցին վասն նոցա մեզս , եւ մեռանիցին վասն այնորիկ , եթէ պղծիցեն զնոսա . ⁶զի ես եմ Տէր որ սրբեմ զնոսա :
 10 եւ ամենայն օտարազգի մի՛ կերիցէ զսրբութիւնն , պանդուխտ քահանային եւ վարձկանն մի՛ կերիցեն ի սրբութեանցն : Բայց ի՞նչ քահանայն սասացի ոպի սասցուածով արծաթոյ՝ նա կերիցէ ի նացից անտի նորա . եւ ընտոծինք նո-
 12 քա կերիցեն ի նացից անտի նորա : եւ զուսար անն քահանայի , եթէ լինիցի անն այլազգւոյ , նա ի պաղպ սրբութեանցն
 13 մի՛ կերիցէ : եւ զուսար անն քահանայի , եթէ լինիցի այրի կամ հանեալ , եւ զաւակ ոչ իցէ նորա , եւ զահաւայցէ անզրէն ի առն իւր նայրենի , ըստ մանկութեան իւրում ի նացից անտի հօր իւրոյ կերիցէ . եւ ամենայն այլազգի՝ մի՛ կերիցէ ի նոցանէ :
 14 եւ մարզ որ յանգէսա կերիցէ զսրբութիւնն , յուելցէ ի նոյն զհինգերորդ մասնն , եւ տայց զսրբութիւնն ցքահանայն : եւ մի՛ պղծեցեն զսրբութիւնս սրբութեանցն որդւոցն Իսրայելի , զոր զատուցին նոքա Տեառն . եւ ամիցեն ի վերայ իւրեանց անորէնութիւն անցանաչ , ուտելով իւրեանց զսրբութիւնն սրբութեանցն . զի ես եմ Տէր որ սրբեմ զնոսա :
 17 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 18 Խօսեաց ընդ Ահարոնի եւ ընդ որգիս նոքա եւ ընդ ամենայն ժողովրդեանն որդւոցն Իսրայելի , եւ ասացիս ցնոսա , Այր ոք այր յորգւոյն Իսրայելի , կամ յեկացն յարելոց ի նոսա ի մէջ Իսրայելի , որ մատուցանիցէ զպատարազս իւր ըստ ամենայն խոտտովանութեանց իւրեանց , կամ ըստ ամենայն կամաց իւրեանց զոր ինչ մատուցանիցեն Տեառն՝ յողջակեղ
 19 ընդունելի առ ի ձէնջ , Արու՝ անարատ
 20 յանգւոց եւ յօցեաց եւ յայծեաց : Զամենայն արատաւորն մի՛ մատուցանիցեն

1 Եբր. զհացն 2 Եբր. թզուկ 3 Եբր. Տեառն 4 Եբր. Զհացն Աստուծոյ իւրոյ ի սրբութեանց սրբութեան եւ ի 5 Եբր. իմ 6 Եբր. արեգակ 7 Եբր. որով պղծիցի , կամ ի մարզ որով պղծիցի

8 Եբր. յողջակեղ . (19) Զի լինիցիք ընդունելի . եղիցի արու

1 Տեառն , զի ոչ լինիցի ընդունելի առ ի
 21 ձէնջ : Եւ այր որ մատուցանիցէ զպա-
 տարագս իւր ըստ ամենայն խոստովա-
 նութեան իւրեանց , կամ ըստ ամենայն
 կամեաց իւրեանց զո՞ փրկութեան Տեառն ,
 ուխտեալ ուխտ , կամ ըստ կամաց կամ
 ի տօնս ձեր” , յանբոց կամ յոգեաց , ա-
 նարատ լինիցի յընդունելութիւն . ամե-
 22 նայն արատ մի՛ լիցի ի նմա : Չկոյրն կամ
 զկազն կամ զրեկն կամ ՚Վյեղուստ կամ
 զմարմառոտ կամ զքրոստ կամ զօրքի-
 նոտ , մի՛ մատուցանիցին զայն Տեառն .
 եւ յողջակէզ ոչ տայցէք ի նոցանէ ի սե-
 23 զան Տեառն : Չարջառ եւ զոչխար ՚Ղա-
 կանջատ կամ զկրճատ՝ քեզ արտադես ի
 զենկիս” , եւ յուխտս քո մի՛ լիցին ըն-
 24 զուենլի : Չթաղամուսուրն եւ զմարեայն
 եւ զքածաւարտան եւ զհանաւն , մի՛
 մատուցանիցես Տեառն . եւ յերկրի ձե-
 25 բուս մի՛ առնիցէք : Եւ ի ձեռանէ այլ-
 ազգուոյն մի՛ մատուցանիցէք զպատա-
 րագս Աստուծոյ ձերոյ յամենայնէ յայն-
 պիսեաց անտի . զի խեղութիւնք եւ ա-
 րատք են ի նմա , եւ ոչ լինիցի այն ըն-
 զուենլի առ ի ձէնջ :
 26 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 27 Արջառ կամ ոչխար կամ այծ , յորժամ
 ծնանիցին , կացցէ զեւթն օր ընդ մարրն .
 եւ յօրէն ութերօրոցէ եւ անգր ընդունելի
 28 լիցի ի պատարագ ընծայ Տեառն : Չար-
 ջառ եւ զոչխար եւ զծնունդ իւրեանց
 մի՛ սպանանիցէք ի միւսմ աւուր :
 29 Եւ եթէ զօնեացես զզո՞ զօնութեան
 Տեառն , զընդունելին առ ի ձէնջ զօնեա-
 30 ջիք . Ի նոյն աւուր կերիցի , եւ մի՛ թո-
 զուցուք ի մոյ անտի յայգ . ՚Ղի ես եմ
 Տէր :
 31 Եւ պահանջիք զպատուիրանս իմ , եւ
 32 արասցիք զնոսա . ՚Ղի ես եմ Տէր : Եւ
 մի՛ պզծիցէք զանուն իմ սուրբ՝ ՚Ղի ես
 եմ Տէր .” Եւ սրբեցայց ի մէջ որդւոցն
 Իսրայելի . ես եմ Տէր որ սրբեմ զձեզ ,
 33 Որ հանի զձեզ յերկրէն Եփրատացւոց լի-
 նել ձեզ Աստուած . ես եմ Տէր :

ԳԼ ԻԳ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 2 Խօսեաց ընդ որդիան Իսրայելի եւ տասա-

1 ՅԷՐ. զՎ-տե 2 ՅԷՐ. պատարագ խաղաղու-
 թեան Տեառն ի կատարել զուխտ կամ ընծայ
 կամուսոր 3 ՅԷՐ. որ ունիցի աւելի ինչ կամ
 պակաս՝ արացես ընծայ կամուսոր

ցես ցնոտս , ՚Տօնս Տեառն զոր ասնի-
 գէք , կոչեցեալք եւ սուրբք” այնք իցեն
 3 իմ ամօնք . Չվեց օր զորձեցես զգործ ,
 յա ուրն եւ թնիրօրոյի շարաթ ՚Տանդիստ
 անուանեալ սուրբ Տեառն” . զամենայն
 զործ մի՛ գործիցէք , զի շարաթ Տեառն
 է յամենայն ընակութեան ձերում :
 4 Չի այն են ամօնք Տեառն , եւ նոքա
 անուանեալք են սուրբք զորս անուա-
 5 նիցէք ի ամօնս նոցա” : Յառաջնում ամ-
 սեանն ի տանն եւ ի չորս ամօնոյն ի մէջ
 6 երեկօրեայցն զատիկ Տեառն . Եւ յա-
 ռուրն հոգեատասանիրօրոյի նորին ամօնոյ՝
 ամօն բազարջակերաց Տեառն . զեւթն օր
 7 բազարջ կերիցիք : 7 Եւ օրն առաջին ան-
 ուանեալ՝ սուրբ եղիցի ձեզ . զամենայն
 զործ սպասուորութեան մի՛ առնիցէք :
 8 Եւ մատուցիք ոչ ջակէզս Տեառն զեւթն
 օր , ՚Եւ օրն եւ թնիրօրոյ՝ սուրբ կոչեց-
 եալ” լիցի ձեզ . զամենայն զործ սպա-
 սուորութեան մի՛ գործիցէք :
 9 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 10 Խօսեաց ընդ որդիան Իսրայելի եւ տասա-
 ցես ցնոտս , Յորժամ մասնիցէք յերկիրն
 զոր ես տայ ձեզ , եւ հանիցէք զհունձս
 նորա , բերիցէք զորայն , զպտուղ հնձոց
 11 ձերոց , առ քահանայն . Եւ ՚Տանցէ զու-
 րայն առաջի Տեառն յընդունելութիւն
 առ ի ձէնջ . եւ ի վաղիւ անոր 10 աւուրն
 12 առաջնոյ հանցէ” զայն քահանայն . Եւ
 11 արտացէ յաւուրն յորում մատուցանիցէ
 զորայն՝ ոչխար” անարատ տարուոր յող-
 13 ջակէզ Տեառն . Եւ զզոնն իւր երկուս
 տասանորոս ի նաչոյ զանկերոյ իւղով ,
 զո՞ Տեառն ի նոտ անուչից ՚Տեառն . եւ
 նուէր նորա՝ չորրօրոց մասն 12 զորակի
 14 զինուոյ . Եւ պանն մի՛ եւ 13 զամենայն
 մուրկ փխրեալ” մի՛ ուտիցէք մինչև յօրն
 յորում մատուցանիցէք արատարագս Աս-
 տուծոյ ձերոյ . օրէն յախանակապա յազգս
 ձեր , յամենայն ընակութեան ձերում :
 15 Եւ համարեսցիք ձեզ ի վաղուէ շա-
 րաթունն յօրէ յօրմէ մատուցանիցէք զու-
 րայ 14 ուխտին , եւ թն եւ թնիրօրոյս ըս-

4 ՅԷՐ. Տօնք Տեառն զոր կոչիցէք ժողով սուրբաւ
 5 ՅԷՐ. հանգստեան՝ ժողով սուրբ 6 ՅԷՐ. Այս
 են ամօնք Տեառն , ժողովք սուրբք զոր կոչեցէք
 ըստ ժամանակի իւրեանց 7 ՅԷՐ. յաւուրն յա-
 ուանում ժողով 8 ՅԷՐ. յաւուրն եւ թնիրօրոյի
 ժողով սուրբ 9 ՅԷՐ. երեքեաց 10 ՅԷՐ. շա-
 րաթունն երեքեաց 11 ՅԷՐ. առնիցէք յաւուրն
 երեքման որային ձերոյ որով մի 12 Վ-տե. հիմենի
 13 ՅԷՐ. մուրկ փխրեալ Եւ հասկնոր 14 ՅԷՐ. երեքման

16 վանդակս թուրցես . Մինչև ցլաղիւն
 յետին եւ թնորորդին թուրցէք յիտուն օր,
 եւ մատուցանիցէք զո՛ր նոր Տեառն :
 17 Ի բնակութեանէ ձերմէ մատուցանիցէք
 պանսա նուիրի, երկուս պանսա . յերկուց
 տասանորդաց լինիցի պան մի, խմորեալք
 եփեսցին յառաջնոց արդեանց Տեառն :
 18 Եւ մատուցանիցէք ընդ հացիցն եւ թն
 որոջ անարատ տարեւոր, եւ զուարակ
 մի յանդուց, եւ խոյս երկուս անարատս,
 եւ կղիցին յողջակէզ Տեառն, եւ զո՛րք
 նոցա եւ նուէրք նոցա՝ զո՛ր ի նոս անու
 19 ից Տեառն : Եւ սանիցէք նոխազ մի
 յայծեաց վանս մեղաց, եւ երկուս գա
 ոինս տարեւորս ի զո՛ր խաղազականաց
 20 ընդ պանից առաջնոց արմտեացն : Եւ
 նուիրեսցէ զնոսա քանանայն նուէր՝
 ընդ պանից առաջնոց արմտեացն յանդի
 ման Տեառն հանդերձ երկու զառամբքն .
 սրբեսցին Տեառն, քանանային ²որ մա
 21 տուցանիցէ զնոսա՝ կղիցին : Եւ կոչեա
 չիք զօրն զպն անուանեալ կոչեցեալ,
 սուրբ կղիցի ձեզ . զամենայն զորձ սպա
 սաւորութեան մի՛ գործիցէք ի նմա . օրէն
 յախտեական կղիցի յողջս ձեր յամե
 նայն բնակութեան ձերում :
 22 Եւ յորժամ հնձիցէք գնունձս երկրի
 ձերոյ, մի՛ առ հասարակ զնչխար հնձոց
 անդոցն թո ի հնձեկ քում ամփոփիցես .
 եւ զանկեայն հնձոցն քոց մի՛ ժողովեա
 ցես, այլ սզքատին եւ պանդխտին թու
 զուցուս զայն . ²գի ես եմ Տէր Աստուած
 ձեր :
 23 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
 24 Խօսեաց ընդ որդիսն Իսրայելի եւ ասա
 ցես, Յամեսանն եւ թնորորդի որ օր մի
 իցէ ամսոյն, կղիցի ձեզ հանդիստ, յի
 չատակ փողոց, ³կոչեցեալ սուրբ Տեառն :
 25 Չամենայն զորձ սպասաւորութեան մի՛
 գործիցէք, եւ մատուցանիցէք ողջակէզ
 Տեառն :
 26 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
 27 Ի տասներարդում աւուր ամսոյն եւ թն
 երորդի, որ օրն քառութեան է, ⁴կո
 չեցեալ սուրբ կղիցի ձեզ . եւ խմոր
 հեցուսչիք զանձինս ձեր ²յիններորդ օ
 րէն յերեկորեաց, եւ մատուսչիք ողջա
 28 կէզս Տեառն : Չամենայն զորձ մի՛ գոր

ծիցէք յաւուր յայնմիկ, զի օր քառու
 թեան է նա ձեզ, քաւել վանս ձեր ա
 29 ուջի Տեառն Աստուծոյ ձերոյ : Մամենայն
 սնձս որ ոչ խմորեացի յաւուր յայն
 միկ, աստակեսցի ի ժողովրդեանէ իւրմէ :
 30 Եւ ամենայն սնձս որ գործիցէ գործ յա
 ւուր յայնմիկ, կորիցէ սնձս այն ի ժու
 31 ղովրդեանէ իւրմէ : Չամենայն գործ մի՛
 գործիցէք . օրէն յախտեական կղիցի
 յողջս ձեր, յամենայն բնակութիւնս
 32 ձեր : Շարաթ յալաթուց կղիցի ձեզ, եւ
 խմորեացիցուսչիք զանձինս ձեր . յինն
 բորդէ ամեսանն յերեկորեաց մինչև ցե
 33 րեկոյն շարաթացուսչիք զչաքաթս ձեր :
 34 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ,
 35 Խօսեաց ընդ որդիսն Իսրայելի եւ ասա
 ցես, Ի հնգետասներորդի աւուր ամ
 սեսանն եւ թնորորդի սուն տաղաւարա
 36 հարաց զեւթն օր Տեառն : Եւ օրն ա
 ռաջին ⁵կոչեցեալ սուրբ . զամենայն գործ
 37 սպասաւորութեան մի՛ գործիցէք : Չեւթն
 օր մատուցանիցիք ⁶ողջակէզս Տեառն,
 եւ օրն եւ թնորորդ կոչեցեալ, սուրբ ե
 38 ղիցի ձեզ, եւ մատուցանիցէք ողջակէզ
 Տեառն . ⁷քանզի ելք են : զամենայն գործ
 39 սպասաւորութեան մի՛ գործիցէք : Այս
 են սունք Տեառն զորս կոչիցէք ¹⁰կոչե
 ցեալ սուրբս, առ ի մատուցանելոյ ¹¹ըն
 40 ձայ Տեառն, զողջակէզս եւ զօրնս իւր
 41 եանց, եւ նուէրս օր ըստ օրէ, Առանց
 շարաթուց Տեառն, եւ առանց ընծայիցն
 42 ձերոց, եւ առանց ամենայն ուխտիցն
 43 ձերոց, եւ առանց կամայականացն ձե
 44 ռոց զոր տայցէք Տեառն : Եւ ի հնգետա
 սաներորդում աւուր ամսոյն եւ թնե
 45 րորդի յորժամ բովանդակիցէք զարդիւնս
 երկրին, տօնուսչիք Տեառն զեւթն օր .
 յաւուրն առաջնում հանդիստ, եւ յա
 46 ւուրն ութերորդի հանդիստ : Եւ անու
 ցուք ձեզ յաւուրն առաջնում պտուղս
 47 զգեղեցիկ ծառոց, կողբես յարմաւենեաց,
 եւ ոստս ի տերեւտիստ ծառոց եւ յու
 48 րեաց ²եւ ոստս հազնեաց՝ ի ձորոց, ու
 49 րայս լինել առաջի Տեառն զեւթն օր : Եւ
 տօնուսչիք զնա սուն Տեառն զեւթն օր
 տարեոյն . օրէն յախտեական յողջս
 50 ձեր, յամեսանն եւ թնորորդի տօնուսչիք
 51 զնա : Ի տաղաւարս բնակեալիք զեւթն

¹ Եբբ. Երեմիան ² Եբբբ. գլ-ւ-է ³ Եբբ. Երեբեցէ
 զնոսա քանանայն ⁴ Եբբ. կորդայցէք ի նմին
 իսկ աւուր. ժողով ⁵ Եբբ. ժողով սուրբ կղիցի
 ⁶ Եբբ. ժողով ⁷ Եբբ. Չի ամենայն ⁸ Եբբ. պատարագ Տեառն,
 յաւուրն ութերորդի ժողով ⁹ Եբբ. սուն մեծ է
 այն ¹⁰ Եբբ. ժողով ¹¹ Եբբ. զպատարագ Տեառն,
 ողջակէզ եւ ընծայ հացի, զոչս

որ . ամենայն բնակիչն Իսրայելի ընտ-
 43 կեսցեն ի տաղաւարս . Զի զիտացեն
 ազգք ձեր , եթէ ի տաղաւարս բնակե-
 ցուցի զորդիսն Իսրայելի ի հաներն ինձ
 զնոսս յերկրէն Եգիպտացուոց . ես եմ
 14 Տէր Աստուած ձեր : Եւ պատմեաց Մով-
 սէս զտօնս Տեառն որդւոցն Իսրայելի :

Գ Լ . Ի Դ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 2 Պատուիրեա որդւոցն Իսրայելի , եւ աս-
 ցենք եւզ եւզ ի ձիթնեաց սուրբ իա-
 կակութ ի լոյս , զի այրիցի ճրագ հանա-
 3 պազորդ , Արտաքոյ վարագործին ի խո-
 րանին վկայութեանս . եւ Վուցցին զայն
 Ահարոն եւ որդիք նորա¹ , յերկիրեաց
 մինչեւ ցառաւօս առաջի Տեառն ան-
 պակաս . օրէն յա իտնեական յազգս ձեր :
 4 Ի վերայ աշտանակին սրբոյ² այրիցէք ճրա-
 գունս առաջի Տեառն³ մինչեւ ցառաւօս⁴ :
 5 Եւ Վանուցուք նաչին⁵ , եւ Յանիցէք
 զայն երկուտասան պան . յերկուց տասա-
 6 նորոցս լինիցի պան մի : Եւ Չմիցէք
 զնոսս երկուս Պուէրս , վեց պան զմի
 նուէրն⁶ ի վերայ սեզանոցն սրբոյ առաջի
 7 Տեառն : Եւ զիցես ի վերայ Պուիրին
 կնգրուկ սուրբ⁷ եւ ազ⁸ . եւ եղիցին ի
 հաց յիշատակի⁹ զառաջաւոր Տեառն :
 8 Յաւուրն չարաթուց զմիցէ առաջի Տեառն
 հանապազորդ յորդացի Իսրայելի ուխտ
 9 յաւիտենականս : Եւ եղիցի Ահարոնի եւ
 որդւոցն նորա , եւ կերիցեն զայն ի սուրբ
 տեղւոջն . զի սրբութիւն սրբութեանց է
 այն նմա¹⁰ ի զոհաւորացն Տեառն , օրէն
 յաւիտենականս :

10 Եւ ել որդի կնոջ Իսրայելացուոյ , եւ
 նա էր որդի անն Եգիպտացուոյ ի մէջ
 որդւոցն Իսրայելի . եւ կուռեցան ի բա-
 նակին¹¹ որ յԻսրայելացուոյ անախէր¹² : Եւ
 11 այր մի Իսրայելացի . Եւ¹³ անուանեալ
 որդի կնոջն Իսրայելացուոյ զԱնուանն¹⁴ եւ
 անէծ . եւ ամին զնա առ Մովսէս . եւ
 անուան մօր նորա Սազամիթ¹⁵ զուսոր
 12 Իարբեայ , յազգէ Դանայ : Եւ արկին զնա

ի պան , պատել զնա հրամանաւ Տեառն :
 13 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 14 Հանէք զայն որ անէծն¹⁶ արտաքոյ բա-
 նակին , եւ զիցեն որք լուսն զձեռս իւր-
 եանց ի վերայ զլիւոյ նորա , եւ քարկու-
 15 ձեացեն զնա ամենայն ժողովուրդն : Եւ
 ընդ որդիսն Իսրայելի խօսեացին եւ ա-
 սացեսցնոսա , Սյր սք այր որ անիծա-
 16 նիցէ¹⁷ զԱստուած , մեզս ընկալցի . Զի
 անուանեաց¹⁸ զանուսն Տեառն մահու մեա-
 ցի . քարընկեցութեամբ քարկոծ արաս-
 ցեն զնա ամենայն ժողովուրդն . եթէ
 պանդուխտ իցէ եւ եթէ բնակ ,¹⁹ յանուա-
 նել նորա զանուսն Տեառն , սասակեսցի :
 17 Եւ մարդ որ հարկանիցէ զամենայն
 անձն մարդոյ եւ մեռանիցի²⁰ մահու մեացի
 18 եւ նա : Եւ որ հարկանէ զանասուն²¹ անձն
 19 ընդ անձին տուժեսցի . Եւ եթէ խեղիսցէ
 ոք զընկեր իւր , որպէս արարն²² նոյնպէս
 20 արասցի նմա . Բեկուանն ընդ բեկման ,
 ակն ընդ ական , ատամն ընդ ատաման .
 որպէս անիցէ ոք զխեղութիւն , նոյն-
 21 պէս հատուցի իմաս : Եւ որ հարկանիցէ
 22 նա : Իրաւունք²³ մի եւ նոյն կացցեն եւ
 կին եւ բնակին . զի ես եմ Տէր Աստ-
 ուած ձեր :
 23 Եւ խօսեցաւ Մովսէս ընդ որդիսն Իս-
 րայելի , եւ հանին զայրն որ անէծն²⁴ ար-
 տաքոյ բանակին , եւ քարկոծ արարին
 զնա Պամենայն ժողովուրդն²⁵ քարավրք .
 եւ որպիքն Իսրայելի արարին որպէս
 պատուիրեաց Տէր Մովսիսի :

Գ Լ . Ի Ե

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի ի լերինն
 2 Սինայ եւ ասէ , Խօսեաց ընդ որդիսն Իս-
 րայելի եւ ասացեսցնոսա ,¹ Եթէ մտա-
 նիցէք յերկիրն զոր ես տաց ձեզ ,² եւ
 հանուչիցի երկիրն զոր տաց ձեզ , զի
 3 չարաթ Տեառն է³ : Զվեց ամ վարես-
 ցես զանդ քո , եւ զվեց ամ յատցես
 զայլի քո , եւ ժողովեսցես զպտուղ նո-
 4 յա . Յամին եւ թմրորդի չարաթ հան-
 գիտս եղիցի երկրին , զի չարաթ Տեառն
 է . զանդ քո ոչ վարեսցես , եւ զայլի

1|Էբբ. յարգարեացէ զնոսս Ահարոն 2|Էբբ. յար-
 գարեացէ 3|Էբբ. հանապաղ 4|Էբբ. աննուցուս
 5|Էբբ. աննիցես 6|Էբբ. զիցես 7|Էբբ. կարգս .
 վեց ի կարգի 8|Էբբ. կարգացն 9|Էբբ. պա-
 վա 10|Էբբ. պատարագ 11|Էբբ. ի պատարա-
 գաց 12|Էբբ. որդին կնոջն Իսրայելացուոյ 13|Էբբ.
 հայհայեաց

14|Էբբ. զԱստուած իւր , եւ զմեզս իւր ընկալցի .
 (16) եւ որ հայհայեն 15|Էբբ. ի հայհայել 16|Էբբ.
 զանասուն տուժեսցի . եւ որ հարկանիցէ զմարդ-
 սպանցի 17|Էբբ. քորմամ 18|Էբբ. թող չա-
 բաթացի երկիրն չարաթ Տեառն

5 քո ոչ յառցես . Եւ զինքնեակն անդոյ քո
 որ գայցէ՝ ոչ հնձեսցես , եւ զխաղող
 սրբութեանն քո ոչ կթեսցես . զի ամ
 6 հանգստեան է այն երկրին : Եւ եղիցի
 շարաթի երկրին ձերոյ , կերակուր՝ քեզ
 եւ ծառայի քում , եւ ազախնոյ քում ,
 եւ վարձկանին քում , եւ պանդխտին
 7 յեցիւոյ ի քեզ , եւ անասնոյ քում , եւ
 գազանաց որ իցեն յերկրին քում եղի-
 ցի ամենայն բերն նորա ի կերակուր :
 8 Եւ թուեսցես զու քեզ եւթն հան-
 գիստ ամաց՝ եւթն ամ եւթնեկին , եւ
 եղիցին եւթն եւթնորոպքն ամաց՝ քա-
 9 ռատուն եւ ինն ամ : Եւ ազդ ստնիցէք
 բարբառով փողով՝ յամենայն երկրին ձե-
 րում՝ , յամենայն եւթնորոպիւրօր տանն
 իցէ ամսոյն , յաւուրն քառութեանն ազդ
 արասջիք փողով ընդ ամենայն երկրին
 10 ձեր : Եւ արեանջիք զամն յիսնիորդ
 սարուոյն , եւ քարոյեանջիք թողութիւն
 ի վերայ երկրին ամենայն բնակչաց նո-
 րա . զի շտարի թողութեան՝ եղիցի ձեզ
 այն յազդեցութիւն , եւ գարձցի իւրա-
 քանչիւր ոք ի ստացուած իւր , եւ իւրա-
 քանչիւր ոք յազդ իւր երթիցէ . ՚յի թու-
 11 զութեանն ազդեցութիւն է այն՝ Ամն յիս-
 ներորդ՝ եղիցի ձեզ շտարեկան . մի սեր-
 մանիցէք , եւ մի հնձիցէք զինքնեակս
 նորա որ կանիցեն , եւ մի կթիցէք
 12 գարբեցութիւն նորա . Զի թողութեան
 ազդեցութիւն՝ է , սուր լիցի ձեզ . ի
 13 գաշտաց կերկրի՞ք զարմատիս նորա՝ Յամին
 ազդեցութեանն թողութեան նորա՝ գարձ-
 ցի իւրաքանչիւր ոք ի ստացուած իւր :
 14 Ապա թէ վաճառեսցէ ոք վաճառ ընկե-
 րի իւրում , եւ ստացի յընկերէ իւրմէ ,
 15 մի նեղեսցէ այր զընկեր իւր . Ըստ
 թուոյ ամացն յետ շազդեցութեանն
 ստացի յընկերէ իւրմէ , ըստ թուոյ ս-
 16 մաց արմտեացն վաճառեսցի քեզ : Ըստ
 յաճախելոյ ամացն յաճախեսցէ զստաց-
 ուածս իւր՝ եւ ըստ պտիստելոյ ամացն
 ՚պակասեցուցէ զստացուածն իւր՝ .
 զի ըստ թուոյ արդեանցն վաճառեսցէ
 17 նա քեզ : Մի նեղեսցէ այր զընկեր իւր ,
 եւ երկնչիցիս ՚ի Տեսնտէ Աստուծոյ՝
 քումմէ . ես եմ Տէր Աստուած ձեր :
 18 Եւ արասջիք զամենայն իրաւունս իմ

եւ զամենայն դատաստանս իմ , եւ պահես-
 ջիք եւ արասջիք զնոսա , եւ բնակեսցիք
 19 յերկրին յաւուր : Եւ սացէ երկիրն զբերս
 իւր , եւ կերկրի՞ք ջրագ . եւ բնակեսցիք
 20 ի նմա վտանաւթեամբ : Ապա թէ ստի-
 ցէք , Զինչ կերթցուք յամին եւթնորոպի
 յայնմիկ , եթէ ոչ սերմանիցեմք եւ ոչ
 21 ժողովիցեմք զարմատիս մեր . Առաքեցից
 զօրհնութիւն իմ ի ձեզ յամին վեցերորդի ,
 եւ արասցէ զարդիւնս իւր երկր ամաց :
 22 Եւ սերմանեսցիք յամին ութերորդի ,
 եւ կերկրի՞ք զինչ արդեանցն մինչեւ ցամն
 իններորդ . մինչեւ զայցին արմաիք նո-
 րա , կերկրի՞ք նին ի նոյ :
 23 Եւ երկիրն ոչ վաճառեսցի ՚ի հաս-
 տատութիւն . զի իմ է երկիրն . քանզի
 պանդուխտք եւ նժդեհք էք զուք ա-
 24 ռաջի իմ : Եւ ըստ ամենայն երկրին
 կալուածոյ ձերոյ փրկանս տաջիք ՚ի երկ-
 25 րին : Եւ եթէ ազքատացի եղապր քո
 որ ընդ քեզ իցէ , եւ վաճառեսցէ ի կալ-
 ուածոյ իւրոյ , եւ եկեսցէ մերձաւորին
 որ մերձաւոր իցէ նորա , եւ փրկեսցէ
 26 զվաճառ եղբոր իւրոյ : Ապա թէ չիցէ
 ուրուք մերձաւորիչ , եւ ձեռննաց իցէ ,
 եւ գտանիցի նմա բաւական փրկանացն
 27 իւրոյ , եւ համարիցի զամս վաճառին
 իւրոյ , եւ հատուցէ ՚կարողն սունն ու-
 րում վաճառեսց յամս , եւ զարձցի ի
 28 կալուածս իւր : Ապա թէ ոչ գտցի ի
 ձեռին նորա բաւականն առ ի հատու-
 ցանելոյ նմա , եղիցի վաճառ նորա այնմ
 որ ստացաւն զնա մինչեւ յամն ՚թու-
 զութեանն . եւ ելցէ յամին ՚թողութեան
 եւ զարձցի անդրէն ի կալուածս իւր :
 29 Եւ եթէ վաճառեսցէ ոք տուն բնա-
 կութեան ի պարսպաւոր քաղաքի , եղի-
 ցին փրկանք նորա մինչեւ ի կատարել
 տարւոյն աւուրցն վաճառի նորա . օրա-
 30 թուի լինիցին փրկանք նորա : Ապա թէ
 ոչ փրկիլի մինչեւ ընուցու նորա տարին
 ողջոյն , հաստատեսցի տունն որ իցէ ի
 պարսպաւոր քաղաքի հաստատութեամբ՝
 ստացողին իւրոյ յազգս իւր . եւ մի ելցէ
 31 ի ՚թողութեանն : Իսկ տունք , որ յաւանս
 իցեն , որոց արարիսոյ ոչ զուցէ չուրջա-
 նակի , ընդ այնք երկրի համարեսցին ,
 եւ հանապաղ ընդ փրկանսք լինիցին .
 32 եւ ի ՚թողութեանն ելցեն : Եւ ի քա-

13Եբբ. պահե- 2Եբբ. յորեկեան 3Եբբ. ամ
 յորեկեան 4Եբբ. Յամի ստտ յորեկեան 5Եբբ.
 յորեկեան 6Եբբ. յաճախեսցես զգին նորա 7Եբբ.
 պակասեցուցես զգին նորա 8Եբբ. յԱստուծոյ

9Եբբ. վտանաւթեամբ 10Եբբ. ի սպառ 11Եբբ.
 վանն երկրին 12Եբբ. զմնացորդն 13Եբբ.
 յորեկեան

զաքս Ղեւտացւոց տունք որ ի քաղաքս
 կալուածոց նոցա իցեն՝ ընդ փրկանօք
 լինիցին հանապազ որ ի մէջ Ղեւտաց-
 33ւոցն իցէ՝։ Եւ որ ոք փրկեացէ ի Ղեւտաց-
 ւոց անտի, ելցէ վաճառ տանց քաղա-
 քաց կալուածոց նորա ի Յիողաթիւանն .
 34բայելի։ Եւ ազարակքն ՚ճատուցեալք ի
 քաղաքս՝ նոցա՝ մի՛ վաճառեացին . զի
 կալուած չաւխտեալիսն է այն նոցա։
 35 Եւ եթէ ալքատանայցէ եզրայր քո եւ
 տկարանայցէ ձեռօք, առ քեզ պատասխա-
 րեացես զնա իբրև զեկն եւ զպանդուխտն .
 եւ կեցցէ եզրայրն քո որ ընդ քեզն իցէ։
 36 Մի՛ջանուցուս ի նմանէ վաշխ եւ տու-
 կոսիս . եւ երկնչիցիս ՚ի Տեսանէ Աստու-
 ծոյ քումմէ, զի ես եմ Տէր՝. եւ կեցցէ
 37 եզրայր քո ընդ քեզ։ Չարմաթ քո մի՛
 տացես նմա ընդ տոկոսեօք, եւ զկերա-
 կուր քո մի՛ տացես նմա ընդ շարկատիւ։
 38 Ես եմ Տէր Աստուած ձեր, որ հանի զձեզ
 յերկրէն եղիպտացւոց՝ ապ ձեզ զերկիրն
 Քանանայոց, առ ի լինելոյ ձեր Աստուած։
 39 Եւ եթէ տնանկացի եզրայր քո առ քեզ
 եւ վաճառեցի քեզ, մի՛ ծառայեացէ քեզ
 40 զծառայութիւն ստրկի։ Իբրև զվարձ-
 կան, իբրև զպանդուխտ եղիցի քեզ,
 մինչև յամն թողութեան զործեացէ առ
 41 քեզ . եւ ելցէ թողութեանն ինքն եւ
 որդիք իւր ընդ իւր, եւ զարձցի յազգ
 իւր, եւ ի հայրենի կալուած իւր երթի-
 42 ցէ։ Չի ծառայք իմ են նոքա զորս եւ
 հանի յերկրէն եղիպտացւոց . մի՛ վաճա-
 43ռեացին ի վաճառ ստրկի։ Եւ մի՛ տառա-
 պեցուցես զնա ընդ աշխատութեամբ .
 եւ երկնչիցիս ՚ի Տեսանէ Աստուծոյ քում-
 44 մէ՝։ Եւ ծառայ կամ ազախին որչափ եւ
 լինիցին քեզ՝ յազգացն որ չուրջ զքեւն
 45 իցեն, ի նոցանէ ստասջիք։ Եւ յորգւոց
 պանդխտացն որ ի միջի ձերում իցեն,
 ի նոցանէ ստանայցէք, եւ յազգահմանայ
 նոցա որչափ ինչ լինիցին յերկրն ձերում՝
 46 եղիցին ձեզ ի կալուածս . Եւ բաժանես
 ջիք զնոսա որգւոց ձերոց յետ ձեր, եւ
 կիցիցին ձեզ սարուկք յաւիտեանս . բայց
 յերարց ձերոց յորգւոցն Իսրայելի՛ իւ-
 րաքանչիւր ոք զեզրայր իւր մի՛ տառա-
 պեցուցանիցէք աշխատութեամբ։

47 Եւ եթէ բաւական իցէ ձեռն եկին եւ
 պանդխտին որ առ քեզ իցէ, եւ չքա-
 ւորեալ եզրայր քո վաճառեցի եկին կամ
 պանդխտին որ առ քեզ իցէ՝ անգէն ծնե-
 48 յոյ պանդխտին, Յետ վաճառելոյն նորա
 փրկանք լինիցին նմա . մի ոք սր եւ իցէ
 49 յերարց իւրոց՝ փրկեաց զնա . եզրայր
 հօր կամ որցի հօրեզրօր փրկեացէ զնա,
 կամ ոք յընտանեաց մարմնոյ իւրոյ ի
 ցեղէ իւրմէ փրկեացէ զնա . ապ թէ
 իւր իակ զձեռամբ իցէ՝ ինքնին փրկեացէ
 50 զանձն։ Եւ համարեցի ընդ ստացոյցին
 իւրոյ յամէ անտի յորում վաճառեցու-
 նմա մինչև եւ ցամն թողութեան . եւ եւ
 զիցի արձուց զնոց նորա իբրև վարձ-
 կանի, ամ յամէ որչափ իցէ ընդ նմա .
 51 Եւ եթէ յաւելի եւս քան զայն ամս կայցէ,
 տացէ՝ զփրկանս իւր յարմաթոյ՝ ստաց-
 52 ուածոյն իւրոյ . Եւ եթէ սակաւ ինչ կայցէ
 յամայ անտի մինչև եւ ցամն թողութեան,
 համարեցի իւր ըստ ամացն իւրոց, եւ
 53 տացէ զփրկանս իւր։ Իբրև զվարձկան
 ամ յամէ որչափ եւ՝ իցէ ընդ նմա .
 մի՛ տառապեցուցանիցէ զնա աշխատու-
 54 թեամբ առաջի քո։ Ապ թէ ոչ փրկեացէ
 ըստ այսմ օրինակի, ելցէ յամն թողու-
 թեան ինքն եւ որդիք իւր ընդ նմա .
 55 Չի իմ են որդիքն Իսրայելի սարուկք,
 ծառայք իմ՝ զորս հանի յերկրէն եղիպ-
 տացւոց . ես եմ Տէր Աստուած ձեր։

ԳԼ ԻԶ

1 Մի՛ տոնիցէք ձեզ ձեռագործս կամ
 գրօշեալս, եւ մի՛ կանգնիցէք ձեզ ար-
 ձան, եւ մի՛ քարկոթող գնիցէք յերկրի
 ձերում երկիր պագանել նմա . ես եմ
 Տէր Աստուած ձեր։
 2 Չչարմաթ իմ պահեսջիք, եւ ի սրբու-
 թեանց իմոց երկնչիջիք . զի ես եմ Տէր։
 3 Եթէ ըստ հրամանաց իմոց զնայցէք,
 եւ զպատուիրանս իմ պահիցէք եւ սու-
 4 նիցէք զնոսա, Տայ ձեզ անձրևս ի ժա-
 մանակի իւրում, եւ երկիրն տացէ զար-
 մտիս իւր, եւ ծառք զպատուոց տացին
 5 զպատուք իւրեանց . Եւ հասանիցեն ձեր
 կայք ի կուլթս, եւ կուլթք ի սերմանս
 հասանիցեն, եւ կերթիջիք զհաց ձեր ցյապ,
 եւ բնակեսջիք անհողութեամբ յերկրի

1 Եբբ. Ղեւտացւոցն 2 Եբբ. յորեկենին 3 Եբբ. արուարձանաց քաղաքաց 4 Եբբ. յԱստուծոյ քումմէ 5 Եբբ. յորեկեան 6 Եբբ. առ ի քէն

7 Եբբ. տակաւին բազում ինչ կայցէ յամոցն . ըստ այսմ տացէ 8 Եբբ. գնոյն 9 Եբբ. պահիցէք 10 Եբբ. յորեկենի 11 Եբբ. կուլթս

6 ձերում : Եւ սաց խաղաղութիւն յերկրին
 ձերում , եւ ննջիցէք , եւ ոչ ոք իցէ որ
 զարհուրեցուցանիցէ զձեզ . եւ կորուսից
 զգազանս չարս յերկրէ ձերմէ . եւ որս-
 7 լածեսձիւք զթշնամիս ձեր , եւ անկանի-
 8 ցին տասջի ձեր սպանմամբ : Եւ հալա-
 ծիցեն ի ձէնջ հինգք զհարեւր , եւ հա-
 րեւրք ի ձէնջ հալածեսցեն զբելա , եւ
 անկանիցին թշնամիք ձեր առաջի ձեր
 9 սրով : Եւ հայեցայց ի ձեզ , եւ աճեցու-
 ցից զձեզ եւ բազմացուցից զձեզ , եւ
 10 հաստատեցից զուրս իմ ընդ ձեզ , եւ
 կերիջիւք զհին եւ զհոյ հին , եւ զհինն
 11 յերեսաց նորոյն հանիջիւք ի բաց : Եւ հաս-
 տատեցից ՝ զուրս իմ ի ձեզ . եւ ոչ զար-
 12 շեսցի անձն իմ ի ձէնջ . Եւ գնացից ի
 ձեզ , եւ եղէց ձեր Աստուած , եւ զուք
 13 եղիջիւք ինձ ի ժողովուրդ : Ես եմ Տէր
 Աստուած ձեր որ հանի զձեզ յերկրէն
 ճեղաբացուող , մինչ էիք զուք ծառայք .
 եւ խզիցի զկապանս լծոց ձերոց , եւ
 2 ձածի զձեզ համարձակութեամբ :
 14 Ապա թէ ոչ լսիցէք ինձ , եւ ոչ առ-
 նիցէք զամենայն հրամանս իմ զայտու-
 15 սիկ , Այլ հետախցէք սոցա , եւ յիրաւանց
 իմոց սազտկայցեն անձինք ձեր , սո ի
 շառնելոց ձեզ զամենայն զորստութեանս
 16 իմ եւ ցրելոց զուրսան իմ , Արարից նոյն-
 սէս եւ ես ձեզ . հաստատեցից ի վերայ
 ձեր տագնապաւ տարակուսանս , զքոս
 եւ զպալուկն որ սորեցուցանիցեն զուս
 ձեր , եւ հայիցէք յանձինս ձեր , եւ սեր-
 մանեսձիւք ի մտտիս զսերմանիս ձեր , եւ
 17 զայն հակառակորդք ձեր կերիցեն . Հաս-
 տատեցից վերեսս իմ ի ձեզ , եւ անկա-
 նիջիւք տասջի թշնամեաց ձերոց , եւ հա-
 լածեսցեն զձեզ ասելիք ձեր , եւ լինի-
 18 ծելոց զձեզ : Եւ եթէ տակաւին ոչ լսի-
 ցէք ինձ՝ յաւելից իրատել զձեզ եւթնապո-
 19 սիկ ի վերայ մեղացն ձերոց : Եւ խոր-
 տակեցից գնդարտութիւն ամբարտաւա-
 նութեանց ձերոց . եւ արարից ձեզ զեր-
 կիսս երկաթի եւ զերկիր ձեր իրրեւ
 20 պղնձի : Եւ եպիցի ընդունայն զորու-
 թիւն ձեր . եւ մի տացէ երկիր ձեր զսեր-
 մանիս իւր , եւ մի՛ ծառ վայրաց տացէ
 զպտուղ իւր :
 21 Եւ եթէ տակաւին գնացէք զուք խու-
 տարնակս , եւ ոչ կամիցիւք լսել ինձ ,

յաւելից ձեզ հարուածս եւթնապատիկ ըստ
 22 անօրէնութեան ձերում : Եւ առաքեցից
 ի վերայ ձեր գազանս չարս երկրի , եւ
 3 կերիցեն զձեզ , եւ սատակեցեն զա-
 նասունս ձեր , եւ նուազունս արարից
 զձեզ . եւ կուրացին ճանապարհք ձեր :
 23 Ապա թէ այնու եւս ոչ իրատիցիւք , այլ
 ստակաւին խոտորնակս գնացէք ընդ իս ,
 24 Գնացից եւ ես ընդ ձեզ արարկութեամբ
 խոտորնակս . եւ հարից զձեզ եւթնապա-
 25 սիկ փոխանակ մեղաց ձերոց : Եւ սա-
 տակեցից զձեզ սրով խնդրել զվրէժ ուխ-
 տին . եւ թէ մարմնայցէք ի քաղաքս
 ձեր , առաքեցից մահ ի ձեզ , եւ մատ-
 26 նեսձիւք ի ձեռս թշնամեաց : Ի նեղել զձեզ
 ոռճկաւ հացի , եփեսցին տասն կին զհացն
 ձեր ի մլում թմբի , եւ սացեն զհաց
 ձեր կշուով . եւ կերիջիւք եւ մի՛ յաղեսձիւք :
 27 Եւ եթէ այնու եւս ոչ լսիցէք ինձ ,
 28 այլ գնացէք ընդ իս խոտորնակս , եւ ես
 գնացից ընդ ձեզ բարկութեամբ խոտոր-
 նակս , եւ իրատեցից զձեզ եւթնապատիկ
 29 ըստ մեղաց ձերոց . Եւ կերիջիւք զմար-
 մինս ուստիաց ձերոց , եւ զմարմինս
 30 զստերաց ձերոց կերիջիւք : Եւ կործանե-
 ցից ՝ զարձանս ձեր , եւ աւերեցից զփայ-
 տեղէն ձեռապործս ձեր՝ , եւ արկից զգիր-
 ձեր զկրակամիւք կոռց ձերոց , եւ գար-
 31 շեսցի անձն իմ ի ձէնջ : Եւ արարից զբա-
 վաքս ձեր աւերակս , եւ թափուր ա-
 րարից զսրբութիւնս ձեր , եւ ոչ հոռու-
 32 տեցայց ի հոռ զոհից ձերոց : Եւ աւե-
 րեցից զերկիրն ձեր , եւ զարմացին ընդ
 նա թշնամիքն ձեր որ ընակեալ իցին ի
 33 նմա : Եւ ցրուեցից զձեզ ընդ ազգս , եւ
 սատակեցէ զձեզ ոտերն եկեալ ի վե-
 րայ , եւ եղիցի երկիրն ձեր աւերակ եւ
 34 քաղաքք ձեր թափուրք , Յայնժամ հա-
 ճեսցի երկիրն ընդ չարաթիս իւր զամե-
 նայն աւուրս աւերածոյն իւրոց , եւ զուք
 եղիջիւք յերկրին թշնամեաց ձերոց՝ յերկիր
 օտար . յայնժամ չարաթասցի երկիրն ,
 35 եւ հաճեսցի ընդ չարաթիս իւր . Զամե-
 նայն աւուրս աւերածոյն իւրոց յարա-
 թառցի զչարաթիւն զոր ոչ չարաթացաւ
 ի չարաթիս ձեր՝ ի ժամանակի յորում
 36 ընտելիւքն ի նմա : Եւ ի վերայ մնացե-
 լացն ի ձէնջ ամից գողունն ի սիրտս նոցա
 յերկրի թշնամեացն իւրեանց . եւ հալա-

1 Եբբ. զխորան 2 Եբբ. ետու ձեզ գնալ ուղղորդ

3 Եբբ. անդաւակեցեն 4 Եբբ. արացեն 5 Եբբ. պալուկ 6 Եբբ. զարձունս ձեր , եւ աւերեցից զպատկերս ձեր արեգական

ծեսցէ գնոսա ձայն տերեւոյ խարխաւ-
 փելոյ, եւ փախիցեն որպէս որ փախչի-
 ցին ի պատերազմէ, եւ անխնիցին ա-
 37 ռանց ուրուք հալածելոյ: Եւ թողցէ
 եզրայր զեզրայր իւր իբրև ի պատե-
 րազմի՝ առանց ուրուք զհետ մտանելոյ,
 եւ ոչ կարիցէք ընդդէմ գառնալ թշնամ-
 38 եաց ձերոց: Եւ կորնչիցիք ի մէջ ալ-
 ցաց, եւ կերիցէ զձեզ երկիրն թշնամ-
 39 եաց ձերոց: Եւ մնացեալքն ի ձէն՝ սա-
 տակեցին փան մեզաց իւրեանց յերկրի
 թշնամեաց իւրեանց, եւ փան մեզաց
 հարց իւրեանց՝ որ ընդ նոսա մաշիցին:
 40 ¹Եւ խոստովան լինիցին զմեզս իւր-
 եանց եւ զհարց իւրեանց, զի յանցեան
 եւ արհամարհեցին զիս, եւ զի գնացին
 41 առաջի իմ խոտորնակս, եւ ես գնացից
 ընդ նոսա ²բարկութեամբ խոտորնակս,
 եւ ³կորուսից գնոսա յերկրի՝ թշնամեաց
 իւրեանց, յայնժամ ամաչեսցէ սիրա նո-
 ցա անխիփատ, եւ յայնժամ հաճեսցին
 42 ընդ ⁴մեզս իւրեանց, եւ յիշեցից զօխտան
 Յակոբայ եւ զօխտան Իսահակայ, եւ
 զօխտան Աբրահամու յիշեցից, եւ զեր-
 կիրն յիշեցից:
 43 Եւ երկիրն լքցի ի նոցանէ. յայնժամ
 ընկալցի երկիրն զպարթիս իւր՝ յաւերել
 նորա փան նոցա, եւ նոքա ընկալցին
 զանօրէնութիւնս իւրեանց, փոխանակ
 զի զիրաւունս իմ արհամարհեցին, եւ
 ի հրամանաց իմոց տազտկացաւ անձն
 44 նոցա: Եւ ես՝ մինչդեռ ⁵էլիս յերկրի
 թշնամեաց իւրեանց, ոչ անտես ⁶արարի
 գնոսա, ու ոչ ⁷տազտկացայ նոքօք առ
 ի սատակելոյ գնոսա՝ ցրել զօխտ իմ որ
 ընդ նոսա. զի ես եմ Տէր Աստուած
 45 նոցա. եւ յիշեցից զառաջին ուխտան
 նոցա, յորժամ հանի գնոսա յերկրէն
 Եղիպտոսացոց ⁸ի տանէ ծառայութեան՝,
 առաջի ամենայն ազգաց՝ լինել նոցա
 Աստուած. զի ես եմ Տէր:
 46 Այս են իրաւունք եւ հրամանք եւ օ-
 րէնք, զոր ես Տէր ի մէջ իւր եւ ի մէջ
 որդւոցն Իսրայելի ի լերինն Սինայ ի
 ձեռն Մովսիսի:

ԳԼ . ԻԷ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ սասէ,
 2 Խօսեաց ընդ որդիսն Իսրայելի եւ սասա-

ցես ցնոսա, Որ ոք ուխտեսցէ ուխտս՝
 3 տայ զգինս անձին իւրոյ Տեսան, եղի-
 ցին զինք արուի, ի քսանամենից մին-
 չիւ զվախմանամեանս, եղիցին զինք նորա
 յիսուն ⁸երկգրամեան արծաթոյ ըստ
 4 սրբութեան սկեզն. Եւ իզկն լիցին զինք՝
 5 երեսուն ⁸երկգրամեանս Ապա թէ ի հինգ-
 ամենից մինչև ցըսանամեանս, լինի-
 ցին զինք արուին քսան ⁸երկգրամեանս,
 6 եւ իզկն սասան ⁸երկգրամեանս: Եւ յամ-
 սօրէէն մինչև ցինչեմեանն՝ եղիցի
 արուին հինգ ⁸երկգրամեան արծաթոյ,
 եւ իզկն երեք ⁸երկգրամեանք արծա-
 7 թոյ: Ապա թէ ի վախմանամենից եւ ի վեր-
 իցէ, եթէ արու իցէ, եղիցին զինք նորա
 հոգեառասան ⁸երկգրամեան արծաթոյ, եւ
 8 իցին՝ տասն ⁸երկգրամեանս: Ապա թէ
 ալքատ իցէ ի գնոցն, կացցէ առաջի
 քահանային, եւ հատցէ նմա քահանայն
 զին, եւ որչափ ինչ ի կարի իցէ ի ձեռին
 ուխտաւորին՝ արկցէ նմա զինս քահանայն:
 9 Եւ եթէ յանասնոց մատուցանելեաց
 Տեսան իցէ պատարազն, որչափ ինչ
 10 տացէ ի նոցանէ Տեսան՝ սուրբ լիցի. Եւ
 մի՛ փոխանակեսցէ զլաւն ընդ յոռոյն, եւ
 մի՛ զյոռոյն ընդ լաւին. ապա թէ
 փոխանակելով փոխանակեսցէ զայն ա-
 նոսուն ընդ սմասնոյ, եղիցի եւ այն եւ
 11 փոխանակն սուրբ: Ապա թէ յամենայն
 սմասնոց անարող իցէ յորոց ոչ մատ-
 չիցի պատարագ Տեսան, կացուցէ զա-
 12 նատունս առաջի քահանային. Եւ արկցէ
 նմա զինս քահանայն ի մէջ լաւին եւ
 յոռոյն. եւ որպէս զիարգ արկցէ նմա
 13 զինս քահանայն՝ այն կացցէ: Իսկ եթէ
 փրկելով փրկեսցէ զնա, եւ զհինգերորդ
 մասն գնոց նորա յաւելցէ ի նոյն:
 14 Եւ մարդ ոք որ սրբեսցէ զտուն իւր
 սրբութիւն Տեսան, արկցէ նմա զինս
 քահանայն ի մէջ լաւին եւ յոռոյն. եւ
 որպէս զիարգ արկցէ նմա զինս քահա-
 15 նայն, նոյն կացցէ: Ապա թէ որ սրբեացն
 զնա փրկեսցէ զտուն իւր, յաւելցէ եւ
 զհինգերորդ արծաթոյ գնոցն ի նայն, եւ
 նմին իսկ եղիցի:
 16 Եւ եթէ յանդոյ կայուածոց իւրոց
 սրբացէ ոք ինչ Տեսան, եղիցին զինք
 նորա ըստ սկրման իւրում. քսոի միոջ
 գեանոյ՝ եղիցի յիսուն ⁸երկգրամեանս ար-
 17 ծաթոյ: Եւ եթէ յամէ ⁹թողութեանն
 սրբեսցէ զանդն իւր, ըստ գնոցն որչափ

¹ Ա. յ. Է. Կ., եթէ ² ՅԵՔ. Դ. 1-1-Ե ³ ՅԵՔ. ամից
 գնոսա յերկրի ⁴ Կ. 7, պատու հաս ⁵ ՅԵՔ.
 իցեն ⁶ ՅԵՔ. արարից ⁷ ՅԵՔ. տազտկացայց


⁸ ՅԵՔ. սկզ ⁹ ՅԵՔ. յորեւրէնէ

48 Ինչ իցեն, կացցէ : Ապա թէ յետ ¹Թո-
 զութեանն սրբեսցէ զանդն իւր, համա-
 րեսցի նմա քահանայն զարծաթն յայլ
 եւս աման՝ մինչեւ ցտարին ²Թողութեան,
 եւ հասցէ փոքր ինչ ի գնոց անտի նորա :
 49 Ապա թէ փրկեսցէ զանդն որ սրբեացն
 գնա, յաւելցէ զհինգերորդ մասն արծա-
 թոյն ի զինս իւր, եւ նորա իսկ լիցի :
 20 Ապա թէ ոչ փրկեսցէ զանդն իւր, եւ
 վաճառեսցէ զանդն այլում մարդոյ, մի՛
 21 եւս փրկեսցէ : Այլ եզլիցի անդն, ելեալ
 ի ³Թողութեանն՝ սուրբ Տեառն, իրբեւ
 զերկիր մի դատուցեալ . քահանային եւ
 զլիցի ի կալուած :
 22 Ապա թէ յանդոյ զոր գնեալ իցէ եւ
 չիցէ յիւրոց կալուածոց սրբեսցէ Տեառն,
 23 Հաշուեսցի ընդ նմա քահանայն ի գնոցն
 մինչեւ ցտարին ²Թողութեան, եւ տա-
 ցէ զգինսն յաւուր յայնմիկ սրբութիւն
 24 Տեառն : Եւ յամին ¹Թողութեան զարձցի
 անդն անդրէն առ այլն յորմէ ստացեալ
 իցէ, որոյ իւր իսկ էր կալուած երկրին :
 25 Եւ ամենայն զինք եզլիցին ըստ սրբու-
 թեան ³կշտոցն . քսան ⁴դանդ լիցի ⁵երկ-
 զրամեանն :
 26 Եւ ամենայն անդրանիկ որ ծնանիցի
 ի խաչանց քոց՝ Տեառն լիցի, եւ մի՛ ոք
 սրբեսցէ զայն . եթէ արձառ իցէ, եւ
 27 եթէ ոչխար՝ Տեառն լիցի : Եւ եթէ ի

չորքոտանեաց անսրբոց փրկիցէ ըստ
 գնոց իւրոց, զհինգերորդ մասն ի նոյն
 յաւելցէ, եւ նորին լիցի . ապա թէ ոչ
 փրկեսցի, վաճառեսցի ըստ գնոց իւրոց :
 28 Ամենայն նուէր զոր նուիրեսցէ ոք
 Տեառն յամենայնէ որ ինչ իւր իցէ, ի
 մարդոյ մինչեւ յանասուն եւ յանդոյ ⁶մին-
 չեւ ցկալուածս իւր, մի՛ դարձցի անդ-
 րէն՝ եւ մի՛ փրկեսցի . ամենայն նուէր՝
 29 սուրբ սրբութեանց լիցի Տեառն : Ամե-
 նայն նուէր որ նուիրիցի ի մարդկանէ՝
 մի՛ փրկեսցի, այլ մահու մեռանիցի :
 30 Ամենայն տասանորդ յերկրէ, ի սեր-
 մանեաց երկրին եւ ի ստոգոց ծառոց,
 31 Տեառն է, ի սրբութիւն Տեառն : Եւ եթէ
 փրկելով ոք փրկեսցէ զտասանորդ իւր,
 զհինգերորդ մասն յաւելցէ ի նոյն, ⁷եւ
 32 նորին լիցի՝ : Եւ ամենայն տասանորդ
 արձառոյ եւ ոչխարի, ամենայն տասա-
 նորդ որ մտանիցէ ընդ թուով դաւա-
 33 դանի, սրբութիւն Տեառն լիցի : Մի՛ լիցի
 խտիր ընդ բարին եւ ընդ յոռին, եւ մի՛
 փոխանակեսցես զբարին ընդ յոռոցն .
 ապա թէ փոխանակելով փոխանակես-
 ցես, եւ նա եւ փոխանակն իւր եզլի-
 ցին սուրբ, եւ մի՛ փրկեսցի :
 34 Այս են պատուիրանք զոր պատուիր-
 եաց Տէր Մովսիսի առ որդիսն Իսրայելի
 ի լերինն Սինայի :

¹Եբբ. յորեկեհին ²Եբբ. յորեկեան ³Եբբ. սկեղն
⁴Ա. յեհեմ կերատ, կ-տ, ցորեան ⁵Եբբ. սկեղն

⁶Եբբ. կալուածոց իւրոց, մի վաճառեսցի
⁷Եբբ. դոկտո



ԳԼՈՒԽԲ ԹՈՒՈՅՆ

Հրաման առնու Մովսէս հանդերձ իշխանօրն առնու զհամար զորացն Խորայելի, ի քսանամենից եւ ի վեր՝ բաց յՂեւտացւոցն:

Վացուցանէ զՂեւտացիսն բարձորս խորանին և կահից նորուն, եւ զցեղան երիս երիս ի չորից կողմանց ի բացեայ նշանօր ազգացն:

Տայ զՂեւտացիսն պաշտօնեսայ Ահարոնի, եւ առնուլ ստէ յամօրէից եւ ի վեր զհամար երկց որդւոցն Ղեւեսայ, եւ բամանէ զործս իւրաբանչիւրցն ի խորանին:

Առնու զթիւ անդրանկացն Խորայելի, եւ փոխանակ ընդ նոցա իւր զՂեւտացիսն յամօրէից, անձն ընդ սինձին, եւ ընդ աւելարդաց անդրանկացն Խորայելի՝ զհիւզ գեղկրամեանն, եւ տայ ցԱհարոն:

Տայ զպատիւ քահանայութեանն տանն Ահարոնի, եւ ինկարկուս տապաւնակին եւ սեզանոցն զԱհարոն եւ զորդիս իւր, եւ զայլ որդիսն Կահաթու բարձորս՝ այտորդի, Իսկ բարձորս փեղկից խորանին՝ գունդն Քերանի, եւ սեանցն խոյակացն՝ գունդն Մերարեայ:

Վասն զբորոտն եւ զմանանն արտաքոյ պահել բանակին:

Զի զզրկանս, զգլուխն և զհնգեակն հատուցեն ի տեսարն կամ ի քահանայսն:

Վասն կնոջ զորմէ կասկածէ սյրն շնագեալ գոյ. թէ իցէ կամ չիցէ, տալ զերուսն նորովն ընով:

Զի մի արբցէ ուխտաւոր գինի կամ զմմանսն, եւ նուէրք ի կատարման ուխտին:

Որ հնու թիւն քահանային զոր տայր ժողովրդեանն:

Ի նաւակատիս խորանին ընծայք երկոտասան իշխանաց ցեղիցն, եւ խօսելն Աստուծոյի միջոյ բերորէիցն:

Վասն լուցման ճրագաց աշտանակին: Սրբէ զՂեւտացիսն սրկմամբ ի գործ սարկաւազութեան՝ ի քսանամենից միջեւ ցլիսնամեանսն:

Հրամայէ առնել զզատիկն ի չորեքտասան ամսեանն առաջնոյ, Իսկ որք չիցեն սուրբք՝ յերկրորդում ամսեանն ի չորեքտասանն:

Զի հրամանաւ Տեսուն չուեացն կամ բանակեցին ի վերանայ կամ ի ծածկել ամպոյն գիտանին:

Փողս կուածոյս արծաթիս փողէ՛ զի հաւաքեացին, եւ ազդեցութեան՝ զի ընթացին բանակքն չորեքին, ի պատերազմունս, եւ յամսմուտս ի վերայ զՏիցն՝ ի տիպ առա-

Գլ. Հմբ.

բերցն փողոց, եւ շնչտակայնոյն ի Տեսուն գալուստն:

Վերացաւ ամպն, և չուեցին ըստ հրամանի ազդեցող փողոյն ի Սինայէ ի Փառան:

Մեծարէ Մովսէս զՅորաք զաներ իւր երթալ ընդ ինքեանս, եւ իննել քահանայ կամ աւագ:

Թէ ի չուել նոցա, յառաջագոյն երիւք աւուրբք երթայր տապանակն, եւ ամպն ունէր հովանի:

Տրանցեաց ժողովուրդն, եւ պատեցաւ հրով ի կոչեցեալն Հրայրեսացս:

Յանկացան մայ, եւ ինդրեաց Մովսէս ինու զցանկութիւն նոցա, և տալ ինքեանօղնական, և ետգեւթանասուն ծերան, եւ զլորամարգն՝ ամօրեսայ. եւ հարուածեաց զնոսա, եւ ի թաղելոյն կոչեցաւ տեղին՝ Գերեզման ցանկացողաց. յահ եւ յերկեւղ մեղ ի դառխոց:

Բորանի Մարիամ վասն բարբառանացն զՄովսէսէ, զայժմուցս առ մեզ սասան Աստուծոյ նկարագրելով:

Թէ ի զանդ իտեցուցել բանից լրտեսացն՝ յեղիպոսս դատնալ կամէին, ընդ որ բարկացեալ Աստուծոյ վճռեաց նոցա թէ մտցեն ի հանդիստն, բայց որդիքն նոցա, եւ Քաղէք եւ Յեսու:

Ելին պատերազմել ընդ Ամոնեակայ, եւ պարտեցան վասն չլինելոյ ընդ նոսա Տեսուն զոր ցատուցին:

Օրինադրէ զիրաւունս որջակիցացն նաշնով եւ գինուով, ընդ գառին, ընդ խոյի եւ ընդ զուարակի: Զառ մեզ կենդանի բանաւոր զՏից նուէրս նշանակելով զմեզին՝ ուղիդ աղօթիւք ինկանուէր, ընդ սրբոյ Խաչեցարին հզօր եւ անմահ Գառինն Աստուծոյ:

Ի խմորեայ հացից՝ զառաջին նկանակն հաս Տեսուն տալ հրամայէ:

Եթէ ամենայն ժողովուրդն ակամայ յանցիցէ, զուարակ մի յողջակեզ, եւ նոխազ մի վասն մեղաց. իսկ ընդ միոյ անձին ակամայի՝ այտջ մի:

Կամակար մտօք մեղուցեալն՝ մահու մեռցի:

Վարկոծել տայ զկրկտաբաղն ի շարաթու՝ յահ և յերկեւղ ամենայն արհամարհողաց:

Մոպս ստղանին առնել ի տտուես հանդերձիցն, նշանակ յիշման զպատուիրանսն:

Խուժանն Կորխայ եւ Գաթանայ յարեան ի վերայ Մովսէսի եւ Ահարոնի, եւ կորեան չարագար:

Գլ. Հմբ.

Ժ. 1

Ժ. 11

Ժ. 29

Ժ. 33

ԺԱ. 1

ԺԱ. 4

ԺԲ. 1

ԺԳ. 2

ԺԳ. 39

ԺԴ. 1

ԺԵ. 16

ԺԶ. 22

ԺԷ. 30

ԺԸ. 32

ԺԹ. 37

ԺՁ. 1

	ԳԼ. Հմբ.		ԳԼ. Հմբ.
Հրամայէ զբուրուստն պղնձին զպրեցելոցն սունել ծածկոյթ սեղանոյն, յիշատակ յանցուցելոցն և ի ստկուսն ապագայիցն :		արկուք վայ կարգան Մովսէսու, Առ և զթագաւորութիւնն Ովգայ զԲասանաստանն :	ԻԱ. 21
Տրանջեաց ժողովուրդն զՄովսիսէ՝ իբրև թէ յանձնէ պատժեաց զժողովն Կորիայ, և անկան ընդ այնր չորքտասան հազարք, մինչեւ Ահարոն խնկարկեալ քաւեաց :	ԺԶ. 36	Եկն ժողովուրդն մօտ ի Յորդանան, և կոչեաց Բաղակ զԲաղասամ անիծանել զԿարայէ. որ և յորհնելն զԻսրայէլ մարգարեացաւ եւս զԲրիստոսէ թէ ծագեցէ Ասադն Յակուբայ : Եւ ապա ի ձեռն չար խրատու՝ գայթագղութիւն նիւթեաց Իսրայելի, ուր և անկան քսան և չորք հազարք :	ԻԲ. 1
Հրամայէ առնուլ դաւազանս բատ անուանց ցեղիցն, վասն ընտրութեան քահանայութեան. և ծաղկեցաւ քաւազանն Ահարոնի :	ԺԶ. 41	Անդ առաքինացեալ Փենեէս խոցեաց զՍամբրի, և տուաւ նմա ուխտ քահանայութեան. և սասց Տէր առնուլ վրէժս ի Մադիանացոց :	ԻԵ. 6
Տայ զՂեւտացիսն ի պաշտօն Ահարոնի պահել զխորանն. բայց մի՛ ի սեղանն մերձեալ :	ԺԷ. 1	Հրամայէ դարձեալ թուել զԿարայէլ, որոց սայոց էր զերկիրն ի ժառանգութիւն Բայց Ղեւտացւոցն :	ԻԶ. 1
Շնորհէ Ահարոնի և որդւոց նորա զհաս նուիրացն և զոհից, և զախապարտուղս արմուեացն համարձակ ուտել ուստերաց և դստերաց տանն Ահարոնի. և զանդրանիկս անասնոց և զփրկանս անդրանկաց ժողովրդեանն :	ԺԷ. 8	Գան դստերքն Սաղպաադու խնդրել ժառանգութիւն, և հրամայեաց զարժանն վասն ժառանգութեանց :	ԻԷ. 1
Ձառասանորդս մտից ժողովրդեանն տայ Ղեւտացւոցն. և սմին վասն ոչ տայ նոցա վիճակ կայուածոց երկրի. զի Տէր է բաժին նոցա :	ԺԷ. 21	Հրամայէ Մովսիսի երանել Նաբաւ լեառն և վախճանել. բայց նախ ձեռնադրել զՅիսուս առաջնորդ Իսրայելի :	ԻԸ. 12
Ի մտից անտի տասանորդացն՝ տացին Ղեւտացիքն տասանորդս տանն Ահարոնի :	ԺԷ. 25	Պատուէր տայ զհանապազորդ նուիրացն, զառաւօտոց և զերկիրեայ գառանց, և զշարաթուց և զյանամտից. եւս և զգլխաւոր տօնից, զՉասակի, զՊենտակոստէի, զԲաւուլութեան, զՏաղաւարահարաց :	ԻԹ. 1
Ձմեխիբ սյրեցելոյ կարմիր երնջուս ունել ի պահեստ տա ի սրակուսն սըրբութեան. նկարելով զարասար չարարարանս Գրիստոսի :	ԺԹ. 1	Հրամայէ զի զոր ուխտ որ հաստուցէ. բայց թէ այն կամ հայրն չտացեն թող՝ մի՛ հատուցէ :	Լ. 1
Մերձեցելոցն ի զի կամ յոսկր մեռելոյ՝ սրբել սրկմամբ միխրոյն յերրորդ և յեւթներորդ աւուր հրամայէ :	ԺԹ. 11	Առին վրէժ ի Մադիանայ, սպանին զՏիմոթ թագաւորսն, և զԲաղասամս և Ետուսն յաւարէն հաս Տեառն և Ղեւտացւոցն :	ԼԱ. 1
Մեռաւ Մարիամ ի Կարէս. և ի տըրանջել ժողովրդեանն ընդ հրոյ՝ հրամանս առեալ Մովսէս չարախանէ զվէսն երկիցս, և ապա ել ջուրն : Վասն որոյ մեղադրին Մովսէս և Ահարոն. և կոչեցաւ տեղին՝ Ջուր բամբասանաց :	Ի. 1	Խնդրեցին ի Մովսիս Գադ և Ռուբէն ի կալուած զերկիրն Ահարոնի եւ Ովգայ, եւ ետ. պատուիրելով երթալ նոցա ընդ ինն ցեղիցն յառաջապահ նկազակակց՝ մինչեւ նուաճեցեն զերկիրն ընդ ձեռամբ :	ԼԲ. 1
Խնդրեաց Մովսէս ճանապարհ ընդ Եգիպտոս, և նա ոչ ետ, այլ ել պատերազմել. յորմէ խոյս տուեալ Իսրայելի եկն ի Հովր լեառն :	Ի. 14	Բանակեալք Իսրայելի յԵգիպտոսէ մինչեւ ցեղրն Յորդանանու յանդիման Երեքոյի :	ԼԳ. 1
Անդ մեռաւ Ահարոն, և մինչդեռ ի սուգ էր ժողովուրդն՝ եկն պատերազմել Բանանացիսն, և նզովեաց զնա Իսրայէլ :	Ի. 23	Հրամայէ զի ի մտանելն յերկիր անդր կործանեցեն զկուսն և զբաղինս : Ըրացրէ զեղբոր աշխարհին զոր ժառանգելոց էին՝ ըստ լայնութեան և երկայնութեան :	ԼԳ. 50
Տրանջեցին վասն մանանային, և յօժիցն բազումք սասակեցան, մինչեւ կանգնեաց զօձն պղնձի ի տիպ Գրիստոսի :	ԻԱ. 4	Անուանք իշխանացն, որ ժառանգեցուցանելոց են նոցա զերկիրն :	ԼԳ. 16
Ձբարում օթեւանոր անցեալ եկին ի Ջրհորն մեծ ի ձորն Առնոփայ. ուր և նուաղեցին Աստուծոյ ի վերայ Ջրհորոյն մեծի :	ԻԱ. 10	Հրամայէ զի տացեն Ղեւտացւոցն ի կալուած զբարաքսն ապաստանի, յորս անկեալ ապրեսցին ակամայ սպանողն :	ԼԵ. 1
Խնդրեաց Իսրայէլ ճանապարհ ընդ սահմանս Ահարոնի, և նա ոչ ետ. և հար զնա Իսրայէլ, և առ զամենայն սահմանս նորա. ուր և առակ-		Թէ զինչ խնդրեցին իշխանք ցեղին Մասաէի ի պատճառս դստերոցն Սաղպաադու. և թէ զինչ օրինադրեցաւ վասն ժառանգութեան :	ԼԶ. 1

ԹԻԻՔ

ԳԼՈՒԽ Ա

1 **Ե**ր խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի
յանապատին Սինայի , ի խորանին
1 Վկայութեան , ի միում՝ ամսեանն երկ-
րորդի , յամին երկրորդի ելանելոյ նոցա
2 յերկրէն եզիպտացոց , ասէ , Ասէք զՆա-
մար ամենայն ժողովրդեան սրբոցն Իս-
րայելի , ըստ սպգս , ըստ տանց նահա-
պետաց , ըստ թուոց յանուանէ , ըստ
3 զլիտոց նոցա՝ ամենայն արու , ի քսանա-
մենից եւ ի վեր , ամենայն որ ելանիցէ
ի զօրսդ Իսրայելի , հանդէս առնել նոցա
հանդերձ զօրութեամբ իւրեանց զու եւ
4 Ահարոն . ¹առնիցէք նոցա հանդէս :՝ Եւ
ընդ ձեզ լինիցին իւրաքանչիւր ըստ
ցեղի , իւրաքանչիւր ի իշխան , ըստ տանց
նահապետաց լինիցին .
5 Եւ այս են անուանք արանցն որ յան-
դիման լինիցին ընդ ձեզ . Ռուբենի՝ Ե-
6 դիսուր որդի Սաղիուրայ , Շամուոնի՝ Սա-
7 զամիէլ որդի Սուրիսաղայի , Յուզայի՝
8 Նասսոն որդի Ամինադարայ , Իսաքա-
9 յայ՝ Նաթանայէլ որդի Սուլպարայ , Չա-
10 բուղոնի՝ Եղիար որդի Քեղովկայ , Արդ-
ւոցն Յովսեփայ , Եփրեմի՝ Եփրատմա
որդի Եմփուզայ , Մանասէի՝ Գամաղիէլ
11 որդի Փազասուրայ , Բենիամինի՝ Աբի-
12 զան որդի Գեգէոնի , Դանայ՝ Արիեկեր
13 որդի Ամիսաղայի , Սսերայի՝ Փազիէլ որդի
14 Եբրամայ , Գադայ՝ Եփրատմա որդի
15 Գազուէլի , Նփիթաղիմայ՝ Աբիրէ որդի
16 Ենանայ : Առքա են անուանիք ժողովր-
դեանն , ի իշխանք ցեղիցն ըստ նահապե-
տաց՝ հազարապետք Իսրայելի :
17 Եւ առին Մովսէս եւ Ահարոն զարսն
զայնոսիկ որք յանուանէն կոչեցան .
18 Եւ զամենայն ժողովուրդն ժողովեցին
ի միում՝ ամսեանն երկրորդի , ² յամին
երկրորդի ,՝ եւ մտին ի հանդէս ըստ ազ-
գաց իւրեանց , ըստ նահապետաց իւր-
եանց , ըստ թուոց անուանց նոցա , ի
քսանամենից եւ ի վեր , ³ ամենայն արու .

19 ըստ զլիտոց իւրեանց : Որպէս հրամայ-
եաց Տէր Մովսիսի , եւ մտին ի հանդէս
յանապատին Սինայի :
20 Եւ եզեն սրգիք Ռուբենի՝ անդրան-
կանն Իսրայելի , ըստ սպգս իւրեանց ,
ըստ գունդս իւրեանց , ըստ տանց նա-
հապետաց իւրեանց , ըստ թուոց անուանց
իւրեանց , ըստ զլիտոց իւրեանց , ամե-
նայն արու ի քսանամենից եւ ի վեր ,
ամենայն որ ելանէր ի զօրսն ² Իսրայելի՝
21 Հանդէս նոցա յազգէն Ռուբենի , քա-
ռասուռն եւ վեց հազար եւ հինգ հարեւր :
22 Եւ որդոցն Շամուոնի , ըստ ազգս իւր-
եանց , ըստ գունդս իւրեանց , ըստ տանց
նահապետաց իւրեանց , ըստ թուոց ան-
ուանց իւրեանց , ըստ զլիտոց իւրեանց ,
ամենայն արու ի քսանամենից եւ ի վեր ,
23 ամենայն որ ելանէր ի զօրսն՝ Հանդէս
նոցա ի ցեղէն Շամուոնի , յիսուռն եւ ինն
հազար եւ երեք հարեւր :
24 Եւ որդոցն Գադայ՝ ըստ սպգս իւր-
եանց , ըստ գունդս իւրեանց , ըստ տանց
նահապետաց իւրեանց , ըստ թուոց ան-
ուանց ³ նոցա , ըստ զլիտոց իւրեանց ,
ամենայն արու՝ ի քսանամենից եւ ի վեր ,
25 ամենայն որ ելանէր ի զօրու՝ Հանդէս
նոցա ի ցեղէն Գադայ , քառասուռն եւ
հինգ հազար եւ վեց հարեւր եւ յիսուռն :
26 Եւ որդոցն Յուզայ՝ ըստ ազգս իւր-
եանց , ըստ գունդս իւրեանց , ըստ տանց
նահապետաց իւրեանց , ըստ թուոց ան-
ուանց ³ նոցա , ըստ զլիտոց իւրեանց ,
ամենայն արու՝ ի քսանամենից եւ ի
27 վեր , ամենայն որ ելանէր ի զօրսն՝ Հան-
դէս նոցա ի ցեղէն Յուզայ՝ եւ թմանասուռն
եւ չորք հազարք եւ վեց հարեւր :
28 Եւ որդոցն Իսաքարայ՝ ըստ սպգս
իւրեանց , ըստ գունդս իւրեանց , ըստ
տանց նահապետաց իւրեանց , ըստ թուոց
անուանց ³ իւրեանց , ըստ զլիտոց իւր-
եանց , ամենայն արու՝ ի քսանամենից
եւ ի վեր , ամենայն որ ելանէր ի զօ-
29 բու՝ Հանդէս նոցա ի ցեղէն Իսաքարայ ,
յիսուռն եւ չորք հազարք եւ չորեքհարեւր :

¹Եբր. ժողովոց. այսպէս յաճուի. ²ՅԵբր. գալուստ

30 Եւ որդւոցն Ջարուղոնի՝ ըստ գունդս իւրեանց , ըստ աղզս իւրեանց , ըստ տանց նահապետաց իւրեանց , ըստ թուոյ անուանց ՚իւրեանց , ըստ զլիտց իւրեանց , ամենայն արու՝ ի քսանամենից եւ ի վեր ,

31 ամենայն որ ելանէր ի գորու՝ Հանդէս նոցա ի ցեղէն Ջարուղոնի , յիսուն եւ եւթն հազար եւ չորեքհարեւր :

32 Եւ որդւոցն Յոսեփայ , որդւոց Նփրեմի՝ ըստ աղզս իւրեանց , ըստ գունդս իւրեանց , ըստ տանց նահապետաց իւրեանց , ըստ թուոյ անուանց , նոցա , ըստ զլիտց իւրեանց , ամենայն արու՝ ի քսանամենից եւ ի վեր , ամենայն որ ելանէր ի գորու՝

33 ի զորու՝ Հանդէս նոցա ի ցեղէն Նփրեմի , քառասուն հազար եւ հինգ հարեւր :

34 Եւ որդւոցն Մանասէի՝ ըստ աղզս իւրեանց , ըստ գունդս իւրեանց , ըստ տանց նահապետաց իւրեանց , ըստ թուոյ անուանց ՚իւրեանց , ըստ զլիտց իւրեանց , ամենայն արու՝ ի քսանամենից եւ ի վեր , ամենայն որ ելանէր ի գորու՝

35 Հանդէս նոցա ի ցեղէն Մանասէի , երեսուն եւ երկու հազար եւ երկիրիւր :

36 Եւ որդւոցն Բենիամինի՝ ըստ աղզս իւրեանց , ըստ գունդս իւրեանց , ըստ տանց նահապետաց իւրեանց , ըստ թուոյ անուանց նոցա , ըստ զլիտց իւրեանց , ամենայն արու՝ ի քսանամենից եւ ի վեր , ամենայն որ ելանէր ի գորու՝

37 Հանդէս նոցա ի ցեղէն Բենիամինի , երեսուն եւ հինգ հազար եւ չորեքհարեւր :

38 Եւ որդւոցն Դանայ՝ ըստ աղզս իւրեանց , ըստ գունդս իւրեանց , ըստ տանց նահապետաց իւրեանց , ըստ թուոյ անուանց նոցա , ըստ զլիտց իւրեանց , ամենայն արու՝ ի քսանամենից եւ ի վեր , ամենայն որ ելանէր ի գորու՝

39 Հանդէս նոցա ի ցեղէն Դանայ , վաթսուն եւ երկու հազարք եւ եւթն հարեւր :

40 Եւ որդւոցն Ասերայ՝ ըստ աղզս իւրեանց , ըստ գունդս իւրեանց , ըստ տանց նահապետաց իւրեանց , ըստ թուոյ անուանց նոցա , ըստ զլիտց իւրեանց , ամենայն արու՝ ի քսանամենից եւ ի վեր ,

41 ամենայն որ ելանէր ի գորու՝ Հանդէս նոցա ի ցեղէն Ասերայ , քառասուն եւ մի հազար եւ հինգ հարեւր :

42 Եւ որդւոցն Նեփթաղիմայ՝ ըստ աղզս իւրեանց , ըստ գունդս իւրեանց , ըստ տանց նահապետաց իւրեանց , ըստ թուոյ

անուանց նոցա , ըստ զլիտց իւրեանց , ամենայն արու՝ ի քսանամենից եւ ի վեր ,

43 ամենայն որ ելանէր ի գորու՝ Հանդէս նոցա ի ցեղէն Նեփթաղեմի , յիսուն եւ երեք հազարք եւ չորեքհարեւր :

44 Այս է հանդէս զոր արարին Մովսէս եւ Ահարոն եւ իշխանքն Իսրայելի , երկու տասն ՚իշխանք . այր մի ըստ ՚միում աղդի , ըստ ցեղից՝ ամաց նահապետաց

45 իւրեանց էին : Եւ եղև ամենայն հանդէս որդւոց Իսրայելի ՚հանդերձ գորու՝ իւրեանց ի քսանամենից եւ ի վեր ամենայն որ ելանէր ՚տալ պատերազմ՝ ի

46 միջոյ Իսրայելի . Եւ եղև ամենայն անցեալ յին ի հանդիսի վեց հարեւր հազար , եւ երեք հազար եւ հինգ հարեւր եւ յիսուն :

47 Բայց Ղեւտացիքն ի ցեղէ աղզին իւրեանց ոչ անցին ի հանդիսի ՚ընդ որդիսն

48 Իսրայելի՝ : Յօսեցաւ Տէր ընդ Մովսիսի

49 եւ ասէ , Տեսջիր , զագգն Ղեւտայ մի՛ խառնեցես ընդ նոսա ի հանդէս , եւ զհամար նոցա մի՛ առնուցուս ի մէջ որդւոցն

50 Իսրայելի . Եւ կացուցես զՂեւտացիսն ի վերայ խորանին վկայութեան , եւ ի վերայ ամենայն կահի նորա , եւ ի վերայ ամենայնի որ ինչ է ի նմա . նոքա բարձցին զխորանն եւ զամենայն զկահ նորա , եւ նոքա պաշտեցին ի նմա , եւ

51 չուրջ զխորանուն բանակեցցին : Եւ ի չուել խորանին՝ իշուցին զնա Ղեւտացիքն , եւ ի բանակիս խորանին՝ կանգնեցցին զնա Ղեւտացիքն . եւ այլազգի որ մերձեցի ի նա՝ մեռցի :

52 Եւ բանակեցցին որդիքն Իսրայելի այր ըստ իւրաքանչիւր կարգի , եւ այր ըստ իւրաքանչիւր նահապետութեան հանդերձ գորու իւրեանց : Բայց Ղեւտացիքն բանակեցցին չուրջ զխորանուն վկայութեան նոցա յանդիման Տեառն՝ , եւ ոչ լինիցին մեղք ի մէջ որդւոցն Իսրայելի . եւ պահեցցին Ղեւտացիքն զպահպանութեան խորանին վկայութեան : Եւ արարին որդիքն Իսրայելի ըստ ամենայնի , որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի՝ Եւ Ահարոնի՝ . նոյնպէս եւ արարին :

ԳԼ . Բ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ Ահարոնի եւ ասէ , Այր իւրաքանչիւր

18Եբբ. գլ-ու-ի

² Եբբ. այր ³ Եբբ. ըստ տանց նահապետաց
⁴ Եբբ. ի զըրու ⁵ Եբբ. ի միջի նոցա

¹զհետ նշանի գնդի իւրոյ գնացեն , ըստ տանց նահապետաց իւրեանց , ըստ բանակաց իւրեանց բանակեացն որդիքն իւրայելի¹ :

3 Եւ որ յառաջագոյնն բանակիցին յարեւելից կողմանէ՝ ցեղ բանակին Յուզայ իցէ հանդերձ զօրուն իւրեանց . եւ իշխան որդւոցն Յուզայ՝ Նաասն որդի

⁴Ամինադարայ : Եւ զօրք նորա անցեալք ի հանդիսի՝ եւթսնասուն եւ չորք հազարք եւ վեց հարեւր : Եւ որք բանակիցին զհետ նոցա՝ ցեղն Իսաքարայ իցէ . եւ իշխան որդւոցն Իսաքարայ՝ Նաթանայէլ որդի Սուլլարայ : Եւ զօրք նորա անցեալք ի հանդիսի՝ յիսուն եւ չորք հազարք եւ չորեքհարեւր : Եւ բանակեացին առ նոքօք ցեղն Զարուզոնի . եւ իշխան որդւոցն Զարուզոնի՝ Եղիար որդի Քեզոմելն Եւ զօրք նորա անցեալք ի հանդիսի՝ յիսուն եւ եւթն հազար եւ չորեքհարեւր :

⁹Ամենեքին անցեալք ի հանդիսի բանակին Յուզայ , հարեւր ութսուն եւ վեց հազար եւ չորեքհարեւր , հանդերձ զօրուն իւրեանց յառաջագոյն չուեցին :

40 Գունդ բանակին Ռուբինի ընդ հարաւակողմն , եւ զօրն նոցա . եւ իշխան որդւոցն Ռուբինի՝ Եղիսուր որդի Սազիուրայ : Եւ զօրն նորա անցեալք ի հանդիսի՝ քսուսուն եւ վեց հազար եւ հինգ հարեւր : Եւ բանակեացին առ նովաւ ցեղն Շամաոնի . եւ իշխան որդւոցն Շամաոնի Սաղամիէլ որդի Սուրիսապայի :

13 Եւ զօրն նորա անցեալք ի հանդիսի՝ յիսուն եւ ինն հազար եւ երեք հարեւր :

44 Եւ բանակեալք սու նովաւ ցեղն Գադայ . եւ իշխան որդւոցն Գադայ՝ Եղիսուփան

15 որդի Իսգուելի : Եւ զօր նորա անցեալք ի հանդիսի՝ քսուսուն եւ հինգ հազար

46 եւ վեց հարեւր եւ յիսուն : Ամենեքին անցեալք ի հանդիսի ցեղին Ռուբինի , հարեւր յիսուն եւ մի հազար եւ չորեքհարեւր եւ յիսուն , հանդերձ զօրուն իւրեանց երկրորդ չուեցին :

17 Եւ խազապէ խորանն Չվլայութեան եւ բանակ Ղեւտաղոցն ի մէջ բանակացն . որպէս բանակեացին՝ նոյնպէս չուեցին , իւրաքանչիւր ³զհետ միմեանց ըստ պետութեանն² :

18 Եւ զունդ բանակին Եփրեմի ընդ ⁴ծովակողմն հանդերձ զօրուն իւրեանց . եւ իշխան որդւոցն Եփրեմի՝ Եղիսամա որդի

19 Եմիուզայ : Եւ զօրն նորա անցեալք ի հանդիսի՝ քսուսուն հազար եւ հինգ

20 հարեւր : Եւ որ բանակիցին զհետ նոցա՝ ցեղն Մանասէի իցէ . եւ իշխան որդւոցն Մանասէի՝ Գամաղիէլ որդի Փադասու

21 րայ : Եւ զօրն նորա անցեալք ի հանդիսի՝ երեսուն եւ երկու հազարք եւ երկեւ

22 ըրւր : Եւ որ բանակիցին զհետ նոցա՝ գունդն Բենիամինի իցէ . եւ իշխան որդւոցն Բենիամինի՝ Արիգան որդի Գեղէո

23 նի : Եւ զօր նորա անցեալք ի հանդիսի՝ երեսուն եւ հինգ հազար եւ չորեքհա

24 ղուր : Ամենեքին անցեալք ի հանդիսի բանակին Եփրեմի , հարեւր եւ ութ հազար եւ ⁵երկիրւր , հանդերձ զօրուն իւրեանց՝ երրորդ չուեցին :

25 Եւ զունդ բանակին Դանայ ընդ հիւսիսի հանդերձ զօրուն իւրեանց . եւ իշխան որդւոցն Դանայ՝ Աքիեզեր որդի

26 Ամիսադայի : Եւ զօր նորա անցեալք ի հանդիսի՝ վաթսուն եւ երկու հազարք

27 եւ եւթն հարեւր : Եւ որ բանակեացին զհետ նորա՝ ազգն Ասերայ իցէ . եւ իշխան որդւոցն Ասերայ՝ Փաղիէլ որդի

28 Եքրանայ : Եւ զօր նորա անցեալք ի հանդիսի՝ քսուսուն եւ մի հազար եւ հինգ

29 հարեւր : Եւ որ բանակեացին զհետ նորա՝ ցեղն Նեփթաղեմի իցէ . եւ իշխան որդւոցն Նեփթաղեմի՝ Աքիրէ որդի Ենա

30 նայ : Եւ զօրն նորա անցեալք ի հանդիսի՝ յիսուն եւ երեք հազարք եւ չորեք

31 հարեւր : Ամենեքին անցեալք ի հանդիսի բանակին Դանայ , հարեւր եւ յիսուն եւ եւթն հազար եւ վեց հարեւր . հանդերձ զօրուն իւրեանց յետոյ չուեցին ըստ գունդս իւրեանց :

32 Այս է հանդէս որդւոցն Իսրայելի ըստ տանց նահապետաց իւրեանց . ամենայն հանդէս բանակացն հանդերձ զօրօք իւրեանց՝ վեց հարեւր հազար եւ երեք հա

33 զարք եւ հինգ հարեւր եւ յիսուն : Բայց Ղեւտաղիքն որպէս անցին ընդ նոսա՝ ի հանդիսի , որպէս սրատուրեաց Տէր

34 Մովսիսի . Եւ արարին որդիքն Իսրայելի զամենայն՝ որպէս նրամայեաց Տէր Մովսիսի . այնպէս բանակէին ըստ ⁷գունդոց

¹Եբբ. առ դրոշի իւրում ի նշանս տան հարց իւրոց , բանակեացն որդիքն Իսրայելի , դէմ՝ յանգիման շուրջ գերսանուն ժողովոյ բանակեացն : ²Եբբ. ժողովոյ ³Եբբ. ի կայի իւրում ըստ դրօշու իւրեանց

⁴կամ , արեւմուտս ⁵Եբբ. հարեւր ⁶Եբբ. ի մէջ որդւոցն Իսրայելի ⁷Եբբ. դրօշուց

իւրեանց , եւ այնպէս չուէին իւրաքանչիւր զհետ ցեղից իւրեանց ըստ տանց նահապետաց իւրեանց :

ԳԼ . Գ

1 Եւ այս ասղիք են Ահարոնի եւ Մովսիսի , յաւուր յորում խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի ի լերինն Սինայի : Եւ այս են անուանք որդւոցն Ահարոնի . անդրանիկ՝ ¹Նաբադ եւ Աբիուզ եւ Եղիազար եւ ²Իթամար : Եւ այս են անուանք որդւոցն Ահարոնի՝ քահանայիցն օծելոց , զորոց կատարելիցն զձեռս իւրեանց քահանայանալ : Եւ վախճանեցան Նաբադ եւ Աբիուզ առաջի Տեառն՝ մինչ մտառեցանէին զհօրն օտար առաջի Տեառն յանապատին Սինայի , եւ որդիք ոչ էին նոցա . եւ քահանայացան Եղիազար եւ Իթամար ընդ Ահարոնի ընդ հօրն իւրեանց :

5 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ⁶ասէ , Ա՛ն զազգն Ղեւեայ , եւ կայուցիս գնոսա առաջի Ահարոնի քահանայի , եւ պաշտեցիցն զնա : Եւ պահեցին զպահարնութիւնս նորա եւ զպահարնութիւնս որդւոցն Իսրայելի առաջի խորանին ²վկայութեան՝ զործել զգործ ³խորանին : Եւ պահեցին զամենայն սպասխորանին ²վկայութեան եւ զպահարնութիւնս որդւոցն Իսրայելի եւ զամենայն զործ խորանին : Եւ տացիս զՂեւեային Ահարոնի՝ ³եզբօր քում՝ եւ որդւոց նորա ³քահանայից . հատուցումն տուեալ ⁴իցին նոքա յորդւոցն Իսրայելի : Եւ զԱհարոն եւ զորդիս նորա կացուցիս ³ի վերայ խորանին վկայութեան , եւ պահեցին զքահանայութիւնն իւրեանց ³եւ զամենայն ինչ զսեղանոցն , եւ որ ինչ ի ներքոյ քան զվարագոյրն իցէ՝ . եւ ալլազգի որ մերձենայցէ՝ մնայի :

11 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ¹²ասէ , Եւ ես ահա առի զՂեւեայիսն ի միջոյ որդւոցն Իսրայելի փոխանակ ամենայն անգամնկան որ բնայ զարգանդ ի միջոյ որդւոցն Իսրայելի . ³փրկանք նոցա ¹³լիցին ,՝ եւ եղիցին ինձ Ղեւեայիքն : Զի իմ է ամենայն անդրանիկ . յաւուր յորում հարի զամենայն անդրանիկ յերկրին Եզրիպտացոց , սրբեցի ինձ զամենայն անդրանիկս Իսրայելի ի մարդոց մինչեւ

յանասուն . իմ լիցին . ³զի ես եմ Տէր : ¹⁴ Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի յահարոնիսն Սինայի եւ ասէ , Հանդէս արա որդւոցն Ղեւեայ ըստ տանց նահապետաց իւրեանց , ³ըստ գունդս իւրեանց ,՝ ըստ ազգս իւրեանց , ամենայն արու՛ յամօրէից եւ ի վեր անիցէք ¹⁶հանդէս : Եւ հարարին նոցա հանդէս Մովսէս ³եւ Ահարոն՝ ըստ ըստրառոյ Տեառն՝ ¹⁷որպէս եւ ⁵հրամայեաց նոցա Տէր՝ : Եւ սոքա են որդիք Ղեւեայ ըստ անուանց իւրեանց . Գերսոն , Կահաթ եւ Մերարի : ¹⁸ Եւ այս են անուանք որդւոցն Գերսոնի ըստ գունդս իւրեանց . Դորեհի եւ Սեմէի : Եւ որդիք Կահաթու ըստ գունդս իւրեանց , Ամրամ եւ Իսահառ եւ Քերոն եւ Ոզիէլ : Եւ որդիք Մերարեայ ըստ գունդս իւրեանց , Մոզի եւ Մուսի . սոքա են գունդք Ղեւեայցոց ըստ տանց նահապետաց իւրեանց :

21 Գերսոնի՛ գունդն Դորեհայ եւ գունդն ²²Սեմեայ . սոքա են գունդք Գերսոնի : Եւ հանդէս նոցա ըստ թուոյ ամենայն արուի , յամօրէից եւ ի վեր , հանդէս նոցա՝ ²³եւ թիւ հազար եւ հինգ հարեւր : Եւ այս գունդք Գերսոնի՛ յետոյ խորանին ընդ ²⁴ծովակողմնս բանակեացին : Եւ իշխան տան նահապետաց զնոցին Գերսոնի՛ Եղի-²⁵սսիսն որդի Գերսոնի : Եւ պահպանութիւն որդւոցն Գերսոնի ի խորանին վկայութեան՝ խորանն եւ ⁶արտախուրակք եւ նուարտանք խորանին վկայութեան , Եւ առաջաստք սրահին , եւ վարագոյր զրօն խորանին , եւ այլ եւս աւելորդ՝՝ ամենայն զործոյն նորա :

27 Եւ Կահաթու՛ գունդ մի Ամրամայ , եւ գունդ մի Իսահառայ , եւ գունդ մի Քերոնի , եւ գունդ մի Ոզիէլի . սոքա ²⁸են գունդք Կահաթու . Ըստ թուոյ ամենայն արուի յամօրէից եւ ի վեր , ութ հազար եւ վեց հարեւր , որ պահիցին ²⁹զպահարնութիւն սրբութեանցն : Եւ գունդք որդւոցն Կահաթու բանակեացին ³⁰ի կողմանէ խորանին ընդ հարաւ : Եւ իշխան տան նահապետաց զնոցին Կահա-³¹թու՛ Եզրիստիսն որդի Ոզիէլի : Եւ պահպանութիւն նոցա՛ տասպանակն եւ սե-

¹ Եբբ. Նաբադ , այսպէս եւ այլ-որ զովոյ ³ Եբբ. պ-ի-տե ² Եբբ. ժո- յովոյ ⁴ Եբբ. արար ⁵ հրամայեցաւ ⁶ Եբբ. վրանն , նուարտան նորա եւ վարագոյր զրօն խորանին ժողովոյ , (26) Եւ առաջաստք գաւթին , եւ վարագոյր զրան գաւթին որ զխորանուսն եւ զսեղանոցն շուրջանակի , եւ ապաւանդակք նորա վասն

զանն եւ աշտանակն եւ զոճանոցքն եւ կահ սրբութեանն որովք պաշտէինն, եւ ¹սրկապանն, եւ ամենայն գործի նոցա :

32 Եւ իշխանն ի վերայ իշխանայն Ղեւտացւոցն՝ Եզրիպար որպի Ահարոնի քահանայի կացչէ, պահի զպահպանութիւնս սրբութեանցն :

33 Եւ Մերարեայ՝ զուսնն Մոսլեայ եւ զուսնն Մուսուայ, սորա են զուսնք Մե-
 34 րարեայ : Եւ հանդէս նոցա ըստ թուոյ ամենայն սրուի յամօրէից եւ ի վեր՝
 35 վեց հազար եւ երկերիւր : Եւ իշխանն տան նահապետաց զնպին Մերարեայ՝ Մուրիէլ որպի Աբիբեայ, ի կողմանէ խորանին բանակեացին ընդ հիւսիսի, ²եւ
 36 հանդէս նոցա : Եւ պահպանութիւնս՝ որդւոցն Մերարեայ ³խոյակք խորանին եւ նիգք նորա եւ սիւնակք նորա, խորիսք նորա եւ ամենայն կահ նոցուն :
 37 Եւ գործի նոցին, Եւ սիւնք ⁴սրահին չարջանակի եւ խարիսիք նոցա եւ ցիւք նոցա եւ ապաւանդակք նոցուն :

38 Եւ որ բանակիցին յանդիման խորանին վկայութեան յարեւելից կողմանէ՝ Մովսէս եւ Ահարոն իցեն, եւ որդիք նորա պահեցնին զպահպանութիւնս սրբութեանցն ի պահպանութիւնս որդւոցն Իսրայելի, եւ սլազզի որ մեքձենայցէ՝
 39 մուցի : Ամենայն հանդէս Ղեւտացւոցն որոց արարին հանդէս Մովսէս եւ Ահարոն ընդ Տիւնն, ըստ զուսնոս իւրեանց, ամենայն արու յամօրէից եւ ի վեր՝ քսան եւ երկու հազարք :

40 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ, Հանդէս արա ամենայն անդրանկան արուի յորդւոցն Իսրայելի յամօրէից եւ ի վեր, եւ կալ զթիւ նոցա
 41 յանուանէ : Եւ ապա զՂեւտացիսն ինձ, զի ես եմ Տէր, փոխանակ ամենայն անդրանկաց որդւոցն Իսրայելի : Եւ զահասունն Ղեւտացւոց՝ փոխանակ անասնոց
 42 անդրանկաց որդւոցն Իսրայելի : Եւ արար Մովսէս հանդէս, որպէս պատուիրեաց Տէր նմա, ամենայն անգրանկաց որդւոցն
 43 Իսրայելի : Եւ եղին ամենայն արուք անգրանիկք ⁵որդւոցն Իսրայելի՝, ըստ թուոյ յանուանէ յամօրէից եւ ի վեր, ի հանդիսէ անտի նոցա՝ քսան եւ երկու հազարք եւ երկերիւր եւ եւթանասուն եւ երեք :

44 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ
 45 ասէ, Առ զՂեւտացիսն փոխանակ ամենայն անգրանկաց որդւոցն Իսրայելի, եւ զանասունն Ղեւտացւոց՝ փոխանակ անասնոց նոցա, եւ եղիցին ինձ Ղեւտացիքն :
 46 ⁶Պի ես եմ Տէր : Եւ զվրկանս զերկիւրիւրոց եւ զեւթանասնից եւ զերկնասերորոց քան զՂեւտացիսն՝ յանգրանկաց որդւոցն Իսրայելի՝ Աոցես հինգ սիկզ ըստ պլուի, ըստ սրբութեանն ⁷երկրորդանինն աոցես : քսան ⁸զանգ առ սիկզ :
 48 Եւ աոցես զարծաթն Ահարոնի եւ որդւոց նորա վրկանս ընդ աւելորդացն
 49 ի նոցանէ : Եւ առ Մովսէս զարծաթն՝ զվրկանս աւելորդաց ի վրկանս Ղեւտացւոցն՝ Յանգրանկաց որդւոցն Իսրայելի : Եւ առ զարծաթն հազար եւ երեք հարեւր եւ վաթսուն եւ հինգ սիկզ ըստ
 51 սրբութեանն սկեզն : Եւ ես Մովսէս ⁹զվրկանս աւելորդացն Ահարոնի եւ որդւոցն՝ նորա ըստ բանի Տեսան, որպէս հրամայեաց Տէր Մովսիսի :

ԳԼ Դ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ
 2 Ահարոնի եւ ասէ, Կալ զթիւ զլսոց որդւոցն Կահաթու ի միջոց որդւոցն Ղեւտայ՝ ըստ զուսնոս իւրեանց, ըստ տանց
 3 նահապետաց իւրեանց, ¹քսան եւ ի հինգամենից՝ եւ ի վեր մինչեւ ցլխանսմանս, ամենայն որ մտանիցէ ի սարս գործել զամենայն գործ որդւոցն Կահաթու ²ի միջոց որդւոցն Ղեւտայ՝ ըստ զուսնոս իւրեանց, ըստ տանց նահապետացն՝ ի խորանին վկայութեանն
 4 ¹⁰վկայութեանն : Եւ այս իցէ գործ որդւոցն Կահաթու ⁵ի միջոց որդւոցն Ղեւտայ՝ ըստ զուսնոս իւրեանց, ըստ տանց նահապետացն՝ ի խորանին վկայութեանն
 5 սրբութիւնք սրբութեանցն : Եւ մոցէ Ահարոն եւ որդիք իւր յորժամ խազայցէ բանակն, եւ ի թուսցն զվարագոյրն հովանոց, եւ ծածկեացնն նովաւ
 6 զատպանակն վկայութեանն : Եւ զիցեն ի վերայ նորա գնուարտանն մաշկեզէն ¹¹զկապուսակ, եւ արկցնն զնովաւ ձորձ համակ կապուսակ ի վերուստ կողմանէ,
 7 եւ ագուսցնն զլծակն : Եւ ի վերայ զառաջաւորի սեզանոցն արկցնն հանդերձ համակ ծիրանի, եւ զալտէսն եւ զտուփս եւ զճաշակս եւ զնուիրանոցնն որովք

¹ Կալ, վարագոյրն ² Եբբ. (36) եւ հանդէս պահպանութեան ³ Եբբ. տախտակք ⁴ Եբբ. գաւթին ⁵ Եբբ. պլուս

⁶ Եբբ. սկեզն ⁷ Եբբ. կերատ ⁸ Եբբ. զարծաթն վրկանաց ցլխարոն եւ ցորդիս ⁹ Եբբ. Գերեսն համակից ¹⁰ Եբբ. մողովոյ, որպէս եւ Եբբ. ¹¹ Եբբ. թեհաշի

նուիրեսցեն, եւ հացքն հանապազորդք
 8 Ի վերայ նորա կացցեն. Եւ արկցեն զնո-
 վաւ հանդերձ կարմիր, եւ ծածկեսցեն
 զնա մաշկեղէն նուարտանաւ ¹կապու-
 տակաւ. եւ ալուսցեն ի նմա զլծակոնս:
 9 Եւ առցեն հանդերձ կապուտակ եւ ծած-
 կեսցեն զաշամանակն լուսոյ եւ ²զերկու-
 սին ճրագարանսն՝ նորա եւ զունկլիս
 նորա եւ զբազմակալս նորա, եւ զամն-
 10 նայն ամանս իւրոյ որովք պաշտիցեն. Եւ
 արկցեն զնա եւ զամենայն զկահ նորա
 ի նուարտան մաշկեղէն ³կապուտակ, եւ
 11 զիցեն զնա ի վերայ լծակացն: Եւ զսե-
 զանն ոսկի ծածկեսցեն հանդերձիւ կա-
 պուտակաւ, եւ արկցեն ի վերայ նորա
 նուարտան մաշկեղէն ⁴կապուտակ. եւ
 12 ալուսցեն ի նմա զլծակս նորա: Եւ առ-
 ցեն զամենայն զկահ պաշտամանս՝ որովք
 պաշտիցեն ի սրբութիւնսն, եւ արկցեն
 ի հանդերձս կապուտակս, եւ ծածկես-
 ցեն ⁵զայն մաշկեղէն նուարտանաւ ⁶կա-
 պուտակակ, եւ զիցեն ի վերայ լծա-
 13 կայն: Եւ ⁷զնուարտանն զիցեն ի վե-
 րայ սեզանոյն՝, եւ ծածկեսցեն զնա հան-
 14 զերձիւ համակ ծիրանուով, եւ զիցեն ի
 վերայ նորա զսարանս որովք պաշտիցեն
 ի վերայ նորա, զբուրուստս եւ զմա-
 հանս եւ ⁸զտաշտան, եւ զծածկիչն եւ՝
 զամենայն սպաս սեզանոյն, եւ արկցեն
 ի վերայ նորա նուարտան մաշկեղէն ⁹կա-
 պուտակ. եւ անցուցցեն ընդ նա զլծակոնս:
⁶ Եւ առցեն հանդերձ ծիրանի եւ ծած-
 կեսցեն զաւազանն եւ զխարխիսս նորա,
 եւ արկցեն զնովաւ մաշկ կապուտակ,
 15 եւ զիցեն ի վերայ լծակացն:՝ Եւ կա-
 տարեսցեն Ահարոն եւ որդիք նորա ծած-
 կել զսրբութիւնսն, եւ զամենայն կահ
 սրբութեանն ի չուել թանակին. եւ սպաս
 մոցեն որդիքն Կահաթու թանակ. եւ
 մի մերձեցցին ի սրբութիւնսն՝ զի մի մե-
 16 ւանիցին. զայն թանակացեն որդիքն Կա-
 հաթու ի խորանէ անտի վկայութեան:
 Եւ ⁷ոստիկանս Եզրազար որդի Ահարոնի
 քահանայի՝ զեւզն լուսոյ եւ զխուճկան
 հանդերձանաց եւ զլոհն հանապազորդ
 եւ զեւզն օծութեան, եւ զհանդերձ՝ ամն-

նայն խորանին եւ որ ինչ ի նմա, եւ որ ի
 սրբութեանն եւ ⁸յամենայն սրբութիւնսն՝,
 17 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ
 18 ընդ Ահարոնի եւ ասէ, Մի սատակիցէք
 զլոհն զհանաթու ի միջոյ Ղեւտացւոցն.
 19 Զայս ինչ արասցիք նոցա եւ կեցցեն
 եւ մի՛ մեռանիցին ի մերձեանալ նոցա ի
 սրբութիւն սրբութեանցն. Ահարոն եւ
 որդիք նորա մտցեն ի ներքս, եւ կար-
 20 գեսցեն զնոսա իւրաքանչիւր ըստ կարգի
 եւ ըստ թեոխն իւրում: Եւ մի՛ մասնի-
 ցեն վայրապալ տեսանել ⁹զսրբութիւն
 սրբութեանցն՝, զի մի՛ մեռանիցին:
 21 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ
 22 ասէ, Կալ զու զհամար որդւոցն Գեր-
 ստնի, ըստ տանց նահապետաց իւրեանց,
 23 ըստ գնդից իւրեանց. ¹⁰Ի քսան եւ ի
 հինգամենից՝ եւ ի վեր մինչեւ ցյիսնա-
 մետնս, եւ արասցես նոցա հանդէս,
 ամենայն որ մտանիցէ ի սպաս զործել
 24 զպործ խորանին վկայութեան: Այս իցէ
 սպասաւորութիւն զնպլին Գերստնի՝ ի
 25 մտանել ի հարկ եւ ի բառնալ. Եւ ¹¹բարձ-
 ցէ զվերնափելակս՝ խորանսն եւ զխո-
 րանն վկայութեան եւ զարտափութակս
 նորա, եւ զնուարտանն ¹²կապուտակեայ
 որ ի նմա ի վերուստ կողմանէ, եւ զվա-
 26 րադոյր ¹³խորանին վկայութեան, Եւ
 զառագաստ սրտին, եւ որ ինչ ի վե-
 րայ խորանին վկայութեան՝, եւ զպաւ-
 րումնս եւ զամենայն զկահ սպասուսն
 27 որովք պաշտիցենն: Եւ արասցեն ըստ
 թերանոյ Ահարոնի եւ որդւոց նորա.
 եղիցի սպասաւորութիւն որդւոցն Գեր-
 ստնի ըստ ամենայն սպասաւորութեան
 իւրեանց եւ ըստ ամենայն զործոց իւր-
 եանց. եւ արասցիք նոցա հանդէս ⁶յան-
 ուանէ, եւ՝ ամենայնի որ ինչ թանակցի
 28 ի նոցանէ: Այս իցէ սպասաւորութիւն
 որդւոցն Գերստնի ի խորանին վկայու-
 թեան, եւ պահպանութիւն նոցա ի ձեռն
 ի թամարայ որդւոյ Ահարոնի քահանայի:
 29 Եւ որդւոցն Մերարեայ ըստ գնդից
 իւրեանց, ըստ տանց նահապետաց իւր-
 30 եանց արասցիք հանդէս. ¹⁰Ի քսան եւ
 ի հինգամենից՝ եւ ի վեր մինչեւ ցյիս-

¹ ԵՔԲ. թե հաշի ² ԵՔԲ. զճրագարանս ³ ԵՔԲ. զնոսա
⁴ ԵՔԲ. մարթեցեն զսրհանոցն ⁵ ԵՔԲ. զբազս եւ զլոհնս,
⁶ ԵՔԲ. գալուտ ⁷ ԵՔԲ. ընդ տեսութեամբ Նդիազարու որդւոյ Ահարոնի քահանայի եւ զն լուսոյ եւ իսունկքն հանդերձանաց եւ ընծայն հոցի հանապազորդ եւ զն օծութեան, եւ տեսութիւն

⁸ ԵՔԲ. ի սպաս նորա ⁹ ԵՔԲ. զսրբութիւնսն
¹⁰ ԵՔԲ. Զերեսնամենից ¹¹ ԵՔԲ. բարձցեն զվարա-
 գոյրս ¹² ԵՔԲ. մտից խորանին ժողովոյ. (26)
 Եւ զսպասաւորութիւն եւ զվարազոյր մտից
 զքան զաւթին, որ իսորանաւ եւ զսեզանով
 շուրջանակի

նամեանս՝ արասջիք նոցա հանդէս , ամե-
 նայն որ մտանիցէ ի սպաս գործոյ խո-
 31 րանին վկայութեանս : Եւ այս իցէ պահ-
 պանութիւն բեռանցն որ բառնայցին ի
 նոցանէ , ըստ ամենայն գործոյ նոցա ի
 խորանին վկայութեանս . ¹զխոյակս խո-
 րանին եւ գնիգս եւ զսիւնակս նորա եւ
 զխարիսխս նորա , ²եւ զվարագոյրն եւ
 զխարիսխս նոցա եւ զսիւնս նոցա . եւ
 32 զվարագոյր գրան խորանին , Եւ զսիւնս
 սրահին՝՝ չուրջանակի եւ զխարիսխս
 նոցա , եւ ³զսիւնս վարագուրին գրան
 սրահին , եւ զխարիսխս նոցա եւ՝՝ զցիցս
 նոցա եւ զապաւանդակս նոցա , եւ զու-
 մենայն գեկահ նոցա եւ զամենայն սպաս
 նոցա . եւ յանուանէ հանդէս անիցէք
³նոցա , եւ՝՝ ամենայն կահի պահպանու-
 33 թեանն որ բառնայցի ի նոցանէ . Այս իցէ
 սպասաւորութիւն գնդի որդւոցն Մե-
 րարեայ , յամենայն ի գործս իւրեանց ի
 խորանին վկայութեանս՝ ի ձեռն իթա-
 մարայ որդւոց Ահարոնի քահանայի :
 34 Եւ արարին հանդէս Մովսէս եւ Ահա-
 րոն եւ իշխանքն Իսրայելի որդւոցն Կա-
 հաթու ըստ գնդից իւրեանց եւ ըստ
 35 տանց նահապետաց իւրեանց՝ ⁴Ի քսան
 եւ ի հինգամենից՝՝ եւ ի վեր մինչեւ
 ցլինամեանս , ամենայն որ մտանէր ի
 սպաս եւ գործէր գործ ի խորանին վկա-
 36 յութեանս . Եւ եղև նոցա հանդէս ըստ
 գնդից իւրեանց՝ երկու հազար եւ եւթն
 37 հարեւր եւ յիսուռն : Այս է հանդէս գնդին
 Կահաթու ամենայն որ մտանէր ի սպաս
 ի խորանն վկայութեան , որպէս եւ ա-
 րարին հանդէս Մովսէս եւ Ահարոն բա-
 նիւ Տեառն ի ձեռն Մովսիսի :
 38 Եւ անցին ի հանդիսի որդիքն Գեր-
 սոնի ըստ գնդից իւրեանց , ըստ տանց
 39 նահապետաց իւրեանց՝ ⁵Ի քսան եւ ի
 հինգամենից՝՝ եւ ի վեր մինչեւ ցլինամե-
 անս , ամենայն որ մտանէր պաշտել եւ
 40 գործել գործ ի խորանին վկայութեանս : Եւ
 եղև հանդէս նոցա ըստ գնդից իւրեանց ,
 ըստ տանց նահապետաց իւրեանց՝ երկու
 41 հազար եւ վեց հարեւր եւ երեսուռն : Այս է
 հանդէս գնդի որդւոցն Գերսոնի , ամենայն
 որ պաշտէր ի խորանին վկայութեանս ,
 որոց արարին հանդէս Մովսէս եւ Ահա-
 րոն ըստ բանի Տեառն ³ի ձեռն Մովսիսի՝ :
 42 Անցին ի հանդիսի եւ զուեղք որդւոցն

Մերարեայ ըստ գնդից իւրեանց , ըստ
 43 տանց նահապետաց իւրեանց՝ ⁴Ի քսան
 եւ ի հինգամենից՝՝ եւ ի վեր մինչեւ ցլին-
 ամեանս , ամենայն որ մտանէր պաշ-
 44 տել ի գործ խորանին վկայութեանս . Եւ
 եղև հանդէս նոցա ըստ գնդից իւր-
 եանց , ըստ տանց նահապետաց իւրեանց՝
 45 երեք հազար եւ երկերեւր : Այս է հան-
 դէս գնդի որդւոցն Մերարեայ , որոց ա-
 րարին հանդէս Մովսէս եւ Ահարոն ըստ
 բանի Տեառն ի ձեռն Մովսիսի :
 46 Ամենեքին անցեալք ի հանդիսի , ո-
 րոց արարին հանդէս Մովսէս եւ Ահա-
 րոն եւ իշխանքն Իսրայելի Դևեաացւոցն՝
 ըստ գնդից իւրեանց , ըստ տանց նա-
 47 հապետաց իւրեանց՝ ⁴Ի քսան եւ ի հինգ-
 ամենից՝՝ եւ ի վեր մինչեւ ցլինամեանս ,
 ամենայն որ մտանէր ի գործ ⁵սրբու-
 թեանցն եւ ի գործ կրեւիսայ խորանին
 48 վկայութեանս , Եղևն անցեալք ի հանդի-
 սի ութ հազար եւ հինգ հարեւր եւ
 49 ⁶ութսուռն ըստ բանի Տեառն : Արար նո-
 ցա հանդէս Տէր՝ ի ձեռն Մովսիսի , այր
 ըստ անէն է ի վերայ գործոյ իւրեանց , ի
 վերայ բեռանցն զոր ինքեանք բառնա-
 յին . եւ անցին ի հանդիսի՝ որպէս հրա-
 մայիսայ Տէր Մովսիսի :

ԳԼ . Ե

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 2 Հրաման տուր որդւոցն Իսրայելի , եւ
 արձակեցցին ի բաց դամենայն րորտս ի
 բանակէ անտի , եւ դամենայն սերմեա-
 3 կաթ եւ զամենայն պղծեալ յողի . Յա-
 րուէ մինչեւ գէզ արձակեցէք ի բաց
 ի բանակէ անտի , եւ մի՛ պղծեցցին զա-
 4 նակս իւրեանց յոր ետդ ⁷Իջանսիս : Եւ ա-
 րարին այնպէս որպիքն Իսրայելի , եւ
 արձակեցցին զնոսս ի բաց ի բանակէ ան-
 տի . որպէս խօսեցաւ Տէր ընդ Մովսի-
 սի , այնպէս արարին որպիքն Իսրայելի :
 5 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 6 Խօսեաց ընդ որպիսոյ Իսրայելի եւ ա-
 սացես , Այր կամ կին , որ ոք արաս-
 ցէ յամենայն մարդկեղէն մեզաց , եւ
 արհամարհելով ⁸արհամարհիցէ եւ յան-
 7 ցանիցէ անձնն այն , Խոստովան լիցի
 զմեզս իւր զոր արար , եւ հատուցէ
 ընդ յանցանայն զզուրնս , եւ զհինդե-

¹ Եբբ. զտախտակս ² Եբբ. Եւ զսիւնս գաւթին
³ Յեբբ. պիտի ⁴ Եբբ. Յերեսնամենից

⁵ Եբբ. սպասու ⁶ Եբբ. ութսուռն (49) լստ բանի
 Տեառն արարաւ նոցա հանդէս ⁷ Եբբ. բնա-
 կեմի ի միջի նոցա ⁸ Եբբ. արհամարհիցէ զՏէր

որդ եւս մասն նորա յաւելցէ ի նոյն ,
 8 եւ տացէ այնմ որում յանցեաւն : Ապա
 թէ չիցէ ոք առնն մերձուորիչ հասու-
 ցանիկ նա զյանցանաց նորա , եւ ընդ
 յանցանայն որ ինչ ընծայիցի Տեառն
 այն քահանային եղիցի , բայ ի խոյէ
 9 քաւութեանն որով քաւիցէ վասն իւր :
 9 եւ առննայն պատու ըստ առննայնի
 որ սրբիցի յորդոցն Իսրայելի զոր ինչ
 մատուցանիցեն Տեառն , քահանային եւ
 10 զիցի : եւ չիւրաքանչիւր սրբելոց ան-
 ախ՝ նորա լինիցին . եւ այր ոք որ տացէ
 քահանային՝ նորա լինիցի :
 11 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 12 Խօսեաց ընդ որդիսդ Իսրայելի եւ ա-
 սացես նոցա , Ասն ուրուք առն , եւ
 թէ յանցանիցէ կին իւր եւ արհամար-
 13 հիցէ զնա , եւ ննջեսցէ ոք ընդ նմա
 արութեամբ սերման , եւ վրիպիցի յա-
 չաց առն իւրոյ եւ թաքուցանիցէ , եւ
 նա պղծեալ իցէ , եւ վկայ ոչ գուցէ
 14 զնմանէ , եւ չգի ոչ իցէ՝ , եւ հասա-
 նիցէ ի վերայ առն նորա ոգի նախան-
 ձու , եւ նախանձ բերիցէ ընդ կնոջ իւ-
 րում , եւ նա իցէ պղծեալ . կամ հա-
 սանիցէ ի վերայ նորա ոգի նախանձու ,
 եւ նախանձ բերիցէ ընդ կնոջ իւրում ,
 15 եւ նա ոչ իցէ պղծեալ , Ածցէ այրն զկին
 իւր առ քահանայն , եւ մատուցէ վասն
 նորա պատարագ՝ գտասանորդ գրուի ա-
 ըր զարեղէն , եւ եւզ մի՛ արկցէ ի նա ,
 եւ կնոքուկ մի՛ իկցէ ի վերայ նորա . զի
 զո՞ նախանձաւորութեան է , զո՞ յի-
 16 յատակի , զո՞ յիշատակելոյ զմեզս Մա-
 տուցէ քահանայն եւ կացուցէ զկինն
 17 առաջի Տեառն : եւ տացէ քահանայն
 ջուր սուրբ կենդանի խեցեղէն ամանու ,
 եւ ի նոգոյ անախ որ իցէ առ յատակաւ
 խորանին վկայութեան՝ առեալ քահա-
 18 նայն զկինն առաջի Տեառն , եւ մեր-
 կացուցէ զզուրս կնոջն , եւ տացէ ի
 ձեռս նորա զզո՞ յիշատակին , զզո՞ նա-
 խանձաւորութեանն . եւ ի ձեռին քա-
 հանային կացցէ ջուրն յանդիմանութեան
 19 նզովին այնորիկ . եւ երզմնեցուցէ զնա
 քահանայն եւ ասացէ զկինն , եթէ չիցէ
 ննջեցեալ ընդ քեզ առն , եթէ չիցես
 յանցուցեալ եւ պղծեալ առ արամբ քով .

քաւեալ լիջիր ի ջրոյդ ³ յանդիմանու-
 20 թեան նզովիդ այգորիկ . Ապա թէ յան-
 ցուցեալ իցես առ արամբ քով , կամ
 պղծեալ իցես , եւ տուեալ իցէ ուրուք
 զարութիւն իւր ի քեզ՝ առանց առն քո ,
 21 եւ երզմնեցուցէ քահանայն զկինն երզ-
 մամբ նզովիս այտորիկ , եւ ասացէ քա-
 հանայն զկինն , Տացէ զքեզ Տէր ի
 նզովս եւ յերզումն ի մէջ ժողովրդեան
 քո , ի սալ Տեառն զբարձս քո ի քակ-
 տումն , եւ զորովայն քո յուսուցումն .
 22 եւ մացէ ջուրս նզովեալ յորովայն քո ,
 ուսուցանի զմէջ քո եւ քակի զբարձս
 քո . եւ ասացէ կինն , եղիցի , եղիցի :
 23 եւ զրեցէ քահանայն զնզովս զայտորիկ
 ի մատնին , եւ յուսացէ ի ջուրն յանդի-
 24 մանութեան նզովիցն : եւ տացէ ըմպել
 կնոջն զջուրն յանդիմանութեան նզովից ,
 եւ մացէ ի նա ջուրն յանդիմանութեան
 25 նզովեալ : եւ առցէ քահանայն ի ձեռանէ
 կնոջն զզո՞ նախանձաւորութեանն , եւ մա-
 26 տուցէ առ սեզանն : եւ առցէ բամբ
 քահանայն ի զո՞նէ յիշատակին նորա եւ
⁵ հանցէ զայն ի սեզանն՝ , եւ սպա ար-
 բուցէ կնոջն զջուրն յանդիմանութեան :
 27 եւ եղիցի եթէ պղծեալ իցէ , եւ ծած-
 կելով ծածկեալ իցէ յառնէն նորա , եւ
 մտանիցէ ի նա ջուրն յանդիմանութեան
 նզովեալ , ուսուցէ զորովայն նորա եւ
 քակեցին բարձք նորա , եւ եղիցի կինն
 28 ի նզովս ի մէջ ժողովրդեան իւրոյ : Ապա
 թէ չիցէ պղծեալ կինն եւ սուրբ իցէ ,
 29 քաւեալ լիցի եւ ընկալցի սերմն : Այս
 օրէն իցէ նախանձաւորութեան , որոյ
 յանցուցեալ իցէ կին՝ որ առնակին իցէ
 30 եւ պղծիցի , կամ այր յորոյ վերայ հա-
 սանիցէ ոգի նախանձու , եւ ի նախանձ
 մտանիցէ ընդ կնոջ իւրում , կացուցէ
 զկինն առաջի Տեառն , եւ արացէ նա
 քահանայն ըստ առննայն օրինիս այտու-
 31 ռիկ . եւ քաւեալ լիցի այրն ի մեզաց
 անախ , եւ կինն ընկալցի զմեզս իւր :

ԳԼ. Զ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 2 Խօսեաց ընդ որդիսդ Իսրայելի եւ ա-
 սացես նոցա , Այր կամ կին , որ մեծ ինչ
 ուխտս ուխտեցէ սրբել ⁶ զարբութիւն

¹ Եբբ. զոր իւրաքանչիւր ոք սրբիցէ՝ ² Եբբ. չիցէ ըմբռնեալ
³ Եբբ. զառնութեան , այսպէս է՛ս եւ է սորբէս
⁴ Եբբ. երեքեցէ ⁵ Եբբ. այրեցէ ի վերայ սե- զանոյն ⁶ Եբբ. զանձն

3 Տեառն , ի գինւոյ եւ ի ցքւոյ սրբեցցի . եւ զքացախ գինւոյ եւ զքացախ ցքւոյ մի՛ արբցէ , եւ ¹պիտաբոց նոր եւ զչամիչ մի՛

4 կերիցէ : Չամնայն աւուրս ուխտին իւրոյ՝ յամենայնէ զինչ եւ լինիցի ²յորթոյ , զպինի՛ ի չամչոյ մինչեւ զթիւնն մի կե-

5 րիցէ : Չամնայն աւուրս սրբութեանն , սրբիչ մի ամիցէ զլլխով իւրով , մինչեւ լցցին աւուրքն զորս ուխտաց Տեառն՝ սուրբ կացցէ , ածեցուցեալ զվարս մա-

6 զոյ զլիւոյ իւրոյ : Չամնայն աւուրս ուխտին իւրոյ Տեառն , յոյր վախճան-

7 հոյ մի մտցէ . ի հօր եւ ի մօր , յեղբօր եւ ի քեռ , մի՛ պղծեացի նորօք ի մահու նոցա , զի ուխտ ³Տեառն ի վերայ գլխոյ

8 նորա է : Չամնայն աւուրս ուխտին իւրոյ

9 սուրբ կացցէ Տեառն : Եւ կթէ յանկարծ մեռանիցի ոք ի վերայ նորա , առժամայն պղծեացի զլուխ ուխտի նորա . եւ զերծցէ զլուխ իւր յաւուր յորում սրբիցի , եւ

10 յաւուրն եւթներորդի զերծցի . Եւ յաւուրն ութներորդի ամցէ երկուս ստատարկս կամ երկուս ձագս աղանետց սա քահանայն

11 ի զուռն խորանին վկայութեան : Եւ աւրացէ քահանայն զմին վասն մեղաց , եւ զմին յողջակէզ . եւ քաւեացէ վասն նորա քահանայն ընդ մեղացն զոր մեղաւ յողի , եւ սրբեացէ զլուխ իւր յաւուր

12 յայնմիկ . ⁴Չի յայնմ աւուր սրբեաց՝ Տեառն զաւուրս ուխտին իւրոյ , եւ ամցէ գառն մի տարեւոր վասն յանցանայն . եւ աւուրքն առաջինք անհատրք լինիցին , զի պղծեցաւ ⁵զլուխ ուխտի՛ նորա :

13 Եւ այս օրէն իցէ ուխտաւորին յաւուր յորում կատարիցէ զաւուրս ուխտին իւրոյ , ամցի ի զուռն խորանին

14 վկայութեան . Եւ մատուցէ զպատարազն իւր Տեառն , գառն մի տարեւոր անարատ յողջակէզ , եւ որոջ մի տարեւոր անարատ վասն մեղաց , եւ խոյ մի

15 անարատ ⁶ի փրկութիւն , Եւ խանն մի բազարջաց նաչնոյ , եւ պանս զանգեալ իւղով , եւ քաքարս բազարջո սօհալս իւղով , եւ զգոհս նոցա եւ զնուէրս իւր-

16 եանց : Եւ մատուցէ քահանայն առաջի Տեառն , եւ արասցէ զվասն մեղացն

17 նորա եւ զողջակէզն նորա : Եւ զլուոյն արասցէ զո՛հ ⁷փրկութեան Տեառն ի վե-

րոյ խանին բազարջոյ , եւ արասցէ քահանայն զգոհն նորա եւ զնուէրս նորա

18 Եւ զերծցէ ուխտաւորն առ զրան խորանին վկայութեան զլուխ ուխտին իւրոյ , եւ զիցէ զմագն ի հուրն որ ⁸ի

19 վերայ գոհին ⁷փրկութեան : Եւ առցէ քահանայն զերին եփեալ ի խոյէ անսի , եւ պան մի բազարջ ի խանէն եւ քաքար մի բազարջ , եւ զիցէ քահանայն ի վերայ ձեռաց ուխտաւորին , յետ զեր-

20 ձեւոյ նորա զլուխն իւր . Եւ ⁹մատուցէ զայն քահանայն ընծայ՝ առաջի Տեառն , եւ եղիցի սուրբ , քահանային եղիցի ի վերայ երրօն ¹⁰նուիրի եւ ի վերայ երեւոյն ¹¹նախ . եւ ապա արբցէ ուխտա-

21ւորն զինի : Այս օրէն իցէ ուխտաւորի որ ուխտիցէ ոք Տեառն զպատարազ իւր վասն ուխտից , թող զայն որ ինչ գտանիցէ ձեռն իւր . ըստ կարի ուխտին իւրոյ զոր ուխտիցէ ըստ օրինի ¹²սրբութեան Տեառն՝ :

22 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ

23 առէ , Խօսեաց ընդ Ահարոնի եւ ընդ որդիս նորա եւ ասացես , Այսպէս օրհնես յիւր զորդիս իւրայելի , եւ ասալիք

24 նոցա , Օրհնեսցէ զքեզ Տէր եւ պահեսցէ

25 ցէ զքեզ . Երեւցուցէ Տէր զերեսս իւր

26 ի քեզ , եւ ողորմացի քեզ . Ամբարձցէ Տէր զերեսս իւր ի քեզ , եւ ասցէ քեզ

27 իսողազութիւն : Եւ զիցեն զանուռն իմ ի վերայ որդեոցն իւրայելի , եւ ես օրհնելոյ զնոս :

ԳԼ . Ե

1 Եւ եղեւ յաւուր յորում կատարեաց Մովսէս առ ի կանգնելոյ զխորանն , եւ օծ զնա ¹³ եւ զամենայն սպասս նորա , եւ զզոհանոցն եւ զամենայն սպասս նորա ,

2 եւ օծ զնոսա եւ սրբեաց զնոսա , Եւ մատուցին իշխանքն իւրայելի ¹⁴երկուսասան իշխանք տանի նահապետաց նոցա . նորա էին իշխանք ցեղիցն , եւ նորա կային ի վերայ ¹⁵ստորկանութեանն :

3 Եւ մատուցին զընծայս իւրեանց առաջի Տեառն , վեց սայլս զարգարեալս եւ եզրինս երկոտասանս , սայլ մի յերկուց իշխանաց եւ զուարակ յիւրաքանչիւր ու-

¹ Եբբ. զամենայն հոյզ խորոզոյ մի՛ արբցէ , և
² Եբբ. յորթոյ գինւոյ . ³ Եբբ. Աստուծոյ իւրով
⁴ Եբբ. եւ սրբեացէ ⁵ Եբբ. ուխտ ⁶ Եբբ. ի խաղաղական ⁷ Եբբ. խաղաղութեան

⁸ Եբբ. ի ներքոյ ⁹ Եբբ. երեքեաց զնոսա քահանայն երեքուսն ¹⁰ Եբբ. երեքուսն ¹¹ Եբբ. վերացման ¹² Եբբ. նուիրման , Կ-Է , զատուցման իւրոյ ¹³ Եբբ. յաւուր , և սրբեաց զնա ¹⁴ Եբբ. գ-Կ-Է ¹⁵ Եբբ. հանդիսին

4 մեքէ . եւ ամին առաջի խորանին : Սօ-
5 սեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ , Առ
զայդ ի դոցանէ , եւ եղիցին ի գործ սպա-
սաւորութեան խորանին վկայութեան .
եւ տացին զայդ ցլեւտացիան՝ իւրա-
քանչիւր ըստ իւրում սպասաւորութեան .
6 Եւ առեալ Մովսիսի զասլան եւ զեղինան՝
7 ետ ցլեւտացիան : Սայս երկուս եւ ե-
զինս չորս ետ ցորդիան Գերսանի ըստ
8 սպասաւորութեան իւրեանց . Եւ սայս
չորս եւ եղինս ութ ետ ցորդիան Մե-
րարեայ ըստ սպասաւորութեան իւրեանց ,
ի ձեռն իթմարայ որդոյ Անարոնի քա-
9 ճանայի : Եւ ցորդիան կահաթու ոչինչ
եա . այի զսպասաւորութիւն սրբութեան
սրբութեանցն ունէին , եւ յուս իւր-
եանց բառնային :
10 Եւ մատուցին իշխանքն ի նաւակա-
տիս սեզանոն , յաւուր յորում օծ զնա ,
եւ բերին իշխանքն զընծայս իւրեանց
11 առաջի սեզանոցս . Եւ օր Տէր ցՄովսէս ,
Մի մի իշխան մի մի օր մատուցին զըն-
ծայս իւրեանց ի նաւակատիս սեզանոցս :
12 Եւ մատուցանէր զընծայս իւր յաւուրն
առաջնում Նաաթոն որդի Ամինադարայ ,
13 իշխան ցեղին Յուզայ : Մասոյց զըն-
ծայսն իւր . կոնք մի արծաթի՛ ի հարեւր
եւ յերեսուն կշորդէ , տաշտ մի ար-
ծաթի՛ յեւթանասուն սկեզէ ըստ սրբու-
թեան սկեզն , երկոքին լի նաշնով զան-
14 գելով ընդ իւզոյ ի զո՛հ , Տուփ մի ոսկի
15 ի տասն ¹զահեկանէ լի խնկով , Չուարակ
մի յանդուոյ , խոյ մի , գառն մի տարեւոր
16 յողջակէզ , Եւ նոխազ մի յայծեաց վանն
17 մեզաց , Եւ ի զո՛հ ²փրկութեան՝ երինջս
երկուս , խոյս հինգ , նոխազս հինգ , որոջս
տարեւորս հինգ . այս ընծայ Նաաթոնի
որդոյ Ամինադարայ :
18 Եւ յաւուրն երկրորդի մատոյց Նա-
թանայէլ որդի Սովգարայ , իշխան ցեղին
19 Իսաքարայ : Եւ մատոյց զընծայս իւր .
կոնք մի արծաթի ի հարեւր եւ յերեսուն
կշորդէ , տաշտ մի արծաթի՛ յեւթանա-
սուն սկեզէ ըստ սրբութեան սկեզն ,
երկոքեան լի նաշնով զանգելով ընդ իւ-
20 զոյ ի զո՛հ , Տուփ ³մի ի տասն զահե-
21 կանէ՛ լի խնկով , Չուարակ մի յանդուոյ ,
խոյ մի , գառն մի տարեւոր յողջակէզ ,
22 Եւ նոխազ մի յայծեաց վանն մեղաց ,
23 Եւ ի զո՛հ ²փրկութեան՝ երինջս երկուս ,

խոյս հինգ , նոխազս հինգ , որոջս տա-
րեւորս հինգ . այս ընծայ Նաթանայելի
որդոյ Սովգարայ :
24 Եւ յաւուրն երրորդի՛ իշխան սրբուցն
Չարուզնի , Եղիսուր որդի Քեղուլեի ,
25 Չընծայսն իւր . կոնք մի արծաթի ի
հարեւր եւ յերեսուն կշորդէ , տաշտ
մի արծաթի յեւթանասուն սկեզէ ըստ
սրբութեան սկեզն , երկոքին լի նաշնով
26 զանգելով ընդ իւզոյ ի զո՛հ , Տուփ ³մի
27 ի տասն զահեկանէ՛ լի խնկով , Չուա-
րակ մի յանդուոյ , խոյ մի , գառն մի տա-
28 րեւոր յողջակէզ , Եւ նոխազ մի յայծ-
29 եաց վանն մեզաց , Եւ ի զո՛հ ²փրկու-
թեան՝ երինջս երկուս , խոյս հինգ , նո-
խազս հինգ , որոջս տարեւորս հինգ .
այս ընծայ Եղիսուր որդոյ Քեղուլեի :
30 Եւ յաւուրն չորրորդի՛ իշխան սրբուցն
Ռուբենի , Եղիսուր որդի Սեղիուրայ ,
31 Չընծայս իւր . կոնք մի արծաթի ի հա-
րեւր եւ յերեսուն կշորդէ , տաշտ մի
արծաթի յեւթանասուն սկեզէ ըստ սրբու-
թեան սկեզն , երկոքին լի նաշնով զան-
32 գելով ընդ իւզոյ ի զո՛հ , Տուփ ³մի ի
33 տասն զահեկանէ՛ լի խնկով , Չուարակ
մի յանդուոյ , խոյ մի , գառն մի տարե-
34 ւոր յողջակէզ , Եւ նոխազ մի յայծեաց
35 վանն մեզաց , Եւ ի զո՛հ ²փրկութեան՝
երինջս երկուս , խոյս հինգ , նոխազս
հինգ , որոջս տարեւորս հինգ . այս ընծայ
Եղիսուրայ որդոյ Սեղիուրայ :
36 Եւ յաւուրն հինգերորդի՛ իշխան սրբ-
ուցն Շամաւի , Սաղամիէլ որդի Սուրի-
37 սադայի , Չընծայս իւր . կոնք մի արծա-
թի ի հարեւր եւ յերեսուն կշորդէ , տաշտ
մի արծաթի յեւթանասուն սկեզէ ըստ
սրբութեան սկեզն , երկոքին լի նաշնով
38 զանգելով ընդ իւզոյ ի զո՛հ , Տուփ ³մի ի
39 տասն զահեկանէ՛ լի խնկով , Չուարակ
մի յանդուոյ , խոյ մի , գառն մի տարե-
40 ւոր յողջակէզ , Եւ նոխազ մի յայծեաց
41 վանն մեզաց , Եւ ի զո՛հ ²փրկութեան՝
երինջս երկուս , խոյս հինգ , նոխազս
հինգ , որոջս տարեւորս հինգ . այս ընծայ
Սաղամիէլի որդոյ Սուրիսադայի :
42 Եւ յաւուրն վեցերորդի՛ իշխան սրբ-
ուցն Փադայ , Եղիսափան որդի Դադու-
43 ելի , Չընծայս իւր . կոնք մի արծաթի
ի հարեւր եւ յերեսուն կշորդէ , տաշտ
մի արծաթի յեւթանասուն սկեզէ ըստ
սրբութեան սկեզն . երկոքին լի նաշնով
44 զանգելով ընդ իւզոյ ի զո՛հ , Տուփ ³մի

¹ Եբբ. սկեզէ ² Եբբ. խաղաղութեան ³ Եբբ. մի ոսկի
ի տասն սկեզէ

45 Ի տասն գահեկանէ՝ լի խնկով, Չուարակ մի յանդուոյ, խոյ մի, գառն մի տա-

46 րեւոր յողջակէզ, Եւ նոխազ մի յայծ-

47 եաց վասն մեղաց, Եւ ի զոհ՝ փրկութեան՝ երինջս երկուս, խոյս հինգ, նոխազս հինգ, որոջս տարեւորս հինգ. այս ընծայ Եղիսափանայ որդւոյ Դագուելի:

48 Եւ յաւուրն եւթներորդի՝ իշխան որդւոցն Եփրեմի, Եղիսամա որդի Եմիու-

49 դայ, Չընծայսն իւր. կոնք մի արծաթի ի հարեւր եւ յերեսուն կշորդէ, տաշտ մի արծաթի յեթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն, երկոքին լի նաշնով

50 զանգելով ընդ իւզոյ ի զոհ, Տուփ ²մի

51 ի տասն գահեկանէ՝ լի խնկով, Չուարակ մի յանդուոյ, խոյ մի, գառն մի տարե-

52 ւոր յողջակէզ, Եւ նոխազ մի յայծեաց

53 վասն մեղաց, Եւ ի զոհ՝ փրկութեան՝ երինջս երկուս, խոյս հինգ, նոխազս հինգ, որոջս տարեւորս հինգ. այս ընծայ Եղիսամայ որդւոյ Եմիուզայ:

54 Եւ յաւուրն ութներորդի՝ իշխան որդւոցն Մամաւէի, Դամաղիէլ որդի Փա-

55 դատուրայ, Չընծայսն իւր. կոնք մի արծաթի ի հարեւր եւ յերեսուն կշորդէ, տաշտ մի արծաթի յեթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն. երկոքին լի

56 նաշնով զանգելով ընդ իւզոյ ի զոհ, Տուփ

57 ²մի ի տասն գահեկանէ՝ լի խնկով, Չուարակ մի յանդուոյ, խոյ մի, գառն մի

58 տարեւոր յողջակէզ, Եւ նոխազ մի յայծ-

59 եաց վասն մեղաց, Եւ ի զոհ՝ փրկութեան՝ երինջս երկուս, խոյս հինգ, նոխազս հինգ, որոջս տարեւորս հինգ. այս ընծայ Գամաղիելի որդւոյ Փաղատուրայ:

60 Եւ յաւուրն իններորդի՝ իշխան որդւոցն Բենիամինի Աբիդան որդի Գեղէ-

61 նի, Չընծայս իւր. կոնք մի արծաթի ի հարեւր եւ յերեսուն կշորդէ, տաշտ մի արծաթի յեթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն. երկոքին լի նաշնով

62 զանգելով ընդ իւզոյ ի զոհ, Տուփ ²մի ի

63 տասն գահեկանէ՝ լի խնկով, Չուարակ մի յանդուոյ, խոյ մի, գառն մի տարեւոր

64 յողջակէզ, Եւ նոխազ մի յայծեաց վասն

65 մեղաց, Եւ ի զոհ՝ փրկութեան՝ երինջս երկուս, խոյս հինգ, նոխազս հինգ, որոջս տարեւորս հինգ. այս ընծայ Աբիդանայ որդւոյ Գեղէնի:

66 Եւ յաւուրն տասներորդի՝ իշխան որդ-

ւոցն Դանայ Աքիեզեր որդի Ամիսա-

67 դայի, Չընծայսն իւր. կոնք մի արծաթի ի հարեւր եւ յերեսուն կշորդէ, տաշտ մի արծաթի յեթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն. երկոքին լի նաշնով

68 զանգելով ընդ իւզոյ ի զոհ, Տուփ ²մի

69 ի տասն գահեկանէ՝ լի խնկով, Չուարակ մի յանդուոյ, խոյ մի, գառն մի տարե-

70 ւոր յողջակէզ, Եւ նոխազ մի յայծեաց

71 վասն մեղաց, Եւ ի զոհ՝ փրկութեան՝ երինջս երկուս, խոյս հինգ, նոխազս հինգ, որոջս տարեւորս հինգ. այս ընծայ Աքիեզերայ որդւոյ Ամիսադայի:

72 Եւ յաւուրն մնասաններորդի՝ իշխան որդւոցն Ասերայ, Փաղիէլ որդի Եքրա-

73 նայ, Չընծայսն իւր. կոնք մի արծաթի ի հարեւր եւ յերեսուն կշորդէ, տաշտ մի արծաթի յեթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն, երկոքին լի նաշնով

74 զանգելով ընդ իւզոյ ի զոհ, Տուփ ²մի

75 ի տասն գահեկանէ՝ լի խնկով, Չուարակ մի յանդուոյ, խոյ մի, գառն մի տարե-

76 ւոր յողջակէզ, Եւ նոխազ մի յայծեաց

77 վասն մեղաց, Եւ ի զոհ՝ փրկութեան՝ երինջս երկուս, խոյս հինգ, նոխազս հինգ, որոջս տարեւորս հինգ. այս ընծայ Փաղիէլի որդւոյ Եքրանայ:

78 Եւ յաւուրն երկուսասներորդի՝ իշխան որդւոցն Նիփթաղիսայ, Աքիրէ որդի

79 Նիանայ, Չընծայսն իւր. կոնք մի արծաթի ի հարեւր եւ յերեսուն կշորդէ, տաշտ մի արծաթի յեթանասուն սկեղէ ըստ սրբութեան սկեղն, երկոքին լի

80 նաշնով զանգելով ընդ իւզոյ ի զոհ, Տուփ

81 ²մի ի տասն գահեկանէ՝ լի խնկով, Չուարակ մի յանդուոյ, խոյ մի, գառն մի տա-

82 րեւոր յողջակէզ, Եւ նոխազ մի յայծեաց

83 վասն մեղաց, Եւ ի զոհ՝ փրկութեան՝ երինջս երկուս, խոյս հինգ, նոխազս հինգ, որոջս տարեւորս հինգ. այս ընծայ Աքիրէի որդւոյ Նիանայ:

84 Այս է օրէն նաւակատեաց սեղանոյն յաւուրն յորում օժ գնա. յիշխանայ որդւոցն Իսրայելի, կոնք արծաթիք երկուսասն, տաշտք արծաթիք երկուսասն,

85 ³տուփք երկուսասն, Ի հարեւր եւ յերեսուն սկեղէ կոնք ¹մի, յեթանասուն սկեղէ տաշտ մի. ամենայն արծաթ սպասուցն՝ երկու հազար եւ չորքհարեւր

86 սիկզ ըստ սրբութեան սկեղն. Տուփք

¹Եբբ. խաղաղութեան ²Եբբ. մի ոսկի ի տասն սկեղէ

³Եբբ. տուփք ոսկիք ¹Եբբ. մի արծաթի

ոսկիք երկոտասանք լի խնկով, ¹ամենայն ոսկի տփոցն՝ հարեւր եւ քսան 87 ²ցահեկան . եւ ամենայն արջառ յողջակէզ , զուարակք երկոտասանք , խոչք երկոտասանք , գառինք տարեւորք ²անարատք երկոտասան , եւ զո՞ք նոցա եւ նուէրք նոցին . եւ նոխաղք յայծեաց 88 վասն մեղաց երկոտասանք . եւ ամենայն արջառք ի զո՞հ ³ողջակիզին ²երկոտասանք , երինջք քսան եւ չորք , խոչք վաթսուն , նոխաղք վաթսուն , որոջք տարեւորք ²անարատք վաթսուն . այս են նուակատիք սեղանոյն յեա ⁴կատարելոյ զձեռս նոցա՝

89 Ի մտանեցն Մովսիսի ի խորանն վալուլեան խօսել ընդ նմա , եւ լուսազարբառն ⁵Տեառն ի խօսելն՝ ընդ նմա ի վերուսա ի քաւութեանէ անտի՝ ⁶ի միջոյ երկուցն քերտլբէից որ էին՝ ի վերայ ասարանակին վկայութեան , ի միջոյ երկուց քերտլբէիցն , եւ խօսէր ընդ նմա :

Ղ . Ը

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 2 Խօսեաց ընդ Ահարոնի եւ աստացես ցնա , Յորժամ դնիցես զճրագունան , ի ²միռջէ կողմանէ երեսաց աշտանակին լուցա-
 3 նիցին եւ թանեքին ճրագարանքն : եւ արար այնպէս Ահարոն . ²ի միռջէ կողմանէ՝ հանդէպ աշտանակին ելոց զճրագարանս նորա , որպէս հրամայեաց Տէր Մովսիսի :
 4 Եւ այս էր կարճած աշտանակին . ⁷ձոյ ոսկի , բուն նորա , եւ չուշանք նորա ձոյ համակ՝ , ըսա օրինակին որպէս ելոց Տէր Մովսիսի՝ այնպէս արար զաշտանակն :
 5 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ ,
 6 Առ զու գլխեւացիսն ի միջոյ որդւոցն
 7 Իսրայելի եւ սրբեացես զնոսա , եւ այսպէս արասցես նոցա զարբութիւնն իւրեանց . ցանուցես զնոքք ջուր սրբութեան , եւ ածցի ածեկի ի վերայ ամենայն մարմնոցնոցա , եւ լուսացեն զձործս
 8 իւրեանց , եւ սուրբք եղիցին : եւ առցեն զուարակ մի յանդուոյ , եւ ըսա նմին զո՞հ , նաշի՞ զանպեալ իւզով , եւ առցես ⁸որթ տարեւոր՝ յանդուոյ վասն մեղաց :
 9 Եւ տարցիս գլխեւացիսն առաջի խո-

րանին վկայութեան . եւ ժողովեցես զամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայելի :
 10 Եւ մատուցես գլխեւացիսն առաջի Տեառն , եւ դիցին որդիքն Իսրայելի զձեռս
 11 իւրեանց ի վերայ Դեւտացւոցն : եւ զատուցէ Ահարոն գլխեւացիսն ի հատուցումն առաջի Տեառն յորդւոցն Իսրայելի , եւ եղիցին գործել զգործ խորանին առաջի Տեառն : եւ Դեւտացիքն
 12 դիցեն զձեռս իւրեանց ի վերայ զլիտոյ զուարակացն . եւ արասցես զմին վասն մեղաց , եւ զմին յողջակէզ Տեառն քա-
 13 լել վասն նոցա : եւ կացուցես գլխեւացիսն ²առաջի Տեառն եւ՝ առաջի Ահարոնի եւ առաջի որդւոց նորա , եւ տացես զնոսա հատուցումն առաջի Տեառն
 14 Եւ զատուցես գլխեւացիսն ի միջոյ
 15 որդւոցն Իսրայելի , եւ եղիցին ինձ : եւ ասպա մտցեն Դեւտացիքն գործել զգործ խորանին վկայութեան . եւ սրբեցես զնոսա , եւ տացես զնոսա հատուցումն
 16 ²առաջի Տեառն՝ . Զի հատուցումն հատուցեալ են նոքա ինձ ի միջոյ որդւոցն Իսրայելի . փոխանակ ամենայն անդրանկաց որ բանան զամենայն արգանդ յորդ-
 17 ւոցն Իսրայելի՝ առ ի զնոսա ինձ : Զի իմ է ամենայն անդրանիկ որդւոցն Իսրայելի , ի մարդոյ մինչեւ յանասուն . յաւուր յորում հարի զամենայն անդրանիկ յերկրին Եփրատացւոց , սրբցի զնոսա ինձ :
 18 Եւ առ ի գլխեւացիսն փոխանակ ամենայն անդրանկաց որդւոցն Իսրայելի : եւ հատու գլխեւացիսն հատուցումն տուեալս Ահարոնի եւ որդւոց նորա ի միջոյ որդւոցն Իսրայելի , գործել զգործ որդւոցն Իսրայելի ի խորանին վկայութեան , եւ քաւել վասն որդւոցն Իսրայելի ⁹մերձեւաբով ի սրբութիւնսն :
 20 Եւ արարին Մովսէս եւ Ահարոն եւ ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայելի Դեւտացւոցն . որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի վասն Դեւտացւոցն՝ նոյնպէս արարին նոցա որդիքն Իսրայելի . եւ սրբեցան Դեւտացիքն , եւ լուսացին ¹⁰զհանդերձս , եւ հատու զանձինս Ահարոնի ի հատուցումն՝ առաջի Տեառն . եւ քաւեաց վասն նոցա Ահարոն սրբել զնոսա :
 22 Եւ ասպա մայն Դեւտացիքն պաշտել զպաշտոն իւրեանց ի խորանին վկայու-

¹Եբբ. մի մի տուփ ի տանն սկեղէ ըստ սրբութեան սկեղն . ամենայն ²Յեբբ. պ-լու-է ³Եբբ. խաղաղութեան ⁴Եբբ. օծանելոյ զնա ⁵Եբբ. օրոյ խօսելն ⁶Եբբ. որ ⁷Եբբ. ճախարակեայ , Կ-Է կուածոյ յոսկւելոյ , ի բնոյ նորա մինչեւ ի չուշանն կուածոյ ⁸Եբբ. մեւս եւս զուարակ

⁹Եբբ. զի մի՞ գիպեցի հարուած յորդին Իսրայելի ի մերձեւալ որդւոցն Իսրայելի ¹⁰Եբբ. զհանդերձս իւրեանց , եւ մատոյց Ահարոն զնոսա նուէր

Թեան՝ առաջի Ահարոնի եւ առաջի որդւոց նորա . որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի վասն Ղեւտացոցն , նոյնպէս եւ արարին նոցա :

- 23 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ
- 24 ասէ , Այս ինչ է որ վասն Ղեւտացոցն իցէ . ի քսան եւ հինգամենից եւ ի վեր մտցնել զործել ի խորանին վկայութեան .
- 25 Եւ ի յիմանմենից՝ ի բաց կացցեն ի պաշտամանէ սնտի , եւ ոչ եւս գործեսցեն :
- 26 Եւ ¹պաշտեսցէ եզրայր նորա՝ ի խորանին վկայութեան , ²պահել պահեսցէ զպահպանութիւնս , բայց զործ ինչ մի՝ զործեսցէ . այնպէս արասցես Ղեւտացոցն ի պահպանութիւնս իւրեանց :

Գ. Լ. Թ

- 1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի յանուպտին Սինայի , յամին երկրորդի երանելոյ նոցա յԵգիպտոսէ յամսեանն առաջնում ,
- 2 եւ ասէ , ³Ասա եւ՝ արասցեն որդիքն Իսրայելի զգառիկն ի ժամանակի իւրում :
- 3 Ի չորեքտասաներորդում աւուր ամսոյն առաջնոյ ⁴արասցն զաջն ընդ երեկս , ըստ ժամանակս , ըստ ⁵օրինի իւրում ,
- 4 ըստ ⁶պայմանի իւրում ⁷առնիցին զնաւ եւ խօսեցաւ Մովսիսն ընդ որդիսն Իսրայելի ⁸առնել զգառիկն : ⁹Ի սկսանել չորեքտասաներորդի աւուր ամսոյն՝ յանապատին Սինայի . որպէս հրամայեաց Տէր Մովսիսի , այնպէս արարին որդիքն Իսրայելի :
- 6 Եւ եղեն արք որ ոչ էին սուրբ ողւոյ՝ ամբողջ , եւ ոչ կարէին առնել զգառիկն յաւուր յայնմիկ . եւ մատեան առաջի Մովսիսի եւ Ահարոնի յաւուր
- 7 յայնմիկ , Եւ ասին ցնոսս արքն այնուքիկ , Մեք անսուրբք եմք յողի մարդոյ . ⁸արք մի՞ յանեսցուք ի մատուցանելոյ պատարագ Տեառն ի ժամանակի իւրում
- 8 Ի մէջ որդւոցն Իսրայելի : Ասէ ցնոսս Մովսիս , Կացէք այդր , եւ լուսոյց թէ զինչ ասացէ հրաման Տէր վասն ձեր :
- 9 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ
- 10 ասէ , Խօսեաց ընդ որդիսն Իսրայելի եւ ասացես , Մարդ ոք՝ մարդ որ լինիցի անսուրբ յողի մարդոյ , եւ կամ լի է ի

- հեռի ճանապարհի ոք իցէ ի ձէնջ յազգս
- 11 ձեր , արասցէ զգառիկն Տեառն . Յամսեանն երկրորդի , ի չորեքտասաներորդում աւուր ընդ երեկս արասցէ զնա , բազարջում եւ եղեգով կերիցեն զնա .
- 12 Եւ մի՛ թողուցուն ինչ ի նմանէ յայդ , եւ ոսկր մի՛ բեկանիցեն ի նմանէ . ըստ
- 13 ⁵օրինի զատկին արասցեն զնա . եւ մարդ ոք որ սուրբ իցէ , եւ ի հետաւոր ձանապարհի ոչ իցէ , եւ հեղգասցի ամնել զգառիկն , սատակեսցի անձն այն ի ժողովրդնէ իւրմէ , զի զպատարագն Տեառն ոչ մատոյց ի ժամանակի իւրում . զմեզս
- 14 Իւր ընկալցի մարգն այն : Եւ եթէ յարեսցի ի ձեզ եկ ոք յերկրն ձերում , եւ առնիցէ զգառիկն Տեառն , ըստ օրինակի զատկին եւ ըստ պայմանի իւրում արասցէ զնա . օրէն՝ մի եւ նոյն կացցէ ձեզ , եկին եւ բնակի երկրն :
- 15 Եւ յաւուրն յորում կանգնեցաւ խորանն՝ ծածկեաց ամպ զխորանն ⁹եւ զտունն՝ վկայութեան . եւ ընդ երեկս լինէր ի խորանին իրբւ գտեսիլ հրոյ մին :
- 16 չեւ ցառաւօտ . Այնպէս լինէր հանապայ . ամպ ծածկէր զնա ի տուէ , եւ
- 17 տեսիլ հրոյ ի գիշերի : Եւ յորժամ վերանայր ամպն ի խորանէ անտի , ապա չուէին որդիքն Իսրայելի . եւ ի տեղւոջ յորում գտեզի տանոյր ամպն՝ անդ բանակէին որդիքն Իսրայելի : Հրամանաւ Տեառն չուէին որդիքն Իսրայելի , եւ հրամանաւ Տեառն բանակէին . զամենայն աւուրս յորս հովանի ¹⁰ուռնիցի ամպն ի վերայ խորանին , ¹¹բանակեացն որդիքն Իսրայելի : Եւ յորժամ ¹²ձգիցի ամպն ի վերայ խորանին աւուրս բազումս , ¹³պահեսցեն որդիքն Իսրայելի զպահպանութիւն Տեառն , եւ ¹⁴մի՛ չուեսցեն : Եւ եղիցի՝ յորժամ հովանի ¹⁰ուռնիցի ամպն զաւուրս թուով ի վերայ խորանին , ըստ բանի Տեառն ¹¹բանակեացին , եւ
- 21 ըստ բանի Տեառն ¹⁵չուեսցեն Եւ եղիցի յորժամ լինիցի՝ ամպն յերեկորեայ մինչեւ ցառաւօտ , ¹⁶եթէ վերանայցէ՝ ամպն ընդ առուօան , ¹⁷չուեսցեն . զցերեկ կամ զցայտ . եւ եթէ ոչ վերասցի ամպն , ոչ

¹ Եբբ. պաշտեսցեն զեզրայր իւրեանց ² Եբբ. պահել զպահպանութիւնս , բայց զործ ինչ մի՝ զործեսցեն ³ Եբբ. պահել ⁴ Եբբ. առնիցէք ⁵ Եբբ. ամենայն օրինի ⁶ Եբբ. ամենայն պայմանի ⁷ Եբբ. եւ արարին զգառիկն յամսեանն առաջնում ի չորեքտասաներորդում աւուր ամսոյն ընդ երեկս ⁸ Եբբ. ընդէ՞ր

⁹ Եբբ. զբանաւն ¹⁰ Եբբ. ուռնէր ¹¹ Եբբ. բանակէին ¹² Եբբ. ձգէր ¹³ Եբբ. պահէին ¹⁴ Եբբ. ոչ չուէին (20) եւ էր ¹⁵ Եբբ. չուէին , (21) եւ էր յորժամ լինէր ¹⁶ Եբբ. եւ վերանայր ¹⁷ Եբբ. և չուէին զցերեկ կամ զցայտ յորժամ վերանայր ամպն , չուէին :

30 բարութիւնս Իսրայելի, Եւ նա ասէ, 10
 Ոչ երթայց անգր, այլ յերկիրն իմ եւ
 31 յազգն իմ գնացից, Եւ ասէ ցնա, Մի
 թողուր զմեզ. քանզի ¹էիր ընդ մեզ
 յանապատին. եւ եղիցես ընդ մեզ ձեր, 11
 32 Եւ եղիցի թէ երթայցես ընդ մեզ, եւ
 լինիցին բարութիւնքն զոր ինչ արասցէ
 մեզ Տէր, բարի արասցուք եւ քեզ,
 33 Եւ չուեցին ի լիննէ անտի Տեառն
 երեքօրեայ ճանապարհ. եւ տապանակ
 ուխտին Տեառն յառաջագոյն քան զնոսա
 երթայր երեքօրեայ ճանապարհաւ, զի-
 34 տել նոցա հանդիսաւ: Եւ ²ամպն հովանի
 ունէր ի վերայ նոցա ի սուէ ի չուել
 նոցա ի բանակէ անտի:
 35 Եւ եղև ի չուել տապանակին՝ ասէ
 Մովսէս, Արի, Տէր, եւ ցրուեսցին թշնա-
 միք քո, փախիցեն ³ամենայն ատկիք քո՝:

ԳԼ . ԺԱ

4 Եւ ժողովուրդն արանջէր չարաչար ա-
 ռաջի Տեառն. եւ լուաւ Տէր եւ բար-
 կացաւ սրամտութեամբ, եւ բորբոքեցաւ
 ի նոսա հուր ի Տեառնէ, եւ եկեր զմամն
 2 ինչ բանակին: Եւ աղաղակեաց ժողո-
 վուրդն առ Մովսէս, եւ յաղօթս եկաց
 Մովսէս առ Տէր, եւ զազարեաց հուրն:
 3 Եւ կոչեցաւ անուն անդւոյն պնտրիկ
 Հրայրեաց. զի բորբոքեցաւ ի նոսա հուրն:
 4 Ի Տեառնէ: Եւ խառնադանձն որ էր ի
 մէջ նոցա ցանկացան ցանկութիւն, եւ
 նստակ լայն որդիքն Իսրայելի եւ ա-
 5 սէին, Ո՞ տացէ մեզ միս ուտելոյ. Զի
 յիշեցաք զձուկնն զոր ուտէաք յեղիպ-
 ատս ձրի, եւ զսեխն եւ զմեղրապոսպ եւ
 6 զպրամն եւ զսօխն եւ զխատոր. Եւ արդ
 աւասիկ նքողեպ են անձինք մեր, եւ
 ոչ ուրեք բայց միայն ի մանանայն են
 7 աչք մեր: Եւ մանանայն էր իբրեւ գսերմն
 գնձոյ ⁴սպիտակ, եւ տեսիլ նորա իբրեւ
 8 զտեսիլ սառին: Եւ չրջէր ժողովուրդն
 եւ քաղէին, եւ աղային յերկանի եւ լե-
 սուին յանգանի, եւ եփէին ի պուտան
 եւ աննէին նկանս. եւ էր քաղցրութիւն
 նորա իբրեւ զխորիսի իւղոյ ⁵եւ մուրձ: 10
 9 Եւ յորժամ իջանէր ցօղ ի բանակն զյայգ,
 իջանէր եւ մանանայն ի վերայ նորա:

10 Լուաւ Մովսէս զպլինն նոցա ըստ
 գնդից իւրեանց, զիւրաքանչիւրն առ զքան
 վրանի իւրոյ. եւ բարկացաւ սրամտու-
 թեամբ Տէր յոյժ, եւ առաջի Մովսիսի
 11 չար թուեցաւ: Եւ ասէ Մովսէս ցՏէր,
 Ընդէր ⁶Տէր, չարչարեցեր զձառայ քո,
 եւ հիմ ոչ գաի չնորնս առաջի քո,
 արկանել զինեւ ⁷զբարկութիւն ժողո-
 12 վրդեանս այտորիկ: Միթէ ե՞ս յոյցայ
 զամենայն ժողովուրդս զայս, կամ թէ ե՞ս
 ծնայ զսոսա, զի ասես ցիս թէ՛ Առ զգա
 ի զոգ քո, որպէս առնուցու զայեակ
 զսանդիաց, ամենել յերկիրն զոր երգուար
 13 հարցն նոցա: Եւ արդ ուսալի է ինձ միս՝
 տալ ամենայն ժողովրդեանս այսմիկ, զի
 լան զինեւ եւ ասեն, Տուր մեզ միս զի
 14 կերիցուք: Ոչ կարեմ ես միայն կրել զժո-
 ղովուրդս զայս, զի ծանրագոյն քան զիս
 15 է բանդ: Եթէ այդպէս առնիցես ընդ իս,
 սպան իսկ զիս, եթէ հաճոյ իցէ քեզ,
 եթէ զաի չնորնս եւ ողորութիւնս առ
 ի քէն, զի մի տեսից զչարչարանս իմ:
 16 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Ժողովա ինձ
 եւ թանառուն այր ի ծերոցն Իսրայելի,
 զոր զու գիտես եթէ նոքա իցեն ծերա-
 զոյնք ժողովրդեանն, եւ ընտրք նոցա.
 եւ հանցես զնոսա ի խորանն վկայու-
 17 թեան, եւ կացցեն անդ ընդ քեզ. Եւ
 իջից անգր եւ խօսեցայց ընդ քեզ. եւ
 առից ի Հոգւոյդ որ ի քեզ է եւ արկից զնո-
 քօք. եւ բարձցեն ընդ քեզ ⁸զյանդգնու-
 թիւն ժողովրդեանդ այտորիկ, եւ ոչ
 18 կրեսցես զզոսա զու միայն: Եւ ցժողո-
 վուրդն ասացես, Արկեցարուք առ վա-
 զիւ, եւ կերիջիք միս. զի լացէք առաջի
 Տեառն եւ ասացէք, Ո՞ ջամբեացէ մեզ
 միս. զի լաւ էր մեզ յեղիպտոս. եւ տացէ
 19 ձեզ Տէր միս ուտելոյ, եւ կերիջիք միս,
 եւ ոչ զհինգ յը, եւ ոչ զտոսն, եւ ոչ
 20 զքսան որ: Այլ զամօրեայս աւուրս ու-
 տիցէք, մինչեւ կանիցէ ընդ ուրնուոնս
 ձեր, եւ եղիցի ձեզ ի զանութիւն. զի
 հետեացէք Տեառն որ է ի միջի ձերում,
 եւ լացէք առաջի նորա, եւ ասէիք՝ Ըն-
 21 գէր էր մեզ եղանել յեղիպտոսէ:
 21 Եւ ասէ Մովսէս, Վեցհարեւր հազար
 հետեակաց է ժողովուրդն յորոյ միջի
 եմ ես, եւ զու ասեմ Միս տոց նոցա եւ
 22 կերիցեն ամօրեայ ժամանակ. Միթէ
 արջառ եւ ոչխար սուպանանիցի եւ բա-

¹ Եբբ. գիտես ուր ազցուք յանապատին, եւ ե-
 ղիցես մեզ փոխանակ աչաք ² Եբբ. ամեն Տեառն
³ Եբբ. ատկիք քո յերեսաց քոց ⁴ Եբբ. զպիտակ

⁵ Եբբ. զբեռն

լական լինիցի նոցա , կամ թէ ամենայն
 23 լինիցի նոցա : Եւ ասէ Տէր ցՄովսէս ,
 Միթէ ձեռն Տեառն չիցէ՞ բաւական .
 այժմ դիտասցես կթէ հասանիցէ ի վերայ
 24 քո բանս իմ , եթէ ոչ : Եւ ել Մովսէս
 եւ խօսեցաւ ընդ ժողովրդեանն զպատ-
 փամս Տեառն . եւ ժողովեաց եւթանա-
 սուն այր ի ծերոց ժողովրդեանն , եւ կա-
 25 ղոց զնոսա չուրջ զխորանաւն : Եւ էջ
 Տէր ամելով , եւ խօսեցաւ ընդ Մովսիսի ,
 եւ ա՛ռ ի Հոլւայն որ ի նմա , եւ արկ
 զեւթանասուն արամբքն զծերովք . եւ
 իրբեւ հանդեւ Հոզին ի վերայ նոցա ,
 եւ մարգարէացան ի բանակին , եւ այլ
 26 ոչ եւս յաւելին : Եւ մնացին երկու այրք
 ի բանակին , անուն միունն Եզրազ , եւ
 անուն երկրորդին Մովզազ , եւ հանդեւ
 ի վերայ նոցա Հոզին . եւ նոքա էին ի
 զերկոց անախ եւ ոչ եկին ի խորանն . եւ
 27 մարգարէացան ի բանակին : Եւ ընթա-
 ցեալ պատանի մի պատմեաց Մովսիսի եւ
 ասէ ցնա , Եզրազն եւ Մովզազն մար-
 28 գարէացան ի բանակին : Պատասխանի
 տուեաց Յեսուայ որդւոյ Նաւեայ , սրաչ-
 ածնէին Մովսիսի ընտրելոյ , եւ ասէ ,
 29 Տէր Մովսէս , արդի զնոսա : Եւ ասէ ցնա
 Մովսէս , Մի արկաներ դու ինձ նախան-
 30 ձուկս . եւ ս՛ ապր զամենայն ժողովուրդս
 Տեառն մարգարէս , յորժամ տայր Տէր
 զՈղին իւր ի վերայ նոցա : Եւ գնաց Մով-
 սէս ի բանակն , ինքն եւ ծերքն Խորայելի
 31 Եւ ել հողմ ի Տեառնէ եւ խաղացոյց
 յայս կոյս զխորամարզին ի ծովն , եւ ան-
 կաւ զբանակաւն աւուր գնաց ատի եւ
 32 իրբեւ ցերկուս կանգունս յերկրէ : Եւ
 յարուցեալ ժողովուրդն զտիւն ողջոյն եւ
 զդիշերն ողջոյն , եւ զտիւն ողջոյն ի վաղիւ
 անայր , ժողովեցին զարամարզին , որ աւ-
 կաւ ժողովեաց տանն քոռ . եւ սպանին եւ
 33 սպխեցին իւրեանց ապուխտս ապուխտս
 չուրջ զբանակաւն : Մինչդեռ միսն յա-
 տամունս նոցա էր՝ յառաջ քան զպակա-
 սելն , եւ Տէր բարկացաւ ժողովրդեանն ,
 եւ հնար Տէր զժողովուրդն հարուածս
 34 մեծամեծս յոյժ : Եւ կոչեցաւ անուն տեղ-
 ոյն այնորիկ Գերեզմանք ցանկութեան .
 զի անդ թաղեցին զժողովուրդն ցան-
 35 կացող : Եւ ի Գերեզմանացն ցանկու-
 թեան չուեաց ժողովուրդն յԱսերովթ¹ :

1 Եւ բամբասեցին Մարիամ եւ Ահարոն
 զՄովսէս վասն կնոջն Եթէ՞ովպացւոյ որ
 առ Մովսէս . զի կին Եթէ՞ովպացի առ .
 2 եւ ասին , Միթէ ընդ Մովսիսի՞ միայն
 խօսեցաւ Տէր . ս՛ յապաքէն եւ ընդ մեզ
 3 խօսեցաւ . եւ լուաւ Տէր : Եւ այրն Մով-
 սէս հեղ էր յոյժ քան զամենայն մար-
 4 գիկ որ էին ի վերայ երկրի : Եւ ասէ Տէր
 նոյնժամոյն ցՄովսէս եւ ցԱհարոն եւ
 ցՄարիամ , Ելէք դուք երեքին ի խորանն
 վկայութեան . եւ ելին երեքին ՚ի խո-
 5 բանն վկայութեան : Եւ էջ Տէր սեամբ
 ամպոյ , եւ եկաց առ պատ խորանին
 վկայութեան . եւ կոչեցան Ահարոն եւ
 6 Մարիամ , եւ ելին երկօքեան : Եւ ասէ
 ցնասա Տէր , Լուարուք բանից խոց . եւ
 թէ լինիցի մարգարէ ի ձէնջ Տեառն ,
 տեսեամբ երեւեցայց նմա , եւ երազով
 7 խօսեցայց ընդ նմա : Ոչ այնպէս որպէս
 ծառայն իմ Մովսէս , որ յամենայն ամս
 8 իմում հաւատարիմ է . Բերան ի բերան
 խօսեցայց ընդ նմա , երեսօք եւ ոչ աւ-
 9 րակօք . եւ զփառն Տեառն ետես . եւ
 ընդէր ոչ երկերուք բամբասել զճա-
 9 սայն իմ Մովսէս : Եւ եղև բարկութիւն
 արամտութեան Տեառն ի վերայ նոցա ,
 10 եւ ՚զնացին , եւ ամպ վերացաւ ի խո-
 բանէ անտի , եւ ա՛հա Մարիամ բորտեալ
 էր իրբեւ զձիւն . եւ հայեցաւ Ահարոն
 11 ընդ Մարիամ , եւ ա՛հա բորտեալ էր : Եւ
 ասէ Ահարոն ցՄովսէս , Խնդրեմ ի քէն ,
 տէր , մի ամեր ի վերայ մեր մեզս . զի
 12 անգիտացաք , եւ քանդի մեղաք : Մի
 լինիցի հանդոյն մահու , իրբեւ զվիժած
 որ ելանիցէ յարգանդէ մօր եւ ՚ուտիցէ
 13 զկէս՝ մարմնոյ նորա : Եւ աղաղակեաց
 Մովսէս առ Տէր եւ ասէ , Խնդրեմ ի
 14 քէն , Աստուած , բժշկեա գնա : Եւ ասէ
 Տէր ցՄովսէս , Եթէ հօր իւրոյ թքա-
 նելով թքեալ էր ընդ երեսս նորա , չա-
 մաչէր զեւթն օր . մեկնեցի զեւթն օր
 արաւքոյ բանակին , եւ ապա մտցէ :
 15 Եւ զատուցաւ Մարիամ արսաւքոյ բա-
 նակին զեւթն օր . եւ ժողովուրդն ոչ
 չուեաց , մինչև սրբեցաւ Մարիամ :

1 Եւ ասալ չուեաց ժողովուրդն յԱսե-
 րովթայ , եւ բանակեցաւ յանապատին

¹Եբբայեցի յաւելու , եւ եղև յԱսերովթ
²Յեբբայեցի յաւելու ³Եբբայեցի ⁴Եբբայեցի յաւելու

2 Փառանու : Եւ խօսեցաւ Տէր ընդ Մով-
 3 սիսի եւ ասէ , Առաքեալ արս եւ լրտե-
 սեացն զերկիրն Քանանացւոց , զոր ես
 ասց որդւոցն Լորայելի ի կալուածս .
 այր մի ըստ զեղի , ըստ ասոնց նահա-
 պետաց իւրեանց առաքեացեալ զնոսս
 4 զամենայն զլիաւորս ի նոցանէ : Եւ ա-
 ռաքեաց զնոսս Մովսէս յանապատէն
 Փառանու ըստ բանին Տեառն . ամենե-
 քին արք զլիաւորք էին նոքա յորդ-
 5ւոցն Լորայելի : Եւ այս են անուանք
 նոցա . զեղին Ռուբենի , Սաղամբէլ որ-
 6 զի Չաքուրայ . Յեղին Շմաւոնի , Սա-
 7 փատ որդի Քուրեայ . Յեղին Յուդայ ,
 8 Քաղէք որդի Յեփոնեայ . Յեղին Իսա-
 9 քարայ , Գաղամ որդի Յովսեփայ . Յեղին
 10 Նփրեմայ , Աւսէս որդի Նաւեայ . Յեղին
 Բենիամինի , Փաղտի որդի Ռափուայ .
 11 Յեղին Չաքուզոնի , Յուզիէլ որդի Սու-
 12 զիայ . Յեղին Յովսեփայ որդւոցն Մա-
 13 նասէի , Գաղէք որդի Սուսայ . Յեղին
 14 Դանայ , Սալէլ որդի Կամայի . Յեղին
 15 Ասերայ , Սամուր որդի Միքայելի . Յե-
 16 յին Գաղայ , Գուզիէլ որդի Մակքեայ .
 17 Այս անուանք են արանցն՝ զոր առաք-
 եաց ¹Տէր լրտեսել զերկիրն Քանանաց-
 ւոց . եւ անուանեաց Մովսէս զանուն
 18 Աւսեայ որդւոյ Նաւեայ՝ Յեսու : Եւ ա-
 ռաքեաց զնոսս Մովսէս յանապատէն
 Փառանու՝ լրտեսել զերկիրն Քանանաց-
 ւոց , եւ ասէ զնոսս , Ելէք ընդ ³անա-
 19 պատղ եւ ամրարձայք ի լեանն . Եւ
 տեսի՞ք զերկիրն զինչ իցէ , եւ զժողո-
 վուրդն որ նստի ի նմա , եթէ զօրաւ-
 ւորագո՞ն իցէ թէ անաւազ , եթէ սա-
 20 կա՞ւք իցին եթէ բազումք . Եւ զի՞նչ իցէ
 երկիրն յորում նոքա բնակեալ իցին ,
 եթէ բարձր իցէ եթէ չար . եւ զինչ ի-
 ցեն քաղաքքն յորս նոքա բնակեալ են ,
 պարսպաւորք իցին եթէ անպարիսպք .
 21 Եւ զի՞նչ իցէ երկիրն , պարա՞րտ իցէ
 եթէ տկար . եթէ իցէ՞ ի նմա ծառա-
 տունկ եթէ ոչ : Եւ ժրասի՞ք , առջիք
 ի պտոյղ երկիրն : Եւ ⁴աւուրք զար-
 նայոյ էին աւուրքն՝ խայծուածոյ խա-
 22 ղողոյ : Եւ ելեալ լրտեսցին զերկիրն
 յանապատէն Սինայ մինչեւ զԲորս ի
 23 մուսս ⁵Եփրաթայ : Ելին ընդ ³անա-

պատն եւ եկին մինչեւ ցՔերրոն . եւ անդ
 Աքիման եւ Աէսի եւ Թազամի , ազգքն
 ենակայ . (եւ Քերրոն եւթն ամաւ յա-
 ռաջագոյն շինեալ էր քան զՏայանիս Ե-
 24 զԿայսաղւոյ) Եւ եկին մինչեւ ցՉորն
 ողիււղոյ , ²եւ լրտեսցին զնա՝ եւ նստին
 անտի ուռ որթոյ , եւ ողիւղ մի խաղո-
 զոյ ի նմա , եւ բարձին զնա յծակօք , եւ
 25 ի նոսանէ եւ ի թղոյ : Եւ անուանցին
 զանուն տեղւոյն՝ Չոր ողիււղոյ , զասն
 ողիււղին զոր նստին անտի որդիքն Իս-
 26 րայելի : Եւ զարձան անդէն՝ ²որդիքն
 Իսրայելի՝ լրտեսեալ զերկիրն յետ ա-
 27ւուրք քառասունից . Եւ նստեալ եկին առ
 Մովսէս եւ առ Նաբոն , եւ առ ամենայն
 ժողովուրդ որդւոցն Իսրայելի յանապատն
 Փառան Կաղէս . եւ ետուն նոցա զբոց
 եւ ամենայն ժողովրդեանն . եւ ցուցին
 28 զպտուղ երկիրն Եւ պատմցին նմա , եւ
 ասին զնա , Չոքաք յերկիրն յոր տաւ-
 րեցեր գմեղ . երկիր՝ որ լրիւն է զկաթն
 29 եւ զմեղր , եւ այս է պտուղ նորս : Բայց
 ազգն սասաիկ ⁶էր որ ընակեալ ⁶էին ի
 նմա , եւ քաղաքք ամուրք եւ պարս-
 պաւորք եւ մեծամեծք յոյժ . եւ զազդն
 30 ենակայ տեսաք անդ : Եւ Ամաղէկ բնակ-
 եալ ⁶էր յերկիրն ընդ նարաւակոյմն . եւ
 Քեստային ²եւ Խեւսցին՝ եւ Յերուսացին
 եւ Ամուրնային բնակեալ են առ իրաւորքն ,
 եւ Քանանացին առ ծովեղբրն եւ առ
 31 Յորդանանաւ : Լուեցոյց Քաղէք զժողո-
 վուրդն ի Մովսիսէ , եւ ասէ զնոսս , ²Ոչ
 այդպէս է . այլ՝ երանկով ելցուք եւ ժա-
 ռանդեսցուք զնա . զի կարող է՞ք յաղ-
 32 թել նոցա Եւ արքն որ ընդ նմա երթեալ
 էին՝ ասէին , Ոչ ելցուք , քանզի ոչ կա-
 րեմք երթալ ի վերայ ազգին . զի զօրա-
 33 ղոյն ըսն զմեզ է յոյժ : Եւ զարհուրե-
 յցոցին երկրաւն զոր լրտեսցին՝ զորպիսն
 Իսրայելի եւ ասին , Երկիրն ընդ որ մեք
 անցաք լրտեսել զնա , երկիր մարգա-
 ծախ է բնակչաց իւրոց . եւ ամենայն
 ազգն զպր տեսաք ի նմա՝ արք յաղթա-
 34 նասակք են . Տեսաք անդ եւ ⁷սկայս եւ
 էաք յաչս նոցա իբրեւ մարախ՝ :

ԳԼ . ԺԳ

1 Եւ ձայն բարձին ամենայն ժողովուրդն ,
 եւ երազ ազգն զգիշերն ³զայն ողջոյն :

¹ Եբբ. Մովսէս ² Յեբբ. պատիւ ³ Եբբ. հա-
 բաւակոյմն ⁴ Եբբ. աւուրքն էին աւուրք ⁵ Եբբ.
 եմաթայ

⁶ Եբբ. է ⁷ Եբբ. սկայս , զորդան ենակայ ի հակայից .
 և էաք յաչս մեր իբրեւ մարախ եւ այսպէս էաք
 յաչս նոցա ⁸ Եբբ. զայն (2) եւ արանքեցին

2 Եւ տրանջեաց ժողովուրդն՝ զՄովսէսէ
 եւ զԱհարոնէ, ամենայն որդիքն Իսրայելի . եւ ասէ ցնոսա ամենայն ժողովուրդն,
 3 Կառ էր եթէ մեռեալ էաք յերկրին Նգիպտացոց . կամ թէ աստէն յա-
 4 նապատի աստ իսկ մեռանէաք : Եւ ընդէր
 5 ¹տանիցի զմեզ Տէր յերկիրն յայն՝ անկանել մեզ պատերազմաւ, եւ կանայք մեր
 6 եւ որդիք մեր լինիցին ի յափշտակութիւն . եւ արդ լաւ իցէ մեզ դառնալ
 7 անդրէն յՆգիպտոս : Եւ ասէ այր ցընկեր,
 8 Արասողք զօրավար, եւ դարձյալք յՆ-
 9 գիպտոս : Եւ անկան Մովսէս եւ Ահարոն
 10 ի վերայ երեսաց իւրեանց առաջի ամենայն
 11 ժողովրդեան որդւոցն Իսրայելի : Բայց
 12 Յեսու որդի Նաւեայ, եւ Քաղէբ որդի Յե-
 13 փոնեայ ի լրտեսաց երկիրն՝ պատասեցին
 14 զհանդերձա իւրեանց . եւ խօսեցան ընդ
 15 ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայելի
 16 եւ ասին, Երկիրն զոր մեզ լրտեսեցաք,
 17 երկիր բարի է յոյճ : Եթէ հաճեցի միայն
 18 ընդ մեզ Տէր, եւ տարցի յերկիրն յայն,
 19 եւ տացէ զնա մեզ, երկիր է որ բոխէ
 20 զկաթն եւ զմեղր : Բայց ի Տեառնէ միայն
 21 ապտամբք մի լինիցիք, եւ ի ժողովրդե-
 22 նէ երկրին մի երկնչիջիք, քանզի կե-
 23 րակոր մեր են . զի մեկնեցաւ ի նոցա-
 24 նէ ²Տէր, եւ ընդ մեզ է Տէր . մի զան-
 25 10 զիտիցէք ի նոցանէ : Եւ ասաց ամենայն
 26 ժողովուրդն քարկոծել զնոսա քարամբք .
 27 եւ փառքն Տեառն երեւեցան ամպով ի
 28 վերայ խորանին վկայութեան յանդիման
 29 ամենայն որդւոցն Իսրայելի : Եւ ասէ
 30 Տէր ցՄովսէս, Մինչեւ յերբ բարկացու-
 31 ցանէ զիս ժողովուրդդ, եւ մինչեւ յերբ
 32 ոչ հաւատան ինձ ամենայն նշանօքն զոր
 33 արարի ի միջի զոցա : ³Թող տուր ինձ՝
 34 եւ՝ հարից զգոսա մահուամբ, եւ կորու-
 35 սից զգոսա . եւ զքեզ ³եւ զտուն հօր քո՝
 36 արարից յազգ մեծ եւ ի բազում քան
 37 զայդ : Եւ ասէ Մովսէս ցՏէր, Իսկ արդ
 38 լսիցեն Նգիպտացիքն եթէ դու հաներ զօ-
 39 րութեամբ քո ³մեծաւ զժողովուրդս զայս
 40 ի նոցանէ, Այլ եւ ամենայն բնակիչք
 41 երկրիս այտորիկ լսիցեն թէ դու, Տէր, ի
 42 ժողովրդեանս յայսմիկ ես որ դէմ յան-
 43 դիման երեւիս դու, Տէր, եւ ամպ քո
 44 կայ ի վերայ զոցա, եւ սեամբ ամպոյ
 45 երթաս դու առաջի զոցա ի տուէ, եւ
 46 սեամբ հրոյ ի զիշերի : Եւ սատակիցես

զժողովուրդս քո զայս իբրեւ զայր մի,
 եւ խօսիցին ազգքն որ լուան զանուանէ
 16 քումմէ, եւ ասիցեն, Վասն զի ոչ կա-
 17 րէր տանել Տէր զժողովուրդն զայն յեր-
 18 կիրն զոր երզուաւ նոցա, արկ զնոսա
 19 տապատ յանապատի անդ : Եւ արդ
 20 բարձրացի ձեռն քո, Տէր, որպէս խօ-
 21 սեցար եւ ատացեր, Թէ Տէր երկայնա-
 22 միտ է եւ բազումոգորմ ³եւ ճշմարիտ՝,
 23 բառնայ զանօրէնութիւնս ³եւ զանիրա-
 24 ւութիւնս՝ եւ զմեղս . եւ սրբելով ոչ
 25 սրբէ զպարտաւորն, հատուցանէ զմեղս
 26 հարանց յորդիս մինչեւ յերիս եւ ի չորս
 27 ազգս . Թող զմեզս ժողովրդեան քո ըստ
 28 մեծի ոգորմութեան քում, որպէս նե-
 29 րեցեր զոցա յՆգիպտոսէ մինչեւ ցայժմ :
 30 Եւ ասէ Տէր ցՄովսէս, Ներեցից զոցա
 31 ըստ բանի քում . Բայց կենդանի եմ ես,
 32 ³եւ կենդանի է անուն իմ,՝ եւ լցցեն
 33 փառք Տեառն զամենայն երկիր . Զի ա-
 34 մենայն արք՝ որ տախն գրառան իմ եւ
 35 զնշանս զոր արարի ես յՆգիպտոս եւ
 36 յանապատիս յայսմիկ, եւ փորձեցին զիս
 37 այս տամ անգամ, եւ ոչ լուան ձայնի
 38 իմում, Թէ տեսանիցեն զերկիրն զոր
 39 երզուայ հարցն նոցա . ³այլ որդիք նոցա
 40 որ են աստ ընդ իս, որ ոչ գիտեն զչար
 41 կամ զբարի, ամենայն մանուկ տիմար,
 42 նոցա տաց զերկիրն .՝ եւ ամենեքին որ
 43 բարկացուցին զիս՝ ոչ տեսեն զնա . Բայց
 44 Քաղէբ ծառայ իմ յորում եղեւ հօգի այլ,
 45 եւ եկն զհետ իմ, տարայց զնա յերկիրն
 46 յոր եմուտ, եւ գաւակ նորս ժառան-
 47 25 գեսցէ զնա : Եւ Ամաղէկ եւ Քանանա-
 48 ցին բնակեալ են ի ձորն . բայց դուք
 49 վաղիւ դարձարուք եւ չուեցէք յանա-
 50 պատէն ընդ ձանապարհ Կարմիր ծովուն :
 51 26 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ
 52 Ահարոնի եւ ասէ, Մինչեւ յերբ զժո-
 53 ղովուրդդ զայդ զչար կրիցեմ, եւ զոքա
 54 տրանջեն առաջի իմ . զարտունջ որդ-
 55 ւոցն Իսրայելի որ տրանջին զձէնջ՝ լուայ
 56 Արդ ասացիս ցնոսա, Կենդանի եմ ես,
 57 ասէ Տէր, եթէ ոչ որպէս խօսեցայք յա-
 58 29 կանջս իմ՝ նոյնպէս արարից ձեզ . Յա-
 59 նապատիս յայսմիկ անկցին ոսկերք ձեր .
 60 եւ ամենայն հանդէս ձեր, եւ մտեալքն
 61 ի ձէնջ ի համար՝ ի քսանամենից եւ ի վեր՝
 62 30 որ տրանջեցին զինէն, Թէ մտանիցեն
 63 յերկիրն յոր համբարձի զձեռն իմ բնա-
 64 կեցուցանել զձեզ ի նմա, բայց Քաղէբ՝
 65 31 որդի Յեփոնեայ, եւ Յեսու Նաւեան : Եւ

¹Եբբ. ամ զմեզ Տէր յերկիրս յայս ²Եբբ. հովա-
 նին իւրեանց ³Յեբբ. գլխիս ⁴Եբբ. հզոր

զորդին զորմէ ասացէք թէ ի յափշտա-
 կուծիւն լինիցին՝ աւարայց գնտա յեր-
 կիրն , եւ ժառանգեացին գնա , յորմէ
 32 գուքն յափրայտորուք : Եւ ոսկերք ձեր
 33 անկցին ասաէն յանապատիս : Եւ որդիք
 ձեր ճարակեսցին յանապատի աստ ամն
 քառասուն , եւ յարձցին զգոռնկու-
 թիւն ձեր , մինչեւ մաշեցցին ոսկերք
 34 ձեր յանապատի աստ : Ըստ թուոյ ա-
 ռուրցն ¹քառասնից , որ ընդ տարւոյ
 ընդունիցիք զմեզս ձեր՝ զքառասուն ամ ,
 եւ ծանիջիք զարտաուծիւն բարկու-
 35 թեան խնայ : Եւ Տէր ի սուսեցայ , եթէ
 ոչ արարից ժողովրդեանց այդմիկ չարի
 յարուցելոյ ի վերայ իմ . յանապատի աստ
 36 ծախիցին , եւ ասաէն մեռանիցին : Եւ
 արքն զորս առաքեաց Մովսէս լրտեսել
 զերկիրն եւ եկեալ բամբասեցին գնմանէ
 առ ժողովրդիսն՝ հանել համբաւ չար
 37 գերիւրէն , Մեռան արքն այնքիկ որ
 հանին համբաւ չար գերկրէն՝ չարաչար
 38 հարուածովք առաջի Տեառն : Եւ Յեսու-
 որդի Նաւեայ եւ Քաղէր որդի Յեփան-
 եայ միասն ապրեցան յարանցն յայնցանէ
 39 որ երթեալ էին լրտեսել զերկիրն : Եւ
 իսուսեցաւ Մովսէս զպատգամս զայս առ
 ամենայն որդիսն Իսրայելի , եւ սուզ սոռ
 40 ժողովուրդն յայժ , եւ կանխեալ ընդ
 առաւօսն ելին ի գլուխ յերինն եւ ա-
 սնն , Ահաւասիկ կամք մեք , ելյուք ի
 41 տեղին զոր ասաց Տէր , զի մեղաք : Եւ
 ասէ Մովսէս , Ընդէր ²անցէք զբամբու-
 42 Տեառն , եւ ոչ աջողեսցի ձեզ : Մի ելա-
 նէք , զի ոչ է Տէր ընդ ձեզ , եւ անկանի-
 43 ցիք առաջի թշնամեաց ձերոց . Չի Ամա-
 ղէկ եւ Քանանացին են անդ առաջի ձեր ,
 եւ անկանիցիք սրով . փոխանակ զի դար-
 ձայք յետս եւ հետեցէք Տեառն , եւ ոչ
 44 լինիցի Տէր ընդ ձեզ : Եւ անտասեալ
 ելին ի գլուխ յերինն . լայց տապանակ
 կտակարանացն Տեառն եւ Մովսէս ոչ
 45 չարժեցան ի բանակէ անտի : Էջ Ամա-
 ղէկ եւ Քանանացին որ բնակեալ էր ի
 յերինն , եւ հարին գնտա եւ կտարեւ-
 46 ցին գնտա մինչեւ ցձերմտ : ³Եւ գար-
 ձան անդրէն ի բանակն : ”

ԳԼ . ԺԵ

1 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ ,
 2 Խօսեալ ընդ որդիադ Իսրայելի եւ ասաւ-

ցես ցղոսա , Յարժամ մտանիցէք յերկիրն
 3 բնակութեան ձերոյ զոր ես ասց ձեզ , եւ
 աննիցէք ⁴ողջակէզ Տեառն՝ եւ ողջըն-
 ծայ ի զո՞ն , մեծացուցանել՝ զուխան կամ
 զկամաւն , կամ ի ածես ձեր աւնեւ հոտ
 անուշից Տեառն , եթէ յարջառոյ եւ եթէ
 4 ի հօտից , եւ բերցէ որ մատուցանիցէ
 զպատարագն իւր Տեառն , զո՞ն նաչնոյ
 զտասանորդ զբուխն՝ գանգեալ իւզով .
 5 չորրորդաւ զորակին : Եւ գլինի ի նուէր
 զչորրորդ զորակին աննիցէք ըստ զո՞նին
 կամ ըստ ողջակիցին առ գառն մի . ⁵այն-
 չափ աննիցես ընծայ ի հոտ անուշից
 6 Տեառն . եւ խոյին յորժամ աննիցես գնա
 յողջակէզ կամ ի զո՞ն , ” արասցես զզո՞ն
 նաչնոյն երկուս տասանորդս գանգեալ
 7 իւզով երրորդաւ զորակին . եւ գլինի ի
 նուէր զերկրորդ զորակին մատուցանի-
 8 ցէք ի հոտ անուշից Տեառն : Ապա թէ
 յարջառոյ աննիցէք յողջակէզ կամ ի
 զո՞ն , ⁶մեծացուցանել զուխան ⁷ի վերկու-
 9 թիւն Տեառն , Մատուցէ ըստ զուարա-
 կին զո՞ն նաչնոյ՝ երիս տասանորդս գան-
 10 գեալ իւզով կիսով զորակին . եւ գլինի ի
 նուէր՝ կէս զորակին , ընծայ ի հոտ ա-
 11 նուշից Տեառն : Այնպէս աննիցես միում
 զուարակին , կամ միում խոյին , կաս
 միում գառնին , յօգեաց կամ յայժեաց :
 12 Ըստ թուոյ նոցա , որպէս գինն աննիցէք
 նոյնպէս արասիք միումն ըստ իւրա-
 13 քանչիւր թուոյ նոցա : Ամենայն բնակն
 նոյնպէս արասցէ , նոյնպիսի ընծայս մա-
 14 տուցանել ի հոտ անուշից Տեառն : Եւ
 եթէ եկ ոք յարեսցի ի ձեզ յերկիրն ձե-
 15 րում , որ լինիցի առ ձեզ յազգս ձեր ,
 արասցէ ընծայ ի հոտ անուշից Տեառն .
 որպէս գուքն աննիցէք՝ նոյնպէս աննիցէ
 16 եւ ⁸եկն եւ ժողովուրդն Տեառն : Օրէն՝
 մի եւ նոյն կացցէ ձեր եւ եկացն որ յարի-
 17 ցին ի ձեզ . օրէն յաւիտեանական յազգս
 ձեր . որպէս եւ գուքն իցէք , եւ եկն
 18 լինիցի առաջի Տեառն : Օրէն մի եւ նոյն
 կացցէ , եւ իրաւունք մի եւ նոյն լինի-
 19 ցին՝ ձեր եւ եկին որ յեցեալ իցէ ի ձեզ :
 17 Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ ,
 18 Խօսեաց ընդ որդիոյ Իսրայելի եւ ասաս-
 19 ցես ցղոսա , Ի մտանել ձեր յերկիրն յոր

⁴ Եբբ. պատարագ Տեառն՝ ողջակէզ կամ զո՞ն ի
 կատարել ⁵ Եբբ. (6) Կամ առ խոյ ⁶ Եբբ.
 ի կատարել ⁷ Եբբ. կամ գեաղաղականս ⁸ Եբբ.
 նա : (15) Ո՛վ ժողովուրդ , օրէն

¹ Եբբ. յորս լրտեսեցէք զերկիրն առուրս քառաս-
 սուն ² Եբբ. անցանէք ³ Եբբ. գլուխ

20 ուտիցէք զուրք ի հացէ երկրին , ¹Առջիք հաս ի նուէր Տեառն զտուային [զանգուածոյ ձերոյ , եւ տարջիք զհաց հասին Տեառն , զատուածիք զայն Տեառն որպէս զհասն ի կապոյ . նոյնպէս եւ զայն զատու-

21 ցանիցէք ²Չատային զանգուածոյն ձերոյ , եւ տայիք Տեառն հաս յազգս ձեր :

22 Իսկ յորժամ յանցանիցէք , եւ ոչ առնիցէք զամենայն զպատուիրանս զպատուիկ զոր խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի ,

23 որպէս հրաման եւ ձեզ Տէր ի ձեան Մովսիսի , յորէ յորմէ հրաման եւ ձեզ Տէր եւ յառ յապա ժամանակս յազգս ձեր :

24 Եւ եղիցի եթէ յաջաց ժողովրդեանն վրիպիցի ակամայ ինչ , արասցէ ժողովուրդն զուարակ մի յանդուոյ ²անարատ յողջակէզ ի հոտ անուշից Տեառն . եւ զո՛հ բտ նմին եւ նուէր բտ նմին պայմանի , եւ

25 նորսպ զմի յայծեաց վասն մեզաց : Եւ քաւեսցէ քահանայն վասն ամենայն ժողովրդան որդոցն Իսրայելի , եւ թողցի նոցա , զի ակամայ է , եւ նոքա մատուցեն զպատարագն իւրեանց ընծայ Տեառն՝ վասն մեզաց իւրեանց առաջի Տեառն :

26 յազադս ակամայիցն իւրեանց . եւ թողցի ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայելի , եւ եկին յեցելոյ ի ձեզ . զի ամենայն ժողովրդեանն է ակամայն :

27 Եւ եթէ մի անձն մեղիցէ ակամայ , մատուցէ այոջ մի տարեւոր վասն մե-

28 զաց . եւ քաւեսցէ քահանայն ի վերայ անձին ակամայացելոյ եւ մեղուցելոյ առաջի Տեառն ակամայ , քաւել վասն

29 նորա ³ : Ինակին որդւոցն Իսրայելի եւ եկին յեցելոյ ի նոսա՝ օրէն մի եւ նոյն կացէ որ ինչ անիցէ ոք ակամայ :

30 Եւ անձն որ անիցէ ձեռամբ հօտարտուծեան ի բնակաց կամ յեկաց , բարկացոյց նա զՏէր , սատակեսցի անձն այն ի ժողովրդենէ իւրմէ : Զի զբանն Տեառն խտտեաց , եւ զպատուիրանս նորա ցրեաց , քնջելով քնջեսցի անձնն այն ի ժողովրդենէ իւրմէ . զի մեղք նորա ի նմա են :

32 Եւ էին որդիքն Իսրայելի յանապատի անպ եւ գտին այր մի որ քաղէր փայտ 33 յաւուր չարաթու : Եւ մատուցին զնա

որք գտինն զի քաղէր փայտ յաւուր չարաթու՝ առ Մովսէս եւ առ Ահարոն՝ եւ առ ամենայն ժողովուրդ ²որդւոցն Իսրայելի : Եւ ետուն զնա ի պահ , զի ոչ ընարկեցին՝ թէ զինչ անիցեն նմա : Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ , Մահու մեոցի այրն . քարամբք քարկոծեսցեն զնա ամենայն ժողովուրդն արտաքոյ բանակին : Եւ հանին զնա ամենայն ժողովուրդն արտաքոյ բանակին , եւ քարկոծեսցին զնա ⁵ամենայն ժողովուրդն արտաքոյ բանակին՝ որպէս հրամայեաց Տէր Մովսիսի :

37 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ , 38 Խօսեաց ընդ որդիսն Իսրայելի եւ ասասցես ցնոսա , զի արասցեն իւրեանց ծոպս ի տոունս հանգերձից իւրեանց յազգս իւրեանց . եւ գնիցէք ի վերայ ծոպից 39 տանոցն ասպանի կապուտակ . Եւ լինիցի այն ձեզ ի ծոպսն , եւ տեսանիցէք զայն եւ յիշիցէք զամենայն զպատուիրանս Տեառն աննել զնոսա . եւ ոչ խտտորիցիք զինի ⁶մտաց եւ աչաց ձերոց , որով զուքն 40 պոռնիկք զինի նոցա . Զի յիշիցէք եւ անիցէք զամենայն զպատուիրանս իմ , եւ եղի՞ք սուրբք Աստուծոյ ձերում :

41 Զի ես եմ Տէր Աստուած ձեր որ հանի զձեզ յերկրէն եկիստացուց լինել ձեզ Աստուած . ես եմ Տէր՝ Աստուած ձեր :

ԳԼ ԺԶ

1 Եւ խօսեցաւ Կորն՝ որդի Իսահառայ որդւոյ Կահաթու որդւոյ Դեւեայ , եւ Դաթան եւ Արիսոն որդիք եղիարայ ⁸որդւոյ Ռուբենի , եւ Աւնան որդի Փազելթայ ²որդւոյ՝ Ռուբենի , Եւ կացին հակառակ Մովսիսի , եւ երկերիւր եւ յիտուն այր յորդւոցն Իսրայելի զլիսուորք ժողովրդեանն՝ խորհրդականք խորհրդոյ եւ 3 արք անուանիք : Կուտեցան ի վերայ Մովսիսի եւ Ահարոնի եւ ասեն , Շատ լիցի ձեզ , զի ամենայն ժողովուրդն եւ ամենեքեան սուրբք են , եւ Տէր ի միջի նոցա . եւ արդ ընդէր ճոխացեալ էք ի վերայ ժողովրդեանդ Տեառն : Եւ լուեալ ⁴ Մովսիսի՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց . ⁵ Եւ խօսեցաւ ընդ Կորնայ եւ ընդ ամենայն ժողովրդեան նորա , եւ ասէ , ⁶Յայց ել եւ ծանեաւ Աստուած՝ զիւրսն եւ

¹ Եբբ. մատուցեք ընծայ վերացման Տեառն . (20) Յառաջին զանգուածոյն ձերմէ մատուցիք նուէր վերացման պան մի . որպէս գնուէր վերացման կայց՝ այնպէս վերացուցիք զսա : (21) Չատային զանգուածոյն ձերոյ առջիք նուէր վերացման Տեառն յազգս ձեր ² Եբբ. պատու ³ Եբբ. այնպէս յաւելու , եւ թողցի նմա

⁴ Եբբ. չէր յայտ ⁵ Եբբ. եւ մեռաւ , ⁶ Կաթ , սրտից ⁷ Եբբ. ա՛ռ ուր ⁸ Եբբ. եւ Աւնան որդի Փազելթայ , որդիք ⁹ Եբբ. Առաւօտուն ցուցցէ Տէր

զտուրն , եւ ¹մերձեցոյց առ ինքն . եւ զորս ²ոչն ընտրեաց ³ոչ մերձեցոյց” առ
6 ինքն : Արդ զայս արարէք . առէք ձեզ զբարեւատս ձեր , կորխ եւ ամենայն
7 ժողովուրդ իւր . եւ զիք ի նոսա հուր , եւ արկէք ի նոսա խոնկ առաջի Տեառն ի վազիւ . եւ եզիցի այր զսր ընտրեացէ
8 Ղեւեայ : Եւ ասէ Մովսէս ցկորխ , կուս
9 բուք ինձ , որպէք Ղեւեայ . Միթէ փոքր
10 ինչ իցէ ձեզ այց , զի գատոյց զձեզ Աստուած Կարայիկ ի ժողովրդենէ իւրմէ , եւ մերձեցոյց զձեզ առ ինքն” պաշտել զպաշտօն խորանին Տեառն , եւ կող ա-
11 ուջի ժողովրդեանն պաշտել զնա . եւ մերձեցոյց զքեզ առ ինքն , եւ զամենայն եղբարս քո զորդանն Ղեւեայ ընդ քեզ ,
12 եւ քահանայանալ եւս ինդրէք : Եւ այդպէս զու եւ ժողովուրդ քո զուժարեալ էք զԱստուծոյ . եւ Ահարոն ո՞վ է զի
13 արանջէք զնմանէ , եւ ասաքեաց Մովսէս կոչել զԴաթան եւ զԱբիրոն , զսրդինն եղիւրբու . եւ ասին , Այ եկեսցուք .
14 Միթէ փոքր իցէ այն զի հաներ զմեզ յերկրէն որ բղիւնք զկաթն եւ զմեզր , սպանանել զմեզ յանապատի աստ . եւ արգ սաստնա եւս մեզ , եւ զո՞ւ ես իշ-
15 խան : Միթէ յերկիրն որ բղիւնք զկաթն եւ զմեզր տարար զմեզ , եւ ետուր մեզ անդ ժառանգութիւն անդոց եւ այդեաց .
⁵եթէ զաչս մեր բրեսցես , ոչ եկեսցուք
16 առ քեզ” : Եւ ծանրացատունն եզիւ յոժ Մովսէս , եւ ասէ ցՏէր , Մի՛ հայիր ի զո՞նն նոցա . ⁴զի զցանկալի ինչ” ուրուք ի նոցանէ ես ոչ առի , եւ ոչ զոք ի նոցա-
17 նէ չարչարեցի : Եւ ասէ Մովսէս ցկորխ ,
⁵Արեւա զժողովուրդ քո , եւ” եզի՛ջիք պատրաստք առաջի Տեառն , զու ⁶եւ
18 Ահարոն” առ վազիւ . Եւ ասէք իւրաքանչիւր զուրուժա իւր , եւ զի՛ջիք ի վերայ նոցա խոճկս , եւ մատուցիք առաջի Տեառն իւրաքանչիւր զբուրուժա իւր , զերկերիւր եւ զխոճն բուրուժոսն , եւ զու եւ Ահարոն զիւրաքանչիւր բուր-
19 ուժա իւր : ⁷Եւ եղին ի նոսա հուր , եւ արկին ի նոսա խոճկ , եւ կացին առ զրան խորանին վկայութեան , ⁸Մովսէս եւ Ա-

հարոն : Եւ կուսեաց ի վերայ նոցա կորխ զամենայն ժողովուրդն իւր ի զուճն խորանին վկայութեան , եւ երեւեցան փառք Տեառն ամենայն ժողովրդեանն :
20 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ
21 Ահարոնի եւ ասէ , Մեկնեցարուք ի միջոյ ժողովրդեանց այցորիկ , եւ աստակեցից
22 զգոսա միանգամայն : Անկան ի վերայ երեսաց իւրեանց եւ ասին , Աստուած , Աստուած հողուց ամենայն մարմնոյ , եթէ մի մարդ մեղաց , ի վերայ ամենայն ժողովրդեանց զայցէ բարկութիւն Տեառն :
23 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ա-
24 սէ , Աստուած ընդ ժողովրդեանն եւ ասա-
25 ցիս , Չատարար ք չուրջ ⁹ժողովրդեամբդ
26 կորխայ եւ Դաթանայ եւ Աբիրոնի : Եւ յարեա Մովսէս եւ զնաց առ Դաթան եւ Աբիրոն , եւ գնացին ընդ նմա ²ամենայն
27 ձերքն Իսրայիլի : Եւ խօսեցաւ ընդ ժողովրդեանն եւ ասէ , Մեկնեցարուք ի վրանաց արանց խտասարտաց այցոցիկ , եւ մի՛ մերձենայցէք յինչ ի զոցա , զի մի՛ կորնչիցիք ընդ ամենայն մեղս զոցա :
28 Եւ մեկնեցան ¹⁰ի ժողովրդենէն կորխայ” չուրջ զնոքոք . եւ Դաթան եւ Աբիրոն ելին եւ կային առ զրան վրանաց իւրեանց , եւ կանայք նոցա եւ մանկուճք
29 իւրեանց եւ աղին իւրեանց : Եւ ասէ Մովսէս , Այսու գրտաաջիք եթէ Տէր ասաքեաց զիս զործել զամենայն զգործս
30 զայստսիկ , եւ եթէ ոչ յինէն ինչ է . եթէ ըստ մահու ամենայն մարդկան մեռանիցին զոքա , կամ ըստ հանդիսի ամենայն մարդկան լինիցի հանդէս զոցա , ապա
31 զիս Տէր ոչ ասաքեաց : Այլ թէ նորանչան ինչ ցուցցէ Տէր , եւ բացեալ երկրի գրեւրան իւր կրանիցէ զգոսա ²եւ զտուճս զոցա” եւ զամենայն ինչ որ զոցա իցէ , եւ իջանիցեն կենդանեոյն ի զժօխս , գրտաաջիք եթէ բարկացուցին արք
32 այգաբիկ զՏէր : Եւ իրրեւ զաղարեաց ի խօսելոյ զրանս զայստսիկ , պատա-
33 սեցաւ երկիրն ի ներքոյ նոցա . Եւ ¹¹բացաւ երկիր” եւ եկուլ զնոսա եւ զտուճս նոցա , եւ զմարգրիկն որ էին
34 ընդ կորխայ եւ զանասունս նոցա : Եւ իջին նոքա եւ որ ինչ էր նոցա կենդանուոյն ի զժօխս . եւ ծածկեաց զնոսա երկիրն , եւ կորեան ի միջոյ ժողովրդեանն :

¹Իբր. մերձեցուցէ ²Եբր. զ-վ-տ-ե ³Իբր. միթէ զաչս արանց այցոցիկ բրեսցես ոչ էյցուք
⁴Իբր. գէշ ⁵Իբր. Դու եւ ամենայն ժողովուրդ քո ⁶Իբր. եւ նորա եւ Ահարոն ⁷Իբր. Եւ ասեալ իւրաքանչիւր զբուրուժա իւր” ⁸Իբր. նոյնպէս Մովսէս

⁹Իբր. զխորանաւք ¹⁰Իբր. առ ի խորանէն կորխայ , Դաթանայ եւ Աբիրոնի ¹¹Իբր. երաց երկեր գրեւրան իւր

34 Եւ ամենայն Իսրայէլ որ չուրջ զնորք էր՝ փախեան ի ձայնէ նոցա . զի համարէին թէ զուշ կ'անդիցէ եւ զնոսա եր-

35 զիրն : Եւ ել հուր ի Տեառնէ եւ եկեր զերկերիւր եւ զչիտուն այրն՝ որ մատուցանէին զխուճկան :

36 Եւ 'ստէ Տէր յՄովսէս (37) եւ՝ ջնդիազարցորդին Ահարոնի քահանայ, ² Բարձէք զբուրու առող պղնձիս՝ ի միջոյ այրեցելոցդ . եւ զհուրդ ³ օտար ցրուեացես ի լայ-

38 Զի սրբեցան բուրու առջը՝ մեղաւորացդ այցողիկ յողիս իւրեանց , ⁴ եւ արասցես զայդ՝ զբուրու կոածոյս նուարտանս սեղանայն . զի մատուցան առաջի Տեառն եւ սրբեցան . եւ եղիցին ի նշանակ որդ-

39 ւոցն Իսրայելի : Եւ առ Եղիազար ⁵ որդի Ահարոնի քահանայի՝ զբուրու առն պղնձիս զորս մատուցին այրեցեալքն ,

40 եւ արար զբուրու սեղանոյն ի յիշատակ որդւոցն Իսրայելի , զի մի՛ մերձենայցէ այլազոր ոք որ չիցէ ի գաւակէ Ահարոնի՛ զնկ խուճկա առաջի Տեառն , զի մի՛ լինիցի իբրեւ զԿորն եւ զխուճան նորս . որպէս խօսեցաւ Տէր ի ձեան Մովսիսի :

41 Եւ արանջեցին ⁶ որդիքն Իսրայելի ի վազիւ անդր զՄովսիսէ եւ զԱհարոնէ , եւ ասէն , Դուք կոտորեցէք զմուզուրդն

42 Տեառն : Եւ եղիւ ի կուտել ժողովրդեանն ի վերայ Մովսիսի եւ Ահարոնի , ⁷ զի մնցին ի խորանն վկայութեան , ⁸ եւ ծածկեաց զնա ամպն , եւ երևեցան փառքն

43 Տեառն , Եւ կացին Մովսէս եւ Ահարոն :

44 յանդիման խորանին վկայութեան : Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի ⁹ եւ ընդ Ահարոնի՝ եւ ասէ , Մեկնեցարուք ի միջոյ ժողովրդեանց այցորիկ եւ սատակեցից զբոսս միանգամայն . եւ անկան ի վե-

46 րայ երեսաց իւրեանց : Եւ ասէ Մովսէս յԱհարոն , Առ զու զբուրու առն , եւ զիցես ի նմա հուր ի սեղանոյ անտի , եւ արկ ի նա խուճկ , եւ տար վազվազակի ի բանակն եւ քաւեացես վասն նոցա . քանզի ել բարկութիւն ի Տեառնէ եւ սկսաւ

47 սատակել զժողովուրդն : Եւ առ Ահարոն , որպէս խօսեցաւ ընդ նմա Մովսէս , եւ ընկապաւ ի ժողովուրդ անդր , եւ անա սկսեալ էր սատակումն ի մտ-

ղովրդեանն , եւ արկ զխուճկն , եւ քաւեաց վասն ժողովրդեանն . Եւ եկաց ի մէջ մեռելոց եւ կենդանեաց . եւ դա-

49 զարեաց սատակումն : Եւ եղեն մեռեալք եւ սատակմանն չորեքտասան հազար եւ եւթն հարեւր , թող զմեռեալսն

50 վասն Կորնայ : Եւ դարձաւ Ահարոն առ Մովսէս ի զուոն խորանին վկայութեան , եւ դազարեաց սատակումն :

ԳԼ ԺԷ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ , Խօսեաց դու ընդ որդիսդ Իսրայելի , եւ ասցես ի նոցանէ զաւազանս ըստ տանց նահապետաց իւրեանց՝ յամենայն իշխանաց իւրեանց , ըստ տանց աղաջ իւրեանց՝ երկոտասան գաւազան . եւ զիւրաքանչիւր անուն զրեցես ի վերայ

3 զաւազանի իւրոյ : Եւ զանունն Ահարոնի զրեցես ի վերայ ¹⁰ իւրոյ գաւազանի եւ իցէ գաւազան մի ըստ ցեղից Իսրայելի՛ զոր ի տանց նահապետաց իւրեանց

4 տայեն՝ . Եւ զիցես զնոսա ի խորանին ¹¹ վկայութեան՝ որովք երևեցայց քեզ՝

5 անդ . Եւ եղիցի մարդոյ զոր ընտարեցից՝ գաւազանն իւր ծաղկեցի . եւ բարձից յինէն զարտունջ որդւոցն Իսրայելի զոր արանջեն նոքա զձէնջ :

6 Եւ խօսեցաւ Մովսէս ընդ որդիսն Իսրայելի . եւ ետուն ցնա ամենայն իշխանքն նոցա զգաւազանս իւրեանց , գաւազան միոյ իշխանի ըստ տանց նահապետաց իւրեանց , երկոտասան գաւազան , եւ դաւազանն Ահարոնի ի մէջ գաւա-

7 ղանայն նոցա : Եւ եղ Մովսէս զգաւազանն առաջի Տեառն ի խորանին վկայութեան : Եւ եղիւ ի վազիւ անդր ¹² մտին Մովսէս եւ Ահարոն՝ ի խորանն վկայութեան . եւ անա զպարսցաւ դաւազանն Ահարոնի ի տանն Դեւայց , եւ արձակեաց չառաւիղ , եւ ծաղկեաց ծաղիկ , եւ

9 երևեցոյց ¹³ ընկոյզ : Եւ եհան Մովսէս զգաւազանս յերեսաց Տեառն առ ամենայն որդիսն Իսրայելի , եւ տեսին . եւ

10 առ իւրաքանչիւր ոք զգաւազան իւր : Եւ ասէ Տէր յՄովսէս , Դիր զգաւազանդ Ահարոնի առաջի վկայութեանն ի պահեստ , ի նշանակ որդւոցն անհնազան-

¹ Եբբ. խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ (37) Աստ
² Եբբ. և բարձցէ զբուրու առն ³ Եբբ. ցրուեացես ի լայց, զի սրբեցան. (38) Զբուրու առն ⁴ Եբբ. արասցես զնոսա ⁵ Եբբ. քահանայ ⁶ Եբբ. ամենայն ժողովուրդ որդւոցն ⁷ Եբբ. հայեցան ⁸ Եբբ. եւ անա ⁹ Եբբ. պահեստ

¹⁰ Եբբ. գաւազանն Դեւայց. զի գաւազան մի իցի ըստ ցեղից հարց նոցա ¹¹ Եբբ. ժողովոյ առաջի վկայութեանն ուր երևեցոյց ձեզ ¹² Եբբ. եմուտ Մովսէս ¹³ Եբբ. նուշ

դից . եւ դազարեացէ արանջիւն նոցա
 11 յինէն եւ մի մեանիցին : եւ Վարարին
 Մովսէս եւ Ահարոն , որպէս հրաման եւ
 12 Տէր Մոյսիսի՝ նոյնպէս եւ արարին՝ : եւ
 խօսեցան որդիքն Իսրայելի ընդ Մով-
 սիսի եւ սանն , Ահաւասիկ սատակիւք :
 13 կորնչիւք , ծախիւք . Ամենայն որ մեր-
 ձնայ ի խորանն զկայտեթեան Տեառն՝
 մեռանի . մինչեւ ի սպառ մեռանիցիմք :

ԳԼ . ԺԸ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Ահարոնի եւ սակ ,
 Դու եւ որդիք քո եւ տուն նահապետու-
 թեան քո ընդ քեզ՝ սանուցաւք զմեզս
 սրբութեանցն . եւ դու եւ որդիք քո առ-
 նուցուք զմեզս քահանայութեան ձերոյ :
 2 Եւ զեղբարս քո պեղեմ Դեւեայ , զպաշտօն
 հօր քո , մատուցես առ քեզ , եւ յա-
 լելցին ի քեզ , եւ պաշտեպէն դքեզ . եւ
 դու եւ որդիք քո ընդ քեզ , յանդիման
 3 խորանին զկայտեթեան : եւ պահեցեն
 զպահպանութիւնս քո , եւ զպահպանու-
 թիւնս խորանին զկայտեթեան . բայց ի
 սպասն իմ ի սուրբ եւ ի սեղանն մի
 մերձեցին , զի մի մեանիցին , եւ նու-
 4 քա եւ դուք : եւ յաւելցին ի քեզ ,
 եւ պահեցեն զպահպանութիւնս խորա-
 նին զկայտեթեան ըստ ամենայն պաշ-
 տաման խորանին . եւ օտարազղի մի
 5 մերձեցի առ ձեզ : եւ պահեցիք զպահ-
 պանութիւնս սրբութեանցն եւ զպահ-
 պանութիւնս սեղանոյն , եւ ոչ եւս լի-
 նիցի բարկութիւն յորդան Իսրայելի :
 6 Եւ ես առի զեղբարս ձեր զԴեւատայիս ի
 միջոյ որդւոցն Իսրայելի՝ զփոխանակս
 տուեալ Տեառն , պաշտել զպաշտօն խո-
 7 րանին զկայտեթեան : եւ դու եւ որդիք
 քո ընդ քեզ պահեցիք զքահանայութիւն
 ձեր ըստ ամենայն պայմանի սեղանոյն , եւ
 զներքին կողմն վարազուրին , եւ պաշ-
 տեցիք զպաշտօն քահանայութեան ձե-
 8 րոյ . եւ այլազղին որ մերձենայցէ՝ մեռցի :
 9 Եւ ստուգալ Տէր ընդ Ահարոնի եւ սակ ,
 եւ ամուսնակի ետու . քեզ զպահեաւս պաղոյ
 իմոց . յամենայն նուիրելոցն ինձ յորդ-
 ւոցն Իսրայելի՝ քեզ ետու զայն ²ի պա-
 տիւ , եւ որդւոց քոյ ³չիտ քո՝ , որէն
 9 յաւխտեալսն : եւ այս կոչցի ⁴ձեզ ի

նուիրելոց սրբութեանցն ընծայից , յա-
 մենայն պատարասաց նոցա եւ յամենայն
 զահիցն՝ նոցա , եւ յամենայնէ առ ի յան-
 դանայն նոցա , եւ յամենայնէ առ ի մե-
 զացն նոցա , զոր տացին ինձ յամենայն
 սրբութեանցն՝ քեզ լիցի եւ որդւոց քոյ :
 10 Ի սրբութիւն սրբութեանցն կերթիւք
 զայն . ամենայն սրբ ուսիցէ զայն , դու
 եւ որդիք քո . զի սրբութիւնք կոչցին
 11 քեզ : եւ այն կոչցի քեզ՝ ⁵ի պաղոյ արոցն
 նոցա , յամենայն նուիրաց՝ որդւոցն Իս-
 րայելի , քեզ ետու զայն եւ ուստերաց
 եւ զստերաց քոյ ընդ քեզ , որէն յախ-
 տեանական . ամենայն սուրբ ի տան քում
 12 կերիցէ զայն : եւ զամենայն ⁶պաղու իւ-
 զոյ , եւ զամենայն ⁶պաղու զինուոյ եւ
 զորենոյ , ⁷զոր տացին Տեառն զպաղու
 13 իւրեանց՝ քեզ ետու զայն : Ամենայն
 առաջինք արմատաւ յերկրին իւրեանց
 զոր մատուցեն Տեառն՝ քեզ լիցին , եւ
 ամենայն սուրբի տան քում կերիցէ զայն :
 14 Եւ ամենայն նուիրեալ յորդւոցն Իսրա-
 15 յելի քեզ լիցի : եւ ամենայն որ ընդ
 զարգանոյ՝ յամենայն մարմնոյ , զոր մա-
 սուցանիցեն Տեառն ի մարդոյ մինչեւ
 յանասուն քեզ լիցի . այլ փրկելով փրկեա-
 ցես զանդրանիկս մարդկան , եւ զանդ-
 րանիկս անտանոց անարդց փրկեացիս :
 16 Եւ փրկանք նորս յամուսրէից ⁸եւ ի վեր՝ ,
 եւ զին նորս հինգ սիկ ըստ սրբութեան
 17 սիկն , որ է քսան զանգ : Բայց զանդ-
 րանիկս արձատոց եւ զանդրանիկս օգեաց
 եւ զանդրանիկս այժեաց ոչ փրկեացես ,
 զի սուրբ են . եւ զարիւն նոցա հնչցես
 առ սեղանովն , եւ զձարպն ⁸հանցես ըն-
 18 ծայ ի նոտ անուշից Տեառն . Եւ միան
 կոչցի քո , որպէս երբուձ ⁹նուիրին եւ
 19 երկն աջոյ քեզ լիցի : Զամենայն ¹⁰ինչ հաս՝
 ի սրբութեանցն զոր ¹¹հանդիցին Տեառն
 որդիքն Իսրայելի՝ քեզ ետու եւ ³որդւոց
 քոյ եւ՝ ուստերաց եւ զստերաց քոյ ընդ
 քեզ , որէն յախտեանական . քանզի ուխտ
 սպի է տալի Տեառն , քեզ եւ զաւակի
 20 քում ¹²չիտ քո՝ : Եւ խօսեցաւ Տէր ընդ
 Ահարոնի եւ սակ , Յերկրի նոցա մի ծա-
 սանդեացես , եւ բաժին քո ընդ նոսա մի
 լիցի , զի ես եմ բաժին քո եւ ծառան-
 զութիւնս ի մէջ որդւոցն Իսրայելի :

¹Եբբ. արար Մովսէս որպէս հրամայեցանս Տէր .
 նոյնպէս արար ²Եբբ. յաղաբս օծութեան
³Յեբբ. զպատիւն ⁴Եբբ. քեզ որ ի սրբութեանցն
 սրբութեանցն առանց հրոյ . ամենայն պատա-
 րագ նոցա յամենայն ընծայէ հացի

⁵Եբբ. վերացումն ընծայից նոցա , մինչեւ յամե-
 նայն երբուձ ⁶Եբբ. պարարտութիւն ⁷Եբբ.
 զերկայցիկ նոցա զոր տացին Տեառն՝ ⁸Եբբ.
 այրեացես ⁹Եբբ. երբման ¹⁰Եբբ. վերացումն
¹¹Եբբ. վերացուցեն ¹²Եբբ. ընդ քեզ

21 Եւ որպէս Ղեւեայ ահա ետու զամե-
 նայն սասանորդս Իսրայելի ի ժառան-
 գութիւն , փոխանակ պաշտաման նոցա
 22 զոր նորայն պաշտիցեն ի խորանին վրա-
 յոր նորայն պաշտիցեն ի խորանին վրա-
 23 նել պմեզս մահարերս : Եւ պաշտեացէ
 Ղեւեային ինչն զպաշտօն խորանին
 վկայութեան , եւ նոքս ապցեն զմեզս
 նոցա . օրէն յաւիտենական յազգս իւր-
 եանց . եւ մի ժառանգեացն ժառանգու-
 24 թիւն ի մէջ որպէս Իսրայելի : Զի զտա-
 սանորդս որպէս Իսրայելի՝ զոր ¹զա-
 տուցեն Տեառն հաս՝ ետու Ղեւեայց-
 ւոցն ի ժառանգութիւն . վասն այսորիկ
 սասայի նոցա թէ ի մէջ որպէս Իսրա-
 յելի մի ժառանգեացն վիճակ :

25 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ սաէ ,
 26 եւ ընդ Ղեւեային խօսեցայն եւ սասա-
 ցեն ցնոսա , եթէ անուցուք յորպէս
 Իսրայելի սասանորդս զոր ետու ²ձեզ ,
 հանիցէք եւ զուք անտի հաս՝ Տեառն՝
 27 զասանորդն ի սասանորդէ : Եւ համա-
 րեսցի ձեզ ³հասն ձեր իբրեւ գցորեան ի
 28 կապոյ եւ իբրեւ զպտուղ ի հնձանէ : Այն-
 պէս եւ զուք ⁴հանիցէք ի հասոց անտի՝
 Տեառն , յամենայն սասանորդաց ձերոց
 զոր անուցուք յորպէս Իսրայելի , եւ
 տայցէք ի նոցանէ ⁵հաս Տեառն , Ահա-
 29 րոնի քահանայի . Զամենայն տրոցն ձե-
 րոց ⁶հանիցէք հաս եւ յամենայն պաղոց՝
 30 զնախկեայն ի նմանէ : Եւ սասայեն
 ցնոսա , ⁷Յորժամ հանիցէք զպտուղն
 ի նմանէ՝ համարեսցի Ղեւեայցոցն իւր-
 31 րեւ զարգիւնն ի կապոյ , եւ իբրեւ զպտուղ
 ի հնձանէ , եւ կերթիք վայն յամենայն
 տեղուսջ , զուք եւ տունք ձեր . զի վարձ
 ձեր է այն , փոխանակ պաշտամանցն
 32 ձերոց ի խորանին վկայութեան : Եւ մի
 անուցուք վասն այնորիկ մեզս , ⁸յոր-
 ժամ հանիցէք զպտուղն ի նմանէ զարու-
 թիւն՝ որպէս Իսրայելի ոչ պղծիցէք՝
 զի մի մեռանիցիք :

ՅԼ . ԺԹ

1 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ
 2 Ահարոնի եւ սաէ , Այս որչումն է օրի-
 նին զոր պատուիրեաց Տէր ⁹Մովսիսի եւ
 սաէ , Խօսեաց ընդ որդիսն Իսրայելի , եւ
 ապցեն առ քեզ երեսն մի կարմիր անա-
 3 րատ , յորում ոչ գուցէ բիծ ինչ , եւ ոչ
 3 իցէ մահալ ընդ լծով : Եւ տացեն զնա
 ցեղիազար քահանայ . եւ հանցեն զնա
 արտաքոյ բանակին ⁸ի տեղի սուրբ՝ , եւ
 4 սպանցեն զնա ստաջի նորա : Եւ առցէ
 Եղիազար ⁹յարենէ նորա՝ , եւ ցանեացէ
 յանդիման խորանին վկայութեան յարենէ
 5 նորա եւ թն սնզամ : Եւ սրբեացն զնա
 ստաջի նորա . եւ մարթ նորա եւ միս
 նորա եւ արիւն նորա հանդերձ ապա-
 6 ւառաւն իւրով այրեսցի : Եւ տացէ քա-
 հանայն վայտ եղեւնեայ եւ զոպոյ եւ
 10 կարմիր , եւ արկցեն ի մէջ այրեցածի
 7 երրնջուն : Եւ ողողեսցէ զհանդերձս իւր
 քահանայն , եւ լուսացէ զմարմին իւր
 ջրով , եւ ապա մտցէ ի բնակն . եւ ան-
 սուրբ լիցի քահանայն մինչեւ ցերեկոյ :
 8 Եւ սր այրեցէն զնա՝ ողողեսցէ զհանդերձս
 իւր , եւ լուսացէ զմարմին իւր ջրով ,
 9 եւ անսուրբ լիցի մինչեւ ցերեկոյ եւ ժո-
 զովեսցէ այր սուրբ զմօսիք երրնջուն , եւ
 կուտեսցէ արտաքոյ բանակին ի սուրբ
 տեղուսջ . եւ եղիցի ժողովրդեան որպ-
 ւոցն Իսրայելի ի պահեստ ջուր սրսկման ,
 10 զի սրբութիւն է : Եւ լուսացէ զմարմին
 իւր որ ժողովիցէ զմօսիք երրնջուն , եւ
 ողողեսցէ զհանդերձս իւր , եւ անսուրբ
 լիցի մինչեւ ցերեկոյ . եւ եղիցի ժո-
 զովրդեան որպէս Իսրայելի եւ եկացն
 յեղիոց ի նոսա օրէն յաւիտենական :

11 Եւ որ մերձենայցէ ի մեռեալ ամենայն
 անձին մարդոյ , անսուրբ լիցի զեւթն օր :
 12 Եւ սրբեսցի ¹¹նա յաւուրն երրորդի եւ
 յաւուրն եւթներորդի , եւ ապա սուրբ
 լիցի . ապա թէ ոչ սրբեսցի յաւուրն եր-
 րորդի եւ յաւուրն եւթներորդի , մի լիցի
 13 սուրբ : Ամենայն որ մերձենայցէ ի մեռ-
 եալ անձին մարդոյ որ մեռանիցի , եւ
 ոչ սրբեսցի , զխորանն Տեառն պղծեաց ,
 սասակեսցի անձն այն յԻսրայելէ . զի
 ջուրն սրսկման ոչ սրսկեցաւ ի վերայ
 նորա , անսուրբ է , զի պղծութիւն իւր
 14 ի նմա է : Եւ այս օրէն իցէ մարդոյ որ

¹ Եբբ. վերացուցեն Տեառն վերացումն ² Եբբ. ձեզ ի նոցանէ ի ժառանգութիւն ձեր՝ յայն-
 ժամ վերացուսջիք եւ զուք անտի վերացումն
³ Եբբ. վերացումն ⁴ Եբբ. վերացուսջիք անտի
 վերացումն ⁵ Եբբ. վերացուսջիք զամենայն վե-
 րացումն Տեառն յամենայն պարտադրուհից
 նորա , ⁶ Եբբ. ի վերացուցանել ձեր զպարտա-
 րադրոյն նորա ի նմանէ , յայնժամ ⁷ Եբբ.
 յորժամ վերացուցանիցէք զպարտադրոյնն նո-
 րա ի նմանէ , եւ զբրտութիւն

⁸ Եբբ. գուրե ⁹ Եբբ. քահանայ յարենէ նորա
 մտամբ ¹⁰ Եբբ. որդան կարմիր ¹¹ Եբբ. նովա

մեռանիցի ի 1տան . ամենայն որ մտա-
 նիցէ ի տունն եւ որ ինչ կայցէ ի տանն՝
 45 անսուրբ լիցին զեւթն օր : Եւ ամենայն
 աման բաց որ ոչ իցէ խփեալ կամ սե-
 46 բեկեալ՝ պիղծ լիցի : Եւ ամենայն որ մեր-
 ձենացէ ընդ երեսս դաշտի ի վերաւոր
 կամ ի մեռեալ , կամ յոսկր մարդոյ կամ
 47 ի գերեզման , պիղծ լիցի զեւթն օր : Եւ
 սոցեն 2պղծելոյն ի մոխրոյ այրեցելոյն
 սրբութեան՝, եւ արկցին ի վերայ նորայ
 48 3ջուր յամանի . Եւ սոցէ զսալայ , եւ
 թացցէ ի ջուրն այր սուրբ , եւ ցանեացէ
 զտամբն եւ զկահլին եւ զամանովքն եւ
 զանձամբքն որ իցին սնդ , եւ զմերձե-
 ցելովն յոսկր մարդոյ կամ ի վերաւոր կամ
 49 ի մեռեալ կամ ի գերեզման : Եւ ցանեացէ
 սուրբն զպղծովն յաւուրն երրորդի եւ
 յաւուրն եւթներորդի , եւ 4սրբացի յա-
 վուրն եւթներորդի . եւ սոզեացէ զհան-
 դերձս իւր , եւ լուսացէ զմարմին իւր
 ջրով , եւ 5անսուրբ լիցի մինչեւ ցերե-
 20 կոյ՝ : Եւ մարդ որ պղծիցի եւ ոչ սրբե-
 ցի , սատակեացի անձն այն ի ժողովրդենէ
 իւրմէ . զի զսրբութիւնն Տեսան սրժեաց ,
 եւ ջուր սրսկման ոչ սրսկեցաւ զնովաւ ,
 21 անսուրբ է : Եւ եղիցի ձեզ այն օրէն յա-
 իտենական , եւ որ սրսկէ զջուրն սրակման
 լուսացէ զձորձս իւր . եւ որ մերձենայցէ
 ի ջուրն սրակման , անսուրբ լիցի մինչեւ
 22 ցերեկոյ : Եւ յամենայն ինչ յոր մերձե-
 նայցէ պղծեալն , անսուրբ լիցի 6մինչեւ
 ցերեկոյ՝ , եւ անձն որ մերձենայցէ ի
 նա , անսուրբ լիցի մինչեւ ցերեկոյ :

Գ Լ Ի

4 Եւ եկին որդիքն Իսրայելի ամենայն
 ժողովրդեաւորն յանապատն Մինայի , յա-
 աաջնում անսեանն . եւ բանակեցաւ ժո-
 ղովուրդն ի Կաղէս . եւ վախճանեցաւ
 անդ Մարիամ , եւ անդ թաղեցաւ :
 2 Եւ ոչ զոյր անդ ջուր ըմպելոյ ժո-
 ղովրդեանն . եւ կուտեցան ի վերայ Մով-
 3 սիսի եւ Ահարամի : Եւ բամբասեաց ժո-
 ղովուրդն զՄովսէս եւ ատեն , Լաւ էր
 թէ մեռեալ էաք ի կորստեան եղբարց
 4 մերոց առաջի Տեսոն . Եւ ընդէր ամէք
 զժողովուրդս Տեսոն յայս անապատ՝ կո-
 5 տրեղ զմեզ եւ զանասունն մերս : Եւ ըն-

զէր հանէք զմեզ յերկրէն Եգիպտացոց՝
 զայ ի տեղիս յայս չար , ի տեղի ուր ոչ
 սերմն սերմանի , եւ ոչ 3սեխնիք , եւ ոչ
 սյգիք , եւ ոչ նուննիք . եւ ոչ ջուր զոյ
 6 ըմպելոյ : Եւ մօին Մովսէս եւ Ահարան
 յերեսաց ժողովրդեանն ի գուռն խորանին
 վկայութեան , եւ անկան ի վերայ երե-
 սաց իւրեանց . եւ երեսեցան փառքն
 Տեսոն ի վերայ նոցա :
 7 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ա-
 8 սէ , Աս զու զգաւազարանն , եւ եկեղեցացո
 զժողովուրդն զու եւ Ահարոն եղբարք
 քո . եւ բարբառեսցիք ի վերայ վիժին
 յանդիման նոցա , եւ սացէ զջուրս իւր .
 եւ 9հանջիք նոցա ջուր ի վիժէ անախի ,
 եւ 10արբուսցիք ժողովրդեանն եւ անաս-
 9 նոց նոցա : Եւ ան Մովսէս զգաւազարանն
 11 յանդիման Տեսոն , սյգէս հրամայեաց
 10 նմա Տէր : Եւ ժողովիցին Մովսէս եւ Ա-
 հարոն զժողովուրդն հանդէպ վիժին , եւ
 սսէ ցնոտս , Լուարուք ինձ , սնհաւանք ,
 միժէ ի վիժէս յայսմանէ հանիցեմք ձեզ
 11 ջուր : Եւ ամբարձեալ Մովսիսի զձեան
 իւր՝ եհար զվէին զաւազանտուն երկիցս
 անգամ . եւ ել ջուր բաղում . եւ արբ
 ժողովուրդն եւ անասունն նոցա :
 12 Եւ սսէ Տէր ցՄովսէս եւ ցԱհարոն ,
 Փոխանակ զի ոչ հաւատացէք զուք ինձ՝
 սուրբ աննիլ զիս առաջի որդեոցն Իս-
 րայելի , վասն այգորիկ ոչ ամնիցիք զուք
 զժողովուրդոյ յերկիրն զոր ետու զոցա :
 13 Այն է ջուր 12բամբասանաց . զի բամ-
 բասեցին որդիքն Իսրայելի առաջի՝
 Տեսոն , եւ սրբեցաւ ի նոսա :
 14 Եւ առաքեաց Մովսէս հրեշտակս ի
 4 Նարաւ եւ Բէւան, Երկիրն զոր մաս-
 նեաց Տէր առաջի որդւոցն Իսրայելի,
 երկիր անանասանոց է. եւ ծառայից
 5 քոց խաչիր են: Եւ ասնն, Եթէ գտաք
 չնորս առաջի քո, տայի երկիրն այն
 ծառայից քոց ի կալուած, եւ մի ան-
 6 գուցաներ զմեզ ընդ Յորդանան:
 Եւ ասէ Մովսէս ցորդին Գազայ եւ
 ցորդին Ռուբինի, Եղարք ձեր երկայցն
 ի պատերազմ, եւ զուք նապիցիք աստ:
 7 Եւ ընդէր խտտրեցուցանէք զվրաս որդ-
 ւոցն Իսրայելի շանցանել յերկիրն զոր
 8 Տէր տարոց է նոցա: ¹Մ՛ջ այդպէս արա-
 ըին հարքն ձեր, յարժամ առաքեցի զնու-
 սա ի կապերանեաց զիսել զերկիրն:
 9 Եւ ելին ի Չորս ոգիուզի եւ զիտեցին զեր-
 կիրն, եւ զանգիտեցուցին զսիրտս որդ-
 ւոցն Իսրայելի, զի մի մասնիցն յեր-
 10 կիրն զոր ետ նոցա Տէր: Եւ բարկացաւ
 արտառութեամբ Տէր յաւուր յայնմիկ,
 11 եւ երդուաւ եւ ասէ, Մի՛ տեսցնեալ արք
 որ ելին յեզրպտուէ, ի քսանամեակի եւ
 ի վեր, ¹որ զիտեցն զչար եւ զբարի,՝
 զերկիրն զոր երդուայ տալ Արրահամու
 եւ Իսահակայ եւ Յակոբայ, զի ոչ եկին
 12 զհետ իմ. Իսայ Գազէր որդի Յեփոնեայ
⁴գատուցեալն, եւ Յեսու որդի Նաւեայ,
 13 զի եկին զկնի Տեառն: Եւ բարկացաւ
 արտառութեամբ Տէր ի վերայ Իսրայելի,
 եւ յածեցոյց զնոսա յանապատին ամս
 քառասուն, մինչև սատակեցաւ ամե-
 նայն ազգն որ արարին զչարիս առաջի
 14 Տեառն: Եւ արդ զուք յարուցեալ էք
 փոխանակ հարցն ձերոց, ժողովք մարդ-
 կան մեղաւորաց, յաւելուլ միւսանգամ
 ի սրտառութիւն բարկութեան Տեառն ի
 15 վերայ Իսրայելի: Ձի գարձեալ էք ի
 նմանէ, յաւելուլ միւսանգամ լքանել
 նմա զձեզ յանապատի աստ. եւ անօ-
 ըրնիք յամենայն ժողովուրդս յայս:
 16 Եւ մասեան առաջի նորս եւ ասնն,
 Գադարս ոչխարաց մերոց շինեցուք եւ
 անանոց մերոց, եւ քաղաքս ազխից
 17 մերոց, Եւ մեք վառեցուք ¹առաջի
 Տեառն՝, առաջապահը երթիլուք որդ-
 ւոցն Իսրայելի, մինչև անցուք զնոսա
 յիւրաքանչիւր տեղի. եւ բնակեցէ աղինս

¹Յեբբ. Գ-Ի-Ի-Ե ²Յեբբ. Եւ ի հասարակածէ (ի կիսոյ բաժնէն) ³Յեբբ. անտի եւ ի հարիւրապետաց (53) Արանց պատերազմողաց առեալ էր աւար իւրաքանչիւր որ վան իւր

⁴Յեբբ. կինեզացի

մեր իքազաքս պարսպաւորս վասն բնակ-
 18 չաց երկրիս . Եւ ոչ դարձցուք ի տունս
 մեր , մինչև եւ բաժանեցին որդիքն Իս-
 19 րայելի զիւրաքանչիւր ժառանգութիւն :
 Եւ ոչ եւս ժառանգեցուք ի մէջ նոցա
 յանցիցն Յորդանանու եւ անդր . զի ու-
 նիմք զվիճակս մեր յայսկոյս Յորդանա-
 նու յարեւելից :

20 Եւ ասէ ցնոսա Մովսէս , Եթէ անսի-
 ցէք ըստ բանիդ ըստ այդմիկ , եթէ վա-
 21 րդիք առաջի Տեառն ի պատերազմ , Եւ
 անցցէ ձեր ամենայն վատեալ ընդ Յոր-
 դանան առաջի Տեառն , մինչև սատա-
 22 կից թշնամին նորա առաջի նորա , Եւ
 նուաճեցի երկիրն առաջի Տեառն , եւ
 սպա դռանայցէք , քաւեալ լիճիք առաջի
 Տեառն եւ յիւրայելէ . եւ եղիցի երկիրս
 23 այս ձեզ ի կալուած առաջի Տեառն : Ա-
 պա թէ ոչ անսիցէք այդպէս , յանցաւոր
 դատնիցիք առաջի Տեառն . եւ յձանի-
 ջիք զմնդս ձեր , յորժամ նասանիցեն
 24 ձեզ չարիք : Եւ շինեալիք զուք ձեզ
 քաղաքս սպխին ձերոյ , եւ զպարս
 խաչանց ձերոց , եւ որ ինչ ել ի բերա-
 նոյ ձերմէ՝ անսիցէք :

25 Եւ խօսեցան որդիքն Ռուբենի եւ որ-
 զիքն Գադայ ընդ Մովսիսի եւ ասեն ,
 Արասցին ծառայք քո որպէս նրամայեաց
 26 մեզ տէրդ մեր : Ազիս մեր եւ կանայք
 մեր եւ ամենայն անասուն մեր կացցեն
 27 ի քաղաքս Գադաաղու : Եւ ծառայք քո
 անցցեն վառեալք եւ կաղմնալք առաջի
 Տեառն ի պատերազմ , որպէս եւ տէրդ ասէ :
 28 Եւ յանդիման արար նոցա Մովսէս
 զեղիապար քահանայ , եւ զՅեսու որդի
 նաւեայ եւ զիշխանս նահապետաց ցե-
 29 ղիցն Իսրայելի , Եւ ասէ ցնոսա Մով-
 սէս , Եթէ անցցին որդիքդ Ռուբենի եւ
 որդիքդ Գադայ ընդ ձեզ ըստ Յորդանան ,
 ամենեքին վառեալ ի պատերազմ առաջի
 Տեառն , եւ արիցէք երկրին² առջիք
 զոցա զերկիրն Գադաաղու ի կալուածս .

30 Ապա թէ ոչ անցցեն ընդ ձեզ ³վառեալք
 ի պատերազմ առաջի Տեառն , անյուս-
 ջիք զազիս զոցա եւ զկանայս զոցա եւ
 զանասուն զոցա յառաջագոյն քան զձեզ
 յերկիրն Քանանացւոց , եւ՝ ժառանգեցեն
 31 ընդ ձեզ յերկիրն Քանանացւոց : Պատաս-
 խանի ետուն որդիքն Ռուբենի եւ որդիքն

Գադայ եւ ասեն , Զոր ինչ նասէ տէրդ
 32 ցժառայս իւր՝ արասցուք : Մեք անց-
 ցուք վառեալք առաջի Տեառն յերկիրն
 Քանանացւոց , եւ առջիք մեզ կալուածս
 33 յայսկոյս Յորդանանու : Եւ ետ Մովսէս
 որդւոցն Գադայ եւ որդւոցն Ռուբենի եւ
 կիսոյ ցեղին Մանաւէի որդւոցն Յով-
 սեփայ զվազաւորութիւնն Սեհոնի ար-
 քային Ամովրճացւոց , եւ զՔաղաւորու-
 թիւնն Ուզայ արքային Բասանու , զեր-
 կիրն եւ զքաղաքս սահմանօք իւրովք ,
 եւ զքաղաքս երկիրն չուրջանակի :

34 Եւ շինեցին որդիքն Գադայ զԿերոն
 35 եւ զԱտարովթ եւ զԱրոյեր , Եւ ⁶զԱռ-
 փար եւ զՅազգեր , եւ ⁶բարձրացուցին
 36 զնոսա՝ , Եւ զՆամրան եւ զԲաւթառու ,
 քաղաքս ամուրս եւ զպարս նօսից :
 37 Եւ որդիքն Ռուբենի շինեցին զՍե-
 38 րոն եւ զԵղիաղէ եւ զԿարիաթեմ . Եւ
⁷զԲէեղմէոյն , չուրջ ամրացուցեալս ,
 եւ զՍերամայ . եւ անուանեցին ըստ ա-
 նուանց իւրեանց զանուանս քաղաքացն
 զոր շինեցին :

39 Եւ ⁸զնայ որդի՝ Մաբիրայ որդւոց Մա-
 նասէի ի Գադաաղ եւ ⁹առ զնա , եւ կո-
 րոյս՝ զԱմովրճային որ բնակեալ էր ի
 40 նմա : Եւ ետ Մովսէս զԳադաաղ Մա-
 քիրայ որդւոց Մանասէի , եւ բնակեցաւ
 41 անդ : Եւ Յայիր Մանասեան չօքաւ առ
 զքաղաքս նոցա , եւ անուանեաց զնոսա
 42 Աւանս Յայիրայ : Եւ Նարաւ զնաց եւ
 առ զԿանաթմ եւ զուանս նորա , եւ
 անուանեաց ¹⁰զնոսա Նաբաւթ ըստ ա-
 նուան իւրոյ :

ԳԼ ԼԳ

1 Եւ այս են բանակեալք որդւոցն Իսրա-
 յելի՝ յորմէ նստէ կլին յերկրէն Եգիպ-
 տացւոց նանգերձ զօրուն իւրեանց ի ձեռն
 2 Մովսիսի եւ Ահարոնի : Եւ զրեաց Մովսէս
 զչուս նոցա եւ զբանակետոս իւրեանց
 բանիւ Տեառն . եւ այս են բանակետօք
 3 զնայից նոցա : Զուեցին յիտմեսեայ
 յամեսանն առաջնում , ի ննգետասանե-
 րորդում աւերն ամսոյն առաջնոյ . զայ-
 զոյ զատկին եւկրն որդիքն Իսրայելի բարձ-
 րացեալ ձեռնամբ առաջի ամենայն Եգիպ-
 4 տացւոցն . Եւ Եգիպտացիքն թաղէին
 զամենայն մեսեայն ի նոցանէ , զորս

¹Եբբ. գիտաալիք եթէ մեզք ձեր գտցեն զձեզ
²Եբբ. բնիցն յո-եւ-ու, որ առաջի ձեր , եւ ³Եբբ.
 վառեալք , յայնժամ

⁴Եբբ. ասաց Տէր ցժառայս քո , այնպէս ⁵Եբբ.
 զԱթրովթ-Սոփան ⁶Եբբ. զՅոզբէն ⁷Եբբ. զնա-
 բաւեալ զԲէեղմէոյն , (գործեալ զանուանս) ⁸Եբբ. զնա
 ցին որդիքն ⁹Եբբ. առին զնա եւ կորուսին ¹⁰Եբբ. զնա-

կոտորեաց Տէր, զամենայն անդրանիկս
 1 յերկրին եղիպտացւոց՝, եւ ի դիս նոցա
 արար 2 վրէժինդրուժիւն Տէր :
 5 Եւ չուեալ որդւոցն Իսրայելի յիւա-
 6 մասեալ բանակեցան ի Սոկրովթ : Եւ
 չուեալ ի Սոկրովթայ՝ բանակեցան 3 ի
 Բովթան, որ է մասն ինչ՝ անապատին :
 7 Չուեցին 4 բանակեցան առ բերանովն Եւ-
 պիրովթայ՝, որ է յանդիման Բէեղսեպ-
 փովթայ, եւ բանակեցան հանդէպ Մագ-
 8 դավղայ : Չուեցին 5 հանդէպ Եպիրով-
 թայ՝, եւ անցին ընդ մէջ ծովուն յա-
 նապատն, եւ դնացին նոքա երեքօրեայ
 ճանապարհ ընդ 6 անապատն եւ բանա-
 9 կեցան 7 զԴաոն ալրերբքն՝ : Չուեցին 8 ի
 Դաոն աղբերացն՝ եւ եկին յեգիմ. եւ
 էին յեղիմ երկոսասան ակն ջրոց, եւ
 եւթամասուն ծառ արմաւենեաց. եւ
 10 բանակեցան անդ 1 առ ջրովն : Չուեցին
 յեղիմայ, եւ բանակեցան զարտոյր Կար-
 11 միր ծովուն : Չուեցին ի Կարմիր ծովն,
 եւ բանակեցան յանապատին ի Սին :
 12 Չուեցին ի Սին անապատէն, եւ բանա-
 13 կեցան ի Դափիկա : Չուեցին ի Դափիկայ,
 14 եւ բանակեցան յեղաւ : Չուեցին յեղու-
 սայ, եւ բանակեցան յիւափիղիմ. եւ ոչ
 15 գոյր ջուր ըմպելոյ ժողովրդեանն : Չուե-
 ցին յիւափիղիմայ, եւ բանակեցան յա-
 16 նապատին Սինայ : Չուեցին յանապատէն
 Սինայ, եւ բանակեցան ի Գերեղմանս
 17 ցանկութեան : Չուեցին ի Գերեղմանոցն
 ցանկութեան, եւ բանակեցան յԱսե-
 18 րովթ : Չուեցին յԱսերովթայ, եւ բա-
 19 նակեցան յիւաթամա : Չուեցին յիւաթա-
 մայ, եւ բանակեցան յիւեմոնփարէս :
 20 Չուեցին յիւեմոնփարեայ, եւ բանա-
 21 կեցան ի Դերոնա : Չուեցին ի Դերոնայ,
 22 եւ բանակեցան յիւեսաա : Չուեցին :
 յիւեսայէ, եւ բանակեցան ի Կեղղաթ :
 23 Չուեցին ի Կեղղաթայ, եւ բանակեցան
 24 9 ի Սովփար : Չուեցին ի Սովփարայ՝, եւ
 25 բանակեցան ի Քարաղաթ : Չուեցին ի
 Քարաղաթայ, եւ բանակեցան ի Մակե-
 26 ղովթ : Չուեցին ի Մակեղովթայ, եւ
 27 բանակեցան ի Կատտաաթ : Չուեցին ի
 Կատտաաթայ, եւ բանակեցան ի Տարաթ :
 28 Չուեցին ի Տարաթայ, եւ բանակե-

29 ցան ի Մատեկա : Չուեցին ի Մատեկայ,
 30 եւ բանակեցան ի Սեղմոնա : Չուեցին ի
 Սեղմոնայ, եւ բանակեցան ի Մատու-
 31 րութ : Չուեցին ի Մատուրովթայ, եւ
 32 բանակեցան ի Բանէա : Չուեցին ի Բա-
 նէայ, եւ բանակեցան ի լերինն Գադ-
 33 գադ : Չուեցին ի լեոնէ անտի Գադգա-
 34 դայ, եւ բանակեցան յետեբաթա : Չուե-
 ցին յետեբաթայ, եւ բանակեցան յեր-
 35 րոնա : Չուեցին յերրոնայ, եւ բանա-
 36 կեցան ի Գասիոնգարեթ : Չուեցին ի Գա-
 սիոնգարեթայ, եւ բանակեցան յանա-
 պատին ի Սին. 1 չուեցին ի Սինն անա-
 պատէ, եւ բանակեցան յանապատին
 Փաւանու,՝ այն է Կադէս :
 37 Չուեցին ի Կադեսայ, եւ բանակեցան
 ի Հովր լերինն, մերձ առ երկրաւն Եղով-
 38 մայ : Եւ ել Ահարոն քահանայ 10 լեւանն
 հրամանաւ Տեառն եւ մեռաւ անդ, ի
 քառասներորդի ամի եղանկոյ որդւոցն
 Իսրայելի յերկրէն Եղիպտացւոց, յաճ-
 11 սեանն հինգերորդի, որ օր մի էր ամօսն :
 39 Եւ Ահարոն էր հարեւր եւ քսան եւ երից
 ամաց յորժամ մեռաւ ի Հովր լերինն :
 40 Եւ լուաւ Քանանիս արքայ Արադայ,
 եւ ինքն բնակեալ էր 11 յերկրին Քանա-
 նացւոց, յորժամ մտանէին որդիքն Իս-
 րայելի :
 41 Չուեցին ի Հովր լեոնէ, եւ բանակե-
 42 ցան ի Սեղմոնա : Չուեցին ի Սեղմոնայ,
 43 եւ բանակեցան ի Փենով : Չուեցին ի Փե-
 44 նովայ, եւ բանակեցան յՈրովթ : Չուե-
 ցին յՈրովթայ, եւ բանակեցան ի Գայի
 45 յայնկոյս սահմանացն Մովարու : Չուեցին
 ի Գայեայ, եւ բանակեցան ի Իւեմոնգադ :
 46 Չուեցին ի Իւեմոնգադայ, եւ բանակե-
 47 ցան ի Գեղմոնգերղաթէմ : Չուեցին ի
 Գեղմոնգերղաթեմայ, եւ բանակեցան ի
 լերինն Արարիմ յանդիման Նաբաւայ :
 48 Չուեցին ի յերանցն Արարիմայ, եւ բա-
 նակեցան 12 յարեւմտից Մովարու առ Յոր-
 49 դանանաւ յանդիման Երիքովի : Եւ բա-
 նակեցան զՅորդանանաւ 13 ի մէջ Եսի-
 մովթայ՝, մինչեւ ցԱրեղատով 13 յա-
 րեւմտից Մովարու :
 50 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի 12 յա-
 րեւմտից Մովարու առ Յորդանանաւ
 51 յանդիման Երիքովի, եւ սասէ, Խօսեաց
 ընդ որդիսդ Իսրայելի եւ ասացես ցրո-
 սա, Դուք ահաւազիկ անցանէք ընդ

1 Յեբբ. գ-ի-տ-ե 2 Եբբ. գատաստան 3 Եբբ. յլլ-
 թոմ : որ է ի ծայր 4 Եբբ. յՈւմոնայ եւ դար-
 ձան այսրէն ի Փիսյրոթ 5 Եբբ. առ Փայրոթաւ
 6 Եբբ. անապատն Ոթոմ 7 Եբբ. ի Մեռա 8 Եբբ.
 ի Մեռայ 9 Եբբ. ի լերինն Սովփար (24) Չուե-
 ցին ի լեոնէն Սովփարայ

10 Եբբ. ի Հովր լեոնէ 11 Եբբ. ի Տարաւոյ երկրին
 12 Եբբ. ի դաշտան 13 Եբբ. ի Բեթեսիմովթայ

52 Յորդանան յերկիրն Քանանացւոց . եւ կորուսչիք զամենայն բնակիչս երկիրն յերեսաց ձերոց , եւ կործանեալիք ¹զդրտանոցս երկիրն նոցա , եւ զամենայն կուսս ձուլածոցս նոցա կորուսչիք , եւ զամենայն զարձանս նոցա յառնայցէք ի

53 միջոյ : եւ կորուսչիք զբնակիչս երկիրն , եւ բնակեալիք զուք ի նմա . զի ձեզ եւ

54 առ զերկիրն նոցա ի վիճակս ²Ըստ ցեղից ձերոց , ըստ բազմաց , բազմացուցանիչիք զկալուածս իւրեանց , եւ ըստ սակաւուց ³սակաւացուսչիք զկալուածս իւրեանց . որպէս ելանիցէ յանուն ուրուք ⁴անդ լինիցի . ըստ ցեղից նահապետու-

55 թեան ձերոյ ժառանգեալիք : եւ եթէ ոչ կորուսանիցէք զբնակիչս երկիրն յերեսաց ձերոց , եղիցին զոր թողուցուքն ի նոցանէ՝ իոչ յակն ձերում եւ նեաք ի կողս ձեր , եւ եղիցին ձեզ թշնամիք յերկ-

56 րին յորում զուք բնակիցէք : եւ եղիցի որպէս խորհէի առնել նոցա , արարից ձեզ :

Գ՛ . ԼԳ

1 **Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ա-**

2 **սէ , Պատուիրեա որդւոցն Իսրայելի եւ**
 ասացիս զնոսա , Դուք մասնէք յերկիրն Քանանացւոց , եւ այն լիցի ձեզ ի մա-

3 սանազութիւն , երկիրն Քանանու հանդերձ սանձանօք իւրովք . եւ եղիցի ձեզ կողմն ընդ հարաւ ի Սինն անապատէ մինչեւ մօտ յԵգիպտ . եւ եղիցին ձեզ սանձանքն որ ընդ հարաւ իցեն , ի մասնէ Աղի ծովուն

4 յարեւելից կողմանէ . եւ պատիցին սահմանքն ձեր ի հարաւոյ՝ ընդ սարն Ակրաբինայ եւ անցցին ⁵յենակ , եւ եղիցին ելք նորա ընդ հարաւոյ կողմն կաղերառնեայ . եւ ելցին ⁶յաւանն Արա-

5 զայ՝ եւ անցցին յԱսեմն . եւ պատիցին սանձանքն յԱսեմոսայ ձորոյն Եգիպտացւոց , եւ եղիցին ելք նորա ընդ ծովն :

6 **Եւ սանձանք ⁷ծովուն ձեզ լիցին . ծովն**
 մեծ սանձան իցէ , եւ այն լիցին ձեզ սանձանք ⁸ծովուն :

7 **Եւ սոյ լիցին ձեզ սանձանք ընդ կողմն**
 հիւսիսոյ . ի մեծէ ծովէն չափեալիք ձեզ

8 ⁹զլեառնդեոնայն . եւ ի լեռնէ անաբի չափեալիք զնոյն մինչեւ ի մուտան Եմաթայ , եւ եղիցին ելք նորա սանձանքն Սեյա-

9 զայ . եւ երանիցէ առ սանձանքն Զեփ-

րոնայ , եւ եղիցին ելք նորա Ասիւնայն . այն լիցին ձեզ սանձանք ի հիւսիսոյ :

10 **Եւ չափեալիք ձեզ սանձանս յարեւելից՝**
 յԱսիւնայնոցս յՍեպտամար . եւ իջանիցեն սանձանքն ի Սեպտամարայ ցեհզա , յարեւելից կողմանէ՝ օղբերացն . եւ իլցին սանձանքն ի Բեղայ մինչեւ զծովն Քենարայ յարեւելից կողմանէ .

12 **Եւ իջանիցեն սանձանքն մինչեւ ցոր-**
 դանան , եւ ելք նորա լինիցին ծովն Ազի : Այն ամենայն երկիր լինիցի ձեզ , եւ սանձանք նորա չորջանակի :

13 **Եւ պատուիրեաց Մովսէս որդւոցն**
 Իսրայելի եւ ասէ , Այս է երկիրն զոր ժառանդիցէք զսա վիճակաւ , որպէս հրամանս ետ Տէր սալ զնա ինն ցեղիցն

14 **եւ կիսայ ցեղին Մանասէի . Վասն զի**
 նա ցեղ որդւոցն Ռուբենի՝ եւ ցեղ որդւոցն Գադայ՝ ըստ սանց նահապետաց իւրեանց , եւ կէս ցեղին Մանասէի ,

15 **զվիճակս իւրեանց ¹⁶Յայնկոյս Յորդա-**
 նանու յանդերձան Երիքովի ¹⁷ի հարաւոյ ընդ կողմն արեւելից :

16 **Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ա-**

17 **սէ , Այս անուանք են արանցն՝ որ ժա-**
 ռանգեցուցանիցեն ձեզ զերկիրն . Եղիա-

18 զար բանայ եւ Յեուս Եաւան . եւ մի մի ի իշխան ի ցեղէ առնուցուք ժա-

19 ռանգեցուցանել ձեզ զերկիրն : Եւ այս անուանք են արանցն . ցեղին Յուզայ՝

20 Քաղէք որդի Յեփոնեայ . Տեղին Շմաու-

21 նի՝ Սաղամիէլ որդի Ամիուզայ . Տեղին Բենիամինի՝ Եղազ որդի Քասղովայ .

22 Տեղին Դանայ՝ իշխան Բակթիր որդի Եզ-

23 զայ . Որդւոցն Յովսեփայ , ցեղի որդւոցն Մանասէի՝ իշխան Անիէլ որդի Սու-

24 փայ . Տեղի որդւոցն Եփրեմի՝ իշխան

25 Կամուէլ որդի Սարաթայ . Տեղին Զա-

26 նաբայ . Տեղի որդւոցն Իսաքարայ՝ իշ-

27 խան Փաղափէլ որդի Ողիայ . Տեղի որդւոցն Ասերայ՝ իշխան Աքիթուր որդի Սե-

28 ղեմայ . Տեղին Եփթաղիմայ՝ իշխան

29 Փաղայէլ որդի Ամիուզայ : Սորա են որոց հրամանս ետ Տէր բաժանել որդւոցն Իսրայելի զերկիրն Քանանացւոց :

Գ՛ . ԼԵ

1 **Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի ¹⁰յարեւ-**

¹ Եբբ. զամենայն պատկերս ² Եբբ. եւ ժառանգեալիք զերկիրն վիճակաւ ըստ ³ Եբբ. ի Սին ⁴ Եբբ. յԱսար-աղար ⁵ Եբբ. արեւմտից ⁶ Եբբ. մինչեւ ցլեառն չովր . (8) եւ ի չովր

⁷ Եբբ. առին ցեղ որդւոցն Ռուբենի ըստ սանց նահապետաց իւրեանց . ⁸ Եբբ. երկու ցեղք եւ կէս ցեղի առին զժառանգութիւն իւրեանց յայնկոյս ⁹ Եբբ. գ-ւ-տ ¹⁰ Եբբ. ի դաշտս

մուտս Մովսրոս՝ առ եղբր Գորգանա-
 2 նու յանդիման Երկթովի, և ասէ, Հրա-
 ման տուր որդւոցն Իսրայելի, և տա-
 3 ման Ղեւտայւոցն ի վիճակաց կալուա-
 ծոց իւրեանց քաղաքս բնակութեանց,
 4 և 1 քուրատանն չուրջ զքաղաքոք ի ր-
 3 եանց տացնն Ղեւտայւոցն: Եւ եղիցին
 նոցա քաղաքք բնակութեան, և 2 զա-
 տուցեալքն նոցա եղիցին 3 խաչանց նո-
 4 ցա, և ամենայն չորքոտանեաց նոցա,
 5 և արուարձանք քաղաքացն զորս տայ-
 ցէք Ղեւտայւոցն ի պարսպէ քաղաքին
 և արտաքոյ պարսպին 4 երկուս հազարս
 5 կանգունս՝ չուրջանակի: Եւ չափեսլիք
 արտաքոյ քաղաքին, յարեւելից կող-
 մանէ երկուս հազարս կանգունս, և
 6 ընդ հարաւոյ կողմն երկուս հազարս
 կանգունս, և ընդ ծովակողմն երկուս
 հազարս կանգունս, և ընդ կողմն հիւ-
 սիսի երկուս հազարս կանգունս. և
 7 քաղաք 5 ի մէջ այնորիկ լինիցի ձեզ. և
 6 զարուարձանս՝ քաղաքացն: Եւ զքա-
 ղաքան զորս տայցէք Ղեւտայւոցն, զվեց
 քաղաքս ապաստանիդ զոր տայցէք,
 7 փախչել անդր սպանողին. և առ այնու
 8 քառասուն և երկուս քաղաքս լնդ
 ամենայն քաղաքս՝ քառասուն և ութ
 9 քաղաք տայցէք Ղեւտայւոցն, և զնո-
 8 սա և 6 զքուրատանս իւրեանց: Եւ
 9 զքաղաքս՝ զոր տայցէք ի կալուածոց
 որդւոցն Իսրայելի, ի բազմաց բաղումս,
 և ի սակաւուց՝ սակաւս. ըստ իւրաքան-
 10 չիւր ժառանգութեան զոր ժառանգիցեն
 տացնն ի քաղաքաց անտի՝ Ղեւտայւոցն:
 9 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ա-
 10 սէ, և իստեաց ընդ որդիսն Իսրայելի և
 11 ասացես զնոսա, Դուք աւաղիկ անցա-
 նէք ընդ Գորգանան յերկիրն Քանանաց-
 12 ւոց, և զատուսլիք ձեզ քաղաքս, որ
 լինիցին ձեզ ապաստանայ՝ փախչել անդր
 սպանողին, 1 ամենայն որ հարկանիցէ
 12 զանձն ուրուք ակամայ: Եւ եղիցին ձեզ
 քաղաքք ապաստանի ի մերձաւորէ ար-
 եանն, և մի մեռանիցի սպանողն մին-
 13 չեւ կացցէ առաջի ժողովրդեանն ի դա-
 տաստանի: Եւ քաղաքքն զոր տայցէք՝
 14 վեց քաղաքք ապաստանի լինիցին ձեզ:
 14 Երիս քաղաքս տալիք յայնկոյս Գորգա-

նանու, և երիս քաղաքս տալիք յերկ-
 15 ւիրնութիւն Սրբուոցն Իսրայելի, եկին և
 պանդխտայն ի միջի ձերում, եղիցին
 քաղաքքն այնորիկ վեց՝ ապաստանք,
 16 փախչել անդր ամենայնի որ հարկանիցէ
 զանձն ուրուք ակամայ:
 16 Եւ եթէ երկաթեղէն անօթով ոք հար-
 կանիցէ և սպանանիցէ զնա, սպանող
 17 է. մահու մեռցի սպանողն: Եւ եթէ
 բռնաքարաւ որով մեռանիցի ոք՝ հար-
 կանիցէ զնա և մեռանիցի, սպանող է.
 18 մահու մեռցի սպանողն: Եւ եթէ փայ-
 տեղէն անօթով ի ձեռանէ որով մեռա-
 նիցի ոք՝ հարկանիցէ զնա և մեռանի-
 19 ցի, սպանող է. մահու մեռցի սպանողն.
 19 Մերձաւոր արեանն սպանցէ զսպանողն.
 յորժամ պատահեացէ նմա՝ սպանցէ զնա:
 20 Եւ եթէ առ թշնամութեան մղեսցէ զնա,
 և ձգեսցէ նմա դամնեայն անօթ խար-
 21 զախութեամբ և մեռանիցի, Կամ առ
 քինալ հարկանիցէ զնա ձեռամբ իւրով
 և մեռանիցի, մահու մեռցի որ եհարն.
 սպանող է, 2 մահու մեռցի որ սպանի-
 22 ցէն.՝ մերձաւոր արեանն սպանցէ զսպա-
 նողն ի պատահելն նորա նմա:
 22 Ապա թէ վրիպակաւ և ոչ առ թշնա-
 մութեան մղեսցէ զնա, և ձգեսցէ նմա
 23 զամենայն անօթ և ոչ խարդախու-
 թեամբ, Կամ զամենայն քար որով մե-
 24 րանիցի, և ոչ զխտութեամբ հարկանիցէ
 զնա և մեռանիցի, և նա չէր նորա
 թշնամի և ոչ խնդրէր չար առնել նմա,
 24 Դատեսցի ժողովուրդն ի մէջ 8 հարկա-
 նելեացն և ի մէջ մերձաւորի արեանն
 25 ըստ դատաստանացս այսոցիկ. Եւ սպ-
 րեցուցէ ժողովուրդն զսպանողն ի մեր-
 ձաւորէ արեանն, և յուղարկեսցէ զնա
 ժողովուրդն անդրէն ի քաղաքն ապաս-
 տանի յոր ապաւինեալն էր. և բնակեա-
 26 ցէ անդ մինչեւ մեռանիցի քահանայն
 26 մեծ զոր օձին իւղովն սրբութեան: Եւ
 եթէ երանելով կրանիցէ սպանողն ըստ
 սահմանս քաղաքին յոր ապաւինեցաւն,
 27 Եւ գտցէ զնա մերձաւոր արեանն ար-
 տաքոյ սահմանաց քաղաքին ապաստա-
 նի իւրոյ, և սպանցէ մերձաւոր ար-
 28 հանն զսպանողն, մի լինիցի մահապարտ:
 28 Վասն այնորիկ ի քաղաքի ապաւինին
 իւրոյ բնակեսցէ, մինչեւ մեռանիցի քա-

1 Եբբ. արուարձանս 2 Եբբ. արուարձանքն 3 Եբբ. արջառոց և խաչանց 4 Եբբ. կանգունս հազար
 5 Եբբ. ի միջի. այս լինիցի նոցա արուարձանք
 6 Եբբ. զարուարձանս 7 Եբբ. դ-լ-ս-տ

8 Եբբ. հարկանելոյն (սպանողին)

հանայն մեծ . եւ յետ մեռանելոյ քահա-
 նայնն մեծի՝ զարձցի սնգրէն սպանողն
 29 յերկիր կալուածոց իւրոց : Եւ եղիցի այս
 ձեզ յիրաւունս դասաստանի յազգս ձեր ,
 յամենայն բնակութեան ձերում :
 30 Ամենայն որ հարկանիցէ զանձն , վկա-
 յիւք սպանցին զսպանողն . եւ մի միայն
 վկայ մի՝ վկայեցէ սպանտնելոյ զանձն :
 31 Եւ փրկանս ընդ անձին ի սպանողէն որ
 մահապարտ իցէ՝ մի՞ տանուցուք . այլ
 32 մահու մեռանիցի : Եւ մի՞ տանուցուք
 փրկանս վասն փախչելոյ ի քաղաքն ա-
 պաստանի առ միւսանգամ բնակելոյ
 յերկրին , մինչեւ մեռանիցի քահանայն
 33 մեծ : Եւ մի՞ չազախիցէք զերկիրն² . եւ
 ոչ քաւիցի երկիրն յարենէն հեղուի ի վե-
 34 րայ նորս , եթէ ոչ արեանքն հեղուի : Եւ
 մի՞ պղծիցէք զերկիրն յորում բնակիցէք
 ի նմա , յորում ես բնակեցայ ի միջի
³ձերում . զի ես եմ Տէր ⁴Աստուած , որ
 բնակեմ ի մէջ որդւոցն Իսրայելի :


ԳԼ ԼԶ

1 Եւ մատանս իշխանք ցեղի որդւոցն
 Գաղատազու որդւոյ Մաքիթայ որդւոյ
 Մանասէի ի ցեղէ որդւոցն Յովսեփու ,
 եւ խօսեցան առաջի Մովսիսի եւ ²առա-
 ջի Եղիազարու քահանայի , եւ՝ առաջի
 իշխանաց տանց նահապետաց որդւոցն
 2 Իսրայելի , Եւ ասեն , Տեառնոյ միտում
 հրամանս ետ Տէր տալ զերկիրն ժառան-
 գութեանս ³վիճակ որդւոցն Իսրայելի .
 եւ տեսնոց հրամանս ետ Տէր տալ ⁶ժա-
 ռանգութիւնս զստերայն Սաղպատազու
 3 եղբոր մերում .՝ Եւ արդ եթէ լինիցին
 միում ցեղիցն Իսրայելի կանայք , եւ
 բառնայցի վիճակ նոցա ի կալուածոց
 հարց մերոց , եւ յաւելուցու ի ժառան-
 գութիւնս այնր ցեղի որոց լինիցինն կա-

նայք , եւ ի վիճակէ ժառանգութեան
 4 մերոց բառնայցի . Եւ եթէ լինիցի ⁷Թո-
 ղութիւն որդւոցն Իսրայելի , յաւելու-
 ցու ժառանգութիւնս նոցա ի ժառան-
 գութիւնս ցեղին որոց լինիցինն կանայք ,
 եւ ի ժառանգութիւնէ ցեղի ազգիս մե-
 րոց բառնայցի ժառանգութիւնս նոցա :
 5 Եւ պատուիրեաց Մովսէս որդւոցն
 Իսրայելի հրամանաւ Տեառն եւ ասէ ,
⁸առ արն զոր ասաց զնա՝ ցեղ որդւոցն
 6 Յովսեփայ : Այս բան է զոր հրամանս ետ
 Տէր զստերայն Սաղպատազու , եւ ասէ ,
 Որոց հանց թուսցի յաչս նոցա՝ եղի-
 ցին նոքա կանայք , բայց ի ցեղէ հօրն
 7 իւրեանց եղիցին կանայք . Եւ մի՞ փո-
 խեսցի ժառանգութիւնս որդւոցն Իսրա-
 յելի ցեղէ ի ցեղ . զի յերաքանչիւր ժա-
 ռանգութիւնս հայրենի ցեղի իւրոյ յա-
 8 րեսցին որդիքն Իսրայելի : Եւ ամենայն
 օրիորդ ⁹մերձաւոր ժառանգութեան՝ ի
 ցեղից որդւոցն Իսրայելի՝ միում ումեք
 յաղգսկանէ հօր իւրոյ լինիցի կին , զի
¹⁰մերձաւորեցուցանն օրդիքն Իսրայելի
 իւրաքանչիւր զհայրենի ժառանգութիւնս
 9 իւր . Եւ մի՞ փոխեսցի վիճակ ի ցեղէ
 յայլ ցեղ . այլ իւրաքանչիւր յիւր ժա-
 ռանգութիւնս յարեցին որդիքն Իսրայելի :
 10 Եւ որպէս հրամանս ետ Տէր Մովսի-
 սի , այնպէս արարին զստերքն Սաղ-
 11 պատազու : Եւ եղին Թերսա եւ Եգզա եւ
 Մեղքա եւ Նուս եւ Մատղա զստերքն
 Սաղպատազու՝ հօրեղբարց որդւոց իւր-
 12 եանց կանայք : Ի ցեղէն ¹¹Մանասէի որդ-
 ւոցն՝ Յովսեփայ եղին կանայք , եւ ե-
 ղեն ժառանգութիւնք նոցա յազգատոն-
 13 մի հօրն իւրեանց : Այս են պատուի-
 րանք ⁴եւ իրաւունք՝ եւ զատաստանք
 զոր պատուիրեաց Տէր ի ձեռն Մովսիսի
¹²յարեւմուտս Մովսիսու , առ եզիրք Յոր-
 գանանու յանդիման Երիքովի :

¹ Եբբ. փախուցելոյն ² Եբբ. այնչէն յ-եււ . յորում էր դուք . զի արիւնն այն պղծէ զերկիրն
³ Եբբ. նորս ⁴ Եբբ. պ-հ-տ ⁵ Եբբ. վիճակաւ
⁶ Եբբ. զժառանգութիւնս Սաղպատազու եղբոր մե-
 րոյ զստերայն նորս

⁷ Եբբ. յորեկեան ⁸ Եբբ. Ազդիգ խօսեցաւ . ⁹ Եբբ. որ ժառանգ եղէ ժառանգութիւնս ¹⁰ Եբբ. ժառանգ եղցեն ¹¹ Եբբ. որդւոցն Մանասէի որդւոցն
¹² Եբբ. որդւոցն Իսրայելի ի դաշտան




ԳԼՈՒԻԲ ԵՐԿՐՈՐԴՄԱՆ ՕՐԻՆԱՑ

	ԳԼ. Հմբ.		ԳԼ. Հմբ.
Երկրորդելով մեկնե՛լ Մովսէս զօրէնս որպէս աղայոց, և ջուցանէ թէ զքառասուն ամ յամեն յանպատին՝ ինքեանք իսկ արարին. զի Տէր Աստուած մեր վաղ ուրեմն ասաց ի Բորեր, թէ մտէք ժառանգեցէք զերկիրն զոր երդուայ ասլ զնա ձեզ ի կայրուած:		Մի՛ փորձեցես զՏէր Աստուած քո, և և զհաճոյն սառաջի նորա արասցես, զի քեզ բարի է:	Զ. 16
Յիշեցուցանէ եւս զի առ ի հանգիստ եւ ի զգուշու թիւն նոցա կարգեաց զհագարապետսն:		Զառնել ինտմութիւն ընդ Բանանացին, այլ փշրել զարձանս նոցա:	Է. 1
Ի նոսա հանէ զպատճառս առաքման լրտեսացն, և և թէ զանգիտեցուցչացն լուսյք եւ արանջեցէք զԱստուծոյ, և բարկացաւ Տէր եւ ասաց՝ թէ մտջիք ի հանգիստն:	Ա. 1	Օրհնութիւնս խոստանայ ի պահելն զպատուիրանն:	Է. 11
Թէ զի բարկացուցէք զՏէր, և կամեցայք սպա ելանել ժառանգել զերկիրն, պարտեցայք յԱստուծոյ յերկիր սոդր. այլ մի՛ բրդուել յանցանելն ընդ երդով՝ կամ ընդ Մովսէսայ:	Ա. 9	Զխոստանաւ մերժել ասէ զագգսն առ սակաւ սակաւ, զի մի՛ թափուրեսի երկիրն եւ զապտնք ի նմա բազմացին:	Է. 17
Թէ մտանեաց Տէր ի ձեռս նոցա զԱհհոն եւ զԱլփ. և և ժառանգեցոյց զերկիր նոցա Ռուբենի և Գադայ:	Ա. 19	Յիշեցուցանէ զարանելիս անապատին, որով վատահաճ առնէ մեծանել զնոսա յերկիրն բարի: Եւ ստո կայ՝ թէ Աչ հայել միայն կեցցէ մարդ:	Ը. 1
Թէ հրամայեաց նոցուն երկուց եւ կիսայ ջեղին՝ առաջնպահս վառել առաջի Յեսուայ յայնկոյ: Յորգանանու, մինչեւ զետեղեցի երկիրն ընդ ձեռամբս:	Ա. 41	Հայեաց յանձն քո, մի՛ հպարտացես, զի Տէր Աստուած քո՝ հօւրն ծախիչ՝ ստապէ զթշնամիս քոս Աստ յիշէ դառաջին բառանեակ պահոցն, և և թէ վասն որթուն զոր մեղայք բարկացաւ ձեզ Տէր ստապել, ուստի զահի հարեայ եմ եւ զոգամ:	Ը. 11
Ըղձայի կամելով առնել նոցա զերկիրն՝ Աղայէցի, ստէ, զՏէր մտանել ի լեռան Սիոն, և անտես արար զիս Տէր վասն ձեր:	Բ. 2	Յիշեցուցանէ զերկին աշխատութիւնն երկրորդն՝ քառանեկի, և և թէ լուսա ինձ Տէր եւ ոչ ստապեաց զձեզ:	Թ. 25
Յօրէնսն ստէ չյաւելուլ ինչ կամ հասանել, այլ պահել ի գովեստ եւ ի շահ անձանց:	Բ. 24	Երկնչել պատուիրէ նոցա ի Տեսանէ, որով ժառանգել մարթացին զերկիրն:	Ժ. 12
Յիշեցուցանէ զահեղ երեւումն Աստուծոյ յօրն եկեղեցոյ, և և պատուիրէ չառնել կուռս ձեռագործս:	Գ. 18	Զգուշանալ պատուիրէ ի զից, և և խօսել յօրէնս եւ խոկալ ի նմին, այլ եւ ի վերայ սեմոցն եւս գրել զնոցն:	ԺԱ. 13
Մեծացուցանէ եւս զերախտն, թէ ինձ բարկացաւ Տէր չմտանել յերկիրն, և և դուք մտանէք ժառանգել. արդ զգոյ՛ լրբոք՝ զի Աստուած հուր ծախիչ է:	Գ. 23	Օրհնութիւնս եւ անձն զնէ՛ ի լսին կամ ի չլսի, և և հրամայէ կարդալ զայն ի Գեբայ և ի Գարիզին:	ԺԱ. 26
Համառօտ զերախտն Աստուծոյ առ նոսա յեղիպտոս եւ յառաջ:	Դ. 1	Փշրել հրամայէ զարձանս եւ զգրօշեայս ազգացն:	ԺԱ. 32
Զատոյց զերիս քաղաքն յանկոյց Յորգանանու՝ յապաւիտութիւնս սկամայ պատնաց:	Դ. 9	Ի միում տեղու՞ մատուցանել ստէ զոգջակէզն ի մի աստուածպաշտութիւն զնոսա մողովելով:	ԺԲ. 5
Երկրորդէ յականջն նոցա զտանս պատգամն, և և զգուշացուցանէ սրբել զՏէր Աստուած, զի Տէր մի է. և և երկնչել ի Տեսանէ Աստուծոյ՝ զի նախանձոտ է:	Դ. 21	Արիւն մի՛ ուտել ստէ, զի ուտելն հեթանոսք զարիւն, և և մի՛ զօջել զմարդ:	ԺԲ. 20
	Դ. 32	Մի՛ լսել երազահանաց որք խոտորեցուցանին զքեզ յԱստուծոյ, և և ոչ երբօր կամ հեռաւորի այլ քարկածեցին ուր եւ զտանիցին:	ԺԳ. 1
	Դ. 41	Ի վերայ մեռեցոյ մի՛ ցտել կամ ճակատ հարկանել:	ԺԴ. 1
	Դ. 44	Թէ ո՛րք են սուրբք եւ կամ պիղծք յանասնոց՝ ի ջրայնոց կամ յօդականաց:	ԺԵ. 3
		Զմեռելութիւն՝ պանդուխտ այլազգոյն սպասէ, կամ վաճառել: Այլ ի նոր կանոնք զայս եւ հրամայեն, զի պիղծ են գինքն սոցա:	ԺԶ. 21

	Գլ. Հմբ.		Գլ. Հմբ.
Մի՛ եփել զգառն ի կաթն մօր իւրոյ,	ԺԳ. 21	Պատուարս դնել շուրջ զտանեօք,	ԻԲ. 8
Հատուցանել զամենայն տասանորդս յետ երեց ամսոց, մինչեւ սրբեացի խորհրդով երկցն:	ԺԳ. 22	Զվարել այլ եւ այլ զսյոզի, ի խորհուրդ կնոջ մտնաւանդ յղւոյ:	ԻԲ. 9
Ի յիններորդ ամին՝ թողու թիւն առնել եղբօրն պարտուց, և մի՛ կրծկել զձեռն առ ի չասպոյ փոխ եղբօրն ի մերձենալ ամին թողոյ:	ԺԵ. 1	Ծոպս առնել նշան անմտացու թեան:	ԻԲ. 12
Յեւ թնկերորդում ամի արձակել զերբայցի ծառայն թողակօր, որ թե՛ չելանէ՝ ծակեացի տկանջն հետեամբ:	ԺԵ. 12	Որ բամբասէ զկին իւր ի շնու թիւն նախ քան զառնուլն զնա:	ԻԲ. 13
Նուիրել ասէ յերուսաղէմ՝ զնախծինս հօտից, իսկ զարատուորն յամեւնայն քաղաքս զենուլ, եւ ուտել սրբոց եւ պղծոց:	ԺԵ. 19	Ապանտնել զչնացեալն:	ԻԲ. 22
Վասն պատուոյ երեց մեծամեծ տօնիցն:	ԺԶ. 1	Վասն խօսեցելոյ եւ պղծելոյ կուսի ի դաշուր կամ ի քաղաքի, եւ վասն ոչ խօսեցելոյ:	ԻԲ. 23
Օրինադրէ դատուորաց առանց կաշառոց դատել:	ԺԶ. 18	Մերժէ զԱմանացին եւ զՄովսարացին:	ԻԳ. 3
Զտնկել անտառս մերձ առ սեղանն:	ԺԶ. 21	Վասն եկաց Եգիպտացոց եւ Եթովպացիացոց:	ԻԳ. 7
Զնուիրել Տեառն զարատաւոր սնանուսն:	ԺԷ. 1	Ուրբ պահել զբանակն ի բնական աղտեղութենէ, ցիցս զգօտեաւ կրելով:	ԻԳ. 9
Երկուք եւ երկուք վկայուք մեռցի մահապարտն, եւ բարձէք զչարն ի միջոյ:	ԺԷ. 2	Զմատնել զծառայն ի չար տեսնէ փախուցեալ:	ԻԳ. 15
Զմեծ ինչ դատաստան քահանայք դատացին, եւ ոչ հաւանեալքն սպանցին:	ԺԷ. 8	Զպտնկել եւ շնուիրել դիւաց:	ԻԳ. 17
Մի՛ զայլազգի՛ այլ զՆորայելացի կացուցես իշխան, որում առ իւր ունել զգիրս զսյս ասէ:	ԺԷ. 14	Պարշելի ասէ գոլ զկարձս շնութեան:	ԻԳ. 18
Հաս քահանային ի զենկեաց ժողովրդեանն:	ԺԷ. 1	Հրածեշտ տայ ի վաշխից:	ԻԳ. 19
Զգիւթել կամ կտարրեղ, զի մարգարէ յարուսցէ ձեզ Տէր:	ԺԸ. 9	Զեղեալ ուխտն չյապարհել:	ԻԳ. 21
Երիս եւս քաղաքս զատուցանել ասէ յապատտոն ակամայ սպանչաց:	ԺԹ. 1	Յարտ եւ յայգի այլոց մտեալ ուտել միայն, եւ ոչ ամանել:	ԻԳ. 24
Զկամօք սպանողն սպանցն:	ԺԹ. 11	Ոչ կարէ գրով արձակեալ կին եւ այլում եղալ, ի մեռանել վերջնոյ առնն, դառնալ յառաջինն:	ԻԿ. 1
Զյափշտակել զասման ընկերին:	ԺԹ. 14	Նորոգ փեսայացեալն մի՛ ելցէ ի պատերազմ:	ԻԿ. 5
Երկուք եւ երկուք վկայուք սպանցի մահապարտն:	ԺԹ. 15	Զգրուել զերկուս երկանաբարս:	ԻԿ. 6
Որո՞ց պարտ է երթալ ի պատերազմ, եւ որո՞ց՝ դառնալ:	Ի. 1	Մարդագողն մահու սպանցի:	ԻԿ. 7
Օրինակ պաշարելոյ զքաղաքս թշնամեաց:	Ի. 10	Բորտն արասոյք բանակին իցի:	ԻԿ. 8
Զպղծագործ Քանանացինն ոչ սպրեցուցանել:	Ի. 16	Դարձուցանել զգրուսն նախ քան զմտուտ արեւուն:	ԻԿ. 10
Թէ՛ գտցի սպանեալ ի դաշտի եւ չգիտիցն զբանօղն:	ԻԱ. 1	Զվարձ վարձկանին ի նիսն աւուր վճարել նախ քան զմուտս արեւուն:	ԻԿ. 14
Զխառնակել ընդ գերեալ կամայս մինչեւ ամցէ ի տուն քստ օրինի:	ԻԱ. 9	Մի՛ մեռցի հայր ընդ մեղաց որդւոյ:	ԻԿ. 16
Վասն պատուելոյ զանդրանիկս, ի խորհուրդ անդրանկութեան Եկեղեցւոյ:	ԻԱ. 15	Զզուել զորբս, եւ չգրուել զտնանկս:	ԻԿ. 17
Քարկոծել կամ խալել ասէ զանտաակ որդի, եւ թաղել զխաչեալսն նախ քան զմուտս արեւուն:	ԻԱ. 18	Մատնել հասկաքաղ, ոչ ճոսքաղ եւ ոչ պողսքաղ:	ԻԿ. 19
Զմոյրեալ եւ զընդ բնոամբ անկեալ գրաստ եղբօրն՝ յարուցանել:	ԻԲ. 1	Քառասունն անգամ՝ հարկանել զարժանին գանի, եւ այլ ոչ:	ԻԵ. 1
Վասն պատշաճ զգետուց արանց եւ կանանց, ի խորհուրդ ողջ պահելոյ զասման բնութեանն:	ԻԲ. 5	Զկուպել զցոռուկ եկին կալուտոյ:	ԻԵ. 4
Զառնուլ զմայրն եւ զձագս հաւուց:	ԻԲ. 6	Սենդանի եղբայրն առցէ զկին անգաւակ եղբօր մեռելոյ, ապա թէ՛ ոչ տուն բոկացելոյ կոչեցի:	ԻԵ. 5
		Կին որ թէ ի թափել զայր իւր զերկաւորեաց մարտակցին կայցի՝ կրտրեացի ձեռնն:	ԻԵ. 11
		Կշիւք եւ չսփք արդար ինիցին:	ԻԵ. 13
		Զանուն Ամաղեկայ ջնջել ասէ, որ կասարեցաւ ի ձեռն Մուրթբէի, յահ եւ յերկեւղ խակագործաց:	ԻԵ. 17
		Առաջին պտղովքն ելանել ասէ ի տեղի անուանն Ատուծոյ, եւ գօհանալ վանս բերօց երկրին:	ԻԶ. 1

	ԳԼ. ՀՃԲ.		ԳԼ. ՀՃԲ.
Յերկրորդում ամին կրկին տասանորդս տալ, զմին Ղեւտացւոց և զմեւան աղքատաց :		Յեսուայ յանձնի ժողովութոյն, զոր եւ յորդորէ քաջալերելով :	ԼԱ. 1
Ի վերայ բռեալ քարեայ սեղանոյ գրել ասէ զբանս օրինացն, զի ընթերցեալ ուսոյին հեթանոսք յանցանելն ընդ հունն Յորդանանու :	ԻԶ. 12	Գրեալ զօրէնս տոյ յաւանդ ցքահանայն ընթերցուել յսկանջս ժողովրդեանն :	ԼԱ. 9
Կարգէ անէծս եւ օրհնութիւնս ընթերցուել յերկուս լերինսն ի լուր ամենայն ազգին, կամ զարհուրել յանիծիցն կամ փափաքել օրհնութեանցն. և կարի աղիտաւոր առնէ զանէծսն : Եւ աստ կայ այն, թէ զկեանս քո տեսցես կախեալ զփայտէ :	ԻԿ. 1	Էջ Տէր ամպով տալ հրաման Յեսուայ, եւ գուշակեաց Մովսիսի զոր ինչ առնելոց էր ժողովութոյն. եւ հրամայեաց գրել զօրհնութիւնսն ի վկայութիւն անօրինելոցն ի գտանել զնոսա չարեացն իւրեանց :	ԼԱ. 14
Համառօտէ զամենայն բարիսն Աստուծոյ առ նոսա յնիգիպտոսէ եւ յառաջ. և զգուշացուցանէ եւ զոչ եւս ծնեալսն ի դից պաշտելոյ խառնելով նորով :	ԻԶ. 9	Քաջալերեալ Մովսիսի զՅեսուէ՝ զբեաց զօրհնութիւնսն ի մատան, և ետ ի պահեստ յՂեւտացիսն :	ԼԱ. 23
Ահեղ ցուցանէ զաստն Աստուծոյ ի յանցուցեալսն եւ կորուսիչս. եւ յոյս օրհնութեան տոյ ի զղջանայն, խրատեալ յօրինացս՝ որ ոչ են հեռի, այլ ի սիրտս եւ յանձին :	ԻԷ. 2	Հրաման առեալ Մովսիսի ելանել ի լեառն՝ տեսնել զերկիրն եւ վախճանել, և նախ քան զելանելն՝ յառաջեաց օրհնեաց զԻսրայէլ միահամուռ, եւ ըստ ցեղից ցեղից, բաց ի նմուսնէ :	ԼԲ. 48
Յայտ առնէ Մովսէս՝ զի յետ իւր	ԻԹ. 19	Եւ Մովսէս ի լեառն Նարաւ, ետես զերկիրն զոր ունելոց էր Իսրայէլ, եւ վախճանեցաւ :	ԼԴ. 1
		Զի եկաց Յեսուէ փոխանակ Մովսիսի առաջնորդ ժողովրդեանն :	ԼԴ. 9



ԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ՕՐԻՆԱՑ

ԳՂՈՒԽ Ա

ԱՅՍ են պատգամք զոր խօսեցաւ Մովսէս ընդ ամենայն Իսրայելի յայնկոյս Յորդանանու յանապատին՝ յարեւմուտս՝ մերձ ի ծովն Կարմիր, ի մէջ Փառանտիփոզայ, եւ Ղորանայ, եւ Հանգրուանացն եւ Ոսկեկայ՝: (Մետասանօրեայ ճանապարհ ի Քորեբայ ²ցլեանն Սէլը՝ մինչեւ ցԿարեւրառնեայ):
3 Եւ եղեւ ի քառամներորդում ամի, յամսեանն մետասաներորդում, որ օր մի էր ամսոյն, խօսեցաւ Մովսէս ընդ ³ամենայն որդիսն Իսրայելի, ըստ ամենայնի որպէս պատուիրեաց նմա Տէր առ նսա,
4 սա, Յեա հարկանելոյ զՍեհոն արքայ Ամովրհացւոց զընակեալն յԵսերան, եւ զՈվզ արքայ Բասանու զընակեալն
5 յԱստարովթ եւ յԵզրային: Յայնկոյս Յորդանանու յերկրին Մովաբու սկսաւ Մովսէս մեկնել զօրէնս զայսօրիկ եւ ասէ,
6 Տէր Աստուած մեր խօսեցաւ ընդ մեզ ի Քորեբ եւ ասէ, Շատ լիցի ձեզ բնակելոյ ի լեռինս յայսմ: Դարձարուք եւ չուեցէք զուք աստի, եւ մտանիցէք ի լեռանն Ամովրհացւոց, եւ առ ամենսն որ չուրջ բնակեալ իցեն ⁴ՂԱրաբացւոյք ի լեռինս եւ ի դաշտս՝ ընդ հարաւ եւ ընդ ⁵ծովեզրն Քանանացւոց, եւ յաներն Լիբանանու՝՝ մինչեւ ցԿեան մեծ
8 ցզեանն Եփրատ: Տեսէք զի անս մասնեցի առաջի ձեր զերկիրն, մտէք ժառանգեցէք զերկիրն զոր երգուայ ես հարցն ձերոց, Աբրահամու եւ Իսահակայ եւ Յակոբայ, ասոյ նոցա եւ զաւակի նոցա յետ նոցա ³զերկիրն որ բղխէ զկաթն եւ զմեղր՝:
9 Եւ խօսեցայ ընդ ձեզ ի ժամանակին յայնօրիկ եւ ասեմ, Ոչ կարեմ միայն հան-

10 զարտել ձեզ: Տէր Աստուած ⁶մեր բազմացոյց զձեզ, եւ ահաւարդիկ էք զուք այսօր իրրեւ զաստեղս երկնից բազմութեամբ: Տէր Աստուած հարցն ⁷մերոց յաւելցէ ի ձեզ եւս քան որչափ էքդ հազարապատիկ, եւ օրհնեացէ զձեզ որպէս
12 եւ խօսեցաւ ընդ ձեզ: Եւ զիմրոյ կարեցեմ միայն կրել զաշխատութիւն ձեր եւ ⁸գաղթս ձեր եւ զհակառակութիւնս
13 ձեր: Արդ տուք ի ձէնջ արս իմաստունս եւ խորհրդականս եւ ⁹հանձարեղս ի վերայ՝՝ ցեղից ձերոց, եւ կացուցից ի
14 վերայ ձեր իշխանս ձեզ, եւ պատասխանի տուեալ ասացէք ցիս, Բարեռք է
15 բանջ զոր խօսեցար ասնել: Եւ ասի ի ձէնջ զցեղապետս, արս իմաստունս եւ հանձարեղս եւ խորհրդականս, եւ կացուցի վնոսս ի վերայ ձեր առաջնորդս: հաղարայետս եւ հարիւրապետս եւ յսնապետս եւ տանապետս եւ ատենապետս
16 Եւ պատուիրեցի դասաւորացն ձերոց ի ժամանակին յայնմիկ եւ ասեմ, Լուարուք ատենի ի մէջ եզրարց ձերոց, եւ գատեցարուք արդարութեամբ ի մէջ ասն եւ եզրօր իւրոյ, եւ ի մէջ եկին իւրոյ:
17 Եւ մի առնուցուս ակն ի դատաստանի, ¹⁰ըստ փառուն եւ ըստ մեծին գատիցիս՝: եւ մի խորհիցիս յերեսաց մարդոյ, զի դատաստանն Աստուծոյ է. եւ բան ինչ որ ծանարդոցն քան զձեզ իցէ, հատու
18 ջիք աս իս եւ լուայց: Եւ պատուիրեցի ձեզ ի ժամանակին յայնմիկ զամենայն բանս զոր ասիցէք:
19 Եւ չուեալ ի Քորեբայ չըջեցաք ընդ ամենայն անապատն ընդ մեծ եւ ընդ անապին, զոր զուք իսկ տեսէք, զճանապարհ լեռինն Ամովրհացւոց, որպէս պատուիրեաց Տէր Աստուած մեր մեզ,
20 եւ եկաք մինչեւ ցԿարեւրառնեայ: Եւ ասայի ցձեզ, Եկայք մինչեւ ցլեռանն Ամովրհացւոց զոր Տէր Աստուած մեր

¹Եբբ. ի դաշտին, մերձ ի Սուփ, ի մէջ Փառանու եւ Տոփեղայ, եւ Ղորանայ, եւ Ասերովթայ եւ Տիզահայայ ²Եբբ. ընդ ճանապարհ լեռինն Սէլը ³ՅԵբբ. գալ-տ ⁴Եբբ. ի դաշտին, ի լեռինն եւ ի չովտին եւ ⁵Եբբ. ծովեզրն, ընդ երկիրն Քանանացւոց եւ ի Լիբանան

⁶Եբբ. ձեր ⁷Եբբ. ձերոց ⁸Եբբ. գրեուն ⁹Եբբ. ծանօթս ըստ ¹⁰Եբբ. որպէս մեծին, նոյնպէս փորուն լուիջի

21 տայցէ ¹ձեզ : ²Տեսէք զի Տէր Աստուած
³մեր մատնեաց առաջի երեսաց ⁴ձերոց
զերկիրն . ⁵Ելէք , ժառանգեցէք՝ որպէս
ասաց Տէր Աստուած հարցն ⁶մերոց ձեզ՝ .
մի ⁷երկնչիցիք եւ մի գանդիտիցիք՝ :
22 Եւ մատեայք առ իս ամենեքեան եւ
ասացէք , Առաքեսցուք յառաջագոյն քան
զմեզ արս , եւ զիտեսցեն մեզ զերկիրն ,
եւ պատմեսցեն մեզ զճանգամանս ճա-
նապարհին ընդ որ ելանիցեմք անդր ,
23 եւ զքաղաքացն յորս մտանիցեմք : Եւ
հաճոյ թուեցաւ առաջի իմ բանն . եւ
առի ի ձէնջ երկոտասան այր , այր մի
24 ըստ ցեղի : Եւ գնացին ելին ի լեւանն ,
եւ հասին մինչեւ ի Չորն ողկուզի , եւ
25 լրտեսեցին գնա : Եւ առին ի ձեռս իւր-
եանց ի պողոյ երկրին , եւ իջին առ մեզ
եւ բերին մեզ զրոյց . ասեն , Բարի է
երկիրն զոր Տէր Աստուած տալոց է մեզ :
26 Եւ ոչ կամեցայք ելանել , եւ հետեցէք
27 բանին Տեառն Աստուծոյ ⁸մերոյ . Եւ
տրանջեցէք ի վրանս ձեր եւ ասացէք ,
Առ ատելութեան Տեառն եւսն զմեզ
յերկրէն Եգիպտացոց՝ մասնել զմեզ ի
ձեռս Ամովրճացոց , սատակել զմեզ :
28 Արդ յո՞ ելանիցեմք . եւ եզրարք ⁹ձեր
զանգիտեցուցին զսիրտս ⁹ձեր եւ ասեն ,
Ազգ մե՞ծ եւ բազում եւ գորագոյն է քան
զմեզ , եւ քաղաքք մեծամեծք եւ պարս-
պաւորք մինչեւ յերկիրն . այլ եւ ¹⁰որ-
29 զիս սկայից՝ ստեար մեք անդ : Եւ ա-
սացի զձեզ , Մի զանդիտիցէք եւ մի
30 զարհուրիք ի նոցանէ . Տէր Աստուած
¹¹մեր որ երթայ առաջի երեսաց ձերոց ,
նա տայ պատերազմ ընդ նոսա փոխա-
նակ ձեր , ըստ ամենայնի զոր արար ձեզ
յերկիրն Եգիպտացոց առաջի աչաց ձե-
31 րոց : Եւ յանապատիս յայսմիկ զոր տե-
նէք , զի մտայց զքեզ Տէր Աստուած քո ,
որպէս մտուցանիցէ ոք զորդի իւր , ըստ
ամենայն ճանապարհին զոր գնացէք մին-
32 չեւ եկիք ի տեղիս յայս : Եւ ի բանիս
յայսմիկ ոչ հաւատացէք Տեառն Աստու-
33 ծոյ ձերոյ , Որ երթայ առաջի ձեր ի ճա-
նապարհիդ ընտրել ձեզ զտեղին , առաջ-
նորդել ձեզ հրով ի գիւհերի , ցուցանել
ձեզ ճանապարհ ընդ որ գնայցէք , եւ
34 ամպով ի տուէ : Եւ լուաւ Տէր զձայն

բանիցն ձերոց , եւ բարկացեալ երդուաւ
35 եւ ասէ , Թէ սեսանիցէ ոք յարանցդ
յայցցանէ՞ զերկիրն բարի գոր երդուայ
36 տայ հարցն նոցա . Բայց Քաղէր որդի
Յեփունեայ , նա տեսցէ զնա , եւ նմա տայ
զերկիրն յոր եհաս եւ որդւոցն նորա ,
37 վան յարելոյ նորա ի Տէր : Եւ ինձ բար-
կացաւ Տէր վան ձեր եւ ասէ , Եւ զու
38 մի մտցես անդր : Այլ Յեսու որդի Նաւ-
եայ սպասաւոր քո , նա մտցէ անդր .
զնա զորացս , զի նա ժառանդեցուցէ
39 զնա Իսրայելի : Եւ ճնունդք եւ որդիք
ձեր զորոց ասացէք թէ ի յախշտակու-
թիւն լինիցին , եւ ամենայն մանուկ մա-
տազ որ ոչ զիտիցէ այսոր զբարի եւս
զչար , նոքա մտցեն անդր , եւ նոցա
տայց գնա , եւ նոքա ժառանգեսցեն զնա :
40 Եւ զուք դարձարուք եւ չուեցէք յանա-
պատն ընդ ճանապարհ Կարովր ծովուն :
41 Եւ պատասխանի ետուք ինձ եւ ասա-
ցէք , Մեղաք առաջի Տեառն Աստուծոյ
մերոյ . ելցուք մեք , տացուք պատե-
րազմ , որպէս պատուրեաց մեզ Տէր Աս-
տուած մեր . եւ ատեալ իւրաքանչիւր
զղործի պատերազմի իւրոյ՝ գումարե-
42 ցայք ելէք ի լեւանն : Եւ ասէ զիս Տէր ,
Ասա ցնոսա , Մի ելանէք եւ մի մարտնչիք ,
զի չեմ ընդ ձեզ , գուցէ խորտակիցիք
43 առաջի թշնամեաց ձերոց : Եւ իտեսցայ
ընդ ձեզ , եւ ոչ լուարուք ինձ , եւ ան-
ցէք զբանի Տեառն , եւ անաստեղէք
44 ելէք ի լեւանն : Եւ ելեալ Ամովրճացին ,
որ բնակեալն էր ի լերինն յայնմիկ , ընդ-
գէմ ձեր՝ հալածեաց զձեզ , որպէս պա-
տիցի մեզու , եւ խոցտեսցին զձեզ ի
45 Մէիրայ մինչեւ ցձերմա : Եւ նստեալ
լայիք առաջի Տեառն , եւ ոչ լուաւ Տէր
46 ձայնի ձերու , եւ ոչ անսաց ձեզ : Եւ
նստայք ի Կաղէս աւուրս բազումս , որ-
չափ աւուրս երբինն նստայք անդր :

ԳԼ . Բ

1 Եւ դարձար չուեցաք յանապատն ընդ
ճանապարհ Կարովր ծովուն , զոր օրինակ
խօսեցաւ Տէր ընդ իս , եւ պատեցայք
2 զՄէիր լերամբ աւուրս բազումս : Եւ
3 ասէ զիս Տէր , Շատ լիցի ձեզ պատել
զլերամրդ . արդ դարձարուք ընդ կողմն
4 հիւսիսոյ : Եւ ժողովրդեանդ պատուէր
տուր եւ ասասցես , Դուք աւազիկ ան-

¹ Եբբ. մեզ ² Եբբ. Տես ³ Եբբ. քո ⁴ Եբբ. քոց
⁵ Եբբ. եւ , ժառանգեա ⁶ Եբբ. քոց բեղ ⁷ Եբբ.
երկնչիցիս եւ մի՝ գանդիտիցիս ⁸ Եբբ. ձերոյ
⁹ Եբբ. մեր ¹⁰ Եբբ. զորդան ենակայ ¹¹ Եբբ. ձեր

¹² Եբբ. ոչեցն յո-եւ-ու , յազգէ այտի շարէ ,

ցանէք ետ սանմանօք եղբարց ձերոց՝
 որպէս Եսաւայ, որ բնակեալ են ի Սէիր .
 եւ երկնչիցին ի ձէնջ, եւ զգուշանայցէք
 5 յոյժ . Մի՛ գրգռիցիք ընդ նոսա ի պատե-
 րագմ, զի ոչ տաց ձեզ յերկրէ նոցա եւ
 ոչ քայլ մի ոտին . քանզի վիճակաւ ե-
 6 տու Եսաւայ զԵստանն Սէիր : Կերակուրս
 գնեսջիք ի նոցանէ՜ եւ կերիջիք, եւ
 ջուր չափով արծաթոյ առջիք ի նոցանէ՜
 7 եւ արբջիք . Զի Տէր Աստուած ² մեր
 օրհնաց զքեզ յամենայն զործս ձեռաց
 քոց . ³ ձանիր զիարզ անցեր ընդ անա-
 պատն մեծ եւ անազին . անա քառա-
 սուն ամ Տէր Աստուած քո ընդ քեզ է,
 եւ ոչ իւրք կարօտացար :
 8 Եւ անցաք առ եղբարք մերովք որդ-
 ւովքն Եսաւայ բնակելովքն ի Սէիր, առ
 ճանապարհուն ⁴ Արարացւոց յեզովմայ՝,
 եւ ի Գառինոգարերայ . եւ դարձեալ ան-
 ցաք ընդ ճանապարհ անապատին Մո-
 9 վաբու : Եւ ասէ ցիս Տէր, Մի՛ թշնամա-
 նայցիք ընդ Մովաբացիսն եւ մի՛ գրգռի-
 ցէք ընդ նոսա պատերազմ . զի ոչ տաց
⁵ ձեզ յերկրէն նոցա ի վիճակ . քանզի
 որդւոցն Դովտայ ետու ⁶ զՍէիր ի ժա-
 10 ոսնպուծիւն : Եւ Ոմմինքն նախ բնա-
 կեալ էին ի նմա, ազգ մեծ եւ բազում
 11 եւ ⁷ չօր . Որպէս Ենամիմք ընդ Ռափա-
 յիսնն համարիցին,՝ նայնպէս եւ նոքա
 իբրեւ զԵնակիսն . եւ Մովաբացիք ա-
 12 նուանեն զնոսա Ոմմինս : Եւ ի Սէիր նախ
 բնակեալ էր Քուեցին . եւ որդիքն Ե-
 սաւայ կորուսին զնոսա, եւ սատակե-
 ցին զնոսա յերեսաց իւրեանց, եւ բնա-
 կեցան փոխանակ նոցա . զոր օրինակ
 արար Իսրայէլ զերկիր ժառանգութեան
 13 իւրոյ զոր ետ նոցա Տէր : Եւ արդ արիք
 չուեցէք եւ անցէք ընդ ձորն Զարեղ՝⁸
 14 Եւ առուրք որչափ անկան մեզ ի գնալն
 մեզ ի Կաղեհորառնեայ մինչեւ անցաք
 ընդ ձորն Զարեղ, երեսուն եւ ութ ամ .
 մինչեւ անկաւ ամենայն ազգ արանց
 պատերազմողաց ի բանակէ անտի, որպէս
 15 երզուաւ նոցա ⁹ Աստուած : Եւ ձեռն
¹⁰ Աստուծոյ էր ի վերայ նոցա ստատակել
 զնոսա ի բանակէն, մինչեւ անկան :
 16 Եւ եզեւ իբրեւ անկան ամենայն արք

պատերազմողք մեռեալք ի միջոյ ժո-
 17 զովորեանն, Խօսեցաւ Տէր ընդ իս եւ
 18 ասէ, Դու անցանես այսօր առ սանմա-
 19 նօք Մովաբու ¹¹ ի Սէիր, Եւ մօտ հասա-
 նիցէք յորդինն Ամոնայ, մի՛ թշնամա-
 նայցիք ընդ նոսա, եւ մի՛ գրգռիցէք ընդ
 նոսա պատերազմ . զի ոչ տաց ձեզ զեր-
 կիր որդւոցն Ամոնայ ի վիճակ, քանզի
 որդւոցն Դովտայ ետու զնա վիճակաւ :
 20 (Երկիր ¹² որ Ռափինայ համարեսցի՝, քան-
 զի նախ՝ ¹³ Ռափայինք բնակէին ի նմա,
 եւ Ամոնացիք անուանեն զնոսա Զում-
 21 զումինս . Ազգ մեծ եւ բազում եւ ¹⁴ զօ-
 բաւոր իբրեւ զԵնակիսնն . եւ կորոյս
 զնոսա Տէր յերեսաց նոցա, եւ ժառան-
 ցեցին եւ բնակեցին փոխանակ նոցա .
 22 Որպէս արար որդւոցն Եսաւայ բնակելոց
 ի Սէիր, զոր օրինակ ստատակեաց Տէր
 զՔուեցին յերեսաց նոցա, եւ ժառան-
 ցեցին եւ բնակեցին փոխանակ նոցա
 23 մինչեւ ցայսօր : Եւ Խեւացիքն որ բնա-
 կեալ էին յԱսիրովթ մինչեւ ցԳազա . եւ
¹⁵ Գամիրքն որ ելեալ էին ի Գամրաց՝
 ստատակեցին զնոսա, եւ բնակեցան փո-
 24 խանակ նոցա : Արդ արիք չուեցէք եւ
 անցէք ընդ ձորն Ամոնովայ . անա մատ-
 նեցի ի ձեռս քո Սեհոն արքայ Եսերո-
 նայ զԱմովրոնայի . եւ զերկիր նորս սկսիր
 ժառանգել, եւ զրզոնլ ընդ նմա պա-
 25 տերազմ : Յօրէ յայսմանէ ¹⁶ սկսիր տալ
 զահ եւ զերկեւզ քո առաջի ամենայն
 ազգաց որ են ի ներքոյ երկնից, զի որք
 լսիցեն զանուանէ քումմէ՛ խառվեսցին,
 եւ երկունք կայցին զնոսա յերեսաց քոց :
 26 Եւ առաքեցի հրեշտակս յանապատէն
 Կեղմովթայ առ Սեհոն արքայ Եսերոնայ
 27 իսնիւք իազազուծեան, եւ ասեմ, Ան-
 ցից ընդ երկիր քո, զճանապարհայն գնա-
 ցից, ոչ խոտորեցայց յաջ եւ ոչ յահեակ :
 28 Կերակուր՝ արծաթոյ վաճառեսցես ինձ
 եւ կերայց, եւ ջուր՝ արծաթոյ վաճա-
 րեսցես ինձ եւ արբից, բայց զի ոտիւք
 29 եւեթ անցից . Որպէս արարին ինձ որ-
 դիքն Եսաւայ բնակեալքն ի Սէիր, եւ
 Մովաբացիքն բնակեալք ¹⁷ յԱրոյէր, մին-
 չեւ անցից ընդ Յորդանան յերկիրն զոր
 30 Տէր Աստուած տացէ մեզ : Եւ ոչ կա-
 մեցաւ Սեհոն արքայ Եսերոնայ անցանել

¹ Եբբ. Երեմի, Ես-Եւ, արծաթոյ ² Եբբ. քո ³ Եբբ. գիտե ⁴ Եբբ. դաշտին յեղաթմայ ⁵ Եբբ. քեզ ⁶ Եբբ. զԱր ⁷ Եբբ. երկայնահասակ իբրեւ զԵնակիսնն. (11) Ընդ հսկայոյ համարէն ⁸ Եբբ. Երեմի Ես-Եւ, եւ անցաք ընդ ձորն Զարեղ ⁹ Եբբ. Տէր ¹⁰ Եբբ. Տեառն

¹¹ Եբբ. ընդ Ար ¹² Եբբ. հսկայից համարէր ¹³ Ա. Երեմի, հսկայք ¹⁴ Եբբ. երկայնահասակ ¹⁵ Եբբ. Կափիմ արացիքն որ ելեալ էին ի Կափիմորայ ¹⁶ Եբբ. սկսայց ¹⁷ Եբբ. յԱր

մեզ առ նովաւ . զի խստացոյց Տէր Աստուած ¹մեր զոգի նորա , եւ կարծրացոյց զսիրտ նորա , զի մասնեցի ի ձեռս 31 քո յաւուրս յայմիկ : Եւ սո՛ւ է ցիս Տէր , Անա սկեհայ եմ մասնել առաջի երեսաց քոց զՍեհոն ²արքայ Եսերոնի զԱմովրճացի՝ եւ զերկիրն նորա . սկսիք վիճակու ժառանգել զերկիրն նորա :

32 Եւ ել Սեհոն ³արքայ Եսերոնի՝ ընդդէմ մեր , ինքն եւ ժողովուրդ իւր պատեւ 33 րագումաւ ի Յասսա : Եւ մտանեաց զնա Տէր Աստուած մեր ի ձեռս մեր , եւ հարաք զնա եւ զորդիս նորա եւ զամենայն 34 ժողովուրդ նորա . Եւ յազթեցաք ամենայն քաղաքացն նորա ի ժամանակին յայնմիկ , եւ սատակեցաք զամենայն ³քաղաքս նորա մի ըստ միոյնէ , եւ զկանայս նոցա եւ զմանկունս իւրեանց . եւ՝

35 ոչ թողաք ի նոցանէ սարկուս . Բայց զի զխոչինս ամաք յուարի եւ զկապուս 36 քաղաքաց զոր սաաք : ՅԱրոյեբայ որ է առ եզերբ ձորոյն Աւնովնայ , եւ զբազաքն որ է ի ձորն , մինչեւ ցտահմանս Գաղապուս , սչ էր քաղաք որ սարկեցաւ ի մէնջ . այլ զամենայն մասնեաց Տէր 37 Աստուած մեր ի ձեռս մեր : Բայց յերկիր որդւոցն Ամոնայ չոր ոչ մերձեցաք , զամենայն արուարձանս ձորոյն Յարովկանս , եւ զամենայն քաղաքսն յեռնականս , որպէս՝ պատուիրեսց մեզ Տէր Աստուած մեր :

Գ . Գ

1 Եւ գարձաք ելաք ընդ ճանապարհն Բասանու , եւ ել Ուզ արքայ Բասանու ընդդէմ մեր , ինքն եւ ամենայն ժողովուրդ 2 նորա պատերազմուս յեղրային : Եւ սո՛ւ է ցիս Տէր , Մի երկնչիցիս ի նմանէ , զի ի ձեռս քո մասնեցի զնա եւ զամենայն ժողովուրդ նորա եւ զամենայն երկիր նորա . եւ արասցես նմա որպէս արարեր Սեհոնի արքայի Ամովրճացւոց որ 3 ընտկեալ էր յԵսերոն : Եւ մտանեաց ²զնա Տէր Աստուած մեր ի ձեռս մեր եւ զՈւզ արքայ Բասանու եւ զամենայն ժողովուրդն նորա . եւ հարաք զնա մինչ ոչ 4 թողուլ նմա զուսակ : Եւ յազթեցաք ամենայն քաղաքացն նորա ի ժամանակին

յայնմիկ . եւ ոչ էր քաղաք զոր ոչ աւաք ի նոցանէ . վաթսուն քաղաք զամենայն շուրջ զպաւառուն Արգովբայ , 5 թագաւորին Ուզայ ի Բասան : Ամենայն քաղաքք ամուրք բարձրապարիսպք զրամբք եւ զանափակօք . թող զքաղաքան արձակաքաղաքս ²Փերեգայւոց 6 րապուսս յոյժ : Եւ սատակեցաք զնոսա , որպէս արարաք զՍեհոն արքայ Եսերոնի . եւ սատակեցաք զամենայն քաղաքան ⁵մի ըստ միոյնէ եւ զկանայս եւ զմանկունս , եւ ոչ թողաք մաղապուրս՝ : Եւ զամենայն զանասունս եւ զկապուս քաղաքացն ամաք մեզ յաւար : Եւ առաք ի ժամանակին յայնմիկ զերկիրն ի ձեռաց երկուց թագաւորացն Ամովրճացւոց , որ էին յայնկոյս Յորպանանու , յԱւնովնայ մինչեւ ցՀերմոն : Եւ ⁶Փիւնիկեցիք անուանեցին զՀերմոնն Սանիովր , եւ Ամովրճացին անուանեցաք զնա Սաւնիր : Ամենայն քաղաքք ⁷Միտովբայ եւ ամենայն Գաղապայ եւ ամենայն Բասան , մինչեւ ցԵդքա , եւ ցԵղրային , քաղաքք թագաւորութեան էին Ուզայ ի Բասան : 8 Զի Ուզ միայն արքայ Բասանու մնաց ⁸յՌտտիայնոց անտի . եւ գահոյք նորա զահոյք երկաթիք , եւ անս է այն յամրոցի որդւոցն Ամոնայ . ինն կանգունս երկայնութիւն նորա եւ չորք կանգունք լայնութիւն նորա , ⁹սկալից կանգնով :

12 Եւ զերկիրն զայն ժառանգեցաք ի ժամանակին յայնմիկ յԱրոյեբայ որ է սու եւ զերբ ձորոյն Աւնովնայ , ¹⁰եւ զէս ձորոյն՝ Գաղապուս եւ զքաղաքս նորա ետու 13 Ռուբենի եւ Գաղայ . Եւ զաւելորդն Գաղապուս եւ զամենայն Բասան , զթագաւորութիւնն Ուզայ , ետու կիսոյ ցիւղին Մանասէի , զամենայն գաւառն Արգովբայ եւ զամենայն Բասանն , որ երկիր ¹¹Ռափայնոցն համարիցի : Եւ Յայիր , որդի Մանասէի , առ զամենայն գաւառն Արգովբայ մինչեւ ցտահմանս Գարգասեայ եւ Ուքասեայ . եւ անուանեաց ¹²զնա յիւր անուն զԲասանն՝ Աւալթիայիր՝ , մինչեւ ցայսօր ժամանակի : Եւ Մաբիրայ 15 ետու զԳաղապադ : Եւ Ռուբենի եւ Գաղայ ետու ի Գաղապադէ մինչեւ ի ձորն

¹ Եբր. քո ² Յեբր. Դլ-տ-տ ³ Եբր. քաղաքս , զարս եւ զկանայս եւ զմանկունս . ⁴ Եբր. ոչ մերձեցաք , յամենայն կողմն ձորոյն Յարովկայ , եւ ի քաղաքսն լուծականս եւ յամենայն յոր

⁵ Եբր. զարս եւ զկանայս եւ զմանկունս : ⁶ Եբր. Սիդոնացիք ⁷ Այ-բ-բ-բ , դաշտին բարձու ⁸ Այ-բ-բ-բ , ի հսկայից ⁹ Եբր. մարդոյ ¹⁰ Եբր. մինչեւ ի կէս լեւրենն ¹¹ Այ-բ-բ-բ , հսկայից ¹² Եբր. զնոսա յիւր անուն Բասան-Աւալթ-Յայիր

Առնովնայ, ընդ մէջ ձորոյն՝ սահման
 17 ւոցն Ամնայ, եւ Սարաբ, եւ Յորդա-
 նան սահման է նմա՞ր Քեներեթայ մին-
 չեւ զծովն Սարաբայ՝ ծովն Ազի յԱսե-
 գավթայ յարեւելից Փառայ՞:

18 Եւ պատուիրեցի ձեզ ի ժամանակին
 յայնմիկ եւ ասեմ, Տէր Աստուած Յմեր
 եւ ձեզ զերկիրս զայս ի վիճակ. վառե-
 ցարուք անցէք առաջի եզրարց ձերոց,
 որդւոցն Իսրայելի, ամենայն զորաւոր.

19 Ի՞նչոց կանայք ձեր եւ մանկուք ձեր եւ
 անասուն ձեր, զիւսեմ զի անասուն բա-
 զում է ձեր, բնակեացնն ի քաղաքս ձեր

20 զոր ետու ձեզ, Մինչեւ զեանդեացէ Տէր
 Սասուած մեր՞ զեզրարս ձեր, որպէս
 եւ զձեզդ, զի ժառանգեցնն եւ նորա
 զերկիրն զոր Տէր Աստուած Յմեր տացէ
 Նոցա յայնկոյս Յորդանանու: Եւ զարձ-
 յիք այսրէն յերաքանչիւր ժառանգու-
 թիւն իւր զոր ետու ձեզ:

21 Եւ Յեսուայ պատուիրեցի ի ժամանա-
 կին յայնմիկ եւ ասեմ, Աչք Յձեր իսկ
 տեսին զամենայն զոր արար Տէր Աս-
 տուած Յքո ընդ երկուս թագաւորան ընդ
 այնսոսիկ. նոյնպէս արացէ Տէր ընդ ա-
 մենայն թագաւորութիւնս յորոց վերայ

22 զիմնացիս զու. Մի՞ զանդիտեցէք՞. զի
 Տէր Աստուած Յմեր ինքնին պատրազ-

23 մեացի փոխանակ ձեր: Եւ աղաչեցի զՏէր
 Աստուած ի ժամանակին յայնմիկ եւ ա-

24 սեմ, Տէր, Տէր, զու սկսար ցուցանել
 ծառայի քում զաստիւտութիւնս քո եւ
 զզօրութիւնս քս, զձեռն չօր եւ զբա-
 զուկ բարձր. քանզի ո՞վ է Աստուած
 յերկիրն կամ յերկրի որ առնիցէ որպէս
 զու արարեար ըսա՞ զօրութեանս քում:

25 Արդ անդեալ տեսից զերկիրն բարի որ
 է յայնկոյս Յորդանանու, զիւսոնն բա-

26 րի եւ զերկրորդն Լիւրանան՞: Եւ ան-
 տես արար զիս Տէր վասն ձեր, եւ ոչ
 լուաւ ինձ. եւ ասէ ցիս Տէր, Շատ լիցի
 քեզ, մի՞ եւս յաւելուցուս խօսել զբանդ

27 զայդ. Ել ի կատար ճովածոյիդ, եւ հա-
 յեցեալս աչօք քովք ընդ ծովակողմն եւ
 ընդ հիւսիսի եւ ընդ հարաւ եւ ընդ ա-
 րեւելս, տես աչօք քովք. քանզի ոչ

1 Եբբ. զգաշան եւ զՅորդանան եւ զսահմանն
 2 Եբբ. գաշտին, ծովն Ազի, ի ներքոյ Ասեղովթ-
 Փառայց ընդ Արեւելս 3 Եբբ. ձեր 4 Եբբ.
 զ-իւսե 5 Եբբ. քո 6 Եբբ. յե-ի-ն յ-ե-լ-ւ, ի
 նոցանէ 7 Եբբ. արարեար ըստ գործոց եւ ըստ
 8 Եբբ. զԼիւրանան 9 Եբբ. Փառայի

28 անցանդեցիս ընդ այդ Յորդանան: Եւ
 պատուիրեա Յեսուայ եւ զօրացուցես
 զնա, եւ մխրթարեսցես զնա. զի նա
 անցցէ առաջի ժողովրդեանդ իմոյ այ-
 դորիկ, եւ նա ժառանգեցուցէ դոցա

29 զերկիրն զոր տեսեր: Եւ նստաք ի հո-
 վիտան 10 մերձ ի տունն Փողովրայ՞:

Գ Լ Դ

1 Եւ այժմ, Իսրայել, լուր իրաւանց եւ
 զատասանաց զոր եւ ուսուցանեմ 11 քեզ
 այսօր առնել. զի կեցիք, եւ մտանի-
 ցէք ժառանգիցէք զերկիրն զոր Տէր Աս-
 2 տուած 12 մեր տացէ ձեզ, Մի՞ յաւելու-
 ցուք ինչ ի բանն զոր եւ պատուիրեմ
 ձեզ, եւ մի՞ հատանիցէք ի նմանէ. պա-
 3 հեցիք զպատուիրանս Տեսուն Աստու-
 ծոյ 13 մերոյ զոր եւ պատուիրեմ ձեզ:

3 Աչք ձեր տեսին զոր ինչ արար Տէր ընդ
 Բեզվեպովթ. զի ամենայն մարդ որ չոգաւ
 զհետ Բեզվեպովթայ՝ աստակաց զնա Տէր

4 Աստուած 14 մեր ի ձէնջ՞: Բայց զուք որ
 յարեցայք ի Տէր Աստուած ձեր, կեն-
 5 զանի էք զուք ամենեքեան յաւուրս
 յայսմիկ: Տեսէք զի ուսուցի ձեզ զի-
 6 րաւունս եւ զգատասանս որպէս պա-
 տուիրեալ ինձ Տէր 15 առնել զայն յերկ-
 7 րին յոր զուք մասնիցէք ժառանգել զնա:

6 Եւ պահեսցիք եւ արասցիք, զի այն է
 իմաստութիւն ձեր եւ հանճար առաջի
 ամենայն ազգայն, որ լսիցին զամենայն
 իրաւունս զայստիկ եւ ասիցին, Ահա
 ժողովուրդ իմաստուն եւ հանճարեզ,

7 ազգս այս մեծ: Քանզի ո՞վ իցէ ազգ
 մեծ որոյ իցէ Աստուած մօտ 16 ի նոսա՞,
 որպէս Տէր Աստուած մեր յամենայնի

8 որովք կարգասցուք առ նա: Եւ ո՞ր ազգ
 մեծ որոյ իցին իրաւունք եւ զատասանք
 արդարք, ըստ ամենայնի օրինացս այսո-

9 ցիկ զոր եւ տամ այսօր առաջի ձեր: Հայ-
 10 կաց ի քեզ եւ զդոյ լեր անձին քում
 յոյժ. մի՞ մոռանայես զամենայն բանս
 զայստիկ զոր տեսին աչք քո, եւ մի՞
 մերժեցնին ի սրտէ քում մէ զամենայն
 աւուրս կենաց քոց. եւ իսկամուտ ա-
 րացես որդւոց քոց եւ որդւոց որդւոց

10 Եբբ. յանդիման ի թփողովրայ 11 Եբբ. ձեզ 12 Եբբ.
 հարցն ձերոց 13 Եբբ. ձերոյ 14 Եբբ. քո ի միջոյ քում
 մէ 15 Եբբ. յե-ի-ն յ-ե-լ-ւ, Աստուած իմ 16 Եբբ. ի նա

Եկեղեցացո առ իս զժողովուրդդ, եւ լուիցեն զպատումս իմ զոր ուսուցից երկնչել յինէն զամենայն աւուրս որչափ կենդանի իցեն գոքս ի վերայ երկրի,

11 եւ ուսուցին զորդիս իւրեանց: Եւ մատուցեալ կայիք զուք առ ստորոտով լուսինն: Եւ լիառնն բորոքէր նրով մինչեւ յերկինս, եւ խաւար եւ մէջ եւ մա-

12 րախուղ էր: Եւ խօսեցաւ Տէր ընդ ձեզ ի միջոյ հրոյն, զձայն պտպամայն լուարուք զուք: Եւ նմանութիւն ինչ ոչ տե-

13 սէք, բայց միայն զբարբառն: Եւ պտմեաց ձեզ զուխան իւր զոր պատուիրեաց ձեզ առնել, զառան պատմանս, եւ զրեաց զնոսա զվերայ երկուց քա-

14 րեզէն տախտակաց: Եւ պատուիրեաց ինձ ի ժամանակին յայնմիկ ուսուցանել իրաւունս ձեզ եւ դատաստանս, եւ առնել ձեզ զնոսա յերկրին յոր զուր մտանիցէք ժառանգել զնա:

15 Եւ զգուշացարուք յոյժ անձանց ձերոց. զի նմանութիւն ինչ ոչ տեսէք յաւուրն յայնմիկ յորում խօսեցաւ ընդ ձեզ Տէր:

16 Ի Քորեբ լերինն ի միջոյ հրոյն. Մի նորինիցիք եւ առնիցէք ձեզ զրօշկալ, նմանութիւն ամենայն պատկերի, նմա-

17 նութիւն արուական կամ իգական, նմանութիւն ամենայն անասնոց որ իցեն երկրի, նմանութիւն ամենայն հաւու թռչող որ թռչիցին ի ներքոյ երկնից,

18 նմանութիւն ամենայն սողնոց որ սողիցին ի վերայ երկրի, նմանութիւն ամենայն ձկանց որ իցեն ի ջուրս ի ներքոյ երկրի:

19 Եւ մի նայեցեալ ընդ երկինս տեսանիցես զարեգակն եւ զլուսին եւ զաստեղս եւ զամենայն զարդ երկնից, եւ մոլորեալ երկիր պտպանիցես նոցա եւ պաշտիցես զնոսա, զոր բաժանեաց Տէր Աստուած ամենայն ազգաց որ ի ներքոյ

20 երկնից: Եւ զձեզ առ ²ի ձեռն Աստուած, եւ եհան զձեզ յերկաթեզէն հնոցէն յեզրպտոսէ, լինել նմա ժողովուրդ ³ի իճակաւ, որպէս եւ յաւուր յայսմիկ:

21 Եւ Տէր բարկացաւ ինձ վասն ⁴բանիցն ասացելոց ի ձէնջ, եւ երզուաւ զի մի անցից ընդ այլ Յորզանսն, եւ զի մի մտանիցեմ ⁵յերկրին զոր Տէր Աստուած

22 քո տացէ քեզ ի ժառանգութիւն: Եւ արդ ես տւասիկ մեռանիմ յերկրիս յայսմիկ, եւ ոչ անցանեմ ընդ Յորզանսն:

բայց զուք անցանէք եւ ժառանգէք զեր-

23 կիրն բարի: Զգոյշ լիբուք զուցէ մաւանայցէք զուխան Տեսան Աստուծոյ ⁶մերոյ զոր ուխտեաց ընդ ձեզ, եւ առնիցէք ձեզ զրօշկալ, նմանութիւն յամենայն յորոց պատուիրեաց քեզ Տէր

24 Աստուած քո: Զի Տէր Աստուած քո հուր ծախիչ է, Աստուած նախանձոտ:

25 Եւ եթէ ծնանիցիս որդիս եւ ՚զորդիս որդուց քոց, եւ յամիցէք յերկրին, եւ սնորինիցիք եւ առնիցէք զրօշկալ նմանութիւն ամենայնի, եւ առնիցէք չար առաջի Տեսան Աստուծոյ ձերոյ բարկա-

26 ցուցանել զնա, Ուրիմ ձեզ վկայս այսօր զերկինս եւ զերկիր, զի կորստեամբ կորնչիցիք յերկրէն յոր զուք անցանէք ընդ Յորզանսն ժառանգել զնա. եւ ոչ բազմացուցանիցէք զժամանակս աւուրց ի վերայ նորա, այլ սատակելով սատա-

27 կեսչիք: Եւ ցրուեսցէ Տէր զձեզ ընդ ամենայն ազգս, եւ մնայցէք սակաք թուով ի մէջ ազգացն յոր սարցի զձեզ

28 Տէր անոր: Եւ պաշտիցէք անդ զաստուածս օտարս, զձեռագործս մարդկան, զփայտեղէնս եւ զքարեղէնս, որք ոչ տեսանիցեն եւ ոչ լսիցեն եւ ոչ ուտիցեն

29 եւ ոչ հոտտիցեն: Եւ ինզրիցէք անդ զՏէր Աստուած ձեր, եւ գտանիցէք յորժամ ինզրիցէք զնա յամենայն սրտ՝

30 ձերմէ եւ յամենայն անձնէ ձերմէ, ի նեւ գութեան ձերում, ⁸եւ գտանիցեն զքեզ ամենայն բանքս այսօրիկ ի վասնձանի տուրց, ⁹եւ զարձգիս զու առ Տէր Աս-

31 տուած քո, եւ լուիցես ձայնի նորա, Զի Աստուած ողորմած է¹⁰, ոչ թողցէ զքեզ եւ ոչ սատակեսցէ զքեզ. եւ ոչ մոռացի զուխտ նորոյն քոց զոր երզուաւ նոցա:

32 Հարցէք զաւուրսն զառաջինս զեղեակոյ յասաջազոյն քան զձեզ, յորէ յորմէ հաստատեաց Աստուած մարդ ի վերայ երկրի, ի ծաղագ երկնից մինչեւ ի ծաղս երկնից, եթէ եզեան իցէ ըստ բանիս մեծի այսորիկ, եթէ ազգեալ իցէ լուր

33 այսպիսի. Եթէ լուեալ իցէ ազգի զձայն Աստուծոյ ¹¹կենդանուոյ բարբառելոյ ի միջոյ հրոյ, որպէս լուար զու եւ կիցեր:

34 Եթէ յօժարեալ իցէ Աստուծոյ մասնել անուղ լուր ազգ ի միջոյ ազգի, փորձութեամբ եւ նշանօք եւ արուեստութե-

¹ Եբբ. ինձ Տէր ² Եբբ. Տէր ³ Այբբ. սեպհական ⁴ Եբբ. բանից ձերոց ⁵ Եբբ. յերկրն բարի

⁶ Եբբ. ձերոյ ⁷ Եբբ. որդիս որդուց ⁸ Այբբ. յորժամ ժամ ⁹ Այբբ. եթէ ¹⁰ Եբբ. իցէ յորժամ ¹¹ Եբբ. Աստուած քո ¹² Եբբ. պիտի

35 եւ պատերազմաւ, հզօր ձեռամբ եւ բարձր բողկաւ եւ մեծամեծ տեսեամբ, ք ըստ ամենայնի զոր արար Տէր Աստուած մեր յեզրպատս յանդիման ըր իսկ ան-
 36 սանելով: Զի զխտոպես թէ՛ Տէր նա է Աստուած, եւ չիք այլ ոք բաց ի նմանէ: 36 Յերկնից յսելի եղև բարբառ նորա խրատակ զքեզ, եւ յերկրի եցոյց քեզ զհօւր իւր զմեծ, եւ զպատգամս նորա լուար
 37 ի միջոյ հրոյ: Վասն սրբելոյ նորա զհարմն ըր, եւ ընտրեաց զլաւակ նոցա յես նոցա, ²զձեզ քան զամենայն ազգս: Եւ եհան զքեզ ինքնին զօրութեամբ իւրով
 38 մեծաւ յեզրպատս, Սատակել ²քեզ զազգս մեծամեծս եւ հօրաբազոյնս քան զքեզ յերեսաց քոց, տանել զքեզ եւ տալ քեզ զերկիր նոցա ի ժառանգութիւն,
 39 որպէս ունիս իսկ այսօր: Եւ ծանկես աչսօր եւ զարձցիս մասք, զի Տէր ²Աստուած ըր՝, նա է Աստուած յերկինս ի վեր եւ յերկրի ի խոնոր՝ եւ չկր այլ ոք բաց ի նմանէ: Եւ պահեցես զիրաւունս նորա եւ զպատուիրանս նորա զոր ես պատուիրեմ քեզ այսօր, զի բարի լինիցի քեզ եւ որդւոց քոց յես ըր, եւ երկայնակեաց լինիցիս յերկրին զոր Տէր ³Աստուած տացէ քեզ զամենայն աւուրս:
 41 Յայնժամ զատոց Մովսէս երիս քազաք յայնկայ Յորդաննու յարեւելից
 42 կողմանէ, Փախչել անգր սպանողին որ ոք սպանանիցէ զընկեր իւր եւ ոչ զխտութեամբ, եւ ինքն ոչ ատեսար զնա յերէկն եւ յետնոյն, անկցի ի մի ի քաղաքացն
 ՚գրեսցես նմա գերկրորդումն՝ օրինացս
 այսոյիկ ի մատենի առ ի քահանայիցն
 19 Ղեւտացոց : Եւ լիցի առ նմա , եւ ըն-
 թերցցի զսա զամենայն աւուրս կենաց
 իւրոց . զի ուսցի երկնչել ի Տեառնէ Աս-
 տուծոյ ՚քումմէ , պահել զամենայն պա-
 20 տուիրանս ՚գայտոսիկ , եւ աննել զիրա-
 սիրտ նորա ի վերայ եզրարց իւրոց , զի
 մի անյանիցէ զպատուիրանօքս յաջ կամ
 յահեակ . զի երկայնակեաց լիցի յիշխա-
 նութեանն իւրում ինքն եւ սրգիք իւր
 ի մէջ ՚որդւոցն Իւրայելի :

ԳԼ . ԺԸ

4 Եւ մի լիցի քահանայիցն Ղեւտացոց ,
 որբւոցն Ղեւեայ , բաժին եւ ժառան-
 ցութիւն ընդ Իւրայելի . ՚Երախայրիքն
 Տեառն վիճակ նոցա , զայն՝ կերիցնն .
 2 Եւ վիճակ մի լիցի նոցա ի մէջ եզրարց
 իւրեանց . զի Տէր է վիճակ նոցա , որ-
 պէս ասաց նոցա :
 3 Եւ այս են իրաւունք քահանային ի
 ժողովրդեանէ անտի , որք զենուցուն զեն-
 ւլս . եթէ արջառ իցէ եւ եթէ ոչխար ,
 տայէ քահանային զերկն եւ զմնօտուն եւ
 4 զխախտացոցն : Եւ ՚զպատօք այրենոյ քո
 եւ զգինւոյ քո եւ զիւղոյ քո , եւ ՚զպատու
 5 կարոց խաչանց քոց տացես նոցա : Զի
 զնա ընտրեաց ՚Տէր յամենայն ցեղիցն
 քոց ՚կալ առաջի Տեառն Աստուծոյ քո ,
 պաշտել եւ օրհնել յանուն նորա՝ , նա
 եւ որդիք իւր զամենայն աւուրս :
 6 Ապա թէ եկեալն Ղեւտացին ի ՚մի ի
 քաղաքացի քոց յամենայն որբւոցն Իս-
 րայելի , ուր իցէ ինքն բնակեալ , եւ ե-
 կեսցէ ըստ ցանկութեանն անձին իւրոյ
 7 ի տեղին զոր ընտրեսցէ Տէր , Պաշտել
 զանուն Տեառն Աստուծոյ իւրոյ , իբրեւ
 զամենայն եզրարան իւր Ղեւտացիս որ
 կացցեն անդ առաջի Տեառն ՚Աստու-
 8 ծոյ : Կերիցէ ՚զմամնն հասեալ , բայց

իւրաքանչիւր յազգական վաճառէն՝ :
 9 Եւ եթէ մասնիցես յերկիրն զոր Տէր
 Աստուած տացէ քեզ , մի ուսանիցիս
 աննել ըստ գարչելեաց ազգացն այնո-
 10 ցիկ : Մի՛ գտանիցի ի քեզ որ ամիցէ
 զուսար իւր կամ զզուսար իւր զբոցով ,
 եւ զիւթիցէ զիւթութիւն , եւ հմայիցէ ,
 11 եւ հաւահարց լինիցի , եւ կօխարցիցէ
 կախարդանօք , եւ վուկ եւ նշանագէտ
 12 լինիցի առ ի զմոռեալս հարցանելոյ Քան-
 զի պիզի է Տեառն ամենայն որ անն
 զայն . զի վասն այսպիսի դարչտանայցէ սա-
 13 աակեսցէ զնոսա Տէր ի քէն , Կատարեալ
 լինիցիս առաջի Տեառն Աստուծոյ քո .
 14 Զի ազգքն այնոքիկ զորս զու ժառան-
 գելոց ես , նոքա հմայից եւ զիւթու-
 թեանց անասն . բայց քեզ ոչ այնպէս
 ետ հրաման Տէր Աստուած քո :
 15 Մարգարէ յեզրարց քոց իբրեւ զիս յա-
 րուսցէ քեզ Տէր Աստուած քո , նմա
 16 լուիջիք . Ըստ ամենայնի զոր խնդրեցի
 ի Տեառնէ Աստուծոյ քումմէ ի Քորեք
 յաւուրն եկեզեցուոյ , ասէիք , Ոչ եւս
 յաւելուցումք լսել զձայն Տեառն Աս-
 տուծոյ մերոյ , եւ զհուրդ զայդ զմեծ
 ոչ եւս տեսցուք , զի մի մեռանիցիմք :
 17 Եւ ասէ զիս Տէր , Ուզիզ է ամենայն
 18 ինչ զոր խօսեցան . Մարգարէ յարուցից
 նոցա յեզրարց իւրեանց իբրեւ զքեզ ,
 եւ տայ զպատգամս իմ ի բերան նորա ,
 եւ խօսեսցի ընդ նոսա որպէս եւ պա-
 19 տուիրեցից նմա : Եւ մարդ որ ոչ լուի-
 ցէ զոր խօսիցի մարգարէն յանուն իմ՝
 եւ խնդրեցիցի վրէժ ի նմանէ :
 20 Բայց մարգարէն , եթէ ամպարչաեսցի
 խօսել յանուն իմ բանն ինչ զոր ես ոչ
 հրամայելի խօսել , եւ կամ թէ խօսիցի
 յանուն աստուածոյ օտարաց , մնոցի
 21 մարգարէն այն : Ապա թէ ասիցէք ի
 սրտի ձերում , Զիմրոց զխտապարէք զբանն
 22 զոր ոչ խօսեցաւ Տէր . Զոր ինչ խօսիցի
 մարգարէն յանուն Տեառն եւ ոչ լինիցի
 բանն եւ ոչ պիպիցի , այն բան է զոր ոչ
 խօսեցաւ Տէր . ամպարչտութեամբ խօ-
 սեցաւ մարգարէն , մի՛¹¹ թողուցուք նմա՝ :

ԳԼ . ԺԹ

1 Եւ եթէ սատակեսցէ Տէր Աստուած քո
 զազգան զորոց Տէր Աստուած տացէ քեզ
 զերկիրն նոցա , եւ ժառանգեսցես զնա

1 Նբբ. գրեսցէ իւր զպատճէն 2 Նբբ. իւրմէ 3 Նբբ. օրինացս այսոցիկ 4 Նբբ. զպատճէն 5 Նբբ. զպատարագս Տեառն ե. զժառանգութիւն նորա 6 Նբբ. զԵրախայրիս 7 Նբբ. Տէր Աստուած քո 8 Նբբ. կալ պաշտել յանուն Տեառն 9 Նբբ. միոջէ 10 Նբբ. զբաժին իբրեւ բաժին , թող զսա

ի վաճառացն նորա ի Տայրեհիմն 11 Նբբ. երկիցես ի նմանէ

և քնակեցես ի քաղաքս և ի տունս 2
 2 նոյա , Երևա քաղաքս գտառուցես քեզ ի միջոյ երկրին զոր Տէր Աստուած քո
 3 տացէ քեզ . Եկատեցես քեզ զճանապարհն , և ընդ երևս բաժանեցես քեզ զսահմանս երկրին քո , զոր բաժանեցէ քեզ Տէր Աստուած քո . և եղիցի անդ ապատան ամենայն սպանողի :

4 Այս սահման եղիցի ամենայն սպանողի որ փախչիցի անդր և ապրեացի . Որ ոք հարկանիցէ զընկեր իւր ակամայ , և նա ոչ ասեայր զնա յերէկն և յեռանդ . և որ ոք մասնիցէ ընդ ընկերի իւրում ի մայրի հարկանել փայտ , և ամբառնայցէ զձեռն իւր փայտասաւն հարկանել փայտ , և անկանիցի երկաթն ի մեղելիս անոր , և զիւրիցի ընկերին և մեռանիցի , փախիցէ նա և անկի ի մի ի քաղաքացիս այնոցի և կեցցէ , Զի մի՛ սպրեացի մերձաւոր արեանն զկնի սպանողին մինչև ապրիցի սիրտ նորա , և հասանիցէ նմա , եթէ հետագոյն իցէ ճանապարհն , և հարկանիցէ զանձն նորա , և նմա չէ գատատան մահու , զի ոչ ասեայր զնա յերէկն և յեռանդ : Վասն այնորիկ ևս պատուիրեմ քեզ զբանս զայս և ասեմ , Երևա քաղաքս գտառուցես քեզ :

8 Եւ եթէ ընդարձակեցէ քեզ Տէր Աստուած քո գահմանս քո որպէս և երգուաւ Տէր հարցն քոյ , և տացէ քեզ Տէր զամենայն երկրին զոր խոստայաւ 9 տալ հարցն քոյ , և եթէ լուրջես առնել զամենայն պատուիրանս զայստիկ զոր ևս պատուիրեմ քեզ այսօր , սիրել զՏէր Աստուած քո , և գնայ յամենայն ճանապարհս նորա զամենայն աւուրս . և յաւելցես քեզ այլ ևս երևս քաղաքս 10 յայնս յերևան . և մի՛ հեզցի արևն անպարտ յերկրին քում , զոր Տէր Աստուած քո տացէ քեզ ի ժառանգութիւնս . և մի՛ ոք լիցի ի միջի քում պարտական արեան :

11 Եւ եթէ լինիցի այր որ ստիցէ զընկեր իւր , և գարանս զորմիցէ նմա , և յարիցէ ի վերայ նորա և հարկանիցէ զանձն նորա և մեռցի , և փախչիցի ի մի ի քաղաքացիս այնոցիկ , Առաքեացին ծարակոյտ քաղաքի նորա և առցեն զնա անտի , և մասնեցեն զնա ի ձեռս մերձաւորի արևն և մեռցի : Եւ մի՛ ինայեցէ ակն քո ի նա . և սրբեցես զարևն անպարտ ի միջոյ Խորայիկի , և բարի լիցի քեզ :

14 Մի՛ վտխեցես գահմանս ընկերի քո զոր հաստակցին հարք քո ի ժառանգութեան քում , զոր ժառանգեցես յերկրին զոր Տէր Աստուած քո տացէ քեզ ի ժառանգութիւնս :

15 Ոչ հաստակեցի մի վկայ վկայել զմարդոյ ըստ ամենայն սպիրատութեան և ըստ ամենայն յանցանայ , և ըստ ամենայն մեղաց զոր մեղանչէ . ի բերանոյ երկուց ² և երկուց վկայից հաստակեցի ամենայն բանս :

16 Եւ եթէ կացցէ յառաջ սուտ վկայ զմարդոյ , և չարախօսեցէ զնմանէ 17 ամպարչաութիւն ինչ , կացցեն երկուքին արքն որոյ հակառակութիւնն իցէ առաջի Տեսն և առաջի քահանայիցին և առաջի գատաւորայն որ իցեն յաւուրն 18 յայնտիկ . և քննեցին գատաւորքն ճշմարտութեամբ . և ահա վկայ անիրաւ վկայեաց զանիրաւութիւնս , և եկաց հակառակ եղբոր իւրում . Արասլիք նմա որպէս խորհեցաւ չար առնել ընկերի իւրում , և բարձէք զչարն ի միջոյ 20 ձերմէ . Եւ այլոցն լուեալ գահի հարկանիցին , և մի՛ եւս յաւելուցուն առնել ըստ 21 բանին այնմիկ չարի ի միջի ձերում : Մի՛ ինայեցէ ակն քո ի նա . անձն ընդ անձին , ակն ընդ ական , ատամն ընդ ատաման , ձեռն ընդ ձեռին , ոտն ընդ ոտին :

ԳԼ Ի

1 Եւ եթէ եյանիցես ի սպտերազմ ի վերայ թշնամեաց քոյ , և տեսանիցես երբիարս և հեծեալս և ազգ բազում քան զքեզ , մի՛ երկնչիցիս ի նոցանէ , զի Տէր Աստուած քո ընդ քեզ է որ եհան զքեզ 2 յերկրէն եգիպտացուց : Եւ եղիցի յորժամ մերձենայցես ի սպտերազմ , մատուցեալ քահանայն խօսեցի ընդ ազգին , Եւ ասացէ զնոսա , Լուր , Խորայիլ . զուք զիմնայ երթացք այսօր ի սպտերազմ աւազիկ ի վերայ թշնամեաց ձերոյ , մի՛ լքանիցին սիրաք ձեր , և մի՛ երկնչիցիք և մի՛ զարհուրիցիք , և մի՛ խուսիցէք յիրեսայ նոցա . Զի Տէր Աստուած ³ մեր երթայ առաջի ձեր ընդ ձեզ՝ տալ պատերազմ վասն ձեր ընդ թշնամիս ձեր , սպրեցուցանել զձեզ :

5 Եւ խօսեցին զպիրքն ընդ ժողովրդեանն և ասացին , Այր ոք որոյ շինեալ իցէ տունս նորաչէն , և ոչ իցէ

¹Յբբ. Գ-Կ-Կ

²Յբբ. կամ

³Յբբ. ձեր

արարեալ նմա նաւակառօն , գնասցէ եւ գործցի ի տուն իւր . գուցէ մեռանիցի ի պատերազմի , եւ այլ այր անիցէ նմա 6 նաւակառօն : Եւ այր ոք որոյ անկեալ իցէ այցի , եւ չիցէ ուրախ լեալ ի նմանէ , գնասցէ եւ գործցի անպղէն ի տուն իւր . գուցէ մեռանիցի ի պատերազմի , 7 եւ այլ այր ուրախ լինիցի ի նմանէ : Եւ այր ոք որոյ խօսեալ իցէ կին , եւ չիցէ առեալ գնա , գնասցէ եւ գործցի ի տուն իւր . գուցէ մեռանիցի ի պատերազմի , 8 եւ այլ այր առնուցու գնա : Եւ յաւելցեն զպիւրքն խօսել ընդ ժողովրդեանն եւ ասացեն , Այր ոք որ երկնչիցի եւ վատասիրտ սրտիւ իցէ , գնասցէ եւ գործցի ի տուն իւր . զի մի՛ զանդիտեցուցէ 9 զսիրտ եղբօր իւրոյ իրբեւ զիւրն : Եւ եւ զիցի յորժամ զազարեացեն զպիւրքն ի խօսելոյ ընդ ժողովրդեանն , կայուցեն ի խամս զօրուն ասաջնորդս ժողովրդեանն : 10 Եւ եթէ մործենայցես ի քաղաք սալ պատերազմ ընդ նմա , կոչեացես գնաս 11 ի խաղաղութիւն : Եւ եղիցի եթէ տայցեն խաղաղութեան պատասխանի եւ բացցեն քեզ , եղիցի ամենայն ժողովուրդն որ գտանիցին ի նմա հարկատուք 12 եւ հնազանդեալք քեզ : Աստ թէ ոչ 13 հնազանդեալքն քեզ , եւ արասցեն ընդ քեզ պատերազմ , պաշարեալսն գնա . 14 եւ մատնեացէ գնա Տէր Աստուած քո ի ձեռս քո , եւ հարցես զամենայն արու 15 նորա կոտորմամբ սրոյ , Բաց ի կանանց եւ 2 ի կա՛ռէ եւ յամենայն անասնոյ . եւ զամենայն ինչ զինչ եւ գտանիցի ի քաղաքին , եւ զամենայն աղխ տացես քեզ յաւարի . եւ կերիցես զամենայն զաւար թշնամեալ քոց զոր Տէր Աստուած քո տացէ քեզ : Նոյնպէս տրասցես ընդ ամենայն քաղաքս ընդ յոյժ հեռուորս , որք ոչ ի քաղաքաց ազգացն 16 այնոցիկ իցեն : Բայց ի քաղաքաց ազգացն այնոցիկ զոր Տէր Աստուած քո տացէ քեզ զերկիր նոցա ի ժամանութիւն , մի՛ պարկեցումնիցէք ի նոցանէ զամենայն 3 չնչաւոր . Այլ նողովելով նողովեալք գնոսա , զԲեստացին եւ զԱմուրհացին եւ զԲանանացին եւ զՓերկեացին եւ զՍեււացին եւ զՅերուսացին 4 եւ զԳերղեսացին , զոր օրինակ պատուիրեաց Տէր Աստուած քո . 2 ի մի՛ ուսուցանիցեն ձեզ

առնել զամենայն գարշութիւնս իւրեանց , զոր արարին զիցն իւրեանց , եւ մեղանչիցէք առաջի Տեսառն Աստուծոյ ձերոյ : 19 Եւ եթէ նստեալ պաշարեացես զքաղաք աւուրս բազումս մարտնչել ընդ նմա յամուլ գնա , մի՛ հարկանիցես զժառատունկ նորա արկանելով ի նմա երկաթ . այլ կերիցես ի նմանէ , եւ գնա մի՛ հարկանիցես . միթէ մարդ իցէ ձեռատունկն որ յանդի անդ իցէ՛ մտանել յեւրեաց քոց ի պատնէշ : Այլ զվայտ զոր գիտիցես թէ չիցէ պողաբեր , գայն հարցես եւ կոտորեսցես , եւ շինեսցես պատնէշ չուրջ զքաղաքաւս որ տացէ ընդ քեզ պատերազմ , մինչեւ մատնեսցի :

ԳԼ ԻԱ

4 Եւ եթէ գտանիցի 5 վիրաւոր յերկրի քում զոր Տէր Աստուած քո տացէ քեզ ժառանգել , եւ անկեալ գնիցի ի պաշտի , եւ ոչ գիտիցես գայն որ խոցեացն գնա . 2 Նլցեն ձերակոյտն քո եւ գատաւորքն քո , եւ չափեացեն չուրջ զվիրաւորաւսն 3 զվայրս քաղաքացն . Եւ եղիցի քաղաք որ հուպ իցէ ի վիրաւորն , ապցէ ձերակոյտ քաղաքին այնորիկ երկնջ մի յարջատոց որ ընդ գործ չիցէ մտեալ եւ լուծ 4 չիցէ ձգեալ . Եւ իջուցին ձերակոյտ ժողովրդեանն զերկնջն ի ձոր մի տպաւամժ ուր չիցէ գործեալ եւ ոչ սերմանեալ , եւ 5 կարթակոտոր արտացեն՝ զերկնջն ի ձոր անդր : Եւ մատիցեն քահանայքն 7 Լեււայք , զի գնոսա բնորեաց Տէր Աստուած քո կալ առաջի իւր եւ օրհնել յանուն նորա . եւ ըստ բերանոյ նոցա վճարեսցի ամենայն հակառակութիւն եւ ամենայն ձերակոյտ քաղաքին այնորիկ որ հուպ իցէ ի վիրաւորն , լուսացին զձեռս իւրեանց ի վերայ զլիտոյ երնջուն 7 6 կարթահարելոյ ի ձորն . Եւ պատասխանի տուեալ ասացեն , 2 Եւք մեր ոչ հեղին զարեւնս զայս , եւ աչք մեր ոչ 8 տեսին . Քաւեա զժողովուրդ քո զԻսրայէլ զոր փրկեցեր , Տէր , զի մի՛ եկեսցէ արեւնս անպարտ ի վերայ ժողովրդեան քո Իսրայելի . եւ քաւեսցի ի նոցանէ 9 արիւնն . Եւ յարձցես զու զարեւնս անպարտ 7 ի ձէնջ . եւ եթէ արասցես զքա-

1 Եբբ. արասցեն խաղաղութիւն ընդ ի մանկուոց 3 Եբբ. 7-10-է 2 Եբբ.

4 Տեւ Թուոց ԼԱ. 19. 5 Եբբ. փողոտեացեն 6 Եբբ. փողոտելոյ 7 Եբբ. ի միջոյ քումմէ , զի արասցես զուղեղն առաջի Տեսառն

րին եւ զհաճոյ առաջի Տեառն Աստու-
 ծոյ քո՞ւ։

10 Եւ եթէ եղանկեա ի սլատերազմ ի վե-
 րայ թնամեաց քոց, եւ մատնեաց զնու-
 սա Տէր Աստուած քո ի ձեռս քո, եւ

11 ¹աւարեացեա զաւար՞ նոցա, եւ տեսա-
 նիցես ²յաւարին կին զեղեցիկ տեսեամբ,
 եւ ցանկացես նմա, եւ առցես զնա քեզ

12 կնտ թեան, եւ սարցիս զնա ի տուն քո,
 եւ ³գերծցես զզուռն նորա, եւ սրբես-

13 ցես զեղնուոնս նորա, եւ հանցես զհան-
 գերձ գերութեան նորա՞, եւ նսացի ի
 տան քում, եւ լացցէ զհայր եւ զմայր
 իւր զաւուրս ամսոյ միոյ. եւ ապա
 մացես առ նա եւ ընտանեացս ընդ նմա,

14 եւ եղիցի քո կին։ Եւ եղիցի եթէ ոչ
 հաճեսցես ընդ նա, արձակեսցես զնա
 ազատ. եւ վաճառելով մի՞ վաճառես-
 ցես զնա արձաթոյ, եւ մի՞ անարգես-
 ցես զնա, քանզի լկիցեցր զնա։

15 Եւ եթէ լինիցին ան միում երկու կա-
 նայք, եւ լինիցի ի նոցանէ մին սիրելի
 եւ մեւան ասելի, եւ ծնանիցին նմա
 որդիս, սիրելին եւ ասելին, եւ լինիցի

16 որդի անգրանիկ ասելուոյն, եւ եղիցի
 յաւուր յորում ժառանգեցուցանիցէ որդ-
 ւոց իւրոց զինչս իւր, մի՞ իշխեսցէ անդ-
 րանկացուցանել զորդի սիրելուոյն, ան-
 տես արարեալ զորդի ասելուոյն զանդ-

17 րանիկ. Այլ զանգրանիկ ասելուոյն ծա-
 նիցէ՞ տալ նմա կրկնս յամենայնէ որ ինչ
 գատանիցի նորա. զինչա է սկիզբն ⁴որդոց
 նորա, եւ նմա անկ է անգրանիկութիւնն՞։

18 Եւ եթէ իցէ ուրուք որդի խնո եւ
 անզգամ, եւ ոչ լսիցէ ձայնի հօր եւ մօր
 իւրոյ, եւ իրատիցեն զնա եւ ոչ անսայ-

19 ցէ նոցա. կալցին զնա հայր եւ մայր
 նորա, եւ սարցին զնա առ ծերակոյտ
 քաղաքին իւրեանց եւ ի գուռն ակզուոյն

20 իւրեանց. Եւ անսայեն ⁵ցարս քաղաքին
 իւրեանց, Որդիս մեր այս խնո է եւ
 անզգամ, եւ ոչ լսէ ձայնի մերում,

21 հանգանակող է եւ արբչիս։ Եւ քարկո-
 ծեացեն զնա արք քաղաքին նորա քա-
 րամբք եւ մեռցի. եւ բարձջիք զչարն ի
 միջոյ ձերմէ. եւ լուեալ ⁶այլոցն՞ զանի
 հարկանիցին։

22 Եւ եթէ հասանիցեն ումբք մեզք մա-
 հապարտութեան եւ ⁷մեռանիցի, կա-

23 խտջիք զնա զխալսէ. Եւ մի՞ ազանիցի
 մարմին նորա ի փայտին, այլ թաղելով
 թաղեսջիք զնա ի նովն աւուր. զի անի-
 ծեալ յԱստուծոյ է ամենայն որ կախիցի
 զխալսէ. եւ մի՞ սլո՞ծիցէք զերկիրն զոր
 Տէր Աստուած քո սացէ քեզ ի ժա-
 անգութիւն։

ԳԼ ԽԲ

1 Գուցէ տեսեալ զարջաւ եւ զոչխար
 եզրօր քո մողորեալս ի ճանապարհի, եւ
 անտես անիցես զնոսա. այլ զարձու-
 ցանելով զարձուցես զնոսա եւ անցես

2 առ եղբայրն քո։ Ապա թէ չիցէ մօս
 եղբայրն քո առ քեզ, եւ ոչ ճանաչիցես
 զնա, ժողովեսցես զնոսա ի տուն քո, եւ
 եղիցին առ քեզ, մինչեւ խնդրեսցէ զնոսա

3 եղբայր քո, եւ սացես ցնա։ Նոյնպէս
 արասցես զէջ նորա, նոյնպէս արասցես
 զճանպերձ նորա, նոյնպէս արասցես եւ
 զամենայն կորուսա եզրօր քո, որ ինչ
 կորնչիցի ի նմանէ եւ զտանիցես. մի՞
 իշխեսցես անտես աննկ զայն։

4 Գուցէ տեսանիցես զէջ եզրօր քո,
 կամ զեզն նորա անկեալ ի ճանապարհի,
 եւ կանց անիցես զնոքօք, այլ յարու-
 ցանելով յարուցես ընդ նմա։

5 Մի՞ եղիցի հանգերձ առնացի զկա-
 նամբք, եւ մի՞ զգեցցի այր զկեսա կա-
 նացի. զի սլո՞ղմ է Տեառն Աստուծոյ
 քում ամենայն որ առնէ զայն։

6 Եւ եթէ զիսկեսցիս բունոյ հաւուց ա-
 ռաջի քո ի ճանապարհի, եթէ ի ծառ եւ
 եթէ ի գետնի, ձագուց կամ ձուոց, եւ
 մայրն ջեռեալ նստիցի ի վերայ ձագուցն
 կամ ձուոց, մի՞ առնուցուս զմայրն

7 հանպերձ որբուղքն. Արձակելով արձա-
 կեսցես զմայրն, եւ զորդին առցես
 քեզ. զի բարի լիցի քեզ, եւ բազմօր-
 եալ լինիցիս ի վերայ երկրի՞։

8 Եւ եթէ շինեսցես տուն նորաչէն,
 արասցես սլտակ շուրջ գտանութն, եւ
 մի՞ սպանումն գործեսցես ի տան քում,
⁹զի մի՞ անկանիցի որ անկանիցոցն իցէ՞
 ի նմանէ։

9 Մի՞ վարեսցես զայդի քո այլ եւ այլ,
 զի մի՞ ¹⁰սրբեսցին արմտիրն եւ սերմն
 զոր սերմանիցես ընդ բերլոյ այգուոյն քո։

¹ Եբբ. գերեացես զգերութիւն ² Եբբ. ի գերու-
 թեանն ³ Եբբ. գերծցէ զզուռն իւր, եւ սրբեսցէ
 զեղնուոնս իւր, (13) Եւ հանցէ զհաւորերձ
 գերութեան իւրոյ ⁴ Եբբ. զորում ճեռն նորա,
 նմա անկ են իրաւունք անգրանիկութեանն
⁵ Եբբ. ցծերս ⁶ Եբբ. ամենայն իսրայելի

⁷ Եբբ. եղեցի պարտաւոր մահու ⁸ Եբբ. գ-լ-տ-ի
⁹ Եբբ. յանկանել ուրուք ¹⁰ Կաթ, ապականեսցին

10 Մի՛ վարեացես զէջ եւ զեզն ի միասին :

11 Մի՛ զգննուցուս այլայլախառն՝ զտար եւ զկտաւն ի միասին :

12 Ծոպս մանուածոյս արասցես ի վերայ չորեցունց տանոյ նանդերձից քոց , զոր եւ զգննուցուս :

13 Եւ եթէ անուցու ոք կին եւ ամուս-

14 նասցի ընդ նմա , եւ ասեսցէ զնա , եւ զիցէ ի վերայ պատճառս բամբասական բանից , եւ անուն չար նանիցէ զնմանէ եւ ասիցէ , Չկինս զայս աօի , եւ մերձեցեալ ի սա ոչ գաի զկուսութիւն սորա .

15 Եւ առեալ նայր եւ մայր աղջկանն , նանցեն զկուսութիւնս աղջկանն առ ծն-

16 րակոյտն ի դուռն . եւ ասասցէ նայր աղջկանն ցծերակոյտն , Չգուսարս իմ զայս ետու անոյ այդմիկ կնութեան , եւ

17 ասեցեալ զսա՝ Դնէ ի վերայ պատճառս բամբասաւոր բանից՝ եւ ասէ , Ոչ գաի զկուսութիւն զստեր քո . եւ աճաւասիկ կուսութիւնք զստեր իմոյ . եւ բացցեն զհանդերձս ատաջի ձերոց քաղաքին աչ-

18 նորիկ : Եւ ասցէ ձերակոյտ քաղաքին այնորիկ զայրն զայն եւ խրատեսցեն զնա ,

19 Եւ առեժեսցեն ի նմանէ նորեւր սիկզ , եւ տացեն հօր աղջկանն , զովսնակ գի եհան անուն չար զկուսէն Խարայկաց-

20 ւոյ . եւ նորին լիցի կին , եւ մի՛ իշխեսցէ որձակիկ զնա զամենայն ժամանակս :

21 Ապա թէ ճամբորտ իցէ բանն , եւ ոչ զայցին կուսութիւնք աղջկանն , Հանցեն զաղջիկն առ գուրս՝ հօր իւրոյ , եւ քարկոծ արասցեն զնա արք քաղաքին իւրոյ եւ մեռցի . զի արար անդամութիւն ի մէջ որդւոցն Խարայիկի , պոսնկել ի սան հօր իւրոյ . եւ բարձջիք զչարն ի ձէնջ :

22 Եւ եթէ դտցի այր չնացեալ ընդ առնակնոջ , սպանջիք զերկոտեան , զայրն չնացեալ ընդ կնոջն եւ զկինն . եւ բարձջիք զչարն յԽարայիկէ :

23 Եւ եթէ եղիցի աղջիկ կոյս խօսեցեալ անն , եւ գտանիցէ զնա այր ոք ի քա-

24 զաքի եւ ննջեսցէ ընդ նմա , Հանջիք զերկոտին ի դուռն քաղաքին իւրեանց , եւ շքարկոծեսցեն զնոսա քարամրք եւ մեռցին . զաղջիկն՝ զի ոչ բողոքեաց ի քաղաքին , եւ զայրն որ լլկեաց զկին ընկերի իւրոյ . եւ բարձջիք զչարն ի միջոյ ձերմէ :

25 Ապա թէ ի դաշտի զայցէ այր զաղջիկ ոք խօսեալ անն , եւ բռնաբար ննջեսցէ ընդ նմա , սպանջիք զայրն որ ննջեաց

26 ընդ նմա : Եւ աղջկանն մի՛ ինչ անիցէք . զի ոչ է աղջկանն վնաս մահու . զի որպէս յառնիցէ մարդ ի վերայ ընկերի իւրոյ եւ սպանանիցէ զնա , այն-

27 պէս է իրն : Զի ի բացի եգիտ զնա . եւ բողոքեաց աղջիկն խօսեալ , եւ ոչ ոք էր որ օգնէր նմա :

28 Եւ եթէ գտանիցէ ոք զաղջիկ կոյս որ չլցէ խօսեալ անն , եւ բռնաբար

29 ննջեսցէ ընդ նմա՝, Տացէ այրն որ ննջեաց ընդ նմա՝ հօր աղջկանն յիսուն երկրամեան արծաթոյ , եւ նորա լիցի կին՝ . եւ մի՛ իշխեսցէ արձակել զնա զամենայն ժամանակս իւր :

30 Մի՛ սացէ այր զկին հօր իւրոյ , եւ մի՛ յայանեսցէ զձածուկս հօր իւրոյ :

ԳԼ ԻԳ

1 Մի՛ մտցէ մալեալն եւ կրճատեալն յե-

2 կեղեցի՝ Աստուծոյ : Մի՛ մտցէ պոսնկորդի յեկեղեցի Տեառն՝ :

3 Մի՛ մտցէ Ամենացի եւ Մովարացի յեկեղեցի Տեառն . մինչև ցտանս ազգ մի՛ մտցեն յեկեղեցի Տեառն եւ մինչև ցյաւի-

4 տեան . Վասն զի ոչ ելին ընդ առաջ ձեր հացիւ . եւ ջրով ի ճանապարհի երանելոյն ձերոյ յեղիպատէ . եւ զի ի վարձու կարան վասն քո զհազամ որդի Բէով-

5 րայ Դի Միջարեւոտոց անիծանել զքեզ . Եւ ոչ կամեաց Տէր Աստուած քո լսել Բազամու , եւ զարձոյց Տէր Աստուած քո զանէծան յորհնութիւնս . զի սիրեաց զքեզ

6 Տէր Աստուած քո : Մի՛ խօսեսցիս ընդ նոսա խաղաղութեամբ՝ զամենայն ա-

7 ւուրս քո մինչև ցյաւիտեան :

8 Մի՛ զարչեցուցանիցես զեզովմայեցին , զի եղբայր քո է : Մի՛ զարչեցուցանիցես զեղիպարացին , զի պանգուստ է իր յերկ-

9 ռի նորա : Եթէ լինիցին նոցա որդիք , յերրորդ ազգի մտցեն յեկեղեցի Տեառն :

10 Եւ եթէ երանիցես ի պատերազմ բանակել ի վերայ թ՛համեաց քոց , զգոյշ լինի՛ իր յամենայն բանէ չարէ : Եթէ իցէ ի քեզ այր որ չիցէ սուրբ ի ցայ-

11 կեթեանս լրկմանէ , կցէ արտաքոյ բա-

12 նակին , եւ մի՛ մտցէ ի բանակն . Եւ ընդ երեկան լուսացէ զմարմին իւր ջրով ,

1 Եբբ. սան հօր 2 Եբբ. քարկոծեսցիք

3 Եբբ. այեյեյն յաւելու , եւ գացին 4 Եբբ. այեյեյն յաւելու , զի լլկեաց զնա 5 Եբբ. Տեառն 6 Եբբ. այեյն յաւելու , մինչև ցտանս ազգ մի՛ մտցէ յեկեղեցի Տեառն 7 Եբբ. ի Բեթ թրայ Միջարեւոտոց 8 Եբբ. ինդրեացես զխաղաղութիւն եւ զբարու-

9 Եբբ. ինդրեացես զխաղաղութիւն եւ զբարու-

10 Եբբ. ինդրեացես զխաղաղութիւն եւ զբարու-

11 Եբբ. ինդրեացես զխաղաղութիւն եւ զբարու-

12 Եբբ. ինդրեացես զխաղաղութիւն եւ զբարու-

ԳԼ . ԻԿ

12 Եւ ընդ մտանել արեւուն մտցէ ի բա-
 13 Եւ ցից լինիցի զգօտոյ քումմէ . եւ եւ-
 14 զաղանգութիւն քո : Զի Տէր Աստուած
 քո չըջի ընդ բանակն քո Վրկել զքեզ ,
 եւ մասնել զթշնամիս քո առաջի երե-
 սաց քոց . եւ եղիցի բանակն քո սուրբ ,
 եւ ոչ երեւեսցի ի միջի քոմ ալական
 զութիւն՝ իրացն , եւ գառնայցէ ի քէն :
 15 Մի՛ մասնեացես զճառայ տեսան իւ-
 րում , որ յաւելուցու ի քեզ ի տեսանէ
 16 իւրմէ . Ընդ քեզ բնակեացէ եւ ընդ քեզ
 զետեղեսցի յամենայն տեղում որ եւ
 հաճոյ իցէ նմա , եւ մի՛ ներկեցէք զնա :
 17 Մի՛ լինիցի բող ի դատերաց Բարայելի ,
 եւ մի՛ պոռնիկ յուստերաց Բարայելի :
 2 Մի՛ լինիցի ձօնի ի գատերաց Բարայելի ,
 եւ մի՛ նուիրեալ ոք յուստերաց Բարա-
 18 յելի : Մի՛ սարցիս զկապէնս պոռնիկի ,
 եւ մի՛ զշանախուրս ի տուն Պատուծոյ
 քո յամենայն ուխտս . զի պիղծ են ա-
 աջի Տեառն Աստուծոյ քո երկոքեան :
 19 Մի՛ տացես եղբոր քում արծաթ վաշ-
 խիւ , եւ մի՛ զկերակուր շարխախի , եւ
 20 մի՛ սոկոսեօք . Զամենայն ինչ փոխ
 տացես օտարին եւ եղբոր քում , զի
 օրհնեացէ զքեզ Տէր Աստուած քո յա-
 մենայն ի գործս քո ի վերայ երկրին յոր
 մասնելոց ես ժառանգել զնա :
 21 Եւ եթէ ուխտիցես ուխտ Տեառն Աս-
 տուծոյ քում , մի՛ յամնուցի հառուցա-
 նել զայն . զի սահանջուով պահանջեացէ
 Տէր Աստուած քո ի քէն , եւ լինիցի
 22 քեզ ի մեղս . Ապա թէ ոչ կամիցիս
 23 ուխտել , չլինիցի քեզ մեղք : Որ ինչ
 ելանէ ընդ շրթունս քո՝ զգոյշ լինիջիր ,
 եւ արասցես որպէս ուխտեցիր Պատու-
 ծոյ քում , դառուրն զոր խոստացար
 բերանով քով :
 24 Եւ եթէ մտանիցես յայդի ընկերի քո ,
 կերիցես խաղող մինչեւ զյաղել անձին
 25 քո , բայց յաման մի՛ ամանացես , եւ
 եթէ մտանիցես ի հունձս ընկերի քո ,
 քաղեսցես ձեռօք քովք զհասկն , եւ
 մանգաղ մի՛ արկանիցես յոճ ընկերի քո :

1 Եւ եթէ անուցու ոք կին եւ մտա-
 նիցէ առ նա , եւ եղիցի եթէ ոչ գաա-
 նիցէ՝ չնորհս առաջի նորա , զի եզիս ի
 նմա իրս անարգութեան , գրեսցէ նմա
 զիր ապահարգանի եւ տացէ ի ձեռս նու-
 2 րա , եւ արձակեացէ զնա ի տանէ իւրմէ ,
 3 եւ եթէ 7 գնացեալ լինիցի առն աչլում ,
 4 եւ ստիցէ զնա այրն վերջին , գրեսցէ
 նմա զիր մեկնելոյ , եւ տացէ ի ձեռս
 նորա , եւ արձակեացէ զնա ի տանէ
 իւրմէ . ապա թէ մեռանիցի այրն նորա
 5 վերջին որ առ զնա կնութեան , Մի՛
 կարացէ այրն առաջին որ արձակեաց
 զնա՝ գառնալ առնուլ զնա իւր կնու-
 6 թեան , յեա պղծելոցն նորա . զի պիղծ
 է այն առաջի Տեառն Պատուծոյ քո՝ .
 եւ մի՛ պղծեցէք զերկիրն զոր Տէր Աս-
 տուած տացէ ձեզ ի ժառանգութիւն :
 7 Եւ եթէ անուցու ոք կին նորոյ ,
 մի՛ մացէ ի պատերազմ , եւ մի՛ անկ-
 8 ցին ի վերայ նորա եւ մի ինչ իրք . աչլ
 անպարս լիցի ի սան իւրում , եւ ու-
 9 րախ արասցէ գլին իւր զոր առ :
 10 Մի՛ գրաւեսցես զվերին եւ զներքին՝
 երկան . զի զոգիս գրաւէ այնպիսին :
 11 Եթէ ըմբռնեսցի այր ոք մարդագող
 յեղբարց իւրոց յորպուցն Բարայելի , եւ
 12 բնաբարեալ փաճառեսցէ զնա , մեպի
 գողն , եւ բարձրք զչարս ի միջոյ ձերմէ :
 13 Զգոյշ լիւր անձին քում յարածէ բո-
 14 րոտութեան . զգոյշ լինիջիր՝ առնլ ըստ
 15 ամենայն օրինին զոր պատմիցեն ձեզ
 16 քահանայքն Դեւտայիք , զոր օրինակ
 17 սրատուիրեցի 10 ձեզ զգուշանալ՝ առնելոյ :
 18 Յիշեցէք զոր ինչ արար Տէր Աստուած
 19 քո ընդ Մարիամ ի ճանապարհի երանե-
 20 լոյն ձերոյ յեզրիպտոսէ :
 21 Եւ եթէ պարտելով պարտիցի ընկեր
 22 քո զինչ եւ իցէ , մի՛ մասնիցես ի տուն
 23 նորա զրաւել ինչ զրաւ . Աչլ արաքոյ
 24 կայցես , եւ այրն առ որում պարաքն
 25 քո իցեն՝ հանցէ զզրաւն արտաքս : Եւ
 եթէ աղքատ իցէ այրն , մի՛ ազգի ընդ
 2 զրաւաւն իւրով . Գարձուքանելով կար-
 3 ձուցես զզրաւ նորարնդ մտանել արեւու ,
 եւ ննջեսցէ հանգերձիւն իւրով եւ օրհ-

1 Եբբ. մի՛ տեսցէ քեզ զմեղքութիւն 2 Եբբ. գառնե-
 3 Եբբ. Տեառն Աստուծոյ 4 Եբբ. տոկոսեօք զամե-
 նայն ինչ որ տացի վաշխիւ . (Ս) Ստարին տացես
 վաշխիւ , եւ եղբոր քում մի՛ տացես վաշխիւ

5 Եբբ. կինիցի նմա այր , եւ եղիցի զի ոչ գացէ կինն
 6 Եբբ. եզիս այրն 7 Եբբ. ելցէ կինն ի տանէ նորա եւ
 զնացեալ 8 Եբբ. ելցէն յաւելում , մի՛ սամ 9 Եբբ. որ
 առնուցու գրաւ զաղորիս կամ զվերին 10 Եբբ. նա-
 ցա , զգուշացիք 11 Եբբ. ազցիս ընդ գրաւաւ նորա

նեսցէ զքեզ . եւ եղիցի քեզ ¹յողորմա-
 ծութիւն առաջի Տեառն Աստուծոյ քո :
 14 Մի՛ զլասցիս զվարձս անանկին եւ
 զկարօտելոյ յեղբարց քոց , կամ յեկաց
 15 քաղաքաց քոց : Նոյն օրին հասուցես
 զվարձս նորա , եւ մի՛ մտանիցէ արե-
 զակն ի վերայ այնորիկ . զի անանկ է ,
 եւ այն է յոյս նորա . եւ մի՛ բողոք
 հարկանիցէ զքէն առ Տէր , եւ մի՛ լի-
 նիցի այն քեզ ի մեզս :
 16 Մի՛ մեղցին հարք ընդ որդւոց , եւ
 մի՛ որդիք մեռանիցին ընդ հարց . իւ-
 բարանչիւր ոք ի մեզս իւրում մեռանիցի :
 17 Մի՛ խոտորիցես զիրաւունս զեկին եւ
 զորբոյ ²եւ զայրոյ՝ . եւ մի՛ գրաւեսցես
 18 զձորձս այրւոյն . ³Քանզի ծառայ էիր
 զու յերկրին Եղիպտացւոց , եւ փրկեաց
 զքեզ Տէր Աստուած քո անտի . վասն
 այնորիկ եւ սրտաւիրեմ քեզ աննել
 զքանս զայս :
 19 Եւ եթէ հնձեսցես զհունձս յանգի
 քում , եւ մոռացի որայ յանգի քում ,
 մի՛ գառնացես անդրէն անուղ զնա .
²ազքատին եւ՝ եկին եւ այրւոյ եւ որ-
 բոյ եղիցի այն . զի օրհնեսցէ զքեզ Տէր
 Աստուած քո յամենայն ի գործս ձեռաց
 20 քոց : Եւ եթէ կթեսցես ձէթ , մի՛
 գարձցիս անդրէն պողաքազ աննել զկնի
 քո . եկին եւ որբոյ եւ այրւոյ եղիցի
 21 այն : Եւ եթէ կթեսցես զայգի քո , մի՛
 ճաքազ աննիցես զկնի քո . եկին եւ
 22 որբոյ եւ այրւոյ եղիցի այն : Եւ յիշես-
 ցես զի եւ զու ծառայ էիր յերկրին Ե-
 զիպտացւոց . վասն այնորիկ եւ պա-
 տուիրեմ քեզ աննել զքանս զայս :

ԳԼ . ԻԵ

1 Եւ եթէ լինիցի հակառակութիւն ի
 մէջ մարդկան , մտաիցեն յատեան եւ
 զատեսցին . եւ արդարացուցեն զար-
 2 ըրեան : Եւ եղիցի եթէ արժանի իցէ
 զանի ամպարիշտն , ⁴հասուցին զնա
 ստաջի գատաւորացն՝ , եւ հարցին զնա
 առաջի ⁵նոցա ըստ ամպարիշտութեան
 3 նորա ⁶թուով քաւաստն՝ , եւ այլ մի՛
 յաւելուցուն . ապա թէ յաւելուցուն հար-
 կաննել զնա աւելի քան զայն , անար-

գութիւն լիցի եղբարն քում առաջի քո :
 4 Մի՛ կապեսցես զցտուկ եղին կայրաւոյ :
 5 Եւ եթէ բնակեսցեն եղբարք ի միա-
 սին , եւ մեռանիցի մի ոք ի նոցանէ , եւ
 զաւակ ոչ իցէ նորա , մի՛ լինիցի կին մե-
 ռելոյն սրտաքոյ տուն ⁷ումեք որ մեր-
 ձաւոր չիցէ նորա՝ . այլ եղբայր ան
 իւրոյ մացէ առ նա , եւ առցէ զնա իւր
 6 կնութեան , եւ ⁸ընակեսցէ ընդ նմա՝ . Եւ
 եղիցի ⁹մանուկն որ ծնանիցի՝ հաստա-
 տեալ յանուն վախճանելոյն . եւ մի՛ ջնջես-
 7 զի անուն նորա յիւրացիլէ : Ապա թէ ոչ
 կամիցի այրն անուղ զկին եղբոր իւրոյ ,
 ելցէ կինն ի գուռն անդր առ ձերակոյտն
 եւ ասացէ , Ոչ կամի եղբայր ան իմոյ
 կանգնել զանուն եղբոր իւրոյ ի մէջ Իս-
 8 Տրայելի¹⁰ . Եւ կոչեսցեն զնա ձերակոյտ
 քաղաքին իւրոյ , եւ խօսեսցին ընդ նմա .
 եւ նա կացցէ եւ աւիցէ , Ոչ կամիմ առ-
 9 նուղ զպա . Եւ մատուցեալ կին եղբոր
 նորա առաջի ձերոցն , հանցէ զկօշիկ մի
 յտաննէ նորա , եւ թքցէ ընդ երեսս նո-
 րա , եւ պատասխանի տուեալ ասացէ ,
 Այսպէս արասցեն անն որ ոչ չինիցէ
 10 զտուն եղբոր իւրոյ : Եւ կոչեսցի անուն
 նորա ի մէջ Իսրայելի Տուն բոկացելոյ :
 11 Եւ եթէ կուտեսցին արք ընդ միմեանս ,
 այր ընդ եղբոր իւրում , եւ մատուցեալ
 կին միոյ ի նոցանէ թափել զայր իւր ի
 ձեռաց այնորիկ որ հարկանիցէն զնա ,
 եւ ձգեալ զձեռն բուռն հարկանիցէ զեր-
 12 կուորեաց նորա , Հատանիցես զձեռն ,
 եւ մի՛ խնայեսցէ ի նա ակն քո :
 13 Մի՛ լինիցի յամանի քում կշիռ եւ կշիռ ,
 14 մեծ կամ փոքր : Եւ մի՛ լինիցի ի աման
 15 քում չափ եւ չափ , մեծ կամ փոքր : Կշիռ
 ստոյգ եւ արգար եղիցի քեզ , եւ չափ
 ստոյգ եւ արգար եղիցի քեզ , զի բազ-
 մօրեայ եղիցիս ի վերայ երկրին զոր Տէր
 Աստուած քո տացէ քեզ ²ի ժառանգու-
 16 թիւն : Զի պիղծ է Տեառն Աստուծոյ
 քում ամենայն որ անէ զայն , եւ ա-
 մենայն որ անէ զանիրաւութիւն :
 17 Յուչ լիցի քեզ զոր արարն քեզ Ամու-
 զէկ ի ճանապարհի ելանելոյն քո յե-
 18 զիպտոսէ . Զիարգ ընդդէմ եկաց քեզ ի
 ճանապարհին , եւ կրճատեաց զվերջն
 քո եւ զաշխատեալսն զկնի քո , եւ գու-
 քազցեալ եւ աշխատեալ էիր , եւ ոչ

¹Եբբ. յարգարութիւն ²Յեբբ. Դ-Ի-Ի ³Եբբ. եւ յիշեսցես զի ⁴Եբբ. տացէ նմա գատաւորն անկանել ի գետին ⁵Եբբ. նորա ⁶Եբբ. թուով : (3) Քաւասանիցս հարցէ

⁷Եբբ. օտարի ⁸Եբբ. հատուցէ նմա զպարտոս տագեր ⁹Եբբ. անդրանիկն ¹⁰Եբբ. Եթէն Ե-Ե-Լ- , ոչ կամի հատուցանել ինձ զպարտոս տագեր

19 երկեաւ յԱստուծոյ : Եւ եղիցի յորժամ հանգուցանիցէ զքեզ Տէր Աստուած քո յամենայն թէ՛նամեաց քոց որ չուրջ զքեւ իցեն յերկրին զոր Տէր Աստուած քո տացէ քեզ վիճակաւ ի ժառանգութիւն , քննեացես զանուն Ամազկեայ ի ներքոյ երկնից , եւ մի՛ մոռասցիս :

ԳԼ . ԻԶ

1 Եւ եղիցի եթէ մտանկեցես յերկրին զոր Տէր Աստուած քո տացէ քեզ ի ժառանգութիւն , եւ ժառանգեացես զնա եւ

2 ընակեացես ի նմա , Առցես զառաջինս պաղոց զերկրին քո զոր Տէր Աստուած քո տացէ քեզ , եւ արկցես ի կողով , եւ զնասցես ի տեղին զոր ընտրեսցէ Տէր Աստուած Դանուանել զանուն իւր անդ .

3 Եւ երթիցես առ քահանայն որ կայցէ յաւուրսն յայնոսիկ , եւ ասացես զնա , Գոհանամ այսօր զՏեսանէ Աստուծոյ Յիմէ , զի մտի յերկրին զոր երպուաւ

4 Տէր հարցն մերոց սայ մեզ : Եւ տացէ քահանայն զկողովն ի ձեռաց քոց , եւ զիցէ զնա առաջի սեղանոյն Տեսան Աստուծոյ քո . Եւ պատասխանի տուեալ ասացես առաջի Տեսան Աստուծոյ քո .

5 ՉԱսորիս եթող՝ հայր իմ եւ էջ յեզրպատոս , եւ պանդխտեցաւ անդ սակաւ ինչ թուով , եւ եղեւ անդ յազգ մեծ , եւ

6 բազմացաւ անդ յոյժ յոյժ . Եւ չարչարեցին զմեզ Եգիպտացիքն , Կիւցին զմեզ եւ եղին ի վերայ մեր գործ խառութեան .

7 Եւ ազազակեցաք առ Աստուած հարցն մերոց . եւ լուաւ Տէր ձայնի մերում , եւ ետես զտառապանս մեր եւ զաշխատութիւն մեր եւ զհնգութիւն մեր . Եւ եհան զմեզ Տէր յԵգիպտոսէ ինքնին՝ զօրութեամբ մեծաւ , եւ՝ հօր ձեռամբ եւ բարձր բազկաւ , եւ մեծամեծ տեսիեամբք

9 եւ նշանօք եւ արուեստիւք . Եւ աճ զմեզ ի տեղիս յայս , եւ ես մեզ զերկիրս զայս ,

10 երկիր՝ որ բոլիսէ զկաթն եւ զմեղր : Եւ արդ աւասիկ բերի՝ զպտուղ արգեանց երկրին զոր ես ինձ Տէր , երկիր՝ որ բոլիսէ զկաթն եւ զմեղր : Եւ՝ երկիր պաղցես անդ առաջի Տեսան Աստուծոյ

11 քո . Եւ ռարս լիցիս անդ յամենայն բարութիւնսն զոր ես քեզ Տէր Աստուած քո եւ սան ջոււմ , զու եւ Դեւ տացին եւ պանդխտան որ ի քեզ :

առաւ քո եւ սան ջոււմ , զու եւ Դեւ տացին եւ պանդխտան որ ի քեզ :

12 Եւ եթէ կատարեսցես տասանորդել զամենայն տասանորդս երկրի քո , յամին՝ երկրորդ կրկին տասանորդեսցիս՝ Դեւտացւոյն , եւ եկին եւ որոյ եւ այլուոյ . եւ կերբցին ի քաղաքս քո եւ յազիցցին . Եւ ասացես առաջի Տեսան Աստուծոյ քո , Արբեցի ի բաց զսրբութիւնսն ի տանէ խմմէ , եւ ետու զայն Դեւտացւոյն եւ եկին եւ որոյ եւ այլուոյ , ըսաւ ամենայն պատուիրանաց Տեսան Աստուծոյ՝ զոր պատուիրեայ էր ինձ . ոչ անցի զպատուիրանաւ քով եւ ոչ մոռացայ . Եւ ոչ կերայ ի վիշտս ի նոցանէ եւ ոչ ընծայցի ի նոցանէ պղծոյն , եւ ոչ ետու ի նոցանէ մեռելոյ . լուայ ձայնի Տեսան Աստուծոյ իմոյ . Եւ արաւ

15 լի որպէս պատուիրեցեր ինձ : Արդ հայկաց ի արդ ընալութիւնէ ջոււմէ յերկնից , եւ օրհնեա զժողովուրդ քո զԻսրայէլ , եւ զերկիրն զոր ետուր Նոցա . որպէս երզուար հարցն մերոց , սայ մեզ զերկիր որ բոլիսէ զկաթն եւ զմեղր :

16 Յաւուր յայսմիկ պատուիրեաց քեզ Տէր Աստուած քո առնել զամենայն իրաւունս զայստիկ եւ զզատաստանս .

17 Սպանեալք եւ արտալք՝ զսոսա յամենայն արտէ՝ ձեռմէ եւ յամենայն անձնէ

18 ձեռմէ : ՉՏէր Աստուած քո՝ ընտրեա այսօր լինել քեզ Աստուած եւ զնասանք ի ձեռնապարսն նորա , եւ պանդխտեց զիրաւունս եւ զզատաստանս նորա՝ լսել

19 ձայնի նորա . Եւ Տէր ընտրեաց զքեզ այսօր լինել նմա ժողովուրդ սեպհական որպէս եւ խօսեցաւ քեզ , պանել զամենայն պատուիրանս նորա , Եւ լինել քեզ ի վեր քան զամենայն ազգս . որպէս արար զքեզ՝ անուանի եւ բարդաւած եւ փառաւոր , լինել քեզ ժողովուրդ սուրբ Տեսան Աստուծոյ ջոււմ , որպէս եւ խօսեցաւ քեզ :

ԳԼ . ԻԷ

1 Եւ պատուիրեաց Մովսէս եւ ծերակոյսն Իսրայելի եւ սանն , Պանդեղ զամենայն պատուիրանս զոր ես պատուիրեաց ինձ : Եւ ասացես զամենայն արտալք եւ արտալքիս՝ զսոսա յամենայն արտէ՝ ձեռմէ եւ յամենայն անձնէ ձեռմէ : ՉՏէր Աստուած քո՝ ընտրեա այսօր լինել քեզ Աստուած եւ զնասանք ի ձեռնապարսն նորա , եւ պանդխտեց զիրաւունս եւ զզատաստանս նորա՝ լսել ձայնի նորա . Եւ Տէր ընտրեաց զքեզ այսօր լինել նմա ժողովուրդ սեպհական որպէս եւ խօսեցաւ քեզ :

1 Եբր. քո ընակեցուցանել 2 Եբր. ջոււմէ 3 Եբր. Ասորի թագաւորական էր 4 Եբր. զուլուտ 5 Եբր. զերկիրս որպէսնց երկրին զոր ետուր ինձ , Տէր : Եւ գիցես զայն առաջի Տեսան Աստուծոյ քո , եւ

6 Եբր. երրորդի , յամին տասանորդաց , տացես 7 Եբր. բոց 8 Եբր. մեզ 9 Եբր. պանդխտեց եւ արտալք 10 Եբր. գնալ ի ձեռնապարսն նորա եւ պանել զիրաւունս նորա , եւ զպատուիրանս նորա , եւ զզատաստանս նորա , եւ 11 Եբր. ազգս զորս արար :

2 ուիրեմ ձեզ այսօր : Եւ եղիցի յաւուր յորում անցանիցես ընդ Յորդանան , յերկիրն զոր Տէր Աստուած քո տացէ քեզ՝ կանգնեսցես անդ քարինս մեծամեծս ,

3 եւ բռնեցես զնոսա բռով . Եւ գրեսցես ի վերայ ¹քարանցն զամենայն պատգամս զօրինացս այսոցիկ , յորժամ ²անցանիցէք ընդ Յորդանան , ի ժամանակի իրբն մտանիցէք՝ յերկիրն զոր Տէր Աստուած ³հարցն ձերոց՝ տացէ քեզ , երկիր՝ որ բղխէ զկաթն եւ զմեղր . որպէս խոստացաւ Տէր Աստուած հարցն քոց

4 տայ քեզ : Եւ եղիցի յորժամ անցանիցէք ընդ Յորդանան , կանգնեսցիք զքարինսն զայնտիկ զոր ես պատուիրեմ ձեզ այսօր : Ի լերինն Գնբաղ , եւ բռնեսցիք զնոսա բռով : Եւ շինեսցես անդ սեղան Տեառն Աստուծոյ քո , սեղան ի քարանց . եւ մի՛ հպեսցի ի նոսա երկաթ .

6 ⁴Բոլորակ վիմօք շինեսցես զսեղանն Տեառն Աստուծոյ քո . եւ հանցես ի վերայ նորա ողջակէտ Տեառն Աստուծոյ քում . Եւ զենցես ⁵անդ զենուճն փրկութեան Տեառն Աստուծոյ քում , եւ կերիցես եւ յազեսցես՝ անդ , եւ ուրախ

8 լիցիս առաջի Տեառն Աստուծոյ քո . Եւ գրեսցես ի վերայ քարանցն զամենայն զօրէնս զայտոսիկ յայտնապէս յոյժ :

9 Եւ խօսեցաւ Մովսէս եւ քահանայքն ⁶եւ Ղեւտացիք ընդ ամենայն Իսրայելի եւ տանն , Լուս լեր եւ լուր , Իսրայէլ . յաւուր յայտոսիկ եղբր ժողովուրդ Տեառն

10 Աստուծոյ քո . Եւ լուիցես ձայնի Տեառն Աստուծոյ քո , եւ արացես զամենայն պատուիրանս նորա եւ զիրաւունս նորա զոր ես պատուիրեմ քեզ այսօր :

11 Եւ պատուիրեաց Մովսէս ժողովրդեանն

12 յաւուր յայնմիկ եւ ասէ , Սոքս կացցեն օրհնել զժողովուրդն ի լերինն Գարիզն , յորժամ անցանիցէք ընդ Յորդանան . Շմաւոն , Ղեւի , Յուզա , Իսաքար , Յովսէփ եւ Բենիամին . Եւ սոքս կացցեն ի վերայ անիծիցն ի լերինն Գնբաղ . Ռուբէն , Գադ , Ասեր , Զարուզոն , Դան եւ Նեփթաղիմ :

14 Եւ պատասխանի տուեալ Ղեւտացւոյն ասիցեն մեծաձայն ամենայն Իսրայելի , Անիծեալ լիցի մարդն որ արատցէ գրօշեալ եւ ձուլածոյ , զի պիղծ է

Տեառն ձեռագործ ձարտարի , եւ զնիցէ զնա ի Թաքստեան . Եւ պատասխանի տուեալ ժողովրդեանն՝ ասացեն , Եղիցի : Անիծեալ՝ որ անարգեսցէ զհայր իւր կամ զմայր իւր . եւ ասացէ ամենայն

16 ժողովուրդն , Եղիցի : Անիծեալ՝ որ փոխեսցէ զասձամնս ընկերի իւրոյ . եւ ասացէ ամենայն ժողովուրդն , Եղիցի :

18 Անիծեալ՝ որ խոտորիցէ զիրաւունս եւ կին եւ որդոյ եւ այլոյ . եւ ասացէ ամենայն ժողովուրդն , Եղիցի : Անիծեալ՝ որ մտորեցուցէ զկոյրն ի ճանապարհէ . եւ ասացէ ամենայն ժողովուրդն , Եղիցի :

20 Անիծեալ՝ որ ննջեսցէ ընդ կնոջ հօր իւրոյ , զի յայտնեաց զաներեւոյթն հօր իւրոյ . եւ ասացէ ամենայն ժողովուրդն , Եղիցի :

22 Անիծեալ՝ որ ննջեսցէ ընդ կնոջ մեծնայն ժողովուրդն , Եղիցի : Անիծեալ՝ որ ննջեսցէ ընդ քեռ իւրում , որ առ ի հօրէ իցէ կամ առ ի մօրէ . եւ ասացէ ամենայն ժողովուրդն , Եղիցի :

24 Անիծեալ՝ որ հարկանիցէ զընկեր իւր նենգութեամբ . եւ ասացէ ամենայն ժողովուրդն , Եղիցի : Անիծեալ՝ որ սոռնուցու կաշառ հարկանել զանձն արեան արգարոյ՝ . եւ ասացէ ամենայն ժողովուրդն , Եղիցի :

26 Անիծեալ ամենայն մարդ՝ որ ոչ կացցէ յամենայն բանս օրինացս այսոցիկ առնել զոսոսա . եւ ասացէ ամենայն ժողովուրդն , Եղիցի :

ԳԼ ԻԸ

1 Եւ եղիցի իկէ լսելով ⁹լուիցէք ձայնի Տեառն Աստուծոյ ³մերոյ , զզուշանալ եւ առնել զամենայն պատուիրանս նորա , զոր ես պատուիրեմ ¹⁰ձեզ այսօր , տացէ զքեզ Տէր Աստուած քո ի վեր քան

2 զամենայն ազգս երկրի : Եւ եկեսցեն ի վերայ քո ամենայն օրհնութիւնքս այսոցիկ եւ զացեն զքեզ , եթէ լուիցես

3 ձայնի Տեառն Աստուծոյ քո : Օրհնեալ լիցիս զու ի քաղաքի , եւ օրհնեալ յանդի . Օրհնեալ լիցին ծնունդք որովայնի քո , եւ արարք երկրի քո , անվեայք արջառոց քոյ , եւ հօտք ոչխարաց քոց .

5 Օրհնեալ լիցին շանմարանք քո եւ համբարք քո . Օրհնեալ լիցին զու յելանել

7 եւ ի մտանել քում . Մասնեսցէ Տէր

¹ Եբբ. նոցա ² Եբբ. անցանիցես մտանել ³ Եբբ. քո ⁴ Եբբ. Ողջ ⁵ Եբբ. խաղաղականս եւ կերիցես ⁶ Եբբ. պիւսի

⁷ Եբբ. յեղեղի յաւուր . (23) Անիծեալ՝ որ ննջեսցէ ընդ զքանի իւրում . եւ ասացէ ամենայն ժողովուրդն , Եղիցի : ⁸ Եբբ. անպարտ արեան ⁹ Եբբ. լուիցես ¹⁰ Եբբ. քեզ

Սատուած քո զթշնամիս քո եւ գհա-
կառակորդս՝ քո խորտակեալս առաջի
երեսաց քոց . ընդ մի ճանապարհ ելցեն
առ քեզ , եւ ընդ եւթն ճանապարհ՝ փա-
8 խիցեն յերեսաց քոց : Ասաքեսցէ Տէր ի
վերայ քո օրհնութիւն , ի շտեմարանս
քո եւ յամենայն ինչ ուր միտեսցես զձեռն
քո ի վերայ երկրին զոր Տէր Աստուած
9 քո տացէ քեզ : Կանդնեսցէ զքեզ Տէր
Աստուած քո իւր ժողովուրդ սուրբ ,
որպէս երբուս 2 Նարցն քոց՝ , եթէ լուի-
ցես ձայնի Տեառն Աստուծոյ քո , եւ
10 գնացես ի ճանապարհ նորս . եւ տես-
ցեն ամենայն ազգք երկրի զի անուն
Տեառն կոչեսցես է ի վերայ քո , եւ եր-
11 կիցեն ի քէն : եւ բազմացուցէ զքեզ
Տէր 3 Աստուած քո՝ ի բարութիւնս
ծննդեամբք որովայնի քո եւ արդեամբք
երկրի քո եւ ծննդեամբք խաչանց քոց
ի վերայ երկրին զոր երբուս Տէր Նարցն
քոց տալ քեզ , 3 բառ աւուրց երկնից ի
12 վերայ երկրի՝ : Բացցէ քեզ Տէր զգանձան
բարութեան իւրոյ զերկինս , տալ անձ-
րեւ ի ժամանակի իւրում երկրին քո ,
օրհնել զամենայն գործս ձեռաց քոց .
եւ տացես փոխ ազգաց բազմաց , եւ
13 զու ոչ անուցուս փոխս : 3 եւ իշխեսցես
ազգաց բազմաց , եւ քեզ մի իշխես-
ցին : 4 հաստատեսցէ զքեզ Տէր Աստուած
քո ի զլուխ՝ եւ ոչ ի վերջ , եւ եղիցիս
ի վեր՝ եւ ոչ ի խոնարհ , եթէ լուիցես
պատուիրանաց Տեառն Աստուծոյ քո ,
զոր ես պատուիրեմ քեզ այսօր պահել
14 եւ առնել , եւ ոչ անցանիցես զամենայն
բանիւք զոր ես պատուիրեմ քեզ այսօր՝
ոչ յաջ եւ ոչ յածեակ , երթալ զհետ
աստուածոց օտարաց սոստակ գնոսս :
15 եւ եղիցի եթէ ոչ լուիցես ձայնի
Տեառն Աստուծոյ քո , պահել եւ առնել
զամենայն պատուիրանս նորս զոր ես
պատուիրեմ քեզ այսօր , եկեսցին ի վե-
րայ քո 4 անէծքս սպտբոլի եւ հասցեն
16 քեզ : Անիծեալ լիջիր զու ի քաղաքի եւ
17 անիծեալ յանդի . Անիծեալ շտեմարանք
18 քո եւ համարաք քո . Անիծեալ ծնունդք
որովայնի քո եւ արդիւնք երկրի քո , եւ
անպետք արջատոց քոց եւ հօսք ոչխա-
19 բաց քոց . Անիծեալ լիջիր զու ի մտու-
20 նել , եւ անիծեալ յեղանել : Ասաքեսցէ

քեզ Տէր 5 գնուազութիւնս եւ զկարօ-
աութիւնս եւ ծախս՝ ի վերայ ամենայնի
յոր միտեսցես զձեռն քո , եւ զոր ինչ
աննիցես , մինչեւ սատակեսցէ զքեզ Տէր ,
մինչեւ կորուսցէ զքեզ վազվազակի վասն
չարութեան գնացելոց քոց , զի թողեր
21 զու զիս : Խանձեցուցէ Տէր ի քեզ մահ ,
մինչեւ սատակեսցէ զքեզ Տէր յերկրէն
յար զու մասնիցոց ես ժառանգել զնա :
22 Հարցէ զքեզ Տէր 6 տարակուսանօք , եւ
ջերմամբ եւ սարսուով , եւ խնիթիւք եւ
երկիւզիւք , եւ խորտակուս եւ զուսով ,
եւ հարածեսցին զքեզ մինչեւ կորուսցեն
23 զքեզ : եւ եղիցին ի վերայ զլսոյ քո
երկինք պզնձի , եւ երկիր ի ներքոյ քո՝
24 երկաթի : Տացէ Տէր զանձրեւ երկրի քո
փոշի , եւ հող յերկնից իջցէ ի վերայ քո ,
մինչեւ սատակեսցէ զքեզ եւ կորուսցէ
25 զքեզ : Տացէ զքեզ Տէր ի պարտութիւն
սատլի թշնամեաց քոց . ընդ մի ճանա-
պարհ ելցես ի վերայ նոցա , եւ ընդ եւթն
ճանապարհ՝ փախիցես յերեսաց նոցա .
եւ եղիցիս ցրուեալ ընդ ամենայն թա-
26 վաւորութիւնս երկրի . եւ 7 եղիցին մե-
ռեալք ձեր՝ կերակուր թռչնոց երկնից
եւ զազանաց երկրի , եւ ոչ ոք իցէ որ
27 ընդոտուցանիցէ : Հարցէ զքեզ Տէր կե-
տով եղիպատացոցն եւ թմնչիւք , եւ
զայրացեալ քոսով եւ մնով , զի մի կա-
28 բացես բժշկել , Հարցէ զքեզ Տէր յի-
մարտութեամբ եւ շաղկութեամբ եւ ապ-
29 չութեամբ մտաց . եւ խարխախեսցես ի
մէջօրէի որպէս խարխախիցէ կայր ի խա-
ւարի , եւ ոչ ուզգեսցես զճանապարհս
քո . եւ եղիցիս յայնժամ զրիկեալ եւ
յափշտակեալ զամենայն աւուրս , եւ ոչ
30 ոք իցէ որ օգնիցէ քեզ : 8 Անուցուս
կին , եւ այլ այր հանիցէ զնա ի քէն՝ .
չինեսցես տուն , եւ մի բնակեսցես ի
նժա . անկեսցես այգի , եւ մի կթեսցես
31 զնա . Արջատ քո սպանեալ սատլի քո ,
եւ մի կերիցես ինժանէ . էջ քո յափշտա-
կեալ ի քէն , եւ մի գարձիլ առ քեզ .
ոչխար քո մասնեալ թշնամեաց քոց ,
32 եւ ոչ ոք իցէ որ օգնիցէ քեզ : Ուստերք
քո եւ զստերք քո մասնեալք ազգի օ-
տարի , եւ աչք քո կկոցեալ հայիցին ի
33 նոսա՞ , եւ ոչ հասանիցէ ձեան քո : 9 Զբերս

1 Եբբ. զթշնամիս քո յարուցեալս ի վերայ 2 Եբբ. քեզ 3 Եբբ. Դ-Ի-Ի-Ե 4 Եբբ. ամենայն անէծքս

5 Եբբ. անէծս եւ տառապանս եւ կշտամբանս 6 Եբբ. ձիւրութեամբ 7 Եբբ. եղիցի զի քո 8 Եբբ. խօսեսցիս կին , եւ այլ այր ննջեսցէ ընդ նմա 9 Եբբ. ոչեցէն յ-Ե-Ե-Ե , զոր ամենայն

երկրի քո եւ զամենայն վաստակս քո
 կերիցէ ազգ զոր դու ոչ գիտիցես, եւ
 եղիցես գրիեալ եւ խորտակեալ զամեն-
 34 նայն աւուրս: Եւ եղիցես յիմարեալ
 վասն սեւեղեանց աշաց քոց զոր տեսա-
 35 նիցես: Հարցէ զքեզ Տէր չարաչար կե-
 դով ի ծուռկս եւ ի սրունս, եւ ոչ կա-
 36 չեւ ցգլուխ քո: Տարցի զքեզ Տէր եւ
 ՚ղիշխանան զոր կացուցես ի վերայ քո՝
 յազգ զոր ոչ գիտիցես դու եւ ոչ հարք
 քո: Եւ պաշտեսցես անդ զաստուածս
 օտարս՝ զիսայտեղէնս եւ գքարեղէնս:
 37 Եւ եղիցես յառակ եւ ի ցոյց եւ ի զրոյց
 ի մէջ ամենայն ազգաց յոր տանիցի գրեզ
 38 Տէր անդր: Սերմն բաղում հանցես յան-
 զի, եւ սակաւ ժողովեսցես. զի կերի-
 39 ցէ զայն մարտիս: Այլիս անկեսցես եւ
 զործեսցես, եւ գինի ոչ արբցես, եւ
 մի՞ ²ուրախ լինիցիս ի նմանէ՞: զի կե-
 40 րիցէ զայն որդն: Եւ եղիցին ձիթենիք
 յամենայն սահմանս քո, եւ իւզով ոչ
 օծցիս. զի թափեսցին ձիթենիքն քո:
 41 Ուստերս եւ դատերս ճնցիս, եւ ոչ լի-
 նիցին քո. քանզի երթիցեն ի դերու-
 42 թիւն: Չամենայն ծառատունկ քո եւ
 զարգիւնս երկրի քո հարցէ թրթուր:
 43 Եկն որ ի քեզ իցէ, ելցէ քան զքեզ
 վեր ի վեր, եւ դու իջցես վայր ի վայր:
 44 Նա տացէ քեզ փոխ. եւ դու ոչ տա-
 ցես նմա փոխ. նա եղիցի զլուխ, եւ
 45 զու եղիցիս վերջ: Եւ եկեսցեն ի վերայ
 քո ³անէձքս այտքիկ եւ հալածեսցեն
 գրեզ եւ հասցեն քեզ, մինչեւ սատա-
 կեսցին զքեզ եւ մինչեւ կորուսցին
 զքեզ. զի ոչ լուար ձայնի Տեառն Աս-
 տուծոյ քո, պահկ զպատուիրանս նո-
 րա եւ զիրաւունս նորա զոր պատուի-
 46 րեաց քեզ. եւ եղիցին ի քեզ նշանք եւ
 արուեսաք եւ ի զուակի քում մինչեւ
 47 ցլաւիտեան: Փոխանակ զի ոչ պաշտե-
 ցիր զՏէր Աստուած քո ուրախութեամբ
 եւ ճշմարիտ սրտիւ վասն ³բազմութեանդ
 48 ամենեցուն՝. Պաշտեսցես զթշնամիս քո
 զորս ատարեսցէ ի վերայ քո Տէր, ի սով
 եւ ի ծարաւ եւ ի մերկութիւն եւ ի նուա-
 զութեան ամենայնի. եւ զիցէ անուր
 երկաթի ի պարանոցի քում մինչեւ սա-
 49 տակեսցէ զքեզ: Աձցէ ի վերայ քո ազգ
 ի հեռաստանէ ի ծագաց երկրի իբրեւ

զխոյանալ արծուոյ, ազգ՝ զորոյ ոչ լսի-
 50 ցես զձայն նորա, Ազգ ժպիր՝ երեսօք
 որ ոչ աշտոցէ երեսաց ծերոյ, եւ ոչ
 51 ողորմեսցի տգայոյ. Եւ կերիցէ զճնուռդս
 խաշանց քոց եւ զարղունս երկրի քո.
 Եւ ոչ թողուցու քեզ ցորեան, գինի,
 եւղ, զանդեայս արջատոց քոց, եւ զհօտս
 ոչխարաց քոց, մինչեւ կորուսցէ զքեզ.
 52 Եւ նեղեսցէ զքեզ յամենայն քաղաքս
 քո, մինչեւ կործանեսցին պարխապք քո
 բարձրացեալք եւ ամուրք յորս դուն յու-
 սացեալ իցես յամենայն երկրին քում.
 Եւ նեղեսցէ զքեզ յամենայն քաղաքս
 53 քո զորս եւ քեզ Տէր Աստուած քո. Եւ
 կերիցես զճնուռդս որովայնի քո, զմիս
 ուստերաց քոց եւ զդատերաց քոց զոր
 եւ քեզ Տէր՝ յանձկութեան քում եւ ի
 նեղութեան քում որով նեղեսցէ զքեզ
 54 թշնամին քո: Փիրզն որ ի քեզ եւ փա-
 փուկն յոյժ չարակնեսցէ յեղբայր իւր եւ
 ի կնն ծոցոյ իւրոյ, եւ ի մնացեալ որ-
 55 զիսն որ մնացցեն նմա, Տալ միում ի
 նոցանէ ի մարմնոյ որդւոց իւրոց յորոց
 ուտիցէ, վասն չմուղոյն նմա ինչ. յանձ-
 կութեանն քում եւ ի նեղութեան որով
 նեղիցեն զքեզ թշնամիքն քո յամենայն
 56 քաղաքս քո: Եւ ⁵ղիրզն որ ի քեզ եւ
 փափուկն յոյժ, որոյ ոչ իցէ ոտին իւրոյ
 առեալ զփոթձ դնալոյ ի վերայ երկրի
 վասն փափկութեան իւրոյ եւ զրգու-
 թեան, չարակնեսցէ յայր ծոցոյ իւրոյ,
 57 եւ ⁶զուատրն իւր եւ զզուատր, Եւ զաղան
 ելեալ ի միջոյ իւրմէ, եւ զճնուռդն զոր
 ծնանիցի՝ խորովեսցէ ի նոցանէ եւ կե-
 րիցէ. եւ վասն նուազութեանն՝ յամե-
 նայնէ թաքուսցէ՝ յանձկութեանն եւ ի
 նեղութեանն, որով նեղիցէ զքեզ թշնա-
 մին յամենայն քաղաքս քո:
 58 Եւ եթէ ոչ լուրիցէ ք առնկ զամենայն
 բանս օրինացս այտոցիկ, զգրեալս ի
 գիրս յայամիկ, երկնչկ ի պատուական
 եւ սքանչիկ անուանէ Տեառն Աստուծոյ
 59 քո, Նորանշան արացցէ Տէր զհարուածս
 քո եւ զհարուածս զուակի քո, զհա-
 րուածս մեծամեծս եւ զարմանալիս, եւ
 60 զցլաւս չարաչարս եւ զկարեւորս. Եւ
 անցէ ի վերայ քո զամենայն արտոս չա-
 րաչարս զեղիպտացուոյն յորմէ սուկա-

¹Եբբ. զթագաւոր քո ²Եբբ. կիծեսցես ³Եբբ. ամենայն անէձքս ⁴Եբբ. առատութեան ամենայնի

⁵Եբբ. կին գիրք ⁶Եբբ. յուտր իւր եւ ի դուտր իւր, (57) Եւ յաղան ելեալ ի միջոյ իւրմէ, եւ յոր-
 դիս իւր զոր ծնանիցի, զի կերիցէ զնոսս վասն
 նուազութեանն յամենայնէ ի ծածուկ.

յիւրն յերեսաց նոցա , եւ միտեցին ի բեզ |
 61 Եւ զամենայն հիւանդութիւնս եւ զա-
 մենայն հարուածս ¹պրեայր ի գիրս օ-
 րինացս այսոցիկ՝ ածցէ Տէր ի վերայ քո ,
 62 մինչեւ աստակեացէ զբեզ : Եւ միասջիք
 թուով սակաւք , յիտանակ զի էիք զուք
 իրրեւ զաստեգս երկնից բազմութեամբ ,
 63 ծոյ ձերոյ : Եւ եղիցի , որպէս ուրախ
 եղեւ ի ձեզ Տէր բարի տանել ձեզ եւ
 բազմացուցանել զձեզ , նոյնպէս ուրախ
 լինիցի Տէր ի ձեզ աստակել զձեզ , եւ
 բարձջիք յերկրէն յոր մասնելոց էք ժա-
 64 ոանդել զնա : Եւ զրուեսցէ զբեզ Տէր
²Սատուած քո՝ ընդ ամենայն ազգս , ի
 ծագաց երկրի մինչեւ ի ծագս երկրի , եւ
 ծառայեցես անդ աստուածոց օտարոց ,
 65 փայտից եւ քարանց , զորս ոչ զիտէիր
 զու եւ հարք քո : Այլ եւ յազգան յայ-
 նոսիկ ոչ հանգուացէ զբեզ , եւ ոչ լի-
 նիցի կայ թաթից ոտից քոց . եւ տացէ
 66 եւ անձն հաշխալ . Եւ եղիցին կեանք քո
 կարեակ առաջի աչաց քոց , եւ զար-
 հուրեսցին զցայց եւ զցերեկ , եւ ոչ հա-
 67 լատասցես կենացն քոց . Ընդ առաւօտս
 ասիցես թէ Ե՞րբ լինիցի երկելոյ , եւ ընդ
 երկելոյս ասիցես թէ Ե՞րբ լինիցի առա-
 ռաւօտ , ի զարհուրանաց սրտի քո զոր
 երկնչիցիս , եւ ի տեսիանց աչոց քոց
 68 զոր տեսանիցես : Եւ զարձուացէ զբեզ
 Տէր անդրէն յեղիպատոս նաւօք ³Հազա-
 րաւոր զօրօք . եւ՝ ընդ ճանտարս՝ ⁴ընդ
 նոյն՝ ոչ յաւելեցուք՝ տեսանել զնա . եւ
 վաճառեսջիք անդ թշնամեաց ձերոց ի
 ծառայս եւ յազախնայս , եւ ոչ որ իցէ
 որ գնիցէ :

Վ. ԻԹ

1 Այս բանք են ուխտին զոր պատուիրեաց
 Տէր Մովսիսի , հաստատել որդւոյն Իս-
 րայելի յերկրին Մովարու , թող զայն
 ուխտ զոր ուխտեաց նոցա ի Քորեր :
 2 Եւ կոչեաց Մովսէս զամենայն որդիան
 Իսրայելի եւ ասէ ցնտաս , Իուք ձեզէն
 տեսէք զամենայն ինչ զոր տար Տէր
 յեղիպատոս առաջի ձեր , ընդ Փարաւոն
 եւ ընդ ծառայս նորա , եւ ինչ ամենայն
 3 երկիր նորա . Չկործանան մեծամեծս զոր

տեսին աչք ձեր , զնշանն եւ զարուեստս
 մեծամեծս զայնոսիկ , ⁵զձեռն հյօր եւ
 4 զբազուկ բարձր .՝ Եւ ոչ եւ ձեզ Տէր
⁶Սատուած ձեր՝ սիրտ զիտելոյ եւ աչս
 տեսանելոյ եւ ականջս լսելոյ մինչեւ
 5 զսպօրս : Եւ ⁶ամ զձեզ զբառաստուն ամ
 ընդ անտպասն . ոչ հնազան ձորձք ձեր
 եւ ոչ մաշեցան կօշիկք յտից ձերոց .
 6 Հաց ոչ կերայք եւ զինի եւ ցբի ոչ ար-
 քէք , զի ծանխջիք թէ ես եմ Տէր Աս-
 7 տուած ձեր , եւ եկիք մինչեւ ի տեղիս
 յայս , եւ ել Սեռն թաղաւոր Եսերու-
 նայ , եւ Ովդ թաղաւոր Բասանու ընդ-
 8 գէմ մեր պատերազմաւ . Եւ հարաք զնու-
 սա եւ առաք զերկիր նոցա , եւ ⁹հառու
 զնա ի ժառանգութիւն Ռուբենի եւ Գա-
 9 զայ եւ կիսոյ ցեղին Մանասէի : Եւ զզու-
 շտայք առնել զամենայն բանս ուխտիս
 այսորիկ , զի ⁷իմանայցէք զամենայն՝
 զոր ասնիցէք :

10 Իուք կայք աւազիկ այսօր ամենեքեան
 առաջի Տեառն Սատուծոյ ձերոյ , ցեղա-
 պետք ձեր եւ ձերակոյտ ձեր եւ դատա-
 ւորք ձեր եւ ատենագպիրք ձեր , եւ ա-
 11 մենայն այր Իսրայելի , Եւ կանայք ձեր
 եւ որդիք ձեր , եւ եկն որ ի միջի բա-
 նակին ձերում , ի փայտակոտորէ ձերմէ
 12 մինչեւ զջրբեր ձեր . Յանցանել քո զուխ-
 տիւ Տեառն Սատուծոյ քո , եւ ⁸գնդու
 վիւք նորա զոր Տէր Սատուած քո ուխ-
 13 տէ քեզ այսօր , Ձի կայուացէ զբեզ՝ իւր
 ժողովուրդ , եւ նա եղիցի քեզ Սատուած
 որպէս եւ ասաց ¹⁰ , եւ զոր օրինակ եր-
 դուաւ հարցն քոց Աբրահամու եւ Իսա-
 14 հակայ եւ Յակոբայ : Եւ ոչ ձեզ միայն
 ուխտեմ ես զուխտս քայս եւ ¹¹զնդովս
 15 զայստիկ՝ , Այլ եւ որոց աստ ընդ մեզ
 իցեն այսօր առաջի Տեառն Սատուծոյ մե-
 16 րոյ , եւ որոց չիցեն ընդ մեզ այսօր . Ձի
 զուք ինքնին զիտէք , որպէս բնակեցաք
 յերկրին Եղիպտացւոց , եւ որպէս ան-
 ցաք ընդ մէջ ազգայն ընդ որս անցէք
 17 զուք . Եւ տեսէք զպարչկիս նոցա եւ
 զկուսս իւրեանց , զփայսն եւ զքար ,
 18 զարծաթն եւ զտակի որ է առ նոսա : Եւ
 ոք իցէ ի ձէնջ այր կամ կին , կամ ազգ
 կամ ցեղ որոց միաք իւր խոտորեայ ¹²ի-
 ցեն ի Տեառնէ Աստուծոյ մերմէ , երթալ

¹Եբբ. որ չիցեն զրեալ ²Եբբ. քանիկ ³ՅԵբբ. գալ-տե ⁴Եբբ. զորմէ ասացի քեզ Ոչ յաւե- լուցուս

⁵Եբբ. ամի ⁶Եբբ. տուաք ⁷Կալ. յաջողես- ջիք յամենայնի ⁸Եբբ. զերդ-մամբ ⁹Եբբ. յեջն յա-եւ-ւ. այսօր ¹⁰Եբբ. յեջն յա-եւ-ւ. քեզ ¹¹Եբբ. զերդ-ու-մնս զայս ¹²Եբբ. իցեն այսօր

պաշտել զգլխ ազգացն այնոցիկ , ¹մի՛ն ոք իցէ ի ձէն՛ջ՝ արմատ ի վեր բուսեալ

19 զանուութեանն եւ զաժանութեանն . եւ եւզիցի եթէ լուիցէ զսատգամս նշովիցս այսոցիկ , եւ ²խոկասցի ի սրտի իւրում եւ ասիցէ , ³Քառութիւնք եղիցին՝ ինձ , եթէ ես ըստ մոլորութեան սրտի իմոյ գնայցեմ . ⁴զի՛ մի՛ կորուսանիցէ մեղաւորն զանմեզն՝ . եւ ոչ հաճեսցի ⁵Աստուած ներել նմա . այլ յայժամ բորբոքեսցի բարկութիւն նորա եւ նախանձ նորա ի մարցն յայն , եւ հասցեն նմա ամենայն նշովք ուխտոս այտորիկ՝ գրեալք ի գրի օրինացս այսոցիկ , եւ ⁶Յնջեսցէ Տէր զանուն նորա ի ներքոյ երկնից . եւ զատուցէ զնա Տէր ի չարիս յամենայն որդւոցն Իսրայելի , ըստ ամենայն նշովից ուխտիս գրեալոյ ի գիրս օրինացս այսոցիկ . եւ ասիցեն ազգքն ⁷մեւս եւ՝ որդիքն ձեր որ յարիցեն յիտ ձեր , եւ օտարտորն որ զայցէ յերկրէ հեռաստանէ , անանիցն զհարուածս երկրին այնորիկ եւ զպիտս նորա զոր ատաքեաց

23 Տէր ի վերայ նորա , ⁸Զծծումնն եւ զաղն այրեցեսալ . յամենայն ի հող նորա մի սերմանեսցի եւ մի բուսցի , եւ մի կիցէ ի վերայ նորա ամենայն գեղ զալար , որպէս կործանեցան Մոզոմ եւ Գոմոր , Ագամա եւ Սեւոյիմ , զորս կործանեաց Տէր սրտմատութեամբ եւ բարկութեամբ :

24 Եւ ասացեն ամենայն ազգքն , Ընդէ՛ք արար Տէր այնպէս երկրին այնմիկ , զի՛նչ իցէ սրտմտութիւն մեձ բարկութեանն

25 այնորիկ , Պատասխանի տացեն եւ ասացեն , ⁹Զի՛ թողին զուխտն ¹⁰Աստուծոյ հարց իւրեանց , զոր ուխտեաց հարցն նուց յորժամ եհան զնոսս յերկրէն Եզրիպ-

26 տացւոց , եւ զնացեալ պաշտեցին զաստուածս օտարս , եւ երկիր պաղին նոցա զոր ոչն ձսնաչէին , եւ ոչ ¹¹բաժանեաց

27 նոցա : Եւ բարկացաւ Տէր սրտմտութեամբ ի վերայ երկրին այնորիկ , անկ ի վերայ նորա ըստ ամենայն նշովից ուխտիս զրե-

28 լոյ ¹²ի մատենի օրինացս այսոցիկ՝ . եւ եւրարձ գնոսս եւ Տէր յերկրէ իւրեանց բարկութեամբ եւ սրտմտութեամբ եւ զայրացմամբ մեձ աւ յոյժ , եւ մերժեաց զնոսս

29 յերկիր օտար մինչեւ ցայժմ : Ծածուկքն Տեառն Աստուծոյ մերում , եւ յայտնիքն մեզ եւ որդւոց մերոց յաւիտեան , առնել զամենայն պատգամս օրինացս այսոցիկ :

Գ Լ Լ

1 Եւ եղիցի եթէ հասանիցեն ի վերայ քո ամենայն պատգամքս սցսորիկ , կամ օրհնութիւնք կամ անէձք զորս ետու առաջի երեսաց քոց , եւ կայցիս ի սրտի քում ընդ ամենայն ազգսն ուր ցրուես :

2 Գէ զքեզ Տէր անդ , եւ զարձցիս առ Տէր Աստուած քո , եւ լուիցես ձայնի նորա ըստ ամենայնի զոր ես պատուիրեմ քեզ այսօր , ¹⁰ յամենայն սրաէ քում մէ եւ

3 յամենայն անձնէ քում մէ , եւ ¹¹ բժշկեսցէ Տէր զմեզն՝ . քո եւ ողորմեսցի քեզ , եւ զարձեալ ժողովեսցէ զքեզ յամենայն ազգաց ուր ցրուես զքեզ ¹² Տէր անդ :

4 Եթէ իցէ ցրումն քո ¹³ ի ծագաց երկրի մինչեւ ի ծագս երկրի՝ , անտի ժողովեսցէ զքեզ Տէր Աստուած քո , եւ անսրտի ասցէ զքեզ ¹⁴ Տէր Աստուած քո՝ . եւ անգէ զքեզ Տէր Աստուած քո յերկիրն զոր ժառանգեցին հարք քո , եւ ժառանգեսցես զնա եւ բարի եղիցի քեզ , եւ բազմապատիկ արասցէ զքեզ քան զհարս քո . եւ ¹⁵ պարուերեսցէ Տէր զսիրտ քո եւ զսիրտ զաւակի քո , սիրել զՏէր Աստուած քո յամենայն սրաէ քում մէ եւ յամենայն անձնէ քում մէ , զի կեցցես

7 ¹⁴ զու եւ զաւակ քո՝ . եւ տացէ Տէր Աստուած քո զնշովս զայս ի թշնամիս քո եւ յատելիս քո որք հալածեցինն գքեզ :

8 Եւ զու զարձցիս եւ լուիցես ձայնի Տեառն ¹⁴ Աստուծոյ քո՝ , եւ արասցես զպատուիրանս նորա զոր ես պատուիրեմ քեզ այսօր : եւ անհցուցէ զքեզ Տէր Աստուած քո յամենայն գործս ձեռաց քոց , ծննդովք որովայնի քո , եւ արդեամբք երկրի քո , եւ ծննդովք անանոց քոց . զի զարձցի ի քեզ Տէր ¹⁴ Աստուած քո՝ ուրախ լինել քեւ ի բարութիւնս որպէս ուրախ եղես հարբքն

10 քովք , եթէ լուիցես ձայնի Տեառն Աստուծոյ քո , պահել եւ առնել զամենայն պատուիրանս նորա եւ զիրաւունս նորա եւ զգատաստանս նորա զզրեալս ի

¹ Եբբ. մի՛ լիցի ի ձեզ ² Եբբ. օրհնեսցէ զանձն
³ Եբբ. Խաղաղութիւն եղիցի ⁴ Եբբ. առ յաւելուլ զարեցութիւն ի ծարաւ ⁵ Եբբ. Տէր
⁶ Եբբ. որ առ յապալ , ⁷ Եբբ. Տեառն Աստուծոյ
⁸ Եբբ. էին բաժին ⁹ Եբբ. ի մատենիս յայտնիկ

¹⁰ Եբբ. զու եւ որդիք քո յամենայն ¹¹ Եբբ. զարձուցէ Տէր Աստուած քո զգերութիւն
¹² Եբբ. Տէր Աստուած քո ¹³ Եբբ. մինչեւ ի ծագս երկնից ¹⁴ Եբբ. պաւտ ¹⁵ Եւ , թշնամեաց

գրի օրինացս այսոցիկ , եթէ զարձցիս առ Տէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ եւ յամենայն անձնէ քումմէ :

11 Զի պատուիրանքս այս զոր ես պատուիրեմ քեզ այսօր , ոչ ¹ձանրարեան

12 ինչ է եւ ոչ Նոսի ի քէն : Ոչ յերկինս թէ ասիցես , Ո՞վ ելանիցէ մեզ յերկինս եւ առնուցու զնա , եւ լուիցուք եւ ա-

13 րացուք . եւ ոչ յայնկոյս ծովու է , թէ ասիցես , Ո՞վ անցանիցէ յայնկոյս ծովու եւ առնուցու մեզ զնա , եւ լսելի արաս-

14 ցէ մեզ եւ արասցուք . Մերձ է բանն առ քեզ յոյժ , ի բերան քո եւ ի սրտի քում , ²եւ ի ձեռս քո է՝՝ առնել զնա :

15 Ահաւասիկ ետու այսօր առաջի երեսաց քոց ³զկեանս եւ զմահ՝ , զբարի եւ

16 զչար . եւ եթէ լուիցես պատուիրանաց Տեառն Աստուծոյ քո՝ զոր՝՝ ես պատուիրեմ քեզ այսօր սիրել զՏէր Աստուած քո , գնալ ի ճանապարհս նորա , պահել զիրաւունս եւ զպատուիրանս նորա եւ զգատաստանս նորա , ⁴կեցցէք եւ բազումք լինիցիք՝՝ . եւ օրհնեսցէ զքեզ Տէր Աստուած քո յամենայն երկրին յոր մտա-

17 նելոց ես ժառանգել զնա : եւ եթէ փոխեսցի սիրտ քո եւ ոչ լուիցես , եւ մտորիսի երկիր պագանիցես աստուածոց

18 օտարաց եւ պաշտեսցես զնոսա , Պատմեմ ⁵քեզ այսօր զի կորստեամբ կորնչիցիք , եւ ոչ լինիցիք բազմօրեայք ի վերայ երկրին յոր զուք անցանէք ընդ

19 Յորգանան ժառանգել զնա : Ունիմ ձեզ վկայ այսօր զերկինս եւ զերկիր . զկեանս եւ զմահ՝ ետու առաջի երեսաց ձերոց , զորհուրթիւնս եւ զանէժն . եւ ընտրեալ կեանս , զի կեցցես զու եւ զաւակ քո :

20 Սիրել զՏէր Աստուած քո եւ լսել ձայնի նորա եւ ունել զնմանէ , զի այն են կեանք քո եւ երկայնութիւն աւուրց քոց , ինակել յերկրին զոր երզուաւ Տէր հարցն քոց Աբբահամու եւ Իսահակայ եւ Յակոբայ՝ տալ նոցա :

ՔԼ . ԼԱ

1 Եւ ⁶կատարեաց Մովսէս խօսել զամենայն՝՝ զբանս զայսօրիկ առ ամենայն որ-
2 զիան Իսրայելի , եւ ասէ զնոսա , Հա-

րեւր եւ քսան ամաց եմ ես այսօր , եւ ոչ եւս կարեմ ելանել եւ մասնել . ⁷քանզի Տէր ասաց զիս թէ՛ ոչ անցանիցես ընդ այդ Յորգանան . Տէր Աստուած քո երթաց առաջի երեսաց քոց , նա սասակեսցէ զազգոս զայնտիկ յերեսաց քոց , եւ ժառանգեսցես զնոսա . եւ Յետու երթաց առաջի երեսաց քոց որպէս

4 խօսեցաւ Տէր : եւ արասցէ Տէր ընդ նոսա որպէս արար ընդ Ահնոն եւ ընդ Ուլզ , ընդ ²երկասին թագաւորան Ամովրոնացւոց ²որ էին յայնկոյս Յորգանանու՝ , եւ ընդ երկիր նոցա , սրբալ ³աստակեցաք ⁵զնոսա . եւ մասնեսցէ զնոսա Տէր առաջի ձեր , եւ արասջիր ընդ նոսա որպէս

6 պատուիրեցի ձեզ : Քաջ լեր եւ զօրացիր , մի երկնչիւր , եւ մի զանգիտեր , եւ մի զարհուրեսցիս յերեսաց նոցա . զի Տէր Աստուած քո ինքնին է որ երթացցէ յասաջագոյն ընդ ձեզ ի միջի ձերում . ոչ թողցէ զքեզ եւ ոչ ընդ վայր հարկանիցէ :

7 Եւ կոչեաց Մովսէս զՅետու եւ ասէ զնա առաջի ամենայն Իսրայելի , Քաջ լեր եւ զօրացիր . քանզի զու մասնելոց ես առաջի երեսաց ժողովրդեանդ այգորիկ յերկրին զոր երզուաւ Տէր հարցն ⁹ձերոց տալ նոցա , եւ զու ժառանգեսցու-

8 ցես զնոսա : եւ Տէր որ երթալոց է ¹⁰ընդ քեզ , ոչ թողցէ զքեզ եւ ոչ ընդ վայր հարցէ . մի երկնչիւր եւ մի զանգիտեր :

9 Եւ զրեաց Մովսէս ¹¹զամենայն բանս օրինացս այսոցիկ ի մասնելի՝՝ , եւ ետ զայն զբահանայան , ցորդիան Դեւեայ , որ բառնային զտապանակ ուխտին Տեառն ,

10 եւ ¹²ցմերս որդւոցն՝՝ Իսրայելի , եւ պատուիրեաց նոցա Մովսէս յաւուր յայնմիկ՝՝ եւ ասէ , Յետ եւթն մամ ժամանակի տարւոյն թողութեան ի տօնի տաղա-

երանգոցն զոյնագոյն նկարուց , նարոս
 պէսպէս նկարուց . այն էր պարանոցին
 31 նորա կապուտ” : Այսպէս կորիցն ամե-
 նայն թշնամիք քո , Տէր , եւ որք սիրի-
 ցենն զնա՞ իբրեւ զեւս արեգական ի զօ-
 րութեան նորա :
 32 Եւ զաղարեաց երկիրն ամս քառասուն :

ԳԼ . Զ

1 Եւ արարին որդիքն Իսրայելի չար ա-
 2 ռաջի Տեառն , եւ ետ զնոսա Տէր ի ձեռս
 2 Մաղիամու ամս եւթն : Եւ զօրացաւ
 ձեռն Մաղիամու ի վերայ Իսրայելի . եւ
 արարին իւրեանց որդիքն Իսրայելի յե-
 րեսաց Մաղիամու ³գոմս ի լերինս եւ
 3 յայցս եւ յամուրա” : Եւ լինէր իբրեւ վա-
 րէր այր Իսրայելի , ելանէր Մաղիամ եւ
 Ամաղէկ եւ որդիքն արեւելեաց , հա-
 4 սանէին ի վերայ նոցա . Եւ բնակէին
 առ նոքօք , եւ ապականէին զերես երկ-
 րին մինչեւ ի մուսա Գաղայ . եւ ոչ թու-
 զուին ¹⁰զաղար կենաց Իսրայելի , ոչխար
 5 եւ արջառ եւ էջ : Զի ինքեանք եւ խա-
 չինք իւրեանց կլանէին , եւ զվրանս իւր-
 եանց բերէին , եւ հասանէին իբրեւ զմա-
 րախ յազմութեամբ . եւ ոչ զայր թիւ-
 նոցա եւ ուղտոց իւրեանց . եւ հասա-
 նէին յերկիրն Իսրայելի սպականել զնա :
 6 Եւ ազքատացաւ Իսրայել յոյժ յերեսաց
 Մաղիամու . եւ ազազակեցին որդիքն
 Իսրայելի առ Տէր :
 7 Եւ եղեւ իբրեւ ազազակեցին որդիքն
 Իսրայելի առ Տէր վասն Մաղիամու ,
 8 Եւ առաքեաց Տէր այր մարգարէ առ որ-
 զինն Իսրայելի եւ ասէ ցնտաս , Այսպէս
 ասէ Տէր Աստուած Իսրայելի . Ես եմ
 որ հանի զձեզ յերկրէն Եգիպտացուց ,
 եւ կորզեցի զձեզ ի տանէ ծառայու-
 9 թեան , եւ վրկեցի զձեզ ի ձեռաց Ե-
 գիպտացուցն , եւ ի ձեռաց ամենայն նեղ-
 չաց ձերոց . եւ մերժեցի զնոսա յերեսաց
 10 ձերոց , եւ ետու ձեզ զերկիր նոցա . Եւ
 սասցի զձեզ , Ես եմ Տէր Աստուած ձեր ,
 մի երկնչիւք յաստուածոց Ամալիւհացոցն ,
 յորոց միջի զուք բնակեալ էք յերկրի
 նոցա . եւ ոչ լուարուք ձայնի իմում :
 11 Եւ եկն հրեշտակ Տեառն , եւ նստա-
 ընդ կազնեաւս որ էր յեփրա Յովատու ,
 հօր Եսրեայ , եւ Գեղէնն որզի նորա ձե-

¹ Եբբ . ի վաղուց ² Եբբ . անձն իմ ³ Եբբ . երի-
 վարաց , յարչաւանաց , յարչաւանաց զօրաւո-
 րաց նորա ⁴ Եբբ . յօգնականութիւն Տեառն
 ընդդէմ հզօրաց ⁵ Եբբ . յուռն
 գործաւորաց ⁶ Եբբ . նորա (27) Ի մէջ ոտից նորա
 կորացաւ , անկաւ , զգեանեցաւ . ի մէջ ոտից
 նորա կորացաւ անկաւ . ուր կորացաւն անդ
 անկաւ կործանեալ (28) Ընդ պատուհանն հայե-
 ցաւ , եւ գոլեաց մայրն Սիսարայ ընդ վանդակա-
 պատն , Զի” ⁸ Եբբ . Ոչ սպարէն զտաննն ,
 բաշխեն աւար , աղջիկ մի , նա՞ աղջկունս եր-
 կուս առ այր . կապուտ երանգոց՝ վասն Սիսա-
 րայ , կապուտ երանգոց նկարակերտ . երանգ
 երկուստեք նկարէն՝ պարանոցի նորա կապուտ

⁹ Եբբ . սորս ի լերինս եւ այլս եւ ամուրս ¹⁰ Եբբ .
 պաշար

ձէր ցորեան ի Կալ, փախել” յերեսաց
 12 Մազրիամու : Եւ երեւեցաւ նմա հրեշտակ
 Տեառն եւ ասէ ցնա, Տէր ընդ քեզ,
 13 հօր զօրութեամբ : Եւ ասէ ցնա Գե-
 դէնն, Յիս, Տէր իմ. եթէ էր Տէր ընդ
 մեզ, ընդէր դափն զմեզ ամենայն չա-
 րիքս այսօրիկ . եւ ո՞ւր են ամենայն
 սքանչելիքն նորա զոր պատմեցին մեզ
 հարքն մեր եւ ասեն, Ո՞չ ապաքէն յե-
 գիպտոսէ եհան զմեզ Տէր . եւ արդ ըն-
 14 ՚դէր մերժեաց զմեզ, եւ մասնեաց զմեզ
 ի ձեռս Մազրիամու : Եւ հայեցաւ ընդ
 նա “հրեշտակն Տեառն”, եւ ասէ ցնա,
 երթ զօրութեամբդ քով այդուիկ, եւ
 15 փրկեսցես զԵսրայէլ ի ձեռաց Մազրի-
 մու . ո՞չ աւասիկ ես առաքեցի զքեզ . եւ
 16 ասէ ցնա Գեդէնն, Յիս, Տէր, ի՞նչ փրկե-
 ցից զԵսրայէլ . եւ ահա հազարաւորն իմ
 խոնարհադոյն է ի մէջ Մանասէի, եւ
 17 ես կրտսեր եմ ի տան հօր իմոյ : Եւ աս-
 18 տէ ցնա, Տէր” ընդ քեզ, եւ հարցես
 զՄազրիամ իբրեւ զայր մի : Եւ ասէ Գե-
 19 դէնն, եթէ դո՞ւ հնորնս առաջի աչաց
 քոց, արասցես ինձ նշան եթէ “դու խօ-
 20 սեսցիս” ընդ իս : Մի գնասցես աստի
 մինչեւ եկից առ քեզ, եւ բերից զդո՞ւ
 իմ եւ եղից առաջի քո : Եւ ասէ, ես
 21 “եմ, եւ” նստայց ասա մինչեւ դարձցիս
 22 առ իս : Եւ եմուտ Գեդէնն եւ հասոյց
 ու զմի յայժեաց, եւ արդու մի պիւր
 բաղարջ . եւ զմիսն եզ ի վերայ խանի,
 եւ զարգանակն արկ ի պոյսն, եւ եհան
 23 առ նա ընդ կաղնեաւն եւ “երկիր եւ
 24 պառ” : Եւ ասէ ցնա հրեշտակն Տեառն,
 Առ զու զմիսզ եւ զհացդ բաղարջ, եւ
 25 զիր ի վերայ վիմին այնորիկ, եւ հեզ
 26 զարգանակն . եւ արար այնպէս : Եւ
 27 ձգեաց հրեշտակն Տեառն զձայր գաւա-
 զանին որ ի ձեռին իւրում, եւ հասոյց
 ի միսն եւ ի բաղարջն . եւ բորբոքեցաւ
 հուր ի վիմէ անտի, եւ եկեր զմիսն եւ
 28 զբաղարջն . եւ հրեշտակն Տեառն գնաց
 29 յաչաց նորա : Եւ ասեալ Գեդէնն եթէ
 30 հրեշտակն Տեառն է . եւ ասէ Գեդէնն,
 Ա՛, ա՛, Տէր, Տէր . զի տեսի զհրեշտակն
 31 Տեառն գէտ յանդիման : Եւ ասէ ցնա Տէր,
 Սաղազութիւն ընդ քեզ . մի՛ երկնչիր .
 ոչ մեռանիցիս :

24 Եւ շինեաց անդ Գեդէնն սեղան Տեառն,
 եւ կոչեաց զնա Սաղազութիւն Տեառն
 մինչեւ յայսօր . ⁹Եւ մինչդեռ ինքն ան-
 զէն էր” յեփրա հօր իւրոյ Եսրեայ :
 25 Եւ եղեւ ի զիշիրին յայնմիկ եւ ասէ
 ցնա Տէր, Առ դու քեզ զեղն պարարակ
 հօր քո, եւ զեզն երկրորդ զեւթնեմանս .
 եւ քակեսցես զսեղանն Բահաղու որ է
 հօր քո, եւ կոտորեսցես ⁹զանտան որ
 26 գնովաւ : Եւ շինեսցիս սեղան Տեառն
 Աստուծոյ ըում, ¹⁰որ երեւեցաւ քեզ ի
 զլուս լիբինն Մանովպայ, ի սեղուջ պա-
 տերազմին” . եւ ասցես զեզն զերկրորդ,
 եւ հանցես յողջակէզ փայտիւք ⁹անտա-
 27 ռին զոր կոտորեսցես : Եւ աս Գեդէնն
¹¹երկրտասան այր ի ծառայից իւրոց, եւ
 արար որպէս եւ խօսեցաւ ընդ նմա Տէր .
 եւ եղեւ իբրեւ երկեաւ ի տանէ հօր
 իւրոյ եւ յարմն քաղաքին առնել ի
 ստէ, արար զիշիրի :
 28 Եւ կանխեցին արք քաղաքին ընդ ա-
 ռուսոն, եւ անա կործանեալ սեղանն
 Բահաղու, եւ ⁹անտան որ գնովաւ՝ կո-
 տորեալ, եւ եզն պարարակ հանեալ ող-
 29 ջակէզ ի սեղանն շինեալ : Եւ ասեն այր
 ցընկեր իւր, Ո՞ արար զիւս զայս . եւ
 յուզէին եւ քննէին եւ ասէին թէ Գե-
 30 դէնն սրզի Յովասու արար զիրզ զայդ :
 31 Եւ ասեն արք քաղաքին ցՅովաս, Հան
 արտաքս զորդին քո եւ մեռցի . զի կոր-
 ձանեաց զսեղանն Բահաղու, եւ կոտո-
 32 րեաց ⁹զանտան որ գնովաւ : Եւ ասէ
 Յովաս ցարան ցյարուցեայս ի վերայ նո-
 րա, Դո՞ւք այժմ դատիցիք վասն Բա-
 հաղու, եւ կը դո՞ւք պարեպուցանիցէք
 զնա . որ ¹²վնասեաց նմա՞ մեռցի մին-
 չեւ ցառաւօտ . եթէ աստուած իցէ, ինքն
 ինչպիսեղէ զվրէժ անձին իւրոյ, զի կոր-
 33 ձանեցին զսեղան նորա : Եւ կոչեաց զնա
 յաւուր յայնմիկ Յերոբաազ, եւ ասէ,
 Դատաստան Բահաղու . զի կործանեաց
 զսեղան նորա :
 34 Եւ ամենայն Մազրիամ եւ Ամադէկ եւ
 ամենայն որդիքն արեւելեայց ժողովե-
 ցան ի միասին, եւ եկին բանակեցան ի
 35 հովիտան Յեզրայելի : Եւ Հողի Տեառն
¹³զօրացոյց զԳեդէնն”, եւ եհար փող եղ-
 ջերեաւն . եւ խրախոյս երարձ Աբիեզեր

¹ Եբբ. հնձանի փախուցանել, Կ-ձ, թարուցանել
² Եբբ. Տէր ³ Եբբ. ցնա Տէր, Չի ես եղէց ⁴ Եբբ.
 դու ես որ խօսիս ⁵ Եբբ. գ-լ-ս-տ ⁶ Եբբ.
 մատոյց ⁷ Եբբ. Աստուծոյ

⁸ Եբբ. եւ տակաւին անդ է ⁹ Եբբ. աշերա,
 (Դեւ Եղից ԼԳ. 13.) ¹⁰ Եբբ. ի գլուխ ամրոյս այ-
 սորիկ ըստ կարգի ¹¹ Եբբ. տան ¹² Եբբ.
 դատիցին վասն նորա ¹³ Եբբ. արկաւ գԳե-
 դէննիւ, -յոյն- պատեաց զնա իբրեւ հանդերձ

35 զկնի նորա : Եւ արձակեաց հրեշտակս ընդ ամենայն Մանասէ , եւ զոչեաց եւ նա զկնի նորա . եւ արձակեաց հրեշտակս յԱսեր եւ ի Ջարդղոն եւ ի Նեփթաղիմ , եւ ելին ընդ առջ Նորա :

36 Եւ ասէ Գեղէնն զԱստուած , եթէ փրկեացես ձեռամբ իմով զԲարայէյ որ- 37 պէս եւ խօսեցար , Անա գնեմ զգաթ մի ասուի ի կոյ . եթէ լինիցի անձրեւ ի վերայ զգաթուն միայն եւ ի վերայ ամենայն երկրի զամաքութիւն , զխօսացից եթէ փրկեցես ձեռամբ իմով զԲարա- 38 յէյ որպէս եւ խօսեցար , Եւ եղև այնպէս . եւ կանխեաց Գեղէնն ընդ առաւօտն ի վաղև անդր , եւ քամաց զգաթն , եւ էջ ցօղ ի զգաթէ անտի լի կոնքիս :

39 Ջրոյ : Եւ ասէ Գեղէնն զԱստուած , Ո՛ր բարկացի գատումն քս ինձ , եւ խօսեցայց զարձեայ միւսանգամ , եւ փորձեցի միւսանգամ զգաթուն . եւ եղիցի միւսանգամ զամաքութիւն ի վերայ զգաթուն միայնոյ , եւ ի վերայ ամենայն երկրի 40 եղիցի անձրեւ : Եւ արար Աստուած այնպէս ի զհիշերին յայնմիկ . եւ եղև ցամաքութիւն ի վերայ զգաթուն միայնոյ , եւ ի վերայ ամենայն երկրի եղև անձրեւ :

Գ Լ Ե

1 Եւ կանխեաց Յերորասոյ , նա ինքն է Գեղէնն , եւ ամենայն զօրն ընդ նմա , եւ բանակեցան առ աղբերն Արեգայ , եւ բանակն Մաղիամու 2 եւ Ամաղեկայ՝ էր նոցա ընդ հիւսիսոյ 3 ի Գարաաթիւմ որ ի 2 նովաի անդ : Եւ ասէ Տէր ցԳեղէնն , Բազում է զօրդ որ ընդ քեզ է , առ ի չմատնելոյ ինձ զՄաղիամ ի ձեռս զոցա . զուցէ պարծիցի ի վերայ իմ Խորայէյ եւ ա- 3 սիցէ , թէ Չեռն իմ փրկեաց զիս : Եւ ասէ ցնա Տէր , Սօսեաց յականջս ժողովրդեանդ , եւ ասացես , Ո՛ր ք 4 պատարտ իցէ՞ զարձցի . եւ զիմիցին՝ ի լեռնէն Գազատորու , եւ զարձան ի գօրուէն քսան եւ երկու հարթք , եւ մնա- 4 ցին տանն նազարն : Եւ ասէ Տէր ցԳեղէնն , Տակաւին բաղում է զօրդ . իջլ զգրսս ի ջուրն եւ փորձեցից քեզ զգոսս անդ . եւ եղիցի զօրմէ ասացից ցքեզ եթէ Դա երթից ընդ քեզ , նա երթիցէ ընդ քեզ . եւ զամենայն զօրմէ ա-

սացից թէ Դա մի երթիցէ ընդ քեզ , նա 5 մի երթիցէ ընդ քեզ : Եւ իջոց զզօրն ի ջուրն . եւ ասէ Տէր ցԳեղէնն , Ամե- նայն որ յափեցէ լեզուաւ իւրով ի ջրոյ անտի իբրև զչեռն , կացուցես զնոսս ուրոյն . եւ ամենայն որ անկցի ի վերայ ճակաց իւրոյ ըմպել , կացուցես զնոսս 6 ասանձինն : Եւ եղև թիւ ամենեցուն որ յափեցին ձեռամբ եւ լեզուով իւրեանց , երեք հարեւր այր . եւ մնացորդ ժողովրդեանն անկան ի վերայ ճակաց 7 իւրեանց ըմպել ջուր : Եւ ասէ Տէր ցԳեղէնն , Երեք հարեւր արամբոյ որ լափեցին զջուր՝ փրկեցից զձեզ , եւ ասց զՄաղիամ ի ձեռս քո . եւ ամենայն ժողովրդդ երթիցէ այր իւրաքանչիւր ի 8 տեղի իւր : Եւ ասին զպաշար ժողովրդեանն ի ձեռս իւրեանց , եւ զփողս նոցա եղջերեացս : Եւ զամենայն այր Իսրայիլի արձակեաց զայր ի բնակութիւն իւր , եւ զերեքհարեւր այրն եւեթ կալու . եւ բանակն Մաղիամու էին ի ներքոյ նորա ի նովիսան :

9 Եւ եղև ի զհիշերին յայնմիկ եւ ասէ ցնա Տէր , Արի էջ աստի վաղիտակի ի բանակն , զի մասնեցի զնա ի ձեռս քո : 10 Ապա թէ երկնչիցիս զու իջանել , էջ նախ գու եւ պատանեակդ քո Փարա ի բա- 11 նակն . եւ լուհես եթէ զինչ խօսիցին , եւ ապա զօրացին ձեռք քո , եւ իջես ի բանակն : Եւ էջ ինքն եւ պատանեակն իւր Փարա ընդ նմա ի մասն ինչ յիսնե- 12 ռորդաց բանակին : Եւ Մաղիամ եւ Ամաղէկ եւ ամենայն որդիքն արեւելեաց բանակեայ էին ի ծործորան իբրև զմարտիս բազմութեամբ . եւ ուղտուց նոցա ոչ զայր թիւ , այլ էին իբրև զաւազ առ 13 եղերը ծալու բաղմութեամբ : Եւ եմուտ Գեղէնն , եւ ահա այր պատմէր ընկերի իւրում երազ . Տեսի , ասէ , երազ , եւ ահա նկանակ զարեղէն հոյովեայ ի բանակս Մաղիամու , եւ եկն մինչև ի խորանն Մաղիամու , եւ անդ գնա եւ կործանեաց , եւ անկա խորանն վերուստ 14 ի վայր : Պատասխանի ետ ընկերն նորա եւ ասէ , Ո՛չ է այն՝ եթէ ոչ սուրն Գեղէննի որդոյ Յովատու ան Խորայիացւոյ . մասնեաց Տէր ի ձեռս նորա զՄաղիամ եւ զամենայն բանակս :

15 Եւ եղև իբրև յուաւ Գեղէնն զպատմութիւն երազոյն եւ զմեկնութիւն նորա , երկիր եպազ Տեաան , եւ զարձաւ

1 իբբ. ցօղ 2 իբբ. ուլ-տե 3 իբբ. աւ բլրոյն
 Մորէի 4 իբբ. վատարտ եւ երկուտ եցէ
 զարձցի եւ մեկնեցի

անդրէն ի բանակն Իսրայելի, եւ ասէ,
 Արիք, զի մասնեաց Տէր զբանակն Մա-
 16 զիամու ի ձեռս ¹մեր: Եւ բաժանեաց
 զերեք հարեւր այրն յերկս առաջս. եւ
 եւ զփողան եղջերեայս² ի ձեռս ամենե-
 17 ցունց, եւ ջանս ի մէջ սափորոցնս Եւ ա-
 սէ ցնոսա, Ընդ իս հայեալիք, եւ այն-
 պէս արասջիք. ահա ես մտանեմ ի մէջ
 բանակին, եւ եղիցի որպէս ես ասնի-
 18 ցեմ, նոյնպէս եւ զուք արասջիք: Եւ
 հարից ես զփողն եղջերեայ, եւ ամե-
 նեքեան որ ընդ իս էք³ հարջիք եւ զուք
 զփողան եղջերեայս, շուրջ զամենայն
 բանակաւն, եւ ասասջիք, Սուր Տեառն
 եւ Գեղէննի:
 19 Եւ եմուտ Գեղէնն եւ հարեւր այր ընդ
 նմա ի կողմն բանակին, ի սկզբան միջ-
 նոյ պահուն, ⁴միայն զարթուցանելով
 զարթուցին⁵ զպահաստանն, եւ հարին
 զփողան եղջերեայս, եւ ⁶թօթափելցին
 20 զսափորան որ ի ձեռս իւրեանց: Եւ հարին
 զփողան եղջերեայս երեքին առաջն, եւ
 խորտակեցին զսափորան, եւ առին ձա-
 խու ձեռամբք իւրեանց զջանն, եւ ա-
 ջու ձեռօք իւրեանց զփողան հարկանել,
 եւ աղազակեցին եւ ասեն, Սուր Տեառն
 21 եւ Գեղէննի: Եւ կայցին իւրաքանչիւր
 առանձինն շուրջ զբանակաւն. եւ ըն-
 թացաւ ամենայն բանակն, ⁷փող հա-
 22 ըին⁸ եւ փախեան: Եւ զոչեցին երեք-
 հարիւրեքին փողքն եղջերեայք. եւ եզ
 Տէր զսուր ան յնկեր իւր եւ յամենայն
 բանակն. եւ փախեաւ ամենայն բանակն
 մինչեւ ⁹ցօթախտատա, եւ մեւս զունցն
 մինչեւ¹⁰ ցորսն Արէլմաուրայ եւ ցՏարէթ,
 23 Եւ զոչեաց այր Իսրայելացի ի նեփ-
 թաղիւրայ եւ յԱտերայ եւ յամենայն Մա-
 24 նասէէ, եւ զհետ մտին Մազիամու: Եւ
 հրեշտակս արձակեաց Գեղէնն յամենայն
 ստնմանս Եփրեմայ, եւ ասէ, Իջէք յա-
 ռաջս Մազիամու, եւ կալարուք զկիրճս
 ջրոցն մինչեւ ցօթախտատայ եւ ցՅողղա-
 նան: Եւ զոչեաց ամենայն այր Եփրե-
 մի, եւ կալան իւրեանց զանցս ջրոցն
 25 մինչեւ ցօթախտատայ եւ ցՅողղանան: Եւ
 կալան զերկու իշխանան Մազիամու զՈւ-
 բեր եւ զԶեր. եւ սպանին զՈւբեր¹¹

Սուրորերա, եւ զԶեր սպանին ⁸յակեր-
 զերա, եւ հայածեցին զՄազիամ. եւ
 զլուխսն Ուբերայ եւ Զերայ բերին առ
 Գեղէնն յայնմ կողմանէ Յորդանանու:

ԳԼ Ը

1 Եւ ասեն ցԳեղէնն այր Եփրեմի, Զինչ
 է բանդ այդ զոր արարեր ընդ մեզ, զի
 ոչ կոչեցեր զմեզ յորժամ երթայիր պա-
 սերագմել ընդ Մազիամու. եւ վիճէին
 2 ընդ նմա սաստկազոյնս: Եւ ասէ ցնո-
 սա, Արդ զինչ ինչ արարի իբրեւ զձեզ.
¹ոչ ապաքէն լաւագոյն է ճոսաբազու-
 թիւնդ Եփրեմի քան զկուլթան Աբիեզե-
 3 րայ: Ի ձեռս ձեր մասնեաց ⁹Տէր զիշ-
 խանս Մազիամու զՈւբեր եւ զԶեր. եւ
 զինչ կարացի առնել իբրեւ զձեզ: Եւ
 ապա զազարեաց ոգի նոցա ի նմանէ ի
 խօսել նորա զբանս զայս:
 4 Եւ եկն Գեղէնն ի Յորդանան, եւ անց
 իւրն եւ երեք հարեւր արքն որ ընդ նմա
 5 պարտասեայք¹⁰ եւ քաղցեալք¹¹: Եւ ասէ
 ցարսն Սոկքովթայ, Տուք աւաղիկ հաց
 ի կերակուր զօրուս այսմիկ որ ընդ իս,
 զի քաղցեալ են. եւ ես պնդեցայց զհետ
 Զերէի եւ Սաղմանայ թագաւորացն Մա-
 6 զիամու: Եւ ասեն իշխանքն Սոկքով-
 թայ, Միթէ ձեռն Զերէի եւ Սաղմա-
 7 յորակամիդ քու՛մ: Եւ ասէ Գեղէնն, Ոչ
 այդպէս, այլ ի տալ Տեառն զԶերէի եւ
 զՍաղմանա ի ձեռս իմ, եւ ես ¹²քարչե-
 ցից զմարմինս ձեր փշովք անապատի եւ
 8 բորկոնիմաւ: Եւ կ' անտի ի Փանուէլ,
 եւ խօսեցաւ ընդ նոսա նոյնպէս. եւ պա-
 տասխանի արարին նմա արք Փանուե-
 9 յայ՝ զոր օրինակ արարին նմա պատաս-
 10 յանի արք Սոկքովթայ: Եւ խօսեցաւ
 Գեղէնն ընդ արս Փանուելի եւ ասէ, Ի
 դառնալ իմու՛մ այսքէն խաղաղութեամբ՝
 կործանեցից զաշտարակդ զայդ:
 11 Եւ Զերէի եւ Սաղմանա էին ի կար-
 կար, եւ լանակ նոցա ընդ նոսա, իբ-
 բեւ հնդեասան հազար այր ընդ ամե-
 նայն՝ որ մնացեալ էին յամենայն բանա-
 կէ որդուցն արեւելից. եւ անկեալք էին
 հարեւր եւ քսան հազար արանց սուսե-
 12 բանիւրիայ: Եւ կ' Գեղէնն ընդ ճանա-
 պարհս վրանորնակչացն յարեւելից նա-
 բաէի եւ հանդէպ նարեայ, եւ եհար զբա-

¹ Եբբ. ձեր ² Եբբ. այն ինչ կացուցեալ էր նոցա
³ Եբբ. խորտակեցին ⁴ Եբբ. եւ աղազակեցին ⁵ Եբբ.
 ցօթախտատա ի կողմն Սարերայ, մինչեւ 7 Ա. յա-
 իս. առ վիմն Որերայ

⁸ Ա. յաբ. առ հնձանին Զերայ ⁹ Եբբ. Աստուած
¹⁰ Եբբ. սակայն եւ հայածեին ¹¹ Եբբ. ճեծեցից

12 նախն , զի ահա էր բանական յանհոգս : Եւ
 13 փախեան Չերէէ եւ Սաղմանա , եւ պնդե-
 ցաւ զհետ նոցա . եւ ձերբակալ արար
 14 զերկուս թաղաւորսն Մաղխամու զՉե-
 րէէ եւ զՍաղմանա , եւ զամենայն բա-
 նակ նոցա զգրգեցոցց :

13 Եւ դարձաւ Գեղէնն սրբի Յովասու ի
 պատերազմէն ՚ի զառիւկայրէ անտի Արեւ-
 14 սայ՝ : Եւ կարաւ պատանեակ մի յարանց
 Սոկրովթայ , եւ եհարց զնա . եւ զրեաց
 առ ինքն զիշխանսն Սոկրովթայ եւ զծերս
 15 նորա եւ թանասուն եւ եւթն այր : Եւ
 եկին ²Գեղէնն առ իշխանսն՝ Սոկրով-
 թայ , եւ ասէցնտսա , Ահաւասիկ Չերէէ
 եւ Սաղմանա , վասն որոց նախասեցէր
 զիս եւ ասացէք , Միթէ ձեան Չերէի
 եւ Սաղմանայ այժմ ի ձեռքն քում իցէ ,
 զի տացուք հաց արանց քոց նրբերոց :

16 Եւ առ ³զիշխանսն եւ՝ զծերս քաղաքին
 եւ փուչս յանապատէ եւ զբորինինն ,
 եւ ⁴քարչեաց նոքօք զարսն Սոկրովթայ :

17 Եւ զաշտարակն Փանուելի կործանեաց ,
 եւ կոտորեաց զարս քաղաքին :

18 Եւ ասէց զՉերէէ եւ զՍաղմանա , ⁵Ո՛ր
 են՝ արքն զոյս կոտորեցէք ի թարովր :
 Եւ ասեն , Որպէս զու , նոյնպէս եւ
⁶նոքա նման քեզ , եւ զու նման նոցա ,

19 իբրեւ զտեսիլ որդւոց թաղաւորի : Եւ
 ասէ Գեղէնն , Եզբարք իմ եւ որդիք մօր
 իմոյ էին . ³եւ երգուաւ նոցա եւ ասէ ,
 Կենդանի է Տէր , եթէ կենդանի պահեալ
 20 էր ձեր գնոտս , ոչ սպանանէի զձեզ : Եւ
 ասէց յեթիւր ցանդրանիկ իւր , Արի սարան
 զգոտս . եւ ոչ եհան պատանեակն զտուր

21 իւր զի երկեաւ , քանզի մանակ էր : Եւ
 տսեն Չերէէ եւ Սաղմանա , Արի եւ զու
 քեզէն պատահեա մեզ , զի ըստ ասն եւ
 զօրութիւն իւր . եւ յարեաւ Գեղէնն եւ
 սպան զՉերէէ եւ զՍաղմանա , եւ առ զմա-
 նեակսն ի սարանոցաց ուղտուց նոցա :

22 Եւ ասեն այր Իսրայելի ցեղեղէնն , Իշ-
 խեա մեզ զու եւ որպի քո , եւ որպի որդ-
 ւոց քո , զի փրկեցեր զմեզ ի ձեռաց
 23 Մաղխամու : Եւ ասէցնտսա Գեղէնն ,
 Ոչ իշխեցից ես ձեզ , եւ ոչ իշխեացէ ձեզ
 որպի իմ . այլ Տէր իշխեացէ ձեզ :

24 Եւ ասէցնտսա Գեղէնն , Խնդրեցից
 ի ձէնջ հացուածս ինչ , եւ տուք ինձ տս
 այր զինզ մի յաւարէ անտի . զի զինդք

1 տակիք էին նոցա , քանզի Իսրայելացիք
 25 էին : Եւ ասեն , Տայով տացուք . եւ տա-
 րածեցին ⁷զհանդերձս նորա՝ , եւ ընկե-
 ցին անդր այր իւրաքանչիւր զզինդս
 26 ⁸սակիս զաւարի խորոյ : Եւ եզեւ կշիւս
 զնպայն ոսկեաց զոր խնդրեաց՝ հազար
 եւ եւթն հարեւր սիկղ ոսկու , թող
 զչունչանունն եւ զմեհեւանդս եւ ⁸զպատ-
 կակալս եւ զծիրանիս , եւ որ ինչ ի թա-
 զաւորսն՝ Մաղխամու . եւ թող զմա-
 նեակս ոսկիս պարանոցաց ուղտուց նո-
 27 ցա : Եւ արար զայն Գեղէնն յեփուզ , եւ
 հաստատեաց զայն ի քաղաքի իւրում
 յեփրա . եւ պտակեցաւ ամենայն Իսրա-
 յէլ զկնի նորա անդր , եւ եզեւ Գեղէն-
 նի եւ ասն նորա ի զայթապգութիւն :

28 Եւ վանեցաւ Մաղխամ առաջի որդւոցն
 Իսրայելի եւ ոչ եւս յաւելին տարածնալ
 զզրութս իւրեանց . եւ զազարեաց երկիրն
 ամս քառասուն յաւուրս Գեղէննի :

29 Եւ զնաց Յերոբոամ սրբի Յովասու ,
 30 եւ յնակեաց ի տան իւրում : Եւ Գեղէն-
 նի էին եւ թանասուն որդիք եղեալք յե-
 րանայ նորա . զի կանայք բազումք էին
 31 նորա . եւ հարձ նորա որ ի Սիկիմայ՝
 ծնաւ նմա եւ նա որպի , եւ եզ անուն նմա
 32 Արիմելէք : Եւ մեռաւ Գեղէնն սրբի Յո-
 վասու ի բարւօք ձերութեան , եւ թա-
 զեցաւ ի գերեզմանի Յովասու հօր իւ-
 րոյ յեփրա հօրն Եսրեայ :

33 Եւ եզեւ իբրեւ մեռաւ Գեղէնն , դար-
 ձան որդիքն Իսրայելի եւ պտակեցան
 զհետ Բահայիմայն . եւ եկին զուխտ
 իւրեանց ընդ Բահայուուն Բերթիթայ , լի-
 34 նել նոցա յատուած : Եւ ոչ յիշե-
 ցին որդիքն Իսրայելի զՏէր Աստուած
 իւրեանց որ փրկեաց զնոտս յամենայն
 35 թշնամեաց իւրեանց չօրջանակի : Եւ ոչ
 արարին ողորմութիւն ընդ տանն Յերո-
 բոամայ , որ նա ինքն է Գեղէնն , բա-
 ամենայն բարութեանն զոր արար ընդ
 Իսրայելի :

Գ Լ Թ

1 Եւ զնաց Արիմելէք սրբի Յերոբոամայ
 ի Սիկիմ առ եզբարս մօր իւրոյ , եւ խօ-
 սեցաւ ընդ նոտս եւ ընդ ամենայն աղ-
 զատածի տան հօր մօր իւրոյ եւ ասէ ,
 2 Խօսեցարուք յականջս ամենայն սարանց
 Սիկիմացւոց . Ո՞ր լու իցէ ձեզ , իշխել
 ձեզ եւ թանասունս արանց ամենայն որդ-

¹ Կա՛ւ , յառաջ քան զիս արեւու ² Եբբ . առ արսն
³ Եբբ . պիւնի ⁴ Եբբ . իսրայելի ⁵ Եբբ . Որ-
 պիս ⁶ որ էին ⁶ Եբբ . նոքա . իւրաքանչիւր

⁷ Եբբ . հանդերձ ⁸ Եբբ . զծիրանիս որ ի զերայ
 թաղաւորացն

ւոցն Յերորասաղայ, եթէ տիրել ձեզ առն
 միաջ . եւ յիւնցէք զի սակր ձեր եւ մար-
 3 մին ձեր եմ ես : Եւ խօսեցան գնմանէ
 եղբարք մօր նորա յականջն ամնայն ա-
 բանց Աիկիմացւոց զամնայն բանս զայ-
 ստօիկ . եւ միտեցաւ սիրտ նոցա զկնի
 Արիմեիքայ , զի ասացին թէ Եղբարք
 4 մեր է : Եւ ետուն նմա եւ թանասուն ար-
 ծաթոյ ի տանէ Բանազու Բերիթայ ՚ուխ-
 տին , եւ վարձեցաւ Նոքօք Արիմեիք
 արս սրիկայս եւ զարձարեցուցիչս , եւ
 5 գնացին զհնանորա Եւ եմուտ ի տուն հօր
 իւրոյ յեփրա , եւ կոտորեաց զեղբարս իւր
 զորդին Յերսրասաղայ արս եւ թանասուն ,
 ի վերայ վիմի միայ . եւ մնաց Յոթաթամ որդի
 Յերսրասաղայ կրտսեր , քանզի թագեաւ :
 6 Եւ ժողովեցան ամնայն արք Աիկիմացւոց
 եւ ամնայն տունն Մասգունայ , եւ չոգան
 թագաւորեցուցին զԱրիմեիք ի թագա-
 ւոր՝ առ կազնեա .² կոտոցն որ ի Աիկիմա :
 7 Եւ ազգ եղև Յովաթամայ , ել գնաց
 եւ եկաց ի վերայ գլխոյ լերինն ի Գա-
 բիզին . ամբարձ զձայն իւր եւ ՚Կրաց ,
 եւ ասէ ցնոսա , Լուարուք ինձ , արք
 Աիկիմացւոց , եւ լուիցէ ձեզ Աստուած :
 8 Գնալով գնացին ծառք օծանել խրեանց
 թագաւոր , եւ ասն ցձիթենին , թա-
 9 գաւորեա ի վերայ մեր : Եւ ասէ ցնոսա
 ձիթենին , Թողլց զարարասութիւն իմ
 10 մարդիկ՝ , եւ երթայցեմ ի յինել ծառոց : Եւ
 ասն ծառքն ցլի զենին , Եկ թագաւորեա
 11 ի վերայ մեր : Եւ ասէ ցնոսա թզենին ,
 Թողեալ զբազդասութիւն իմ եւ զրերս
 բարութեան ինոյ , եւ երթայցեմ ի յինն
 12 լինել փայտից : Եւ ասն ծառքն ցորթ ,
 13 Եկ թագաւորեա ի վերայ մեր : Եւ ասէ
 ցնոսա ոյթ , Թողեալ զգլխի իմ ՚Եւ զու-
 բախութիւն Աստուծոյ եւ մարդկան , եւ
 14 երթայցեմ ի յինն լինել փայտից : Եւ ա-
 սն ծառքն ցրմնիկ , Եկ թագաւորեա ի
 15 վերայ մեր : Եւ ասէ զմնիկ ցծառս , Թէ
 արդարեւ օծանիցէք զիս թագաւորել ի
 վերայ ձեր , եկալք ծածկեցարուք ընդ
 հալանեա խնով , եթէ ոչ , ելանիցէ հուր
 ի զմնիկ աստի , եւ կերիցէ զեղեւնա-
 16 փայտս Լիբանանու : Եւ արգ եթէ ճշմար-
 տութեամբ եւ բովանդակութեամբ ա-
 բարէք եւ թագաւորեցուցէք զԱրիմե-

իւք , եւ ՚Թէ որպէս՝ արարէք ընդ Յե-
 ռորասաղ եւ ընդ տուն նորա , եւ եթէ
 ըստ հատուցման ձեռն նորա արարէք
 17 նմա , Որպէս ետ սրատերազմ հայր իմ
 փոխանակ ձեր , եւ ընկէց զանձն իւր
 յասաջ , եւ ապրեցոյց զձեզ ի ձեռաց
 18 Մագրիամու , Եւ զուք յարեայք ի վերայ
 տան հօր իմոյ այսօր , եւ կոտորեցէք
 զորդիս նորա , արս եւ թանասուն ի վե-
 րայ վիմի միոյ , եւ թագաւորեցուցէք
 զԱրիմեիք զորդի ազալնոյ նորա ի վե-
 րայ արանց Աիկիմացւոց , զի եղբարք ձեր
 19 է . Եթէ ճշմարտութեամբ եւ բովանդա-
 կութեամբ արարէք ընդ Յերսրասաղայ եւ
 ընդ տան նորա յաւուրս յայսմիկ , ՚Յօրձ-
 նեսլիք զուք եւ՝ ուրախ լիջիք յԱբիմե-
 20 լէք , եւ ուրախ լիցի եւ նա ի ձեզ . Ա-
 սցա թէ ոչ , ելցէ հուր յԱրիմեիքայ եւ
 կերիցէ զարս Աիկիմացւոց , եւ զտունն
 Մասգունայ .⁶ սպա թէ ոչ ,՝ ելցէ հուր
 յարանց Աիկիմացւոց եւ ի տանն Մասգու-
 21 նայ եւ կերիցէ զԱրիմեիք : Եւ վախ-
 եաւ Յովաթամ եւ զկրծաւ , եւ գնաց ընդ
 ճանապարհն ի Բերա , եւ բնակեաց անդ
 յերեսաց Արիմեիքայ եղբոր իւրոյ :
 22 Եւ ի յիսեաց Արիմեիքայ ի վերայ Խարա-
 23 յելի տան երիս : Եւ առաքեաց Աստուած
 սցի չար ի մէջ Արիմեիքայ եւ ի մէջ ա-
 բանց Աիկիմացւոց , եւ ՚արհամարհեցին
 արք Աիկիմացւոց զտունն Արիմեիքայ՝
 24 Աձեղ ի վերայ նորա զանիրաւութիւն
 եւ թանասնից որբւոցն Յերսրասաղայ , եւ
 հատուցանել զարին նոցա ի վերայ Ա-
 րիմեիքայ եղբորն իւրեանց որ կոտու-
 րեաց ցնոսա , եւ ի վերայ արանց Աիկիմաց-
 ւոց՝ զի զօրացուցին զձեռս նորա կատարել
 25 զեղբարս իւր : Եւ զօրծեցին նմա զա-
 բան արք Աիկիմացւոց ի վերայ գլխոց
 լերանց , եւ յայնչապէս զամնեակն որ
 անցանէին առ Նոքօք ընդ ճանապարհն .
 26 Եւ ազգ եղև Արիմեիքայ : Եւ եկն Գաազ
 որդի Արեղզայ եւ եղբարք նորա . եւ
 անցին ի Աիկիմ , եւ վատահ եղեն ի նա
 27 արք Աիկիմացւոց . Եւ ելին յանդաս-
 տանն եւ կլի եցին զայդ իսրեանց , եւ
 հարին հնձանս , եւ արարին սարանցիկս ,
 եւ մտին ի տուն աստուածոցն իւրեանց .
 եւ կերան եւ արբին եւ անիծին զԱրի-
 28 մեիք : Եւ ասէ Գաազ որդի Արեղզայ ,
 Ո՞ է Արիմեիք , եւ ո՞ է ՚Որպէն Արե-

¹ Եբբ. Գ-Լ-Է ² Եբբ. Կոթսղեն. Կ-Է. պահակին
³ Եբբ. աղաղակեաց ⁴ Եբբ. որով պատուեն յիս
 զԱստուած եւ զմարդիկ

⁵ Եբբ. եթէ բարեա ⁶ Եբբ. եւ ⁷ Եբբ. գործեցին
 գաւարք Աիկիմացւոց Արիմեիքայ ⁸ Եբբ. Արեբեմ

մայ՝ զի ծառայեմք նմա . ո՞չ նա է որ-
 29 գի Յերորատայ, և Զերուզ ¹ճառայ խւր՝
 ոստիկան նորա , ²Նանդերձ արամբ՝՝ Ե-
 մովրայ հօր Սիբեմայ , և զի է զի ծա-
 30 ռայիցեմք նմա : Եւ ս՝ ապր զժողովուրդս
 դայս ի ձեռս իմ , և ժողովի զԱրիմե-
 31 լէք . և սաէի ցԱրիմելէր , Բազմայո
 զգօրս քօ ևւ կլ ինձ :
 32 Եւ լուսա Զերուզ իշխան քաղաքին
 գրանս Գառայ որդւոյ Այեզգայ , և
 33 արամեոցաւ բարկութեամբ . ևւ առա-
 քեաց սա Արիմելէք հրեշտակս ³պատա-
 բազօք ևւ սաէ , Ահաւաթիկ Գառայ որ-
 գի Արեզգայ ևւ եզրարք նորա եկին ի
 Սիկիմ , ևւ պաշարեն զքաղաքս ի վերայ
 34 քօնդաստանին . Եւ եզիցի ընդ առաւօտն
 ի ծագել արեգականն՝ կանխեցես ևւ
 35 հաօցես զքաղաքսս . ևւ աճա սա ևւ զօրս
 որ ընդ սմա է ելանէ սա քեզ . ևւ արաւ-
 ցես ընդ սա որպէս ինչ դաջէ ձեռն քօ :
 36 Եւ յարեաւ Արիմելէր ևւ ամենայն զօրն
 որ ընդ նմա զջայզ , ևւ մտին ի զարմա
 37 զԱրիմեա չորք առաջք : Եւ եղև ⁴ընդ
 առաւօտն՝ կլ Գառայ որդի Արեզգայ ևւ
 38 եկաց ի մուտս գրան քաղաքին . ևւ յա-
 բեաւ Արիմելէք ևւ ամենայն զօրն որ
 39 ընդ նմա ի զարմացին : Եւ ետես Գառայ
 որդի Արեզգայ զզօրն , ևւ սաէ ցԶերուզ ,
 40 Ահաւաթիկ զօր իջանն , ի գլխս լերանցն .
 ևւ սաէ ցնա Զերուզ , Զասաւր լերանցն
 41 սեռանեսս գու իրբև զմարդիկ : Եւ յա-
 42 ւել ևւս խոսի Գառայ ևւ սաէ , Ահաւա-
 43 սիկ զօր իջանն ⁵ընդ ծովակողմն՝ սո
 պորտով երկրին , ևւ առաջ մի կլ ընդ
 44 ճանապարհ կազմեցն Վրասնոցայ : Եւ
 45 սաէ ցնա Զերուզ , Արց սւր է բերան
 քօ որ սաէր , թէ Ո՞վ է Արիմելէք , զի
 46 ծառայեցուք նմա . ո՞չ աւանիկ այն զօր
 է զօր դուն սղարակիր . արց կլ ևւ սաւր
 47 ընդ նմա պատերազմ : Եւ կլ Գառայ ա-
 48 սաջի արանցն Սիկիմացոց , ևւ մար-
 49 տեաւ ընդ Արիմելեքայ : Եւ հալածեաց
 զնա Արիմելէք . ևւ փոխեաւ յերեսայ
 50 նորա , ևւ սնկան վիրաւորք յազուժք
 51 մինչև երրուես քաղաքին : Եւ նստաւ Ա-
 52 րիմելէք յԱրիմ , ևւ եհան Զերուզ զԳառայ
 ևւ զեզրարս նորա զի մի բնակեացին ի
 53 Սիկիմ : Եւ եղև ի վաղիս անդր ևւ կլ

ժողովուրդն ի զայն , ևւ ազ եղև Ա-
 43 րիմելեքայ . Եւ սո զզօրն ևւ բամանեաց
 յերիս սասլս , ևւ եմուս նովա ի զա-
 44 րան . ևւ ետես , ևւ աճա զօր կլանէր ի
 քաղաքէ անտի . ևւ յարեաւ ի վերայ
 45 նոցա ևւ եհար գնաս : Եւ Արիմելէք ևւ
 զուճօքն որ ընդ նմա՝ ճակատեցան ևւ
 կացին սա գրան քաղաքին . ևւ երկու
 զուճօքն սփռեցան ի վերայ ամենեցուն
 որ յանդատանն էին , ևւ հարին գնու-
 46 սա : Եւ Արիմելէք պատերազմէր ընդ
 քաղաքին զօրն զայն ողջոյն , ևւ սաին
 47 զքաղաքն , ևւ զժողովուրդն որ ի նմա
 կոտորեցին , ևւ զքաղաքն կործանեցին
 ևւ սղարս վարեցին :
 48 Եւ լուան ամենայն արք աշտարակին
 Սիկիմացոց , ևւ եկին յամրոց տանն
 49 Բեթէլ Բեթիթայ : Եւ ազ եղև Արի-
 մելեքայ եթէ ժողովեցան ամենայն արք
 50 աշտարակին Սիկիմացոց : Եւ կլ Արի-
 մելէք ի լեռանն Սիկիմն , ինքն ևւ ամե-
 51 նայն զօրն որ ընդ նմա , ևւ սո Արիմե-
 լէք սաղար ի ձեռն խւր ևւ կոտորեաց
 52 բնն մի փայտի , ևւ սա զայն ևւ կլ
 զայն ի վերայ սուսոց խւրոց , ևւ սաէ զզօրն
 խւր , Զինչ տեսնիցէք յիս զօր ամնի-
 53 ցեմ , արաջիք ևւ զուք վաղվազակի
 43 իրբև զիս : Կոտորեցին ևւ նօքա խւրա-
 քանչիւր որ ամենեքին ⁶բնն մի փայտ ,
 ևւ բարձին ևւ գնացին զնա Արիմելե-
 54 քայ . ևւ եղին ⁷ի վերայ ամրոցին՝ , ևւ
 այրեցին ի վերայ նոցա զամրոցն հրով .
 ևւ մնան ամենայն արք աշտարակին
 Սիկիմացոց իրբև հազար մի՝ ընդ այր
 ևւ ընդ կին :
 50 Եւ չոյաւ Արիմելէք ի Թերէս , ևւ
 51 նստաւ չորջ գնովա , ևւ սո զնա : Եւ
 աշտարակ մի էր հօր ի մէջ քաղաքին ,
 ևւ փոխեան անդր ամենայն արք ևւ կա-
 նայք ևւ ամենայն գլխաւորք քաղաքին ,
 ևւ փոխեցին ընդդէմ իւրեանց , ևւ կլին
 52 ի տանիս աշտարակին : Եւ եկն Արիմե-
 լէք մինչև յաշտարակն , ևւ մարտեաւ
 53 ընդ նմա , ևւ մերձեցաւ Արիմելէք ի
 54 զուրս աշտարակին . Եւ ընկէց կին մի
 րեկոր երկանի ի վերայ գլխոց նորա , ևւ
 55 մանրեաց զգազաթն Արիմելեքայ : Եւ
 ազազակեաց վաղվազակի սո պատա-
 նեակն կապարճակիր խւր ևւ սաէ ցնա ,
 56 Մերկեա գուր քօ ևւ սպան գիս . գու-

¹Յէբր. զաւանդիկ ի ծածուկ ²Յէբր. ճառայեցէք արանց ³Յէբր. ⁴Յէբր. աս ⁵Յէբր. զամրոցաւն ⁶Յէբր. յայրէ զնա հրով

ցէ ամիցեն թէ կին սպան զնա : Եւ խո-
ցեաց զնա պատանին իւր , եւ մեռաւ :
55 Արիմելէք : Եւ ետես այր Իւրայելացի
թէ մեռաւ Արիմելէք , գնացին այր իւ-
րաքանչիւր ի տեղի իւր :
56 Եւ զարձոյց Աստուած զչարին Արի-
մելէքայ ի զուլս իւր զոր արար հօր իւ-
րում կոտորելով զեւթանասուն եղբարսն :
57 Իւր : Եւ զամենայն չարսն արանց Սի-
կիմացոց զարձոյց Աստուած ի գուլս
նոցա , եւ եկին ի վերայ նոցա անէձքն
Յովաթամայ որդւոյ Յերորաազայ :

ԳԼ . Ժ

1 Եւ յարեաւ յետ Արիմելէքայ վրկել զԻս-
րայել թովղա որդի Փուայ , ¹ որդի հօրեղ-
բօր Իսրա՛մ , այր յիսաքարայ . եւ նա բնա-
2 կէր ² ի Սամարիս , ի լեբնն Եփրեմօյ : Եւ
զասեաց զԻսրայել ամս քսան եւ երիս ,
եւ մեռաւ եւ թաղեցաւ ³ ի Սամարիս :
3 Եւ յարեաւ յետ նորա Յայիր Գաղաա-
զացի , եւ զասեաց զԻսրայել ամս քսան
4 եւ երկուս : Եւ եզեն նորա որդիք երեւ-
սուեն ³ եւ երկու՛ , որ հեծանէին յերեսուն
³ եւ երկու՛ յովանակս . եւ երեսուն ³ եւ
երկու՛ քաղաքք նոցա . եւ ⁴ կոչեաց զնու-
սու ասան Յայիրայ մինչեւ ջայսօր , որ
5 են ի Գաղաազ , եւ մեռաւ Յայիր եւ
թաղեցաւ ի Կամօնիս :

6 Եւ յաւելին որդիքն Իւրայելի սունել
չար առաջի Տեսան , եւ պաշտեցին զԻս-
հաղիման եւ զԱստարոսիմն , եւ զաս-
տուածս Ասորոց եւ զաստուածս Սիւր-
նայ եւ զաստուածս Մովարայ եւ զաս-
տուածս որդոցն Ամոնայ եւ զաստուածս
այլազեկացն . եւ թողին զՏէր եւ ոչ ծա-
7 ապեցին նմա : Եւ սրտմտեցաւ բարկու-
թեամբ Տէր Իւրայելի , եւ մտանեաց
զնոսա ի ձեռս այլազեկացն , եւ ի ձեռս
8 որդւոցն Ամոնայ : Եւ խախտեցին եւ
խորտակեցին զորդին Իւրայելի ի ժա-
մանակին յայնմիկ ամս ութուստան , զա-
մնայն Իւրայելացիս յայնկոյս Յորդա-
նանու , յերկրի Ամովրհացոցն ի Գա-
9 զաազ : Եւ անցին որդիքն Ամոնայ ընդ
Յորդանան ապ պատերազմ ընդ Յուդայ
եւ ընդ Բենիամինի , եւ ընդ տանն Եփրե-
մայ . եւ նեղեցան որդիքն Իւրայելի յայժ :
10 Եւ աղաղակեցին որդիքն Իւրայելի առ
Տէր եւ ասեն , Մեղաք քեզ , զի թողաք

զԱստուածդ մեր եւ պաշտեցաք զԻս-
11 հաղիման : Եւ ասէ Տէր ցորդին Իսրա-
յելի , Ո՛չ ապաքէն եզկուտայիք եւ Ա-
մովրհացիք եւ որդիք Ամոնայ ³ եւ Մո-
12 վաբ՛ եւ այլազցիք եւ Սիւրոնացիք եւ
Ամազէկ եւ ⁵ Բանան նեղեցին զձեզ ,
եւ աղաղակեցէք առ իս եւ վրկեցի զձեզ
13 ի ձեռաց նոցա : Եւ զուք թողէք զիս եւ
ծառայեցէք աստուածոց օտարաց . վասն
14 այնորիկ ոչ յաւելից վրկել զձեզ : Եր-
թայք աղաղակեցէք առ աստուածան զոր
ընարեցէք ձեզ , եւ նոքա վրկեսցեն
զձեզ ի ժամանակի նեղութեանց ձերոց :
15 Եւ ասեն որդիքն Իւրայելի ցՏէր , Մե-
ղաք , արա զու ընդ մեզ զամենայն որ
ինչ հաճոյ թուի առաջի քո . բայց , Տէր ,
միայն սարեցո՛ր զմեզ յաւուր յայսմիկ :
16 Եւ մերժեցին զաստուածան օտարոսիս
ի միջոց իւրեանց , եւ պաշտեցին ⁶ զՏէր
միայն . եւ ոչ հաշտեցաւ ընդ ժողո-
վրդեանն . եւ յողիս ապաստան եղեւ
յաշխատութեւն՝ Իւրայելի :
17 Եւ ելին որդիքն Ամոնայ եւ բանա-
կեցան ի Գաղաազ . եւ ելին որդիքն
Իւրայելի եւ բանակեցան ⁷ ի դիտանու-
18 զլին : Եւ ասեն իշխանք ժողովրդեանն
Գաղաազու այր ցընկեր իւր , Այր որ
սկիզբն սանիցէ պատերազմիւ ընդ որ-
դիան Ամոնայ , եղիցի զուլս ամենայն
բնակչացս Գաղաազու :

ԳԼ . ԺԱ

1 Եւ Յեփթայէ Գաղաազացի էր այր հզօր
զօրութեամբ , եւ նա որդի կնոջ պոռնկի .
2 եւ ծնաւ ⁸ Գաղաազու զՅեփթայէ : Եւ
ծնաւ կինն Գաղաազու նմա որդիս . եւ
հաստատեցան որդիք կնոջն , եւ մերժե-
ցին զՅեփթայէ , եւ ասեն ցնա , Ոչ
ժառանգեցես ի տան հօր մերոյ , զի
3 որդի կնոջ պոռնկի ես զու : Եւ փախ-
եաւ Յեփթայէ յերեսաց եղբարց իւրոց ,
եւ բնակեցաւ յերկրին ի Տովբ . եւ ժո-
ղովին առ Յեփթայէ արք որիկայք ,
եւ ելանէին ընդ նմա :
4 Եւ եղեւ յետ առուրց , եւ պատե-
րազմեցան որդիքն Ամոնայ ընդ Իւրայե-
5 լացիան : Եւ եղեւ յորժամ ետուն պա-
տերազմ որդիքն Ամոնայ ընդ Իւրայելի՛
չոզան ձերք Գաղաազու առնուլ զՅեփ-

¹ Եբբ. որդւոյ Մովղայ ² Եբբ. ի Սամիր ³ Եբբ. զուլս
զուլս ⁴ Եբբ. կոչեցին ⁵ Եբբ. զՏէր . եւ նեղեցաւ անձն
նորա ընդ տառապանս ⁷ Եբբ. ի Մափա , այս-
դէս եւ այլուր ⁸ Եբբ. Գաղաազ

6 թայէ յերկրէն Տոբբայ : Եւ ասնն յՅեփ-
թայէ , եկ եւ եզիցես մեզ ի զօրտալար ,
եւ տաղուք պատերազմ ընդ որդիան
7 Ամոնայ : Եւ ասէ Յեփթայէ զձերան Գա-
ղատու , Ո՞չ ապաքէն զուք ասեցէր
զիս , եւ հանէք ի ասնոյ Տօր խնդ , ¹Եւ
արձակեցէք զիս ի ձէնջ .” Եւ արդ զի²
8 եկիք առ իս յորժամ նեղեցայք , եւ
ասնն ծերքն Գաղատու զՅեփթայէ ,
³Ո՞չ այգոյէս է . այլ եկաք” առ քեզ , եւ
երթիցես ընդ մեզ , եւ տաղուք պա-
տերազմ ընդ որդիան Ամոնայ . եւ եզի-
ցես մեզ ի զլուխ ամենայն բնակչացս
9 Գաղատու : Եւ ասէ Յեփթայէ զձերան
Գաղատու , Եթէ գարձուցանիցէք զիս
պատերազմի ընդ որդիան Ամոնայ , եւ
մասնեացէ զնոս Տէր տապի իմ , ես
10 եզէց իշխան : Եւ ասնն ծերքն Գաղա-
տու զՅեփթայէ , Տէր կայցէ լսօզ ի
միջի մերում , եթէ ոչ ըստ բանիդ բում
11 Նոյնպէս եւ պատուք : Եւ զնաց Յեփ-
թայէ ընդ ձերան Գաղատու . եւ կա-
ցուցին զնա ժողովուրցն ի վերայ իւր-
եանց զլուխ եւ առաջնորդ . եւ իստե-
ցաւ Յեփթայէ զամենայն զբան իւր ա-
ռաջի Տեսան ի Կապիս :

12 Եւ տառքեաց Յեփթայէ հրեշտակս
առ թաղաւոր որդւոցն Ամոնայ եւ ասէ ,
Չի՞ կայ իմ եւ քո , զի եկեալ ես առ
13 իս սրատերազմի յերկրի իմում : Եւ ասէ
արքայ որդւոցն Ամոնայ զհրեշտակն
Յեփթայեայ , ³Ի՞նչէ՞ք սոս Իսրայելի զեր-
կիր իմ յեւանի իւրում յեզիպատս՞
յԱմոնայ մինչեւ զՅարոկ եւ մինչեւ
զՅորդանն . եւ արդ զարձո զնոս առ
իս խաղաղութեամբ ¹Եւ զնացից . եւ
14 զարձան հրեշտակքն առ Յեփթայէ” : Եւ
յաւել եւս Յեփթայէ տապրել հրեշտակս
15 առ արքայ որդւոցն Ամոնայ , Եւ ասէ
ցնա , Այսպէս ասէ Իսրայելի եւ” Յեփ-
թայէ . Աչ սոս Իսրայելի զերկիրն Մովա-
բայ եւ զերկիր որդւոցն Ամոնայ յեղա-
16 նել իւրեանց յեզիպատոս : Այլ զնայ
Իսրայելի ընդ անասական մինչեւ զձովն
17 Կարմիր , եւ եկն մինչեւ զԿաղէս . Եւ
առաքեաց Իսրայելի հրեշտակս առ ար-
քայ Եղոմայ եւ ասէ , Թող անցից ընդ
երկիր քո . եւ ոչ անասայ արքայն Եզու-
մայ , եւ առաքեաց առ արքայն Մովա-
բայ . եւ ոչ կամեցաւ . եւ նստու իւ-

18 յաղէլ ի Կաղէս : Եւ շրջեցաւ ընդ անա-
պան , եւ պատեցաւ զերկրան Եզոմայ
եւ զերկրան Մովաբայ . եւ եկն առ
արեւելիք երկիրն Մովաբայ , եւ բանա-
կեցաւ յայնիկոյ Ամոնայ , եւ ոչ մտին
ի սահման Մովաբու . քանզի Ամոնի
19 էր սահման Մովաբու : Եւ տառքեաց
Իսրայելի հրեշտակս առ Ահնոն արքայ
Ամոլիւնացոյ՝ թագաւոր Եսերանայ ¹Եւ
Ամոլիւնացոյ , եւ ասէ ցնա Իսրայելի ,
Թող անցից ընդ երկիր քո մինչեւ ցտե-
20 զի իմ : Եւ ոչ կամեցաւ Ահնոն զԻսրայելի
անցանել ընդ սահմանս իւր . եւ ժողով-
եաց Ահնոն զամենայն ժողովուրդ իւր ,
եւ բանակեցաւ յԱտա . եւ ես սրատե-
21 բազմ ընդ Իսրայելի : Եւ մասնեաց Տէր
Աստուած Իսրայելի զԱհնոն եւ զամե-
նայն ապրն նորա ի ձեռս Իսրայելի , եւ
եհար զնոս , եւ ժառանգեաց Իսրայելի
զերկիր Ամոլիւնացոյն բնակիւոյն յերկ-
22 ըին յայնմիկ : Եւ ժառանգեաց Իսրայելի
զամենայն սահման Ամոլիւնացոյն յԱ-
նոնայ մինչեւ զՅարոկ , եւ յանապատն
23 մինչեւ զՅորդանն : Եւ արդ Տէր Աս-
տուած Իսրայելի երարձ զԱմոլիւնացին
յիրեսաց ժողովրդեան իւրոյ Իսրայելի .
24 Եւ զնւ ժառանգիցես զնա : Ա՞չ տալ-
քէն զոր ժառանգեցոյց քեզ Քամուս
ստտածն քո՞ զայն ժառանգեցես , եւ
զամենայն զոր ժառանգեցոյց Տէր Աս-
տուած մեր յերեսոց ⁴ձերոց՞ զայն մեք
25 ժառանգեցաւք : Իսկ արդ՞ միթէ յաւ-
ինչ իցես զու քան զԲաղակ սոգի Աեպ-
փովրայ՞ զարքայն Մովաբու . միթէ
մալտիւ մարտեաւ ընդ Իսրայելի , կամ
պատերազմաւ պատերազմեցաւ ընդ նո-
26 սա , ի բնակին Իսրայելի յԵսերան եւ
ի գատերանորա , եւ յԱրայէր եւ ի գատերա
նորա , եւ յամենայն քաղաքս որ առ
եղբր ⁵Յորդանանու ամս երեք հարեւր
զի՞ է զի ոչ ⁶Թափեցին զնոս ի ժամա-
27 նակին յայնմիկ : Եւ ես ոչ ինչ մեղաց
քեզ , եւ զու ասննս ընդ իս հարու-
թիւն՝ ապ ընդ իս պատերազմ . զա-
տեացէ Տէր որ գատերոցն է այսօր ի մէջ
որդւոցն Իսրայելի եւ ի մէջ որդւոցն
28 Ամոնայ : Եւ ոչ անասայ արքայ որդւոցն
Ամոնայ բանիցն Յեփթայեայ զորս ա-
ռաքեաց առ նա :

29 Եւ եղև ի վերայ Յեփթայեայ Հոյի
Տեսան , եւ անց ընդ Գաղատայ եւ ընդ

¹Յեբբ. գ-լ-տ-ե ²Եբբ. Վասն այտորիկ զարձար
³Եբբ. Գանգի

⁴Եբբ. մերոց ⁵Եբբ. Առնոփայ ⁶Եբբ. թմոփեցեր

Մանասէ, եւ անց ընդ զիտանոցն Գաղատայ, եւ ի զիտանոցէն Գաղատայու
 30 յայնկոյս որդւոցն Ամոնայ: Եւ ուխտեաց Յեփթայէ ուխտ Տեառն եւ ստէ, Եթէ մասնելով մասնեացես զորդիսն Ամոնայ
 31 ի ձեռս իմ, Եւ եղիցի որ եղանելով եւ լանիցէ ի դրանց սան իմոյ ընդ առաջ իմ ի դառնայն իմում խաղաղութեամբ յորդւոցն Ամոնայ, եղիցի՞ զի մատուցից գնա
 32 Տեառն յողջակէզ: Եւ անց Յեփթայէ առ որդիսն Ամոնայ սրտերազմել ընդ նոսա.
 33 Եւ մասնեաց գնոսա Տէր ի ձեռս նորա: Եւ եհար գնոսա յԱրայէրայ մինչեւ ի մուսա Մէննիթայ, զսան զաղաքք, մինչեւ Յարաէլ այգեստանեայն, հարուածս մեծամեծս յոյժ. եւ լմանեցան որդիքն Ամոնայ յերեսաց որդւոցն Իարայելի:
 34 Եւ եկն Յեփթայէ ի Մասիա ի տուն իւր. եւ ահա զուստր իւր երանէր ընդ առաջ նորա թմբիօք եւ դարուք. եւ նա էր միսօր Կիրիելի նորա, եւ ոչ գոյր նորա բաց ի նմանէ ուստր կամ
 35 զուստր: Եւ եղև իրբև ետես գնա, պատասեաց զճանդերծս իւր եւ ստէ, Վայ է ինձ, զուստր իմ, ընկձեցեր զիս, Զիսչընթակն եղեր ինձ: զի ես բացի զբերան իմ Վասն քո՞ առ Տէր, եւ ոչ
 36 կարացից դարձուցանել: Եւ առէ ցնա, Եթէ վասն իմ՞ բացեր զբերան քո առ Տէր, արա զիս որպէս ել ի բերանոյ քումմէ, փոխանակ զի արար քեզ Տէր փռէժինդրութիւն ի թէնամեաց քոց յորդւոցն Ամոնայ: Եւ առէ ցնայր իւր, Աւրա ինձ զբանս զուս. թողայր ինձ զերկուս ամիսս, եւ երթայց չրջեցայց ընդ բերնս եւ լացից զկուսութիւնս իմ ես
 38 Եւ ընկերք իմ: Եւ առէ ցնա, Երթ. եւ արձակեաց գնա զերկուս ամիսս. եւ չողաւ ինքն եւ ընկերք իւր, եւ ելաց
 39 զկուսութիւն իւր ի վերայ լերանց: Եւ եղև յետ կատարելոյ երկուց ամսոցն, դարձաւ առ հայր իւր. եւ արար նովաւ զուխան զոր ուխտեաց. եւ նա ոչ գիրապէր զայր: Եւ եղև ի կրօնս ի մէջ Իսրայելի Կողբայ զգուստրն Յեփթայեայ՝ աւուրց յաւուրս ժողովէին զատերք Իսրայելի ողբայ զգուստրն Յեփթայեայ Գաղատայացւոյ չորս աւուրս ի սարուջ:

ԳԼ. ԺԲ

1 Եւ ժողովեցան որդիքն Եփրեմի եւ եփին Ի Սեփեհա, եւ սանն ցՅեփթայէ, 2^{Զի՞} է զի կեր սրտերազմել ընդ որդիսն Ամոնայ, եւ զմեզ ոչ կոչեցեր երթալ ընդ քեզ. արք այրեացուք հրով
 2 զսուս քո ի վերայ քո: Եւ ստէ ցնոսա Յեփթայէ, 3^{Այր} զբկեալ էի ես եւ ժուղովուրք իմ, եւ որդիք Ամոնայ սառապեցու ցանէին զիս յոյժ: Եւ բողոք արկի առ ձեզ, եւ ոչ փրկեցէք զիս ի ձեռաց
 3 նոցա: Եւ տեսի զի ոչ ոք էր որ փրկէր, եւ եղի զամեն իմ ի ձեռին իմում, եւ անցի առ սրբիսն Ամոնայ, եւ մասնեաց գնոսա Տէր ի ձեռս իմ. եւ սրդ ընդէր ելէք առ իս յաւուր յայնմիկ մարտնչել
 4 ընդ իս: Եւ ժողովեաց Յեփթայէ զամենայն արս Գաղատայու եւ սայր պատերազմ ընդ Եփրեմի. եւ հարին արք Գաղատայու զԵփրեմ: 5^{Զի} ասացին սպարեալքն Եփրեմի, թէ Կուք Գաղատայացիք ի մէջ Եփրեմի եւ ի մէջ Մանասէի
 5 էք: Եւ կայաւ Գաղատայ զկիրճ Յորգանանու զԵփրեմի. եւ եղև իրբև աւացին սպարեալքն Եփրեմայ, թէ Թող
 6 անցուք, սանն ցնոսա արք Գաղատայու, Միթէ եւ զուք յԵփրեմէ՞ իցեք.
 7 Եւ սանն, 2^{Եւ} քո ի նոցանէ: Եւ սանն ցնոսա, 3^{Տուք} մեզ նշան ինչ, եւ ասացէք, Հասկ հասկ. եւ ոչ յաջողեցան խօսել այնպէս. եւ կայան եւ կոտորեցին գնոսա՞ յանցան Յորգանանու. եւ անկան ի ժամանակին յայնմիկ յԵփրեմէ քառասուն եւ երկու հազարք:
 8 Եւ զատեաց յետ նորա զԻսրայել 9^{Տես} րոն ի Բեթզեհեմէ: Եւ եղևն նորա ուստերք երեսուն, եւ զստերք երեսուն տուեալ արտաքս. եւ երեսուն կին ամ

1 ՅԵՔ. դաւաւ 2 ՅԵՔ. դու եւս եղեր ի նեղաց իմոց 3 ՅԵՔ. Հայր իմ,

4 ՅԵՔ. ի հելուսի 5 ՅԵՔ. Այր կուսայ եղէ ես եւ ժողովուրք իմ, եւ որդիքն Ամոնայ յոյժ 6 ՅԵՔ. բանցի ասացեալ էր նոցա թէ Փոխտեայք Եփրեմի էք գուք, Գաղատայացիք, ի մէջ Եփրեմի, ի մէջ Մանասէի 7 ՅԵՔ. անցից. սանն ցնա արք Գաղատայու, Միթէ եւ զուք յԵփրեմէ՞ իցես. եւ ստէ, Այ (6) Եւ սանն ցնա, Ասա, Երպպոյթթ, եւ նա ստեր, Միպպոյթթ, եւ ոչ յաջողէր խօսել այնպէս, եւ անէին գնա եւ կոտորէին գնա 8 ՅԵՔ. Աքեսան

ուստերաց իւրոց արտաքուստ. եւ գատ-
 10 եաց զԻտրայէլ ամս եւթն : Եւ մեռաւ.
 11 Եւսերոն եւ թաղեցաւ ի Բեթղէհէն :
 12 Եւ գատեաց յետ նորա զԻտրայէլ Երոն
 13 Զարուզոնացի ամս տասն : Եւ մեռաւ
 14 Երոն Զարուզոնացի եւ թաղեցաւ յԵզրիմ
 15 յերկրին Զարուզոնի :
 16 Եւ գատեաց յետ նորա զԻտրայէլ Ար-
 17 զոն որդի Ելիբայ Փարաթոնացի : Եւ
 18 եղեն նորա որդիք քառասուն , եւ երե-
 19 սուն որդիք որդւոցնորա , որ հեծանէին
 20 յեթմաստուն յաւանակս : Եւ գատեաց
 21 զԻտրայէլ ամս ութ : Եւ մեռաւ Արզոն
 22 որդի Ելիբայ Փարաթոնացի , եւ թա-
 23 ղեցաւ Զեփրաթոն , յերկրի Եփրեմայ
 24 ի լիբնին Ամազեկայ :

ԳԼ ԺԳ

1 Եւ յաւելին որդիքն Իտրայելի ամսել
 2 չար առաջի Տեառն . եւ մասնեաց գնասա
 3 Տէր ի ձեռս 3 այլազգեացն ամս քառասուն :
 4 Եւ եղև այր մի ի Սարայս ի ցեղէ
 5 Դանայ , եւ անուն նորա Մանովէ . եւ
 6 կին նորա ամուլ էր եւ ոչ ծնանէր : Եւ
 7 երեւեցաւ հրեշտակ Տեառն կնոջն , եւ
 8 ասէ ցնա , Ահա աղիկ գու ամուլ ես եւ
 9 ոչ է քո ծնեալ , եւ յղասցիս եւ ծնցիս
 10 որդի : Արդ զգոյշ լիբ , գուցէ ըմպիցես
 11 զինի եւ օղի , եւ մի՛ ուսիցես զամե-
 12 5 նայն անսուրբ . Զի ահա յղասցիս գու
 13 եւ ծնցիս որդի , եւ երկաթ մի՛ կըցէ ի
 14 զուլն նորա . զի ուխտաւոր Աստուծոյ
 15 եղիցի մանուկն անգատին յորովայնէ . եւ
 16 նա սկսցի փրկել զԻտրայէլ ի ձեռաց
 17 6 Փղշատացոցն : Եւ եմուտ կինն եւ ասէ
 18 ցայր իւր , եթէ Այր Աստուծոյ եկն առ
 19 իս , եւ սեսիլ նորա իրեւ գտեսիլ հրեշ-
 20 տակի Աստուծոյ՝ երեւելի յոյժ . եւ՝ հարցի
 21 ցնա թէ Ուստի ես , եւ զանուկս իւր ոչ
 22 7 պատմեաց ինձ : Եւ ասէ ցնա , Ահա
 23 յղասցիս գու եւ ծնցիս որդի . եւ արդ
 24 մի՛ ըմպիցես զինի եւ օղի , եւ մի՛ ու-
 25 սիցես զամենայն անսուրբ . զի ուխտա-
 26 ւոր Աստուծոյ կըլիցի մանուկն անգատին
 27 յորովայնէ մօր իւրոյ մինչև եւ ցօր մահ-
 28 անն իւրոյ :

8 Եւ աղաչեաց Մանովէ զՏէր եւ ասէ ,
 1 1Եբբ. Արեստն 2Եբբ. ի Փարաթոն 3Եբբ.
 Փղշատացոց , Թարթանէլ Թար զԷթ երթեւ 3առնին
 4առնին Փղշատցիք ի Էնթամարէնէն . իսկ յետ այնուի
 5որեղ՝ Այլազգիք , Ենթեղեւ ըստ 3առնին : 4առնի գործք
 6 ի Էնթալ Փղշատցիք , 4Եբբ. ամեկել 5Եբբ.
 6ահաւոր յոյժ . եւ ոչ

Յիս , Տէր . այցն Աստուծոյ զոր առա-
 քեցեր առ մեզ , եկեացէ զարձեալ առ-
 մեզ եւ լուսաւորեսցէ զմեզ , թէ զինչ
 9 արասցուք մանկանն որ ծնանիցի : Եւ
 10 լուսաւ Աստուած ձայնի Մանովէի , եւ եկն
 11 հրեշտակն Աստուծոյ մեւս անգամ առ
 12 կին նորա մինչդեռ նստէր յանդի . եւ
 13 Մանովէ այր նորա չէր առ նմա : Եւ
 14 փութացաւ կինն եւ ընթացաւ պատմեաց
 15 սուն իւրում եւ ասէ ցնա , Ահա երեւե-
 16 ցաւ ինձ այցն որ եկն առ իս յաւուր
 17 յայնմիկ : Եւ յարեաւ գնաց Մանովէ զճեա
 18 կնոջ իւրոյ , եւ եկն առ այցն եւ ասէ
 19 ցնա , Եթէ զ՞ու իցես այցն որ խօսեցար
 20 ընդ կնոջն . եւ ասէ հրեշտակն , Ես եմ
 21 Եւ ասէ Մանովէ , Արդ զայով չար բա-
 22 նին քոյոյ , զինչ լինիցին իրաւունք ման-
 23 կանն եւ զործք նորա : Եւ ասէ հրեշ-
 24 տակն Տեառն զՄանովէ , յամենայնէ զոր
 25 14 սացի կնոջ՝ զգոյշ լինիցի . Յամենայնէ
 15 որ կանէ յոյթոյ՝ մի՛ կըլիցէ , եւ զինի
 16 եւ օղի մի՛ արբցէ , եւ զամենայն ան-
 17 սուրբ մի՛ կերիցէ . յամենայնէ զոր պա-
 18 տուիրցի նմա՝ զգոյշ լինիցի :
 19 Եւ ասէ Մանովէ ցհրեշտակն , Թող
 20 բունագատեսցուք զքեզ , եւ արասցուք
 21 16 սուաջի քո ուլ մի յայճեաց : Եւ ասէ
 22 հրեշտակն Տեառն զՄանովէ , Եթէ բունա-
 23 գատեսցես զիս , ոչ կերայի ի հացից
 24 լոյց , եւ եթէ արասցես ողջակէլ՝ Տեառն
 25 մատուցես գնա . զի ոչ զիտաց Մանովէ
 26 17 թէ հրեշտակն Տեառն իցէ : Եւ ասէ Մա-
 27 նովէ ցհրեշտակն Տեառն , Զի՞ ոչ անուն
 28 է քեզ , զի յորժամ եկեսցէ լանն քո ,
 29 18 փառաւորեսցուք զքեզ : Եւ ասէ ցնա
 30 հրեշտակն Տեառն , Զի՞ հարցանես զան-
 31 19 ուանէ իմմէ , եւ նա է սքանչելի : Եւ
 32 ան Մանովէ գուլն այճեաց 6 զգոջն , եւ
 33 մատոյց ի վերայ Մամին՝ 7 Տեառն սքան-
 34 չկարարի . եւ Մանովէ եւ կին նորա
 35 20 հայէին : Եւ եղև ընդ ամբասնալ լու-
 36 ցոյն ի վերուստ ի սեզանոյն յերկինս՝
 37 ամբարձաւ հրեշտակն Տեառն լոյսով սե-
 38 զանոյն , եւ Մանովէ եւ կին նորա հա-
 39 յէին . եւ անկան ի վերայ երեսաց իւր-
 40 21 ենաց յերկիր : Եւ ոչ եւս յաւելի երեւել
 41 հրեշտակն Տեառն Մանովէի եւ կնոջ
 42 նորա . յայնժամ գիտաց Մանովէ թէ
 43 22 հրեշտակ Տեառն է : Եւ ասէ Մանովէ
 44 ցկինն իւր , Մահու մեռանիցիմք զի

6Եբբ. եւ զնձայն հացի 7Եբբ. Տեառն . եւ սքանչելիս ետ գործել

23 զԱստուած տեսաք : Եւ սաէ ցնա կին նորա , Եթէ կամեցեալ էր Տեառն սպանանել զմեզ , ոչ ընդունէր ի ձեռաց մերոց զողջակեգն եւ Վզոհն , եւ ոչ շուսաւորէր մեզ զայն ամենայն ընդ ժամանակս ժամանակս , եւ ոչ լսելի առնէր :

24 մեզ զայն : Եւ ծնաւ կինն որդի , եւ կոչեաց զանուն նորա Սամիսոն . եւ ածեաց մանուկն , եւ օրհնեաց զնա Տէր :

25 Եւ սկսաւ Հոգի Տեառն շրջել ընդ նմա ի բանակին Դանայ , ի մէջ Սարայայ եւ ի մէջ Եսթաուղայ :

ԳԼ ԺԳ

1 Եւ էջ Սամիսոն ի Թամնաթա , եւ ետես կին մի ի Թամնաթա ի գտերաոցն այլազգեաց , ³եւ հաճոյ թուեցաւ առաջի ²նորա . Եւ ել պատմեաց հօր իւրում եւ մօր իւրում եւ սաէ , կին մի ակտի ի Թամնաթա ի գտերաոցն այլազգեաց . եւ

3 արգ սաէք զնա ինձ կնաթեանս : Ասեն ցնա հայր եւ մայր իւր , Սիթէ ոչ գուցէ ի գտերաց եղբարց քոց եւ յամենայն ժողովրդեան իմում կին , զի երթիցես զու ամուսլ կին յայլազգեաց անթլփաւից . եւ սաէ Սամիսոն ցնայր իւր , Զնա ած ինձ , զի նա հաճոյ է աչաց ի-

4 մաց : Եւ հայր նորա եւ մայր նորա ոչ գիտային թէ ի Տեառնէ է , զի ⁴հատուցուան ինչորիցէ՝ նա յայլազգեացն . եւ ի ժամանակին յայնմիկ այլազգիքն արեւին Բարայելի :

5 Եւ էջ Սամիսոն եւ հայր նորա եւ մայր իւր ի Թամնաթա . եւ խոստրեցաւ Սամիսոն յազգեստանն Թամնաթայ , եւ աճա կորինն մի տօրեժուց զօչեաց ընդգէմ նորա : Եւ յաջողեցաւ ի վերայ նորա Հոգի Տեառն , եւ ձեռքեաց զնա իրբեւ զուլ մի այժեաց , եւ ոչ ինչ զոյր ի ձեռնն նորա . եւ ոչ պատմեաց հօր իւրում եւ մօր իւրում զոր արար : Եւ իջին խօսեցան ընդ կնոջն . եւ հաճոյ թուեցաւ առաջի Սամիսոնի :

8 Եւ զարձաւ յետ աւուրց անուսլ զնա . եւ խոստրեցաւ տեսանել զվէչ առիւժուն , եւ աճա գունդ մեղուաց ⁵ի բերան

9 առիւժուն եւ մեղր . եւ աճա զայն ⁶ի բերան իւր , եւ երթալով երթայր եւ ուտէր . չոյաւ առ հայր իւր եւ առ

մայր իւր , եւ ետ նոցա եւ կերան . եւ ոչ պատմեաց նոցա թէ ⁷ի բերանոյ առիւժունն եճան զմեզրն :

10 Եւ էջ հայր նորա առ կինն , եւ արար անդ Սամիսոն ⁸հարսանիս զեւթն օր .

11 զի այնպէս ստնէին երիտասարդք : Եւ ելել ⁹ի զարձուել նոցա ի նմանէ՝ , կացուցին առ նա ընկերս երեսուն , եւ էին ընդ նմա :

12 Եւ սաէ ցնոսա Սամիսոն , Արկից ձեզ առտապիլ , եթէ առեզմանելով առեզմանիցէք զնա ինձ զեւթն օր իւրախութեանս եւ զտանիցէք , սաց ձեզ երեսուն պատառակալ եւ երեսուն պատմուճան հան-

13 զերձից . Սպա թէ ոչ կարիցէք առեզմանել ինձ , սաջիք զուք ինձ երեսուն պատառակալ եւ երեսուն պատմուճան հանդերձից . եւ սսեն ցնա , Արկ մեզ

14 գտառապիլն քո , եւ լուիցուք զնա : Եւ սաէ ցնոսա , Ի կերչէ ել կերակուր , եւ ի հզարէ ել քալցր : Եւ ոչ կարացին սակեղմանել զառասպելն նորա զերիս

15 աւուրս : Եւ եղև յաւուրն ¹⁰չորրորդի , եւ սսեն ցկինն Սամիսոնի , Պատրեա զայր քո եւ պատմեցէ քեզ զառասպելն , զուցէ այրիցիմք զքեզ եւ զառն հօր քո . թէ ալքատացուցանել կոչեցեր

16 զմեզ այսր : Եւ ելաց կինն Սամիսոնի առ նա եւ սաէ ցնա , Ատեցեր զիս եւ ոչ սիրեցեր զիս . զի գառասպելն զոր արկեր որդուց մողովրդեան իմոյ ինձ ոչ պատմեցեր : Եւ սաէ ցնա Սամիսոն , Աճա հօր եւ մօր իմոյ ոչ պատմեցի , եւ

17 արգ քեզ պատմիցեմ : Եւ ելաց առ նա զեւթն օր յորս էր խրախութիւնն . եւ եղև յաւուրն եւթներորդի պատմեաց նմա քանզի թախանձեաց զնա . եւ նա

18 պատմեաց որդուց ազկին իւրոյ : Եւ սսեն ցնա արք քազաքին յաւուրն եւթներորդի յառաջ քան զնոսանել արեգականն , Զինչ քազցրազոյն քան զմեզր , կամ զինչ հզօրազոյն քան զառեւծ : Եւ սաէ ցնոսա Սամիսոն , Եթէ ոչ ¹¹ճնչեալ էր զերինջն իմ՝ , ոչ զտանէիք զառաս-

19 պիլն իմ : Եւ յաջողեցաւ ի վերայ նորա Հոգի Տեառն , եւ էջ յԱսկազոն եւ եւ հար անդ արս երեսուն . եւ աճա ետ զպատմուճանս առեզմանելիցաց առասպելին . եւ բարկեացաւ սրտմուտթեամբ

¹ Եբբ. զընծայն հացի ² Եբբ. ցուցանէր մեզ զուս ամենայն , եւ ի ժամանակի սաս ոչ սայր մեզ լսել այսպիսի ինչ ³ Եբբ. պատե ⁴ Եբբ. պատճառս ինչորէր ⁵ Եբբ. ի մարմնի ⁶ Եբբ. ի ձեռս

⁷ Եբբ. ի մարմնոյ ⁸ Եբբ. խրախութիւն ⁹ Եբբ. իրբեւ տեսին զնա ¹⁰ Եբբ. եւթներորդի ¹¹ Եբբ. արօրադիր լեալ էր ձեր երջաւ իմով

20 Սամփառն , եւ ել ի տուն հօր խորոյ : Եւ ամուսնացաւ կինն Սամփառնի ընդ հաւցերիցուն նորա սր էր նորա ընկեր :

ԳԼ. ԺԵ

1 Եւ եղիւ յեա սուտբց , յաւուրս հնձոց ցորենոյ , այց արար Սամփառն կնոջ իւրում , ածեալ ուլ մի յաջծեաց , եւ ասէ , Մտից առ կին իմ ի սենեակ . եւ ոչ եթող զնա հայրն նորա մտանել առ նա :

2 Եւ ասէ հայրն նորա , Ասելով ասացի թէ ասեցեր զնա , եւ ետաւ զնա ընկերի լուսմ , ոչ աւանիկ քորչ նորա կրասեր բաւաղոյն է քան զնա , եղիցի սա քեզ :

3 փոխանակ նորա : Եւ ասէ Սամփառն , Անպարա եմ ես միանգամայն յայլազգեացող , եթէ արարից ես ընդ զոսա չարութիւնս : Եւ զնաց Սամփառն , եւ կալաւ երեք հարերս աղուէս . եւ սո ջահս եւ կապեաց զնոսա ընդ միմանս ձեա ընդ ձեա , եւ եզ զջահսն ի մէջ երկուց ձեատոցն , եւ կապեաց ի միջոցն զջահսն :

5 Եւ երոյց հօր ի ջահսն , եւ արձակեաց յոճ այլազգեացն . եւ այրեաց Վորանն , եւ գյառաջագոյն հնձեալսն՝ ի բարդից մինչեւ ցկանպնաւորն , եւ մինչեւ ցայգ :

6 զիս եւ ցձիթիկսն : Եւ ասնն այլազգիքն , Ո՞ արար զայս : Եւ ասնն , Սամփառն փռաս պատմացոյն . զի եհան զկին նորա եւ ես ընկերի նորա : Եւ եկին այլազգիքն եւ այրեցին Վառն հօր նորա , եւ՝ զկինն եւ զհայր նորա հրով :

7 Եւ ասէ ցնոսա Սամփառն , Յեթէ զոյն չափ եւս առնիցէք , սակայն ոչ հաճեցայց . այլ զվրէժ իմ յիւրաբանչիւր ում :

8 մեքէ ի ձէնջ ինդրեցից՝ : Եւ եհար զնոսա ի սրօնից մինչեւ ցերսնս հարուածս մեծամեծս . եւ էջ քնակեցաւ ՝ առ ճեղեղատուն յայրին՝ Եսամայ :

9 Եւ եկին այլազգիքն , եւ լանակեցան :

10 զՅուզայիւ , եւ Վանկան զԵյրեաւ : Եւ ասէ ցնոսա այր Յուզայ , Ընդէր ելեք ի վերայ իմ , եւ ասնն այլազգիքն , Կապել զՍամփառն ելաք , եւ ասնն ընդ :

11 նա զար օրինակ արար ընդ մեզ : Եւ իջին երեք հազարք արանց Յուզայ ի ծագ վիմին Ետեմնայ , եւ ասնն ցՍամփառն ,

1 Եբբ. գաւար 2 Եբբ. Թէպետեւ արարէք սյգպակս , սակայն զվրէժ իմ ինդրեցից ի ձէնջ . եւ սպա դարստեցայց 3 Եբբ. ի ծակ վիմին 4 Եբբ. տարածեցան ի Լէբի (Լէբի Զուռնի Զեօր :)

փառն , Ո՞չ զիսեա զի իշխեն մեզ այլազգիքն , եւ ընդէր արարիւր զայն ընդ մեզ . եւ ասէ ցնոսա Սամփառն , Որպէս արարին ընդ իս , նոյնպէս արարի ընդ :

12 նոսա : Եւ ասնն ցնա , Կապել զքեզ իջաք , եւ մասնել ի ձեոս այլազգեացն . եւ ասէ ցնոսա Սամփառն , Երբուարուք ինձ զուր չստանանել զիս Վե տուք զիս ցնոսա . եւ զուր մի երբեք պատահիցէք ինձ՝ : Եւ երբուան նմա եւ ասնն , Ոչ , այլ կապելով կապեացուք զքեզ , եւ սացուք ի ձեոս նոցա . բայց մահու ոչ ստանցուք զքեզ . եւ կապեցին զնա՝ երբեք կարողք նորովք , եւ հանին զնա ի վիմէն :

14 Եւ եկն մինչեւ ցՄոսան . եւ այլազգիքն աղաղակեցին եւ ընթացան ընդդէմ նորա . եւ յաջողեցաւ ի վերայ նորա Հոգի Տեառն , եւ եզնն կարքն ի բազուկս նորա իբրեւ զիծուծ յորժամ ի հօր հօտտիցի , եւ հայեցան կապանքն ի բաղկաց նորա : Եւ եղիտ ծնօս մի իշոյ ընկեցեալ , ձգեաց զձեռն իւր եւ առ գնա , եւ եհար նովաւ հազար սյր : Եւ ասէ Սամփառն , Մոսաիւ իշոյ ջնջելով ջնջեցից զնոսա , զի՝ ծնօսիւ :

17 իշոյ կոտորեցի հազար սյր : Եւ եղիւ իբրեւ կատարեաց զիսօսելն , ընկէց զԾնօսն ի ձեռանէ իւրմէ . եւ կոչեաց զտեղին Վոտորած ծնօսի :

18 Եւ ծարաւեաց յոյժ , եւ աղաղակեաց եւ Տէր եւ ասէ , Դու յաջողեցեր ձեռամբ ծառայի քո զփրկութիւնս զայս մեծ . եւ արդ մեռանիցիմ ի ծարաւոյ , եւ անկանիցիմ ի ձեոս անթիբատից :

19 Եւ երայ Յէր զծակ ծնօտին՝ , եւ ել ի նմանէ ջուր , եւ արբ . եւ զարձաւ ողի իւր առ ինքն եւ զովագաւ . փառն սյնորիկ կոչեաց զանուն նորա՝ Սոլրեւր :

20 անուանեալ ծնօտի՝՝ մինչեւ ցայսօր Եւ զատեաց զԽորայէլ յաւուրս այլազգեացն ամս քսան :

ԳԼ. ԺԶ

1 Եւ չոգաւ Սամփառն անտի ի Գաղա , եւ ետես անդ կին մի պոռնիկ , եւ եմուտ 2 առ նա : Եւ աղջ եղիւ Գազացոցն եւ ասնն , Եկեալ է այսր Սամփառն : Եւ պատեցին եւ զարանակալ եղեն նմա :

5 Եբբ. երկուք 6 Եբբ. գաւար 7 Եբբ. շեղջ , շեղջս երկուս . 8 Եբբ. Ելուր 9 Եբբ. Ատուած գիտն օր ի Լէբի 10 Եբբ. Այնգորէ (որ Զուռնի Ալբե-ր Կուրն) ի Լէբի

զգիշերն ողջոյն առ զրան քաղաքին, եւ անշուռնջ կացին զզիշերն ողջոյն, եւ ասեն, Աստ կացցուք մինչեւ ցառաւօտ, ³ եւ սպանցուք զնա: Եւ ննջեաց Սամփսոն մինչեւ ցմէջ զիշերոյն, եւ յարեալ գմէջ զիշերաւն, եւ թափեաց զչրուն քաղաքին հանդերձ սեմովքն, եւ երարձ զնոսա հանդերձ նոգօքն, եւ եզ ի վերայ ուսոց իւրոց, եւ եհան զնոսա ի գլուխ լերինն որ է հանդէպ Քերրոնի, ⁴ եւ եզ զնոսա անդ: ⁵ Եւ եզեւ յետ այտորիկ սիրեաց կին մի առ եղերք հեղեղաօլին Սոլյեկայ, ⁶ եւ սնուհն նորա Դալիլա: Եւ ելին առ նա նախարարք այլազգեացն եւ ասն, Պատրեա զնա եւ տես իւ իցէ զօրութիւն նորա մեծ, եւ կամ իւ կարասցուք նմա հնար գտանել եւ կապել զնա առ ի տկարացուցանել զնա. եւ մեք տացուք քեզ այր իւրաքանչիւր հազար ⁷ եւ հարիւր արծաթոյ, եւ ասէ Դալիլա ցՍամփսոն, Պատմեա ինձ իւ իցէ զօրութիւն քո մեծ, եւ իւ կապիցիս առ ⁸ ի տկարացուցանելոյ զքեզ: Եւ ասէ ցնա Սամփսոն, Եթէ կապիցեն զիս եւթն ջլօք դալարովք չվատելովք, տկարացայց ⁹ եւ եզէց իբրեւ զմի ի մարդկանէ: Եւ բերին առ նա նախարարք այլազգեացն եւթն ջլիւ զալարս անվտիտ, եւ նա ¹⁰ կապեաց զնա նոքօք: Եւ զարան նստէր նմա ի շանմարանի. եւ ասէ ցնա, Այլազգիք հասեալ են ի վերայ քո, Սամփսոն. եւ խզեաց զլիւն՝ զոր օրինակ խլիցի բուզ ի թօթափելոյ յորժամ ի հուր հոտաւիցի. եւ ոչ ծանուցաւ ¹¹ զօրութիւն նորա: Եւ ասէ Դալիլա ցՍամփսոն, Ահա խարեցիր զիս եւ խօսեցար սուտ. գոնէ արզ պատմեա ինձ թէ իւ ¹² կապիցիս: Եւ ասէ ցնա, Եթէ կապելով կապեցեն զիս ¹³ եւթն կարովք նորովք, որովք չիցէ գործեալ գործ, տկարացայց եւ եզէց իբրեւ զմի ի մարդկանէ: Եւ ան Դալիլա կարս նորս, եւ կապեաց զնա նոքօք, եւ ասէ ցնա, Այլազգիք հասեալ են ի վերայ քո, Սամփսոն. եւ զարան նստէր նմա ի շտեմարանի. եւ խզեաց զայն ի բազկաց իւրոց իբրեւ զտազանի: Եւ ասէ Դալիլա ցՍամփսոն, Մինչեւ ցնէր խարիցես զիս, եւ խօսիցիս ընդ իս սուտ. արզ պատմեա ինձ իւ կապիցիս: Եւ ասէ ցնա, Եթէ

անկցես զեւթանեսին զիսակս զլիտոյ իմոյ ընդ ազբին, ¹⁴ եւ վարեցես ցցովք ընդ որմն, եզէց տկարացեալ իբրեւ զմի մարդկանէ: Եւ ննջեցոյց զնա Դալիլա, եւ ան զեւթանեսին զիսակս զլիտոյ նորս հանդերձ աքրամբն, եւ վարեաց ցցովք ընդ որմն, եւ ասէ ցնա, Այլազգիք հասեալ են ի վերայ քո, Սամփսոն: Եւ զարթեալ ի քնոյ իւրմէ, եւ կորզեաց զցիցսն հանդերձ ոտայնիւն եւ ազրամբն յորմոյ անտի. եւ ոչ ծանուցաւ զօրութիւն նորա: Եւ ասէ ցնա Դալիլա, Զիւրաք ասես թէ Սիրեցի զքեզ, եւ սիրա քո չէ ուղիւ ընդ իս. այս երիցս անգամ խարեցիր զիս, եւ ոչ պատմեցիր ինձ թէ իւ իցէ զօրութիւն քո մեծ: Եւ եզեւ իբրեւ վտանգեաց զնա բանիւք ¹⁶ զզիշերն ողջոյն՝ եւ թախանձեցոյց զնա, եւ պարտասեցոյց զնա մինչեւ ցմահ, Պատմեաց նմա զամենայն ինչ ի սրտէ իւրմէ, եւ ասէ ցնա, Աճեկի ոչ չեցէ ի գլուխ իմ, զի ուրտաւոր Ասաուժոյ եմ ես յորովանէ մօր իմոյ. ապա թէ գերծուցում, մեկնեացի յինէն զօրութիւն իմ, եւ տկարացայց եւ եզէց իբրեւ զամենայն մարդիկ: ¹⁸ Իբրեւ ետես Դալիլա եթէ պատմեաց նմա զամենայն ինչ ի սրտէ իւրմէ, առաքեաց կոչեաց զնախարարս այլազգեացն եւ ասէ, Ելէք միանգամայն, զի պատմեաց ինձ զամենայն ի սրտէ իւրմէ: Եւ ելին առ նա միանայն նախարարք այլազգեացն, եւ բերին զարծաթն ի ձեռս իւրեանց: Եւ ննջեցոյց զնա ի մէջ ծնոցայ իւրոց. եւ կոչեաց վարսավիրայ, եւ եզերձ զեւթանեսին զիսակս զլիտոյ նորա. եւ սկսաւ թօշնել, եւ մեկնեցաւ ²⁰ ի նմանէ զօրութիւն նորա: Եւ ասէ Դալիլա, Այլազգիք հասեալ են ի վերայ քո, Սամփսոն: Եւ զարթեալ ի քնոյ իւրմէ, եւ ասէ, Ելից եւ արարից որպէս միշան, եւ թօթափեցից. եւ նա ոչ ²¹ գիտէր թէ Տէր մեկնեցաւ ի նմանէ: Եւ կալան զնա այլազգիքն, եւ բրեցին զաչս նորա. եւ իջուցին զնա ի Գազա, եւ կապեցին զնա երկաթի կապանօք. եւ ապայր ի տան բանտին: ²² Եւ սկսաւ մազ զլիտոյ նորա բուսանել ²³ յետ զերծելոյն: Եւ իշխանք այլազգեացն ժողովեցան զո՛նել զո՛ն մեծ Դագոնայ

¹ Եբբ. պոլտեի

² Եբբ. (14) Եւ Դալիլա վարեաց ցցովք զամենայն աւուրս ³ Եբբ. Եւ ⁴ Եբբ. զպս նուագ

աստուծոյն իւրեանց, եւ ուրախ լինել .
 եւ ասէին, Մասնեաց աստուած մեր
 զՍամիրոն թշնամի մեր ի ձեռս մեր :
 24 Իրրեւ անխին ժողովուրդն, օրհնէին
 զաստուած իւրեանց . զի ստացին թէ
 Մասնեաց աստուած մեր զթշնամին մեր
 ի ձեռս մեր, եւ զսպականիչ երկրի մե-
 րոյ, որ յաճախեաց զվիրաւորս մեր :
 25 Եւ եղև իրրեւ զուարթացան սիրաբ
 իւրեանց, ասեն, Կոչեցէք զՍամիրոն
 ՚ի սանէ յանտին, եւ խաղաօցէ առաջի
 մեր . եւ կոչեցին զՍամիրոն ՚ի սանէ
 րանտին, եւ ՚իաղային նովաւ . եւ կու-
 26 զուցին գնա ի մէջ ՚Կրկուց սեռնցն եւ
 ասէ Սամիրոն յսպասանին որ ունէր
 զձեռանէ նորա . Թոյ սուր ինձ եւ զնե-
 ցից զսիւնս յուրոց վերայ սունս հաս-
 27 տատեալ կայ, եւ յեցսց ՚ի նոսա : Եւ
 սուռնն լի էր արամբք եւ կանամբք . եւ
 անդ ամենայն նախարարք սպաղղեացն .
 եւ ՚ի տանխն իրրեւ երեք հազարք, արք
 եւ կանայք որ սեռանէին զխաղն Սամ-
 28 փամի : Եւ սգազակեաց Սամիրոն առ
 Տէր եւ ասէ, Տէր, Տէր ՚գորութեանց,
 յիշեա զիս . եւ զօրացո զիս զայս եւս
 մի նուազ, Աստուած, եւ խնդրեցից
 զվրէժխնդրութիւն իմ փոխանակ երկուց
 29 աչաց իմոց յայլաղղեաց աստի : Եւ բռնն
 եհար Սամիրոն զերկոցունց սեռնցն
 միջնոց, յորոց վերայ սուռնն հաստատեալ
 կայր, եւ յեցաւ ՚ի նոսա, ՚ի մին աջով
5 Տեառն առ Նաթան եւ ասէ, Երթ եւ ասա ցճատայ իմ Դաւիթ, Այսպէս ասէ Տէր. ¹²Ոչ չինեցես զու՝ ինձ տուն բնակելոյ. Զի ոչ բնակեցայ ի տան յօրէ յորմէ հետէ հանի զորդիսն Իսրայելի յեղկատուէ մինչեւ ցայսօր, եւ չըջէի

7 ¹³յիմալանի խորանաւ: Ամենայն ուրեք ուր չըջէի ի մէջ ամենայն Իսրայելի,

¹ 8Եբր. արտ. ² Եբր. Տեառն ³ Եբր. Արեղդարայ ⁴ ցլլ. քո գոմ ⁵ Եբր. եղև իբրև գնացին որ բառնային զտապանակն Տեառն քայլս վեց, եւ զօհէր ելն եւ պարարակ: (14) Եւ Դաւիթ կաքաւէր ամենայն զօրութեամբ առաջի Տեառն եւ Դաւիթ զքեցեակ էր եփող կտանայ ⁶ Եբր. խաղայր ⁷ Եբր. ամենայն քաղաքութեան Իսրայելի ⁸ Եբր. եղէց անարգ ⁹ Եբր. իմ ¹⁰ Եբր. արքայ ¹¹ Եբր. նստի ընդ վարագուրաւ ¹² Եբր. Դու՛ն չինեցես ¹³ Եբր. վրանաւ եւ

եթէ խօսելով խօսեցանց կրեք ընդ մի-
 ում ցեղի Իսրայելի ում եւ հրամանն ե-
 տու հովուել զժողովուրդ իմ զԻսրայել,
 ասել թէ Ընդէր ոչ շինեցէք ինձ տուն
 8 եղևնափայտեայ : Եւ արդ այսպէս ա-
 տացես զժառայ իմ Դաւիթ , Այսպէս
 ասէ Տէր ամենակալ . Առի ես զքեզ ի
 վանաց հօտից լինել քեզ յառաջնարդ ի
 9 վերայ ժողովրդեան իմոյ Իսրայելի . Եւ
 էի ընդ քեզ ամենայն ուրեք ուր եւ
 երթայիր . եւ սասակեցի զամենայն
 թշնամիս քո յերեսաց քոց , եւ արարի
 զքեզ անուանի ըստ անուանց մեծամե-
 10 ծաց որ ի վերայ երկրի : Եւ եզից տեղի
 ժողովրդեան իմոյ Իսրայելի , եւ անկե-
 ցից զնա եւ ընակեացէ Վառանձինն . եւ
 մի եւս հօգացի՞ եւ ոչ եւս յաւելցէ
 որդի անօրէնութեան լլիկ զնա իրիւ-
 11 զառաջինն , Յաւուրցն յորոց կարգեցի
 դատաւորս ի վերայ ժողովրդեան իմոյ
 Իսրայելի . եւ հանգուցից զքեզ յամենայն
 թշնամեաց քոց , եւ զպատմեցէ քեզ
 12 Տէր զի շինեցես նմա տունն : Եւ եզիցի
 եթէ լցցին աւուրք քո , եւ ննջեսես
 ընդ հարս քո , յարուցից զգաւակ քո յետ
 քո , որ եզիցի յորովայնէ ջուժմէ , եւ
 զպատրաստեցից զարքայութիւն ՚քո՛նմա՞ :
 13 Նա շինեցէ տուն անուան իմոյ , եւ կանգ-
 նեցից զաթոռ նորա մինչեւ ցյաւիտեան .
 14 Ես եզէց նմա ի նայր , եւ նա եզիցի ինձ
 յորդի . եւ թէ՛ եկեացէ անիրաւութիւն
 նորա , յանգիմանեցից զնա , եւ՞ խրա-
 տեցից զնա զաւազանու արանց եւ
 15 տանձնօք որդւոց մարդկան . Բայց զու-
 զորմութիւն ոչ մերժեցից ի նմանէ , որ-
 պէս մերժեցի ՚յորոց մերժեցին առաջի
 16 երեսաց իմոց : Հաւատարիմ լիցի նա-
 նուն նորա եւ արքայութիւն նորա ա-
 ռաջի իմ՞ մինչեւ ցյաւիտեան , եւ ա-
 թոռ նորա կացցէ կանգուն ՚առաջի իմ՞
 17 մինչեւ ցյաւիտեան : Ըստ ամենայն բա-
 նիցս այսօրիկ եւ ըստ ամենայն տեղ-
 եանս այսօրիկ՝ սոյնպէս խօսեցաւ Նա-
 թան ընդ Դաւիթայ :

18 Եւ եմուտ արքայ Դաւիթ եւ նստաւ
 առաջի Տեառն , եւ ասէ , Ո՞վ եմ ես ,

Տէր իմ Տէր , եւ ո՞ տուն իմ , զի ¹⁰մի-
 19 ընցեր զիս մինչեւ ցայց վայր . եւ ¹¹ոչ
 փոքրկացայ սակաւիկ ինչ՞ առաջի քո ,
 Տէր իմ Տէր , եւ խօսեցար վասն տան
 ծառայի քո յերկար . եւ ա՞յս է օրէն
 20 մարդոյ , Տէր իմ Տէր : Եւ զի՞ եւս յաւե-
 լուցու Դաւիթ խօսել առ քեզ . եւ զու-
 լինքնին դիտես զժառայ քո , Տէր իմ Տէր :
 21 ¹²Վասն ծառայի քո արարեր , եւ ըստ
 ամենայն՞ սրտի քո արարեր զամենայն
 զմեծութիւնս զայս ծանուցեալ ծառայի
 22 ջուժմ ¹³Վասն մեծացուցանելոյ զիս՞ ,
 Տէր իմ Տէր . զի չիք ոք իրիււ զքեզ ,
 եւ չիք Աստուած բաց ի քէն ի վերայ
 ամենայնի զոր լուաք սկանջօք մերովք :
 23 Եւ ո՞վ է ազգ ի վերայ երկրի իրիւ-
 զժողովուրդ քո զԻսրայել , որում առաջ-
 նորեկաց Աստուած զկրկել իւր ժողո-
 վուրդ , գնել ¹⁴քեզ անուն եւ տօնել
¹⁴քեզ մեծութիւն եւ ¹⁵յայտնութիւն ,
 մերժել քեզ՞ յերեսաց ժողովրդեանս քո
 զոր փրկեցեր զու քեզ յեզիպոտս՞
 24 զազգս եւ զընակութիւնս՞ : Եւ պաւ-
 րաստեցեր զու քեզ զժողովուրդ քո
 զԻսրայել ի ժողովուրդ մինչեւ ցյաւիտ-
 եան , եւ զու , Տէր , եզեր նոցա յԱւ-
 25 տուած : Եւ արդ , Տէր իմ , զբանն զոր
 խօսեցար վասն ծառայի քո եւ տան
 նորա՞ հաւատարմաց մինչեւ յաւիտեան ,
 2 ի եւ արա որպէս եւ խօսեցար . Եւ մե-
 ծացի անուն քո մինչեւ ցյաւիտեան .
 եւ ¹⁷արդ , Տէր ամենակալ , Աստուած
 ի վերայ ամենայն Իսրայելի . տուն ծա-
 ռայի քո Դաւիթի եզից կանգուն առաջի
 27 քո . Զի զու ⁹եւ Տէր ամենակալ Աս-
 տուած Իսրայելի , ⁹Եւ արդ որպէս խօ-
 սեցար մեծացի անուն քո մինչեւ ցյա-
 վիտեան , ասէ Տէր ամենակալ Աստուած
 Իսրայելի .՞ յայտնեցեր յունկն ծառայի
 քո եւ ասացեր , շինեցից քեզ տուն .
 վասն այնորիկ եզիտ ծառայ քո զպիրտ
 իւր՝ կալ առ քեզ յազօթս զազօթս զայ-
 28 տսիկ : Եւ արդ , Տէր իմ Տէր , զու ես
 Աստուած , եւ բանք քո եզիցին ճշմա-
 րիտ , եւ զոր խօսեցար վասն ծառայի
 29 քո զամենայն բարութիւնս զայս : Եւ
 արդ սկսիր օրհնել զտուն ծառայի քո՞

¹Եբբ. ի տեղեոյ իւրում , եւ մի՞ եւս խախտեսցի
²Եբբ. պատմէ քեզ Տէր , զի շինեցէ քեզ Տէր տունն
³Եբբ. հաստատեցից ⁴Եբբ. նորա ⁵Եբբ. ի խո-
 տորիկ նորա ⁶Եբբ. ի Սաւուզայ զզր մերժեցի
 յերեսաց քոց ⁷Եբբ. տուն քո եւ որբայու-
 թիւն քո առաջի քո ⁸Եբբ. քո ⁹ՅԵբբ. զմիւսի

¹⁰Եբբ. տճեր ¹¹Եբբ. փոքր եղեւ այս տակաւին
¹²Եբբ. Վասն բանի քո եւ ըստ ¹³Եբբ. Վասն որոյ
 մեծացար ¹⁴Եբբ. իւր ¹⁵Եբբ. արհաւիրս
 երկրի բուժմ ¹⁶Եբբ. յազգաց եւ ի զից նոցա
¹⁷Եբբ. ասիցի

լինել առաջի քո յաւիտեան . զի դու ,
Տէր իմ Տէր , խօսեցար , եւ յորհու-
թենէ քաւմէ՛ օրհնեցիք տաւն ծառայի
քո յաւիտեան :

ԳԼ . Ը

1 Եւ եղև յետ այտրիի եհար Դաւիթ
 զյալազգիան եւ վանեաց զնոսա , եւ առ
 Դաւիթ՝ զգառուցեալան ի ձեռաց պաղպղ-
 2 եացն : Եւ եհար Դաւիթ զՄովար , եւ
 չափեաց զնոսա պարանօք , եւ գա-
 ռացոց զնոսա յերկիր . եւ եղևն երկու
 պարանքն սպանանելոյ եւ ՝ երկու պա-
 3 ընքն՝ ապրեցուցանելոյ . եւ եղև Մո-
 վար Դաւիթ ի ծառայս պատարապարկիս :
 4 Եւ եհար Դաւիթ զԱգրատգար զորդի
 Ռովամայ՝ զարքայ Սուբայ , յերթայ
 նորա սրկանել զձեռն իւր ի վերայ զե-
 5 առն Եփրատայ : Եւ առ զնորա Դաւիթ
 հազար ՝ զկառս , եւ եւթն հազար՝ հե-
 ծկոց , եւ քսան հազար հեանեակոց .
 եւ քսակեաց Դաւիթ զամենայն կառսն ,
 եւ եթող իւր ի նոցանէ հարեւր կառս :
 6 Եւ զայր Ասորին ի Դամասկոսէ օգնել
 Ագրատգարայ արքայի Սուբայ . եւ եհար
 Դաւիթ յԱսուբայն քսան եւ երկու հա-
 7 զարս արոնց : Եւ եղ Դաւիթ պա-
 հակս յԱսորիս հանգէպ Դամասկոսի . եւ
 եղևն Ասորիք Դաւիթ ի ծառայս պա-
 տարապարկիս . եւ փրկեաց Տէր զԴաւիթ
 8 ամենայն ուրեք ուր եւ երթայր : Եւ
 առ Դաւիթ ՝ զասպարանջանն սակիս որ
 էին ի ծառայն Ագրատգարու . արքայի
 9 Սուբայ՝ եւ երեք յերուսաղէմ : Եւ առ
 զայն Սաւակիթ արքայ Եփրատացոց
 յեղանել իւրում յերուսաղէմ յաւուրս
 Ռարովամայ որդոց Սուգամնի : Եւ ի
 Մապտիկայ սու արքայ Դաւիթ՝ չընտիր
 ընտիր քաղաքաց Ագրատգարայ՝ պզինձ ,
 որով արար Մոզամն զձովն պզինձի եւ
 զպիւնն եւ զաւաղաման եւ զամենայն
 կահն :
 10 Եւ յուսա Ռովու արքայ Եմաթայ ,
 եթէ եհար Դաւիթ զամենայն զօրն Ագ-
 րատգարայ , եւ առաքեաց Ռովու ՝ զիւր-
 գուրա զորդի իւր սու արքայ Դաւիթ՝
 հարցանել զխաղաղութենէ նորա . եւ

՝ օրհնեաց զնա՝ փոխանակ զի սատակեաց
 զԱգրատգար . (զի այր գոռ պատերազմա-
 էր նա ընդ Ռովայ) ՝ Եւ հակառակ կայր
 նմա Ագրատգար . եւ ի ձեռս նորա էին
 11 սնօթք ոսկեզէնք եւ արծաթեզէնք եւ
 սնօթք պզինձիք : Եւ սրբեաց զայն ար-
 քայ Դաւիթ Տեառն ընդ արծաթոյն եւ
 ընդ ոսկոյն , զոր սրբեաց յամենայն
 12 պատերազմաց որոց յաղթեաց , ՝ Յեղովմայ
 եւ ի Մովարայ եւ յորդոցն Ամոնայ եւ
 յայլազգեացն եւ յԱմազեկայ , եւ յաւարէ
 Ագրատգարայ որդոյ Ռովայ արքայի
 13 Սուբայ : Եւ արար Դաւիթ ՝ սնուսն . եւ
 ի զանայ իւրում եհար Դաւիթ զԱսու-
 բիս ի Դարեղիւմ՝ յաթուտան հազար :
 14 Եւ եղ յեղովմայ պահակապանս յամենայն
 եղովմայեցիք¹¹ , եւ եղևն ամենայն Ե-
 ղովմայեցիք ծառայք արքայի . եւ
 15 փրկեաց Տէր զԴաւիթ ամենայն ուրեք
 ուր եւ երթայր :
 16 Եւ ՝ յապաւորեցոյց զԴաւիթ՝ ի վե-
 րայ ամենայն Իսրայելի . եւ առնէր Դաւիթ
 իւրուսնս եւ արգարութիւն ի վերայ
 17 ամենայն յաղովրդեան իւրոյ : Եւ Յո-
 վայ սրդի Շարուհեայ էր ի վերայ զօ-
 բուն , եւ Յովսափատ սրդի Աքիայ ի
 18 վերայ յիշատակաց . Եւ Սաղովկ որդի
 Արիտովայ եւ Աքիմիէք որդի Աքիա-
 թորայ՝ քահանայք . եւ ՝ Ասա՝ զպաւ-
 19 պետ . եւ Բանեաորդի Յովիգայեայ¹¹ խոր-
 հրակից , եւ Քերեթին եւ Ոփեղեթին՝
 եւ սրդիք Դաւիթ խոստպետք էին :

ԳԼ . Թ

1 Եւ ասէ Դաւիթ , Եթէ իցէ՞ ոք մնաց-
 եաց ի ամունն Սաւուլայ , եւ արարից
 ընդ նմա ոգորմութիւն վասն Յովնա-
 2 թանու : Եւ ի ամունն Սաւուլայ էր մա-
 նուկ մի , եւ անուն նորա Սիրա , եւ
 կոչեցին զնա առ Դաւիթ . եւ ասէ զնա
 3 արքայ , Եթէ զո՞ւ իցն Սիրայն . եւ
 4 ասէ , Ես եմ ծառայ քո : Եւ ասէ ար-
 քայ , Եթէ իցէ՞ ոք մնացեալ ի ամունէ
 Սաւուլայ , եւ արարից ընդ նմա ոգոր-
 մութիւն Ասաուոց . եւ ասէ Սիրա
 յարքայ , է որդի մի Յովնաթանու հալմ

1) Էբբ. զԱթեկամինա 2) Էբբ. ողջոյն պարան
 3) Էբբ. եւ եւթն հարեւր 4) Էբբ. գասպարան 5) Էբբ.
 Դաւիթ 6) Էբբ. եւ ի Բեթաճէ եւ ի Բեթաթայէ .
 ի քաղաքաց Ագրատգարայ , ա՛ւ սրբայ Դաւիթ
 պզինձ բազում յոյժ 7) Էբբ. զՅովրամ

8) Էբբ. օրհնել զնա զի պատերազմեցու ընդ Ագրա-
 տգարու եւ սատակեաց զնա 9) Էբբ. յԱսորոց
 10) Էբբ. անուն ի գաւառս իւրում ի հարկանելոյ
 զԱսորիս ի ձորն Աղտից 11) Էբբ. Եսայի
 պահակապանս 12) Էբբ. թագաւորեաց Դաւիթ
 13) Էբբ. Սարայա 14) Էբբ. ի վերայ Քերեթայն եւ
 Ոփեղեթայն (Տե՛ս Գլ. Ի. 23 :)

4 Թախք : Եւ ասէ արքայ , Ո՛ւր է նա |
 Եւ ասէ Սիրա ցարքայ , Ահա է ի տան
 5 Եւ առաքեալաց արքայ Դաւիթ եւ աս
 գնա ի տանէ Մաքիթայ որդւոյ Ամիելի
 6 Լազարարացւոյ : Եւ եկն Մեմփիրոսթէ
 որդի Յովնաթանու որդւոյ Մաւուզայ
 առ արքայ Դաւիթ , եւ անկաւ ի վերայ
 երեսաց իւրոց եւ երկիր եզազ նմա :
 7 Եւ ասէ , Աւասիկ եմ ծառայ քո : Եւ
 ասէ գնա Դաւիթ , Մի՛ երկնչիր , զի
 աննկով արարից ընդ քեզ պորմու-
 լի իւն Վառնաթանու հօր քո . եւ
 զարձուցից քեզ զամենայն անդս Մաւու-
 զայ՝ ¹ Կճօր հօր քո . եւ զու ուսիցես հաց
 8 հանապազ ի սեղան իմում : Եւ երկիր
 եզազ Մեմփիրոսթէ եւ ասէ , Ո՛վ է ծառայ
 քո , զի հայեցար ի շուն մի մեռեալ
 9 նմանոց ինձ : Եւ կոչեաց արքայ զՍիրա
 զծառայ Մաւուզայ եւ ասէ գնա , Զա-
 մենայն ինչ որ է Մաւուզայ , եւ զա-
 մենայն որ տան նորա , ետու որդւոյ
 10 տեառն քո : Եւ զործեցես զմա զեր-
 կիրն , զու եւ որդիք քո եւ ծառայք քո ,
 եւ մուծցես ի տուն տեառն քո հաց եւ
 կերելցն զայն . եւ Մեմփիրոսթէ որդի
 տեառն քո կերիցէ հաց հանապազ ի
 սեղան իմում : Եւ Սիրայի էին որդիք
 11 հոգեառան եւ ծառայք քանն : Եւ ասէ
 Սիրա ցարքայ , Ըստ ամենայնի զոր
 հրաման ետ աէր իմ արքայ ծառայի
 իւրում , այնպէս արասցէ ծառայքու Եւ
 Մեմփիրոսթէ ուսէր հաց ի սեղանոյ
 Դաւիթի իբրեւ զմի յորդոցն արքայի :
 12 Եւ Մեմփիրոսթեայ էր որդի մի փոքրիկ ,
 եւ անուն նորա Միքա . եւ ամենայն
 ընակութիւն ամեն Սիրայի՝ ծառայք
 13 Մեմփիրոսթեայ : Եւ Մեմփիրոսթէ բնա-
 կէր յերուսաղէմ , զի հանապազ ի սե-
 զանոյ արքայի ուսէր . եւ ինքն էր կազ
 յերկոցունց օտից իւրոց :

ՔԼ. Ժ

4 Եւ եղև յես այնորիկ եւ մեռաւ ար-
 քայ որդւոցն Ամնայ . եւ թաղաւորեաց
 2 Անն որդի նորա ընդ նորա : Եւ ասէ
 Դաւիթ , Արասցուք պորմութիւն ընդ
 Աննայ որդւոյ Նաասայ , զոր օրինակ
 արար հայր նորա ընդ իս ողորմութիւն .
 եւ առաքեաց Դաւիթ միսիթարիլ զնա

ի ձեռն ծառայից իւրոց վասն հօր իւրոց .
 եւ չողան ծառայքն Դաւիթի յերկիր որդ-
 3 ւոց Ամնայ : Եւ ասնն իշխանք որդ-
 ւոցն Ամնայ զԱննն աէրն իւրեանց ,
 Միթէ փառաւորել ինչ զհայր քո առա-
 ջի քո առաքեալ առ քեզ Դաւիթ մտի-
 թարիս . սչ , այլ զի որմնեցեն զբա-
 զարս եւ զխանեցեն զսա , եւ ² յրանել
 զսա ստաքեաց Դաւիթ զծառայ իւր
 4 առ քեզ : Եւ կայաւ ³ զծառայն Դաւիթի ,
 եւ եզերմ ⁴ զմօրուս նոցա , եւ կարեաց
 զզրասոս նոցա ի միջոյ մինչև եղբր , եւ
 5 արձակեաց զնասա Եւ պատմեցին Դաւիթի
 վասն արանցն . եւ ստաքեաց Դաւիթ
 ընդ առաջ նոցա զի էին արքն անարգ-
 եայք յոյժ . եւ ասէ արքայ , Կատարուք
 յերկրով մինչև աճեցեն մօրուք ձեր ,
 եւ ապա դարձչիք :
 6 Եւ անոյն որդիքն Ամնայ եթէ ⁵ ամօթ
 արարին ժողովրդեանն՝ Դաւիթի , ստա-
 քեցին որդիքն Ամնայ եւ ի փարձու-
 կայան զԱսորիս ⁶ Ռովբայ եւ զԱսորիս
 Մուբայ քանն հազար հեռեւտկաց , եւ
 զարքայն ⁷ Ամաղեկայ հազար արամիք ,
 եւ ի Մատրայ երկրոտտան հազար արանց :
 7 Ըստ արքայ Դաւիթի , եւ առաքեաց
 զՅովար եւ զամենայն զօրն զօրուոր :
 8 Եւ ելին որդիքն Ամնայ եւ ճակատե-
 ցան ի պառերազմ սա զրան ⁸ քաղաքին
 Ասորոց Մուբայ , եւ Ռովբ եւ Մոովբ
 9 եւ Ամաղէկ՝ էին միայն յանդին : Եւ ե-
 աես Յովար եթէ ⁹ եկին հայնն ի վերայ
 նորա՝ առաջոյ եւ զկնի , ընարեաց յա-
 մենայն ¹⁰ երկրոտտարկայ Իսրայելի , եւ
 10 ճակատեցոց ընդդէմ Ասորոց . Եւ զմեա-
 ցորդս զօրուն ետ ի ձեռս Արեսայ եղբոր
 իւրոց , եւ ճակատեցան ընդդէմ որդւոցն
 11 Ամնայ : Եւ ասէ , Եթէ յայլմահարես-
 ցն զիս Ասորիքն , եղիչիք ինձ ի վրիճու-
 թիւն . եւ եթէ որդիքն Ամնայ յազ-
 թահարեցեն զքեզ , եղիցուք ապրե-
 12 ցուցանել զքեզ . Բաջ լեր եւ ժրասցուք
 ի վերայ ժողովրդեան մերոյ եւ ի վերայ
 քաղաքաց Ասաուծոյ մերոյ . եւ Տէր
 արասցէ զհաճոյն առաջի աչոյ իւրոց :
 13 Եւ մտտեաւ Յովար եւ զօրն որ ընդ
 նմա ի պառերազմ ընդ Ասորիսն , եւ

² Եբբ. կործանել ³ Եբբ. ցեցին յաւելու , Անն
⁴ Եբբ. զկէս մօրուաց ⁵ Եբբ. զարչելի եղեն ⁶ Եբբ.
 Բեթբովբայ ⁷ Եբբ. Մազարայ ⁸ Եբբ. քա-
 զարին . և Ասորիքն Մուբայ և Ռովբայ և Մոովբ
 և Մասթա ⁹ Եբբ. էին նմա ճակատք կուսոյ
¹⁰ Եբբ. ընտրելոց

¹ Եբբ. դաւաւտ

44 փախեան Ասորիքն յերեսաց նորա : Եւ որդիքն Ամոնայ իբրեւ տեսին եթէ փախեան Ասորիքն , փախեան եւ նոքա յերեսաց Արեւսայ , եւ մահն ի քաղաքն . եւ գործաւ Յովար յորդոցն Ամոնայ եւ եկն յԵրուսաղէմ :

45 Իբրեւ ետես Ասորին եթէ պարտեցաւ առաջի Իսրայելի , զուժարեցան իմիասին :

46 Եւ առաքեաց Ագրասազար եւ յորովեաց զԱսորիսն յայնմ կողմանէ Գեառնն ՚ի Քաղամակ . եւ եկին Նափն ՚Եղամ եւ Սովբակ իշխանք զորայն Ագրասազարայ յառջ քան զնա : Եւ աղջ եղև Դաւիթ , եւ յորովեաց զամենայն Իսրայել եւ անց ընդ Յորդանան , եւ եհաա ՚ի Քաղամակ . եւ ճակատեցան Ասորիքն ընդէմ Դաւիթ ի տայ ընդ նմա պատերազմ :

48 Եւ փախեան Ասորիքն յերեսաց Իսրայելի . եւ կոտորեաց Դաւիթ յԱսորեոցն եւ թն ճարեւր կոտս , եւ քառասուն Նազար Նեծկոց , եւ զՍովբակ իշխան զորուն :

49 Նորա եհար , եւ մտաւ անդէն : Իբրեւ տեսին ամենայն ինպատարք ծառայք Ագրասազարու թէ պարտեցան առաջի Իսրայելի , անճառառք եղին : Եւ ուխտեցին ուխտ ընդ Իսրայելի , եւ ծառայեցին նոցա . եւ երկեան Ասորիքն այնուհետեւ սպրեցուցանել զորդիսն Ամոնայ :

ԳԼ . ԺԱ

1 Եւ եղև ի գառնալ տայւոցն ի նայն ժամանակ ելից թագաւորայն , եւ առաքեաց Դաւիթ զՅովար եւ զԺառայս իւր ընդ նմա եւ զամենայն Իսրայել , եւ աստակեցին զորդիսն Ամոնայ , եւ նստան զՌաբբաթաւ . եւ Դաւիթ նստէր յԵրուսաղէմ : Եւ եղև ընդ երեկս եւ յարեաւ Դաւիթ յանկողնէ իւրմէ , եւ զգնայր ի վերայ ասնեաց ասն ինպատարին . եւ ետես ի ասնեացն կին մի լուացեալ , եւ կինն գեղեցիկ տեսեալսմբ յոյժ : Եւ առաքեաց Դաւիթ եւ ինպրեւաց զկինն , եւ ասէ , Ո՞չ գա է Բերայթէ , զուտար :

4 Եղիարայ , կին Ուրիայ Քեաացուց : Եւ առաքեաց Դաւիթ հրեշտակս եւ առ զնա , եւ հմուտ առ նա եւ ննջեաց ընդ նմա . եւ նա էր սրբեալ ի գաշտանէ իւրմէ :

5 Եւ գործաւ ի տուն իւր : Եւ յլացաւ կինն , եւ առաքեաց պատմեաց Դաւիթ ի տունէ , Յղի եմ ես : Եւ առաքեաց

Դաւիթ առ Յովար եւ ասէ , Առաքեա առ իս զՈւրիայ Քեաացի . եւ առաքեաց

7 Յովար զՈւրիայ առ Դաւիթ : Եւ եկեալ Ուրիայ հմուտ առ Դաւիթ , եւ եհարց Դաւիթ զողջունէ Յովարայ եւ զողջունէ զորուն եւ զողջունէ պատերազմին : Եւ ասէ Ուրիայ , Ողջոյն է : Եւ ասէ Դաւիթ զՈւրիայ , Արի էջ ի տուն քո եւ լուս զտաքո . եւ ել Ուրիայ ի տանէ արքայի , եւ ել զկնի նորա պարգև ի ձեռանէ արքայի :

9 Եւ ննջեաց Ուրիայ առ գրան տանն արքայի ընդ ծառայս նորա , եւ ոչ էջ ի տուն :

10 Իւր : Եւ պատմեցին Դաւիթի եւ տանն , եթէ ոչ էջ Ուրիայ ի տուն իւր : Եւ ասէ Դաւիթ զՈւրիայ , Ո՞չ ի ճանապարհէ եկեալ ես զու , ընդէր ոչ իջեր ի տուն :

11 քո : Եւ ասէ Ուրիայ զԴաւիթ , Տոպանակն Աստուծոյ եւ Իսրայել եւ Յուդա ընակեալ են ի վրանս , եւ ակր իմ Յովար եւ ծառայք անան իմոյ ընակեալ են ի բացի , եւ ես մտանիցեմ ի սո՞ւն իմ ուսել եւ ըմպել եւ ննջել ընդ կնոջ իմում . Եւ զխմր լինիցի այն : Կենդանի է անձն քո թէ արարից զբանդ :

12 զայց , եւ ասէ Դաւիթ զՈւրիայ , Նիստ այսօր տատ , եւ վաղիւ արձակեցից զքեզ : Եւ նստաւ Ուրիայ յԵրուսաղէմ յաւուր :

13 յայնմիկ , եւ ի վաղիւ անդր : Կոչեաց զնա Դաւիթ , եկեր նա առաջի նորա եւ արք եւ սարեցաւ , եւ ել սնազանի , ննջեաց յանկողնի իւրում ընդ ծառայս տեսն :

14 Իւրոյ , եւ ի տուն իւր ոչ էջ : Եւ եղև ընդ առաւօսն եւ զրեաց Դաւիթ հրովարտակ առ Յովար , եւ առաքեաց

15 Դաւիթ ի ձեռն Ուրիայ : Եւ զրեաց ի հրովարտակին եւ ասէ , Ո՞րտա զՈւրիայ ընդգէմ սասակացեալ պատերազմին , եւ գործչիւր ընդ կրուկ ի նմանէ , եւ հարցի :

16 Եւ մտցի : Եւ եղև ի պահել Յովարայ զբաղաքն , եւ ես զՈւրիայ ի տեղին ուր զիակր թէ արք զորութեան էին անդ :

17 Եւ ելին արք քաղաքին ի պատերազմ ընդ Յովարայ , եւ անկան ի զորուէ ծառայիցն Դաւիթ ՚Եւ մեռան , եւ Ուրիայ

18 Քեաացի մեռաւ : Եւ առաքեաց Յովար եւ պատմեաց արքայի զամենայն զրոյց :

19 պատերազմին : Եւ պատուէր ետ հրեշտակին եւ ասէ , Ի վախճանել քում զամենայն զրոյցս պատերազմիս իտակ ընդ

20 արքայի , Եւ եղիցի եթէ ելցէ ցասուն

1 Եբբ. գաւաւ . 2 Եբբ. յեղամ . եւ Սովբակ զորավար Ագրասազարայ առաջի նոցա 3 Եբբ. յեղամ

4 Եբբ. կենդանի ես գու եւ 5 Եբբ. արբեցցց զնա Դաւիթ

արքայի եւ ասացէց յքեզ , եթէ Ընդէր մերձենայիք ի քաղաքն մարտնչել , եւ ո՛չ զիտէիք եթէ ի վերուստ ի պարսպայն

21 նետաձիգ լինին . Ո՛ր եհար զԱրիմիւղէք զորդի Յերորաաղայ ¹որպէս ներեսց” . ո՛չ ապաքէն կին մի բեկոր երկանի ընկէց ի վերայ նորա ի վերուստ ի պարսպէն , եւ մեռաւ ²ի Թամասի . ընդէր մօտեցայք ի պարիսպն . եւ աստղեա թէ՛ և՛ ծա-

22 ապ թո Ուրիա Քեռացի մեռաւ : Եւ չորաւ հրեշտակն ³Յովսրայ առ արքայ յերուսաղէմ , եւ եհաս եւ պատմեաց Դաւթի զամենայն ինչ զոր պատուիրեաց նմա Յովար , զամենայն իրս պատերազմին : Եւ բարկացաւ Դաւիթ ի վերայ Յովսրայ , եւ ասէ զհրեշտակն , Ընդէր մերձեցայք ի քաղաքն մարտնչել . ո՛չ զիտէիք եթէ հարկանելոց էք ի պարսպէն . ո՛ր եհար զԱրիմիւղէք սրդի Յերորաաղայ . ո՛չ ապաքէն կին մի բեկոր երկանի ընկէց ի վերայ նորա ի պարսպէն , եւ մեռաւ ի Թամասի . ընդէր

23 մերձենայիք ի պարիսպն” . Եւ ասէ հրեշտակն զԴաւիթ , Զի սաստիկացան ի վերայ մեր արք , եւ եկին առ մեզ սրտաքս , եւ հասար ի վերայ նոցա մինչեւ զլուսն

24 քաղաքին . Եւ նետաձիգ եղեն ազեղնաւորքն ի ծառայս թո ի վերուստ ի պարսպէ սնաի , եւ մեռան ի ծառայից արքայի , եւ ծառայ թո Ուրիա Քեռացի

25 մեռաւ : Եւ ասէ Դաւիթ զհրեշտակն , Այսպէս ասացես զՅովար , Մի թուեսցի չար բանց յոչս թո . զի երբեմն այսպէս ուտէ սուր , եւ երբեմն այնպէս . սաստիկացո զպատերազմն ընդ քաղաքից եւ կործանեցես զպա . եւ ⁴գորացո զանձն

26 թո” : Եւ իբրեւ լուաւ կինն Ուրիայ եթէ մեռաւ Ուրիա այր իւր , կոծեցաւ ի

27 վերայ անս իւրոյ : Իբրեւ անց սուգն , առաքեաց Դաւիթ եւ ամօխօցաց զնա ի տուն իւր , եւ եղեւ նմա կին եւ ծնաւ նմա որդի : Եւ չար թուեցաւ բանն զոր արար Դաւիթ յաչս Տեառն :

ԳԼ . ԺԲ

1 Եւ առաքեաց Տէր զՆաթան ¹մարգարէ առ Դաւիթ . եւ եմուտ առ նա եւ ասէ զնա , Այք երկու էին ի քաղաքի միւսմ ,

2 մին մեծատուն եւ մեծն ազքատ : Եւ

¹Եբր. գլխի Բեբ. ի Թեբէս ²Եբր. եւ եհաս եւ պատմեաց Դաւթի զամենայն յոր սակա առաքեալ էր զնա Յովսր ³Եբր. զու զօրացո զնա

մեծատանն էին հօտք եւ անդեայք բա-

3 զու՛մ յոյ՛մ , Եւ ազքատին եւ ոչ ինչ , բայց որս՛ մի փոքր զոր ստացեալ եւ սպրեցուցեալ եւ մուսցեալ էր զնա , եւ հաստատեալ էր ընդ նմա եւ ընդ որչես նորա ի միասին . ի հացէ նորա ուտէր եւ ի բամակէ նորա ըմպէր եւ ի ծոց նորա ննջէր , եւ էր նորա իբրեւ զլուսար :

4 Եւ եկն անցաւար առ այրն մեծատուն . եւ խնայեաց ասնույ ի հօտից իւրոց եւ յանդէոց իւրոց աննեյ հիւրոջն անցաւորի եկելոյ առ նա , եւ էառ զորո՛ջ ազքատին եւ սրար առնն եկելոյ առ նա կե-

5 յակուր : Եւ բարկացաւ սրամտութեամբ Դաւիթ յոյ՛մ առնն , եւ ասէ Դաւիթ զՆաթան , Կենդանի է Տէր զի որդի մահու-

6 է այրն որ սրար զայն : Եւ զորո՛ջն սու՛մեսցի ⁵եւ թնայտիկ , փոխանակ առնելոյ զբանն զայն , փասն զի ոչ խնայե-

7 եաց : Եւ ասէ Նաթան զԴաւիթ , Դու ես այրն ¹որ արարեր զայն” . այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայելի , Ես եմ որ օծի զքեզ թագաւոր ի վերայ ¹ամենայն Իսրայելի , եւ ես փրկեցի զքեզ ի ձեռաց

8 Սաուուղայ . եւ ետու քեզ զառն սեանս թո , եւ զկանայս տեսան թո ի ծոց թո . եւ ետու քեզ զԻսրայել եւ զՅուդա . եւ թէ սակաւ իցէ , յաւելից քեզ զոյն-

9 չափս Եւ ընդէր անարգեցեր զբան Տեառն ստնեյ չար առաջի աչսոյ նորա . զՈւրիա Քեռացի հարեր զու սրով , եւ զկին նորա առեր զու քեզ կնութեան , եւ զնա սպաներ սրով որպէսցն Ամոնայ :

10 Եւ արդ մի հետացի սուր ի տանէ քումմէ մինչեւ զյաւելտեան , փոխանակ զի անարգեցեր զիս , եւ ասեր զկինն Ուրիայ

11 Քեռացույ լինել քեզ կնութեան : Այսպէս ասէ Տէր , Ահա ես յարուցից ի վերայ թո չարիս ի տանէ քումմէ . եւ առից զկանայս թո առաջի աչսոց քոց եւ տաց ընկերի քում , եւ ննջեաց ընդ կանայս թո

12 յանդիման արեգականս այսորիկ : Զի զու արարեր զայց ի ծածուկ , եւ ես արարից զբանց զայց յանդիման ամենայն Իսրայելի

13 եւ առաջի արեգականս այսորիկ : Եւ ասէ Դաւիթ զՆաթան , Մեղայ Տեառն . եւ ասէ Նաթան զԴաւիթ , Եւ Տէր անցոյց

14 զքեւ զմեղս քումմի մեղսիս : Բայց բանով զայրացուցանելով զայրացուցեր զթնաւմիս Տեառն բանին այնուիկ , որպիս թո որ ծնանելոց է քեզ՝ մահու մեղցի :

⁵Եբր. չորեքստիկ

15 Եւ զհնաց Նաթման ի սուռն իւր . եւ եւ-
 հար Տէր զմանուէն զոր ծնաւ կինն
 16 Ուրիայ Դաւիթի , եւ հիւանդացաւ : Եւ
 խնդրեաց Դաւիթ յԱստուծոյ վասն ման-
 կանն , եւ պահեաց Դաւիթ պահս , եւ եմուտ¹
 17 անկաւ ի վերայ գեանոյ : Եւ յարեան ի
 վերայ նորա ²ճառայք սանն յարուցա-
 նել զնա , եւ ոչ կամէր յաննել ի գեա-
 18 նոյն , եւ ոչ եկեր ընդ նստա հաց : Եւ
 եղև յաւուրն եւթներորդի մեռանել
 մանկանն . եւ երկեսն ճառայքն Դաւ-
 թի պատմել նմա եթէ Մեռաւ մանուէն .
 զի ասացին , եթէ մինչդեռ կենդանի էր
 մանուէն խօսեցաք ընդ նմա եւ ոչ լուաւ
 ձայնի մերու՛մ , եւ զլարդ ասացուք
 նմա թէ Մեռաւ մանուէն , եւ զործիցէ
 19 չարիս : Եւ ետես Դաւիթ եթէ չչնջեն
 ծառայք նորա , եւ իմացաւ Դաւիթ եթէ
 մեռաւ մանուէն . եւ ասէ Դաւիթ յժա-
 ոպսն իւր , եթէ Մեռեալ իցէ մանուէն .
 20 եւ ասեն , Մեռաւ : Եւ յարեաւ Դաւիթ
 ի դեանոյն , եւ լուացաւ եւ օծաւ , եւ
 փոխեաց զհանրործ իւր , եւ եմուտ ի
 սուռն ³Աստուծոյ եւ երկիր եպպոյ նմա .
 եւ եմուտ ի սուռն իւր , եւ խնդրեաց
 հաց ուտել . եւ եղին ստաջի նորա հաց ,
 21 եւ եկեր : Եւ ասեն ցնա ծառայքն իւր ,
 Զինչ է բանոց այց զոր արարեք վասն
 մանկանն . մինչդեռ կենդանին էր , պահէիր
 եւ լայիր ⁴Կե քանէիր . եւ իրեւ մեռաւ
 մանուէն , յարեար կերար եւ արբեր :
 22 Եւ ասէ Դաւիթ , Մինչդեռ կենդանի էր
 մանուէն , պահէի եւ լայի . քանզի ասէի ,
 Ո՞ր զիսէ , ոգորմեսցի Տէր , եւ կեցցէ մա-
 23 նուէն : Արդ որովհետեւ մեռաւ մանուէն ,
 ես ընդէր պահիցեմ . միթէ կարող իցեմ
 դարձուցանել զնա այսրէն . ես առ նա
 երթալոց եմ , եւ նա առ իս ոչ դարձցի :
 24 Եւ միթիտարեաց Դաւիթ զԲերաբէէ
 զկին իւր , եւ եմուտ առ նա եւ ննջեաց
 ընդ նմա . եւ յղացաւ եւ ծնաւ որդի ,
 եւ կոչեաց զանուն նորա Սողոմոն . եւ
 25 Տէր սիրեաց զնա : Եւ առաքեաց ի ձեռն
 Նաթմանայ մարդարէի , եւ կոչեաց զա-
 նուն նորա ⁵Յեղեղի վասն Տեառն :

26 Եւ պատերազմեցաւ Յոլայր յԹաբաթ
 որդուցն Ամոնայ , եւ եհաս յառնուլ
 27 զքաղաքն իտաւուորութեանն : Եւ առաք-
 եաց Յովար հրեշտակս առ Դաւիթ եւ

ասէ , Պատերազմեցայ ընդ Ռաբա-
 թայ , եւ հասի յառնուլ զքաղաքս ջրոց .
 28 Եւ արդ ժողովեա զմիացորդս ժողովրդ-
 եանդ , եւ բանակեցիս զքաղաքաւ եւ
 ապես զսա . զի մի ես սոսից քաղաքս
 եւ կոչեացի անուն իմ ի վերայ սորա :
 29 Եւ ժողովեաց Դաւիթ զամենայն ժո-
 ղովորդն եւ չոլաւ յԹաբաթ , եւ պա-
 30 տերազմեցաւ ընդ նմա եւ առ զնա : Եւ
 առ զպսակն ⁶Մեղքումայ թագաւորին
 նոցա . ի գլխայ նորա . եւ կշիռ նորա
 տաղանդ մի ոսկւոյ , եւ ականց պա-
 սուականաց . եւ էր ի գլուխ Դաւիթ .
 եւ զսո քաղաքին եհան բազում յոյժ :
 31 Եւ զժողովուրդն որ էր ի նմա եհան ար-
 տաքս , եւ արկ ընդ սոցաւ եւ ընդ քերանօք
 երկաթեօք , եւ չրջեցուցանէր զնոսա ա-
 զիւսով . եւ այնպէս առնէր ընդ ամենայն
 քաղաքս որդւոցն Ամոնայ . եւ գարձաւ
 Դաւիթ եւ ամենայն զօրն յերուսաղէմ :

ԳԼ . ԺԴ

1 Եւ եղև յես այնորիկ , եւ Արխաղո-
 մայ որդւոյ Դաւիթի էր քոյր մի յոյժ գե-
 ղեցիկ տեսեամբ , եւ սնուն նորա Թա-
 մար . եւ սիրեաց զնա Ամոն որդի Դաւ-
 2 թի : Եւ նեղէր Ամոն մինչեւ հիւան-
 դանայ նմա վասն Թամարայ քեռ իւրոյ .
 զի կոյս էր նա , եւ ծանր էր յաչս Ամոնի
 3 առնել ինչ նմա : Եւ էր ընկեր Ամոնայ ,
 եւ անուս նորա Յովիազար , որդի Սա-
 մայ եղբոր Դաւիթի . եւ Յովիազար պր
 4 իմաստուն յոյժ : Եւ ասէ ցնա , Զի՞ է
 զի այդպէս ծիւրիս , որդի արքայի , այ-
 գունն այգուն եւ ոչ պատմես ինձ : Եւ
 ասէ ցնա Ամոն , զԹամար զքոյր Արի-
 5 սուլումայ եղբոր իմոյ սիրեմ ես : Եւ ա-
 սէ ցնա Յովիազար , Ննջեա ի մահիճս
 քո եւ հիւանդացիր , եւ ասացէ հայր քո
 տեսանել զքեզ . եւ ասացես ցնա ,
 Մայց թամար քոյր իմ եւ տացէ ինձ
⁸Խիւս . եւ արացէ առաջի աչաց իմոց
 կերակուր , զի տեսից եւ կերայց ի ձե-
 6 ապ նորա : Եւ ⁹անկաւ Ամոն եւ հիւան-
 դայաւ . եւ եմուտ արքայ տեսանել զնա .
 եւ ասէ Ամոն զարքայ , Եկեսցէ Թամար
 քոյր իմ առ իս , եւ արացէ առաջի իմ

¹ Եբբ.-չեցին յա-եւ- , եւ ադու եւ ² Եբբ. ծեբբ
³ Եբբ. Տեառն ⁴ 3Եբբ. պ-պ- ⁵ Եբբ. Յեղե-
 դիս , -չե-չ- սիրելի Տեառն

⁶ Եբբ.-չեցին -նէ 4-յն Մեղքում -բ-ն-ն-ն-ն թա-
 գաւոր նոցա ⁷ Եբբ. ընդ սասարթ , եւ
 անցոյց զնոսա ընդ հնոց աղիւսոյ ⁸ Եբբ. ուտել
 հաց ⁹ Եբբ. ընդգնեցաւ Ամոն եւ խօթա-
 պատճառ եղև

7 կերակուր բլիթս, եւ կերայց ի ձեռաց
 7 նորա: Եւ առաքեաց Դաւիթ սա թամար
 ի սուռն եւ ասէ, Երթ ի սուռն Ամոնի
 կղբօր քո, եւ արա նմա կերակուր:

8 Եւ գնաց թամար ի սուռն Ամոնի կղբօր
 իւրոյ. եւ նա անկեալ զնէր. եւ սոս
 նայս եւ թրեաց, եւ արար առաջի նորա

9 բլիթս, եւ եփեաց զբլիթսն. եւ առ
 գտաօական եւ խափեաց առաջի նորա.
 եւ ոչ կամեցաւ ուտել. եւ ասէ Ամոն,
 Հանէք զամենայն այր յինէն արտաքս.
 եւ հանին արտաքս զամենայն այր ի նմա:

10 Նէ: Եւ ասէ Ամոն զթամար, Տար զխոր-
 ափիսդ ի սենեակ, եւ կերայց ի ձե-
 աաց քոց: Եւ սոս թամար զբլիթսն զոր
 արար, եւ տարաւ Ամոնի կղբօր իւրում

11 ի սենեակն, եւ մատոյց նմա ուտել: Եւ
 նա բուռն եհար զնմանէ եւ ասէ ցնա,
 12 Եկ ննջեա ընդ իս, քոյր իմ: Եւ ասէ
 ցնա, Մի՛, կղբայր իմ, մի՛ տառապե-
 ցուցաներ զիս. զի ոչ գործի այգպիսի
 ինչ ի մէջ Իսրայելի, եւ մի՛ սունեի զայց

13 անղգամութիւն: Եւ ես յո՞ տանիցիմ
 զմի աստիտիս իմ. եւ զու լինիցիս իբրեւ
 գմի յանղգամաց ի մէջ Իսրայելի. եւ
 արդ խօսեաց ընդ արքայի, եւ ոչ ար-

14 գելու զիս ի քէն: Եւ ոչ կամեցաւ
 Ամոն լսել ձայնի նորա. եւ բռնահոր-
 եաց եւ բռնազատեաց զնա, եւ տա-
 ռապեցոյց զնա եւ ննջեաց ընդ նմա:

15 Եւ ասեաց զնա Ամոն ասելութիւն մեծ
 յոյժ. զի մեծ էր ատկութիւնն զոր ատ-
 եաց զնա. ²եւ անհարկն վերջին ա-
 ղէտքն՝ քան զառաջին սէրն զոր սիր-
 եաց զնա. եւ ասէ ցնա Ամոն, Արի

16 զնա: Եւ ասէ ցնա թամար, ³Մեծ են
 չարիքս այս քան զայն զոր արարեր
 ընդ իս, արձակելոյ քո զիս. եւ ոչ կա-

17 մեկաց Ամոն լսել ձայնի նորա: Եւ կո-
 չեաց զպատանին՝ իւր զլիբակացու տան
 իւրոյ, եւ ասէ ցնա, Հան զդա յինէն
 արտաքս, եւ փակեա զդուրսդ զինի գո-

18 րա: Եւ էր զնովաւ ⁵պարեգօտաւ ասզնու-
 զորքք եւ կոճկէնք՝, զի այնպէս զղե-
 նուին զստեկրթազաւորաց կայսք զձորձս
 իւրեանց. եւ եհան զնա սպասաւորն
 արտաքս, եւ փակեաց զգուրան զինի

19 նորա: Եւ սոս թամար մտխոր եւ արկ
 զգլխով իւրով, եւ ⁶զպարեգօտան կոճ-

կէնս՝ զոր զգեցեալ էր՝ պատասեաց,
 եւ եց զձեռս իւր ի վերայ զլիսոյ իւրոյ,
 20 եւ երթայր երթալով եւ լայր: Եւ ասէ
 ցնա Արիստով եղբայր նորա, Միթէ
 Ամոն կըրայր քո եղև ընդ քեզ. եւ
 արդ, քոյր իմ, լուս կաց, զի կըրայր
 քո է, մի՛ ամեր զմտաւ քով խօսել
 զբանդ վայլ. եւ նստաւ թամար՝ աչու-
 թեամբ ի սան Արիստովայ կղբօր իւ-

21 րոյ: Եւ լուաւ ⁸արքայ զբանս զայստիկ
 եւ բարկացաւ յոյժ. ²եւ ոչ արտմեցոյց
 զողի Ամոնայ որդոյ իւրոյ զի սիրէր

22 զնա, զի անպատանի նորա էր:՝ Եւ ոչ
 խօսեցաւ Արիստով ընդ Ամոնայ ի չարէ
 մինչև կըրարի. զի տառայր Արիստով
 զԱմոն վասն բանին զոր տառապեցոյց
 զթամար զքոյր նորա:

23 Եւ եղև յետ ⁹երևոյ աւուրց, եւ էին
 կտուրք Արիստովայ ¹⁰ի Բեթմարտն մերձ
 յեփրեմ. եւ կոչեաց Արիստով զամե-

24 նայն որպիսն արքայի: Եւ եկն Արիստ-
 զով առ արքայ եւ ասէ ցնա, Ահաւա-
 նիկ կտուրք են ծառայի քում, երթիցէ
 արքայ եւ ծառայր իւր ընդ ծառայի քում:

25 Եւ ասէ արքայ ցերխողով, Մի՛, որդ-
 եակ իմ, մի՛ երթիցուք ամենեքեան
 մեք, եւ մի՛ ծանրացուք քեզ. եւ
 ստիպեաց զնա, եւ ոչ կամեցաւ երթալ,

26 եւ օրհնեաց զնա: Եւ ասէ Արիստով,
 Ապա թէ ոչ՝ զոնէ կեկեցէ ընդ իս Ամոն
 կղբայր իմ. եւ ասէ արքայ, Ընդէր

27 երթիցէ ընդ քեզ Ամոն: Եւ ստիպեաց
 զնա Արիստով, եւ արձակեաց ընդ նմա
 զԱմոն եւ զամենայն զորպիսն արքայի:

28 Եւ արար Արիստով խրախուժիւն բոս
 խրախուժեան թագաւորի:՝ Եւ սպաս-
 ուէր ետ Արիստով մանկաւոյ իւրում
 եւ ասէ, Տեսէք, յորժամ զուարթացի
 սիրտն Ամոնայ զիմուոյ, եւ ասացից
 ձեզ, Հարէք զԱմոն եւ սպանէք զնա,
 մի՛ երկնչիք. զի ոչ պարէն ես իցեմ
 որ հրամայիցեմ ձեզ. քաջպերեցարուք

29 եւ ընուք յորդիս զօրութեան: Եւ ա-
 բարին մամկալին Արիստովայ Ամոնի
 որպէս հրամայեաց նոցա Արիստով, եւ
 յարեան ամենայն որպէք արքայի, եւ
 հեծան այր իւրաքանչիւր ի ջուրոջ իւ-

30 բում եւ փախեան: Եւ եղև մինչդեռ
 նորա էին ի ձանապարհին, զոյժ եկն առ
 Դաւիթ եւ ասեն, Կոտորեաց Արիստ-

¹ Եբ. երկուս ² Եբ. Գ-Լ-Ե ³ Եբ. Մի՛ այդ-
 պէս, մեծ ⁴ Եբ. զպատաւոր իւր ⁵ Եբ. պարե-
 գօտ գոյնագոյն ⁶ Եբ. զպարեգօտան գոյնագոյն

⁷ Եբ. անմխիթար ⁸ Եբ. արքայ Դաւիթ ⁹ Եբ.
 երկեմոյ ¹⁰ Եբ. ի Բաաղ-Հասոր

զոմ զամենայն որդիս արքայի, եւ ոչ
 31 եթող ի նոցանէ եւ ոչ մի: Յարեաւ
 արքայ, պատառեաց զճանդերձս իւր, եւ
 անկաւ ի վերայ զեանոյ. եւ ամենայն
 ծառայք նորա կային չորջ զնովաւ սրա-
 32 սատեալ զճանդերձս իւրեանց: Պատաս-
 խանի եւ Յովնազար որդի Ամամայ կղ-
 բոր Դաւթի եւ ասէ, Մի ասացէ տէր
 իմ՝ արքայ եթէ ամենայն որդիք արքայի
 մեռան, զի Ամոն միայն մեռաւ. քանզի
 ի բերան Աբիսողոմայ կայր, յորէ յորմէ
 սառապեցոյց զԹամար զքոյր նորա:
 33 Եւ արդ մի՞ գիցէ՞ արքայ ի սրտի
 երուժ գրանդ եւ ասացէ թէ Ամենայն
 որդիքն արքայի մեռան. այլ զի Ամոն
 34 միայն մեռաւ: Եւ փախեաւ Աբիսողոմ:
 Եւ երարձ պատանին զէան զաչս իւր
 եւ ետես, եւ ահա ժողովուրդ բազում
 գայր ընդ ճանապարհն ի նմանէ առ կող-
 մամբ լերինն՝ ընդ զառ ի վայրն. եւ
 եկն զէան պատմեաց արքայի եւ ասէ.
 Տեսի արս ի ճանապարհին Որովիմայ
 35 առ կողմամբ լերինն՝: Եւ ասէ Յովնա-
 զար ցարքայ, Ահա որդիք արքայի եկին.
 ըստ բանի ծառայի քո նոյնպէս եղեւ:
 36 Եւ իբրեւ վախճանեաց զխօսելն, եւ ահա
 որդիքն արքայի եկին, եւ ամբարձին
 զձայնս իւրեանց եւ լացին. այլ եւ ար-
 քայ եւ ամենայն ծառայք իւր լացին
 37 լալիւն մեծ յոյժ: Եւ Աբիսողոմ փախ-
 եաւ, եւ չորակ առ Մովսէլեձ որդի
 եմուռաց արքայի Գեաուրայ՝ յերկիր
 Մաքուլայ. եւ սուգ առ Դաւթի ար-
 քայ ի վերայ որդւոյն իւրոյ զամենայն
 38 առուրս: Եւ Աբիսողոմ փախեաւ եւ
 զնաց ի Գեաուր, եւ էր անդ ամս երիս:
 39 Եւ զազարեաց արքայ Դաւթի յերանե-
 լոյ ի վերայ Աբիսողոմայ՝, քանզի մխի-
 թարեցաւ ի վերայ Ամոնայ որ մեռաւն:

ԳԼ. ԺԴ

1 Եւ իմացաւ Յովաբ որդի Շարուհեայ,
 եթէ է սիրտ արքայի ի վերայ Աբիսո-
 2 ղոմայ: Առաքեաց Յովաբ ի Թեկուէ,
 եւ առ անտի կին մի իմաստուն, եւ
 ասէ ցնա, Սուգ առ եւ զղեցիր հան-
 զերձ սոյո. մի՞ օժանիցիս իւղով, եւ
 եկիցես իբրեւ զկին մի սպայեալ ի վե-
 3 րայ բազմորեայ մեռելոյ: Եւ եկեացես
 առ արքայ, եւ խօսեցիս ընդ նմա ըստ

բանիս ըստ այսմիկ. եւ եզ Յովաբ բանս
 4 ի բերան նորա: Եմուտ կինն Թեկու-
 ցի առ արքայ, եւ անկաւ ի վերայ երե-
 սաց իւրոց ի գետին՝, եւ ասէ, Ապրեցո
 5 յիս արքայ, Չի՞ է քեզ: Եւ նա ասէ, Վարի
 իսկ տարնալ է ինձ. կին մի այրի իմ
 6 ես. մեռաւ այր իմ. եւ աղախնոյ քո
 երկու որդիք էին, մարտեան ընդ մի-
 մեանս երկօքեան յանդի. եւ ոչ ոք էր
 որ համոզէր ի մէջ նոցա, եւ հնար մին
 7 զմեւս եղբայրն եւ սպան գնա: Եւ ահա
 յարուցեալ է ամենայն ազգն ի վերայ
 աղախնոյ քո, ասեն, Տուր զսպանուցն
 եղբոր իւրոյ, եւ սպանցուք զնա փո-
 խանակ անձին եղբոր իւրոյ, եւ բարձ-
 ցուք զժառանգակալն՝ ՚քո. եւ չիջու-
 ցանիցեն զկայծակն իմ զմնացեալ, առ
 ի չթողոյ առն իմում մնացորդ եւ ա-
 8 նուն ի վերայ երեսաց երկրի: Եւ ասէ
 արքայ՝, եթէ՞ ՚որջամբ ի տուն քո, եւ
 9 ես պատուիրեցից զման քո: Եւ ասէ
 կինն Թեկուացի՞, Յիմ վերայ, արքայ,
 անօրէնութիւնն, եւ ի վերայ տան հօր
 իմոյ, եւ արքայ եւ ամբողջ իւր քառեալ:
 10 Եւ ասէ արքայ, Ո՞վ է որ խօսեցի ընդ
 քեզ, եւ անցես զնա առ իս եւ ոչ եւս
 11 մերձեցի առ քեզ: Եւ ասէ, Յիշեցէ
 արքայ զՏէր Աստուած իւր, ի յաճախել
 մերձաւորի արեանն սպականել. մի՞
 ջնջեացեն զորդեակն իմ: Եւ ասէ Դա-
 ւթիթ, Կենդանի է Տէր եթէ անկցի ի
 12 հերոյ որդւոյ քո մագ մի ի գետին: Եւ
 ասէ կինն, Խօսեցի աղախին քո ա-
 ռաջի Տեառն իմոյ արքայի բան մի. եւ
 13 ասէ, Խօսեաց: Եւ ասէ կինն, Ընդէր
 խորհեցար սղոյսիս ինչ ի վերայ ժողո-
 վրդեանն Աստուծոյ՝ Կամ թէ ի բերա-
 նոյ արքայն լոյէ բանն այն վնասու՞-
 չդարձուցանի ալքայի զմերձեալն յիւրմէ:
 14 Չի մահու մեռանիցի, եւ իբրեւ զջուր
 հեղեալ յերկիր ոչ ամիտիցի, եւ ոչ
 առնուցու Աստուած զոգին, եւ խորհիցի
 15 ոք մերձիկ՝ յինքննէ զմերձեալն: Եւ
 արդ եկի խօսել առ արքայի տեսուն

1 ՅԵՐ. դաւթի 2 ՅԵՐ. տէր իմ արքայ 3 ՅԵՐ. ցանկայր արքայ Դաւթի երանել առ Աբիսողոմ

4 ՅԵՐ. յեջնէ յաւելաւ, եւ երկեր եպագ նմա 5 ՅԵՐ. յեջնէ յաւելաւ, ցկին 6 ՅԵՐ. յեջնէ յաւելաւ, ցարքայ 7 ՅԵՐ. զի է խօսել արքայի գրտնս զայս՝ յին իբրեւ յանցուցեալ, քանզի ոչ զարձուցանէ արքայ սպարէն զմերձեալն իւր. (14) Չի մահու մեռանիցի եմք, եւ եմք իբրեւ զջուր հեղեալ յերկիր որ ոչ ամիտիցի, եւ ոչ առնու Աստուած զոգին, այլ հնարի հնարս առ ի չմերձելոյ

իմոյ զբանս զայս . զի ¹տեսանիցէ զիս ժողովուրդն եւ ասիցէ , թէ ապախին քո խօսեցաւ” ընդ արքայի , ի խրեւս արասցէ արքայ զբանս ազախնոյ իւրոյ .

16 Զի լուիցէ արքայ եւ փրկեացէ զիս ի ձեռաց առնն , որ խնդրէ ջնջիլ զիս եւ զորդի իմ ի ժառանգութենէ Աստուծոյ :

17 Եւ ²ասէ կինն” , Եզիցիրան տեսան իմոյ արքայի ³ի զոնս , զի իբրև զհրեշտակ Աստուծոյ այնպէս է աէր իմ արքայ ի լսիլ զբարի եւ զչար . եւ Տէր Աստուած

18 քո եզիցի ընդ լեզուս : Եւ պատասխանի ետ արքայ եւ ասէ ցկինն , Մի թարբուցաներ յիննէս զբանս զոր իմ արքայ : Եւ ասէ կինն , Սոսեացի աէր իմ արքայ :

19 Եւ ասէ արքայ , Միթէ ձեռն Յովարայ իցէ՞ յամենայնի յայդմիկ ընդ լեզուս . եւ ասէ կինն ցարքայ , Կենդանի է անձն քո , աէր իմ արքայ , եթէ իցէ յաջ կամ յահեակ յամենայնէ զոր խօսեցաւ աէր իմ արքայ . զի ծառայ քո Յովար” նա պատուիրեաց ինձ , եւ նա եղ ի բերանս աղախնոյ քո զամենայն բանս զայտասիկ :

20 Վասն բոլորելոյ երեսաց բանիս յայտրիկ՝ զոր արար ծառայ քո Յովար զբանս զայտասիկ , եւ աէր իմ իմաստուն է ըստ իմաստութեանս հրեշտակի Աստուծոյ՝ զիտև զամենայն ինչ որ յերկրի :

21 Եւ ասէ արքայ զՅովար Անաւասիկ արարի լեզ ըստ բանի քում ըստ այդմիկ . երթ զարժն ամ զպատանեակն

22 զԱրիստղոմ : Եւ անկաւ Յովար ի վերայ երեսաց իւրոյ յերկիր եւ երկիր եպպզ նմա , եւ օրհնեաց զարքայ . եւ ասէ Յովար , Այսօր գիտաց ծառայ քո եթէ գտի չնորձս յաչս քո , աէր իմ արքայ , զի արար աէր իմ

23 արքայ զբանս ծառայի իւրոյ : Եւ յարեաւ Յովար եւ գնաց ի Գեսուր , եւ ամ զԱ-

24 րիստղոմ յերուսաղէմ : Եւ ասէ արքայ , Դարձցի ի տուն իւր , եւ զերեսս իմ մի տեսցէ : Եւ զարձաւ Արիստղոմ ի տուն իւր , եւ զերեսս արքայի ոչ ետես :

25 Եւ իբրև զԱրիստղոմ ոչ գոյր յամենայն Իսրայելի այր զեզեցիկ զփոխի յոյժ . ի թաթից ոտից իւրոց մինչև ի գլուխ

26 իւր ոչ գոյր ի նմա արատ : Եւ ի փոքրել զհերոս իւր ՚իմէր ի սկսանելոյ առուրց յառուրս” փոքրել , զի կարի ծանրանայր

ի վերայ նորա , եւ ⁵յորժամ փոքրէր , եւ կշտէր զհեր զլիտոյ իւրոյ երկերիս քիկ քիկ

27 ըստ արքունական սկիզ : Եւ ծնան Արիստղոմայ երևը ուստեյը եւ զուսոր մի եւ անուն նարա Թամար . եւ նա էր կին զեզեցիկ յոյժ տեղեկամը : Եւ եղև կին Խորովամայ որդւայ Աղգուտնի , եւ ծնաւ նմա զԱրիստղոմ :

28 Եւ նստաւ Արիստղոմ յերուսաղէմ առուրս ամայ երկուց , եւ զերեսս արքայի ոչ ետես : Եւ առարեաց Արիստղոմ աւ Յովար յզիլ զնա աւ սարայ . եւ ոչ կամեցաւ երթալ առ նա . եւ առարեաց երկրորդ անգամ առ նա , եւ ոչ կամեցաւ երթալ : Եւ ասէ Արիստղոմ ցժառայս իւր , Դիտէր զգիծակ զեանոյ Յովարայ , լի զարևով մօտ է աւ իս . երթայը այրեցէր գնա հրով : Եւ այրեցին ծառայքն Արիստղոմայ զգիծակն Յովարայ հրով : ⁶Եւ եկին ծառայքն Յովարայ առ նա պատասխալ զհանդերձս իւրեանց , եւ ասեն , Այրեցին ծառայքն

31 Արիստղոմայ զգիծակն հրով : Եւ յարեաւ Յովար եւ եկն աւ Արիստղոմ ի տուն եւ ասէ ցնա , Ընդէր այրեցին ծառայք քո զգիծակն իմ հրով : Եւ ասէ Արիստղոմ ցՅովար , Յզեցի առ լեզ եւ ասեմ , Եկ այս յզեցից զլեզ աւ արքայ , ասել թէ Ընդէր եկի ի Գեսուրայ , լաւ էր ինձ տակաւին անդ լինել ⁶քան ոչ աստանել” զերեսս արքայի , եւ եթէ

33 վնաս ինչ կայցէ յիս , ⁷սպան գիս : Եւ եմուտ Յովար առ արքայ եւ սրատեաց նմա . եւ կոչեաց զԱրիստղոմ . եւ եմուտ սո արքայ եւ երկիր եպպզ նմա , եւ անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր առաջի արքայի . եւ համբուրեաց արքայ զԱրիստղոմ :

ԳԼ . ԺԵ

1 Եւ եղև յետ այնորիկ եւ արար Արիստղոմ կառս եւ երկվարս , եւ յիտուն

2 այր սուրճանդակ առաջի իւր : Եւ կանխէր Արիստղոմ եւ կայր աւ ձոնապարհի զբանն . եւ լինէր ամենայն այր որոյ էր գատ զայ առ արքայ ի դատաստանս , բարբառէր առ նա Արիստղոմ եւ ասէր ցնա , Յորմէ՞ քաղաքէ ես զու . եւ ասէր այրն , Ի միոյ ի ցեղիցն Իսրայելի է ծառայ քո . Եւ ասէ ցնա Արիստղոմ , Անա

¹ Եբբ. երկեցոց զիս ժողովուրդն . եւ ասէ աղախին քո , Սոսեացայ ² Եբբ. տաց աղախին քո ³ Եբբ. ի հանգիստ չա՛մ , ի միթարութիւն ⁴ Եբբ. եւ լինէր ի վախճանել տարւոյն

⁵ Եբբ. զ-ի-տ-ի ⁶ Եբբ. եւ արգ տեսից ⁷ Եբբ. սպանցէ

բանք քո բարի են եւ զիւրինք, եւ որ
 ունկնդիր լինիցի քեզ՝ չիք առ ի յար-
 4 քայլէ : Եւ աւելք Արիստղոս, Ո՛ր կացու-
 ցանէր զիս զատաւոր ի վերայ երկրիս,
 եւ առ իս զայր ամենայն այլ որոյ էր
 5 հակառակութիւն եւ զատաստան, եւ
 3 առնէր նմա իրուուհւոս : Եւ լինէր յոր-
 ժամ մերձենայր առ նա այր երկիրս սա-
 զանկ նմա, ձգէր զձեան իւր եւ առ
 ինքն մատուցանէր, եւ համբուրէր զնա :
 6 Եւ առնէր Արիստղոս ըստ բանիս ըստ
 այսմիկ ամենայն Խորայկի եկեղոյ ի գա-
 տատան առ արքայ, եւ յանկուցանէր
 լինքն Արիստղոս զսիրտս ամենայն ա-
 բանց Խորայկի :
 7 Եւ եղև ի կատարել ¹չորից ամաց,
 առէ Արիստղոս ²ցհայր իւր՝, Երթայց եւ
 հատուցից զուխտս իմ զոր ուխտեցի
 8 Տեսան ի Քերթոն . Զի ուխտեալք ուխ-
 տեսց ծառայքս մինչ էի ի Քեսուր յԱ-
 սորիս . առևմ, եթէ զարձուցանելով
 զարձուցէ զիս Տէր յերուսաղէմ, սաշ-
 9 տեցից զՏէր : Եւ առէ զնա արքայ,
 Երթ խորագուրթեամբ . եւ յարեաւ զնաց
 10 ի Քերթոն : Եւ առաքեաց Արիստղոս
 պատուիրակս յամենայն զեղս Խորայկի,
 եւ առէ, Ի լսել ձեր զձայն եղջեր փո-
 զոյ, ստասցիք եթէ Թագաւորեաց թա-
 11 զաւոր Արիստղոս ի Քերթոն : Եւ ընդ Արի-
 ստղոսայ զնաղին արք երկերբւր ³ հրախր-
 ետալք, եւ երթային միասնութեամբ,
 12 Եւ ոչ զիտէին ամենեւին զզրոյցսն : Եւ
 առաքեաց Արիստղոս Եւ կոչեաց զԱքի-
 տուրիւ ⁴Թեկուացի խորհրդակից Դաւիթի
⁵ի քաղաք իւր ի Գովյա՝ ի զոնկ իւրում
 զզոնսն . եւ եղև ⁶ժողով սաստիկ, եւ
 ժողովուրդ բազում երթայր ընդ Արի-
 ստղոսայ :
 13 Եւ եհաւ զուժկան առ Դաւիթ եւ
 առէ, Եզիւ սիրտ արանց Խորայկի զհեա
 14 Արիստղոսայ : Եւ առէ Դաւիթ յամե-
 նայն ծառայս իւր որ ընդ նմա յերու-
 սաղէմ, Արիք եւ փախիցուք . զի ոչ
 զոյ մեզ փրկութիւն յերեսաց Արիստ-
 զոսայ . փութացարուք զնալ, զի մի
 արաղիցէ եւ հասանիցէ մեզ, եւ արկա-
 նիցէ ի վերայ մեր չարիս, եւ հարկա-
 15 նիցէ զքաղաքս սրով սուսերի : Եւ առնն
 ծառայքն արքայի զարքայ, Ըստ ամե-

նայնի զոր եւ կտակիցի աէր մեր արքայ՝
 ահաւաստիկ կամք ծառայք քո :
 16 Եւ ել արքայ եւ ամենայն տուն նորա
 ի հեօրոտս . եւ եթող արքայ տան կին
 ի հարձից անտի իւրոց սլանկ զտունն :
 17 Եւ ել արքայ եւ ամենայն ծառայք նորա
 հետեակք, եւ կացին ⁷առ ձիթենուոյն
 18 որ յանապատի տեղ : Եւ ամենայն ծա-
 ռայք նորա մի ըստ միոջէ անցանէին
 առ նոյսու, եւ ամենայն Քերեթին եւ
 Որեկեթին, եւ ամենայն Քեթայիք, վեց
 հարեւր այր եկեղոյ հետեակք ի Քեթայ,
 19 անցանէին տոաջի Գաւթի : Եւ առէ ար-
 քայ զեթթի Քեթայի, Ընդէր գայցես եւ
 զու ընդ մեզ . զարձիր անգրէն եւ ընակեա
 ընդ արքայի, զի այր օտար ես զու, եւ
⁸խախտեցար ի տեղոջէ քումմէ ի Քե-
 20 թայ եւ եկիր՝, Եւ այսօր խախտեցեմ
 զքեզ զնալ ընդ մեզ . եւ ես երթայց յո
 եւ երթայոց իցեմ, յայց զու զարձիր
 եւ զարձս զեզրարս քո ընդ քեզ . եւ
⁹արասցէ ընդ քեզ Տէր՝՝ ողորմութիւն
 21 եւ ճշմարտութիւն : Պատասխանի ետ
 Եթթի արքայի եւ առէ, Կենդանի է
 Տէր, եւ կենդանի է տէր իմ արքայ, զի
 ի տեղոջ ուր տէր իմ արքայ իցէ, եւ
 ի մահու եւ ի կեանս՝ անդ եզրիցի եւ
 22 ծառայ քո : Եւ առէ արքայ զեթթի, Եկ
 անց ¹⁰ընդ իս՝ . եւ անց Եթթի Քեթայի,
 եւ ամենայն ծառայք նորա եւ ամենայն
 23 սմբոխ նորա ընդ նմա : Եւ ամենայն
 երկիրն լայր մեծածայն, եւ ամենայն զօրն
 անցանէր ¹⁰ընդ հեզեզասն Կեզրոնի՝ .
 անց եւ արքայ ընդ հեզեզասն Կեզրոնի .
 եւ ամենայն զօրն ¹¹եւ արքայ երթային՝
 ընդ երեսս ճանապարհին անապատի :
 24 Եւ ահա Սողոմլի եւ ամենայն Ղեւ-
 տացիք ընդ նմա, բարձին զտապանակ
 ուխտին ¹²Տեսան ի Բեթարայ, եւ կա-
 ցուցին զտապանակն Աստուծոյ . եւ ել
¹³Եւ Բեթարայ մինչեւ կտատարեաց ամե-
 նայն ժողովուրդն անցանկ ի քաղաքէ
 25 անտի : Եւ առէ արքայ զՍաղոմլի, Դարձո
 զտապանակց Աստուծոյ ի քաղաք, եւ
 նստցի ի տեղոջ իւրում . եթէ զտից
 չնորնս առաջի Տեսան՝ զարձուցէ զիս,
 եւ ցուցցէ ինձ զգա եւ զվայելչութիւն
 26 զորա . Ապա թէ այսպէս ստասցէ զիս

¹ Եբբ. բառասուն ² Եբբ. ցարբոյ ³ Եբբ. արեւելիս յա-
 եւու, յերուսաղէմէ ⁴ Եբբ. Կեզրոնացի ⁵ Եբբ. ի
 քաղաքէ իւրմէ ի Կեզրոնայ ⁶ Եբբ. դաւան
⁷ Եբբ. ի Բեթթմերհայ, արեւելիս ի հեռագոյն տան
⁸ Եբբ. պանդուխտ . արեւելիս ի տեղի քո : (20) Եկիր
 երկէ ⁹ Եբբ. ընդ քեզ ¹⁰ Եբբ. գովթ ¹¹ Եբբ.
 անցանէին ¹² Եբբ. Աստուծոյ ¹³ Եբբ. Արիստղապ

թէ Չեմ հաճեալ ընդ թեղ, ահաւասիկ
 կամ, արասցէ ինձ որդէս հաճոյ իցէ
 27 առաջի աչաց նորա: Եւ սաէ արքայ
 ցՍաղոմկ քահանայ, ¹Տեսէր, զի դու
 դառնաս՝ խաղաղութեամբ ի քաղաք,
 եւ Աքիմասս որդի քո եւ Յովնաթման
 որդի Արիաթարայ՝ երկուքն որդիք ձեր
 28 ընդ ձեզ: Եւ ահա ես բանակիցիսմ ²յիտա-
 ըովթ անապատին, մինչեւ եկեացէ գրոյց
 29 ի ձէնջ պատմել ինձ: Եւ գարձուցին
 Սաղոմկ եւ Արիաթար գտապանակին
³յերուսաղէմ, եւ նստաւ՝ անդ:
 30 Եւ Դաւիթ կրանէր ընդ զաւ ի վերն
 Չիթենեաց, ելանէր եւ լայր, եւ զղուրի
 իւր ծածկեալ. եւ ինքն երթալը թով.
 եւ ամենայն ժողովուրդն ընդ նմա ձորձ
 զլլխով, այր իւրաքանչիւր կրանէին եւ
 31 յային: Ազգ եղեւ Դաւիթի եւ ասնն,
 եւ Աքիաթիէլ ընդ ժողովեալսն սա Ա-
 րիսողոմայ է: Եւ սաէ Դաւիթ, Յրեա
 զխորհուրդն Աքիաթիկայ, Տէր Աս-
 32 տուած իմ: Եւ եհաս Դաւիթ ի ⁴Հոռու-
 ուր եպագն երկիր Ասաուժոյ. եւ ահա
 ընդ առջ նորա Բուսի Արաքայի ⁵լա-
 րեանմ Դաւիթի՝ պատառակ զպատմու-
 33 ձան իւր եւ հող ի գլուխ նորա: Եւ սաէ
 ցնա Դաւիթ, Եթէ անցանիկես ընդ իս՝
 34 բռնս լինիս ինձ. Ապա թէ գարձցիս ի
 քաղաք, եւ ասացես ցԱրիսողոմ, ⁶եթէ
 Անցին եղբարք քո, եւ այբայ կամու-
 զին էր զկնի իմ, եւ անց հայր քո. եւ
 արգ՝ ծառայ քո եմ, արքայ, ⁷եւ թող
 կացից առաջի քո.՝ ծառայ հոր քո էի
 յայնմամ, եւ արգ ըմ ծառայ եմ ես,
 արքայ. եւ զրեսցես ինէն զխորհուրդն
 35 Աքիաթիկայ: Եւ ահա ընդ քեզ Սա-
 զոմկ եւ Արիաթար քահանայք. եւ ե-
 զիցի թան զոր լսիցես ի ասնէ արքայի՝
 պատմեսցիր Սաղոմկայ եւ Արիաթարու
 36 քահանայից: Եւ ահա են ընդ նոսա եր-
 կոքեան որդիք իւրեանց, Աքիմասս
 որդի Սաղոմկայ եւ Յովնաթման որդի
 Արիաթարայ. եւ ստաքեսցիք ի ձեռն
 նոցա առ իս պամենայն թան զոր եւ
 37 լսիցէք: Եւ եմուտ Բուսի բարեկամ
 Դաւիթի ի քաղաքն. եւ Արիսողոմ մտա-
 նէր ⁸ի քաղաքն:

ԳԼ ԺԶ

1 Եւ Դաւիթ անցեալ էր սակաւիկ ինչ
 ըստ ¹Հոռու, եւ ահա Սիրա պատանի
 Մեմփիրոթեաց ընդ առաջ նորա, եւ
 զոյգը իչոց բեռնաւորաց, եւ ի նոսա
 երկերթուր նկանակ եւ հարեւր ²չամչեաց
 եւ հարեւր արմաւ եւ մար՝ մի զինուոր
 2 Եւ սաէ արքայ ցՍիրա, Չինչ է այդ:
 Եւ սաէ Սիրա, Էչբզ ³նստեղ արքայի,
 եւ հացք եւ արմաւդ՝ ի կերակուր ման-
 կանցք, եւ զինիդ՝ ըմպելի բերցոյց յա-
 3 նաորատի սատ: Եւ սաէ արքայ, Ուր
 է որդի տեսան քո: Եւ սաէ Սիրացար-
 քայ, Ահա նստի յերուսաղէմ. զի սաէ,
 Այսօր գարձուցեն ինձ սուենն Իսրայելի
 4 զթագաւորութիւն հօր իւնց: Եւ սաէ
 արքայ ցՍիրա, Ահա քեզ լիցի ամենայն
 ինչ որ է Մեմփիրոթեաց, Երկիր եպագ
 Սիրա եւ սաէ, Գաի շնորհս ստաջի քո,
 սէր իմ արքայ:
 5 Եւ եկն արքայ Դաւիթ մինչեւ զԲա-
 ռուրիմ, եւ ահա ելանէր անսաի այր
 յազգականութիւնէ ասնն Սաւուզայ, եւ
 անուեն նորա Սեմէի որդի Գերեայ, ելաւ
 6 ներս ի կրանէր եւ անիծանէր. Եւ ձգէր
 յարքինս Դաւիթի եւ ամենեցուն որոց
 ընդ արքայի Դաւիթի. եւ ամենայն ժու-
 զովուրդն եւ ամենայն զօրաւորք Էին
 7 ընդ տջմէ եւ ընդ անեկէ արքայի: Եւ
 այսպէս սաէր Սեմէի յանիծանելն զնա,
 Ել, ել, այր արեանց եւ այր անօրէն.
 8 Դարձայց ի թեզ Տէր զամենայն արիւնս
 ասնն Սաւուզայ, զի թագաւորեցիր
 փոխանակ նորա. եւ ետ Տէր ⁹զգաւա-
 ռորութիւն քո՝ ի ձեռս Արիսողոմայ
 որդւոյ քո. ¹⁰եցոյց քեզ զչարիս քո՝,
 9 զի այր արեանց ես դու: Եւ սաէ Արեւ-
 սա որդի Շարուհեայ ցԴաւիթ, Ընդէր
 անիծանէ այնպէս շուն մի մեռեալ զաւր
 իմ զարքայ. անցից եւ առից զլլուրի
 10 նորա: Եւ սաէ արքայ, Չի կայ իմ եւ
 ձեր, որդիք Շարուհեայ. թող սուք նմա,
 թող անիծանէ այնպէս. զի Տէր սասոց
 նմա անիծանել զԴաւիթ. եւ սի պատսոյց
 11 իէ Ընդէր արարեր այդպէս: Եւ սաէ
 Դաւիթ ցԱրեւսա եւ զամենայն ծառայս
 իւր, Ահաւանիկ որդի իմ որ ելեալ է

¹ Եբբ. Ո՛չ ապաքէն տեսանող ես դու, գարձ
² Եբբ. յանցս, կա՛ւ, ի դաշտս ³ Եբբ. Ասաուժոյ
 յերուսաղէմ, եւ նստան ⁴ Եբբ. Գագաթմն
⁵ Եբբ. գոփփե ⁶ Եբբ. յերուսաղէմ

⁷ Եբբ. ողկոյլ չամչոյ, եւ հարեւր պատու սմարա-
 յին եւ սիկ ⁸ Եբբ. ասնն արքայի ի Տեճմանլ,
 եւ հացք եւ պտուղք ⁹ Եբբ. զթագաւորու-
 թիւնն ¹⁰ Եբբ. եւ ահա դու ի շարի քում

յորովայնէ իմմէ՝ ինդրէ զանձն իմ, որ-
չափ եւս որդին Յեմմնայ. թոյլ ասուք
նմա եւ սնիծցէ, զի Տէր ասաց նմա :
12 Թերեւս տեսցէ Տէր զտառապանս իմ,
եւ հատուցէ ինձ բարխ փոխանակ
13 անիծից նորա յաւուր յայսմիկ : Եւ եր-
թայր Գաւիթի եւ արքն որ ընդ նմա
զճանապարհն, եւ Աւեէի երթայր մօտ
առ նա ընդ կողաց լերինն, երթայր եւ
անիծանէր, եւ քարինս ի կողմանէ նո-
րա ընկենայր, եւ հոյ ցանէր ի վերայ :
14 Եւ եկն արքայ եւ ամենայն զօրն որ ընդ
նմա աշխատակար, եւ հանգևոն անդ :
15 Եւ Արիստովմ եւ ամենայն Իսրայէլ
մահն յերուսաղէմ, եւ Աքիտովէլ ընդ
16 նմա : Եւ եկեւ իբրեւ եկն Քուսի Արա-
քայի բարեկամ Գաւթի առ Արիստովմ,
եւ ասէ Քուսի ցԱքիտովմ, Կեցցէ
17 արքայ՝ Եւ ասէ Արիստովմ ցՔուսի,
Այդ զուժ էր քո ընդ բարեկամին քուս-
ինդէր ոչ չօգար ընդ բարեկամին քուս-
18 Եւ ասէ Քուսի ցԱրիստովմ, Աչ այդպէս
է, այլ զհետ այնորիկ զոր ընտելաց
Տէր եւ ժողովուրդս այս եւ ամենայն
այր Իսրայէլի՝ երթայց, եւ նորա եղէց
19 Եւ ընդ նմա նստայց : Եւ երկրորդ ան-
գամ՝ ո՞ւմ ծառայիցեմ ես, ո՞չ արարէն
ասա՞լի որդւոյ նորա. որպէս ծառայեցի
ատա՞լի հօր քո, նոյնպէս եղէց ատա-
ջի քո :
20 Եւ ասէ Արիստովմ ցԱքիտովէլ, Ա-
ռէք խորհուրդ ի մէջ թէ զինչ գործեա-
21 ցուսի : Եւ ասէ Աքիտովէլ ցԱրիստովմ,
Մուտ առ հարճս հօր քո զորս եթոյ պա-
հկ զտունն իւր, եւ լուրիցէ ամենայն
Իսրայէլ թէ յամօթ արարեւր զհայր քո .
եւ զօրասցին ձեռք ամենեցուն ուրք են
22 ընդ քեզ : Եւ հարին վրան Արիստովմայ
ի ամախս, եւ եմուտ Արիստովմ առ հարճս
հօր իւրոյ յանդիման ամենայն Իսրայէ-
23 լի : Եւ խորհուրդ ցԱքիտովէլայ զոր խոր-
հէր յաւուրն Պատալինս, որպէս թէ
հարցանիցէ ոք բան Ատաուծոյ, այնպէս
էր ամենայն խորհուրդն Աքիտովէլայ
եւ առ Գաւթի եւ առ Արիստովմայ :

ԳԼ . ԺԷ

1 Եւ ասէ Աքիտովէլ ցԱրիստովմ, Ընտ-
րեցից ինձ երկրաստան հազար արանց,
եւ յարեայց եւ պնդեցայց զհետ Գաւթի

2 զցայգս, եւ հասից ի վերայ նորա զցայգ-
եւ նա աշխատեալ է եւ լքեալ ձեռք,
եւ զարհուրեցուցից զնա, եւ փախիցէ
զօրն որ ընդ նմա . եւ հապանից զարքայ
3 միայն : Եւ զարձաւցից զամենայն զօրն
առ քեզ, զար օրինակ զանայցէ հարան
առ այր իւր . բայց միայն զանձն միոյ
անն ինդրեացես, եւ ամենայն զօրն եւ
4 զլիցի ի խաղաղութեան : Եւ ուղիղ թուե-
ցաւ բանն ասա՞լի Արիստովմայ եւ ա-
սա՞լի ամենայն ձերոցն Իսրայէլի :
5 Եւ ասէ Արիստովմ, կոչեցէք զՔուսի
Արաքայի, եւ լուրիցուք թէ զինչ կայ-
6 ցէ ի բերան նորա : Եւ եմուտ Քուսի առ
Արիստովմ, եւ խօսեցաւ Աքիստովմ ընդ
նմա ըստ բանին այնորիկ զոր խօսեցաւ
Աքիտովէլ . Եւ ասէ թէ Արաքայէք ըստ
բանի նորա, ասցա թէ ոչ, եւ զու խօ-
7 սեաց ինչ : Եւ ասէ Քուսի ցԱքիստովմ,
Աչ է բարեք խորհուրդն զոր խորհեցաւ
8 Աքիտովէլ այս անգամ : Եւ ասէ Քու-
սի, Դու ինքնին զխեռ զհայր քո եւ
զարս նորա, զի կարի զօրաւորք են յոյժ,
եւ զանուացեալք ողբով իբրեւ զարջ մի
որդեկոտոր ի վայրի ՝ Եւ զայրացեալ ի
զայտի՞ . Եւ հայր քո այր պատեղազմող,
9 Եւ ոչ ճոտայ զուլ՝ զօրուն . Եւ ահա ինքն
զօղեալ իցէ ի միւսմ Դի բլրոց կամ ի
միւսմ ուրեք ի անդեաց . Եւ եղիցի յան-
կանեկ ՝ Եւ վերայ նոցա զատա՞լինն հար-
կանիցէ՞, եւ լսիցէ որ լսիցէ, եւ ասիցէ
թէ եղև խորտակումն ժողովրդեանն
10 որ վինի Արիստովմայ : Քունդի եւ նա
այր զօրու թեանն, որոյ սիրան իբրեւ
զսիրտ աւուժու, հաչկով հաչիցի . զի
զիտէ ամենայն Իսրայէլ թէ զօրաւոր է
հայր քո, եւ որդիք զօրութեան որ ընդ
11 նմայն են : Ես այպէս ասմ քեզ խրատ .
ժողովելով ժողովեացի ամենայն այր Իս-
րայէլի ի Գանայ մինչև եւ ցԵրասրէէ իբ-
րեւ զաւազդ առ երր ծովու բազմութեամբ,
12 Եւ քո երեսք երթիցեն ի մէջ նոցա : Եւ
հասցուք ի վերայ նորա ի միւսմ ի տե-
ղեաղ ուր եւ զատանիցուք զնա անդ . Եւ
պատեհացուք զնախա, որպէս իջանիցէ
ցօղ ի վերայ երկրի, եւ ոչ ապրեցու-
13 ցուք զնորա եւ ոչ զօր : Ապա թէ ի

3 Երբ. Գ-Կ-Ի 4 Երբ. հարից 5 Երբ. իբրեւ
զգառայց ամենեցուն է այրն զօր գու ինդրես
6 Երբ. ազանի ընդ 7 Երբ. ի բլրոց 8 Երբ. ի
ստոս զաւազիցեն 9 Երբ. զնա եւ յամենայն
արանց որ ընդ նմա

1 Երբ. յեցի յ-Ի-Ե-Կ, Կեցցէ արքայ 2 Երբ.

քաղաք մտանկցէ, առցէ ամենայն Իւ-
րայէլ քաղաքին աշմիկ պարանս, և
քարչեցուք.¹ զնստս մինչև ե գնեղեզանս.
4 զի մի մնացէ անդ և մի մի քարս և
ասէ Արիսողոմ և ամենայն այր Իւրա-
յելի, Քաջ է խորհուրդդ Քուսեայ Արա-
քացւոյ քան զխորհուրդ Արիսողոմիւյ :
Եւ Տէր ետ հրամանս ցրել զքաջ խոր-
հուրդն Արիսողոմիւյ, զի ասցէ Տէր ի
վերայ Արիսողոմայ զամենայն չարին :
45 Եւ ասէ Քուսի Արաքացի ցՄաղովկ
և ցԱրիսողոմ քահանայս, Ջայս ինչ և
զայս խրատ ետ Արիսողովէլ Արիսողո-
մայ եւ ճերոյ Իւրայելի, և զայս ինչ
46 և զայս ես Քաղաքացւոյ. և արդ առա-
քեցէք վաղվաղակի և պատմեցէք Դաւ-
թի և ասացէք, Մի ազանկիկս զայս
գիշեր յՄարտովի անապատին, այլ փու-
թա՛յիր անցանել, գուցէ կանկիցէ զար-
քայ և զամենայն ժողովուրդն որ ընդ
47 նմա : Եւ Յովնաթան և Արիսողոմ կա-
յին առ աղբերն Ռափղայ, և չոզա-
տղախին մի և պատմեաց նոցա, և
նոքա գտային և պատմեցին զայս ար-
քայի Դաւթի. զի ոչ կարէին մտանել
48 երևել ի քաղաքին : Եւ ետես զնստս
պատանեակ մի, և պատմեաց Արիսո-
ղոմայ. և չոզան երկրքին⁵, և մտին
ի տուն ասն միոյ ի Բաւուրիմ, և նո-
քա էր զուր մի⁶ ի տան, և մտին անդր :
49 Եւ աս կինն և ճարտար զիսուփն⁷ ի վե-
րայ րբին, և ցամաքեցուցանէր ի վե-
րայ նորա յարարովի. և ոչ ևլ բանն ի
20 վեր : Եւ եկին ծառայքն Արիսողոմայ
առ կինն ի տուն անդր, և ասին, Ո՛ր
են Արիսողոմ և Յովնաթան : Եւ ասէ
ցնստս կինն, Անցին յայնկոյս ջրոց : Եւ
նոքա խնդրեցին զնստս և ոչ զայն :
21 Եւ զարձան յերուսաղէմ : Եւ եղև յես
զնաղոմն նոցա, ելին ի րրայն և չոզան
պատմեցին պարափ Դաւթի, և ասին
ցԴաւթիմ, Արիք և անցէք⁸ քաջ ջուրդ .
զի զայս ինչ և զայս խորհեցու փանս
22 ձեր Արիսողովէլ : Եւ յարեա Դաւթիմ և
ամենայն ժողովուրդն որ ընդ նմա, և
անցին ընդ Յորդանան մինչև ի լուսու-
նակ առաւօտուն, մինչև ոչ միտոյ և
ոչ միոյ ուրուք որ ոչ անց ընդ Յորդա-

23 նան : Եւ Արիսողովէլ իրբե ևտես ելիէ
ոչ եղև խորհուրդն նորա, հանդերձեաց
զէլ խր և յարեա զնոց ի տուն խր
ի քաղաք, և հրաման ետ ասն խրում,
և խեղզ արկ և մեաւ, և թաղեցաւ
ի զերեւմանն հոր իւրոյ :
24 Եւ Դաւթիմ և նա⁹ ի Բանտիս. և Ա-
րիսողոմ անց ընդ Յորդանան ինքն և
25 ամենայն Իւրայել ընդ նմա : Եւ զԱմե-
սայի կայոց Արիսողոմ փախանակ Յո-
փարայ ի վերայ զօրուն. և Ամեսայի
որդի էր ասն օրում անուն էր Յոթիոր
10 Յեզրայելացի. նա եմուտ առ Արիսողոմ
զուսար Յեսեայ¹⁰ քոյր Շարուհեայ մօր
26 Յոթարայ : Եւ բանակեցաւ Արիսողոմ և
ամենայն Իւրայել յերկրին Գաղատայու :
27 Եւ եղև իրբե և նա⁹ Դաւթիմ յի Բա-
նական, Վեսի որդի Նասայ ցԻսաբա-
թայ որդուցն Ամոնայ և Մարի որդի
Ամլելի ի Լազարարայ, և Բերեկի Գա-
28 զապացի ցԻսոպելիմայ, Բերին անկողինս
11 տան, և 12 օթիոցս և ասնս տանս¹¹, և
անօթիս բրափ, և ցորեան և զօրի և
ալեւր և փոխինդ և ոտնն և սոսն¹³
29 Եւ մեզր և կողի և ստորուճակս և
14 որթս զիւցիկս¹², և մատուցին Դաւթիմ
և զօրուն որ ընդ նմա¹³ ուսուլ. 15 զի էր
զօրն քաղցեալ¹⁴ և ճարաւի և լքեալ
յանապատի անդ :

ԳԼ ԺԸ

1 Եւ հանգէս արար Դաւթիմ զօրուն որ
ընդ նմա, և կացոց ի վերայ նոցա հա-
2 զարսպեաա և հարիւրապետա : Եւ ա-
ստրիաց Դաւթիմ զերիւր մասն զօրուն ի
ձեռն Յոթարայ, և զերիւր մասն ի ձեռն
Արեսայ որդուց Շարուհեայ եղբոր Յո-
փարայ, և զերիւր մասն ի ձեռն ելիթիկայ
Գեթաղուց. և ասէ Դաւթիմ զօրուն, Ե-
3 լանելով կից և ես ընդ ձեզ, և ասին,
Ոչ կեցես. զի ելիէ փախկցիմք, ոչ զի-
ցեն ի վերայ մեր զսիրա. և ելիէ կիսոց
կէս ի մէնձ մեռանկիցիմք, ոչ զիցեն ի
վերայ մեր զսիրա. զի զու իրբու զտանս
հաղար ի մէնձ ես. և արդ լու է թէ
զու ի քաղաքի իցես, զի լինիցես մեզ
4 յօգնակամութիւնս : Եւ ասէ ցնստս ար-
քայ, Որ ինչ հաճոյ իցէ առաջի ձեր ա-

1 Եբբ. զնա 2 Եբբ. ետու խրատ 3 Եբբ. ի դաշտս
4 Եբբ. այնչէն յաւելու, շտապաւ 5 Եբբ. ի գաւթիմին
6 Եբբ. տարածեաց ծածկոյթ 7 Եբբ. ցորեան
8 Եբբ. այնչէն յաւելու, փութով

9 Եբբ. ի Ամոնայիմ 10 Եբբ. Իսրայելացի 11 Յեբբ.
դաւթիմ 12 Եբբ. կոնքս 13 Եբբ. այնչէն յաւելու,
և սիրեան 14 Եբբ. պանիւր կովու 15 Եբբ. զի
առացին Բաղցեալ էցէ զօրն

բարից . եւ եկաց արքայ յեց առ զբանն ,
 եւ ամենայն զօրն ելանէր ըստ հարիւ-
 5 թաւորաց եւ ըստ հազարաւորաց : Եւ
 պատուէր ետ արքայ Յովարայ եւ Արես-
 տայ եւ Եթթեայ եւ սաէ , Մնայեալիք 1ի
 պատանեակն իմ” Արխողոմ . եւ ամե-
 նայն զօրն լուաւ ի պատուիրելն արքայի
 ամենայն իշխանացն վասն Արխողոմայ :
 6 Եւ ել 2ամենայն զօրն յանատան” ընդ-
 գէմ Իսրայելի , եւ եղեւ կախ յանաա-
 7 ռին Եփրեմայ : Եւ պարտեցաւ անդ զօրն
 Իսրայելի առաջի ծառայիցն Դաւթի . եւ
 ելեւ խորտակուան մեծ յաւուր յայնմիկ ,
 8 եւ անկան քսան հազար արսնց : Եւ ե-
 զեւ անդ պատերազմն ցրուեալ ընդ ա-
 մենայն երեսս երկրին . եւ յաճախեաց
 անտառն ուսել ի գորուէն քան գորսե-
 կիր սուրն ի գորուէն յաւուրն յայնմիկ :
 9 Եւ զիպեղաւ Արխողոմ առաջի ծառա-
 յիցն Դաւթի . եւ Արխողոմ էր հեծեալ
 ի ջորուոյ 3իւրուս , եւ եմուտ ջորին ընդ
 թաւ կազնեաւ մեծաւ , եւ սրտեցաւ
 զլուրի նորա ընդ կազնեաւն , եւ կախե-
 ցաւ ընդ երկինս եւ ընդ երկիր , եւ ջո-
 10 ռին անց ի ներքոյ նորա : Եւ ետես այր
 մի եւ պատմեաց Յովարայ եւ սաէ , Ա-
 հա տեսի զԱրխողոմ կախեալ զկազն-
 11 Աւրն : Եւ սաէ Յովար ցայցն որ պառ-
 մեաց նմա , եւ աճա տեսեր եւ ընդէր
 ոչ հարկն զնա ընդ զեաթին , եւ ես տայի
 քեզ “այսոր յիտուն սկեզ արծաթոյ եւ
 12 սուսեր” մի : Եւ սաէ այցն ցՅովար , Եւ
 եթէ կշտով իսկ առնուի 5ի ձեռաց քոյ”
 հազար սկեզ արծաթոյ , ոչ ձգէի զձեան
 իմ յորդի արքայի . զի յականջս միւր պա-
 տուիրեաց արքայ քեզ եւ Արեստայ եւ
 Եթթեայ , եւ սաէ , 2գոյց լինի՛ջիք պա-
 13 տանեկին Արխողոմայ , 6Մի ինչ վեաս
 առնել անձին նորա” . եւ ամենայն բան
 ոչ թաքչիցէ յարքայէ , եւ զու 7կայցես
 14 ի բազեաց : Եւ սաէ Յովար , Վասն այ-
 դորիկ իսկ անցից ստաջի քո” . եւ ան
 Յովար երիտ նետս ի ձեռնն իւրում , եւ
 եհար զնոսա ի սրաի Արխողոմայ մինչ-
 15 զեւ կենդանի կայր ի կազնեոջն : Եւ պա-
 տեցան սասն մանուկ ի զինակրտցն Յո-

վարայ , եւ հարին զԱրխողոմ եւ սպա-
 16 նին գնա : Եւ եհար Յովար զիողն 2եղ-
 ջերեայ , եւ զարձաւ զօրն 8 որ ընդ նմա ,
 զի մի երթիցեն զհետ Իսրայելի . զի
 17 ինայեաց Յովար ի զօրն : Եւ ան Յո-
 վար զԱրխողոմ , եւ ընկեց” զնա ի վիչ
 մեծ յանատին , 9 ի խորին յոյժ . եւ ամե-
 նայն Իսրայելի փախեաւ այր իւրաքան-
 չիւր ի բնակուելուն իւր :
 18 Իայց Արխողոմ մինչգեւ կենդանի
 էր կանոնեաց իւր արձան , 10 եւ կանգ-
 նեաց ի Յարին զարձանս ի հովիտս թա-
 զաւորաց” . քանզի տաց թէ չիք 11 իւր
 որդի որ յիշիցէ զանուն 12 նորա . եւ կու-
 չեաց զարձանն յիւր անուն , եւ 12 կոչեաց
 գնա” ձեռն Արխողոմայ մինչգեւ ցայսօր :
 19 Եւ Աքրիմաստ որդի Սաղովկայ սաէ ,
 Ընթացայց տարայց աւետիտ արքայի ,
 զի արար նմա Տէր իրաւունս ի ձեռաց
 20 թշնամեաց իւրոյ : Եւ սաէ գնա Յովար ,
 Ոչ ես զու այր աւետեաց յաւուր յայն
 միկ , եւ տայր աւետիտ յայլում ա-
 ւուր . բայց յաւուր յայմիկ մի տացես
 աւետիտ , քանզի որդի արքայի մեռաւ :
 21 Եւ 13 սաէ ցՔուսի , երթ պատմեա ար-
 քայի զոր ինչ տեսեր . եւ երկիր եպագ
 22 Քուսի Յովարայ եւ 14 ել , Եւ յաւել եւս
 Աքրիմաստ որդի Սաղովկայ եւ սաէ ցՅո-
 եւ Յովար ի խորանն Տեանն , եւ բոււն
 29 եհար զեղջերայ սեղանոյն : Եւ ազգ
 եղև Սողոմոնի եւ ասեն , թէ փախ-
 եաւ Յովար ի խորանն Տեանն . եւ ան
 ունի զեղջերայ սեղանոյն , ³եւ ասար-
 եայ Սողոմոն առ Յովար եւ ասէ , Չի՞
 եղև քեզ՞ զի փախար ի սեղանոյ : Եւ
 ասէ Յովար , Չի երկեայ յերեսայ քոյ ,
 եւ փախեայ առ Տէր : Եւ ասարեայ
 Սողոմոն արքայ զհանեա որդի Յովի-
 30 զայեայ եւ ասէ , Երթ սպան զնա , ³եւ
 թաղես զնա : Եւ չոգու Բանեա ³որդի
 Յովիզայեայ առ Յովար՝ ի խորանն Տեանն ,

եւ ասէ զնա , Այսպէս ասէ արքայ , Եւ
 այտի . եւ ասէ Յովար , Չկանեմ , քան-
 զի աստէն մեռանիմ . եւ զարձաւ Բան-
 եա ³որդի Յովիզայեայ , եւ խօսեցաւ
 ընդ արքայի եւ ասէ , Չայս ինչ խօսե-
 ցաւ Յովար , եւ զայս ինչ եւս պատաս-
 31 խանի : Եւ ասէ զնա արքայ , Երթ եւ
 արա նմա որպէս եւ ասայն , եւ սպան
 զնա եւ թաղես զնա , եւ բարձցես այս-
 օր զարիւնն զուր զոր եհեզ Յովար՝
 32 յինէն եւ ի տանէ հօր խնոյ : Դարձոյց
 Տէր զարիւն ³սնիրաւութեան նորա ի
 նորին զլուխ , որպէս պատահեաց եր-
 կուց արանց արգարոց եւ քաջաց քան
 զնա , եւ սպան զնոսա սրով , եւ հայր
 իմ ոչ զիտաց ³զարիւն նոցա , զԱրիւն-
 ներ որդի Երեսայ՝ զսպարապետն Իս-
 րայելի , եւ զմեռայի որդի Աեթիբայ՝
 33 զսպարապետն Յուզայ : Եւ զարձան
 արիւնք նոցա ի զլուխ զորա եւ ի զլուխ
 զուակի զորա յախտեան . եւ Դաւթի
 եւ զաւակի խրոյ եւ տան խրոյ եւ
 34 աթոռոյ խրոյ կղիցի խաղաղութիւն ի
 Տեանն յախտեան : Եւ ել Բանեա որդի
 Յովիզայեայ , եւ պատահեաց Յովարայ
 եւ սպան զնա , եւ թաղեայ զնա ի տան
 35 իւրում յանապատին : Եւ եւս արքայ
 զԲանեա որդի Յովիզայեայ փոխանակ
 նորա ի զորավարութիւն . ³եւ թողա-
 ւորութիւնն ուղէր յերուսաղէմ : Եւ
 զՍապովի քահանայ եւս արքայ փոխանակ
 Արիտարու ³ի քահանայ առաջի Տեանն :
 Եւ եւս Տէր Սողոմոնի հանձնայ եւ իւ-
 մաստութիւն բաղում յոյժ , եւ լայնու-
 թիւն սրտի իրբեւ զաւազ առ եզր ծո-
 վու . եւ բազմացաւ հանձար Սողոմոնի
 քան զամենայն որդւոց նախնեաց , եւ
 քան զմասանոց եզիպտացոց : Եւ առ
 զզուստին Փարաւոնի , եւ ամ զնա ի
 քաղաքն Դաւթի , մինչեւ զկատարել
 նորա զտունն իւր : Եւ նախ գտունն
 Տեանն եւ զպարիսպն երուսաղեմի չուր-
 ջանակի՝ զեւթն ամ տարւ եւ կատարեայ
 եւ էին Սողոմոնի եւ թանասուն հազար
 բանակրոց , եւ ութսուն հազար քա-
 լանձատայ ի իրինն : Եւ արար Սողոմոն
 զծովն եւ զմոլիսն եւ զաւաղանսն մե-
 ծամեմն , եւ զարեանն եւ զՄարտիսն
 պատինն եւ զժովն պրննի : Եւ չինեաց
 զբարձաւանդակն մահարձանօք , եւ ան-
 ջրակեանայ զքաղաքն Դաւթի : Եւ սպա-
 զուստին Փարաւոնի ել ի քաղաքէն

¹ Եբբ. եւ նմա , եւ Արիտարայ քահանայի , եւ
 Յովարայ որդւոյ նորուհեայ ² Եբբ. հաս-
 տատեայ զնա , եւ ես նստել ինձ ³ Եբբ. հաս-
 պուտե ⁴ Եբբ. զու , եւ յաւուր յայնմիկ ոչ
⁵ Եբբ. եհաղայի առաջի Դաւթի ⁶ Եբբ. Աբի-
 սողմայ ⁷ Եբբ. Սողոմոնի արքայի

Դաւթի ի տուն իւր զոր շինեաց նոա .
 եւ ապա շինեաց զբարձաւանդակն . եւ
 Սողոմոն մատուցանէր երկցս ի տարւոջ
 ողջակէզս եւ խաղաղականս ի վերայ
 սեղանոյն զոր շինեաց Տեառն , եւ ար-
 կանէր խունկս առաջի Տեառն . եւ կա-
 տարեաց զտունն :

Եւ այս են իշխանք որ կային ի վե-
 րայ գործոյն Սողոմոնի . երեք հազար
 եւ վեց հարեւր գործավարք ժողովբը-
 դեանն , որ գործէին զգործն : Եւ շինեաց
 զԱսուր եւ զՄակղով եւ զԱզեր եւ
 զԲեթորոն վերին եւ զհաղասաթ . բայց
 յետ շինելոյն նորա զտունն Տեառն եւ
 զպարխապն երուսաղեմի շուրջանակի՝
 ապա շինեաց զբազաքան զայնոսիկ :

Եւ մինչդեռ կենդանի էր Դաւիթ՝
 պատուիրեաց Սողոմոնի եւ ասէ , Ահա
 ընդ քեզ է Սեմէի որդի Գերեայ՝ որդի
 զաւակի Յեմինայ ի Քերբոնէ . նա անէծ
 զիս անէծս ցաւազինս յաւուր յորում
 գնացեալ երթայի ի Բանակս : Եւ նա էջ
 ընդ առաջ իմ յամի Յողղանանու . եւ
 երզուս նմա ի Տէր , թէ Ոչ մեոցիս
 սրով . եւ արգ մի առնիցես զնա ան-
 պարտ , զի այր իմաստուն ես զու , եւ
 զիտասցես զինչ առնիցես նմա . եւ ի-
 ջուսցես զայլիս նորա արեամբ ի գոխս :

36 Եւ առաքեաց արքայ եւ կոչեաց զՍե-
 մէի , եւ ասէ ցնա , Շինեա զու քեզ
 տուն յերուսաղէմ , եւ նիտ անդ , եւ
 37 մի՛ ուրեք երանիցես անտի . եւ եղիցի
 յաւուր կեանելոյ քո թէ անդանիցես ընդ
 հեղեղաան Կեղրոնի , զիտելով զիտա-
 ջիբ զի մահու մեռանիցիս , եւ արիւն
 քո ի զուխ քո եղիցի : Եւ երզուաւ
 38 նմա արքայ յաւուր յայնմիկ : Եւ ասէ
 Սեմէի ցարբայ , Բարի է բանդ զոր խո-
 սեցար , առք իմ արքայ , այնպէս ա-
 րասցէ ծառայ քո : Եւ նստաւ Սեմէի
 յերուսաղէմ շամս երիս :

39 Եւ եղև յետ երկդ ամաց փախեան
 ծառայք երկու Սեմեայ առ Անքուս որդի
 Մաաբայ արքայ Գեթայ . եւ ազգ եղև
 Սեմեայ եւ ասնն , Ահա ՚երկու ծառայք
 40 քո ի Գէթ են : Յարեաւ Սեմէի եւ հան-
 դերձեաց զէջ իւր , եւ գնաց առ Ան-
 քուս ինդրեղ զծառայս իւր . եւ չոգաւ
 Սեմէի եւ ամ զծառայսն իւր ի Գեթայ :

41 Եւ պատմեցաւ Սողոմոնի , ասնն , թէ
 Չոգաւ Սեմէի յերուսաղեմէ ի Գէթ եւ

42 ՚դարձոց զծառայս իւր : Եւ առաքեաց
 արքայ եւ կոչեաց զՍեմէի եւ ասէ ցնա .
 Ո՛չ երզմեցուցի զքեզ ի Տէր , եւ եղի
 քեզ վկայութիւն եւ ասեմ , Յաւուր յո-
 րում երանիցես յերուսաղեմէ եւ եր-
 թայցես յաջ կամ յանակ՝ զիտելով զի-
 տասջիբ զի մահու մեռանիցիս . եւ ա-
 սացեր ցիս , Բարի է բանդ զոր լուայ .
 43 Եւ արդ զիսոր է զի ոչ պահեցեր զեր-
 գունն Տեառն եւ զպատուէրն զոր պատ-
 44 ուիրցի քեզ : Եւ ասէ արքայ զՍեմէի ,
 Դու ինքնին զիտես ՚զարութիւն քո՛ ,
 զոր զիտէ սիրտ քո զոր արարեր ընդ
 Դաւթի հօր իմում . եւ հատոց Տէր
 45 զչարիւն քո ի զուխ քո . եւ արքայ
 Սողոմոն օրհնեալ է , եւ աթոռ Դաւթի
 46 ՚պատրաստ առաջի Տեառն յաւիտեանն :
 Հրաման ետ արքայ Սողոմոն Բանեայ
 որդւոյ Յովիզայեայ , եւ ել սպան զնա ,
 եւ մեռաւ :

ԳԼ . Գ

1 Եւ ՚ի նստատեղ թագաւորութեանն
 Սողոմոնի՝ ինամութիւն արար Սողոմոն
 ընդ Փարաւոնի արքային եգիպտացւոց ,
 եւ ան զզուսար նորա եւ ամ ի քաղաք
 Դաւթի , մինչև կատարեաց շինել զտուն
 իւր եւ զտուն Տեառն եւ զպարխապն
 2 Երուսաղեմի շուրջանակի : Սակայն ժո-
 զովուրդն ՚արկանէին խունկս՝ ի վերայ
 ըսրձանց , զի ոչ շինեցաւ տուն անուան
 Տեառն մինչև ցաւուրսն ցայնոսիկ :
 3 Եւ սիրեաց Սողոմոն զՏէր գնալ ըստ
 հրամանաց Դաւթի հօր իւրոյ , բայց ի
 բարձունս եւ նա զոհէր եւ արկանէր
 4 խունկս : Եւ յարեաւ գնաց արքայ ի
 Գարաւոն զոհել անդ , զի նա առաւել
 բարձրագոյն եւ մեծ էր . հաղպ ողջա-
 կէզ եհան Սողոմոն ի վերայ սեղանոյն
 5 այնորիկ : Ի Գարաւոն երևեցաւ Տէր
 Սողոմոնի ի քուն գիշերոյ , եւ ասէ Տէր
 զՍողոմոն , ՚Խնդրեա զու քեզ խնդիր
 6 ինչ : Եւ ասէ Սողոմոն , Դու արարեր
 ողորմութիւն մեծ ընդ Դաւթի հօր ի-
 մոյ , որպէս եւ չրջեցաւ առաջի քո ճըշ-
 մարտութեամբ եւ արգարութեամբ եւ
 ուղղութեամբ սրտի ընդ քեզ . եւ պա-

1 Յեբբ. գոխսի 2 Յեբբ. աւուրս բազումս

3 Յեբբ. դարձաւ 4 Յեբբ. զամենայն չարութիւն
 5 Յեբբ. եղիցի հաստատուն 6 Յեբբ. ցեցիս յաւելու .
 եւ թագաւորութիւնն հաստատեցաւ ի ձեռս
 Սողոմոնի 7 Յեբբ. զՏէր 8 Յեբբ. Խնդրեա ինչ ,
 տաց քեզ

հեցեր նմա զողորմութիւնս զայս մեծ՝
 ապ որդւոց նորա նստել յաթու նորա
 7 որպէս եւ յաւուր յարմիկ: Եւ արդ,
 Տէր Աստուած իմ, զու ՚հաուր զճառայ
 քո փոխանակ Դաւթի հօր իմոց, եւ ես
 եմ մանուկ փոքր եւ ոչ զիտեմ զկե եւ
 8 զմուտ իմ: Եւ ճառայ քո ի մէջ ժողո-
 վրդդեան քո է զոր ընտրեցեր ժողո-
 վուրդ քո՝ բազում, անթիւ եւ անհա-
 9 մար ի բազմութենէ: Եւ տաղես ծառայի
 քում սիրա լսելոյ եւ դատելոյ զժողո-
 վուրդ քո արգարութեամբ, խելամուտ
 լինել ի մէջ բարւոյ եւ չարի: Քանզի ո՞
 կարիցէ զատել զայս ժողովուրդ քո
 10 զճանր: Եւ հաճոյ թուեցաւ բանն աւ-
 րաջի Տեառն, զի խնդրեաց Սողոմոն
 11 զայն բան: Եւ ասէ զնա ՚Տէր, Փոխա-
 նակ զի խնդրեցեր յինէն զբանոյ զայդ, եւ
 ոչ խնդրեցեր քեզ աւուրս բազումս, եւ
 ոչ խնդրեցեր քեզ մեծութիւն, եւ ոչ
 խնդրեցեր զանձինս թշնամեաց քոց,
 այլ խնդրեցեր զու քեզ խելամուտ լի-
 12 նել լսելոյ զերաւունս, Ահա արարի բտա
 բանիդ քում, ահա ետու քեզ սիրտ ի-
 մաստուն եւ հանճարեղ, իբրեւ զքեզ
 ոչ ոք եղև յառաջ քան զքեզ, եւ յետ
 13 քո ոչ ոք յարիցէ նմանոյ քեզ: Եւ զոր
 ոչն եւս խնդրեցեր՝ ետու քեզ, զմեծու-
 թիւն եւ զփառս, որպէս ոչ ոք եղև
 նման քեզ ի թագաւորս զամենայն աւուրս
 14 քո: Եւ եթէ դնասցես ի ճանապարհս
 իմ սրահը զհրամանս իմ եւ զպատուե-
 րանս իմ որպէս եւ զնաց Դաւթի հայր
 15 քո, եւ բազմացուցի զաւուրս քո: Եւ
 զարթեալ Սողոմոն եւ ահա երազ էր
 եւ յարեաւ եկն յերուսաղէմ, եւ եկաց
 առաջի սեղանոյն յանդիման տապանակի
 ուխտին Տեառն ՚ի Սիւն, եւ մատոց
 ողջակէզս եւ արար խաղաղականս, եւ
 արար խրախուրթիւն մեծ ՚իւր եւ՝ ա-
 մենայն ծառայից իւրոց:

16 Յայնժամ երեւեցան երկու կանայք
 գոռնիկք՝ արքայի, եւ կային առաջի
 17 նորա: Եւ ասէ մի կինն, Յիս տէր իմ,
 ես եւ կինս այս էաք ի միում տան,
 18 եւ ծնայ՝ ի տանն, եւ եղև յաւուրն
 երրորդի՝ ծնաւ եւ կինս այս, եւ մեք
 առանձինն էաք, եւ ոչ ոք գոյր ընդ
 մեզ ի տանն բող ի մէջ երկոցունց ի

19 տանն: Եւ մեռաւ որդի սորա ի զիշերի,
 20 քանզի ննջեաց ի վերայ նորա: Եւ յար-
 եաւ ի հասարակ զիշերի, եւ առ զմա-
 նուկն իմ ի զրկաց իմոց, եւ ազախին
 քո ի քուն էր: Եւ ննջեցոց զնա ի ծոց
 իւրում, եւ զորդին իւր զմեռեալն ննջե-
 21 ցոց ի ծոց իմում: Եւ յարեաց ընդ ա-
 սաւօսան զիկցուցանել զորդին իմ, եւ
 նա էր մեռեալ, եւ հայեցայ ընդ նա
 այդունն, եւ ահա չէր որդին իմ զոր
 22 ծնայ: Եւ ասէ մեւս կինն, Այլ որդի
 քո է մեռեալն, եւ որդի իմ կենդանին:
 Եւ մեւս եւս ասէր, Այլ որդի իմ կեն-
 դանին, եւ որդի քո մեռեալն, եւ խօսեցան
 23 առաջի արքայի: Եւ ՚ասէ զնոսա ար-
 քայ, Դու ասես թէ՞՝ Այս որդի իմ է որ
 կենդանիս է, եւ որդի դորա մեռեալն,
 եւ ՚զու ասես՝, Այլ այլ որդին քո մեռ-
 24 եալն, եւ որդին իմ կենդանին: Եւ ա-
 սէ արքայ, Առէք առ իս զսուրն, եւ լն-
 25 ըին զսուրն առաջի արքայի: Եւ ասէ
 աղքայ, Կտրեցէք զամնուկն ՚զասնդիսց
 զկենդանի՝ յերկուս, եւ առք զկէտն
 26 նորա զմա, եւ զկէտն նորա նմա: Եւ
 պատասխանի եւ կինն որոյ որդին կեն-
 դանի էր, եւ ասէ ցարքայ, Քանզի խու-
 վեցան աղիք նորա ի վերայ որդւոյն
 իւրոյ, եւ ասէ, Յիս տէր, տուք նմա
 զմանուկն կենդանի, եւ մահու մի՛
 սպանանէք զնա: Եւ մեւս ասէր, Մի՛
 իմ լիցի՝ եւ մի՛ դորա, կտրեցէք ընդ
 27 մէջ: Պատասխանի եւ արքայ, Եւ ասէ,
 Տուք դմա զմանուկն կենդանի, ՚որ ա-
 սաց թէ Տուք զգա նմա՝ եւ մահու մի՛
 28 սպանանէք զգա: Նա է մայր դորա: Եւ
 լուաւ ամենայն Իսրայէլ զգատաստանն
 զոր դատեցաւ արքայ, եւ զահի հարան
 յերեսաց արքայի: զի տեսին թէ իմաս-
 տութիւն Աստուծոյ է ի նմա առնել
 իրաւունս:

ԳԼ Դ

1 Եւ էր արքայ Սողոմոն թաղաւորեալ
 2 ի վերայ ՚Իսրայէլի: Եւ այս էին իշխանք
 նորա. Ազարիա որդի Սաղովկայ՝ քա-
 3 հանայ, Եզիպրեի եւ Աքիա որդիք Սի-
 սայ՝ գոյրք, եւ Յովսափատ որդի Աքի-
 4 զիլայ՝ ի վերայ յիշատակաց, եւ Բանեա
 որդի Յովիզայիայ՝ ի վերայ զուրաց, եւ
 5 Սաղովկ եւ Աքիախար՝ քահանայք, եւ

¹ Եբբ. թագաւորեցուցեր ² Եբբ. Աստուած
³ Յեբբ. գուտ ⁴ Եբբ. յեշե՛ն յաւելու, առ նմա
⁵ Եբբ. յեշե՛ն յաւելու, ծնանելոյ իմոյ

⁶ Եբբ. ասէ արքայ, Սա ասէ, ⁷ Եբբ. սա ասէ
⁸ Եբբ. ամենայն Իսրայէլի

Ազարիա որդի Նաթանայ՝ ի վերայ զոր-
 6 ծափարաց, եւ Զաբութ որդի Նաթա-
 7 նայ՝ ¹քահանայ բարեկամ արքայի, եւ
 Աքիսար էր հրամանատար, ²եւ Նզիակ՝
 հազարապետ, եւ Նզլափ որդի Սափայ՝
 շահապ,՝ եւ Ազոնիբամ որդի Արզովայ՝
 7 ի վերայ հարկաց: Եւ էին Սողոմոնի
 երկուտասան զործակալք ի վերայ ամե-
 8 նայն Իսրայելի, տալ սոճիկ արքայի եւ
 9 տան նորա մէն մի ամիս ի տարւոջ: Եւ
 այս են անուանք նոցա ³Բէէին որդի Ու-
 9 րայ՝ ի լերինն Նփրեմի. ²Մի որդի Դա-
 կարայ՝ ի Մաքմաս եւ ի Սաղաբիմ եւ
 ի Բեթսամիւս եւ յԱյիզոմ մինչեւ ցԲե-
 10 թանան. Արզի Նազայ՝ յԱրարովիմ, նորա
 Սոքով եւ ամենայն երկիրն Ոփերայ.
 11 Արզի Արինազարայ ամենայն Նեփա-
 զովք, որոյ Տափաթ զուսոր Սողոմոնի
 12 էր նորա կուռթեան. Բաանա՝ որդի Ա-
 քեղովմայ, ⁴զԹանաք եւ զՄաքզով եւ
 զամենայն տունն Սանայ, որ առ Նզ-
 սարթիման,՝ ի ներքոյ Նզրայելի, եւ ի
 13 Բեթսամայ մինչեւ ցԱրէլմաուլա, եւ
 մինչեւ ⁵Մամբրազա. Եկմաաղ որդի՝
 14 Գարերայ՝ յԻմամով Գաղապ, նորա
 Աւիով Թայիրայ որդւոյ Մանասէի ի
 Գողապ, նորա վիճակն Արզոր որ ի
 Բասան. վաթսուն քաղաքք մեծամեծք
 14 պարապաւորք պղնձանիքք. Աքինազար
 15 որդի Ազովայ ի Մայնեմ. Աքինաս ի
 Նեփաթարիմ. սա առ զՄասեմաթ զուսոր
 16 Սողոմոնի կուռթեան. Բաանաս որդի
 17 Բուսեայ՝ յԱսեր եւ ի Բաազովմ. Յով-
 18 սափատ որդի Փարուայ՝ յԻսաքար. Սե-
 19 մէի որդի Նզայ՝ ի Բենիափին. Գարեր որդի
 Արայի՝ յերկրին Գաղապու, յերկրին
 Սեհոնի արքայի Ամովհաւցուոց եւ Ուզայ
 արքայի Բասանու. ⁶Եսրիփ յերկրին՝:
 20 Յուգա եւ Իսրայէլ թողում էր իր-
 րեն գաւառի առ եկր ծովու բազում-
 թեամբ. ուտէին եւ բնպէին եւ ուրախ
 21 լինէին: Եւ Սողոմոն իշխան էր ⁷Թա-
 գաւորութեանց ի գետոյ երկրին այրազ-
 րայ՝ մինչեւ ի սահմանս Եգիպտոսի.
 Բերէին պատարազս եւ ծառայէին Սո-
 զոմոնի զամենայն աւուրս կենաց նորա:

22 Եւ այս սոճիկք էին Սողոմոնի ի միում
 աւուր. երեսուն քոռ նաշնոյ, եւ ⁸քա-
 23 սասուն քոռ պեր գերմակոյ, Եւ տանն
 եզն ընտիր, եւ քան կով արօտական,
 եւ հարեւր ոչխար. թող զեզնու եւ
 զայծեամն եւ զընտիր ընտիր հաւուց
 24 պարարելոց: Զի էր իշխան ամենայնի
 յայնկոյս զետոյն՝ ի Թափապ մինչեւ
 ցԳազա, ամենայն թագաւորութեանց
 յայնմ կողմանէ գետոյն. եւ էր նմա
 խաղաղութիւն յամենայն կողմանց շուր-
 25 քանակի: Եւ բնակեալ էր Յուգա եւ
 Իսրայէլ վստահութեամբ, իւրաքանչիւր
 ոք ընդ որթով իւրով եւ ընդ թղկնեաւ
 իւրով ⁹ուտէին եւ բնպէին՝ ի Դանայ
 մինչեւ ցԲեքարէէ զամենայն աւուրս
 Սողոմոնի:
 26 Եւ էին Սողոմոնի քառասուն հազար
⁹մատակ ձիոց ի կառս, եւ երկուտասան
 27 հազար ¹⁰երկիւրաց: Եւ տային ¹¹այնպէս
 սոճիկ զործակալքն արքայի Սողոմոնի,
 եւ զամենայն հրամանս սեղանոցն ար-
 քայի՝ զուրաքանչիւր ամիս, եւ ոչ
 28 սխալէին բան մի: Նոյնպէս եւ զգարին
 եւ զյարգն ¹²երկիւրացն եւ կառամտացն՝
 բերէին ի տեղին ուր ¹³էր արքայ՝ իւրա-
 քանչիւր ոք ըստ սակի իւրում:
 29 Եւ ետ ¹⁴Տէր իմաստութիւն Սողո-
 մոնի եւ հանձար բազում յոյժ, եւ զե-
 զումն սրտի իրբեւ զաւաղ առ եգեր ծո-
 30 վու: Եւ բազմացաւ իմաստութիւնն
 Սողոմոնի յոյժ քան զհանձար ամենայն
¹⁵Նախնեաց մարդկան՝ եւ քան զամե-
 31 նայն իմաստնոց Եգիպտոսի: Եւ իմաստ-
 նացաւ քան զամենայն մարդիկ, ¹⁶եւ
 իմաստնացաւ քան զԳեթման Զարապի՝,
 եւ զԲաման, եւ զՔաղքազ եւ զԴարզան
 որդիս Մաւուգու, եւ էր անուանի յամե-
 32 նայն ազգս շուրջանակի: Եւ խօսեցաւ
 Սողոմոն երիս հազարս առակս. եւ էին
 33 սոճնութիւնք նորա ¹⁷զինդ հազար՝: Եւ
 խօսեցաւ զփայտից՝ զեղեւնափայտէն
 որ ի Լիբանան, մինչեւ ցզոպայն որ
 յորմն եղանէ. եւ խօսեցաւ զանանոց
 34 եւ զԹոշնոց եւ ¹⁸զձկանց: Եւ գային

¹ Կամ, նախարար, ² Եբբ. գաւառի ³ Եբբ. Բենուր
⁴ Եբբ. ի Թանաք եւ ի Մակգով եւ յամենայն
 տանն Սանայ որ առ Սարթիմայ ⁵ Եբբ.
 յայնկոյս Յեկմամայ: (13) Արզի ⁶ Եբբ. եւ մի
 զործակալ յերկրին ⁷ Եբբ. ամենայն թա-
 գաւորութեանց ի Գետոյն մինչեւ յերկրին
 Փղաւսուցուոց, եւ

⁸ Եբբ. վաթսուն ⁹ Եբբ. ասպատանք ¹⁰ Եբբ.
 հեծելոց ¹¹ Եբբ. սոճիկ գործակալքն այնորիկ
 արքային Սողոմոնի եւ ամենեցուն որ մերձենային
 ի սեղանն արքային Սողոմոնի ¹² Եբբ. ձիոց եւ
 երկիւրաց ¹³ Եբբ. էին ¹⁴ Եբբ. Աստուած
¹⁵ Եբբ. որդւոց արեւելից ¹⁶ Եբբ. քան զԵթման
 Եգրահայի, ¹⁷ Եբբ. հազար եւ հինգ ¹⁸ Եբբ.
 զձկանոց եւ զձկանց

1 ամենայն ազգք՝ ըսել զիմաստութիւնն Սողոմոնի, յամենայն թողաւորաց երկրի՝ որ լսէին զիմաստութիւն նորա :

ԳԼ Ե

1 Եւ առաքեաց Քիրամ արքայ Տիրոսի զժառայս իւր առ Սողոմոն. քանզի լուսութէ զնա օժին ի թաղաւոր փոխանակ Դաւթի հօր իւրոյ . զի սիրէր Քիրամ 2 զԴաւթիմ զամենայն աւուրս : Եւ առաքեաց 3 եւս Սողոմոն առ Քիրամ եւ ասէ, Դաւթինքն զխոս զԴաւթիմ զհայր իմ, զի ոչ կարաց շինել տուն անուան Տեան Աստուծոյ շինոց յերեսաց պատերազմաց որ չուրջ էին զնովաւ, մինչև սոց 4 Տեան զնսաւրնոց տալաք նորա : Եւ արցցածոց Տէր Աստուած իմ չուրջ զինեւ, եւ ոչ զայ փաստար եւ ոչ պատահար 5 չար : Եւ անա եւ ասեմ շինել տուն անուան Տեան Աստուծոյ իմոյ, որպէս խօսեցաւ Տէր Աստուած ընդ Դաւթի հօր իմուժ եւ ասէ, Որդի քո զոր տաց փոխանակ քօ յաթա քո՝ նա շինեցէ 6 տուն անուան իմոյ : Եւ արց հրաման տուր, եւ հարցեն ինձ 4 փայտ ի Լիբանանս : Եւ անա ծառայք իմ եղբայրն ընդ ծառայս քո՝ և զվարձս 5 ծառայու թեան քո՝ տաց բեղ ըստ ամենայնի զոր եւ ասացես . զի զու ինքնին զխոսս, զի ոչ զայ մեր այր որ զխաէ հարկօնել փայտ իրրեւ զՍիլօնացիս :

7 Եւ եղև իրրեւ լուսա Քիրամ զբան Սողոմոնի՝ ուրախ եղև յոյժ եւ ասէ, Օրհնեալ է Տէր Աստուած այսօր, որ եա որդի իմաստուն Դաւթի ի վերայ 8 բազում յողովրդեանն այնորիկ : Եւ առաքեաց Քիրամ առ Սողոմոն եւ ասէ, Լուսայ վասն ամենայնի զոր առաքեցեր առ իս . ես արարից զամենայն զկամս 6 քօ . եղև նա փայտ եւ մայր՝ 9 Իջուսկեն ծառայք իմ ի Լիբանանս ի ծով, եւ ես արարից զնոսա լուսաս ի ծովու մինչև ցտեղի յոր առաքեցես առ իս, եւ 7 հանից յեզր՝ եւ զու առցես, եւ արասցես զկամս իմ սոց հաց 10 տան իմոյ : Եւ տայր Քիրամ Սողոմոնի

եղև նա փայտ եւ մայրս, զամենայն 11 զկամս նորա : Եւ Սողոմոն տայր Քիրամայ քսան հազար քօս 8 զորենոյ եւ քսան հազար սափոր իւղոյ՝ 9 ի սարսփր 12 Եւ եա Տէր իմաստութիւն Սողոմոնի, որպէս եւ խօսեցաւ ընդ նմա . եւ էր խաղաղութիւն ի մէջ Քիրամայ եւ ի մէջ Սողոմոնի, եւ ուխտեցին ուխտի մէջ իւրեանց :

13 Եւ արկ արքայ Սողոմոն ժողովարկ յամենայն Իսրայէլ, եւ էր հարկն երեւ 14 տուն հազար արանց : Եւ առաքէր զնոսա ի Լիբանանս տան հազար յամենան, փոխանակաւ կային ամիս մի ի Լիբանանս եւ զերկուս ամիսս ի տունս իւրեանց . եւ Ագոնկրամ ի վերայ հարկին : 15 Եւ էին Սողոմոնի եւ իմաստուն հազար բեանակրաց եւ ուխտուն հազար 10 քսան 16 քահատաց ի լեբնն, թող զիշխանս կացուցեայ Սողոմոնի ի վերայ զործոյն, երեք հազարք եւ 11 շինոց հարեւր, ի վերայ ժողովրդեանն որ գործէին զգործն : 17 Եւ հրաման ետ արքայ եւ բերին վեմս մեծամեծս, քարինս պատուականս ի 18 հիմն տանն, եւ քարինս 12 անտաչս : Եւ տաչեցին 13 որդիքն Սողոմոնի եւ 13 որդիքն Քիրամայ եւ 15 Բիրայցիքն . եւ պատրասեցին զփայտն եւ զքար 3 զերկս ամս՝ շինել զտունն :

ԳԼ Զ

1 Եւ եղև յամին չորեքճարեւորդի եւ 15 քստաներորդի եղանկոց որդւոցն Ըսրայելի յեղիպտոսէ, յամին չորրորդի 16 ամանանն երկրորդի՝ թաղաւորեայ արքայի Սողոմոնի ի վերայ Ըսրայելի՝ չինէր զտունն Տեան :

2 Եւ տունն զոր շինեաց արքայ Սողոմոն Տեան՝ վաթսուտն կանգուն երկայնութիւն նորա, եւ քսան կանգուն լայնութիւն նորա, եւ 17 քսան կանգուն 3 քարճրութիւն նորա : Եւ կամարակապ ասաջի 15 տանն, ի քսան կանգնոց երկայն

1 Եբբ. յամենայն ազգաց 2 Եբբ. իւրոյ 3 Յեբբ. զ-լ-տ-ե 4 Եբբ. եղևին 5 Եբբ. ծառայից քոց 6 Եբբ. քօ զեղև նա փայտից եւ զմայր փայտից 7 Եբբ. քահեցից զնոսա անդ

8 Եբբ. ջորենոյ ի կերակուր տան նորա եւ քսան քօս իւղոյ 9 Եբբ. ամ ըստ ամէ 10 Եբբ. հաստնողաց 11 Եբբ. երեք 12 Եբբ. կոփածոյս 13 Եբբ. շինողք 14 Եբբ. Գերայցիքն 15 Եբբ. ութաներորդի 16 Եբբ. յամենանն Զլու որ է ամիս երկրորդ 17 Եբբ. երեսուն 18 Եբբ. տու-ճարի տանն

նութիւնն նորա՝ հանդէպ ¹բարձրութեանն 16 Եւ շինեաց քսան կանգուն ¹¹ի ծագէ որ-
 տանն , եւ ի տասն կանգնոյ լայնութիւնն մոյն զմի կողմանոցն՝ ի յատուկէ տանն
 նորա՝ առաջի երեսաց տանն . ²եւ շին- մինչեւ ց՛նեծանան . եւ արար ի ներքոյ
 4 կեաց զտունն եւ կաաարեաց զնա՝՝ Եւ կողմանէ նորա ¹²զգարիրն ի սրբութեանն՝
 5 արար տանն պատուհանն հայեցիկս ծա- 17 սրբութեանցն : Ի քասասուն կանգնոյ
 6 ծուկս : Եւ ած զորմովք տանն ³պա- 18 էրտունն , ¹³ասճարն ներքին : Եւ զրուագ-
 տուարս շուրջանակի՝ աւ որմովք տանն հաց զտունն ի ներքոյ եղեւնափայտիւք
 շուրջանակի տաճարին եւ զարիրայն . ¹⁴զկամարն եւ զկողակս , եւ զքո-
 եւ արար ⁴կողմանոցս շուրջանակի : շուածս՝ զամենայն յեղեւնափայտից , եւ
 8 կողմանոցին ներքնոյ՝ ի հինգ կանգնոյ լայնութիւնն նորա , եւ միջնոյն՝ ի վեց
 կանգնոյ լայնութիւնն , եւ երրորդին յեւթն կանգնոյ լայնութիւնն նորա . քանզի ան-
 ջրայնութիւնն աւ տանն շուրջանակի արասարուտ կողմանէ տանն , զի մի
 7 նարկանիցին ընդ որմս տանն : Եւ ի յի- նիւ տանն ⁵ապառաժ եւ անգործ քա-
 նել տանն ⁶ապառաժ եւ անգործ քա- րամիր շինեցաւ , եւ մուրճ եւ ամե-
 8 նոյն ինչ՝ երկաթի ոչ հնչեաց ի շինել նայն ինչ՝ երկաթի ոչ հնչեաց ի շինել
 9 նորա : Եւ զուսն ⁶կողմանոցին ի ներ- շարկանիցին ընդ որմս տանն : Եւ ի յի-
 քոյ աջոյ՝ ուսոյ տանն , եւ կյանելի շուրջանակի՝ աւ զի միջինն , եւ ի միջնոյն՝ նել տանն ⁵ապառաժ եւ անգործ քա-
 9 յերրորդ յարկն : Եւ շինեաց զտունն եւ կատարեաց զնա , եւ զրուագեաց զտունն
 տախտակամածօք պահանգօք եւ յորին- տախտակամածօք պահանգօք եւ յորին-
 10 ուածովք եղեւնափայտից : Եւ շինեաց ՚ղկողակս ամենայն տանն՝ , ի հինգ
 ՚ղկողակս ամենայն տանն՝ , ի հինգ կանգնոյ բարձրութիւնն նոցա , եւ պատ-
 11 կեաց ⁸զկողակն եղեւնափայտիւ : կեաց ⁸զկողակն եղեւնափայտիւ :
 12 Եւ ասէ , Զտունդ զոր շինես զու , եթէ Եւ ասէ , Զտունդ զոր շինես զու , եթէ
 13 ըստ հրամանաց խնդ պնայցես եւ զի- ըստ հրամանաց խնդ պնայցես եւ զի-
 րաւունս իմ արասցես եւ պահեսցես զա- րաւունս իմ արասցես եւ պահեսցես զա-
 մենայն պատուիրանս իմ զալ զնորօք , հաստասեցից զրան իմ ընդ քեզ՝ զոր
 14 խօսեցայ ընդ Դաւթի հօրքո . եւ յնու- խօսեցայ ընդ Դաւթի հօրքո . եւ յնու-
 կեցայց ի մէջ որպօպն Բորայելի , եւ կեցայց ի մէջ որպօպն Բորայելի , եւ
 15 ոչ թողից զժողովարդ իմ զԲորայել : ոչ թողից զժողովարդ իմ զԲորայել :
 16 Եւ շինեաց Սողոմոն զտունն եւ կա- Եւ շինեաց Սողոմոն զտունն եւ կա-
 17 տարեաց զնա : Եւ շինեաց զորմս տանն տարեաց զնա : Եւ շինեաց զորմս տանն
 ի ներքուստ յեղեւնափայտից , ի յատուկէ ի ներքուստ յեղեւնափայտից , ի յատուկէ
 տանն մինչեւ ⁹ցորման եւ մինչեւ զգե- տանն մինչեւ ⁹ցորման եւ մինչեւ զգե-
 րանն , եւ՝ պատեաց շուրջանակի փայ- րանն , եւ՝ պատեաց շուրջանակի փայ-
 տիւ ի ներքուստ , եւ զրուագեաց ¹⁰ի ներքոյ տանն կողմանոցօք՝ մայրիւք :

16 Եւ շինեաց քսան կանգուն ¹¹ի ծագէ որ-
 մոյն զմի կողմանոցն՝ ի յատուկէ տանն
 մինչեւ ց՛նեծանան . եւ արար ի ներքոյ
 կողմանէ նորա ¹²զգարիրն ի սրբութեանն՝
 17 սրբութեանցն : Ի քասասուն կանգնոյ
 18 էրտունն , ¹³ասճարն ներքին : Եւ զրուագ-
 հաց զտունն ի ներքոյ եղեւնափայտիւք
¹⁴զկամարն եւ զկողակս , եւ զքո-
 շուածս՝ զամենայն յեղեւնափայտից , եւ
 19 ոչ երեւէր քարն . ¹⁵Հանդէպ զարիրայն՝
 ի մէջ տանն ի ներքուստ կողմանէ
 պատրաստեաց , զնել անդ զապանակ
 20 ուխտին Տեառն : Եւ հանդէպ զարիրայն
 քսան կանգուն յերկայնութիւնն եւ քսան
 կանգուն ի լայնութիւնն , եւ քսան կան-
 գուն ի բարձրութիւնն նորա . եւ զրուագ-
 21 կեաց զնա ոսկւով ձուլով , եւ ¹⁶արար
 սեղան եղեւնափայտեայ՝ : Եւ զրուագ-
 22 կեաց Սողոմոն զտունն ի ներքուստ ոսկ-
 ւով զտով , եւ ¹⁷հաստատեաց ոսկի
 լեւեռօք՝ հանդէպ զարիրայն՝ եւ պատ-
 23 կեաց զնա ոսկւով : Եւ զամենայն առուն
¹⁸օծ ոսկւով մինչեւ ի սպառ ամենայն
 տանն . եւ ¹⁹ամենայն ներքին կողման
 զարիրայն՝ արար թիթղունս ոսկիս :
 24 Եւ արար ի ներքս ի զարիրն երկուս
 քերովբէս ի փայտից ²⁰տճից , ի տասն
 25 կանգնոյ մեծութիւն միոյն՝ կշռով : Եւ
 ի հինգ կանգնոյ թեւ մի նորա , եւ ի
 հինգ կանգնոյ թեւ մի երկորդ , տասն
 կանգուն թեւէ ի թեւ . թեւոց նորա :
 26 Եւ երկուսն եւ երկուսն քերովբէսն , միով
 չարով մի բրոյնդակութիւն քերովբէսն :
 27 Եւ բարձրութիւն միոյ քերովբէի ի տասն
 կանգնոյ , նոյնպէս եւ երկուսն քերով-
 28 բէին : Եւ եզ զերկուսն քերովբէսն ի մէջ
 տանն ներքնոյ , եւ տայրածեաց զթեւս
 նոցա , եւ հասանէր թեւ միոյն յորմն ,
 եւ հասանէր թեւ քերովբէին երկուսն
 յորմն երկուսն . եւ թեւք նոցա ի մէջ
 29 տանն հասանէին թեւէ ի թեւ . Եւ
 պատեաց զքերովբէսն ոսկւով :
 Եւ զամենայն որմս տանն շուրջա-

¹ Եբբ. լայնութեան ² Յեբբ. դ-լ-տ-ե ³ Կ-լ-ն-ն
⁴ Կողմանոցս Կ-լ, յարկս ⁵ Եբբ. սենեակս ⁶ Եբբ. շինե-
 ցաւ քարամիրք կափեղովք ի բարահատս եւ մուրճ
 եւ տապար. ամենայն գործի ⁷ Եբբ. կողմանոցին
 միջնոյ՝ յայզ 71 Եբբ. կողմանոց զամենայն զտամբն
⁸ Եբբ. զտունն ⁹ Եբբ. ցորմս ձեղուան ¹⁰ Եբբ.
 զյատուկ տանն տախտակամածօք

¹¹ Եբբ. զյետուստ տանն տախտակամածօք յեղեւ-
 նափայտից ¹² Եբբ. զգարիրն , զսրբութիւնն
¹³ Եբբ. սայնքն տաճարն որ առաջի (գաբբոյ)
¹⁴ Եբբ. գնդակօք եւ ծաղկօք փթ թեւովք ¹⁵ Եբբ. եւ
 զգարիրն ¹⁶ Եբբ. զրուագեաց զսեղանն եղեւ-
 նափայտիւ ¹⁷ Եբբ. անցոյց զվարագոյրն ի շղթայս
 ոսկիս ¹⁸ Եբբ. գրուագեաց ¹⁹ Եբբ. զամե-
 նայն սեղանն հանդէպ զարիրայն զրուագեաց
 ոսկւով ²⁰ Եբբ. եւ զայ , ի տասն կանգնոյ
 բարձրութիւն նորա

նակի քանդակեալ գրեաց գրչաւ քերորս
 եւ արմաւենիս , եւ ¹գրչուածս հայեկիս”
 30 ի ներքառողմնս եւ յարտաքինն : Եւ գյա-
 տակ տանն գրուագրեաց ոսկւով գներք-
 նոյն եւ զարտաքնոյն :
 31 Եւ զրաց զարիբայն արար ²գուրս
 ի փայտից ³զիտց , եւ սեամս նոգեկինս :
 32 Եւ երկուս զուրս ի փայտից մայրից , եւ
 քանդակս ի նոցանէ մածուցեալս քերորս
 եւ արմաւենիս եւ թիթիզունս խուց-
 եալս” , եւ պատեաց ոսկւով , եւ իջա-
 նէր ի վերայ քերովքէիցն եւ արմաւեն-
 եացն ոսկին :
 33 Այնպէս արար զրաց տաճարին սեամս
 34 ի փայտից ⁴զիտց չորեքկինս . Եւ երկու-
 ցունց գրանցն փայտս մայրս , երկրա-
 ցիկս , մի մի գուռն , եւ ծինիք նոցա
 35 երկբայցիկք : Եւ գուռն երկբորց չրջա-
 նակաւ՝ զրօշեալ՝ ի նմա քերորս եւ ար-
 մաւենիս , եւ ⁵թուցեալ թիթիզունս ,
 եւ պատեալ՝ ոսկւով իջնուով ի վերայ
 յօրինուածոյն :
 36 Եւ չինեաց ⁶գուրանն ներքին երեք-
 կարգեան ⁷յամտաշից , եւ պարկայ գործ-
 եալ յեղեւնափայտից” :
 37 Յամին չորրորդի արկ հինն տանն
 Տեառն , յամսեանն Զիւ՝ ⁸յերկրորդում
 38 ամսեանն , Եւ յամին մետասաներորդի
 յամսեանն ի Բուլ , այն է ամիսն ութե-
 րորդ , կատարեցաւ տունն ըստ ամե-
 նայն բանի նորա , եւ ըստ ամենայն
 յօրինուածոյն իւրոյ . եւ չինեաց զնա
 զեւթն ամ :

ՔԼ . Ե

1 Եւ զիւր տունն չինեաց Սոզոմոն զե-
 րեքտասան ամ , եւ կատարեաց զամե-
 նայն գտունն իւր :
 2 Եւ չինեաց զտուն անտառին Լիբա-
 նանու՝ հարեւր կանգուն երկայնութիւն
 եւ յիսուն կանգուն լայնութիւն նորա ,

եւ երեսուն կանգուն բարձրութիւն նո-
 րա , ⁹եւ երկց՝ կարգաց սեանցն եղեւ-
 նափայտից , եւ ¹⁰ուք եղեւնեայք ի վե-
 3 րայ սեանցն . Եւ ¹¹էյարկ զտունն ի
 վերայ կողմանոցաց սեանցն” . Եւ թիւ
 սեանցն քառասուն եւ հինգ , եւ հնգե-
 4 տասն կարգ : Եւ ¹²պատուարք երեք ,
 եւ անջրպետք առ անջրպետք” երեք-
 5 կին : Եւ ամենայն զրունք եւ ամենայն
¹³անջրպետք չորեքկուսիք ¹⁴պատուա-
 րաւորք , եւ ի գրանէ ի գուռն՝ երեքկինս
 6 Եւ ¹⁵զկամար սեանցն՝ արար յիսուն
 կանգուն յերկայնութիւն եւ երեսուն ի
 լայնութիւն , զօգեալ կամարքն հան-
 7 զէպ միսեանց , եւ սիւնքն եւ խորիսք
 ի զինաց կողմանէ կամարայն : Եւ զկա-
 մար աթոռոցն ուր գատէր ¹⁶ի կամարի
 տանինն՝ արար , եւ յարկ՝ եղեւնափայ-
 տիւք ի յատակէ մինչեւ ¹⁷յլատակ :
 8 Եւ տան նորա յորում նաւիցն՝ սրահ
 մի կամարակալ ըստ նմին զործոյ . եւ
¹⁸տունն զտանին Փարաւանի զոր նա Սո-
 զոմոն՝ ըստնմին օրինակի կամարակալայ
 9 Ամենայն ի քարանց պատուականաց ,
 չափով ¹⁹յանկովից կցեալ ընդ միմեանս
 յերկարաւոր՝ ի ներքոյ եւ արտաքոյ , ի
 հիմանէ մինչեւ ²⁰յատաստայն . եւ ար-
 10 տաքուստ ի սրահին մեծի՝ Հաստատեալ
 քարամբք մեծամեծօք ասանկանցնէիւք
 11 եւ ութկանգնէիւք , Եւ ի վերուստ կողմա-
 նէ քարամբք պատուականօք ըստ նմին
 չափոյ ²¹անտաշից , եւ եղեւնափայտիւք :
 12 ⁶Զսրահն մեծ չուրջանակի երեքկար-
 ցեանա ²²յամտաշից , եւ կարգ մի ²³մա-
 ծուցեալ եղեւնափայտիւ : Եւ չինեաց
 զսրահ տանն Տեառն՝ զներքին կամարաց
 տան Տեառն հանպէս տաճարին” :
 13 Եւ ատաքեաց արքայ Սոզոմոն , եւ
 14 առ զԲիրամ ի Տիւրուէ , Որդի կնոջ
 այրուոյ , եւ նա էր ի ցեղէն Նեփթաղի-

¹ Եբբ. ծաղիկս փթթեալս ² Եբբ. փեղկս ³ Եբբ. իւղց , հանդերձ գրանդեօք հինգերորդ մասն որնոյն : (32) Այլպէս երկուս փեղկս ի փայտից իւղց , եւ քանդակեաց ի նոսա քանդակս քե-
⁴ Եբբ. իւղց , չորրորդ մասն որնոյն : (34) Եւ փեղկքն երկրքին ի մայր փայտէ . երկու կողք միայ փեղ-
 կին ծալածոյ , եւ երկու կողք միւսայ փեղկին՝ ծալածոյ : (35) Եւ գրօշեաց ⁵ Եբբ. ծաղիկս փթթեալս , եւ պատեաց ⁶ Եբբ. զգաւիթին
⁷ Եբբ. քարինս կոփածոյս , եւ մի կարգի գերանն եղեւնափայտեայ ⁸ Եբբ. պաւստ

⁹ Եբբ. ի վերայ չորից ¹⁰ Եբբ. հեծանք ¹¹ Եբբ. ծածկեաց եղեւնափայտիւք ի վերուստ զան-
 եակնն որ ի վերայ սեանց ¹² Եբբ. լուսանդոյց երեքկին , եւ պատուահան առ պատուահան ¹³ Եբբ. գրանդեք ¹⁴ Եբբ. ի տեսանել , եւ պատուահան առ պատուահան ¹⁵ Եբբ. զսրահն կամարակալ . «րդե» եւ «լի» ¹⁶ Եբբ. արար ի կամար (սրահ) , առեւի եւ ծակեաց ¹⁷ Այլպէս , ցճեղուն ¹⁸ Եբբ. արար տուն ¹⁹ Եբբ. ի կոփածոյից սղոցելոց սղոցիւք ²⁰ Եբբ. զատաստաղն , եւ արտաքուստ մինչեւ ի գաւիթին մեծ . ²¹ Եբբ. կոփելովք ²² Եբբ. ի քարանց կոփելոց ²³ Եբբ. հեծանօք եղեւնափայտիւք , նոյնպէս եւ գաւիթ տանն Տեառն ներքին , որպէս եւ սրահ տանն

մայ, եւ հայր նորա այր Տիւրայի. ճարտարապետ պզնձոյ եւ յի արուեստիւ եւ իմաստութեամբ եւ գիտութեամբ գործել զամենայն գործ պզնձոյ. եւ եւ մուտ առ արքայ Սողոմոն, եւ արար

15 զամենայն զգործն: Եւ ձուլեաց զերկուսին սիւննսն՝ ¹կամարի ասնն՝, ութ եւ տասն կանգուն բարձրութիւն ²սեանն, եւ չուրջ զնոժաւ չափ ³չորեքաստան կանգուն չուրջանակի ⁴թանձրութիւն սեանն, եւ ի չորից մատանց մասնէքն՝:

16 նոյնպէս եւ երկրորդ սիւնն: Եւ երկուս խոյակս արար տալ ի վերայ գլխոյ սեանցն ձոյ պզնձիս. հինգ կանգուն բարձրութիւն միոյ խոյակին, եւ հինգ կանգուն բարձրութիւն երկրորդ խոյակին:

17 Եւ արար երկուս վանդակս ծածկել զխոյակին, եւ արար երկուս եւս վանդակս ծածկել զերկրորդ խոյակին, գործ

18 կախադանաւ. Եւ երկոցունց սեանցն նւնաձեւս պզնձիս ի վանդակապատան, գործ կախադանաւ, կարգ առ կարգ.

19 եւ այնպէս արար երկրորդի խոյակին ի վերայ գլխոյ սեանցն՝, գործ չուշանագործ ⁵առ կամարաւ՝ ի չորից կանգնոց:

20 Եւ պատուար ի վերայ երկոցունց սեանցն ի վերուստ ի կողմանոցայ խոյակին պատուար, եւ նւնաձեւացն երկրիւր կարգ՝ չուրջ զերկրորդի խոյակ

21 հուն: Եւ կանգնեաց զսիւնսն ⁶կամարի տաճարին, եւ կանգնեաց ⁸զմի սիւնն, եւ կոչեաց զանուն նորա ⁹Յարեմ. եւ կանգնեաց զսիւնն ¹⁰երկրորդ, եւ կոչեաց զանուն նորա ¹¹Քոող: Եւ ի վերայ գլխոյ սեանցն՝ գործ չուշանագործ. եւ կատարեցաւ գործ սեանցն:

23 Եւ արար զծովն ձուլածոյ, տասն կանգուն չրթանէ ի չուրթին, գործ բարձրի

¹²նոյնաձեւ. հինգ կանգուն բարձրութիւն նորա, եւ ¹³գոգեայք երեսուն եւ երկք կանգնալք պատէին՝ գնա չուրջ

24 ջանակի: Եւ ¹⁴հեցուկք ի ներքոյ նորա՝ չուրջանակի պատէին գնա ի տասն կանգնոց չուրջանակի՝, երկու կարգ ¹⁵մութից ձուլեայք ի ձուլին նորա՝ հաստատեալք:

25 Եւ երկոսասուն եզն ի ներքոյ ծովուն. երեքն հայէին ընդ հիւսիսի, եւ երեքն հայէին ընդ ¹⁶ծալ, եւ երեքն հայէին ընդ հարաւ, եւ երեքն հայէին ընդ արեւելս. եւ ծովն ի վերայ նոցա ի վերուստ կողմանէ. Եւ ամենեցուն ¹⁷թիւ

26 կունք ի սուննսն՝. եւ թանձրութիւն նորա ¹⁸թգաւ, եւ չուրթն նորա իրրեւ զգործ չրթան բաժակի. եւ բոց չուշանի ի վերայ նորա. եւ տանէր իրրեւ երկուս հազարս մարս:

27 Եւ արար ¹⁹մէքենալթիւ տասն պզնձիս. ²⁰հինգ կանգուն երկայնութիւն միոյ մեքենալթայ, եւ չուրք կանգունք բայնութիւն նորա, եւ ²¹վեց կանգուն բարձրութիւն նորա: Եւ այց գործ էր մէքենալթայն, ²²խորշք խորշք ի վերայ, եւ խորշք

29 ի մէջ ատանցիցն: Եւ ի վերայ խորշից նոցա ի մէջ ատանցիցն՝ առեւծք եւ եզնք եւ քերարք, եւ ի վերայ ²³առանցիցն նոցալս ի վերայ, եւ ի ներքոյ առեւծուցն եւ կզանց՝ տեղիք գործ գառ

30 ի թավի: Եւ չորք սնկոք պզնձիք ամբուս մէքենալթայն եւ առանցք պզնձիք. եւ ի չորեցունց կողմանց նոցա ուսք նոցա ի ներքոյ ²⁴աւազանացն եւ ուսք ձուլեայք հանդոցնք մարդոյ առ ընթե

31 րակայք՝. Եւ բիրան նորա ի ներքուստ ի խոյակէն եւ ի վեր կանգնաւ. եւ բերան նորա ²⁵գործ բարձրի՝, նոյնպէս ի կանգնոց եւ ի կիսոյ թանձրութիւն նորա. եւ առ բերանոլ նորա ²⁶ճախարակեայ հաստատուն՝ չարեքիւուսի եւ ոչ բա-

1 Եբբ. պզնձիս 2 Եբբ. միոյ սեանն 3 Եբբ. երկաստան 4 ՅԵբբ. գոգեայք 5 Եբբ. Կործ Տիւս. կեն վանդակակերպ. շղթայոց գործ վասն խոյակացն որ ի վերայ գլխոյ սեանցն, եւ թն վասն միոյ խոյակի, եւ եւթն վասն միւսոց խոյակի. (18) Եւ արար սիւնսն. 4-ւ կարգս երկուս նունաձեւաց չուրջանակի ի վերայ միոյ վանդակակերպին՝ ծածկել զխոյակն որ ի վերայ գլխոյ սեանն. այնպէս արար երկրորդի խոյակին. (19) Եւ խոյակքն որ ի վերայ գլխոյ սեանցն որ ի սրահին

6 Եբբ. եւ խոյակք ի վերայ երկոցունց սեանցն եւս ի վերուստ, առ փորոզն առքնթեր վանդակակերպին. եւ երկեղիւր նւնաձեւք կարգու

7 Եբբ. սրահի 8 Եբբ. զաջոյ կողմն 9 Եբբ. Յարեմ, Կառնի, Հաստատեաց 10 Եբբ. ձախոյ կողմն 11 Եբբ. ձախոյ զորութիւն ի նմա

12 Եբբ. չուրջանակի 13 Եբբ. ծիր երեսուն կանգնորովք պատէր 14 Եբբ. գնդակք ընդ ծնօտիւ նորա պատէին գնա չուրջանակի տասն տասն առ կանգուն 15 Եբբ. գնդակաց 16 Եբբ. արեւմուտս 17 Եբբ. յետոյք ի ներքս 18 Եբբ. ուղկաւ 19 Ա. Եբբ. խորշիք, այսպէս եւ ի սրահն

20 Եբբ. չորք 21 Եբբ. երեք 22 Եբբ. սպառուածք ի նոսա. եւ սպառուածք ի մէջ եզերացն (29) Եւ ի վերայ սպառուածոց որ ի մէջ եզերացն

23 Եբբ. եզերացն 24 Եբբ. ուսպանին ուսք ձուլեայք հանդերձ կարգուք առ բնթեր միոյ միոյ

25 Եբբ. բարձրի գործ խարսի 26 Եբբ. բանդակք եւ սպառուածք

32 յորչի : Եւ չորք անկբ ի ներքոյ ¹հաստատուցն , եւ ²ձեռք յանիւան , ի մերեւնովթան . եւ բարձրութիւն միայ անուայ

33 ի կանդնայ եւ ի կիսոյ : Եւ զորձ անուայն իրբեւ զգործած անուայ կրտայ , եւ ²ձեռք նոցա եւ պարսնոցք իւրեանց եւ թիկուհք իրեանց եւ ամենայն արար

34 նոցա ձալածոյ : Եւ չորք ուսք ի վերայ չորեցունց անկեանց միոյ մեքենովթայն .

35 իւր : Եւ ի զլուի մեքենովթայն կէս կանգնոյ ³մեծ բոլորակ չարջ գնովա ի վերայ գլխոյ մեքենովթայն , եւ սկիզբն ձեռայ նորա եւ խորչք” նորա անդստին

36 ի նմանէ : Եւ ⁴բանային ի սկիզբն ձեռայ նորա , եւ խորչք” նորա քերտք եւ սուրեծուեք եւ արմուենիք ⁵կանգնեալք առ նովա . իւրաքանչիւր հանդէպ երեաց իւրոց ի ներքս եւ” չորջանակի :

37 Ըստ նմին օրինակի արար զամենայն գտանեալն մեքենովթան . մի պայման եւ մի չափ եւ մի օրինակ ամենեցուն :

38 Եւ արար տանն պուսնարդս պղնձիս . եւ ունէր պուսնարդ մի քառասուն սափոր . ի չորից կանդնոց պուսնարդ մի չափով , եւ պուսնարդ մի ի վերայ միոյ մեքենովթայն տանեցունց մեքենովթայն :

39 Եւ եղ զմեքենովթան հինգ յուսոյ տանն յաջմէ , եւ զհինգն յուսոյ տանն ի ձախմէ . եւ ծովն յուսոյ տանն ընդ աջմէ՝ ընդ արեւելս ի հարաւայ կողմանէ :

40 Եւ արար Քիրամ ⁶զսանն եւ ⁷ղջեռուցիչն եւ զտաշտն . եւ կատարեաց Քիրամ ամենկ զամենայն գործն զոր արար արքայի Սողոմոնի ի տան Տեառն .

41 Սիւնս երկուս , եւ չըջանակս քանդակագործից սեանցն ի վերայ գլխոյ սեանցն . երկուս երկուս վանդակապատս՝ ծածկել զերկտին չըջանակն քանդակագործայն սր էին ի վերայ սեանցն .

42 Զնեւաձեւան զչորեքհարեւր երկուցունց վանդակացն , երկու կարկ նանաձեւայ միոյ վանդակի , ծածկել չուրջ զերկուսն չըջանակս մեքենովթայն ի վերայ

43 երկուցունց սեանցն . Եւ զմեքենովթան

եւ զպուսնարդն տանեալն ի վերայ մեքենովթայն . Եւ զծովն զմի , եւ զերկտասանեալն եղինն ի ներքոյ ծաղուն .

45 Եւ զսանն եւ ⁷ղջեռուցիչն ⁸զերեալն եւ զտաշտն , եւ զամենայն կահն զոր արար Քիրամ արքայի Սողոմոնի ի տանն Տեառն ⁹եւ սիւնք քառասուն եւ ութ տանն արքայի եւ տանն Տեառն . զամենայն զորձ զարքայի պատարասեաց Քիրամ պղնձի համօրէն . եւ ոչ զայր կշիռ պղնձոյն որով արար զամենայն զգործան զայնտսկ ի բաղձութենէ անտի յոյժ , եւ ոչ զայր չափ կշռոյ պղնձոյն”

46 վայրնոյ : Առ ափն Յորդանանու ձուլեաց զայն արքայի , ի թանձրութեան երկրին ի մէջ Սոկրովթայն եւ ի մէջ Սիրարթաւայն :

47 մայ : Եւ ¹⁰եւ արքայ Սողոմոն ¹¹յամենայն կահն , քանդի կարկ յոյժ էր բազմութեամբ եւ ոչ զայր թիւ պղնձոյն :

48 Եւ արար Սողոմոն զամենայն կահն որ ի տան Տեառն , զզոհանոցն ոսկի , եւ զսեղանն յորոյ վերայ հայն պատարագի՝ ոսկի , եւ զաշտանակն հինգ ընդ աջմէ եւ հինգ ընդ ձախմէ հանդէպ զարկայն ի զուտ ոսկեայ , եւ զբազմակայն եւ

49 զծրագունն եւ զյարգարիչն ոսկիս , Եւ ¹²զքրանդնն եւ զբեւեռնն” եւ զտաշտն եւ ¹³զսկաւառակն եւ զառփան” սակիս զուտ , եւ ¹⁴զգրուես տանն ներքնոյ , զարրութեան սրբութեանցն , եւ զգրուես տանն տաճարին՝ ոսկիս :

51 Եւ բովանդակեցաւ ամենայն գործն զոր արար արքայ Սողոմոն զտանն Տեառն . եւ տարաւ արքայ Սողոմոն զարրութիւնն Դաւթի հօր իւրոյ ⁸եւ զամենայն սրբութիւնս Սողոմոնի՝ զարծաթ եւ զոսկի եւ զկահ՝ եւ ի գանձս տանն Տեառն :

ԳԼ . Ը

1 Յայնժամ եկեղեցացոյց արքայ Սողոմոն զամենայն ծերս Իսրայելի , հանդերձ ամենայն զլիւօք ¹⁵զաւազանացն համարձեկոց” հարց որդւոցն Իսրայելի առ արքայ Սողոմոն ¹⁶ի Սիւն , հանկ զտապանակ ուխտին Տեառն ի քաղաքէ 2 Դաւթի՝ այս է Սիւն : Եւ եկեղեցացան

¹Եբբ. սպառուածոցն ²Այլեւն՝ առանցք ³Եբբ. բարձրութեամբ բողորակ չորջանակի . եւ ի վերայ գլխոյ մեքենովթայն կեքք նորա եւ սպառուած ⁴Եբբ. քանդակեալ էին ի վերայ տախտակաց կեքքոց նորա եւ սպառուածոց ⁵Եբբ. ըստ պատաշաճութեան իւրաքանչիւր եւ զարդք կաթեալք ⁶Եբբ. զպուսնարդն ⁷Եբբ. զբահն

⁸Եբբ. Գ-Լ-Ե ⁹Եբբ. ի պղնձոյ ¹⁰Եբբ. եթող կէ-Է ¹¹Եբբ. զամենայն ¹²Եբբ. զբաժակնն եւ զբազմակայն ¹³Եբբ. զհնկամանն եւ զբուռուառան ¹⁴Եբբ. զծիւնիս զբանց ¹⁵Եբբ. ցեղիցն , զիշեանս ¹⁶Եբբ. յերուսաղէմ :

առ արքայ Սողոմոնն ամենայն այր Իս-
 3 րայելի, յամսեանն Աթանիմ ի սո-
 լին ամենայն ծերք Իսրայելի, եւ բար-
 4 ձին քահանայքն զտաղանտին: Եւ հա-
 նին զտաղանտին Տեանն եւ զխորանն
 վիպութեան, եւ զամենայն սպանն
 սրբութեան որ ի խորանին վկայութեան.
 եւ հանին զայն քահանայքն եւ Ղեւ-
 5 տայիք: Եւ արքայ Սողոմոնն եւ ամե-
 նայն ժողովուրդն Իսրայելի գումարեալք
 առ նա՝ հանդերձ նախաւ առաջի տապա-
 նակին զհնուին արջառս եւ ոչխարս
 6 անհամարս եւ անվիւսս ի բազմութենէ:
 Եւ տարան ի ներքս քահանայքն զտա-
 պանակ ուխտին Տեանն ի տեղի իւր, ի
 գարիր տանն, սրբութեան սրբութեանցն՝
 7 ընդ թեւովք քերովքէիցն. Զի քերով-
 քէքն թռուցեալ թեւովք ի վերայ տեղ-
 ւոյ տապանակին, եւ ծածկեցին քերով-
 քէքն զտապանակն եւ Վարբութիւնս
 8 նորա ի վերուստ: Եւ Վկային ի վերայ
 սրբեցելոցն, եւ հայէին զյուխք սրբե-
 ցելոցն՝ ի սրբութեանց անտի հանդէպ
 զարկայն, եւ արասքս ոչ երեւէին.
 9 եւ եզեն անդ մինչեւ զայսօր: Եւ ոչ
 ինչ գոյր ի տապանակին, բայց երկու
 տախտակքն քարեղէնք՝ տախտակք ուխ-
 տի՝ զորս եզ անդ Մովսէս ի Քորեբ,
 զորս ուխտեաց Տէր ընդ որդիսն Իսրա-
 յելի յելանել նոցա յերկրէն Եգիպտոց-
 10 ւոց: Եւ եզեւ իրեն ելին քահանայքն
 ի սրբութենէն, եւ ամսն ելից զտունն
 11 Տեանն. Եւ ոչ կարէին քահանայքն կալ
 ի սպասու յերեսաց ամպոյն, զի փառք
 Տեանն լցին զտունն:
 12 Յայնժամ ասէ Սողոմոն, Տէր սոսաց
 13 հովանի լինել միզով՝ Շինելով շինեցի
 քիզ տուն բնակութեան, հաստատու-
 14 թիւն ամոռոյ քում յաւիտեան: Եւ
 զարձոյց արքայ զերեսս իւր եւ օրհ-
 նեաց զամենայն Իսրայել. եւ ամենայն
 15 եկեղեցին Իսրայելի կայր. Եւ ասէ,
 Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի՝ սոսոր,
 որ խօսեցաւ բերանով խրով՝ Վասն
 Դաւթի հօր իմոյ, եւ ձեռօք իւրովք
 16 ելից. եւ ասէ, Յօրէ յորմէ հանի զժո-
 ղովուրդ իմ զԻսրայել յեգիպտոսէ՝ ոչ
 ընտրեցի ի քաղաքի միւում ուրեք գաւ-

ւազանաց Իսրայելի շինել տուն զի լի-
 նիցի անուան իմոյ. եւ ընտրեցի զԴաւթիթ
 լինել ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրա-
 17 յելի: Եւ եղև ի սրտի Դաւթի հօր իմոյ
 շինել տուն անուան Տեանն Աստուծոյ
 18 Իսրայելի. Եւ ասէ Տէր ցԴաւթիթ ցնայր
 իմ, Փոխանակ զի եկն ի սիրաքս շինել
 տուն անուան իմոյ, բարեռք քարեր
 19 զի եզև ի սրտի քում. Բայց դու ոչ
 շինեցես զտունն, այլ որդի քո որ ելա-
 նիցէ յերանայ քոյ՝ նա շինեացէ տուն
 20 անուան իմոյ, եւ կանգնեաց Տէր զբան
 իւր զոր խօսեցաւ. եւ կոցի ես փոխա-
 նակ Դաւթի հօր իմոյ, եւ նստայ յա-
 թմոն Իսրայելի որպէս եւ խօսեցաւ Տէր.
 եւ շինեցի տուն անուան Տեանն Աս-
 21 տուծոյ Իսրայելի. Եւ եզի անդ տեղի
 տապանակին, ուր է ուխտն Տեանն զոր
 ուխտեաց Տէր ընդ հարսն մեր, ի հանել
 նորա գնոսս յերկրէն Եգիպտացւոց:
 22 Եւ յարեաւ Սողոմոն յերեսաց սեղա-
 նոյն Տեանն առաջի ամենայն եկեղեց-
 ւոցն Իսրայելի, եւ տաղանակց զձեռս
 23 իւր յերկինս, Եւ ասէ, Տէր Աստուած
 Իսրայելի, չիք իրբեւ զքեզ Աստուած
 յերկինս ի վեր եւ յերկիր ի խոնարձ, որ
 պահեցեր զուխտ եւ զողորմութիւն՝ ծա-
 24 նայի քում գնացելոյ առաջի քո ամե-
 Նայն սրախ իւրով՝ Պահել ծառայի քում
 Դաւթի հօր իմոյ զոր խոստացար նմա
 եւ խօսեցար բերանով քով, եւ ձեռօք
 քովք կատարեցի որպէս եւ յաւուր
 25 յայտմի: Եւ արդ, Տէր, Աստուած Իս-
 րայելի, պահեա ծառայի քում Դաւթի
 հօր իմոյ զոր խօսեցար նմա եւ ասա-
 ցեր, Ոչ բարձցի քո այր յերեսաց իմոյ
 որ նստիցի յաթոռ Իսրայելի, միայն թէ
 զդու շատցին որդիք քո ճանապարհաց
 իւրեանց գնալ առաջի իմ, որպէս եւ
 26 գնացեր առաջի իմ: Եւ արդ, Տէր, Աս-
 տուած Իսրայելի, հաւատարիմ լիցի
 բանն քո զոր խօսեցար ծառայի քում
 Դաւթի հօր իմոյ:
 27 Թէ Դնակիցե՞ Աստուած ընդ մարդ-
 կան որ ի վերայ երկրի. եթէ՞ երկինք
 եւ երկինց երկինք չեն քիզ բաւական,
 28 արդ զիարձգ տունս զոր շինեցի: Եւ արդ
 հայեաց յայտմի ծառայի քում եւ ի
 ինչորումս իմ, Տէր Աստուած՝ Իսրայելի,

1 Եբբ. զծակս 2 Եբբ. երկայնեցին զծակսն, եւ
 երեւէին գլուխք լծակացն 3 Եբբ. պոխտե
 4 Եբբ. բնակել ի միգի 5 Եբբ. ընդ

6 Եբբ. ծառայից քոց որ գնան առաջի քո ամե-
 նայն սրտիւ իւրեանց 7 Եբբ. արդարեւ բնա-
 կեցէ Աստուած ի վերայ երկրի. ահա 8 Եբբ. իմ

լսել պաղատանաց աղօթից ծառայի քո
 29 որ ¹կայ առաջի քո առքեղ², Լինել բաց
 աչաց քոց զցայց եւ զցերեկ ի տեղւոյս
 զորմէ ասացիր թէ Եգիբի անուռն իմ անդ,
 ի լսել աղօթից զար ազաչէ ծառայ քո ի
 տեղւոյս յայսմիկ ³ի տուէ եւ ի գիշերի⁴ :
 30 Եւ լուիցես ձայնի ծառայի քո եւ ժու
 զովրդեան քո Իսրայելի, զոր կայցեն
 յաղօթս ի տեղւոյս յայսմիկ . եւ զու
 լուիցես ի տեղւոյ ընակութեան քո յեր-
 31 կինս, եւ ⁵արասցես եւ քաւեսցես զոր
 ինչ ոք մեղիցէ ընկերի իւրում . եւ եթէ
 առցէ ի վերայ նորա անէծս սնիծանել
 զնա, եւ խոստովան լիցի⁶ առաջի սեւ
 32 զանոյ քո ի տանս յայսմիկ, Եւ զու
 լուիցես յերկնից եւ արասցես, եւ զաւ-
 տեսցիս ⁷զժողովուրդ քո Իսրայել⁸ յա-
 նօրինել անօրինին, առ ըստ ճանսս
 պարհաց նորա ի զլուսն նորա եւ ար-
 զարացուցանել զարգարն՝ տայ նմա ըստ
 արգարութեան նորա :
 33 Եւ ի պարտել ժողովրդեան քո Իս-
 րայելի առաջի թէ՛ չնամեաց, յորմամ մե-
 զանչիցեն քեզ եւ զառնայցեն առ քեզ
 եւ խոստովան լիցին անուան քում, եւ
 յաղօթս կայցեն եւ ազաչիցեն առ քեզ
 34 ի տանս յայսմիկ, եւ զու լուիցես յերկ-
 նից եւ քաւեսցես զմեզս ժողովրդեան
 քո Իսրայելի, եւ զարձուացես զնոսս
 յերկիրս զոր ետուր հարցն նոցա :
 35 Եւ յարգելուլ երկնից եւ ի չլինել
 անձրեւի, զի մեղուցեալ իցեն քեզ, եւ
 յաղօթս կայցեն ի տեղւոյս յայսմիկ, եւ
 խոստովան լինիցին անուան քում, եւ
 ի մեղաց իւրեանց զառնայցեն, յորմամ
 36 նկուռն առնիցես զնոսս, Լուիցես յերկ-
 նից եւ քաւեսցես զմեզս ծառայից քոց
 եւ ժողովրդեան քո Իսրայելի . զի յուզ-
 ցես նոցա ճանապարհ լարի գնալ ի նա,
 եւ տացես անձրեւ յերկիր քո զոր ետուր
 ժողովրդեան քում ի ժառանգութիւնս :
 37 Եւ տով եթէ լինիցի յերկիր, կամ թէ
 մար լինիցի, կամ թէ հրայրեանցք կամ
 զալուկն կամ ջորեակ, կամ ժանգ եթէ
 լինիցի, եւ նեղիցէ զնա թէ՛ նամի իւր ի
 միում ի քաղաքացն իւրոց, ամենայն պա-
 38 տահար եւ ամենայն ցաւ, Ամենայն ա-

ղօթք, եւ ամենայն խնդրուածք որ լի-
 նիցին ամենայն մարդոյ, ամենայն ժո-
 զովրդեան քո Իսրայելի, որպէս զիարգ
 զիսիցեն իւրաքանչիւր զախտ սրտի
 իւրոյ, եւ տարածուցէ զձեռս իւր ի
 39 տանս յայսմիկ, Եւ զու լուիցես յերկ-
 նից ի պատրաստ ընակութենէ քումմէ,
 եւ քաւեսցես եւ արասցես . եւ տացես
 անն ըստ ամենայն ճանապարհաց իւրոց,
 որպէս եւ զիսիցես զսիրտ նորա . զի
 զու միայն գիտես զսիրտ ամենայն որդ-
 40 ւոց մայրկան . Զի երկիցեն ի քէն զա-
 մենայն աւուրս իւրեանց որչափ եւ
 կեցցեն ի վերայ երեսաց երկրին զոր
 ետուր հարցն մերոց :
 41 Եւ օտարտուն որ ոչ իցէ ի ժողովրդե-
 նէ քումմէ Իսրայելէ, եւ նա եկեալ ի-
 42 ցէ յերկրէ հեռասաանէ⁵, Ուր եւ լսիցէ
 զանուանէ քումմէ մեծէ եւ զձեռանէ
 քումմէ հօրէ եւ զբազկէ քումմէ ձգե-
 լոյ, եւ եկեացէ եւ յաղօթս կացցէ ի
 43 անգլուսս յայսմիկ, Եւ զու լուիցես յերկ-
 նից ի պատրաստ ընակութենէ քում-
 մէ, եւ արասցես ըստ ամենայնի զոր
 եւ կարգացցէ առ քեզ օտարտուն . զի
 ծանիցեն ամենայն ազգք երկրի զանուն
 քո, եւ երկիցեն ի քէն որպէս եւ ժո-
 զովուրդ քո Իսրայել . եւ ծանիցեն զի
 անուն քո կոչեցեալ է ի վերայ տանս
 զոր չինեցի :
 44 Եւ եթէ երանիցէ ժողովուրդ քո ի պա-
 տերազմ ընդ թէ՛ նամի իւր ի ճանապարհի
 45 յորմէ զարձուացես⁶ զնոսս, եւ կայցեն
 յաղօթս յանուն Տեստի ի ճանապարհի
 քաղաքին զոր ընարեցեր, եւ տանս զոր
 46 չինեցի անուան քում, Եւ լուիցես
 յերկնից աղօթից նոցա եւ խնդրուածոց
 նոցա, եւ արասցես նոցա իւրաւունս :
 47 ⁷Քանզի մեղանչիցեն քեզ, զի չկը
 մարդ որ ոչ մեղանչէ, եւ եթէ ⁸ածցես
 ի վերայ⁹ նոցա, եւ մասնեցես զնոսս
 առաջի թէ՛ նամեաց, եւ գերիցեն զնոսս
 գերիչք իւրեանց յերկիր թէ՛ նամուոյ ի
 48 ⁵հոսաւոր կամ ի մօտաւոր, Եւ գար-
 ձուացեն զսիրտս իւրեանց յերկրին յոր
 գերեցան, եւ զառնայցեն եւ ազաչի-
 ցեն զքեզ յերկրին գերութեան իւր-
 եանց, եւ ասիցեն, Մեղաք, անօրինե-
 48 ցաք, անիրաւեցաք, եւ գարձցին առ քեզ

¹ Եբբ. կայ յաղօթս առաջի քո այսօր
² Եբբ. գործե
³ Եբբ. լուիցես եւ քաւեսցես : (31)
 եթէ մեղիցէ որ ընկերի իւրում, եւ նա ինչ բեռացէ
 ի նմանէ երգումն, եւ երգումն գայցէ ⁴ Եբբ.
 զժառայս քո

⁵ Եբբ. յեցեն յաւելու, վասն անուան քո
 ընդ որ առաքեացես ⁶ Կամ, Յորմամ ⁷ Եբբ.
 բարկացցես

յամենայն սրտէ իւրեանց եւ յամենայն
անձնէ իւրեանց յերկրին թշնամեաց
իւրեանց յոր փոխեցեր զնոսա, եւ յա-
զօթս կացցեն առ քեզ ¹վասն ճանա-
պարհի երկրին իւրեանց զոր ետուր
հարցն նոցա եւ քաղաքիս զոր բնարեցեր
եւ տանս զոր շինեցի անուան քում,
49 եւ լուիցես յերկնից ի պատրաստ բնա-
կաւթենէ քումմէ ազօթից նոցա եւ
ինչպրուածոց նոցա, եւ արասցես նոցա
50 իրաւունս. եւ քաւեացես զանիրաւու-
թիւունս նոցա զոր մեզան քեզ, եւ ըստ
ամենայն արհամարհանաց նոցա զոր
արհամարհեցին զքեզ. եւ տացես զնո-
սա ի զթութիւն առաջի գերչաց իւր-
51 եանց, եւ զթացցիս ի նոսա. Չի ժո-
ղովուրդ քո եւ ժառանգութիւն քո են
զորս հաներ յերկրէն Եզրիպտացւոց ի
52 միջոց երկաթոյն հալոցաց: Եւ եզրիցն
աչք քո ²եւ ականջք քո՝ բաց ի խնդ-
րուածս ծառայի քո. եւ ի խնդրուածս
ժողովրդեան քո Իսրայելի լսել նոցա
յամենայնի որովք եւ կարգայցեն առ
53 քեզ: Չի զու զատուցեր զնոսա քեզ ի
ժառանգութիւն յամենայն ժողովրդոց
երկրի, որպէս իսուեցար ի ձեռն Մով-
սիսի ծառայի քո ի հանել զհարսն մեր
յժղկապտոսէ, Տէր Տէր:

³Յայնժամ իսուեցաւ Սողոմոն վասն
տանն իբրև կատարեաց շինել զնա.
Չարեգակն ծանեաւ յերկինս. Տէր ա-
սաց բնակիլ ի միզի. Շինեա գտուն իմ
տուն վայելուչ բնակել ի նմա նորոգու-
թեամբ: Ո՞չ աւանիկ զրեալ է այս ի
54 գիրս երգոյ՝. Եւ եղև իբրև կատար-
եաց Սողոմոն կալ յազօթս առ Տէր
զամենայն ազօթս զայս եւ զինչպրուածս,
յարեաւ յերեսաց սեղանոյն Տեառն ուր
կայր ի գուճս ի վերայ ծնոցայ իւրոց,
եւ ձեռք իւր ընդ երկինս տարածեալ,
55 Եւ եկաց եւ օրհնեաց զամենայն եկե-
ղեցին Իսրայելի մեծածայն, եւ առէ,
56 Օրհնեալ է Տէր՝ շայտօր, որ ես հանգիստ
ժողովրդեան իւրում Իսրայելի ըստ ա-
մենայնի զոր եւ իսուեցաւ. ոչ վրիպեաց
բան մի յամենայն բանից նորս բարեաց
որովք իսուեցաւ ի ձեռն Մովսիսի ծա-
57 տայի իւրոց: Եզրից Տէր Աստուած մեր
ընդ մեզ որպէս էր ընդ հարսն մեր,
58 եւ մի թողցէ ⁴զմեզ, Այլ զարձուցէ

զմեզ առ ի չխտտրելոյ՝ սրտից մերոց ի
նմանէ, գնալ յամենայն ճանապարհս
նորա եւ պահել զամենայն պատու իրանս
նորա եւ զհրամանս նորա եւ զիրաւունս
նորա զորս պատու իրեաց հարցն մերոց:

59 Եզրիցն բանքս իմ՝ պատգրիկ որովք պա-
ղատեցայ առաջի Տեառն ⁵Աստուծոյ մե-
րոյ՝ մերձենալ առ Տէր Աստուած մեր
ի տուէ եւ ի զլիչերի, աննել իրաւունս
ծառայի քում, եւ իրաւունս ժողովր-
դեան քում Իսրայելի, զբան օր ըստ օ-
60 թէ. Չի ծանիրցն ամենայն ժողովուրդք
երկրի, զի Տէր՝ նա է Աստուած, եւ չիք
61 ալ ոք: Եւ եզրիցն սիրաք ⁶մեր կատա-
րեալք առ Տէր Աստուած մեր ⁷անարա-
տութեամբ գնալ ըստ հրամանաց նո-
րա, եւ պահել զպատու իրանս նորա
որպէս եւ յաւուր յայտիկ:

62 Եւ արքայ եւ ամենայն որդիքն Իս-
րայելի ընդ նմա զօհեցին զոնս առաջի
63 Տեառն: Եւ զօհոս արքայ Սողոմոն
զօնս խաղաղականաց զորս զօհեաց
Տեառն յարջատոց քսան եւ երկուս հա-
զարս, եւ յոչխարաց հարեւր եւ քսան
հազար. եւ արար նաւակատիս տանն
Տեառն արքայ եւ ամենայն որդիքն Իս-
64 րայելի: Յաւուր յայնմիկ սրբեաց ար-
քայ զմիջոց ⁸սրահին որ հանդէպ տանն
Տեառն. զի անդ տարա զողջակէզան եւ
զպատարականաց. զի սեղանն պղնձի որ
առաջի Տեառն կայր՝ փոքր էր. եւ ոչ
կարէր ընդունել զողջակէզան եւ զպա-
տարազս եւ զզոնս խաղաղականաց:

65 Եւ արար Սողոմոն յաւուր յայնմիկ
տօն, եւ ամենայն Իսրայել ընդ նմա
եկեղեցի մեծ, ի մտիցն մտաթոյ մինչև
եզեան Եզրիպտացւոց. առաջի Տեառն
Աստուծոյ մերոյ ⁹ի տանն զոր շինեաց,
ուսելով եւ ըմպելով եւ ուրախ լինելով
առաջի Տեառն Աստուծոյ մերոյ՝՝ զեւթն
օր եւ զեւթն օր, աւուրս չորեքաստան:

66 Եւ յաւուրն ութերորդի արձակեաց
զժողովուրդսն. եւ օրհնեցին զարքայ
եւ զնայցին իւրաքանչիւր ի բնակու-
թիւնս իւրեանց, ինչպէս ի եամբ եւ քտիւ
զուարթութեամբ ի վերայ ամենայն բա-
րեացն զոր արար Տէր ծառայի իւրում
Իւրութի եւ Իսրայելի ժողովրդեան իւրում:

¹ Եբբ. ի ² Յեբբ. գալ-տե ³ Եբբ. զմեզ, եւ մի՛
լքցէ զմեզ, (58) Աւ. ի չխտտրելոյ

⁴ Եբբ. ձեր ⁵ Եբբ. գաւթին

Գ. Թ

1 Եւ եղև իրբև կատարեաց Սողոմոն չինել զտունն Տեանն եւ զտունն արքայի, եւ զամենայն հանդերձանս Սո-

2 զոմոնի զոր կամեցաւ ասնել, Եւ երևւեցաւ Տէր Սողոմոնի երկրորդ անգամ,

3 որպէս երևեցաւ նմա ի Գարաւան, Եւ ասէցնա Տէր, Լուայ ձայնի ազօթից քոց եւ սրտառանայ զոր սրտառանցար առաջի իմ, արարի քեզ բաւ ամենայն ազօթից քոց.՝ սրբեցի զտունն զոր չինեցիր գնել զանուն իմ անդ յաւիտեան, եւ եզրցին աչք իմ եւ սիրա իմ անդ զա-

4 մենայն առաջս Եւ զու եթէ գնացես առաջի իմ, որպէս գնաց Գաւթի՞մ Նայր.քո՝ սրբութեամբ սրաիւ եւ ուղղութեամբ՝ ասնել բաւ ամենայնի զոր սրտառելիցի նմա, եւ զհրամանս իմ եւ զսրտառել-

5 րանս իմ պահեսցես, Կանդնեցից զաթոս թագաւորութեան քո ի վերայ Իսրայելի յաւիտեան, որպէս իստեցայ Գաւթի հոր քում եւ սասցի, Մի պահեսցէ քո այր՝ ատաշնորդ յերայելէ՞ն՝

6 Ապա թէ զամնայով զաննացէք զուք եւ որդիք ձեր յինէն, եւ ոչ պահեցէք զուք զպատուիրանս իմ եւ զհրամանս իմ զոր Կեռ Մովսէս՝՝ ատաշի ձեր, եւ երթայցէք եւ ծառայեցէք աստուածոց օտարաց եւ երկիր պագանիցէք նոցա,

7 Իարձից զԲարայէլ յերկրէն զոր ետու նոցա եւ զտանդ գայց զոր սրբեցի առնուն իմոյ՝ ընկեցից յերեսայ իմոց. եւ եզրցի Իսրայէլ յայականութիւն եւ ի

8 խօսս ընդ ամենայն ժողովուրդս Եւ սունդ բարձրացեալ ի զրոյցս ամենայն որ անդանիցէ առ զովաւ՝ զարմացի եւ չչեացէ եւ սասացէ, Ընդէր արար Տէր այսպէս երկրիս այսմիկ եւ տանս այս-

9 միկ Եւ ասացեն, Փախանիկ զի թողին զՏէր Աստուած իւրեանց որ եհան զհարս նոցա յեզրիստուէ ի սանէ ծառայութեան, եւ բուռն հարին զաստուածոց օտարաց, եւ երկիր պագին նոցա եւ ծառայեցին նոցա, վասն այնորիկ ամ

Տէր ի վերայ զոգա զամենայն չարիպ զայրտիկ ԻՅանիմամ եհան Սողոմոն զգոտարն Փարաւոնի ի քաղաքէ Գաւթի ի սուն իւր՝ զոր չինեաց իւր ։

10 Եւ եղև յաւաւրան յայնտիկ յամս քսան

զոր՝ չինեաց Սողոմոն զերկրոսն սունն՝ զտունն Տեանն եւ զտունն արքայի,

11 Քիրամ արքայ Տիրուսի ձեռնառ էր Սողոմոնի եզեւնափայտիւք եւ փայտիւք մայրից եւ ոսկեով, Եւ ամենայն կամօք իւրովք՝. յայնժամ ետ արքայ Սողոմոնն Քիրամայ քսան քաղաք ի Գալի-

12 լիս ։ Եւ ել Քիրամ ի Տիրուսէ՝ Եւ չուգաւ ի Գալիլիս՝՝ սեռանել զքաղաքն զոր ետ նմա Սողոմոն, եւ ոչ եղև նմա

13 հաճոյ. Եւ ասէ, Չինչ են քաղաքս այսօրիկ զոր ետուր ինձ, եզրայր. եւ կոչեաց գնտա՝ հանմանս մինչեւ ցայ-

14 սոր ։ Եւ Պերեր Քիրամ Սողոմոնի հարևար եւ քսան տաղանդ ոսկեոյ ։

15 Եւ այս 10 են հանդերձանք աւարին՝, զոր եհան արքայ Սողոմոն չինել զտունն Տեանն եւ զտունն 11 արքայի, եւ զՄեղոն եւ զբարձաւ անդակն, ինուկ յիրսան քաղաքին Գաւթի, եւ զՍաուր եւ զՄալղան եւ զպարթասն Երուսաղեմի, եւ զՏեներ եւ զՄակեդոնով եւ զԳազեր,

16 Փարաւոնի արքայի Եզրիտացոց. քսան զի ել՝՝ եւ առ զԳազեր, եւ այլեաց գնա հրով, եւ զՔանանացին սր նստէր ի քաղաքին՝ սպան, եւ ետ գնա պաշտատական զստեր իւրում կնոջ Սողոմո-

17 նի ։ Եւ չինեաց Սողոմոն զԳազեր եւ

18 զԲեթորան գներքին, Եւ զԲաղաթ եւ 12 զԹերմովթ յանապատի յերկրի անդ,

19 Եւ զամենայն քաղաքս 13 յանապատեանց որ էին Սողոմոնի, եւ զքաղաքս կանոսց եւ զամենայն քաղաքս երկիրաց, եւ զհանդերձանս Սողոմոնի զոր հանդերձեաց չինել յերուսաղէմ եւ ի Լի-

20 բանան եւ յամենայն 14 երկրին. վասն չիչխելոյ նորա ամենայն ազգին մնացելոյ՝ յԱմովրիտացոցն եւ ի Քեռացոց եւ ի Փերեզացոց եւ ի Սեւացոց եւ 15 ի Քանանացոց եւ ի Յերուսացոց եւ ի Գերզեսացոց՝, որ ոչ յորդոյն Իս-

24 րայելի էին. Արդիք նոցա մնացեալք յետ նոցա յերկրին, զորս ոչ կարացին որդիքն Իսրայելի սասակել. Եւ արկ

1 Յեբ. գ-ի-տ-է 2 Յեբ. կատարեայ 3 Յեբ. յաթոսոց Լուրայելի 4 Յեբ. ետու 5 Յեբ. յաւաւր 6 Յեբ. ի կատարածի ամաց քանից յորս

7 Յեբ. բոտ ամենայն կամաց նորս 8 Յեբ. երկիր Գաբոզայ, 9 Յեբ. անհամայն 10 Յեբ. տաւարեաց 11 Յեբ. է բան հարիկն 12 Յեբ. իւր եւ զՄեղոն եւ զպարթասն Երուսաղեմի, եւ զՉասուր, եւ զՄակեդոնով եւ զԳազեր ։ (16) Փարաւոն արքայ Եզրիտացոց ել 12 Յեբ. զՍաուր 13 Յեբ. համարաց 14 Յեբ. երկրն ի իշխանութեան իւրոյ ։ (20) Չամենայն ազգն զմնացեալ 15 Յեբ. ի Յեռուսացոց

զնոսա Սողոմոն ընդ հարկօք ծառայու-
 22 թեան մինչեւ ցայսօր : Եւ յորդոպն
 Իսրայելի ոչ ¹եա Սողոմոն ի հանդեր-
 ձաւորութիւն² : զի նոքա արք պատե-
 րազմօք էին, եւ ծառայք նորա եւ իշ-
 33 ²հեծեալք նորա : Եւ այս են իշխանք
 որ կային ի վերայ գործոյն Սողոմոնի,
 հինգ հարեւր եւ յիսուն, որ ունէին
 զժողովուրդն որ գործէին զգործն :
 24 Բայց զուստոյն Փարաւոնի կ'ի քա-
 ղաքէն Իսթի ի տունն իւր, զոր չի-
 նեաց նմա . յայնժամ շինեաց զՄեղոն :
 25 Եւ նանէր Սողոմոն երիցս անգամ ի
 տարւոջ ողջակէզս եւ խաղաղականս ի
 վերայ սեղանոյն զոր շինեաց Տեառն,
 եւ արկանէր խուսկս առաջի Տեառն :
 26 Եւ բովանդակեաց զտունն : Եւ արար
 նաւ արքայ Սողոմոն ի Գասիոնգարեր,
 որ է մերձ յեղաթ³ յեզեր ³վերջնոյ ծո-
 27 վուն յերկրին Տեղոմայ : Եւ առաքեաց
 Քիրամ ընդ նաւուն ի ծառայից իւրոց
 նաւորդս հմուտս նաւարկութեան ծովու
 28 ընդ ծառայս Սողոմոնի : Եւ չողան ³ի
 Սովփերա, եւ առին անախ ոսկի չո-
 րեքհարեւր եւ քսան տաղանդ, եւ բե-
 րին արքայի Սողոմոնի :

ԳԼ . Ժ

1 Եւ տիկինն Սարայ լուաւ զանուն Սո-
 զոմոնի եւ զանուն Տեառն ⁵եւ զիմաս-
 տութիւն Սողոմոնի⁶ : Եւ եկն փորձել
 2 զնա առակօք : Եւ եկն յեյուսազէմ զօ-
 րու ծանու յոյժ, եւ ուղտուք որ բար-
 ձեալ բերէին խուսկս եւ ոսկի բազում
 յոյժ եւ ականս պատուականս . եւ ե-
 մուտ առ Սողոմոն, եւ խօսեցաւ ընդ
 նմա զամենայն ինչ որ էր ի սրտի իւ-
 3 բուծ : Եւ մեկնեաց նմա Սողոմոն զա-
 մենայն բանս նորա, եւ ոչ էր բան
 սխալեալ յարքայէ զոր ոչ մեկնեաց նմա :
 4 Եւ ետես ⁵տիկինն զամենայն իմաստու-
 թիւնն Սողոմոնի, եւ զտունս զոր չի-
 5 նեաց, եւ զխորտիկան Սողոմոնի, եւ
 զաթոռ ծառայից նորա, եւ զկարգ պաշ-
 տօնէից նորա, եւ զճանդերձանս նոցա,
 եւ զմատուռակս նորա, եւ ⁷զողջա-

կէզս նորա զոր մատուցանէր⁸ Տեառն,
 6 եւ յիմարեցաւ : Եւ աւէ ցարքայ Սողո-
 մոն, ճշմարիտ էր բանն զոր լուայ յեր-
 կրին իմում վասն բանից քոց եւ վասն
 7 իմաստութեան քո . Եւ ոչ հաւատացի
 խօսելեացն առ իս, մինչեւ ինձէն եկի
 եւ տեսին աչք իմ . եւ ահա ի կէս չէ
 զոր պատմեցին ինձ իմաստութեանդ
 զոր յաւելիւր եւ բարութեան, եւ ամե-
 նայն համբաւոյն զոր լսէին յերկրին ի-
 8 մում : Երանելի են ⁸կանայք քո եւ ե-
 բանելի ծառայք քո որ կան առաջի քո⁹
 եւ հանապազ լսեն զիմաստութիւն քո :
 9 Եւ եղիցի Տէր Աստուած քո օրհնեալ
 որ հաճեցաւ ընդ քեզ տալ զքեզ յա-
 թոող Իսրայելի . վասն սիրելոյ Տեառն
 զԻսրայելի հաստատել յաւիտեան . եւ
 կացոյց զքեզ արքայ ի վերայ նոցա,
 առնել իբաւուեսս եւ արդարութիւն ⁹յա-
 10 տանսս նոցա : Եւ ետ Սողոմոնի հա-
 բեւր եւ քսան տաղանդ ոսկույ եւ
 խուսկս բազումս յոյժ եւ ականս պա-
 տուականս . եւ ոչ էին եկեալ այնպիսի
 խուսկք բազումք ⁵եւ անուշուշք¹⁰, զորս
 ետ տիկինն Սարայ արքայի Սողոմոնի :
 11 Եւ նաւն Քիրամայ որ բերէր ոսկի
⁹ի Սովփերայ, երեք ⁹ի Սովփերայ փայտ
¹⁰անտաշ բազում յոյժ եւ ականս պա-
 12 տուականս : Եւ արար արքայ զփայտան
¹⁰անապա մոյթս տանն Տեառն եւ տանն
 արքայի, եւ շնորս եւ տաւիղս երգե-
 ցողայի . եւ ընր եկեալ այնպիսի փայտ
¹⁰անտաշ յերկիրն, եւ ոչ երեւեցաւ
 ուրեք մինչեւ ցայսօր :
 13 Եւ արքայ Սողոմոն ետ տիկնոջն Սա-
 րայ զամենայն ինչ զոր կամեցաւ եւ
 զոր ինդրեաց, բայց յայնմանէ զորս
 տուեալ էր ¹¹նորա ի ձեռս¹¹ արքայի
 Սողոմոնի . եւ զարձաւ եւ գնաց յերկիր
 իւր ինքն եւ ⁵ամենայն ծառայք իւր :
 14 Եւ էր կշիռ ոսկուոյն եկելոյ Սողոմոնի
 ի միում տարւոջ վեց հարեւր եւ վաթ-
 15 տուն եւ վեց տաղանդ ոսկույ . Թող զհար-
 կացն կարգելոց եւ զվաճառաց վաճառա-
 կանաց . եւ զամենայն թաղաւորաց
¹²այնր կողման¹² եւ նախարարաց երկրին :
 16 Եւ արար արքայ Սողոմոն ¹³երեքհա-
 բեւր նիզակ¹³ ոսկի կռածոյ, եւ ¹⁴երեքհա-

¹ Եբբ. առ Սողոմոն ծառայ ² Եբբ. վերակա
 ցուք կառաց եւ երկվարաց ³ Եբբ. Կարմիր
⁴ Եբբ. Ռովեր ⁵ Եբբ. պ-լ-տ-տ ⁶ Եբբ. տի-
 կինն Սարայ ⁷ Կաթ, զսանդուղն որ ելանէր
 ի տունն

⁸ Եբբ. արք ⁹ Եբբ. Ռովերայ ¹⁰ Եբբ. արմուկ
¹¹ Եբբ. նմա ըստ ձեռնին ¹² Եբբ. Արաբացոց,
 և՛, իմասն ժողովորոց ¹³ Եբբ. երկերեւր վաճառ
¹⁴ Եբբ. վեցհարեւր Իկլ

րեւր զահեկան՝¹ ի վերայ միոյ ՚հիգակի։
 17 Եւ երեքճարեւր² զէն ոսկի կուս, ³եւ երեք մանք ոսկւոյ ի մի զէն՝. եւ եղ զայն արքայ ի տուն անտառին Լիւանանու։
 18 Եւ արար արքայ աթոս փղոսկրեայ մեծ, եւ սլտեաց զնա ոսկւով փոր-
 19 ձով. վեց աստիճան աթոռոյն, եւ ⁴զեւք եզանց՝ ի թիկանց կողմանէ աթոռոյն, եւ ձեռք աստի եւ անտի ի վերայ աթոռոյն նստերոյ, եւ երկու առիւծունք
 20 կային առնիթեւր ձեռացն։ Եւ երկուստան առեւծք կային ի վերայ վեցեցունց աստիճանացն աստի եւ անտի. եւ ոչ եղև այնպիսի յամենայն թագաւորութեան։
 21 Եւ ամենայն կահ սպասու արքայի Սողոմոնի ոսկի ⁵գործեաց, եւ աւալանք ոսկիք՝, եւ ամենայն կահ տան անտառին Լիւանանու ⁶ոսկւով պատեալ. եւ ոչ գոյր աշտաթ, քանդի ոչ էր համարեաց արծաթ յաւուրս Սողոմոնի իէ
 22 իցէ ինչ։ Զի նաւ Թարսուացի էր Սողոմոնի արքայի ի ծովու ընդ նաւս Քիրամայ, եւ յերեւած գայր արքայի նաւ ի Թարսէ, ոսկւոյ եւ արծաթոյ եւ ժանեաց փղաց եւ կապկաց եւ սիրամարգաց։
 23 Եւ մեծացաւ Սողոմոն քան զամենայն թագաւորս երկրի մեծութեամբ եւ ի-
 24 մաստուութեամբ։ Եւ ամենայն ⁷թագաւորք երկրի խնցրէին տեսանել՝ զերեսս Սողոմոնի, լսել զիմաստութիւն նորա
 25 զոր ետ ⁸Տէր ի սիրահորա։ Եւ նաք իւրէին իւրաքանչիւր զպատարագս իւրեանց, անօթս արծաթեղէնս եւ անօթս ոսկեղէնս եւ հանդերձս, ⁹տաշին եւ խունկս եւ ձիս եւ ջորիս, ամի ամի։
 26 Եւ ժողովեաց Սողոմոն կուս եւ հեծեալս. եւ էին Սողոմոնի ¹⁰քառասուն հազար ձիք մատակք՝ կառաց, եւ երկուստան հազար երկվարաց, եւ եղ զնոսս ի քաղաքս կառաց, եւ որ ընդ արքայի յերուսաղէմ։ ¹¹Եւ էր իշխան ամենայն թագաւորացի Գեատոյն մինչև ցայկպիս,
 27 եւ մինչև ցտահմանս եգիպտացւոց։՝ Եւ ետ արքայ զարծաթ ¹²եւ զոսկի՝ յերուսաղէմ իրրեւ զքարինս, եւ զեղեւնափայտ՝ իրրեւ զմոլաթղեւնիս ի գաշաս

28 քաղմութեամբ։ Եւ ելք երկվարաց Սողոմոնի յեգիպտոսէ, եւ ¹¹ի թեկուայ վաճառք արքայի. եւ անուին ի Թեւ-
 29 կուայ գնովք։ Եւ ելանէին ելք կառաց յեգիպտոսէ փոխանակ ¹²արծաթոյ, եւ ձի ընդ հարեւր եւ յիսուն արծաթոյ. եւ նոյնպէս թագաւորացն ամենեցունց Քեատիւմայ, եւ թագաւորացն Ասորւոց ¹³որ ընդ ծովակաղմն՝ կլանէին։
 ԳԼ ԺԱ

1 Եւ արքայ Սողոմոն ¹⁴էր իրասէր. եւ ան իւր՝ կանայս օտարոսիս բազումս, եւ զգուստրն Փարաւոնի, եւ Մովաբայիս եւ Ամոնացիս եւ եգիպտացիս եւ ¹⁵Ասորիս եւ Քեատացիս ¹⁶եւ Ամոլիւհացիս՝.
 2 Յազգացն յորոց ¹⁶վճարեաց Տէր որդոցն Խորայիլի չնտանել առ նոսա, եւ նորա մի մտցին առ ձեզ թէ զուցէ խտորեցուցանիցն զսիրտս ձեր զկնի կոտցն իւրեանց. ի նոսա յարեցաւ Սողոմոն
 3 սիրել։ Եւ էին նորա կանայք տիկնայք եւթն հարեւր, եւ հարճք երեք հարեւր. եւ խտորեցուցին կանայք նորա
 4 զսիրտ նորա։ Եւ եղև ի ժամանակի ձերութեանն Սողոմոնի կանայք նորա խտորեցուցին զսիրտ նորա զհետ աստուածոց օտարաց. եւ ոչ էր սիրտ նորա կատարեալ ընդ Տեառն Աստուծոյ իւրոյ իրրեւ զսիրտն Դաւիթի հօր իւրոյ։
 5 Եւ գնաց Սողոմոն զհետ Աստարտայ զարչելոյ Սիզոնացւոց, եւ զհետ Մեղ-
 6 քոմայ զարչելոյ որդւոցն Ամոնայ։ Եւ արար Սողոմոն չար առաջի Տեառն, եւ ոչ չորաւ զհետ Տեառն իրրեւ զԴաւիթ
 7 զհայր իւր։ Յայնժամ շինեաց Սողոմոն զրարծաւանդակն Քամովսայ ¹⁷կոտցն Մովաբու ի իրինն հանդէս Նրուսաղեմի, եւ Մեղքոմայ ¹⁷կոտց որդւոցն Ամոլուհայ ¹⁸եւ Աստարտայ զարչելոյ Սիզո-
 8 նացւոց։ Եւ այնպէս արար ամենայն կանանց իւրոց օտարոսուց. արկանէին խունկս եւ զոճէին կոտց իւրեանց։
 9 Եւ բարկացաւ Տէր Սողոմոնի, զի խտորեցուց զսիրտ իւր ի Տեառնէ Աստուծոյ Իսրայիլի որ երեւեցաւ նմա
 10 երկիցս, եւ պատուիրեաց նմա վասն

¹ Եբբ. վահանի ² Եբբ. ասպար ³ Եբբ. երեւր
 մնաս ոսկւոյ ի մի ասպար ⁴ Եբբ. գլուխ բոլորչի
⁵ Յեբբ. գլուխ ⁶ Եբբ. ոսկի զուս ⁷ Եբբ. եր-
 կիր ինչերէր ⁸ Եբբ. Աստուած ⁹ Եբբ. զէնս
¹⁰ Եբբ. հազար եւ չորքհարեւր

¹¹ Եբբ. վաճառականք արքային առնուին երա-
 մակս գնովք ¹² Եբբ. վեց հարեւր արծաթոյ
¹³ Եբբ. ի ձեռն նոցա ¹⁴ Եբբ. սիրեաց ¹⁵ Եբբ.
 Սիզոնացիս ¹⁶ Եբբ. ասաց ¹⁷ Եբբ. գար-
 չելոյ

բանին այնորիկ , ամենեւին չերթալ զհետ
 աստուածայ օտարայ , եւ 'պահել եւ
 11 ասնել" զոր պատուիրեաց նմա Տէր
 12 Աստուած : Եւ ասէ Տէր ցՍողոմոն ,
 13 Փոխանակ զի եղև այդ ընդ քեզ , եւ
 ոչ պահեցեր զհրամանսն իմ եւ զպատու-
 14 րանս զոր պատուիրեցի քեզ , պա-
 տասելով պատանեցից զթագաւորու-
 15 թիւնդ ի ձեռանէ թուամէ , եւ սայ
 16 զդա ծառայի թում : Բայց ի քս աւուրս
 ոչ արարից զայն վասն Դաւթի հօր քո ,
 սայ ի ձեռանէ որդւոյ քո ասից զգա :
 17 Ասկայն զամենայն թագաւորութիւնդ ոչ
 սոսից . Դաւապան մի սայ որդւոյ թում
 վասն Գաւթի ծառայի իմոյ եւ վասն
 18 երուսաղեմի քաղաքի զոր բնարեցի :
 19 Եւ յարոյց Տէր սասան Սողոմոնի
 20 զԱզեր զԵզոմայեցի ի զաւակէ թա-
 21 զաւորութեանն Եզոմայեցոց : Եւ ե-
 22 զեւ 'ի սատակել Դաւթի զԵզոմ" , յեր-
 թալ Յովաբայ իշխանի զօրուն թաղել
 զիրբաւորսն , զի կոտորեցին զամենայն
 23 արու յեղոմ . Զի զվից ամիս նստա-
 24 անց Յովաբ եւ ամենայն Իսրայէլ յե-
 25 զոմ , մինչեւ սատակեաց զամենայն
 26 արու Եզոմայեցոց . Եւ փախեաւ
 27 Ազեր ինքն եւ ամենայն արք Եզոմա-
 28 յեցիք ի ծառայից հօր նորա եւ մօրն
 յԵզրիպոսս . եւ յԱզեր մանուկ փոքր
 29 էր : Եւ յարեան 6 արքն ի քաղաքէ ան-
 30 աի Մազիառուս" եւ եկին ի Փարուն , եւ
 31 ասին ընդ իւրեանս արս ի Փարունէ եւ
 32 եկին յԵզրիպոսս առ Փարաւուն արքայ
 33 Եզրիպոսցոց , 2 եւ եմուս Ազեր առ
 34 Փարաւուն" . եւ եա նմա սուն եւ կար-
 35 զեաց նմա հաց , եւ եա նմա զեափն :
 36 Եւ եզիտ 5 Ազեր չնորհս առաջի Փարա-
 37 ւունի յոյժ , եւ եա նմա կին զքոյր կնոջ
 38 իւրոյ՝ զքոյր 7 Թեկեմիմնայ զերէց : Եւ
 39 ծնաւ քոյրն Թեկեմիմնայ Ազերայ՝ զՓա-
 40 ներաթ զորդի նորա . եւ սնայց զնա
 41 8 Թեկեմիմնա ի մէջ որդւոցն Փարաւունի .
 42 եւ էր Դաներաթ ի տան Փարաւունի ի
 43 մէջ որդւոցն Փարաւունի : Եւ լուաւ
 44 5 Ազեր յԵզրիպոսս եթէ ննջեաց Դաւթի
 45 ընդ հարս իւր , եւ եթէ մեուս Յովաբ
 46 իշխան զօրուն . եւ ասէ 5 Ազեր ցՓա-

րաւուն , Արձակեա զիս եւ զարձայց
 22 յերկիր իմ : Եւ ասէ Փարաւուն 9 զԱզեր ,
 23 Զինչ պոկաս է քեզ առ իս զի ինչդիս
 երթալ յերկիր քո . եւ ասէ 10 զնա Ազեր ,
 24 Զի" արձակելով արձակեաց զիս . 2 եւ
 25 զարձաւ Ազեր յերկիր իւր :
 26 Եւ յարոյց 11 Տէր սասան Սողոմոնի
 27 զԳաւուն զորդի Եզրիպոց , որ փախեաւ
 28 յԱզրաստոց արքայէ Սուբայ ի տեառ-
 29 նէ իւրմէ : Եւ մոգովիցան առ նա արք ,
 եւ էր իշխան զնոյն ի կոտորել զնոսա
 30 Դաւթի . եւ զնայցին ի Դամասկոս եւ
 նստան ի նմա . եւ 12 թագաւորեաց ի
 31 նստան Դամասկոս : Եւ եղև հակառակ Իսրա-
 32 յէլի զամենայն աւուրս Սողոմոնի . 13 այս
 է չարութիւն Ազերայ" . եւ ծանրացաւ
 սունն եղև Իսրայելի , եւ թագաւոր-
 33 եաց յերկիրն 14 Եզոմայ :
 25 Եւ Յերոբոամ որդի Նարատայ Եփ-
 26 րաթայցի ի Սաբրոց , եւ անուն մօր
 նորա Սարուա կին այրի , 2 եւ նա էր
 որդի կնոջ այրւոյ՝ ծառայ Սողոմոնի .
 27 եւ ամարձ զձեռն իւր յարքայ : Եւ այն
 28 իւրք էին զի վերացոյց զձեռն իւր յար-
 29 քայ՝ Սողոմոն . արքայ՝ Սողոմոն չինեաց
 30 15 զարձատնդակն , եւ եկից զԵրամ
 31 քաղաքին Դաւթի հօր իւրոյ . Եւ այն
 32 Յերոբոամ հօր զօրութեամբ . իրիւ
 ետես Սողոմոն զպատանեակն եթէ
 այր զորոյ է , կայոց զնա ի վերայ
 հարկաց թեւտակրաց սանն Յովաբայ :
 29 Եւ եղև ի ժամանակին յայնմիկ եւ ել
 Յերոբոամ յերուսաղեմէ , եւ եզիտ
 զնա Աքիա Սիլոնիացի մարգարէ ի ճա-
 նոսարարհի 2 եւ մեկուսացոյց զնա ի ճա-
 նոսարահէն" . եւ Աքիա զգեցեալ էր
 հանդերձ նոր . եւ երկոքեան ի զաշ-
 30 տին : Եւ բունն եհար Աքիա զհանդեր-
 ձէն իւրմէ զնորոյ որ ի վերայ իւր ,
 եւ պատանեաց զնա յերկտասան կա-
 31 պերաս : Եւ ասէ զՅերոբոամ , Առ զու
 քեզ զատան կապերաց . զի այսպէս
 ասէ Տէր Աստուած Իսրայելի , Ահա ես
 պատանեցից զթագաւորութիւնն ի ձե-
 32 ոսց Սողոմոնի , եւ սայ քեզ զատան
 33 զաւազանսն : Եւ 16 երկու զաւազանքն
 եզրիցին" նորա վասն Դաւթի ծառայի իւ-
 մոյ , եւ վասն երուսաղեմի քաղաքի

1 Եբբ. նա ոչ պահեաց 2 Յեբբ. պատու 3 Եբբ. զԱզադ 4 Եբբ. ի ինեւ Դաւթի յեղոմ 5 Եբբ. Ազադ 6 Եբբ. ի Մազիառայ 7 Եբբ. Թաւհ- փենեպ տիկնոջ . (20) եւ ծնաւ նմա քոյրն Թաւհ- փենեպ 8 Եբբ. Թաւհփենեւ

9 Եբբ. ցԱզադ 10 Եբբ. Ոչինչ . այլ 11 Եբբ. Աստուած 12 Եբբ. թագաւորեցին 13 Եւ , թոյլ զարուս իւնն Ազադայ 14 Եբբ. Ասորոց 15 Եբբ. զՄեղան , տե՛ս Գլ. Թ. 15 : 16 զաւազան (ցեղ) մի եղեցի

զոր ընտրեցի յամենայն ցեղիցն Եսրա-
 33 յելի Փոսամնակ զի ՚Լեթող զիս, եւ եր-
 կիր եղապ Ասասրայ զարչերոյ՝ Աի-
 զոնացւոց, եւ Քամսիոց կոսց Մովա-
 րայ, եւ Մեղքալմայ ²զազրոսոց որդ-
 ւոցն Ամոնաց. եւ ոչ ³ցնոց ի ճանա-
 պարն իմ առնել ուղղութիւն առաջի
 իմ, եւ զճշմարտութիւնս եւ զգատոս-
 ամնս իմ իրիւս գիտաիմ զճոյր իւր :
 34 Եւ ոչ առից զամենայն թաղաւորա-
 թիւնն ի ձեռանէ նորա, ⁴զի հակառա-
 կութեամբ կացից հակառակ նմա՝ գա-
 մենայն աւուրս կենաց նորս, վասն
 Դաւթի ծառայի իմոց զոր ընտրեցի, որ
 պահեաց զպատա իրանս իմ եւ զճշմար-
 35 ստութիւնս : Եւ առից զթագաւորութիւնն
 ի ձեռանէ նորա, եւ տաց քեզ գոտան
 36 գաւազանան. եւ որդւոց նոցա տաց
⁶զերկուս գաւազանան, վասն մնաց
 ճրացի ծառայի իմում Դաւթի գամե-
 նայն աւուրս առաջի իմ յերուսաղէմ
 քաղաքի զոր ընտրեցի զնել զամուսն իմ
 37 անց : Եւ զքեզ առից եւ թագաւորեա-
 ցես որոց եւ զանկացի անձն քո. եւ
 զու եղիցես թագաւոր ի վերայ Եսրա-
 38 յելի : Եւ եղիցի եթէ պահեացես զամե-
 նայն ինչ զոր ես պատահեմ քեզ, եւ
 զնստցես ի ճանտարհոս իմ եւ արտա-
 ցես ուղղութիւն առաջի իմ, զղուշանալ
 պատուիրանաց իմոց եւ հրամանաց ի-
 մոց, որպէս արար Դաւթի ծառայ իմ,
 եւ եղէց ընդ քեզ, եւ շինեցից քեզ
 ստեն հաւատարիմ որպէս շինեցի Դաւ-
 39 թի : Եւ տաց քեզ զԵսրայէլ : Եւ չար-
 յարեցից զգաւակն Դաւթի վասն այնու-
 40 թիկ. բայց ոչ զամենայն աւուրս : Եւ
 ինդրեաց Սողոմոն սպանանել զՅերոբո-
 վամ. եւ յարեաւ Յերոբոլամ եւ վա-
 խեաւ յեգիպտոս առ Սաւսակիմ արքայ
 Եգիպտացոց. եւ էր յեգիպտոս մին-
 չեւ մեռաւ Սողոմոն :
 41 Եւ մնացորդք բանիցն Սողոմոնի եւ
 ամենայն ինչ զոր արար եւ ամենայն
 իմաստութիւնս նորա ոչ աւանիկ զրեալ
 42 է ի վիրս բանից Սողոմոնի : Եւ աւուրք
 զորս թագաւորեաց Սողոմոն յերուսա-
 զէմ ի վերայ ամենայն Եսրայելի սմբ
 43 քառասուն : Եւ ննջեաց Սողոմոն ընդ

հարս իւր, եւ թաղեցին զնա ի քաղա-
 քի Կաթի հօր իւրոց եւ թագաւորեաց
 Ռորովամ որդի նորա ընդ նորա :

ԳԼ ԺԲ

1 Եւ չաղաւ Դարբայ Ռորովամ ի Արիխ.
 զի ի Արիխ զայր ամենայն Եսրայէլ
 2 թագաւորեցուցանել զնա : Եւ եղեւ իւ-
 րեւ լուաւ Յերոբոլամ որդի Նարտայ,
 եւ ինքն էր ապիտակն յեգիպտոս յարմ
 հեաէ վախեաւ յերեսաց արքայի Սողո-
 մոնի, եւ ⁸զարձաւ Յերոբոլամ յեգիպ-
 3 տաւ : Եւ ստուքեցին եւ կոչեցին զնա.
 եւ եկն Յերոբոլամ եւ ամենայն եկե-
 ցեցին Եսրայելի. եւ խօսեցաւ ամենայն
 ժողովուրդն ընդ Դարբայի Ռորովամայ
 4 եւ ասեն, Հայր քո ծանրացոյց զամուր
 մեր, եւ զու թեթեւացոս ի խխտ ծա-
 սպութենէ հօր քո եւ ի ծանր անրայ
 նորա զոր եզ ի վերայ մեր, եւ ծառա-
 5 յեցոսք քեզ, եւ սաէ ցնոսա, Երթաք
 մինչեւ ցերիս աւուրս, եւ զարձիք սո-
 խա. եւ ցնացին :
 6 Եւ խորհեցաւ արքայ Ռորովամ ընդ
 ձեռան որ կոչին առաջի Սողոմոնի հօր
 նորա մինչդեռ կենդանի էր, եւ սաէ,
 7 Զիսից խորհիք եւ սպասք պատաս-
 յի խանի ժողովրդեանն : Եւ խօսեցան ընդ
 նմա եւ ասեն, Եթէ յաւուր յարմիկ լի-
 նիցիս ծառայ ժողովրդեանն այնմիկ եւ
 ծառայեցես նոցա, եւ անսացես նոցա
 եւ խօսեցիս ընդ նոսա բանս բարիս,
 ելլիցին քեզ ծառայք զամենայն աւուրս :
 8 Եւ եթող զերտուրք ձերայն զոր խոր-
 հեցաւ ընդ նոսա, եւ խորհեցաւ ընդ
 մանկախն աննդակիցս իւր որ կային
 9 առաջի նորա, եւ սաէ ցնոսա, Զինչ
 տայք խրատ, եւ տաց պատասխանի
 ժողովրդեանն՝ որ խօսեցան ընդ իս եւ
 10 ասեն, Թեթեւացոս յանրոցն զոր եզ հայր
 քո ի վերայ մեր : Եւ խօսեցան ընդ
 նմա մանկախն աննդակիցք իւր որ
 կային առաջի նորա եւ ասեն, Այսպէս
 խօսեցիս յակամձս ժողովրդեանն որ
 խօսեցան ընդ քեզ եւ ասեն, Հայր քո
 ծանրացոյց զամուր մեր, եւ զու թե-
 թեւացոս ի մէնջ. այսպէս խօսեցիս ընդ
 նոսա, Ծկույթ իմ ստուար է քան զմէջ
 11 հօր իմոց, եւ արդ հայր իմ եզ ի վե-
 րայ ձեր սնուր ծանր, եւ ես յաւելից

¹ Եբբ. թողն զես եւ երկիր պագին Ասասրայոյ,
 ստուածոցն ² Եբբ. առուածոցն ³ Եբբ. գնացին
⁴ Եբբ. այլ կացուցից զնա Էլշանս ⁵ Եբբ. որդւոց
 նորա ⁶ Եբբ. զմ գաւազանն

⁷ Եբբ. դուրսէ ⁸ Եբբ. բնակէր Յերոբոլամ յե-
 գիպտոս

յանուրն ձեր . հայր իմ խրատեաց զձեզ
 12 Եւ եկն շամենայն Իսրայէլ առ ար-
 քայ՝ Ռոբովամ յաւուրն երրորդի որ-
 պէս խօսեցաւ ընդ նոսա արքայ , եւ
 13 ստէ , Դարձչիք առ իս յաւուրն երրոր-
 14 զի : Եւ պատասխանի ետ արքայ ժո-
 ղովրդեանն խատուծեամբ . եւ եթող
 Ռոբովամ զխորհուրդ ձերոցն զոր խոր-
 15 հեցան ընդ նմա , եւ խօսեցաւ ընդ նո-
 սա ըստ խորհրդեան մանկուոցն եւ ստէ ,
 Հայր իմ ծանրացոյց զանուր ձեր , եւ
 ես յաւելից յանուր ձեր . հայր իմ
 խրատէր զձեզ զանիւք , եւ ես խրատե-
 15 ցից զձեզ չքբողք : Եւ ոչ լուաւ ար-
 քայ ժողովրդեանն , զի էր խտտորուն
 ի Տեառնէ . զի հաստատեցէ Տէր զբան
 իւր զոր խօսեցաւ ի ձեռն Աքիայ Սի-
 16 լովնայւոյ , վասն Յերթովամայ որդւոյ
 17 Նարայոյ : Իբրեւ տեսին ամենայն Իս-
 րայէլ եթէ ոչ լուաւ նոցա արքայ , պա-
 տասխանի ետ ժողովուրդն արքայի եւ
 ստէ , Չինչ բաժին կայ մեր ընդ Դաւ-
 թի , եւ ոչ գոյ մեր ժառանգութիւն
 ընդ որդւոյ Յեսուայ . ³պնդեաց ի բնա-
 կութիւնս՝ քո , Իսրայէլ , եւ արդ զու-
 17 արածես զառնն Դաւթի՝ . եւ գնաց
 18 Իսրայէլ ³ի ընտելութիւնս իւր : Եւ
 որդւոցն Իսրայելի որ նստէին ի քա-
 զաքս Յուզայ՝ թագաւորեաց Ռոբովամ :
 18 Եւ առաքեաց արքայ Ռոբովամ զԱդո-
 նիրամ հարկապետ , եւ քարհոծեցին
 զնա ամենայն Իսրայէլ քարամբք եւ մե-
 առա : Եւ արքայ Ռոբովամ աճապարեաց
 կանեղ ի կառս՝ փախչել յերուսաղէմ .
 19 Եւ արհամարհեաց Իսրայէլ զտունն Դաւ-
 թի մինչև ցոյսօր :
 20 Եւ եղև իբրև լուաւ ամենայն Իսրա-
 յէլ եթէ զարձաւ Յերթովամ , առաքե-
 ցին եւ կոչեցին զնա ի ժողովուրդն , եւ
 թագաւորեցուցին զնա ի վերայ Իսրա-
 յելի . եւ ոչ ոք էր զինի տանն Դաւթի ,
 21 քայց միայն ի զաւսուանէ տանն Յու-
 ժայ ⁵եւ Բենիամինի՝ : Եւ Ռոբովամ ե-
 մուտ յերուսաղէմ , եւ եկեղեցացոյց
 զժողովուրդն Յուզայ եւ զգաւազանն
 Բենիամինի՝ հարեւր եւ ութսուն հա-
 զար երիտասարդաց սրատերազմոյաց՝
 պատերազմել ընդ տանն Իսրայելի ,

զարձուցանել զթագաւորութիւնն ⁶Ռո-
 բովամայ որդւոյ՝ Սողոմոնի :
 22 Եւ եղև բան ⁷Տեառն առ Սամեա
 23 այր Աստուծոյ եւ ստէ , Սոսեաց ընդ
 Ռոբովամայ որդւոյ Սողոմոնի , արքայի
 Յուզայ , եւ ընդ ամենայն տանն Յու-
 ժայ եւ Բենիամինի , եւ ընդ մնացորդս
 24 ժողովրդեանն , եւ ասացես , Այսպէս
 ստէ Տէր , Մի կլանէք եւ մի տայցէք
 պատերազմ ընդ եղբարս ձեր ընդ որ-
 զինն Իսրայելի , զարձցի իւրաքանչիւր
 ոք ի տուն իւր , զի յինէն եղև բանն
 սոյն : Եւ լուան բանի Տեառն , եւ զա-
 զարեցին յերթայոյ ըստ բանին Տեառն :
 25 Եւ շինեաց Յերթովամ զՍիկիմ ի
 յերինն Եփրեմայ եւ ընտելէր ի նմա .
 26 եւ ել սնտի եւ շինեաց զՓանուէլ : Եւ
 ստէ Յերթովամ ի սրտի իւրում , Ահա
 27 արդ զառնայցէ ⁸թագաւորութիւնս իմ՝
 27 ի տունն Դաւթի : Եթէ կլանիցէ ժո-
 ղովուրդս զո՜նկ զո՜ս ի տան Տեառն
 յերուսաղէմ , եւ զառնայցէ սիրտ ժո-
 ղովրդեանս այսորիկ առ ⁵Տէր , եւ առ՝
 տէր իւրեանց Ռոբովամ արքայ Յուզայ ,
 եւ սպանանիցեն զիս եւ զառնայցեն
 28 առ Ռոբովամ արքայ Յուզայ : Եւ խոր-
 հեցաւ արքայ , եւ չոգաւ արար երկուս
 կրինջս սակիս , եւ ստէ ցժողովուրդն ,
 Շատ լիցի ձեզ կլանել յերուսաղէմ .
 29 ահա աստուածք քո , Իսրայէլ , որ հա-
 նին զքեզ յերկրէն Եփրատացուց , եւ
 եզ զմին ի Բեթէլ եւ զմեւն ի Դան :
 30 Եւ եղև բանն այն ի մեզ . եւ երթայր
 ժողովուրդն առաջի երեսաց միոյն մին-
 31 չիւ ցԴան , Եւ արար տունս ի վերայ
 յարձանց . եւ արար քուրմս ⁹զմասն ինչ
 ժողովրդեանն որ ոչ էին ի տանց՝ Ղեւեայ :
 32 Եւ արար Յերթովամ տն յամեանն
 ութերորդի յաւուր հնգետասաներորդի
 նորին ամսոյ ըստ տօնին որ յերկրին
 Յուզայ , եւ ¹⁰ել ի սեղանն զոր՝ արար
 ի Բեթէլ զո՜նկ երնջոյն զոր արար եւ
 կացոյց ի Բեթէլ քուրմս բարձանցն
 33 զոր արար . Եւ ¹¹ել ի սեղանն զոր ա-
 րար ի Բեթէլ , որ որ հնգետասան էր
 ամսոյն ութերորդի ¹²ի տօնին զոր ստեղծ
 ի սրտէ իւրմէ , եւ արար տնս որդւոցն
 Իսրայելի , եւ ել ի սեղանն ¹³զո՜նկ :

¹ Կա՛մ , կարճօք ² Եբբ . Յերթովամ եւ ամենայն
 ժողովուրդն առ ³ Եբբ . ի վրանս ⁴ Եբբ .
 տես զտուն քո , Դաւթի ⁵ ՅԵբբ . զպիտի

⁶ Եբբ . ի Ռոբովամ , որդի ⁷ Եբբ . Աստուծոյ ⁸ Եբբ .
 թագաւորութիւնն ⁹ Եբբ . ի յետնոց ժողովուր-
 դեան որ ոչ էին յորդուոց ¹⁰ Կա՛մ , եհան զոհս ի
 սեղանն . Նոյնպէս ¹¹ Կա՛մ , եհան զոհս ¹² Եբբ .
 յամեանն ¹³ Եբբ . արկանել խունկս

ԳԼ. ԺԳ.

1 Եւ ահա այր Աստուծոյ եհաս ի Յուզայ բանիւ Տեառն ի Բեթէլ, եւ Յերուսալեմ կայր ի վերայ սեզանոյն ՚Իւրոյ 2 զսօնի ի վերայ՝ եւ կոչեաց զսեզանն թանիւ Տեառն եւ սաէ, Սեզան, սեզան, այսպէս սաէ Տէր, Ահա որդի ծնցի սանն Դաւթի՝ Յովսիա անուն նորա, եւ զոհեցէ ի վերայ քո զբաւրսն բարձանցոյ որ զսօնն ի վերայ քո, եւ սակերս 3 մարդկան այրեցեն ի վերայ քո: Եւ ես յաւուր յայնմիկ նշան եւ սաէ, Այս նշան է զոր խօսեցաւ Տէր եւ սաէ, Ահա սեզանդ պատասխայի, եւ հեզցի 4 պարարտութիւնդ որ ի վերայ գորաս: Եւ եղև իրբև յուսա արքայ Յերուսալեմ զբանն սանն Աստուծոյ բարբառելոյ ի վերայ սեզանոյն որ ի Բեթէլ, ձգեաց արքայ զձեան իւր ի սեզանոյ անտի եւ սաէ, Կայարաք զգա. եւ զօտացաւ ձեան նորա զոր ձգեաց ի նա, եւ ոչ կարաց զարձացանիկ զնա առ 5 ինքն: Եւ սեզանն պատասխաւ եւ հեզաւ Կարորասութիւնն ի սեզանոյ անտի, թա նշանին զոր ես այրն Աստուծոյ բանիւ Տեառն: Եւ սաէ արքայ Յերուսալեմ զայրն Աստուծոյ, Ազաչեա զերեսս Տեառն Աստուծոյ քո, եւ արա ալօթիս վասն իմ եւ զօրձցի ձեան իմ առ իս. Եւ ազաչեաց այրն Աստուծոյ առաջի Տեառն, եւ զարձաւ ձեանն արքայի սո նա, եւ եղև իրբև 7 զառաջինն: Եւ խօսեցաւ արքայ ընդ առնն Աստուծոյ եւ սաէ, Մուս ընդ իս ի սուն եւ ձաչեա, եւ սոց քեզ 8 պարգև: Եւ սաէ այրն Աստուծոյ զարքայ, Եթէ սոցես ինձ զիչս սան քո, ոչ մաից ընդ քեզ, եւ ոչ կիրայց հաց, եւ ոչ արբից ջուր ի տեղոսն յայնմիկ: 9 Ձի այսպէս պատուիրեաց ինձ Տէր թանիւ եւ սաէ, Մի ուտիցես հաց, եւ մի ըմպիցես ջուր, եւ մի զնայցես ընդ 10 նոյն ճանապարհ ընդ որ երթայցես՝ Եւ զնայց զճանապարհ իւր, այլ ոչ ընդ նոյն ճանապարհ ընդ որ եկն զնայց ի Բեթէլայ: 11 Եւ մարգարէ մի ծեր ընտկեալ էր ի

Բեթէլ, եւ եկին որդիք նորա եւ պատմեցին նմա զամենայն զգործան զոր աւար այրն Աստուծոյ յաւուր յայնմիկ ի Բեթէլ, եւ զբանն զոր խօսեցաւ ընդ արքայի, եւ ՚Գարձուցին զերեսս՝ հօրն 12 իւրեանց: Եւ խօսեցաւ ընդ նոսա հայրն նոցա եւ սաէ, Ընդ սր ճանապարհ գնաց. եւ ցուցին նմա որդիք նորա զճանապարհն ընդ որ գնաց այրն Աստուծոյ որ եկեալ էր ի Յուզայ: Եւ սաէ ցորդիս իւր, Կազմեցէք զէչն. եւ 14 կազմեցին նմա էչ, եւ ել ի նա. Եւ գնաց զհեա առնն Աստուծոյ, եւ եզրտ գնա նստեալ ընդ կաղնուփն, եւ սաէ ցնա, Եթէ գո՛ւ իցես այրն Աստուծոյ 15 եկեալ ի Յուզայ. եւ սաէ, Ես եմ: Եւ սաէ ցնա, Եկ ընդ իս ի տուն, եւ կիր 16 հաց: Եւ սաէ, Ոչ կարեմ գառնալ ընդ քեզ եւ ոչ գալ ընդ քեզ, եւ ոչ կիրայց հաց եւ ոչ արբից ջուր ի տեղոսն յայնմիկ: Զի այսպէս հրաման առեալ է ինձ թանիւ Տեառն եւ սոացեալ, Եթէ Մի ուտիցես անդ հաց, եւ մի ըմպիցես ջուր, եւ մի գառնայցես ընդ նոյն 18 ճանապարհ ընդ որ երթայցես: Եւ սաէ ցնա, Եւ ես մարգարէ եմ իրբև զքեզ. եւ հրեչասի Տեառն խօսեցաւ ընդ իս եւ սաէ, Դարձո գնա առ քեզ ի սուն քո, եւ կիրիցէ հաց եւ արբցէ ջուր. եւ սոեաց նմա: 19 Եւ զարձայց զնա ընդ իւր, եւ եկեր 20 հաց ի սան նորա, եւ արբ ջուր: Եւ լինէր մինչդեռ նստէին նոքա ի սեզանն, եղև թան Տեառն առ մարգարէն որ 21 զարձոյց զնա, Եւ խօսեցաւ ընդ առնն Աստուծոյ եկելոյ ի Յուզայ եւ սաէ, Այսպէս սաէ Տէր, Փոխանակ զի գառնացուցի զբանն Տեառն, եւ ոչ պահեցի զպատուէրն զոր պատուիրեաց քեզ 22 Տէր Աստուած քո, Եւ զարձար, եւ կերար հաց եւ արբից ջուր ի տեղոսն յայնմիկ զորմէ խօսեցաւ ընդ քեզ եւ սաէ, Մի ուտիցես հաց եւ մի ըմպիցես ջուր, արդ մի մացէ մարմին քո ի զերեզման հարց քոյ: 23 Եւ եղև յես ուսելոյն նորա հաց եւ ըմպելոյ ջուր, հանդերձեաց զէչ մարգարէ 24 ընդ նա. Եւ զարձաւ եւ գնաց, եւ եզրտ գնա սոեւձ ի ճանապարհին, եւ սպան գնա. եւ էր մարմին նորա ընկեցեալ ի ճանապարհին, եւ էչն կայր առ նմա, 25 Եւ պատմեցին

1 Եբբ. արկանել խունկս 2 Եբբ. արկանեն խունկս
 3 Եբբ. մեխրոզ 4 Եբբ. մեխրոզ 5 Եբբ. գառնայցես ընդ ճանապարհն ընդ որ եկեր ի Բեթէլ
 6 Եբբ.

25 եւ առեւծն կայր առ մարմնին : Եւ ահա
այք սնցաւորք անսին մեռեալ ընկե-
ցեալ ի ճանապարհին , եւ առեւծն կայր
առ ընթեր մեռելոյն . եւ մտին եւ խո-
սեցան ի քաղաքին ուր մարգարէն ծեր
26 ընակեալ էր : Իրրեւ լուաւ¹ որ գարձոյցն
զնա ի ճանապարհէն , սաէ , Այն այրն
Աստուծոյ է որ պառնացոյց զբանն Տեառն .
եւ ետ զնա Տէր սաիւծու եւ կրեկ զնա ,
եւ սպուն զնա ըստ բանին Տեառն զպր
27 խօսեցաւ ընդ նմա : Եւ խօսեցաւ ընդ
որդիան իւր եւ սաէ , Հանդերձեցէք զէջն .
28 եւ հանդերձեցին : Եւ զնաց եւ եզրա
զմարմին նորա ընկեցեալ ի ճանապարհին .
եւ էջն եւ առեւծն կայրն առ մարմնին ,
եւ ոչ եկեր առեւծն զմարմին տանն Աս-
29 տուծոյ , եւ ոչ երեկ զէջն : Եւ առ մար-
գարէն զմարմին տանն Աստուծոյ , եւ եզ
զնա ի վերայ իշոյն , եւ գարձոյց զնա եւ
եկն ի քաղաք² մարդարէնի ձերոյ՝ կո-
30 ծել եւ ի խաղել զնա . եւ³ ցածոյց զզին
նորա մարգարէն ի թագել զնա՝ ի գե-
րեզմանի իւրում . եւ կոծեցան զնա եւ
31 տանն , Վայ կզրայր : Եւ եզեւ յետ կու-
ծելոյն զնա , խօսեցաւ ընդ որդիան իւր
եւ սաէ , Եթէ մեռանիցիմ , թաղեալք
զիս յայտմ գերեզմանի ուր թաղեցաւ
այրս Աստուծոյ , առ սակերս զորա գի-
ջիք⁴ զիս , զի սպրեացին սակերք իմ ընդ
32 սակերս զորս՝ . Զի լինելով լինիցի բանն
զոր խօսեցաւ բանիւ Տեառն ի վերայ
սեզանոցն ի Բեթէլ , եւ ի վերայ տանց
բարձանց որ⁵ Սամարիտս :
33 Եւ յետ բանիցս այսոցիկ ոչ գարձաւ
Յերոբոաբամ⁶ ի չարեաց իւրոյ՝ . եւ զպր-
ձաւ եւ արար⁷ ի մասնէ ժողովրդեանն
քուրմս բարձանց . որ կամէր ընոյր զձեռս
34 իւր , եւ լինել ջուրմբարձանց : Եւ եզեւ
բանն այն ի մեզս տանն Յերոբոաբամայ ,
եւ ի սասակումն եւ յապականութիւն
յերեսաց երկրին :

ԳԼ . ԺԿ

1 Ի Ժամանակին յայտնիկ հիւանդացաւ
2 Արիա որդի Յերոբոաբամայ : Եւ սաէ Յե-
րոբոաբամ ցկին իւր , Արի եւ այրակեր-
պեաց , եւ մի զիստացին թէ գու կին
Յերոբոաբամայ իցես , եւ երթիցես ի

Սելով . ահա անդ է Աքիա մարգարէ .
նա խօսեցաւ վասն իմ թագաւորել ի
3 վերայ ժողովրդեանս այսորիկ . Եւ առ
ի ձեռքն քո⁸ տանն Աստուծոյ՝ հաց , եւ
բլիթս⁹ որդւոց նորա , եւ չամիչ՝ եւ
սառման մի մեզու , եւ երթիցես առ նա ,
եւ պատմեցէ քեզ զինչ լինելոց իցէ
4 մանկանն : Եւ արար այնպէս կինն Յե-
րոբոաբամու , եւ յարեաւ եւ զնաց ի Սե-
լով , եւ եմուտ ի սուսն Աքիայ . եւ
այրն ձերացեալ ի սեռանելոյ . եւ վատ-
եալ աչք իւր ի ձերաթմենէ իւրմէ :
5 Եւ սաէ Տէր ցլքիւ , Ահա կինն Յերո-
բոաբամայ զայ հարցանել բան ի քէն վասն
որդւոց իւրոյ , զի հիւանդ է . զայս
ինչ եւ զայս ասացես նմա . եւ¹⁰ եզեւ
ի մտանէն նորա , եւ իւքն յանձանութս
6 լինէր : Եւ եզեւ իրրեւ լուաւ Աքիա
զձայն ոտից նորա , ի մտանէն նորա
12 եւ ի բանալ՝ , սաէ , Մուտ , կինն Յերո-
բոաբամու . ընդէր իցէ այդ զի յան-
ձանութս լինիս . եւ ես եմ առաքեալ
7 առ քեզ խատութեամբ : Երթ եւ սաս
ցՅերոբոաբամ , Այսպէս սաէ Տէր Աս-
տուծամ Իսրայելի , Փոխանակ զի բարձ-
րացուցի գքեզ ի մէջոյ ժողովրդեանդ ,
եւ ետաւ զքեզ յաստնորդ ի վերայ ժողո-
8 վրդեան իմոյ Իսրայելի , Եւ պատառեցի
զիսպաւորութիւնն ի տանէն Դաւթի ,
եւ ետաւ որտ քեզ , եւ ոչ եզեր իրրեւ
զձառայ իմ Դաւթի որ սրահեաց զպա-
ստ իրանս իմ , եւ եկն զկնի իմ ամենայն
արտիւ իւրով ամենկ ուղղութիւնս առա-
9 ջի իմ , եւ չարացար ամենկ քան զամե-
նեսին որ եզեն յառաջ քան զքեզ , եւ
զնացեր եւ արարեր քեզ աստուածս
օտարութիս եւ ձուրձոյս բարկացուցա-
նել զիս , եւ զիս ընկեցեր յետս ի մար-
10 մնոյ քումմէ , Վասն այսորիկ ես ամից
չարիս ի վերայ տանն Յերոբոաբամայ ,
եւ սատակեցից զՅերոբոաբամայ որ մի-
զիցէ զորժով , կծկեալ եւ լքեալ ի մէջ
Իսրայելի . եւ հուաքեցից զհեա տանն
Յերոբոաբամայ , որպէս հուաքիցի սպր .
11 մինչեւ սպառել զնա : Զգիսիւրենս Յե-
րոբոաբամու ի քաղաքի կերիցեն չուսք ,
եւ զմեռեալս յանդի կերիցեն թաչուսք
12 երկնից . զի Տէր խօսեցաւ : Եւ զու ա-
րի զնա ի սուսն քո , եւ ի մտանել ոտից
13 քոց ի քաղաքն մեացի մանուկն . Եւ

1 Եբրայեցի յաւելու , մարգարէն 2 Եբր . Եոր .
գարէն ձեր 3 Եբր . եզ զզին նորա 4 Եբր .
զոսկերս իմ 5 Եբր . ի քաղաքս Սամարիայ 6 Եբր .
ի ճանապարհէ իւրմէ չարէ 7 Եբր . ի յետնոց

8 Եբր . տանն 9 Եբր . պլակի 10 Եբր . երկնի
11 Եբր . իցէ 12 Եբր . ընդ դուռնն

կոճեացին զնա ամենայն Իսրայէլ, և թաղեցին զնա . զի նա միայն Յերուսաղեմաց մտցէ ի գերեզման . զի դատ ի նմա բան բարի վասն Տեառն Աստուծոյ Իսրայելի ի տան Յերորովամայ :

14 Եւ յարեացէ Տէր իւր թագաւոր ի վերայ Իսրայելի , որ հարցէ պտուն Յերորովամայ յաւուր յայմիկ . եւ արդ

15 զինչ եւս : Հարցէ Տէր զԻսրայէլ որպէս չարմի եղէզն ի ջուր , եւ խեցցէ Տէր զԻսրայէլ յերկրէս բարութեան յայսմանէ զոր ետ հարց նոցա , եւ հոսեացէ զնոսա յայնկոյս Գեառն , փոխանակ զի պարին իւրեանց անտառս

16 բարկացուցանել զՏէր . Եւ մասնեցէ Տէր զԻսրայէլ փասն մեղացն Յերորովամու , որ մեղաւ եւ մեղաց զԻսրայէլ :

17 Եւ յարեաւ կինն Յերորովամու , եւ զնաց ՚ի Սարիբա . եւ եղև իրբեւ եւ մուտ առաջի զբան տանն , մեսաւ մա :

18 Նուկն : Եւ կոճեցան զնա , եւ թաղեցին ամենայն Իսրայէլ ըստ բանին Տեառն զոր խօսեցաւ ի ձեռն ծառայի իւրոյ Աքիայ մարդարէի :

19 Եւ մնացորդ բանից Յերորովամայ , թէ որչափ պատերազմեցաւ , եւ որչափ թաղաւորեաց , ահա գրեալ են ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայելի :

20 Եւ աւուրց զորս թագաւորեաց Յերորովամ , ամբ քսան եւ երկու . եւ ննջեաց ընդ հարս իւր , եւ թագաւորեաց Նարասորցի նորա ընդ նորա :

21 Եւ Ռորովամ որդի Սոգոմոնի թագաւորեաց ի վերայ Յուդայ . որդի քառասուն եւ մի ամաց Ռորովամ ի թագաւորել ի րում , եւ եւթնուտասն ամ թագաւորեաց յերուսաղէմ քաղաքի զոր ընտրեաց Տէր զնել զանուն իւր անդ յամենայն ցեղիցն Իսրայելի . եւ անուն մօր նորա Նասամ Ամնացի :

22 Եւ արար Ռորովամ չար առաջի Տեառն , եւ նախանձեցաւ ընդ ամենայն զոր արարին հարք նորա , եւ ըստ մեղաց

23 նոցա՝ զոր մեղան : Եւ յինեցին նորա իւրեանց բարձունս եւ անտառս ի վերայ ամենայն բլրոյ բարձու , եւ ի ներ

24 քոյ ամենայն վարսաւոր ծառոց : Եւ նուէրք եղեն՝ յերկրին , եւ արարին

յամենայն պարշտութեանց աղգացն զորս երարձ Տէր յերեսաց որդւոցն Իսրայելի :

25 Եւ եղև ի հինգերորդ տարուոյն յորում թագաւորեաց Ռորովամ՝ եւ Սաւսակիմ արքայ Եգիպտոսի ի վերայ Երուսաղեմի , եւ առ զամենայն զանձս՝ տանն Տեառն եւ զզանձս տանն արքայի , եւ զնիզական ոսկիս զոր ան Դաւիթ ի ձեռաց Ագրասաղարայ արքայի Սուրայ , եւ տարաւ յերուսաղէմ զամենայն զոր առ . եւ առ զզէնան՝ ոսկիս զոր արար

27 Սոգոմոն : Եւ արար արքայ Ռորովամ փոխանակ նոցա զէնս սղնձիս . եւ զիմեցին ի վերայ նոցա զորագլուխք՝ սուրհանդակացն որ պահէին զգրուսն

28 տանն արքայի : Եւ ինէր յորժամ մտանէր արքայ ի սունն Տեառն , բանալին ¹⁰ զայն սուրհանդակքն եւ ¹¹ յեղուցանէին զնոսա ի թեւէ՝ սուրհանդակացն :

29 Եւ մնացորդ բանիցն Ռորովամայ եւ ամենայն ինչ զոր արար , ոչ աւանիկ գրեալ են ի գիրս բանից աւուրց

30 թագաւորացն Յուդայ , եւ պատերազմէր ի մէջ Ռորովամայ եւ ի մէջ Յերորովամայ զամենայն աւուրս : Եւ ննջեաց Ռորովամ ընդ հարս իւր եւ թագեցաւ ընդ հարս իւր ի քաղաքի Դաւիթի . եւ անուն մօր նորա Նասամ Ամնացի . եւ թագաւորեաց Աքիա որդի նորա ընդ նորա

ԳԼ ՃԵ

1 Եւ յամին ութնուտասներորդի թագաւորութեանն Յերորովամայ արդւոյ Նասատայ թագաւորէ Աքիա ¹² որդի Ռորովամայ՝ ի վերայ Յուդայ : Եւ երեք ամ թագաւորեաց ի վերայ Երուսաղեմի . եւ անուն մօր նորա Մասքա

3 զուտոր Աքիսոզոմայ : Եւ զնաց ի մեղս հօր իւրոյ զոր արար ¹³ առաջի Տեառն Աստուծոյ իւրոյ , եւ ոչ էր տիրա նորա կատարեալ ընդ Տեառն Աստուծոյ իւրոյ իրբեւ զսիրան Դաւիթի հօր իւրոյ :

4 Զի ¹⁴ ձեռն Դաւիթի ետ նմա Տէր Աստուած ¹⁵ մնացորդ յերուսաղէմ , զի կացուցէ զորդի նորա յետ նորա , եւ հաստատեցէ զԵրուսաղէմ . որպէս արար Դաւիթ ուղղութիւնս առաջի Տեառն , եւ ոչ

⁶ Եբբ. զզանձս ⁷ Եբբ. առ զամենայն , եւ առ զամենայն ասպարսն ⁸ Եբբ. սապարս ⁹ Եբբ. յանձն արար զնոսա ի ձեռս զորագլխաց ¹⁰ Եբբ. զնոսա ¹¹ Եբբ. բերէին զնոսա այսրէն ի սենեակ ¹² Եբբ. Դաւիթ ¹³ Եբբ. յառաջ քան զնա ¹⁴ Եբբ. վասն ¹⁵ Եբբ. ճրագ

¹ Եբբ. եւ եկն ի Թերաս ² Եբբ. Յուդայ ³ Եբբ. նախանձեցուցին զնա ամենայնիւն առաւել քան զոր արարին հարք նոցա մեղօք իւրեանց ⁴ Եբբ. արձանս եւ անտառս ⁵ Եբբ. իգացեալ եւս գոյր

խոտորեցաւ յամենայնէ զոր պատուիրեաց նմա զամենայն աւուրս կենաց իւրոյ, բաց ի բանին Ուրիայ Գեոսացու: Եւ պատերազմ էր ի մէջ Արիայ եւ ի մէջ Յերոբոզամայ զամենայն աւուրս կենաց նորա:

7 Եւ մնացորդ բանից Արիայ եւ ամենայն ինչ զոր արար, ո՞չ աւանիկ զրեալ են ի զիրս բանից աւուրց թագաւորացն Յուգայ: Եւ պատերազմ էր ի մէջ Արիայ եւ ի մէջ Յերոբոզամայ:

8 Եւ ննջեաց Արիու ընդ հարս իւր, եւ թաղեցաւ ի քաղաքի Դաւթի: Եւ թագաւորէ Ասա որդի նորս ընդ նորա:

9 Եւ յամի քամներորդի Յերոբոզամայ արքայի Իսրայելի թագաւորէ Ասա ի 10 վերայ Յուգայ: Եւ քառասուն եւ միսմ թագաւորեաց յԻսրայելմ: Եւ աւուրն մօր նորս Մաաքա զաւար Այիւ:

11 սոգամայ, Եւ արար Ասա ուղղութիւն առաջի Տեան իրրեւ զԴաւթիմ զհայր:

12 Իւր եւ երարձ՝ զնուէրս յերկրն, եւ ջնջեաց զամենայն իտարպիտութիւնսն:

13 զոր արարին հարց նորա: Եւ զՄաաքա զմայր իւր ի րաց արար ի տիկնութիւնէ. քանզի արար զազոլս յանտառին իւրում: Եւ կոտորեաց Ասա զամրոցս նորա, եւ այրեաց հրով ի հեղեղատին:

14 Կեցրանի Ասիայս զբարձունն ոչ երարձ. րոյց սիրս նորս կառաւելալ էր ընդ:

15 Տեանն զամենայն աւուրս իւր, եւ կրեր զպիւնսն հօր իւրոյ եւ զսիւնսն զիւր եմայժ՝ ի տուն Տեանն, արծաթ եւ ոսկի եւ անօթս:

16 Եւ պատերազմ էր ի մէջ Ասայի եւ ի մէջ Խաասայ արքայի Իսրայելի զամենայն Իսրայելի ի վերայ Յուգայ, եւ շինեաց զԽամա, զի մի լիցի ելանել եւ:

18 մտանել Ասայի արքայի Յուգայ: Եւ սո Ասա զամենայն արծաթն եւ զոսկի գտեալ ի զանձս տանն Տեանն եւ ի զանձս տան թագաւորին, եւ ես զայն ի ձեռս ծառայից իւրոց, եւ առաքեաց զնաս Ասա արքայ սո Դորգին Ագերայ որդւոյ Արենրայիմայ որդւոյ Ագայիլի՝ արքայի Ասորոց բնակելոյ ի Դամասկոս՝

19 եւ ասէ, ՝ Ուխտեա ուխտ՝ ընդ իս եւ ընդ քեզ, եւ ի մէջ հօր խմոյ եւ ի մէջ հօր քո. ահաւագիկ առաքեցի քեզ պատարագ արծաթ եւ ոսկի, եւ լոյզ զուխտ քո որ ընդ Բաասայ արքայի Իսրայելի:

20 Եւ գնացէ յինէն, եւ լուա Գորգի Ագերայ՝ արքայի Ասայի, եւ առաքեաց զգլխանսն իւր՝ ի քաղաքսն Իսրայելի. եւ եհար զԱյլին եւ զԻսն եւ զԱրէլ տանն Մաաքայ՝, եւ զամենայն զՔենեւրէթ մինչեւ յամենայն երկիրն Եֆրայմա:

21 զխմայ, Եւ եղև իրրեւ լուա Բաասա, զարքայեաց ի շինելոյ զԽամա, եւ զար:

22 ձաւ ի Թերաս, եւ արքայ Ասա պատուիրեաց ամենայն Յուգայ ՝ որ էին յենակիմ՝, զի առցեն զքարինսն Թամայ եւ զփայտ նորս, զոր շինեաց Բաասա. եւ շինեաց նորք արքայ Ասա զամենայն բլուր Բենիամինի եւ զգիտանոցն:

23 Եւ մնացորդ բանիցն Ասայի եւ ամենայն զորտ թիւն նորս, եւ ամենայն ինչ զոր արար, եւ զազաքսն զոր՝ շինեաց, ո՞չ աւանիկ զրեալ են ի զիրս բանից աւուրց թագաւորացն Յուգայ. բաց ի ժամանակի ձերութեան իւրոյ ցաւե:

24 զին ասք իւր: Եւ ննջեաց Ասա ընդ հարս իւր, եւ թաղեցաւ ընդ հարս իւր ի քաղաքին Դաւթի. եւ թագաւորէ Յախափաս որդի նորս ընդ նորա:

25 Եւ յարասն որդի Յերոբոզամայ թագաւորէ Իսրայելի, յամին երկրորդի Ասայի արքայի Յուգայ. եւ թագաւորեաց ի վերայ Իսրայելի ամս երկուս:

26 Եւ արար չար առաջի Տեանն, եւ գնաց զճանապարհ հօր իւրոյ եւ ի մեղս իւր:

27 որովք յանդոց զԻսրայել, եւ զառաւ գնովաւ Բաասա որդի Աքիսայ ի վերայ ամնն՝ Իսաքարու, եւ եհար գնս Բաասա ի Դարաթմոնն սպաղգեաց. եւ յարասա եւ ամենայն Իսրայել նստէին:

28 զԴարաթմոնաւ. Եւ սպան զնս Բաասա յամին երրորդի Ասայի արքայի Յուգայ,

29 եւ թագաւորեաց ընդ նորա: Եւ եղև իրրեւ թագաւորեաց, եհար զամենայն տունն Յերոբոզամաւ. եւ ոչ թողոյր զամենայն շնչաւոր ամնն Յերոբոզամայ, մինչեւ սասակել զնս ըստ բանին:

1 Եբբ. Ուրոբոզամայ 2 Տեւ. Գլ. Ժ. 24. 3 Եբբ. Կուսս 4 Եբբ. պատկեր Մաաքոթիմայ 5 Եբբ. զպատկերն 6 Եբբ. զնուէրս հօր իւրոյ եւ զնուէրս իւր 7 Եբբ. Բենուգադ որդի Տամբրեմնի որդւոյ Եգիտնի

8 Եբբ. Աւխտ է 9 Եբբ. Բենուգադ 10 Եբբ. զեղխանս զորուն իւրոյ 11 Եբբ. զԱրիւ Բենիամուարայ 12 Եբբ. անխար 13 Եբբ. զԿարաս Բենիամինի եւ զՄաափա 14 Եբբ. քաղաքքն զորս 15 Եբբ. Սոդար 16 Եբբ. գաւ զործեաց նմա Բաասա որդի Աքիայ ի տանէն

Տեառն զոր խօսեցաւ ի ձեռն ծառայի
 30 խրոյ Աքիայ Ալիոյ՛վնացոյ, Վասն ամե-
 նայն մեզացն՝ Յերթովամայ որ մե-
 զաւ եւ յանցոյց զԻսրայէլ ի զայցայու-
 ցանել խրում, որովք զայրացոյց զՏէր
 Ատուած Իսրայելի :
 31 Եւ մնացորդք բանից ¹Նարատայ եւ
 ամենայն ինչ զոր արար, ո՛չ աւանիկ
 զրեալ են ի զիրս բանից աւուրց թաղա-
 32 ւորայն Իսրայելի : Եւ էր պատերազմ ի
 մէջ Ասայի եւ ի մէջ ²Նարատայ ար-
 քայի Իսրայելի զամենայն աւուրս նոցա :
 33 Եւ յամին երրորդի Ասայի արքայի
 Յուզայ թագաւորէ Բասաս որդի Աքիայ
 ի վերայ ամենայն Իսրայելի ի Թերսա
 34 ամս քսան եւ չորս : Եւ արար չար ա-
 սալի Տեառն, եւ գնաց զձանադարձ
 Յերթովամայ ³որդւոյ Նարատայ՝, եւ ի
 մեզս նորա որպէս յանցոյց զԻսրայէլ :

Գ Լ . ԺԶ

1 Եւ եղև բան Տեառն ի ձեռն Յէուայ
 որդւոյ Անանիայի առ Բասաս եւ ասէ,
 2 Փոխանակ զի բարձրացուցի զքեզ յերկրէ,
 եւ ետաւ զքեզ ասալնորդ ի վերայ ժողո-
 վրրդեան իմոյ Իսրայելի, եւ զնացեր զձա-
 նապարն Յերթովամաւ, եւ յանցուցեր
 զժողովուրդ իմ զԻսրայէլ, յարկացու-
 3 ցանել զիս ⁴անտուովք իւրեանց, Ահա
 ես ⁵յարուցից զհետ Բասասայ եւ զհետ
 ասն նորա՞, եւ սաց զտուն քո իրրեւ
 զտունն Յերթովամայ որդւոյ Նարա-
 4 տայ : Որ մեռանիցի Բասասայ ի քաղաքի՝
 չունք կերիցեն, եւ որ մեռանիցի նորա ի
 գաշտի՝ կերիցեն զնա ինչունք երկնից :
 5 Եւ մնացորդք բանից Բասասայ, եւ
 ամենայն ինչ զոր արար եւ զօրութիւնք
 նորա, ո՛չ աւանիկ զրեալ են ի զիրս
 բանից աւուրց թագաւորայն Իսրայելի :
 6 Եւ ննջեաց Բասաս ընդ հարս իւր, եւ
 թագեցաւ ի Թերսա, եւ թագաւորէ
 Եղա որդի նորա ընդ նորա, ³յամիքսա-
 7 ներորդի Ասայի արքայի : Եւ ի ձեռն
 Յէուայ որդւոյ Անանիայ մարգարէի խօ-
 սեցաւ Տէր ի վերայ Բասասայ եւ ի վե-
 րայ ասն նորա զամենայն չարիսն զոր
 արար ստալի Տեառն ի բարկացուցանել
 զնա զործովք ձեռաց իւրոց . առ ի լի-

նելոյ իրրեւ զտունն Յերթովամայ, եւ
 վասն հարկանելոյ զնա :
 8 Յամին քսաներորդի եւ վեցերորդի
⁶արքայի Յուզայ, թագաւորեաց Եղա
 որդի Բասասայ ի վերայ Իսրայելի ի Թեր-
 9 սա ամս երկուս : Եւ ⁷ժողովեաց ի վե-
 րայ նորա՞ Չամբրի ծառայ իւր՝ իշխան
 կիսոյ սարառակնաց . եւ նա բմպէր եւ
 արբեալ էր ի տանն Արտայ Նանդերձա-
 10 սիտի ի Թերսա . Եւ եմուա Չամբրի, եւ
 եհար զնա եւ սարն զնա, յամի քսա-
 ներորդի եւ թներորդի Ասայի արքայի
 Յուզայ, եւ թաղաւորեաց ընդ նորա :
 11 Եւ եղև ի թագաւորել նորա եւ նստել
 յաթոսն իւրում, եհար զամենայն տունն
 Բասասայ, եւ ոչ կթող նմա որ միգիցէ
 զորմով, եւ զմերձաւորս նորա եւ զտու-
 12 րեկամս նորա : Եւ ջնջեաց Չամբրի զու-
 մենայն տունն Բասասայ՝ ըստ բանին
 Տեառն զոր խօսեցաւ ի վերայ տանն
 Բասասայ ի ձեռն Յէուայ մարգարէի :
 13 Վասն ամենայն մեզացն Բասասայ՝ եւ
 Եղայ որդւոյ նորա որ ⁸մեզաւ, եւ որ-
 պէս յանցոյց՝ զԻսրայէլ, բարկացուցա-
 նել զՏէր Ատուած Իսրայելի սնտուովք
 իւրեանց :
 14 Եւ մնացորդ բանիցն Եղայ, եւ ամե-
 նայն ինչ զոր արար, ո՛չ աւանիկ զրեալ
 են ի զիրս բանից աւուրց թագաւորայն
 Իսրայելի :
 15 Յամիքսաներորդի եւ թներորդի Ասայի
 արքայի Յուզայ, թագաւորեաց Չամբրի
 աւուրս եւ թն ի Թերսա . եւ բանակին
 Իսրայելի ի Գարաթոնի սլազզեաց .
 16 Եւ լուաւ ժողովուրդն ի բանակի անց՝
 ասնն, Գոււմարեցաւ Չամբրի եւ եհար
 զարքայն . եւ ⁹թագաւորեցուցին Իսրա-
 յելի՞ զՍմրի զօրավար զօրուն ի վերայ
 Իսրայելի յաւուր յայնմիկ ի բանակին :
 17 Եւ ել Ամրի եւ ամենայն Իսրայէլ ընդ
 նմա ի Գարաթոնէ, եւ նստաւ զԹեր-
 18 սա : Եւ եղև իրրեւ ետես Չամբրի
 թէ յառնուլ եղև քաղաքն, եմուա ի
 սենեակ մի տանն արքայի, եւ այրեաց
 ի վերայ ¹⁰նորա զտունն արքայի հրով :
 19 Եւ մեաւա վասն մեզաց խրոց զոր ա-
 ըար՝ ասնել չար ստալի Տեառն, եւ
 զնոց զձանադարձս Յերթովամաւ ³որդ-
 ւոյ Նարատայ՝, եւ ի մեզս նորա զոր ա-

¹Եբբ. նազարայ ²Եբբ. Բասասայ ³Յեբբ. Գ-
 Կ-Է ⁴Եբբ. մեզօք ⁵Այ-Կ-Կ-Ն ջնջեցից ի սպառ
 գնատս եւ զտունն նորա

⁶Եբբ. Ասայի արքայի ⁷Եբբ. դուա գործեաց նմա
⁸Եբբ. մեզան, եւ որպէս յանցուցին ⁹Եբբ. թա-
 գաւորեցոյց ամենայն Իսրայէլ ¹⁰Եբբ. իւր

բար որովք յանցոց զԻսրայէլ :

20 Եւ մնացորդք բանից Զամբրեայ, եւ խումբք նորա զոր խմբեցաւ, ո՛չ աւանիկ գրեալ են ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայելի :

21 Յախժամ բաժանեցաւ ժողովուրդն Իսրայելի. կէս ժողովրդեանն լինէր զկնի թամնեայ որդւոյ Գովաթայ թագաւորեցանել զնա, եւ կէս ժողովրդեանն ժողովուրդն որ զկնի Ամբեայ, եւ պարտեցաւ ժողովուրդն որ զհետ թամնեայ որդւոյ Գովաթայ. եւ մնաւ թամնի, եւ Յալբամ կոչուար նորա ի ժամանակի յախժիկ. եւ թագաւորեաց Ամրի յես

23 թամնեայ՝ Յամին երեսներորդի եւ առաջնորդի Առայի արքայի Յուգայ, թագաւորէ Ամրի ի վերայ Իսրայելի ամս երկսաստան. ի Թերա թագաւորեաց

24 ամս վեց : Եւ ստացաւ Ամրի զլեառնն Սեմերան ի Սամերայ շատոռնէ լերինն՝ երկուց տողանդոց արծաթայ. եւ շինեաց զլեառնն, եւ կոչեաց զանունն յերինն զոր շինեաց՝ յանուն Սամերեայ ահաւն լերինն՝ Սեմերան :

25 Եւ արար Ամրի չար առաջի Տեառն, եւ չարացաւ քան զամենայն եղևալս

26 յառաջ քան զնա. Եւ զնաց զամենայն ճանապարհն Յերորովանայ որդւոյ Նուբատայ, եւ ի մեղս նորա որովք յանցոց զԻսրայէլ ի բարկացուցանել զՏէր Աստուած Իսրայելի սնտուովք ի բնանդ :

27 Եւ մնացորդք բանից Ամբեայ եւ ամենայն ինչ զոր արար, եւ զօրութիւն նորա զոր արար, ո՛չ աւանիկ գրեալ են ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայելի : Եւ ննջեաց Ամրի ընդ նորս իւր, եւ թագեցաւ ի Սամարիա. եւ թագաւորեաց Աքաաբ որդի նորա ընդ նորա :

29 Եւ Աքաաբ որդի Ամբեայ թագաւորեաց ի վերայ Իսրայելի. յամին երեսներորդի եւ ութերորդի Առայի արքայի Յուգայ թագաւորեաց Աքաաբ որդի Ամբեայ ի վերայ Իսրայելի ի Սամարիա

30 ամս քսան եւ երկուս : Եւ արար Աքաաբ որդի Ամբեայ չար առաջի Տեառն քան զամենեստան որ յառաջ քան զնա էին :

31 Եւ ոչ ինչ էր նմա ընդհատ զնալ ըստ մեղոյ Յերորովանայ որդւոյ Նաբատայ. եւ ան կին զՅեզդարէլ զուսար Յովբա-

ղայ արքայի Արզնացուց, եւ գնաց եւ ծառայեաց Բահաղու եւ երկիր եպագ

32 նմա : Եւ կանգնեաց սեզան Բահաղու ի սան գարշեկեաց նորա զոր շինեաց ի

33 Սամարիա : Եւ արար Աքաաբ անտառ. եւ յաւել Աքաաբ առնել առ ի բարկացուցանել զՏէր Աստուած Իսրայելի քան զամենայն թագաւորս Իսրայելի եղևալս

34 յառաջ քան զնա : Յուսուբս նորա շինեաց Արիէլ Եեթելայի զԵրիբով, Աբիրոնաւ անգրանկաւ իւրով արկ նմա հումունա, եւ Սեղուբաւ կրտսերաւ իւրով կանգնեաց զգրունս նորա, ըստ բանին Տեառն զոր խօսեցաւ ի ձեռն Յեսուայ որդւոյ Նուեայ :

ԳԼ . ԺԷ

1 Եւ ասէ Եզրա մարգարէ ի Թեգրեայ Գաղապու զԱքաաբ, Կենդանի է Տէր Աստուած զօրութեանցն, Աստուած Իսրայելի, որոյ կացի առաջի նորա, եթէ եզրի յամս յայտակի ցօղ կամ անձրեւ, լացց եթէ բանիւ բերանոյ խոյ :

2 Եւ եղև բան Տեառն առ Եզրա

3 ասէ, Գնա աստի ընդ արևելս եւ թագրիցս ի հեղեղապին Քուաթու, որ է յամեղիման Յորդանանաւ. Եւ եզրից բնակ բեզ ջուր ի հեղեղաաէն, եւ հրաման տայ պուտուոց կերակրել զբեզ

5 անդ : Եւ զնոց եւ պարս եզրիս ըստ բանին Տեառն, եւ չոգաւ եւ նստաւ ի հեղեղաապին Քուաթայ յամեղիման Յորդանանաւ : Եւ սպասուք բերէին նմա հաց եւ միս ընդ տաւօտս, եւ հաց եւ միս ընդ երեկոյս. եւ ի հեղեղաաէն բնակէր ջուր : Եւ եղև յես աւուրց եւ ցամաքեցաւ հեղեղաան, զի ոչ եղև անձրեւ ի վերայ երկրի :

8 Եւ եղև բան Տեառն առ Եզրա եւ

9 ասէ, Արի եւ զնա ի Սարեփթա Սիրանացուց, եւ նստցիս անդ. եւ ահա պարտերեայ է իմ անդ կնոջ միոյ այլուոյ կերակրել զբեզ : Եւ յարեաւ զնաց ի Սարեփթա ի դուռն քաղաքին, եւ ահա անդ կին մի քաղէր փայտ. եւ ազդակեաց զկնի նորա Եզրա եւ ասէ զնա, Առ դու ինձ սակաւ մի ջուր ա-

11 մանով եւ արից : Եւ զնաց բերել. եւ ազդակեաց զհետ նորա Եզրա եւ ասէ, Ապեա ինձ պատառ մի հաց ի ձեռին

12 քում : Եւ ասէ կինն, Կենդանի է Տէր Աստուած քո, եթէ դուցէ իմ նկանակ.

1 Եզր. եւ թագաւորեաց Ամրի 2 Եզր. զ-ի-ո-ի-
 3 Եզր. քաղաքին

ԳԼ . ԺԸ

բայց կթէ որչափ բաւար մի ալեւր
 ի սպիրտի, եւ սակաւ մի եւզ ի կամ-
 փասկի. եւ աճա քազեմ՝ կրկուսս եր-
 կուս, եւ մտից եւ արարից զայն ինձ եւ
 13 մանկանց իմոց՝. եւ կերկրութք զայն եւ
 14 մեղութք. եւ սակ զնա եղիա, Գաջա-
 լերեաց, մուս եւ արա բաւ բանի բում.
 սպ արապես նախ ինձ անախ նկանակ
 մի փոքրիկ եւ բերցես ինձ, եւ ապա
 15 արատցես քեզ եւ մանկանց քոց՝. Զի
 պատէս սակ Տէր Աստուած Բարայկի,
 Ասփոր ալերն մի պահասեսցէ եւ կամ-
 փասկ իւզոյն մի նուազեսցէ մինչեւ յօր
 սալոյ Տեանն անձրեւ ի վերայ երեսոց
 16 երկրի: Եւ գնաց կինն, եւ արար բաւ
 բանին Եղիայի, եւ կերաւ սա եւ նա եւ
 17 3 որդիք նորա. Եւ յօրէ յայնմանէ սա-
 փոր՝ ալերն ոչ պահասեաց, եւ կամ-
 փասկ իւզոյն ոչ նուազեսցաւ բանին
 Տեանն զոր խօսեցաւ ի ձեռն Եղիայի:
 18 Եւ եղև լիտ բանիցս պտոցիկ Նիւան-
 ցացաւ որդի տիրոջ սանն, եւ էր ախա
 նորա սատարի յոյժ, մինչ ոչ մնաց ի
 19 նմա շունչ: Եւ սակ զեղիա, Զի՞ կայ
 իմ եւ քո, այրք Աստուծոյ, մտեր առ
 իս յիշատակի զանօրէնութիւնս իմ, եւ
 20 սպանանե՞լ զորդի իմ: Եւ սակ Եղիա
 ցկինն, Տուր զիս զորդիդ քո. եւ առ
 զնա ի գրկաց նորա, եւ եհան զնա ի
 վերնատունն յորում ինքն նստէր, եւ
 21 արար զնա ի կողմն ի վերայ մահճաց
 իւրոց. Եւ սպազակեաց Նեղիա եւ սակ,
 22 Ո՞չ ինձ Տէր, որ վիայդ ես այրեոյն՝ առ
 որում ես բնակեմ, զու չարչարեցիր
 23 զորդի նորա մեռուցանել: Եւ 5 փչեաց
 երիցս ի մանուկն, եւ կարգաց զՏէր
 եւ սակ, Տէր Աստուած իմ, զարձցի
 24 շունչ մանկանս ի սա եւ 6 եղև այնպէս.
 եւ ազազակեաց, եւ՝ լուսւ Տէր ձայնի
 Եղիայի, եւ զարձաւ շունչ մանկանն ի
 25 փոր նորա եւ կենդանացաւ: Եւ սա Ե-
 զիա զմանուկն եւ իջոյց զնա ի վերնա-
 սանէ անտի ի սունն եւ ես ցմայր իւր.
 եւ սակ Եղիա, Տես զի կենդանի է որդիդ
 26 քո: Եւ սակ կինն ցեղիա, Ահա արդ զի-
 տայի եթէ այր Աստուծոյ ես գու, եւ
 բան Տեանն ճշմարիտ է ի բերան քո:

1 Եւ եղև յիտ աւուրց բազմաց եւ բան
 Տեանն եղև առ Եղիա յամեն կրորդի,
 եւ սակ, Ելիթ եւ երեւեաց Աքաաբու,
 եւ սաց անձրեւ ի վերայ երեսոց երկ-
 2 րի: Եւ չոպա Եղիա երեւել Աքաաբու.
 3 Եւ սակ սատարի էր ի Սամարիա: Եւ
 կոչեաց Աքաաբ զԱրգիւս զհնազարա-
 պիտ իւր. եւ Արգիւս երկիւզած էր ի
 4 Տեաննէ յոյժ. Եւ եղև ի կտորել Յե-
 զարեւայ զմարգարէսն Տեանն, սա Աք-
 զիւս հարեւր այր մարգարէ, եւ թա-
 քոյց զնոսա յառն յառն յայրի, եւ
 5 կերակրեաց զնոսա հացիս եւ յորի: Եւ
 սակ արքայ ցԱրգիւս, Եկ չրջեսցուք
 ընդ երկիրդ ես ամենայն ապրերք ջրոց
 եւ առ հեղեղատօք, թերեւս գտցուք
 խոտ եւ սպրեցուցուք զձիս եւ զձո-
 6 րիս, եւ ոչ սատակեսցին յանասնոց:
 7 Եւ յաժանեաց իւրեանց զճանապարհն
 չրջել. Աքաաբ զնաց ընդ մի ճանա-
 պարճ միայն, եւ Արգիւս զնաց ընդ այլ
 ճանապարհ միայն:
 8 Եւ էր Արգիւս ի ճանապարհին, եւ
 եկն կ յեղիա ընդ առաջ նորա 6 միայն,
 եւ աճապարեաց Արգիւս անկաւ ի վե-
 9 րայ երեսոց իւրոց եւ սակ, Եթէ գո՞ւ
 10 իցես տէր իմ Եղիա: Եւ սակ Եղիա,
 11 Ես եմ. երթ սաս ցտէր քո եթէ Ահա-
 12 ւասիկ եղիա: Եւ սակ Արգիւս, Զի՞ ոչ
 մեզայ, զի մասնես զժառայ քո ի ձեռս
 13 Աքաաբու սարսնանի զիս: Կենդանի է
 Տէր Աստուած քո, եթէ իցէ սոզ կամ
 թաղաւորութիւն ուր ոչ աւաքեաց աէր
 իմ ինդրի զքեզ. եւ սակն թէ Չէ ու-
 14 րեք. եւ 8 այրեաց զթաղաւորութիւնն
 եւ զաշխարհ նորա՝ զի ոչ եղիտ զքեզ:
 15 Եւ արդ զու ստես, թէ Երթ եւ պատեա
 16 տեանս քում թէ Ահաւասիկ Եղիա. Եւ
 եղիցի եթէ ես երթայցեմ ի քէն, եւ
 17 Հոյի Տեանն առնուցու զքեզ յերկիր
 զոր ոչ գիտցեմ, եւ մասնիցեմ պատ-
 մել Աքաաբու, եւ ոչ գտանիցէ զքեզ,
 եւ սպանանիցէ զիս. եւ ծառայ քո եր-
 կիւզած է ի Տեաննէ ի մանկութիւնէ
 18 ի բով: Եւ ոչ պատմեցաւ տեանն իմում
 զոր ինչ արարի ես ի կտորել Յեղարե-
 վայ զմարգարէսն Տեանն. թաքուցի ի
 մարգարէիցն Տեանն հարեւր այր յառն

1) Եբ. մանկան իմում 2) Եբ. մանկան քում
 3) Եբ. սունն նորա ուսուրս: (16) Ասփոր 4) Եբ.
 առ Տէր եւ սակ, Տէր Աստուած իմ, զայրի՞ն եւս
 5) Եբ. տարածեաց զանձն երիցս ի վերայ մանկանն
 6) Եբ. որդիք

7) Եբ. բաժանեցին իւրեանց զերկիրն չրջել ի նմա
 8) Եբ. երգ մեցոյց զթաղաւորութիւնն եւ զազգն

յիտուն այր յայրի, եւ կերակրեցի զնո-
 14 սա հացիւ եւ ջրով: Եւ արդ զու ասես
 ցիս, երթ եւ ասա տեսուն քում թէ
 Անաւատիկ եղիս, եւ սպանանիցէ զիս:
 15 Եւ ասէ եղիս, Կեսկանի է Տէր զօրու-
 թեանց, որոյ կացի առաջի նորա, զի
 այսօր երեւեցայց նմա:
 16 Եւ զնաց Արգիւս ընդ առաջ Աքաա-
 բուս եւ սլաւամեաց նմա. եւ ընթացաւ
 Աքաաբ եւ զնաց ընդ առաջ եղիայի:
 17 Եւ եղև իբրև ետես Աքաաբ դեղիս,
 ասէ Աքաաբ ցեղիս, եթէ Դո՞ւ իցես
 18 խանդարէն Իսրայելի: Եւ ասէ եղիս,
 Ես ոչ խանդարեմ դիտրայէլ, այլ զու
 եւ տուն հօր քո, ի թողուլ ձեր ¹զՏէր
 Աստուած ձեր՝ եւ երթուլ զհետ Բա-
 19 հաղիմայցն: Եւ արդ առաքեա ժողովեա
 առ իս զամենայն Իսրայել ի լեառն Կար-
 մեղոս, եւ զմարդարէսն Բահաղու զչո-
 րեքհարեւր եւ զյիսուն, ²եւ զմարդա-
 րէսն ամօթոյ զչորեքհարեւր եւ զյի-
 սուն,՝ եւ զմարդարէսն անասաւաց զչո-
 րեքհարեւր, որ ուսին զսեղանն Յեզա-
 20 բելայ: Եւ առաքեաց Աքաաբ ընդ ամե-
 նայն Իսրայել, եւ ժողովեաց զմարդա-
 րէսն ի լեառն Կարմեղոս:
 21 Եւ ³մերձեցայց եղիս զամենայն՝ յողու-
 վուրդն, եւ ասէ զնոսա եղիս, Մինչև
 ցերբ կազայք յերկուս հետս. եթէ Տէր է
 Աստուած, երթայք զհետ նորա, եւ եթէ
 Բահաղն իցէ, երթայք զհետ նորա. եւ
 ոչ ես յողովուրդն նմա պատասխանի:
 22 Եւ ասէ եղիս ցժողովուրդն, Ես մնացեալ
 եմ մարդարէ Տեառն միայն, եւ մարդարէք
 Բահաղու սրբ չորեքհարեւր եւ յիսուն
²եւ մարդարէք անասաին՝ չորեքհարեւր՝:
 23 Տացեն մեզ երկուս եզինս, եւ ընա-
 րեսցեն իւրեանց զմին, եւ յօչեսցեն եւ
 զիցեն ի վերայ փայտից, եւ հուր մի զի-
 ցեն. եւ ես արարից զմեւս եղին, եւ եւ
 զից ի վերայ փայտից, եւ հուր ոչ մատու-
 24 ցից: Եւ կարդասցիք զանուն աստուա-
 ծոցն ձերոց, եւ ես կոչեցից զանուն
 Տեսան՝ Աստուծոյ իմոյ՝. եւ եղիցի առ-
 սաւած որ լուիցէ հրով նա է Աստուած.
 պատասխանի ետուն ամենայն ժողու-
 վուրդն եւ ասեն, Բարի է բանդ ²զոր
 25 խօսեցար՝: Եւ ասէ եղիս ցմարդարէսն
⁴ամօթոյ, Ընարեցէք զուր ձեզ զուա-

րակ մի, եւ արարէք յառաջադոյն,
 քանդի զուք բազում էք. եւ կարդա-
 26 ցէք զանուն աստուածոցն ձերոց, եւ
 հուր մի զնէք ի վերայ: Եւ ասին զընա-
 րակն զոր ես նոցա, եւ արարին. եւ
 կարդացին զանուն Բահաղու յայդուէ
 մինչև ցհասարակ օր. եւ ասէին, Լուր
 մեզ, Բահաղ, ²լուր մեզ.՝ եւ ոչ գոյր
 բարբառ եւ ոչ ունկնդրութիւն. եւ ըն-
 թեանային չուրջ զսեղանովն զոր արա-
 27 ըին: Եւ եղև ի մէջօրէին եւ այցա-
 նեաց զնոսա եղիս ²Թեղրայի եւ ասէ,
 Մեծածայն կարդացէք, զի աստուած
⁵է, թերեւս զբոսանք ինչ իցեն նմա,
 եւ միանդամայն թերեւս ասնիցէ հրա-
 ման՝, կամ թէ ի քուն իցէ եւ յանի-
 28 ցէ: Եւ կարդային մեծածայն, եւ ցտէին
 ըստ օրինի իւրեանց սրով եւ զեղար-
 դեամբք մինչև ցհեղուլ արեան ի վերայ
 29 նոցա: Եւ եղև իբրև մերձեցան յընդե-
 րեկան, եւ մարդարէանային մինչև ցժա-
 մանակ մատուցանելոյ զո՞նին, եւ ոչ գոյր
⁶ձայն. եւ խօսեցաւ եղիս Թեղրացի
 ընդ մարդարէս զարշելեայն եւ ասէ,
 Ի
 յայ կացէք, արդ ես արարից զողջա-
 կէզն իմ: Եւ ի յայ կացին եւ զնայցին՝:
 30 Եւ ասէ եղիս ցժողովուրդն, Մատե-
 րուք առ իս. եւ մտտան ամենայն
 ժողովուրդն առ նա. եւ ողջայոց զսե-
 31 զանն Տեսան զկործանեալ: Եւ ան Ե-
 ղիս երկոսասան քար ըստ թուոյ ցե-
 ղիցն Իսրայելի, որայէս խօսեցաւ Տէր
 ընդ նմա եւ ասէ, Իսրայել եղիցի ա-
 32 նուն քո. Եւ շինեաց ⁸զքարինսն յա-
 նուն Տեսան, եւ արար ⁹ծով որ սա-
 նէր երկուց զբուս սերմն չուրջ զսե-
 33 զանովն, եւ եղէզ զչերասն ²ի վերայ սե-
 զանոյն զոր արար՝, եւ յօչեսց զողջա-
 կէզն եւ եղէզ ի վերայ շերտիցն ²եւ եւ
 34 զէզ ի վերայ սեղանոյն՝. Եւ ասէ, Ա-
 սէք ինձ չորս սափորս ջրոյ, եւ հեղէք
 ի վերայ ողջակիրիդ եւ ի վերայ շեր-
 տիցդ. եւ ասէ, Կրկնեցէք. եւ կրկնե-
 ցին. եւ ասէ, Երեքիկնեցէք. եւ երեք-
 35 կնեցին. Եւ գնայր ջուրն չուրջ զսե-
 զանովն, եւ ¹⁰զծովն լցին ջրով:
 36 Եւ եղև ի ժամու մատուցանելոյ պա-

¹Եբբ. զպատուիրանս Տեսան ²ՅԵբբ. պ-ւ-ւ-է
³Եբբ. մերձեցաւ եղիս առ ամենայն ⁴Եբբ. Բա-
 հաղու

⁵Եբբ. է նա, թ երեւս խօսք ինչ իցեն նմա, թ երեւս
 զրադուսն ինչ իցէ նորա. և թ երեւս իցէ ի
 ճանապարհի ⁶Եբբ. ձայն, եւ ոչ գոյր
 պատասխանի, և ոչ գոյր ունկնդրութիւն
⁷Եբբ. որդւոցն Յակոբայ ⁸Եբբ. զքարինսն սե-
 զան ⁹Եբբ. իւրամ ¹⁰Եբբ. զերամն

տարադին ազազակեաց Եղիա յերկինս ,
 եւ ասէ , Տէր Աստուած Արբաճամբ եւ
 Եսաճակոյ եւ Իսրայելի , այսօր ծանիցեն
 եթէ , դու ես Տէր Աստուած Իսրայելի , եւ
 ես ծառայ քո . եւ ՚Աս արարի՛՞ զգործս
 37 զայստիկ . Լուր ինձ , Տէր , յուր ինձ ՚հրով .
 եւ ծանիցէ ժողովուրդս թէ զու ես Տէր
 Աստուած , եւ զու դարձուցեր զսիրտ
 38 ժողովրդեանս այսորիկ յեսս : Եւ ան-
 կաւ հուր ի Տեառնէ ՚յերկնից , եւ եկեր
 զողջակէզան եւ զչերառն , եւ ՚զհօդն եւ
 զջուրն որ ՚ի ծովուն լափեաց հուրն :
 39 Իրբեւ ետես ամենայն ժողովուրդն ,
 անկան ի վերայ երեսաց իւրեանց եւ
 ասեն , Արդարեւ Տէր , նա է Աստուած ,
 40 Տէր , նա է Աստուած : Եւ ասէ Եղիա
 ցժողովուրդն , Կայսրոս ք զմարդարէնս
 բաճաղու , եւ մի՛ սք այրեցոյի ի նու-
 ցանէ . եւ կայան գնտաս . եւ իջոց զնու-
 սա Եղիա ի հեղեղատն Կիստնի եւ կո-
 սորեաց զնտաս անդ :
 41 Եւ ասէ Եղիա ցԱքաար , Ել , կեր եւ
 42 արբ , զի ոտնաձայն ՚անձրեի ի է : Եւ
 ել Աքաար ուսել եւ բռնելի . եւ Եղիա
 ել ի զլուր լերինն Կարմեղայ , եւ խո-
 նարհեցաւ յերկիր , եւ եզ զերեսս իւր
 43 ի մէջ ծնւոցայ խրոց . Եւ ասէ ցպատան-
 եակն իւր , Ել եւ հայեաց ընդ ճանա-
 պարճ ծովու . եւ ել եւ հայեցաւ պա-
 տանեակն , եւ ասէ , Ոչ ինչ է . եւ ասէ
 Եղիա , Այլէ զու զարձիբ ելին անդամ :
 44 Եւ զարձաւ պատանեակն ելին անդամ .
 եւ եղև յետ ել թնդարդում նուազին ,
 եւ աճա ամպ մի յուրբիկ իրբեւ զթափ
 սոն ՚հանէր ջուր՛ . եւ ասէ , Ել եւ ա-
 սա ցԱքաար , Լձեա զկատս քո եւ էջ ,
 45 գուցէ հասանիցէ քեզ անձրեւ : Եւ եւ-
 զեւ մինչ նա այր եւ անդր պատնայր ,
 երկինք մթնացան ամպովք եւ հողմով ,
 եւ եղև անձրեւ մեծ . եւ ՚լայր
 46 երթայր Աքաար յեզրայէլ : Եւ ձեռն
 Տեառն եղև ի վերայ Եղիայի . եւ
 սնդեաց զմէջ իւր եւ ընթացաւ առաջի
 Աքաարու , մինչև մասնել յեզրայէլ :

ԳԼ . ԺԹ

1 Եւ պատմեաց Աքաար Յեզրայելայ ՚կնոջ
 իւրում՝՝ զամենայն զոր արար Եղիա ,
 եւ որպէս կոտորեաց զամենայն մար-

2 զարէնս սրով , եւ առաքեաց Յեզրայէլ
 հրեշտակ առ Եղիա եւ ասէ , ՚Եթէ
 զու Եղիա իցես , եւ ես Յեզրայէլ .՝՝ օն
 եւ օն սրտացն ինձ աստուածքն եւ օն
 եւ օն յաւելցեն , եթէ ոչ յաղիւ ի սոյն
 ժամու եզից զանձն քո իրբեւ զանձն
 միոյ ի նոցանէ :
 3 Եւ ՚Երկեաւ Եղիա՛ եւ յարեաւ գնաց
 ՚տանձնն , եւ եկն ի Բերսարէէ յեր-
 կին Յուզայ , եւ եթոզ անդ զպատա-
 4 նեակն իւր : Եւ ինքն գնաց յանապատ
 աւուր միոյ ճանապարհ , եւ չողաւ եւ
 նոսաւ ընդ բեւեկնեաւ . եւ ինդրեաց
 մահ անձին իւրոյ , եւ ասէ , Շատ է
 արդ , Տէր , ա՛ռ զողի իմ ՚յինէս , Տէր՛ .
 5 զի ոչ եմ ես լաւ քան զհարս իմ : Եւ
 ի քուն եմուտ եւ ննջեաց ընդ ամեկովն .
 եւ աճա ¹⁰ ոմն մերձեցաւ ի նա եւ ա-
 6 սէ , Արի եւ կեր : Եւ հայեցաւ Եղիա
 եւ աճա ի մնարից նորա նկանակ ¹¹ հա-
 ճարց եւ կուժ ջրոյ . եւ յարեաւ եկեր
 7 եւ արբ , եւ զարձաւ ննջեաց : Եւ զար-
 ձաւ հրեշտակն Տեառն երկրորդ անգամ
 մերձեցաւ առ նա եւ ասէ ցնա , Արի
 կեր , զի բազում է ի քէն եւ անդր
 8 ճանապարհդ : Եւ յարեաւ եկեր եւ արբ ,
 եւ գնաց զօրութեամբ կերակորն այ-
 նորիկ զքառասուն տիւ եւ զքառասուն
 զիչեր , մինչև ցլեառնն Աստուծոյ ի
 Քորէր :
 9 Եւ եմուտ անդ յայն եւ ¹² զազարեաց .
 եւ աճա բան Տեառն եղև առ նա եւ
 10 ասէ , Զի՛ ես զու աստ , Եղիա : Եւ ա-
 սէ Եղիա , Նախանձեցայ գնախանձ
 Տեառն ամենակողի . զի թողին ¹³ քրեզ
 որդիքն Իսրայելի , զսեպանս քո կոր-
 ձանեցին , եւ զմարդարէս քո կոտորե-
 ցին սրով . ես միայն մնացեալ եմ , եւ
 11 ինդրեն զանձն իմ առնուլ գաս : Եւ
 ասէ , Ելցես զու ՚գաղիւ եւ կայցես ի
 յերին անդ առաջի Տեառն : Եւ աճա Տէր
¹⁴ անցցէ . եւ հողմ մեծ ուժոյն որ զկե-
 րինս քակիցէ եւ զլէմս խորտակիցէ ա-
 ռաջի Տեառն , եւ ոչ ի հողմն Տէր . եւ
 յետ հողմոյն չարմուսն , եւ ոչ ի չարմ-
 12 մանն Տէր . Եւ յետ չարմմանն հուր , եւ
 ոչ ի հուրն Տէր . եւ յետ հրոյն ձայն
 13 մեզմոյ օդոյ : Եւ եղև իրբեւ լուսւ Եւ-
 զիա , ծածկեաց զերեսս իւր մաշկեկանս ,

¹ Եբբ. բանիւ քով արարի զամենայն ² Եբբ. զ-լ-տ-է
³ Եբբ. զքարինս ե զհօդն ⁴ Եբբ. ի խրամին
⁵ Եբբ. բազմութեան անձրեւի ⁶ Եբբ. ելանէր ի
 ծովէ ⁷ Եբբ. հեծաւ

⁸ Կաւ , ետես ⁹ Եբբ. ճանձնապուր ¹⁰ Եբբ.
 հրեշտակ ¹¹ Եբբ. ի թոնրոյ ¹² Եբբ. անդ
 ազաւ ¹³ Եբբ. զուխա քո ¹⁴ Եբբ. անցանէ

եւ ել եւ եկաց ՚ի ներքոյ այրին . եւ անա բարբառ առ նա եւ ասէ , 2¹ Զի՞ ես
 14 գու ասա , եղիա : Եւ ասէ եղիա , Նա-
 լանձեաց զնախանձ Տեառն ամենակա-
 լի , զի թողին զուխա քո որդիքն Լա-
 յայելի , զսեղանս քո քականդին , եւ
 զմարգարէս քո կտորեցին սրով . ես
 միայն մնացեալ եմ , եւ խնդրեն զանձն
 15 իմ առնուլ զնա : Եւ ասէ ցնա Տէր , Գնա
 եւ դարձիր զճանապարհ քո , եւ եր-
 թիցես զճանապարհ անապատին Դա-
 մակեայ , եւ երթիցես եւ օձցես զԱ-
 16 զայել ի թաղաւոր Ատորոց . Եւ զՅէռ
 որդի Նամեստայ ի թաղաւոր ի վերայ
 Լաւայելի . եւ զԵղիսէ որդի Սափա-
 տայ յԱբելիմաուլայ՝ օձցես ի մարգարէ
 17 փոխանակ քո : Եւ եղիցի զապրեալն ի
 սրոյ Ազայելի սպանցէ Յէռ , եւ զապ-
 րեալն ի սրոյ Յէռայ սպանցէ Եղիսէ .
 18 Եւ զԹողցես դու՝ յԼաւայելի եւ լմն հա-
 ղա արանց զամենայն որոյ ոչ իցէ
 կրկնեալ ծուծնր Բահաղու , եւ զամենայն
 բերան որոյ ոչ իցէ պագեալ զնա :
 19 Եւ զնայ անտի , եւ եղիա զԵղիսէ
 որդի Սափատայ , եւ նա ՚վարէր երկու-
 տասան եզամիք . եւ զոյգք զոյգք եւ
 զանց առաջի նորա , եւ ինքն ի վերայ
 երկուտասանիցն՝ . եւ եհաս Եղիա առ
 նա , եւ ընկէց զմտկեակն իւր ի վե-
 20 րայ նորա . Եւ եթող Եղիսէ զեղինան ,
 եւ ընթացաւ զհետ Եղիայի , եւ ասէ ,
 Համբուրեցից զնայր իմ եւ զմայր իմ ,
 եւ եկից զկնի քո . եւ ասէ ցնա , իրթ
 զարձիր անդրէն , զի՞նչ արարի քեզ :
 24 Եւ դարձաւ ի նմանէ , եւ ա ՚զգոյզս
 զոյգս՝ եզանցն եւ եղեն , եւ գործեօք
 եզանցն հասոյց զնոսա , եւ ետ յա-
 զովրդեանն եւ կերան , եւ յարեաւ զնայ
 զհետ Եղիայի եւ պաշտէր զնա :

Գ Լ Ի

1 Եւ ՚որդի Աղերայ՝ արքայ Ատորոց յա-
 զովեաց զամենայն զօրս իւր , եւ ՚եկ եւ
 նստաւ զՍամարեաւ , եւ՝՝ երեսուն եւ
 երկու թագաւորք ընդ նմա , եւ ՚ամե-
 նայն երկուսք եւ կառք . ՚ելին եւ նստան
 զՍամարեաւ , եւ սայլին՝ պատերազմ

2 ընդ նմա Եւ առաքեաց հրեշտակս առ Ա-
 3 քաար արքայ Իսրայելի ի քաղաքն , Եւ
 ասէ ցնա , Այսպէս ասէ ՚որդի Աղերայ՝ .
 Արծաթ քո եւ ոսկի քո իմ է , եւ կա-
 նայք քո եւ որդիք քո զեղեցիկք իմ
 4 են : Պատասխանի ես արքայն Իսրայել-
 ի եւ ասէ , Որպէս խօսեցար , աչր իմ
 արքայ , քո եմ ես եւ ամենայն ինչ իմ :
 5 Եւ դարձան հրեշտակքն եւ տան ,
 Այսպէս ասէ ՚որդի Աղերայ՝ . Ես յղեցի
 զի դարձաթ քո եւ զոսկի քո եւ զկա-
 նայս քո եւ զորդիս քո ցիտ սացես .
 6 Զի վազեա ի սոյն յամու առաքեցից
 զճառայս իմ , եւ զեղեցեան զառն քո
 եւ զառն ծառայից քոց , եւ եղիցին
 ցանկալիք աչաց ՚նոցա , յոր արկանի-
 7 ցեն զձեռս իւրեանց՝ առցեն : Եւ կոչեաց
 արքայն Իսրայելի զամենայն ծերակոյտ
 երկրին եւ ասէ , Գիտաս՞իք եւ տես՞իք
 զի չարիս իմն ինդրէ՞նա , զի առաքեաց առ
 իմ՝ զուստերաց իմոց եւ զիստերաց իմոց ,
 զարձաթ իմ եւ զոսկի իմ ոչ արգելի ի
 8 նմանէ : Եւ ասեն ցնա ծերքն եւ ամենայն
 յողովուրդն , Մի՞ լսեր եւ մի՞ յանձն
 9 ասնուր : Եւ ասէ ցհրեշտակս ՚որդոյն
 Աղերայ՝ , Ասացէք ցտէրն ՚ձեր ցար-
 քայ . Զամենայն ինչ զոր առաքեցիք առ
 ծառայ քո յառաջնու՞մ նուազին՝ արա-
 րից , բայց զայդ բան ոչ կարեմ առնել .
 եւ զնոցին արքն եւ դարձուցին նմա
 պատապիսանի :
 10 Եւ առաքեաց առ նա ՚որդին Աղերայ՝
 եւ ասէ , Օն եւ օն արասցեն ինձ զիբն
 եւ օն եւ օն յաւելցեն , եթէ բաւեացէ հող
 Սամարեայ՝ ՚ձաղիւսովք հանդերձ՝ ամու-
 11 նայն զօրականի հետեւեակայ իմոց . Եւ
 պատասխանի ես արքայն Իսրայելի եւ
 ասէ , ՚ճասէ արդ , մի՞ պարծեացի կորն
 12 իբրեւ զուզիզն : Եւ եղեւ իբրեւ ՚պա-
 տասխանի ես նմա՝ զբանս զայս , եւ
 ինքն ի զինու՞ջ էր եւ ամենայն թաղա-
 ւորք որ ընդ նմա ի իտրանս . եւ ասէ
 ցճառայսն իւր , ՚ճիւնեցէք պատնէշ . եւ
 եղին պատնէշ՝ չուրջ զքաղաքաւն :
 13 Եւ անա մարգարէ տն մասուեա առ
 Աքաար արքայ Իսրայելի եւ ասէ , Այս-
 պէս ասէ Տէր . Եթէ տեսանիցես զայն

1 Եբր. ի բերան 2 Եբր. թողի. (տե՛ս Հոովմ. ԺԱ. 4.)
 3 Եբր. վարէր երկուտասան զոյգս առաջի իւր , եւ
 ինքն յերկուտասաներորդին 4 Եբր. զզոյգ 5 Եբր.
 Բենագադ 6 Եբր. պատեր 7 Եբր. եւ ել և
 պաշտերեաց զՍամարեա եւ տար

8 Եբր. քոց 9 Եբր. զկանանց իմոց եւ զորդւոյ
 իմոց , եւ 10 Եբր. Բենագադայ 11 Եբր. իմ 12 Եբր.
 սպից 13 Եբր. Ասացէք , Մի պարծեացի որ ասէն
 ՚ձեր իբրեւ զայն որ ի բաց գնէ 14 Եբր. լուսաւ
 15 Եբր. ձակատեցարուք , եւ ձակատեցան

ամբոխ մեծ . աճա ես մասնեցից զնոսս
 սոսօր ի ձեռս քո , եւ զբառացես թէ ես
 14 եմ Տէր : եւ ասէ Աքաօօր , Բ՛ւ . եւ ա-
 սէ , Այսպէս ասէ Տէր , Մանկուաւ իշ-
 15 լամնայ գաւառաց : եւ ասէ Աքաօօր ,
 Ո՞ նախ զրգեոցէ զգրատերազմն . եւ
 16 ասէ , Կու : եւ հանդէս արար¹ ծառայից
 իշլամնայ գաւառաց , եւ եղեն երկե-
 րիւր եւ ²երեսուն . եւ սպաս հանդէս
 եւ ըստ պատուիրաննն զոր պատուի-
 րեաց Տէր որդւոցն Յակոբայ , որում
 35 Եզ անուն Իսրայէլ : Եւ ուխտեաց Տէր
 ուխտ եւ պատուիրեաց նոցա եւ տէ ,
 Մի երկնչիցիք յաստուածոց օտարաց ,
 եւ մի՛ երկիր պաղանկեք նոցա , եւ մի՛
 պաշտեցէք գնտա , եւ մի՛ զո՛րիցէք նո-
 36 ցա . Այլ Տեառն Աստուծոյ որ հասն զձեզ
 յերկրն՝ Եգիպտացւոց մեծաւ զօրու-
 թեամբ եւ բարձր բազկաւ , ի նմանէ
 երկնչիցիք , եւ նմա երկիր պաղանկեք եւ
 37 նմա զո՛րիցէք . Եւ իրաւանց եւ զաստա-
 տանաց եւ օրինաց եւ պատուիրանացն
 զորս գրեաց ձեզ՝ զգուշանայցէք առնել .
 եւ մի՛ երկնչիցիք յաստուածոց օտա-
 38 րաց . Եւ զուխտն զոր ուխտեաց ընդ
 ձեզ՝ մի՛ ցրիցէք . եւ մի՛ երկնչիցիք յաս-
 39 տուածոց օտարաց . Այլ ի Տեառնէ Աս-
 տուծոց ձերմէ երկնչիցիք , եւ նա փրկիւ-
 զէ զձեզ յամենայն թշնամեաց ձերոց :
 40 Եւ ՚Մի՛ ունկնդիր լինիցիք կրօնից նոցա
 41 զոր նոքա առնիցեն՝ : Եւ երկնչէին ազգն
 այնորիկ ի Տեառնէ , եւ զրօշկոց իւր-
 եանց ծառայէին . եւ որդիք նոցա եւ

որդիք որդւոց նոցա որպէս արարին հարք
 իւրեանց , առնեն մինչեւ ցայսօր :

ԳԼ . ԺԸ

1 Եւ եղև յամին երրորդի Ուխտի որդ-
 ւոց Եզայ արքայի Իսրայելի թագաւո-
 րեաց Եզեկիա որդի Աքազու արքայի
 2 Յուդայ : Որդի քսան եւ հինգ ամաց էր
 ի թագաւորել իւրում , եւ քսան եւ ինն
 ամ թագաւորեաց յերուսաղէմ . եւ ա-
 նուն մօր նորա ՚Աբութ՝ զուսուր Չա-
 3 քարեայ : Եւ արար ուզգուծիւն առաջի
 Տեառն ըստ ամենայնի զոր արար Դա-
 4 լիթ հայր նորա : Եւ երարձ զարձուսն
 եւ խորասկեաց ՚զամենայն արձանսն՝
 եւ կտորեաց զանասանս , եւ զօծն
 պղնձի զոր արար Մոսէս , զի մինչեւ
 ցայն աւուրա՞ ՚զո՛րէին նմա որդիքն Իս-
 րայելի , եւ ՚Կոչեցին զնա Նէեախման :
 5 Ի Տէր Աստուած Իսրայելի յուսացաւ .
 եւ յետ նորա նման նմա ոչ եղև յա-
 մենայն թագաւորս Յուդայ եւ յեգիպտոս
 6 յատաջագոցն քան զնա : Յարեցաւ ի Տէր
 եւ ոչ մեկնեցաւ ի զնայից նորա , եւ
 պահեաց զպատուիրանս նորա զոր պա-
 7 տուիրեաց ՚Մոսէս : Եւ էր Տէր ընդ
 նմա , յամենայնի զոր ինչ եւ առնէր՝
 իսկամուս լինէր , եւ ոչխանեաց զարքայն
 8 Ասորեստանի եւ ոչ ծառայեաց նմա : Եւ
 հնար ՚Ղալայզգիւն մինչեւ ցԴագա եւ
 մինչեւ զսահմանս նորա , յաշտարակէ
 պահապանացն մինչեւ զքաղաքն ամուր :
 9 Եւ եղև յամին չորրորդի Եզեկեաց
 արքայի , այն է ամ եւթներորդ Ուխտայ
 որդւոց Եզայ արքայի Իսրայելի , ել Սազ-
 մանատար արքայ Ասորեստանեաց ի վե-
 10 րայ Սամարիայ , եւ պաշարեաց զնա . Եւ
 առ զնա ի կտարել ամաց երկոց , յամի
 վեցերորդի Եզեկեաց , այն ամ իններորդ
 էր Ուխտայ արքայի Իսրայելի , առաւ
 11 Սամարիա : Եւ խաղացոց արքայն Ա-
 սորեստանեաց ՚ՂՍամարիա յԱսորես-
 տանեաց , եւ նստոց զնոսա յԱզաթ եւ
 յՍրովր՝ առ զհատիլս Գովգանայ եւ ՚Լե-
 12 բամբրքն Մարաց . Զի ոչ լուան ձայնի
 Տեառն Աստուծոյ իրեանց , եւ անցին
 զուխտիւ նորա ըստ ամենայնի զոր պա-

1 Յեբր. Կալուե 2 Յեբր. Սեփարուխայիք 3 Յեբր. բարձանց , եւ զո՛րէին վասն նոցա ի տառն բարձանցն 4 Յեբր. առաջին կրօնից ոչ երկնչէին ի Տեառնէ , եւ ոչ 5 Յեբր. իւրեանց 6 Յեբր. իւրեանց , եւ ոչ 7 Յեբր. ոչ լուան , այլ ըստ առաջին սովորութեան իւրեանց առնէին

8 Յեբր. Աբիա 9 Յեբր. զարձանս 10 Յեբր. խուսկս տրկանէին 11 Յեբր. կոչեաց 12 Յեբր. Տէր Մոզ-սիտի 13 Յեբր. զՓղզտացիսն , ուղեւ եւ Բաւլ-ուրեթ 14 Յեբր. զԻսրայել 15 Յեբր. ի քաղաքս

առւերեաց նոցա Մովսէս ծառայ Տեառն . ոչ լուան եւ ոչ արարին :

13 Եւ յամին չորեքտասաներորդի արքայի Եղեկեայ , ել Սենեքերիմ արքայ Ասորեստանեայց ի վերայ ամուր ամուր

14 քաղաքայն Յուդայ , եւ առ դնտա , եւ առաքեաց Եղեկիա արքայ Յուդայ հրեշտակս առ արքայ Ասորեստանեայց ի Լաքիս եւ ասէ , Մեղայ , դարձիր յինչն , եւ զոր ինչ պիցես ի վերայ իմ՝ արարչի . եւ եղ արքայն Ասորեստանեայց ի վերայ Եղեկեայ արքայի Յուդայ երեքհարեւր տաղանդ արծաթոյ եւ երեսուն

15 տաղանդ ոսկոյ : Եւ ետ Եղեկիա դամնայն արծաթ զակայ ի տան Տեառն

16 եւ ի գանձս տան թագաւորին : Ի ժամանակի յայնմիկ կոտորեաց Եղեկիա զգրուեստ ասաճարին Տեառն , եւ զսեաման զոր սլատեակ ոսկւով Եղեկիա արքայ Յուդայ , եւ ետ զայն արքային Ասորեստանեայց :

17 Եւ առաքեաց արքայ Ասորեստանեայց զԹարաթման եւ զՄարսարիս եւ զՌափսակ ի Լաքիսայ առ արքայ Եղեկիա զօրու ծանու ի վերայ Երուսաղեմի . եւ եկին եւ եկին յԵրուսաղէմ , եւ կացին ի վերայ ջրմղին վերնոյ աւաղանին , որ է ի ճանապարհի աղարակին թափչի :

18 Եւ աղաղակեցին առ Եղեկիա . եւ եկին առ նոսա Եղիակիմ որդի Քեղեկայ հազարապետ , եւ Սովնաս զպրապետ , եւ Յովաք որդի Ասափայ որ ի վերայ յիշատակաց :

19 Եւ ասէ ցնոսա Ռափսակ , Ասացէք ցեղեկիա , այսպէս ասէ արքայ մեծ , արքայն Ասորեստանեայց . Չինչ իցէ յայն

20 յոր զու յուսացեալ իցես . ¹Բայց եթէ ասիցես՝ թէ Բանք չըթանց , եւ խորհուրդ եւ զօրութիւն պիտոյ իցէ ի պատերազմ” . եւ սրդ յո՞ յուսացեալ նկատ

21 նեցեր զիս : Ահա յուսացեալ իցես ի ցուպն կեցմեայ ջաղջախեայ՝ յեղիպտոս , յոր թէ յենուցու այր՝ մասնիցէ ընդ ձեռսճառ , եւ խոցիցէ զիս . այնպէս Փարաւոն արքայ Եգիպտոսացոյ ամենայն

22 յուսացիլոյ իւրոյ : Եւ զի ասացեր ցիս՝ թէ ի Տէր Ասաուած՝ յուսացեալ եմք , ո՞չ զա այն է՝ զորոյ մերմեաց Եղեկիա զբարձունս նորա եւ զսեղանս նորա

եւ ասէ ցՅուդա եւ ցՆրուսաղէմ , Ասաճի սեղանոյս այսորիկ երկիր պագէք

23 յԵրուսաղէմ : Եւ արդ այլ խաննեցալուք ի տէր իմ արքայ Ասորեստանեայց , եւ սաց քեզ երկուս հազարս երկվարաց , եթէ կարասցես տոյ ցու քեզ հեծեալս

24 ի վերայ նոցա : Եւ զիմոց կարիցես զգէմ ունել միտց ուրուք կուսակալի ի ծառայից անասն իմոյ ի յեանոց , զի յուսացեալոց ես յեղիպտոս ի կոտս եւ յերկվարս :

25 Վարս : Իսկ արդ ասանց Տեառն ինչ եւ յանիցեմք ի տեղիս յայս սպականել զաս . Տէր ասաց զիս , Ել յերկիրն յայն եւ ապականես զիս :

26 Եւ ասէ Եղիակիմ որդի Քեղեկայ եւ Սովնաս եւ Յովաք Ասափայ՝ զՌափսակ , Խօսեաց ընդ ծառայս քո Ասորերէն , քանզի լսեմք մեք . եւ մի խօսիր Հրեարէն յականջս ժողովրդեանդ որ կան

27 ի պարսպից : Եւ ասէ ցնոսա Ռափսակ , Միթէ առ ակրն քո եւ առ քեզ առաքեաց զիս ակր իմ խօսել զբանս զայստսիկ . ո՞չ ապաքէն առ արսոյ որ նստին ի վերայ սպարապից՝ ուտել զաղբ իւրեանց եւ ըմպել զմէզ իւրեանց ձեւք հանցերձ :

28 Եւ յարեաւ Ռափսակ , եւ տղաղակեաց մեծաձայն Հրեարէն եւ խօսեցաւ եւ ասէ , Լուարուք զպատգամս արքային մեծի , արքային Ասորեստանեայց .

29 Այսպէս սո՞ւ արքայ . Մի՛ հպարտացուցէ զձեզ Եղեկիա , զի ոչ կարէ ապրեցուցանել զձեզ ի ձեռաց իմոց . Եւ մի յուսացուցէ զձեզ Եղեկիա ի Տէր , եւ աստոցէ եթէ Փրկելով փրկէ զմեզ Տէր , եւ ոչ մասնեցի քաղաքս ի ձեռս արքային Ասորեստանեայց : Մի՛ լսէք Եղեկեայ , զի այսպէս ասէ արքայն Ասորեստանեայց . Արարէք ընդ իս ³օրհնութիւն , եւ ելէք առ իս . եւ կերիցէ այր իւրաբանչիւր զայլի իւր եւ զթղնի իւր , եւ արրցէ ջուր ի ջրհորայ իւրմէ ,

32 Մինչեւ եկից առից եւ տարայց զձեզ յերկիրն որ իլրեւ զերկիրս ձեր է , երկիր զորեմոյ եւ զինուոյ , այգիաց եւ հացի , երկիր ձիթենեաց՝ իւզոյ եւ մեղու . եւ կիցէք եւ ոչ մեռանիցիք . եւ մի՛ լսէք Եղեկեայ , զի խարէ զձեզ եւ ասէ , թէ Տէր փրկեսցէ զմեզ : Միթէ փրկելով փրկեցի՞ն ասաուածք ազգացն զիւրաքանչիւր աշխարհ ի ձեռաց ար-

¹Եբր. Ասացեր , Սորհուրդ եւ զօրութիւն է իմ ի պատերազմ : Բանք չըթանց եւ եթէ են ²Եբր. յեչն յաւելաւ . մեք

³Կաթ , խաղաղութիւն , կա՛ հաշուութիւն

34 քայլն Ասորեստանեայց : Ո՛ւր է աստուածն Եմաթայ եւ Արփաթայ, եւ ո՞ւր է ստուածն Սեփարուխայ՝ քաղաքին, Անայ եւ Աւայ : մի՞թէ փրկեցին զՍամարիա

35 ի ձեռաց իմոց : Ո՞վ ոք յամենայն աստուածոց աշխարհաց որ փրկեցին գերկիր իւրեանց ի ձեռաց իմոց, զի փրկեցցէ Տէր զԵրուսաղէմ ի ձեռաց իմոց :

36 Եւ լուսին եւ ոչ ետուն նմա պատասխանի, զի պատուէր տուեալ էր արքայի թէ Մի՛ տայցէք նմա պատասխանի :

37 Եւ Եմուա եղիակիմ որդի Քեղկեայ հաղարապետ եւ Սովնաս զպրապետ եւ Յովաք որդի Ասափայ որ ի վերայ յիշատակայ՝ առ Եզեկիա, պատառեալ զճանգերձս, եւ պատմեցին նմա զպատուամս Ռափսակայ :

ԳԼ ԺԹ

1 Եւ եղև իբրև լուս արքայ Եզեկիա, պատառեալ զճանգերձս իւր եւ զզեցաւ

2 քուրձ, եւ եմուա իտուն Տեաան : Եւ ասաքեաց զԵղիակիմ հաղարապետ եւ զՍովնասս զպրապետ, եւ զձերս ի քահանայիցն քրձագգածս առ Եսայի մարգարէ

3 որդի Ամոսայ : Եւ ասն զնա, Այսպէս ասէ Եզեկիա . Օր նեղութեան եւ կշտամբանաց, եւ զայրացուցանելոյ օրս այս, զի հասեալ են մանկունք յերկունս, եւ չիք

4 զօրութիւն ի ծնանելիս : Թերեւս լուսցէ Պատուած քո զպատուամս Ռափսակայ, զոր տաքեաց զնա արքայն Ասորեստանեայց աէր իւր նախասել զԱստուած կենդանի եւ հայճելի լսանիւք, զորս լուս Տէր Աստուած քո . եւ աքտաղես աղօթս ի վերայ մնացորդացս

5 որ մնացին : Եւ եկին ծառայք արքայի

6 Եզեկեայ առ Եսայի . Եւ ասէ զնոսա Եսայի, Այսպէս ասասցիք տեսնն ձերում, այսպէս ասէ Տէր . Մի՛ երկնչիր յերեսաց պատգամացն զորս լուար՝ ուրովք հայճելցին զիս ծառայք արքայն

7 Ասորեստանեայց : Ահա ես ասց ի նա այս, եւ լուսցէ կոյժ, եւ զարձցի յերկիր իւր, եւ կործանելից զնա սրով յերկրի իւրում :

8 Եւ զարձաւ Ռափսակ եւ եղիտ զարքայն Ասորեստանեայց պատերազմեալ ընդ Ղոբնայի . զի լուս թէ չուեաց ի

9 Լաքիսայ : Եւ նա լուս զԹարսակայ ար-

քայէ Եթովպացոց, ասնն, Ահա եւ պատերազմել ընդ քեզ . եւ զարձաւ անդրէն, եւ ասաքեաց հրեշտակս առ Եզեկիան եւ ասէ, Այսպէս խօսեսցիք ընդ Եզեկեայ արքայի Յուզայ՝ ասել, Մի՛ հարտացուսցէ զքեզ Աստուած քո յոր դուն յուսացեալ ես, ասել թէ ոչ մատնեցի Երուսաղէմ ի ձեռս արքայն Ասորեստանեայց : Ահա դու քեզէն իսկ լուար զամենայն ինչ զոր արարին թագաւորք Ասորեստանեայց ընդ ամենայն աշխարհս Պոզովել զնոսա, եւ դու փրկեցին՝

12 Մի՛ Մի՛թէ փրկեցին զնոսա աստուածք աղգացն զորս ապականելցին հարք իմ, զԳովգան եւ զՍառան եւ զՌափաթ եւ

13 զորցիս Եզեմայ՝ առ ծովեզերր : Ո՛ւր է արքայն Եմաթայ եւ արքայն Արփաթայ, եւ արքայ քաղաքին Սեփարուխայ, Անայ եւ Աւայ :

14 Եւ առ Եզեկիա զհրովարտական ի ձեռաց հրեշտակայն, եւ ընթերցաւ զնոսա . եւ ել ի աունն Տեաան, եւ ասաքեաց զնոսա Եզեկիա առաջի Տեաան :

15 Եւ եկաց յաղօթս Եզեկիա առաջի Տեաան եւ ասէ, Տէր Աստուած Իսրայելի որ նստիս ի քերուրէս, զու ես միայն Աստուած յամենայն թագաւորութիւնս երկրի, զու տրարեր զերկիսս եւ զերկիր : Խնտարնեց, Տէր, զունին քո եւ լուր, բաց, Տէր, զաչս քո եւ սեռ, եւ լուր զրանս Ահեքերիմայ զոր ասաքեաց նախասել զԱստուած կենդանի :

17 Զի արգարեւ, Տէր, տեերեցին թագաւորք Ասորեստանեայց զաղզս եւ զերկիր նոցա . Եւ ետուն զաստուածս նոցա հրոյ, զի չէին աստուածք, այլ զորք ձեռաց մարդկան, փայտ եւ քար . եւ

19 կարուսին զնոսա : Եւ արգ, Տէր Աստուած մեր, փրկեա զմեզ ի ձեռաց նորս . եւ ծանկեկն ամենայն թագաւորութիւնք երկրի, զի դու ես Տէր Աստուած միայն :

20 Եւ ասաքեաց Եսայի որդի Ամոսայ առ Եզեկիա եւ ասէ, Այսպէս ասէ Տէր Պորութեանց՝ Աստուած Իսրայելի . զոր կացեր յաղօթս առ իս վասն Ահեքերիմայ արքայի Ասորեստանեայց՝

21 լուայ : Այս բան է զոր խօսեցաւ Տէր վասն նորս . Արհամարհեաց, անդոսնեաց զքեզ կոյս զուսար Միւնի . զլուս չարժեաց ի վերայ քո, զուսար

1 Եբբ. դ-1-4 2 Եբբ. Տէր Աստուած 3 Այ-բ-2, կորուսանել 4 Եբբ. ի Թեւսապ

22 Երուսաղեմի : Չո՞ նախատեցիր եւ հայ-
հոգեցեր , եւ յո՞յր վերայ բարձրացու-
ցիր զբարբառ քո նախատել . եւ ամ-
բարձեր ի բարձուս վաչա քո ի Սուրբն
23 Ի արայելի : Ի ձեռն հրեշտակաց քոց նա-
խատեցիր զՏէր եւ ասացիր , Բազմու-
թեամբ կառաց իմոց ելի ի բարձրու-
թիւն լերտնց ի կոպմն Լիրանանու , եւ
կատարեցի զմեծութիւն եղեւնոփայտից
նորա եւ զընտիր ընտիր նոճից նորա ,
եւ հասի յեզր սատուածոյ անաստին
24 Կարմեկայ : Եւ Նպանցի եւ արբի զՊուրս
օտարտայ եւ Պաւելեցի թաթիւ ոտին
25 Իմոց զամենայն զեսս Պատարկոս : Մի-
թէ չիցէ լուեալ ի հեռաստանէ զայդ զոր
արարի յաւուրց առաջնոց . ասեղծի զզա
եւ ամի հասուցի , ¹եւ եղեն ի հպար-
տութիւն գերեվարաց սրատերազմողաց
26 քաղաքք ամուրք . Բնակեալք ի նոսս
տկարացան ձեռամբ եւ զարհուրեցան ,
եւ ամաչեցին եւ եղեն իբրև զխտ
վայրի , եւ իբրև զզալարի բանջարոյ
եւ զզալարի տանեաց , ²եւ կոխան ա-
27 ռաջի հասելոցն : Այդ զնիստ քո եւ զել
եւ զմուտ քո զիտեմ , եւ զարամուտ-
28 թիւն ³քո . Ի րարկանալ քո ինձ , եւ խոյ-
տալդ քո ել յականջս իմ . եւ արկից
կարթ ի քիթս քո , եւ զանդանուանդ ի
կզակս քո , եւ զարձուցից զքեզ ընդ
ճանապարհ ընդ որ եկիր :
29 Եւ քեզ այս նշանակ լիցի . կերիցես
այս ամ զինքնեակս , եւ յամին երկրորդի
զինքնեակաց ինքնեակս . եւ յամին երրոր-
դի՝ Պերմանք եւ հունձք եւ սունկք
այցեակց , եւ կերիջիք զպատու շոցս :
30 Եւ յաւելցի սարեալ տանդ Յուդայ .
մնացեալն արձակեցէ արմատս ի խո-
31 նարճ եւ պտուղս ի վեր : Չի յերուսա-
ղեմէ ելցէ մնացորդ , եւ ի Սիոնէ լեռ-
նէ ասրեալ . նախանձ Տեառն զօրու-
թեանց արտացէ զայս :
32 Վասն այնորիկ պայգէս ասէ Տէր . Ար-
քայն Ասորեստանեայց մի՛ մտցէ ի քա-
ղաքդ յայդ , եւ մի՛ ձղեացէ ի զս նետս ,
եւ մի՛ սպասեացէ հող վաճակոց , եւ մի՛
33 կուտեսցէ զզոյաւ հող . Ընդ ճանա-
պարհ ընդ որ եկին՝ ընդ նոյն դարձցի ,

եւ ի քաղաքդ յայդ մի՛ մտցէ , ասէ Տէր :
34 Եւ վերակացու եղէց քաղաքիդ այդմիկ
վերկի զդա վասն իմ եւ վասն Դաւթի
ծառայի իմոց :
35 Եւ ի հասանել զիչերոյն ել հրեշտակ
Տեառն , եւ եհար ի բանակէն Ասորես-
տանեայց հարեւր եւ ուխտուն եւ հինգ
հազար . եւ կանխեցին ընդ ատաւոսն ,
եւ անա ամենայն մարմինք մեռեալ :
36 Եւ չուեաց զնայ , եւ զօրձաւ . Սնե-
քերիմ սրբայ Ասորեստանեայց եւ ընտ-
37 կեաց ի Նինուէ : Եւ եղև մինչդեռ երկիր
պագանէր ի տան Նեպաքայ ատուածոյ
լուրում , Այդամիւէք եւ Սարասար որդիք
նորա հարին գնա սրով , եւ ինքեանք
զերծան յերկիրն Արարազայ . եւ թագա-
ւորեաց Ասորդան որդի նորա ընդ նորա :

ԳԼ . Ի

1 Յաւուրն յայնտիկ հրեանցայաւ եղև-
կիա ի մաճ . եւ եմուտ առ նա Եսայի
որդի Ամոսայ մարգարէ , եւ ասէ ցնա ,
Այսպէս ասէ Տէր . Հրաման տուր վասն
տան քում , զի մեռանիս դու եւ ոչ սալ-
2 րեսցիս : Եւ զարձայց եղեկիս զերեսս
իւր յարմն , եւ եկաց յաղօթս առ Տէր
3 եւ ասէ , Ո՛վ Տէր , յիշևս որպէս գնու-
ցի առաջի քո ճշմարտութեամբ եւ կա-
տարեալ սրաբ , եւ զբարին առաջի քո
արարի : Եւ ելաց Եղեկիս լալիւն մեծ :
4 Եւ էր Եսայի ի սրահին միջնոււմ . եւ
5 բան Տեառն եղև առ նա եւ ասէ , Դար-
ձիր անգրէն , եւ ասասցես ցեղեկիս ցա-
տաջնորդ ժողովրդեան իմոց , Այսպէս
ասէ Տէր Աստուած Դաւթի հօր քո .
Լուայ աղօթից քոց եւ տեսի զարտա-
տուս քո . անա ես բժշկեցից զքեզ , եւ
յաւուրն երրորդի ելցես ի տուն Տեառն .
6 Եւ յաւելից յաւուրս քո տան հնդկուս-
տան , եւ ի ձեռաց արքային Ասորեստա-
նեայց վերկեցից զքեզ եւ զքաղաքդ զայդ ,
եւ վերակացու եղէց քաղաքիդ այդմիկ
վասն իմ եւ վասն Դաւթի ծառայի ի-
7 մոց : Եւ ասէ Եսայի , Պացին պաղա-
տիսս թվոյ . եւ արաւ . եւ զիցեն ի վե-
վայ վերից եւ ողջասցին :
8 Եւ ասէ Եղեկիս ցեսայի , Չի՞նչ նշան
է թէ բժշկեացէ զիս Տէր , եւ կ'անխցեմ
9 ի տուն Տեառն յաւուրն երրորդի : Եւ
ասէ Եսայի , Այս նշան է ի Տեառնէ զի

¹ Եբբ. փորեցի ² Եբբ. ցամարեցուցի ³ Եբբ.
ամբացեսայս , Կա՛, Եղիպատի ⁴ Եբբ. զի դար-
ձուցես յամոյութիւն , ի կոչոս աւերակաց
զքաղաքս ամբացեսայս ⁵ Եբբ. հարեալ ի խոր-
չակէ մինչքեւ հասեալ ⁶ Եբբ. քո առ իս
⁷ Եբբ. սերմանեցէք եւ հնձեցէք եւ սնկեցէք այցիս

⁸ Եբբ. Առէք պաղատիսս թվոյ . եւ տուն , եւ
եղին ի վերայ վերին եւ ողջացաւ

արասցէ Տէր զբանն զոր խօսեցաւ . Եր-
 10 թիցցէ ստուերն զտասն աստիճանօք¹, եւ
 ստէ Եղեկիա , Դիւրին է ստուերին² զտա-
 նալ զտասն աստիճանօք . եւ ստէ , Ոչ
 այլ պղտէ է . այլ զարձցի ստուերն զտասն
 11 աստիճանօք անդրէն յետս : Եւ ազաղա-
 կեաց Ետայի մարգարէ առ Տէր , եւ զար-
 ձաւ ստուերն զտասնեքու մբք աստիճա-
 նօք անդրէն յետս , զտասնեքու մբք աս-
 տիճանօքն Աքաղու :
 12 Ի ժամանակին յայնմիկ ատարեաց Մա-
 րովգաք Բազղան որդի Բազղանայ ար-
 քայ Բարեկոնի հրովարաակս եւ պատաւ-
 րագս առ Եղեկիա , զի լուաւ թէ հի-
 13 ւանդացաւ Եղեկիա : Եւ ուրախ եղեւ
 ի նոտա Եղեկիա , եւ եցոյց նոցա³ զա-
 մենայն տունս նաքովթայ⁴ , զարձաթ
 եւ զտակի եւ զխունկս եւ զեզս անու-
 չաւնս , եւ զտունս անօթոց , եւ որ ինչ
 գտանէր ի գանձս նորա . եւ ոչ էր տեղի
 զոր ոչ եցոյց նոցա Եղեկիա ի տան իւրում
 եւ յամենայն իշխանութեան իւրում :
 14 Եւ ետուա Ետայի մարգարէ առ Եղե-
 կիա արքայ եւ ստէ ցնա , Զի՞նչ խօսե-
 ցան արքա պղտօքիկ , եւ ուստի⁵ եկին
 առ ըեղ . եւ ստէ Եղեկիա , Յերկրէ հե-
 15 աստանէ եկին առ իս ի Բարեկոնէ : Եւ
 ստէ , Զի՞նչ տեսին ի տան քում . եւ
 ստէ Եղեկիա , Զամենայն ինչ որ ի տան
 իմում էր՝ տեսին , եւ ոչ ինչ էր ի տան
 իմում զոր ոչ գուցի նոցա , այլ եւ ոչ ի
 16 գանձս իմ : Եւ ստէ Ետայի ցեղեկիա ,
 17 Լուր պրան Տեառն . Անա աւուրք գան ,
 եւ ապի ամենայն որ ինչ ի տան քում է ,
 եւ զոր ինչ գանձեցին հարք քո մինչեւ
 ցայտօր , եւ երթիցէ ի Բարեկոն , եւ մի
 ինչ⁶ մնացէ . զի բան է զոր խօսեցաւ
 18 Տէր . Եւ⁷ որդիք քո՝ որ Երանկոնն ի
 ըէն՝ ապցին , եւ եղիցին ներքինիք ի
 19 տան արքային Բարեկաղոց : Եւ ստէ
 Եղեկիա ցեսայի , Բարի է բանն Տեառն
 զոր խօսեցաւ . եւ ստէ , Յեղիցի խաղա-
 զութիւն եւ ճշմարտութիւն յաւուրս իմ :
 20 Եւ մնացորդք բանից Եղեկեայ եւ ամե-
 նայն զօրութիւնք նորա , եւ որպէս ա-
 րար⁷ զՋրարուզխանս եւ զՋրմուզն . եւ ամ
 ջուր ի քաղաքն , ո՞չ աւանիկ գրեայ են

ի զիրս բանից աւուրց թաղաւորացն
 21 Յուդայ : Եւ ննջեաց Եղեկիա ընդ հարս
 իւր , եւ թաղաւորեաց Մանասէ որդի
 նորա ընդ նորա :

ԳԼ . ԻԱ

1 Որդի երկաստանից ամաց Մանասէ ի
 թաղաւորել իւրում , եւ յիսուն եւ⁸ ինն
 ամ թաղաւորեաց յերուսաղէմ . եւ ա-
 2 նուն մօր նորա Եփսայի : Եւ արար չար
 սաւալի Տեառն ըստ զարչութեան ազ-
 3 գացն , զորս երարձ Տէր յերեսաց որդ-
 3 ւոցն Իսրայելի : Եւ զարձաւ շինեաց
 զարձաւունս զոր կարծանեաց Եղեկիա
 հայր նորա , եւ կանգնեաց⁹ զսեզանն
 Բահազու , եւ արար¹⁰ անտառ՝ որպէս
 արար Աքատը արքայ Իսրայելի . եւ եր-
 4 նից եւ ծառայեաց նոցա . Եւ շինեաց
 սեզանս ի տան Տեառն ,¹¹ որպէս ասաց
 Տէր , Յերուսաղէմ եղից¹² զաթոս իմ :
 5 Եւ շինեաց սեզանս ամենայն զօրու-
 թեան երկնից¹³ յամենայն սրահս՝ տանն
 6 Տեառն : Եւ անցոյց¹⁴ զորդիս իւր ընդ
 հօր , եւ հմայէր եւ հաւահարց լինէր .
 եւ արար վճուկս եւ դէսա . եւ յաճա-
 իտեաց աննել չար սաւալի Տեառն առ ի
 7 բարկացուցանելոյ զնա : Եւ եղ¹⁵ զգրօ-
 չեալս անասաաց ի տան Տեառն՝ , զոր-
 մէ ասաց Տէր ցԴուրիկ եւ ցՄազմոն
 որդի նորա , թէ Ի տանս յայտնիկ եւ յե-
 8 ըուսաղէմ զոր ընտրեցի յամենայն ցե-
 ղիցն Իսրայելի՝ եղից գանուս իմ յաւի-
 9 տեան , Եւ ոչ յաւելից չարմել զտան Իս-
 րայելի յերկրէզ զոր ետու հարց նոցա ,
 10 որք զգուշանայցին աննել զամենայն
 որ ինչ պատու իրեցի նոցա ըստ ամենայն
 պատու իրանին զոր պատու իրեաց նոցա
 11 ծառայ իմ Մոպսէս : Եւ ոչ լուան . եւ
 մուրեկոյց զնոտա Մանասէ աննել չար
 12 առաջի Տեառն՝ ասուել քան զազգան
 զորս սպականեաց Տէր յերեսաց որդ-
 13 ւոցն Իսրայելի :
 14 Եւ խօսեցաւ Տէր ի ձեռն ծառայից
 իւրոց մարգարէից՝ եւ ստէ , Փոխանակ
 զի արար Մանասէ արքայ Յուդայ զգար-
 չելիսց զայգոսիկ , զչարս ասուել քան
 զամենայն զոր արար Ամովսայցին ա-

¹ Եբբ. Եղեկէ յ-էլ-է- , կամ զարձցի գտասն աստի-
 ճանօք ² Եբբ. իջանել ³ Եբբ. զամենայն
 տուն իւր զգանկայի ⁴ Եբբ. մնացէ , ստէ
 Տէր ⁵ Եբբ. յորդուց քոց ⁶ Եբբ. Ո՞չ ապա-
 քէն եղիցի ⁷ Եբբ. զաւազանն

⁸ Եբբ. հինգ ⁹ Եբբ. սեզանս ¹⁰ Եբբ. Աշերա ,
 (Ելք ԼԳ . 13) ¹¹ Եբբ. զորմէ ¹² Եբբ.
 զանուն ¹³ Եբբ. յերկոսին գաւիթս ¹⁴ Եբբ.
 զորդի ¹⁵ Եբբ. զգրօշխալն Աշերայ զոր արար
 ի տանն ¹⁶ Եբբ. եթէ միայն ¹⁷ Եբբ. պատու

12 ասջի իմ, և յանցեալ Յուզա կոտօք
 իւրեանց, վասն այնորիկ այսպէս ասէ
 Տէր Աստուած Երայելի . Ահա ես ամեմ
 չարիս ի վերայ Երուսաղեմի և ի վերայ
 Յուզայ, զի ամենայնի որ լսիցէ՝ հնչեա-
 13 ցին երկրքին ականջք իւր . Եւ ձգեցից
 ի վերայ Երուսաղեմի զչափն Սամարիայ
 և զհչիռ ասանն Աքսարու, և ջնջեցից
 զԵրուսաղէմ որպէս շիշ մի ջնջեալ որ
 կործանիցի՝ ի վերայ երեսաց իւրոց :
 14 Եւ մերժեցից զմապորդս ժառանգու-
 թեան իմոց, և մասնեցից զնոսա ի ձեռս
 թշնամեացի րեանց, և եղիցին ի յափշ-
 տակութիւն և յաւարտամենայն թշնա-
 15 մեաց իւրեանց . Փոխանակ զի արարին
 չար ստաջի իմ, և բարկացուցանէին
 զիս յորէ յորմէ հեռէ հանր զնոսա յե-
 16 զիպատոս մինչև զյայտօր : Դա և արիւն
 անպարս և հնկ Մանասէ թագում յոյժ,
 մինչև ելից զԵրուսաղէմ ծայր ի ծայր .
 թող զմեզս իւր որովք մեկոյցն զՅու-
 զա ասնել չար ստաջի Տեանն :
 17 Եւ մապորդք բանից Մանասէի և
 ամենայն ինչ զոր արար և մեղք նորա
 զոր մեղաւ, ոչ աւանիկ զրեալ են ի
 զիրս բանից սուրբ թագաւորացն Յու-
 18 զայ : Եւ ննջեաց Մանասէ ընդ հարս
 իւր, և թագեցաւ ի պարտիզի տան
 իւրոց, ի պարտիզին Աղիայ, և թագա-
 ւորեաց Ամեն որչի նորա ընդ նորա :
 19 Որչի քսան և երկուց ամաց Ամեն
 ի թագաւորել իւրում, և յերկաստան
 ամ՝ թագաւորեաց յԵրուսաղէմ . և ա-
 նուն մօր նորա Մեսսակամբ՝ զուսար Ա-
 20 թուայ Յեաներագայ : Եւ արար չար ա-
 սաջի Տեանն, որպէս արար Մանասէ
 21 հայր նորա . Եւ զնաց յամենայն ճանու-
 սարհս յոր զնաց հայր նորա, և պաշ-
 տեաց զկուսս զոր պաշտեաց հայր նո-
 22 ըա, և երկիր եպոյ յոցս . Եւ եթող
 զՏէր Աստուած հորց իւրոց, և ոչ զնաց
 ի ճանապարհս Տեանն :
 23 Եւ զուժարեցան ծառայք Ամոնայ ի
 վերայ նորա, և սարսին զարքայ ի սանն
 24 իւրում : Եւ եհար ամենայն ժողովուրդն
 զամենայն զուժարեացն ի վերայ ար-
 քայի Ամոնայ, և թագաւորեաց ժո-
 ղովուրդ երկրին զՅափա սորզի նորա
 ընդ նորա :

25 Եւ մապորդք բանից Ամոնայ զոր ա-
 րար, ոչ աւանիկ զրեալ են ի վերս բա-
 26 նից սուրբ թագաւորացն Յուզայ : Եւ
 ննջեաց Ամոն ընդ հարս իւր, և թա-
 գեցին զնա ի զերեկամսի իւրում ի պար-
 տիզին Աղիայ . և թագաւորեաց Յափ-
 աիս որզի նորա ընդ նորա :

ԳԼ . ԻԲ

1 Որչի ամաց ութից Յոսիա ի թագա-
 ւորել իւրում, և երեսուն և մի ամ
 թագաւորեաց յԵրուսաղէմ . և անուն
 մօր նորա Յեղիզա, զուսար Ազայեայ ի
 2 Բասա թաթմայ : Եւ արար ուզգութիւն
 ստաջի Տեանն, և զնաց յամենայն ճա-
 նապարհս Դաւթի հօր իւրոց, և ոչ խո-
 ստրեցաւ յաջ կամ յաճեակ :
 3 Եւ եղև յամի ութուսաներորդի
 Յոսիայ արքայի Յուզայ, յամեանն
 և թիւերորդի՝ առաքեաց արքայ զՍա-
 փան զորզի Եսելիայ որպէս Մեսսակամայ
 4 զգոյրապիս ասան, և ասէ, երթ առ
 Քեզկիս քահանայ մեծ, զի ճուլեացն
 զարծաթն մտեալ ի սուն Տեանն, զոր
 ժողովեցին պահպանքն ճիշտով ի ժո-
 5 զավրդենէն . և առցեն զայն ի ձեռս
 զորժաւորաց զորժոյն զվերակացուս
 սանն Տեանն . և եսուն զգորժաւորս
 զորժոյն ի սան Տեանն, զորացուցանել
 6 զրեզկէկ ասան Տեանն, Յհիւսունս և
 զշինողս և զճարտարս, զնել փայտ և
 քարինս կոխածոյս՝ առ ի կազմելոյ ճար-
 7 դիկ ասան Տեանն՝ բոց ոչ ասնէին
 համար արժամոյն տուելոյ նոցա, քան-
 8 զի յաւատ զորժէին : Եւ ասէ Քեզկիս
 քահանայ մեծ զՍափան զպրապիս, Մա-
 տեանն օրինաց զաի ի սան Տեանն . և
 ես Քեզկիս զՍափան . և ընթերցա
 9 զայն : Եւ տարաւ առ արքայ զպատ-
 գամն, և ասէ, Չուլեցին ծառայք քո
 զարժամն գտեալ ի սան Տեանն, և ե-
 սուն զայն ի ձեռս զորժաւորաց զոր-
 10 ժոյն վերակացուայ ի սան Տեանն : Եւ
 խօսեցաւ Սափան զպրապիս ընդ ար-
 քայի և ասէ, Մատեանն մի ես զիս
 Քեզկիս քահանայ . և ընթերցա զայն
 11 Սափան ստաջի արքայի : Եւ եղև իւր-

1 Եբբ. յանջոյց զՅուզա կոտօք իւրովք 2 Եբբ. զոր ջնջեցէ որ և արձուսցէ 3 Եբբ. զԵրկուս ամս

4 Եբբ. պ-կ-ւ-է 5 Եբբ. համարեցի 6 Եբբ. զբանն 7 Եբբ. իւրամատ 8 Եբբ. զսունն 9 Եբբ. եկն Սափան զպրապիս առ արքայ, և պատմեաց արքայի զբանն 10 Եբբ. շանին

րե լուաւ արքայ զբանս մատենի օրի-
 12 նայն, պատառեաց զհանդերձս իւր : Եւ
 պատուէր ետ արքայ Քիզկեայ քահա-
 նայի, եւ Աքիկամայ որդւոյ Սափանայ
 եւ Աքորորայ որդւոյ Միքէի եւ Սափա-
 նայ զպրապեաի եւ Յասայեայ ծառայի
 13 արքայի, եւ ասէ, Երթաչք խնդրեցէք
 ի Տեառնէ վասն իմ եւ վասն ամենայն
 ժողովրդեանց եւ վասն ամենայն Յու-
 դայ, վասն բանից մատենից պակոյ այ-
 գորիկ. զի մեծ բարկութիւն Տեառն
 բորբոքեալ է ի մեզ. փոխանակ զի ոչ
 լուան հարք մեր բանից մատենից այգո-
 րիկ անել ըստ ամենայն զրելոց զմէնջ :
 14 Եւ զնայ Քիզկիա քահանայ եւ Աքի-
 կամ եւ Աքորովր եւ Սափան եւ Յա-
 սայիա՝ առ Ողգա մարդարէ՝ կրն Սեղ-
 զովմայ որդւոյ Թեկուայ, որդւոյ Արա-
 սայ պատուճակի. եւ նա բնակէր յե-
 րուսաղէմ ի Մասենա. եւ խօսեցան ընդ
 15 նմա : Եւ ասէ ցնոսա, Այսպէս ասէ Տէր
 Աստուած Իւրայելի. Ասացէք ցայսն որ
 16 առաքեաց զձեզ առ իս, Այսպէս ասէ
 Տէր. Ահա անեմ չարիս ի վերայ տեղ-
 ուղղ այգորիկ եւ ի վերայ բնակչաց զու-
 րա ըստ ամենայն բանից մատենիս զոր
 17 ընթերցաւ արքայ Յուդայ. Փոխանակ
 զի թողին զիս, եւ արկանէին խօսնկս
 աստուածոց օտարաց, զի բարկացուս-
 ցին զիս չործովք ձեռաց իւրեանց, եւ
 բորբոքեցի արմուտիւն իմ ի տեղւոյց
 18 յայցովիկ, եւ մի չիջցի : Եւ ցարքայ Յու-
 դայ որ առաքեաց զձեզ խնդրել զՏէր՝
 դայս ատաջիք. Այսպէս ասէ Տէր Աս-
 տուած Իւրայելի. Բանքն զոր լուար՝
 19 այս են : Փոխանակ զի կակղացաւ օրրա
 քո, եւ պատկասեցր յերեսաց Տեառն
 իրրեւ լուար զոր ինչ խօսեցաւ ի վե-
 րայ տեղւոյց այգորիկ եւ ի վերայ բնակ-
 չաց զորս յինել յապահանութիւն եւ
 յանէծս, եւ պատառեցր զհանդերձս
 քո, եւ լացիր առաջի իմ. եւ ես լուայ,
 20 ասէ Տէր : Վասն այգորիկ ես յաւելում
 զքեզ առ հարս քո, եւ ժողովեցիս ՝ ի
 տեղւոյց քում յերուսաղէմ : Եւ ոչ տա-
 ցին արչք քո զամենայն չարիսն զոր ես
 անից ի վերայ տեղւոյց այգորիկ :

ԳԼ . ԻԳ

1 Եւ զարձուցին արքայի ՚ զպատգամն
 զոր յղեաց արքայ. եւ ժողովեաց առ
 ինքն՝ զամենայն ձերս Յուդայ եւ զԵ-
 2 րուսաղէմի : Եւ ել արքայ ի տան Տեառն,
 եւ ամենայն այր Յուդայ եւ ամենայն
 բնակիչք Երուսաղէմի ընդ նմա, եւ քա-
 հանայք եւ մարդարէք եւ ամենայն ժո-
 ղովուրդն ընդ նմա ի փոքուէ մինչեւ
 ցմեծ. եւ ընթերցաւ յակամջս նոցա զա-
 մենայն բանս մատենի ուխտին զտեղոյ
 3 ի տան Տեառն : Եւ եկաց արքայ ՚ ի վե-
 րայ սեանն, եւ ուխտեաց ուխտ առա-
 ջի Տեառն երթալոյ զհետ Տեառն, եւ
 պահելոյ զպատուիրանս նորա եւ զվիա-
 յութիւնս նորա եւ զիրաւունս նորա յա-
 մենայն սրտէ եւ յամենայն անձնէ, կանգ-
 նել զբանս ուխտին զրելոյ ի մատենին
 յայնմիկ. եւ եկաց ամենայն ժողովուրդն
 4 յուխտի : Եւ պատուէր ետ արքայ Քիզ-
 կեայ քահանայի մեծի եւ քահանայիցն
 երկրորդաց եւ պահապանաց ՚ կչոցն՝
 հանել ի տաճարէն Տեառն զամենայն ա-
 նօթ զործեալ Բահաղու եւ ՚ անտառացն
 եւ զօրութեան երկնից. եւ այրեաց զնու-
 սա արտաքոյ Երուսաղէմի ՚ Սաղեմովթ
 Կեդրոնի, եւ արկ զմոխիր նոցա ի Բե-
 5 թէլ : Եւ ՚ այրեաց զքովմարիման՝ զոր
 տուեալ էր արքայից Յուդայ. եւ ար-
 կանէին խօսնկս ի բարձունսն եւ յամե-
 նայն քաղաքս Յուդայ եւ շուրջ զԵրու-
 սաղէմաւ, եւ զինկարկուան ՚ զարեգա-
 կան եւ զլուսնի եւ զաստեղաց եւ զամե-
 6 նայն զօրութեան երկնից եւ ՚ զանտառն
 ի տանէ Տեառն արտաքոյ Երուսաղէմի
 ի հեղեղատն Կեդրոնի. եւ այրեաց զայն
 ի հեղեղատն Կեդրոնի, եւ մանրեաց
 իրրեւ զփոշի, եւ ցանկեաց զմոխիրն նու-
 րա ի գերեզմանս որդւոց ժողովրդեանն :
 7 Եւ քակեաց զառն ՚ կաղեխիմացն որ ի
 տան Տեառն. յորում կանայքն անկա-
 8 նէին ՚ զպատմութեանս անտառացն : Եւ
 եհան զամենայն քուրմսն ի քաղաքացն
 Յուդայ, եւ սղծեաց զբարձունսն յոր
 արկանէին խօսնկս յուրմքն, ի Գարաայ

1 Եբբ. ամենայն զործովք 2) Եբբ. Վասն բանիցն զոր լուար, 3) Եբբ. ի գերեզմանն քում ի Խա- զաղութիւն

4 Եբբ. զպատգամն : Եւ յղեաց արքայ, եւ ժող- վեցին առ նա 5) Եբբ. սեմոց, Խա, զբանն 7) Եբբ. Աշերայ 8) Եբբ. Կաճաղու, զա- ղեղական 9) Եբբ. Եբարձ զքուրմսն 10) Եբբ. Բահաղու, զա- ղեղական 11) Եբբ. Եհան զԿեդրոն 12) Եբբ. Կե- ղեղատն (Տեա. Գ Թագ. ԺԻ. 24 : ԺԻ. 12) 13) Եբբ. զտուսն, այսինքն՝ զվարագոյրս Աշերայ

մինչև ցիբերարէէ . եւ քահկայ ¹գառն
 9 քաղաքին : Բայց ոչ կ'անէին քարոյր
 10 եզրարց իւրեանց . եւ պղծեաց զՏա-
 11 փեթ , որ ի ձոր որդեոցն ննովմայ , առ
 12 ի չածելոյ առն զուսար իւր կամ զգաւսար
 13 զորս ⁵եա արքայն՝ Յուզայ արեգական
 14 ի մուտս ասն Տեառն ⁶ի գանձանակի
 15 նաթանայ ներքինւոյ արքայի՝ որ ի Փա-
 16 րուրիմ . եւ զկառան արեգական այրեաց
 17 չորով : Եւ զսեղանս որ ի վերայ տանեաց
 18 յիւրնատանն , զոր պարսին թաղաւորք
 19 Յուզայ , եւ զսեղանս զոր արար Մա-
 20 նասէ յերկուս ⁸արանս տանն Տեառն ,
 21 քահկայ զայն արքայ եւ կործանեաց
 22 սնախ , եւ ընկէց զհոգն նոցա ի հեղե-
 23 զասն կեզրանի : Եւ եւ ⁹գառնն որ ի
 24 զիմաց Երուսաղեմի ընդ աջմէ յերկնն
 25 Մոսաթայ , զոր շինեաց Սողոմոն ար-
 26 քայ Իսրայելի Աստուրայ զարչելոյ
 27 Սիդոնացոց , եւ Քամովայ զպրտա-
 28 ւոյ Մովարայ , եւ Մեղարովայ զարչել-
 29 ւոյ որդեոցն Ամնայ , պղծեաց արքայ .
 30 Եւ խորտակեաց զարձանսն , եւ կատ-
 31 րեաց ¹¹գանատանն , եւ ելից զսեղանս
 32 յանսն որ ¹²ի Բեթէլ զբարձր՝ ,
 33 զոր արար Յիրայովամ որդի Նաբատայ
 34 որ մեղոյցն զԻսրայել , եւ զայն եւս
 35 սեղանս զբարձր կործանեաց եւ խոր-
 36 տակեաց զբարձրն նորա՝ , եւ մանրեաց
 37 իբրև զիոչի , եւ այրեաց գանատանն :
 38 Եւ հայեցաւ Յովսիա եւ ետես զգեղեղ-
 39 մանս որ ¹³ի քաղաքին , եւ տաքեաց
 40 եւ առ զսակերս ի գերեզմանացն եւ
 41 այրեաց ի վերայ սեղանոցն , եւ պղծեաց
 42 զնա րատ րանին Տեառն , զոր խօսեցաւ
 43 սպին Աստուծոյ ¹⁵մինչև կայր Յիրու-
 44 վամ ի սոնին ի վերայ սեղանոցն : Եւ

գարձոյց զաչս իւր ի գերեզման ասնն
 17 սիկ , եւ ասէ , Չինչ է կոթողն այն զոր
 18 ես տեսանեմ . եւ ասնն ցնա արք քա-
 19 զաքին , ¹⁶Այրն Աստուծոյ է՝ որ եկն ի
 20 Յուզայ , եւ բարրաւեցու զբանս ¹⁷զայ-
 21 ստիկ ի վերայ սեղանոցն Բեթէլայ : Եւ
 22 ասէ , Թոյց ատք զայն , մի սք չար-
 23 ժեացէ զսակերս նորա . եւ ¹⁸գառնն ու-
 24 կերբ՝ նորա ընդ սակերս մարդակէին ե-
 25 19 կելոյ ի Սամարիայ : Եւ եւ զամենայն
 26 ստունս բարձանց զոր ի քաղաքս Սա-
 27 մարիայ արարին թաղաւորք Իսրայելի
 28 առ ի բարկացուցանելոյ զՏէր՝ մերժեաց
 29 Յովսիա արքայ Իսրայելի . եւ արար ըստ
 30 ասննայն զործոցն զոր արար ի Բեթէլ :
 31 Եւ ձենձերեաց զամենայն քուրմս րար-
 32 ձանց , որ էին անդ , ի վերայ սեղա-
 33 նոցն , եւ այրեաց զսակերս մարդկան ի
 34 վերայ նոցա . եւ զարձաւ յերուսաղէմ :
 35 Եւ պատուէր եւս արքայ ամենայն
 36 ժողովրդեանն եւ ասէ , Արարէք զասիկ
 37 Տեառն Աստուծոյ ձերում , որպէս եւ
 38 զրեայ է ի մասննի ուխտիս սչսորիկ :
 39 22 Ձի ոչ եղև զատիկն այն յաւուրց զա-
 40 տաւորացն որ զտաէին զԻսրայել , եւ
 41 յաւուրս թաղաւորացն Իսրայելի եւ թա-
 42 23 զաւորացն Յուզայ : Բայց զի յուխու-
 43 տաներորդի ամի արքայի Յովսեայ եւ
 44 զեւ զատիկն այն Տեառն յերուսաղէմ :
 45 Եւ զվճուկս եւ զպէտս եւ զթերա-
 46 փիմս եւ զկուսնս եւ զամենայն զար-
 47 չելիմս եղեալս ի Յուզա եւ յերուսա-
 48 զէմ՝ երարձ Յովսիա , զի հաստատեացէ
 49 զբանս օրինացն զրեւոյց ի մասննին ,
 50 զոր եզիս Քեղկիս քահանայ ի ասն
 51 Տեառն : Եման նմա ոչ եղև յառաջ քան
 52 զնա թաղաւոր , որ զարձաւ առ Տէր
 53 յամենայն սրաէ իւրմէ եւ յամենայն
 54 անձնէ իւրմէ եւ յամենայն զօրութենէ
 55 իւրմէ , ըստ ամենայն օրինացն Մովսիսի .
 56 եւ յեա նորա ոչ եկայ նման նմա : Սա-
 57 կայն ոչ զարձաւ Տէր ի սրամտութենէ
 58 յարկութեան իւրոյ մեծէ զոր սրամտե-
 59 ցաւ յարկութեամբ իւրով ի վերայ Յու-
 60 զայ վասն զայրացութեանցն որովք զայ-
 61 27 յայոցոց զնա Մանասէ : Եւ ասէ Տէր ,
 62 Եւ եւ զՅուզա մերժեցից յերեսաց իմոց ,
 63 որպէս մերժեցի զԻսրայել , եւ մերժեցից

¹ Եբբ. գարձուս ² Եբբ. քաղաքին ³ Եբբ. սակայն ⁴ Եբբ. երարձ ⁵ Եբբ. տուեայ էր արարչից ⁶ Եբբ. առ սեղակն նաթանակերոյ ներքինւոյ ⁷ Եբբ. վերնատանն Աքազու ⁸ Եբբ. գաւիթս ⁹ Եբբ. զբարձուսն ¹⁰ Եբբ. Ապականութիւն ¹¹ Ապական , Աշբայ (Ելից ԼԳ. 13) ¹² Եբբ. ի Բեթէլ . զբարձուսն ¹³ Եբբ. սեղան եւ գործուսն կործանեաց , եւ այրեաց զբարձուսն ¹⁴ Եբբ. ի Լեբնն ¹⁵ Եբբ. գաւսն

¹⁶ Եբբ. Գերեզման է ասնն Աստուծոյ ¹⁷ Եբբ. զպստիկ զոր գուգ ասնս ¹⁸ Եբբ. թողին զսակերս

զքազաքզ զայդ զոր ընտրեցի գերուսազէմ՝¹ և գառնեզ զորմէ ասացի թէ Եղիցի անուն իմ անդ :

28 Եւ մնացորդք բանիցն Յովնայ և ամենայն ինչ զոր արար, ո՛չ աւանիկ գրեալ են ի զիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ : ²Յաւուրան յայնոսիկ՝² և Փարաւոն Նեքաւով արքայ Եգիպտացւոց ի վերայ արքային Ասորեստանեայց առ Եփրատ գետով . և վնաց Յովսիա արքայ ընդ առաջ նորա . և սպան զնա ի Մակեդով ի տեսանելն նորա զնա :

30 Եւ յարձին զնա ծառայք նորա ի Մակեդոյայ , և բերին զնա յերուսաղէմ , և լծակցին զնա ի զերեզմանի իւրում . և առ ժողովուրդ երկրին զՅովաքալ որդի Յովսեայ , և օժին զնա և լծաւորեցուցին զնա փոխանակ հօր իւրոյ :

31 Արդի քսան և ևերից ամաց էր Յովաքալ ի թագաւորել իւրում , և երիս ամիսս թագաւորեաց յերուսաղէմ . և անուն մօր նորա Ամիսայ զուսար Երեւ :

32 միայի ի Դորնայ : Եւ արար չար ստաճի Տեառն ըստ ամենայնի զոր արարին :

33 Նաքք նորա : Եւ ³փոխեաց զնա Փարաւոն Նեքաւով ի Ռեքզալմա յերկիրն Եմաթայ՝ չթալաւորել նմա յերուսաղէմ . և արկ հարկ երկրին հարեւր տալանդ արծաթոյ և ⁴տասն տալանդ՝ ոսկւոյ :

34 Եւ թագաւորեցոյց Փարաւոն Նեքաւով ի վերայ նոցա զԵղիակիմ որդի Յովսեայ ⁵արքայի Յուդայ՝ փոխանակ Յովսեայ հօր իւրոյ , և փոխեաց զանունն նորա Յովակիմ . և զՅովաքալ առ և ստրաւ :

35 յԵգիպտոս , և մեռաւ անդ : Եւ զարծաթն և զոսկին ևս Յովակիմ Փարաւոնի . սակայն ճշգով ⁶զրեցին զերկիրն տալ զարծաթն բանիւ Փարաւոնի . այք ըստ սակի իւրում ևսուն զարծաթ և զոսկի հանդերձ ժողովրդեամբ երկրին տալ Փարաւոնի Նեքաւովայ :

36 Արդի քսան և հինգ ամաց էր Յովակիմ ի թագաւորել իւրում , և մեասասն ամ թագաւորեաց յերուսաղէմ . և անուն մօր նորա ⁷Եղզամի՝ զուսար :

37 Յեղզեղայ՝ յիմովնայ Եւ արար չար առաջի Տեառն ըստ ամենայնի զոր արարին հարք նորա :

ԳԼ ԻԴ

1 Յաւուրս նորա և Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելոնի , և եզեւ նորա ծառայ Յովակիմ՝ ամա երիս , և գարձաւ վաւ :

2 Բանջեաց ի նմանէ : Եւ առաքեաց Տէր նմա զմեկնակաղէնան Քաղզէացւոց , և զմեկնակաղէնան Մովարայ , և զմեկնակաղէնան որդւոցն Ամոնայ , և առաքեաց զնոսա յերկիրն Հրէաստանի՝ սատակել զնա ըստ բանին Տեառն զոր խօսեցաւ ի ձեռն :

3 ծառայից իւրոց մարդարէից : Քանզի ⁸բարկութիւն Տեառն էր՝ ի վերայ Յուդայ մերժել զնա յերեսաց իւրոց վասն մեզաց Մամասէի , ըստ ամենայնի զոր :

4 արար , Եւ վասն անպարտ արեսանցն զոր ևհեղ և ևից զերուսաղէմ անպարտ արեսամբ . և ոչ կամեցաւ Տէր ցածնուր :

5 Եւ մնացորդք բանիցն Յովակիմայ և ամենայն ինչ զոր արար՝ ո՛չ աւանիկ գրեալ են ի զիրս բանից աւուրց թագաւորացն Յուդայ : Եւ ննջեաց Յովակիմ ընդ հարս իւր , և լծագաւորեաց Յովաքիմ որդի նորա ընդ նորա :

7 Եւ ոչ ևս յաւել արքայն Եգիպտացւոց ելանել յերկրէն իւրմէ . քանզի առ արքայն Բաբելոնի ի հեղեղատէն Եգիպտացւոց մինչև ցղեան Եփրատ՝ զամենայն ինչ որ էր արքային Եգիպտացւոց :

8 Արդի ամաց ութնասանից էր Յովաքիմ ի թագաւորել իւրում , և երիս ամիսս թագաւորեաց յերուսաղէմ , և անուն մօր նորա Նեաթալ զուսար Եգաւ :

9 մաթայ յերուսաղեմէ . Եւ արար չար առաջի Տեառն ըստ ամենայնի զոր արար հարք նորա :

10 Ի ժամանակի յայնմիկ ⁹և Նաբուքոդոնոսոր արքայ՝ Բաբելոնի յերուսաղէմ , և ևէն քաղաքն ի պաշարումն : Եւ և մեռաւ արքայն Բաբելացւոց ի քաղաքն , և ծառայք նորա պաշարեալ պահէին :

12 զնա : Եւ և Յովաքիմ արքայ Յուդայ առ արքայն Բաբելացւոց ինքն և ծառայք իւր , և մայք իւր և իշխանք իւր և ներքինիք իւր . և առ զնա արքայն Բաբելացւոց , յամի ութնորդի թագաւորութեան իւրոյ : Եւ ևհան զամենայն զսոճս սասնն Տեառն , և զգոճս տան :

¹ Եբբ. Յաւուրս նորա ² Եբբ. զնա կաւօք ³ Եբբ. կապեաց ⁴ Եբբ. տալանդ մի ⁵ ՅԵբբ. պֿլֿֿֿֿ ⁶ Եբբ. գրեաց ⁷ Եբբ. Զարիգայ զուսար Փաւգահայ

⁸ Եբբ. ըստ բանի Տեառն եզեւ ⁹ Եբբ. ելին ծառայք Նաբուքոդոնոսորայ արքայի ¹⁰ Եբբ. եկն Նաբուքոդոնոսոր

թագաւորին . եւ կոտորեաց զամենայն
 անօթս ոսկեղէնս զոր արար Սողոմոն
 արքայ Իսրայելի ի ամաճարին Տեառն ըստ
 44 բանին Տեառն : Եւ խաղացոյց զամե-
 նայն Երուսաղէմ եւ զամենայն իշխանս
 եւ զամենայն զօրս որս զօրութեամբ ի
 զերութեան , տանն հաղար զերեւոյց , եւ
 զամենայն զհիւստենս եւ ՚զգաճիճն , եւ
 ոչ ոք մնաց բաց յաղքատաց երկրին :
 15 Եւ խաղացոյց զՅովթաբին ի Բարելոն , եւ
 զմայր թագաւորին եւ զկանայս նորա
 եւ զներքինիս նորա . եւ զգորաւորս
 երկրին վարեաց ի վերութիւն յերուսա-
 16 զեմէ ի Բարելոն : Եւ զամենայն արս
 զօրութեան՝ արս եւ թն հաղար . եւ
 զհիւստենս եւ ՚զգաճիճն հաղար այր ,
 ամենեքին զօրս առք պատերազմօղք .
 եւ վարեաց զնոս արքայն Բարելոց :
 17 Ընց ի զերութեան ի Բարելոն : Եւ թա-
 գաւորեցոյց արքայն Բարելոց զՄովթ-
 թանիա ՚որդի նորա ընդ նորա . եւ եզ
 18 նմա անուն Սեղեկիա : Որդի քսան եւ
 մի ամաց էր Սեղեկիա ի թագաւորել
 իւրում , եւ մտաաւան ամ թագաւորե-
 աց յերուսաղէմ . եւ անուն մօր նորա
 Ամատեղ զուստր Երեմիայի ի Դորնայ :
 19 Եւ արար չար ատաջի Տեառն ըստ
 20 ամենայնի զոր արար Յոսիփմ : Զի
 սրտմտութիւն Տեառն էր ի վերայ Ե-
 րուսաղեմի եւ Յուզայ , մինչեւ ընկէց
 զնոսա յերեսաց իւրոց . եւ նշխանեաց
 Սեղեկիա զարքայն Բարելոց :

Գ Լ Ի Ժ

1 Եւ եղև յամին իններորդի թագաւո-
 շութեան նորա , յոմեանն ասաներորդի
 որ օր տանն էր ամայն , եկն նարու-
 քոցնոստր արքայ Բարելոնի եւ ամե-
 նայն զօրք իւր ի վերայ Երուսաղեմի ,
 եւ բանակեցաւ զնալու . եւ չինեաց
 2 չուրջ զնալու պարիսպ : Եւ պաշարե-
 ցաւ քաղաքն մինչեւ ցամն մտաաւո-
 3 ներորդ Սեղեկեայ արքայի , Եւ ցամին
 իններորդ . եւ սաստիկացաւ սով ի քա-
 զաքին , եւ ոչ զոյր հաց ժողովրդեան
 4 երկրին : Եւ իրամատեցաւ քաղաքն . եւ
 ամենայն արք պատերազմի ելին ար-
 տաքս զիշերի ի ճանապարհ՝ զբանն ի
 մէջ ՚պարսպայն , որ է առ պարտիզան
 արքունի . եւ Քաղզէացիքն պատուալ

էին չուրջ զքաղաքաւն . եւ զնաց ընդ
 5 ճանապարհն ՚Արարայ : Եւ սեղեցաւ
 զօրն Քաղզէացոց զհեա թագաւորին ,
 եւ հասին նմա ՚Արարով Ներքովայ .
 եւ ամենայն զօրք նորա ցրուեցան ի
 6 նմանէ . Եւ կալան զթագաւորն եւ ա-
 ծին տա արքայն Բարելոնի ի Ռերգաթա .
 եւ խօսեցաւ ընդ նմա զաստատանօք :
 7 Եւ զօրդան Սեղեկեայ սպան առաջի
 նորա , եւ զաշն Սեղեկեայ կուրացոյց ,
 եւ կապեաց զնա կապանօք եւ տարաւ
 ի Բարելոն :
 8 Եւ յամենանն ՚ինդերորդի , որ օր եւ թն
 էր ամայն , այն ամ ինն եւ ասաներորդ
 էր նարուքոցնոստրայ արքայի Բարե-
 րացեոց , եկն նարուքարդան զածապեա՝
 յանդիմանակայ արքային Բարելոնի յե-
 9 ղրուսաղէմ , Եւ այրեաց զտունն Տեառն
 եւ զտունն թագաւորին , եւ զամենայն
 տունս Երուսաղեմի եւ զամենայն ՚տունս
 10 այրեաց հրով : Եւ զպարիսպն Երուսա-
 զեմի չուրջանակի քակեցին ամենայն
 զօրքն Քաղզէացոց որ ընդ զածապե-
 11 սին : Եւ զաւելորդս ժողովրդեանն զմու-
 ցեալս ի քաղաքին , եւ զանկեայն յար-
 քայն Բարելոցեոց , եւ զայլ եւս խու-
 ժան ժողովրդեանն , խաղացոյց նա-
 12 ռուղարգան զածապեա : Եւ յաղքատաց
 երկրին եթող զածապեան յայլեզօրծս
 եւ յարդիւնապարս :
 13 Եւ զաիւնան պղնձիս ՚ղերկոսին որ ի
 տանն Տեառն , եւ զմեքենովթան , եւ
 զծովն պղնձի որ ի տանն Տեառն , խոր-
 տակեցին Քաղզէացիքն եւ բարձին
 14 զպղնձն նոցա ի Բարելոն : Եւ զամեն
 եւ զկատասայն եւ զտաշտան եւ զտուփս ,
 եւ զամենայն անօթս պղնձիս որովք
 15 պաշտէին՝ առին : Եւ զբուրուստան եւ
 զպիսեալան զարծաթիս եւ զոսկիս ան
 16 զածապեան . Եւ զաիւնան զերկոսին եւ
 զծովն զմի , եւ զմեքենովթան զոր ա-
 րար Սողոմոն ի տանն Տեառն . եւ ոչ
 զոյր կշիս պղնձոց ամենայն անօթոցն :
 17 Յովթուստան կանգնոց բարձրութիւն
 միոյ սեանն , եւ ՚րովթար պղնձի ի վե-
 րայ նորա . եւ բարձրութիւն միոյ քով-
 թարայ՝ յերից կանգնոց , եւ ՚սպաք , եւ
 նունաձեւք ի վերայ քովթարայն չուր-
 ջանակն՝ ամենայն պղնձի . ըստ նմին

1 Եբբ. զգարբինս 2 Եբբ. զՏօրեղբայր 3 Եբբ. երկուց պարսպայն

4 Այլեւն՝ զաշտան 5 Այլեւն՝ ի զաշտան 6 Եբբ. տուն մեծ 7 ՅԵբբ. պլուսե 8 Ալեւն-իէ՛ խոյակ 9 Ալեւն-իէ՛ վանդակակերպ

օրինակի եւ սեանն երկրորդի ի վերայ սարաքին :

- 18 Եւ առ գահճապետն զՍարայիա քահանայն դատաջինն , եւ զՍոփոնիա գերկրորդ քահանայ , եւ գերիս պահապանս
- 19 ¹Կշոոյն . եւ ի քաղաքէ անտի առ ներքինի մի , որ էր ոստիկան արանց պատերազմոցայ , եւ հինգ այլ ի յանդիմանակացոց արքայի գտելոց ի քաղաքին , եւ զլսրապետ իշխան զօրուն՝ զկարդիչ ժողովրդեան երկրին , եւ վաթսուն այլ այլ ի ժողովրդեան երկրին զպետալս ի քաղաքին :
- 20 Եւ առ զնոսա նարուզարզան գահճապետ , եւ տարաւ զնոսա առ արքայն
- 21 Իարեկոնի ի Ռերզաթա : եւ եհար զնոսա արքայն Բարեկոնի , եւ սպան զնոսա ի Ռերզաթա յերկրին Եմաթայ : Եւ գերեւ
- 22 ցաւ Յուզայ յերկրէ իւրմէ : Եւ զժողովուրդն որ մնաց ի Յուզայ՝ եթող նաւուքոզոնոսոր արքայ Բարեկոնի , եւ կացոց ի վերայ նոցա զԳոգոզիա սրգի Աքիկամայ որդւոյ Սափանայ :
- 23 Եւ լուան ամենայն իշխանք զօրուն նորա եւ արք նոցա եթէ կացոց ի վերայ արքայն Բարեկոնի զԳոգոզիա , եւ եկին առ Գոգոզիա ի Մասիա , Իսմայէլ որդի նաթանեայ եւ Յովնան որդի Կարէի , եւ Սարայիա սրգի Թանայեմայ ²Սոփիաթայի , եւ Յեզոնիա սրգի Մաքաթայ , ինքեանք եւ արք իւրեանց :
- 24 Եւ ³Երզուան Գոգոզեայ՝ ինքեանք եւ

արք իւրեանց՝ . եւ սսէ ցնոսա , Մի երկնէիք յասպատակէ Քաղղեացւոցն . նստարուք յերկրիս , եւ ծառայեցէք արքային Բարեկոնի , եւ բարի եղիցի ձեզ :

25 Եւ եղև յամենանն եւթներորդի եկն Իսմայէլ որդի նաթանեայ որդւոյ Եղիստամայ ի զաւակէ թողաւորաց , եւ տան այր ընդ նմա , եւ հարին զԳոգոզիա եւ մեռաւ , եւ զՀրեայնն եւ զՔաղղեացիան

26 որ էին ընդ նմա ի Մասիա : Եւ յարեաւ ամենայն ժողովուրդն ի վաքուէ մինչև զմեծ , եւ իշխանք զօրուն մաին յեղիպոսս . զի երկեան յիբեսաց Քաղղեացւոցն :

27 Եւ եղև յիբեսներորդի եւ յեթններորդի ամի գերութեանն Յովաքինայ արքայի Յուզայ , յամենանն երկոտասներորդի , ի քսան եւ յեթն ամսոցն , բարձրացոց Եւրմարովաք արքայ Բարեկոնի յամի թողաւորութեան իւրոյ՝ զզլուխ Յովաքինայ արքայի Յուզայ , եւ եհան զնա ի տանէ բանտին իւրոյ .

28 Եւ լսուեցաւ ընդ նմա քաղցրութեամբ . եւ արկ զաթուս նորա ի վերայ քան զաթուս թողաւորացն որ ընդ նմա ի Բարեկոնի : Եւ փոխեաց զհանդերձս բանտի նորա . եւ ուէր հաց հանապաղ առաջի նորա զամենայն աւուրս կենաց իւրոց :

30 Եւ ոտճիկ նորա ոտճիկ հանապաղորդ տուաւ նմա ի տանէ թողաւորին , համարով օր ըստ օրէ զամենայն աւուրս կենաց իւրոց :

¹Էբր. զրան ²Էբր. Նեոսոփիաթայի ³Էբր. երզուաւ Գոգոզիա , նոցա եւ արանց նոցա

⁴Էբր. ի ծառայից



ԳԼՈՒԻԲ ԱՌԱՋԻՆ ՄՆԱՅՈՐԴԱՅ

	ԳԼ. ՀՃՐ.		ԳԼ. ՀՃՐ.
ՅԱղամույ մինչեւ ցնոյ :	Ա. 1	Նմա յերուսաղէմ :	ԺԿ. 1
Ազգք երկք որդւոցն՝ Նոյի, որք յեւթա- նասունն եւ երկու լեզուս բամա- նեցան :	Ա. 4	Եհար Վաւիթ երկիցս զայլազգիսն :	ԺԿ. 8
Ի Աեմայ մինչեւ ցԱբրահամ, հանդերձ Աեմաւ մետասան ծնունդք :	Ա. 24	Իբեղգարայ, եւ հանդոյց ի խո- րանն զոր ինքն կազմեաց :	ԺԵ. 2
Որդիք Աբրահամու որ ի Հագարայ են՝ երկուսասան ազգ :	Ա. 28	Կարգեաց յՂեւտացիսն սաղմոսացո տաւի յապանակին յերուսաղէմ :	ԺԶ. 4
Նոյնպէս եւ որք ի Քետուրայ՝ երկուսա- սան ազգ :	Ա. 32	Կարգեաց քահանայս եւ ի Վարուան տաւի խորանին եւ սեղանոյն՝ զոր արարն Բեսէիթէլ :	ԺԶ. 39
Որդիք Եսաւայ վեշտասան ազգ. եւ Վո- սեցին քսանն եւ ութ ազգ :	Ա. 35	Ասաց Վաւիթ շինել տունն Աստուծոյ, եւ տաց Տէր. Աչ գու՝ այլ որդին քո շինեսցէ ինձ տունն, եւ գոհա- ցաւ ընդ այնք զՏեառնէ :	ԺԷ. 1
Ութ թնայ ուրք ասանն Եսաւայ :	Ա. 43	Սպան Վաւիթ զարբայն Մծքնայ, եւ տիրեաց մինչեւ ցԼիփրատ գետ, կո- տորեաց զԵրոզմ, եւ Տարկեաց զՎա- մասկոս :	ԺԸ. 1
Եւ յետ նոցա մետասան իշխանք :	Ա. 51	Սրբեաց Տեառն զանօթն ոսկեղէն, զոր տաւրեաց նմաբբայն Անտիոքու :	ԺԸ. 9
Երկուսասան որդիք Յակոբայ :	Բ. 1	Առաքեաց Վաւիթ միթարել զՀանն. եւ նորանախառակ զՏրեշտակն, ի լի շնամու լի ինչեկն՝ և յաղթեցաւ :	ԺԹ. 2
Տունն Յուդայ ի Փարեսայ մինչեւ ցՎա- ւիթ տասն ազգ :	Բ. 3	Զի յայլ եւ այլ պատերազմունս անկուն սկոյքն անճոռնիք :	Ի. 4
Զի ի տանէն Փարիսի է Բեսէիթէլ :	Բ. 18	Բարկու լի ետնն Աստուծոյ իրբե. ինքնա- յորդ որ գոհիծ բանարկունն, զրդեաց զՎաւիթ լի եւ զԼիւրայէլ, և ի լինելի Տարուածոց մասունն յԵս- րայէլ, եկաց ի միջի Վաւիթ բա- րեթոս :	ԻԱ. 1
Արդիք Վաւիթի մինչեւ ցԶորաբարէլ, եւ ի Զորաբարէլ մինչեւ ցԱնանիա, յորդ առուս զրեցուց զիրո այս :	Գ. 1	Եցոյց Տէր Վաւիթի զտեղի տաճարին զկայն Արամայ՝ ուր կանգնեաց սե- ղանն, ուր եւ ընկալաւ Աստուած զողջակէզնն Տրոզմ :	ԻԱ. 18
Ննունդք եղբորն Արարուս :	Գ. 9	Կացոյց Վաւիթ քարահաստ եւ հիւ- տունս եւ նիւթ տաճարին, եւ քա- ղալերեաց զԱղոմմոն եւ զԻշխանն ի գործն :	ԻԲ. 1
Կալուածք որդւոցն Շմաունի :	Գ. 24	Կացոյց Վաւիթ գաւառ պակտոս յՂեւ- տացոցն, եւ զարմանողս աղբա- տաց. և զի որդիքն Մովսիսի լի ուե- ցան յՂեւտացիսն :	ԻԳ. 3
Զի Սուրբն Վագաւ եւ Մանասիւս քա- ղացան կալով ընդ Աստուծոյ, եւ յուստագանց լինելն զերեաց զնոս Թագաթի փաղասար :	Ի. 1	Որդւոցն Ահարոնի Մաղակի ի տանէն Լե- զիազարու, եւ Աբիսիմար յԹա- մարայ. և որք ըստ իւրարանչիւր զատուցն ի պաշտանն :	ԻԿ. 1
Ի տանէն Կահաթու որդիք Ամրամայ Ահարոն եւ որդիք իւր քահանա- յապետք մինչեւ ցՅովսեփեկ որ գերի չոցաւ ի Վարէլուն :	Զ. 1	Իշխանք եւ գործապարք Վաւիթ յամե- նայն ցեղիցն :	ԻԼ. 32
Ի նոյն տանէն Կահաթու որդիք Սահա- այ Կորիս եւ որդիք նոցա յո- րոց Սամուէլ, եւ յորդուց նորա սաղմոսասացր կարգեալք ի Վաւ- իթայ. եւ այլք ի տանէն Փե- սանի եւ Մերարեայ :	Զ. 22	Պատուէր ետ Սողոմոնի պահել զօրէնս Աստուծոյ, եւ ետ նմա զհանդա- մանս շինուածոյ տաճարին :	ԻԿ. 1
Քաղաքքն սպասիւն լի եան, յորքն ա- կեցան Ղեւտացիքն :	Զ. 54	Զի նպատակեղէն իշխանքն ի նիւթ տա- ճարին :	ԻԼԿ. 6
Հանդէս որդւոցն Եսաւարու, Նեփթա- ղիմայ, Անտաէի, Եփրեմի, Ասե- րայ, Բենիամինի :	Լ. 1	Զի վասն այսորիկ գոհացաւ Վաւիթ, և յանձնեաց Տեառն զմողղորդքն :	ԻԼԿ. 10
Իէ ոչք էին զանպանք և իշխանք գոր- ծոյ տաճարին :	Խ. 10		
Ասհն Սաւուղայ եւ որդւոց նորա :	Խ. 35		
Թագաւորեաց Վաւիթ ի Քերթոն, եւ տա զԼիբուսաղէմ :	ԺԱ. 1		
Քաջու լիւրք զօրականացն Վաւիթի :	ԺԱ. 10		
Սողոմոնեաց ի Քերթոն յամենայն ցեղիցն՝ երեքհարեւր երեսունն եւ եւթն հազար եւ չորեք հարեւր, եւ լիա- գաւ որեցուցին զՎաւիթ ամենայն Լիւրայի :	ԺԲ. 23		
Եւ զի ոչ սուտիք բարձին զտապանակն՝ սպան Աստուած զվաք քահանայ Բարկուսան լի ինչ Քիրամայ ընդ Վաւ- իթի, եւ վասն որդւոցն որ ծնան	ԺԳ. 1		

ՄՆԱՅՈՐԴԱՑ

ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա

1 ԱՊՐԱՄ, Աէթ, Ենոփ, (2) Կայնան, 3 Մազաղայէլ, Յարեզ, Ենոփք, 4 Մաթուսազա, Կամէք, Եոյ. 1 Արզիք Եոյի, Աէթ, Բամ, Յարեթ:

5 Արզիք Յարեթի Գամեր, Մազաղ, Մազայի, Յազիլան, 2 Եղիտան, Թորէլ, 6 Մասոք եւ Թիրաս: Եւ որզիք Գամերայ Ասարանայ եւ Հոբիաթ եւ Թորէլ գոմս: Եւ որզիք Յազիլանայ եզրաս եւ Թարսիս, Կրասայիք եւ 3 Հոտայիք:

8 Եւ որզիք Բամայ Բուշ եւ Մետուրեմ, Փուզ եւ Բանան: Եւ որզիք Բուշայ Սարա, եւ Եւրա եւ Սարաթա եւ Հակոմա եւ Սարաթաթա: Եւ որզիք 10 Հակոմայ Սարա եւ Դեզան: Եւ Բուշ ծնաւ զԵհրայիթ. սա սկսաւ լինել Զակայ:

11 3 Երարոյ ի վերայ երկրի: Եւ Մետարեմ ծնաւ զԼութիլիմայիս եւ զՂարիլիմայիս եւ զԱնտիմայիս եւ զԵհրայիթ: 12 Եւ զՊատարսիմայիս եւ զԲազադնիլիմայիս, սասի ելին անտի Փղշապիք, 13 եւ զԲաթիթորիմայիս: Եւ Բանան ծնաւ զՍիդոն զանդրանիկ իւր եւ 5 Քանու: 14 Եւ զՅարուսայիս եւ զԱմալք: 15 Եւ զԿիրզեսայիս եւ զԿիւեսայիս 16 եւ զԱրաւկիսիս եւ զԱսնուայիս եւ զԱրարայիս եւ զԱմարուայիս եւ զԱմաթայիս:

17 Արզիք Սեմայ Եզամ եւ Ասուր եւ Արփաքսազ եւ Լուզ եւ Արամ, եւ 1 որզիք Արամայ 2 Հուս եւ Եմազ եւ Գաթեր եւ Մասոք: Եւ Արփաքսազ ծնաւ 3 զԿուլիման, եւ Կայնան ծնաւ 4 զԱզա, եւ Սազ ծնաւ զԵրեթ: Եւ Երեթայ ծնան երկու որզիք, անունն միումն Փազէզ, զի յաւարս Եորա բամանեզաւ երկիր. եւ անունն եզրոր Եորա Յեկտան:

20 Յեկտան ծնաւ զԵզիմովկայ եւ զՍազափ

21 եւ զԱսարսովթ եւ 6 զԿեղրուրան եւ զԵ- 22 զԷլ եւ զԴեկզան եւ զԴերազ եւ զԱ- 23 բիմէլ եւ զՄարա եւ 7 զՍուփիր եւ զԵ- 24 լիլա եւ զՅովրար. ամենեքեան սոքա որ- 25 զիք Յեկտանայ:

24 8 Արզիք Սեմայ Եզամ եւ Ասուր եւ 9 Արփաքսազ, 10 Կայնան, Սազա, Երեթ, 11 Փազէզ, Ռազա, Սերուզ, Եաքսուր, 12 Թարայ, Արամ, Եա ինչն է Արրանամ: 13 Եւ որզիք Արրանամ Բաանակ եւ Բու- 14 մայէլ: Արքա են 9 ծնունդք Բամայիլ, 15 10 Եարէովթ եւ Կեզար եւ Ազրէլ, 16 Մարսան, Մամա եւ Դամա, Մասէ, 17 Բուզայ, Թաման, Բուր, Եափէս եւ 18 Կեզմա. սոքա են որզիք Բամայիլ:

19 Եւ որզիք Բետուրայ Զարժին Արրա- 20 նամ, 10 եւ ծնաւ Եմա 11 զԵմրան եւ 21 զՅեկտան եւ զՄազան եւ զՄազիան եւ 22 զՅեարակ եւ զԱմալք: Եւ որզիք Յեկ- 23 տանայ Սարա եւ Դեզան. 1 եւ որզիք 24 Դեզանայ Թագուէլ եւ Արզիլէլ եւ Ա- 25 սուրիլ եւ Լատուսիլ եւ Լատիլիս:

26 Եւ որզիք Մազիանայ Գեփա եւ Ափեր 27 եւ Ենոփք եւ Արիզա եւ Եզզա. ամենե- 28 քեան սոքա որզիք Բետուրայ:

29 Եւ ծնաւ Արրանամ զԲաանակ. եւ որ- 30 զիք Բաանակայ Ետա եւ 11 Յակոր: Ար- 31 զիք Ետաայ Եզիլազ եւ Հոտաւէլ եւ 32 Յէուս եւ Եզզամ եւ Կարիս Արզիք Ե- 33 զիլազայ Թեման եւ Ալմար, Սափա, Գաթում եւ Կեռէզ, եւ 12 Թամար Զարժ 34 Եզիլազաւ ծնաւ Եմա զԱմալքէլ, Եւ որզիք 35 Ռազուէլիլ Եաքէթ, Զարեհ, Սու- 36 մէ եւ Մոզլ: Եւ որզիք Աէլրայ Դով- 37 տան, Սարազ, Սերէզոն, Անա, Դեսան 38 եւ Ասար եւ Դիտան: Եւ որզիք Դով- 39 տանայ Բուր եւ Էման, եւ քոյր Դով- 40 տանայ Թամաս: Արզիք Սովրազայ

1 Յէբ. Գ-Կ-Ե 2 Յէբ. Յաւան 3 Յէբ. Յաւա- նայ 4 Կ-Լ, Դոքայիք 5 Յէբ. զԲեա

6 Յէբ. զՅարթ եւ զՅոփորամ 7 Յէբ. զԱլփիր 8 Յէբ. Աէթ 9 Յէբ. ծնունդք Եորա. անդ բանիկն Բամայիլի 10 Յէբ. Եա ծնաւ 11 Յէբ. Կարսէլ 12 Յէբ. Թամար եւ Ամալքէլ

Գովզամ եւ Մանաքաթ եւ Գերայ եւ Սովփա եւ Յովնան . եւ որդիք Սերե-
 41 գոնի՝ Այիա եւ Անա : Եւ որդիք Անայ՝ Դեսոն՝ Եւ Եղիբոմա զուսար Անայի՝ .
 եւ որդիք Դեսոնի՝ Ամբան եւ Եսերամ եւ
 42 Յեթրան եւ Քառան : Եւ որդիք Ասա-
 րայ՝ Բաղտան եւ Յղուկամ եւ Յովի-
 կամ եւ Ուկամ՝ . եւ որդիք Դիսանայ՝
 Ալս եւ Առան :

43 Եւ այսօրիկ թագաւորք նոցա որք
 թագաւորեցին յեղովմ , յառաջ քան
 զթագաւորել թագաւոր որդւոցն Իսրա-
 յելի . Յագակ որդի Սեփովբայ՝ . եւ ա-
 44 նուն քաղաքի նորա Կենաբա : Եւ մե-
 ռաւ Կաղակ , եւ թագաւորեաց փո-
 յանակ նորա Յորար , որդի Զարեհի ի
 45 Բոսորայ : Եւ մեռաւ Յորար , եւ թա-
 գաւորեաց փոխանակ նորա Ասովմ յերկ-
 46 րէն Թեմնացւոց : Եւ մեռաւ Ասովմ , եւ
 թագաւորեաց փոխանակ նորա Ադայ ,
 որդի Բադազայ , որ եհաք զՄազկամ ի
 գաշտին Մոխարայ , եւ անուն քաղաքի
 47 նորա ՅԳէթեմ : Եւ մեռաւ Ադայ , եւ
 թագաւորեաց փոխանակ նորա Սամաս
 48 ի Մարեկայ : Եւ մեռաւ Սամաս , եւ
 թագաւորեաց փոխանակ նորա Սաւուզ
 49 յԹորովթայ , որ առ Գեանդերրն էր : Եւ
 մեռաւ Սաւուզ , եւ թագաւորեաց փո-
 յանակ նորա Բագաննոն որդի Աքորով-
 50 րայ : Եւ մեռաւ Բագաննոն՝ որդի Ա-
 քորովբայ՝ , եւ թագաւորեաց փոխանակ
 նորա Ադայ , եւ անուն քաղաքի նորա
 Փոզով , եւ անուն կնոջ նորա Մեսա-
 բեէլ՝ զուսար Մատրադայ⁶ :

51 Եւ մեռաւ Ադայ . եւ այս են իշխանք
 եղովմայ . իշխան Թամնա , իշխան
 52 Գովզա , իշխան Յեթամ , իշխան Ողի-
 բամաս , իշխան Հելա , իշխան Փենուիլ ,
 53 իշխան Կենէլ , իշխան Թեման , իշխան
 54 Գարարա , իշխան Մադեղիթիմ , իշխան
 Զարոյն . սոքա են իշխանք եղովմայ :

ԳԼ Բ

1 Եւ այս են անուանք որդւոցն Իսրա-
 յելի . Ռուբէն , Շմաւոն , Դեւի , Յուզա ,
 2 Իսաքար , Զարուղոն , Իան , Յովսէփ ,
 Բենիամին , Նեփթաղիմ , Գադ , Ասեր :
 3 Եւ որդիք Յուզայ , էր եւ Աւնան եւ

Աեզովմ . երեք սոքա ծնան նմա ի զսու-
 րէն Շաւայ Բանանացւոյ . եւ Նէր սու-
 զրոնիկն Յուզայ չար առաջի Տեանն ,
 4 եւ սպան զնա : Եւ Թամար նաւ նորա
 ծնաւ նմա զՓարէս եւ զԶարա . ամե-
 նեքին սոքա որդիք Յուզայ հինգ :
 5 Որդիք Փարեաի՝ Ենթոմ եւ Յամուէլ :
 6 Եւ որդիք Զարայի՝ Զամրի եւ Նիթան եւ
 Եման եւ Քաղքազ եւ Դարա , ամենեք-
 7 հան հինգ : Եւ որդիք Փարմայ՝ Աքար
 խափանիչն Իորայելի որ անորինեցաւ ի
 8 նզովմն : Եւ որդիք Նիթանայ՝ Ագարիա :
 9 Եւ որդիք Ենթոմայ որք ծնան նմա Յե-
 րամէլ եւ Սիլբամ եւ Աքորէլ եւ Արամ՝ :
 10 Արամ ծնաւ զԱմինադար , եւ Ամի-
 նադար ծնաւ զՆասսոն զիշխան սամն
 11 Յուզայ . Եւ Նասսոն ծնաւ զՍազմոն ,
 12 Սազմոն ծնաւ զԲոսս , Եւ Բոսս ծնաւ
 13 զՈւլբեդ , եւ Ուլբեդ ծնաւ զՅեսաէ , Եւ
 Յեսաէ ծնաւ զանդրանիկն իւր զԷզիար ,
 եւ զԱրինադար երկրորդ , եւ զՍամաս
 14 երրորդ , Եւ զՆաթանայել չորրորդ , եւ
 15 զՀասազայի հինգերորդ , Եւ զԱսովմ
 16 յերրորդ , եւ գեաւթիմ եւթներորդ : Եւ
 քորք նոցա Շարուհեա եւ Արիդեա . եւ
 որդիք Շարուհեայ՝ Արեստ եւ Յովսր
 17 եւ Ասայէլ , երեք : Եւ Արիդեա ծնաւ
 զԱմեսայի . եւ հայր Ամեսեայ՝ Յեթրի
 Իամայելացի :

18 Եւ Բագէք որդի Ենթոմայ¹⁰ առ զԱղուբա
 կին իւր , եւ ծնաւ զԵրիմովմ՝ . եւ սո-
 քա են որդիք նորա . Յովասար եւ Սով-
 19 բար եւ Սոնա : Եւ մեռաւ Աղուբա , եւ
 առ իւր Բագէք զՅփրայթ , եւ ծնաւ
 20 նմա զՈւլր : Եւ Ուլր ծնաւ զՈւլրի , եւ
 Ուլրի ծնաւ զԲեսիլիէլ :
 21 Եւ յետ այսօրիկ հմուտ Եսրոմ առ
 զուսար Մաքիրայ հօրն Գաղասադայ , եւ
 նա առ զնա . եւ ինքն էր ամաց վաթ-
 22 սուն . եւ ծնաւ նմա զՍեգուբ : Եւ Սե-
 գուբ ծնաւ զՅայիր . եւ էին նորա քսան
 23 եւ երեք քաղաքք ի Գաղասադ : Եւ առ
 զԳիսուբ եւ զԱրամ , զԷզան Յայիրայ
 ի նոցանէ , զԿանաթ եւ զաւանս նորա
 վաթսուն քաղաք , զամենեսան որդ-
 24 ւոցն Մաքիրայ՝ հօրն Գաղասադու : Եւ
 յետ մեռանելոցն Եսրոմայ՝ Էկն Բաղէր

¹ Յէբր. գ-լ-տ-ե ² Յէբր. Զաւանս եւ Յասական ³ Յէբր. Բագա որդի Բեդորայ ⁴ Յէբր. Բաղա ⁵ Յէբր. Աւեթ ⁶ Յէբր. յե-թ-ի-ա-ե-լ-ւ-ւ , զուսար Սեգա-արայ : ⁷ Յէբր. Մաքաբ

⁸ Յէբր. Էղեւ էր ⁹ Յէբր. Բամ (Արամ) եւ Գե-զուբա (Գաղէք) . (տե՛ս Հօր. 18. 42.) ¹⁰ Յէբր. ծնաւ յԱղուբայ կնոջէ իւրմէ եւ յԵրիմովմայ ¹¹ Յէբր. Արդուլ

յեփրաթա . եւ կին Եսրոմայ Արիա ծնաւ նմա զԱսդովմ զհայր Թեկեուայ :

25 Եւ էին որդիք Յերեմիելի անդրանկանն Եսրոմայ , անդրանիկ Հոսամա եւ Բաանն եւ Առանն եւ Ասովմ ⁹ Կեղայր նու-

26 րա՞ն : Եւ էր կին այլ Յերեմիելի , եւ ա- նունն նորա Ատարա . նա է մայր Ունու-

27 մայ : Եւ էին որդիք Հոսամայ անդրանկանն Յերեմիելի՝ Մասա եւ Յամին եւ

28 Ակոր : Եւ էին որդիք Ունումայ՝ Սամայի եւ Յազայի . եւ որդիք Սամայայ՝ Նա-

29 դար եւ Արիսուլ : Եւ անուն կնոջն Ա- բիսուբայ ² Աբիսա . եւ ծնաւ նմա զԱ-

30 զարայ եւ զՄովզիզ : Եւ որդիք Նազա- զայ Սազայ եւ Ափիեմ . եւ մեռաւ Սա-

31 զազ , եւ ոչ զայր նորա որդի : Եւ որ- դիք Ափիեմայ՝ Յեսսի . եւ որդիք Յես-

32 սեայ՝ Սովսանն . եւ որդիք Սովսանայ՝

33 Ազայի : Արդիք ³ Ազայեայ՝ Աբիսամա եւ՝ Յեթեեր եւ Յովնաթամն . եւ մեռաւ Յե-

34 թեր , եւ ոչ զայր նորա որդի : Եւ որդիք Յովնաթամայ՝ Փաղէթ եւ Չազա . սոքա են որդիք Յերեմիելի :

34 Եւ ոչ զայնն Սովսանայ ուսանորք , այլ դասերք միայն . եւ Սովսանայ էր ծառայ Եգիպտացի , եւ անուն նորա Յովբազ :

35 Եւ ետ Սովսանն զգուստրն իւր Յովբեզիլ ծառային իւրում կնուծեան , եւ ծնաւ

36 նմա զՅեթեթի : Եւ Յեթեթի ծնաւ զՆա-

37 թան , եւ Նաթանն ծնաւ ⁴ զԱբեզ , եւ Աբեզն՝ ծնաւ զՍիվղայ , եւ Սիվղայ ծնաւ

38 զԱվրեզ , եւ Ավրեզ ծնաւ զՅէու , եւ

39 Յէու ծնաւ զԱզարիաս , եւ Ազարիաս ծնաւ զԲեզզէս , եւ Բեզզէս ծնաւ զՅեզէ-

40 ասա , եւ Եզէասա ծնաւ զՍոսոմէ , եւ

41 Սոսոմէ ծնաւ զՍազզոււմ , եւ Սազզոււմ ծնաւ ⁵ զՅեքոնիաս , եւ Յեքոնիաս՝ ծնաւ զԵզիստան :

42 Եւ որդիք Քաղերայ եղբոր Յերեմիելի՝ ⁶ Մարիա անդրանիկ նորա . սա է հայր Զրիայ . եւ ⁷ որդիք Մարիայ հոր՝

43 Քեքոնի : Եւ որդիք Քեքոնի՝ Կորխ եւ

44 Թափսի եւ Հսոկոմ եւ Սեմաս : Եւ Սեմաս ծնաւ զՀոսամ զհայրն ⁸ Յերու-

45 կայ , եւ Յերակոյաս՝ ծնաւ զՍազամա :

46 Եւ որդիք նորա Մաովն , հայր Բեթսուլ-

46 րայ : Եւ Գեփա հարձ ⁹ Քաղերայ՝ ծնաւ

47 զԱռան եւ զՅովսա եւ զԳեզուէ ⁹ : Եւ որդիք Ադայի՝ Հոազեմ եւ Ովթամ եւ Գեսոմ եւ Փաղէա եւ Գեփա եւ Սա-

48 զափ : Եւ հարձն Քաղերայ Մովբա՝ ծնաւ

49 զՍեեր եւ զԹաքնա : Եւ ծնաւ ¹⁰ Սա-

զայ զհայրն Մաղենայ , եւ Սաուզ զհայրն Մաքամենայ , եւ զհայրն Բաա-

զայ . եւ գուստրն Քաղերայ Աւքա՞ն :

50 Սոքա էին որդիք Քաղերայ . ¹¹ որդիք Ովրայ անդրանկանն Եփրաթայ՝ Սովբազ

51 հայր Կարիաթարիմայ , Սազմոն հայր ¹² Բեթզեմանայ , հայր Բեթզեմ , Արի՞հայր

52 Բեթեզուրայ , եւ էին որդիք Սովբա-

53 զայ հորն Կարիաթարիմայ՝ ¹³ Արա , Ե- սի , Ամոնիթ , Թիւմուփայէ եւ Հոիա-

թիւար , Եթազիմ եւ Եփիթիմ եւ Սա-

մաթիմ , Հեմասարին՝ . ի նոցանէ կինն

54 Սարաթայիք եւ Եսթաուդազիք : Որ- դիք Սազմոնի՝ Բեթզեմեմ եւ Եետոփա-

թի , Ասարաթիմ , աուն Յովբայ եւ ¹⁴ Կես-

55 մանաթայ , Եսարայի՞ . Տոհմ զսարայն որք ընտկէին ի Գարէս , ¹⁵ Ազայթիմ եւ Սամաթիթիմ , Սովիաթիթիմ՞ . սոքա են ¹⁶ աունք որք եկին յեմաթայ , ¹⁷ հորսան Հահբայ :

Գ Լ . Գ

1 Եւ սոքա են որդիք Դաւթայ որք ծնան նմա ի Քերրոն . անդրանիկն Ամոնն՝ յԱ- քիւտովմայ Յեզրայելացւոյ . եւ երկ- յորդն ¹⁸ Դազուիա՝ յԱբիզովմ կարմե-

2 զացւոյ . երրորդն Արիսուզմ , որդի Մուլ- քայ՝ գասր Թողմայ թաղաւորին Գե- սուբայ . չորրորդ Ազմոնիա՝ որդի Ազի-

3 թայ . Հինգերորդ Սափաաիաս՝ յԱրիսա- զայ . վեցերորդ Յեթեթամ , յեզզայիմ այ կնոջէ

4 իւրմէ : ¹⁹ Սոքա ծնան նմա ի Քերրոն . եւ թաղաւորեաց անդ զԵթեթն ամ եւ զվեց ամու . եւ երեսուն եւ երիս ամս թաղաւորեաց յերուսաղէմ :

5 Եւ սոքա ծնան նմա յերուսաղէմ , Սամաա , Սովբաբ , Նաթան , եւ Սոզոմոն

¹ Բէր . Ա. Քիա ² Բէր . Աբիհայիլ ³ Բէր . Ազայայ , եղբոր Սամայայ , ⁴ Բէր . զՉաբազ . (37) Եւ Չաբազ ⁵ Բէր . զՅեկամիա , եւ Յե- կամիա ⁶ Բէր . Մեսա ⁷ Բէր . որդի Մարեսա էր հայր ⁸ Բէր . Յարկաամայ , եւ Հսոկոմ

⁹ Բէր . Գեզուէ . եւ Առան ծնաւ զԳեզուէ ¹⁰ Բէր . զՍազայն Մազամենայ , եւ զՆաուա զհայրն Մաքարենայ եւ զհայր Քաքաայ . եւ գուստրն Քաղերայ էր Աքա ¹¹ Բէր . որդւոյ ¹² Բէր . Բեթզեմանայ , Հարեփ ¹³ Բէր . Հարեմ , կէս Մանաթայիմացւոյ . (53) Եւ տոհմք Կարիաթարի- մայ՝ Յեթեթայիք , Փութայիկ , Սամաթայիք , Մասարազիք . ¹⁴ Բէր . կէս Մանաթայ եւ Սա- րազիք ¹⁵ Բէր . Թարգայիմայիք , Սամաթայիք , Սովիաթայիք ¹⁶ Բէր . Կեսեցիք ¹⁷ Բէր . ի հորէ ¹⁸ Բէր . Գանիէլ ¹⁹ Բէր . Սոքա վեցեքին

3 Ի Բերաբեռեացոյն ի զստերէ Ամիելի .
 (Եւ Յերասար եւ Եղիսամա եւ Եղիփաւ .
 դայ . եւ եղև ի զոչել արանց Յուդայ ,
 եւ ⁴Տէր եհար զՅերորովամ եւ զԻսրա-
 16 յէլ առաջի Արիայ եւ Յուդայ : Եւ փա-
 խեան որդիքն Բարայելի յերեսաց Յու-
 դայ , եւ մահացաւ զնոսա ⁵Տէր ի ձեռս
 17 նոցա : Եւ եհար ի նոցանէ Արիա եւ զօրն
 նորա հարուածս մեծամեծս , եւ անկան
 վիրաւորք յԻսրայելէ ⁶հինգ հազար՝ արք
 18 զօրաւորք : Եւ նկուճ եղին որդիքն Բա-
 րայելի յաւուր յայնմիկ , եւ զօրացան
 որդիքն Յուդայ . վասն զի յուսացան ի
 19 Տէր Աստուած հարցն իւրեանց : Եւ հա-
 լածեայ Արիա զՅերորովամ , եւ ան ի
 նմանէ քաղաքս , զԲեթէլ եւ զԵղզ
 նորա , եւ ⁶զԱնա եւ զԳեղզ նորա , եւ
 զԵփրան եւ ⁷զԿատերս նորա , եւ զԲեա
 20 եւ զԳեղզ նորա՝ : Եւ ոչ եւս գոյր զօ-
 րութիւն Յերորովամայ զամենայն ա-
 ւուրս Արիայ . եւ եհար զնա Տէր եւ
 վախճանեաց :
 21 Եւ զօրացաւ Արիա , եւ ան իւր կա-
 նայս չորեքտասան , եւ ծնաւ ուստերս
 քանն եւ երկուս եւ զստերս վեշտա-
 22 անս : Եւ մնացեալ բանքն Արիայ եւ
 զորք նորա եւ խօսք նորա , ահա գրեալ
 են ի վերս մարգարէին Ազղովայ :

ԳԼ . ԺԴ

1 Եւ ⁸մուտ Արիա ընդ հարս իւր , եւ
 թաղեցին զնա ի քաղաքին Դաւթի . եւ
 թապաւորեաց Ասա որդի նորա փոխա-

նակ նորա . յաւուրս Ասայի հանդար-
 2 տեայ երկիրն Յուդայ ամս տասն : Եւ
 արար բարի եւ ուղղութիւն առաջի Տեառն
 3 Աստուծոյ իւրոյ . եւ ի լաց արար զու-
 յանս օտարացն եւ գբարձուանս , եւ
 խորտակեաց զարձանս , եւ այրեաց
 4 զանառանս : Եւ սասց ճՅուդա խնդրել
 զՏէր Աստուած հարցն իւրեանց , եւ
 5 աւնել զօրէնս եւ զպատուիրանս : Եւ
 ի լաց արար յամենայն քաղաքացն Յու-
 6 դայ ⁹զսեղանս եւ զկուսս . Եւ խաղաղա-
 ցան քաղաքք պարսպաւորք՝ յերկրին
 Յուդայ . վասն զի խաղաղացաւ երկիրն ,
 եւ ոչ պոյր ուստեք նմա պատերազմ
 յամեն յայնուսիկ . վասն զի հանդոյց զնա
 7 Տէր . Եւ սոչ ճՅուդա , Շինեպուք զքա-
 ղաքան զայնուսիկ , եւ արացուք պա-
 րիպս եւ աշտարակս եւ դրուճս եւ Նիդս
 10 որով տիրեմք երկրիս՝ . զի զոր օրինակ
 խնդրեցաք զՏէր Աստուած մեր , ¹¹եւ նա
 խնդրեաց զմեզ՝ եւ հանդոյց զմեզ շուր-
 8 ջանակի , եւ ¹²յաջողեաց մեզ՝ : Եւ եղև
 Ասայի զօր զինակրայ որք բաճնային վա-
 հանս եւ նիւղակս յերկրին Յուդայ՝ երեք
 հարեւր հազար . եւ յերկրին Բենիամինի
 սուպարաւորք եւ ազեղնաւորք՝ երկերուր
 եւ ¹³վաթսուն հազար . ամենեքեանս նո-
 քա տատերազմողք զօրութեամբ :
 9 Եւ Եւ ի վերայ նոցա Զարեհ Եթէուվ-
 պայի զօրութեամբ հազար հազարք եւ
 երեքհարեւր կասօք , եւ կին մինչև ի
 10 Մարիաս : Եւ քնաց Ասա ընդդէմ նո-
 րա , եւ ճակատեցաւ պատերազմն ¹⁴ի
 11 ձորն՝ ի հիւսիսոյ Մարիայ : Եւ զոչեաց
 Ասա առ Տէր Աստուած իւր , եւ սոչ
 Տէր , ոչ տկարանայ քեզ սպրեցուցա-
 նել բազմօք եւ սակաւօք . զօրացո
 զմեզ , Տէր Աստուած մեր , վասն զի ի
 քեզ յուսացաք , եւ անուամբ քով եկաք
 ի վերայ բազմութեանս այսորիկ . Տէր
 Աստուած մեր , մի յաղթահարեսցէ զքեզ
 12 մարդ : Եւ եհար Տէր զԵթէուվպայինս ա-
 13 յնա ¹⁵Յուդայ , եւ փախեան Եթէուվպա-

¹ Եբբ. մերոյ ² Եբբ. ազգեցութեան ազգ առնել
 ընդդէմ ձեզ որդիք Բարայելի , մի՛ պատերազ
 միք ընդ Տեառն Աստուծոյ հարցն ձերոց , զի ոչ
³ Եբբ. զկնի կողմանէ նոցա ⁴ Եբբ. Աստուած ⁵ Եբբ.
 հինգ հարեւր հազար ⁶ Եբբ. զմեասնա ⁷ Եբբ.
 զԳեղզ նորա ⁸ Եբբ. ննջեաց

⁹ Եբբ. գբարձուանս եւ զպատերս տրեգականս . եւ
 հանգեաւ թագաւորութիւնն առաջի նորա :
 (6) Եւ շինեաց քաղաքս պարսպաւորս ¹⁰ Եբբ.
 մինչդեռ երկիրս առաջի մեր է ¹¹ Եբբ. խնդ-
 րեցաք ¹² Եբբ. շինեցին եւ յաջողեցան ¹³ Եբբ.
 ութսուն ¹⁴ Եբբ. ի ձորն Սեփաթայ առ Մա-
 րիայ ¹⁵ Եբբ. Ասայի եւ առաջի Յուդայ
¹⁶ Եբբ. ի Գերարս

պաղիքն մինչեւ ոչ մնայ ի նոցանէ ապրեակ . քանզի խորտակիցան առաջի Տեառն եւ առաջի զօրութեան նորա , եւ
 14 կողպակցին աւար բազում : եւ կործանեցին ¹զգեզս նոցա չարջ զՔեզուրաւն , վասն զի եզեն արձախրք ի Տեառնէ ի վերայ նոցա . եւ առին աւար զամենայն քաղաքս նոցա , քանզի աւար
 15 բազում եզեւ նոցա : Այլ եւ զվրանս աւանտոցն նոցա ²առին : եւ զմիտանին կոտորեցին , եւ առին ³խաչնա բազումս եւ ուզաս , եւ գարձան յերուսաղէմ :

ԳԼ . ԺԵ

1 **Ե**ւ Աղարիսս որդի Ազազայ եզեւ ի վերայ նորա Հոգի ³Տեառն . եւ ել ընդ առաջ Ասայի եւ ⁴ամենայն Յուգայ եւ Բենիամինի եւ ասէ , Լուարուք ինձ , Ասա եւ ամենայն Յուգա եւ Բենիամին . Տէր ընդ ձեզ , վասն լինելոյ ձերոյ ընդ նմա . եւ արդ եթէ խնդրէք զնա , գտցի ձեզ , եւ եթէ թողաք զնա ,
 3 թողցէ զձեզ : եւ աւարք բազումք յիւրայելի եզին ⁵ ոչ Աստուած ճշմարիտ , եւ ոչ քանանայ որ ցուցանէր , եւ ոչ օրէնք : ⁶Որ գարձոյց զնոսա ի Տէր Աստուած Իսրայելի , եւ զտաւ ի նոսա : Ի ժամանակին յայնմիկ ոչ զոյր խաղաղութիւն այնոցիկ որք մասնէին եւ որք եւ լանէին . վասն զի արձախրք ⁶ ի Տեառնէ անկան ի վերայ ամենեւո՞ն ընակը
 6 չոց գաւառացն . եւ պատերազմէր ազգ ընդ ազգի եւ քաղաք ընդ քաղաքի : վասն զի Աստուած պարճելցոյց զնոսա ամենայն նեղութեամբք : եւ արդ գուք զօրացարուք , եւ մի բոլին ձեռք ձեր . քանզի գան վարձք զօրոց ձերոց :
 8 Եւ ⁷ի լսել զբանս պայտօսիկ եւ զմարգարէութիւն Աղարեայ մարգարէի , զօրացաւ եւ եւնան արտաքս զամենայն զպզճութիւնսն յամենայն երկրէն Յուգայ եւ Բենիամինի , եւ ի քաղաքացն զորս կալաւ ի լերինն Եփրեմի , եւ արար նաւակատիս սեղանոյն Տեառն որ
 9 էր առաջի տաճարին Տեառն . եւ եկեղեցացոյց զՅուգա եւ զԲենիամին , եւ զԵմայ եւ զորանցու իսանն ընդ նմա , յեփրեմայ եւ ի Բանաւէ եւ ի Շմաւանէ .

վասն զի յաւելան ի նա բազումք յիւրայելէ ի տեսանին նոցա ⁸ թէ Տէր Աստուած նորա ընդ նմա է : եւ ժողովեցան յերուսաղէմ յամենան երբորդի , ի նոցիտասաներորդում ամի թաղաւորութեանն Ասայի . եւ ⁹եզեն Տեառն յաւարն յայնմ յաւարացն զոր ամին զուարակս եւ թն նարեւր եւ ոչխարս
 12 եւ թն նազար : եւ ⁹եզ ուխտ ¹⁰ խնդրել զՏէր Աստուած նորցն իւրեանց յամենայն սրտէ եւ յամենայն անձնէ . եւ ամենայն որ ոչ խնդրիցէ զՏէր Աստուած Իսրայելի մեոցի յերիտասարգէ մինչեւ
 14 ի ձերն եւ յանէ մինչեւ ցկին : եւ երգուան Տեառն ¹⁰ մեծածախն եւ եղջերեաւ ¹¹ փողովն : եւ ուրախ եզեւ ամենայն Յուգա վասն երզմանն , զի յամենայն սրտից իւրեանց երգուան , եւ ամենայն կամօք խնդրեցին զնա . եւ զտաւ նոցա եւ նանդոց զնոսա Տէր չարջանակի :
 16 եւ զՄաաքա զմայրն իւր ի ըսոյ մերձեաց ¹¹ , վասն զի էր Աստարտեայ պաշտօնեայ . եւ խորտակեաց զիւրանս եւ
 17 այլեայ ի նեղեցաւորն Կեղրոնի : Սակայն ¹² զբարձուան ոչ բարձին , եւ աւակաւին եւ օ կայր ի Յուգա եւ յիսրայէլ . ըսոյց սիրան Ասայի եզեւ ¹³ յի զամենայն
 18 աւարս կենաց իւրոց : եւ ասարաւ ի ներքս զսրբութիւնսն ¹⁴ Գաթի նոր իւրոյ , եւ զսրբութիւնս Տեառն ¹⁵ Աստուծոյ ,
 19 արձաթ եւ ոսկի եւ սպասաւ եւ սպաւերազմ ոչ զոյր ⁶ նմա մինչեւ յերեսներորդ եւ նինչերորդ ամ թագաւորութեանն Ասայի :

ԳԼ . ԺԶ

1 **Ե**ւ յերեսներորդ ¹⁵ ութերորդ ամի թագաւորութեանն Ասայի ել Բաստ արքայ Իսրայելի ի վերայ Յուգայ , եւ չինեաց զԽամա , ¹⁶ ոչ տալով նա Ասայի արքայ
 2 յի ¹⁶ Յուգայ : եւ առ Ասա ոսկի եւ արծաթ ի գանձուց տանն Տեառն եւ ի ասնէ թագաւորին , եւ աւարեաց առ ¹⁷ որդին Ազիկայ ¹⁷ արքայն Աստուծոց որ ընակէր
 3 ի Գամասկոս , եւ ասէ , ¹⁸ Իբր ուխտ ի մէջ իմ եւ քո , եւ ի մէջ նոր իմոց եւ

¹ Իբր . զամենայն քաղաքս չարջ զՔեզուրաւն ² Իբր . Տարին , եւ առին ³ Իբր . Աստուծոյ ⁴ Իբր . ասէ ցնա ⁵ Իբր . եւ ի նեղութեան իւրեանց գարձան ի Տէր Աստուած Իսրայելի եւ խնդրեցին զնա ⁶ Իբր . գ-ւ-ւ-ւ ⁷ Իբր . իւրեւ Ասայի

⁸ Իբր . զենին ⁹ Իբր . եզեն ¹⁰ Իբր . ձայնիւ մեծու եւ ցնծութեամբ եւ փողով եւ շփորու ¹¹ Իբր . յեղեմ յաւել , ի արկնութեան ¹² Իբր . բարձուք ոչ բարձան յիսրայելէ ¹³ Իբր . ողջ , չաւ , կատարեալ ¹⁴ Իբր . Տօր իւրոց եւ զսրբութիւնս իւր ի տունն ¹⁵ Իբր . վեցերորդ ¹⁶ Իբր . շտոյ երթ եւ եկ առ Ասա արքայ ¹⁷ Իբր . Բենագագ ¹⁸ Իբր . Է

հօր քո . ահաւազիկ առաքեցի քեզ ար-
 ծաթ եւ ոսկի , եկ ¹եւ մերժեալ չինէն
 զհաստ արքայ՝ Իսրայելի , եւ գնասցէ
 4 ի բաց յինէն : Եւ լուսւ ²որզին Ազերայ
 արքայ Ասորոյ՝ , եւ առաքեաց զիշ-
 խանս զօրացն իւրոյ ի քաղաքն Բա-
 րայելի . եւ եհար զԱւան եւ զԴան եւ
 զԱբելմային , եւ զամենայն ³չուրջ զգա-
 5 շառաւն՝՝ նեփթաղիմայ : Եւ եղև իւ-
 րև լուսւ Բասա , ի բաց ⁴արձակեաց՝
 ոչ եւս յինել զԴանա . եւ զաղարեաց
 6 գործն նորա՝ : Եւ Ասա արքայ ամ զու-
 մինայն Յուզա , եւ առ զբարինս Ռա-
 մայ եւ զփայտանորա զոր յինեաց Բասա ,
 եւ յինեաց նորք զԳաբա եւ զՄասփա :
 7 Ի ժամանակին յայնմ եկն Անանիաս
 մարդորէ առ Ասա արքայ Յուզայ եւ
 աւէ ցնա , Վան զի յուսոցար դու յար-
 քայն Ասորեաց եւ ոչ յուսոցար ի Տէր
 Ասատուած քո , յաղարայ անորիկ արդե-
 ցաւ զոր արքային ⁵Իսրայելի ի ձեռաց
 8 քոց : Ո՞չ ապաքին եկէ՞սդ արցիք եւ Լի-
 ւայիք էին զօրք յազու՞ք . ⁶համար-
 ձակութեամբ բազում հեծելովք յոյժ
 եկին՝ , եւ ի յուսայն քո ի Տէր՝ մատ-
 9 նեաց գնաս Տէր ի ձեռք քո . Վան զի
 աչք Տեան հոյն յամենայն երկիր զօ-
 րացուցանել յամենայն ի սրտից զնա՝ .
 եւ արդ աղիտոցար յայցմիկ յայնմ հե-
 10 աւ եկիցի քեզ սրտակրօղմ . Եւ սրտմու-
 ցաւ Ասա մարդիկն եւ եզ զնա ի բան-
 սի . Գան զի բարկացաւ յաղարայ
 նորիկ . եւ ⁷ժանտացաւ Ասա ի ժողո-
 վուրցն՝ ի ժամանակին յայնմ :
 11 Եւ ահա բանք Ասայի առաջինք եւ
 զերջինք՝՝ զրեպ են ի զիրա թողաւորայն
 12 Յուզայ եւ Իսրայելի : Եւ արտոցան Ա-
 սայի ոտք յերաներորդի եւ յիններորդի
 ամի թագաւորութեանն իւրոյ , եւ յոյժ
 հիւանդացաւ . եւ ի հիւանդանայն ի բուժ-
 ոչ խնդրեաց զՏէր , ալ խնդրեաց լմիշխո :
 13 Եւ ննջեաց Ասա ընդ հարս իւր , եւ վախ-
 ճանեցաւ ի քառամներորդի եւ յառաջ-
 նում ամի թագաւորութեանն իւրոյ :
 14 Եւ թաղեցին զնա ի չիրովն զոր փորեաց
 իւր ի քաղաքին Դաւթի , եւ ընկողմա-

նեցուցին զնա ի գահոյն , եւ լցին խնկովք
 եւ ազգի ազգի իւզովք իւզեփեցոյ , եւ
⁹արարին նմա յուշարկութիւն մեծ՝ յոյժ :

ԳԼ ԺԷ

1 Եւ թագաւորեաց Յովսափատ որդի
 նորա փոխանակ նորա . եւ զօրացաւ
 2 Յովսափատ ի վերայ Իսրայելի : Եւ ետ
 զօրս յամենայն քաղաքն Յուդայ յա-
 մուրս , եւ կոցոյց իշխանս ¹⁰յամենայն
 քաղաքն՝՝ Եփրեմի , զորս ան արքայ
 3 Ասա հայրն նորա : Եւ եղև Տէր ընդ
 Յովսափատայ . վասն զի գնաց ի ճա-
 նապարհ հօր ¹¹իւրոյ յառաջինս , եւ ոչ
 4 խնդրեաց ¹²զկուսն , Ալ զՏէր Ասատուած
 հօր իւրոյ խնդրեաց , եւ ի պատուիրանս
¹³հօրն իւրոյ՝՝ գնաց . եւ ոչ էին իրբեւ-
 5 զԻսրայելի գործք նորա : Եւ ¹⁴յաջողե-
 ցաւ թագաւորութիւնն՝ ի ձեռս նորա .
 եւ ետ ամենայն Յուզա ընծայ Յովսա-
 փատայ , եւ եղևն նորս մեծութիւն եւ
 6 փառք բազումք . Եւ արքայացաւ սիրտ
 նորա ի ճանապարհս Տեան . եւ ալ եւս
 ելարձ գրարձաւանդակն , եւ զան-
 սատան յերկրէն Յուդայ :
 7 Եւ յերբորդ ամի թագաւորութեանն
 իւրոյ առաքեաց զիշխանս իւր ¹⁵եւ զօր-
 փո զօրտ թեանցն՝՝ զԼիզբայ եւ զՉա-
 քարիտս : Եւ զԹովթանայէլ եւ զՄիքիտս՝
 8 ուսուցանել ի քաղաքն Յուզայ . Եւ ընդ
 նոսա Դեւապիլն Սամուիաս եւ Նա-
 թանաս եւ Չարդիաս եւ Ասիէլ եւ Սե-
 միրամովթ եւ Յովնաթան եւ Ազմիրաս
¹⁶եւ Տարսամբատ՝ Դեւապիլք . եւ ընդ
 նոսա եղիսամա եւ Յովրամ քահանայք :
 9 Եւ ուսուցանէին զՅուզա , եւ ընդ նոսա
 զիրք օրինայն Տեան , եւ անցանէին
 ընդ քաղաքն Յուզայ , եւ ուսուցանէին
 զժողովուրցն :
 10 Եւ եղևն արձաւորք ի Տեանէ ի վերայ
 թագաւորաց երկրին սըշուրջ զՅուզայիւ ,
 եւ ոչ պատերազմէին ընդ Յովսափա-
 11 տայ : Եւ յալլազեացն բերէին Յովսա-
 փատայ ընծայո ¹⁷ոսկի եւ արծաթ եւ
 սրտաբաղա՞ս , եւ Արտաղիքն ամէկն
 նմա խոյս յոյխարայ եւ թն հարդ եւ
 եւ թն հարիւր , եւ նոխապս եւ թն հա-

¹ Եբր. եզժ գուբա քո ընդ Բասայ արքայի ² Եբր. Բենադադ արքայի Ասայի ³ Եբր. շտեմարանս քաղաքացն ⁴ Եբր. եկաց ի շինելոյ զԴանա . եւ Գաղարեցոյ զգործս իւր ⁵ Եբր. Ասորոց ⁶ Եբր. կառար եւ հեծելովք բազում յոյժ ⁷ Եբր. զամենայն որ կատարեայ է սրտիւ առ նա ⁸ Եբր. շարլարեաց Ասա ի ժողովորենէն

⁹ Եբր. այրեցին նմա խունկազու՞մ ¹⁰ Եբր. յերկրին Յուդայ եւ ի քաղաքն ¹¹ Եբր. իւրոյ Դաւթի ¹² Եբր. զԵհազիմ ¹³ Եբր. նորս ¹⁴ Եբր. հաստաեաց Տէր զթագաւորութիւնն ¹⁵ Եբր. զԵհնհայիլ եւ ¹⁶ Եբր. եւ Տուբիաս եւ ¹⁷ Եբր. եւ արծաթ ի հարկ

12 զարե եւ եւթն հարեւր : եւ երթալով Յովսափատ մեծանայր ի բարձրութիւն . եւ շինեաց 'տունս ի Հրէաստանի քա-

13 ղաքս ամուրս" : եւ զործք բազումք եւ զենն նորա ²ի Հրէաստանի . եւ արք զօրաւորք պատերազմօքք ուժով յերու-

14 տաղէմ : եւ այս էր թիւ նոցա բաս տանց տոհմիցն իւրեանց . ի Յուդայի հազարապետք՝ Եփնաս իշխան , եւ ընդ նմա սրգիք զօրաւորք զօրութեամբ հրեք հու-

15 բեւր հազար . եւ ³ընդ նոսա՝ Յովնան իշխան , եւ ընդ նմա երկերիւր ութսուն

16 հազար . եւ ³ընդ նմա՝ Ամասէաս որդի Զօքարիայ յօժարեալս ի Տէր , ընդ նմա

17 ի Բենիամինէ զօրաւոր ուժով Եզրիազա , եւ ընդ նմա ազեղնաւորք եւ ⁴պորսա-

18 ւորք երկերիւր հազար . եւ ³ընդ նոսա՝ Յովզաբազ , եւ ընդ նմա հարեւր եւ ութսուն հազար զօրաւորք ի պատե-

19 թաղմի : Սօքս էին պաշտօնեայք արքային , իսց յայնցանէ զօրս եզ արքայ ի քաղաքսն ամուրս յամենայն Հրէաստանի :

Գ . ԺԸ

1 Եւ եզեւ Յովսափատայ մեծութիւն եւ այլ եւս , եւ փառք բազում . եւ արար 2 խնամութիւն ընդ տանն Աքաբառու : եւ էջ ի կատարել ⁵տարւոյն առ Աքաբար ի Սամարիա . եւ եզեն նմա Աքաբառ ոչխարս եւ զուարակս բազումս , եւ զօրուն որ ընդ նմա . եւ ⁶սիրէր զնա՝ կաննել

3 ընդ նմա յՌամովթ Գաղատայ : եւ սոէ Աքաբառ արքայ Իսրայելի ցՅովսափատ արքայ Յուդայ , Գառն ընդ իս յՌամովթ Գաղատայ . եւ սոէ ցնա , Որպէս ես՝ նոյնպէս եւ զու , եւ որպէս զօրք քս՝ զօրք իմ ընդ քեզ ի պատերազմին :

4 Եւ սոէ Յովսափատ ցարքայն Իսրայելի , ⁷Մնդրեսուք այսօր զՏէր : եւ մուժովեաց արքայն Իսրայելի զմարդարէմն ⁸Իսրայելի արս չորեք հարեւր , եւ սոէ ցնոսա , եթէ Երթալ յՌամովթ Գաղատայ ի պատերազմ , եւ կամ թէ գուզարեցից . եւ սոնն , ել , եւ յաջողեացէ

6 Աստուած ի ձեռս արքայի : եւ սոէ Յովսափատ , Ո՛չ զոյ աստ եւ այլ եւս մար-

զարէ Տեառն , եւ ինդրեսուք ի նմա- 7 նէ : եւ սոէ արքայն Իսրայելի ցՅովսափատ , է մեւս եւս այր առ ի ինդրել զՏէր նովաւ . եւ ես ասեցի զնա , վասն զի ոչ մարդարէանայ ինձ ի բարիս , ⁹եւ զի ամենայն սոււրբ իւր եմ" ի չարութիւն . նա է Միքիաս որդի Յեմիկայ : եւ սոէ Յովսափատ , Մի խօսեցիլ արքայ այդպէս :

8 Եւ կոչեաց արքայն Իսրայելի ներքինի մի եւ սոէ , Վազլապակի ած զՄիքիաս որդի Յեմիկայ : Եւ արքայն Իսրայելի եւ Յովսափատ արքայ Յուդայ նստէին իւրաքանչիւր ոք յսթժոռ իւրում զզեզեալ պատմուճանս . եւ նստէին ¹⁰յընդարձակ զրանն Սամարիայ . եւ ամենքեան մարդարէքն առաջի նոցա մար-

10 զարէանային : եւ արար իւր Սեպեկիտա որդի Բանանու եզջեւրս երկաթեղէնս , եւ սոէ , Այսպէս սոէ Տէր . Սօքօք հար-

11 յեւ զԱսորիս մինչեւ վաստանեցես : եւ ամենքեան մարդարէքն նոյնպէս մարդարէանային եւ սոէին , եւ յՌամովթ Գաղատայ , եւ յաջողեցիս . եւ սոցէ Տէր ի ձեռս արքայի :

12 Եւ հրեշտակն որ չոգաւ կոչել զՄիքիաս , խօսեցաւ ընդ նմա եւ սոէ , Ահա խօսեցան մարդարէքն իբրեւ ընդ մի բերան յաղագս արքայի բարիս . եզիցին եւ քս բանք իբրեւ զմիոյ նոցա , եւ խօ-

13 սեցիս բարիս : եւ սոէ Միքիաս , Կենդանի է Տէր զի զոր ինչ ասացէ Աստուած ¹¹յիս՝ զայն խօսեցայց :

14 Եւ եկն առ արքայ . եւ սոէ ցնա արքայ , Միքիաս , եթէ երթալ յՌամովթ Գաղատայ ի պատերազմ , եթէ գաղարեցից : եւ սոէ , Ել եւ յաջողեցիս , եւ

15 սոցին ի ձեռս ձեւ : եւ սոէ ցնա արքայ , Քանիցս անգամ երգինեցուցից զքեզ , զի մի այլ ինչ խօսեցիս ընդ իս , բայց զճշմարտութիւն յանուն Տեառն :

16 Եւ սոէ , Տեսի ցրուեալ զԻսրայել ի լեւրինս՝ իբրեւ գոյխարս որոց ոչ գոյ հուժիւ . եւ սոէ Տէր , Ոչ գոյ գոցա իշխանս . զարձցի իւրաքանչիւր ոք ի սունն

17 իւր խաղաղութեամբ : եւ սոէ արքայն Իսրայելի ցՅովսափատ , Ո՛չ սոսցիլ քեզ թէ ոչ մարդարէանայ նա վասն իմ բա-

18 թիս , այլ չարութիւն : եւ սոէ , Ոչ այդպէս . լուարուք զրան Տեառն . տեսի

¹Եբբ. ի Հրէաստանի բերդս եւ քաղաքս շտեմարանայ ²Եբբ. ի քաղաքս Հրէաստանի ³Եբբ. բաս նմանէ ⁴Եբբ. սոսպարաւորք ⁵Եբբ. ամաց ⁶Եբբ. հաւանեցոյց ⁷Եբբ. ինդրեա ⁸Յեբբ. պ-ի-ս-ի

⁹Եբբ. այլ զամենայն սոււրբ իւր ¹⁰Եբբ. ի հրապարակի ի մուտս ¹¹Եբբ. իմ

զՏէր զի նստէր յաթոռն իւրում , եւ ա-
 մնայն զօրք երկնից մերձ կային յաջ-
 19 մէ նորա եւ յահեկէ . եւ ստէ Տէր , Ո՞-
 խարեացէ զԱքաաբ արքայ Իսրայելի ,
 զի ելցէ եւ անկցի յիւամովթ Գաղաադ .
 եւ ստեն , ոմն այսպէս , եւ ոմն այն-
 20 պէս . եւ ել հոգի եկաց առաջի Տեսան
 եւ ստէ , Ես խարեցից զնա : եւ ստէ
 21 Տէր , ի՞նչ . եւ ստէ , Ելից եւ եզէց հո-
 գի սուտ ի բերան ամնայն մարդարէիցն
 նորա . եւ ստէ , Ոպեսցես եւ կարաս .
 22 ցես , ել եւ արա այդպէս : եւ արդ ա-
 հա եզ Տէր հոգի սուտ ի բերան մար-
 դարէիցդ քոց այդոցիկ , եւ Տէր խօսե-
 ցաւ վասն քո չարիս :
 23 Եւ մատուցեալ Սեղեկիա որդի Քա-
 նանու եհար զճնօսն Միքիայի , եւ ստէ
 ցնա , Որով ճանապարհաւ անց Ոգի
 Տեսան զինեւ , եւ խօսեցաւ ընդ քեզ :
 24 Եւ ստէ Միքիա , Անա տեսցես յաւուրն
 յայնմիկ , յորում մասնիցես շտեմարան
 ի շտեմարանէ թաքչիլ :
 25 Եւ ստէ արքայն Իսրայելի , Առէք
 զՄիքիա եւ դարձուցէք զգա առ Սե-
 մար իշխան քաղաքիս , եւ առ Յովա
 26 Յիլան որդի արքայի , եւ սասցէք ,
 այսպէս ստէ արքայ . Տուք զգա ի սուրն
 քանդին , եւ կրկնէ հաց նեղութեան ,
 եւ ջուր նեղութեան արդէ , մինչեւ ի
 27 գաւնայն իմու՛մ խաղաղութեամբ : եւ
 ստէ Միքիա , Եթէ գաւնայով դարձ-
 ցիս խաղաղութեամբ , ոչ խօսեցաւ ընդ
 իս Տէր . լուարուք ժողովուրդք ամե-
 նեքեան :
 28 Եւ ել արքայն Իսրայելի եւ Յոխու-
 փատ արքայ Յուգայ յիւամովթ Գա-
 29 զաադ : եւ ստէ արքայն Իսրայելի ցեօվ-
 ստիաա , Յաձկեա զիս՝ եւ մտից ի սա-
 տերազմն , եւ զու զգեցիր զպատմու-
 ճանն իմ՝ եւ ծածկեցաւ արքայն Իս-
 30 րայելի , եւ եմուտ՝ ի ստտերազմ : եւ
 արքայն Ասորոց պատուիրեաց իշխա-
 նաց կառացն որք էին ընդ նմա եւ ա-
 ուէ , Մի ստտերազմիցիք ընդ վաբու եւ
 մի ընդ միմի , բայց ընդ արքայն Իս-
 31 րայելի միայն : եւ եզեւ իբրեւ տեսին
 իշխանք կառացն զՅովասիաա , եւ ա-
 սեն նոքա , Սա է արքայն Իսրայելի .
 եւ շուրջ եզեն զնովաւ պատերազմել .

եւ զոչեաց Յովասիաա , եւ Տէր ապրե-
 ցոյց զնա . եւ դարձոյց զնսա Աստուած
 32 ի նմանէ : եւ եզեւ իբրեւ տեսին իշ-
 խանք կառացն թէ ոչ է նա արքայն Իս-
 33 րայելի , դարձան ի նմանէ : եւ այր ոմն
 երկց զազեզն ի կրօնութեամբ , եւ եհար
 զարքայն Իսրայելի ընդ մէջ թոքոցն եւ
 լանջաց . եւ ստէ ճցնեքինն , Դարձո
 զձեան քո եւ հան զիս ի ստտերազմէս ,
 34 վասն զի վաճառեցայ : եւ ստտեցաւ
 ստտերազմն յաւուր յայնմիկ , եւ ար-
 քայն Իսրայելի կայր ի վերայ կառացն
 իւրոց մինչեւ ցերեկոյ ընդգէմ Ասոր-
 եացն . եւ մեռաւ ի մասնել արեգակսնն :

ԳԼ ԺԺ

1 Եւ դարձաւ Յովասիաա արքայ Յու-
 գայ ի տուն իւր խաղաղութեամբ յե-
 2 բուսաղէմ : եւ ել ընդ սաաջ նորա Յէու
 որդի Անանայ մարգարէ , եւ ստէ նա
 ցարքայ Յովասիաա , շեթէ մեղաւորին
 զու օգննս , եւ կամ տակուրն ի Տեաու-
 նէ բարեկամ լինիս . վասն այդորիկ եւ-
 զեւ ի վերայ քո բարկութիւն ի Տեաու-
 3 նէ : Այլ զի գտան ի քեզ լանք բարիք ,
 եւ զի բարձր զանտաան յերկրէս Յու-
 գայ , եւ ուզեցիր զսիրտ քո խնդրել
 4 զՏէր , սպրեցոյց զքեզ Տէր : եւ բնա-
 կեաց Յովասիաա յերուսաղէմ . եւ միւս-
 սնգամ ել ժողովուրդն՝ ի Բերսաբէ
 մինչեւ ի յեսանն եփրեմի , եւ դարձոյց
 զնսա սա Տէր Աստուած հարցն իւ-
 5 բեանց : եւ կոցոյց գատաւորս յամե-
 նայն քաղաքն Յուգայ եւ յամուրս յիւ-
 6 բաքանչիւր քաղաքի : եւ ստէ յգատա-
 ւորսն , Տեսէք զինչ աննիցէք զուք .
 վասն զի ոչ զմարդկան իրս գտաիք զուք՝
 այլ զՏեսան , եւ ընդ ձեզ Յեն բանք ի-
 7 յաւանց . եւ արդ եզիցի երկեւզ Տեսան
 ի վերայ ձեր , պահեցէք եւ արարէք ,
 զի ոչ գոյ Տեսան Աստուծոյ մերոյ ա-
 նիրուսութիւն , եւ ոչ երեսաց աչառել ,
 եւ ոչ աննուկ կաշառս :
 8 Այլ եւ յերուսաղէմ կացոյց Յովաս-
 փաա ի քահանայից եւ ի Ղեւտացւոց եւ
 ի հայրապետաց Իսրայելի՝ յիրաւունս
 Տեսան գատել յզմնակիչսն երուսաղե-
 9 մի : եւ պատուիրեաց նոցա եւ ստէ ,

1 Եբբ. Ամն : 2 Յեբբ. զ-լ-տ-ե 3 Եբբ. Այլակեր-
 պեցոյց 4 Եբբ. քո . եւ այլակերպեցաւ արքայն
 Իսրայելի , եւ մտին

5 Կամ , պարզութեամբ 6 Եբբ. ցկառապետն
 7 Եբբ. զԱստուած 8 Եբբ. դարձաւ եւ ել ընդ
 ժողովորեանն 9 Եբբ. է ի բանի գատատանն
 10 Կամ , եւ դարձան յերուսաղէմ

Այնպէս արարէք երկիւղիւ Տեառն ,
 10 ճշմարտութեամբ եւ լի սրտիւ : Մե-
 մենայն այր զիրաւունսն՝՝ զեկեպոս առ
 ձեզ յեղբարչ ձերոց՝ ի ընկալչաց քաղա-
 քացն իւրեանց , ի մէջ արեան եւ ա-
 րեան , եւ ի մէջ իրաց եւ պատուիրա-
 նի , եւ զիրաւունս եւ զպատաստանս ս-
 րոշեցէք նոցա , եւ մի՛ մեղիցեն առ Աս-
 տուած , եւ ոչ եւս եղիցի ի վերայ ձեր
 բարեութիւն , եւ ոչ ի վերայ եղբարց
 ձերոց . այսպէս արասջիք եւ ոչ մեղան-
 11 չիցէք , եւ ահա Ամարիաս քահանայ
 առաջնորդ ի վերայ ձեր յամենայն բռնի
 Տեառն . եւ Զարգիւս որդի Լամայի ի ա-
 ռաջնորդ ի տանն Յուզայ յամենայն բռնի
 սորքայի . եւ Չպիւրքն եւ Ղեւտացիք՝
 առաջի ձեր . զօրացարուք եւ արարէք ,
 եւ եղիցի Տէր ընդ բարւոյն :

Գ Լ Ի

1 Եւ յետ այսորիկ եկին որպիքն Ամնայ
 եւ որպիքն Մովսարայ , եւ ընդ նոսա Յի
 Մինեղւոց անտի առ Յովսափատ ի պա-
 2 տերազմ , եկին եւ ճոցցին Յովսափա-
 տայ եւ ասին , եկն ի վերայ քո ամբոսի
 բազում յայնմ կողմանէ ձովուն յԱտ-
 3 է Ենգազդի . եւ երկեսա , եւ ետ Յով-
 սափատս զերեսս իւր ինդրել զՏէր , եւ
 4 զարողեաց պահս յամենայն Յուզայ եւ
 ժողովեցաւ Յուզաս խնդրել զՏէր , եւ
 յամենայն քաղաքացն Յուզայ եկին
 5 ինդրել զՏէր : Եւ յարեաւ Յովսափատ
 ի մէջ եկեղեցւոյն Յուզայ յերուսաղէմ
 ի տանն Տեառն՝ յանդիման ջարհին նո-
 6 րոյ , եւ ասէ , Տէր Աստուած հարցն մե-
 րոց , ո՛չ այաքէն զու ես Աստուած յեր-
 կինս , եւ զու տիրեո ամենայն թագա-
 ւորութեանց հեթանոսաց , եւ ի ձեռս
 քո զօրութիւն ուժոյ , եւ ոչ ոք կարէ
 7 կալ ընդդէմ քո . Ո՛չ այաքէն զու ես
 Տէր որ աստակեցեր զընկալչս երկրիս
 այսորիկ յերեսաց ժողովրդեան քո Իւ-
 8 րայելի , եւ ետուր զաս զաւակի Արու-
 8 համեւ սիրելոցն քո յաւիտեան : Ինա-
 կեցին ի ամս , եւ շինեցին աստ սրբու-
 9 թիւն անուան ջուժ , եւ ասացին , եթէ
 եկեացին ի վերայ մեր չարիք , սուր ,
 գատաստանք , մահ , սով , կացցուք ա-

ռաջի տանս այսոիկ եւ առաջի քո , վասն
 զի անուեն քո ի վերայ տանս այսորիկ
 է , եւ զոչեսցուք առ քեզ ի նեղութեան ,
 10 լու իցես եւ ապրեցուցես զմեզ , եւ սրգ
 ահա որպիքն Ամնայ եւ Մովսարու եւ
 յետն Ալէրայ , ընդ որս ոչ ետուր ան-
 ցանել ընդ նոսա Իսրայելի յերանելն նո-
 ցա յերկրէն Եգիպտոսի , վասն զի իտ-
 սորեցան ի նոցանէ , եւ ոչ աստակեցին
 11 գնոսա , եւ սրգ աւասիկ նոքա յանդգ-
 նին զալ ի վերայ մեր , եւ հանել՝ զմեզ
 յերկրէս ժառանգութեան մերոյ զոր ե-
 12 տուր մեզ , Տէր Աստուած մեր , ո՛չ առ-
 նես դատաստանս ի նոսա . վասն զի ոչ
 զոյ զօրութիւն մեր ընդդէմ կալ բազում
 ամբոսին այնորիկ , եւ ոչ գիտեմք զինչ
 արասցուք նոցա . այլ առ քեզ են աչք
 13 մեր : Եւ ամենայն Յուզաս կայր առա-
 ջի Տեառն եւ մանկուենք նոցա եւ կա-
 նայք նոցա :
 14 Եւ Ոգիելի որդւոյ Զաքարիայ յորդ-
 ւոցն Բանեայ , եւ յորդւոցն Եգիլի ի որդ-
 ւոցն Մաթանեայ Ղեւտացւոյ՝ յորդւոցն
 Ասաիայ , եղև ի վերայ նորա Հոգի
 15 Տեառն ի մէջ եկեղեցւոցն . եւ ասէ ,
 Լուարուք , ամենայն Յուզա եւ բնա-
 կիչք Երուսաղեմի եւ արքայ Յովսափատ ,
 այսպէս ասէ Տէր ցձեզ . Մի երկնչիք եւ
 միգարհուրիք յերեսաց բազում ամբոսին
 այնորիկ . վասն զի ոչ ձեր ոչ պատե-
 16 րադմո՞ այլ Աստուծոյ : Վաղիւ իջէք ի
 վերայ նոցա . ահա թիջանն ընդ զառ ի
 վայրն Ասեր՝ , եւ գտջիք գնոսա առ ե-
 17 զիր գետոյն ՝ անապատին Յերիելի : Ոչ
 է ձեր պատերազմել անդ . իմասջիք եւ
 տեսջիք զպրկութիւն Տեառն որ է ընդ
 ձեզ , Յուզա եւ Երուսաղէմ . մի երկնչիք
 18 առաջ նոցա , զի Տէր է ընդ ձեզ : Եւ
 իոնարհեայ Յովսափատ ի վերայ երե-
 սաց իւրոց , եւ ամենայն Յուզաս եւ
 բնակիչք Երուսաղեմի , անկան առաջի
 19 Տեառն եւ երկիր պաղին Տեառն : Եւ
 յարեան Ղեւտացիքն յորդւոցն Կահաթու
 եւ յորդւոցն Կորիսայ օրհնել զՏէր Աս-
 տուած՝՝ ձայնիւ մեծաւ ի բարձունս :
 20 Եւ կանխեցին ընդ առաօտս ելին յա-

1 Եբբ. Զամենայն վէճս 3 Եբբ. Ղեւտացիքն
 աստիկանք 4 Եբբ. Մամնացւոց 5 Եբբ. պատմեցին
 6 Եբբ. չաւթիւն 7 Եբբ. Աստուած մեր

7 Եբբ. փոխանակ գան ի վերայ մեր հանել 8 Եբբ.
 պատե 9 Եբբ. ելանեն ընդ զառ և վերն ընդ Սիւս
 10 Եբբ. յանդիման անապատին 11 Եբբ. կանգ-
 նեւջիք , կացջիք 12 Եբբ. այնչիս յաւիտեա , Իս-
 րայելի

նապատն Թեկուայ . եւ յեկանին իւ-
րեանց եկաց Յովսափատ գոչեաց եւ ա-
սէ , Հուարուք ինձ , Յուզատ եւ բնա-
կիչք Երուսաղեմի . հաւատացէք Տեառն
Աստուծոյ ¹մերում , եւ հաւատացի ձեզ .
հաւատացէք մարգարէից նորա , եւ յա-
21 ջողեսցի ձեզ : Եւ խորհեցաւ ընդ ժո-
ղովրդեանն . եւ կացոյց սաղմոսանուագս²
եւ օրհնիչս՝ ³խոստովան լինել եւ օրհ-
նել զսրբութիւնսն՝ յեկանին առաջի
գօրուն . եւ ասէին , Խոստովան եղե-
րուք Տեառն , զի յաւիտեան է ողոր-
մութիւն նորա :
22 Եւ եղև ի սկսանելն զօրհնութիւնս
Տեառն եւ զխոստովանութիւնն նորա ,
եւ Տէր ⁴պատերազմել որդեոցն Ամո-
նայ , ի վերայ Մովբաբու եւ յերինն Սէի-
րայ , որք ելեայ էին ի վերայ Յուզայ .
23 եւ պարտեցան : Եւ յարեան որդիքն Ա-
մոնայ եւ Մովբաբու ի վերայ բնակչաց
լերինն Սէիրայ ստակիկ եւ խորտակել .
եւ իրբւս վախճանեցին զբնակիչսն Սէի-
րայ , յարեան ի վերայ միմեանց սա-
24 տակել : Եւ Յուզատ եկն ի զիտանոցն
անապատին , հայեցաւ եւ ետես զբաղ-
մութիւնն , եւ ահա ամենեքեան մե-
ռեայք եւ անկեայք ի վերայ երկրի , եւ
25 ոչ ոք էր սարեայ : Եւ եկն Յովսափատ
եւ զօրն կողոպտել զաւարն նոցա , եւ
գտին ⁵անասուն բաղում եւ զկազմածն
եւ զաւարն՝ եւ անօթս ցանկալիս , եւ
աւարեցին ⁶զայն . եւ եղև զերիս աւուրս
ժողովել նոցա զաւարն , վասն զի բա-
զում էր յոյժ :
26 Եւ յաւուրն չորրորդի ժողովեցան ի
Հովթատն օրհնութեան . վասն զի անց
օրհնեցին զՏէր , յազագս այնորիկ կո-
չեցին զանուն տեղւոյն այնորիկ՝ Հովթա
27 օրհնութեան մինչև յօրս յայս : Եւ զպլ-
ծաւ ամենայն այր Յուզայ ⁷յերուսա-
ղէմ , եւ Յովսափատ առաջնորդ նոցա
ուրախութեամբ ⁸մեծաւ . քանզի ուրախ
արար զնոսա Տէր ի թշնամեացն իւ-
28 րեանց . Եւ մտին յերուսաղէմ քնարօք
եւ տաւզօք եւ փողովք ի տուն Տեառն :
29 Եւ եղևն արձաւիրք ⁹ի Տեառնէ ի վերայ
ամենայն թագաւորութեանց երկրի ի

լսելն նոցա եթէ Տէր ետ պատերազմ
30 ընդ հակառակորդսն Իսրայելի . եւ խա-
զաղեցաւ թագաւորութիւնն Յովսափա-
տու , եւ հանդոյց զնա Աստուած նորա
չուրջանակի :
31 Եւ թագաւորեաց Յովսափատ ի վե-
րայ Յուզայ . եւ էր ամաց ¹⁰երեանից ի
թագաւորելն իւրում , եւ քսան եւ հինգ
ամ թագաւորեալ յերուսաղէմ . եւ ա-
նուն մօրն նորա Ագուբա՝ զուստր Սա-
32 զեայ : Եւ գնաց ի ճանապարհս հօր իւ-
րոյ Ասայի , ոչ ¹¹խոստորեցաւ առնել ուղ-
33 զութիւն առաջի Տեառն , Այլ բարձունքն
սակաւին եւս էին , եւ ժողովուրդն ոչ
ուղղեաց զպրտ իւր առ Տէր Աստուած
34 հարցն իւրեանց : Եւ մնացեալ բանքն
Յովսափատու առաջինք եւ վերջինք՝
ահա զրեայ են ի բանս Յէուայ որդւոյ
Անանայ , ¹²որ գրեաց զգիրս՝ թագաւո-
րացն Իսրայելի :
35 Եւ յետ այտորիկ հազորութիւն ա-
րար Յովսափատ արքայ Յուզայ ընդ Ո-
36 քոզեայ արքայի Իսրայելի . ¹³Եւ անօրի-
նեցաւ նա յառնել եւ երթալ առ նա ,
եւ առնել նաւ՝ գնալ ի Թարսիս . եւ ¹⁴ա-
37 յար նաւ ի Գասինդարեր : Եւ մարգա-
րէացաւ Եգիպտար որդի Ավդայ ի Մա-
րեսայ սո Յովսափատ , եւ ասէ , Վասն
զի եղեր սիրելի Ոքոզեայ , խորտակեաց
Տէր զզորձն քո . եւ ¹⁵խորտակեցաւ նաւն
քո եւ ոչ կարաց՝ երթալ ի Թարսիս :

ԳԼ . ԻԿ

1 Եւ ննջեաց Յովսափատ ընդ հարս իւր ,
եւ թագեցաւ ընդ հարս իւր ի քաղաքի
Դաւթի . եւ թագաւորեաց Յովթամ որ-
2 զի նորա փոխանակ նորա : Եւ նորա էին
եղարք՝ որդիք Յովսափատու վեց , Ազա-
րիս եւ Յեթիէլ եւ Չաքարիս եւ ¹⁶Միսայէլ
եւ Սափափաս եւ Ազարիս , ամենեքեան
սոքա որդիք Յովսափատու արքայի Յու-
3 ղայ : Եւ ետ նոցա հայրն իւրեանց պարգեւս
բաղումս , արծաթ եւ ոսկի եւ ¹⁷զէնս , հան-
գերձ պարսպաւոր քաղաքօքն Յուզայ .
եւ զթագաւորութիւնն եւ Յովթամայ ,
4 վասն զի նա էր անգործակի : Եւ յարեաւ
Յովթամ ի թագաւորութեանն իւրում եւ

¹ Եբր. ձերում ² Եբրայեցի յաւել , Տեառն
³ Եբր. ի վայելչութիւն արքութեանն ⁴ Եբր. գա-
րանակալս ի վերայ ⁵ Եբր. ինոսաբազմութեամբ
կազմածս եւ հանդերձս ⁶ Եբր. զայն մինչեւ
չկարել բառալ ⁷ Եբր. և երուսաղեմի ⁸ Եբր.
յերուսաղէմ ⁹ Եբր. Աստուծոյ

¹⁰ Եբր. երեսուն եւ հնգից ¹¹ Եբր. խոստորեցաւ ի
նմանէ ¹² Եբր. որ գրեալ են ի գիրս ¹³ Եբր. սա-
արար չար (36) Եւ յարեցաւ ի նա առնել նաւս
¹⁴ Եբր. արարին ¹⁵ Եբր. խորտակեցան նաւքն և
ոչ կարացին ¹⁶ Եբր. Միսայէլ ¹⁷ Եբր. ընծայս

զօրացաւ , եւ սպան զամենեսեան զեղ-
բարն իւր սրով , եւ յիշխանացն իս-
րայիկի :

5 Էր ինքն երեսուն եւ երկուց ամաց
յորժամ եկաց ի թագաւորութեանն իւ-
րում , եւ զով ամ թագաւորեաց յե-

6 րուսաղէմ : Եւ գնաց ի ճանապարհս թա-
գաւորացն Իսրայիլի , որպէս արար տունն
Աքաարու . վասն զի զուսար Աքաարու
էր նորա կին , եւ արար չար առաջի

7 Տեառն : Եւ ոչ կամեցաւ Տէր ստտակիկ
զտունն Դաւթի վասն ուխտայն զոր եղ-
ընդ Դաւթի . եւ որպէս ասացն զնա՝
տալ նմա ճրագ եւ սրգուց նորա զա-

մենայն աւուրս :

8 Յուսուրն յայնտիկ ապտամբեաց Ն-
զովմ ի Յուդայ , եւ թագաւորեցուցին ի

9 փրայ իւրեանց թագաւոր : Եւ զնաց
Յովրամ հանգերձ ի իշխանօքն , եւ ամե-

նայն երիվարք ընդ նմա . եւ եղեւ ի
յոսնեին նորա զիշխրի , եւար 1 Նզովմ զայ-
նտիկ՝ որ պատկիցն զնա , եւ զիշխանս
կտացն . 2 եւ փոխեաւ զօրն ի բնակու-

10 թիւնս իւրեանց : Եւ ի բաց եկաց Նզովմ ի
ձեռանէ Յուդայ մինչեւ յօրս յայս . յայն-
ժամ ապտամբեաց Դօրնա ի ձեռանէ
նորա ի ժամանակին յայնմիկ . վասն զի

11 3 թողին զՏէր Աստուած հարցն իւրեանց :
Քանզի արար իւր բարձունս ի քաղաքն
Յուդայ , եւ պոսնկեցոց զրնակիչն Ն-

12 րուսաղեմի , եւ մոլորեցոց զՅուդաս :
Եւ եկն նմա զիր յեղիայէ մարգարէէ ,
եւ ասէ , Այսպէս ասէ Տէր Աստուած

13 Դաւթի հօր քո . Փոխանակ զի ոչ գնա-
ցիր զու ի ճանապարհս Յովսափատու
հօր քո , եւ ոչ ի ճանապարհս Ասայի

14 արքայի Յուդայ , Այլ գնացիր ի ճանա-
պարհս թագաւորացն Իսրայիլի , եւ
պոսնկեցուցիր զՅուդա եւ զրնակիչն

15 Երուսաղեմի , որպէս պոսնկեցաւ տունն
Աքաարու , եւ զեղբարս քո զորդիս հօր
քո , զյասագոյնան քան գըբզ , սպաներ ,

16 Եւ անա Տէր հարցէ գըբզ հարուածովք
մեծօք ի ժողովրդեան քում , եւ զորդիս
քո եւ զկամայս քո եւ զամենայն ստա-

17 ցուածս քո . Եւ զու չար հիւանդութեամբ
եւ արտիւ որովայնի հաչեցայս , մինչեւ
եյցէ որովայն քո հիւանդութեամբն հան-

18 ցերձ՝ աւուրց յաւուրս :

19 Եւ յարոյց Տէր ի վերայ Յովրամայ

այլազգիս , եւ զԱրաբացիս զմիւրձաւորն
17 Նիթէովպացուց . Եւ ելին ի վերայ Յու-

դայ եւ հարստահարէին զնա . եւ գար-

ձացին զամենայն պատրաստութիւնն
զոր զտին ի տան արքային , եւ զուս-

տերս նորա եւ 4 զպատերս նորա . եւ ոչ
մնաց նմա որդի , բայց Ոքոզիաս միայն՝
կրտսկազոյն յորդիս նորա :

18 Եւ յետ այսր ամենայնի եհար զնա
Տէր արտիւ որովայնի որոյ ոչ գոյր

19 րժշկութիւն : Եւ եղեւ աւուրց յաւուրս ,
5 իբրեւ եկն ժամանակ աւուրցն նորա ,
յերկուս աւուրս ել որովայն նորա հան-

20 գերձ արտիւն՝ , եւ մեռաւ ի չար հի-
ւանդութեանն յայնմիկ . եւ ոչ արար
նմա ժողովուրդն 6 յուզարկութիւն , իբ-

րեւ զյուզարկաւորութիւն հարցն նորա :
Էր ամաց երեսուն եւ երկուց յորժամ
թագաւորեաց , եւ զութ ամ թագաւո-

րեաց յերուսաղէմ . եւ մեռաւ ոչ զովու-
թեամբ , եւ թաղեցաւ ի քաղաքին Դաւ-

թի , եւ ոչ ի զերեզմանս թագաւորացն :

ԳԼ . ԻԲ

1 Եւ թագաւորեցուցին ընակիչքն Երու-

սաղեմի զՈքոզիաս որդի նորա զկրտսե-

րագոյնն փոխանակ նորա . վասն զի գա-

մենեսեան զերեցագոյնան կոտորեաց հէնն
եկեալ ի վերայ նոցա , 7 Արաբացիքն եւ

Ազիմագոմիւսայնն . եւ թագաւորեաց Ո-

քոզիաս որդի Յովրամայ արքայի Յու-

2 զայ : Էր 8 քսան եւ երկուց ամաց յոր-

ժամ թագաւորեաց Ոքոզիաս , եւ տարի
մի թագաւորեաց յերուսաղէմ . եւ ա-

նուն մօր նորա Գոթոզիաս զուսար Ամ-

3 րեայ : Եւ նա զնաց ի ճանապարհս տանն
Աքաարու . վասն զի մայրն իւր էր

4 խորհրդակից նմա մեղանչել : Եւ արար
չար առաջի Տեառն որպէս արար տունն
Աքաարու . քանզի նոքա էին խորհրդա-

կիցք նմա յետ մեռանելոյ հօրն նորա
5 ստտակիկ զնա : Ըստ խորհրդոցն նոցա
զնաց նա , եւ չսղաւ ընդ Յովրամայ
որդուց 9 Աքաարու ի պատերազմ ի վե-

րայ Ազայիկի արքայի Ասորեաց յիւանովթ
Գաղաադ . եւ հարին 10 աղեղնաւորքն
6 զՅովրամ : Եւ գարձաւ Յովրամ բժշկել
յեղրայէլ ի վիրացն զոր խոցեցին զնա

1 Եբբ. գեդովմ 2 Յեբբ. դ-լ-տ-է 3 Եբբ. եթող
զՏէր Աստուած հարցն իւրոց

4 Եբբ. զկամայս 5 Եբբ. իբրեւ եկն ժամանակ
փախձանի աւուրց ամաց երկուց , զայնեցան
այդր նորա յախտէն 6 Եբբ. պրուսն 7 Եբբ.
ընդ Արաբացիս ի բանակն 8 Եբբ. քաւասուն
9 Եբբ. Աքաարու , արքայի Իսրայիլի 10 Եբբ. Ասորեք

Ասորիքն յՍամաթ՝ ի պատերազմել նորա ընդ Ազայելի արքայի Ասորեսաց . եւ Ոքոզիաս որդի Յովրամայ արքայի Յուզայ՝ էջ տեսանել զՅովրամ որդին Աքաարու յեզրայէլ , վասն զի հիւանդ էր :

7 Եւ ի Տեառնէ եղև կործանումն Ոքոզեսայ յերթարն առ Յովրամ . եւ յերթարն նորա ել 'նա առ Յէու' որդին Աքաարու .

8 մեսեսայ օծեայն Տեառն : եւ եղև իրբու առ Յէու զվրէժ աանն Աքաարու , եղիտ եւ զիշխանն Յուզայ եւ զեղբարանն Ոքոզայ որք պաշտէին զՈքոզարաս , եւ կորտրեսց զնոսա . եւ ասաց ինդրել զՈքոզիաս . եւ կայան զնա ի բոժկեղն՝ ի Սամարիա , եւ օծին զնա առ Յէու . եւ սպան զնա , եւ թաղեցին զնա անպէս . վասն զի ասացին , Որդի է Յովսափատայ որ ինդրեսց զՏէր ի բոլոր սրտէ իւրմէ . եւ ոչ գոր ի տանն Ոքոզեայ՝ զորացուցանել զոր յաղազս զորութեան թաղաւորութեանն :

10 Եւ Գոթոլիա մայրն Ոքոզեայ ետես թէ մեռաւ որդին նորա , յարեաւ եւ կորոյս զամենայն զաւակ թագաւորութեանն ի տանն Յուզայ : եւ առ Յովսաբեթ զուսար արքայի զՅովսա որդի Ոքոզեայ , եւ զողացաւ զնա ի միջոյ որդուցն արքայի կոտորելոյն . եւ ետ զնա եւ զդայեակ նորա ի սենեակս անկողնացն , եւ թաքցց զնա Յովսաբեթ զուսար արքային Յովրամայ՝ քայրն Ոքոզեայ , կին Յովիզայեայ քահանայի , եւ ծածկեաց զնա յերեսաց Գոթոլիայ :

12 Եւ ոչ սպան զնա : եւ էր ընդ նմա թաքուցեալ ի տանն Աստուծոյ ամս վեց . եւ Գոթոլիա թագաւորեաց ի վերայ երկրին :

Գ Լ , Ի Գ

1 Եւ յամին եւ թմերորդի զօրացաւ Յովիզայէ , առ զհարիւրապետան՝ զԱզարիաս որդի Յովրամայ , եւ զԿամույէլ որդի Յովլանայ , եւ զԱզարիաս որդի Յովրամայ . եւ զՄաաիաս որդի Ազայեայ , եւ զԵղիսափատ որդի Չաքա :

2 Եւ այն ի տունն Տեառն՝ Նըվեցան՝ ընդ Յուզաս , եւ ժողովեցին զՂեւտայեան յամենայն քաղաքացն Յուզայ , եւ վիշխանս ասնմոյն Իւրայելի , եւ եկին յե-

3 ըուսաղէմ : Եւ եղին ուխտ ճնդ ամենայն եկեղեցւոյն Յուզայ ի տանն Տեառն եւ ընդ արքային . եւ եղոյց նոցա զորդին արքայի , եւ՝ ասէ յնոսա , Ահա ափիկ որդի արքայն Յուզայ , թագաւորեսցէ պա , որպէս խօսեցաւ Տէր ի վերայ տանն Դաւթի : եւ արգ բան այս է զոր տանիցէք . կրորդ մասն ի ձէնջ մացէ ի շալաթապահ՝ քահանայլցն եւ Ղեւտայոց ի մուսա գրանցն , եւ երրորդ մասն ի տան արքային , եւ երրորդն ի գրանն միջնուս , եւ ամենայն ժողովուրդն ի սրահի տանն Տեառն լիցի . եւ մի ոք մացէ ի տունն Տեառն , բայց միայն քահանայքն՝ եւ Ղեւտայիքն՝ եւ պաշտօնեայքն ի Ղեւտացոց՝ նոքա մացնն , վասն զի սուրբ են . եւ ամենայն ժողովուրդն պահեսցէ զպահ :

7 պանութիւնս Տեառն : եւ պատեսցեն Ղեւտայիքն շուրջանակի զարքայ՝ այր եւ զէն իւր ի ձեռն իւրում . եւ որ ոք մտանիցէ ի տունն , մեռցի . եւ ոք եղիցին՝ ընդ արքայի ի մտանել եւ յեւրանել նորա : եւ արարին Ղեւտայիքն եւ ամենայն Յուզա բոս ամենայնի զոր ինչ պատուիրեսաց Յովիզայէ քահանայ . եւ առ իւրաքանչիւր ոք զընկեր իւր ի սիրտնելոյ շարաթունն . վասն զի ոչ արձակեաց Յովիզայէ զանասարգորգեան պահապանսն : եւ ես 12 նոցա գտուսերսն եւ զվահանսն եւ զզէնսն՝ որք էին արքայի Դաւթի ի տանն Աստուծոյ .

10 Եւ կացոյց զամենայն ժողովուրդն՝ զիւրաքանչիւր ոք զինուն իւրով՝ յուսոյ տանն յաջմէ , մինչեւ յուս անկկի կողմանն սեղանոյն եւ տաճարին զթագա-

11 ւորանն շուրջանակի : եւ եհան գորդին արքայի , եւ եղ ի վերայ նորա զթագն եւ զվիպոութիւնն . եւ թագաւորեցուցին եւ օծին զնա Յովիզայէ եւ որդիք իւր , եւ ասեն , կեցցէ արքայ :

12 Եւ լուաւ Գոթոլիա զձայն ժողովրդեանն զընթանալոյն , զզոհանալոյն եւ զօրհնելոյն զարքայ , եւ եմուս 13 առ ար-

13 քայն՝ ի տունն Տեառն . Ետես , եւ անա թագաւորն կայր ի սեպուղն իւրում , ի

1 Նէբ. նա ընդ Յովրամայ 2 Նէբ. ինդրեայ զՍրոգիտս . եւ կայան զնա որ թաքուցեալ էր 3 Նէբ. սպանին 4 Նէբ. զօրութիւն ունել զթագաւորութիւնն 5 Նէբ. ընդ իւր յուխտին (2) 6 Եւ շըվեցան

6 Նէբ. ամենայն եկեղեցին ի տանն Աստուծոյ ընդ արքային . եւ Յուզայի 7 Նէբ. հիման 8 Նէբ. ի գաւթիս 9 Նէբ. պաշտ 10 Նէբ. եղիցիք 11 Նէբ. եթէ գորս գայինն ի շարաթ. անդր. եւ եթէ գորս ելանէին ի շարաթ էն 12 Նէբ. Յովիզայէ քահանայ Տարեւրապետաց զնիզակս եւ զասպարս եւ զվահանս 13 Նէբ. առ ժողովուրդն

մուտս ճանապարհին, սրտքն եւ փողքն՝
 1 եւ իշխանքն՝՝ շուրջ զարքայիւ . եւ ա-
 մենայն ժողովուրդն զուարճացեալ հար-
 կանէին զփողան, եւ երգէին նուագա-
 րանօքն երգս, եւ օրհնէին զօրհնու-
 թիւնսն . եւ պատանեաց Քովթոյիս
 զզգեսան իւր, 2 զօղէաց եւ սաէ, 3 Դա-
 14 ւաճանութեամբ իարդախիցէք : Եւ ել
 Յովիղայէ քահանայ, պատուիրեաց Յո-
 վիղայէ քահանայ հարիւրացեալսն եւ
 իշխանաց զօրուն, եւ սաէ ցնոսս, Հա-
 նէք զգա արտաքոյ ի տանէդ, եւ ելէք՝
 4 նկիւր որբս, մեոցի սրով . վասն զի ա-
 սաց քահանայն, Մի մեոցի նա ի տանն
 15 Տեառն : Եւ 3 թոյ կտուն նմա՝, եւ անց
 ընդ դուռն հեծելոց տան արքային, եւ
 սպանին զնա անց :
 16 Եւ ուխտեաց Յովիղայէ ուխտ ի մէջ
 իւր եւ ժողովրդեանն եւ արքային, լի-
 17 նել ժողովուրդ Տեառն : Եւ ճեռու ա-
 մենայն ժողովուրդ երկրին ի տունն Բա-
 հաղու, եւ կործանեցին զնա եւ զսե-
 զանս նորա, եւ զկուսն նորա ման-
 րեցին, եւ զՄաթան քուրմն Բահաղու
 18 սպանին առաջի սեղանոյ նորին : Եւ 3 առ
 Յովիղայէ քահանայ զզործ տանն ի ձեռն
 քահանայից Ղեւտացոց . եւ կանցնեաց
 զհանապազորդեան պաշտօնեայս՝ զքա-
 հանայս եւ զՂեւտացոս զորս զատոց
 Դաւիթ՝ ի տունն Տեառն, եւ մատոցյ՝
 ողջակէզս Տեառն, սրպէս եւ զրեալ է
 յօրէնսն Մովսիսի, ուրախութեամբ եւ
 19 երգովք ի ձեռն Դաւիթի : Եւ 5 կացին
 դոնապանքն՝ ի զրուստ տան Տեառն, եւ
 ոչ մասնէր սմաղաքուր ոք անոր յամն-
 20 նայն իրս : Եւ առ զպետս առճփիցն եւ
 զզօրաւորսն եւ զիշխանս ժողովրդեանն,
 եւ զամենայն ժողովուրդ երկրին, եւ
 6 նանին զարքայ ի տանէ Տեառն, եւ
 մախն ընդ դուռն 7 ներքին ի տուն թա-
 դաւորին, եւ նատուցին զարքայ յաթոս
 21 թագաւորութեանն . Եւ ուրախ եղև ա-
 մենայն ժողովուրդ երկրին, եւ քաղաքն
 լռեաց . եւ զԳովթոյիս սպանին սրով :

ԳԼ . ԻԳ

1 Էր եւթն ամաց Յովաս ի թագաւորին
 իւրում, եւ քառասուն ամ թագաւո-
 րեաց յերուսաղէմ . եւ անուն մօր նո-
 2 րա Սարիս ի Բեթսարէէ : Եւ արար Յո-
 վաս ուղտութիւն առաջի Տեառն զամե-
 3 նայն աւուրս Յովիղայից քահանայի :
 4 Եւ առ իւր Յովաս երկուս կանայս, եւ
 ծնու սասերս եւ դասերս :
 5 Եւ յետ այսորիկ եղև ի սրախն Յո-
 վասու կազմիկ զտունն Տեառն : Եւ ժո-
 զովեաց զքահանայսն եւ զՂեւտացինս,
 եւ սաէ ցնոսս, Ելէք ի քաղաքս Յու-
 զայ, եւ մօղտիցէք յամենայն Իսրա-
 յելէ արծաթ, զօրացուցանել զտունն
 Տեառն ամի ամի . եւ փութագարուք
 6 իստել . եւ ոչ հաւատացին՝ Ղեւտա-
 ցիքն : Եւ կոչեաց Յովաս արքայ զՅո-
 վիղայէ զիշխան, եւ սաէ ցնա, Ընդէր
 ոչ արարեր սցջ Ղեւտացոցն, բերել ի
 ներքս ի Յուզայ եւ յերուսաղէմ որ ինչ
 սահմանեալ էր ի Մովսիսէ 9 յառնէն Աս-
 տուծոյ . վասն զի եկեղեցացոց զԻս-
 7 րայէ ի խորանն՝ վկայութեանս : Զի Գո-
 թոյիս էր անօրէն, եւ որդիք նորա
 կործանեցին զտունն Աստուծոյ . 10 քան-
 զի եւ՝ զսրբութիւնս տանն Աստուծոյ
 8 արարին Բահաղիմայցն : Եւ սաէ արքայ
 Լիցի արկղ, եւ զիցի ի զրան տանն Տեառն
 9 արաքոյ . Եւ քարոզեցին ի Յուզա եւ
 յերուսաղէմ, բերել Տեառն, սրպէս ա-
 սացն Մովսէս ծառայն Աստուծոյ Իսրա-
 10 յելի յանապատին : Եւ 11 հուռն ամենե-
 քան՝ իշխանքն եւ ամենայն ժողո-
 վուրդն, եւ բերէին ի ներքս եւ արկա-
 11 նէին յարկոյ մինչև ելցաս : Եւ լինէր
 իրբեւ բերէին զարկոյն առ վերակաջուս
 արքային ի ձեռն Ղեւտացոցն, իրբեւ
 տեսանէին թէ առաւելոյր արծաթն,
 զայր զպրապետն արքայի եւ վերակա-
 ցու մեծի քահանային, եւ թափէին
 զարկոյն, եւ կացուցանէին անորէն ի
 տեղուոյն իւրում . այնպէս ասնէին օր-
 ըստ օրէ, եւ ժողովէին արծաթ լա-
 12 զում : Եւ ետ զայն արքայ եւ Յովիղայէ
 քահանայ յայնսպիկ որք ասնէին զզործն
 ի պատրաստութիւն տանն Տեառն . եւ

1 Յեբբ. գ-լ-ո-տ 2 Նբբ. եւ սաէ, Դաւաճանու-
 թիւն, դաւաճանութիւն (14) եւ ճհան
 Յովիղայէ քահանայ զՏարիւրապետս, զիշխանս
 զօրուն, եւ սաէ ցնոսս, Հանէք զգա ի միջոյ
 կարգացդ եւ որ ելանէ 3 Նբբ. արկին ի նա
 ձեռս 4 Նբբ. կացոց Յովիղայէ պաշտօնեայս ի
 տան Տեառն ի ձեռն քահանայից Ղեւտացոց
 զորս զատոց Դաւիթ ի տանն Տեառն մատու-
 ցանել 5 Նբբ. կացոց զանապանս 6 Նբբ. իջոյ
 7 Նբբ. բարձր

8 Նբբ. ի գօրծն. եւ ոչ փութացան 9 Նբբ. ծա-
 ապէ Տեառն եւ ի ժողովրդեանն Իսրայելի վասն
 խորանին 10 Նբբ. նա եւ 11 Նբբ. ուրախ եղևն
 ամենայն

կացուցին ի վարձու քարահատս եւ հիւ-
 13 սունս կայմից գտունն ¹Տեառն : Եւ առ-
 նէին զգործն , եւ երանէր յաջողութիւն
 զործոյն ի ձեռս նոցա . եւ կանդնեցին
 զտունն ²Տեառն ի կայմին իւրում , եւ
 14 զորացուցին զնա : Եւ իրբեւ կատարե-
 ցին , բերին առ արքայ եւ առ Յովի-
 դայէ զմնացեալ արծաթն . եւ արարին
 սպաս ի տանն Տեառն , կահ պաշտաման
 ողջակիցայն , եւ խնկարանս սոկեղէնս եւ
 արծաթեղէնս . եւ մատուցանէին ողջու-
 կէջս ի տան Տեառն հանապազ զամն-
 նայն աւուրս Յովիգայեայ :
 15 Եւ ձերպաւ Յովիգայէ լի աւուրք ,
 եւ վախճանեցաւ ամաց հարեւր եւ ե-
 16 բեանից : Եւ ի վախճանին նորա թաղե-
 ցին զնա ի քաղաքի Դաւթի ընդ թա-
 զաւորս : վասն զի արար բարութիւնս
 ընդ Խորայիլի , եւ ընդ Աստուծոյ եւ
 ընդ տան նորա :
 17 Եւ եղև յետ վախճանելոյն Յովիգայ-
 եայ՝ մտին իշխանքն Յուդայ եւ երկիր
 սլազին արքայի , ³եւ չրջեցին զմիտան
 Յովատու . յոյժամ լուաւ նոցա ար-
 18 քայ : Թողին ⁴զՏէր Աստուած՝ հարցն
 իւրեանց , եւ ծառայեցին կոտց եւ Աս-
 տարտայցն . եւ եղև բարկութիւն Տեառն
 ի վերայ Յուդայ եւ Երուսաղեմի ⁵յա-
 19ւուրան յայնորիկ՝ : Եւ առաքեալս առ նո-
 սա մարգարէս՝ զարձուցանել առ Տէր ,
⁶եւ ոչ լուան . եւ եզ նոցա վկայութիւն ,
 եւ ոչ անսայցին :
 20 Եւ Հոգի ⁶Տեառն զգեցաւ Ազարիաս
 որդի՝ Յովիգայեայ քահանայի , յարեաւ
 ի մէջ ⁷ամենայն ժողովրդեանն եւ ասէ ,
 Այսպէս ասէ ⁷Տէր . Ընդէր խոտորեցայք
 ի պատուիրանացն Տեառն , եւ ոչ յա-
 ջողեսցի ձեզ . վասն զի թողէք զուք
 21 զՏէր , եւ նա լքցէ զձեզ . Եւ յարեան ի վե-
 րայ նորա եւ քարկոծեցին զնա պատու ի-
 րանաւ Յովատու արքայի ⁸ի սրահի տանն
 22 Տեառն Եւ ոչ յիշխայ ⁹Յովատու զգութն զոր
 արար ընդ նմա Յովիգայէ հայրն նորա ,
 եւ սպան զորդի նորա . եւ եղև ի մեռա-
 նեյն՝ սասց , Տեսցէ Տէր եւ զտեսցի :
 23 Եւ ի կատարել տարւոյն այնորիկ ել ի

վերայ նորա զօրն Ատորեաց , եւ եկն ի
 վերայ Յուդայ եւ Երուսաղեմի , եւ կո-
 տորեցին զամենայն իշխանս ժողովըր-
 4 գեանն ի զօրուն , եւ զամենայն աւար
 նոցա ետուն տանել արքայն Դամաս-
 24 կոսի . վասն զի սակաւ արամբք եկն
 զօրն Ատորեաց , եւ ¹⁰Աստուած մասնեաց
 ի ձեռս նոցա զոր բաղում յոյժ , վասն
 թողլոյն նոցա զՏէր Աստուած հարցն
 իւրեանց , եւ ընդ Յովատայ արար զգա-
 25 տատանն : Եւ յետ զնաղոյն նոցա ի
 նմանէ , թաղին զնա ի հիւանդութեան
 մեծի . եւ յարեան ի վերայ նորա ծա-
 ուայքն իւր , վասն արեան ¹¹որդւոյն Յո-
 վիգայեայ քահանայի , եւ սպանին զնա
 ի դահոյսն իւրում եւ մեռաւ . եւ թա-
 զեցին զնա ի քաղաքին Դաւթի , եւ ոչ
 թաղեցին զնա ի գերեզմանի թագաւո-
 26 րացն : Եւ որք յարեանն ի վերայ նորա՝
 էին Զարդիտ որդի Մամթայ Ամանա-
 ցի , եւ Յովատրեթ որդի Մամարիթայ
 27 Մովարայի : ¹²Եւ որդիք նորա ամենե-
 քեան . եւ եկին առ նա հնգեքեան , եւ
 բաղում միեկնս ի վերայ զնէին : Եւ մնա-
 ցեալ բանքն Յովատու՝ աճա զրեալ են ի
 զիրս թագաւորացն : Եւ թագաւորեաց
 Ամասիա որդի նորա փոխանակ նորա :

ԳԼ ԻԵ

1 Եր ամաց քոան եւ հնդից ի թագաւո-
 յեկն Ամասիաս , եւ քան եւ ինն ամ
 թագաւորեաց յերուսաղէմ . եւ անուն
 2 մօր նորա Յովաղին յերուսաղէմէ : Եւ
 արար ուղղութիւն առաջի Տեառն , բոց
 ոչ լի սրտիւ :
 3 Եւ եղև իրբեւ հաստատեցաւ թա-
 զաւորութիւնն ի ձեռին նորա , սպան
 զճառայսն իւր որք սպանին զարքայ
 4 զհայրն նորա . Եւ զորդիան նոցա ոչ սպան
 ըստ ուխտի օրինացն Տեառն , որպէս եւ
 զրեալ է եւ զոր օրինակ պատուիրեաց
 Տէր եւ ատոց , Ոչ մեռցին հարք փո-
 յանանի որդոց , եւ որդիք ոչ մեռցին
 փոխանակ հայր իւրեանց , այլ իւրա-
 քանչիւր ոք ի մեզս իւրում մեռցի :
 5 Եւ ժողովեաց Ամասիաս ¹³զտունն Յու-
 գայ , եւ կացոյց նոցա ըստ տանց տոհ-
 միցն իւրեանց հազարապետս եւ հարիւ-

¹Եբբ. Տեառն, եւ գարբինս երկաթոյ եւ պղնձոյ
 ի գորացուցանել գտունն Տեառն ²Եբբ. Աս-
 տուծոյ ³Եբբ. պ-ւ-ւ-ե ⁴Եբբ. զտունն Տեառն
 Աստուծոյ ⁵Եբբ. վասն այսր յանցուածոյ
 նոցա ⁶Եբբ. Աստուծոյ ելից զԶարդարեա զորդի
 7 Եբբ. Աստուած ⁸Եբբ. ի գաւթի ⁹Եբբ. Յո-
 վատ արքայ

¹⁰Եբբ. Տէր ¹¹Եբբ. որդւոյն ¹²Եբբ. Իսկ որդիք
 նորա, եւ յաճախութիւն հարկայն որ առ նովաւ
 եւ նորագութիւնն տանն Աստուծոյ . աճա զբը-
 եալ են ի յիշատակարանս զբոց թագաւորաց
 13 Եբբ. զՅուդա

րապետս յամենայն Յուզա եւ յԵրուսաղէմ. եւ թուեաց զնոսս ի քսանամենից եւ ի վեր, եւ եղիտ զնոսս երեքհարեւր հազար զօրաւորս, որք երանէին ի պատերազմ ունելով նիզակ եւ աս-
 6 սար: Եւ ի վարձու կայաւ յԻսրայելէ հարեւր հազար զօրաւորս ուժով՝ հա-
 7 րեւր տաղանդոյ արծաթոյ: Եւ այր ոմն Աստուծոյ եկին առ նա եւ ասէ, Արքայ, մի երթիցէ ընդ քեզ զօրդ Իսրայելի, փան զի ոչ է Տէր ընդ Իսրայելի, եւ ոչ ընդ
 8 ամենայն որդիս Եփրեմի. ²Եթէ կարծեսցես զօրանալ զորք, ՚՝ ի պարտութիւն մասնեսցէ զքեզ ³Տէր տաջի թէ՛նամեաց քոց. քանզի ⁴ի Տեառնէ լինի զօրանալ եւ ի պարտութիւն մաս-
 9 նել: Եւ ասէ Ամասիա ցարն Աստուծոյ, Եւ զի՛նչ արարից զհարեւր տա-
 զանգան զոր ետու զօրուդ Իսրայելի. եւ ասէ ցնա այրն Աստուծոյ, Գոյ Տեառն
 10 տալ քեզ տաւելագոյն քան զայն: Եւ որոշեաց Ամասիաս զգունչն որ եկեալ էր առ նա յԵփրեմայ՝ երթալ ի տեղի իւրեանց. եւ բարկացան յոյժ ի վերայ Յուզայ, եւ զարձան ի տեղիս իւրեանց բարկութեամբ եւ ցասմամբ:
 11 Եւ Ամասիաս զօրացաւ, առ զյօրն իւր եւ գնաց ի Հովիաս ալաիցն. եւ ե-
 12 հար զորդիսն Սէիրայ տանն հազար. եւ այլ եւս տանն հազար գերեցին որդիքն Յուզայ, եւ ամին զնոսս եւ զլուս քարանձաւին եւ գահալէժ ասնէնս զնոսս ի ծայրից բարձաւանդակին, եւ ամենեքեան սասակէին:
 13 Եւ որդիք զօրութեանցն զորս զարծոց Ամասիաս ոչ երթալ ընդ իւր ի սլա-
 տերազմ՝ յարձակեցան ի քաղաքն Յուզայ, ի Ամարիայ մինչեւ ի Բեթորոն, եւ հարին ի նոցանէ երկս հազարս, եւ առին աւար բազում:
 14 Եւ եղեւ յես գաղոյն Ամուսեայ ի հարկանկոյն զԵզովմ, երեւ ⁵առ նոսս՝ զստուածս որդւոցն Աէիրայ, եւ կացոյց զնոսս իւր յաստուածս, եւ երկիր սլա-
 զանէր առաջի նոցա, եւ ⁶զօճէր ինքն:
 15 Նոցա: Եւ եղև բարկութիւն Տեառն ի վերայ Ամասեայ. առաքեաց առ նա մար-
 զարէ եւ ասէ ցնա, Ընդէ՛ր ինպրեցիւր զու զաստուածս ժողովրդեանն այնու-

րիկ, որք ոչ փրկեցին զժողովուրդն իւ-
 16 րեանց ի ձեռաց քոց: Եւ եղև ի խօսինն նորա ասէ ցնա, Միթէ խորհրդակից թա-
 գաւ որի ետուն զքեզ. զգոյ՛ լեր՝ զուցէ տանջեսցիս. եւ լուեաց մարգարէն, եւ ասէ, Կրտեմ զի խորհի Տէր ի վերայ քո եզմանել զքեզ. փան զի արարեր զայդ, եւ ոչ անապիւր իրատուս իմում:
 17 Եւ խորհեցաւ Ամասիաս, առաքեաց առ Յովաս որդի Յովաքազայ որդւոյ Յէուայ՝ առ արքայն Իսրայելի, եւ ա-
 18 սէ, Եկ եւ երեւեսցուք երեսօք: Եւ առաքեաց Յովաս արքայ Իսրայելի առ Ամասիաս արքայ Յուզայ եւ ասէ, Ոքոյն որ ի Լիբաննու է՝ յղեաց առ մայրն Լիբանանու եւ ասէ, Տուր զգուսար քո ուստեր իմում կնութեան. եւ ա՛նա անցին գազանք անապատին Լիբանանու, եւ եկեալ կտիւեցին զամենայն զեկքանս:
 19 Ս՛նա հարեր գերզուճաս՝, եւ հոսարաւ ցուցանէ զքեզ սիրա քո ⁸ծանրութեամբ. նիսա այսուհետեւ ի սուս քում, եւ ընդէ՛ր անկանխա զու ի չարութիւն, եւ սա-
 20 աակիցիս զու եւ Յուզաս ընդ քեզ: Եւ ոչ լուսաւ Ամասիաս. փան զի ⁹ի Տեառնէ եղև մասնել գնա ի ձեռս Յովասու՝ յազագս ինդրելոյն նորա զաստուածսն
 21 Եղովմայեցեոյ: Եւ ել Յովաս արքայ Իսրայելի եւ երեւեսցան միմեանց նա եւ Ամասիաս արքայ Յուզայ, ի Բեթուա-
 22 միւս՝ որ է Յուզայ: Եւ պարտեցաւ Յուզա առաջի Իսրայելի, եւ իախաւ իւ-
 23 րաքանչիւր ոք ի բնակութիւն իւր: Եւ զԱմասիաս արքայ Յուզայ որդի Յովասու՝ կայաւ Յովաս արքայ Իսրայելի ի Բեթամիւս, եւ տարաւ գնա Երուսաղէմ. եւ քակեաց ի պարապէն Երուսաղեմի, ի զորսնէն Եփրեմի մինչեւ ի գուոն
 24 Անկեանն, ¹⁰երեք հարեւր կանուոն: Եւ զամենայն սակի եւ արծաթ, եւ զամե-
 նայն սպաս՝ որ գտաւ ի տանն ¹¹Տեառն առ Արդեգովմայ, եւ զզանձս տան թագաւորին եւ ¹²զորդիս խառնակութեանցն՝ առ եւ զարձաւ ի Ամարիայ:
 25 Եւ եկեաց Ամասիաս որդի Յովասու արքայ Յուզայ՝ յես մեռանելոյն Յովասու որդւոյ Յովասու արքայ Իսրա-
 26 յելի, ամս հնգետասան: Եւ մնացեալ

¹ Եբբ. ի Բենիամին ² Եբբ. Չի եթէ երթմայցես, արտ-
 զօրացիր ի պատերազմ: ³ Եբբ. Աստուած ⁴ Եբբ. Աստուծոյ ⁵ Եբբ. զոսս ⁶ Եբբ. ծիւեր խունկս

⁷ Եբբ. Ասացեր. Ահա հարկ զեղովմ ⁸ Եբբ. ի փու-
 աւուորել ⁹ Եբբ. Եցն յաւելու, որդւոյ Յու-
 վաքազու ¹⁰ Եբբ. չորեք ¹¹ Եբբ. Աստուծոյ
¹² Եբբ. զպատանդս

բանքն Ամասեայ առաջինք եւ վերջինք՝
 ո՛չ ա՜նա զրեալ են ի գիրս թաղաւորացն
 27 Իւրացելի եւ Յուզայ : Եւ ի ժամանակին
 յորում ի րաց եկաց Ամասիա ի Տեառ-
 նէ՛ յարեան ի վերայ նորա ¹գորքն յե-
 րուսուղէմ , եւ փախեաւ ի Լաքիս . եւ
 առաքելցին զկնի նորա ի Լաքիս , եւ
 28 սպանին զնա առդ : Եւ յարձին զնա ի
 վերայ ձիոց , եւ թաղեցին զնա ընդ հարս
 իւր ի քաղաքի Դաւթի :

ԳԼ ԻԶ

1 Եւ առ ամենայն ժողովուրդ ²երկրին
 զՈղիտս , եւ էք նա ամաց վեշտասա-
 նից , եւ թաղաւորեցուցին զնա փոխա-
 2 նակ հօրն իւրոյ Ամասեայ : Եւ շինեաց
 զԵլյաթ , եւ նա զարձոյց զնա անդրէն
 ի Յուզա՛ յիս ³միռանելոյն արքային ընդ
 3 հարս իւր : Որդի վեշտասան ամաց թա-
 գաւորեաց Ողիտս , եւ յիսուն եւ եր-
 կուս սոսն թաղաւորեաց յերուսուղէմ . եւ
 4 անուս մօր նորա Յեղեկիա՛ յերուսուղեմէ :
 4 Եւ արար ուղարթիւնս առաջի Տեառն ,
 ըստ ամենայնի զոր արար Ամասիա հայր
 5 նորա : Եւ խնդրեաց զՏէր յաւուրս Զա-
 քարեայ խնասնոյ ⁶երկիւզիւ Տեառն .
 յաւուրս նորա՝ խնդրեաց նա զՏէր , յա-
 6 ջղեաց նմա Տէր : Եւ ել եւ պատերազ-
 մեցաւ ընդ այլազգիս , եւ քակեաց զպա-
 րիսան Գեթիայ եւ զպարիսպն Յարնեայ եւ
 զպարիսպն Ագովտայ , եւ յինեաց ⁷քա-
 զաքան Ագովտայ՝ ի մէջ՝ այլազգեացն :
 7 Եւ զօրացոյց զնա ⁸Տէր ի վերայ այլազ-
 գեացն եւ ի վերայ Արաբացւոցն որք
 8 քնակէին ⁹ի վրովն եւ ի վերայ Մինեզ-
 8 ւոցն : Եւ տային ¹⁰Մինեցիքն ընծայս Ո-
 զիայ , եւ էր անուն նորա մինչեւ ի մուտն
 9 երկարտսի , վասն զի զօրոցաւ ի վեր :
 9 Եւ յինեաց Ողիտս ¹¹զաշտարական երու-
 սազեմի սոս ցրան ¹²Չորցն եւ առ ան-
 10 կիւնան , եւ զօրացոյց՝ : Եւ յինեաց աշ-
 տարակս յանապատին , եւ փորեաց ջրորս
 11 քաղումս , վասն զի անասուն քաղում
 էր նորա ¹³ի Սեփեղա եւ ի գաշախն , ¹⁴եւ
 այլեկործք ի իրինն եւ ի կարմեղոս :
 11 քանզի սիրէր զերկրագործութիւն : Եւ

եղեն Ողիայ զօրք որք առնէին պատե-
 րազմ , եւ կլանէին ի մարտ գունդք . եւ
 թիւն նոցա ի ձեռն Յէէյի զպրտպեաթի
 եւ Մասեայ գատաւորի , ի ձեռն Անա-
 12 նիայի ¹⁵փոխանակի արքայի : Ամենայն
 զունդք ցեղապետիցն զօրաւորաց ի պա-
 տերագմին երկու հարիս եւ վեց հա-
 13 յերս : Եւ ընդ նոսա զօր սրտաերազմօղ՝
 երեք հարեւր հազար եւ եւթն հազար եւ
 չինդ հարեւր . նոքա էին որք առնէին
 պատերագմ զօրութեամբ մեծաւ , ¹⁶օղ-
 նական լինելով արքային ի հակառակոր-
 14 գացն : Եւ պատրաստէր նոցա Ողիտս ա-
 մենայն զօրուն՝ վահանս եւ նիզակս եւ
 սաղաւարտս եւ զրահս եւ աղեղունս եւ
 15 պարոս ի քարինս : Եւ արար յերս սաղէմ
 մենքենայս արուեստից ճարտարութեան՝
 լինել ի վերայ սրտապաց եւ ի վերայ
 անկեանց , ձգել նեսս եւ քարինս մե-
 ծամեծս : Եւ լսելի եղեւ ¹⁷պատրաստու-
 թիւն նորա մինչեւ ի հեռաստան . վասն
 զի սքանչելի էր նա յօյնս մինչեւ զօ-
 16 րացաւ : Եւ իւրեւ զօրացաւ , բարձրա-
 ցաւ սիրա նորա առ յապականել , եւ
 անիրաւեցաւ ի Տէր Աստուած իւր . եւ
 եմուտ ի տոճարն Տեառն ծխել խունկս
 17 ի վերայ սեղանոյ խնկոցն : Եւ եմուտ
 զնա նորա Ազարիաս քահանայ , եւ ընդ
 նմա քահանայքն Տեառն ութսուն՝ որ-
 18 զիք զօրաւորք : Կային ի վերայ Ողիայ
 արքայի եւ ասնն ցնա , Ոչ է քս , Ո-
 զիտս , ծխել խունկս Տեառն , այլ քա-
 հանայից որդոց Ահարոնի սրբեցելոցդ
 է ծխել վայց . ել արտաքս ի սրբու-
 թեանց , վասն զի ապստամբեցեր զու-
 19 ՛ի Տեառնէ , եւ ոչ եւս լիցի քեզ այլ ի
 19 վառս ի Տեառնէ Աստուծոյ : Եւ սրտմտե-
 ցաւ Ողիտս , եւ ի ձեռն իւրում բու-
 րուանն ծխել զխունկս ²⁰ի տաճարին . եւ
 ի բարկանայն նորա քահանայիցն՝ երե-
 ւեցաւ բորոտութիւն ի ճակատն նորա
 յանդիման քահանայիցն ի ստանն Տեառն
 20 ²¹ի վերայ սեղանոյ խնկոցն : Եւ զարձաւ
 առ ²²նա քահանայն առաջին եւ այլ քա-
 հանայքն , եւ ա՜նա բորոտեալ էր ճա-
 կտան նորա , եւ ²³պարտեցուցին զնա
 անաթի . քանզի եւ ինքն իսկ փաւթացաւ
 ելանել , զի ²⁴յանդիմանեաց զնա Տէր :

¹ Երբ. գ-ի-տ-ի ² Երբ. Յուզայ ³ Երբ. Կնքելոյն
⁴ Երբ. ի տեպիս Աստուծոյ . եւ յաւուրսն յորս
⁵ Երբ. քաղաքս յԱգովտս ⁶ Երբ. Աստուած ⁷ Երբ. ի
 Գուրբա հայ ⁸ Երբ. Ամենայիցն ⁹ Երբ. աշտարակս
 յերուսուղէմ առ գրանն Անկեանն եւ առ գրանն
 20 Զորցն , եւ առ գարնուած դնն զօրացոյց զնոսա
¹⁰ Երբ. ի հովտին ¹¹ Երբ. եւ երկրագործք եւ

¹² Երբ. յինեանց ¹³ Երբ. յօյնս իւրն արքայի
 ընդդէմ թշնամեաց ¹⁴ Երբ. համբաւ ¹⁵ Երբ.
 առ ըմբեր ¹⁶ Երբ. նա Ազարիաս ¹⁷ Երբ. փու-
 թացուցին ¹⁸ Երբ. Ե հար

21 Եւ էր Ոգիւս արքայ բորոտեալ մինչև ցօր վախճանի իւրոյ, եւ ի սաննն ¹ափուտով Նաէր բարտեալ, վասն զի ուրոչեցաւ ի սաննէն Տեառն. եւ Յովաթամ որդի նորա էր ի վերայ ²Թագաւորութեան նորա, զասել զժողովոս րոյ կրկրին:

22 Եւ մնացեալ բանքն Ոգիւս առաջինք եւ վերջինք՝ գրեալք են յնուայեայ որոց:

23 Եւ Մամուսայ մարգարէէ: Եւ ննջեաց Ոգիւս ընդ հարս իւր, եւ թաղեցին զնա ընդ հարս նորա ի գաշաբ վերեզմանի Թագաւորացն. վասն զի սասցին թէ Բորա է. եւ թագաւորեաց Յովաթամ որդի նորա փոխանակ նորա:

ԿԼ. ԻԷ

1 Որդի քսան եւ հինգ ամաց էր Յովաթամ ի թագաւորելն իւրում, եւ վեցստասան ամ թագաւորեաց յերուսաղէմ. եւ սնունն մօր նորա Յերուսայ զուսար:

2 Մադովկայ, եւ արար ուղղութիւն առաջի Տեառն ըստ ամենայնի զոր ինչ արար Ոգիւս հայնն նորա, բայց ոչ եւ մուս ի սաճարն Տեառն. եւ սակաւին:

3 Եւս ժողովորոն սարկանեայ էր: Եւս չինեաց զզուռն սանն Տեառն զրարձր, եւ ի սպարսպին Ուիւլայ չինեաց լազուզուս: Եւ քաղաքս չինեաց ի լերինն Յուզայ, եւ յամսասս ³ինակութիւնս:

5 Եւ աշտարակս, Եւ կուսեցաւ ընդ արքայի որոցոց Ամոնայ, եւ զորացու ի վերայ նոցա. եւ սային նմա որդիքն Ամոնայ ի միում սարուջ հարեւր սազանդ արծաթոյ, եւ սասն հազար քոս յորենոյ, եւ գարբ՝ սասն հազար քոս. ⁴ըրէր զայն նմա արքայն Ամոնայ ամի ամի. եւ յառաջնում ամին եւ յերկրոր:

6 զին եւ յերրորդին՝ Եւ զորացու Յովաթամ, վասն զի պատրաստեաց զճանապարհս իւր առաջի Տեառն Աստուծոյ իւրոյ:

7 Եւ մնացեալ բանքն Յովաթամայ եւ ⁵պատերազմն նորա եւ մարտք իւր՝ ահա զրեայ են ի վերս թագաւորացն Յուզայ եւ Իսրայելի: Բասն եւ հինգ ամաց էր յորմամ թաղաւորեաց, եւ վեցստասան ամ թագաւորեաց յերուսաղէմ:

9 Եւ ննջեաց Յովաթամ ընդ հարս իւր, եւ թաղեցաւ ի քաղաքին Դաւթի, եւ թագաւորեաց Աքայ որդի նորա փոխանակ նորա:

ԿԼ. ԻԸ

1 Որդի քսան ամաց էր Աքայ ի թագաւորելն իւրում, եւ վեցստասան ամ թագաւորեաց յերուսաղէմ. եւ ոչ արար ուղղութիւն առաջի Տեառն իրրեւ զՎա:

2. Իթ զհայր իւր. Եւ զնաց ըստ ճանապարհաց թագաւորացն Իսրայելի. ⁶քսան:

3 զի արար զբոչեալս. Եւ կոսոց նոցա զուհէր յերկրին Բենոմայ, եւ անցուցանէր զորդիս իւր ընդ հուր, ըստ գարչութեան ազգայն զօրս սատակեաց Տէր յերեսաց որդեոցն Իսրայելի. ⁷Եւ ծխէր խուսիս ի վերայ բարձանց եւ ի վերայ ⁸սանեայ եւ ի ներքոյ ամենայն վարսաւոր ծառոց:

5 Եւ մտանեաց զնա Տէր Աստուծո՞մ նորա ի ձեռս արքայն Ասորեաց, եւ եւ հար զնա, եւ գերեաց ի նոցանէ զերուսթիւն թաղում, եւ սարաւ ի Դամասկոս. եւ ի ձեռս արքայն Իսրայելի մատնեաց զնա, եւ եհար զնա հարուածս մեծամեծս: Եւ կոտորեաց Փակէէ որդի Ասովելայ ⁹արքայ Իսրայելի՝ ի Յուզայ ի միում աւուր հարեւր եւ քսան հազար արանց զօրաւորաց զօրութեամբ, ի թուզուին նոցա զՏէր Աստուծո՞մ հարցն իւր:

7 Իբանց, եւ զպան Չեքրի զօրաւորն Եփրեմի զԱմաուիսս զորդի արքայն, եւ զվերիկամ իշխան սան նորա, եւ զվեց:

8 կանա զփոխանորդ արքայն: Եւ գերեցին որդիքն Իսրայելի յեզրարցն իւրեանց ¹⁰երեք հարեւր՝ հազար կանայս, եւ ուստերս եւ զստերս, եւ աւար թաղում ստին ի նոցանէ. եւ սարան զուսարն ի Ամարիս:

9 Եւ էր անդ մարգարէ Տեառն, Ուիլեզ անուն նորա. Եւ նա ընդ առաջ զօրուն եկելոյ ի Սամարիա, եւ ասէ յնոսա, Ահա բարկութիւն Տեառն Աստուծոյ հարցն ձերոց եզեւ ի վերայ Յուզայ, եւ մատնեաց զնոսա բարկութեամբ, եւ մինչև 10 յերկինս ժամանեաց: Եւ արդ զարդիս Յուզայ եւ զերուսաղէմի, զուք ասէք

¹ Այսինքն, զաստուցեալ ² Եբբ. սան թագաւորին ³ Եբբ. ամբոցս ⁴ Եբբ. եւ ետուն նմա որդիքն Ամոնայ եւ յերկրորդում ամիս, և յերրորդումն ⁵ Եբբ. ամենայն պատերազմունք նորա եւ ճանապարհք նորա

⁶ Եբբ. և արար զբոչեայս Բահաղմույ (Յ) Եւ ծխէր ի հովիտն որդեոցն Ենոզմույ ⁷ Եբբ. Եւ զուհէր և ⁸ Եբբ. բլրոց ⁹ Եբբ. Դամասկ ¹⁰ Եբբ. երկերեւոր

ստանալ ի ծառայս եւ յազախնայս . ո՞չ ապաքէն՝ աւապիկ եւ ընդ ձեզ , վկայ 11 լինել՝ Տեառն Աստուծոյ ձերում : Եւ արդ լուարուք ինձ , եւ դարձուցէք անդրէն զգերութիւնդ զսրս զերեցէք զուք յեղբարց ձերոց . վասն զի բարկութիւն սրամտութեան Տեառն լինի ի վերայ ձերս :

 26 Սոքա էին յաւուրս Յովսեփմայ որդոյ
 Յեսուայ, որդոյ Յովսեփեկեայ, եւ
 յաւուրս ⁸Նէեմայ եւ Եզրայ քահանայի
 եւ զըշի օրինայն Տեառն :
 27 Եւ ի նաւակաախս պարսպին Երու-

¹ Եբբ. յորդոցն Չարեհի որդոյ Յուզայ՝ ընդ
 ձեռանէ թագաւորին յամենայն զօրծս ժողո-
 վրդեանն :

(25) Եւ յորդոցն Յուզայ ընտելեցան ի գեղս
 եւ յազարակս նոցա, ի Կարիաթարա եւ
 յաւան նորա, ի Կերան եւ յաւան նորա, եւ
 ի Կարսէեղ եւ ի գեղս նորա, (26) Եւ ի Յես-
 ուս եւ ի Մազուք եւ ի Բենիամիայէ, (27) Եւ
 ՅԱսար-սուզ եւ ի Բերսարէէ եւ յաւան նո-
 րա, (28) Եւ ի Մազուք եւ ի Բենիամիայէ, (29) Եւ
 ՅԱսար-սուզ եւ ի Բերսարէէ եւ յաւան նո-
 րա, (30) Եւ ի Սիկեզակ եւ ի Մեքան եւ յա-
 վան նորա, (31) Եւ յեռանն, ի Սարա, ի
 Յերիմուս, (32) Ի Սամու, Սորոզմ եւ ի գեղս
 նոցա, ի Կարիա եւ յազարակս նորա, յԱւքեա եւ
 յաւան նորա. այսպէս ընտելեցան նորա ի
 Բերսարէէ մինչեւ ի Նորն Երեմուս :

(31) Եւ որդիքն Բենիամինի՝ ի Գարայի ի
 Մաքմա, Ալիա, Բեթէլ եւ յաւան նորա,
 (32) Անաթով, Նոր. Անանիա, (33) Հասով,
 Ռամա, Կեթիմայիմ, (34) Հադիղ, Սերայիմ,
 Ներզազ, (35) Ղովք, Ալիու, Կեքարաթիմ :
 (36) Եւ ի Ղեւտայոցն բաժնք Յուզայ ի
 Բենիամին :

² Եբբ. զ-սոսի ³ Եբբ. (3) Աւքելիա, Հաւուս,
 Մեքմուսով, (4) Ազզով, Կանաթան, Արիա,
 (5) Միամին, Մովազիա, Բեզզա, (6) Մեմայիա,
 Յովարիք, Յեզայիա, (7) Սազու, Ամուկ, Կեզ-
 կիա, Յեզայիա. այս

⁴ Եբբ. սա հանդերձ եզրարք իւրովք էր ի վերայ
 օրհնութեանցն. (9) Եւ եզրարք նոցա Բակրոկիա
 եւ Ուննի, յանդիման նոցա ի կարգին իւրեանց :

(10) Եւ Յեսու ձեռն զՅովսեփմ, եւ Յովսեփմ
 ծնաւ զԵզրասիր, եւ Եզրասիր ծնաւ զՅովսեփա,
 (11) Եւ Յովսեփա ծնաւ զՅովնաթան, եւ Յովնա-
 թան ծնաւ զՅազուզու :

(12) Եւ յաւուրս Յովսեփմայէին քահանայք
 գլուխք սոհմից, ի Սարայիայ՝ Մարիա, յե-
 րեմիայ՝ Անանիա, (13) Յեզարայի՝ Մեսուզամ,
 յԱմարիայ՝ Յովսեփմ, (14) Ի Մազուքայ՝ Յով-
 նաթան, ի Սարանիայ՝ Յովսեփ, (15) Ի Հարի-
 մայ՝ Եզրա, ի Մարիովսիայ՝ Կեզկա, (16) ՅԱզ-
 րովայ՝ Չարարիա, ի Կանաթովսիայ՝ Մեսուզամ,
 (17) ՅԱրիայ՝ Չեբբի, ի Մեքանիայ, ի Մո-
 վադիայ՝ Փազաբ, (18) Ի Բեզզայ՝ Սամուս, ի
 Ամայիայ՝ Յովնաթան, (19) Ի Յովարիայ՝ Մա-
 թան, ի Յեզայիայ՝ Ոզ, (20) Ի Մազուքայ՝
 Կազու, յԱմուկայ՝ Երեք, (21) Ի Կեզկիայ՝
 Ասարիա, ի Յեզայիայ՝ Նաթանայէլ :
⁵ Եբբ. Դարեհի Պարսկի ⁶ Եբբ. Յեսու որդի Կազմի-
 էի, եւ եզրարք նոցա յանդիման նոցա ⁷ Եբբ.
 դաս առ դաս (25) Մեքմանիա, Բակրոկիա,
 Արդիա, Մեսուզամ, Տեղան, Ակուր, պա-
 հապանք, զանապանք ի պահպանութիւն ի
 շեմարանս զրանց : ⁸ Եբբ. Նէեմայ կուսակալի
 եւ Եզրայ քահանայի զպրի :

սաղեմի՝ խնդրեցին զՂեւսայլան ի ան-
 զիս իւրեանց՝ ամէկ զնոսս յերուսաղէմ,
 եւ ասեմկ զնուսկապիս ուրախս թեամբ
 հանդերձ եւ զանթեմաբ եւ երպոք
 նուազարմեօք, ճնծայիւք եւ թմբօք
 եւ սազմասարմեօք ¹Եւ ի ձայն եղջեր
 28 փառայ՝, եւ ժողովեցան ամենեքեան որք
 երգէին եւ սազմաէին շաբժնակի յա-
 29 մենայն կողմանց ²Երուսաղեմի, ի քա-
 զաբաց եւ ի զիւզից եւ ի բնակութեանց
 իւրեանց, զայ ի սպաս սրաշամանն
 30 յերուսաղէմ՝, եւ սրբեցան ամենայն քա-
 հանաքն եւ Ղեւսայլքն, եւ սրբեցին
 հմտօղութիւնն ³Կզմասարմեօք մեծի
 31 զրանց սարսպինս եւ հանին՝ ի վեր
 զիշխանս Յուզայ ի պարիսպն. եւ իւր-
 թալին զհետ նոցա երգովք նուազա-
 32 բանօք երկու երկու, Յովսիս եւ Ուզիս՝
 33 եւ կէս իշխանայն Յուզայ, Ազարիս,
 34 Եղրա եւ Մոսողամ, Յուզա եւ Բեհիա-
 35 մին եւ Սամէաս եւ Երեմիաս: Եւ յարգ-
 անց քահանայիցն էին որք հարիւնէին
 զփառան՝ Զաքարիաս որդի Յովնաթանայ
 որդի Սամայի, որդի Մաթանիա, որդի
 Միքայ, որդի Զաբուր, որդի Ասափ:
 36 Եւ կիրարք նոցա Սամէլաս եւ Եղրիէլ
 որհնէին զերգս եւ զսաղմոսս Դաւթի
 անն Աստուծոյ զոր նուագեաց, եւ
 Եղրաս զբիջ երթալը առաջի նոցա ի
 վերայ զրանցն, եւ սրբ երգէինն եր-
 37 թալին ընդզէմ նորաս եւ՝՝ Ելին յառ-
 ափճանս քաղաքին Դաւթի, յերս պա-
 րտալին՝ ի վերայ քան զպարանս Դաւթի,
 մինչեւ ի գուռն Զրոյն ⁴Եփրեմի, եւ՝՝
 39 ընդ կողմն արեւելից, ⁵Եւ ի գուռն Եբ-

թիւրան, եւ յաշտարակն Անամայիկի
 եւ մինչեւ ի գուռն Զրոյլտայն. եւ լսելի
 եղիւ ձայն երգոցն մինչեւ յամենայն
 անկիս. քանզի հրամայեաց Եզր կալ ի
 43 վերայ ամենայն զրանցն եւ երպոք՝ Եւ
 զոհեցին յառուր յայնմիկ զան մեծա-
 մեծս, եւ ուրախ եղին յոյժ. զան զի
 Աստուած արար ուրախ զնոսս յուրա-
 խութիւնն մեծ. եւ կանաչք նոցա եւ
 որպէք նոցա ուրախ եղին, եւ լսելի ե-
 զիւ ուրախութիւնն նոցա յերուսաղեմ՝
 մինչեւ ի հասաւոր անկիս:
 44 ⁶Եւ կայտուցին յառուր յայնմիկ ի վե-
 րայ զանձանակի զանձուցն եւ զտառ-
 ջաւորայն եւ տասանորդայն, եւ որ
 միանում ժողովեաց էր անոր յիշխա-
 նաց քաղաքին, որպէս հրամայեաց էր
 յորհնան Մովսիս քահանայիցն եւ Ղեւ-
 սայլուց. քանզի ուրախութիւնն մեծ էր
 ի Յուզա եւ ի քահանայս եւ Ղեւսա-
 ցին. եւ զպուշացան սրբութեանցն Աս-
 տուծոյ եւ պահեցին զսրբութիւնն՝ որ
 էին երկրեկէք սաղմոսայցն եւ զոնա-
 սպանքն, որպէս կարգեալ էր Դաւթի եւ
 45 որպուշոր Սողոմոնի: Բանդի յառուրս
 Դաւթի՝ Ասափ էր իշխան եւ առաջնորդ
 երպոյ սաղմոսայն, որք նուագէին, եր-
 գէին եւ փառաւոր առնէին զԱստուծոյ:
 47 Եւ ամենայն Իսրայէլ յառուրս Զորարա-
 լելի եւ յառուրս Նէեմիայ՝ ասցին մասն
 եւ բաժին երկրեկայն եւ զանապանայն,

¹ Յիբր. պո֊տե ² Եբր. երուսաղեմի եւ ի զե-
 զից նեաթութացւոց, (29) եւ ի Բեթզազգա-
 զայ եւ ի զաշտայ Կարտայ եւ յԱզամով
 թայ. զի շինեալ էր երգեցողացն զեզս շուրջ
 զերուսաղեմու: ³ Յիբր. ցորտն եւ զպա-
 րիսպն: (31) եւ հանի ⁴ Յիբր. կարգ եցի եր
 կուս զասս մեծամեծս երգեցողաց. խաղալ յա-
 սաջ ի վերայ պարսպին յաջող կողմանէ իրուռն
 Ազրից: (32) եւ երթալը զինի նոցա Սփեթիս
⁵ Եբր. նորա Անուցիս, Ազրիէլ, Միզազա,
 Իրիզազա, Մասս, Նաթմանայէլ, Յուզա,
 Անանի նուագարմեօք Դաւթի տանն Աս-
 տուծոյ. եւ Եղրաս զպիբ առաջի նոցա: (37)
 եւ եկին ի գուռն Ազրեքն եւ զԷպ ուզից
⁶ Եբր. (38) եւ երկրորդ գաս երգեցողացն Երթի ուր
 ի հանդիպայ. եւ ես՝ զինի նոցա ընդ կէսոյ ժո-
 զովրդեանն ի վերայ պարսպին յաշտարակ ան-
 սի Փառնացն մինչեւ ի պարիսպն լայն, (39) եւ ի
 վերայ զրանն Եփրեմի եւ ի վերայ զրանն Շնոյ
 եւ ի վերայ զրանն Զկանցն, եւ աշտարակն

Անանայեկի եւ աշտարակն Մէսայ մինչեւ ի
 գուռն Այթարաց, եւ կայն առ զրանն Բուն-
 սին. (40) Եւ երկրքին դարք երգեցողացն կա-
 ցին ի տանն Աստուծոյ, եւ ես եւ կէս ուսրկա-
 նացն ընդ իս: (41) Եւս եւ քահանայքն Եդիակիմ,
 Մասիս, Մինիսմին, Միքիս, Եդիակէայի,
 Զարարիս, Անանիս փոքրք: (42) Եւ Մասիս
 եւ Սեմուղիս եւ Եդիակիմ եւ Ոդի եւ Յովհա-
 նան եւ Մեղքիս եւ Եզամ եւ Եղիւ, յայնմամ
 Երգեցողքն ամբարձին զձայնս իւրեանց ընդ
 Յեղեբեայ վերակայքին: ⁷ Յիբր. երուսաղեմի
⁸ Եբր. Եւ կարգեցան յառուր յայնմիկ արք ի
 վերայ սենեկաց փան զանձուքն, ընծայից,
 Երախայրեաց եւ տասանորդաց, առ ի կուտելոյ
 ի նոսս զրամինս օրինաց սպարակի քաղաքաց
 փանս քահանայից եւ Ղեւսայլուց, զի ու-
 րախութիւնն Սուղայ էր ի վերայ քահանայից
 եւ ի վերայ Ղեւսայլուց կայելոյ: (45) Եւ
 պատկէցին զպատկէցանութիւնն Աստուծոյ իւր-
 եանց, եւ զպատկէցանութիւնն սրբութեան,
 եւ երգեցիկքն եւս եւ զանապանքս քառս պատ-
 ուրիսնայն Դաւթի եւ որդւոյ նորա Սողոմոնի:
 (46) Զի յառուրս անտի Դաւթի եւ Ասափայ
 էին զիսուս որք երգեցողաց եւ երգ զպիւթեանն
 եւ օրհնութեան առ Աստուծոյ:

որպէս եւ կարգեալ էր օր բառ օրէ, եւ
՝ամենէին սուրբ զՂեւառայիսն եւ Ղեւ-
առայիքն զարդիսն Ահարոնի՝:

ԳԼ ԺԳ

1 Յաւար յայնմիկ կարգալին զգիրս Մով-
սիսի ի լսելիս ժողովրդեանն . եւ գտաւ
ի նմա զրեալ այտէս, ելիէ Մի մողէ
Ամենայի եւ Մովսարայի յեկեղեցի Առ-
2 առւծոյ յախտեանս ժամանակաց, Վասն
զի ոչ ելին ընդ առաջ որդւոցն Իորա-
կիի հայրւ եւ ջրով, այլ կարան ի վտր-
ձու զհալաամ՝ 3 զէս՝ անիծանկ զնստա .
եւ զարձայց Ասաուած մեր զանկձան
3 յօրհնութիւնս եւ եկեւ յորժամ յուան
յօրինացն, որոշեցին ի բաց զամենացն
խառնական յարայէլէ :

4 Եւ յառաջ քան զայս եղիտար քահա-
նայ էր ի գանձանակի տանն Ասաուծոյ
5 մերոյ, եւ 3 եւ տեղի Տուրիայ, եւ շին-
եալ իւր անդ տուն գանձի մեծ . եւ
անդ էր յառաջնում ուր ապին զման-
նայն եւ զիրանոն եւ զկահն սրբու-
թեան՝, եւ զառանտորս ցորենոյն եւ
զինւոյ եւ ձիթոյ եւ իւզոյ, գտնիկան
Ղեւառայոցն եւ երպեղեացն եւ զանա-
պանաց, եւ զառաջաւորս քահանայիցն

6 Եւ մինչ զայս ամենայն սրարեալ էր,
եւ ոչ էր յերուսաղէմ . քանզի յամի եւ
րեաներորդի եւ երկրորդի ՝Արաաչիսի
թագաւորի խաղաղացոյ՝ մասի առ թա-
ղաւորն . եւ յեա՝ րազում առ արց իւրնդ-

7 րեցի ի թագաւորէն, եւ ելի յերուսաղէմ,
եւ իմացայ զամենայն չարութիւնս զոր
արար եղիտար զամն Տուրիայ, զի ետ
նմա շինել տուն գանձու ի զաւթի տանն

8 Տեառնս : եւ չար թուեցաւ տաջի իմ
յոյժ եւ ընկեցի արտաքս զամենայն կահ՝

9 Տուրիայ ի ամենէն գանձու, եւ հրամա-
յեցի սրբի զտուն գանձումն ՝ Տեառնս, եւ
զարձուցի անդրէն զկահ 3 եւ զարաս
տանն Տեառն եւ զմաննայն եւ զլիբա-

10 նոն՝ : եւ զիտայի եւ հասի ի վերայ՝
եկիէ զրամին Ղեւառայոցն ոչ էր առ ետ,
եւ նոքա էին զնացեալ յալապակս իւր-
եանոյ, եւ Ղեւառայիքն եւ երպեղեիկքն

11 զորձէին զզորձ մշակութեանս : եւ կա-
ղեցայ ընդ իշխանսն եւ ասեմ, Ընդէր
5 պակասեցին ոռձիկք ի ասնէ Տեառն .
եւ ժողովեցի զամենայն սպասուսբան՝
եւ կարգեցի զնստա ի տեղիս իւրեանոյ :

12 Եւ ամենայն Հրեայք ընդէն զաստ-
նորդս ցորենոյ եւ զինոյ եւ ձիթոյ ի

13 գանձանակ ՝ տան Տեառն՝ : եւ հրամա-
յեցի ապ ի ձեռս Աեղիմայ քահանայի եւ
Մաղովկայ զրչի, եւ Փաղայեայ որ էր
յՂեւառայոցն, եւ 6 ի ձեռանէ նոցա Ա-
նան որդի Չաքուր, որդի Մաթմանայի .
վասն զի հաւատարիմ էին նոքա որք
րամանէին եւ տային եղբարց իւրեանոյ :

14 7 Յիշեացէ զիս Ասաուած յայնմ ամիւ
նայնի, եւ մի՛ ի բացէ արասցէ զուր-
մութիւնս իւր յինէն . վասն զի արարի
զայս ամենայն ի ասն Տեառն Ասաու-
ծոյ Իսրայելի :

15 Յաւուրան յայնուսիկ տեսանէի ի Հրէ-
աստանի՝ զի հարկանէին հնձանս յաւուր
չարաթու, եւ ընդէն զորայսն 2 ընդ
զրուսն Երուսաղեմի՝ . եւ կոխէին թեռն
զրասուց, զզինի եւ զխաղաղ եւ զթուզ,
րարձեալ ընտինս ընդէն յերուսաղէմ
յաւուր չարաթու . եւ 8 կաղեալ վկայս՝

16 զի վաճառէին յաւուր չարաթու, եւ
նստէին ի տեղիս վաճառացն որք՝ ըն-
դէն զձուկն եւ զամենայն վաճառս,
եւ 9 զմէին յաւուր չարաթու Հրեայցն
17 ի ներքս՝ յերուսաղէմ : եւ կաղեցայ
եւ 2 ընդ որդիսն Հրէից որք էին յերու-
սաղէմ, եւ՝ ընդ իշխանսն Յուզայ, եւ
ասեմ ցնոսա, Չինչ է անօրէնութիւնս
այս զոր կուք գործէք, եւ սղծէք 10 զա-

18 ռուրս սուրբ զչարաթու : Ո՛չ սցայէս
արարին հարքն ձեր, եւ ամ ի վերայ
11 նոցա Ասաուած զչարիսս զայս ամե-
նայն, եւ ի վերայ շտղաքիս այսորիկ,
եւ որդ կուք ընդէր յաւուրս զար-
կութիւնս ի վերայ Իսրայելի 12 եւ սղծէք

19 զօրն սուրբ զչարաթուսց : եւ եղև յոր-
ժամ կանդնեցի զզրուսն՝ Երուսաղեմի

6 Եբբ. թողեալ իցէ տունն Ասաուծոյ . եւ ժող-
վեցի զնստա (զՂԷ-ԴՄԶԷ) 7 Եբբ. ընդ ձեռումբ 7 Եբբ.
Յիշեալ զիս, Ասաուած իմ, վասն պարտիկ, եւ
մի՛ ջնձեր զզորմսն ի իւնս իմ, զորս արարի վասն
ասնն Ասաուծոյ իմնց, եւ վասն պաշտամանց
նարս : 8 Եբբ. յաւուրսն յորս վաճառէին զպա-
չայն՝ յանդ իմանեցի : (16) Եւ Տիւրայցիքն որ
ընտեկէին տնոյ՝ 9 Եբբ. վաճառէին յաւուր չա-
րաթու որդւոցն Հրէից եւ 10 Եբբ. զոր չարա-
թուսն 11 Եբբ. միւր 12 Եբբ. Ի պղծել զչարաթունս
(19) Եւ եղև յորժամ նստմանայն զրուսն

11 Եբբ. սրբէին Ղեւառայոցն, եւ Ղեւառայիքն
որդւոցն Ահարոնի 2 Եբբ. Գ-Կ-Ե 3 Եբբ.
զի էր մերձաւոր Տուրիայ . (5) Արար նմա սնն
եակ մեծ ուր գնէին յառաջնումն զընծայն
հացի եւ զկեղբուկն եւ զանոթան Եբբ.
Ասու երախ 4 Եբբ. ասնն Ասաուծոյ, զընծայն
հացի եւ զկեղբուկն

յառաջ քան զչարաթն, հրամայէի փակել զգրուանս, եւ ոչ տայի բանալ զնոսա մինչեւ անցանէր շարաթն. եւ դարձնայ կոտորել մանկուանս պահուարանս, զի մի՞ ոք իշխեսցէ մտանել բեռամբ յաւուր 20 շարաթնու ընդ գրուանս Երուսաղեմի: Եւ ազանէին ամենեքեան որք վաճառէին՝ արտաքոյ Երուսաղեմի միանգամ եւ եր- 21 կիցս: Եւ ասեմ ցնոսա, Ընդէ՛ր ազա- նիք զուք արտաքոյ պարտալիք. եթէ եւ 'սլլ տեսանեմ զանօրէնութիւնս զսպ, տամ հրամանս այսպէս՝ զի ոչ մտանիցէք 22 զուք ի շարաթնս մեր եւ ի քաղաքս: Եւ ասեմ ցՂեւտացիսն որք էին սրբեալ, եւ զային պահէին զգրուանս, եւ սրբէին յաւուր շարաթնու. եւ յայնմ հետէ ոչ պղծեցին զշարաթնս՝: Եւ յայսմ ամե- նայնի յիշեսցէ զիս Աստուած, եւ խնա- յեսցէ յիս ըստ բազում ողորմութեան իւրում:

23 Եւ յաւուրան յայնոսիկ տեսի զշրեայնս, ²զի նստէին կանայք Ազովտացիք եւ 24 Ամովնացիք եւ Մովարացիք, Եւ որդիք նոցա եւ տմանք ի կանանցն խօսէին Ա- զովտացի, եւ ոչ գիտէին խօսել Հրէ- 25 արէն՝: Եւ կազեցայ ընդ նոսա, եւ նկո- վեցի զնոսա, եւ հարի ի նոցանէ ³արս բազումս՝. եւ երզմնեցա զի զնոսա յանուն Աստուծոյ, զի մի՛ տացեն զըստերս իւր- եանց որպէս յոցա, եւ մի՛ պղտտերս նոցա 26 ածցին որդւոց իւրեանց: ⁴Եւ ասեմ ցնո-

սա՝, Ո՛չ յայդմ ամենայնի մեղաւ Սո- զումնս թագաւոր Իսրայելի. ⁵Եւ ո՞յ էր իրբեւ զնա իմաստուն յամենայն թա- գաւորս մեր՝. եւ սիրելի էր նա Աս- տուծոյ, եւ կայոց զնա Աստուած թա- գաւոր ի վերայ ամենայն Իսրայելի. ⁶Եւ զայսպիսի սիրելի Աստուծոյ եւ զիմաս- տուն եւ զմեծ թագաւոր՝ խոտորեցու- ցին եւ յանցուցին ի մեղս կանայք ալ- 27 ազգեաց՝: Եւ արգ մի՛ լուսաց եթէ ոք արտայց զայնպիսի մեծ շարաթնու, եւ մեղիցէ առ Աստուած, Եւ արայցէ 28 կին սլլազգի: Եւ յորդոցն Յովթեայ եւ յեղիապիւրայ մեծ քահանայն, լուսայ թէ էր կին նորա զուսար Սանարագա- տայ՝, եւ մերժեայ հալածեցի զնայինէն 29 ⁸Յիշեսցէ զնոսա Աստուած ի ժառան- գութեան եւ յուխտի քահանայութեան 30 Եւ զՂեւտացիսն սրբեցի յամենայն պ- լազեաց, եւ կարգեայ կարմեցի զնոսա որ ըստ օրէ՛ զքահանայնս եւ զՂեւտա- ցիսն այր իւրաքանչիւր ի գործ իւր: 31 Եւ ետու կայմ բերել զամենայն փայտ ողջակիւղայն յիւրաքանչիւր ժամանակս, եւ պտաջաւորսն պողոյ իւրեանց: Յի- շեսցէ զիս Աստուած մեր յամենայն բա- լութիւնս արդարութեան, այն որ օրհ- եակն է յաւիտեան: Ամէն:՝

¹ Եթէ այլ եւս կրկնիցէք մեքցից զձեռն իմ ի ձեց: Եւ այնուհետեւ ոչ եկին ի շարաթնու: (22) Եւ ասեմ ցՂեւտացիսն սրբել զանձինս իւր- եանց, եւ գալ պահել զգրուանս, եւ սուրբ տանել զօր շարաթնու ² Եթէ որ բնակե- յուցանէին կանայս Ազովտացիս եւ Ամովնացիս եւ Մովարացիս. (24) Եւ որդիք նոցա խօսէին կէս զիւրու Ազովտացւոց եւ ոչ գիտէին խօսել Հրէա- ընէ եւ ըստ լեզուի սլլոց ազգաց ³ Եթէ արս, եւ փեսայի զհերս նոցա ⁴ Եթէ գ-լ-տ-է

⁵ Եթէ. եւ ոչ գոյր թագաւոր իբրեւ զնա յազգս բազումս ⁶ Եթէ. եւ զնա իսկ յանցուցին կա- նայք օտարաթիք ⁷ Եթէ մին յորդոցն Յովթեայ, որդւոյ Եղիապիւրայ մեծ քահանային, էր փեսայ Սանարագատայ Արնացոյ ⁸ Եթէ Յիշես զնոսա, Աստուած իմ, որ պղծեցին զքահանայութիւն եւ զուխտ քահանայութեան եւ զՂեւտացւոց: (30) Եւ սրբեցի զնոսա յամենայն ալլազգեաց, եւ կարգեցի պահպանութիւնս վասն քահա- նայից եւ Ղեւտացւոց, իւրաքանչիւր ի պաշ- տաման իւրում: (31) Եւ վասն ընծայի փայտիցն ի ժամանակս սահմանեայս, եւ վասն երախայր- եաց: Յիշես զիս, Աստուած իմ, ի բարութիւնս



Ե Ս Թ Ե Ր

ԳԼՈՒԽ ԺԱ

¹ **ՅԱՐԻՆ** երկրորդի թագաւորութեանն Արտաշիսի արքայի մեծի, յառաջում աւուր ամուսնի Ագարայ, որ է Հայերէն Արեգ, տեսիլ ետես Մուրթքէ որդի Յայիրայ, որդւոյ Սեմեայ, որդւոյ Կիսեայ, յազգէ Բենի-
³ ամինի, այր Հրեայ. Եւ էր բնակիւ ի ² Սիսիս քաղաքի. այր մեծ եւ հաւատարիմ ամենայն իրաց տան թագաւորին. ⁴ Եւ էր նա ի գերութենէ անտի զոր գերեաց Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելոնացւոց յերուսաղեմէ՝ Յեքոնիաւ հանդերձ ⁵ արքային Հրէաստանի. Եւ այս է երազ անտիան նորա զոր տեսանէր. Չայն խոտովթեանց եւ որոտանց եւ շարժմանց. եւ էր խոտովթիւն մեծ ի վերայ ⁶ երկրի. Եւ աճաւալիկ երկու վիշապք մեծք յոյժ, պատրաստեալ ելանէին ի ⁷ կիւր ընդ միմեանս. Եւ եզեւ ի նոցանէն ձայն մեծ, եւ ի ձայնէ բարրատոյ նոցա պատրաստեցան ամենայն ազգք ի պատերազմ, զի տագնն պատերազմ ընդ ⁸ ազգին արդարոյ. Եւ էր օրն խաւարին եւ մթին, տառապանաց եւ նեղութեանց, եւ էր խոտովթիւն մեծ ի վերայ ⁹ երկրի. Եւ խոտիկացաւ ամենայն ազգն արդար վասն իւրեանց չարեացն, եւ պատրաստեցան ի կորուստ. եւ կար-
¹⁰ զացին նոքա առ Աստուած. Եւ ի ձայնէ անտի նոցա եզեւ իբրեւ ի փոքրիկ ազ-
¹¹ բերէ գետ մեծ՝ յստակ. Եւ արեգակն ծագեաց, եւ խոնարհքն բարձրացան եւ ¹² կերան զփառաւորսն. Եւ զարթեալ Մուրթքէ ի սեպտենէ աստի յայտանէ, զոր Աստուածն խորճեացաւ աննիլ. եւ անէր կանախ կրտսնն ի որսի իւրում, եւ յամենայն զօրութենէ իւրմէ կամէր

զիտել՝ եթէ զինչ իցէ տեսիլն զոր ետես անպէն ի նմին զիչերի.՝

ԳԼ. ԺԲ

¹ **Եւ** զազարեաց Մուրթքէ յապարանան Դաբիթեա հանդերձ եւ Թաւայիւ երկոքուսիք ներքինեօք թագաւորին, որ էին պահապանք ապարանից թագաւորին. Եւ իբրեւ գիտակ եզեւ Մուրթքէ խորճուցոց ներքինեացն, եւ զկտան սրախց նոցա քննեաց՝ եթէ պատրաստեալ են նոքա ձեռն արկանել ի թագաւորն Արտաշէս, եցոյց արքայն զխորճուցս ³ նոցա. Եւ եհարց թագաւորն զերկտնն ներքինիան, եւ նոքա խոստովան եզեւ նմա. եւ հրամայեաց զնոսա կտալել. ⁴ Եւ զրեաց թագաւորն զբանս զայստիկ ի յիշատակս, եւ Մուրթքէ զրեաց վասն ⁵ բանիցս այսոցիկ, Եւ ես հրաման թագաւորն Մուրթքէի, մեծաւ զգուշութեամբ առաւել եւս զարման տանել տան թագաւորին. եւ ետ նմա պար-
⁶ գեւտ Եւ էր Համան Ամաղովթեայ Բովկեցւոյ փառաւոր առաջի արքային, եւ կամեցաւ շարճարել զՄուրթքէ եւ զմոզովուրդ նոցա վասն երկուց ներքինեացն.՝

ԳԼ. Ա

¹ **Եւ** եզեւ ³ յետ բանիցս այսոցիկ յաւուրս Արտաշիսի, (որ եւ այս Արտաշէս՝ կալու ի Հնդկաց աշխարհէն մինչև յեթովուպիա հարեւր քսան եւ եթին գաւ-
² ււառ.) ⁴ Ի նմին աւուրս յորս նստաւ ի ³ Սիսիս քաղաքի՝, Յամին երրորդի թագաւորութեանն իւրոյ, արար ⁵ թագաւորն կոչուես սերեկեաց իւրոց եւ մե-

³ Եբբ. յաւուրս Ասուերոսի, (այս Ասուերոս
⁴ Եբբ. Յաւուրան յայնտիկ իբրեւ նստաւ Ասուերոս յսթոս թագաւորութեան իւրոց որ ի նուշան քաղաքի ⁵ Եբբ. կոչուես ամենայն իշխանաց իւրոց եւ ծառայից իւրոց. զօրն Պարսից եւ Մարաց, նախարարք եւ իշխանք զաւառաց էին առաջի նորա, (1) Ի ցուցանել ի

¹ Այս գլուխ պատէ յեբբայականն ² Եբբ. Եբբ. նուշան, որ եւ սէ Սուսէն, Արսան, Սուսիս, Եւ նուշան

ծամեծաց , եւ այրոց եւս աղգաց Պարսից
 եւ Մարաց , եւ ամենայն իշխանաց նա-
 1 խարարացն : Եւ իբրեւ եղոյց՝ նոցա զմե-
 ծառ թիւն թապաւ որութեանն իւրոց , եւ
 զվառս ուրախութեանն վայելեալ թեանն
 զաւուրս հարեւր եւ ութսուն :
 5 Եւ յորժամ յանդ ելանէին՝ աւուրք
 հարսանեացն , զարձեալ միւսանգամ
 հրամանն ետ կոչել ի հարսանիան զամբիկ
 քաղաքացիսն իւր ի գաւիթ ասնն ար-
 6 քունի զաւուրս վեց : Եւ էր զարդար-
 եալ բեհեզովք եւ կերպասովք՝ զորս էր
 կարգեալ եւ կարմեալ զլարովքն ծիրան-
 6 եօք եւ բեհեզովք , եւ զորս էր կապ-
 եալ ի խոյակնս սոկիս , եւ ի ծերանիս՝
 որ կային ի վերայ սեանցն պատուակա-
 նաց եւ ի խարսխացն սոկեղինաց . ուր
 կային զահոյք բաղումք սոկեղէնք եւ
 արծաթեղէնք ընդելուզեալք մարգար-
 8 աօք եւ ակամրք պատուականօք՝ լցեալս
 պատուական հանդերձիւք ի վերայ վար-
 7 զայտտակ զաւթին . Ուր կային թա-
 կոյք եւ ըմպելիք թագաւորին սոկեղէնք
 եւ արծաթեղէնք , որք էին յերից բիւ-
 րուց քանքարաց , եւ զինի յոյժ՝ ար-
 8 քայի ըմպելի : Այլ կոչուռնքս որպէս
 օրէն էր եղեւ . վասն զի այսպէս կա-
 մեցաւ թագաւորն ասնել պաշտօնեայ
 9 ծառայիցն :՝ Եւ Ասթիւնէ կին թագա-
 ւորին արար կոչուռնս կանանց յատա-
 րանս թագաւորն *Արաւայիսի :
 10 Եւ յաւուրն եւթներորդի յանձն իւր
 դուարձացեալ լինէր թագաւորն . եւ ասէ
 ցԱման եւ ցԲարան եւ ցԹաւա եւ ցԲու-
 րաղէ եւ ցԱթիւլիթա եւ ցԲաստեղա եւ
 ցԹաւարբա , ցեւթանեալն ներքինիս՝

11 ցարչաժոնեայս իւր , կոչել շղկինն յար-
 քունիս թաղաւորեցուցանել զնա , եւ՝
 ցուցանել ամենայն իշխանաց եւ աղգաց
 զգեղեցեալ թիւն նորա . զի էր գեղեցեկ
 12 յոյժ : Եւ ոչ լուսն նմա Ասթիւնէ գալ
 առ նա ընդ ներքինիսն : Եւ արամեցաւ
 թագաւորն եւ բարկացաւ յոյժ :
 13 Եւ ասէ զսիրելիսն իւր զիրան զոր
 արար Ասթիւնէն . Արդ արարէք , ասէ
 թագաւորն , այսուհետեւ օրէնս եւ լու-
 14 բաւուռնս : Եւ մատեան առաջի նորա
 Արքինսէոս եւ Աւնաթեւ եւ Մագիսեար՝
 իշխանք Պարսից եւ Մարաց , որ էին
 մերձաւորք եւ ամբողջապէս արքային ,
 15 Եւ պատմեցին եթէ յոյպէս՝ օրէն է
 ասնել Ասթիւնեաց կնոջ թագաւորին ,
 զի ոչ արար զհրամանս արքային , զոր
 հրամայեաց նմա ի ձեռն ներքինեացն :
 16 Եւ ասէ Պաւքեւս ցարքայ եւ ցիշ-
 խանն , Ոչ եթէ արքայի միայն ընդզէմ
 զարձաւ Ասթիւնէ արկնանց արկին , այլ
 ամենայն իշխանաց եւ իւսասակապցար-
 17 քայի : Սոյնայնս եւ ամենայն կանայք
 լինին անհնազանդ իշխանաց Պարսից եւ
 18 Մարաց , Յորժամ լսին զարհամարհանս
 կնոջ թագաւորիս , համարձակին իշխել
 19 եւ անարգել զարս իւրեանց : Արդ , եթէ
 կամք իցեն եւ հաճոյ թուեսցի ար-
 քայի , մի մայէ նա առ արքայ . եւ
 զարկնու թիւն նորա տացէ կնոջ որ լաւ
 20 եւս . իցէ քան զնա : Եւ լուիցին զօրէնս
 զոր հրամայեա ի թագաւորութեանդ
 ճքում , եւ պատուեսցեն կանայք զարս
 իւրեանց սրատուով մեծաւ՝ յաղքատաց
 մինչեւ ի մեծամեծս :

1 Երբ ասուրքն այնքելի , արար արքայ ամենայն
 մարդրգեանն որ ի նուշան քաղաքի , ի մեծա
 մեծ մինչեւ ցիպրուսն , կոչուռն աւուրս եւ թիւն ,
 ի գաւթի պարտիքի ասնն արքունի : (6) Աս-
 րաքայի ի սպիտակ եւ ի կապուտակ կերպասէ
 կախեալ էին լարիւք ի նուրբ բեհեզոյ եւ ի ծի-
 րանեղ , եւ օղակք արծաթեօք ի սեանց որ ի
 մարմարինն . եւ ի վերայ յատակի ի պարտիբէրէ ,
 ի սպիտակ մարմարիննէ , յարարատարէ եւ ի
 սեւ մարմարիննէ կային զահոյք սոկեղէնք
 եւ արծաթեղէնք : (7) Եւ էր ըմպել յանոթս
 սոկեղէնս , եւ անոթն էին ալգիտոպղիք , եւ
 գինի արքունի բազում սրպէս վայել էր արքայի
 (8) Եւ ըմպելն էր ըստ օրինի . ոչ որ բռնադա-
 տեր . քանզի այսպէս հրամայեալ էր արքայ
 ամենայն պաշտօնէի ասն իւրոյ , ասնել ըստ
 կամաց ասն իւրարանչիւր : Երբ Ասուերոսի

2 Երբ զԱթիւնէ տակին առաջի արքայի թագաւո-
 րքունի , 3 Երբ ըստ բանին արքայի որ ի
 ձեռս ներքինեաց 4 Երբ արքայ ցիմաս-
 սուսն որ գիտէին զմասնակաւ (այսպէս էր
 ստորութիւն արքայի ընդ ամենեօնն որ գիտէին
 զօրէնս եւ զիրաւուռնս : (14) Եւ եւթսաներին
 իշխանք Մարաց եւ Պարսից՝ կարսեանս , Սեթար ,
 Աղմաթա , Թարսիս , Մեղեւ , Մարսեան , Սեմու-
 քան որ էին մտառն եւ տեսանէին զերես
 արքայի՝ էին առաջին խորհրդականք թագաւո-
 րութեանն : (15) Եթէ Որպէս 5 Երբ Մեմուքան
 6 Երբ մարդրգոց որ են յամենայն գաւառս արքայի
 Ասուերոսի . (17) Զի ելցէ բան արկնոյնս առ ամե-
 նայն կանայս՝ անցանել զարս իւրեանց յայս
 իւրեանց , եւ սարկին , Արքայ Ասուերոս տացաւ
 ծէլ զԱթիւնէ արկինս առաջի իւր , եւ ոչ եկն :
 (18) Եւ այստ խոսեցայն զայս օրինակ արկնայք
 Մարաց եւ Պարսից 7 Երբ ելցէ հրա-
 ման արքունի իւրեանց նորա , եւ զրեացի յօրէնս
 Պարսից եւ Մարաց , եւ մի ջնջեացի , զի մի՝
 8 Երբ քում որ մեծ է յոյժ

21 Եւ հաճոյ թուեցաւ բանն սրբայի եւ ամենայն իշխանաց նորա . եւ արար թագաւորն որպէս խօսեցաւ Մուքիւս :
 22 Եւ առաքեաց ընդ ամենայն իտալաւորութիւնն իբր ի վաւատան ամենայն՝ ըստ հրամանին որ եղաւ ի վերայ ամենայն կանանց :

Գ Լ Բ

1 Եւ յետ բանիցս այսոցիկ ²զադարեաց թագաւորն ի բարկութենէ անտի, ³եւ ոչ յաւել յիշել եւս զԱսթիւնէ . զի ի մահն ունէր զոր խօսեցաւն նա . եւ
 2 այսպէս մերժեալ ընկեցաւ կինն՝⁴ և օսեն սպասաւորք թագաւորին , Սընդերեայն արքայի ազջկունս կոյսս՝ զի-
 3 զեցիկս տեսանելով . եւ հրամայեացէ արքայ զաւտապետս կաջողանել ընդ ամենայն երկիր թագաւորութեանդ քո , եւ ընտրեացն ազջկունս կոյսս , եւ օտ-
 4 ցին անել ի Սուսէն քաղաք՝ ի կուսանոց մի . եւ տացն զնոսս զներքինին՝ ⁵արքունի՝ որ պահապանն է կանանց , եւ ⁶հրամայեաց արքայ տայ նոցա եւլ
 7 եւ անտա եւ զամենայն զարմանս՝ . եւ կինն՝ որ հաճոյ լիցի արքայի թագաւորեացէ նա փոխանակ Ասթիւնայ : Եւ հաճոյ թուեցան արքայի իրքն . արար այնպէս :
 8 Եւ էր այր մի Հրեայ ի Սիրիս քաղաքի , եւ անուն նորա Մուրթքէտս , որպի Յա-
 9 իրայ , որդւոյ Սեւեայ , որդւոյ Կիսեայ ,
 10 յազգէ Բենիամինի . Որ էր գերի եկեալ յերուսաղեմէ ¹¹զոր գերեաց Նաբուքո-
 12 զոնոսր արքայն Բաբելոնացոց : ¹³Եւ էր նորա մանուկ մտուցեալ զգուտար Ամի-
 14 նադարայ՝ եղբոր հօրն իւրոյ , եւ անուն

էր նորա Եսթեր . եւ յառնուլ զնա ի մօ-
 15 րէն եւ ի հօրէն իւրմէ՝ կամէր առնուլ իւր կնութեան . եւ էր ազջիկն բարի յոյժ տեսանելով :
 16 Եւ յորժամ լու ելել ¹⁷հրաման թագաւորին , ժողովեցան ազջկունք թագաւոր ի Սրսան քաղաք , ընդ ձեռամբ Ովկեայ . տարան ¹⁸զԵսթեր տա Ովկա ,
 19 որ էր ներքինի ի վերայ կանանց : Եւ հաճոյ եղև նմա ազջիկն , եւ եզրանա զնորնս առաջի նորա , եւ փութացաւ նմա տալ ²⁰զաճառն եւ զմասն զարմա-
 21 նոյ՝ նորա , եւ զԵսթին ազջիկն զորս տու-
 22 եալ էր նորա նամիչս յարքունուստ . եւ ²³պարմանէր զԵսթեր առուկազոյն քան զայլ ընկերս նորա՝ , եւ զնամոխտ
 24 նորա նոյնպէս : Եւ ոչ եցոյց Եսթեր զազգն եւ ոչ զգաւանն . փասն զի պատուիրեաց նմա Մուրթքէ՝ մի սրաս-
 25 մել : Եւ յաճախէր Մուրթքէ զամենայն օր չրջել առ տափս կանանցն , եւ սե-
 26 սանել թէ որպիսի անցք անցցին ընդ Եսթեր :
 27 ²⁸Ձի մերձ էր ժամանակ ազջկանն մտա-
 29 նել առ թագաւորն , յորժամ լնուին ա-
 30 միւք երկրոտաան .՝ (զի այսպէս կատա-
 31 րէին աւուրք զարմանոյ նոցա . առիսս վեց օճանէին իւզովք անուշիւք , եւ ամիսս վեց ի խոճկս անուշուս եւ
 32 ³³յաճառս եւ ի լուանալ կանանցն .) Եւ ապա մտանէր առ արքայն . եւ որում կամէր տայ զնա ի ձեռս նորա , մասնէր ընդ նմա ի սենեակն առաջի թագաւո-
 34 րին : Ընդ երեկս մտանէր առ թագաւորն , եւ ցերեկ երթայր անդրէն առ ընկերս իւր , եւ առ Ովկաներքինի պահապան կանանցն . եւ կայր անդէն , մինչեւ կոչէին զնա յականէ ի սենեակ թագաւորին :
 * 1 Եբր. հրաման եւ հրովարտակ 9 Եբր. զԵսթեր յարքունին 10 Եբր. զպէտ մարտութեան նորա և զաճեկն 11 Եբր. տարու զնա յազնուսոց զն տեղի կանանցին , 12 Եբր. Եւ իբրեւ լինէր ժամանակ մտանելոյ իւրաքանչիւր ազջկանն առ արայ Ասուերոս . յետ կատարելոյ իման երկրոտաան ամսոց ըստ սովորութեան կանանց , 13 Եբր. յորս պիտոյն էին ի մտարութիւն կանանցն . (13) Եւ ապա մտանէր ազջիկն առ արքայն և զոր ինչ իբ՝ զ-
 րէքն՝ տային նմա տանել ընդ իւր ի կանանցէ անտի յարքունին թագաւորին : (14) Ընդ երեկս մտանէր . եւ ցերեկ երթայր անդրէն յերկրոց կանանցն ընդ ձեռամբ Առաջայպայ ներքինոյ արքայի որ էր պահապան հարձկն . եւ ոչ եւս մտանէր առ արքայ , էթէ ոչ հաճէր ընդ նա արքայ . եւ կոչէր նա յականէ :

1 Եբր. Եսթերն : (22) Եւ առաքեաց հրովարտակս յամենայն զաւառս արքայի , յիւրաքանչիւր զաւառ ըստ զոր իւրում , եւ առ իւրաքանչիւր ժողովո . ըզ ըստ լեզուի իւրում զի կացցէ այր իւրաքանչիւր իշխան ի տան իւրում . եւ խօսեացի զեզու ժողովոյնն իւրոյ :
 2 Եբր. իբրեւ զազարեաց 3 Եբր. յիւրեաց զԱսթիւնէ եւ զոր արարեալ էր նորա , եւ որ ինչ զճաւալ էր զնմանէ 4 Եբր. արքունի , ցվգաս
 5 Եբր. տացն նոցա որ ինչ պիտոյն է ի մարտութիւն 6 Եբր. ընդ գերիսն զզր ընդ Յերոնէայ արքայի Յաւգայ 7 Եբր. և անուշանէր զԱսուսաս , այն ինքն է զԵսթեր , զգուտար հօրեղբոր իւրոյ , զի ոչ զպին նորա հայր եւ մայր . եւ ազջիկն էր զեղեցիկ երեսօք , եւ բարձր տեսանելով . եւ ի մեռանել հօր նորա եւ մօր նորա առ զնա Մուրթքէ իւր ի գուտար :

15 Եւ իրբեւ լնայր ժամանակն Եսթե-
 րայ՝ զստեկն՝ ¹Ամինադաբայ կղզոր հօրն
 Մուրթքէի՝ մտանել առ արքայն, ոչ ինչ
 արարիտա արար զոր միանդամ սրատու իր-
 ևայ նմա ²Ներքինին, որ էր ստանադան
 կանանցն, զի էր Եսթեր գառալ շնորհս
 յամենեկոսն որ միանգամ սեւանէին
 16 զնա, Եւ ³եմուա Եսթեր առ արքայն
 յերկոտասաներորդ ամսեանն Ադար, որ
 է Հայերէն Արեգ, յեւթներորդ ամի՝
 17 թագաւորութեան նորա: Եւ հաճոյ
 թուեցաւ Եսթեր արքայի յոյժ, եւ եւ
 զիտ նա շնորհս քան զամենայն կա-
 նայան, եւ եզ ի վերայ գլխոյ նորա
 18 զթագ կանանցն՝: Եւ արար թագաւ-
 ւորն կոչուես ամենայն ⁴սիրելեաց իւ-
 րոց եւ զօրացն իւրոց զաւուրս եւթն,
 եւ բարձրացոյց նա զհարսանիմն եւ-
 թեկայ, եւ հրամանս ետ թողութիւն
 սանել ամենեկուն որ ընդ թագաւորու-
 թեամբ նորա էին:
 19 Եւ Մուրթքէ զարմանէր եւ կազմըր
 20 զառւան թագաւորին՝: Այլ Եսթեր ոչ եցոյց
 զերկիր հայրենի զաւաւին ⁶Իւրոյ. զի
 այսպէս սրատու իրեալ էր նմա Մուրթքէի,
⁷երկնչել յԱստուծոյ եւ ամենկ զհրամանս
 նորա, որպէս էր նա սա նմա յառաջ.
 եւ Եսթեր ոչ փոխեաց զիւր կարգն:
 21 Եւ արտանցան երկու ներքինիք ար-
 քային՝ որ արձայանապետքն էին մտոց-
 կանն. վասն զինախանձէին ընդ Մուրթ-
 քէի՝ առաւել քան զնոսա սրատուելոյ ի
 թագաւորէն, եւ կամէին սպանանել
 22 զԱրտաշէս արքայ.՝ Եւ ազգ եղև Մուրթ-
 քէի լամնս այս, եւ յայանեաց Եսթերայ,

Եւ Եսթեր եցոյց արքայի ⁸զխորհուրդս
 23 մահուս: Եւ արքայն կշտամբեաց զեր-
 կտին ներքինիսն, եւ կտխեաց զնոսա
 զփաթաէ. եւ հրամայեաց թաղաւորն
 զիրան զայն գրել զգուշութեամբ, եթէ
 սրպէս հաւատարիմ եղև առ նա Մուրթ-
 քէս:՝

ԳԼ . Կ

1 Եւ եղև յեա այսորիկ եւ փոսուորեաց
 արքայ ⁹Արտաշէս զՀաման Դաթուրաւ
 հանդերձ եւ ընկերօք նորա՝, եւ յարձ-
 յայոցոյ զնա յառաջին սիմու քան զա-
 2 մենայն սիրելիս իւր: Եւ ¹⁰ամենեկին
 որ միանգամ էին ի ստն թագաւորին՝
 երկիր սրագանէին նմա, զի այսպէս
 հրամայեաց թագաւորն սանել. այլ
 3 Մուրթքէ ոչ պագանէր նմա երկիր: Եւ
 խօսեցան մեծամեծք թագաւորին ընդ
 Մուրթքէի եւ ասէն, ¹¹Մուրթքէ, ընդէր
 ոչ սրագանես զու երկիր Համանայ ըստ
⁴հրամանի թագաւորին՝: Հայ յամենայն
 որ խօսէին ընդ նմա, եւ նա ոչ լսէր
 նոցա, եւ ամբաստան եղևն զՄուրթքէ
 առաջի Համանայ. ¹²Եւ Մուրթքէ ոչ
 հնազանդեցաւ հրամանայն արքայի,
 5 քանզի՝ Հրեայ էր: Եւ յորժամ զիտաց
 Համան՝ եթէ ¹³ոչ պագանէ նմա երկիր,
 6 յարկացաւ յոյժ: ¹⁴Եւ խորհուրդ արար՝
 զի կորուսցէ զՀրեայն որ ընդ թագաւ-
 ւորութեամբն ¹⁵Արտաշէսի արքայի իցեն:
 7 Եւ արարին հանդէս համարոյ յամին եր-
 կոտասաներորդի թագաւորութեանն Ար-
 տաշէսի. եւ արկանէր վիճակ որ յօրէ
 եւ ամիս յամսոյ, զի որպէս կորուսցէ
 ի միւռմ աւուր զազգն Մուրթքէի. եւ
 սնկաւ վիճակն ի չորեքտասան ամսոյն
 Ագար:՝

¹ Էբբ. Արիքայեղայ, եղբոր հօրն Մուրթքէի, զոր
 արարեալ էր Մուրթքէ իւր գուստր, ² Էբբ.
 Ազա ներքինին արքայի ³ Էբբ. ամու Եսթեր
 տա արքայն Ասուերոս յագարանն նորա արքու-
 նի, յամենանն տասներորդի, (որ է Թէթթ մովս)
 յամի եւթներորդի ⁴ Էբբ. զթագն արքունի,
 եւ արար զնա սիրելի փոխանակ Աղդինեայ
⁵ Էբբ. իշխանաց եւ ծառայից իւրոց, կոչուես
 Եսթերայ, եւ շնորհեաց հանգիստ գաւառաց,
 եւ ետ պարգեւս որպէս վայել էր արքայի:
 (19) Եւ իրբեւ ժողովեցին ուղղվուես երկրորդ
 անգամ, Մուրթքէ նատեր առ գրան թագաւ-
 ւորին ⁶ Էբբ. իւրոյ, եւ զազգ իւր ⁷ Էբբ.
 զի Եսթեր արանէր զքանս Մուրթքէի, որպէս
 յորժամ անանէրն ընդ նմա:
 (21) Յաւուրն յայնտիկ, իրբեւ նատեր
 Մուրթքէ առ գրան թագաւորին, Բիգթան ե
 Թարեւ, երկու ներքինիք արքայի, ի պահապո-
 նաց ստոր գրանն, զայսոցեալ խնդրեցին մեկ
 զձեռս յարքայ Ասուերոս:

⁸ Էբբ. յամու Մուրթքէի: (23) Եւ խնդրեցաւ լամն
 ե գառու, եւ երկայրն կտխեցան զփաթաէ, եւ գրեցաւ
 ի գիրս յիշատակաց առաջի արքայի: ⁹ Էբբ. Աս-
 ուերոս զՀաման զարդի Ամնոյ ամի այ Աղ ազ սցււոյ
¹⁰ Էբբ. ամենայն ծառայք ¹¹ Էբբ. (Նոզ էր անցանես
 զու զհրամանաւ արքայի ¹² Էբբ. սեւանել
 եթէ կոչցէ Մուրթքէ ի քանս իւր. զի եցոյց
 նոցա Եթէ ¹³ Էբբ. Մուրթքէ ոչ ¹⁴ Էբբ.
 Եւ զոյցն ինչ թուեցաւ յայն նորա միւր ձեռս
 ի Մուրթքէ միայն, զի զգացուցեալ էին նմա
 զազգն Մուրթքէի, խորհուրդ արար Համան
¹⁵ Էբբ. Ասուերոսի արքայի իցեն, զազգն Մուրթքէի
 (7) Յամենանն առաջնուամ, այն է ամիսն Նիսան,
 յամին երկոտասաներորդի Ասուերոսի արքայի,
 եւ արկանել Փուր, այսինքն՝ վիճակ առաջի
 Համանայ որ յօրէ Եւ ամիս յամսոյ միւրեւ
 ցերկոտասաներորդն, որ է ամիսն Ագար:

8 Եւ Կիսոսեցաւ ընդ արքային եւ ասէ՛, Գոյ ազգ ցրուեալ ընդ հեթմոնոսս, եւ ընդ ամենայն իտպաւորութեան քում՝² որք են ապիրատք եւ խորամանկք քան զամենայն ազգս՝, եւ օրինաց արքունի ոչ հնազանդին. եւ ոչ օյուսս են արքայի եթէ ինոյուս գու զնոսսս Արզ, եթէ կամք իցեն արքայի, հրամանսսսսս կորուսանել զնոսս, եւ ես կարգեցից ի Կանձս արքունի ըսեր քանքար արծախոյ, եւ հնան արքայ զմաստնին իւր եւ ես Կնոս ի ձեռս ՅՄանայ Կրկ զՀրէիցն եւ կեքել առ ի կորուսանել 11 Գնոսսս՝ եւ ասէ իմպաւորն ցՀաման, Չարծաթի կալ ընդ քեզ, եւ զազգ զազգ արա սրպէս եւ կամիսս 12 Եւ կոչեցին զգալիւան արքունի յամսեանն առաջնում, յաւուրն երկրասաներորդի, եւ զրեցին որպէս եւ հրամայեաց նոցա Համան, զօրաւարաց, իշխանաց ընդ ամենայն գաւառսս ՚ի Հնդկաց մինչեւ յԹովկացիս՝ հարեարքանն եւ եւթն գաւառս, եւ իշխանայն ազգաց, զիր իւրաքանչիւր ինոյուս Արտաւ 13 չիտի հրամանաւ՝. եւ առաքեցան հրովարտակքն ի ձեռն հրեշտակաց ընդ ամենայն իշխանութիւնն ՅԱրասչիւի կորուսանել զազգն Հրէից յաւար միւում, յամսեանն՝ երկրասաներորդի՝ որ է Ագար, եւ յափշտակել զամենայն ինչսս 14 Եւ զասացուածս նոցա՝ ՅԵւ հրամանն հրովարտակին էր այսպէս՝

ՊԼ. Ժ. Գ

17 Արքայ մեծ Արտաւէս՝ ձեզ որ էք ի կողմանս Հնդկաց եւ Եթովպացոց,

իշխանաց եւ պետաց, ձեզ հնազանդեյողց, եւ ամենայն երկրիս Կայս Կրեմս 2 Կամեցեալ՝ ոչ ցատամար իշխանութեանս հպարտացեալ, ոչ քաղցրութեամբ եւ խոնարհութեամբ կարգեալ, զի Կոյնոսիկ սր ի հնազանդութեանն իցեն՝ անշուշտ յամենայն ժամ հաստատել զկեանս նոցա, զթագաւորութիւնն կացեալ խազազութեամբ մինչեւ ի ծագս երկրիս, ապ նորոյել զխազազութիւնն որում 3 ցանկացան ամենայն մարդիկ. Հաւատացեալ իմ որ խորհրդակիցս են իմ, զի որպէս ի Կրեմս տարցի զիրսս, որ զիմաստութիւնս եւ զինսամ առանց փոխութեոյ հաստատուն հաւատովք յայսմեալ, որով արծանի լեալ երկրորդ ախոսակցութեան իմոյ Համան. եւ եցոյց մեզ որ ընդ ամենայն սինգերս ազգ՝ խառնեալ են զժնդակ ժողովուրց ոմն, խափան որինաց, որք ընդզէմ կան իտպաւորաց, եւ ի բաց մերձեն յերևանց զհրամանսս առ ի չլսել նոցա, որ ի մէնջ ուզեալ եւ հաստատեալ անշուշտ մերոյ 5 իշխանութեանս Արզ կայեալ զազգս միայն՝ բովանդակ ազգաւ իւրեանց սուսաջի ամենայն մարդոյ որք միտնգամ իցեն, եւ զկարգս զօրինաց զօտարաց ի բաց փոխել. եւ որ զժնդակքն են եւ ընդզէմ մերոյ իրաց, յորոց ձեռաց կասարին ամենայն չարիք, որք են իմէնջ 6 միք մերոյ թագաւորութեանսս Կարգեցաք այժմիկ՝ վասն որոյ ձեզ ազգ աւարաք զրոյս մերով այսուիկ, եւ ի Համանայ որ հաստատեալ կացեալս է ի վերայ իրացս այսոցիկ, եւ երկրորդի հօր մերոյ, զամենեւեան կանամքք եւ որդւովք հանդերձ կորուսանել իցել սրով թշնամեալ՝ առանց զիմպոյ եւ ինայեցելոյ. յամսեանն երկրասաներորդում, ի չորրորդ աւուրն, որ է Ագար, 7 ի ապուռջս յայսմիկ մահու չարաւ ի զմտա իմցեն յաւուր միւում. եւ յետ այլս ժամանակի եկիցի խազազութիւն մեզ՝ ի կատարել իրացոյ այսոցիկ 8 Եւ պատճէնք հրովարտակցն սինեալ Կրկն ընդ ամենայն գաւառան. եւ իրրեւել հրամանն այն, ամենեքին սպարտաք լինէին սուրն այնմիկ. վութմանակի հասանէին իրքն այն եւ ի Շուշան քաղաք. եւ թագաւորն եւ Համան Կարգարէին զվարսս իւրեանց, եւ խոսիկք ամենայն քառաքնս՝

1 Եբր. ասէ Համան Կարքայ Ասուերոս 2 Եբր. ե օրէնք նոցա այլակերպք յամենայն ազգաց 3 Եբր. Համանայ որդւոյ Ամագայթայ Ազազացւոյ թշնամեցն Հրէից 4 Եբր. եւ իշխանայն ի գաւառս գաւառս ըստ գրոյ նոցա եւ ամենայն ազգի ըստ լեզուի իւրում յաման Ասուերոսի արքայի գրեցաւ եւ կնքեցաւ մատանեալ թագաւորն 5 Եբր. արքայի ջնջել ստատակել կորուսանել զամենայն Հրեայս յերկրասարդէ մինչ ցձեր, զմանկունս եւ զԿանայս յաւուր միւում յերեքասաներորդում ամսեանն 6 Եբր. Պատճէն հրովարտակին էր տոյ հրաման ի գաւառս գաւառս, յայտ աւարեալ ամենայն ազգաց կալ պատարտտ յաւուրն յայնմիկ (15) Ասր հանդակքն ելին սահպեալք ի հրամանէ թագաւորն, եւ սուս պատուէր ի նաշան քաղաքի. եւ արքայ եւ Համան իրովեցան ըմպել, ոչ խոսիկայ էր քաղաքն Շուշան 7 Ասր Բւ-ի Կ-ի-ի-ի յԵբրայեակէն :

ՓԼ. Կ

1 Եւ Մուրթքէ իբրեւ զխոսոյ զիրան՝ պատանեաց զպատմութեան իւր եւ զգեցաւ քուրձ, եւ ցամեաց մոխիր զզլտով իւրով, եւ ընթացաւ ընդ հրապարակաքաղաքին: Ի ձայն ¹Կորնթոսաց զուր զուր ստար սարապարտուց զազդս իմ, որ ոչ **2** ինչ գործեաց չարին: Եւ եկն մինչև ի զրուհա տանն արքունի եւ եկաց. զի ոչ իսկ էր արժան ²նմա մասնել ի գաւթին արքունի, զի զգեցեալ էր զքուրձ **3** Եւ զմոխիր: Եւ ընդ ամենայն գաւառուր եւ ³կարգայն զգիրն՝ ալաղակ եւ կոծումն եւ սուգ մեծ լինէր Հրէիցն, ⁴եւ արկանէին քուրձ եւ մոխիր զիրեւորս: **4** Եւ մտին ներքինիքն եւ նաթիչալն տիկնանց տիկնոջն, եւ պատմեցին Նաթիւրայ. Եւ խոսովեաց յոյժ ²իբրեւ լուսա վան հրամանին զոր ետ թաղաւորն. Եւ առաքեաց զգեղացանկ զճանկերձն Մուրթքէի, եւ հանել ի նմանէ զքուրձն: **5** Եւ նա ոչ հուանեցաւ նմա եւ Նաթիւրայ հայ հանապաղ առաջի նորա, եւ առաքեաց ճշմարտել ի Մուրթքէէ թէ ալաղակ **7** Եւ այնպէս իցէ: Եւ Մուրթքէ եղաց նմա զիրան որպէս եւ լիսլ էին, եւ ⁷լիտստ տունն զոր խոտաքան Համան արքայի, սալ ⁸դանձ բեր. քանքար՝ զի կորուսցէ **8** զՀրեայն: Եւ զպատճէնն՝ որ ի Սուսիս քաղաքի կարգացեալ էր առ ի կորուսանել զնոսա, ետ զայն ցներքինին զի ցուցէ Նաթիւրայ, ⁹եւ սաէ ցնա պատուիրելով, զի Մացեա եւ ինզրեացեա յարքայէ, եւ աղաչեցես վանն ժողովրդականն: զի յիշեացես զաւուրան տաւաղանաց քոց՝ որպէս եւ մնայն ի ձեռս իմ. վանն զի Համան երկրորդ արքայի խոսեցաւ զմէնց ի մահ. արդ աղաչեացես զաէր Աստուած ինդրուածովք:

Եւ խոսեցես, սաէ, թագաւորիդ վանն մեր, եւ փրկեցես զմեզ ի մահուանէս: **9** Եւ եւմա ¹⁰Անանայի եւ խոսեցաւ ընդ նմա զամենայն զբանս զայս: **10** Եւ սաէ Նաթիւր ¹¹Անանայի, Գնա **11** զու առ Մուրթքէ եւ սաս, ¹²Եթէ ազգ ամենայն թագաւորութեանս զիտէ եթէ ամենայն այր կամ կին՝ որ մասնիցէ ստարքայ ի ներքին սենեակն տանց կոչելոյ նորա, չիւր փրկութիւն. լայց միայն սո որ ձգէ ալաղակ զոսկի վաւաղանն, նա միայն ապրի. եւ ես ոչ եմ կոչեցեալ մասնել առ արքայ, զի են այս **12** աւուրք երեսուն: Եւ ¹³պատմեաց Անանայի. Մուրթքէի զամենայն զբանն **13** Նաթիւրայ, եւ սաէ Մուրթքէ ¹⁴Անանայի, Եթէ եւ սաս զու նմա թէ, Ես թէր, մի՞ աւեր գու յանձն քո, եթէ ես միայն ապրելիմ ի թագաւորութեանս **14** յամենայն Հրէից. ¹⁵Եւ ոչ լուրեցիս՝ ի ժամանակիս յայսմիկ, այցուստ լինի որդականութիւնս եւ փրկութիւնս Հրէից, այլ զու եւ տուն հոր քո կորչելի. եւ ո՞ իսկ զիտէ եթէ ի ժամանակի յայսմիկ **15** թագաւորեցիր: Եւ առաքեաց միւսան **16** զամ Նաթիւր առ Մուրթքէ եւ սաէ, Գնա զու եւ ժողովեա զՀրեայնն որ են ի Սիսիս քաղաքի, եւ պահեցէք ինձ պահս, եւ մի՛ կերիցիք եւ մի՛ բուրիցիք զաւուրս երիս, մի՛ գտել եւ մի՛ զգիչեր, եւ ես եւ նաթիչալ իմ զգուստանաք պահել. եւ ապա մարց ես առ արքայ, քանզի առնել զայս՝ արտաքոյ է օրինաց թագաւորին. արարից զայց եւ եթէ իցէ ինձ մեռանել, եւ ոչ յապաղեցից: **17** Եւ գնաց Մուրթքէ եւ արար որպէս պատուիրեաց նմա Նաթիւր:

ՓԼ. ԺԿ

8 ¹⁰Եւ աղաչեաց ինդրուածովք զՏէր, ի միտ առեալ եւ յիշեալ զպարձս մեծա **9** մեծս Տեառն, եւ սաէ, Տէր Աստուած, թագաւոր ամենակալ, զի քում հրամանից սպասէ ամենայն սք. ոչ սք է որ ընդզէմ կայ քեզ՝ յորժամ կամիս գու կեցուցանել զժողովորոց քս զԼիպայէ: **10** Ձի գու Տէր արարիւր զերկինս եւ զեր

¹ Իբր. Կորնթոսաց եւ ի զուստ աղաղակէր ² Իբր. գուրս ³ Իբր. հասանէր զիւր հրամանն թագաւորն ⁴ Իբր. պահէին պահս եւ ⁵ Իբր. զվաթուրք ի ներքինեաց թագաւորին ⁶ Իբր. իցէ: (6) Եւ եյ Հաթարք առ Մուրթքէ ի հրապարակ անդր քաղաքին որ յանդիմանն գրան արքունի ⁷ Իբր. զխոստութեան արձաթն ⁸ Իբր. ի գանձն արքունի ⁹ Իբր. եւ յայտ արաւայէ նմա եւ պատուիրեացէ մասնել առ արքայ, եւ աղաչել զնա եւ ինդրել լերեաց նորա վանն ժողովրդեան իւրոյ

¹⁰ Իբր. Հաթարք ¹¹ Իբր. զվաթուրք ¹² Իբր. Ամենայն ծառայք արքայի եւ ¹³ Իբր. պատմեցին ¹⁴ Իբր. սաթի զիւր թէր, Կի ¹⁵ Իբր. Ձի եթէ լուրջ լուրեցիս ¹⁶ ԺԿ, ԺԿ եւ ԺԵ Էւր-Էր գուրս յիբր. Էւր-Էր

- 11 կիր եւ զամենայն սքանչելիս . Եւ զուսիրես ի վերայ ամենայնի , եւ ոչ ոք է որ հակառակ կայ քում սերութեանդ ,
- 12 որ զամենայն գիտես . Զի ոչ հպարտութեամբ ինչ եւ ոչ սովորտաւ անութեամբ եւ ոչ ի շնամանօք սրարի գոյս չարգանկս իմ՝ երկիր ամբարտաւանին
- 13 Համանայ : Այլ հաճէի եւ կամէի սրագանել զգարչապարս սահլց նորա առ ի
- 14 վրիւթիւն տան Իսրայելի : Այլ անարկց պայ , զի մի՛ տայ զխաւ մարդց , այլ քեզ միայն ճշմարտից Աստուծոյ , եւ ոչ երկիր սրագից ումիք՝ բայց քեզ Տեսան խնում . եւ ոչ արարի գոյս ամ-
- 15 քարտաւ անութեամբ : Արդ , Տէր Աստուած Արարճամա . ինպիս զու ի ժողովուրդ քո , զի յարուցեալ են ի վերայ մեր աստիականչք , զի ցանկացիալ են կորուսանել զժառանգութիւն քո որ էր
- 16 ի սկզբանէ . Ամի՛ սնտաւ ասնիւր զբաժին քո զոր զու քեզնի փրկեցեր յերկ-
- 17 րէն եզրիտացեաց : Լուր , Տէր , ձայնի աղօթից իմոց , եւ քառիչ լեր ժառանգութեան քում , եւ զարձա գաւզս մեր յարախութիւն . զի կենդանիքս օրհնեցուք զանունդ քո մեծ , Տէր , եւ մի սրականեր զբերան զայն որ օրհնէն
- 18 զքեզ : Եւ ամենայն Իսրայէլ կարացին առ Տէր յամենայն զօրութենէ իւրեանց . զի մահն առաջի նոցա էր :

Գ Լ . Ժ Ի

- 1 Եւ եսթեր տիկինն ապատանեալ սո Տէր , եւ հաստատեալ էր ի ճիգն մեծ :
- 2 Եւ եհան յւրմէ զհանգերձ վատաց թագաւորութեան իւրոյ , եւ զլեցաւ նա քորձ նեղութեան եւ սղոց . եւ փախանակ պէտպէս սրատական իւղոցն եւ ինկոցն՝ մտարով եւ աղբալ ելից զգլուխն իւր , եւ զմարմինս իւր ի բազում աշխատութիւնս խոնարհեցոյց , եւ զամենայն անդի զարգու զյնձութեան իւրոյ՝
- 3 ելից ի գլխոց ներս իւրոց : Եւ մատուցեալ թաղում՝ աղօթիւք ինդրուածոց հայցէր ի Տեսանէ Աստուծոյ Իսրայելի եւ սաէր , Տէր իմ եւ թագաւոր մեր , գու միայն օգնես ինձ միայնումս , որ ոչ ունիմ ինձ օգնական բաց ի քէն .
- 4 Զի վասնդ մեծ է առաջի իմ՝ (5) Ես լսէի ի ծննդենէ իմմէ՝ ի հայրենի ազգէն իմմէ , եթէ զու Տէր ասեր զԻսրայէլ յամենայն ազգաց , եւ զհարսն մեր յազ-

գատահմէն իւրեանց ի ժառանգութիւն քեզ յախտան , եւ արարեր նոցա զամենայն զոր խօսեցար : Եւ զարձեալ եւս յաճախեալ յազօթնս իւր այսպէս սաէր . Աստուած Արարճամա , Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակարայ , զու ես օրհնեալ յաւխտանս . ես լսէի ի հայրենի զրոց , զի զու Տէր փախեցեր յերկրէ յերկինս զէնտիք , յապաշխարութենէ ի կեանն յախտանից . ես լուայ ի հայրենի զրոց , Տէր , եթէ զու զնոց ի ջուրցն հեղեղէ ասրեցոյցեր . ես լուայ ի հայրենի զրոց , Տէր , եթէ զու Արարճամա՝ սոսջի սրանցն իւրոց ի մէջ թագաւորացն հասար փառս . ես լուայ ի հայրենի զրոց , Տէր , եթէ զու զՅովիան ի կէտ ձկանն ասրեցոյցեր . ես լուայ ի հայրենի իմոց զրոց , Տէր , եթէ զու զերթս մանկունսն ի հնոցէ հրաց վրկեցեր , եւ զՄանիէլ ի զրոց սաւեժուցն ասրեցոյցեր . ես լուայ ի հայրենի իմոց զրոց , Տէր , եթէ զու զեզեկիս արքայն Հրէստանն՝ մահուն զատարարեալ՝ փրկեցեր , եւ ի կայ նորա յազօթն առ քեզ վասն կենաց իւրոց՝ սգարմեցար , եւ շնորհեցեր եւ յաւելեր ի կեանս նորա ամս հնդեատասան . ես լուայ ի հայրենի իմոց զրոց , Տէր , եթէ զու ի ինդրէն ի քէն , Տէր , Աննայի աղօթիւք եւ ինդրուածովք , զաւակ շնորհեցեր նմս

6 զմեծն Աստուէլ : Եւ արդ այժմ մեք , Տէր , մեզաք առաջի քս , եւ մասնեցեր զմեզ ի ձեռս թշնամեաց մերոց ,

7 Փոխանակ այնր զի փառաւորեցաք մեք զատուածս նոցա . սրբար ես զու Տէր :

8 Եւ այսու ոչ շատացան ի ծառայելս մարում նոցա , այլ եղին զձեռս իւրեանց

9 ի վերայ կոոց իւրեանց , Բանալ զայն զոր սահմանեալ բերանդ քո , եւ եզձանել զժառանգութիւնս քո , եւ ինուզ զբերանս որ օրհնեն զքեզ , եւ շիջուցանել զխաւս տան քո եւ զսկզմանց

10 սրբոց քո , Եւ լանալ զբերանս ազգաց ի փառաւորել զաշինչ աստուածս իւրեանց , եւ փառաւորել զթագաւորս

11 մարմնաւորս յախտանիս այսորիկ : Եւ արդ , Տէր Աստուած , մի՛ մասնել զվրձակ ժառանգութեան քո ի ձեռս այնուցիկ որ սչն իսկ են բնաւ , զի մի՛ ուրախութեամբ ցնծապցին ի վերայ կործանմանս մերոց . այլ զարձա զխորհուրդս նոցա անդրէն ի նոսին , եւ զայն որ

յարուցեալ է ի վերայ մեր խայտառակ-
 12 եա : Յիշեա, Տէր, եւ մի՛ անտես առ-
 ներ ի մամանակի նեղութեանս մերում :
 Եւ զիս համարձակեցոք որ Թագաւոր
 եւ ամենայն թագաւորաց եւ Տէր տե-
 13 բանց , եւ տաւր ինձ բան զիր ընդ
 բան , որով գտանիցեմ չնորհս առաջի
 թագաւորին . եւ զարձո զսիրա նորա
 յառակութիւն թշնամեոյն մերոյ՝ առ ի
 կատարումն նմին եւ կամակցաց նորա .
 14 Այլ զմեզ փրկեա բարձր բազկաւ քով ,
 եւ օգնեա ինձ միայնումս՝ որում ոչ ոք
 15 է օգնական բաց ի քէն , Տէր : Տէր ,
 դու զամենեկուն զսիրտս զխոտս եւ
 ճանաչեա , եւ ես առեցի զփառս սնո-
 բնացս , եւ զարչեցեալ եմ յանկողնէ
 16 ստացուածոցս : Դու զխոտս , Տէր , զկու-
 բրս իմ , զի զարչելի է ինձ թաղս որ
 է ի վերայ զլսոց իմոց . զարչիմ ի սմանէ
 որպէս ի կայսրաէ որ լինի բոս օրի-
 նաց կանանց , եւ ոչ զբնում գնա յոր-
 17 ժամ ի ներքս զտղարմի : Եւ ոչ կերաւ
 աղախին քո ի սեղանոյ անտի Ամանայ ,
 եւ ոչ փառաւորեցի զզինարբուս թա-
 գաւորին , եւ ոչ արբի զլինի սպանդից
 18 նոցա . Եւ ոչ արախ եղեւ աղախին քո
 յորէն յայնմանէ՝ յորմէ հեռէ մտեալ եմ
 առ թագաւորն մինչեւ յայժմ , բայց ի
 քեզ , Տէր , Տէր Աստուած Աբրահամու :
 19 Աստուած հզօր ի վերայ ամենեկունց ,
 լուր ձայնից անյուսացս , եւ փրկեա
 զմեզ ի ձեռաց որ չարչարեմա զմեզ , եւ
 փրկեա զիս յերկիւզէ անտի զոր եր-
 կնչիմս , եւ ապրեցո զժողովուրդ քո զիս-
 րայէլ :

ԳԼ . ԺԵ

4 Եւ եղև յաւուրն երրորդի իրրև գա-
 զարեաց յաղօթիցն իւրոց , մերկացաւ
 յիւրմէ զհանգերձ սոյն , եւ զգեցաւ զժի-
 5 բանիսն իւր , եւ եղև երևեկի յայժմ : Եւ
 կարգաց նա առ սեսուէն իւր Աստուած
 եւ փրկիլն ամենայնի , եւ սա նա զեր-
 6 կուս նամիչսն իւր զսիրելիս . Մին ու-
 7 նէր զստորաւ զգեստաւ նորա ի վեր , եւ
 8 զմիւստիւն արկեալ զձեռն իւր : Եւ նա գա-
 մօթի հարեալ երկնէր վասն զեկոյ ման-
 կութեան իւրոց . եւ երեսք նորա
 զուարթք առ ի սրբել , այլ սիրտ նորա
 9 նեղեալ էր յահէ անտի : Եւ եմուտնա
 ընդ ամենայն զրուես ապարանիցն , եւ

կկաց նա տաջի թագաւորին . եւ նա
 նստէր յաթոս թագաւորութեանն իւրոց ,
 եւ զգեցեալ էր զյաւամուճան փառացն
 իւրոց , որ էր ընդիւզեալ ոսկեով եւ
 մարգարտով եւ ակամբք պատուակա-
 10 նօք , եւ էր ահաւոր յոյժ : Եւ ի վեր
 համարձ գերեսս իւր , զի էին կար-
 ւարացեալ փառօք , եւ նայեցաւ . եւ զլորե-
 ցաւ արկինն , եւ փոխեացնա զգոյն իւր ,
 եւ եղև նա իրրև զմալացեալ , եւ
 խնարհեցաւ ի գլուխ նամչսն որ եր-
 11 թայր առաջի նորա : Եւ զարձոց Աս-
 տուած զոգի թագաւորին ի հեզութիւն ,
 եւ փութացեալ վազվազակի էջ մեծաւ
 երկիւզիւ յաթոսոյ անտի իւրմէ թա-
 գաւորն , եւ սա զարկինն ի վերայ զրկաց
 իւրոց եւ կանգնեաց գնա , եւ ազաչէր
 եւ միւրթարէր քան բանիւք խաշարու-
 12 թեան , եւ աէր ցնա , Զի է քեզ , եւ-
 թեր արկին . ես եղբայր քո եմ , հա-
 13 մարձակեաց , ոչ մեռանիս . Զի ի միա-
 14 սին է իմ եւ քո հրամանս . Մատիբ դու
 եւ սա զպաւաղանն զոսկի , եւ զիր ի
 15 վերայ սարանոցի սփինսձգ : Եւ համ-
 բուրեաց գնա , եւ առէ , Սօսեաց ընդ
 16 իս : Եւ առէ ցնա Եսթեր , Տեօի զքեզ ,
 աէր , իրրև զհրեշտակ Աստուծոյ , եւ
 խառնեցաւ սիրտ իմ յահէ փառաց քոց .
 17 Զի սքանչելի ես աէր իմ , եւ երեսք քո
 18 լի են չնորհօք : Եւ մինչեւ իստէր ընդ
 նմա՝ զլորեցաւ միւսանգամ յահէ թա-
 19 գաւորին : Եւ թագաւորն խառնեալ էր
 յոյժ եւ ամենայն ծառայք նորա : Եւ
 սարստուրք թագաւորին ազաչէին զար-
 կինն : Եւ առէ թագաւորն , Զինչ կա-
 միս , Եսթեր , եւ զինչ են ազաչանքդ
 քո . արգարեւ ասեմ քեզ , եթէ ինդրես-
 ցես մինչեւ ի կէս թագաւորութեանս
 իմոց , ապց քեզ :

ԳԼ . Ե

4 Եւ առէ Եսթեր , Օրս իմ այս նշանա-

1) Եր. (1) Եւ եղև յաւուրն երրորդի , ե զգեցաւ
 եսթեր զհանգերձս թագաւորութեան , եւ
 եկաց ի գաւթի անդ ներքում՝ յանդիման տան
 թագաւորին . եւ թագաւորն նստեր ի վերայ
 աթոռոյ թագաւորութեան իւրոյ յանդիման
 գրան տանն : (2) Եւ եղև իրրև ետեւ արքայ
 զԵսթեր արկին զի կոյր ի գաւթին , ե զիս նա
 չնորհս յաչ նորա , եւ ձգեաց թագաւորն առ
 Եսթեր զպաւաղանն ոսկի զոր ունէր ի ձեռին
 իւրում , եւ մտաեաւ Եսթեր եւ մերձեցաւ ի
 գլուխ գաւազանին : (3) Եւ առէ ցնա արքայ ,

ւոր է՝” եթէ կամք իցին արքայի, եկեացնս զու եւ Համան ի կոչուանն իմ զոր 5 աննիւոյ եւմ այսօր : Եւ սաէ թապաւոյն, Կոչեցէք վաղվազակի զՀաման, եւ կատարեսցուք զբանն Եսթերայ : Եկին Երկոքեան նոքա ի կոչուանն զոր արար Եսթեր :
 6 Եւ մինչդեռ ըմպէին զինի, սաէ արքայն ցեւթեր, ¹Զինչ կամիս, աիկին Եսթեր, տաց քեզ զոր ինչ եւ խնդ- 7 րեսցես : Եւ սաէ Եսթեր, Ազաչանք 8 իմ եւ ինչորուածք իմ այս ես, Եթէ զաի ես չնորնս առաջի ²արքայի, եկեացէ արքայ եւ Համան ի կոչուանն զոր առ- 9 նեմ ³ձեզ վաղիւ մուսանդամ” :
 9 Եւ ել Համան ⁴յերեսաց արքայի՝ ուրախութեամբ մեծաւ եւ զուարթութեամբ, եւ իրրեւ ետես Համան զՄուրթ- 10 րարկացաւ յայժ : Եւ՝ Եմուսնա ի սուն իւր, եւ կոչեաց զաիւրելիս իւր, եւ 11 Զովսարբա զկին իւր : Եւ ⁶եցոյց նոցա զեւեթութիւն եւ զփառան իւր զոր ես նմա թապաւորն, եւ որպէս տրար զնա առաջին ի թագաւորութեանն իւրում” :
 12 Եւ սաէ Համան, Աչ կոչեաց աիկինն Եսթեր ի կոչուան իւր ընդ արքայի զոր- 13 րաց յինչն, եւ զարձեալ աւ վաղիւ եւս ⁷հրաւիրեաց ⁷զիս : Եւ արգայս ոչ թուի ինչ հաճոյ, յորժամ տեսանեմ զՄուրթքէ՝ 14 զայր Հրեայ ի տան թագաւորին : Եւ սաէ ցնա Զովսարբա կինն իւր եւ սիրելիքն իւր, Հրաժան սուր հատանել քեզ փայտ մի յիտուն կանգուն, եւ ընդ առաւօտն ասասցես արքայի եւ կախեսցի Մուրթքէ զփայտէն. եւ զու

մասնիցես ի կոչուանն հանդերձ արքայի, եւ ուրախ լինիցիս ընդ նմա : Եւ հաճոյ թուեցաւ Համանայ բանն, եւ պատրաստեցին զփայտն :

ԳԼ Զ

1 Եւ ⁸Տէր Աստուած մերձեաց զքուն՝ յարքայէ զգլշեցին զայն. եւ սաէ ⁹ցարդարապետն իւր՝ բերել առաջի իւր զվրբ ¹⁰հրովարտակին եւ կարգալ : Եւ եկիս նա զհրովարտակն զոր զրեալ էր վան Մուրթքէի, թէ որպէս պատմեաց ¹¹վասն երկոցունց ներքինեացն նորա, յորժամ պահէին զսարսումնս թապաւորին, եւ կամէին սպանանել զարքայ ¹²Արապէս : 3 Եւ սաէ թագաւորն, Եւ զինչ չնորնս եւ կամ փառս առաք Մուրթքէի. եւ սանն սպասուորքն արքայի, Չարարեր եւ ոչ ինչ նմա ³յորժամ հասեր ի վերայ խնամոյ հաւատարմութեան նորա տաքեզ, Եւ ընդ առաւօտն եկին ի գաւթի թագաւորին” : Եւ սաէ արքայ, Ա՛յ է ի գաւթիս : Եւ Համան եկն եմուս՝ հրաման անուր ի թագաւորէն, զի կախեցէ զՄուրթքէ զփայտէն զոր պատրաստեաց : 5 Եւ սանն սպասուորքն արքայի, Ահաւառակ Համան արտաքոյ է. եւ սաէ արքայ, Կոչեցի ի ներքս :
 6 Եւ սաէ թագաւորն ցՀաման, Զինչ արարից ես ատնն զոր ես կամիմ փաւաւորել. եւ խորհեցաւ Համան, եւ սաէ ի միտս իւր, Զո՛վ կամի արքայ փաւաւորել եթէ ոչ զիս : Եւ սաէ ցարքայ, Զայրն զոր արքայ կամի փառաւորել, 8 Իերկեցն զպատմուճանն զարքունի, եւ զերթիարն յորում արքայ հեծանէր, ¹³եւ տացին աննն այնմիկ սիրելւոյն արքայի 9 ի փառաւորաց անախ. Եւ՝ զգեցուցեն զպատմուճանն աննն այնմիկ զոր արքայն ¹⁴սիրէ, եւ հեծուցին զնա յերկւփարն արքունի, եւ քարոզ կարգացի ընդ հրովարակա քաղաքիս, եւ ասացէ, Այսպէս եղիցի ամենայն անն զոր արքայ փառաւորէ : Եւ սաէ արքայ ցՀաման, ¹⁵Բարւք խօսեցար. զայլ՝ արաս-

Զի՞ է քեզ Եսթեր տիկին, եւ զի՞նչ է ինչորուած քո՞ մինչեւ ցիէս թագաւորութեանս տացի քեզ : (4) Եւ սաէ Եսթեր,
 1 Եթէ Զինչ եւս ազաչանք քո՞ տացի քեզ. եւ զինչ ինչորուած քո՞ մինչեւ ի կէս թագաւորութեանս եղիցի ²Եթէ արքայի, եւ եթէ բարւք թուի արքայի տալ զազաչանս իմ եւ սուննել զեւեթութեանս իմ ³Եթէ ձեզ եւ վաղիւ արարից ըստ բանին արքայի ⁴Եթէ յաւուր յայնմիկ ⁵Եթէ ի դրան թագաւորին, զի ոչ յարեալ եւ ոչ շարժեցաւ վասն նորա, յցաւ Համան ի վերայ Մուրթքէի բարկութեամբ : (10) Եւ արար բուռն սնձիկ իւրում Համան, եւ ⁶Եթէ թուեաց նոցա Համան զփառս մեծութեան իւրոյ եւ զազաչանութիւն որդւոց իւրոց, եւ զամենայն որովք մեծացուցեալ էր զնա թագաւորն, եւ զի բարձրացուցեալ էր զնա ի վեր քան զերեսնս եւ զմասոյս արքայի ⁷Եթէ զիւ ընդ արքայի

⁸Եթէ մերձեաց քուն ⁹Եթէ գլուխ ¹⁰Եթէ յիշատակաց ¹¹Եթէ վասն Իիդթանայ եւ թարեսի ¹²Եթէ Ասուերոս ¹³Եթէ եւ որչ տուեալ է պսակ թագաւորութեան ի զլուի նորա : (9) Եւ տացի պատմուճանն եւ երթիարն ի ձեռն սուն յիշխանաց արքայի աւագոց եւ ¹⁴Եթէ կամի մեծարել ¹⁵Եթէ Փուլթա աւ զպատմուճանն եւ զերթիարն, որպէս խօսեցար

ցեա Մուրթքէի անն Հրէի Վնամակալի
 11 Եւ ան Համան զպատմութեանն եւ
 զերիվարն արքունի, եւ զգեցոյց զՄուրթ-
 քէ, եւ հեծոյց զնա յերիվարն, եւ անց
 նա ընդ փողոցս քաղաքին. եւ քարոզն
 աղաղակէր եւ ասէր, Այսպէս լիցի ա-
 մենայն մարդոց զոր կամիցի արքայ
 12 Գառաւորել, եւ գարձաւ Մուրթքէ յա-
 սրարանս արքունի, եւ Համան զնաց ի
 տուն իւր զյատարկեալ լի արտուածեալս
 13 Եւ պատմեաց Համան որ զինչ անց ընդ
 նա Չալասարոյի կնոջ իւրում եւ սի-
 րելեաց իւրոց, եւ ասեն ցնա նիրելիքն
 եւ կինն իւր, Եթէ յազգէ Հրէից էր
 Մուրթքէ եւ եղեւ իշխան, հնարանդեա
 նմա, զի ոչ կարես զու նմա չար հա-
 տուցանել, քանզի Տէր Ատուած ընդ
 14 նմա է, եւ նա մեծացոյց զնա՝ եւ մինչ-
 զեւ նոքա խօսկին, ³եկին երկու ներ-
 քինիքն կոչել զՀաման ի ձաչ արկնոջն՝

ԳԼ . Ե

1 Եւ ետուտ թաղաւորն եւ Համան ⁴ի
 2 գիներբուս արկնոջն, եւ ասէ արքայ
 ցեաթեր յաւուրն երկրորդի մինչցես բմ-
 պէին զինի, ²թ է քեզ, Եսթեր արկին,
 եւ զինչ է ինդրուած զք եւ կամ ա-
 զաչանքդ. եզիցի քեզ մինչեւ ի կէս
 թագաւորութեանս իմոց,
 3 Եւ պատասխանի ետ Եսթեր եւ ասէ,
 Եթէ զտի հորհոս առաջի քո, արքայ,
⁵տացի անձն մի ինդրոս իմում, եւ բան
 աղաչանալս իմոց ընդօճենլի լիցի՝
 4 Վասն զի վաճառեցար ես եւ ժողովուրդ
 իմ ի կորուստ եւ ի ծառայութիւն եւ ի
 յախչատակութիւն, ⁶մեք եւ որդիք մեր,
 եւ ես ոչ հաւատացիլ. արդ ոչ է ասն
 բանաբոկոսի արման ի ասն թագաւորի
 լինել Վ՝

¹ Եբբ. որ նախ ի գրան արքայի ² Եբբ. իմաստունք
 նորս եւ Զերէս (Զգաւարթս) կին նորս, Եթէ է
 գաւառէկ Լեւից է Մուրթքէ, սրբ սխար զու
 անկանել առաջի նորս, ոչ յարթ Լեւից նմա,
 սլլ անկանելով անկցին առաջի նորս ³ Եբբ.
 եկին ներքինի թագաւորն եւ փութացուցին
 տանն զՀաման ի կոչումն զոր արտեալ էր
 Եսթերայ, ⁴ Եբբ. ըմպել ընդ Եսթերայ ⁵ Եբբ.
 եւ Եթէ հաճոյ թուեցի արքայի, տացի
 ինձ անձն իմ ի ինդրուածս իմ, եւ ժողովուրդ
 իմ յաղաչանս իմ ⁶ Եբբ. եւ Եթէ վաճառէար
 ի ծառայս եւ յաղախնայս, լուէի թեպէտեւ
 բանաբոկոսն չէր բաւական առնել հատուցուցն
 վաստու թագաւորին :

5 Եւ ասէ արքայն, Ո՞ւր է՝ որ իշխեաց
 6 աննել զիրս զայս, եւ ասէ Եսթեր,
 Այրս թէ նամի Համան՝ որ չարս է, սա
 արար, եւ Համան զանի հարեալ խոռ-
 զկեաւ յարթ արքայէ եւ ի արկնոջն,
 7 Եւ յարեալ թաղաւորն ի ձաչոյ անտի,
 եւ ետուտ ի ձաղկոցն արքունի, եւ
 Համան ⁹կամէր հրամարել ի արկնոջն,
 8 քանզի էր յերկիւզի մեծի՝ Եւ գործաւ
 թաղաւորն ի ձաղկոցէ ¹⁰անտի, եւ ետես
 զՀաման զի կայր անկեալ առաջի զա-
 հայից արկնոջն՝ ¹¹Եւ ազաչէր զնա վասն
 փրկութեան իւրոց՝ Եւ ասէ թագաւորն,
 Արդ յայդ չափ հասեր, զի կամիս զկին
 իմ բնամազափ ի տան իմում, ¹²Եւ Հա-
 ման իբրեւ լուաւ, զանի զամօթի հար-
 9 եալ անկաւ ի վերայ երեսաց իւրոց՝ Եւ
 ասէ Բուզաթան մի ի ներքինեաց անտի
 ցարքայ, Ահա Համան փայտ մի
 կազմեաց Մուրթքէի սիրելոյ արքայի,
 եւ կանդնեաց զնա ի տան իւրում յի-
 սուսկանդնեան, եւ ասէ թագաւորն,
 10 Խաչեացի ի վերայ նորս, եւ կարեցին
 զՀաման զփայտէն զոր պատրաստեաց
 Մուրթքէի, եւ սոպա թագաւորն զա-
 գորեաց ի բարկութենէ իւրմէ :

ԳԼ . Ը

1 Եւ յայնմ աւուր պարգեւեաց թագաւորն
 Եսթերայ ¹³զգանձն Համանաց քուսի,
 եւ զՄուրթքէ կոչեցեալ՝ թագաւորին,
 2 քանզի պատմեաց նմա Եսթեր եթէ ազ-
 2 զափան իմ է, եւ ան թագաւորն զմա-
 սանին զոր եհան ի Համանայ, եւ ես
 զնա Մուրթքէի, եւ կոցոյց Եսթեր
 զՄուրթքէ ի վերայ ամենայն ընչից
 Համանայ,
 3 Եւ յաւել եւս խօսել ընդ արքայի, եւ
 անկաւ առաջի ոտքի նորս, եւ ¹⁴ազաչէր՝
 զի մի մինչեւ ի վախճան լիցի պատու-
 հանն ի վերայ Հրէիցն զոր հասոյց Համան՝,
 4 Եւ ձգեաց արքայ առ Եսթեր զգաւա-

⁷ Եբբ. արքայ Ատուերոս ցնվեր արկին, Ո՞վ էր
 այն, եւ ո՞ւր էր նա ⁸ Եբբ. թագաւորն բար-
 կութեամբ ⁹ Եբբ. եկաց աղաչել փան անձին
 իւրոյ զԵսթեր արկին, զի ետես Եթէ վաճառու
 էր փան նորս յարքայէ ¹⁰ Եբբ. անտի ի տուն
 խրոխութեան զինուցն ¹¹ Եբբ. զաչու
¹² Եբբ. իբրեւ ել բանս այս ի բերանոյ թագա-
 ւորին, ծած կեցին զերեսս Համանայ ¹³ Եբբ.
 զտունն Համանայ բուսի Լեւից, եւ կին Մուրթքէ
 առաջի ¹⁴ Եբբ. լայր եւ աղաչէր զնա անցու-
 ցանել զչարն Համանայ Աղաղացւոյ, եւ
 զխորհուրդն զոր խորհեցաւ նա ի վերայ Հրէիցն

զանն ոսկի . եւ յարեաւ Եսթեր ¹հերժայ
⁵ի սենեակն՝ արքայի : Եւ առէ Եսթեր ,
 եթէ կամք իցին քեզ եւ գտեալ է իմ
 չնոր՝ առաջի քո , ²առաքեցէ արքայ
 հրեշապս եւ զարձուսէ զհրովարտական
 որ պրեցանն ի Համանայ՝ ի զորուսանել
 զՀրեայն որք են ի քում խաղաւորու-
⁶թեանց : Եւ զհամր կարոյնմ ես ան-
 սանել զչարիս ժողովրդեան իմոց , եւ
 կամ զհամր կարացից ³ապրել ես ի
 բնակչաց հայրենի գաւառին իմոց՝ :
⁷Եւ առէ թագաւորն ⁴գեւթեր , Իսկ
 եթէ զամենայն ինչս Կւ զստացուածս՝
 Համանայ ետու չնորհեցի . քեզ , եւ զնա
 կախեցին զտալսն , զի ձեռնէ արկ նա ի
 Հրեայն , ⁵զի՞նչ այլ եւս ինչ ինոցրիս՝ :
⁸Գրեցէք արք ⁶զուք հրամանաւ բանի
 իմոց որպէս կամք իցին ձեզ , եւ կնքեա-
 ցի մատանեաւս խոով . զի ⁷որչափ եւ
 գրէք՝ իմ արքայի հրաման առեալ . զի
 մի՛ որ զայի զիմակաց այնց հրամանաց՝ :
⁹Եւ կոչեցին ⁸զգպիրսն յառաջնում ա-
 լուրն յամենանն Նրամն՝ որ է Արեզ ,
 ի քամերորդի յերրորդի ամի՞ . եւ գրե-
 ջաւ՝ որպէս եւ ետ հրաման ⁹ախար-
 համար պարայն , որք միանգամ իշխանքն
 եւ կուստիրաքն էին ի զաւառս գաւառս ,
 նախարարայն , եւ իշխանաց նախարա-
 րայն՝ , ի Հնդկաց մինչեւ յեթովսրայիս՝
 հարեւր քսան եւ եթն կուստիրայն ,
 ըստ գաւառաց գաւառաց յիւրաքան-
¹⁰չիւր ¹⁰ընդուս նոցա , Հրամանաւ թա-

գաւորին . եւ կնքեցաւ մատանեաւ նո-
 րա : Եւ առաքեցին զհրովարտական ի
 ձեռն հրեշապահաց , Որպէս զի կացցին
 Հրեայք այժ եւ անախարք ի բնանց
 օրինօք յամենայն քաղաքի . օղնականք
 եւ ի իկուծիք լինել սա ի հատուցանել
 նոցա զիտարէն իշխամաց իւրեանց՝
¹²որպէս եւ կամիցին՝ Յաւաւր միում ընդ
 ամենայն սեղիս թագաւորութեան ի-
 մում , յաւաւրն երեքստասաներորդի ամ-
 սայն Ագարայ :՝

 տակեցին զնա օտարք ժանտազորք
 յազգաց, եւ տապալեցին զնա. ի վերայ
 լիբանց եւ յամենայն ձորս անկան ոստք
 նորա, եւ խարտակեցաւ ստեղն նորա
 ընդ ամենայն գաշաս երկրի. եւ իջին
 ի նովանոց նորա ամենայն ազգք ա-
 13 զանց, եւ յատակեցին զնա: ¹¹Եւ ի գլո-
 րին՝ նորա՝ հանգրտս եղև ամենայն
 թւաչոց երկնից, եւ ի ստեղն նորա հա-
 14 սին ամենայն զազանք վայրի: Չի մի՛
 եւս Նոյարտացին ի մեծութեան իւրեանց
 ամենայն փայտք ջրասուռք, եւ ոչ ար-
 ձակեցեն զծայրս իւրեանց ¹²ընդ ամպս՝,
 եւ մի կայցեն ի նպարտութեան իւր-
 եանց իբրև զնա որ ըմպիցէ ջուր. ա-
 մենքին ի մահ մատնեցան ի խորս երկ-
 րի՝ ի մէջ որդոց մարդկան իջլոց ի
 15 խորխորատ: Այսպէս ասէ Տէր Տէր.
 Յաւուր յորում էջ ի զժոխս՝ ¹³սուգ ա-
 սին ի վերայ նորա անգունդք՝. եւ ար-
 գելի գգետս նորա, եւ ¹⁴խից արկի ջուրց
 բազմաց, եւ տխրեցաւ ի վերայ նորա
 Լիբանան,՝ եւ ամենայն ծառք գաշտի
 16 լքան վասն նորա: Ի ձայնէ կործան-

¹Եբր. նորա, զհօրն եւ զբեկեալն ²Եբր. բե-
 կից զբազուկս Փարաւոնի, եւ ազաղուկեաց զա-
 զաղակ վերաւորի սուաչի ³Եբր. ձգեսցէ
⁴Եբր. գ-ի-տի ⁵Կամ, ի թաւուտս ⁶Եբր.
 քետք նորա գնան ⁷Եբր. զլրանցս

⁸Եբր. եղև ինք ոչ ծածկեցին զնա ի գրախտին Աս-
 տուծոյ, մայրքքն նմանեցին ոստոց նորա, եւ ոստք
 ոչ եղևն իբրև զշառաւիղ նորա, ոչ ⁹Եբր. Գե-
 զեցիկս արտօրի զնա անտառախիտ ոստովք ¹⁰Եբր.
 ետ զկատար իւր ի մէջ ամպոց (Կամ, ի թաւուտս)
 եւ բարձրացաւ սիրտ նորա ի բարձրութեան իւ-
 րում, (11) Եւ ես մասնեցի զնա ի ձեռս հօրին
 ազգաց. տունելով այսպէս նմա նորա-սո-
 մա ամպարտութեան նորա ընկեցի զնա: ¹¹Եբր. ի
 վերայ թօժափեղոց ¹²Կամ, ի թաւուտս ¹³Եբր.
 ետու ոտգ ասունու. ծածկեցի վասն նորա զան-
 դունդս ¹⁴Եբր. խցան ջուրք բազումք, եւ տխրե-
 ցուցի վասն նորա զԼիբանան

ման նորա ¹գլորեցան ազգք՝, յորժամ
 իջուցի զնա ի դժոխս ընդ իջևալան ի
 գուր. եւ ²մխթարեցին զնա ի սան-
 զարամիտան ամենայն ծառք փափկու-
 թեան, եւ՝ ընտիր ընտիր գեղեցիկքն
¹⁷ Լիրանանու որ էին չրարիք: ³Քանզի
 նոքա իջին ընդ նմա վերաուորք սրոյ
 ի դժոխս. եւ զաւակք նորա որ բնա-
 կեալ էին ընդ հովանեաւ նորա, յընդ-
 միջն կենաց իւրեանց սատակեցան:՝
¹⁸ Ո՛ւժ նմանեցար ⁴գորութեամբեւ՝ փա-
 ոք եւ մեծութեամբ՝ ի ծառս ⁵փափ-
 կութեան. էջ եւ զիջիր հանդերձ ծա-
 ուովք փափկութեան քո՝ ի խորս երկ-
 րի, ի մէջ անթլփաարց ⁶ննջեցելոց ընդ
 վիրաւորս սրոյ. սոյնպէս Փարաւոն եւ
 ամենայն բազմութիւն գորութեան իւ-
 րոյ, սսէ Տէր Տէր:

ԿԼ. ԼԲ

¹ Եւ եղև յամին երկոտասաներորդի,
 յամենան երկոտասաներորդի, որ օր մի
 էր ամսոյն, եղև բան Տեառն առ իս եւ
² սսէ, Որդի մարդոյ, ողբս առ ի վերայ
 Փարաւոնի արքային Եգիպտացոց եւ
 ասացես ցնա, ³Սուրճացոյ ի մէջ ազ-
 գաց, եւ նմանեցար վիշապի՝ ի մէջ ծո-
 վու, եւ ոգորէիր ընդ գեաս քս, եւ առ
 սմբակ պտտրէիր զվարսն, եւ առս-
³ թուր կոխան առնէիր զգիտս ⁴քո: Սյս-
 պէս սսէ Տէր Տէր. Պասցից զքեզ
 թակարդօք իմովք ժողովովք զօրաց
 բազմաց, եւ ⁵հանից զքեզ կարթիւ ի-
⁴ մով: Տախասարեցից զքեզ ի վերայ
 երկրի, ¹⁰եւ լցցին քեւ զաշաք՝. եւ ի-
 ջուցից ի վերայ քո զամենայն թառոնս
 երկնից, եւ յազկցուցից ի քէն զամն-
⁵ նայն գազանս երկրի: Եւ տաց զմար-
 մինս քո ի վրայ լերանց, եւ լցուցից
⁶ զձորս ¹¹յարնէ քումմէ. Եւ արեացի
 երկիր յապաւստէ քումմէ՝ ի բազմու-
 թեան քո ի վերայ լերանց, զձորս լցից՝

7 ի քէն: Եւ պատրուակեցից զերկինս ի
 շիջանել քում, եւ խաւարեցուցից զսս-
 անգս նորա. զարեգակն ամպով ծած-
 կեցից, եւ լուսին մի տացէ զլոյս իւր:
⁸ Եւ զամենայն լուսաւորս ¹²խաւարեցու-
 ցից ի վերայ քո, եւ տաց խաւար ի վե-
⁹ րայ ¹³քս, սսէ Տէր Տէր: Եւ զայրա-
 ցուցից զսիրտս ազգաց բազմաց, ի ժա-
 մանակի իրրեւ ¹⁴հանից զգերութիւն քո
¹⁰ ընդ ազգս յերկիր զոր ոչ գիտիցես: Եւ
 արամեացին ի վերայ քո ազգք բազումք՝,
 եւ թագաւորքնոցա զարհուրելով ¹⁵զար-
 հուրեացին, ի թռչել սրոյ իմոյ տոսջի
 երեսաց նոցա ակն ունել կործանման
 իւրեանց յօրէ՝ կործանման քո:
¹¹ Զի այսպէս սսէ Տէր Տէր. Սուր ար-
 քային Խարեւացոց եկեացէ ի վերայ ¹⁶քո
¹² Հանդերձ սրով սկայից, եւ կործանեցից
 զգորութիւն քո. եկեացեն ամենայն՝
 ժանտագործք ազգաց, եւ կորուսցեն
 զհպարտութիւն Եգիպտացոց, եւ խոր-
¹³ տակեցի ամենայն գորութիւն նորա: Եւ
 կորուսից զամենայն անասունս նորա ի
 ջուրց բազմաց, եւ ¹⁷մի պատրեացէ զնա՝
 ոտն մարդոյ, եւ կծղակ անասնոյ մի
¹⁴ կոխեացէ ¹⁸զնա: Եւ ապա զաղարեցին
 ջուրք նոցա, եւ գեաք նոցա նման իւ-
¹⁵ ղոյ գնացին՝, սսէ Ազնայի Տէր, Յոր-
 ժամ տաց զԵգիպտոս ի կորուստ, եւ
 աւերեցի երկիրն լրի իւրով, յորժամ
¹⁹յրուեցից զամենայն բնակիչսն ի նուա-
 նէ՝, եւ ծանիցեն թէ ես եմ Տէր:

¹⁶ Ողբք են, եւ ողբասցեն զնա, եւ
 դստերք ազգաց ողբասցեն զնա. ի վե-
 րայ Եգիպտոսի եւ ի վերայ ամենայն
 գորութեան նորա ողբասցեն զնա, սսէ
 Տէր Տէր:

Եւ եղև յամին երկոտասաներորդի,
 յամենան առաջնում, որ օր հնգիտա-
 սան էր ամսոյն, եղև բան Տեառն առ
 իս եւ սսէ,

¹ Եթէ գլորեցուցի զազգս ² Եթէ մխթարեցան
 ի սանզարամիտան ամենայն ծառք երեւմայ,
³ Եթէ Սորս եւս ընդ նմա իջին ի դժոխս առ որս
 անկեալ էին սրով եւ բազուկ քորաւեւոր բնակ-
 եալ էին ընդ հովանեաւ նորա ի մէջ ազգաց:
⁴ Եթէ յաւուր ⁵ Եթէ երեւմայ իջուցին հասգերձ
 ծառովք երեւմայ ⁶ Եթէ ննջեցեն ⁷ Եթէ կորեան
 առեւծու ի մէջ ազգաց նմանեցար. Ե դու ես
 իրրեւ զվիշապ ⁸ Եթէ նոցա ⁹ Եթէ հանցեն ¹⁰ Եթէ
 ընդ երեսու զաշաք արկից զքեզ ¹¹ Եթէ բար-
 ձամքք բով ¹² Եւ ուսուցիցից զերկիրն ուր լոյսս
 յարնէ քումմէ զլերնս, եւ ձարք լցցին

¹² Եթէ լուսոյ յերկինս՝ խաւարեցուցից ¹³ Եթէ
 յեջն յաւուր, երկրի ¹⁴ Եթէ ամից զհասգա-
 ման քո ընդ ազգս՝ յերկիրս զոր ոչ գիտիցես
 (10) Եւ ապա զեւցուցից լուսն քո զայդս բազումս
¹⁵ Եթէ զարհուրեցին վասն քո. ի շողապուցանել
 զսուր իմ առաջի երեսոց նոցա, եւ դուրացին
 հանապաղ այր իւրաբռնիչիւր յանձին իւրում
 յաւուր ¹⁶ Եթէ քո (12) Սրովք սկայից տապաստ
 արկից զամբոք քո, ամենքին ¹⁷ Եթէ մի՛ եւս
 պտտրեացէ զնոսս ¹⁸ Եթէ զնոսս (14) Յայն-
 ժամ արարից շինջ զջուրս նոցա, եւ զգետոս
 նոցա նման իւղոյ գնացուցից ¹⁹ Եթէ հարից
 զամենայն բնակիչս նորա

18 Որդի մարդոյ, ողբս առ ի վերայ գորութեանն եգիպտոսի, եւ ՚ի շուսցին զգտտերս նորա աղբքն՝ զմտեալս ի խորս
 19 երկրի: Առ ի ջնայան ի խորխորատ՝ ի ջարց վայելչութեան, էջ ննջեա ընդ
 20 անխիատս ի մէջ վիրաւորաց. Արով անկցին ընդ նմա, եւ զարեոցէ ա-
 21 մենայն զօրութիւն նորա. եւ ասացնն ցբեղ սկայքն, ել էջ ի խորս խորինս, զի քան զո՞վ լաւ էիր գաւ. էջ եւ զա-
 22 զարեա ընդ անխիատս ի մէջ վիրաւորաց՝ սրոյ:
 22 Անդ Ասուր եւ ամենայն ժողովք նորա,
 23 ղա,՝ ամենեքին վիրաւորք՝. Անդ ասուաւ զերեզման նորա ի խորս խորխորատին, եւ եղև ժողովք նորա չուրջ զչիրմօք նորա. ՝ ամենայն վիրաւորք անկան սրով, որ արարին զգերեզմանս իւրեանց յասակս գրոց, եւ եղևն ժողովք չուրջ զգերեզմանօք նորա.՝ վիրաւորք անկեալք ի սրոյ, որ ետուն զա՞ն իւրեանց ի վերայ երկրին կենդանութեանս:
 24 Անդ Ելամ, եւ ամենայն զօրութիւն նորա չուրջ զգերեզմանաւ նորա. ամենեքին վիրաւորք անկեալք ի սրոյ ի ջնն անխիատք ի խորս երկրի, որ ետուն զա՞ն իւրեանց յերկրին կենդանութեան, եւ ընկալան ՚զաւանջանս իւրեանց ընդ
 25 ի ջնայան ի խորխորատ ՚ի մէջ վիրաւորաց:
 26 Անդ ասուան՝ Մոսոք եւ Թորէլ, եւ ամենայն զօրութիւնք ՚նոցա չուրջ զգերեզմանաւ նորա. ամենայն վիրաւորք նորա՝ ամենեքեան անխիատք

վիրաւորք անկեալք ի սրոյ, որ ետուն զա՞ն իւրեանց ի վերայ երկրին կենդանութեան: Եւ ոչ ննջեցին ընդ հսկայան անկեալան յաւիտենից, որ ի ջնն ի զփոսս պատերազմօղ զինուքն իւրեանց, եւ ՚եպան անօրէնութիւնք նոցա ի վերայ ոսկերաց իւրեանց. զի զարհուրեցուցին զհսկայս ի կենդանութեան իւրեանց:
 28 Եւ զու ի մէջ անխիատիցն խորատակեցիս, եւ ննջեցես ի մէջ վիրաւորացն սրոյ:
 29 Անդ Եգիպտոս եւ Թաղաւորք իւր եւ ամենայն ի ջնայանք նորա, որ ՚ետուն զգորութիւն իւրեանց ի հարուածս սրոյ. եւ նոքա ընդ վիրաւորս ննջեցին՝ ընդ ի ջնայան ի խորխորատս:
 30 Անդ ամենայն ի ջնայանք հիւսիսոյ, եւ ՝ ամենեքեան նոքա զօրաւորք Ասորեստանոյն, ի ջնայք վիրաւորք հանդերձ սահլն զօրութեամբ իւրեանց. ամօթալից ննջեցին անխիատք ընդ վիրաւորս սուսերաց, եւ ասորան ՝ զաւանջանս իւրեանց ընդ ի ջնայան ի խորխորատս:
 31 Չնտա տեսցէ Փարաւոն եւ մխիթարեսցի ի վերայ ամենայն զօրութեանն ՚նոցա. վիրաւորք Փարաւոնի ի սրոյ, եւ ամենայն զօրութիւն նորա՝, ասէ Տէր
 32 Տէր: Չի ՝ ի՞նչա զա՞ն իւր՝ յերկրին կենդանութեան, եւ ննջեացէ ի մէջ անխիատիցն ՝ վիրաւորեցոց սրով, Փարաւոն եւ ամենայն բազմութիւն իւր ՝ ընդ նմին՝, ասէ Տէր Տէր:

ԳԼ. ԼԳ

՝ Առ որդիան Յակովբու: ՝

¹ Եբբ. իջն զնա և զգտտերս ազգաց փառաւորաց ի խորս երկրի՝ առ ի ջնայան ի խորխորատս: (19) ՚ի իւրե գեղեցիկ իցես. էջ և ննջեա ընդ անխիատս: (20) ՚ի մէջ սպանելոց սրոյ անկցին. մտանեցաւ նա սրոյ. քարչեցէք զնա և զամբոն նորա (21) Խօսեցին նմա ճգօքք սկայլից ի միջոյ սանդարտօտաց, հանդերձ օգնականօք նորա. ի ջնն ննջեցին անխիատք, սպանեալք ՝ Եբբ. չուրջ զնովաւ գերեզմանք նորա. ամենեքին սպանեալք անկեալք սրոյ ՝ Եբբ. դ-լ-ա-ե
⁴ Ի՛նչ սպանեալք, -որ եւ ՚ի նբբոյ ՝ Եբբ. զնախատին իւրեանց ընդ ի ջնայան ի խորխորատս: (25) ՚ի մէջ սպանելոց արկին անկողին նմա և ամենայն բազմութեան նորա. չուրջ զնովաւ գերեզմանք նորա. ամենեքին նոքա անխիատք, սպանեալք սրոյ, թէպէտ եւ տուաւ ա՞ն նոցա յերկրին կենդանութեան, սակայն ընկալան զնախատին իւրեանց ընդ ի ջնայան ի գուր, ի մէջ սպանելոց եղուա: (26) Անդ ՝ Եբբ. նորա, չուրջ զնովաւ գերեզմանք նորա.

1 Եւ եղև բան Տեառն առ իս եւ ասէ,
 2 Որդի մարդոյ, ի սուսեաց ընդ որդիս ժողովրդեան յո, եւ ասացես ցնոսա, երկիր մի՝ յորոյ վերայ ասիցեմ ես սուր, եւ անուցունս աղբք երկրին այր մի յինք-
 3 եանց, եւ կայուցանիցեն զնա զէտ, եւ տեսանիցէ սուր եկեալ յերկրին, եւ փող հարկանիցէ եւ ազգ աննիցէ ժողովրդ-
 4 գեանն. եւ լսելով լսիցէ զձայն փողոյն
⁷ Եբբ. յանխիատից ⁸ Եբբ. եղին զսուսերս իւրեանց ընդ զիւրովք իւրեանց. սակայն եղեն
⁹ Եբբ. եղան զօրութեամբ իւրեանց ընդ սպան. ետլս սրոյ, ընդ անխիատս ննջեցին և ¹⁰ Եբբ. ամենայն Սիբոնոցիք ¹¹ Ի՛նչ, զնախատինս
¹² Եբբ. իւրոյ, Փարաւոն եւ ամենայն զօքք նորա, սպանեալք սրոյ ¹³ Եբբ. ետուն զա՞ն իմ (Ի՛նչ, նորա) ¹⁴ Եբբ. ընդ սպանեալս

5 և ոչ զգուշացի, և հասանիցէ սուրն
 և բորսնիցէ զնա, արիւն նորա ի գլուխ
 նորին եղիցի: Զի զձայն լուաւ զփո-
 ղոյն և ոչ զգուշացաւ, արիւն նորա ի
 վերայ նորին եղիցի: և նա՞ զի զլու-
 6 շացոյց, զանձն իւր ասպրեցոյց: և և-
 թէ տեսանիցէ զէտն գտուրն եկեալ, և
 ոչ նշանակիցէ փողով, և ագգն ոչ զգու-
 շանայցէ, և եկեալ սուրն բորսնիցէ ի
 նոցանէ՝ անձն մի, նա վասն անօրէնու-
 թեան իւրոյ բորսնեցաւ, և զարիւն
 նորա ի ձեռաց զիսին խնդրեցից:

7 և և գու, որդի մարդոյ, զէտ ետու
 զքեզ տանդ Իսրայելի, և լուիցես բա-
 ինց բերանոյ իմոյ, և զգուշացուցես

8 զնոսա իբրև յինէն Յասել ինձ ցմալա-
 ւորն թէ Մահու մեռանիցես, և և գու
 ոչ խօսիցիս զգուշացուցանել զամպա-
 րիշան ի ճանապարհէ իւրմէ, ինքն ա-
 նօրէնն յանօրէնութեան իւրում մեռցի,

9 և զարիւն նորա ի ձեռաց քոց խնդրե-
 ցից: Ապա թէ զու յառաջագոյն պատ-
 մեսցես ամպարչտին զճանապարհս իւր՝
 զառնալ նմա ի նմանէ, և ոչ զարձցի
 ի ճանապարհէ իւրմէ, ինքն յամպարչտու-
 թեան իւրում մեռցի, և զու զանձն
 քո ասպրեցուցես:

10 և և գու, որդի մարդոյ, ասա զտունդ
 Իսրայելի, Այսպէս խօսեցարուք և և ա-
 սացէք, ¹ և թէ Մոլորութիւնք՝ մեր և և
 անօրէնութիւնք մեր ի մեզ են, և մեք
 ի նոսին մաշխօք, և զիմորդ ասպրեա-
 11 ցուք: Ասա ցնոսա, ² Կենդանի եմ ես,
 ասէ Ազոնայի Տէր, ոչ կամիմ զմահ ամ-
 պարչտին, որպէս զգառնալ ամպարչտին
 ի շար ճանապարհէ իւրմէ և և կեալ. զառ-
 նալով զարձարուք ի ճանապարհաց ձե-
 րոց շարաց, և ընդէ՞ր մեռանիք, տունդ
 Իսրայելի:

12 և և գու, որդի մարդոյ, ասա ցորդիս
 ժողովրդեան քո, Արդարութիւն ար-
 դարոյն ոչ վրկեցցէ զնա՞ յաւուր յորում
 մոլորեացի, և և անօրէնութիւն անօրի-
 նին ոչ շարչարեցցէ զնա՞ յաւուր յո-
 րում զառնայցէ յամենայն անօրէնու-
 թեանէ՞ իւրմէ. և և արդարն ոչ կարացցէ

13 ասպրել յաւուր մեզաց իւրոց, Յասել
 ինձ ցարդարն թէ Կիւով կեցցես, և նա
 յուսացեալ յարդարութիւն իւր՝ անիցէ
 անօրէնութիւն, ամենայն արդարու-

թիւնք նորա մի յիշեցցին, այլ անօրէ-
 նութեամբն իւրով զոր արար՝ նազին

14 մնացի: և և յասել ինձ ցամպարչտան թէ
 Մահու մեռցիր, և և զարձցի ի մեզաց
 իւրոց, և և արասցէ իբուռնս և և ար-

15 զարութիւն, և և զգրուս սրբատաղանին
 իւրաց ասցէ, և և զյալիշտակութիւնն
 զարձուցանիցէ, ի հրամանս կենսա-

16 ցէ, և և մի մնացի. Ամենայն մեզք իւր
 զոր մեղու՞ մի յիշեցցին. զի իբուռնս
 և և արդարութիւն արար, ³ արբիւրք կեցցէ:

17 և և ասնն որդիք ժողովրդեան քո. Աչ
 ուզիլ է ճանապարհ Տեսան. նա՞ նոցա

18 ճանապարհն ոչ է ուզիլ: Ի զատն և և ար-
 զարոյն յարդարութեանէ իւրմէ և և ասնել

19 անիբաւութիւնս՝ ⁴ արբիւրք մեռցի: և և
 ի զատնալ մեղաւորին յանօրէնութեանէ
 իւրմէ և և ասնել իբուռնս և և արդու-

20 րութիւն, ⁵ արբիւրք կեցցէ: և և ⁶ այս է
 զար ասացէքն՝ թէ Աչ ուզիլ է ճանա-
 պարհ Տեսան. զիբարքանչիւր ոք ըստ
 ճանապարհաց ձերոց զատեցայց զձեզ,
 տունդ Իսրայելի:

21 և և եղև յամին երկրտասաներորդի,
 ի տասներորդ ամսեանն, որ օր Նինգ էր
 ամսոյն զերութեան մերոյ, և նա առ իս
 ոմն զերծեալ յերուսաղեմէ, և և տաէ,

22 Ատաւ քաղաքն: և և ձեռն Տեսան եղեալ
 ի վերայ իմ յերկիրեանս մինչև և և կեալ
 էր ⁷ նորա, և և երաց զերան իմ՝ մինչ-
 չև և եկեալ էր՝ ⁸ ընդ առաւօսն. և և ի բա-
 նալ բերանն իմոյ՝ ոչ և և ամփոփեցաւ
 անդէն:

23 և և եղև բան Տեսան առ իս և և ասէ,
 24 Որդի մարդոյ, բնակիչք աւերակաց
 երկրին Իսրայելի տանն, Մի մարդ էր
 Աբրահամ, և և կալաւ զերկիրն. և և արդ
 մեք բազումք եմք, և և մեզ տուեալ է
 երկիրն ի յառնալութիւն, ⁹ ոչ յառան-

25 վիցեմք զնա՞ Վասն այնորիկ ասա ցնու-
 սա, Այսպէս ասէ Ազոնայի Տէր. Որով-
 հետև ի վերայ արեան ուտէք, և և զաչս
 ձեր արձակեցէք ի կուռս, և և արիւն հե-
 զուք, և և կամիք զերկիրն ժառանգել:

26 ¹⁰ Եզրի զա ձեզ ի սուր, զի՞ արարէք
 պղծութիւնս, իւրաքանչիւր զկին ըն-
 կերի իւրոյ պղծէք. և և արդ սյղին:

27 ժառանգիցէք զերկիրն: Վասն այնորիկ

¹ Եբ. Ամպարչտութիւնք ² Եբ. ասցէ նմա գլորել
 յաւուր յորում զառնայցէ յանօրէնութեանէ

³ Եբ. կեւով ⁴ Եբ. մեռանելով ⁵ Եբ. ասէքն ⁶ Եբ.
 զերծելոյն ⁷ Եբ. մինչև և և կեն առ իս ⁸ Եբ.
 պատէ ⁹ Եբ. Կացէք ասպատան ի սուր ձեր,

ատա ցնոտա , Այսպէս ասէ Տէր Տէր .
 Կենդանի եմ ես ¹Տէր , եթէ ոչ որ յա-
 ւերակոն իցին՝ սրով անկցին , եւ որ ընդ
 երեսս դաշտին իցին՝ զազանաց ²անա-
 պատի տացին՝ ի կերակուր , եւ որ ընդ
 պարսպօքն եւ յայրս իցին՝ մահու ³կո-
 28 տորեցից . Եւ տաց զերկիրն յաւերակ
 եւ յապականութիւն , եւ կորիցէ հօրաբ-
 ատութիւն զօրութեան նորա . եւ աւե-
 րեսցին լերինք Իսրայելի , զի մի ոք ի-
 29 ցէ որ զնայցէ ընդ նոսա : Եւ ծանիցեն
 թէ ես եմ Տէր , ⁴եւ արարից զերկիր
 նոցա աւերակ , եւ աւերեսցի՝ վասն ա-
 մենայն զարչելեաց իւրեանց զար ա-
 բարին :
 30 Եւ զու , որ զի մարդոյ , որ զիք ժո-
 զովբեանք քո շրջին քրթմնչեն զքէն առ
 պարսպօքն եւ ի գրունս ասարանիցն ,
 եւ ասին մի ցմի՝ այր ցեղապար իւր , ժո-
 զովսացուք երթիցուք լուսուք զպատ-
 31 գամն որ ելին ի Տեառնէ : Եւ արգ զան
 առ քեզ որպէս ⁵ժողովեալք ի ժողո-
 վուրդ , եւ նստին ասալի քո՝ ժողո-
 վուրդն իմ լսել զրանս քո , եւ ոչ առ-
 նեն զնոսա . զի ⁶ստութիւն է ի բերանս
 նոցա , եւ զհետ պղծութեան խրեանց
 32 գնան սիրաք իւրեանց : Եւ զու լինի-
 ցիս՝ նոցա իբրև զձայն հրդոյ քաղց-
 րաբարբառ յորինելոյ , եւ ⁷լուիցեն զրանս
 33 քո եւ ոչ արասցեն՝ : Եւ յորժամ գայ-
 ցէ , (ասասցին , թէ Ահաւասիկ եհաս ,)
 ծանիցին թէ մարդարէ գոյ ի մէջ
 նոցա :

ԳԼ . ԼԳ

Սա հովիւան Իսրայելի :

1 Եւ եղև բան Տեառն առ իս եւ ասէ ,
 2 Որ զի մարդոյ , մարդարեաց ի վերայ հով-
 ուացոյ Իսրայելի , մարդարեաց եւ ա-
 ստացես ցնովուրդ , այսպէս ասէ Տէր
 Տէր . ⁸Ո՞ր հովիւք՝ Իսրայելի . միթէ հո-
 վիւք զանձինս արածեն . ո՞չ հովիւք
 3 զիտայնս արածենս Արգ աւասիկ զկաթնոյ
 ուտէք , եւ զարդ ազանիք , զպարարանս

զնուք , եւ զխաչինս ՚իմ ոչ արածէք :
 4 Զսկարացեալն ոչ զօրացուցէք , եւ զհի-
 ւանդացեալն ոչ բժշկեցէք , ⁹զչարչա-
 րեալն ոչ յանձանձեցէք , եւ զբեկեալն
 ոչ պասեցէք , զմոլորեալն ոչ զարձու-
 ցէք , եւ զկորուսեալն ոչ խնդրեցէք .
¹⁰զհաստահարուանս աշխատ արարէք :
 5 Եւ ցրուեցան խաչինք իմ , քանզի ոչ
 գոյին նոցա հովիւք . եւ եղեն կերա-
 կուր գոզանաց անապատի , եւ ցրուե-
 6 ցան : Եւ մոլորեցան խաչինքն իմ ընդ
 ամենայն լերինս եւ ընդ ամենայն բլուրս
 բարձունս , եւ ընդ ամենայն երեսս երկ-
 րի ցրուեցան խաչինքն իմ . եւ ոչ ոք
 էր որ խնդրէր , եւ ոչ այն որ զարձու-
 ցանէր :
 7 Վասն այնորիկ , հովիւք , լուարուք
 8 զպատգամս Տեառն . Կենդանի եմ ես
 ասէ Ազանայի Տէր Տէր , եթէ ոչ փո-
 խանակ զի եղեն խաչինք իմ յաւար , եւ
 մատնեցան խաչինք իմ ի կերակուր գա-
 զանաց անապատի , վասն զի ոչ գոյին
 հովիւք , եւ ոչ խնդրեցին հովիւք զխա-
 չինս իմ , եւ բուծին հովիւք զանձինս
 իւրեանց , եւ զխաչինս իմ ոչ արածէին .
 9 Փոխանակ այնորիկ լուարուք , հովիւք ,
 10 զպատգամս Տեառն . Այսպէս ասէ Տէր
 Տէր . Ահաւասիկ ես ի վերայ հովուացոյ ,
 եւ պահանջեցի զխաչինս իմ ի ձեռաց
 զոցա , եւ զազանեցուցի զպատս յարա-
 ծելոյ զխաչինս իմ , եւ ոչ եւս արածես-
 ցին ¹⁰զնոսա . եւ փրկեցի զխաչինս իմ
¹¹ի ձեռաց զոցա , եւ ոչ եւս եղցին զո-
 ցա ի կերակուր :

11 Զի այսպէս ասէ Տէր Տէր . Ահաւա-
 զիկ ես ինքնին խնդրեցի զխաչինս իմ ,
 12 եւ այց արարից գոցա : Զոր օրինակ
 խնդրիցէ հովիւ զհօա իւր՝ յաւուր յո-
 րուժ իցէ՝ մէզ եւ մատախուզ՝ ի մէջ
 խաչանց իւրոց , վասնելոց , այնպէս
 խնդրեցի զխաչինս իմ , եւ ժողովցից
 զնոսա յամենայն տեղեաց ուր ցրուե-
 ցան ի նոսա յաւուր միզի եւ մատախ-
 13 զի : Եւ հանից զնոսա յազգաց , եւ ժո-
 զովեցից զնոսա ի զաւառաց , եւ տա-
 րայց զնոսա յերկիրն իւրեանց , եւ ա-
 րածեցից զնոսա ի վերայ լերանց Իսրա-
 յելի եւ ի ձորս եւ յամենայն բնակու-
 14 թեան երկրին . Յարօտս փափկութեան

¹ Յիբր. պատե ² Յիբր. տաց ³ Յիբր. մեռանիցին
⁴ Յիբր. յառնել ինձ զերկիրն յաւեր եւ յանապատ
⁵ Յիբր. գոյ ժողովուրդն , եւ նստին առաջի քո
 որպէս ⁶ Յիբր. յօժարութիւն է ի բերաննոցա ,
 իսկ իւրեանք զնան զհետ ցանկութեան սրտից
 իւրեանց , (32) Եւ դու ես ⁷ Յիբր. լսեն զրանս
 քո եւ ոչ առնեն ⁸ Յիբր. վայն հովուացոյ .

⁹ Յիբր. եւ բռնութեամբ իշխեցէք նոցա եւ սնա-
 գորուսութեամբ ¹⁰ Յիբր. հովիւք զանձինս
 իւրեանց ¹¹ Յիբր. ի բերանոյ

արածեցից ¹զնոսա ի լերինն բարձու
 Իսրայելի՞, եւ անդ եղիցին մակաղա-
 տեղք նոցա, ²անդ դադարեցան եւ անդ
 հանգիցան ի գրողութեան՝ բարութեանց
 եւ յարօսս պարարութեան արածեա-
 15 ցին ի վերայ լեռանցն Իսրայելի : Եւ ա-
 րածեցից զԻսրայելս իմ, եւ ես հանդու-
 ցից զնոսա, ³եւ ծանիցին թէ ես եմ
 16 Տէր : Այսպէս՝ ասէ Տէր Տէր, Չկորու-
 սեալն խնդրեցից եւ զմոյրեալն դար-
 ձուցից, զբեկեալն պատեցից եւ
 զվատեալն զօրացուցից, զգէրն եւ
 զհօրն ⁴պահեցից, եւ արածեցից զնոսա
 իրաւամբք :
 17 Եւ դուք, խաչինք իմ, այսպէս ասէ
 Տէր Տէր, Ահաւասիկ ես ⁵ոչխար առ
 ոչխար դատեցայց, եւ խոյ ընդ խոյ :
 18 Չիցէ՞ ձեզ բաւական զգեղեցիկ արօսան
⁶յառաջագոյն արածել, այլ եւ զմնա-
 ցեալ ճարակն ի ձէնջ առ ոսն կոտո-
 րէիք, եւ զչուրան յատակ ըմպէիք, եւ
 19 զմնացեալն առ ոսն պղտպէիք, եւ խա-
 չինք իմ զկոխան ոսից ձերոց ճարս-
 կէին, եւ զչուրան պղտորեալ ի կճղա-
 կաց ձերոց ըմպէին :
 20 Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր Տէր⁶,
 Ահաւարդիկ ես դատեցայց ի մէջ հարուստ
 21 եւ անաւազ ոչխարաց, Փոխանակ զի
 կողամբք եւ ուսովք ձերովք զրթցիք,
⁷եւ ոգորէիք՝ եւ եղջերովք ձերովք
 խեղճէիք զամենայն անաւազն, եւ ի
 բաց մերժէիք զնոսա, մինչեւ ցրուե-
 22 ցան խաչինք իմ, եւ փրկեցից զխաչինս
 իմ, եւ ոչ եւս լինիցին ի յախշտակու-
 23 թիւն, դատեցայց ի խոյ առ խոյ : Եւ
 կացուցից ի վերայ նոցա Հովիւ մի՝ զծա-
 ոսայ իմ գԴաւիթ, եւ նա հովուեաց զնո-
 24 սա, նա եղիցի նոցա հովիւ : Եւ ես Տէր
 եղէց նոցա յԱստուած, եւ Դաւիթ ծա-
 ոսայ իմ իչխանս ի մէջ նոցա, եւ Տէր
 25 խօսեցայ : Եւ եղից ընդ ⁸Դաւիթի ուխտ
 խաղաղութեան, եւ ասականեցից զդա-
 զանս Հարս յերկրէ, եւ բնակեցան յա-
 նապատին ⁹յուսով, եւ ննջեցան յան-
 26 տառս : Եւ տաց նոցա շուրջ զԼերամբ

իմով օրհնութիւն, եւ տաց ¹⁰ձեզ անձ-
 րեւ, եւ եղիցին անձրեւք օրհնութեանս
 27 Եւ ծառք աղարակի տացին զպտուղս
 իւրեանց, եւ երկիր տացէ զգօրութիւն
 իւր, եւ բնակեցան յերկրի իւրեանց
⁹յուսով խաղաղութեանց՝, եւ ծանիցան
 իմէ ես եմ Տէր ի խորատեղ ինձ զլուծ
 պարանոցի նոցա, եւ փրկեցից զնոսա
 28 ի ձեռաց ծառայեցուցչաց իւրեանց : Եւ
 ոչ եւս եղիցին յաւար ի մէջ ազգաց,
 եւ զազանք երկրի մի եւս կերպեան զնո-
 սա, եւ բնակեցան ⁹յուսով, եւ ոչ ոք
 29 իցէ որ զարհուրեցուցանիցէ զնոսա : Եւ
 կանգնեցից նոցա առնկ ¹¹խաղաղու-
 թեան, եւ ոչ եւս վատեցին ի սովոյ ի
 վերայ երկրի, եւ նախատինս յաղլոսոյ
 30 ոչ եւս կրեցան : Եւ ծանիցան թէ ես
 Տէր Աստուած նոցա ընդ նոսա եմ, եւ
 նոքա ժողովուրդ իմ՝ առնն Իսրայելի,
 ասէ Տէր Տէր :
 31 Եւ դուք, խաչինք իմ, ոչխարք արօ-
 տի խոյ, մարդիկ էք, եւ ես Տէր Աս-
 տուած ձեր, ասէ Տէր Տէր :

ՔԼ. ԼԵ

³Ի վերայ Եդովմայեցւոցն :՝

1 Եւ եղև բան Տեառն առ իս եւ ասէ,
 2 Որդի մարդոյ, դարձո զերեսս քո ի վե-
 րայ լերինդ Սէլբայ, եւ մարդարեաց ի
 3 վերայ դորա, եւ ասացես ցրա, Այս-
 պէս ասէ Տէր Տէր, Ահաւասիկ ես ի վե-
 րայ քո, լեռանդ Սէլբ, եւ ձղեցից զձեռն
 իմ ի քեզ, եւ տաց զքեզ յանապատ՝ եւ
 4 աւերեցիս : Եւ զքաղաքս քո յաւեր
 զարձուցից, եւ եղիցիս աւերակ, եւ
 ծանիցես թէ ես եմ Տէր :
 5 Փոխանակ զի եղեր ի թշնամութիւն
 յախտանից, եւ ¹²դարանակալ նստէիր
 նենդութեամբ տանն Իսրայելի, ի ձեռն
 թշնամեաց սրոյ ի ժամանակի նեղու-
 թեան, ի ժամանակի անիրաւութեան
 6 յետին վախճանի, Վասն այնորիկ կեն-
 դանի եմ ես, ասէ Տէր Տէր, ¹³եթէ ոչ
 յարիւն մեղար՝, եւ սրիւն հալածեացէ
 զքեզ, ¹⁴եւ զարիւնն զոր ատեցիր՝ նոյն՝
 7 արիւնհալածեացէ զքեզ, եւ տաց զլեռանդ
 Սէլբ յաւերակ եւ յանապատ, եւ կո-

1 Եբբ. զնոսա, եւ ի լերինն բարձունս Իսրայելի
 եղիցի արօս նոցա 3Եբբ. յարօսս 3Եբբ.
 4 Եբբ. կորուսից 5 Եբբ. դատեցայց
 ի մէջ ոչխարի եւ ոչխարի, խոյոց եւ նոխազաց
 6 Եբբ. յեղին յաւերս, ցնոսս 7 Եբբ. ի մէջ
 ոչխարի եւ ոչխարի 8 Եբբ. նոսա 9 Եբբ.
 յապահոսով

10 Եբբ. անձրեւ ի ժամանակի իւրում 11 Եբբ.
 անուանի 12 Եբբ. մատնեցեր զորդիւնն
 Իսրայելի ի սուր սուսերի ի ժամանակի նեղու-
 թեան նոցա 13 Եբբ. զի արարից զքեզ յարիւնն
 14 Եբբ. այնու զի ոչ ատեցեր զարիւնն

- րուսից ի զմանէ՝ զմարդ եւ զանասուն .
- 8 Եւ լցից զլերինս վիրաւորօք քովք՝, զբլուրս քո եւ զձորս քո, եւ յամենայն շրջաշտս քո վիրաւորեալք ի սրոյ անկ-
 9 ցին ի քեզ : Յաւերակ յաւիտենից եղից զքեզ . եւ քաղաքք քո ոչ եւս շինեսցին, եւ ծանրիցն թէ ես եմ Տէր :
- 10 Փոխանակ ասելոյն՝ թէ երկու ազգքն եւ երկու աշխարհք իմ եղիցին, եւ ժառանգեցից զնոսա, (եւ Տէր անդ էր .)
- 11 Վասն այնորիկ կենդանի եմ ես, ասէ Տէր Տէր . եւ արարից ընդ քեզ ըստ թշնամութեան քում, եւ ըստ նախանձուն քում զոր արարեր ստեղ զնոսա, եւ ծանուցայց զքզ յորժամ դատեցայց
- 12 զքեզ . եւ ծանրիցես թէ ես եմ Տէր . լուայ զձայն հայնոյութեանց քոց զի ասէիր, թէ լերինք Իսրայելի աւերակք՝
- 13 մեզ տուեալ են ի կերակուր . եւ մեծարանեցեր ի վերայ իմ բերանովք քովք . եւ հնչեցէք առ իս զբանս ձեր, եւ ես լուայ :
- 14 Այսպէս ասէ Տէր Տէր . Յուրախութիւն ամենայն երկրի՝ արարից զքեզ յաւերակ :
- 15 Փոխանակ զի ոսնհար եղիւ ժառանգութեան ամեն Իսրայելի՝ զի ապականե-
 16 յաւ, նոյնպէս արարից զքեզ, եւ եղիցիս աւերակ, լիտոնդ Աէիր, եւ ամենայն Վրդվմա սատակեացի՝, եւ ծանրիցին թէ ես եմ Տէր ՝Աստուած նոցա՝ :

ԳԼ . ԼԶ

Յի վերայ լերանցն Իսրայելի՝

- 1 Եւ գու, որդի մարդոյ, մարգարեաց ի վերայ լերանցն Իսրայելի, եւ աստացես ցլերինսն Իսրայելի, Լուարուք զպատ-
 2 գամս Տեառն . Այսպէս ասէ Տէր Տէր . Փոխանակ զի ասաց թշնամին ի վերայ ձեր, Վաշ վաշ, աւերակք յաւիտենից
 3 ի ժառանգութիւն եղին մեզ, Վասն այգորիկ մարգարեաց եւ ասացես, Այսպէս ասէ Տէր Տէր . Փոխանակ զի Դեզէք յանարգութիւն ամենայն ազգաց որ չուրջ զձեւք են, եւ վտարանդի եղէք ազգաց բազմաց, խօսք լեզուաց եւ
 4 նախատինք ազգաց, Վասն այգորիկ .

- լերինք Իսրայելի, Լուարուք զպատգամս Ագոնայի Տեառն . այսպէս ասէ Տէր Տէր ցլերինս եւ ցլուրս եւ ցիւորս եւ ցձորս եւ ցաւերակս ապականեալս եւ ցքաղաքս լքեալս՝ որ եղեն յաւեր եւ ի կոխումն մնացելոց ազգացդ որ չուրջ
 5 զձեւք են . Վասն այգորիկ այսպէս ասէ Տէր Տէր . Եթէ ոչ հրով բարկութեան իմոյ խօսեցայց ի վերայ այլոց ազգայն, եւ ի վերայ ամենայն եղովմայեացն, զի արարին զերկիրն իմ իւրեանց ի վտարանդի . ՝ոսնհարութեամբ անարգեցին զանձինս ապականել աւարաւ՝ :
- 6 Վասն այնորիկ մարգարեաց ի վերայ երկրին Իսրայելի, եւ աստացես ցլերինս եւ ցլուրս եւ ցձորս եւ ցպաշտս, Այսպէս ասէ Տէր Տէր . Ահաւասիկ ես նախանձու իմով եւ բարկութեամբ խօսեցայ, փոխանակ կրկնոյն ձերոյ նախա-
 7 ախնս ի Նիթանուայ : Վասն այնորիկ այսպէս ասէ Ագոնայի Տէր . Ամբարձի զձեռն իմ ի վերայ ազգացդ որ չուրջ զձեւք են, նոքա ընկալցին զանար-
 8 զանս իւրեանց : Բայց զձեր, լերինքդ Իսրայելի, զիսալոզ եւ զայրդենս կե-
 9 րիցէ ժողովուրդ իմ Իսրայելի, զի ակն ունին զառնալոյ : Ահաւասիկ ես հայեցայց ի ձեզ, եւ սրկանիցիք ի գործ, եւ
 10 սերմանիցիք՝ . եւ բազմացուցից ի ձեզ մարդիկ, համօրէն զտունն Իսրայելի ի սպառ . եւ բնակեացին քաղաքք, եւ
 11 աւերակք շինեսցին : Եւ բազմացուցից ի ձեզ զմարդ եւ զանասուն, բազմացին եւ աճեացեն, եւ բնակեցուցից զձեզ որպէս ի սկզբանէն, եւ բարի արարից ձեզ ՝ որպէս եւ յառաջագոյն՝, եւ ծանրի-
 12 ջիք թէ ես եմ Տէր : Եւ ՝տիրեցուցից ձեզ՝ մարդիկ՝ զժողովուրդն իմ Իսրայելի . եւ ժառանգեացին զձեզ, եւ եղիցիք նոցա ի բնակութիւն, եւ ոչ եւս ՝ լինիցիք անզաւակ ի նոցանէն՝ :
- 13 Այսպէս ասէ Տէր Տէր . Փոխանակ զի ասացին ցքիզ՝ թէ երկիր մարգավար ես

8 Եւր . ուրախութեամբ ամենայն սրտի, արհամարհանք անձին վասն մասնելոյ զնա յաւար
 9 Եւր . գուք, լերինք Իսրայելի, զբարունակս ձեր արձակեցէք, եւ զպատուս ձեր բերեցէք ժողովրդեան իմում Իսրայելի . զի մերձ են գալ : (9) Զի ահաւասիկ ես առ ձեզ եմ, եւ ի ձեզ զարձայց, եւ մշակեացիք եւ սերմանեալիք 10 Եւր . առասեւ ըսն զասացինն 11 Եւր . զնացուցից ի վերայ ձեր 12 Եւր . յաւերակքս անզաւակեացուցանել զնոսա

11 Եւր . զոր անցանէն եւ գառնայն . (8) Եւ լցից զլերինս նորս վիրաւորք նորս 12 Եւր . հեղեղորտս 1 Եւր . ի նոսա 4 Եւր . Եգոմմ 6 Եւր . գալ-տ 6 Եւր . բարձուք 7 Եւր . աւերեցին եւ կին զձեզ չուրջանակի, լինել ձեզ ժառանգութիւն մնացորդաց ազգաց, եւ

դու , եւ 'անզաւակ յազգէ քու մէ՛" ե-
 14 ՛ղեր , 'վասն այնորիկ ոչ եւս լինիցիս
 մարգաւար , եւ զազգդ քո անզաւակ ոչ
 15 եւս արասցես , ասէ Տէր Տէր : Եւ ²ա-
 նորգանք ազգոց ի ձեզ ոչ եւս լինի-
 ցին" , եւ նախատինա ի ժողովրդոց այլ
 ոչ եւս կրեսցես , եւ ³ազգդ քո այլ ոչ
 եւս 'անզաւակեացի , ասէ Տէր Տէր :
 16 Եւ եզեւ բան Տեառն աս իս եւ ասէ ,
 17 Որպի մարգոյ , տունդ Իսրայելի ընա-
 կեցին յերկրն իւրեանց , եւ պղծեցին
 գնա ճանապարհօք իւրեանց եւ ⁵կողմք
 իւրեանց եւ սրժութեամբք" իւրեանց .
 18 Եւս պարհ զոցա առաջի իմ : Եւ հեղի
 գարտառութիւն իմ ի վերայ զոցա վասն
 արեանց որ հեղին յերկրն , եւ կողմք
 19 իւրեանց պղծեցին դնա . Եւ ցրուցի
 զդոսա ընդ ազգս , եւ ⁶հոսեցի զդոսա"
 ընդ զաւաստ . Ըստ ճանապարհաց դո-
 20 ցաս : Եւ մահն յազգս , եւ ուր մտինն
 եւ անդ պղծեցին զանուն իմ սուրբ ,
 յասեւն ցնոսա թէ ժողովուրդ Տեառն
 21 են զոքա , եւ յերկրէն նորա ելին : Եւ
 ինայեցի ⁸ի դոսա վասն անուան իմոյ
 սրբոյ" , զոր պղծեցին տունդ Իսրայելի
 ի մէջ ազգաց յոր մտին ի նոսա :
 22 'վասն այդորիկ ասա ցտունդ Իսրա-
 յելի , Այսպէս ասէ Տէր Տէր . ոչ ⁹ձեզ
 ինչ առնեմ" , տունդ Իսրայելի , այլ վասն
 անուան իմոյ սրբոյ զոր պղծեցէք ի մէջ
 23 ազգացդ յորս մտէք ի դոսա : Եւ սրիս-
 ցից վանուն իմ մեծ որ պղծեցաւ ի մէջ
 ազգացդ՝ զոր դուք պղծեցէք ի մէջ դո-
 24 ցա : Եւ ծանիցեն ազգքդ եթէ ես եմ
 Տէր , ասէ Ադոնայի Տէր , ի սրբեւն ի-
 24 մում ի ձեզ յանդիման զոցա : Եւ առից
 զձեզ ի հիթանոսաց , եւ ժողովցից
 զձեզ յամենայն ազգաց , եւ տարայց
 25 զձեզ յերկիրն ձեր : Եւ ցանեցից ի վե-
 րայ ձեր չուր սուրբ , եւ սրիսցիք .
 յամենայն պղծութեանց ձերոց , եւ յա-
 26 մենայն կոռց ձերոց սրբեցից զձեզ . Եւ
 տայ ձեզ սիրա նոր , եւ ոգի նոր ¹⁰նո-
 րոցեցից ի ձեզ , եւ հանից զսիրան քա-

րեղէն ի մարմնոց ձերոց , եւ տաց ձեզ
 27 սիրտ մարմնեղէն . Եւ զՈգի իմ տաց
 ձեզ , եւ արարից՝ զի յարգարութիւնս
 իմ գնասցիք , եւ գիրաւունս իմ պահի-
 28 ցէք եւ տանիցէք գնոսա . Եւ ընակիցէք
 յերկրն զոր ետու հարցն ձերոց , եւ
 դուք եղիջիք ինձ ի ժողովուրդ եւ ես
 29 եղէց ձեզ յԱստուած : Եւ գերծուցից
 զձեզ յամենայն պղծութեանց ձերոց , եւ
 կոչեցից զգորեանս եւ բազմացուցից գնա ,
 30 եւ ոչ ածից ի վերայ ձեր սով : Եւ բազ-
 մացուցից զպտուղ ծառոց , եւ զարդիւնս
 անդոց , զի մի եւս ընդունիցիք գնա-
 31 խատինս սովոյ ի մէջ ազգաց : Եւ յիշու-
 ջիք զճանապարհան ձեր չարս եւ զգնացս
 ձեր զանրտրիս , եւ տաղտկասցիք ¹¹յի-
 րեսաց անօրէնութեանցն ձերոց եւ ¹²ի
 32 գարեխեացն ձերոց : Ոչ վասն ձեր ինչ
 առնեմ զայս , ասէ Տէր Տէր , այլ յայտնի
 լիցի ձեզ . ամաչեցէք եւ սլակտոեցէք
 ի ճանապարհաց ձերոց , տունդ Իսրայելի :
 33 Այսպէս ասէ Տէր Տէր . Յաւուր յո-
 րում սրբեցից զձեզ յամենայն անօրէ-
 նութեանց ձերոց , եւ շինեացին աւեւ
 34 բակք , եւ ընակեցուցից զքաղաքս . Եւ
 երկիրն ապականեալ՝ գործեցի , փոխա-
 նակ զի ապականեցաւ յանդիման ամե-
 35 նայն անպաւորաց : Եւ ասացեն , Եր-
 կիրն ապականեալ եզեւ իբրեւ զպար-
 տէզ ¹³փառիկութեան , եւ քաղաքքն ա-
 36 ւերակք , ապականեալք եւ քանդեալք՝
 աւիրայեալք նստան : Եւ ծանիցեն ազգք
 որ միանդամ չուրջ զձեւ մնացեալք ի-
 ցեն , թէ ես եմ Տէր , որ շինեցի զա-
 ւերեայսն , եւ հաստատեցի զապակա-
 նեալսն , ես Տէր խօսեցայ , եւ արարից :
 37 Այսպէս ասէ Տէր Տէր . ¹⁴Չայս եւս
 այց արարից տանդ" Իսրայելի առնել
 զոցա , բազմացուցից զմարդիկ զոցա
 38 իրրեւ զխաչինս : Իրրեւ զոչխարս սուրբս ,
 իրրեւ զոչխարս Երուսաղեմի ի օծոս
 իւրեանց , այնպէս եղիցին քաղաքքն
 աւերեալք՝ լի խաչամբք մարդկան , եւ
 ծանիցեն թէ ես եմ Տէր :

ԳԼ . ԼԵ

¹⁵Վասն Յարութեանս :

Եւ եղև ի վերայ իմ ձեռն Տեառն , եւ
 եհան զիս Հուղուիլն Տեառն , եւ եզ զիս

¹ Եբբ. անզաւակեցուցիչ ազգաց քոց ² Եբբ. ոչ եւս տաց լիել ի քեզ զանարգանս ազգաց
³ Եբբ. զազգդ ⁴ Եբբ. անզաւակեացես ⁵ Եբբ. գործովք
⁶ Եբբ. հոսեցան ⁷ Եբբ. գործոց ⁸ Եբբ. անուան իմում սրբոյ ⁹ Եբբ. վասն ձեր առնեմ զայս ¹⁰ Եբբ. տաց

¹¹ Եբբ. յերեսաց ձերոց վասն ¹² Եբբ. վասն զար-
 շեւեացն ¹³ Եբբ. եղեմայ ¹⁴ Եբբ. վասն այոր
 եւս խնդրեցայց ի տանէդ ¹⁵ Եբբ. գլխէ

ի մէջ գաշտին, եւ այն լի էր ոսկերօք
 2 մարդկան. եւ չրջնցոյց զիս շուրջ գոս-
 կերօքն, եւ ահա բազում յոյժ էին ի վե-
 րայ երեսաց գաշտին, եւ ցամաքեալք
 յոյժ:
 3 Եւ սաէ ցիս, Որդի մարդոյ, իցէ՞ թէ
 կենդանի լինիցին ոսկերօք այգոքիկ. եւ
 4 սասեմ, Տէր Տէր, դու զիտես զայդ. եւ
 սաէ ցիս, 'Որդի մարդոյ,' մարդարեաց
 ի վերայ ոսկերացդ այգոքիկ եւ ասա-
 ցես ցրոսա, Ոսկերք ցամաքեալք, լուա-
 5 րուք զպատգամս Տեսուն. Այսպէս սաէ
 Տէր Տէր ցուկերսդ ցայգոսիկ. Ահաւա-
 սիկ ես ածից ի վերայ ձեր շունչ ²կեն-
 6 դանի. եւ տաց ի ձեզ ջիզս, եւ ածից
 ի վերայ ձեր մարմնս, եւ ձգեցից ի վե-
 րայ ձեր մորթի, եւ տաց զոգի 'իմ ի
 ձեզ, եւ լինիջիք կենդանի, եւ ծանի-
 ջիք թէ ես եմ Տէր:
 7 Եւ մարգարէացայ որպէս եւ հրաման
 ետ ինձ Տէր: Եւ եղեւ բարբառ ի մար-
 ցարէանայն իմում, եւ ահա շարժումն.
 եւ մերձեցաւ ոսկր առ ոսկր առ իւրա-
 8 քանչիւր յօրս. եւ ետսի եւ ահա ³ջիզք
 եւ մարմինք պատէին, եւ ձգէր ի վե-
 րայ նոցա մորթի⁴, եւ շունչ ոչ զոյր ի
 9 նոսա: Եւ սաէ ցիս, Մարդարեաց, որ-
 դի մարդոյ, մարգարեաց ⁵ի վերայ շնչոյն',
 եւ ասացիս ցշունչն, Այսպէս սաէ Տէր
 Տէր. Եկ, շունչ, ի չորից հողմոց, եւ
 10 փչեա ի մեռեալս յայտոսիկ եւ կեցցեն,
 եւ ինձ Տէր. եւ ետուա ի նոսա շունչն,
 եւ եղեն կենդանի. եւ կանգնեցան կա-
 ցին ի վերայ ոտից իւրեանց, ժողովուրդ
 բազում յոյժ յոյժ:
 11 Եւ խօսեցաւ ընդ իս Տէր եւ սաէ,
 Որդի մարդոյ, ոսկերքդ այգոքիկ՝ ամե-
 նայն տունդ Իսրայելի է. եւ զոքս ա-
 սեն, Չորացանն ոսկերք մեր, հատու:
 12 յոյս մեր եւ մեռառ: Վասն այգոքիկ
 մարգարեաց եւ ասացիս ցրոսա, Այս-
 պէս սաէ Տէր Տէր. Ահաւաղիկ ես բա-
 ցից զգերեզմանս ձեր, եւ հանից զձեզ
 ի գերեզմանաց ձերոց, ժողովուրդ իմ,
 եւ տարայց զձեզ յերկիրն Իսրայելի:
 13 Եւ ծանիջիք եթէ ես եմ Տէր, իւրա-
 նայ ինձ զգերեզմանս ձեր եւ հանել զձեզ
 ի գերեզմանաց ձերոց, ժողովուրդ իմ:

14 Եւ տաց զոգի իմ ի ձեզ, եւ լինիջիք
 կենդանի. եւ ⁶եղից զձեզ յերկիրն ձերում,
 եւ ծանիջիք թէ ես եմ Տէր. եւ խօսե-
 ցայ եւ արարի, սաէ Տէր ⁷Տէր:
 15 Եւ եղեւ բան Տեսուն առ իս եւ սաէ,
 16 Եւ դու որդի մարդոյ, առ դու քեզ գա-
 ւազան մի, եւ գրեա ի նմա զՅուզա եւ
 զորդիսն Իսրայելի զմերձաւորս նորա.
 եւ ապեա քեզ գաւազան երկրորդ, եւ
 գրեսցես ի նմա զՅովսէփ, զղաւա-
 զանն Եփրեմի, եւ զամենայն որդիսն
 17 Իսրայելի զյաւելեալսն ի նոսա. Եւ կցես-
 ցիս զնոսա ընդ միմեանս 'կապեալ' լի-
 նել ի գաւազան մի, եւ եղիցի ի ձեռին
 18 ⁷քում: Եւ եղիցի յորժամ ասացեն ցքեզ
 որդիք ժողովուրդեան քո, Ո՛չ պատմեա
 19 մեզ զինչ է այդ իքեզ, Ասացես ցնոսա,
 Այսպէս սաէ Տէր Տէր. Ահաւասիկ ես
 առից ⁸զազգղ Յովսէփու որ է ի ձեռին
 Եփրեմայ, եւ զազգղ Իսրայելի զմեր-
 ձաւորս գորա, եւ ⁹տաց զգրոսա յազգն
 Յուզայ, եւ եղիցին՝ ի մի գաւազան.
 20 Եւ եղիցին մի ի ձեռին ¹⁰Յուզայ, եւ ե-
 զիցին գաւազանքդ յորս դու գրեսցի ի
 21 ձեռին քում առաջի նոցա: Եւ ասա-
 ցիս ցնոսա, Այսպէս սաէ Տէր Տէր. Ա-
 հաւաղիկ ես առնում զտունդ Իսրայելի
 ի միջոյ ազգացդ յորս մտին ի նոսա, եւ
 ժողովեցից զգրոսա յամենայն ազգաց որ
 չուրջ զգրօքք են, եւ տարայց զգրոսա
 22 յերկիրն ¹¹Իսրայելի. Եւ տաց՝ զգրոսա
 յազգ մի յերկիրն 'իմում' ի լերինսն Իս-
 րայելի, եւ մի իշխան եղիցի ի վերայ
 ամենեցուն զոցա եւ թաղաւոր. եւ ոչ
 եւս եղիցին յերկուս ազգս, եւ ոչ եւս
 1 ըրժամանեցին յերկուս թագաւորութիւնս:
 23 ¹²Ձի մի եւս պղծեցցին ի կուռս իւրեանց
 եւ ի գարչելիս իւրեանց եւ յամենայն ամ-
 պարչաութիւնս իւրեանց. եւ փրկեցից
 զգրոսա յամենայն ¹³անօրէնութեանց զո-
 ցա գոր՝ մեղան ի նոսա, եւ սրբեցից
 զգրոսա, եւ եղիցին ինձ ի ժողովուրդ,
 24 եւ ես եղէց զոցա յԱսաուած: Եւ ծա-
 ոայ իմ Դաւթի ¹⁴իշխան ի մէջ՝ զոցա,
 եւ մի հովիւ եղիցի ամենեցուն զոցա.
¹²Գիւրտս հրամանաց իմոց գնացցեն, եւ

¹ Եփր. գաւառի ² Եփր. եւ կենդանաշէք ³ Եփր. ջիզք ի վերայ նոցա ⁴ Եփր. յետիջն յետեւ, ի վերուստ ⁵ Եփր. առ շունչն

⁶ Եփր. հանգուցից ⁷ Եփր. բում մի ⁸ Եփր. զգաւազանդ ⁹ Եփր. եղից զնոսա ընդ նմա, ընդ գաւազանին Յուզայ, եւ արարից զնոսա ¹⁰ Եփր. իմում ¹¹ Եփր. իւրեանց (22) եւ արարից ¹² Եփր. եւ ¹³ Եփր. բնակութեանց (14) ուխտադանցութեանց) նոցա յորս ¹⁴ Եփր. թագաւոր ի վերայ

զիրաւունս իմ պահնայցն եւ արասցին 25 զնոսաւ եւ բնակեացն յերկրին իւրեանց զոր էտու ես ծառային իմում Յակոբայ ուր բնակելոյն հարք իւրեանց . եւ ընտկեացն գործա ի նմա , եւ որչիք զոցա եւ որչիք որչոց զոցա մինչև յաւտևանս . եւ Դաւիթ ծառայ իմ եղիցի իշ-

26 խան զոցա յաւտևանս : Եւ եղից զոցա ուխտ խաղաղութեանս , ուխտ յախանական եղիցի ընդ զոսա . եւ *սոսց զոցա** եւ յազմացոցից զոցոսա , եւ եղից զարութիւնս իմ ի մէջ զոցա յաւտևանս : Եւ եղից 2 բնակութիւնս իմ ի գոսա , եւ եղէց զոցա յԱստուած , եւ գո-

28 քա եղիցին ինձ ի ժողովուրդ : Եւ ծանկեցին ազգք թէ ես եմ Տէր որ 3 սարկցի զոցոսա , ի ինեղ սրբութեանց իմաց ի միջի զոցա յաւտևանս :

ԳԼ . ԼԸ

Վ ի վերայ Գովգայ եւ Մաղովգայ **

1 Եւ եղև բան Տեառն առ իս եւ ասէ ,

2 Որդի մարդոյ , հաստատեա զերեսս քո ի վերայ Գովգայ , երկրին Մաղովգայ , ի խանին 5 Ռովամեսոփայ եւ Թորեկայ ,

3 եւ մարգարեաց ի վերայ նորա , Եւ ասացես *ցնա , Այսպէս ասէ Տէր Տէր . Ահաւասիկ ես ի վերայ քո , 6 ի խանոց 4 Ռովամեսոփայ եւ Թորեկայ . Եւ պաշարեցիք** զքեզ , եւ արկից զանդանաւանդ ի կղակիս քո , եւ 7 ժողովիցի զքեզ եւ զամենայն զօրութիւնս քո , զհեծեալս եւ զերիվարս , զվառեալս եւ զսպառազէնս ազգաց բազմաց , վահանաւորս եւ սաղաւարտաւորս եւ սուսե-

5 յաւորս . Եւ ամենեքին սորա ընդ նոսա , Պարսիկք եւ Եփէտովպացիք . 8 ի ընդարեւ եւ Լիպացիք , ամենեքին աս-

6 զաւարտեալք եւ վահանաւորք . Գոմեր եւ ամենեքին որ շուրջ են զնովաւ , եւ առնն Թորգոմայ ի ծագացն հիւսիսոյ , եւ ամենեքին որ շուրջ զնովաւ , եւ ազգք բազումք ընդ քեզ :

7 Պատրաստեաց , պատրաստեա զանձն քո , զու եւ ամենայն ժողովք որ ժողովեալ են ընդ քեզ , եւ եղիցես 9 ինձ յառա-

8 ջապահ , Յետ աւուրց բազմաց 10 պատրաստեցի , ի վախճան ժամանակաց եկեացէ եւ հասցէ** յերկրն յայստով ի սրոյ . ժողովեալ յազգաց բազմաց 11 յերկրն Իսրայելի , որ եղև սուերակ համորէն , եւ նոյն յազգաց ժողովեալ** եւ բնակին խաղաղութեամբ** ամենեքին :

9 Եւ ելցես իրրեւ 12 զանձրեւ , եւ հասցես իրրեւ զամայ եւ ծածկեացիս զերկրն . եւ եղիցես զու եւ ամենայն ազգք բազումք՝ որ շուրջ զքեւ իցեն ընդ քեզ :

10 Այսպէս ասէ Տէր Տէր . Եւ եղիցի յաւուր յայնմիկ անկանիցին բանք ի սիրա

11 քո , եւ խորհեցիս խորհուրդս չարս . Եւ սասացես , Ելից ի վերայ յայստով երկրին , համայ ի վերայ հանդարտելոցն յանճողութեան , բնակելոցն ի խաղաղութեան , ամենեցուն որ բնակեալ են յերկրին , որոց ոչ պարիսպք եւ ոչ նիղք

12 եւ ոչ գրունք , Աւարկ զաւար , կողոպտակ զկապուտ նոցա , արկանել զձեռն 13 իմ ի վերայ երկրին աւերելոյ եւ բնակելոյ , եւ ի վերայ ազգին ժողովոց յազգաց բազմաց , ստացելոց ինչս եւ 14 գատտակերտս , բնակելոց ի սիրտերկրի :

15 Սարա եւ Դեզան եւ վաճառականք 15 կարբեղոնացեոց եւ ամենայն աւանք՝ նորա ասիցեն ցքեզ , Յառ յաւանք արչաւեալ գաս . ժողովեցիք զժողովս քո 16 առնուլ զարծաթ եւ զոսկի , վարել ի գերութիւն զստացուածս** եւ կողոպտակ զկապուտ մեծ :

14 Վասն այնորիկ մարգարեաց , որդի մարդոյ , եւ ասացես ց Գովգ , Այսպէս ասէ Տէր Տէր . Ոչ ապաքէն յաւուր յայնմիկ յորում բնակեացէ ժողովուրդ իմ Իսրայել ի խաղաղութեամբ 17 զարթիցես , եւ եկեացես ի տեղուցէ քումմէ ի ծագաց 18 հիւսիսոյ , զու եւ բազում ազգք ընդ քեզ հեծեալ յերկրար , ամենեքին ընդ 16 գունդս բազումս զօրաց բազմաց . Եւ ելանիցես ի վերայ ժողովրդեան իմոյ Իսրայելի իրրեւ զամայ ծածկեալ զերկրն . ի յետին ժամանակի եղիցի այն . եւ աս ծից զքեզ յերկր իմ , զի ծանիցեն զիս

1 Եբր. Դեր 2 Եբր. եղից զոցոսա 2 Եբր. խորան 3 Եբր. որբեմ զԻսրայել 4 3 Եբր. Դ-Կ-Ե 5 Եբր. Ռովգայ, Մասոփայ, 6 Եբր. Գովգ, ի խանն Ռովգայ, Մասոփայ, և Թորեկայ . (4) Եւ զարձուցից 7 Եբր. հանից 8 Եբր. Փաւզացիք 9 Եբր. նոցա

10 Եբր. եղից քեզ հանդէս . ի վախճան ժամանակաց եկեացես 11 Եբր. ի վերին Իսրայելի , որ էին աւերակ համորէն , և սպառնայք յազգաց բնակեացն յայստով 12 Եբր. զմրբիկ 13 Եբր. քո 14 Եբր. խաշինս 15 Եբր. Թարսիս եւ ասանայն կորիւնք առ ի ծուց 16 Եբր. կապտակ կապուտ , բառնալ զարծաթ եւ զոսկի , ստնուլ խաշինս եւ վաճառս 17 Եբր. գիտացես

ամենայն ազգք, ի լինել ինձ սուրբ ի միջի քում առաջի նոցա, Գովգ:

17 Այսպէս ասէ Տէր Տէր ցԳովգ. Գո՛ւ ես վան որոյ խօսեցայ յաւուրցն առաջնոց ի ձեան ծառայիցն իմոյ մարդարէլիցն Իսրայելի՜ յաւուրն յայնտիկ եւ յամն:

18 Եւ ասէ Տէր Տէր ի վերայ նոցա. Եւ եզիցի յաւուր յայնտիկ յորում եկեացէ Գովգ ի վերայ երկրից Իսրայելի, ասէ Տէր Տէր, ելցէ սրտմտութիւն իմ բարկութեամբ:

19 Եւ ի նախանձ իմ՝ հրով բարկութեան իմոյ խօսեցայ, եթէ ոչ՝ յաւուր յայնտիկ ելցիցի չարժումն մեծ ի վերայ երկրին:

20 Իսրայելի, եւ խոտվեսցին յերեսաց իմոց ձկունք ծովու եւ թռչունք երկնից եւ զազանք զաշտայ, եւ ամենայն սողունք երկրի, եւ ամենայն մարդիկ որ ի վերայ երեսաց երկրի. լերինք պատուեսցին, եւ ձորք տապալեսցին, եւ ամենայն պարիսպք երկրին կործանեսցին:

21 Եւ կոչեցից զա՛հ սրոյ ի վերայ նորա՞, ասէ Տէր Տէր. սուր ան ի վերայ ել:

22 Ըօր իւրոյ լինիցի. Եւ զատեցայց զնա արեամբ եւ մահու, եւ հեղեօք անձրևայ եւ վրձօք կարկտի եւ հուր եւ ծծուսի տեղացից ի վերայ նորա, եւ ի վերայ ՝ամենեցուն որ ընդ նմա իցեն՞, եւ ի վերայ ազգաց բազմաց որ ընդ նմա:

23 Եւ մեծացայց եւ սուրբ եղէց, ՝եւ փառաւորեցայց՝ եւ ծանուցայց առաջի ազգաց բազմաց, եւ ծանիցեն թէ ես եմ Տէր:

Գ. Լ. ԼԹ

1 Եւ գու, որդի մարդոյ, մարգարեաց ի վերայ Գովգայ եւ ասացես, Այսպէս ասէ Տէր Տէր. Ահաւասիկ ես ի վերայ քո, Գովգ՝ իշխանոց ՝Թովամիսովքայ եւ Թորեկայ. եւ ժողովեցից՝ զքեզ եւ առաջնորդեցից քեզ, եւ հանից զքեզ ի ծագաց հիւսիսոյ, եւ անից զքեզ ի վերայ լերանցն Իսրայելի. Եւ ՚կորուսից զպղծիւն քո ի ձախմէ ձեռանէ քումմէ, եւ զնստա քո յաջմէ ձեռանէ ՝քումմէ, 4 եւ կործանեցից զքեզ ի վերայ լերանցն Իսրայելի, եւ՝ անկանիցիս զու եւ ա-

մենեքին որ զքեւ իցեն, եւ ազգքն որ ընդ քեզ ՚իցեն՝ մտանեսցին ի կերակուր հաւուց եւ ամենայն թախտոց,՝ եւ ամենայն զազանաց անապատի ետու զքեզ ի կերակուր. Ընդ երեսա զաշտին անիցիս, զի ես խօսեցայ, ասէ Տէր Տէր, Եւ առաքեցից հուր ի վերայ Մագովգայ, եւ ՝քնակեսցին կզգիք՝ ի խաղաղութեան, 7 եւ ծանիցեն թէ ես եմ Տէր, եւ անուն իմ սուրբ ծանիցի ի մէջ ժողովրդեան իմոյ Իսրայելի, եւ մի՛ եւս պղծեսցի անուն իմ սուրբ. եւ ծանիցեն ՝ամենայն ազգք երկրի թէ ես եմ Տէր, Սուրբն Իսրայելի, Ահաւասիկ հասեալ է, եւ ՝ծանիցես թէ՞՝ լինիցի, ասէ Տէր Տէր. այս է օրն զորմէ խօսեցայ, եւ կիցեն բնակիչք քաղաքաց Իսրայելի, ՝եւ այրեսցին զգէնս, զնիզակարեկս, զասպարաբեկս, զնետս, զբեկորոս տգեղանց, զտիգարունս, զսընակոթս, եւ այրեսցեն իւրեանց այրելիս եւ թմն ամի: 10 Եւ մի՛նաօցեն փայտ ի վայրաց, եւ մի՛ հատցեն փայտ յանտառաց, այլ զգէնս այրեսցեն ի կրակի. եւ անցեն յաւարի զաւարտուս իւրեանց, եւ կողպտեսցեն զկողպտիչս իւրեանց, ասէ Տէր Տէր:

11 Եւ եզիցի յաւուր յայնտիկ տաց Գովգայ տեղի՝ ՝անուանի գերեզման յԻսրայելի, զշիրիմ եկիւրցն ի կողմանց ծովուն, եւ չինեսցեն շուրջ զափամբք ձորոցն՝ եւ թաղեսցեն անդ զԳովգ եւ զամենայն ժողովս նորա, եւ ՝կոչեսցի 12 Գին գերեզման՝ Գովգայ: Եւ թաղեսցեն զնստա սուենն Իսրայելի, զի սրբեցի 13 երկիրն, զեւթն ամիս: Եւ թաղեսցեն զնստա ամենայն ժողովուրդք երկրին. եւ եզիցի նոյս անուանի օրն յորում 14 փառաւորեցայց, ասէ Տէր Տէր: Եւ արս նմին իրի զուամարեսցեն երթալ շրջել ընդ երկիրն, եւ ՝թաղել զմնացորդս ի վերայ երեսաց երկրին՝ ՝եւ սրբել զնա յետ եւթն 15 ամսոյ: Եւ խնդրեսցէ ամենայն որ՝՝ անցանիցէ ընդ երկիրն, եւ յորժամ տեսանիցէ ոսկր մարդոյ՝ չինեսցէ առ նո-

1 Եբրայեցն յաւուր, որ մարգարէանային 2 Եբրայեցն բարձունք 3 Եբր. ի վերայ նորա, յամենայն լերին իմ, սուրբ 4 Եբր. գնդից նորա 5 Եբր. գովգ 6 Եբր. Ռովայ, Մոսովքայ եւ Թորեկայ (2) Եւ զարձուցից 7 Եբր. հանից 8 Եբր. քումմէ ընկեցից (4) Ի վերայ լերանցն Իսրայելի

9 Եբր. իցեն գիշակեր թռչնոյ ամենայն ազգի 10 Եբր. բնակելոց ի կզգիս 11 Եբր. եւ հուր հարցցեն եւ 12 Եբր. անդ ի գերեզման Իսրայելի, զձորն սնցաւորաց յարեւելյո ծովուն. եւ արգեցէ զանցաւորան, 13 Եբր. կոչեսցեն զնա զոր բազմութեան 14 Եբր. թաղել հանդերձ անգաւորոք 15 Եբր. սրբել զնա. յետ եւթն ամոց թաղեսցեն (15) Իբ

վառ նշանակ ինչ, մինչև թագեացն զասն որք թաղենն ¹ի Գեհ ի զերեւմա-

¹⁶նին՝ Գոփոպայ, ²Զի եւ անուն քաղաքին ³Պերեզման կոչեացի, եւ սրբեսցի երկիրն:

¹⁷Եւ զու, որդի մարդոյ, այսպէս առ Տէր Տէր. Ասա ցամեհայն հաւս թողունս եւ ցամեհայն զազանս զաշտի, ժողովեցարուք վեցարուք եւ եկայք, ժողովեցարուք յամենայն կողմանց երկրի ի գեհու մն իմ զոր ես գեհնի ձեզ՝ գեհու մն մեծ ի վերայ լեռանցն Բարայելի, կերայք միս եւ արբէք արիւն. Կերայք զմիս հակայից, եւ արբէք զարիւն իշխանաց երկրին, զխոյս եւ ⁴զուարակս եւ զնոխալս. զի զուարակք պարարեալք են՝ ամենւ-

¹⁸թեան: Եւ կերիջիք ձարոյ ցյալ, եւ արբջիք արիւն ցարբիսոյ ի զեկեղաց ի մոյ զոր գեհնի ձեզ: Եւ յազեմջիք ի սեղանոյ խմմէ, ի հեծելոց եւ յերկաթաց, ի սկայից, եւ յամենայն արանց պատե-

²⁰րազմողաց, սաէ Տէր Տէր: Եւ սաղ զփառս իմ ⁵ի ձեզ, եւ սեպեցն ամենայն ազգք զգաւաստանն իմ զոր արարի, եւ զձեռն իմ զոր ամի ի վերայ նոցա:

²²Եւ ծանիրցեն տունն Բարայելի թէ ես եմ Տէր Աստուած նոցա, յորէ յայնմանէ եւ

²³առ յայպայ: Եւ ծանիրցեն ամենայն ազգք, թէ վասն մեղաց իւրեանց զերեցան տունն Բարայելի, փոխանակ զի սնարգեցին զիս, ⁶զարձուցի զերեսս իմ ի նոցանէ, եւ մասնեցի գնոսս ի ձեռս թշնամեաց իւրեանց, եւ անկան ամենեւեան

²⁴ի սուրբ: Վասն պղծութեան նոցա եւ սնորհնութեանց նոցա արարի նոցա զայն, եւ ⁷զարձան երեսք՝ իմ ի նոցանէ:

²⁵Վասն այնորիկ այսպէս սաէ Տէր Տէր. Սրդ զարձուցից զցերութիւնն Յակոբայ, եւ ողորմեցայց ⁸տանն Բարայելի, եւ նախանձեցայց վասն անուան ի-

²⁶մոյ սրբոյ: Եւ ընկայցին զանարգանս իւրեանց եւ զանիրութիւնն զոր սնիրաւեցան⁷, ի բնակեցուցանել զնոսս յերկրին իւրեանց խաղաղութեամբ, եւ

²⁷ոչ ոք իցէ որ զարհուրեցուցանիցէ: Ի զարձուցանել ինձ գնոսս յաղգայ, եւ ժողովել գնոսս ի գաւառաց ⁸հեթմանտաց, եւ սուրբ եղէց ի նոսս առաջի

²⁸ազգաց: Եւ ծանիրցեն թէ ես եմ Տէր Աստուած նոցա, ¹⁰յերեւել ինձ նոցա ի մէջ ազգայ՝. եւ ժողովեցից գնոսս յերկիրն իւրեանց, եւ ոչ եւս թողից ի նոցանէ ուրեք: Եւ ոչ եւս ¹¹զարձուցից զերեսս իմ ի նոցանէ, ¹²փոխանակ հեղուց զարտաւսութիւն՝ իմ ի վերայ տանն Բարայելի, սաէ Տէր Տէր:

ԳԼ. Խ

¹³Վասն շինուածոյ Տաճարին:

¹Եւ եղև ի քամերորդի եւ հինգերորդի ամի զերութեան մերոյ, յամսեանն տաջնում որ օր¹⁴մետասան էր ամսոյն, ի չորեքասաներորդի ամի ամսոյն քաղաքին, յաւուր յայնմիկ եղև ի վերայ ²իմ ձեռն ¹⁵Տեսուն. Եւ ամ զիս ի տեսչեան Աստուծոյ յերկիրն Բարայելի, եւ ել զիս ի վերայ լեռին միոյ բարձու յոյժ. եւ ի վերայ նորա իրբու շինուած քա-

³ղաքի ¹⁶դէմ յանդիման՝. Եւ սարու զիս ի ներքս, եւ անա այր մի, եւ տեսիլ նորա իրբու զտեսիլ փայլուն պղնձոյ, եւ ի ձեռին նորա էր լար շինողաց եւ ձող չափոյ, եւ լինքն կայր ¹⁷ի վերայ ⁴զբանն՝. Եւ ասէ զիս այն, ¹⁸Տեսուր, որդի՝ մարդոյ, արգ հայեաց այժօք քովք, եւ լուր ականջօք քովք, եւ հաստատեա ի մաի քում զամենայն զոր ես ցոցից քեզ. զի վասն ցուցանելոյ քեզ ¹⁹եկի այսր, եւ ցուցցես զամենայն զոր զուգ տեսնես՝ տանն Բարայելի:

⁵Եւ անա չորք զտաճարաւն ²⁰փողոցս, եւ ի ձեռին աննն ձող չափոյ ի վեց ²¹կանգնոց եւ թզաւ. եւ չափեաց զպայնութիւն պարսպայն հաւասար ձողոյն, եւ բարձրութիւննորա հաւասար ձողոյն:

⁶Եւ եմուտ ընդ զուռնն որ հայէր ընդ արեւելս ²²զելթն աստիճանօք, եւ չափեաց զկողակարն վեց վեց զկամարօք զբանն հաւասար ձողոյն. եւ զերկայնութիւն կողակին հաւասար ձողոյն, եւ զպայնութիւն նորին հաւասար ձողոյն, եւ կամարս ի մէջ կողակայն ի վեց կանգ-

⁹Էբբ. ազգաց բազմաց ¹⁰Էբբ. ի խախտի իմ գնոսս յազգս ¹¹Էբբ. թարուցից ¹²Էբբ. զի հեղի վեցի ¹³Էբբ. պատե ¹⁴Էբբ. տան ¹⁵Էբբ. Տեսուն, եւ տարու զիս անդ ք ¹⁶Էբբ. ի հարսու ոյ ¹⁷Էբբ. առ զբանն ¹⁸Էբբ. Որդի ¹⁹Էբբ. ամար ²⁰Էբբ. պարսպ պարսպուստ ²¹Էբբ. կանգնոյ. Կանգնան կանգնան ²²Էբբ. եւ ել յաստիճանն նորս, եւ չափեաց զտեամ գրանն հաւասար ձողոյ ի լայնութիւն, եւ

¹Էբբ. ի Զոր բազմութեան ²Էբբ. Համնոյ, այնին բազմութեան ³Էբբ. զգաւանս եւ զնոխալս, զուարակս, պարարեալք Բասանու ⁴Էբբ. յազգս ⁵Էբբ. եւ թարուցի ⁶Էբբ. թարարեցի զերեսս ⁷Էբբ. ամենայն տանն ⁸Էբբ. իմ յին յաւուր, յիս ⁸Էբբ. թշնամեաց իւրեանց

7 նոյ : Եւ կողակն երկրորդ հաւասար ձու-
 ղոյն ի լայնութիւն , եւ հաւասար ձու-
 ղոյն յերկայնութիւն , եւ կամարն ի հինգ
 8 կանգնոյ : Եւ կողակն երրորդ հաւասար
 ձողոյն յերկայնութիւն , եւ հաւասար ձու-
 ղոյն ի լայնութիւն , եւ կամար գրանն
 9 մերձ ի կոնք գրանն յով կանգնոյ . Եւ
 կամարք յերկուց կանգնոց , եւ կամարք
 10 ներքին գրանն : Եւ կողակք գրանն զէմ
 յանդիման միմեանց՝ երեք աստի եւ ե-
 րեք անտի . եւ չափ մի էք երեցուն , եւ
 չափ մի՝ կամարացն՝ աստի եւ անտի :
 11 Եւ չափեաց զպայտութիւն մտից գրանն
 ի ասան կանգնոյ , եւ զերկայնութիւն
 12 գրանն յերկքտասան կանգնոյ : Եւ ՝ ի մի
 կանգուն բովանդակեալ զէմ յանդիման
 կողակացն՝ ի մի կանգուն սահմանեալ
 յայս կոյս յայն կոյս , եւ կողակքն՝ սա-
 13 տի եւ անտի ի վեց վեց կանգնոյ : Եւ
 չափեաց զգուռնն ՝ ի պարսպէ կողակին
 մինչեւ յորմ կողակին՝ , ի լայնութիւն
 քսան եւ հինգ կանգուն . Կե այն էք
 14 գուռն ի գրան վերայ : Եւ զմիջոց կա-
 մարի գրանն եւ զկողակս նորին ի վաթ-
 15 սուն կանգնոյ չուրջ զգրամբն . Եւ զմի-
 ջոց սրահին արտաքնոյ եւ զմիջոց կա-
 մարի գրանն ներքնոյ՝ ի յիսուն կանգ-
 16 նոյ : Եւ պատուհանք ծածուկ էին ի կո-
 զակին , եւ ի կամարսն ներքուստ գրանն
 սրահին չուրջ շրջանակաւ . նոյնպէս եւ
 կամարացն , եւ պատուհանք չուրջ ներ-
 քոյ եւ արտաքոյ , եւ ի վերայ կամար-

րացն արմաւենիք աստի եւ անտի :
 17 Եւ տարաւ զիս ի ներքին սրահն . եւ
 ահա դահիճք եւ սիւնք շրջանակօք
 չուրջ զսրահիւքն յօրինեալք , երեսուն
 զահիճք ի մէջ սևանցն շրջանակաց :
 18 Եւ սիւնք զէմ յանդիման գրանն ըստ
 երկայնութեան գրաննց , եւ սիւնք շրջա-
 19 նակաւ ի ներքոյ : Եւ չափեաց զպայտու-
 թիւն սրահին ի միջոցէ գրանն արտաք-
 նոյ մինչեւ ցմիջոց գրանն ներքնոյ որ
 հայէր ընդ արեւելս՝ հարեւր կանգուն :
 20 Եւ տարաւ զիս ի կողմն հիւսիսոյ , եւ
 ահա գուռն մի որ հայէր ընդ հիւսի-
 սի սրահին արտաքնոյ . եւ չափեաց զնա
 21 յերկայնութիւն եւ ի լայնութիւն , Եւ
 զկողակս նորս աստի եւ անտի , եւ զկա-
 մարն եւ զկոնքն եւ զարմաւենիս . եւ
 եղեւ ըստ չափոյ գրանն որ հայէր ընդ
 արեւելս՝ , յիսուն կանգուն յերկայնու-
 թիւն եւ քսան եւ հինգ կանգուն ի լայ-
 22 նութիւն : Եւ պատուհանք նորա եւ
 կամարք եւ արմաւենիք ըստ՝ գրանն
 որ հայէր ընդ արեւելս . եւ ընդ եւթն
 սանդուղս կայանէին ի նա , եւ ՝ էր կա-
 23 մարակապ ի ներքոյ : Եւ գուռն ներքին
 սրահին հայէր ընդ գուռն հիւսիսոյ՝
 ըստ օրինակի գրանն որ հայէր ընդ ա-
 րեւելս . եւ չափեաց զսրահն՝ գրանն է ի
 գուռն՝ հարեւր կանգուն :
 24 Եւ տարաւ զիս ընդ կողմն հարաւոյ ,
 եւ ահա գուռն մի որ հայէր ընդ հա-
 րաւ . եւ չափեաց ՝ զնա եւ զկողակս
 նորա եւ զկոնքն եւ զկամարս՝ ըստ նմին
 25 չափոյ : Եւ պատուհանք նորա եւ կա-
 մարք չուրջանակաւ՝ ըստ օրինակի պա-

զմեւ եւ սեամն հաւասար ձողոյ ի լայնու-
 թիւն : (7) Եւ սենեակքն՝ իւրաքանչիւր հաւա-
 սար ձողոյ յերկայնութիւն եւ հաւասար ձողոյ
 ի լայնութիւն , եւ անջրպետ սենեկացն ի հինգ
 կանգնոյ եւ սեամ գրանն որ առ սրահի գրանն ի
 ներքուստ հաւասար ձողոյ : (8) Եւ չափեաց զսրահ
 գրանն ի ներքուստ հաւասար ձողոյ . (9) Եւ
 չափեաց զսրահ գրանն կանգուն ութ , եւ գրանն
 դիք նորա յերկուց կանգնոց . եւ սրահ գրանն էր
 ի ներքուստ : (10) Եւ սենեակք գրանն որ ընդ
 արեւելս՝ ՝ Եբր . գրանդեացն ՝ Եբր . սահ-
 ման առաջի սենեկացն կանգուն մի աստի , եւ
 կանգուն մի սահման անտի . եւ սենեակքն
 3 Եբր . ի տանեաց միոյ սենեկին մինչեւ ի տանին
 միւսոյ սենեկին : Կեբր . գուռն յանդիման
 գրանն : (11) Եւ արար զգրանդիս ի վաթսան
 կանգնոյ , եւ մինչեւ ի գրանդիս գաւթին որ
 չուրջ զգրամբն . (15) Եւ յերկուց գրանն ար-
 տաքն մինչեւ յերես սրահի գրանն ներքնոյ
 յիսուն կանգուն : (16) Եւ պատուհանք վան-
 դակապատք ի սենեակն եւ ի գրանդիս նոցա
 ի ներքուստ գրանն չուրջ չուրջանակաւ , նոյն-
 պէս եւ ի սրահն , եւ պատուհանք ի ներքուստ

չուրջ չուրջանակաւ , եւ ի վերայ գրանդեացն
 արմաւենիք
 (17) Եւ եմոյճ զիս ի գաւթին արտաքին . եւ
 ահա գահիճք եւ քարայտատկ չուրջանակի
 վասն գաւթին գահիճք երեսուն ի քարայտ-
 տակին : (18) Եւ քարայտակն որ առ գուռնն՝
 էր յանդիման երկայնութեան գրաննց , քա-
 րայտակն որ ի խնարհ : (19) Եւ չափեաց զլայ-
 նութիւն յերեսոց խնարհագոյն գրաննց երեսու
 գաւթին ներքնոյ արտաքուստ , հարեւր կոն-
 գուն ընդ արեւելս եւ ընդ հիւսիսի : (20) Եւ
 չափեաց զերկայնութիւն եւ զպայտութիւն
 գրանն որոյ երեք ի հիւսիսակողմն ի գաւթին
 արտաքնում : (21) Եւ սենեակք նորա երեք
 աստի եւ երեք անտի . եւ գրանդեք նորա եւ
 սրահ նորա էին ըստ չափոյ գրանն աստիցոյ
 5 Եբր . սրահնորա եւ արմաւենիք նորա ըստ չափոյ
 6 Եբր . սրահն էին առաջի նոցա : (23) Եւ գուռն
 գաւթին ներքնոյ էր յանդիման գրանն հիւսի-
 սոյ եւ արեւելից , եւ չափեաց ՝ Եբր . զգրանդիս
 նորա եւ զսրահն նորա ՝ Եբր . սրահն նորա .

տուհանիցն ¹եւ կամարացն առաջնոյն՝, յիսուն կանգուն յերկայնութիւն եւ քսան
 26 եւ հինգ կանգուն ի լայնութիւն : Եւ եւթն սանդուղք ի նմա , եւ ²կամարք ի ներքս՝ , եւ արմուենիք աստի եւ անտի ի վերայ ³կոնքացն :

27 Եւ դուռն ներքոյ հանդէպ դրան սրահն որ հայէր ընդ հարաւ , եւ չափեաց զսրահն զքանէ ի դուռն ի լայնութիւն՝ :
 28 հարեւր կանգուն ի կողմն հարաւոյ : Եւ տարաւ զիս ի սրահն ներքին զքանն որ հայէր ընդ կողմն՝ հարաւոյ . եւ չափեաց զդուռնն որ ընդ հարաւ քառ նմին
 29 չափոյ : Եւ ⁴զկողակն եւ զկամարս եւ զկոնքս նովին չափով . եւ պատուհանք նորս եւ կամարք չուրջ չրջանակաւ , յիսուն կանգուն յերկայնութիւն եւ քսան
 30 եւ հինգ ի լայնութիւն : Եւ չուրջ զնու վաւ կամարք՝ յիսուն կանգուն յերկայնութիւն եւ քսան՝ եւ հինգ ի լայնութիւն : Եւ ⁵կամարք յարտաքնուս սրահն , եւ արմուենիք ի կամարսն , եւ
 32 եւթն սանդուղք կանգնէր նորս : Եւ տարաւ զիս ի դուռնն որ հայէր ընդ ճանապարհ արեւելից , եւ չափեաց զնա
 33 ըստառաջնն չափոյն . Չկողակն եւ զկամարսն եւ զկոնքսն՝ ըստ նմին չափոյ . եւ պատուհանք ի նմա , եւ կամարք չուրջանակի՝ , յիսուն կանգուն յերկայնութիւն եւ քսան եւ հինգ ի լայնութիւն :
 34 Եւ կամարք ի ներքնուս սրահն , եւ արմուենիք ի վերայ կամա-

րացն աստի եւ անտի , եւ եւթն սանդուղք ի նմա :
 35 Եւ տարաւ զիս ի դուռնն որ ընդ հիւսիսի , եւ չափեաց քառ նմին չափոյ ,
 36 ⁷Չկողակն եւ զկամարսն եւ զկոնքս , եւ պատուհանք ի նմա չուրջանակի , եւ կամարք՝ յիսուն կանգուն յերկայնութիւն եւ քսան եւ հինգ կանգուն ի լայնութիւն :
 37 ⁸Եւ կամարք արտաքոյ զքանն , եւ արմուենիք կամարացն աստի եւ անտի , եւ ութ սանդուղք ի նմա :
 38 Եւ զահիճք նորս եւ լայնութիւնք նորս եւ կամարք նորս հանդէպ երկրորդ զքանն՝ ուր լուսանային զողջակէզան : Եւ ի կամարի՝ զքանն երկու սեղանք յայսկոյս , եւ երկու սեղանք յայնկոյս , զի զենուցուն ի նմա զողջակէզան եւ զվասն մեղացն եւ զվասն անգիտութեանն :
 39 ⁹Եւ ընդ հարաւակողմն խոզովակի ողջակիզացն ի մուտս զքանն որ հայէր ընդ հիւսիսի՝ երկու սեղանք որ հայէր ընդ արեւելս . եւ ի հարաւակողմ կուսէ երկրորդ զքանն՝ հանդէպ
 41 կամարաց զքանն երկու սեղանք : Եւ ընդ արեւելս ութ սեղանք . չորք սեղանք յայսկոյս , եւ չորք սեղանք յայնկոյս , հանդէպ հարաւոյ զքանն . եւ սնդ զենուցուն զգոհան եւ զողջակէզան , յանդիմանն ութից սեղանոց ողջակիզացն :
 42 Եւ չորք սեղանք ողջակիզացն քարեղէնք կոխածոյք , կանգնաւ եւ կիսով յերկայնութիւն , եւ կանգնաւ եւ կիսով ի լայնութիւն , եւ կանգնաւ ¹⁰եւ կիսով ի բարձրութիւն . եւ ի վերայ նոցա զիցնն զգործին՝ որով զենուցուն անդ զողջակէզան եւ զգոհան : Եւ ծնօտս ուղկեանս քանդակադործս ունիցին ի ներքուս չուրջանակի . եւ ի վերայ ¹¹սեղանոյն յարկ առ ի ծածկել յանձնուոյ եւ յերաշտութեանէ :

¹ Եբբ. այնոցիկ ² Եբբ. սրահք նորս առաջի նոցա
³ Եբբ. զքանդակաց նորս :
 (27) Եւ դուռն գաւթին ներքոյ հայէր ընդ հարաւ , եւ չափեաց զքանէ ի դուռն ընդ հարաւ կանգունս հարեւր : (28) Եւ եմյոճ զիս ի գաւթին ներքին ընդ դուռնն ⁴ Եբբ. սենեակք նորս եւ զքանդիք նորս եւ սրահք նորս քառ նմին չափոյ , եւ պատուհանք նորս եւ սրահք նորս չուրջ չուրջանակաւ ի յիսուն կանգուն յերկայնութիւն եւ քսան եւ հինգ կանգուն ի լայնութիւն : (30) Եւ սրահք նորս չուրջ չուրջանակաւ քսան եւ հինգ կանգուն յերկայնութիւն , ⁵ Եբբ. սրահք նորս ի գաւթիս անդր արտաքին եւ արմուենիք ի դանդիս նորս , եւ աստիճանն ութ ստիճանք նորս : (32) Եւ եմյոճ զիս ի գաւթիս անդր ներքին ընդ արեւելս . եւ չափեաց զդուռնն ընդ նմին չափոյ : (33) Եւ սենեակք նորս եւ զքանդիք նորս եւ սրահք նորս քառ նմին չափոյ , եւ պատուհանք նմա եւ սրահից նորս չուրջ չուրջանակաւ ⁶ Եբբ. Եւ սրահք նորս ի գաւթիս անդր արտաքին եւ արմուենիք ի դանդիս նորս աստի եւ անտի եւ աստիճանք ութ ստիճանք նորս :

⁷ Եբբ. Սենեակք նորս , զքանդիք նորս եւ սրահք նորս , եւ պատուհանք նմա չուրջ չուրջանակաւ
⁸ Եբբ. Եւ զքանդիք նորս ի գաւթիս անդր արտաքին եւ արմուենիք ի դանդիս նորս աստի եւ անտի , եւ աստիճանք ութ ստիճանք նորս :
 (38) Եւ էր զահիճք եւ մուտ նորս ի դանդիս դրանցն . անդ լուսանային զողջակէզան : (39) Եւ ի սրահի ⁹ Եբբ. Եւ յարտաքին կողմնն որ ելանէ ի մուտս զքանն որ հայի ընդ հիւսիսի՝ սեղանք երկու , եւ ի միւսուս կողմնն որ առ ընթեր սրահի դրանն՝ սեղանք երկու : (41) Չորք սեղանք աստի եւ չորք սեղանք անտի ի կողմնէ զքանն , ութ սեղանք , յորս զենուին : ¹⁰ Եբբ. գաւթիս ¹¹ Եբբ. սեղանոցն զմիս զոհին :

41 Եւ սարաւ զիս ի սրահն ներքին . եւ ահա երկու պատշգամբ ի ներքոյ սրահին , մի ընդ հարաւոյ դրանն որ հայէր ընդ հիւսիսի եւ հանէր ընդ հարաւ . եւ մի ընդ հիւսիսոյ դրանն որ հայէր ընդ հարաւ եւ հանէր ընդ հիւսիսի : Եւ աւսէցիս , Այս պատշգամբ՝ որ հայի ընդ կողմանս հարաւոյ՝ քահանայիցն եղիցի որ պահեն զպահանութիւնս տանն :
 46 Եւ պատշգամբն որ հայի ընդ հիւսիսի՝ քահանայիցն եղիցի որ պահեն զպահանութիւնս սեղանոյն . նոքա են որդիք Սաղովկայ՝ որ մերձեանան ի Ղեւտացւոց
 47 անտի սրաչաւը զՏէր : Եւ չափեաց զսրահն յերկայնութիւն հարեւր կանգուն , եւ ի լայնութիւն հարեւր կանգուն , զչորեալն կողմանս նորա , եւ սեղան յանդիման տաճարին :
⁸Ուսուցիչ, յաւելան, (14) Վայ ձեզ զպրաց եւ փարիսեցոց կեղծաւորաց, զի ուսէք զտուես սյրեաց, պատճառաւոր երկարք զաղթս, վասն որոյ աւելի գատաստան ընդունիցէք :

¹Ուսուցիչ, Աստուծոյ
²Յ. 22, զ-|-, ի նոցանէ օրինական
³Ուսուցիչ, ձեզ պահէլ

յերկինս՝ հրդնու յաթոռն Աստուծոյ եւ
 23 յայն որ նստին ի վերայ նորոյ : Վայ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց , զի տասանորդէք զանանուխ եւ զսամթիւ եւ զչաման , եւ թողէք զժանր ծանր օրինացն , զդատաստան եւ զողորմութիւն եւ զհաւատս : զայս արժան էր առնել եւ զայն չթողուլ :
 24 Առաջնորդք կոյրք , որ զմթղուկս քա-
 25 մէք եւ զուղտս կրանէք : Վայ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց , զի սրբէք զարտաքին զբաժակին եւ զսկաւառակին , եւ ի ներքոյ լի են յափշտակութեամբ եւ անխառնութեամբ :
 26 Փարիսեցի կոյր , սրբեա նախ զներքին բաժակին եւ զսկաւառակին , զի լինիցի
 27 եւ արտաքին նոցա սուրբ : Վայ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց , զի նման էք գերեզմանաց բռնոց , որ արտաքոյ երևին գեղեցիկք , եւ ի ներքոյ լի են ոսկերօք մոռելոց եւ ամե-
 28 նայն պղծութեամբ : Նոյնպէս եւ զուք արտաքոյ երևիք մարդկան արդարք , եւ ի ներքոյ լի էք կեղծաւորութեամբ
 29 եւ անօրէնութեամբ : Վայ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց , զի շինէք զշիրիմս մարգարէից եւ զարդա-
 30 րէք զգերեզմանս արդարոց : Եւ ասէք , Եթէ էաք յաւուրս հարցն մերոց , ոչ
 31 հաղորդէաք արեան մարգարէիցն : Ապա ուրեմն վկայէք զանձանց , եթէ որդիք էք այնոցիկ որ կոտորէին զմարգա-
 32 րէսն : Եւ զուք լցէք ի՞նչ հարցն ձե-
 33 րոյ : Օձք , ծնունդք ի՞ժից , զի՞արդ փախնուցուք ի դատաստանէ զեհնինն :
 34 Վասն այսորիկ ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս եւ իմաստունս եւ զպիրս , եւ ի նոցանէ սպանանիցէք եւ ի իսչ հանիցէք , եւ ի նոցանէ տանջիցէք ի ժողովուրդս ձեր , եւ հարա-
 35 ձիցէք ի քաղաքէ ի քաղաք : Որպէս զի եկեցեց ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ յերկրի , յարեմէն Աբելի արդարոյ մինչեւ ցարիւնն Չաքարիայ որպէս Բարաբիայ զոր սպանէք ընդ
 36 մէջ տաճարին եւ սեպանոյ : Ամէն ա- սեմ ձեզ , Եկեցեց այն ամենայն ի վերայ սպլին այսորիկ :
 37 Երուսաղէմ , Երուսաղէմ , որ կոտորէր զմարգարէսն եւ քարկոծ շտանէր

զառաքեալսն Յառ նա ,՝ քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո , զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թիւովք , եւ ոչ կամեցարուք : Ահա թողեալ լինի ձեզ տունդ ձեր աւերակ : Բայց ասեմ ձեզ թէ Ոչ եւս տեսնիցէք զիս յայսմ հետէ , մինչեւ ասիցէք , Օրհնեալ եկեալ յանուն Տեառն :

ԳԼ ԻԳ

1 Ե՛է : Եւ ելեալ արտաքս Յիսուս ի տաճարէն՝ գնայր . եւ մտտեան աշակերտքն ցուցանել նմա զշինուածս
 2 տաճարին : Եւ նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա , Տեսանէք զայդ տե- նայն , ամէն ասեմ ձեզ , ոչ մնացէ այդք քար ի քարի վերայ որ ոչ քակ-
 3 տեցի : Եւ մինչդեռ նստէր ի լերինն Չիթինեաց , մտտեան սո նա աշակերտքն ստանձինն եւ ասեն , Առա մեզ , երբ լինիցի այդ , եւ կամ զի՞նչ նշան իցէ քոյոյ գարտեանն եւ վախ-
 4 ձանի աշխարհիս : Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա , Չգոչ լերուք ,
 5 դուցէ ոք զձեզ խարիցէ : Չի բազումք գայցին յանուն իմ եւ ասիցին թէ Ես եմ Գրիստոսն , եւ զբազումս մոյօրե-
 6 ցուցանիցեն : Լսելոց էք պատերազմունս եւ համբաւս պատերազմոյ . զգոյշ լերուք , մի՛ խոսիս ջիւք , զի պարտ է լինել այնմ ամենայնի , այլ
 7 չեւ է կատարած : Յարիչէ ազգ յազգի վերայ , եւ թաղաւորութիւն՝ ի թաղաւորութեան , եւ եղիցին սովք եւ սրածութիւնք եւ սասանութիւնք ի
 8 տեղիս տեղիս : Սակայն եւ այն ամե-
 9 նայն սկիզբն է երկունց : Յայնժամ մատնեցին զձեզ ի նեղութիւն , եւ սպանանիցին զձեզ , եւ եղիջիք ատե- ցիալք յամենայն սպլան վասն անուան
 10 իմոյ : Եւ յայնժամ վայթակցեսցին բազումք , եւ զմիմեանս մատնեսցին
 11 եւ ատեսցին զմիմեանս : Եւ բազում սուտ մարգարէք յարիցին եւ զբա-
 12 զումս մոյօրեցուցեն : Եւ վասն բազմանալոյ անօրէնութեանն՝ ցամաքեսցի
 13 սէր բազմանս Բայց որ համբերեացի
 14 ի սպա՛մ նա կեցցէ : Եւ քարոզեսցի աւետարանս արքայութեան ընդ ամե-

14-մ, կոտորէիք

24-մ, առնէիք

37-մ, առ քեզ

նայն տիեզերս ի վկայութիւն ամենայն հեթանոսաց, եւ ապա եկեացէ կատարած :

15 Արդ յորեւմ տեսանիցէք զզոյժութիւն աւերածոյն, որ ասացեալն է ի ձեռն Գանիկի մարգարէի, զի կայցէ ի տեղւոջն սրբութեան : (որ ընթեռնուէն ի միա ատցէ) : Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի բերնս :

17 Եւ որ ի տանիս կայցէ՝ մի՛ իջցէ առ 18 նույ ինչ ի տանէ իւրմէ : Եւ որ յանդի իցէ՝ մի՛ զարձցի յետ անուոյ զձորձս 19 իւր : Բայց վայ իցէ յգետայ եւ սորն 20 տուաց յաւուրան յայնոսիկ : Յազօթս կայցէք զի մի՛ լինիցի փախուսան ձեր 21 ձեռքանի եւ մի ի շարաթուս : Զի ելիցի յայնժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ եղեւ ի սկզբանէ արարածոց աշխարհի 22 մինչեւ ցայժմ, եւ ոչ այլ լիցի : Եւ եթէ ոչ կարձէին աւուրքն այնորիկ, ոչ ազրէր ամենայն մարմին : Բայց վասն ընտրելոցն կարճեցին աւուրքն 23 այնորիկ : Յայնժամ թէ ոք ստիցէ ձեզ, Ահաւասիկ աստ է Գրիստոսն կամ 24 անդ, մի՛ հաւատայցէք : Զի յարիցեն սուտ քրիստոսք եւ սուտ մարգարէք, եւ տացին նշանս մեծամեծս եւ արուեստս, մինչեւ մոլորեցուցանել, թէ 25 հնար ինչ իցէ, եւ զընտրեալսն : Ահա 26 յառաջագոյն ասացի ձեզ, Ապա եթէ ասիցեն ձեզ, Ահաւասիկ յանապատի է, մի երանիցէք, եւ թէ՛ Մհա ի շտե 27 մարանս է, մի հաւատայցէք : Զի որպէս փայլակն որ երանէ յարեւելից եւ երեւի մինչեւ յարեւմուտս, այնպէս 28 եղիցի զայուսան Որդւոյ մարդոյ : Զի ուր գէշն իցէ՝ անդր ժողովեացին արծուիք :

29 Վազլազակի յետ նեղութեան աւուրքայ այնոցիկ արեգակն խաւարեացի, եւ յուսին ոչ տացէ զյոյս իւր, եւ աստեղք անկցին յերկնից, եւ զօրու 30 թիւնք երկնից շարժեացին : Եւ ապա երեւեացի նշան Որդւոյ մարդոյ յերկնս, եւ յայնժամ կոծեացին ամենայն ազգք երկրի, եւ անցեն զՈրդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօ 31 բութեամբ եւ փառօք բազմօք : Եւ ասաքեսցէ զհրէշտակս իւր փոյլով մեծաւ, եւ ժողովեացեն զընտրեալս նորա ի չորից հոգմոց, ի ծայաց երկնից մին 32 չեւ ի ծագս նոցա : Ի թղեւոյ անտի

ուսարուք զառակն, զի յորժամ նորա ոտքն կակզացին եւ տերեւն ցցուի 33 ցի, գիտէք թէ մերձ է աւանս : Նոյնպէս եւ գուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն, գիտասցիք թէ մերձ է ի զուրս 34 Ամեն ասեմ ձեզ եթէ Ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն եզիցի : 35 Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի՛ անցցեն :

36 Բայց վասն աւուրն այնորիկ եւ ժամու ոչ ոք զիտէ, ոչ հրեշտակք երկնից, ¹եւ ոչ Որդի,՝ բայց միայն 37 ²Հայր : Այլ որպէս աւուրքն նոյի, այնպէս եզիցի զայուսան Որդւոյ մարդոյ : Զի որպէս էին յաւուրան որ յառաջ քան զՋրհեղեղն, ուտէին եւ բուսէին, կանայս անէին եւ արանց լինէին, մինչեւ յօրն յորում եմուտ նոյ 39 ի տապանն, Եւ ոչ գիտացին մինչեւ եկն Ջրհեղեղն եւ երարձ զամենեւին, այնպէս եզիցի եւ զայուսան Որդւոյ 40 մարդոյ : Յայնժամ թէ իցեն երկու յազարակի, մին անուեցու եւ մեւն 41 թողուցու : Եւ եթէ երկու աղայցեն ի մի երկանս, մին անուեցու եւ մեւն 42 թողուցու : Արթուն կայցէք, զի ոչ գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ : 43 Զայն գիտասցիք, եթէ գիտէր ասնուտէրն յորում պահու զոզ զայ, հսկէր եւ ոչ տայր ական հասանել զտան 44 իւրոյ : Վասն այնորիկ եւ զուք եղեւ թուք պատրաստք, զի յորում ժամու ոչ ական ունիցիք, զայ Որդի մարդոյ : 45 Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ եւ իմաստուն զոր կացոյց տէր իւր ի վերայ ծառայից իւրոց տայ նոցա կերա 46 կուր ի ժամու : Երանի է ծառային այնմիկ զոր եկեալ տէրն զտանիցէ 47 արարեալ այնպէս : Ամեն ասեմ ձեզ, զի ի վերայ ամենայն ընչից իւրոց կա 48 ցուցէ գնա : Ապա թէ ասիցէ ծառայն չար ի սրտի իւրում, Տէր իմ յամէ 49 զգայ : Եւ սկսանիցի հարկանել զճաստայակիցս իւր, ուտիցէ եւ ըմպիցէ 50 ընդ արեցոյս : Գայցէ տէր ծառային այնորիկ յաւուր յորում ոչ ական ունիցի, եւ ի ժամու յորում ոչ գիտիցէ : 51 Եւ կարեսցէ գնա ընդ մէջ, եւ գրամին նորա ընդ կեղծաւորս զիցէ, անդ եւ զիցի բալ եւ կրճել ասամանց :

¹ Եւ ոչ զիտէ ² Որդի, Հայր եւ

ԳԼ ԻԵ

4 Յայնժամ նմանեցի արքայութիւն
 երկնից տան կուսանաց, որոց տեալ
 զրապտերս իւրեանց կլին ընդ առաջ
 2 փեսային՝ եւ հարսին՝ շինոյն ի նո-
 ցանէ յիմարք էին, եւ ՚հինգն՝ խնա-
 3 տունք։ Յիմարքն ասին զլապտերան,
 4 եւ ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին, ի սկ
 խմաստունքն առին ձէթ ամանովք ընդ
 5 լապտերս իւրեանց։ Եւ ի յա ին վեա-
 6 յին նիբնեցին ամենեքեան եւ ի քուն
 7 մտին։ Եւ ի մէջ գիշերի եզեւ բար-
 8 բառ, Անա փեսայ դայ, արիք ընդ
 9 առաջ նորա։ Յայնժամ յարեան ամե-
 10 նայն կուսանքն եւ կազմեցին զլապ-
 11 տերս իւրեանց։ Ասեն յիմարքն զիմաս-
 12 տունն, Տուք մեզ յիւզոյց ձերմէ, զի
 13 ա՜նա չիջանին լապտերքս մեր։ Պա-
 14 տասխանի ետուն իմաստունքն եւ ա-
 15 սեն, Գուցէ ոչ իցէ մեզ եւ ձեզ բա-
 16 ւական, այլ երթայք ի վաճառականս
 17 եւ գնեսցիք ձեզ։ Իրբեւ նոքա գնացին
 18 գնել, եկն փեսայն, եւ պատրաստքն
 19 մտին ընդ նմա ի հարսանիսն, եւ փա-
 20 կեցաւ գուռն։ Յետոյ գան եւ այլ
 21 կուսանքն եւ սանն, Տէր, Տէր, բաց
 22 մեզ։ Նա պատասխանի ետ եւ ասէ,
 23 Ամէն ասեմ ձեզ թէ՛ Ոչ գիտեմ զձեզ։
 24 Արթուն կացէք զի ոչ գիտէք զօրն եւ
 25 ոչ զժամն։
 26 Որպէս այր մի գնացեալ ի տարաշ-
 27 խարճ, կոչեաց զծառայս իւր եւ ետ
 28 նոցա զինչս իւր։ Ու մննն ետ հինգ
 29 քանքար, եւ ումնն՝ երկուս, եւ ու-
 30 մննն՝ մի։ Իւրաքանչիւր բտտ իւրում
 31 կարի, եւ գնաց։ Չոգաւ վազվազակի
 32 որ առ զհինգն, զործեաց նոքօք եւ շա-
 33 ճեցաւ այլ եւս հինգ։ Նոյնպէս եւ որ
 34 զերկուսն՝ շահեցաւ այլ եւս երկուս։
 35 Եւ որ զմին աս՝ գնաց, փորեաց զերկիր,
 36 եւ թաքոյց զարծաթ տեսն իւրոյ,
 37 Յետ բազում ժամանակի զայ տէր ծա-
 38 տայցն այնոցիկ եւ ասնէ հա հարս
 39 ի մէջ նոցա։ Եւ մատուցեալ որ զհինգ
 40 քանքարն առ՝ մատոյց այլ եւս հինգ
 41 քանքար, եւ ասէ, Տէր, հինգ քան-
 42 քար ետուր ցիս, արգ ահաւասիկ հինգ
 43 այլ եւս քանքար ի վերայ շահեցայ։

21 Ասէ ցնա տէրն իւր, Ազնիւ, ծառայ
 22 րարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի
 23 սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ
 24 բազմաց կացուցից զքեզ։ մուտ յու-
 25 ռախութիւն տեսան քո։ Մատուցեալ
 26 եւ որոյ զերկուս քանքարն առեալ
 27 էր, եւ ասէ, Տէր, երկուս քանքարս
 28 ետուր ցիս, ահաւասիկ երկուս եւս
 29 այլ քանքարս զոր ի վերայ շահեցայ։
 30 Ասէ ցնա տէրն իւր, Ազնիւ, ծառայ
 31 րարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի
 32 սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ
 33 բազմաց կացուցից զքեզ։ մուտ յու-
 34 ռախութիւն տեսան քո։ Մատուցեալ
 35 եւ որոյ զմի քանքարն առեալ էր, եւ
 36 ասէ, Տէր, գիտէի զի այր մի խիտ
 37 ես, հնձես զոր ոչ սերմանեցիր, եւ
 38 ժողովեա ուստի ոչ սփռեցիր։ Երկեայ,
 39 գնացի եւ թաքուցի զքանքարն քո
 40 յերկրի։ արգ ահաւասիկ քոյց ցքեզ։
 41 Պատասխանի ետ տէրն եւ ասէ ցնա,
 42 Ծառայ չար եւ վատ, զիտէիր կթէ
 43 հնձեմ ուստի ոչ սերմանեցի, եւ ժո-
 44 ղովեմ ուստի ոչ սփռեցի։ Պարտ էր
 45 քեզ արկանել զարծաթի իմ ի սեղա-
 46 նաւորս, եւ եկեալ ես տոկոսեօք պա-
 47 նանջէի զինն։ Արգ առէք ի գմանէ
 48 զքանքարոց, եւ սուք այնմ որ ունիցի
 49 զսասն քանքարն, Ձի ամենայնի որ
 50 ունիցի՞ տացի եւ յաւելցի, եւ որ ոչն
 51 ունիցի՞ եւ զոր ունիցին բարձցի ի նմա-
 52 նէ։ Եւ զծառայոց անպիտան հանէք
 53 ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ
 54 եւ կրճել ատամանց։
 55 Եւ յորժամ եկեաց Որդի մարգոյ
 56 փառօք իւրովք եւ ամենայն հրեշտակք
 57 ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փա-
 58 ռայ իւրոց։ Եւ ժողովեցին առաջի
 59 նորա ամենայն ազգք, եւ մեկնեացէ
 60 գնոսա ի միմեանց, որպէս հովիւ զի
 61 մեկնէ զօգիս յայծեաց։ Եւ կայուցէ
 62 զօգիսն ընդ աջմէ իւրմէ, եւ զայծիսն՝
 63 ի ձախմէ։ Յայնժամ ստացել թագա-
 64 տորն ցայնոսիկ որ ընդ աջմէն իցնն,
 65 Եկայք, օրհնեալք շօր իմոյ, ժառան-
 66 գեցէք զպատրաստեալ ձեզ զարքայու-
 67 թիւնն ի սկզբանէ աշխարհի։ Ձի քաղ-
 68 ցեայ, եւ ետուք ինձ ուսել։ ծարա-
 69 վեցի, եւ արբուցէք ինձ։ օտար էի,
 70 եւ ժողովեցէք զիս։ Մերկ՝ եւ զգեցու-
 71 ցէք զիս։ հիւանդ էի, եւ տեսէք զիս։
 72 ի բանտի էի, եւ եկիք առ իս։ Յայնժամ

1 ի բաւառն զլուսե
 2 զիւրեք, զժամն յորում գայցէ Որդի մարգոյ

պատասխանի տացեն նմա արդարքն
 եւ ասացեն, Տէր, ե՞րբ տեսաք զքեզ
 38 քաղցեալ, եւ կերակրեցաք. կամ ծա-
 րաւի՞ եւ արբուցաք. Ե՞րբ տեսաք զքեզ
 39 օտար, եւ ժողովեցաք, կամ մերկի՞ եւ
 40 կամ ի բանտի, եւ եկաք առ քեզ. Պա-
 տասխանի տացէ Թագաւորն եւ ասա-
 ցէ ցնոսա, Ամէն ասեմ ձեզ, Որովհե-
 տեւ արարէք միւսմ յեղբարցս այսոցիկ
 41 փոքրկանց՝ ինձ արարէք: Յայնժամ
 ասացէ եւ ցայնտիկ որ ընդ անկէն
 իցեն, Երթա՛ք յինէն, անիծեալք, ի
 հուրն յախտենախան, որ պատրաս-
 տեալ է յատենայի եւ հրեշտակաց նո-
 42 րա: Ձի քաղցեալ, եւ ոչ ետուք ինձ
 ուտել. ծարաւեցի, եւ ոչ արբուցէք
 43 զիս. Օտար էի, եւ ոչ ժողովեցէք զիս,
 մերկ էի, եւ ոչ զգեցուցէք զիս, հի-
 ւանդ եւ ի բանտի՞ եւ ոչ տեսէք զիս:
 44 Յայնժամ պատասխանի տացեն եւ նո-
 քա եւ ասացեն, Տէր, ե՞րբ տեսաք
 զքեզ քաղցեալ կամ ծարաւ ի կամ օտար
 կամ մերկ կամ հիւանդ կամ ի բանտի,
 45 եւ ոչ պաշտեցաք զքեզ. Յայնժամ պա-
 տասխանի տացէ նոցա եւ ասացէ,
 Ամէն ասեմ ձեզ, Որովհետեւ ոչ արա-
 րէք միւսմ ի փոքրկանցս յայցանէ,
 եւ ոչ ինձ արարէք:
 46 Եւ երթիցեն նոքա ի տանջանսն յա-
 լիտենականս, եւ արգարքն ի կեանսն
 յաւիտենականս:

ԳԼ ԻԶ

1 Եւ եղև իրրեւ կատարեաց Յիսուս
 զամենայն զբանս զայսոսիկ, ասէ ցա-
 2 շակերտան իւր, Գիտէք զի յետ եր-
 կուզ աւուրց զատիկ լինի, եւ Որդի
 մարդոյ մատնի ի խաչ կաննել, ՎՋ
 3 Յայնժամ ժողովեցան քանանայա-
 պետքն եւ զպիւրք եւ ծերք ժողովրդ-
 4 անուռն էր կայտափա. Եւ արարին խոր-
 հուրդ զի նենգութեամբ կազցին զՅի-
 5 սուս եւ սպանցին: Բայց ասէին թէ
 Մի՞ ի տօնի ատտ, զի մի՞ խառվութիւն
 լինիցի ի ժողովրդեանս:
 6 Իրրեւ եկն Յիսուս ի Բեթանիա ի
 7 տուն Սիմօնի բորտի, Մատեաւ առ
 նա կին մի որ ունէր շիշ իւղոյ ծան-
 րագնի, եւ թափեաց ի գլուխ նորա ի

8 րազմախանին, Իրրեւ սեսին աշա-
 կերտքն, բարկացան եւ ասն, Ընդէ՞ր
 9 է կորուստդ այլ իւղոյդ. Ձի մարթ էր
 վաճօտել զդա մեծագնի եւ սալ սգքա-
 10 տաց: Գիտաց Յիսուս եւ ասէ ցնոսա,
 Ձի՞ աշխատ անէք զիկնդ, զորք մի
 11 բարի զործեաց զա յիս: Յամենայն
 ժամ զազքատս ընդ ձեզ ունիք, բայց
 զիս ոչ հանապաղ ընդ ձեզ ունիք:
 12 Արկանել զորա զեւզ ի մարմին իմ՝
 13 առ ի թաղերոյ զիս նշանակեաց, Բայց
 ամէն ասեմ ձեզ, զի ուր եւ քարոզեա-
 ցի աւետարանս այս ընդ ամենայն աշ-
 14 խար՝, խօսեսցի եւ զոր արար զա ի
 յիշատակ զորա:
 15 Յայնժամ գնաց մի յերկատասանիցն
 անուանեալ Յուզա Իսկարիօտացի առ
 16 քանանայապետան, եւ ասէ, Ձի՞ նչ կա-
 միւք սալ ինձ, եւ ես մասնեցից զնա
 ձեզ. եւ նոքա Վչուցին նմա երեսուն
 17 արծաթի: Եւ յայնմ հետէ խնդրէր պա-
 րտոյ զի մասնեցէ զնա նոցա:
 18 Եւ յառաջնում աւուր բողբոջակե-
 րացն մատենան աշակերտքն առ Յիսուս
 եւ ասն, Ո՛ւր կամիս զի պատրաս-
 19 տեսցուք քեզ ուտել զգաւիկն: Եւ նա
 ասէ ցնոսա, Երթա՛ք ի քաղաքն առ
 այս անուռն եւ ասացէք ցնա, Վարդա-
 պետ ասէ, ժամանակ իմ մերձեալ է,
 առ քեզ արնեմ զգատիկն աշակերտօքս
 20 հանգերձ: Եւ արարին ասակերտքն
 որպէս հրամայեաց նոցա Յիսուս, եւ
 պատրաստեցին զգատիկն:
 21 Եւ իրրեւ երեկոյ եղև, կայր բազ-
 մեալ ընդ երկոտասան աշակերտան:
 22 Եւ մինչդեռ ուտէին նոքա, ասէ, Ամէն
 ասեմ ձեզ, զի մի ոմն ի ձէնձ մատնե-
 23 լոց է զիս: Եւ տրամեցան յոյժ, սկսան
 ասել ցնա իւրաքանչիւր ոք ի նոցանէ,
 24 Միթէ՞ ե՞ս իցեմ, Տէր: Նա պատաս-
 խանի ետ եւ ասէ, Որ միտեաց ընդ իս
 զձեռն իւր ի սկաւառակն՝ նա մատնե-
 25 լոց է զիս: Որդի մարդոյ երթայ, որպէս
 եւ գրեալ է վասն նորա, բայց վայ մար-
 գոյն այնմիկ յոյր ձեռն Որդի մարդոյ
 մատնեայի. յաւ էր նմա թէ չէր ծնեալ
 մարդն այն: Պատասխանի ետ Յուզա
 որ մատնելոցն էր զնա եւ ասէ, Միթէ
 է՞ս իցեմ, վարդապետ. ասէ ցնա, Գո՛ւ
 ասայեր:

Վզամ, խոստացած

26 Եւ մինչդեռ ուտէին նորա, առ Յիսուս հաց, օրհնեաց եւ երեկ, եւ եւա աշակերտայն եւ ասէ, Ասէք, կերուքք, 27 այս է մարմին իմ: Եւ ասեալ ըստ խաղ զօհացաւ, եւ նոցա եւ ասէ, Արբէք 28 ի դմանէ ամենեքին: Զի այդ է արխն իմ նորայ ուխտի, որ ի վերայ բազմաց 29 հեղու ի թողութիւն մեղաց: Բայց աւսեմ ձեզ, Ոչ եւս արբից յայտ հետէ ի բերոյ որթոյ մինչեւ ջորն ցայն, յարժամ արբից զոչ ընդ ձեզ նոր յարքայութեան Հօր իմոյ:

30 Եւ օրհնեցին, եւ ելին ի վեան Զիթենեաց: Յայնժամ ասէ ցնոտա Յիսուս, Ամենեքին զաք վայթակղերաց էք յինէն յայտ դիչերի: զի գրեալ է թէ Հարից գնովին եւ ցրուեացին սչ 32 խարք հօտին: Եւ յետ յառնելոյն իմոյ 33 յառաջեցից քան զձեզ ի Գալիլեա: Պատասխանի ետ Պետրոս եւ ասէ ցնա, Թէպէտ եւ ամենեքեան զայթակղեացին ի քէն, սակայն ես ոչ զայթակղեցայց: 34 Ասէ ցնա Յիսուս, Ամէն ասեմ քեզ զի յայտ դիչերի մինչեւ հաւու խօսեալ 35 իցէ, երիցս ուրացիս զիս: Ասէ ցնա Պետրոս, Թէ եւ մեռանել հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց: Նոյնպէս եւ ամենայն աշակերտքն ասէին:

36 Յայնժամ զայ Յիսուս ընդ նոտա ի զեզ մի սրում անուն էր Գեթսեմանի, եւ ասէ ցնոտա, Նստարուք այգր, մինչ 37 չեւ երթայց կացից յաղթոյն: Եւ ասեալ ընդ իւր զՊետրոս եւ զերկուս որդիան Զերեկեայ՝ սկսաւ տրամել եւ հոգայ: 38 Յայնժամ ասէ ցնոտա, Տրտում է ողի իմ մինչեւ ի մահ, կացէք սոտ եւ սկեւ 39 ցէք ընդ իս: Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի, անկաւ ի վերայ երեսաց իւրոց, կաց յաղթոյն եւ ասէ, Հայր իմ, եթէ հնար է, անցցէ բաժակս այս յինէն: Բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս 40 զու: Գայ առ աշակերտան, եւ զտանէ գնոտա ի քուն, եւ ասէ ցՊետրոս, Այգպէս ոչ կարացցէք մի ժամ արթուն կալ 41 ընդ իս: Արթուն կացէք եւ աղօթոս աւրարէք զի մի՛ անկանիցիք ի փորձութիւն: Նողիս յօժար է, բայց մարմինս 42 տկար: Դարձեալ երկրորդ անգամ չոգաւ, եկաց յաղթոյն Յիսուս եւ ասէ, Հայր իմ, եթէ հնար իցէ՝ անցանել

յինէն ըստակիրս այտմիկ, 2 ապա թէ ոչ՝ 43 արբից զաս, եղիցին կամք քո: Եւ եկեալ միւսանգամ եղեա գնոտա ի քուն, զի էին աչք իւրեանց ծանրացեալք: 44 Եթող գնոտա եւ գնաց, կաց յաղթոյն երրորդ անգամ, եւ զարձեալ գնայն բան 45 տաց: Յայնժամ զայ առ աշակերտան եւ ասէ ցնոտա, Ննջիցէք այսուհետեւ եւ հանդերուք, զի եւս հասեալ է ժամ, եւ իրդի մարդոյ մատնի ի ձեռս մե 46 զաւտրաց: Արբէք, երթիցուք աստի, զի աճաւասիկ ե՛նաս որ մատնելոցն է զիս:

47 Եւ մինչդեռ նա զայն խօսէր, ահա Յուդա, մի յերկոտասանիցն եկն, եւ ընդ նմա ամբոս բազում սրովք եւ բրօք ի քահանայապետիցն եւ ի ձերոց 48 ժողովրդեանն: Եւ որ մատնելոցն էր զնա՝ եւ նոցա նշան եւ ասէ, Ընդ սրում եւ համբուրեցից՝ նա է, գնա ու 49 նիցիք: Եւ վաղվազակի մատուցեալ առ Յիսուս՝ ասէ, Եղջ եր, վարդապետ: 50 Եւ համբուրեաց ընդ նմա: Եւ Յիսուս ասէ ցնա, Ընկեր, վասն որոջ եկիրդ յայնժամ մատուցեալ արկին ձեռս ի 51 Յիսուս եւ կալան գնա: Եւ ահա մի ոմն յայնցանէ որ էին ընդ Յիսուս՝ ձգեաց զձեան եւ ե՛նան զսուր իւր եւ ե՛նար զմտայ քահանայապետին, եւ 52 ի բաց ե՛նան զուսին նորա: Յայնժամ ասէ ցնա Յիսուս, Դարձո զսուր քո ի տեղի իւր, զի ամենեքեան որ սուր 53 ասնուչուն՝ սրով անկանիցին: Թէ հաժարիցիս թէ ոչ կարիցեմ ազաչել զՀայր իմ, եւ հատուցանիցէ ինձ այժմ այսր աւելի քան զերկոտասան զուսդս 54 հրեշտակաց: Այլ զի՛արդ իսուցուն զիրք թէ այսպէս սարա է յինել:

55 Յայնժամ ասաց Յիսուս ցամբոխն, Իրրեւ ի վերայ աւազակի՛ ելէք սուսերօք եւ բրօք ունել զիս: Հանապազ առ ձեզ ի տաճարին նստէի եւ ուսուս 56 ցանէի, եւ ոչ կարայք զիս: Այլ այս ամենայն եղեւ զի լցցին զիրք մարդարելիցն: Յայնժամ աշակերտքն ամենեքին թողին գնա եւ փախեան:

57 Իսկ նոցա կարեալ զՅիսուս՝ անին առ կայտալիս քահանայապետ, ուր դպիրքն 58 եւ ձերք ժողովեալ էին: Եւ Պետրոս պէտա նորա երթալոյ բացազոյն մինչեւ

ԳԼ ԻԷ

ի սրան՝ քահանայապետին , եւ մտեալ
 59 Ի ներքե՛ս՝ նստէր ընդ սպասաւորսն սե-
 պեալեքն եւ ամենայն ատենն ինկրէ-
 60 ին սուս վկայութիւն զՅիսուս , զի
 մայ սուս վկայիցն մատուցերոյ . յետոյ
 61 թէ Սա ասէր , Կարող եմ քակել գտա-
 ճարն Աստուծոյ , եւ զերիս աւուրս
 62 շինել : Եւ յարուցեալ քահանայապետն
 ասէցնա , Զտա՛ս ինչ սլատասխանի ,
 63 զի՞նչ զոքա ամբաստաննն զքէն : Եւ
 Յիսուս լուս կայր : Պատասխանի եւ
 քահանայապետն եւ ասէցնա , Երգմե-
 ցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի ,
 64 զի ասացես մեզ՝ թէ զո՞ւ ես Քրիս-
 տոսն Որդի Աստուծոյ : Ասէցնա Յի-
 սուս , Դու ասացիր . բայց ասեմ ձեզ ,
 Յայ՛մ հետեւ անասնիցէք զՈրդի մարդոյ
 նստեալ ընդ աջմէ Զօրութեանն եւ
 65 եկեալ ընդ ամպս երկնից : Յայնժամ
 քահանայապետն պատուեաց զճան-
 զերծս իւր , եւ ասէ , Հայնչեաց , զի՞
 66 եւս պիտոյ են մեզ վկայք , ա՛նա արդ
 բուայք զհայնչութիւն զորս . Զինչ
 հաճոյ է ձեզ . նորա պատասխանի եւ
 67 տուն եւ ասեն , Մահապարտ է : Յայն-
 ժամ թքին ընդ երես նորա եւ կտիե-
 ցին զնա , եւ ոմանք ազտակեցին , եւ
 68 ասեն , Մարգարեաց մեզ , Քրիստոսդ ,
 ո՞վ է որ եհարն զքեզ :
 69 Իսկ Պետրոս նստէր արտաքոյ ի
 դաւթին . մտտեաւ առ նա աղախին մի
 եւ ասէ , Եւ զու ընդ Յիսուսի Գալիլ-
 70 եացոյ էիր : Եւ ուրացաւ ասաջի ու-
 մենեցուն եւ ասէ թէ Ոչ զիտեմ զինչ
 71 խօսիսդ : Եւ իբրեւ եյ նա արտաքս
 քան զդուանն , ետես զնա այլ կին մի ,
 եւ ասէ ջրախոսի որ անդն կային , Եւ
 72 սա ընդ Յիսուսի նազովրեցու էր : Եւ
 զհարձեալ ուրացաւ երգմամբ թէ Ոչ զի-
 73 տեմ զայրն : Եւ յետ սակաւ միւոյ մա-
 տուցեալ որք կայինն անդ՝ ասենց Պետ-
 րոս , Արգարեւ եւ զու ի նոցանէ ես ,
 քանդի եւ խօսք քո յայտ ամենն զքեզ :
 74 Յայնժամ սկսաւ նզովել եւ երդնուլ
 թէ Ոչ զիտեմ զայրն . եւ իսկոյն հաւ-
 75 իսուցեալ : Եւ յիշեաց Պետրոս զբանն
 Յիսուսի զոր ասաց թէ Մինչչեւ հաւու
 խօսեալ իցէ , երիցս ուրացիս զիս ,
 եւ ելեալ արտաքս՝ կրաց դառնապէս :

1 Իբրեւ այդ եզեւ , խորհուրց արարին
 ամենայն քահանայապետքն եւ ձերք
 ժողովրդեանն վասն Յիսուսի սպանա-
 2 նել զնա : Կապեցին զնա եւ ստին զնա-
 ցին , եւ կառն ի ձեռս Պոնտոցոյ Պի-
 զատոսի գատաւորի :
 3 Յայնժամ տեսեալ Յուդայի որ մաա-
 նեայն զնա թէ պարտաւորեցաւ , զզճա-
 ցաւ եւ դարձոց Կարծաթն առ քա-
 հանայապետն եւ ձերս ժողովրդեանն՝ ,
 4 Եւ ասէ , Մեղայ զի մասնեցի դարեւն
 սրգար . եւ նօքա ասեն , Մեզ չէ փոյթ ,
 5 զու զիտես : Եւ բնկէց զարծաթն ի
 տաճարին եւ զնայ , եւ չորաւ խեղ-
 6 զեցաւ : Իսկ քահանայապետիցն առեալ
 զարծաթն՝ ասեն , Ոչ է արժան ընդու-
 նել զայդ ի կորսանն , քանդի զինք
 7 արեան են : Խորհուրց արարեալ , գնե-
 ցին այնու զազարակն բրաի ի զերեզ-
 8 ման օտարաց : Վասն այնորիկ կոչեցաւ
 աղարակն այն Աղարակ արեան մինչեւ
 9 յայտօր : Յայնժամ լցաւ որ ասացան
 ի ձեռն 2 Երեմիայի մարգարէի , եւ ա-
 սին զերեսուն արծաթին զզինս վա-
 ճատելոյն , զոր արկին յորդուցն Իս-
 10 րայելի , Եւ ետուն զնա յազարակն
 բրաի , որպէս հրամայեաց ինձ Տէր :
 11 Եւ Յիսուս եկաց ասաջի գատա-
 ւորին . եհարց զնա դատաւ որն եւ ասէ ,
 Դո՞ւ ես ինպաւուրն Նբէից . եւ Յիսուս
 12 ասէ , Դու ասես : Եւ ի չարախօսն
 նորա ի քահանայապետիցն եւ ի ձերոց ,
 13 ոչինչ ետ պատասխանի : Յայնժամ
 ասէցնա Պիզատոս , Ոչ լես որչափ
 14 զոքա հակառակ քո վկայեն : Եւ ոչ ետ
 նմա պատասխանի եւ ոչ բան մի , մինչ-
 չեւ զարմանալ գատաւորին յոյժ :
 15 Բայց ըստ տօնի սովոր էր դատա-
 ւորն արձակել ժողովրդեանն կապեալ
 16 մի զոր կամէին : Ընէին յայնժամ
 կապեալ մի նշանաւ որ , սրում անուն
 17 էր 3 Յեսու Բարարբա : Իբրեւ ժողո-
 վեցան , ասէցնտա Պիզատոս , Զո՞
 կամիր 4 յերկուց աստի զի արձակեցից
 ձեզ , զՅեսու Բարարբա՞՝ եթէ զՅիսուս
 18 զանուանեալն Քրիստոս : Բանդի զի-

1 Յւնն , զերեսուն արծաթին առ քահանայա-
 պետն եւ ձերս
 2 Յաննա պաւստ
 3 Բարաբա , զի արձակեցից ձեզ , զԲարարբա՞
 4 Բարաբա , զի արձակեցից ձեզ , զԲարարբա՞

տէր թէ առ նախանձու մատնեցին զնա։
 19 Եւ մինչ նստէր յասնին, առաքեաց
 առ նա կինն իւր եւ ասէ, Չկայ ինչ քո
 եւ արդարոյն այնորիկ, զի բազում
 անցք անցին ընդ իս այսոր յանուրջս
 20 վասն նորա։ Իսկ քահանայապետքն
 եւ ծերք հաւանեցուցին զժողովուրդն,
 զի խնդրեացն զհարարայն, եւ զՅի-
 21 սուս կորուսցեն։ Պատասխանի ետ
 զատաւորն եւ ասէ ցնոսա, Չո՞ կամիր
 զի արձակեցիք ձեզ յերկուց աստի։ եւ
 22 նոքա ասեն, զհարարաւ։ Ասէ ցնոսա
 Պիղատոս, Իսկ զի՞ արարից զՅիսուս
 23 զանուանեալն Քրիստոս։ Ասեն ամե-
 նեքեան, ինչեացի։ եւ նա ասէ, Չի՞նչ
 չար արար։ եւ նոքա ասաւել եւս ա-
 24 զաղակէին եւ ասէին, ինչեացի։ Եւ
 տեսեալ Պիղատոսի թէ ոչինչ ոգնէ,
 այլ ատաւել խոտովութիւն լինի, ասեալ
 ջուր՝ լուաց զձեռս ատաջի ժողովրդ-
 եանն եւ ասէ, Քաւեալ եմ ես յարենէ
 Պրզարուց այդորիկ. դո՞ք զիտասջիր։
 25 Պատասխանի ես ամենայն ժողովուրդն
 եւ ասէ, Արիւն դորա ի վերայ մեր եւ
 26 ի վերայ որդւոց մերոց։ Յայնժամ ար-
 ձակեացնոցա զհարարբայն, եւ զՅիսուս
 զան հարեալ՝ ետ ի ձեռս զի խաչեացի։
 27 Յայնժամ զինուորք զատաւորին ա-
 ոին զՅիսուս յապարանս, եւ ժողովե-
 ցին ի վերայ նորա զամենայն զգուսնոյն.
 28 Մերկացին զնա, եւ արկին զնովըն.
 29 քղամիզ կարմիր։ Եւ ուրբեալ սրտի
 ի փշոց՝ եզին ի գլուխ նորա, եւ եղէցն
 յաջոյ ձեռին նորա. ի ծունր իջեալ ա-
 ոսջի նորա՝ կատակէին եւ ասէին,
 30 Ազջ եր, թագաւոր Հրէից։ Եւ թքեալ
 ի նա՝ ամուսին զեղէզնն եւ ձեծէին
 31 զգլուխ նորա։ Եւ յորժամ ձաղեցին
 զնա, մերկացուցին ի նմանէ զքղամիզն
 եւ աղուցին նմա զիւր հանդերձն, եւ
 սարան զնա ի խաչ հանել։
 32 Եւ երեալ արուաքս՝ զալին այր մի
 կիրենացի անուն Սիմովն, զնա կալան
 33 սրահակ զի քարձցէ զիսաչն նորա։ Եւ
 եկեալ ի տեղին անուանեալ Գողգոթա,
 34 որ է տեղի կառափելոյ, Ետուն նմա
 ըմպել զինի ընդ լեզի խառնեալ. եւ
 իբրեւ ձաչակեաց, ոչ կամէր ըմպել։
 35 Եւ հանեալ զնա ի խաչ՝ բաժանեցին
 զհանդերձս նորա վիճակաւ. 1 զի լցցի

րանն որ ասացաւ ի մարգարէէն, Բա-
 ժանեցին զհանդերձս իմ յիրեանս,
 ի վերայ պատժուճանի իմոյ վիճակս
 36 արկանէին։ Եւ նստեալ սրահէին զնա
 37 Եւ ելին ի վերայ զլիոյ նորա զրեալ
 զլուս նորա, թէ Այս է Յիսուս, թա-
 38 զաւարն Հրէից։ Յայնժամ հանին ընդ
 նմա ի խաչ երկուս աւագակս, մի
 յաջմէ նորա եւ մի յահէկէ։
 39 Եւ որ անպանկինն՝ հայնոյէին զնա,
 40 չարժէին զգլուխ իւրեանց, եւ ասէին,
 վահ, որ քակէիր զասճարն եւ զերիս
 աւուրս շինէիր զնա, ապրեցո զքեզ
 թէ Որդի ես Աստուծոյ, էջ ի խաչէց։
 41 Նոյնպէս եւ քահանայապետքն ձաղէին
 հանդերձ զպոքն եւ ծերովք եւ ասէին,
 42 Չայրա ապրեցոյց, զինքն ոչ կարէ ապ-
 րեցոցանել. եթէ թագաւոր է Իսրա-
 յելի, իջցէ այժմ ի խաչէց, եւ հաւա-
 43 սացուք զմա։ Եթէ յուսացաւ յԱստ-
 ուած, փրկեցէ այժմ զգա, եթէ կամի
 զգա. քանզի ասաց եթէ Աստուծոյ
 44 Որդի եմ, Չնոյն եւ աւագակքն որ
 խաչեալ էին րնդ նմա՝ նախատէին զնա։
 45 Եւ ի վեց ժամէ աւուրն խաւար ե-
 զեւ ի վերայ ամենայն երկրի մինչեւ
 46 ցինն ժամ։ Եւ զինն մաժաւն գոչեաց
 Յիսուս ի ձայն մեծ եւ ասէ, էլի, էլի,
 լսմա սարաքիժանի. այսինքն է, Աս-
 տուած իմ, Աստուած իմ, ընդէր թո-
 47 զեր զիս։ Սմանա յայնցանէ որ անդն
 կային՝ իբրեւ լուան, ասէին, Չեղիա
 48 կարգայ գա։ Եւ փաղվաղակի ընթա-
 ցաւ մի ոմն ի նոյանէ, առ սպունգ լի
 քացախով, հարեալ յեղեգան՝ ետ ըմպել
 49 նմա։ Եւ կէսքն ասէին, Թող, տեսցուք
 եթէ զայն Եղիա փրկել զգա։
 50 Եւ Յիսուս զարձեալ աղաղակեաց
 ի ձայն մեծ եւ արձակեալ զողին։
 51 Եւ աճա վարագոյր տասարին ցելաւ
 յերկուս ի վերուստ մինչեւ ի վայր, եւ
 երկիր չարժեցաւ, եւ վեճք պատճոնե-
 52 ցան։ Եւ զերեզմանք բացան եւ բա-
 զում մարմինք ննջեցեայ սրբոց յար-
 53 եան։ Եւ երեալ ի զերկզմանաց յետ
 յարութեանն նորա, մտին ի քաղաքն
 սուրբ եւ երեւեցան բազմաց։
 54 Իսկ հարիւրապետն եւ որ ընդ նմա
 պահէին զՅիսուս՝ իբրեւ տեսին զչար-
 ժումնն եւ զեղեալսն, երկեան յոյժ եւ
 ասեն, Արդարեւ Աստուծոյ Որդի էք
 սա։

1 Յովան գովմի

55 Էին անդ կանայք բազումք, կային
 6 ի հեռաստանէ եւ հայէին, որք եկին
 զկնի Յիսուսի ի Գալիլէ պաշտել զնա .
 56 Յորս էր Մարիամ Մագդաղենացի, եւ
 Մարիամ՝ Յակովբայ եւ Յովսեայ մայր,
 եւ մայր որդւոցն Չերեզեայ :
 57 Եւ իբրեւ երեկոյ եղեւ, եկն այր մի
 մեծատուն յԱրիմաթեայ որում անուն
 էր Յովսէփ, որ եւ աշակերտեցաւ իսկ
 58 Յիսուսի : Սա մատուցեալ առ Պիղա-
 տոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի .
 յայնժամ Պիղատոս հրամայեաց տալ
 59 զմարմինն : Եւ առեալ զմարմինն Յով-
 60 սէփ պատեաց սուրբ կտաւովք, եւ եղ
 ի նոր գերեզմանի զոր փորեաց ի վիմի-
 եւ թաւալեցուցեալ կափարիչ զրան
 61 գերեզմանին վէմ մի մեծ՝ գնաց : Անդ
 էր Մարիամ Մագդաղենացի եւ մեւս
 Մարիամն, նստէին հանդէպ գերեզ-
 մանին :
 62 Եւ ի վաղիւ անդր որ է յետ ուրբա-
 թուն, ժողովեցան քահանայապետքն
 63 եւ փարիսեցիքն առ Պիղատոս, եւ ա-
 սեն, Տէր, յիշեցաք զի մոլորեցուցին
 այն ասէր մինչ կենդանին էր, թէ Յետ
 64 երից աւուրց յառնեմ . Արդ հրամայեա
 զգուշանալ գերեզմանին մինչեւ ցերիս
 աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն զի-
 շերի՝ գողանայցեն զնա, եւ ասիցեն
 ժողովրդեանն թէ Յարեաւ ի մեռելոց .
 եւ լինիցի յետին մոլորութիւնն չար
 65 քան զատալինն : Ասէ ցնոսա Պիղատոս,
 Ունիք զզորականն, երթայք, զգուշա-
 66 ցարուք որպէս եւ գիտէք : Եւ նոքա
 երթեալ զգուշացան գերեզմանին, եւ
 կնքեցին զվէմն հանդերձ զորականօքն :

ԳԼ ԻԸ

1 Եւ յերեկոյի շաբաթուն յորում լու-
 սանայր միաշաբաթին, եկն Մարիամ
 Մագդաղենացի եւ մեւս Մարիամն տե-
 2 սանել զգերեզմանն : Եւ ահա շարժումն
 մեծ եղև, զի հրեշտակ Տեառն իջեալ
 յերկնից մատուցեալ ի բաց թաւալե-
 ցոց զվէմն ի զրաց անտի, եւ նստէր
 3 ի վերայ նորա . Եւ էր տեսիլ նորա
 իբրեւ զփայլակն, եւ հանդերձ նորա
 4 սպիտակ իբրև զծիւն : Եւ յահէ անտի
 նորա խոռոկեցան սահապանքն, եւ եղեն
 5 իբրեւ զմեռեալս : Պատասխանի ետ
 հրեշտակն եւ ասէ ցկանայսն, Մի՛ եր-

կընչիք զուք, զիտեմ զի զՅիսուս զիսա-
 6 չելեալն խնդրէք . Չէ աստ, քանզի
 յարեաւ, որպէս ասայն . եկայք, տե-
 7 սէք զտեղին ուր ՚կայր : Եւ վաղվա-
 զակի երթայք, ասացէք աշակերտացն
 նորա թէ ՚Յարեաւ . եւ ահա յատա-
 ջանայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տե-
 8 սանիցէք զնա . ահա ասացի ձեզ : Եւ
 ելեալ վաղվաղակի ի գերեզմանէ անտի
 ահիւ եւ խնդութեամբ բազմաւ՝ ըն-
 թանային պատմել աշակերտացն :
 9 Եւ ահա պատահեաց նոցա Յիսուս
 եւ ասէ, Ո՛ղջէք . եւ նոքա մատու-
 ցեալ կայան զոտս նորա եւ երկիր սա-
 10 զին նմա : Յայնժամ ասէ ցնոսա Յի-
 սուս, Մի՛ երկնչիք, երթայք, ասացէք
 եզբարցն իտոց զի երթիցեն ի Գալիլեա
 եւ անդ տեսցեն զիս :
 11 Իբրեւ նոքա զնացին, ահա ոմանք
 ի զօրականացն եկին ի քաղաքն, եւ
 պատմեցին քահանայապետիցն զամե-
 12 նայն որ ինչ եղեւն : Եւ նոքա ժողով-
 եալ հանգերձ ծերովքն, խորհուրդ առ-
 եալ արժաթ յոյժ ետուն զօրականացն,
 13 Եւ ասեն, Ատաջիք եթէ Աշակերտքն
 նորա եկեալ զիշերի գողացան զնա,
 14 մինչ մեք ի քուն էաք : Եւ եթէ լուր
 լիցի այդ առ դատաւորն, մեք հաճես-
 ցուք զնա եւ զձեզ անհոգ արացուք :
 15 Եւ նոցա առեալ զարծաթն, արարին
 որպէս ուսանն . եւ ել համբաւս այս
 ի Հրէից մինչեւ ցայսօր :
 16 Իսկ մետասան աշակերտքն զնացին
 ի Գալիլեա ի լեանն՝ ուր ժամադիր
 17 եղև նոցա Յիսուս : Իբրեւ տեսին զնա,
 երկիր պաղին նմա, եւ ոմանք յեր-
 18 կուացան : Եւ մատուցեալ Յիսուս խօ-
 սեցաւ ընդ նոսա եւ ասէ, Տուաւ ինձ
 ամենայն իշխանութիւն յերկինս եւ
 յերկրի . ³որպէս առաքեաց զիս Հայր,
 19 եւ ես առաքեմ զձեզ՝ ³Գնացէք այսու-
 հետեւ, աշակերտեցէք զամենայն հե-
 թանոսս, մկրտեցէք զնոսս յանուն Հօր
 20 եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ : Ուսու-
 ցէք նոցա սլահել զամենայն որ ինչ
 պատուիրեցի ձեզ . եւ ահաւասիկ ես
 ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչեւ
 ի կատարած աշխարհի :

1Բ-ըւ-74, Կայր Տէրն ³Ի Գո-նի գ-ի-տ-ե
 2Բ-ըւ-74, Յարեաւ ի մեռելոց

Գ Լ ՈՒԽՔ Մ Ա Ր Կ Ո Ս Ի Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ի Ն

<p>Վասն դիւահարին .</p> <p>Վասն Պետրոսի զըքանչին .</p> <p>Վասն բժշկութեան պէտպէս հիւ- լանդութեանց .</p> <p>Վասն բորոտին .</p> <p>Վասն անդամալուծին .</p> <p>Վասն Ղեւեպյ մաքսաւորի .</p> <p>Վասն գօսացեալ ձեռինն .</p> <p>Վասն առաքելոցն ընտրութեան .</p> <p>Վասն սերմանեացն առակի .</p> <p>Վասն սաստելոյ չուրցն .</p> <p>Վասն լէզէոփնացն .</p> <p>Վասն դստեր ժողովրդապետին .</p> <p>Վասն տեռատեսին .</p> <p>Վասն համարոյ առաքելոցն .</p> <p>Վասն Յովհաննու , եւ Հերովդէի .</p> <p>Վասն հինգ հացին եւ երկուց ձկանցն .</p> <p>Վասն ի վերայ ծովուն գնալոյ .</p> <p>Վասն անցանելոյն զպատուիրանաւն .</p> <p>Վասն Ասորոյ կնոջն փրկեցեցւոյ .</p> <p>Վասն համերն եւ խիին .</p> <p>Վասն եւթն հացին .</p> <p>Վասն խմորոյ փարիսեցւոցն .</p> <p>Վասն կուրին .</p> <p>Վասն հարցանելոյն ի կեսարիա .</p> <p>Վասն այլակերպութեանն Տեառն .</p> <p>Վասն լուսնահարին .</p>	<p>ԳԼ. ՀՄԻ.</p> <p>Ա. 23</p> <p>Ա. 29</p> <p>Ա. 32</p> <p>Ա. 40</p> <p>Բ. 3</p> <p>Բ. 14</p> <p>Գ. 1</p> <p>Գ. 13</p> <p>Գ. 2</p> <p>Դ. 35</p> <p>Ե. 1</p> <p>Ե. 21</p> <p>Ե. 25</p> <p>Զ. 7</p> <p>Զ. 14</p> <p>Զ. 35</p> <p>Զ. 47</p> <p>Է. 5</p> <p>Է. 24</p> <p>Է. 31</p> <p>Ը. 1</p> <p>Ը. 16</p> <p>Ը. 22</p> <p>Ը. 27</p> <p>Թ. 1</p> <p>Թ. 16</p>	<p>Վասն խորհելոյն թէ ո՞վ իցէ մեծ .</p> <p>Վասն հարցանելոյն թէ Պա՛բոս է արձակել զկին .</p> <p>Վասն հարցանելոյ մեծատանն զՅի- սուս .</p> <p>Վասն որդւոցն Զեբեդեայ .</p> <p>Վասն Բարտիմէոսի .</p> <p>Վասն յաւանակին .</p> <p>Վասն չորանալոյ թզենւոյն .</p> <p>Վասն անյիշաչարութեան .</p> <p>Վասն հարցանելոյ քահանայապե- տիցն զՏէրն .</p> <p>Վասն ոյգւոյն .</p> <p>Վասն հարցանելոյ զդահականէն .</p> <p>Վասն սաղուկեցւոցն .</p> <p>Վասն զպրացն .</p> <p>Վասն Տեառն հարցանելոյն զփարի- սեցիսն .</p> <p>Վասն երկու լուսնայիցն .</p> <p>Վասն կատարածին .</p> <p>Վասն սուուրն եւ ժամուն .</p> <p>Վասն օծանելոյ կնոջն զՏէրն իւղով .</p> <p>Վասն զատկին .</p> <p>Վասն մատնութեանն մարգարէա- նալոյ .</p> <p>Վասն Պետրոսի ուրացութեանն .</p> <p>Վասն խնորելոյ զտերունական մարմինն .</p> <p>Վասն իւղարեր կանանցն .</p>	<p>ԳԼ. ՀՄԲ.</p> <p>Թ. 32</p> <p>Ժ. 1</p> <p>Ժ. 17</p> <p>Ժ. 35</p> <p>Ժ. 46</p> <p>ԺԱ. 1</p> <p>ԺԱ. 12</p> <p>ԺԱ. 25</p> <p>ԺԱ. 27</p> <p>ԺԲ. 1</p> <p>ԺԲ. 13</p> <p>ԺԲ. 18</p> <p>ԺԲ. 28</p> <p>ԺԲ. 35</p> <p>ԺԲ. 41</p> <p>ԺԳ. 3</p> <p>ԺԳ. 32</p> <p>ԺԴ. 3</p> <p>ԺԴ. 12</p> <p>ԺԴ. 18</p> <p>ԺԴ. 66</p> <p>ԺԵ. 42</p> <p>ԺԶ. 1</p>
---	---	---	--

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԹ Ա

1 ՍԿԻՋԲՆ՝ աւետարանի Յիսուսի Քրիս-
2 տոսի, Որդւոյ Աստուծոյ, Որպէս եւ
զրեալ է ի մարգարէս, Ահաւասիկ ես
առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո, որ
հանգերձեսցէ զճանապարհս քո առաջի
3 քո: Զայն բարբառոյ յանապատի, Պատ-
րաստ արարէք զճանապարհ Տեանն,
եւ ուղիղս արարէք զչափղս նորա:
4 Եւ եղեւ զի Յովնաննէս մկրտէր յա-
նապատի, եւ քարոզէր մկրտութիւն
ապաշխարութեան ի թողութիւն մե-
5 ղաց: Եւ երթայր առ նա ամենայն աշ-
խարհն Հրէաստանի եւ Երուսաղեմա-
ցիք ամենեքեան, եւ մկրտէին ի նմա-
նէ ի Յորդանան գետ՝ խոստովանեալ
6 զմեղս իւրեանց: Եւ էր Յովնաննէս
զգեցեալ ստեւ ուղտու, եւ գօտի մաշ-
կեղէն ընդ մէջ իւր. եւ կերակուր նո-
7 րա մարախ եւ մեղր վայրենի: Քարո-
զէր եւ ասէր, Գայ զօրագոյնն քան
զիս զկնի իմ, որում չեմ բաւական
խոնարհել լուծանել զիտացս կօշկաց
8 նորա: Ես մկրտեցի զձեզ ջրով, եւ նա
մկրտեսցէ զձեզ Հոգով Սրբով:
9 Եւ եղեւ յաւուրսն յայնուսիկ եկին
Յիսուս ի Նազարեթէ Գալիլեացոց,
եւ մկրտեցաւ ի Յովնաննէ ի Յորդա-
10 նան: Եւ նոյնժամայն ընդ վերանալ
ի ջրոցն ետես ցեկեալ զերկինս, եւ
զՀոգին՝ Աստուծոյ իբրեւ զաղաւնի
11 զի իջանէր ի վերայ նորա: Զայն եղեւ
յերկնից եւ ասէ, Դու ես Որդի իմ սի-
12 բեյի, ընդ քեզ հաճեցայ: Եւ նոյնժա-
13 մայն Հոգին հանէ զնա յանապատ: Եւ
էր նա անդ զաւուրս քառասուն փոք-
ձեալ ի Սատանայէ, եւ էր ընդ զազանս.
եւ հրեշտակք պաշտէին զնա:
14 ԲՅ. Եւ յետ մասներոյն Յովնանու
եկին Յիսուս ի Գալիլեա. քարոզէր զա-
15ւետարանն Աստուծոյ, եւ ասէր թէ

Կատարեալ է ժամանակ, եւ հասեալ է
արքայութիւնն Աստուծոյ, ապաշխա-
րեցէք եւ հաւատացէք յաւետարանն:
16 Իբրեւ անցանէր առ ծովեզերքն Գա-
լիլեացոց, ետես զՍիմօն եւ զԱնդրէ-
աս զեղբայր Սիմօնի, զի արկեալ էր
նոցա ուսկանս ի ծով, քանզի ձկնորսք
17 էին. Եւ ասէ ցնոսա Յիսուս, Եկայք
զկնի իմ եւ արարից զձեզ լինել որ-
18 սորոս մարդկան: Եւ վաղվաղակի թոյ-
եալ զուսկանսն՝ գնացին զհետ նորա:
19 Եւ մատուցեալ անտի սակաւիկ մի յա-
ռաջ՝ ետես զՅակովբոս Զերեզեայ եւ
զՅովնաննէս զեղբայր նորա, եւ գնոսա
ի նաւին մինչ կաղմէին զուսկանս:
20 Եւ կոչեաց ՝ գնոսա, եւ վաղվաղակի՝
թողեալ զնայրն իւրեանց զԶերեզէոս
ի նաւին վարձկանօքն հանգերձ, զնա-
ցին զհետ նորա:
21 ԲԳ. Եւ մտանն ի Կափառնայում,
եւ իսկ եւ իսկ ի շաբաթուն մտեալ ի
22 ժողովուրդն՝ ուսուցանէր զնոսա: Եւ
զարմանային ընդ վարդապետութիւն
նորա, զի ուսուցանէր զնոսա իբրեւ
իշխանութեամբ, եւ ոչ որպէս զպիբքն:
23 Եւ էր ի ժողովրդեանն նոցա այր մի,
յորում այս պիղծ պոյր ի նմա. որ ա-
24 զաղակեաց եւ ասէ, Թոյլ տուր, զի՞
կայ մեր եւ քո, Յիսուս Նազովրեցի,
եկիր կորուսանել զմեզ. զիտեմք զքեզ,
25 ով ես, Սուրբ Աստուծոյ: Սաստեաց
ի նա Յիսուս եւ ասէ, Կարկեաց եւ ել
26 ի գմանէ: Եւ զարկոյց զնա այսն պիղծ,
եւ աղաղակեաց ի ձայն մեծ եւ ել ի
27 նմանէ: Եւ զարմայան ամենեքին, մին-
չեւ հօծել ընդ միմեանս եւ ասել, Զի՞նչ
է այս նոր վարդապետութիւնս, զի
իշխանութեամբ եւ այսոց պիղծոց սաս-
28 տէ, եւ հնազանդին սմա: Եւ ել լուր
նորա ընդ ամենայն կողմն Գալիլեա-
ցոց:
29 Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովրդե-

1 ի Յովնաննէս

2 ի Յովնաննէս, զնոսա վաղվաղակի, եւ

նէն՝ եկն ի տուն Սիմոնի եւ Անդրեայ՝
 30 Եւ զօրքանչ Սիմոնի զնէր ջերմացեալ,
 եւ վաղվաղակի ասենցնա վասն նորա :
 31 Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ
 զձեռանէ նորա . եւ եթող զնա տենդն,
 եւ պաշտէր զնոսա :
 32 Եւ իբրեւ երեկոյ եղև ի մտանել
 արեգականն, բերէին առնա զամենայն
 33 հիւանդս եւ զզլեանարս . Եւ էր ամե-
 նայն քաղաքն ժողովեալ առ դրունսն .
 34 Եւ բժշկեաց բազում հիւանդս ի պէս-
 պէս ալտոից, եւ զեւս բազումս եհան .
 եւ ոչ տայր խօսել զիւայն, զի զիտէին
 զնա թէ՛ Բիրիստոսն է՞ :
 35 ԲԻՐ . Եւ ընդ այգն ընդ առաւօտն յա-
 բուցեալ էլ եւ զնաց յանապատ տեղի,
 36 եւ անդ կայր յաղթս : Եւ զնաց զձեւ
 նորա Սիմոն եւ որ ընդ նմայն էին :
 37 Եւ իբրեւ զտին զնա, ասենցնա թէ
 38 Ամենքին խնդրեն զքեզ : Եւ ասէցնու-
 սա, Եկայք երթիցուք եւ յայլ մօտա-
 ւոր գեղաքաղաքսն, զի եւ անդ քա-
 39 ղաղեցից, զի յայս իսկ եկեալ եմ : Եւ
 քարոզէր ի ժողովուրդս նոցա ընդ ա-
 մենայն Գալիլեացիս, եւ զեւս հանէր :
 40 Գայ առնա բորոտ մի, աղաչէր, ի
 ծունր իջանէր եւ ասէր, Տէր, եթէ
 41 կամիս, կարող ես զիս սրբել : Իսկ Յի-
 սուս գթացեալ ձգեաց զձեան, մերձե-
 ցաւ ի նա եւ ասէցնա, կամիմ, սրբ-
 42 եաց : Եւ իբրեւ ասացնցնա, յաղվա-
 զակի գնաց ի նմանէ բորոտութիւնն,
 43 եւ սրբեցաւ : Եւ սաստեալ նմա՝ եհան
 զնա արտաքս վաղվաղակի, եւ ասէ
 44 ցնա, Զզոյշ լեր, մի՛ ումեք ինչ ասի-
 ցես . այլ երթ, ցոյց զքեզ քահանային,
 եւ մատո վասն սրբութեանքո պատա-
 45 ղադ, զոր հրամայեաց Մովսէս ի վկա-
 յութիւն նոցա : Եւ նա եկեալ սկսաւ
 քարոզել յոյժ եւ հոչակ հարկանել
 զբանն, մինչ ոչ եւս կարող լինել նմա
 յայանապէս ի քաղաք մտանել, այլ ար-
 տաքոյ յանապատ տեղիս էր . եւ զային
 առնա յամենայն կողմանց :

ԳԼ Բ

1 ԲԵ . Եւ մտեալ զարձեալ ի կալիառ-
 2 նայում յեւս աւուրց, Լուր եղև եթէ

¹ Զմանս պատէ

ի տան է . եւ ժողովեցան բազումք,
 մինչեւ տեղի եւս ոչ լինել եւ ոչ առ
 3 զբանն . եւ խօսէր նոցա զբանն : Եւ
 4 գային առնա, բերէին անդամալոյժ մի
 5 բարձեալ ի չորից : Եւ իբրեւ ոչ կա-
 6 ըին մերձեալ առնա յամբօսէ անտի,
 7 քակեցին զյարին ուր էր Յիսուս, եւ
 8 բացեալ զառաստաղն՝ իջուցին զմա-
 9 հիծան յորում կայր անդամալոյժն : Եւ
 10 տեսեալ Յիսուսի վաւառս նոցա, ասէ
 11 ցանդամալոյժն, Որդեակ, թողեալ լի-
 12 յին քեզ մեղք քո : Եւ էին ոմանք ի
 13 զյորաց անտի որ անպնասէին . եւ խոր-
 14 ձէին ի սիրաս իւրեանց, Զի՞նչ է այս
 15 որ խօսի սա զհայնոյութիւնս . ո՞վ կա-
 16 ըէ թողուլ զմեզ, եթէ ոչ մի Աստ-
 17 ուած : Եւ զիսաց Յիսուս յողի իւր
 18 թէ այնպէս խորհին ի սիրաս իւրեանց,
 19 եւ ասէ, Զի՞ խորհիք զայդ ի սիրաս
 20 ձեր : Զի՞նչ զիւրիւն է, ասել ցանդա-
 21 մալոյժն թողեալ լիցին քեզ մեղք քո,
 22 եթէ՛ ասել, Արի, առ զմահիծս քո եւ
 23 երթ ՚ի տուն քո՞ : Այլ զի զիտասջիք
 24 եթէ ի յանապատիւն ունի Որդի մարդոյ
 25 ի վերայ երկրի թողուլ զմեզս, (ասէ
 26 զմահիծս քո եւ երթ ի տուն քո : Եւ
 27 յարեաւ, եւ վաղվաղակի առեալ զմա-
 28 հիծան, ել առաջի ամենեցուն, մինչեւ
 29 զարմանալ ամենեցուն, եւ փառաւոր
 30 աննել զԱստուած եւ ասել թէ՛ Այսպիսի
 31 ինչ երբեք ոչ տեսաք :
 32 ԲԶ . Եւ ի զարձեալ ի ծովեզրն, եւ
 33 ամենայն ժողովուրդն գայր առնա .
 34 եւ ուսուցանէր զնոսա : Եւ մինչդեռ
 35 անցանէր, ետես զՂեւի Արիւայ զի
 36 նստէր ի մաքսաւորութեան, եւ ասէ
 37 ցնա, Եկ զինի իմ . եւ յարուցեալ զնաց
 38 զինի նորա, եւ բաղում մաքսաւորք
 39 եւ մեղաւորք բազմալ էին ընդ Յիսու-
 40 սի եւ ընդ աշակերտսն նորա . քանզի
 41 էին բազումք որ երթային զհետ նորա :
 42 Իսկ զպիւրքն եւ փարիսեցիք իբրեւ տե-
 43 սին թէ ուտէ ընդ մաքսաւորս եւ ընդ
 44 մեղաւորս, ասենցաշակերտսն նորա,
 45 Զի՞ է զի ընդ մեղաւորս եւ ընդ մաք-
 46 սաւորս ուտէ ՚եւ ըմպէ՞ : Իբրեւ լուաւ
 47 Յիսուս, ասէ ցնոսա, Ոչինչ է փառոյ
 48 բժիշկ ողջոց, այլ՝ հիւանդաց . եւ ոչ

² Ի Բաւառս պատէ

եկի կոչել զարգարս, այլ զմեզաւորս :
 18 Եւ էին աշակերտքն Յովհաննու եւ
 19 Կերտրք ոչ պահեն : Եւ ասէ ցնոսա Յի-
 սուս, Միթէ մարթ ինչ իցէ որդւոց
 առագաստի, մինչ ընդ նոսա իցէ փե-
 սայն, պահել : յորքան ընդ իւրեանս
 ունիցին զիեսայն, ոչ է մարթ պահել :
 20 Այլ եկեսցեն աւուրք, յորժամ վերաս-
 ցի ի նոցանէ փեսայն, եւ ապա պա-
 21 հեսցեն յաւուրք յայնմիկ : Ոչ ոք կա-
 պերտ ՚նոր անթափ արկանէ ի վերայ
 հնացեալ ձորձոյ . ապա թէ ոչ առնու
 լլուծեամբն իւրով նորն ի հնոյ անտի,
 22 եւ չար եւս պատառումն լինի : Եւ ոչ
 ոք արկանէ զինի նոր ի տիկս հինս .
 ապա թէ ոչ պայթուցանէ 4 զինի
 զտիկան, զինին հեղու եւ տիկքն կո-
 բնչին . այլ զինի նոր ի տիկս նորս
 արկանելի է :
 23 ԲԵ. Եւ եզեւ նմա ի շարաթու ան-
 ցանել ընդ արտորայս, եւ աշակերտքն
 ի զնայն իւրեանց սկսան հասկ կորզել
 24 եւ ուտել : Եւ փարիսեցիքն ասեն ցնա,
 Տես, զի՛նչ զործեն աշակերտքն զո
 25 ի շարաթուս, զոր չէ արժան : Եւ ասէ
 ցնոսա Յիսուս, Ո՞չ երբեք իցէ ըն-
 թերցեալ ձեր զոր արարն Դաւիթ, յոր-
 ժամ պլտոյն եզեւ, եւ քաղցեաւ նա
 26 եւ որ ընդ նմայն էին : Զիարդ եմուտ
 ի տունն Աստուծոյ առ Աբիաթարաւ
 քահանայապետիւ, եւ զնացան զտաւ-
 ջաւորութեան եկեր, եւ ետ եւ այնու-
 ցիկ որ ընդ նմայն էին, զոր ոչ էր օրէն
 27 ուտել, բայց միայն քահանայիցն : Եւ
 ասէ ցնոսա, Շարաթ վասն մարդոյ
 եզեւ, եւ ոչ եթէ մարդ վասն շարա-
 28 թու : Ապա ուրեմն աէր է Որդի մար-
 դոյ եւ շարաթու :

ԳԼ. Գ

1 Եւ եմուտ միւսանդամ ի ժողովուրդն,
 եւ էր անց այր մի որոյ ձեռն զօսա-
 2 ցեալ էր : Եւ սպասէին նմա եթէ բժըշ-
 կեսցէ զնա ի շարաթուն, զի շարա-

3 խօսեսցեն զնման : Եւ ասէ ցայն որոյ
 ձեռնն զօսացեալ էր, Արի, անց ի մէջ :
 4 Եւ ասէ ցնոսա, Զի՛նչ արժան է ի շա-
 րաթու, բարթ ինչ գործել եթէ չար
 անել, ոգի մի ապրեցուցանել՝ եթէ
 5 կորուսանել . եւ նոքա լուցին : Եւ հա-
 յեցեալ Յիսուսի զնոքօք լի ցասմամբ,
 տրամեալ վասն կուրութեան սրաից
 նոցա՝ ասէ ցայն, Զդեա զձեան քո .
 եւ նա ձդեաց, եւ ողջացաւ ձեռն նորա :
 6 ԳԿ. Եւ ելեալ արտաքս վաղվաղակի
 փարիսեցիքն Հերովդիանոսօքն հան-
 զերձ, խորհուրդ անէին վասն նորա
 թէ զիարդ կորուսցեն զնա :
 7 Իսկ Յիսուս աշակերտօքն իւրովք
 զնաց ի ծովեզրն . եւ բազում ժողո-
 վուրդ ի Գալիլեացւոց երթային զհետ
 8 նորա, եւ ի Հրէաստանէ, Եւ 5 Յերու-
 սաղեմէ եւ յայնկոյս Յորդանանու եւ
 որք ի Տիրուսէ եւ ի Սիդոնէ, բազում
 ժողովուրդ իբրեւ լսէին սրչակ ինչ
 9 աննէր՝ զային առ նա : Եւ ասէ ցաշա-
 կերտսն իւր զի նաւակ մի պատրաս-
 տական կայցէ նմա վասն ամբոխին,
 10 զի մի՛ նեղեսցեն զնա : Քանզի զրա-
 զումս բժշկեաց . մինչեւ գալ խոնել
 զնովաւ, զի մերձեսցին առ նա որք
 11 ունէին խտս ինչ : Եւ այսք պիղծք
 յորժամ տեսանէին զնա, անկանէին ա-
 ռոջի նորա, աղաղակէին եւ ասէին թէ
 12 Դու ես Որդին Աստուծոյ . եւ նա յոյժ
 սասաէր նոցա, զի մի՛ յայտնի անխի-
 ցեն զնա :
 13 ԳԲ. Ելանէ ի լեւանն եւ կոչէ առ ինքն
 զորս ինքն կամեցաւ, եւ չոպան առ
 14 նա : Եւ արար երկոտասանս զի իցեն
 զնովաւ, եւ զի առաքեսցէ զնոսա քա-
 15 բողել, Եւ ունել ի իսրայնութիւն բժըշ-
 16 կելոյ զցաւս եւ հանելոյ զզեւս : Եւ
 17 եզ անուն Սիմոնի՝ Պետրոս, Եւ Յա-
 կովբու Զերեղեայ եւ Յովհաննու եղ-
 բօրն Յակովբայ՝ եղ նոցա անուանս
 Բաներեզէս, որ է Որդիք որոտման :
 18 Եւ զԱնդրէաս, եւ զՓիլիպպոս, եւ
 զԲարթողոմէոս, եւ զՄատթէոս զմաք-
 սաւորն, եւ զԹովմաս, եւ զՅակովբոս
 Ալիւեայ, եւ զԹագէոս, եւ զՍիմոն
 19 Կանանացի, Եւ զՅուդա Իսկարիով-
 տացի, որ եւ մասնեացն զնա :
 20 ԳԳ. Փան ի տուն, եւ զայ միւսանդամ

1 Ո՞ւնէ, փարիսեցւոցն 2 Ո՞ւնէ, փարիսեց-
 ւոցն, այլ՝ աշակերտք փարիսեցւոցն
 3 ի Յօւնի գաւառէն, որդէս եւ յամեն է Հայ. չէ-
 ուրիշոց 4 Ո՞ւնէ, զինին նոր

5 Երուսաղեմէ եւ յեղմոց

ընդ նոսա ժողովուրդն, մինչ զի եւ
 21 հաց եւս ոչ ժամանել ուտել նոցա: Եւ
 իբրեւ լուան որ իւրքն էին՝ ելին ունել
 զնա, զի համարէին թէ մոլեգնեալ իցէ:
 22 Եւ գպիրքն որ յերուսաղեմէ իջեալ
 էին՝ ասէին թէ Բէեղզեբուզ գոյ ի զմա,
 եւ իշխանաւ զիւացն հանէ գա զգեւս:
 23 Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն՝ առակօք
 խօսէր ընդ նոսա, Զիա՛րգ կարէ Սա-
 24 տանայ զՍատանայ հանել: Եւ արգ
 էթէ թաղաւորութիւն յանձն իւր բա-
 ժանեացի, ոչ կարէ կալ թաղաւորու-
 25 թիւնն այն: Եւ եթէ տուն յանձն իւր
 26 բաժանեացի, ոչ կարէ կալ տունն: Եւ
 եթէ Սատանայ ի վերայ անձին իւրոյ
 յարեաւ եւ բաժանեալ իցէ, ոչ կարէ
 27 կալ, այլ վախճանեալ է: Այլ ոչ ոք
 կարէ զկարասի հզօրի, մտեալ ի տուն
 նորա, աւար հարկանել, եթէ ոչ նախ
 զհզօրն կապիցէ, եւ ապա զտուն նորա
 28 աւար հարկանիցէ: Ամէն ասեմ ձեզ
 զի Ամենայն թողցի որդւոց մարդկան
 մեղք եւ հայհոյութիւնք, որչափ եւ
 29 հայհոյեացեն. Բայց որ հայհոյեացէ զՀո-
 գին Սուրբ, ոչ ունիցի թողութիւն
 յաւիտեան, այլ պարտապան լիցի յա-
 30 լիտենիցն մեղաց: Զի ասէին թէ Այս
 պիղծ գոյ ի նմա:
 31 ԳԳ. Գան եղբարքն եւ մայր նորա, եւ
 արտաքոյ կացեալ՝ յղեցին եւ կոչէին
 32 զնա: Եւ անդ ժողովուրդն շուրջ զնո-
 վաւ նստէր. եւ իբրեւ ասացինցնցն,
 Ահաւասիկ մայրքս եւ եղբարքքս կան
 33 արտաքոյ եւ ինդրեն գքեզ, Պատաս-
 խանի ետ նոցա եւ ասէ, Ո՛վ է իմ
 34 մայր կամ եղբարք: Հայեցաւ շուրջ
 զիւրեւ յաշակերտան զի նստէին, եւ
 ասէ, Ահաւասիկ մայր իմ եւ եղբարք
 35 իմ. Զի որ առնիցէ զկամս Աստուծոյ
 նա է իմ եղբայր եւ քոյր եւ մայր:

ԳԼ. Դ

1 ԳԵ. Դարձեալ սկսաւ ուսուցանել
 առ ծովեզերքն, եւ խոնեցան զնովաւ
 ժողովուրդք բազումք, մինչեւ ի նաւ
 մտանել նմա եւ նստել ի ծովուն, եւ ա-
 մենայն ժողովուրդն զծովեզերքն զցա-
 2 մաքն սենէին: Եւ ուսուցանէր զնոսա
 առակօք բազում ինչ, եւ ասէր նոցա

3 ի վարդապետութեան իւրում, Լսէք.
 ահաւասիկ եւ սերմանող սերմանել:
 4 Եւ եղև ի սերմանեցն, ոմն անկաւ առ
 ճանապարհաւ, եւ շեկն թռչուն եւ
 5 եկեր զնա: Եւ այն անկաւ յապտա-
 ժի, ուր ոչ գոյր հող բազում. եւ վաղ-
 վաղակի բուսաւ, քանզի ոչ գոյր հիւթ
 6 երկրին. Եւ յորժամ ծաղեաց արեւ,
 ջեռաւ, եւ զի ոչ գոյին արմատք, ցա-
 7 մաքեցաւ: Եւ այն անկաւ ի մէջ փշոց-
 ելին փուշքն եւ հեղձուցին զնա, եւ
 8 պտուղ ոչ ետ: Եւ այն անկաւ յեր-
 կիր բարւոք, եւ երեւլ ամեցեալ տայր
 պտուղ, եւ բերէր ընդ միոյ երեսուն
 եւ ընդ միոյ վաթսուն եւ ընդ միոյ
 9 հարեւր: Եւ ասէր, Որ ունիցի ականջս
 լսելոյ՝ լուիցէ:
 10 ԳԶ. Եւ իբրեւ եղև առանձինն, հար-
 ցինցնցնցն որ զնովաւն էին աշակեր-
 11 տօքն հանդերձ զառակսն, Եւ ասէցնո-
 սա, Զեզ տուեալ է գիտել զսորհուրդս
 արքայութեան Աստուծոյ, բայց նոցա
 որ արտաքինքն են՝ ամենայն ինչ ա-
 12 ռակօք լինի, Զի տեսանելով տեսցեն
 եւ մի՛ տեսցեն, եւ լսելով լուիցեն եւ
 մի՛ իմասցին, զի մի՛ երբեք զարձցին
 13 եւ թողցի նոցա: Եւ ասէցնոսա, Ո՛չ
 զիտէր զառակս զայս, եւ զիարգ զա-
 14 մենայն առակսն զիտիցէք: Որ սեր-
 15 մանէն՝ զբանն սերմանէ: Եւ նոքա են
 որ առ ճանապարհաւն՝ ուր բանն սեր-
 մանի, եւ յորժամ լսեն զնա, զայ Սա-
 տանայ եւ հանէ զբանն սերմանեալ ի
 16 սիրաս նոցա: Եւ նոքա են որ յապա-
 սաժին սերմանեցան, որք յորժամ լսի-
 ցեն զբանն, վաղվաղակի ինդութեամբ
 17 ընդունին. Եւ զի ոչ ունին արմատս
 յանձինս, այլ առ ժամանակ մի են,
 ապա ի հասանել նեղութեան կամ հա-
 յածման վասն բանին՝ վաղվաղակի գայ-
 18 թակցին: Իսկ որ ի մէջ փշոցն սեր-
 մանեցան՝ նոքա են, որ իբրեւ զբանն
 19 լսեն, Եւ հողք աշխարհիս եւ պատ-
 րանք մեծութեան մտանն եւ հեղ-
 ձուցանեն զբանն եւ անպտուղ լինի:
 20 Եւ նոքա են որ յերկիրն բարւոք սեր-
 մանեցան, որք լսեն զբանն եւ ընդու-
 նին եւ տան ստուղ, ընդ միոյ երե-

1Իսաղաբէ, յորս նստէին

2Ի Գ-ւ-ի, «անէ» եկին թռչունք եւ կերան զնա. այլ՝ եկին թռչունք երկնից եւ կերան զնա
3Իսաղաբէ, մեծութեան եւ ցանկութիւնք այլքց իրաց

սուռն եւ ընդ միոյ վաթսուռն եւ ընդ միոյ հարեւր :

21 ԳԵ. Եւ ասէ ցնոսա, Միթէ զայ՛ ճրագ զի ընդ դրուանաւ զնիցի կամ ընդ մահճօք . ո՛չ ապաքէն ի վերայ աշտա-

22 նակի զնիցի : Զի չէ ինչ ի ծածուկ որ թէ ոչ յայտնեսցի, եւ ոչ եղեւ ինչ

23 գաղտնի՝ եթէ ոչ ի յայտ զայցէ : Եթէ

24 ոք ունիցի ականջս լսելոյ լուիցէ : Եւ ասէ ցնոսա, Տեսէք զինչ լսէքդ, եւ յաւելցի ձեզ որոց լսէքդ . որով չափով

25 չափէք, նովին չափեսցի ձեզ : Որ ոք ունիցի՛ տացի նմա . եւ որ ոչն ունիցի, եւ զոր ունին՝ բարձցի ի նմանէ :

26 ԴԿ. Եւ ասէր, Այսպէս է արքայու- թիւն Աստուծոյ, որպէս զի այր մի ար-

27 կանիցէ սերմանիս յերկիր . Եւ ննջիցէ եւ յառնիցէ զցայգ եւ զցերեկ, եւ սեր- մանիքն բուսանիցին եւ աճիցեն . եւ

28 նա ոչ զիտէ թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ . նախ զխոտն եւ ապա զհասկն, եւ ապա զցորեանն ասոք ի հասկին :

29 Այլ յորժամ տայցէ զպտուղն, վաղվա- զակի առաքել մանգաղ, զի հասեալ են

30 հունձք : Եւ ասէր, Ո՛ւմ նմանեցուս- ցուք զարքայութիւնն Աստուծոյ, կամ որո՞վ առական առականցուք զնա :

31 Որպէս հատն մանանխոյ որ յորժամ սերմանիցի յերկրի, փոքրադոյն է քան զամենայն սերմանիս որ են յերկրի,

32 Եւ յորժամ սերմանիցի, բուսանի եւ լինի մեծ քան զամենայն բանջար, եւ արձակէ ոսոս մեծամեծս, մինչև եւա- ւական լինել ընդ հովանեաւ նորա

33 թռչնոց երկնից բնակել : Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն, որ-

34 պէս կարող լինէին լսել . Եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա, բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն :

35 ԴԲ. Եւ ասէ ցնոսա յաւուրն յայնոիկ իբրեւ ընդ երեկս լինէր, Եկայք անց-

36 ցուք յայն կողմն : Թողուն զժողո- վուրդն, եւ առնուն զնա նաւաւն հան- գերձ, եւ զայլ եւս նաւսն որ էին ընդ

37 նմա : Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ, եւ զայլանս ի նաւն զեղոյր, մինչ զրեթէ

38 լի իսկ լինել : Եւ ինքն ննջէր ի խնյս նաւին ի վերայ բարձի . զարթուցանէին զնա եւ ասէին, Վարդապետ, ոչի՛նչ է

39 քեզ փոյթ, զի կորնչումք աւաստիկ : Եւ զարթուցեալ սաստեաց հողմոյն եւ ծո-

վուն, ասէ, Դադարեա, կարկեաց . եւ զադարեաց հողմն եւ եղեւ խաղաղու-

40 թիւն մեծ : Եւ ասէ ցնոսա, Ընդէր այդպէս վասասիրտք էք, չե՛ւ եւս ու- նիք հաւատս . եւ երկեան երկեւզ մեծ եւ ասէին ցմիմեանս, Ո՛ ոք արդեւք իցէ սա, զի եւ հողմ եւ ծով հնազան- զին սմա :

ԳԼ. Ե

1 Եւ եկն յայնկոյս ծովուն՝ յաշխարհն

2 Գերզեսացուց : Եւ ընդ ելանելն նորա ի նաւէ անտի, պատահեաց նմա այր մի ի զերեղմանացն զոր ունէր այս պիղծ .

3 Որոյ եւ բնակութիւն իւր իսկ ի զե- րեղմանս էր . եւ ոչ չղթայիւք ոք եւս

4 կարէր կայել զնա, Վասն բաղումն- դամ ոտնակապօք եւ չղթայիւք կա- պելոյ եւ խզելոյ ի նմանէ զչղթայան, եւ զոտնակապան խորտակելոյ . եւ ոչ

5 ոք կարէր պարտել զնա . Քանզի հա- նապաղ զցայգ եւ զցերեկ ի գերեղմանս եւ ի լերինս աղաղակէր, եւ կոծէր

6 զանձն իւր քարամբք : Իբրեւ ետես զՅի- սուս ի հեռաստանէ, ընթացաւ եւ եր-

7 կիր եպագ նմա : Աղաղակեաց ի ձայն մեծ եւ ասէ, Զի՛ կայ իմ եւ քո, Յի- սուս, Որդի Աստուծոյ բարձրելոյ, երգմնեցուցանեմ զքեզ յԱստուած, մի՛

8 տանջեր զիս : Քանզի ասէր ցնա, Ել,

9 այսդ պիղծ, ի մարդոյ այտի : Եւ հար- ցանէր ցնա թէ Զի՛նչ անուն է քո . եւ ասէ ցնա, Լէգէնօվն անուն է իմ,

10 քանզի բաղումք եմք : Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի՛ առաքեսցէ զնոսա արտաքս

11 քան զաշխարհն : Եւ անդ էր առ լե- րամբն երամակ մի խողից արօտական

12 մեծ : Աղաչեցին զնա ամենայն զեւքն եւ ասեն, Առաքես զմեզ ի խողսն, զի

13 մտցուք ի նոսա : Եւ հրամայեաց նոցա- եւ իբրեւ ելին այսքն պիղծք, մտին ի խողան, եւ զիմեաց երամակն ի դարէ անտի ի ծովն . էին իբրեւ երկու հա-

14 զարք, եւ հեղձուելին ի ծովուն : Եւ խողարածքն փախեան եւ պատմեցին ի քաղաքին եւ յաղարակս . եւ ելին տե-

15 սանել զինչ իցէ որ գործեցաւն : Դան առ Յիսուս, եւ տեսանեն զյիւսահարն զի նստէր զլեցեալ եւ զգաստացեալ,

1 զԼուս, Գադարացուց

որ ունէր զէզէոֆէն, եւ զահի հարան :
 46 Եւ պատմեցին նոցա որոց տեսեալն էր, թէ զի՛նչ կողեւ այսահարին եւ
 47 զի՛նչ վամն խողիցն : Եւ սկսան աղա-
 48 չել զնա գնալ ի սահմանաց նոցա : Եւ իբրեւ եմուտ նա ի նաւն, աղաչէր
 49 զնա դիւահարն զի ընդ նմա իցէ : Եւ Յիսուս ոչ ետ նմա թոյլ, այլ ասէ ցնա,
 50 արար քեզ եւ ողորմեցաւ քեզ : Եւ չողաւ եւ սկսաւ քարոզել ի Դեկապոլին զոր ինչ արար նմա Յիսուս, եւ ամենեքին զարմանային :
 21 ԴԳ. Եւ իբրեւ անց Յիսուս ¹միւսւանգամ յայն կողմն, ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, եւ էր առ
 22 ծովեղերբն : Եւ ահա մի ի ժողովրդապետացն զայր, որուս գնաւ սնուն էր Յայբոս, եւ իբրեւ ետես զնա անկաւ առ
 23 ոտս նորա . Աղաչէր զնա յոյժ եւ ասէր թէ Դուստր ²նորա մերձ է՝ ի մահ, զի եկեալ ³զնիցէ նմա ձեռն, որպէս
 24 զի ապրեսցի եւ կեցցէ : Եւ գնաց ընդ նմա . երթայր եւ ժողովուրդ բազում զհետ նորա եւ նեղէին զնա :
 25 Եւ կին մի էր ի տեղատեսութեան
 26 արեան ղերկոտասան ամ . Եւ յոյժ վշտացեալ ի բազում բժշկաց, եւ ծախեալ զինչս իւր զամենայն եւ չէր ինչ օգտեալ, այլ եւս առաւել զայրացեալ :
 27 Իբրեւ լուաւ զՅիսուսէ, եկն ի մէջ ամբոխին յետոյ եւ բուռն եհար զհան-
 28 ղերձէ նորա . Գանդի խորհէր ի մտի թէ միայն մերձեցայց ի հանդերձս նո-
 29 րա, փրկեցայց : Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբեր արեան նորա . եւ զիտաց ի մարմին իւր թէ բժշկեցաւ
 30 ի տանջանացն : Եւ անդէն վաղվաղակի զիտաց Յիսուս յանձն իւր զղօրութիւնն որ ել ի նմանէ, զարձաւ յամբոխն եւ ասէ, Ո՞վ մերձեցաւ ի հան-
 31 ղերձս իմ : Եւ ասեմ ցնա աշակերտքն, Տեսանես զի ամբողջ նեղէ զքեզ, եւ ասես թէ Ո՞վ մերձեցաւ ի հանդերձս
 32 իմ : Եւ շուրջ հայցր տեսանել թէ ո՞ր
 33 զայն արար : Եւ կինն զարձուրեալ եւ զօղացեալ ⁴վամն որոյ դադան արար՝, քանզի զիտէր զի՛նչ կողեւ նմա, եկն

անկաւ առաջի նորա, եւ ասաց զա-
 34 մենայն իրնս սառեղութեամբ : Եւ Յիսուս ասէ ցնա, Դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն եւ կղիջիր ողջ ի տանջանաց քոց :
 35 ԴԳ. Մինչդեռ նա զայն խօսէր, զան ոմանք ի տանէ ժողովրդապետին եւ ասեմ թէ Դուստրն քո մեռաւ, զի՞ եւս
 36 աշխատ առնես զվարդապետդ : Իսկ Յիսուս իբրեւ լուաւ զբանն ասացեալ, ասէ ցժողովրդապետն, Մի՛ երկնչիր,
 37 բայց միայն հաւատա : Եւ ոչ զոք եթո՞ղ ընդ իւր երթալ, բայց միայն զՊետրոս եւ զՅակոբոս եւ զՅովհաննէս զեղ-
 38 բայրն Յակովբայ : Գայ ի տունն ժողովրդապետին, եւ տեսանէ ամբոխ յոյժ
 39 եւ լալականս եւ աղաղակ յոյժ : Եւ մտեալ ի ներքս ասէ ցնոսա, Ղի՛ խողեալ էք եւ լայք, մանուկն ոչ է՝ մեռեալ, այլ ննջէ : Եւ ծաղր անէին զնա . եւ նորա հանեալ արտաքս զամենեսեան, առնու ընդ իւր ղնայր մանկանն եւ զմայր եւ զնոսա որ ընդ նմայն էին, եւ մտանէ ուր գնէր մանուկն :
 41 Եւ կայեալ զձեռանէ մանկանն՝ ասէ ցնա, Տալի՛թա, կո՛ւմի . որ թարգման-
 42 նի, Աղջիկ դու, քեզ ասեմ, արի : Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն եւ զնայր, քանզի էր ամաց իբրեւ երկոտասանից . եւ զարմացան մեծաւ զարմանալեօք :
 43 Եւ պատուէր տայր նոցա յոյժ, զի մի՛ ոք զիտացէ զայն . եւ ասաց տալ նմա ուտել :

ԳԼ. Զ

1 ԴԵ. Եւ ել անտի եկն ի դաւառ իւր . եւ երթային զհետ նորա աշակերտքն
 2 իւր : Եւ կողեւ ի շարթթուն սկսաւ ուսուցանել ի ժողովրդեանն . եւ բազումք իբրեւ լսէին, զարմանային ⁴ընդ վարդապետութիւն նորա՝ եւ ասէին, Ուստի՞ է սմա այս, կամ զի՞նչ է ի մատուցութիւնս որ տուեալ է սմա, զի զօրութիւնք այսպիսիք ի ձեռաց սորա
 3 յինիցին : Ո՞չ սա է ⁵մանուկ հիւսանն եւ որդին՝ Մարեմայ, եղբայր Յակովբայ եւ Յովսեփ եւ Յուդայի եւ Սիմոնի, եւ չիցէ՞ն քորք զորա աստ

¹Բազում, միւսանգամ նաւաւ
²Յայն, իմ ³Յայն, զնիցէս

⁴Ի բազումս գալուստ
⁵Բազում, հիւսան, որդին

4 առ մեզ . եւ զայթակղէին ի նա : Եւ
 5 ասէ ցնոսա Յիսուս , Ոչ է մարդարէ
 անարգ , բայց եթէ ի գաւառի իւրում
 6 եւ յազգատոհմի եւ ի տան իւրում :
 7 Եւ ոչ կարէր անդ եւ ոչ մի ինչ զօ-
 8 րութիւն առնել , բայց սակաւ հիւան-
 9 դաց ձեռն եղեալ բժշկէր զնոսա : Եւ
 10 զարմանայր վասն անհաւատութեան
 նոցա :
 11 ԴՁ . Եւ չըջէր շուրջ զգաւառօքն եւ
 12 ուսուցանէր : Եւ կոչեաց առ ինքն
 13 զերկոտաաննն , եւ սկսաւ առաքել
 14 զնոսա երկուս երկուս , եւ տայր նո-
 15 ցա ի յիսանութիւն ի վերայ այսոց պըզ-
 16 ծոց : Եւ պատուիրեաց նոցա զի մի՛-
 17 ինչ բարձցեն ի ճանապարհ , բայց միայն
 18 գաւազան . մի՛ պարկ , մի՛ հաց , մի՛
 19 պղինձ ի գօտիս . Այլ աղանել հողա-
 20 թախս , եւ , Մի՛ զդեմուցուք , ասէ ,
 21 երկուս պարեգօսա , եւ ասէր ցնոսա ,
 22 Յոր տուն մտանիցէք , անդէն օթեւանս
 23 կալջիք մինչեւ երանիցէք անտի : Եւ
 24 որ ոչ ընկալցին զձեզ եւ ոչ լուիցեն
 25 ձեզ , յորժամ երանիցէք անտի , թօթա-
 26 փեսջիք զիտոյր ոտից ձերոց ի վկայու-
 27 թիւն նոցա :
 28 Եւ ելեալ քարոզէին զի ապաշխա-
 29 բեցեն : Եւ զեւս բազումս հանէին ,
 30 եւ օժանէին իւզով զբազում հիւանդս
 31 եւ բժշկէին զնոսա :
 32 ԴՅ . Եւ լուաւ արքայ Հերովդէս ,
 33 քանզի յայտնի եղեւ անուն նորա , եւ
 34 ասէր թէ Յովհաննէս մկրտիչ յարեաւ
 35 ի մեռելոց , եւ վասն այնորիկ զօրու-
 36 թիւնք լինին նովաւ : Այլք ասէին թէ
 37 եղիա է , իսկ այլքն՝ թէ Մարգարէ է ,
 38 կամ թէ իբրեւ զմի ի մարգարէից :
 39 Իբրեւ լուաւ Հերովդէս , ասէ , Ձորոյ
 40 ես զզլուխն հատի զՅովհաննու , սա է
 41 նա , յարեաւ ի մեռելոց :
 42 Զի ինքն Հերովդէս առաքեաց կա-
 43 լաւ զՅովհաննէս , եւ կապեաց զնա եւ
 44 եղ ի բանտի վասն Հերովդիայ կնոջ
 45 Փիլիսպոսի եղբօր նորա , զի նա կին
 46 արար զնա : Քանզի ասէր Յովհաննէս
 47 ց Հերովդէս թէ Ոչ է օրէն քեզ ունել
 48 զկին եղբօր քո : Եւ Հերովդիա ռիսա-
 49 ցեալ էր ընդ նմա , եւ կամէր սպանու-
 50 նել զնա եւ ոչ կարէր : Զի Հերովդէս
 51 երկնչէր ի Յովհաննէ , քանզի զիտէր
 52 զնա այր արդար եւ սուբբ , եւ սպա-
 53 սէր նմա , եւ լուեալ ի նմանէ՝ բազում

ինչ առնէր , եւ քաղցրութեամբ լսէր
 21 նմա : Իբրեւ օր մի լինէր պարապոյ ,
 22 յորժամ ընթրիս տայր Հերովդէս յա-
 23 լուր ծննդոց իւրոց նախարարաց իւրոց
 24 եւ հաղարապետաց եւ մեծամեծաց Գա-
 25 լլիւեացոց . Եւ ի մտանել զստերն Հե-
 26 րովդիայ եւ ի կաքաւել , հաճոյ եղեւ
 27 Հերովդի եւ բազմականացն . ասէ թա-
 28 գաւորն ցաղջիկն , ինչպէս յինէն զոր
 29 ինչ կամիս , եւ տաց քեզ : Եւ երգ-
 30 ուաւ նմա՝ Բազում անգամ , թէ Ձոր
 31 ինչ եւ ինչպէս ցես զու յինէն տաց
 32 քեզ , մինչեւ ցկէս թապաւորութեան
 33 իմոյ : Նա ելեալ ասէ ցմայր իւր , Ձի՛նչ
 34 ինչպէսից . եւ նա ասէ , Ձլլու ին Յով-
 35 հաննու մկրտչի : Եւ մտեալ անդրէն
 36 փութանակի առ թագաւորն՝ ասէ , Կա-
 37 միմ զի այժմ տացես ինձ վաղխապիկ
 38 ի վերայ սկսեղ զզլուխն Յովհաննու
 39 մկրտչի : Եւ տրտմեցաւ յոյժ թագա-
 40ւորն , այլ վասն երդմանցն եւ կոչա-
 41 կանացն ոչ կամեցաւ անարդել զնա :
 42 Եւ առաքեաց վաղխապիկ թապաւորն
 43 դահիճ , եւ հրամայեաց բերել զզլուխն
 44 նորա . եւ չոգաւ զլիսատեաց զնա ի բան-
 45 տին , եւ երբեզ զզլուխն նորա սկսեղք
 46 եւ ետ ցաղջիկն , եւ ազջիկն տարաւ
 47 ետ մօր իւրում : Իբրեւ լուան աշա-
 48 կերտքն նորա , եկին , բարձին զմար-
 49 մին նորա եւ եղին ի զերեզմանի :
 50 Եւ . Ժողովեցան առաքեալքն առ Յիս-
 51 սուս , եւ պատմեցին նմա զամենայն
 52 ինչ զոր արարին եւ զոր ուսուցին :
 53 Եւ ասէ ցնոսա Յիսուս , Եկայք զուք
 54 առանձինն յանապատ տեղի , եւ հան-
 55 զիջիք սակաւ մի , զի էին բազումք
 56 որ երթային եւ զային , եւ հաց ան-
 57 զամ չժամանէին ուտել : Եւ զնային
 58 նաւու յանապատ տեղի ատոնձինն :
 59 Եւ 2 տեսին զնոսա զի երթային , եւ
 60 զգացին բազումք . եւ հետի յամենայն
 61 քաղաքաց խուռն ընթանային անդ ,
 62 եւ 3 մերձենային առ նոսա : Եւ ելեալ
 63 ետես ամբոխ բազում եւ զթացաւ ի
 64 նոսա , զի էին իբրեւ ոչխարք որոց
 65 ոչ իցէ հովիւ . եւ սկսաւ ուսուցանել
 66 զնոսա յոյժ :
 67 Եւ իբրեւ բազում ժամ եղեւ , մա-

1| Բազումս պատե
 2| Ունէ , ետես ամբոխն
 3| Բազումս , ծանեանս
 4| Բազումս , յառա-
 5| քեցին քան զնոսա

տուցեալ աշակերտքն ասէին, Տեղիս անապատ է. մինչդեռ աւուր կայ,
 56 Արձակեա գժողովուրդսդ, զի երթեալ շուրջ յագարակս եւ ի գեղս դնեսցեն իւրեանց՝ զինչ ուտիցեն, զի աստ ու-
 37 տել ինչ ոչ ունին: Նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա, Դուք տուք զոցա ուտել. ասեն ցնա, Երթիցուք զնետ-
 ցուք երկերիւր դահեկանի հաց, եւ
 38 տացուք զոցա ուտել: Ասէ ցնոսա, Քանի՜ նկանակ ունիք, երթայք տե-
 սէք. իբրեւ զիտային, ասեն ցնա,
 39 Հինգ՝ եւ երկուս ձկուռնա: Եւ հրա-
 մայեաց նոցա բաղմել երախանս երա-
 40 խանս ի վերայ զայլս խոտոյ: Եւ բաղ-
 մեցան դասք դասք՝ ուր հարեւր եւ
 41 ուր յիտուն: Եւ առեալ զհինգ նկա-
 նակն եւ զերկուս ձկուռնն՝ հպեցաւ
 յերկինս, օրհնեաց, մանրեաց զնկա-
 նակնս եւ ետ ցաշակերտան զի արկցին
 նոցա, եւ զերկուս ձկուռնն բաշխեաց
 42 ամենեցուն: Չկերան եւ յագեցան.
 43 Եւ բարձին զնշխարան երկոտասան սա-
 44 կառի լի, եւ ի ձկանց անտի: Եւ էին
 որք կերանն իբրեւ արք հինգ հազար:
 45 Ե՛հ. Եւ նոյնժամայն ձեպեաց զա-
 շակերտան մտանել ի նաւ, եւ յառա-
 ջագոյն քան զնա երթալ յայնկոյս ի
 46 Բեթսայիդա, մինչ ինքն զժողովուրդան
 47 ել ի լեւան կալ յազօթս: Եւ իբրեւ ե-
 րկուց կէտեւ, էր նաւն ի մէջ ծովունս,
 48 եւ ինքն ի ցամաքի: Եւ ետես զնոսա
 հողմակոծեալս ի վարեկն, զի էր հողմն
 ընդդէմ նոցա. եւ զչորրորդ պահու-
 զիշերոյնս վայ առ նոսա զնալով ի վե-
 րայ ծովուն, եւ կամէր զանց առնել
 49 առ նորօք: Նոքա իբրեւ տեսին զի
 զնայր ի վերայ ծովուն, համարեցան
 թէ առաջօք ինչ լինիցի, եւ զազաղակ
 50 բարձին: Քանզի ամենեքեան տեսին
 զնա եւ խոտեցան. եւ նա անդէն
 վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա եւ ա-
 սէ, Քաջալերեցարուք, ես եմ, մի՛ եր-
 51 կնչիք: Եւ ել ի նաւն առ նոսա, եւ զա-
 զարեաց հողմն. եւ առաւել եւս յիմար-
 եալ էին ի միտս իւրեանց եւ զարմա-
 52 նային յոյժ: Քանզի եւ ի վերայ հացին
 ոչ իմացան, զի էր սիրտ նոցա թըմի-
 53 րեալ: Եւ իբրեւ անցին յայնկոյս, ե-

54 կին յերկիրն՝ 3Գեհնեսարէթ: Եւ իբրեւ
 ելին ի նաւէ անտի, իսկ եւ իսկ ծան-
 55 եան զնա արք տեղւոյն այնորիկ: Եւ
 ընթացեալ այսր անդր ընդ ամենայն
 գաւառն, սկսան մահճօք բերել զհի-
 56ւանդս, ուր լսէին թէ անդ իցէ: Եւ
 ուր եւ մտանէր ի գեղս կամ ի քաղաքս
 կամ յագարակս, ի հրապարակս զնէին
 զախտածէսս, եւ աղաչէին զնա զի
 գոնէ ի քղանցս հանդերձից նորա մեր-
 ձենայցեն. եւ որ միանգամ մերձե-
 ցանն՝ փրկեցան:

ԳԼ Ե

1 Ե՛հ. Եւ ժողովեցան առ նա փարիս-
 սեցիքն եւ ոմանք ի զպարացն որ եկեալ
 2 էին յերուսաղեմէ: Եւ տեսեալ զոմանս
 յաշակերտաց անտի, զի խստնակ ձե-
 ոօք, այսինքն է անլուայ, ուտէին հաց,
 3 բամբասեցին. Զի փարիսեցիքն եւ ա-
 մենայն Հրեայք եթէ ոչ բոնալիբ լուա-
 նան ղձեոս, հաց ոչ ուտեն. քանզի
 4 ունին զաւանդութիւն ծերոցն. Եւ
 ի հրապարակէ մտեալ՝ եթէ ոչ նախ
 մկրտիցին, ոչ ուտեն. եւ այլ ինչ բա-
 զում է զոր ընկալան ունել, մկրտու-
 թիւնս բաժակաց եւ ստոմանաց եւ
 5 պղնձեաց եւ մահճաց: Ապա հարցա-
 նեն զնա փարիսեցիքն եւ զպիրք թէ
 Ընդէ՞ր աշակերտքն քո ոչ զնան ըստ
 աւանդութեան ծերոցն, այլ խառնակ
 6 ձեռօք հաց ուտեն: Նա պատասխանի
 ետ եւ ասէ ցնոսա թէ Բարուք մար-
 դարէացաւ Յսայի վասն ձեր կեղծա-
 ւորաց, որպէս ասաց, ժողովուրդս
 այս չրթամբք մեծարէ զիս, եւ սիրտք
 նոցա հետացեալ ի բացեաց են յինէն.
 7 Զուր պաշտուն զիս, ուսուցանեն վար-
 դապետութիւնս զմարդկան պատուի-
 8 եայս: Թողեալ զպատուիրանն Աստու-
 ծոյ, ունիք զմարդկան աւանդութիւնն:
 9 Եւ ասէ ցնոսա, Բարուք խոտէք զպատ-
 ուիրանն Աստուծոյ, զի զձեր աւան-
 10 դութիւնն հաստատիցէք: Զի Մովսէս
 ասէ, Պատուեա զհայր քո եւ զմայր.
 եւ Որ չարախօսեացէ՝ զհօրէ կամ զմօրէ՝
 11 մահու վախճանեցի: Եւ զուք ասէք,

1ՈՒՆԻ, Հայ

2ՅՅ, կերան ամենեքին

3Գեհնեսարէթ, եւ զտեղեցին զնաւն
 4Ոմանք յաւելան, մկրտութիւնս ստոմանաց եւ
 բաժակաց եւ այլոց սոցին նմանեաց առնէք բա-
 զումս

Եթէ ասիցէ ոք ցհայր կամ ցմայր,
 Կորբան, որ է պատարագ, զոր յինէն
 12 օգտեսցիս . եւ ոչ եւս տայք թոյլ նմա
 13 անուել ինչ հօրն կամ մօր: Եւ անար-
 գէք զբանն Աստուծոյ ձերով աւան-
 դու թեամբն, զոր աւանդեցէք, եւ բա-
 զում ինչ այլ որ այսմ նման է՝ առնէք:
 14 Եւ կոչեալ առ ինքն զամենայն ժո-
 զովորդն՝ ասէ ցնոսա, Լուարուք ինձ
 15 ամենեքեան եւ ի միտ առէք: Ոչինչ
 արտաքուստ ի մարդ մտեալ եթէ կա-
 րիցէ պղծել զնա, այլ որ ելանէ ի նմա-
 16 նէ՛ ան է որ պղծէ զմարդն: Որ ունի-
 ցի ականջս լսելոյ՝ լուիցէ:
 17 Ե՛ր. Եւ իբրեւ ետուտ ի տուն յամ-
 բոխէ անտի, հարցանէին զնա աշա-
 18 կերտքն վասն առակին: Եւ ասէ ցնո-
 սա, Այդպէս եւ դուք անմիտ էք. ո՛չ
 իմանայք եթէ ամենայն որ արտա-
 քուստ ի ներքս մտանէ ի մարդ՝ ոչ
 19 կարէ զնա պղծել: Չի ոչ եթէ ի սիրտ
 նորա մտանէ, այլ՝ յորովայն, եւ ար-
 տաքս ելանէ, եւ սրբէ զամենայն կե-
 20 րակուրսն: Եւ ասէր թէ՛ Որ ինչ ի
 21 մարդոյն ելանէ՛՝ այն պղծէ զմարդ: Չի
 ի ներքուստ ի սրտէ մարդկան խոր-
 հուզք չարութեան ելանեն, չնու-
 22 թիւնք, պոռնկութիւնք, Գողութիւնք,
 սպանութիւնք, ադահութիւնք, չա-
 բութիւնք, նենդութիւնք, գիշու-
 թիւնք, չարակնութիւն, հայհոյու-
 թիւն, ամբարտաւանութիւն, անդգա-
 23 մութիւն: Այս ամենայն չարիք ի ներ-
 քուստ ելանեն եւ պղծեն զմարդ:
 24 Եւ անտի յարուցեալ եկն ի սահմանս
 Տիւրոսի եւ Սիզովի, եւ մտեալ ի
 տուն ոչ ումեք կամէր յայտնել, եւ
 25 ոչ կարաց ծածկել: Լուաւ կին մի
 զմտանէ, որոյ դուստր իւր նեղեալ էր
 յայտոյ պղծոյ, եկն անկաւ առաջի նո-
 26 րա: Եւ եկինն էր հեթանոս, Փիւնիկ
 Ասորի կարգէ. եւ աղչէր զնա զի
 27 զղենն հանցէ ի զստերէ նորա: Եւ
 Յիսուս ասէ ցնա, Թոյլ տուր նախ
 յաղեսցին մանկունք, զի ոչ է բարեոք
 առնուլ զհաց մանկանց եւ արկանել
 28 չանց: Նա սլատասխանի ետ եւ ասէ,
 Տէր, եւ շունք ի փշրանաց սեղանոյ
 29 մանկանցն կերակրին: Եւ ասէ ցնա,
 Վասն այդ բանի երթ, ել դենն ի
 30 զստերէ քուսմէ: Գնաց ի տուն իւր
 եւ ելիտ երեալ զղենն, եւ զդուստրն

զի անկեալ զնէր ի մահիճս:
 31 Ե՛ւ. Եւ երեալ միւսանգամ ի սահմա-
 նացն Տիւրոսի եւ Սիզովի, եւ եկն
 ի ծովեզրն Գալիլեացոց ի մէջ սահ-
 32 մանացն ի Դեկապոլիս: Եւ բերին ա-
 ռաջի նորա խուլ մի եւ համբ, եւ ա-
 զաչէին զի ձեռն զիցէ ի վերայ նորա:
 33 Եւ առեալ զնա մեկուսի յամբօխէ ան-
 տի, արկ զմատուենս իւր ընդ ականջս
 նորա եւ եթուք անդր. եւ կալաւ
 34 զլեզուէ նորա, Հայեցաւ յերկինս .
 յոգւոց եհան եւ ասէ, Եփիաթա, որ է
 35 բացիր: Եւ նոյնժամայն բացան լսե-
 լիք նորա, եւ լուծան կասլանք լեզուի
 36 նորա եւ խօսէր ուղիղ: Եւ սլատու իր-
 եաց նոցա զի մի՛ ումեք ասիցեն. եւ
 որչափ նա պատուիրէր նոցա, նոքա
 37 եւս առաւել քարոզէին: Եւ եւս քան
 զեւս զարմանային եւ ասէին, Չամե-
 նայն ինչ բարեոք զործեաց սա, զի
 խից լսել տայ եւ համբոց խօսել:

ԳԼ Ը

1 Ե՛Ձ. Յաւուրսն յայնոսիկ զարձեալ
 ժողովուրդ բազում էր, եւ ինչ ոչ ու-
 նէին ուտել. կոչեաց զաշակերտան իւր
 2 եւ ասէ ցնոսա, Դիժամ ես ի վերայ
 ժողովրդեանդ, զի արդ երեք աւուրք
 են մինչ առ իս են, եւ ոչ ունին զինչ
 3 ուտիցեն. Եւ եթէ արձակեմ զգոսա
 նօթիս ի տունս իւրեանց, նքթիցեն
 ի ճանապարհի. զի ոմանք ի դոցանէ
 4 ի հեռաստանէ եկեալ են: Պատասխանի
 ետուն նմա աշակերտքն նորա, Ուս-
 5 ցիւ յանապատի աստ: Եւ հարցանէր
 զնոսա, Քանի՞ նկանակ հաց ունիք.
 6 Եւ նոքա ասն, Եւթն: Եւ հրամայ-
 եաց ժողովրդեանն բազմել ի վերայ
 երկրի. եւ առեալ զեւթն նկանակն՝
 զոհացաւ, երեկ եւ տայր ցաշակերտոն
 զի արկցեն: Եւ արկին արաջի ժողո-
 7 վրդեանն: Եւ ձկուեն սակաւ ունէին,
 եւ զայն եւս օրհնեաց եւ հրամայեաց
 8 արկանել: Կերան եւ յայեցան. եւ
 բարձին զնշխարս կոտորոցն եւթն
 9 զամբիղ: Եւ էին որ կերանն՝ իբրեւ
 չորք հազարք, եւ արձակեաց զնոսա:
 10 Ե՛է. Եւ նոյն ժամայն մտեալ ի նաւ

13-xx, կարեցէ ոք

հանդերձ աշակերտօքն՝ եկն ի կողմանս
 41 Գաղմանունեայ, Եկին փարիսեցիքն
 եւ սկսան վիճել ընդ նմա, եւ խնդրէ-
 42 ին ի նմանէ նշան յերկնից փորձելով
 43 գնա: Եւ զայրացաւ յոգի իւր եւ ասէ,
 Ձի՞ է զի ազգս այս նշան խնդրէ. ամէն
 44 մի: Եթող զնոսա, դարձեալ եմուս
 ի նաւ եւ զնաց յայնկոյս:
 45 Եւ մոռացան հաց բառնալ, բայց
 միայն մի նկանակ ունէին ընդ իւր-
 46 եանս ի նաւին: Եւ պատուիրէր նոցա
 եւ ասէր, ²Ձգոյ՛ ի խմորոյ
 անտի փարիսեցւոց եւ ի խմորոյ ³Հե-
 47 բոլորիանոսաց: Եւ խորհէին ընդ մի-
 48 մեանս եւ ասէին թէ Ձի՛ հացս ոչ ու-
 49 նիմք: Գիտաց Յիսուս եւ ասէ ցնոսա,
 Ձի՛ խորհիք ⁴Ի սիրտ ձեր, թերահա-
 ւատք, թէ հաց ոչ ունիք. տակաւին
 50 ո՞չ իմանայք եւ ո՞չ յիշէք. այլ ու-
 51 թիւն ունի զսիրտս ձեր. Այլ զոն
 եւ ո՞չ տեսնէք, ականջք են եւ ո՞չ
 52 լսէք, ⁵եւ ո՞չ իմանայք տակաւին, եւ
 53 ո՞չ յիշէք: Յորժամ զհինգ նկանակն
 ի հինգ հազարն, եւ քանի՞ սակառի
 բարձէք զկտորոցն լի. եւ ասեն ցնա,
 54 Երկուտասան: Եւ յորժամ զեւթն նկա-
 նակն ի չորս հազարն, քանի՞ զամբող
 լի բարձէք զկտորոցն. եւ նոքա ասեն,
 55 Եւթն: Եւ ասէ ցնոսա, Իսկ զիմօրդ
 ոչ իմանայք:
 56 Գան ի Բեթսայիդա, եւ անեն առաջի
 նորս կոյր մի, եւ աղաչէին զնա զի
 57 մերձեցի ի նա: Եւ առեալ զձեռանէ
 կուրին՝ եհան արտաքոյ շինին, եթուք
 յաչս նորս եւ ձեռն եղ ի վերայ նորս
 եւ հարցանէր ցնա թէ տեսանիցէ ինչ:
 58 Բացաւ, եւ ասէր, Տեսանեմ զմար-
 59 զիկս զի չրջին իբրեւ զծառս: Դար-
 ձեալ եղ ձեռս ի վերայ աչաց նորս,
 60 Կերաց, եւ տեսանէր. ողջացաւ, եւ
 61 տեսանէր համարձակ զամենայն: Ար-
 ձակեաց զնա ի տուն իւր եւ ասէ,
 62 Ի շէնդ մի՛ մասնիցես, ⁶այլ երթ ի տուն

քո. եւ յորժամ ի շէնս մասնիցես, մի՛
 ումէք ասիցես ի շինն:՝
 27 ԶԿ. Եւ ել Յիսուս աշակերտօքն
 հանդերձ ի շէնս Կեսարեայ Փիլիպ-
 պեայ, եւ ի ճանապարհին հարցանէր
 28 ցաշակերտսն եւ ասէր, Ձո՞ ուստեք
 ասեն զինէն մարդիկն թէ իցեմ: Նոքա
 ետուն պատասխանի եւ ասեն, ՁՅով-
 հաննէս մկրտիչ, եւ այլք՝ Ձեզիա, եւ
 29 այլք՝ Ձմի ոք ի մարգարէից անտի:
 Ասէ ցնոսա, Իսկ զուք զո՞ ուստեք
 ասէք զինէն թէ իցեմ. պատասխանի
 եա Պետրոս եւ ասէ ցնա, Դու ես
 30 Գրիստոսն: Եւ սաստեաց ի նոսա զի
 մի՛ ումէք ասիցեն զնմանէ:
 31 Եւ սկսաւ ուսուցանել զնոսա թէ
 պարտ է Որդւոյ մարդոյ բազում չար-
 չարանս ընդունել, եւ անարգել յե-
 րիցանց եւ ի քահանայապետից եւ
 ի դպրաց, եւ մեռանել եւ յերկր աւուր
 32 յառնել: Եւ համարձակ զբանն խօսե-
 ցաւ. եւ առեալ զնա մեկուսի Պետ-
 33 րոսի՝ սկսաւ սաստել նմա: Եւ նա
 զարձաւ ետես զաշակերտսն, սաստեաց
 Պետրոսի եւ ասէ, Երթ յետս իմ, Սա-
 տանայ, զի ոչ խորհիս զու զՍասու-
 ծոյսն, այլ զմարդկանս:
 34 Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդն
 աշակերտօքն հանդերձ՝ ասէ ցնոսա,
 35 Եթէ ոք կամի գալ զինի իմ, ուրասցի
 զանձն իւր եւ բարձցէ զնա իւր եւ
 36 եկեացէ զինի իմ: Ձի ոք կամիցի ապ-
 րեցուցանել զանձն իւր կորուսցէ զնա.
 37 Եւ որ կորուսցէ զանձն իւր վասն ա-
 38 ւետարանին՝ ապրեցուցէ զնա: Ձի՛նչ
 օգոսա է մարդոյ եթէ զաշխարհ ամե-
 նայն շահեսցի, եւ զանձն իւր տու-
 39 ժեացի. ⁹Փանդի զի՞նչ տացէ մարդ
 փոխանակ անձին իւրոյ: Ձի ոք ոք
 ամօթ համարեսցի զիս եւ զբանս իմ
 ի շնացող եւ ի մեղաւոր յազգիս յայս-
 միկ, եւ Որդի մարդոյ յամօթ արասցէ
 զնա, յորժամ եկեսցէ փառօք չօր իւրոյ
 10 Եւ հրեշտակաց սրբոց՝ եւ ասէ ցնո-
 սա, Ամէն ասեմ ձեզ, զի են ոմանք
 ի սոցանէ որ աստ կան, որք մի՛ ճա-
 շակեցեն զմահ, մինչեւ տեսցեն զար-
 քայութիւն Աստուծոյ եկեալ զօրու-
 թեամբ:

1 Գ-Ն, Գաղմանուլթեայ
 2 Բ-Վ-Դ, Տեսէք, զգոյ՛ ի խմորէք
 3 Բ-Վ-Դ, Հերովդէ
 4 Ի Բ-Վ-Դ, արտաք
 5 Ի Գ-Ն, արտաք
 6 Գ-Ն, Հայեցաւ
 7 Բ-Վ-Դ, եւ չայել
 8 Բ-Վ-Դ, եւ մի՛ ումէք ասիցես ի շինն

9 Ու-Ն, կամ
 10 Գ-Ն, հանդերձ հրեշտակօք սրբօք

ԳԼ. Թ

1 Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս, եւ հանէ զնոսս ի լեւոն մի բարձր առանձինն, եւ յայլակերպս
 2 եղև առաջի նոցա: Եւ ձորձք նորա եղևն վայլուն սպիտակ յոյժ, որպէս թափիչք երկրի ոչ կարևն այնպէս սպիտակացուցանել: Եւ երեւեցաւ նոցա Յղիա Մովսիսիւ հանդերձ, եւ խօսէին
 4 ընդ Յիսուսի: Պատասխանի ետ Պետրոս եւ ասէ ցՅիսուս, Ռարբի, բարևոք է մեզ աստ լինել. եւ արացուք երիս տազաւարս, մի՛ քեզ, եւ մի՛ Մովսիսի,
 5 եւ մի՛ Նդիպի: Քանզի ոչ զիսէր զինչ
 6 խօսէր, զի դարձուրեալ էին: Եւ եղև ամպ մի հովանի ի վերայ նոցա, ձայն եղև յամպոյ անտի եւ ասէ, Դա է
 7 որդի իմ սիրելի, զմա լուարուք: Եւ յանկարծակի հայեցեալ այսր անդր՝ ոչ եւս զոք ուրեք տեսին, բաց միայն
 8 զՅիսուս ընդ իւրեանս: Եւ մինչդեռ իջանէին ի յեռնէ անտի, պատուիրեաց նոցա զի մի՛ ումեք պատմեսցեն զոր տեսինն, բաց յորժամ Որդի մարդոյ
 9 ի մեռելոց յարիցէ: Եւ նոքա զբանն ի մտի ունէին, եւ խնդրէին ընդ միմեանս թէ զի՞նչ իցէ ի մեռելոցն յառնել:
 10 Հարցին ցնա եւ ասեն, Զի՞նչ է այս զոր զայրեքս ասեն եթէ նախ եւ
 11 զիպի պարտ է գալ: Նա պատասխանի ետ նոցա եւ ասէ, Նդիա նախ եկեալ յարդարեաց զամենայն. իսկ զիսոյ զրեալ է զՈրդոյ մարդոյ, զի բազում
 12 ինչ չարչարեսցի եւ անգոսնեսցի: Այլ եւ ասեմ ձեզ եթէ Նդիա եկն, եւ արարին ընդ նա զինչ եւ կամեցան, որպէս եւ զրեալ է վասն նորա:
 13 ԶԲ. Եւ եկեալ առ աշակերտսն, տեսին ամբոսի շուրջ գնոքօք, եւ զգտիրսն՝ զի վիճէին ընդ նոսս: Եւ վաղվազակի ամենայն ժողովուրդն իբրեւ տեսին զնա, զարմացան, եւ ընդ առաջ ընթ
 15 թացեալ ողջոյն տային նմա: Եւ եհարցնոսս թէ Զի՞նչ վիճէիք ընդ նոսս
 16 Պատասխանի ետ մի ոմն ի ժողովրդեսնէն եւ ասէ, Վարդապետ, ածի զորդի
 17 իմ առ քեզ, զոր ունի այս համբ. Եւ

ուր հասանէ, զարկուցանէ զնա. եւ փրփրէ եւ կրճտէ զատամունս իւր եւ ցամաքի. եւ ասացի ցաշակերտսն քո զի հանցեն, եւ ոչ կարային հանել զնա:
 18 Պատասխանի ետ նոցա եւ ասէ, Ո՛վ ազգ անհաւատ, մինչև յե՛րբ իցեմ ընդ ձեզ, մինչև յե՛րբ անսացեմ ձեզ.
 19 Եւ ասէ զնա առ իս: Եւ ածին զնա առ նա. իբրեւ ետես զնա այսն, վարդապակի շարժեաց զնա, եւ անկեալ յերկիր թաւայէր եւ փրփրեացր: Եհարց ցհարց նորա եւ ասէ, Քանի՞ ժամանակք են յորմէ հետէ այդ եղև զմա.
 21 Եւ նա ասէ, Ի մանկութենէ: Բազում անգամ ի հուր արկանէ եւ ի ջուր զի կորուսցէ զգա. արդ եթէ կարող ինչ ես, օգնեա մեզ, Տէր, զվաղեալ ի վերայ մեր: Եւ Յիսուս ասէ ցնա, ²Ասացեր թէ կարող ես, ամենայն ինչ հնարաւոր է այնմ, որ հաւատայն: Եւ վաղվազակի ազազակեաց հարց մանկանս եւ ասէ, ³Հաւատամ, օգնեա
 24 անհաւատութեանս իմում: Իբրեւ եւ Յիսուս եթէ կուտի ժողովուրդն ի վերայ, սաստեաց այսոյն պղծոյ եւ ասէ, Համբք եւ խուլ այս, ես ստոյքեզ հրաման, ել ի գմանէ, եւ այլեւս
 25 մի՛ մտանիցես ի դա: Եւ ազազակեաց եւ յոյժ լկեաց զնա եւ ել. եւ եղև սպասանեալին իբրեւ զմեռեալ, մինչև
 26 բազմաց իսկ ասել թէ Մեռաւ: Եւ Յիսուս կալաւ զձեռանէ նորա, յարոյց
 27 զնա, եւ կանգնեցաւ: Եւ իբրեւ եմուտ նա ի տուն, աշակերաքն առանձինն հարցին ցնա, Մեք ընդէ՛ր ոչ կարացաք հանել զնա: Եւ ասէ ցնոսս, Այդ ազգ ոչ իւրք ելանէ, եթէ ոչ սլահօք եւ աղօթիւք:
 29 ԶԳ. Եւ անտի ելեալ անցանկին ստոյգայրեացուք, եւ ոչ կամէր եթէ ոք
 30 զիտացէ: Քանզի ուսուցանէր զաշակերտսն իւր եւ ասէր ցնոսս թէ Որդի մարդոյ մատնելոց է ի ձեռս մարդկան, եւ սպանցեն զնա, եւ իբրեւ սպանցի,
 31 յերիւր աւուր յառնէ: Եւ նոքա ոչ վիտէին զբանն, եւ երկնչէին հարցանել զնա:
 32 Եկն ի Կափառնայում, եւ իբրեւ եմուտ ի տուն, հարցանէր զնոսս, Զի՞նչ

¹Ո՛ւնէ, յոյժ իբրեւ զձեռն

²Ի ցանէն, անէ, եթէ կարող ես հաւատալ. Այ՛նք եթէ կարող ես
³Ո՛ւնէ, Հաւատամ, Տէր, ⁴Ի ցանէն պատե

վիճէիք զճանապարհայն ընդ միմեանս :
 33 Եւ նոքա լուռ լինէին , քանզի ընդ միմեանս վիճէին ի ճանապարհին թէ
 34 ո՛վ մեծ իցէ : Եւ իբրեւ նստաւ , կու-
 չեաց զերկոտասանսն եւ ասէ ցնոսա ,
 Եթէ ոք կամի առաջին լինել , եղիցի
 ամենեցուն կրասեր եւ ամենեցուն
 35 պաշտօնեայ : Եւ առեալ մանուկ մի
 կացոց ի մէջ նոցա . եւ ընկալեալ զնա
 36 ի գիրկս իւր՝ ասէ ցնոսա , Որ միան-
 դամ յայսպիսի ամակաւոյ ընկալցի յա-
 նուն իմ , զիս ընդունի . եւ որ զիսն
 ընդունիցի , ոչ զիս ընդունի , այլ՝ զայն
 37 որ առաքեացն զիս : Պատասխանի ետ
 նմա Յովհաննէս եւ ասէ , Վարդապետ ,
 տեսաք զօրն զի յանուն քո զեւս հա-
 նէր եւ զմեր կնի ոչ չըջէր , եւ ար-
 38 զելաք զնա : Եւ նա ասէ , Մի՛ արգե-
 լուք զնա , զի ոչ ոք է որ անէ գօ-
 լութիւնս յանուն իմ , եւ կարիցէ հայ-
 39 հոյել զիս* : Զի որ ոչն է ընդ ՚մեզ հա-
 40 կառակ՝ ի ՚մեր կոյս է : Եւ որ ոք ար-
 բուսցէ ձեզ ջուր բաժակաւ ՚յանունս
 յայս՝ թէ զուք Քրիստոսի էք , ամէն
 41 Եւ որ ոք զայթակղեցուցէ զմի ի փո-
 րկանցս որ հաւատան յիս , լաւ էր
 նմա առաւել եթէ արկեալ էր ընդ պա-
 րանոց նորա երկան իւոյ , եւ ընկեց-
 42 եալ ի ծով : Եւ եթէ զայթակղեցուցէ
 զքեզ ձեռն քո , հատ ընկեա ի քէն .
 զի լաւ իցէ քեզ խեղ մտանել ի կեանսն
 ՚յաւիտենից , քան երկուս ձեռս ունել
 եւ երթալ ի դեհէն ի հուրս անշէջ :
 43 Եւ եթէ ոտն քո զայթակղեցուցէ
 զքեզ , հատ ընկեա զնա ի քէն . լաւ
 իցէ քեզ կազ մտանել ի կեանսն ՚յա-
 վիտենից , քան երկուս ոտս ունել եւ
 44 անկանել ի ճեհէն :⁷ Եւ եթէ ակն քո
 զայթակղեցուցէ զքեզ , հան զնա ի
 բաց . լաւ իցէ քեզ միով ակամբ մտա-
 նել յարքայութիւն Աստուծոյ , քան
 երկուս այս ունել եւ անկանել ի գե-
 45 հէն . Ուր որդն նոցա ոչ մեռանի եւ

48 հուրն ոչ շիջանի : Զի ամենայն Յիսւ
 49 հրով յաղեսցի : Բարուք է ազ . եւ
 եթէ ալն անհամեսցի , իւ համեմեսցի .
 արդ զուք կարբուք յանձինս ձեր
 զազն , եւ խաղաղութիւն արարէք ընդ
 միմեանս :

ՈՒ Ժ

1 ԶԻ . Եւ անտի յարուցեալ զայ ի սահ-
 մանս Հրէաստանի յայնկոյս Յորդա-
 նանու . եւ երթայր զարձեալ խոնեալ
 ժողովուրդն առ նա , եւ որպէս սովոր
 էր , միւսանգամ ուսուցանէր զնոսա :
 2 Իսկ փարիսեցիքն մատուցեալ փոր-
 ձելով հարցանէին զնա եւ ասէին , եթէ
 Աբժա՞ն իցէ առն զկին իւր արձակել :
 3 Նա պատասխանի ետ նոցա եւ ասէ ,
 4 Զի՞նչ պատուիրեաց ձեզ Մովսէս : Եւ
 նոքա ասին , Մովսէս հրաման ետ զիր
 5 մեկնելոյ զրեւ եւ արձակել : Պատաս-
 խանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա ,
 Վասն խստասրտութեան ձերոյ զրեաց
 6 ձեզ զպատուիրանն զայն . Ս.յլ ի սկզբա-
 նէ արարածոց արու եւ էզ արար
 7 զնոսա Աստուած , եւ ասէ , Վասն այ-
 սորիկ թողցէ այր զնայր իւր եւ զմայր ,
 8 եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ , Եւ ե-
 զիցին երկուքն ի մարմին մի , եւ այ-
 նուհետեւ ոչ են երկու , այլ՝ մարմին
 9 մի : Արդ զոր Աստուած զուգեաց ,
 10 մարդ մի՛ մեկնեսցէ : Եւ ի տան զար-
 ձեալ աշակերտքն զնոյն հարցին ցնա :
 11 Եւ ասէ ցնոսա , Եթէ այր արձակեսցէ
 12 զկին իւր եւ արասցէ այլ , շնայ : Եւ
 կին եթէ ելցէ յառնէ իւրմէ եւ եղիցի
 առն այլում , շնայ :
 13 ԶԵ . Եւ մատուցանէին առ նա ման-
 կտի , զի ձեռն զիցէ նոցա . իսկ աշա-
 կերաքն սաստէին յայնոցիկ որ մատու-
 14 ցանէին : Իբրեւ ետես Յիսուս , բար-
 կացեալ սաստեաց նոցա եւ ասէ , Թոյլ
 տուք մանկաւոյզ զայ առ իս , եւ մի՛
 արգելուք զդոսա . զի այդպիսեացդ է
 15 արքայութիւն Աստուծոյ : Ամէն ասեմ
 ձեզ , Որ ոչ ընկալցի զարքայութիւն
 Աստուծոյ իբրեւ զմանուկ՝ ոչ մացէ
 16 ի նա : Եւ առեալ զնոսա ի գիրկս՝ ձեռն
 եդ ի վերայ եւ օրհնեաց զնոսա :

¹ Ո՛ւն+ , ձեզ * Բազմո՛ք յա՛ւելան , վազ-
² Ո՛ւն+ , ձեր վաղակի
³ Ո՛ւն+ , յանուն իմ
⁴ Ի Յաննէս պա՛ստե
⁵ Բազմո՛ք յա՛ւելան , 43 Ուր որդն նոցա ոչ մե-
 աանի , և հուրն ոչ շիջանի :
⁶ Ո՛ւն+ , գեհէն ի հուրն անշէջ
⁷ Բազմո՛ք յա՛ւելան , 45 Ուր որդն նոցա ոչ մե-
 աանի , և հուրն ոչ շիջանի :

⁸ Յոյն , ոք
⁹ Ո՛ւն+ յա՛ւելան , և ամենայն զո՛հ աղեւ յա-
 զեսցի

47 Եւ ընդ ելանելն նորա անտի ի ճանապարհ, աճաւասիկ ոմն մեծառուն ընթացեալ ի ծուներ ի շանէր, հարցանէր ցնա եւ ասէր, Վարդապետ բարի, զի նչ արարից զի զկեանսն յաւիտեանս 48 նականս ժառանգեցից: Եւ Յիսուս ասէ ցնա, Ձի՞ ասես զիս բարի: չիք 49 որ բարի բայց մի Աստուած: Չդատուիրանս զիտես. Մի՛ շնար, Մի՛ սպանաներ, Մի՛ գողանար, Մի՛ սուտ վկայեր,¹ Պատուես զհայրքո եւ զմայրո 20 նա պատասխանի ես եւ ասէ ցնա, Վարդապետ, զպզգ ամենայն արարի ի մանկութենէ իմմէ, ²արզ զի՛նչ եւս 21 պակաս խցեմ: Եւ Յիսուս հայեցեալ ի նա՝ սիրեաց զնա, եւ ասէ ցնա, Մի ինչ պակաս է քէն. եթէ կամիս կատարեալ լինել, երթ, զոր ինչ ունիս մեծառես եւ տուր աղքատաց, եւ ունիցիս գանձս յերկինս. եւ առ զիսչն 22 եւ եկ զկնի իմ: Եւ նա խոթոռեալ ընդ բանն՝ զնաց արտում, զի ունէր 23 ինչս բազումս: Եւ հայեցեալ յայսկոյս յայնկոյս Յիսուս՝ ասէ ցաշակերտսն, Ձիա՛րդ գծուարին է որ զինչպզ ունին, 24 մտանել յարքայութիւն Աստուծոյ: Եւ աշակերտքն զարմացեալ էին ի վերայ բանիցն նորա. իսկ Յիսուս դարձեալ պատասխանի ես նոցա եւ ասէ, Որդեակք, ³ ո՛րչափ գծուարին է յուսացերոց յինչս մտանել յարքայութիւն 25 Աստուծոյ: Դիւրին է մայլոց ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել: Եւ նոքա ասուել եւս զարմանային եւ ասէին ընդ միմեանս, Իսկ ո՞վ կարաս 27 ցէ ապրել: Հայեցեալ ընդ նոսա Յիսուս ասէ, Առ ի մարդկանէ այդ անհնարին է, այլ ոչ առ յԱստուծոյ³, 28 ՁԶ. Սկսաւ ասել ցնա Պետրոս, Ահաւասիկ մեք թողաք զամենայն եւ 29 եկաք զկնի քո: Պատասխանի ես Յիսուս եւ ասէ, Ամէն ասեմ ձեզ, Ոչ որ է որ եթող զտուն կամ զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ զմայր կամ ⁴զորդիս կամ զպաքարակս վասն 30 իմ ⁵կամ վասն աւետարանին, Եթէ ոչ

առնուցու հարիւրապատիկ այժմ յայսմ ժամանակի տունս եւ եղբարս եւ քորս եւ մարս եւ որդիս եւ աղաքարակս հալածանօք հանդերձ, եւ յաշխարհին որ պարզ է՝ զկեանսն յաւիտեանականս: 31 Ձի բազումք եղիցին առաջինք՝ յետինք, եւ յետինք՝ առաջինք: 32 Եւ էին ի ճանապարհի մինչդեռ ելանէին յերուսաղէմ. եւ երթայր Յիսուս առաջի քան զնոսա, եւ զարմացեալ էին որ զհետն երթային եւ երկընչէին: 33 ԶԷ. Եւ առեալ միւսանգամ զերկուտասանն առանձինն, սկսաւ ասել նոցա զինչ անցք անցաներոց իցնն ընդ 34 նա. Թէ Ահաւասիկ ելանեմք յերուսաղէմ, եւ Որդի մարդոյ մասնեսցի քահանայապետիցն եւ պարոս, եւ դատեսցին զնա ի մահ, եւ մասնեսցեն 35 զնա հեթանոսաց. Եւ կատակեսցեն զնովաւ, եւ հարկանիցեն զնա, եւ թքանիցեն ի նա եւ սպանցեն, եւ յերկր աւուր յարիցէ: 36 Եւ երթային առ նովաւ Յակովբոս եւ Յովհաննէս որդիքն Ձեբեդեայ, եւ ասնն ցնա, Վարդապետ, կամիմք զի զոր ինչ խնդրեսցուք ի քէն՝ արասցես 37 մեզ: Եւ նա ասէ ցնոսա, Ձի՛նչ կամիք յինէն զի արարից ձեզ: Եւ նոքա ասնն ցնա, Տուր մեզ զի նստցուք մի յաջմէ քումմէ եւ մի յահեկէ ի փոսն 38 քում: Պատասխանի ես Յիսուս եւ ասէ ցնոսա, Ոչ գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել զբաժակն զոր ես ըմպերոց եմ, կամ զմկրտութիւնն մկրտել 39 զոր ես մկրտելոցն եմ: Եւ նոքա ասնն ցնա, Կարեմք. եւ Յիսուս ասէ ցնոսա, Ձրաժակն զոր ես ըմպելոց եմ՝ ըմպիցէք, եւ զմկրտութիւնն զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիցիք. Այլ նրստուցանել ընդ աջմէ իմմէ եւ ընդ ահեկէ՝ ոչ է իմ տալ, այլ սրոց պատ 40 րաստեալ իցէ: Եւ լուեալ զպչն տասանն՝ սկսան րարկանալ Յակովբայ 41 եւ Յովհաննու: Եւ Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն, եւ ասէ ցնոսա, Գիտէք զի որ յանուան իշխանքն են հեթանոսաց՝ սիրեն նոցա. եւ մեծամեծք 42 նոցա իշխեն նոցա: Ոչ նոյնպէս իցէ եւ ի ձերում միջի. այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինել եղիցի ձեր պաշտօն 43 նեայ. Եւ որ կամիցի ի ձէնջ առաջին

¹ Բնական յաւիտեանս, Մի՛ զրկեր,
² Ի Բնական զսկսեալ
³ Բնական յաւիտեանս, զի ամենայն ինչ հնարաւոր է առ ի յԱստուծոյ
⁴ Ունեայ, զկեն կամ զորդիս ⁵ Բնական, և

45 լինել՝ եզրից ամենեցուն ծառայ : Գան-
 զի եւ Որդի մարդոց ոչ եկն անուշ
 պաշտօն, այլ պաշտել եւ տալ զանձն
 իւր փրկանս փոխանակ բաղմաց :
 46 Եւ զան յերիքով . եւ ընդ երա-
 նէին նորա յերիքովէ աշակերտօքն եւ
 բազում ժողովրդովք , որդի Տիմէի
 Բարտիմէոս կոյր նստէր մուրացիկ
 47 յանցս ճանապարհի : Իբրեւ լուաւ թէ
 Յիսուս Նազովրեցի է , սկսաւ աղա-
 ցակել եւ ասել , Որդի Դաւթի , Յի-
 48 սուս , ողորմեաց ինձ : Եւ սաստէին
 նմա բազումք զի լուսցէ . եւ նա ա-
 ռաւել եւս աղաղակէր , Որդի Դաւթի ,
 49 ողորմեաց ինձ : Չտեղի առ Յիսուս եւ
 հրամայեաց կոչել զնա . կոչէն զկոյրն
 եւ ասէն ցնա , Քաջաբեւեաց , արի ,
 50 կոչէ զքեզ : Եւ նորա ընկեցեալ զձորձս
 51 լուր յարեաւ եկն առ Յիսուս : Պատաս-
 խանի ետ նմա Յիսուս եւ ասէ , Ձի՞նչ
 կամիս թէ արարից քեզ . ասէ ցնա
 52 կոյրն , Ռարբունի , զի բացայց : Եւ
 Յիսուս ասէ ցնա , Երթ , հաւատք քո
 կեցուցին զքեզ . եւ վազվազակի բա-
 ցաւ , եւ երթացր զհետ նորա ի ճա-
 նապարհին :

ԳԼ ԺԱ

1 Եւ յորժամ մերձ եղևն յերուսաղէմ ,
 ի Բեթթիաղէ եւ ի Բեթթանիա , մօտ ի
 լեառն Չիթենեաց , առաքէ երկուս յա-
 2 շակերտաց անտի , Եւ ասէ ցնոսա ,
 Երթայք դուք ի դեղզ որ ընդդէմ ձեր
 կայ . եւ նոյնժամայն իբրեւ մտանէք
 ի նա , դտանիցէք յաւանակ մի կապ-
 3 նոտաւ . լուծէք զնա եւ անէք : Եւ
 եթէ ոք ասացէ ձեզ եթէ Ձի՞ լուծանէք
 զյաւանակի , ասասյիք եթէ Տեառն
 իւրում պիտոյ է . եւ վազվազակի ա-
 4 ռաքեսցէ զնա այսր : Չոգան եւ դտին
 զյաւանակն կապեալ առ դուրս ար-
 տաբոյ ի փողոցի անդ , եւ լուծին զնա :
 5 Եւ ոմանք յորոց անգն կային՝ ասեն
 ցնոսա , Ձի՞ դործէք զի լուծանէք
 6 զյաւանակի : Եւ նորա ասեն ցնոսա
 որպէս ասացն Յիսուս . եւ թոյլ ետուն
 7 նոցա : Ածեն զյաւանակն առ Յիսուս ,
 եւ արկաննն ի վերայ նորա հանգերձս ,
 8 եւ նստաւ ի վերայ նորա : Եւ բա-
 զումք զհանգերձս իւրեանց տարածա-

նէին ի վերայ ճանապարհին , եւ այլք
 ոսոս ի ծառոց հատանէին եւ արկա-
 9 նէին զճանապարհաւն : Եւ որ առա-
 ջին եւ զկնի երթային՝ աղաղակէին եւ
 ասէին , Ովսաննա՞ Բարձրելոյն , օրհ-
 10 նեալ որ դասդ յանուն Տեառն . Օրհ-
 նեալ թագաւորութիւնդ եկեալ հօր
 մերոյ Դաւթի . Չխաղաղութիւն յեր-
 կինս եւ փառք՝ ի բարձունս :
 11 Եւ եմուտ Յիսուս յերուսաղէմ , ի
 տաճարն , եւ հայեցաւ շուրջ զամենե-
 քումբք . եւ զի էր երեկոյացեալ ժամն ,
 ել ի Բեթթանիա երկստասանիւքն հան-
 զերձ :
 12 Եւ . Եւ ի վաղիւ անդր մինչդեռ եւ-
 13 լանէին ի Բեթթանիայ , քաղցեաւ : Եւ
 ետես թղկնի մի ի բացուտ տերեւա-
 վից . եւ եկն թէ գտանիցէ ինչ ի նմա .
 եւ իբրեւ եկն ի նա , ոչինչ եզրտ բայց
 միայն տերեւ , զի ոչ իսկ էր ժամանակ
 14 թոյց : Պատասխանի ետ եւ ասէ ցնա ,
 Մի՞ եւս ոք յաւիտեան ի քէն պտուղ
 կերիցէ . եւ լսէին աշակերտքն նորա :
 15 Գան յերուսաղէմ . եւ մտեալ ի տա-
 ճարն՝ սկսաւ հանել զվաճառականն
 եւ զգնողս որ էին ի տաճարին . եւ
 զսեղանս հատավաճառացն ցրուեաց ,
 եւ զաթոս աղաւնեվաճառացն կոր-
 16 ծանեաց . Եւ ոչ թողոյր եթէ ոք ա-
 նօթ ինչ անցուցանիցէ ընդ տաճարն :
 17 Եւ ուսուցանէր եւ ասէր ցնոսա ,
 3Գրեալ է՞ , թէ Տուն իմ տուն աղօ-
 թից կոչեսցի ամենայն հեթանոսաց ,
 եւ դուք արարէք զդա այսո աւաղա-
 18 կաց : Լուսն քահանայապետքն եւ
 զպիբր , եւ ինդրէին թէ ո՞րպէս կո-
 րուսցեն զնա , բայց երկնչէին ի նմանէ-
 զի ամենայն ժողովուրդն զարմացեալ
 19 էր ընդ ուսումն նորա : Եւ իբրեւ ե-
 րեկոյ լինէր , արտաքոյ քան զքաղաքն
 2 Երանէին :
 20 Եւ մինչդեռ այգուցն առ նովաւ ան-
 ցանէին , ասին զթղկնին ցամաքեալ
 21 յարմատոց : Յիշեաց Պետրոս եւ ասէ
 ցնա , Ռարբի , ահաւասիկ թղկնին զոր
 22 անիծեր՝ ցամաքեցաւ : Պատասխանի
 ետ Յիսուս եւ ասէ ցնոսա , 5Եթէ ու-

1 ի բազմոս պատէ
 2 Բազմոս , Ովսաննա
 3 Բազմոս , Չեցէ՞ գրեալ
 4 Բազմոս , Երկեր
 5 Բազմոս , Եղիցեն ձեր հաւատք յԱստուած :

23 նիցիք զճաւատան Աստուծոյ,՝ Ամէն
 ասեմ ձեզ, Որ որ ասիցէ բերինս այս-
 միկ, Բարձիր եւ անկիր ի ծով, եւ ոչ
 երկմտիցէ ի սրտի իւրում, այլ հաւա-
 տայցէ թէ զոր ասէն՝ լինի, եղիցի նմա
 24 զոր ինչ եւ ասիցէ: Վասն այսորիկ
 ասեմ ձեզ, Ամենայն ինչ վասն որոյ
 ազօթս արարեալ խնդրիցեք, եւ հա-
 լատայցէք թէ անուցուք, եղիցի ձեզ:
 25 Եւ յորժամ յազօթս կայցէք, թողու-
 ցուք եթէ ունիցիք ինչ զուճեքէ: զի
 եւ Հայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ
 26 ձեզ զյանցանս ձեր: Զի եթէ զուք ոչ
 թողուցուք, եւ ոչ Հայրն ձեր որ յեր-
 կինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր:
 27 Ե՞ր. Գան միւսանութ յերուսագէմ,
 եւ մինչդեռ ի տաճարի անզ զգնայր,
 զան առ նա քահանայապետքն եւ
 28 զպիրք եւ ձերք: Եւ ասեն ցնա, Որո՞վ
 իշխանութեամբ ասնես զայդ, եւ ո՞վ
 29 ետ քեզ զիշխանութիւնզ զայդ: Պա-
 տասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա,
 Հարցից եւ ես զձեզ բան մի, սուք
 ինձ պատասխանի. եւ ես ասացից ձեզ
 որով իշխանութեամբ ասնեմ զայս:
 30 Մկրտութիւնն Յովնանու յերկնից էր
 թէ ի մարդկանէ, սուք ինձ պատաս-
 31 խանի: Խորհէին ընդ միմեանս եւ ա-
 սէին, եթէ ասեմք եթէ Յերկնից, ասէ
 ցմեզ, Իսկ բնօջէր ոչ հաւատացէք նմա:
 32 Այլ եթէ ասեմք, ի մարդկանէ, ՚Լը-
 կընչիմք ի ժողովրդեանէն, զի ամենե-
 քին գիտէին զՅովնաննէս թէ մար-
 33 զարէ էր: Պատասխանի ետուն եւ ա-
 սեն ցՅիսուս, Չգիտեմք. եւ Յիսուս
 ետ նոցա պատասխանի եւ ասէ, Եւ
 ոչ ես ասեմ ձեզ որով իշխանութեամբ
 ասնեմ զայս:

ԳԼ. ԺԲ

1 Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առաւօք
 2 եւ ասել, Այր մի սնկեաց այլի եւ
 աժ շուրջ զնովաւ ցանդ, եւ զուր
 հնձան փորեաց եւ շինեաց աշտաբակ,
 եւ ետ զնա ցմաղկս եւ զնաց ի տար-
 2 աշխարհ: Եւ առաքեաց առ մշական ի
 ժամանակի ծառայ մի, զի ի մշակաց
 3 անտի առցէ ի պողոյ այլուոյն: Եւ նո-
 ցա կարեալ՝ զան հարին զնա եւ ար-

4 ձակեցին ունայն: Գարձեալ առաքեաց
 առ նոսա այլ ծառայ, եւ զնա կա-
 5 սալնատեցին եւ արձակեցին աւարդ-
 6 նէին: Ապա որդի մի էր իւր սիրելի,
 զնա առաքեաց առ նոսա յետոյ, եւ
 7 ասէ, Թերեւս ամաչեացն յորդոյ առ-
 8 մի իմմէ: Իսկ մշակքն իրբևս անսին
 զնա թէ գայ, ասեն ցմիմեանս, Սա է
 9 ժառանգն, եկաջր սպանցուք զսա, եւ
 10 մեք լիցի ժառանգութիւնն: Եւ կար-
 11 եալ զնա սպանին եւ հանին արտա-
 12 թոյ այլուոյն: Արդ զի՞նչ արասցէ անք
 այլուոյն. եկեացէ եւ կորուսցէ զմը-
 13 շակն, եւ տացէ զայլին ի ձեռս այ-
 14 ըոց: Եւ ո՞չ զղիրն վայն իցէ ընթեր-
 15 ցեալ ձեր, թէ Զվէմն զոր անարգեցին
 շինողքն, նա եղև զբոխ անկեան:
 16 Ի Տեառնէ եղև այս, եւ է սքանչելի
 յաչս մեր:
 17 Եւ ինչորէին զնա ունել, եւ երկեան
 ի ժողովրդեանէ անտի, զի գիտային թէ
 առ նոսա առաց զասակն. եւ թողին
 զնա եւ զնացին:
 18 Եւ առաքեն առ նա զոմանս ի փա-
 19 րիսեցոյ անտի եւ ի Հերովրիանոսաց,
 20 զի զնա որսասցեն բանիւ: Եւ նոքա
 եկեալ ՚Հարցանէին զնա նենդութեամբ
 եւ՝ ասէին, Վարդապետ, գիտեմք զի
 ճշմարիտ ես, եւ ոչինչ փոյթ է քեզ
 զուճեքէ. զի ոչ հայիս յերեսս մարդ-
 21 կան, այլ ճշմարտութեամբ զճանա-
 22 պարհն Աստուծոյ ուսուցանես: Յարգ
 ասա մեզ,՝ արժան է հարկ տալ կայ-
 23 սեր եթէ ոչ. տացուք, թէ ոչ տա-
 24 ցուք: Եւ Յիսուս գիտաղ զկեղծա-
 25 ւորութիւն նոցա, ասէ ցնոսա, Զի
 26 փորձէք զիս, ՚Կեղծաւորք. բերէք ինձ
 27 զանեկան մի զի տեսից: Եւ նոքա բե-
 28 րին. եւ ասէ ցնոսա, Ո՞յր է պատկերս
 այս կամ զիր. եւ նոքա ասեն ցնա,
 29 կայսեր: Պատասխանի ետ Յիսուս եւ
 30 ասէ ցնոսա, ՚Երթայր, սուք զկայսերն
 կայսեր, եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ.
 31 եւ զարմոգան ընդ նա:
 32 Ե՞ր. Գան առ նա սաղուկեցիքն որ
 33 ասեն թէ Զիք յարութիւն. հարցա-
 34 նէին ցնա եւ ասէին, Վարդապետ,

1 Բնագուտ, երկնէին 2 Ի ցումն գալուտ 3 Ի բազան գալուտ 4 Ի ցումն գալուտ

Մովսէս գրեաց մեզ եթէ ուրուք եղ-
 րայր մեռանիցի եւ թողուցու կին եւ
 որդի ոչ թողուցու, զի ասցէ եղբայր
 նորա կէլինն նորա, եւ յարուցէ զա-
 20ւակ եղբոր իւրում: Արդ եղբարք եւթն
 էին ¹առ մեզ: առաջինն առ կին եւ
 21մեռաւ, եւ ոչ եթող զաւակ: Եւ երկ-
 րորդն առ զնոյն եւ մեռաւ, եւ ոչ նա
 եթող զաւակ: Նոյնպէս եւ երրորդն
 22առ զնոյն: Եւ եւթներեան իսկ՝ եւ ոչ
 թողին զաւակ: յետ ամենեցուն մե-
 23ռաւ եւ կինն: Արդ ի յարութեանն
 յորժամ յանիցեն, ո՞ր ի նոցանէ լի-
 նիցի կինն. զի եւթներեան կալան
 24զնա կին: Պատասխանի եւ Յիսուս
 եւ ասէ ցնոսա, Ո՞չ վասն այգորիկ իսկ
 մտրեալ էք, զի ոչ գիտէք գի՛իրս եւ
 25ոչ զգորութիւնն Աստուծոյ: Զի յոր-
 ժամ ի մեռելոց յարիցեն, ոչ արք կա-
 նայա անեն, եւ ոչ կանայք արանց
 լինին, այլ իրեւ զհրեշտակս իցեն որ
 26յերկիրանն են: Այլ վասն յարութեան
 մեռելոց զի յանեն, ո՞չ իցէ ընթեր-
 ցեալ ձեր ի զիրան Մովսիսի ի մորեն-
 ւոյն, որպէս ասաց ցնա Աստուած,
 Ես եմ, ասէ, Աստուած Արարձամու,
 Աստուած Իսահակայ եւ Աստուած Յա-
 27կովբայ: Եւ ոչ է Աստուած մեռելոց,
 այլ կենդանեաց. եւ արդ զուք յոյժ
 մտրեալ էք:
 28 Եւ մատուցեալ մի ոմն ի զպրացն
 լէր նոցա մինչ վիճէինն, իրրեւ ետես
 թէ յարուք ետ նոցա զպատասխանին,
 եհարց ցնա ²եւ ասէ, Ո՞ր պատուի-
 29բան է ³առաջին: Եւ Յիսուս ասէ ցնա,
 Առաջին քան զամենայն՝ Լուր, Իսրա-
 յէլ, Տէր Աստուած մեր Տէր մի է:
 30 Եւ սիրեցես զՏէր Աստուած քո յա-
 մենայն սրտէ քումով, եւ յամենայն
 անձնէ քումով, եւ յամենայն մտաց
 քոց, եւ յամենայն զօրութենէ քումով:
 31 այս է առաջին պատուիրան: Եւ երկ-
 րորդն նման ամին, Սիրեցես զընկեր
 քո իրրեւ զանձն քո. մեծ քան զսոսա
 32այլ պատուիրան ոչ գոյ: Եւ ասէ ցնա
 զպիրն, Բարեք է, վարդապետ, ճշ-
 մարտութեամբ ասացիր թէ մի է Աս-
 տուած, եւ ոչ գոյ այլ բաց ի նմանէ:

33 Եւ սիրեն զնա յամենայն սրտէ⁴ եւ յա-
 մենայն զօրութենէ եւ յամենայն մտաց,
 եւ սիրեն զընկերն իրրեւ զանձն, առա-
 34ւել է ⁵քան զողջակէզս եւ զզոհս: Եւ
 անեսալ Յիսուսի թէ իմաստութեամբ
 ետ զպատասխանին՝ ասէ ցնա, Զես
 հեռի յարայութենէն Աստուծոյ. եւ
 ոչ եւս ոք իշխէր ինչ հարցանել ցնա:
 35 ԷԵ. Պատասխանի եւ Յիսուս եւ
 ասէ, մինչ ուսուցանէր ի տաճարին,
 Զիարդ ասին զպիրքն թէ Քրիստոսն
 36որդի Դաւթի է: Եւ ինքն Դաւիթ
 Հոլովիւ Մորով ասէ, Ասաց Տէր ցՏէր
 իմ, Նիսա ընդ աջմէ իմմէ, մինչեւ
 եղից զթշամօս քո պատուանդան ու-
 37տից քոց: Արդ եթէ ինքն իսկ Դաւիթ
 զնա Տէր կոչէ, զիարդ իցէ որդի նո-
 րա. եւ բազում ժողովուրդ լսէր նմա
 քաղցրութեամբ:
 38 Եւ ⁶ասէր ուսուցանելով՝ ի վար-
 զապետութեան իւրում, Զգոյշ լերուք
 ի զպրաց անտի, որ կամին ի հանդերձս
 երեւելիս չըջել, ⁷զնախողջոյնս իրնդ-
 39րել ի հրատարակս, Եւ զնախաթոս
 ի ժողովուրդս, եւ զգահազուխս յընթ-
 40րիս: Որ ուտեն զտունս այրեաց, պատ-
 ճառանօք յերկարեալ զագոթս, զի ա-
 41ւելի եւս զատաստանն ընկալցին:
 Կայր Յիսուս ընդդէմ զանձանակին,
 42տեսանէր թէ վիարդ ժողովուրդն ար-
 կանէր պլինձ ի զանձանակն. եւ բա-
 զում մեծատունք արկին բազում ինչ:
 43 Եկն այրի մի եւ արկ երկուս լումայս,
 որ է նաքարակիրտ մի: Եւ կոչեցեալ
 առ ինքն զաշակերտսն իւր ասէ ցնոսա,
 Ամէն ասեմ ձեզ, զի այրին այն տա-
 44ստակալ շատ արկ քան զամենեեսան
 որ արկին ի զանձանակին: Քանզի ա-
 մենեքին յաւելորդաց իւրեանց արկին,
 այլ նա ի չքաւորութենէ իւրմէ՝ զա-
 մենայն ինչ զոր ունէր արկ գոյիւ չափ
 զկեանս իւր:

ԳԼ ԺԳ

4 ԷԶ. Եւ յեւանին նորա ի տաճարէ
 անտի, ասէ ցնա մի յաշակերտաց նո-
 րա, Վարդապետ, տես որպիսի՛ են
 2քարիւքս, եւ որպիսի՛ չինուածք: Պա-

¹ Ի բազումս պատուի
² Ի ցանին պատուի
³ Բարեք է, առաջին քան զամենայն

⁴ Ոմանս յաւելան, եւ յամենայն անձնէ
⁵ Յոյն, քան զամենայն
⁶ Բարեք է, ասէր ցնոսա ⁷ Յոյն, զողջոյնս

տառիսանի ետ նմա Յիսուս եւ ասէ,
 Տեսանես զայդ Նամենայն շինուածս .
 2 ամէն ասեմ ձեզ եթէ՝ Ոչ թողցի այդը
 3 քար ի քարի վերայ որ ոչ քակտեսցի :
 4 Եւ մինչ նստէր նա ի լերինն Ձիթենե-
 5 անց յանդիման տաճարին, հարցանէին
 6 ցնա առանձինն Պետրոս եւ Յակովբոս
 7 Եւ Յովհաննէս եւ Անդրէաս, Ս,սա մեզ
 8 երբ լինիցի այդ, եւ զի՞նչ նշան է
 9 յորժամ կատարելոց իցէ այդ ամենայն :
 10 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնո-
 11 սա, Չգոչ կացէք, մի՛ որ զձեզ խա-
 12 բեսցէ : Ձի բազումք եկեացեն յանուն
 13 իմ, եւ ասիցեն թէ Նս եմ Բրիստոսն,
 14 Եւ զբազումս մոլորեցուցեն : Այլ յոր-
 15 ժամ բարցէք պատերազմունս եւ համ-
 16 բաւս պատերազմաց, մի՛ խոտիլիցիք,
 17 զի պարտ է լինել, բայց չեւ է կատա-
 18 րածն : Ձի յարիցէ ազդ յազդի վերայ,
 19 եւ թագաւորութիւն ի թագաւորու-
 20 թեան վերայ, եւ եզրիցին չարմուէրք
 21 ի տեղիս տեղիս, սովք 3 Եւ սրածու-
 22 թիւնք՝ 4 Եւ խոտիլութիւնք՝ : այլ այն
 23 ամենայն սկիզբն է երկանց : 5 Եւ զձեզ
 24 իսկ մատնեսցեն յատեանս, եւ ի ժու-
 25 ղովուրդս տանջիցիք, եւ առաջի գա-
 26 տաւորաց եւ թագաւորաց կայցէք
 27 վասն իմ ի վկայութիւն նոցա, 6 Եւ ա-
 28 մենայն հեթանոսաց . Բայց նախ պարտ
 29 է աւետարանին քարոզել : Այլ յորժամ
 30 տանիցին զձեզ մատնել, մի՛ յառաջաւ-
 31 տոյն հոգայցէք, եւ մի՛ զմտաւ ամի-
 32 ցէք թէ զի՞նչ խօսիցիք . այլ որ ինչ
 33 սացի ձեզ ի ժամուն յայնմիկ՝ զայն
 34 խօսիցիք . զի ոչ զուք էք որ խօսի-
 35 ցիքն, այլ՝ Հոգին Սուրբ : Մամնեսցի,
 36 եղբայր զեղբայր ի մահ, եւ հայր՝ զսու-
 37 ղի . եւ յարիցեն որդիք ի վերայ հարց
 38 եւ սպանանիցին զնոսա : Եւ եզրիջիք
 39 ատեցեալք յամենեցունց վասն անուան
 40 իմոյ, այլ որ համբերեսցէն ի սպաւ՝
 41 նա կեցցէ :
 42 Եւ յորժամ տեսանիցէք զպղծութիւն
 43 աւերածին7, զի կայցէ ի տեղուջ ուր

չիցէ արժան, (որ ընթեանուն ի միտ
 առցէ,) յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝
 15 փախիցեն ի լերինն . Եւ որ ի վերայ
 16 տանեացն իցէ՝ մի՛ իջցէ ի տուն, եւ
 17 մի՛ մտցէ բառնայ ինչ ի տանէ իւրմէ .
 18 Եւ որ յազարակին իցէ՝ մի՛ գարձցի
 19 յետս առնուլ զձորձս իւր : Բայց վայ
 20 իցէ յդեաց եւ սանտուաց յաւուրան
 21 յայնոսիկ : Յաղօթս կացէք զի մի՛ ձմե-
 22 րանի լինիցի այն : Եզրիցին աւուրքն
 23 այնորիկ նեղութեանց, որպիսի ոչ եւ
 24 զեն կրբեք այնպիսիք ի սկզբանէ ա-
 25 րարածոց մինչեւ ցազմ, եւ մի՛ այլ
 26 լիցի : Եւ եթէ ոչ էր կարճեալ 8 Սասու-
 27 ծոյ զաւուրան զայնոսիկ 2 վասն ընա-
 28 րելոց իւրոց՝, ոչ ազդէր ամենայն մար-
 29 մին . այլ վասն ընտրելոցն զորս ընտ-
 30 րեաց՝ կարճեաց զաւուրան զայնոսիկ :
 31 Յայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ եթէ Ա-
 32 հաւասիկ է Բրիստոսն կամ Աւանիկ,
 33 22 մի՛ հաւատայցէք : Ձի յարիցեն սուս
 34 քրիստոսք եւ սուս մարդարէք, եւ
 35 սացեն նշանս եւ արուեստս առ ի մու-
 36 յորեցուցանելոյ, եթէ հնար ինչ իցէ,
 37 եւ զընտրեալսն : Բայց զուք զոչ ոչ եւ
 38 զերուք, ահաւասիկ յառաջապոյն ա-
 39 սացի ձեզ զամենայն :
 40 Այլ յաւուրան յայնոսիկ յետ նեղու-
 41 թեանն այնորիկ արեգակն իաւարես-
 42 ցի եւ լուսինն ոչ տացէ զյոյս իւր : Եւ
 43 աստեղք յերկնից թօթափեսցին, եւ
 44 զօրութիւնք յերկինն չարմուէրն : Եւ
 45 յայնժամ տեսեն զՍուրբ մարդոյ եկեալ
 46 ամպովք եւ զօրութեամբ եւ փառօք
 47 բազմօք : Եւ յայնժամ ասարեացէ զհրեշ-
 48 տակս իւր, եւ ժողովեսցէ զընտրեալս
 49 իւր ի չորից հոգմոց, ի ծագաց երկրի
 50 մինչեւ ի ծագո կրկնից : Բայց զուք
 51 ի թղեւնոյ անտի ուսջիւր զառակն .
 52 յորժամ տակաւ ստաքն նորա կակա-
 53 նայցեն եւ տերեւ արձակիցի ի նմա,
 54 զիտէք թէ մերձ է ամառն . Նոյնպէս
 55 եւ զուք յորժամ տեսանիցէք զայս
 56 ամենայն եղեալ, զիտասջիք թէ մերձ
 57 է առ զուրս : Ամէն ասեմ ձեզ թէ Ոչ
 58 անցէ սպոս այս, մինչեւ այս ամե-
 59 նայն եզրիցի : Երկինք եւ երկիր անց-
 60 ցեն, եւ բանք իմ ոչ անցանիցեն : Այլ
 61 վասն աւուրն այնորիկ եւ ժամու ոչ
 62 որ դիտէ, ոչ հրեշտակք յերկինս եւ

1 Յան, մեծամեծ
 2 Ի Բաւալս գլխի
 3 Ի Յաննի գլխի
 4 Յաննի գլխի
 5 Բաւալս, Չգոչ լերուք անձանց, զի
 6 Յանն, Իւ նախ յամենայն հեթանոսս պարտ է
 7 աւետարանին քարոզել
 8 Որնոք յաւուրան, որ ասացեալն է ի ձեռն Դա-
 9 նիելի մարդարէի

9 Բաւալս, Տեսա՛ն

33 ոչ Որդի, բայց միայն Հայր: Չդոյչ ե-
 34 զերուք, սկեցէք եւ կացէք յաղօթս, զի
 ոչ զիտէք երբ ժամանակն իցէ: Որպէս
 սպր մի գնացեալ ի տարաշխարհ՝ թո-
 զուցու գտուն իւր, եւ տայցէ ծառա-
 քանչիւր պոքը իւր, եւ իւրա-
 պանազուէր տայցէ, զի արթուն լինիցի:
 35 Արդ արթուն կացէք, զի ոչ զիտէք երբ
 աչք տանն գայցէ, յերեկորեալ, եթէ
 ի մէջ վիշերի, եթէ ի հաւաթօսի, եթէ
 36 ընդ առաւօտս: Գուցէ եկեալ յանկար-
 37 ծակի՝ գտանիցէ զձեզ ի բուն: Բայց
 զոր ձեզդ ասեմ՝ ամենեցուն ասեմ,
 Արթուն կացէք:

ԳԼ ԺԳ

1 Է՛է. Եւ էր զատիկն եւ բաղարջակերք
 յետ երկուց աւուրց, խնդրէին քահա-
 նայապետքն եւ դպիրք եթէ զիտրոյ
 զնա նենդան կարեալ սպանանիցեն:
 2 Բայց ասէին թէ Մի՛ ի սօնի ասս, զի
 մի՛ խոտլութիւն լինիցի ի ժողովր-
 դեանն:
 3 Եւ մինչ էր ի Բեթանիա ի տան Սի-
 մովի ըտրտաի բազմեալ, եկն կին մի
 որ ունէր շիշ իւզոյ նարդեան աջնուի
 մեծագնոյ, եւ ըկեկեալ զշիշն՝ կնկ ի
 4 վերայ զլիտ նորա: Նեւ աշակերտքն՝
 զշակէին եւ ասէին, Ընդէ՛ր եղև կո-
 5 բուստ իւզոյց այգորիկ: Մարթ էր
 զայդ եւզ վաճառել աւելի քան երեք
 6 հարեւր դահեկանի, եւ տալ տղքա-
 7 տայ. եւ զայրանային նմա յոյժ: Եւ
 Յիսուս ասէ ցնոսա, Թոյլ տուք զմա,
 զի՛ աշխատ ասնէք, զի գործ մի բարի
 7 գործեաց զա յիս: Յամենայն ժամ զազ-
 քատս ընդ ձեզ ունիք, եւ յորժամ
 կամիրք, կարող էք առնել նոցա բարիս.
 այլ զիս ոչ յամենայն ժամ ընդ ձեզ
 8 ունիք: Դա զոր ունէրդ՝ արար. յա-
 ռաջագոյն խնկեաց զմարմին իմ ի նշան
 9 պատանաց: Ամէն ասեմ ձեզ, ուր եւ
 քարոզեցի աւետարանս այս ընդ ա-
 մենայն աշխարհ, եւ զոր արար զա՛
 խօսեսցի վասն յիշատակի դորին:
 10 Եւ Յուզա իսկարիտուացի, մի յեր-
 կոտասանից անտի, գնաց առ քահա-
 նայապետսն զի մատենացէ զնա նոցա:

11 Նոքա իրբեւ լուան, խնդացին, եւ խոս-
 տացան տալ նմա արծաթ. եւ խնդրէր
 թէ զիտրոյ պարապով մատենացէ զնա:
 12 Եւ յառաջնում աւուր բաղարջակե-
 րայն յորժամ զգատիկն գենուին, ա-
 սեն ցնա աշակերտքն, Ո՛ւր կամիս,
 երթիցուք պատրաստեցուք զի կերի-
 13 ցես զգատիկն: Եւ առարէ երկուս յա-
 շակերտաց անտի եւ ասէ ցնոսա, Եր-
 թայք ի քաղաք, եւ իրբեւ մատնիցէք
 ի քաղաքն, պատահեցէ ձեզ այր մի
 որ սափոր ջրոյ յուս ունիցի, երթայք
 14 զնեա նորա: Եւ յոր տուն մտանիցէ,
 ասա՛ջիք ցտանուաէրն, վարդազեա
 ասէ, Ո՛ւր են իջեւանքն ուր աշա-
 15 կերտօքս ուտիցեմ զգատիկն: Եւ նա
 ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զար-
 դարեալ, անդ պատրաստեալիք մեզ:
 16 Եւ գնացին պատրաստել աշակերտքն
 նորա. եկին ի քաղաքն եւ գտին որ-
 պէս ասացն նոցա, եւ պատրաստեցին
 զգատիկն:
 17 Եւ իրբեւ երեկոյ եզեւ, դայ երկո-
 18 տասանիւքն հանդերձ: Եւ իրբեւ բազ-
 մեցան եւ գեո ուտէին, ասէ Յիսուս,
 Ամէն ասեմ ձեզ զի մի ոմն ի ձէնջ
 մատենեցոց է զիս, որ ուտէ իսկ ընդ իս:
 19 Եւ նոքա սկսան արտօնել եւ ասել մի
 բոս միտջէ, Միթէ՛ կս իցեմ, եւ մեւսն՝
 20 Միթէ՛ կս իցեմ: Նա պատասխանի ետ
 եւ ասէ ցնոսա, Մի յերկոտասանից
 այտի որ միեաց ընդ իս ի սկաւառակդ:
 21 Այ Որդի մարդոյ երթայ որպէս եւ
 զրեալ է վասն նորա, բայց վա՛յ իցէ
 մարդոյն այնիկ՝ յոյր ձեռն Որդի մար-
 դոյ մատենացի. յաւ էր նմա թէ չէր
 իսկ ծնեալ մարդն այն:
 22 Եւ մինչդեռ ուտէին, անեալ Յիսու-
 սի հաց՝ օրհնեաց եւ երեկ, ետ նոցա եւ
 23 ասէ, ՉԱռէք այդ է մարմին իմ: Եւ
 առեալ բաժակ՝ զոհացաւ եւ ետ նոցա,
 24 եւ արբին ի նմանէ ամենեքեան: Եւ
 ասէ ցնոսա, Այս է արիւն իմ նորոյ
 ուխտի, որ փոխանակ բազմաց հեզու:
 25 Ամէն ասեմ ձեզ թէ ոչ եւս յաւելից
 ըմպել ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն ցայն,
 յորժամ արբից զնա նոր յարքայութեան
 Աստուծոյ:
 26 Եւ գնացեալ ելին ի լեւոն Զիթե-
 նեաց: ՎՋ

1Գուզմէ, եւ էին ոմնք որ

2Ուտէ, Առէք, կերէք

27 Եւ ասէ ցնոսա Յիսուս , Ամենեքին
 գայթակղկոց էք յինէն յայսմ գիշերի .
 28 զի գրեալ է թէ Հարից գճովիւն , եւ
 ոչխարքն ցրուեացին : Այլ յետ յարու-
 29 թեան իմոյ յառաջադոյն երթալոյ շան
 Պետրոս եւ ասէ ցնա , Թէպէտ եւ ա-
 մենեքեան գայթակղեացին , այլ ես ոչ :
 30 Եւ ասէ ցնա Յիսուս , Ամէն ասեմքեղ
 թէ զու իսկ յայսմ գիշերի մինչեւ
 31 զիս : Իսկ Պետրոս առաւել եւս սինդէր
 եւ ասէր , Եթէ մեռանել եւս հասա-
 նիցէ ընդ թեղ , զթեղ ոչ ուրացայց .
 նոյնպէս եւ ամենեքեան ասէին :
 32 Գոն ի զեղն որում անուն էր Գեթ-
 սեմանի , եւ ասէ ցաշակերտան , Նստա-
 րուք ասա , մինչեւ ես յաղօթս կացից :
 33 Եւ առնու ընդ իւր զՊետրոս եւ զՅա-
 կովբոս եւ զՅովճաննէս , եւ սկսաւ
 34 տիրել եւ հոգալ : Յայնժամ ասէ ցնու-
 սա , Տրտում է անձն իմ մինչեւ ի մահ ,
 35 մնացէք աստ եւ արթուն կացէք : Եւ
 մատուցեալ սակաւի մի յոտաջ , ան-
 կաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր ,
 եւ կայր յաղօթս , զի եթէ հնար ինչ
 36 է , անցցէ ի նմանէ ժամն : Եւ ասէ ,
 Աբբա Հայր , ամենայն ինչ քեզ հնա-
 րաւոր է , անցր դրածակս զայս յինէն .
 բայց ոչ որպէս ես կամիմ , այլ որպէս
 37 զու կամին : Եւ զայ գոտանէ զնոսա
 զի ննջէին , եւ ասէ ցՊետրոս , Սիմոն ,
 ննջես . ոչ կարացեր ժամ մի արթուն
 38 կալ : Արթուն կացէք եւ յաղօթս կա-
 ցէք , զի մի՛ մաջիք ի վարձու թիւն .
 ողիս յօժար է , բայց մարմինս ական
 39 Եւ զարձեալ չոգաւ եկաց յաղօթս , եւ
 40 զնոյն բանս ասաց : Գարձաւ միւսան-
 դամ անդրէն եւ եղիտ զնոսա ի բուն .
 քանզի էին աչք նոցա ծանրացեալ ,
 եւ ոչ գիտէին թէ զինչ պատասխանի
 41 ապցեն նմա : Գայ երբորդ անցամ եւ
 ասէ ցնոսա , Ննջեցէք այսուհետեւ եւ
 հանդերուք , զի հասեալ է վախճան .
 եկն ժամ եւ ահա մասնի Որդի մար-
 42 քոյ ի ձեռս մեղաւորաց : Սն արիք ,
 զնասոցուք , զի ահաւասիկ մերձեցաւ
 որ մասներայն է զիս :
 43 Եւ մինչդեռ նա դայն խօսէր , զայ
 Յուզա³ Իսկարիտացի , մի յերկոտա-

անից անտի , եւ ընդ նմա ամբոխ
 սուսերօք եւ բրօք ի քահանայապետիցն
 44 եւ ի գպրաց եւ ի ձերոց : Տուեալ էր
 նչան մասնչին եւ ասէր , Ընդ որում
 ես համբուրեցից՝ նա է . կալչիք զնա
 45 եւ տարչիք զգուշութեամբ : Եւ մա-
 տուցեալ վազվազակի ասէ ցնա , Ռար-
 46 ըի , Ռարրի , եւ համբուրեաց զնա : Եւ
 նորա արկին ի նա ձեռս եւ կարան ցնա :
 47 Եւ մի ոմն յայնցանէ որ գնովաւն կա-
 յին՝ ձղեաց սուր , եւ ենար զճառայ
 քահանայապետին , եւ ի բաց եհան
 48 զուսին նորա : Պատասխանի ետ Յի-
 սուս եւ ասէ ցնոսա , Իբրեւ ի վերայ
 աւազակի՛ ելէք սուսերօք եւ բրօք ու-
 49 նել զիս : Հանապղջ աս ձեզ էի եւ
 ուսուցանէի ի ասճարին , եւ ոչ կա-
 րարուք զիս . այլ զի լցցին զիւրք մար-
 50 դարէիցն : Յայնժամ թողին քնա աշա-
 51 կերտքն ամենեքին եւ փախեան : Եւ
 ոմն երիտասարդ զնտ երթայր նորա՝
 արկեալ զիւրեւ կտաւ մի ի մերկուց ,
 52 ունէին զնա երիտասարդքն . Եւ նորա
 թողեալ զկտաւն՝ փախեաւ մերկ ի նո-
 ցանէ :
 53 Եւ տարան զՅիսուս առ քահանա-
 յապեան³ Կայիափա եւ զային ընդ նմա
 ամենայն քահանայապետքն եւ զպիբք
 54 եւ ձերք : Եւ Պետրոս երթայր ի հե-
 ոաստանէ զնտ նորա մինչեւ ի ներքս
 իսկ ի դաւիթ քահանայապետին , եւ
 նստէր ընդ սպասաւորան եւ ջևոնոր
 55 առ լուսովն : Իսկ քահանայապետքն
 եւ ամենայն ատեանն խնդրէին հա-
 կատակ Յիսուսի վրայութիւն ինչ ,
 զի սպանանիցեն զնա , եւ ոչ գտա-
 56 նէին : Չի բաղումք սուտ վկայութիւն
 վկայէին զնմանէ , եւ նման միմեանց ոչ
 57 էին վկայութիւնքն : Այլք յարուցեալ
 վկայէին սուտ զնմանէ եւ ասէին , թէ
 58 Մեք լուար ի զմանէ զի ասէր , Ես քա-
 կեցից պատճարդ զայզ ձեռագործ , եւ
 զերիս աւուրս չինեցից այլ , առանց
 59 ձեռագործի : Սակայն եւ այնպէս չէր
 60 նման վկայութիւնն նոցա : Ապա յա-
 րուցեալ քահանայապետն ի մէջ՝ հար-
 ցանէր զՅիսուս եւ ասէր , Ոչ ի՞նչ
 տոս պատասխանի , զի՞նչ գոքս գրէն
 61 վկային : Եւ նա լուս եւեթ կայր եւ
 չտայր ինչ պատասխանի : Գարձեալ

¹Բ-ը-ւ-է , հաւու երկցս ²Յւնն , բաւական է

³Ի Բ-ը-ւ-է գ-ւ-տ-է

քահանայապետն հարցանէր զնա կրկին անգամ եւ ասէր, Դ՞ո՞ւ ես Քրիստոս 62 Որդի՞ 1 Աստուծոյ օրհնելոյն: 2 Պատասխանի ես Յիսուս եւ ասէ ցնա, Դու ասացեր թէ ես եմ: քայց տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ Զօրութեան, եւ եկեալ ընդ ամպս երկ-

63 նից: Եւ քահանայապետն պատահաց 3 վաղվազակի զպատմուճանս իւր եւ ասէ, Զի՞նչ եւս պիտոյ են մեզ վկայք:

64 Ահա 2 լուայք ամենեքին զհայհոյութիւն ի բերանոյ զորա՞, զիա՞րդ թուի ձեզ. եւ ամենեքեան դատապարտեցին զնա

65 թէ մահապարտ է: Եւ ոմանք սկսան թքանել ընդ երեսս նորա, ձորձ զգլխով արկանել, կոպիւլ եւ ասել, Մարդաբեաց 3 մեղ, Քրիստոսոսդ, ո՞վ է այն որ եհարն զքեզ՞. եւ սպասաւորքն ապտակս հանէին նմա:

66 Եւ Պետրոս մինչդեռ էր ի խոնարհ ի գաւթին, գայ աղախին մի քահանայապետին, եւ տեսանէ զնա զի ջլու-

67 նոյր. հայեցաւ ընդ նա եւ ասէ, Եւ դու ընդ Յիսուսի Նազովրեցոյ էիր:

68 Նա ուրացաւ եւ ասէ, Ոչ ճանաչեմ եւ ոչ գիտեմ զինչ դուդ ասես. եւ իբրեւ էլ յարտաքին գաւթին, եւ հաւ-

69 խօսեցաւ: Դարձեալ ետես զնա աղախինն, եւ սկսաւ ասել ցայնոսիկ որ շուրջն կային թէ Եւ սա ի նոցանէ է:

70 եւ նա զարձեալ ուրացաւ: Եւ յետ սակաւ միոյ զարձեալ որ շուրջն կային՝ ասեն ցՊետրոս, Արդարեւ եւ դու ի նոցանէ ես, քանզի Գալիլեացի ես, եւ

71 խօսքդ իսկ քո նման են: Եւ նա սկսաւ նղովել եւ երգնուլ եւ ասել թէ Ոչ

72 զիտեմ զայրն զորմէ դուքդ ասէք: Եւ նոյնժամայն կրկին հաւ խօսեցաւ. եւ յիշեաց Պետրոս զբանն զոր ասաց ցնա Յիսուս թէ Զեւ իցէ հաւու երկիցս խօսեալ, զի դու երիցս ուրացիս զիս, եւ սկսաւ լալ:

ԳԼ ԺԵ

1 Եւ վաղվազակի ընդ առաւօտն խորհուրդ արարեալ քահանայապետիցն հանգերձ ձերովքն եւ դպրօք եւ ամենայն ասեանն, կապեցին զՅիսուս եւ

1 Յիսուս պալատ
 2 Քաղաք, եւ Յիսուս ասէ, Ես եմ
 3 Ի բազմոս պալատ
 4 Բազմոս, լուայք զհայհոյութիւնն

2 տարան մատնեցին Պիղատոսի: Եւ հարց զնա Պիղատոս եւ ասէ, Դ՞ո՞ւ ես թագաւորն Հրէից. նա պատասխանի

3 ետ նմա եւ ասէ, Դու ասես, Եւ չարխօսէին զմամնէ յոյժ քահանայապետքն 3 եւ նա ոչինչ տայր պատաս-

4 խանի՞: Իսկ Պիղատոս զարձեալ հարցանէր զնա, Ոչի՞նչ տաս պատասխանի, տես քանի՞ ամբաստանեն զքէն:

5 Եւ Յիսուս այնուհետեւ ոչինչ ետ պատասխանի, մինչեւ զարմանալ յոյժ Պիղատոսի:

6 Բայց ըստ սոճի արձակէր նոցա զմի ոք զկապեալ, զոր ինքեանք խնդրէին:

7 Եւ էր որում անուն էր Բարաբաս՝ կապեալ ընդ խռովչան, որոց ի խռո-

8 վելն՝ այր մի սպանեալ էր: Ի ձայն բարձր սկսաւ աղաղակել ամբոխն եւ խնդրել 3 որպէս սովոր էր, զի արձա-

9 կեցէ նոցա զԲարաբբայն՞: Պատասխանի ետ Պիղատոս եւ ասէ ցնոսա, կամի՞ք զի արձակեցիք ձեզ զարբայն

10 Հրէից: Բանդի զիտեմ թէ առ նախանձու մատնեցին զնա քահանայապետքն:

11 Որք եւ զամբոխն հաւանեցուցին, զի

12 արձակեցէ նոցա զԲարաբբայն: Դարձեալ պատասխանի ետ Պիղատոս եւ ասէ ցնոսա, Իսկ զի՞նչ կամիք թէ ա-

13 րարից զարբայն Հրէից: Եւ նոքա զարձեալ աղաղակէին 3 յուզեալք ի քահա-

14 նայապետիցն՞, Ի խաջ հան զդա: Ասէ ցնոսա Պիղատոս, Զի՞նչ ինչ չար արարեալ իցէ զորա. եւ նոքա առաւել եւս աղաղակէին եւ ասէին, Ի խաջ հան

15 զդա: Իսկ Պիղատոս իբրեւ զմիտս կամեցաւ հաճել զամբոխին, արձակեաց նոցա զԲարաբբայն, եւ զՅիսուս գան հարեալ ետ ի ձեռս զի ի խաջ ելանիցէ:

16 Եւ զինուորքն տարան զնա ի ներքս ի գաւթին ուր 6 հրապարակն էր. եւ կոչեն միանգամայն զամենայն զգուհոն,

17 Եւ զդեցուցանեն նմա 3 քղամիդ կարմիր եւ՞ ձիբանիս, եւ եղին ի գլուխ նո-

18 րա սյակ արարեալ ի փշոց: Եւ սկսան ողջոյն տալ նմա եւ ասել, Ողջ եր,

19 արբայդ Հրէից: Եւ ձեռէին զվլուխն եղեգամբ, եւ թքանէին ընդ երեսս, եւ ի ձուեր իջեալ երկիր պագանէին

20 նմա: Եւ իբրեւ կատակեցին զնա,

5 Յիսուս, որպէս միշտն աւանդ նոցա
 6 Յիսուս, ապարաճք, ԴԵ Մատթ. ԻԷ. 27:

մերկացուցին ՚ զքղամիդն եւ՝ զծիրանիս եւ զգեցուցին նմա զիւր հանգերձն, եւ ածին արտաքս զի ի խաչ հանցին զնա :

21 Եւ ունէին պահակ զՍիրմովն կիւրեւնացի, որ ընդ այն անցանէր՝ եկեալ յագարակէ, զ՛այրն Աղեքսանդրի եւ Ռուփայ, զի բարձցէ զխաչափայտն նորա : Եւ ածեն զնա ի Գողգոթա, տեղի մի որ թարգմանի Տեղի կառափելոյ :

23 Եւ տային նմա զինի զմոսեալ, եւ նա ոչ առ : Եւ հանին զնա ի խաչ, եւ բաժանեցին զհանդերձս նորա, արկեալ լիճակս ի վերայ թէ ո զինչ առնուցու :

25 Էր ժամ երրորդ եւ հանցն զնա ի խաչ : 26 Եւ էր զիր վնասու նորա զրեալ թէ 27 թագաւոր է Հրէից, Եւ ընդ նմա հանին ի խաչ երկուս աւաղակս, մի ընդ 28 աջմէ եւ մի ընդ աճեկէ նորա : Եւ լցաւ զիրն որ ասէ թէ Ընդ անօրէնս հա- 29 մարեցաւ : Եւ որք անցանէինն՝ հայտոյէին զնա շարժեալ զդուռս իւրեանց եւ ասէին, Վա՛հ, որ քակէիր զտա- 30 ճարն եւ զերիս աւուրս չինէիր : Ասյ- 31 րեցո զսնձն քո եւ էջ ի խաչէդ, Նոյնպէս եւ քահանայապետիցն այսին աւրարեալ ընդ միմեանս հանդերձ զպրօքն՝ ասէին, Չայլս ապրեցողց, զսնձն ոչ 32 կարէ ապրեցուցանել : Քրիստոսդ, արքայդ Իսրայելի, ի՞ճք այժմ ի խաչէ այտի, զի տեսցուք եւ հաւատասցուք զմա : Եւ որ ընդ նմա ի խաչն երեալ էին՝ նախատէին զնա :

33 Եւ իբրեւ վեց ժամ եղեւ, խաւար կալաւ զամենայն երկիր մինչեւ ցինն 34 ժամ : Եւ յիններորդ ժամուս աղաղակեաց Յիսուս ի ձայն մեծ եւ ասէ, Չէյի, էյի՞, լա՛մա սարաքթանի : որ թարգմանի, Աստուած իմ, Աստուած իմ, 35 ընդէ՛ր թողեր զիս : Եւ ոմանք ի նոցանէ որ շուրջն կային զնովաւ՝ իբրեւ 36 լուան, ասէին թէ զեղիա կարգայ : Եւ ընթացեալ մի սնն՝ ելից սպունգ մի քացախով, եւ հարեալ յեղեգան՝ տայր ըմպիլ նմա, եւ ասէ, Թոյլ սուր տեսցուք, զայ՛ Ներիս իջուցանել զդա : 37 Եւ Յիսուս արձակեաց ձայն մեծ եւ 38 եհան զողի : Եւ վարագոյր տաճարին պատառեցաւ յերկուս ի վերուստ մին- 39 չեւ ի խոնարհ : Եւ տեսեալ հարիւրա-

պետին որ կայր անդ թէ աղաղակեաց եւ եհան զողի, ասէ, Արդարեւ այրս 40 այս Որդի Աստուծոյ էր : Էին եւ կառայք որ հայէին ի հեռաստանէ, յորս էր Մարիամ Մաղդաղենացի եւ Մարիամ Յակովբոս փոքրկան եւ Յովսեայ 41 մայրն եւ Սողովմէ : Որք յորժամ էրն ի Գալիլեա, զ՛նա շրջէին նորա եւ պաշտէին զնա : Եւ այլ բաղում կանայք որ ընդ նմա իսկ երեալ էին յերուսաղէմ : 42 Եւ իբրեւ երեկոյ եղեւ, քանզի ուրբաթ էր որ ի շաբաթն մտանէր, Եկեալ Յովսէփ որ յԱրիմաթեայն էր, իսր պարկեչա նախարար, որ եւ ինքն իսկ ակն ունէր արքայաւթեանն Աստուծոյ, համարձակեցաւ եմուտ առ Պիղատոս, 44 եւ խնդրեաց զմարմինն Յիսուսի : Եւ Պիղատոս զարմացաւ թէ այնչափ վաղ մեռաւ : Եւ կոչեցեալ առ ինքն զհարկարական՝ եհարց զնա եւ ասէ թէ Ար- 45 դարեւ այնչափ վաղ մեռաւ : Եւ իբրեւ ստուգեաց ի հարիւրապետ անտի, 46 չնորհեաց զմարմինն Յովսեփայ : Եւ Յովսէփ զնեաց կտաւ, եւ իջուցեալ զնա՝ սլատեաց կտաւովն եւ եղ ի գերեզմանի զոր էր փորեալ ի վիմէ : Եւ թաւալեցողց վէմ մի ի զուսն դերեզ- 47 մանին : Իսկ Մարիամ Մաղդաղենացի եւ Մարիամ Յակովբայ եւ Յովսեայ տեսին զտեղին ուր եղաւ :

ԳԼ ԺԶ

1 Եւ իբրեւ անց չաքաթն, Մարիամ Մաղդաղենացի եւ Մարիամ Յակովբայ եւ Սողովմէ չողան պատրաստեցին 2 խուսկս, զի եկեացին օժցեն զնա : Եւ ընդ առաւօտս միաշարաթուս զսն ի 3 գերեզմանն ընդ արեւազալն : Եւ ասէին ցմբմեանս, Ո՞վ թաւալեցուցէ մեզ 4 զվէմն ի գրաց գերեզմանին : (Եւ հայեցեալ տեսին զի թաւալեցուցեալ էր զվէմն ի գերեզմանէն) : քանզի էր մեծ 5 յոյժ : Եւ մտեալ ի ներքս ի գերեզմանն՝ տեսին երիտասարդ մի զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զղեցեալ պատմուճան 6 սպիտակ, եւ զարհուրեցան : Եւ նա ասէ ցնոսա, Մի՛ երկնչիք : զՅիսուս խնդրէք զՆազովրեցի զխաչելական, յարեաւ, չէ աստ : ա՛նաւաղիկ տեղին 7 ուր եղին զնա : Այլ երթայք, ստացէք ցաշակերտս նորա եւ ցՊետրոս, եթէ


1ի բազմա պատե 2ի բազմա, էլի, էլի

ահա յառաջագոյն երթայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա, որ-
 8 պէս ասացն ձեզ: Եւ իբրեւ լուան, ե-
 լլին եւ փախեան ի գերեզմանէն, քանզի
 զահի հարեալ էին. եւ ոչ ումեք ինչ
 ասացին, զի երկնչէին:
 9 ¹Յարուցեալ Յիսուս առաւօտուն ²ա-
 ռաջին միաշարաթուն՝ երեւեցաւ Մա-
 րիամու Մաղղազենացոյ, յորմէ հան-
 10 եալ էր զեւթն զեւն: Եւ նա երթեալ
 պատմեաց այնոցիկ որ ընդ նմայն էին,
 11 մինչդեռ սղային եւ լային: Նոքա իբ-
 րեւ լուան թէ կենդանի է եւ երեւե-
 ցաւ նմա, ոչ հաւատացին:
 12 Յետոյ երեւեցաւ այլով ³կերպարա-
 13 նաւ որք երթային յանդաստան: Նոքա
 չողան պատմեցին այլոց, եւ ոչ նոցա
 հաւատացին:
 14 Յետոյ մինչդեռ բազմեալ էին մետա-
 սանքն, երեւեցաւ նոցա եւ թշնաման-

եաց զանհաւատութիւն նոցա եւ զխըս-
 տասրտութիւն: ⁴զի որ երեւեցաւ նո-
 ցա յարուցեալ ի մեռելոց, եւ նոքա ոչ
 հաւատացին:
 15 Եւ ասէ ցնոսա, Երթայք յաշխարհ ա-
 մենայն, եւ քարոզեցէք զաւետարանն
 16 ամենայն արարածոց: Որ հաւատայ եւ
 մկրտիցի՝ կեցցէ, եւ որ ոչն հաւատայ՝
 17 գատապարտեսցի: Նշանք այնոցիկ որ
 հաւատանն՝ երթիցեն զհեռ, այսորիկ
 18 յանուն իմ դեւս հանցեն, լեղուս խօ-
 սեսցին, ի ձեռս իւրեանդ օծս բարձ-
 ցեն, եւ եթէ մահացու ինչ զեզ արբ-
 ցեն, նոցա ինչ ոչ վնասեսցէ. ի վերայ
 հիւանդաց ձեռս զիցեն, եւ ⁵բժշկեսցեն:
 19 Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն
 ընդ նոսա համբարձաւ յերկինս, եւ
 20 նստաւ ընդ աջմէ չօր: Եւ նոքա ել-
 եալ քարոզէին ընդ ամենայն երկիր
 Տեառն զորձակցութեամբ, եւ զբանն
 հաստատէին ամենայն նշանօք որ եր-
 թային զհետ նոցա:

¹Առի միւլէ- ի կորուստ գլխն պատի յամն
 է Յոն յեռ-գրոց
²Յոնն, յառաջնուն շարաթուն
³Յոնն, կերպարանաւ երկուց ի նոցանէ

⁴Յոնն, զի որոց տեսին զնա յարուցեալ ոչ
 հաւատացին
⁵Յոնն, բժշկեսցին



Գ Լ ՈՒ Խ Ք Գ ՈՒ Կ Ա Յ Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ի Ն

	Գ Լ . Հ մ ր .
Վ ասն աշխարհադրին .	Բ . 4
Վ ասն բացօթեայ հովուացն .	Բ . 8
Վ ասն Վիմեոֆնի .	Բ . 25
Վ ասն մարգարէին Աննայի .	Բ . 36
Վ ասն լինելոյ բանին Աստուծոյ առ- ջովհաննէս .	Գ . 2
Վ ասն որոց հարցանէին զՅովհաննէս .	Գ . 40
Վ ասն փորձութեանց փրկչին .	Գ . 2
Վ ասն որ ունէր զհոգին զիւական .	Գ . 33
Վ ասն զըքանչին Պետրոսի .	Գ . 38
Վ ասն որոց բժշկէին ի պէսպէս հի- ւանդութեանց .	Գ . 41
Վ ասն որոյ ձկանցն .	Ե . 4
Վ ասն բորոտին .	Ե . 42
Վ ասն անդամալուծին .	Ե . 17
Վ ասն Վեւեայ մաքսաւորին .	Ե . 27
Վ ասն զօսացեալ ձեռինն .	Զ . 6
Վ ասն առաքելոցն համարոյ .	Զ . 13
Վ ասն երանութեանցն .	Զ . 20
Վ ասն հարիւրապետին .	Է . 2
Վ ասն որդւոյ պրոցոյն .	Է . 42
Վ ասն որոց առաքեցանն ի Յովհաննէ .	Է . 49
Վ ասն օծանելոյ զՏէրն .	Է . 38
Վ ասն առակի սերմնացանին .	Ը . 5
Վ ասն սաստելոյ չուրցն .	Ը . 24
Վ ասն որ ունէր զլէգէոֆնն .	Ը . 27
Վ ասն դուտեր ժողովրդապետին .	Ը . 41
Վ ասն տեռատես կնոջն .	Ը . 43
Վ ասն առաքելոյ զերկոտասանն .	Թ . 2
Վ ասն հինգ հացիցն և երկու ձկանցն .	Թ . 13
Վ ասն ցաշակերտան հարցանելոյ .	Թ . 18
Վ ասն պլակերպութեանն Յիսուսի .	Թ . 29
Վ ասն լուսնահարին .	Թ . 38
Վ ասն խորհելոյն թէ ո՞վ մեծ իցէ .	Թ . 46
Վ ասն չտալոյն հրաման զկնի երթալ .	Թ . 57
Վ ասն երեւցուցանելոյ զԵթանա- սուսն .	Ժ . 4
Վ ասն հարցանելոյ օրինականին .	Ժ . 25
Վ ասն անկելոյն ի ձեռս աւազակաց .	Ժ . 30
Վ ասն Մարիամն և Մարթայի .	Ժ . 38
Վ ասն յաղօթս կալոյն .	ԺԱ . 1
Վ ասն խուլ գիւին .	ԺԱ . 44
Վ ասն որ կինն ձայն երարձ ի ժո- ղովրդեանն .	ԺԱ . 27
Վ ասն նշան խնդրելոյն .	ԺԱ . 29
Վ ասն որ փարիսեցին կոչեաց զՏէրն .	ԺԱ . 37
Վ ասն վայ տալոյ օրինականացն .	ԺԱ . 46
Վ ասն խմորոյ փարիսեցւոցն .	ԺԲ . 1
Վ ասն բաժանելոյ զինչսն ընդ եղբօրն .	ԺԲ . 43

	Գ Լ . Հ մ ր .
Վ ասն պողոսբերելոյ անդոյ մեծա- տանն .	ԺԲ . 46
Վ ասն Վարիլեացւոցն և որոց ի Սե- լովամ, և վասն թ զէնւոյն .	ԺԳ . 1
Վ ասն կարկամեալ կնոջն պսահարի .	ԺԳ . 41
Վ ասն առականցն .	ԺԳ . 49
Վ ասն թէ սուկա՛ւք իցեն որ ապրե- լոց իցեն .	ԺԳ . 23
Վ ասն որք ասացին ցՅիսուս զՀե- րովղէէ .	ԺԳ . 31
Վ ասն որ ջրգողեալ էր .	ԺԳ . 2
Վ ասն որք սիրեն զնախագահսն .	ԺԳ . 7
Վ ասն կոչելոյն յընթրիսն .	ԺԳ . 42
Վ ասն շինելոյ աշտարակին .	ԺԳ . 28
Վ ասն հարեւր ոչխարացն .	ԺԵ . 4
Վ ասն գնացելոյն յաշխարհ հեռի անառակին .	ԺԵ . 44
Վ ասն անիրաւ տնտեսին .	ԺԶ . 1
Վ ասն մեծատանն և Ղազարու .	ԺԶ . 49
Վ ասն տասն բորոտացն .	ԺԷ . 12
Վ ասն անիրաւ զատուորին .	ԺԸ . 2
Վ ասն փարիսեցւոյն և մաքսաւորին .	ԺԸ . 40
Վ ասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս .	ԺԸ . 48
Վ ասն կուրին .	ԺԸ . 35
Վ ասն Զակէթոսի .	ԺԹ . 2
Վ ասն գնալոյ առնուլ իւր թագա- ւորութիւն և դառնալ .	ԺԹ . 42
Վ ասն առնոյ զտասն մնասն .	ԺԹ . 43
Վ ասն յաւանակին .	ԺԹ . 30
Վ ասն հարցանելոյ քահանայիցն զՏէր .	Ի . 4
Վ ասն առակի տղւոյն .	Ի . 9
Վ ասն դահեկանին .	Ի . 23
Վ ասն սաղակեցւոցն .	Ի . 27
Վ ասն թէ զիս՛րդ է որդի Դաւթի Քրիստոս .	Ի . 44
Վ ասն երկու լուսնայի պրոցոյն .	ԻԱ . 7
Վ ասն հարցման կատարածին .	ԻԱ . 7
Վ ասն զատկին .	ԻԲ . 2
Վ ասն վիճելոյն թէ ո՞վ մեծ իցէ .	ԻԲ . 24
Վ ասն խնդրելոյն Սատանայի .	ԻԲ . 31
Վ ասն նախատանաց Հերովղի զՏէրն .	ԻԳ . 11
Վ ասն կոծելոյ կանանցն .	ԻԳ . 27
Վ ասն ապաշխարելոյ աւաղակին .	ԻԳ . 40
Վ ասն խնդրելոյ զտէրուական մարմինն .	ԻԳ . 52
Վ ասն լղէովպեանցն .	ԻԳ . 43
Վ ասն համբառնալոյն Տեսուծ .	ԻԳ . 54

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

ԳՂՈՒԻ Ա

1 **Ի**ՄԱՆՁԻ բազումք յօժարեցին վերստին կարգել զպատմութիւն վասն իրացն
2 հաստատելոց ի մեղ, Որպէս աւանդեցին մեղ որ ի սկզբանէ ակնատեսք
3 եւ սպասաւորք եղին բանին, կամ եղեւ եւ ինձ, որ ի սկզբանէ զճետ երթեալ էի ամենայնի ճշմարտութեամբ, կարգաւ զրիւ քեզ, քաջք Թէոփիլէ,
4 Ձի ծանխցես զբանիցն որոց աշակերտեցար՝ զճշմարտութիւնս :
5 Եւ եղև յաւուրս Հերովդի արքայի Հրէաստանի, քահանայ ոմն անուն Ջաքարիա ի գասակարգէ Արիայ, եւ կին նորա ի գասակարգ Ահարոնի, եւ
6 անուն նորա Եղիսարեթ : Եւ էին արգարք երկուքին առաջի Աստուծոյ, զնային յամենայն պատուիրանս եւ յիրաւուրնս Տեառն անարատք : Եւ ոչ զոյր նոցա որդեակ, քանզի Եղիսարեթ ամուլ էր, եւ երկուքեան անցեալ էին գաւուրք իւրեանց :
8 Եւ եղև ի քահանայանայն նորա ըստ կարգի աւուրցն հասանելոյ առաջի Աստուծոյ, Ըստ օրինի քահանայութեանն հնաւ նմա խուսնի արկանելի
9 մտեալ ի տաճարն Տեառն : Եւ ամենայն բազմութիւն ժողովրդեանն կային յայօթս արտաքոյ ի ժամու խնկոցն
10 Եւ երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն, զի կայր ընդ աջմէ սեղանոյ խնկոցն :
11 Եւ խոսկեցաւ Ջաքարիա, իբրև եւտես, եւ անկաւ աճ ի վերայ նորա :
12 Ասէ զնա հրեշտակն ¹Տեառն, Մի՛ երկընչիր, Ջաքարիա, զի լսեի եզեն ազօթք քո, եւ կին քո Եղիսարեթ ծնցի քեզ որդի, եւ կոչեցես զանուն նորա
13 Յովհաննէս : Եւ եղիցի քեզ ուրախութիւն եւ զնձութիւն, եւ բազումք ի
14 ծննդեան նորա խնդապեն : Ձի եղիցի մեծ առաջի Տեառն, եւ զինի եւ օղի

¹ Ի Յովնի պատմութեան

մի՛ արբեցէ, եւ Հոգևով Սրբով լցցի
16 անպատին յորովայնէ մօր իւրոյ : Եւ զբազումս յորդուցն Իսրայելի գար
17 ձուցէ ի Տէր Աստուած իւրեանց : Եւ ինքն եկեացէ առաջի նորա ²Հոգևով զօրութեամբ Եղիայի, զարձուցանել զսիրտս հարց յորդիս, եւ զանհաւանս յիմաստութիւն արդարոց, պատրաստել
18 սել Տեառն ժողովուրդ կազմեալ : Եւ ասէ Ջաքարիա զհրեշտակն, Եւ ի՞նչ զխտացից զայդ : զի ես ձեր եմ, եւ կին
19 իմ անցեալ գաւուրքք իւրովք : Պատասխանի ետ հրեշտակն եւ ասէ զնա, Ես եմ Գարբիէլ որ կամ առաջի Աստուծոյ, եւ առաքեցայ խօսել ընդ քեզ եւ
20 աւետարանել քեզ զայդ : Եւ անա եղիցես համբ, եւ մի՛ կարացես խօսել մինչև ցօրն յորում այդ լինիցի : Իոխանակ զի ոչ հաւատացեր բանից իմոց, որք լցցին ի ժամանակի իւրեանց :
21 Եւ ժողովուրդն ակն ունէր Ջաքարիայ, եւ զարմանային ընդ յամենն նորա ի տաճարին : Եւ իբրև ել, ոչ կարէր խօսել ընդ նոսա : Եւ իմացան եթէ տեսիլ ետես ի տաճարին : Եւ նա նշանացի խօսէր ընդ նոսա եւ կայր պարանձեալ : Եւ եղև իբրև լցան աւուրք պաշտաման նորա, զնաց ի տուն
22 իւր : Եւ յետ աւուրցն այնոցիկ յաջաւ Եղիսարեթ, կին նորա, եւ թաքուցանէր զանձն ամիսս հինգ, եւ ա
23 սէր, Ձինչ զործ զործեաց ընդ իս Տէր յաւուրս յորս հայեցաւ յիս բառնալ զնախատինս իմ ի մարդկանէ :
24 Եւ յամեսանն վեցերորդի առաքեցաւ Գարբիէլ հրեշտակ յԱստուծոյ ի քաղաք մի Գալիլեացոց, որում անուն էր Նազարեթ, Աս կոչս խօսեցեալ անն, որում անուն էր Յովսէփ, ի տանէ Դաւթի : Եւ անուն կուսին Մարիամ :
25 Եւ եկեալ առ նա ասէ, Ուրախ լեր, բերկրեալոյ, Տէր ընդ քեզ : Եւ նա

² Յովն, Հոգևով և

ընդ բանս խոռվեցաւ, եւ խորհէր ընդ միտս թէ որպիսի՝ ինչ իցէ ողջոցնս
 30 այս : Եւ ասէ ցնա հրեշտակն, Մի երկընչիր, Մարիամ, զի գտեր չնորհն
 31 յԱստուծոյ : Եւ անա յգատջիր եւ ծնցես որդի, եւ կոչեսցես զանունն նորա Յի-
 32 սուս : Եւ եղիցի մեծ, եւ Որդի Բար- ձրեւոյ կոչեսցի, եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր նորա, եւ թաղաւորեսցէ ի վերայ տանն Յա-
 33 կովբայ ի յաւիտեանս, Եւ թաղաւոր-
 34 բուժեանն նորա վախճանն մի՛ լիցի : Եւ ասէ Մարիամ ց՛հրեշտակն, Ձիարդ չի- նրիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ :
 35 Պատասխանի ետ հրեշտակն եւ ասէ ցնա, Հոգի Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո . քանզի եւ որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է, եւ Որդի Աստուծոյ
 36 կոչեսցի : Եւ անա եղիսարեթ աղաւ- կան քո, եւ նա յղի է ի ծերութեան իւրում . եւ այս վեցերորդ ամիս է նու-
 37 բա որ ամուսն կոչեցեալ էր . Ձի ոչ տկարացի առ յԱստուծոյ ամենայն
 38 բան : Եւ ասէ Մարիամ, Ահա առիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ բաա լանի քում . եւ գնաց ի նմանէ հրեշ- տակն :
 39 Յարուցեալ Մարիամ յառուրսն յայ- նոսիկ՝ գնաց ի լեռնակողմն փութապէս
 40 ի քաղաքն Յուզայ . Եւ եմուտ ի տուն Ջաբրիայի եւ ետ ողջոյն եղիսարեթի :
 41 Եւ եղեւ իրբեւ լուաւ զողջոյնն Մա- րիամու եղիսարեթ, խաղաց մանուկն յորովայնի նորա . եւ լցաւ եղիսարեթ
 42 Հոգւով Սրբով . Եւ ի ձայն բարձր ա- զաղակեաց եւ ասէ, Օրհնեալ ես զու ի կանայս, եւ օրհնեալ է պառզ սրո-
 43 վայնի քո : Եւ յուսաք է ինձ այս, զի
 44 եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս : Ձի անաւատիկ իրբեւ եղեւ ձայն ողջունի քո յականջս իմ, խաղաց ցնծալով մա-
 45 նուկս յորովայնի իմում : Եւ երանի որ հաւատացէ եթէ եղիցի կատարումն
 46 ասացելոցս նմա ի Տեառնէ : Եւ ասէ Մարիամ, Մեծացու սցէ անձն իմ զՏէր-
 47 Եւ ցնծացաւ հոգի իմ յԱստուած Փրկիչ իմ : Ձի հայեցաւ ի խոնարհութիւն ա- զախնոյ իւրոյ . զի անա յայսմ հետէ
 49 երանեսցեն ինձ ամենայն ազգք : Ձի արար ինձ մեծամեծս Հոգոյն, եւ սուրբ
 50 է անունն նորա : Եւ ողորմութիւնն նու-

բա ազգաց յազգս երկիւղածաց իւրոց :
 51 Արար զօրութիւն բազկաւ իւրով, ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից
 52 իւրեանց : Բակեաց զ՛հօրս յաթոռոց,
 53 եւ բարձրացոյց զխոնարհն : Ջրազցեալս լցայ բարութեամբ, եւ զմեծատունս
 54 արձակեաց ունայնս : Պաշտպանեաց Իսրայելի ծառայի իւրում՝ յիշել զու
 55 զօրմութիւնս : Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Արրահամու եւ զաւակի
 56 նորա յաւիտեանս : Եկաջ Մարիամ առ նմա իրբեւ ամիսս երջեց, եւ զարձաւ ի տուն իւր :
 57 Եւ եղիսարեթի լցան ժամանակք
 58 ծնանելոյ, եւ ծնաւ որդի : Եւ լուան որ շուրջ զնովաւ էին եւ աղգատոհմ նորա, զի մեծ արար Տէր զողորմու- թիւն իւր ընդ նմա . եւ ինդային ընդ նմա :
 59 Եւ եղեւ յառուրն ութերորդի եկին թրիատել զմանուկն, եւ կոչէին զնա
 60 յանունն հօր իւրոյ Ջաբրիա : Պատաս- խանի ետ մայր նորա եւ ասէ, Ոչ,
 61 այլ կոչեսցի Յովհաննէս : Եւ ասեն ցնա, Բանդի ոչ ոք է յազգի քում, որոյ կոչի
 62 անունն Յովհաննէս : Ակնարկէին հօցն նորա թէ զի՛նչ կամիցի կոչել զնա :
 63 Եւ ինդրեաց տախտակ, գրեաց եւ ասէ, Յովհաննէս է անունն զորա . եւ զար-
 64 մացան ամենեքին : Եւ լացաւ բերան նորա վաղվազակի եւ լեզու նորա, եւ
 65 խօսէր եւ օրհնէր զԱստուած : Եւ եւ զեւ ան ի վերայ ամենեցուն որ լսէին զայս եւ որ շուրջ բնակեալն էին զնու- քօք . եւ ընդ ամենայն լեռնակողմնն Հրէաստանի սրտամէին ամենայն բանքս
 66 այսօրիկ : Եւ եղին ամենեքեան որ լսէին ի սիրտս իւրեանց, եւ ասէին, Ձի՛նչ լինիցի մանուկս այս . եւ ձեռն Տեառն էր ընդ նմա :
 67 Եւ Ջաբրիա հայր նորա լցաւ Հոգ- ւով Սրբով, մարգարէացաւ եւ ասէ,
 68 Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի, զի յայց ել մեզ, եւ արար փրկութիւն
 69 մազոթրդեան իւրում : Եւ յարոյց եզ- ջեւր փրկութեան մեզ ի տանէ Դաւթի
 70 ծառայի իւրոյ : Որպէս խօսեցաւ բե- լանով սրբոց սր յաւիտեանից մարգա-
 71 րէքն նորա էին . Փրկութիւն ի թըշ- նամեաց մերոց, եւ ի ձեռաց ամենայն
 72 ատերեաց մերոց . Ասնել ողորմութիւն ընդ հարս մեր, եւ յիշել զուխան իւր

73 սուրբ : Զերդունն զոր երդուաւ Աբ-
 74 րահամու հօր մերում՝ տալ մեզ, Ա-
 րանց երկիւզի, ի ձեռաց թշնամեաց
 75 մերոց փրկեալս, Պաշտկ զնա սրբու-
 թեամբ եւ արդարութեամբ առաջի նո-
 րա զամենայն աւուրս կենաց մերոց :
 76 Եւ դու, մանուկ, մարդարեւ Բարձրե-
 լոյ կոչեալիք : զի երթիցես առաջի ե-
 րեսաց Տեառն պատրաստել զճանա-
 77 պարնս նորա, Տայ զիտութիւն փրկու-
 թեան Ժողովրդեան նորա ի թողու-
 78 թիւն մեզաց նոցա : Վասն զթութեանց
 ողորմութեան Աստուծոյ մերոյ, որովք
 79 սց 2 արասցէ մեզ Արեղակն ի բարձանց,
 Երեւել որոց ի խաւարի եւ ի ստուերս
 մանու նստէին, ուղղել զոտս մեր ի
 ճանապարհս խաղաղութեան :
 80 Եւ մանուկն աճէր եւ զօրանայր
 հոգւով, եւ էր յանապատս մինչեւ յօր
 երեւելոյ նորա Իսրայելի :

ԳԼ Բ

1 Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ
 ել հրաման Աւագոստոս կայսերէ աշ-
 2 ղերս : Այս առաջին աշխարհագիր եւ
 զիւ ի գտաւորութեան Ասորոց կիւ-
 3 րենայ : Եւ երթային ամենեքեան
 մտանել յաշխարհագիր յարարանչիւր
 4 քաղաքի : Ել եւ Յովսէփ ի Գալիլէէ ի
 քաղաք Գաթի որ կոչի Բեթղեհեմ,
 վասն ինկելոյ նորա ի տանէ եւ յաղղէ
 5 Գաթի, Մտանել յաշխարհագիր Մա-
 րեմա հանդերձ զոր խօսեայն էր նմա,
 6 եւ էր յղի : Եւ եղև ի հասանին նոցա
 անդր, լցան աւուրք ծաննելոյ նորա :
 7 Եւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ, եւ
 պատեաց ի խանձարուրս եւ եղ զնա
 ի մուր : զի ոչ գոյր նոցա տեղի յի-
 8 ջեանին :
 8 Եւ հովիւք էին ի տեղուջն յայնմիկ
 բացթեալք, որք պահէին զպահպա-
 նութիւնս գիշերոյ հօտից իւրեանց :
 9 Եւ հրեշտակ Տեառն երեւեցաւ նոցա,
 եւ փառք Տեառն ծագեցին առ նոսա,
 10 եւ երկեան երկեւզ մեծ : Եւ ասէ զնո-
 սա հրեշտակն, Մի՛ երկնչիք, զի ա-
 հաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախու-

թիւն մեծ, որ եղիցի ամենայն Ժողո-
 11 վրդեանն : Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ,
 որ է Օծեալ Տէր, ի քաղաքի Գաթի :
 12 Եւ այս նշանակ ձեզ . զտանկեցք մա-
 նուկ պատեալ ի խանձարուրս եւ եղ-
 13 եալ ի մուր : Եւ յանկարծակի եղև
 ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմու-
 թիւն զօրաց երկնաւորաց, որ օրհնէին
 14 զԱստուած եւ ասէին, Փառք ի բար-
 ձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղա-
 15 զութիւնս, ի մարդիկ հաճութիւն : Եւ
 եղև իբրեւ վերացան ի նոցանէ հրեշ-
 տակքն յերկինս, ասն ցոյմեանս հո-
 վիւքն, եկայք երթիցուք մինչեւ ցեթ-
 զեհեմ, եւ տեսցուք զինչ է բանս այս
 16 որ եղև, զոր Տէր կցոյց մեզ : Եւ ե-
 կին փութանակի, եւ գտին զՄարիամ
 եւ զՅովսէփ եւ զմանուկն եղեալ ի
 17 մուր : Եւ ծանեան վասն բանին որ
 18 ասացաւ նոցա զմանկանէն . Եւ ամե-
 նեքին որ լսէին զարմնային վասն
 բանիցն զոր խօսեցան ընդ նոսա հո-
 19 վիւքն : Եւ Մարիամ զամենայն զբանս
 զայսոսիկ պահէր եւ խելամուտ լինէր
 20 ի սրտի իւրում : Եւ զարձան հովիւքն,
 փառաւոր առնէին եւ օրհնէին զԱս-
 տուած վասն ամենայնի զոր լուան եւ
 տեսին, որպէս պատմեցաւ նոցա :
 21 Եւ իբրեւ լցան աւուրք ութ թլփա-
 տել 3 զնա, եւ կոչեցաւ անուն նորա
 Յիսուս որ կոչեցեալ էր ի հրեշտակէն,
 մինչեւ յղաղեալ էր 4 զնա յորովայնի :
 22 Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան
 5 նոցա ըստ օրինացն Մովսիսի, աճին
 զնա յերուսաղէմ յանդիման առնել
 23 Տեառն, Որպէս եւ զրեալ է յօրէնս
 Տեառն, թէ Ամենայն արու որ բանայ
 24 զարդանգ՝ սուրբ Տեառն կոչեցի : Եւ
 տալ պատարագս ըստ ասացելոյն յօ-
 25 րէնս Տեառն, զոչս տատրակաց կամ
 երկուս ձազս աղաւնեաց : Եւ ահա էր
 սայր մի յերուսաղէմ, որոյ անուն էր
 Սիմէոն, եւ էր այրն այն արդար եւ
 երկիւզած, եւ ակն ունէր միսիթա-
 րութեանն Իսրայելի . եւ Հոգի Սուրբ
 26 էր ի նմա : Եւ էր նորա հրաման առ-
 եալ ի Հոգւոյն Սրբոյ մի՛ տեսանել
 զմահ, մինչեւ տեսցէ զՕծեալն Տեառն :
 27 Եւ եկն Հոգւովս ի տաճարն . եւ իբրեւ

1 Գ-ն, գլ-ու-թ 2 Գ-ն, արար 3 Գ-ն, զմանուկն 4 Գ-ն, նա 5 Գ-ն, նորա

ածին ծնողքն զմանուկն Յիսուս առնել նոցա ըստ սովորութեան օրինացն
 28 ի վերայ նորա, և նա առ ընկալաւ զնա ի զիրկս իւր, և օրհնեաց զԱստուած և ասէ, Արդ արձակես զճառայս քո, Տէր, ըստ բանի քում ի իստութիւնս քո, Չոր պատրաստեցեր առ
 32 ռաջի ամենայն ժողովրդոց : Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց, և փաստ
 33 ժողովրդեան քում Իսրայելի : Եւ էին ՚հայրն և և մայր նորա զարմացեալ ի
 34 վերայ բանիցն որ խօսէին զմաննէ : Եւ օրհնեաց զնոսա Սիմէոնն, և ասէ ցՄարիամ մայր նորա, Ահա սա կայ ի զորումն և և ի կանգնումն բազմաց ի մէջ Իսրայելի և և ի նշան հակառակութեան : Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր, զի յայտնեսցին ի բազում սրտից խորհուրդք :

36 Եւ անդ էր Աննա մարդարէ գուտար Փանուկի յազգէ Ասերայ : սա ինքն անցեալ էր զաւուրբ բազմօք կեցեալ ընդ առն ամս և և թն ի կուսութենէ իւրմէ : Եւ էր օյրի ամաց իրրեւ ութսուն և չորից, որ ոչ մեկնէր ի սաճարէն, այլ պահօք և և ազօթիւք պաշտէր զցայց և և զցերեկ : Եւ սա ի նմին ժամու յարուցեալ զոհանայր զՏեառնէ, և խօսէր զմաննէ ընդ ամենեան որ ակն ունէին շփրկութեանն Երուսաղեմի :

39 Եւ իրրեւ կատարեցին զամենայն ըստ օրինացն Տեառն, զարձան անդրէն ի Գալիլեա ի քաղաքն իւրեանց Նազարէթ : Եւ մանուկն աճէր և զօրանայր լի իմաստութեամբ, և շնորհք Աստուծոյ էին ի վերայ նորա :

41 Եւ ևրթային ծնողքն նորա ամի ամի յերուսաղէմ ի տօն զատկին : և և իրրեւ և ի ինքն նորա ամբ ևրկոսասան, յեյանել նոցա յերուսաղէմ ըստ սովորութեան տօնին, և և կատարել զաւուրսն և և զառնալ անդրէն, մնաց Յիսուս մանուկն յերուսաղէմ : և ոչ զիտացին
 44 ծնողքն նորա կարծէին զմաննէ թէ ընդ ուղեկիցսն իցէ, և կին իրրեւ աւուր միոյ ճանապարհ և և ինդրէին զնա ընդ զարացիսն և և ընդ ծանօթս : Եւ

իրրեւ ոչ զտին, զարձան անդրէն յերուսաղէմ ինդրել զնա : Եւ և կեւ յետ երից աւուրց զտին զնա ի տաճարին, զի նստէր ընդ վարդապետան, ընդ ի նոցանէ և և հարցանէր զնոսա : Չարմանային ամենեքեան սր ընդ ի նմանէ՝ ընդ իմաստութիւնն և և ընդ պատասխանիս նորա : Եւ իրրեւ տեսին զնա, սքանչացան : և և ասէ ցնա մայրն իւր, Որդեակ, զի՞նչ զորձ գործեցեր զու ընդ մեզ : ահաւասիկ հայր քո և և ետ առտապէաք, ինդրէաք զքեզ : Եւ ասէ ցնոսա, Չի՞ ինդրէիք զիս, ոչ զիտէիք եթէ ի տան չօր իմոյ պարտ
 50 է ինձ լինել : Եւ նորա ոչ իմացան զբանն զոր խօսեցաւ ընդ նոսա : Եւ էջ ընդ նոսա և և զնաց ի Նազարէթ, և և էր նոցա հնազանդ : և և մայր նորա պահէր զամենայն զբանսն ի սրտի իւրում :

52 Եւ Յիսուս զարդանայր իմաստութեամբ և և հասակաւ և և շնորհք յԱստուծոյ և և ի մարդկանէ :

ԳԼ Գ

1 Ի հնդեասաներորդի ամի տէրութեանն Տիրեբեայ կայսեր, ի դատաւորութեան Հրէաստանի Պիղատոսի Պոնտացւոյ, և և ի չորրորդպետութեան Գալիլեացւոց Հերովիի, և և Փիլիպպոսի եղբոր նորա չորրորդպետութեան Իտուրացւոց և և Տրաքոնացւոց աշխարհին, և և ի չորրորդպետութեան Լիւսանեայ Արիլեւացւոց, և և ի քահանայապետութեան Աննայի և և կայափառ, և կեւ բան Աստուծոյ ի վերայ Յովնանու որդւոյ Չաքարիայ յանտասի
 3 անդ : Եւ և կն յամենայն կողմն Յորդանանու քարոզել մկրտութիւնս ապաշխարութեան ի թողութիւն մեղաց
 4 Որպէս և և գրեալ է ի գիրս պատգամաց Եռայեայ մարգարէի, Չայն բարբառոյ յանապատի, Պատրաստ արարէք զճանապարհ Տեառն, և և ուղիղ արաւրէք զշաւիղս նորա : Ամենայն ձորք լցցին, և և ամենայն լերինք և և բլուրք խոնարհեսցին, և և կողցին զժուարինքն ի գիրքինս, և և ստասպարքն ի հարթ ճանապարհս : Եւ տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ :
 7 Եւ ասէր ցժողովուրդսն կեւալս մկրտ

1 Ուսու, Յովսէփ
 2 Եւսուս, փրկութեան Ներուսաղէմ
 3 Ուսու, Յովսէփ և և մայր

տեղ ի նմանէ, Ծնունդք ի ժից, ո՞ ցոյց
 8 է: Արարէք այսուհետեւ պտուղս ար-
 ժանիս ասպախարութեան. եւ մի՛
 սկսանիցիք Վասել եթէ Ունիմք հայր
 զԱրրահամ. զայս ասեմ ձեզ, եթէ կա-
 9 յարուցանել որդիս Արրահամու: Բայց
 ահաւաստիկ տապար առ արմին ծառոց
 կայ. ամենայն ծառ որ ոչ առնէ զպը-
 տուղ բարւոք՝ հատանի եւ ի հուր ար-
 10 կանի: Հարցանէին զնա ժողովուրդքն
 եւ ասէին, Իսկ արդ զի՞նչ գործես-
 11 ցուք: Պատասխանի ետ եւ ասէ ցնո-
 սա, Ոյր իցեն երկու հանդերձք՝ տացէ
 զմին այնմ ոյր ոչն գուցէ. եւ ոյր կայ-
 12 ցէ կերակուր՝ նոյնպէս արասցէ: Եկին
 եւ մարտաւորք մկրտել, եւ ասեն ցնա,
 13 Վարդապետ, զի՞նչ գործեսցուք: Եւ
 նա ասէ ցնոսա, Մի՛ ինչ աւելի քան
 14 զհրամայեալն ձեզ առնիցէք: Հարցա-
 նէին զնա եւ զինուորքն եւ ասէին,
 եւ մեք զի՞նչ գործեսցուք. ասէ ցնո-
 սա, Մի՛ զոք խուիցէք եւ մի՛ զոք
 զարարտիցէք, շատ լիցին ձեզ թոշակքն
 15 ձեր: Մինչ ակն ունէր ժողովուրդն եւ
 խորհէին ամենեքեան ի սիրտս իւրեանց
 վասն Յովհաննու, Միթէ սա՞ իցէ Քրիս-
 16 տոսն, Պատասխանի՞ ետ ամենեկուն
 եւ ասէ, Ես մկրտեմ զձեզ ջրով, բայց
 զայ զօրազոյն քան զիս, զորոյ չեմ բա-
 17 ւական բառնալ զիջիկս, նա մկրտես-
 18 ՚նէ զձեզ Հոգւով Սրբով եւ հրով, Որոյ
 հեծանոցն ի ձեռին իւրում սրբել զկալ
 իւր, եւ ժողովել զցորեանն ի չաւեմա-
 19 րանս իւր, եւ զյարդն այրեսցէ անշէջ
 20 հրով: Բողոսմ եւ այլ ինչ միսիթարու-
 թեամբ աւետարանէր ժողովրդեանն:
 21 Բայց Հերովդէս չորրորդապետ յան-
 զիմանեալ ի նմանէ վասն Հերովդիայ,
 22 ՚կնոջ եղբօր իւրոյ, եւ վասն ամենայն
 չարեացն զոր գործեաց Հերովդէս,
 23 Յաւել եւ զայն եւս ի վերայ ամենայնի,
 եւ եզ ի բանտի զՅովհաննէս:
 24 Եւ եղև ի մկրտել ամենայն ժողո-
 վրդեանն եւ ընդ Յիսուսի մկրտելն
 25 եւ կալ յազօթս, բանալ երկնից, եւ

իջանել Հոգւոյն Սրբոյ մարմնաւոր
 տեսեամբ իրրեւ զազանի ի վերայ նո-
 26 րա. եւ դալ ձայն յերկնից որ ասէր,
 27 Դու ես Որդի իմ սիրելի, ընդ քեզ
 հաճեցայ:
 28 Եւ ինքն Յիսուս էր ամաց իրրեւ
 երեսնից սկսեալ, ²որոց որպէս եւ կար-
 29 ձէր, որդի Յովսեփայ, ³որ Յակով-
 բայն, ⁴որ Հեղեայն, որ Մատթեայն,
 30 Որ Ղեւեայն, որ Մեղքեայն, որ Յան-
 31 նեայն, որ Յովսեփայն, Որ Մատթեայն,
 որ Ամովսայն, որ Նաւուամայն, որ Ես-
 32 ղեայն, որ Նանգեայն, Որ Մահաթեայն,
 որ Մատաթեայն, որ Սեմեայն, որ
 33 Յովսեքեայն, որ Յովդայն, Որ Յով-
 նանայն, որ Բեսայն, որ Զօրաբարե-
 34 լին, որ Մաղաթիելին, որ Ներայն, Որ
 Մեղքեայն, որ Ազղեայն, որ Կովա-
 35 մայն, որ Ելմովդադայն, որ Երայն,
 36 Որ Յեսուայն, որ Եղիազարայն, որ
 Յովրամայն, որ Մատթայն, որ Ղեւ-
 37 եայն, Որ Սիմէոնիսին, որ Յուդային,
 որ Յովսեփայն, որ Յովնամայն, որ
 38 Եղիակիմայն, Որ Մեղթեայն, որ Մեն-
 նայն, որ Մատաթեայն, որ Նաթա-
 39 նայն, որ Դաւթին, Որ Յեսեայն, որ
 Ովրեդայն, որ Բսոսայն, որ Սաղմով-
 40 նայն, որ Նաասովին, Որ Ամինադա-
 բայն, որ Արամայն, ⁷որ Աբմեայն, որ
 Անեայն, ⁸որ Եսրովմայն, որ Փարե-
 41 սին, որ Յուդային, Որ Յակովբայն,
 որ Իսահակայն, որ Արրահամուն, որ
 42 Թարային, որ Նաքովբայն, որ Սե-
 43 րուպայն, որ Ռադաւայն, որ Փաղե-
 44 կայն, որ Երեբայն, որ Սաղային, Որ
 45 Կայնանայն, որ Արիարսապայն, որ
 46 Սեմայն, որ Նոյին, որ Ղամբայն, Որ
 Մաթուսազային, որ Ննովբայն, որ
 47 Յարեյին, որ Մաղաղիելին, որ Կայ-
 48 նանայն, Որ Ննովսայն, որ Սեթայն,
 որ Ազամայն, որ Աստուծոյն:

ԳԼ Գ

4 Եւ Յիսուս լի Հոգւով Սրբով զարձաւ
 ի Յորդանանէ, եւ վարէր Հոգւովն յա-
 5 նապատ, Աւուրս քառասուն փորձեալ
 ի Սատանայէ. եւ ոչ եկեր եւ ոչ արբ
 յաւուրան յայնտիկ. եւ ի կատարելն
 նոցա քաղցեաւ:

¹ Յոնն, ասել յանձինս
² ի Յովսեփ, ետ Յովհաննէս
³ Ունիմ, որդիս եւ Դամաս է Հայ. որմիտայ, կնոջ
 Փիլիպպոսի:

⁴ Յոնն, և էր,
⁵ ի Յովսեփ պատե
⁶ Ունիմ, Յովսեփայն
⁷ ի Բաղաւաթ պատե

3 Եւ ասէ ցնա Սատանայ, Եթէ Որդի ես Աստուծոյ, ասա քարիդ այգմիկ զի
 4 հաց լիցի: Պատասխանի ես նմա Յիսուս եւ ասէ, Գրեալ է եթէ Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ Աստուծոյ:
 5 Եւ հանեալ ՚դնա ի լեառն մի բարձր՝ եցոյց նմա դամենայն թաղաւորութիւնս աշխարհի ի վայրկեան ժամանակի: Եւ ասէ ցնա Սատանայ, Բեց տաց զայս ամենայն իշխանութիւն եւ զփառս սոցա, զի ինձ տուեալ է, եւ ում կամիմ՝ տամ զսա: Արդ զու եթէ անկեալ երկիր պագանիցես առաջի իմ, զքեզ եղիցի ամենայն: Պատասխանի ես նմա Յիսուս եւ ասէ, Գրեալ է, Երկիր պաղղես Տեսնս Աստուծոյ քում, եւ զնա միայն պաշտեսցես:
 9 Եւ աճ զնա յԵրուսաղէմ, եւ կացոյց ի վերայ աշտարակի տաճարին, եւ ասէ ցնա, Եթէ Որդի ես Աստուծոյ, արկ
 10 զքեզ աստի ի վայր: Զի զրեալ է եթէ Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո պահել զքեզ: Զի ի վերայ ձեռաց բարձցին զքեզ, մի երբեք հար-
 12 գես զբարի զոսն քո: Պատասխանի ես նմա Յիսուս եւ ասէ, Ասացեալ է թէ Ոչ փորձեսցես զՏէր Աստուած քո:
 13 Եւ կատարեալ զամենայն փորձութիւնս Սատանայի՝ ի բաց եկաց ի նմանէ առ ժամանակ մի:
 14 ԲԿ. Եւ զարձաւ Յիսուս զօրութեամբ Հոգւոյն ի Գալիլեա: Եւ ել համբաւ զմանէ ընդ ամենայն կող-
 15 մանս գաւառին: Եւ նա ուսուցանէր ի ժողովուրդս նոցա փառաւորեալ յամենեցունց:
 16 Եւ եկն ի Նազարէթ ուր սնեալն էր. եւ եմուտ ըստ սովորութեան իւրում
 17 յաւուր չաբաթու: 3ի ժողովուրդն: Եւ ետուն նմա զիրս զԵսայեայ մարգարէի. եւ յարեաւ ընթեռնուլ, եւ իրրեւ կէաց զգիրսն,՝ եգիտ զայն տեղի յու-
 18 բում զրեալն էր, Հոգի Տեսնս ի վերայ իմ, վասն որոյ եւ օժ իսկ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս,
 19 բժշկել զբեկեալս սրտիւ, Բարոզել զեր-

եաց զթողութիւնս եւ կուրաց տեսանել, արձակել զվիրաւորս ի թողութիւնս, քարոզել զտարեկան Տեսնս ընդ
 20 գունակի: Եւ խօնեալ զգիրսն՝ ետ ցաղաւորսնեայն, եւ նստաւ. եւ ամենեցունս որ ի ժողովրդեանն էին աչք ի նա հա-
 21 յէին: Եւ սկսաւ ասել ցնոսա, Այսօր
 22 լցան զիրքս այս յականջս ձեր: Եւ ամենեքին վկայէին նմա, եւ զարմա-
 23 նային ընդ բանս շնորհացն որ երանէին ի բերանոյ նորա, եւ ասէին, Ո՞չ սա է որդին Յովսեփայ: Եւ ասէ ցնոսա, Ապարէն ասիցէք առ իս զտաակս զայս, Ի՞ժիշկ, բժշկեա զանձն քո: որչափ լուաք զոր արարեր ի կախատնայում՝
 24 արա եւ աստ ի քում գաւառի: Եւ ասէ, Ամէն ասեմ ձեզ թէ Չէ մարդարէ ըն-
 25 դունելի ի քաղաքի իւրում: Արդարեւ ասեմ ձեզ, զի բացում այրիք էին յաւուրս Եզրայի ի մէջ Խորայելի, յորժամ փակեցանն երկինք զերիս ամս եւ զվեց ամիս, եւ եղեւ սով մեծ ընդ ամենայն
 26 երկիր: Եւ ոչ առ մի ի նոցանէ առաքեցաւ Եզրա, բայց միայն ի Սարեփթա
 27 Սիդոնացացոց առ կին մի այրի: Եւ բազում բորոտք էին յիսրայելի առ Եզրայիւ մարդարէի: Եւ ոչ ոք ի նոցանէ սրբեցաւ, բայց միայն Նէեման
 28 Ասորի: Եւ լցան ամենեքին բարկութեամբ ի ժողովրդեանն, իբրեւ լսէին
 29 զայս: Եւ յարուցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին, եւ ածին զնա մինչեւ յարտեան լերինն յորոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր՝ յահայէժ ստնել զնա:
 30 Եւ նա անդեալ ընդ մէջ նոցա՝ հնայր:
 31 ԲԲ. Եւ էջ ի կախատնայում ի քաղաքն Գալիլեացոց, եւ ուսուցանէր
 32 զնոսա ի շարաթմնս: Եւ զարմանային ընդ վարդապետութիւնս նորա, զի իշխ-
 33 յանութեամբ էր բան նորա: Եւ էք ի ժողովրդեանն այր մի զոր ունէր այս զիւր պղծոյ, եւ աղաղակեաց ի ձայն
 34 մեծ, Ասէ, Թուլացոյ, զի կայ մեր եւ. քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. զիսեմք զքեզ սով ես,
 35 Սուրբ Աստուծոյ, Սաստեոց ի նա Յիսուս եւ ասէ, Պապանձեաց եւ էլ ի գմանէ. զպետնեաց զնա զեւն ի միջի անդ եւ ել ի նմանէ, եւ ոչինչ փաստ-
 36 եաց նմա: Եւ եղեն զարմանալիք ի վերայ ամենեցունս, իստէին ընդ միմեանս եւ ասէին, Զի՞նչ է բանս այս,

1 Ո՞չ, զնա Սատանայ
 2 Ո՞չ, ասէ, Եթէ յետս իմ, Սատանայ, զի
 3 Յիսուս, ի ժողովուրդն, եւ յարեաւ ընթեռնուլ.
 (17) Եւ ետուն նմա զիրս զԵսայեայ մարգարէի, եւ երբեւ երաց

զի իշխանութեամբ եւ զօրութեամբ
 37 սաստէ այսոց պղծոց, եւ երանեն: Եւ
 երթալը հռչակ զնմանէ ընդ ամենայն
 տեղիս շուրջ զգաւառաւն:
 38 Եւ յարուցեալ ի ժողովրդենէ անտի
 39 եմուտ ի տուն Սիմովի: Զորանչ Սի-
 մովի տաղնապէր ջերմամբ մեծաւ:
 40 Եւ աղաչեցին զնա վասն նորա: Եկաց
 առ նմա, սաստեաց ջերմանն, եւ եւ-
 թող զնա. եւ վաղվազակի յարեաւ եւ
 պաշտէր զնոսս:
 41 Եւ ընդ արեւուն մտանել, ամենե-
 քին որոց էին հիւանդք ի պէսպէս
 ցաւս բերէին զնոսս առ նա. եւ նա
 իւրաքանչիւր ումեք ի նոցանէ գնէր
 42 ձեռս եւ բժշկէր զնոսս: Երանէին եւ
 զեւք ի բաղմաց, աղալակէին եւ ա-
 սէին եթէ Դու ես Որդի Աստուծոյ. եւ
 նա սաստէր եւ ոչ տայր նոցա թոյլ խօ-
 սել, զի գիտէին զնա թէ Քրիստոսն է:
 43 ԲԳ. Եւ իբրեւ տիւ եղև, ել զնաց
 յանապատ տեղի, եւ ժողովուրդքն
 խնդրէին զնա. եկին մինչեւ առ նա
 եւ արգելուին զնա, զի մի՛ գնացէ ի
 44 նոցանէ: Եւ նա ասէ զնոսս, Եւ այլոց
 քաղաքաց պարտ է ինձ աւետարանել
 զարքայութիւնն Աստուծոյ, զի յայն
 45 իսկ առաքեցայ: Եւ քարոզէր ի ժողո-
 վուրդսն Գալիլեացոց:

ԳԼ. Ե

1 Եւ եղև ի խոնել զնովաւ ժողովր-
 դեանն եւ լսել զբանն Աստուծոյ, եւ
 ինքն կայր առ ծովակին Գեննեսարե-
 2 թայ: Եւ ետես երկուս նաւս զի կային
 առ ծովակին, եւ ձկնորսքն ելեալ ի
 3 նոցանէ՝ լուանային զգործիսն: Ել նա
 ի մի նաւուցն որ էր Սիմովի, եւ ա-
 զաչեաց զնա սակաւիկ մի տանել ի
 ներքս ի ցամաքէն. նստաւ եւ ուսու-
 ցանէր ի նաւէ անտի զժողովուրդսն:
 4 Եւ իբրեւ լուաց ի խօսիցն, ասէ
 ցՍիմով, Խաղաղո ի խորն, եւ արկէք
 5 զգործիս ձեր յորս: Պատասխանի եւ
 Սիմով եւ ասէ զնա, Վարդապետ,
 զամենայն զիչերս աշխատ եղևաք եւ
 ոչինչ կարաք. բայց վասն զո բանիդ
 6 արկցուք զգործիս: Զայս իբրեւ արա-
 շին, փակեցին ի ներքս բաղմութիւն
 ձկանց յոյժ, մինչեւ պարպատէին ուռ-
 7 կանք նոցա: Եւ ակնարկէին որսակ-

ցացն ի մեւս նաւն՝ զալ օղնել նոցա.
 եւ եկին, եւ լցան երկօքին նաւքն
 8 մինչեւ մերձ յընկղմել նոցա: Իբրեւ
 ետես Սիմովն Պետրոս, անկաւ առ
 ծուռկան Յիսուսի եւ ասէ, Ի բաց զնա
 յինէն, Տէր, զի այր մեղաւոր եմ ես:
 9 Քանզի ա՛ն պատեաց զնա եւ դամե-
 նեսեան որ ընդ նմայն էին՝ վասն որ-
 10 սոյ ձկանցն զոր բմբռնեցին, Նոյնպէս
 եւ զՅակովրոս եւ զՅովնաննէս զոր-
 դիսն Զերեղեայ, որ էին որսակիցք
 Սիմովի. եւ ասէ ցՍիմովն Յիսուս,
 Մի՛ երկնչիր, յայսմ հետէ զմարդիկ որ-
 11 սայցես ի կեանս: Եւ հանեալ զնաւն
 ի ցամաք թողին զամենայն եւ զնացին
 զհետ նորա:
 12 ԲԴ. Եւ եղև ի հասանելն նորա ի
 մի ի քաղաքացն, ահա այր մի լի բո-
 րոտութեամբ իբրեւ ետես զՅիսուս,
 անկեալ ի վերայ երեսոց ազաչեաց զնա
 եւ ասէ, Տէր, եթէ կամիս, կարող ես
 13 զիս սրբել: Զգեաց զձեւն իւր, հասոց
 ի նա եւ ասէ, Կամիմ, սրբեաց. եւ
 վաղվազակի զնաց ի նմանէ բորոտու-
 14 թիւն: Եւ նա պատուիրեաց նմա մի՛
 ումեք ասել, այլ թէ երթ ցոյց զանձն
 զո քահանային, եւ մատո պատարագ
 վասն սրբութեան զո, որպէս եւ հրա-
 մայեաց Մովսէս ի վկայութիւն նոցա:
 15 Եւ յորդէր առաւել բանն զնմանէ. եւ
 ժողովէին ժողովուրդք բազումք լսել
 եւ բժշկել ի հիւանդութենէ իւրեանց:
 16 Եւ նա խոյո տայր յանապատ տեղիս
 եւ կայր յալօթս:
 17 ԲԵ. Եւ եղև ի միում աւուրց եւ
 ինքն ուսուցանէր, եւ փարիսեցիքն
 եւ օրինացն վարդապետք նստէին, որ
 ժողովեալ էին յամենայն քաղաքաց
 Գալիլեացոց եւ Հրէատանի եւ Ն-
 րուսաղեմի. եւ զօրութիւն Տեառն էր
 18 ի բժշկել զնոսս: Եւ ահա արք բերէին
 մահճօք զայր մի որ էր անգամալոյժ,
 եւ խնդրէին զնա մուծանել ի ներքս
 19 եւ գնել սոաջի նորա: Եւ իբրեւ ոչ
 գտանէին թէ ընդ որ մուծանիցեն զնա
 ի ներքս վասն ամբոխին, ելին ի սա-
 նիս եւ ի ցուոցն կախեցին զնա, եւ
 ի ծուցին մահճօքն հանդերձ ի մէջ ա-
 20 սաջի Յիսուսի: Եւ տեսալ զնաւատան
 նոցա՝ ասէ զնա, Այր դու, թողեալ
 21 լիցին քեզ մեղք զո: Սկսան խորհել
 զպիրքն եւ փարիսեցիք, եւ ասեն,

Ո՛ր է սա որ խօսի զհայհոյութիւնս , ո՞վ կարէ թողուլ զմեզս բայց միայն Աս-
 22 տուած : Իրրեւ զիտաց Յիսուս զխորհուրդսն նոցա , պատասխանի եւ եւ ասէ ցնոսա , Չի՛ խորհիք ի սիրաս ձեր :
 23 Չի՛նչ զիրարպոյն է , ասել թողեալ լիցին թեզ մե՞զք քո , եթէ ասել , Արի եւ
 24 զնա : Այլ զի զիտասլիք եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեզս , (ասէ ցանգամարդն ,) Գեղ ասեմ , Արի , աւ զմանի՞նս քո եւ
 25 երթ ի տուն քո : Եւ ասժամայն յարուցեալ ասալի ամենեցուն , առ զիւրեւ յորոյ վերայ անկեալն զնէր , զնաց ի տուն իւր , եւ փառաւ որ ասնէր զԱս-
 26 տուած : Չարմանք կալան զամենեւին , եւ փառաւ որ ասնէին զԱստուած . լի եղին անիւ , եւ ասեն եթէ Տեսաք այսօր նոր նշան :

27 ԲՁ . Եւ յետ այնորիկ ել անտի եւ ետես մաքսաւոր մի որում անուն էր Ղուի , զի նստէր ի մաքսաւորութեան .
 28 եւ ասէ ցնա , եկ զինի իմ : Եւ թողեալ զամենայն՝ յարեաւ զնաց զինի նստաւ : Եւ արար ընդունելութիւն մեծ նմա Ղուի ի տան իւրում . եւ էր ժողովուրդ բազում մաքսաւորաց եւ այլոց որ էին բազմեալ ընդ նոսա : Եւ արանջէին փարիսեցիքն եւ զպիրքն նոցա՝ զնմանէ առ աշակերտսն նորա եւ ասէին , Ընդէ՞ր ընդ մաքսաւորս եւ ընդ մեզաւորս ուաէք եւ բմեկք :
 31 Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնուայ , Ոչինչ են պիտոյ բժիշկը սղջոյ ,
 32 այլ՝ հրեանդաց : Ոչ եկի կոչել զարդարս , այլ՝ զմեղաւորս յատաշխարսութիւն :

33 Եւ նորա ասեն ցնա , Ընդէ՞ր աշակերտքն Յովնանու պահեն սուկս եւ խնդրուածս ասնեն , նոյնպէս եւ փարիսեցոցն , եւ քոյրք ուտեն եւ բմեկս :
 34 պեն : Եւ նա ասէ ցնոսա , Միեթէ կասող էր մանկանց առաջատար , մինչ փեսայն ընդ նոսա իցէ , հրաման տալ պահել : Եկեացնն աւուրք յորժամ բարձրի ի նոցանէ փեսայն , ապա պահեացնն
 36 յաւուրան յայնոսիկ : Ասաց եւ ատակ մի առ նոսա թէ Ոչ ոք արկանէ ի նոր հանդերձէ ի վերայ հնացեալ ձորձոյ . ապա թէ ոչ՝ եւ զնորն պատասէ , եւ

ընդ հնոցն չմիաբանի կապերան որ ի
 37 նորոցն : Եւ ոչ ոք արկանէ զինի նոր ի տիկս հինս . ապա թէ ոչ՝ պայթուցանէ զինին նոր զտիկոսն հինս , ինքն
 38 հեղու եւ տիկքն կորնչին : Այլ զինի նոր ի տիկս նորս արկանելի է , եւ եր-
 39 կոքին պահին : Եւ ոչ ոք բմեկ զհինն՝ ²եւ կամիցի զնորն , քանզի ասէ թէ Հինն քաղցրագոյն է :

ԳԼ Զ

1 ԲԵ . Եւ եղև ի շարաթու Յերկրորդում առաջնոյն՝ անյանելումս ընդ արտորպան , եւ աշակերտքն նորա կորդէին նասկ , շիկին ընդ տի եւ ուաէին :
 2 Եւ ոմանք ի փարիսեցոցն ասեն ցնուսա , Չի՛նչ գործէք զոր չէ օրէն ի շարաթու : Պատասխանի եւ նոցա Յիսուս եւ ասէ , Չից՞ ընթերցեալ ձեր զոր արարն Դաւիթ , յորժամ քաղցեաւն ինքն եւ որ ընդ նմոցն էին :
 4 Չիա՞րդ եմուսնա ի տունն Աստուծոյ , եւ զնացն զատաջաւորութեան եկեր եւ ետ այնոցիկ որ ընդ նմայն էին . զոր ոչ էք օրէն ումեք ուտել , բայց
 5 միայն զքանապարտիցն : Եւ ասէ ցնոսա , Տէր է Որդի մարդոյ եւ շարաթու :
 6 Եւ եղև ի միւսում շարաթուն մտանել նմա ի ժողովուրդն եւ ուսուցանել . եւ էր անոց այբ մի եւ ձեռն
 7 իւր աջ զօսացեալ էր : Եւ սպասէին նմա զպիրքն եւ փարիսեցիք թէ ի շարաթուն բժշկիցէ՞ , զի զտանիցն շարաթուսութիւնս ցնմանէ : Եւ նա զիտէր զխորհուրդս նոցա . ասէ ցարն սրոյ ձեռնն զօսացեալ էր , Արի , անց ի մէջ .
 9 եւ նա յարտցեալ եկաց : Ասէ ցնոսա Յիսուս , Հարցից ինչ դձեկ , Չի՛նչ արժան է ի շարաթու , բարբ՝ ինչ ասնել եթէ շար գործել , սգի մի ապրեցու
 10 ցանել թէ կորուսանել : Եւ հայեցեալ շուրջ զամենեւորս միք՝ զարպին՝ ասէ ցնա , Չկեա զձեռն քո . եւ նա ձգեաց , եւ հաստատեցաւ ձեռն նորա Յիրրեւ
 11 զմեւսն : Եւ որս ցոսն յիմարութեամբ ,

²Ուաէ , եւ վաղձաղակի
³Յովնա պատմիչ
⁴Յովն , քանապարտիցն . Եւ Մատթ . ԺԲ . 4 , Մարկ . Բ . 26
⁵Ի բաւարար պատմիչ

1 ի Յովնի պատմիչ

և Խօսէին ընդ միմեանս թէ զինչ առնիցեն Յիսուսի :

42 ԳԿ. Եւ եղև ընդ առուբուն ընդ այնոսիկ ել ի լեան կալ յազօթս, և հանէր զվիշերն ի զլուս յազօթսն Աստուծոյ : Եւ իբրև այդ եղև, կոչեաց զաշակերտսն իւր, և ընտրեաց ի նոցանէ երկուսսանս, զորս և ասաք :

43 Եւ իբրև ասաք : ԶՍիմօն զոր և Դեորոսն անուանեաց, և զԱնդրէաս զեղրայր նորին, և զՅակովբոս, և զՅովնանէս, և զՓիլիպպոս, և զԲարթոլոմէոս, և զՄատթէոս, և զԹոմաս, և զՅակովբոս Արիւայ, և զՍիմօն զկոչեցեալն Նախանձայոց, և զՅուդա Յակովբայ, և զՅուդա Իսկարիօթացի, որ եղև իսկ մասնիչ :

44 Եւ ի թէպ նորօք հանդերձ ի տելի մի տափարակ, և Ժողով աշակերտացն նորս և բարձու թիւն յոյժ ժողովրդեանն յամենայն Հրատանէ, և յերուսաղեմէ : 1 Եւ յայնմ կողմանէ, և ի ծովեզերէն Տիւրոսի և Սիդօնի :

45 Որ եկին թել ի նմանէ և բժշկել ի հիւանդութենէ իւրեանց . և նեղեալքն

46 յայտոց պզոց բժշկէին : Եւ ամենայն ժողովուրդն ինդրէր մերձեալ ի նա, զի զօրութիւն 2 քաղութեանէր ի նմանէ և բժշկել զամենևին :

47 Եւ նա ամբարձ զաջս իւր յաշակերտսն իւր և ասէ, Երանի ազգատաց 3 Նուլով, զի ձեր է արքայու

48 Թիւնն Աստուծոյ : Երանի որ քաղցեալ 4 կն այժմ, զի յաղեսցին : Երանի որ է ձեր յորժամ ատիցեն զձեզ մարդիկ, և յորժամ որոշիցեն զձեզ և նախատիցեն, և հանիցեն անուն չար զձեռն զ

49 Վանն Որգու մարդք : Ուրախ լի ծիք յառուր յայնմիկ և զնձամբիք, զի անա վարձք ձեր բազում են յերկինս . բոտ զմին օրինակի անէին մարդարեւիցն

50 Հարք իւրեանց . Բայց վա՛յ ձեզ մեծասանց, զի ընկալայք զմիսխարու

51 Թիւն ձեր : Վա՛յ ձեզ որ յաղեալ էք այժմ, զի քաղցիցէք : Վա՛յ ձեզ որ ծիծաղիք այժմ, զի սղայցէք, և լայցէք :

26 Վա՛յ ձեզ յորժամ բարի ատիցեն զձեռն 5 ամենայն մարդիկ, զի այդպէս առնէին սուտ մարգարէիցն հարք նոցա :

27 Այլ ձեզ ասեմ որ բէք, Սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ասե

28 լեաց ձերոց : Սրհնեցէք զանիծիւս ձեր, ազօթս արարէք ի վերայ նեղչաց ձերոց :

29 Որ հարկանէ զձեռս քո, մատո նմա և զմեան . և որ հանէ ի քէն զբաճկան քո, մի՛ արգելուր ի նմանէ

30 և 6 զչապիկս : Ամենայնի որ ինդրէ ի քէն՝ տուր, և զոր ինչ հանէ ոք ի քէն՝

31 մի՛ պահանջեր : Եւ որպէս կամիք թէ արատցեն ձեզ մարդիկ, այնպէս արատ

32 ջիք և զուք նոցա : Եւ եթէ սիրէք զուք զսիրելիս ձեր, զինչ չնոր է ձեր, զի և մեղաւորք սիրեն զսիրելիս

33 իւրեանց : Եւ եթէ բարի անէք բարեբարաց ձերոց, ո՞ր չնոր է ձեր, զի

34 և մեղաւորք դնոյն զործեն : Եւ եթէ տայք փոխ այնոցիկ յորոց ակն ունիցիք անուղ, ո՞ր չնոր է ձեր, քանզի և մեղաւորք մեղաւորաց փոխ տան,

35 զի ասցեն անդրէն զկշիտն : Բայց սիրեցէք զթշնամիս ձեր, և բարի արարէք 7 ատեկեաց ձերոց : Եւ տուք փոխ՝ ոտախ ոչ ակն ունիցիք անուղ . և եղիցին վարձք ձեր բազում, և եղիցի որդիք 8 անարձեղք : զի նա քայցր է ի վերայ չարաց և ապաշնորհաց :

36 Եղերուք զթամք, որպէս և Հայրն

37 ձեր զթամ է : Մի՛ գատիք և ոչ զատիցիք . մի՛ պատմէք և ոչ պատմիցիք,

38 արձակեցէք և արձակիցիք : Տուք և տացի ձեզ . չափ բարուք, թաթաղուն, չարժուն, զեպուն տացին ի զոդս ձեր . նովին չափով որով չափէք՝ չափեսցի ձեզ :

39 Ասաց և առակ մի առ նոսա, Միթէ կարիցէ՞ կուր կուրի ատաջնորդել, ո՞չ ապաքէն երկուքին ի խորխորատ անկանիցին : Ոչ է աշակերտ լաւ քան զխարցապետ իւր . ամենայն կատարեալն եղիցի իբրև զվարդապետ իւր :

40 Զի՞ տեսանես զչիզ յական եղբոր քո, և ի քում ական զպերանդ ոչ նշմա

41 րես : Կամ զխարդ կարես ասել զեղբայր քո, եղբայր, թող հանից զիղդ յականէ քումմէ, և զու ի քում ական զպերանդ ոչ տեսանես . կեղծաւոր,

1 Ի Բազում գլխու
 2 Ի Յովնան գլխու
 3 Բազում, իցէք այժմ, զի յաղեսցիք, որպէս և օրինակ է Հարիւրի
 4 Գնան, լայք այժմ, զի ծիծաղեսցիք

5 Գնան գլխու
 6 Գնան, զչապիկ քո

հան նախ զգերանդ յահանէ քուռմէ ,
 43 եղբոր քո : Զի ոչ է ծառ բարի որ առ-
 նէ պտուղ չար , եւ ոչ գարձեայ ծառ
 44 չար՝ որ առնէ պտուղ բարի : Զի իւ-
 րաբանչիւր ծառ ի պտուղ իւրմէ ճանա-
 չի . զի ոչ եթէ ի փշոց քարին թուզ ,
 45 եւ ոչ ի մորենւոյ կթեն իազուզ : Մարդ
 բարի ի բարի դանձուց սրտի իւրոյ
 բղխէ զբարի , եւ մարդ չար ¹ի չարէն
 բղխէ զչար . քանզի ի յաւելուածոյ սրբ-
 46 տին յօսի բերան նորա : Զի՞ կոչէք
 զիս Տէր , Տէր , եւ զոր ասեմն ոչ աւ-
 47 նէք : Ամենայն որ զայ առ իս , եւ լսէ
 զբանս իմ եւ առնէ գնոսա , ցուցից ձեզ
 48 ում նման է : Նման է ասն որ շինիցէ
 տուն , որ փորեաց եւ խորեաց , եւ եղ
 հիմն ի վերայ վիմի . ի յառնել ձեզեզաց
 բաղխեաց զետ գտունն , եւ ոչ կարաց
 չարմել գնա . զի նառտատեալ էր հիմնն
 49 ի վերայ վիմի : Իսկ որ լսէ զբանս իմ
 եւ ոչ առնէ , նման է ասն , որ շինիցէ
 տուն ի վերայ հողոյ առանց հիման .
 զոր բաղխեաց զետ , եւ վազվազակի
 անկաւ , եւ եղեւ կործանումն տանն
 այնորիկ մեծ :

ԳԼ Է

1 **ԳՔ.** Եւ իբրեւ կատարեաց զամե-
 նայն բանս իւր ի յսելիս ժողովրդեանն ,
 2 եմօւտ ի կափարանայում : Հարիւրապե-
 տի ուրումն ծառայ չարաչար հիւան-
 զացեալ՝ մերձ էր ի վախճանել , որ էր
 3 նմա պատուակիսն : Իբրեւ լուաւ զՅի-
 սուսէ , առաքեաց զծերսն ի Հրէից ,
 ազաչել գնա զի եկեացէ ապրկեցուցէ
 4 զծառայն նորա : Եւ նորք եկեալ առ
 Յիսուս՝ ազաչելին գնա ստէպ եւ ասէին
 թէ Արժանի է որում զչնորճս զայս
 5 առնես : Զի սիրէ զազգս մեր , եւ զծո-
 6 ղովրդանոցն նա շինեաց մեզ : Եւ Յի-
 սուս գնաց ընդ նոսա . իբրեւ ոչինչ
 կարի ձեռի էր ի ասնէն , յիկաց առ նա
 հարիւրապեան բարեկամս , եւ ասէ
 7 ցնա , Տէր , մի՛ ինչ աչխատ լինիր , զի
 չեմ բաւակիան եթէ ընդ յարկաւ . իմով
 7 մտանիդես . Վասն որոյ եւ ոչ զանձն
 համարեցայ արժանի առ քեզ զայոյ .
 այլ ասա բանիւ , եւ բժշկեցի մանուկս

8 իմ : Քանզի եւ ես այր մի եմ կարգեալ
 ընդ իշխանութեամբ . ունիմ ընդ ինեւ
 զինուորս , եւ ասեմ ամա , Երթ , եւ
 երթայ . եւ այլում թէ Եկ , եւ գայ .
 եւ ծառայի իմում թէ Արա գայս , եւ
 9 առնէ : Եւ իբրեւ լուաւ զայս Յիսուս ,
 զարմացաւ , զարձաւ առ ժողովուրդն
 որ երթային զհետ նորա եւ ասէ ,
 10 ²Ամէն ասեմ ձեզ թէ եւ ոչ յիսրայելի
 այսչափ հաւատա գտի : Եւ զարձան
 անդրէն պատգամաւ որքն ի տուն , եւ
 գաին զծառայն հիւանդ բժշկեալ :
 11 **ԳԳ.** Եւ եղեւ ի վազիսն երթայր ի
 քաղաք մի որում անուն էր Նային .
 երթային ընդ նմա եւ ³աշակերտար նո-
 12 րա՝ եւ ժողովուրդք լազում : Իբրեւ
 մերձ եղեւ ի գուսն քաղաքին , եւ աճա
 ելանէր մեռեալ մի որպի միաօր մօր
 իւրոյ , եւ նա էր այրի . եւ ժողովուրդ
 13 բազում քաղաքին էր ընդ նմա : Իբրեւ
 ետաւ գնա Տէր , գթացայ ի նա եւ
 14 ասէ , Մի՛ լար : Եւ մատուցեալ մեր-
 ձեցաւ ի զազազան . եւ որք բարձեալն
 ասնէին՝ զտեղի առին . եւ ասէ , Պա-
 15 տանի գու , քեզ ասեմ , արի : Կանդ-
 նեցաւ եւ նստաւ մեռեալն եւ սկսաւ
 16 խօսել . եւ ես գնա ցմայր իւր : Եւ աճ
 կարաւ զամենեաին , եւ փառաւոր առ-
 նէին զԱստուած եւ ասէին թէ Մար-
 զարէ ոմն մեծ յարուցեալ է ի միջի մե-
 17 րում , եւ թէ Այց արար Աստուած ժո-
 ղովրդեան իւրում ²ի բարութիւն : Եւ
 ել զբոցս այս ընդ ամենայն Հրէաս-
 տան վասն նորա , եւ ընդ ամենայն
 կողմանս աշխարհին :
 18 Եւ պատմեցին Յովնանու աչա-
 կերտրն իւր վասն ամենայնի այսորիկ :
 19 Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս
 յաշակերտացն իւրոց Յովնանիւս , ա-
 ռաքեաց ³առ Տէր՝ եւ ասէ , Դ՞ո՞ւ ես
 որ զարցն ես , եթէ այլում ակն կալ-
 20 ցուք : Եւ եկեալ արքն առ նա՝ ասնն ,
 Յովնանիւս մկրտիչ առաքեաց զմեզ
 առ քեզ եւ ասէ , Դ՞ո՞ւ ես որ զարցն
 21 ես , եթէ այլում ակն կարցուք : Եւ ի
 նմին ժամաւ բժշկեաց զբազումս ի հի-
 ւանդութեանց եւ ի նարուածոց եւ
 յայտոյ չարաց , եւ կուրաց ըստաց
 22 շնորհեաց տեսանել : Պատասխանի ետ

² ի բազումս պատիւ
³ Ուստի , յաշակերտաց նորա ոչ սակաւք
⁴ Ուստի , առ Յիսուս

¹ Ուստի , ի չար գտնուց սրտի իւրոյ

1 Կոցա եւ ասէ , Երթայք պատմեցէք
 Յովհաննու զոր տեսէրդ եւ լուայք ,
 զի կոյրք տեսանեն , եւ կազք գնան ,
 բորտաք սրբին , խուլք յսեն , մեռեալք
 23 յառնեն , աղքատք աւետարանին . եւ
 երանի իցէ որ ոչ զայթակղիցի յիս :
 24 Եւ իբրեւ գնացին հրեշտակքն Յով-
 հաննու , սկսաւ խօսել ընդ ժողո-
 վուրդան վասն Յովհաննու , Զի՞նչ եւ
 չէք յանապատն տեսանել , եղէ՞ զն շար-
 25 փուհն ի հողմոյ : Այլ զի՞նչ էյէք տե-
 սանել , ա՛յր ի հանդերձս փափկութեան
 զարդարեալ . ա՛հաւանիկ սրք ի հան-
 դերձս երեւելիս եւ ի փափկութեան
 26 են՝ յարթունիս են : Այլ զի՞նչ էյէք
 տեսանել . մարգարէ՞ . այո , ասեմ ձեզ ,
 27 առաւել եւս քան զմարգարէ : Զի սա
 է վասն որոյ գրեալն է թէ , Ահա ա-
 ռաքեմ զհրեշտակ իմ առաջի քո , որ
 յարդարեոցէ զճանապարհքո առաջի քո :
 28 2 Ամէն ասեմ ձեզ , Մեծ ի ծնունդս
 կանանց մարգարէ քան զՅովհաննէս
 ոչ ոք է , բայց փոքրիկն յարքայութեան
 Աստուծոյ մեծ է քան զնա :
 29 Եւ ամենայն ժողովուրդն իբրեւ
 լուաւ եւ մաքսաւորքն , արդարացու-
 ցին զԱստուած , զի մկրտեցան ի մկրտ-
 30 տութիւնն Յովհաննու : Իսկ փարի-
 սեցիքն եւ օրինականքն զխորհուրդն
 Աստուծոյ անարդիցին յանձինս իւր-
 եանց , զի ոչ մկրտեցան ի նմանէ :
 31 3 Արդ ո՛ւմ նմանեցուցից զմարդիկ
 աղցին այսորիկ , եւ ո՛ւմ իցեն նմա-
 32 նողք : Նման են մանկաւոյ որ ի հրա-
 պարակս նստիցին , կարգացեն զմի-
 մեանս եւ ասիցեն , Փողս հարաք ձեզ
 եւ ոչ կարաւեցէք . ողբացաք եւ ոչ
 33 լացէք : Եկն Յովհաննէս մկրտիչ , 3 ոչ
 ուտէր եւ ոչ ըմպէր , եւ ասէիք , Դեւ
 34 զոյ ի նմա , Եկն Որդի մարդոյ , ուտէ
 եւ ըմպէ , եւ ասէք , Ահա այր կերող
 եւ արբեցող , բարեկամ մաքսաւորաց
 35 եւ մեղաւորաց : Եւ արդարացաւ ի-
 մաստուծիւն 5 յարդեոց իւրոյ :
 36 Գ.Գ. Աղաչէր զնա ոմն ի փարիսե-
 ցւոցն զի կերիցէ ճաշ ընդ նմա . եւ

մտեալ ի տուն փարիսեցւոյն՝ բազմե-
 37 ցաւ : Եւ կին մի էր ի քաղաքին մե-
 ղաւսր . իբրեւ գիտաց թէ բազմեալ է
 ի տան փարիսեցւոյն , բերեալ շիշ մի
 38 իւղոյ աղնուի , կայր յետոյ առ ռոս
 նորա , լայր , եւ արաստուօքն սկսաւ
 թանալ զոսս նորա , եւ հերով գլխոյ
 իւրոյ ջնջէր . եւ համբուրէր զոսս նո-
 39 րա եւ օծանէր իւղովն : Եւ տեսեալ
 փարիսեցւոյն որ կոչեաց զնա՝ ասէր
 ընդ միտս իւր , Սա թէ մարգարէ ոք
 էր , ապա գիտէր թէ ով եւ որպիսի
 ոք կին մերձենայ ի սա . զի մեղաւոր
 40 է : Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ
 ցնա , Սիմոն , ունիմ ինչ ասել քեզ .
 եւ նա ասէ , Ասա , Վարդապետ . եւ
 41 ասէ , Երկու պարտապանք էին ու-
 րումն փոխառուի . մինն պարտէր հինգ
 հարեւր դահնկան , եւ մեւն՝ յիսուն :
 42 Եւ իբրեւ ոչ կոյր նոցա հատուցանել ,
 երկոցունց չնորհեաց . արգ ասա , ո՞վ
 43 առաւել սիրեցէ զնա : Ասէ Սիմոն ,
 Ինձ այսպէս թուի եթէ որում զբա-
 զումն չնորհեաց . եւ նա ասէ ցնա ,
 44 Ուղիղ դատեցար : Եւ զարձեալ ի կինն
 կողմն , ասէ զՍիմոն , Տեսանո՞ս պոյս
 կին , մաի ի տուն քո , ջուր օսից իմոց
 ոչ ետուր . իսկ սա արտասուօք իւ-
 րովք եթեայ քոսս իմ , եւ 6 հերով իւրով՝
 45 ջնջեաց : Համրոյր մի դու ոչ ետուր
 ինձ , սա աւասիկ յորմէ հեռէ մտեալ
 եմ , ոչ զազարեաց ի համբուրելոյ զոսս
 46 իմ : Իւղով զկրուխ իմ ոչ օծեր , սա
 47 իւղով անուշիւ 7 օծ : Վասն որոյ ասեմ
 քեզ , Թողեալ լիցին սմա մեղք իւր բա-
 զումք , զի յոյժ սիրեաց . զի որում
 շատ թողուցու՝ շատ սիրէ , եւ որում
 48 սակաւ՝ սակաւ : Եւ ասէ ցնա , Թողեալ
 49 լիցին քեզ մեղք քո : Եւ սկսան որ
 բազմաւան էին ընդ նմա՝ ասել ընդ միտս
 իւրեանց , Ո՞վ է սա որ զմեզս թողու :
 50 Եւ նա ասէ զկինն , Հաւատք քո կե-
 ցուցին զքեզ , երթ ի խաղաղութիւն :

ԳԼ Ը

1 ԳԵ. Եւ եղև յետ այնորիկ եւ ինքն
 չըջէր ընդ քաղաքս եւ ընդ գեղս , քա-
 ռողէր եւ աւետարանէր զարքայութիւն

1 Ուտէ , նոցա Յիսուս
 2 Ուտէ , Զի
 3 Ուտէ , Եւ ասէ Տէր , Արդ
 4 Ուտէ , որպէս եւ օրինակ է չայ . ոչ ուտէր
 5 ասց եւ ոչ ըմպէր զինի
 6 Բազմութ , յամենայն որդւոց

6 Ուտէ , հերով գլխոյ իւրոյ
 7 Բազմութ , օծ զոսս իմ

Աստուծոյ, եւ երկոսասանքն ընդ նմա.
 2 Եւ կանայք ոմանք որ բռնակալ էին յայտոց չարաց եւ ի հիւանդութեանց. Մարիամ որ կոչէր Մաղդաղենացի,
 3 յորմէ եւթն գեւն երեւ էր: Եւ Յովաննա կին Քուզայն՝ հաղարապետին շեքովի, եւ Շուշանն եւ այլք բազումք, որք պաշտէին ՚՛ղնա յրնչից իւրեանց:
 4 Եւ ի ժողովել բազում ժողովրդոց, եւ ըստ քաղաքաց քաղաքաց եկելոցն
 5 առ նա, ասէ ստակաւ, Ել սերմանացան սերմանել զսերմանիս իւր. եւ ի սերմանելն իւրեւմ էր որ անկտա առ ճանապարհաւ եւ եղև կոխան, եւ
 6 թոչունք երկնից կերան գնա: Եւ այն անկաւ յապառամի. եւ ընդ յուսա-
 7 նելն՝ չորացաւ առ ի չգոյէ հիւթոյ: Եւ այն անկաւ ի մէջ փշոց, եւ ընդ նմին
 8 բուսեալ փշոցն՝ հեղձուցին գնա: Եւ այն անկաւ յերկիր բարի՝ ²եւ պարարտ, եւ բուսեալ՝ արար պտուղ հարապապատիկ. զայս իբրև խոնկեալ, ասէ, Որ ունիցի ականջս յսելոց յուրիցէ:
 9 Հարցանէին գնա աշակերտքն թէ
 10 Ձի՛նչ իցէ առակն: Եւ նա ասէ, Ձեզ տուեալ է զիսել զխորհուրդս արքայութեան Աստուծոյ, բայց այլոցն առակօք. զի տեսցեն եւ մի՛ տեսցեն, յուրիցեն եւ մի՛ իմասցին:
 11 Բայց առակն սպ ինչ է. Սերմն բանն
 12 Աստուծոյ է: Եւ որք առ ճանապարհաւն՝ այնոքիկ են որ լսենն, եւ ապա զայ Սատանայ հանէ զբանն ի սրտից նոցա, զի մի՛ հաւատացեն եւ ապ-
 13 րեսցին: Եւ որք յապառամին, որք յորժամ լսիցեն, ինդութեամբ ընդու-
 նին գրանն, եւ արմատս ոչ ունիցին. որք առ ժամանակ մի հաւատան, եւ ի ժամանակի փորձութեան հեռանան:
 14 Իսկ որ ի մէջ փշոցն անկաւ՝ նոքա են, որ իբրև լսեն ²գրանն, եւ ի հոգս եւ ի մեծութիւն եւ ի ցանկութիւն աշխարհիս զբաղեալ, հեղձնուն եւ ան-
 15 պտուղ լինին: Իսկ որ յերկիրն պարարտ, որոց բարւոք եւ զուարթալին սրտիւ լուսեալ գրանն՝ ընդունին, եւ տան պտուղ համբերութեամբ:
 16 Ոչ սք լուգանէ ճրագ, եւ թաքուցանէ ընդ կարասեաւ կամ գնէ ընդ մանձօք. այլ ի վերայ աշտանակի գնէ,

17 զի որ մտանն՝ զլոյս տեսցեն: ²Ինչ ինչ ծածուկ որ ոչ յայտ լիցի. եւ ոչ զազանի՝ որ ոչ ծանիցի եւ եկեսցէ ի
 18 յայտ: Տեսէք այսուհետեւ զիարդ լէքզ. զի ոյր գուցէ՝ տացի նմա, եւ ոյր ոչն գուցէ, եւ զոյր կարծէն թէ ունիցի՝ բարձցի ի նմանէ:
 19 Եկին առ նա մայրն եւ եղբարք իւր, եւ ոչ կարէին հասանել ի նա վասն
 20 բազմութեանն: Ազգ եղև նմա եւ ասեն, Մայր քո եւ եղբարք քո կան արտաքոյ եւ կամին զքեզ տեսանել:
 21 Եւ ³ասէ ցնոսա, Մայր իմ եւ եղբարք իմ սորա են, որ զբանն Աստուծոյ լսեն եւ ասնեն:
 22 ԳՁ. Եւ եղև ի միում աւուրց ինքն ել ի նաւ եւ աշակերտքն նորա, եւ ասէ ցնոսա, Եկայք, անցցուք յայնկոյս
 23 ծովակիս, եւ գնացին: Եւ մինչդեռ նաւէին, ի յունս եմուտ. եւ էջ մրրիկ հողմոյ ի ծովակն եւ ուսնոյր, եւ տագ-
 24 նապէին: Մատուցեալ զարթուցին զնա եւ ասեն, Վարգապետ, վարգապետ, կորնչիմք աւասիկ. եւ նա յարուցեալ սաստեաց հողմոյն եւ խոտովեթեան ջրոցն, եւ հանդարտեցին, եւ եղև
 25 խաղաղութիւն: Ասէ ցնոսա, Ո՛ւր են հաւատք ձեր. եւ զահի հարեալ զարմացան եւ ասէին ցմիմեանս, Ո՛վ արգելք իցէ սա, զի եւ հողմոց եւ ջրոց հրաման տայ, եւ հնազանդին սմա:
 26 Եւ նաւեցին ի ջին յաշխարհն ⁴Փերզակասցւոց, որ է յայնկոյս հանգէպ Գալիլայ: Եւ ընդ ելանելն նորա ի ցամաք, պատահեաց այր մի ի քաղաքէն, յորում էին զեւք. եւ բազում ժամանակս չէր հանգերձ զղեցիալ եւ ոչ ի
 28 տան բնակեալ, այլ ի գերեզմանս: Եւ տեսեալ զՅիսուս, ազգակեաց եւ անկաւ առաջի նորա, եւ ասէ մեծաձայն, Ձի՛ կայ իմ եւ քո, Յիսուս, Որդի Աստուծոյ բարձրելոյ, ազահեմ զքեզ, մի՛
 29 տանջեր զիս: Քանզի հրաման տայր այսոցն պղծոյ ելանել ի մարդոյ անտի. զի բազում ժամանակս յափշտակեալ էր գնա, եւ կապէր ի շղթայս, եւ պահէր յերկաթս, եւ խղէր զկապանս,
 30 եւ վարէր ի գիւէն յանապատ: Եհարց ցնա Յիսուս եւ ասէ, Ձի՛նչ անուն է

¹ Ունի, ցնոսա ² ի բարւոք պարտեալ

³ ի բարւոք, նա պատասխանի ետ եւ ասէ
⁴ Ունի, Գաղարացւոց

քեզ : Եւ նա ասէ , Լէզէոփն . զի դեւք
 31 բաղուժք մտեալ էին ի նա : Եւ ազա-
 չէին զնա զի մի՛ հրաման տացէ նոցա
 32 երթալ յանդունդս : Եւ էր անդ երա-
 մակ մի խողից բաղմաց արօտական ի
 լերինն , եւ աղաչեցին զնա զի հրաման
 տացէ նոցա մտանել ի նոսա . եւ հրա-
 33 մայեաց նոցա : Եւ երեալ զեւքն յառ-
 նէն մտին ի խողեանն , եւ զմեաց ե-
 րամակն ի գահէ անտի ի ծովակն եւ
 34 հեղձաւ : Իրբեւ տեսին խողարածքն
 զիրան որ եզեն՝ փախեան , եւ սլատ-
 35 մեցին ի քաղաքին եւ յազարական : Եւ
 իրբեւ ելին տեսանել զգործան , եւ եկին
 առ Յիսուս , եւ զաին զայրն՝ ուստի
 զեւքն երեալ էին , զդեցեալ եւ զզաս-
 տացեալ նստէր առ ոտսն Յիսուսի , եւ
 36 երկնան թաամեցին նոցա որոց անս-
 եալն էր թէ՛ զիարդ փրկեցաւ . զիւս-
 37 հարն : Եւ աղաչէր զնա ամենայն բաղ-
 մութիւնն շուրջ զկողմամբքն ¹Պեր-
 դեսացոց՝ զնալ ²ի սահմանացն նոցա՝ ,
 քանզի անիւ մեծաւ տաղնապէին . եւ
 նա մտեալ ի նաւ՝ դարձաւ անզրէն :
 38 Աղաչէր զնա այրն ուստի զեւքն երեալ
 էին՝ շրջել ընդ նմա . արձակեաց ³զնա
 39 եւ ասէ , Դարձ ի տուն քո եւ սլատ-
 մաւ զոր միանդամ արար քեզ Աս-
 տուած . զնաց ի քաղաքն եւ քարոյեր
 զոր ինչ արար նմա Յիսուս :
 40 Եւ իրբեւ դարձաւ անզրէն Յիսուս ,
 ընկալաւ զնա ժողովուրդն , քանզի ա-
 41 մենքեան ակն ունէին նմա : Եւ անա
 եկն այր մի սրում անուն էր Յայրոս ,
 եւ նա էր իշխան ժողովրդեանն , ան-
 կիալ առ ոտսն Յիսուսի՝ աղաչէր զնա
 42 մտանել ի տուն նորա . Զի գուտոր
 միամօր էր նորա ամաց իրբեւ երկո-
 տասանից , եւ էր մերձ ի մահ . եւ ընդ
 երթալն նորա ժողովուրդքն նեղէին
 զնա :
 43 Եւ կին մի էր ի տեոսասեութեան
 արեան յամաց երկոտասանից , ⁴որում
 ոչ էր լիեալ հնար յումեքէ բժշկել :
 44 Մատուցեալ յետոյ մերձեցաւ ի քղանոցս
 հանդերձի նորա . եւ նոյնժամայն եւ
 45 կաց ըզխումն արեան նորա : Եւ ասէ

Յիսուս , Ո՞վ է որ մերձեցաւն յիս .
 իրբեւ ամենքեան ուրանային , ասէ
 Պետրոս եւ որ ընդ նմա էին , վար-
 զապեա , ժողովուրդքդ պնդեն եւ նե-
 46 զեն ⁵զքեդ : Եւ ասէ Յիսուս , Ոմն մեր-
 ձեցաւ յիս , քանզի զխաջի եթէ զո-
 47 բութիւն ել յինէն : Իրբեւ ետես կինն
 եթէ ոչ ծածկեցաւ ⁶ի նմանէ , եկն դո-
 զարով եւ անկաւ առաջի նորա , թէ՛
 փասն որոյ իրաց մերձեցաւ ի նա՝ սլատ-
 մեաց առաջի ամենայն ժողովրդեանն ,
 եւ թէ՛ որպէս բժշկեցաւ առժամայն :
 48 Եւ ասէ , Քաջալերեաց , գուտոր , հա-
 ւատք քո կեցուցին զքեզ , երթ ի խա-
 զաղութիւն :
 49 Եւ մինչդեռ նա խօսէր , գայ ոմն ի
 տանէ ժողովրդապետին եւ ասէ ցնա ,
 Մեռաւ գուտորն քո , մի՛ ինչ աշխատ
 50 անենք ⁷դգա : Իսկ Յիսուս իրբեւ լուաւ ,
 սլատասխանի եւ նմա եւ ասէ , Մի՛
 երկնչիր , միայն հաւատա , եւ կեցցէ :
 51 Եւ մտեալ ի տունն՝ ոչ զոք եթող մտա-
 նել , բայց միայն զՊետրոս եւ զՅա-
 կովրոս եւ զՅովնաննէս եւ զհայր ման-
 52 կանն եւ զմայր նորա : Լային ամենե-
 քեան եւ կոծէին զնա . եւ նա ասէ ,
 Մի՛ լայք , զի չէ մեռեալ , այլ ննջէ :
 53 Եւ նորա ծաղր առնէին զնա , զի զի-
 54 տէին թէ՛ մեռաւ : Եւ նորա հանեալ
 55 դամենուսին արտաքս , կալաւ զձեռանէ
 նորա , բարբառեցաւ եւ ասէ , Արի ,
 56 կաց , մանուկ գու : Եւ դարձաւ ողի
 նորա , եւ կանգնեցաւ վաղվաղակի .
 57 եւ հրամայեաց տալ նմա ուտել : Եւ
 զարմացան ծնողքն նորա . եւ նա սլատ-
 ուիրէր մի՛ ումեք ասել որ ինչ եզեւն :

ԳԼ Թ

1 ԳԵ . Եւ կոչեցեալ ⁸զերկոտասան ա-
 տաքեալսն , եւ նոցա զօրութիւն եւ
 իշխանութիւն ի վերայ ամենայն զի-
 2 ւաց , եւ բժշկել զհիւանդութիւնս : Եւ
 առաքեաց զնոսա քարոզել զարքայու-
 թիւնն Սասունոց եւ բժշկել զխատա-
 3 յէսս : Եւ ասէ ցնոսա , Մի՛ ինչ բառ-

¹Ուստի , գաղարացոց
²Յայնն , ի նոցանէ
³Ուստի , զնա Յիսուս
⁴Գաղաթի , որ ի բժիշկս ծախեալ էր զամենայն
 ինչս իւր . որում

⁵Ուստի , զքեզ , եւ գու ասես եթէ Ո՞վ մերձե-
 ցաւ յիս
⁶Ի Յաննէս պատե
⁷Գաղաթի , զվարդապետդ
⁸Ուստի , զերկոտասանն , այլ՝ զերկոտասան ա-
 շակերտս իւր

4 նայք ի ճանապարհ, մի՛ գուռազան եւ մի՛ մախազ, մի՛ հաց եւ մի՛ արծաթ, 4 մի՛ երկուս հանդերձս ունիցիք: Եւ յոր տուն մտանիցէք, անդ ազջիք եւ 5 անտի գնացէք: Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յորժա՛մ երանիցէք ի քաղաքէն յայնմանէ, զիտչի տախց ձերոց թօ- 6 թափեաջիք ի վիպտութիւն նոցա: Եւ երեալ շքէին Կրնդ քաղաքս եւ՝ ընդ զեղս, աւետարանէին եւ բժշկէին ընդ ամենայն սեղիս: 7 Լուաւ Հերովդէս չարորդապետ զգործան ամենայն, եւ զարմանայր 8 վասն ասերցն յամանց եթէ Յովնանէս յարեաւ ի մետոց, եւ յամանց՝ թէ եւ- 9 զիս յայանեցաւ, եւ յայրոց՝ թէ Մար- 9 զարէ ոմն յատաջնոցն յարեաւ: Ասէ Հերովդէս, ՁՅովնանէս ես զյնատե- 10 ցի, իսկ սա ո՞վ իցէ զորմէ զայսպիսի իրս բեմ: Եւ խնդրէր տեսնել զնա: 11 Գարձան ատաքեալքն եւ պատմեցին նմա զամենայն զոր արարին: Եւ աւե- 12 կալ զնոսա՝ խուսեաց ատանձինն ի տե- 13 զի անապատ քաղաքի միոյ, որում 14 անուեն էր Բեթսայիցա: Եւ ժողո- 15 վուրդքն իրրեւ զխապին, զնային զհեա նորա: Եւ ընկախալ զնոսա՝ խօսէր ընդ նոսա վասն արքայութեան Աս- 16 տուծոյ, եւ որոց պէտք էին բժշկու- 17 թեան բժշկէր: 18 Եւ օրն սկսաւ տարաժամել. մատե- 19 կան երկատասանքն եւ ատեն զնա, Ար- 20 ձակեա զժողովուրդս, զի երթեալ չուրջ ի զեղան եւ յաղարակս, հանդի- 21 ցեն եւ զայնն կերակուր, զի սաս 22 յանապատի տեղուջ եմք: Ասէ զնոսա, Գուք տուր զոցա ուտել: Եւ նորա 23 ասին, Ոչ զոյ մեր աւելի քան զհինդ նկանակ՝ եւ զերկուս ձկուռս, բայց 24 եթէ երթիցուք զնեցուք բաւական 25 ժողովրդեանց կերակուր: Քանզի էին արք իրրեւ հինգ հազար: Ասէ ցաչա- 26 կերտան, Բազմեցուցէք զդոսա զաս 27 զաս՝ յիսուն յիսուն: Եւ արարին այն- 28 պէս, եւ բազմեցուցին զամենեսեան: 29 Եւ առեալ զհինգ նկանակն եւ զերկուս ձկուռս՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց 30 եւ երեկ եւ սայր ցաչակերտան՝ ար- 31 կանել ժողովրդեանն: Կերան եւ յա- 32 զեցան ամենեւեան, եւ բարձին զնըշ-

խարս կոտորոցն երկոտասան սակառի: 18 Դս. Եւ եղև ի կայն նորա յազօթս ատանձինն, էին ընդ նմա եւ աչա- 19 կերտան նորա: Եւ արց զնոսա եւ ասէ, Ձ՞ ոք ասին զինէն ժողովուրդքն թէ 20 իցեմ: Եւ նոցա պատասխանի աուեալ ասին, ՁՅովնանէս մկրտիչ: Եւ այլք՝ 21 Ձեզիա: Իսկ այլք թէ Մարգարէ ոք 22 յատաջնոցն յարեաւ: Ասէ ցնոսա, Իսկ զուք զո՞ ոք ասէք զինէն թէ իցեմ: 23 պատասխանի եւ Պետրոս, եւ ասէ, 24 ՁՔրիստոսն Աստուծոյ: Նա սաստեաց ի նոսա, եւ պատուիրեաց մի՛ ումեք 25 ասել զայն: Եւ ասէ թէ Պարտ է Որ- 26 դուց մարդոց բազումս չարչարել եւ ա- 27 նարդել ի քահանայապետից եւ ի ձերոց եւ ի զպրոպ, եւ սպանանել եւ յերկր 28 աուր յամնել: Եւ ասէր առ ամենե- 29 սին, Եթէ ոք կամի զինի իմ զալ, ու- 30 բացի զանձն եւ ապցէ զիսալ իւր հա- 31 նապալ եւ եկեացէ զհեա իմ: Ձի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կո- 32 րուպցէ զնա, եւ որ կորուսցէ զանձն 33 իւր վասն իմ՝ կեցուցցէ զնա: Ձի՛ նչ օրուա է մարդոց եթէ Չաշխարհ չա- 34 հեցի, եւ զանձն իւր կորուսցէ կամ 35 տուժեցի: Ձի որ ամօթ համարեցի զիս եւ զբանս իմ, զնա եւ Որդի մար- 36 դոց յամօթ արացցէ յորժամ զայցէ վա- 37 ոք իւրովք եւ Հօր եւ հրեշտակաց 27 սրբոց: Բայց արդարեւ ասեմ ձեզ եթէ 38 են ոմանք ի զոցանէ որ այդր կան, որք մի՛ ճաչակեցան զմա՛ն, մինչեւ տեղեն զարարուեթիւնն Աստուծոյ: 39 Եւ եղև յես այց բանից իրրեւ աուրք ութ, առեալ զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովնանէս՝ ել ի լեռան 40 կալ յազօթս: Եւ ի կայն նմա յազօթս՝ եղև տեսիլ երեսոց նորա այլակերպ, եւ փոխեցաւ հանդերձ նորա եւ եղև 41 սպիտակ փայլուն: Եւ անա արք երկու խօսէին ընդ նմա, որ էին Մովսէս եւ 42 Նդիա, երևեալ փառօք, եւ ասէին զեկիցն նորա զոր կատարելոց էր յն- 43 բուսաղէմ: Իսկ Պետրոս եւ որ ընդ նմայն էին՝ ծանրացեալք ի ընոյ, զար- 44 թեան եւ տեսին զփառսն նորա եւ զեր- 45 կուս արան որ կային առ նմա: Եւ եւ զեւ ի մեկնէն նոցա ինմանէ, ասէ Պետ- 46 ռոս ցՅիսուս, Վարդապետ, բարեոք է

1 ի Բազմեցուցին զամենեսեան

- 3 Եւ յիսուս, Բազմեցուցէր զմարդիկդ. եւ էր խոսս յայժ ի տեղուջն. եւ բազմեցան մարդիկն թուով իբրեւ հինգ հազար : Եւ առ զձացն Յիսուս, եւ գուհացաւ եւ բաշխեաց Յիսուսն. նոյնպէս եւ ի ձկանցն որչափ եւ կամեցան : Եւ իբրեւ յազեցան, ասէ ցաշակերտանս, Ժողովեցէր զնշանեակուստորսդ, զի մի ինչ կորիցէ : Ժողովեցին եւ լցին երկուստասան սակափ զկուտուրոցն ի հինգ զարեղէն նկանակէ անտի, որ յաւելաւ ի կերողացն : Իսկ մարդիկն իբրեւ տեսին զնշանսն զոր արար՝ ասէին եթէ Սա է ճշմարիտ մարգարէնս, որ զարց էր յաշխարհ :
- 4 ԳԳ. Յիսուս իբրեւ զիտաց եթէ գալոց են յափշտակել զնա զի արասցեն զնա թագաւոր, զնաց զարձեալ ի լեռն միայն : Եւ իբրեւ երկուց եւ զեւ, իջին աշակերտքն նորա ի ծով եզրն. Եւ մտեալ ի նաւ՝ զային յայնկոյս ծովուն ի կափառնայում. եւ իբրեւ նսնմացաւ, եւ չեւ եւս եկեալ էր առ նոսա Յիսուս, եւ ծովն ի սաստիկ

1 Յիսուսն, եւ զիտեմ
2 ի բնական զվարէ

3 Սիմոն, աշակերտացն, և աշակերտքն բազմականացն

19 հոգւոյ շնչելոյ յուզէր : Եւ վարեալ
 իբրեւ ասպարէզս քսան եւ հինգ կամ
 երեսուն, տեսանէին զՅիսուս զի գնայր
 ի վերայ ծովուն եւ մերձ էր ի նաւն ,
 20 զարհուրեցան : Եւ ասէ ցնոսա , Ես եմ ,
 21 մի՛ երկնչիք : Եւ կամէին ընդունել
 զնա ի նաւն : Եւ վազվազակի եհաս
 նաւն յերկիրն յոր երթային :
 22 ԳԵ . Ի վաղիւ անդր ժողովուրդն որ
 կայր յայնկոյս ծովուն , տեսանէր թէ
 այլ նաւ ոչ գոյր անդ բայց միայն ի
 միոյն , յոր մօտն աշակերտքն Յիսուսի .
 եւ զի չէր մտեալ Յիսուս ընդ աշա-
 կերտսն իւր ի նաւն , բայց միայն ա-
 23 շակերտքն նորա գնացին : (Իբրեւ այլ
 նաւք գային՝ ի Տրերեայ մօտ յայն տե-
 24 ղին՝ ուր գնացն ²կերան) Իսկ իբրեւ
 ետես ժողովուրդն եթէ Յիսուս ոչ է
 անդ եւ ոչ աշակերտքն նորա , առին
 նոքա զնաւան , եւ եկին ի կափառնա-
 25 յում խնդրել զՅիսուս : Եւ իբրեւ զտին
 զնա յայնկոյս ծովուն , ասեն ցնա ,
 26 Ռարբի , ե՛րր եկիր այսք : Պատասխա-
 նի եւ նոցա Յիսուս եւ ասէ , Ամէն
 ամէն ասեմ ձեզ , ինչորեք զիս , իբր
 ոչ եթէ զի նշանս ինչ տեսէք , այլ զի
 կերայք ի հոցէ անտի եւ յաղեցարուք :
 27 ³Երթայք զործեցէք մի՛ զկորստական
 կերակուրն , այլ զկերակուրն որ մնայ
 ի կեանսն յաւիտեականս , զոր Որդին
 մարդոյ տացէ ձեզ . քանզի զնա Հայր
 28 կնքեաց , Աստուած : Ասեն ցնա , Ձի՛նչ
 աննիցեմք զի զպորձսն Աստուծոյ զոր-
 29 ձեցուք : Պատասխանի եւ Յիսուս եւ
 ասէ ցնոսա , Այս է զորձն Աստուծոյ ,
 զի հաւատասցիք յայն զոր առաքեացն
 30 նա : Ասեն ցնա , Ձի՛նչ նշան աննիցես
 զի տեսցուք եւ հաւատասցուք . զի՛նչ
 31 զորձիցես : Հարքն մեր կերան զմանա-
 նայն յանապատի անդ , որպէս եւ գրեալ
 32 է , Հաց յերկնից ետ նոցա ուտել : Ասէ
 ցնոսա Յիսուս , Ամէն ամէն ասեմ ձեզ
 թէ Ոչ Մոլսէս ետ ձեզ զհացն յերկնից ,
 այլ Հայրն իմ տայ ձեզ զհացն յերկնից
 33 զճշմարիտ : Ձի՛ հաց յԱստուծոյ է , որ
 իջանէն յերկնից եւ կեանս տայ աշ-
 34 խարհի : Ասեն ցնա , Տէր , յամենայն
 35 ժամ տուր մեզ զհացն զայն : Ասէ ցնո-
 սա Յիսուս , Ես եմ հացն կենաց . որ

գայ առ իս՝ ոչ քաղցիցէ , եւ որ հաւա-
 36 տայ իս՝ ոչ երբեք ծարաւեսցի : Այլ
 ասացի ձեզ եթէ տեսէք զիս եւ ոչ հա-
 37 լատայք : Չամենայն զոր տայ ինձ
 Հայր՝ առ իս եկեսցէ . եւ որ գայ առ իս՝
 38 ոչ հանից արտաքս : Ձի իջի ես յերկ-
 նից , ոչ զի զկամս իմ արարից , այլ
 զկամս այնորիկ որ առաքեացն զիս :
 39 ԳԶ . Այս են կամք Հօր իմոյ որ ա-
 ռաքեացն զիս , զի զամենայն զոր ետ
 ցիս հայր՝ ոչ կորուսից ի նմանէ , այլ
 40 յարուցցի զնա յաւուրն յեանում : Այս
 են կամք Հօր իմոյ , զի ամենայն որ
 տեսանիցէ զՈրդի եւ հաւատացէ ի նա ,
 ընկալցի զկեանսն յաւիտեականս , եւ
 ես յարուցից զնա յաւուրն յեանում :
 41 Տրանջէին զնմանէ Հրեայքն , զի ա-
 սաց թէ Ես եմ հացն իջեալ յերկնից ,
 42 Եւ ասէին , Ո՛չ սա է Յիսուս որդին
 Յովսեփու , զորոյ մեք զլտեմք զհայրն
 եւ զմայր . իսկ արդ զի՛արդ ասէ եթէ
 43 Ես յերկնից իջի : Պատասխանի եւ Յի-
 սուս եւ ասէ ցնոսա , Մի՛ քրթմնջէք
 44 ընդ միմեանս : Ոչ ոք կարէ գալ առ
 իս , եթէ ոչ Հայրն որ զիս առաքեաց՝
 ձգեսցէ զնա . եւ ես յարուցից զնա յա-
 45 լուրն յեանում : Գրեալ է ի մարգա-
 րէս , Եւ եղիցին ամեննքեան ուսեալք
 յԱստուծոյ . ամենայն որ լսէ ի Հօրէ
 46 եւ ուսանի՛ գայ առ իս : Իբրեւ ոչ եթէ
 զՀայր ուրուք տեսեալ իցէ , եթէ ոչ
 որ էն յԱստուծոյ՝ նա ետես զՀայր :
 47 Ամէն ամէն ասեմ ձեզ զի Որ՝ հաւատայ՝
 ընդունի զկեանսն յաւիտեականս :
 48 Ես եմ հացն կենաց : (49) Հարքն ձեր
 կերան զմանանայն յանապատին եւ
 50 մեռան : Այս է հացն որ յերկնիցն իջ-
 եալ է , զի որ ուտիցէ ոք իսմանէ՛ մի՛
 51 մեռանիցի : Ես եմ հացն կենդանի , որ
 52 յերկնից իջեալ , Եթէ ոք ուտիցէ ի
 հացէ յայսմանէ , կեցցէ ի յաւիտեան .
 եւ հացն զոր ես տաց՝ մարմին իմ է ,
 զոր ես տաց վտան կենաց աշխարհի :
 53 Մարտնչէին ընդ միմեանս Հրեայքն
 եւ ասէին , Ձի՛արդ կարէ սա տալ մեզ
 54 զմարմին իւր յուտել : Ասէ ցնոսա Յի-
 սուս , Ամէն ամէն ասեմ ձեզ , Եթէ ոչ
 կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ եւ
 արթիք զարիւն նորա , ոչ ունիք
 55 կեանս յանձինս : Որ ուտէ զմարմին իմ

¹Ունէ , Բայց այլ նաւք եկին
²Բ-դ-ւ-մ , կերան յորժամ գոհացաւ Տէր
³Ի Յաննիս զպատի

¹Ունէ , հաւատայ իս

եւ ըմպէ՝ զարիւն իմ, ունի զկեանս
 յաւիտենականս, եւ ես յարուցից զնա
 56 յաւուրն յետնում: Զի մարմին իմ
 ճշմարիտ կերակուր է, եւ արիւն իմ
 57 ճշմարիտ ըմպելի է: Որ ուտէ զմարմին
 իմ եւ ըմպէ զարիւն իմ, յիս ընակես-
 58 ցէ, եւ ես ի նմա: Որպէս առաքեաց
 զիս կենդանին Հայր, եւ ես կենդանի
 եմ վասն Հօր. եւ որ ուտէն զիս՝ եւ
 59 նա կեցցէ վասն իմ: Այս է հացն որ
 յերկնից իջեալ. ոչ որպէս կերան հարքն
 ձեր զմանամայն եւ մեռան. որ ուտե-
 զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան:
 60 Զայս ասաց ի ժողովրդեանն յուսու-
 61 ցաննն ի կափառնայում: Եւ ըստումք
 յաշակերտացն իրբեւ լուան, ասին,
 62 Իբրեւ գիտաց Յիսուս յանձն իւր եթէ
 տրտնջին վասն այնորիկ աշակերտքն
 նորա, ասէ ցնոսա, Այգ զայթակղի-
 63 ցուցանէ՝ զձեզ: Իսկ արգ, եթէ տե-
 սանիցէք զՈրդի մարդոյ, զի երանիցէ
 64 ուր էր զառաջինն: Հոգին է կենդա-
 նարար, մարմին ինչ ոչ օգնէ: զրանն
 զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ հոգի է եւ
 65 կեանք: Այլ են ոմանք ի ձէնջ որ ոչ
 հաւատան. քանզի զիտէր Յիսուս ի
 սկզբանէ ով են այնորիկ որ ոչն հա-
 ւատան, եւ ով այն է որ մատնելոցն
 66 է զնա: Եւ ասէր, վասն այնորիկ
 ասացի ձեզ թէ ոչ ոք կարէ զալ առ
 իս, եթէ ոչ իցէ տուեալ նմա ի Հօրէ
 իմմէ:
 67 Յայսմանէ բազումք յաշակերտացն
 նորա չողան յետս, եւ ոչ եւս չըջէին
 68 ընդ նմա: Ասէ Յիսուս ցերկոտասան
 աշակերտան, Միթէ եւ գո՞ւք կամիր
 69 երթալ: Պատասխանի ետ նմա Սիմոն
 Պետրոս, Տէր, առ ո՞վ երթիցուք,
 բանս կենաց յաւիտենականաց ունիս:
 70 Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք եթէ
 զու ես ՚Բրիտոտոն Որդի Աստուծոյ՝:
 71 Պատասխանի ետ նոցա Յիսուս, Ո՛չ
 ես զձեզ զերկոտասանսդ ընտրեցի,
 72 եւ միդ ի ձէնջ սատանայ է: Եւ ասէր
 զՍիմոնիւհան Յուզայէ Իսկարիոտա-
 ցոյ՝, զի նա իսկ մատնելոց էր զնա,
 եւ մի էր յերկոտասանիցն:

ԳԼ Ե

4 ԳԵ. Եւ յետ այնորիկ չըջեր Յիսուս
 ի Գալիլեա, քանզի ոչ կամէր ի Հրէաս-
 տանի չըջիլ, զի խնդրէին զնա Հրեայքն
 սպանանել:
 2 Եւ էր մերձ տօնն Հրէից տաղաւա-
 3 րահարաց: Ասին ցնա եղբարքն նորա,
 Գնա աստի եւ երթ ի Հրէստտան, զի
 եւ աշակերտքն քո տեսցեն զգործսդ
 4 քո զոր գործես: Զի ոչ ոք է որ ի
 ծածուկ ինչ գործէ, եւ խնդրէ ինքն
 համարձակ լինիլ. եթէ զայդ գործես,
 5 յայտնեա զանձն քո աշխարհի: Քանզի
 եւ եղբարքն իսկ չէին հաւատացեալ
 6 ի նա: Ասէ ցնոսա Յիսուս, Ժամանակ
 իմ չեւ է հասեալ, բայց ձեր ժամանակ
 7 յամենայն ժամու պատրաստ է: Ոչ
 կարէ աշխարհ ատիլ զձեզ, բայց զիս
 ատեալ, զի ես վկայեմ վասն նորա
 եթէ գործքն իւր շարութեան են:
 8 Գուք երթալք ի տօնն յայն, ես ոչ Յեր-
 թամ ի տօնն յայն, զի իմ ժամանակ
 9 չեւ է լցեալ: Զայս իրբեւ ասաց, ինքն
 10 մնաց անդէն ի Գալիլեա: Իբրեւ ելին
 եղբարքն նորա, ասպ եւ ինքն ել ի
 տօնն, ոչ յայտնի այլ իրբեւ ի ծածուկ:
 11 Եւ Հրեայքն խնդրէին զնա ի տօնի անդ
 12 եւ ասէին, Ո՛ւր իցէ նա: Եւ ՚քրթմըն-
 ջիւն էր զնմանէ ի ժողովուրդան. կէսքն
 ասէին թէ Բարուոք է. այլքն ասէին,
 Ոչ, այլ մոլորեցուցանէ ժողովուրդն:
 13 Եւ ոչ ոք համարձակ խօսէր զնմանէ
 վասն երկիւղին Հրէից:
 14 ԵՎ. Իրբեւ տօնն ընդմիջեցաւ, ել
 Յիսուս ի տաճարն եւ ուսուցանէր:
 15 Զարմանային Հրեայքն եւ ասէին,
 Զիա՞րդ զգիրս զիտէ սա, զի ուսեալ
 16 բնաւ չիք: Պատասխանի ետ նոցա Յի-
 սուս եւ ասէ, Իմ վարդապետութիւնս
 չէ իմ, այլ այնորիկ որ ատաքեացի զիս:
 17 Եթէ ոք կամի զկամս նորա տանել,
 զիտացէ վասն վարդապետութեանս,
 յԱստուծոյ իցէ արդեւք եթէ ես ինչ
 18 յանձնէ իմմէ խօսիմ: Որ յանձնէ իւրմէ
 խօսի՝ փառս անձին իւրում խնդրէ,
 իսկ որ խնդրէ զփառս այնորիկ որ ա-
 տաքեացն զնա՝ նա ճշմարիտ է, եւ

1Որ՞նչ, Սուրբն Աստուծոյ. 2Ո՛ւր՞նչ Սուրբն Աս-
 տուծոյ կենդանեղ
 3Օրբն՝ 4, Յուզայէ որ ի կարիոտայ

3Որ՞նչ, երթամ տակաւին
 4Բարեւո՛ւր, քրթմընէն բազում

19 անիրաւութիւնն ոչ գոյ ի նմա : Ո՛չ Մովսէս ետ ձեզ զօրէնանս, եւ ոչ ոք
 20 ի ձէնջ առնէ զօրէնանս : Զի՞ խնդրէք զիս սպանանել : Պատասխանի ետ ժողովուրդն եւ ասէ, Դեւ գոյ ի քեզ, ո՞վ
 21 խնդրէ զքեզ սպանանել : Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ, Գործ մի գործեցի, եւ ամենեքին զարմացեալ
 22 էք : Վասն այնորիկ Մովսէս ետ ձեզ թլխատութիւն, (զի ոչ եթէ ի Մովսէսէ էր, այլ ի հարց անտի,) եւ ի շա-
 23 լաթու թրիատէք զմարդ : Իսկ արդ եթէ թլխատութիւն ամուս մարդ ի շաթթու, զի մի՞ օրէնքն Մովսէս լուծցին, ընդ իս ցասուցեալ էք զի ող-
 24 ջոյն իսկ մարդ բծկեցի ի շաթթու :
 25 Ե՛հ, Մի՛ ըստ աչս դատիք, այլ ուղիղ դատաստան արարէք :
 26 Ասէին ոմանք յԵրուսաղեմացոց անտի, Ո՛չ նա է սա զոր ինչդէին սպա-
 27 նանել : Եւ աւասիկ յայտնապէս խօսի, եւ չասեն ինչ ընդ դմա. գուցէ ար-
 28 դեւք եւ իշխանքն զիտացին թէ սա
 29 իցէ Քրիստոսն : Այլ զսա զիտեմք ուստի է, իսկ Քրիստոսն յորժամ գայցէ,
 30 ոչ ոք զիտէ ուստի է : Ազգակիցաց Յիսուս ի տաճարին, ուսուցանէր եւ ասէր, Ե՛ւ զիս զիտէք, ե՛ւ ուստի եմն զիտէք : Եւ յանձնէ իմմէ ոչ եմ եկեալ, այլ է ճշմարիտ որ առաքեացն զիս զոր
 31 գուքն ոչ զիտէք : Ես զիտեմ զնա, զի ի նմանէ իսկ եմ, եւ նա առաքեաց
 32 զիս : Խնդրէին զնա ունի՞՞ եւ ել ի ձեռաց նոցա : Եւ ոչ ոք արկ ի նա ձեռն :
 33 զի չեւ էր հասեալ ժամ նորա : Եւ բազումք ի ժողովրդենէն հաւատացին ի նա, եւ ասէին, Քրիստոսն յորժամ գայցէ, միթէ աւելի՞ ինչ նշանս աւ-
 34 նիցէ քան զոր սայտ առնէ : Եւ լուան փարիսեցիքն զտրտունջ ժողովրդեանն զնմանէ : Եւ առաքեցին քահանայապետքն եւ փարիսեցիքն սպասաւորս
 35 զի կայցին զնա : Ասէ Յիսուս, Փոքր մեւս եւս ժամանակ ընդ ձեզ եմ, եւ երթամ առ այն որ առաքեացն զիս :
 36 Խնդրիցէք զիս եւ ոչ գտանիցէք, եւ ուր եմն երթամ՝ զուրք ոչ կարէք գալ :
 37 Ասեն Հրեայքն ընդ միմեանս, Իսկ յ՞ երթայցէ դա, զի մեք ոչ գտանիցեմք

զգա . միթէ ի սփրոս հեթանոսաց երթայցէ եւ ուսուցանիցէ զհեթանոսս :
 38 Զի՞նչ է բանն այն զոր ասաց, Խնդրիցէք զիս եւ ոչ գտանիցէք . եւ ուր եմն երթամ՝ զուրք ոչ կարէք գալ :
 39 Ե՛հ . ի վերջնումաւուր մեծի ածնին կայր Յիսուս, աղաղակէր եւ ասէր, Եթէ սք ծարաւի իցէ, եկեացէ առ իս
 40 եւ արբցէ : Որ հաւատայ յիս՝ որպէս եւ ասեն զիրք, Գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան :
 41 Զայս ասէր վասն Հուդոյն զոր ընդու-նելոց էին որ հաւատային ի նա . զի Յիսուս էր Հոգի՞, քանզի Յիսուս չեւ էր
 42 փառաւորեալ : Ոմանք ի ժողովրդենէն իբրեւ լսէին զբանս զայս, ասէին, Սա է ճշմարիտ մարգարէն : Այլքն ասէին, Սա է Քրիստոսն . իսկ կէսքն ասէին, Միթէ ի Գալիլէէ՞ գալոց իցէ Քրիստոսն :
 43 Ո՛չ զիրք ասեն եթէ ի զաւակէ Դաւթի եւ ի Բեթղեհէմ զեզջէ ուր Դաւիթին էր՝ զալոց է Քրիստոսն : Եւ եղև հերձուած ի մէջ ժողովրդեանն վասն նա-
 44 ռա : Եւ ոմանք ի նոցանէ կամեցան ունել զնա, այլ ոչ ոք մխտաց ի նա ձեռն :
 45 Եւ եկին անդրէն սպասաւորքն սուրահանայապետն եւ փարիսեցիս, եւ ասեն սուքա ցնոսա, Ը՛նդէ՞ր ոչ ածէք զնա այսր : Պատասխանի ետուն սպասաւորքն եւ ասեն, Ո՛չ կրնք այնպէս
 46 խօսեցաւ մարդ որպէս այն այն : Պատասխանի ետուն փարիսեցիքն եւ ասեն, Միթէ եւ դո՞ւք մտորեցարուք :
 47 Միթէ ոք յիշխանացն հաւատաց ի նա կամ ի փարիսեցոցն : Այլ այն խաժածած ամբոխ որ ոչ զիտէ զօրէնս, եւ նորովեալ են : Ասէ Նիկողեմոս ցնոսա (որ եկեալն էր առ նա զիշերի յառա-
 48 ջազոյն, եւ մի էր ի նոցանէ), Միթէ օրէնքն մեր դատի՞ն զմարդ, եթէ ոչ լսեն ինչ նախ ի նմանէ, ի՞կամ զիտեն
 49 զինչ զործէ : Պատասխանի ետուն նմա եւ ասեն, Միթէ եւ դո՞ւ եւս ի Գալիլէէ իցես . քննեա եւ տես, զի մարգարէ ի Գալիլէէ ոչ յառնէ :

¹Ո՛չ, ²ճշմարտեւ Քրիստոսն
³Ի Բաւաւս գալստի

³Ո՛չ, ⁴չեւ էր տուեալ Հոգի Սուրբ
⁵Ո՛չ, ⁶Բազումք
⁷Յիսուս, ⁸և

ԳԼ Ը

1¹ Եւ գնացին իւրաքանչիւր ոք ի տեղի իւր, իսկ Յիսուս գնաց ի լիանն Զի-
 2 թենեաց: Եւ ընդ առաւօտսն գարձեալ
 եկն ի տաճարն, եւ գայր առ նա ամե-
 նայն ժողովուրդն, եւ նստեալ ուսու-
 3 ցանէր գնոսա: Ածին առ նա զպիւրքն
 2 եւ քաննայապետքն՝ եւ փարիսեցիք
 կին մի բմբոնեալ ի չնութեանս. եւ
 4 կացուցեալ զնա առաջի, Ասենցնա, Վարդապետ, կինս այս բմբոնեալ ինքն
 5 յայտնապէս շնացեալ է: Եւ յորէնսն
 Մովսէս մեզ պատուիրեաց զպայպիսիս
 6 քարկոծել, արդ զու զի՛նչ ասես վասն
 7 գորա: Զայս ասէին փորձելով զնա,
 զի ունիցին ամբաստանութիւն զմտ-
 նէ. իսկ Յիսուս ի խոնարհ նայելով
 8 զրէր մատամբն յերկրի: Իսկ իբրեւ
 ստիպեցին հարցանելովցնա, հայեցեալ
 ի վեր՝ ասէցնոսա, Անմեղն ի ձէնջ
 նախ նա բնկեցէ քար ի վերայ գորա:
 8 Եւ գարձեալ ի խոնարհ նայելով զրէր
 9 յերկրի: Եւ Յլուեալ երանէին՝ մի ըստ
 միովէ, սկսեալ յառաջնոցն մինչեւ ի
 վերջինսն. եւ մնաց միայն Յիսուս, եւ
 10 կինն կայր առաջի նորա: ³Պատասխա-
 նի ետ Յիսուս եւ՝ ասէցնա, կին զու,
⁵ ո՛ւր են. ո՛չ ոք՝ զքեզ գատապար-
 11 տեաց: Եւ ասէ, Ոչ, Տէր. եւ ասէ Յի-
 սուս, Եւ ոչ ես գատապարտեմ զքեզ,
 երթ, յայսմ հետէ մի՛ մեղանչեր:
 12 Ե՛ր. Դարձեալ խօսեցա ընդ նոսա
 Յիսուս եւ ասէ, Ես եմ լոյս աշխարհի.
 որ զայ զկնի իմ՝ ընդ խաւար մի՛ զնաս-
 13 ցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց: Ասեն
 ցնա փարիսեցիքն, Դու վասն անձին
 քս վկայես, եւ վկայութիւն քո չէ
 14 ճշմարիտ: Պատասխանի ետ Յիսուս
 եւ ասէցնոսա, Թէպէտ եւ ես վկայեմ
 վասն անձին իմոյ, վկայութիւն իմ
 ճշմարիտ է. զի գիտեմ ուստի եկի եւ
 յո երթամ. բայց դուք ոչ գիտէք ուստի

15 զամ կամ յո երթամ: Դուք ըստ մարմ-
 նոյ գատիք, ես ոչ գատիմ եւ ոչ զոք:
 16 Թէպէտ եւ գատիմ եւս զոք, գտտաս-
 տանն իմ ճշմարիտ է. զի չեմ միայն,
 այլ ես եւ որ առաքեացն զիս Հայր:
 17 Եւ յորէնսն իսկ ձեր գրեալ է թէ՛ Եր-
 կուց մարդոց վկայութիւն ճշմարիտ է:
 18 Ես եմ որ վկայեմ վասն իմ, եւ վկայէ
 վասն իմ որ առաքեացն զիս Հայր:
 19 Ասէինցնա, Ո՛ւր է Հայր քո. պա-
 տասխանի ետ Յիսուս եւ ասէցնոսա,
 Ոչ զիս գիտէք եւ ոչ զՀայրն իմ. եթէ
 զիս գիտէիք, եւ զՀայրն իմ թերեւս
 զիտէիք:
 20 Զայս բանս խօսեցաւ ի տան գանձին,
 յորժամ ուսուցանէր ի տաճարի անդ.
 եւ ոչ ոք կայաւ զնա, զի չեւ եւս
 հասեալ էր ժամ նորա:
 21 Ե՛ւ. Ասէ գարձեալցնոսա Յիսուս,
 Ես երթամ, եւ խնդրիցէք զիս, եւ ի
 մեզս ձեր մեռանիցիք. զի ուր են
 22 երթամ, զուք ոչ կարէք գալ: Ասէին
 Հրեայքն, Միթէ գիւրովի՛ն երթայցէ,
 զի ասէ թէ՛ Ուր են երթամ, զուք
 23 ոչ կարէք գալ: Եւ ասէցնոսա, Դուք
 ի ներքուստ աստի էք, եւ ես ի վե-
 րուստ անտի եմ. զուք յաշխարհէ
 աստի էք, ես չեմ յայսմ աշխարհէ:
 24 Բայց ասացի ձեզ թէ՛ ի մեզս ձեր մե-
 ռանիցիք. զի թէ ոչ հաւատայցէք թէ
 25 ես եմ, մեռանիցիք ի մեզս ձեր: Ասեն
 ցնա, Դու ո՞վ ես. ասէցնոսա Յիսուս,
⁶ նախ զի եւ խօսիմս իսկ ընդ ձեզ՝
 26 Բազում ինչ ունիմ վասն ձեր խօսել
 եւ գատել. այլ որ առաքեացն զիս՝
 ճշմարիտ է. եւ ես զոր լուսայն ի նմանէ՛
 27 զայն խօսիմ յաշխարհի: Եւ ոչ գիտա-
 ցին թէ՛ զՀօրէ ասէրցնոսա:
 28 Ասէցնոսա Յիսուս, Յորժամ բարձ-
 րացուցանիցէք զվորդի մարդոյ, յայն-
 ժամ գիտասջիք թէ՛ ես եմ. եւ յանձնէ
 իմմէ ոչ ինչ աննեմ, այլ որպէս ու-
 29 սոյց զիս Հայրն իմ, զայն խօսիմ: Եւ
 որ առաքեացն զիս՝ ընդ իս է. ոչ եթող
 զիս միայն, զի ես զհաճոյս նորա առ-
 նեմ հանապազ:
 30 Իբրեւ զայս խօսեցաւ, բազումք հա-
 ւատայցին ի նա:
 31 Ե՛ջ. Եւ ասէր Յիսուս առ Հրեայսն
 հաւատացեալս, Եթէ դուք կացջիք

¹ Այս մտաւան հատրդ պատեւն է բազումն է Յու-
 շարէն որքնայոց, որպէս եւ է բազումն է Հայերն
 յեռագրոց:
² Ի բազմաւ պատեւն
³ Ո՛ւր է, լուեալ եւ յանդիմանեալ ի իզճէ
 մտաց, երանէին
⁴ Ո՛ւր է, Հայեցեալ Յիսուս ի վեր եւ ոչ զոք
 տեսեալ բայց ի կնոջն,
⁵ Ո՛ւր է, ո՛ւր են որ չարախօսեին զքէն. ո՛չ ոք

⁶ Կ-մ, Զոր ի սկզբանէ անտի խօսիմ առ ձեզ

ի բանի իմուժ, ճշմարիտ աշակերտք
 32 իմ էք. եւ ծանիջիք զճշմարտութիւնն,
 եւ ճշմարտութիւնն ազատեցէ զձեզ:
 33 Պատասխանի ետուն նմա եւ ասեն,
 Չաւակ Աբրահամու եմք, եւ ոչ ումեք
 երբեք ծառայեցաք. զիա՞րդ ասես թէ
 34 Ազատք լինիջիք: Պատասխանի ետ նո-
 ցա Յիսուս, Ամէն ամէն ասեմ ձեզ թէ
 Ամենայն որ անէ զմեզ¹ ծառայ է
 35 մեղաց: Եւ ծառայն ոչ յաւիտեան կայ
 ի տան, իսկ որդին յաւիտեան կայ:
 36 Իսկ արդ եթէ Որդին զձեզ ազատե-
 ցուցէ, ճշմարիտ ազատք լինիջիք:
 37 Գիտեմ զի զաւակ Աբրահամու էք, այլ
 ինզրէք սպանանել զիս, զի բանին
 38 իմոյ չիք տեղի ի ձեզ: Ես զոր տեսի
 առ Հօր իմուժ՝ խօսիմ, եւ զուր զոր
 39 լուսուրբ ի հօրէն ձերմէ՝ աննէք: Պա-
 տասխանի ետուն նմա եւ ասեն, Հայր
 մեր Աբրահամ է. ասէ ցնոսա Յիսուս,
 Եթէ որդիք Աբրահամու էիք, զգործան
 40 Աբրահամու գործէիք: Այլ այժմիկ
 ինզրէք սպանանել զիս, զայր մի՞ որ
 ձեզ զճշմարտութիւն խօսեցայ, զոր
 լուսայ ՚ի Հօրէ իմմէ՞. զայդ Աբրահամ
 41 ոչ արար: Գուք աննէք զգործս հօրն
 ձերոյ. ասեն ցնա, Մեք ի պոռնկու-
 թիւնէ չեմք ծնեալ. մի է Հայր մեր, Աս-
 42 տուած: Ասէ ցնոսա Յիսուս, Եթէ Աս-
 տուած էր Հայր ձեր, սիրէիք արգելք
 զիս. զի ես յԱստուծոյ ելի եւ եկի,
 եւ ոչ եթէ յանձնէ ինչ եկի, այլ նա
 43 առաքեաց զիս: Ընդէ՞ր զիսօսս իմ ոչ
 զիտէք զուրք. վասն զի ոչ կարէք լսել
 44 զբանն իմ: Գուք ի հօրէ ի Սատանայէ
 էք, եւ զցանկութիւնս հօրն ձերոյ կա-
 միք աննել. զի ես մարդասպան էր
 ի սկզբանէ, եւ ի ճշմարտութեան ոչ
 եկաց, զի ոչ գոյ ճշմարտութիւն ի
 նմա. յորժամ խօսիցի սուտ, յիւրոց
 անտի խօսի. զի սուտ է եւ հայր նո-
 45 րա: Իսկ ես զի զճշմարտութիւն խօ-
 46 սիմ, ոչ հաւատայք ինձ: Ո՞ ի ձէնջ
 յանզիմանէ զիս վասն մեզաց. եթէ
 զճշմարտան ասեմ ձեզ, ընդէ՞ր ոչ հա-
 47 լատայք ինձ: Որ էն յԱստուծոյ՝ զբանս
 Աստուծոյ լսէ. եւ զուր վասն այնորիկ
 48 ոչ լսէք, զի չէք յԱստուծոյ: Պատաս-
 խանի ետուն Հրեայքն եւ ասեն ցնա,
 Ո՞չ բարւոք ասեմք մեք եթէ Սամա-

49 րացի ես դու, եւ դեւ գոյ ի քեզ: Պա-
 տասխանի ետ Յիսուս եւ ասէ, Յիս
 դեւ ոչ գոյ, այլ պատուեմ զՀայր իմ,
 50 եւ զուր անարգէք զիս: Ես ոչ ինզրեմ
 զվատս իմ, է որ ինզրէն եւ զատի,
 51 Ամէն ամէն ասեմ ձեզ, Եթէ ոք զբանն
 իմ պահեցէ, զմահ մի՞ տեսցէ ի յա-
 52 լիտեան: Ասեն ցնա Հրեայքն, Արդ
 զիտացաք թէ դեւ գոյ ի քեզ. Աբրա-
 համ մտաւ, եւ մարդարէքն, եւ զու
 ասես, Եթէ ոք զբանն իմ պահեցէ,
 մի՞ ճաշակեցէ զմահ ի յաւիտեան:
 53 Միթէ՞ դու մե՞ծ ինչ ոք իցես քան զհայր
 մեր Աբրահամ, որ մտաւ, եւ մար-
 դարէքն մեռան. արդ դու զո՞ անես
 54 զքեզ: Պատասխանի ետ Յիսուս, Եթէ
 ես փառաւորեմ զանձն իմ, փառքն իմ
 ոչ ինչ են. է Հայր որ փառաւորէ զիս,
 զորով՞ զուրքն ասէք թէ Աստուած² մեր
 55 է. Եւ ոչ ճանաչէք զնա, բայց ես զի-
 տեմ զնա. եւ եթէ ասեմ թէ ոչ զիտեմ
 զնա, ձեզ նման սուտ լինիմ. այլ զի-
 56 տեմ զնա եւ զբան նորա պահեմ: Աբ-
 րահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել
 57 զօր իմ, ետես եւ ուրախ եղես: Ասեն
 ցնա Հրեայքն, Յիսուս ամ չեւ եւս է
 58 քո, եւ զԱբրահամ տեսեր: Ասէ ցնոսա
 Յիսուս, Ամէն ամէն ասեմ ձեզ, Յա-
 ուջ քան զիննն Աբրահամու եմ ես:
 59 Վէ՞մս աօին զի արկցեն ի վերայ նորա,
 եւ Յիսուս խոյս ետ եւ ել զնաց ի տա-
 ճարէ անտի:

ԳԼ Թ

1 Եւ մինչդեռ անցանէր, ետես այր
 2 մի կոյր ի ծնէ. Եւ հարցին ցնա աշա-
 կերաքն նորա եւ ասեն, Ռաբբի, ո՞յր
 միտս է, սորա՞ թէ հօր եւ մօր իւրոյ,
 3 զի կոյր ծնցի: Պատասխանի ետ Յի-
 սուս, Ոչ դորա միտս է, եւ ոչ հօր
 եւ մօր իւրոյ. այլ զի յայտնի լիցին
 4 գործքն Աստուծոյ ի գմա: Եւ ինձ
 պարտ է գործել զգործս այնորիկ որ
 առաքեացն զիս, մինչ աւուր կայ. զայ
 զիչեր, յորժամ ոչ ոք կարէ գործել:
 5 Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշ-
 6 խարհի: Չայս իբրեւ ասաց, եթուք
 ի դետին եւ արար կաւ ի թքոյն, եւ
 ծեփեաց զկաւն ի վերայ աչաց կուրին:

¹Գաւա՛ծ: յԱստուծոյ

²Ո՞րա՛ն, ձեր

7 Եւ ասէ ցնա, Երթ, լուա յաւազանին՝
 Սիլովամայ, (որ թարգմանի Առաքեալ.)
 չոգաւ լուացաւ, եկն եւ տեսանէր:
 8 Իսկ զբացիքն եւ որոց տեսեալն էր
 զնա յառաջագոյն թէ ¹մուրացիկ էր՝
 9 ասէին, Ո՞չ սա էր որ նստէրն եւ մու-
 10 րանայր: Կէսքն ասէին, Նա է. Այլքն
 11 ասէին, ²Ոչ, այլ՝ նման է նմա. եւ
 12 Ինքն ասէր թէ, Ես եմ: Ասեն ցնա,
 13 Իսկ զիա՞րդ բացան աչք քո: Նա ետ
 14 պատասխանի, Այր մի որում Յիսուսն
 15 ասեն՝ կաւ արար եւ ձեփեաց զաչս իմ,
 16 եւ ասէ ցիս, Երթ ի Սիլովամ եւ լուա.
 17 չոգայ, լուացայ եւ տեսանեմ: Ասեն
 18 ցնա, Ո՞ւր է նա. ասէ ցնոսա, Ոչ գի-
 19 տեմ:
 20 Ածին առ փարիսեցիսն զնա որ եր-
 21 բեմն կոյրն էր: Եւ էր չարաթ, յոր-
 22 ժամ զկաւն արար Յիսուս, եւ երաց
 23 զաչս կուրին: Դարձեալ հարցանէին
 24 զնա եւ փարիսեցիքն թէ Զիա՞րդ տե-
 25 սանես. եւ նա ասէ ցնոսա, Կաւ եզ
 26 ի վերայ աչաց իմոց, եւ լուացայ եւ տե-
 27 սանեմ: Ասեն ոմանք ի փարիսեցւոցն,
 28 Ոչ է այրն այն յԱստուծոյ, զի զչարամբ
 29 ոչ պահէ. Կէսքն ասէին, Իսկ զիա՞րդ
 30 կարէ մարդ մեղաւոր այսպիսի նշանս
 31 առնել. եւ էին ներձուածք ի մէջ նո-
 32 ցա: Ասեն դարձեալ ցկոյրն, Դու զի՞
 33 ասես վասն նորա զի երաց զաչս քո.
 34 Եւ նա ասէր թէ, Մարդարէ է: Եւ ոչ
 35 հաւատային Հրեայքն զնմանէ թէ կոյր
 36 էր եւ բացաւ, մինչեւ կոչեցին զճնողս
 37 բացելոյն: Հարցին ցնոսա եւ ասեն,
 38 Սա՞ է որդին ձեր, զորմէ զուքն ասէիք
 39 եթէ կոյր ծնաւ, արդ զիա՞րդ տեսա-
 40 նէ: Պատասխանի ետուն նոցա ծնողքն
 41 նորա եւ ասեն, Գիտեմք զի սա է որ-
 42 զին մեր, եւ զի կոյր ծնաւ. Բայց
 43 զիա՞րդ այժմոց տեսանէ, ոչ գիտեմք.
 44 Կամ թէ ո՞վ երաց զաչս դորս, մեք
 45 ոչ գիտեմք. ցոյս իսկ հարցէք, ինքնին
 46 ի չափ հասեալ է, ինքն իսկ խօսեցի
 47 վասն իւր: Զայս ասացին ծնողքն նո-
 48 րա, զի երկնչէին ի Հրէիցն. քանզի
 49 ուխտ եղեալ էր Հրէից, եթէ ոք խոս-
 50 տովանեցի զնա Բրիստոս, ի բաց կաց-
 51 ցէ ի ժողովրդենէն: Վասն այնորիկ ա-
 52 սացին ծնողքն նորա թէ Ինքնին ի չափ
 53 հասեալ է, ցնա իսկ հարցէք: Դարձեալ

կրկին անգամ կոչեցին զայրն որ կոյրն
 էր, եւ ասեն ցնա, Տուր փառս Աս-
 25 տուծոյ. մեք գիտեմք զի այրն այն
 26 մեղաւոր է: Եւ նա ասէ, Թէ մեղաւոր
 27 իցէ, ես ոչ գիտեմ. բայց զայս գիտեմ,
 28 զի կոյր էի եւ արդ տեսանեմ: Դար-
 29 ձեալ ասեն ցնա, Զի՞նչ արար քեզ,
 30 զիա՞րդ երաց զաչս քո: Պատասխանի
 31 ետ նոցա, Այժմ ասացի ձեզ եւ ոչ
 32 լուարուք. զի՞ կամիք միւսանգամ
 33 լսել. միթէ եւ զո՞ւրք կամիք աշակեր-
 34 տել նմա: Նոքա հայնոյէին զնա եւ ա-
 35 սէին, Դու լիջիր նորա աշակերտ, մեք
 36 Մովսիսի աշակերտք եմք: Մեք գի-
 37 տեմք զի ընդ Մովսիսի խօսեցաւ Աս-
 38 տուած, զսա ոչ գիտեմք ուստի՞ իցէ:
 39 Պատասխանի ետ այրն եւ ասէ ցնոսա,
 40 Այդ իսկ են սքանչելիք, զի զուք ոչ
 41 գիտէք ուստի՞ իցէ, եւ զիմ զաչս ե-
 42 բաց: Գիտեմք զի Աստուած մեղա-
 43 ւորաց ոչ լսէ, բայց եթէ աստուածա-
 44 պաշտ ոք իցէ եւ զկամս նորա առնիցէ,
 45 ինձմա լսէ: Ի յաւիտենից ոք ոչ լուաւ
 46 եթէ երաց ոք զաչս կուրի ի ծնէ կոյր
 47 ծնելոյ: Եթէ ոչ յԱստուծոյ էր այրն
 48 այն, ոչ կարէր առնել ինչ: Պատաս-
 49 խանի ետուն եւ ասեն ցնա, Ի մեզս
 50 իսկ ծնեալ ես ամենեւին, եւ դու վար-
 51 դապե՛տ լինիս մեր. եւ հանին զնա
 52 արտաքս:
 53 Լուաւ Յիսուս եթէ հանին զնա ար-
 54 տաքս, եւ իբրեւ եզիտ զնա, ասէ ցնա,
 55 Դու հաւատամ յՈրդի Աստուծոյ: Նա
 56 պատասխանի ետ եւ ասէ, Տէր, ո՞վ է
 57 զի հաւատացից ի նա: Ասէ ցնա Յի-
 58 սուս, Ե՛ւ տեսեր զնա, Ե՛ւ որ խօսիդ
 59 ընդ քեզ՝ նա է: Եւ նա ասէ, Հաւա-
 60 տամ, Տէր. եւ երկիր եպագ Նմա:
 61 Զս. Եւ ասէ Յիսուս, Ի դատաս-
 62 տան եկի յաշխարհս յայս, զի որ ոչն
 63 տեսանեն՝ տեսին, եւ որք տեսանեն՝
 64 կուրացին: Լուան ոմանք ի փարի-
 65 սեցւոցն որք ընդ նմա էին, եւ ասեն
 66 ցնա, Ի՞նչ է եւ մեք կոյրք իցեմք:
 67 Ասէ ցնոսա Յիսուս, Եթէ կոյրք էիք,
 68 ոչ էր ձեր մեզ. բայց արդ ասէք եթէ
 69 Տեսանեմք, եւ մեզքն ձեր ի ձեզ հաս-
 70 տատեալ են:

ԳԼ. Ժ

1Ո՞ւր, կոյր 28-նն 7-1-11 4 Ամէն ամէն ասեմ ձեզ, Որ ոչ մտանէ

ընդ գուռն ի գաւթթ ոչխարացն, այլ
 2 ընդ այլ երանէ՝ նա գող է եւ աւազակ :
 3 Իսկ որ մտանէ ընդ գուռն՝ հովիւ է
 4 ոչխարաց : Նմա գունապանն բանայ, եւ
 5 ոչխարքն ձայնի նորա լսեն, եւ զիւր
 6 ոչխարսն կոչէ յանուանէ եւ հանէ
 7 զնոսա : Եւ յորժամ ՚՛գիւրն զամենայն՝
 8 հանիցէ, առաջի նոցա երթայ, եւ ոչ-
 9 խարքն զհետ նորա երթան, զի ճա-
 10 նայնն զձայն նորա : Զօտարի զհետ ոչ
 11 երթիցեն, այլ փախիցեն ի նմանէ, զի
 12 ոչ ճանաչեն զձայն օտարաց :
 13 Զայս առակ ասաց նոցա Յիսուս,
 14 եւ նոքա ոչ գիտէին եթէ զինչ էր որ
 15 խօսէին ընդ նոսա : Գարձեալ ասէ ցնո-
 16 սա Յիսուս, Ամէն ամէն ասեմ ձեզ զի
 17 Ես եմ գուռն ոչխարաց : Ամենքեան
 18 որ յառաջ քան զիս եկին՝ զողք էին
 19 եւ աւազակք : այլ ոչ լուան նոցա ոչ-
 20 խարքն : Ես եմ գուռն, ընդ իս եթէ
 21 ոք մտանիցէ, կեցցէ : մտցէ եւ կըցէ
 22 եւ ճարակ գտցէ : Գող ոչ գայ, եթէ
 23 ոչ զի գողացի եւ սպանցէ եւ կարուս-
 24 ցէ : ես եկի զի կեանս ունիցին, եւ
 25 առաւել եւս ունիցին :
 26 ԶԲ. Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ
 27 գանձն իւր գնէ ի վերայ ոչխարաց :
 28 Իսկ վարձկանն որ ոչ է հովիւ, որոյ
 29 ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսանէ
 30 զգայն զի գայ, թողու զոչխարսն եւ
 31 փախի : եւ գայն յափշտակէ զնոսա
 32 եւ ցրուէ : Գանդի վարձկան է, եւ չէ
 33 փոյթ նմա վասն ոչխարացն : Ես եմ
 34 հովիւն քաջ, եւ ճանաչեմ զիմսն եւ
 35 ճանաչիմ յիմոցն : Որպէս զիտէ զիս
 36 Հայր, զիտեմ եւ ես զՀայր. եւ զանձն
 37 իմ գնեմ ի վերայ ոչխարաց : Նա եւ
 38 այլ եւս ոչխարք են իմ որ ոչ են յայսմ
 39 գաւթէ, եւ զայնս եւս պարտ է ինձ
 40 ածել այսր, եւ ձայնի իմում լուիցեն,
 41 եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ : Վասն
 42 այնորիկ սիրէ զիս Հայր իմ, զի ես
 43 զնեմ զանձն իմ, զի միւսանգամ առից
 44 զնա : Ոչ ոք հանէ զնա յինէն, այլ ես
 45 զնեմ զնա անձամբ իմով. իշխանու-
 46 թիւն ունիմ զնեյ զնա, եւ իշխանու-
 47 թիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա.
 48 զայս պատուէր ասու ի Հօրէ իմմէ :
 49 Գարձեալ հերձուած լինէր ի մէջ

20 Հրէից վասն բանիցս այսոցիկ, եւ ա-
 21 սէին բազումք ի նոցանէ, Դեւ գոյ ի
 22 նմա եւ մոիգնի, զի բնաւ լուք նմա :
 23 Կէսքն ասէին, Այսպիսի բանք ոչ զի-
 24 ւահարի են. միթէ գեւ կարէ՞ զաչս
 25 կուրի բանալ :
 26 ԶԳ. Եզեն յայնժամ նաւակաւորքն
 27 յերուսաղէմ, եւ ձմեռն էր : Եւ շրջէր
 28 Յիսուս ի տաճարին ի սրահին Սոգո-
 29 մովիւի : Շուրջ եզեն զնովաւ Հրեայքն
 30 եւ ասեն, Մինչեւ յերթ թափես զորիս
 31 մեր. եթէ գու ես Գրիստոսն, ասա
 32 մեզ համարձակ : Պատասխանի ետ նո-
 33 ցա Յիսուս եւ ասէ, Ասացի ձեզ եւ
 34 ոչ հաւատայք ՚3 ինձ. զգործսն զոր ես
 35 գործեմ յանուն Հօր իմոյ՝ նոքին իսկ
 36 չկայքն վասն իմ : Այլ գուք ոչ հաւա-
 37 տայք, զի չեք յոչխարաց անտի ՚4 իմոց :
 38 Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, եւ ես
 39 ճանաչեմ զնոսա, եւ զկնի իմ գան :
 40 Եւ ես տամ նոցա զկեանսն յաւիտե-
 41 նականս. եւ մի՞ կորիցեն յաւիտեան,
 42 եւ մի՞ ոք յափշտակեցէ զնոսա ի ձե-
 43 սոց իմոց : Հայրն իմ որ ես ինձ զնո-
 44 սա՝ մեծ է քան զամենայն, եւ ոչ ոք
 45 կարէ յափշտակել ի ձեռաց Հօր իմոյ :
 46 Ես եւ Հայր ՚5 իմ մի եմք : (31) Վէմս
 47 առին Հրեայքն զի քարկոծ արացին
 48 զնա : Պատասխանի ետ նոցա Յիսուս,
 49 Բազում գործս բարիս ցուցի ձեզ ի Հօրէ
 50 իմմէ. վասն որո՞յ գործոյ ի նոցանէ
 51 քարկոծ անէք զիս : Պատասխանի
 52 ետուն նմա Հրեայքն, Վասն բարեոյ
 53 գործոյ ոչ ասնեմք զքեզ քարկոծ, այլ
 54 վասն հայհոյութեան. եւ զի գու մարդ
 55 ես, եւ զանձն քո Աստուած ասնես :
 56 Պատասխանի ետ նոցա Յիսուս, Ո՞չ
 57 յօրէնս ձեր գրեալ է, Ես ասացի թէ
 58 աստուածք իցէք : Իսկ եթէ զնոսա
 59 աստուածս ասէ, առ որս լանն Աս-
 60 տուծոյ եղեւ, (եւ չէ մարթ եզմանել
 61 զորոյն,) Իսկ զոր Հայր սրբեաց եւ ես
 62 ասեալաց յաշխարհ, գուք ասէք թէ
 63 Հայհոյեա, զի ասացի թէ Որքի Աստու-
 64 ծոյ եմ : Եթէ ոչ գործեմ զգործս Հօր
 65 իմոյ, մի՞ հաւատայք ինձ : Ապա թէ
 66 գործեմ, թէ եւ ինձ ոչ հաւատայք,
 67 սակայն գործոցն հաւատացէք. զի զի-

1 Ո՛ւնէ, զիւր ոչխարսն
 2 Ո՛ւնէ, իսկ վարձկանն փախի, քանզի

3 Ի Բազումս գործսն
 4 Ո՛ւնէ, իմոց, որպէս ասացի ձեզ
 5 Գ՛ւնէս գործսն

տասջիք եւ 1 ծանիջիք եթէ Հայր յիս ,
 եւ ես ի Հայր :
 39 Գարձեալ խնդրէին զնա ունել , եւ
 40 եւ ի ձեռայ նոցա : Եւ զնաց միւսանւ-
 գամ յայնկայս Յորդանանու ի տեղին
 ուր էր Յովնանէս զառաջինն եւ մկր-
 41 տէր , եւ անդ լինէր : Եկին թաղումք
 առ նա եւ ասեն , Չի Յովնանէս² նշան
 42 ինչ ոչ արար . Բայց զամենայն զոր
 ասաց Յովնանէս վասն նորա , ճշմա-
 րիտ էր . եւ բազումք հաւատացին
 ի նա անդ :

ԳԼ ԺԱ

1 ԶԻ Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ի
 Բեթանեայ , ի գեղջէ Մարեմայ եւ Մար-
 2 թայի քեռ նորա : Այս սցն Մարիամ էր
 որ օծ զՏէրն իւզով , եւ ջնջեաց զոտս
 նորա հերով իւրով . որոյ եղբայրն Ղա-
 3 զարոս հիւանդ էր : Առաքեցին առ նա
 քորքն նորա եւ ասեն , Տէր , ա՛հաւա-
 սիկ զոր գուն սրէլէր՝ հիւանդացեալ է :
 4 Իրրեւ լուսն Յիսուս , ասէ , Այն հի-
 վանդութիւն չէ ի մահ , այլ վասն փա-
 ռացն Աստուծոյ . զի փառուոր լիցի
 5 Որդի Աստուծոյ այնուիկ : Եւ սրէր
 Յիսուս զՄարթա եւ զբոյր նորա
 6 3 զՄարթամ եւ զՂազար : Իրրեւ լուսն
 թէ հիւանդացեալ է , զտեղի կալաւ
 7 անդէն ուր էրն աւուրս երկուս : Ապա
 յետ այնորիկ ասէ յնոսա , Եկայր եր-
 թիցուք միւսանդամ ի Հրեատտան :
 8 Ասինցն աչակերտոյն , Ռաչարի , այժմ
 եւս խնդրէին զբեղ Հրեայքն քարկոծ
 առնել . եւ դարձեալ երթառ անդրէն :
 9 Պատասխանի եւ Յիսուս , Ո՛չ երկու-
 տասան ժամ է աւուր . եթէ ոք զնայ
 ի տուընջեան , ոչ զայթակղի , զի զլոյս
 10 աչխարհիս այսորիկ տեսանէ . Ապա թէ
 ոք զնայ զԻշերի , գայթակղի , զի լոյս
 11 ոչ գոյ ընդ նմա : Զայս իրրեւ ասաց ,
 յետ այսորիկ ասէ յնոսա , Ղազարոս
 բարեկամ մեր ննջեաց , այլ երթամ զի
 12 զարթուցից զնա : Ասինցն սա աշա-
 կերտքն , Տէր , եթէ ննջեաց , աոյա
 13 ապրի : Այլ Յիսուս վասն մահուն նո-
 րա ասէր . նոցա այսպէս թուեցաւ թէ
 14 վասն ննջելոյ քնոցն ասէր : Յայնժամ
 ասէ յնոսա Յիսուս յայտնապէս , Ղա-

15 զարոս մեռաւ . եւ ես ուրախ եմ վասն
 ձեր , զի դուք հաւատասջիք 3 ինձ , զի
 ես չէի անդ . բայց արդ եկայր երթի-
 16 ցուք առ նա : Ասէ Ռովմաս , անուան-
 եալն երկուորեակ , ցաշակերտակցան ,
 Սն , եկայք եւ մեք զի ընդ նմա մեւ-
 ցուք :
 17 Եկն Յիսուս , եղիտ զնա չորեքօրեայ
 18 ի գերեզմանի : Եւ էր Բեթանիա մերձ
 յերուսաղէմ իրրեւ ասպարիսօք հնդե-
 19 տասան : Բազումք ի Հրէից անտի եկ-
 եալ էին առ Մարթա եւ Մարիամ , զի
 մխիթարեացեն զնոսա վասն եղբորն :
 20 Մարթա իրրեւ լուսն թէ Յիսուս գայ ,
 ընդ առաջ զնաց նորա , բայց Մարթամ
 21 նստէր անդէն ի տան : Ասէ Մարթա
 ցՅիսուս , Տէր , եթէ աստ լեալ էիր ,
 22 եղբայրն իմ չէր մեռեալ . Այլ եւ արդ
 զիտեմ եթէ զոր ինչ խնդրեցես յԱս-
 23 տուծոյ՝ տացէ քեզ Աստուած : Ասէ
 ցնա Յիսուս , Յարիցէ եղբայրն քո :
 24 Ասէցնա Մարթա , Գիտեմ զի յարիցէ
 25 ի յարութեան՝ յաւուրն յեանում : Ասէ
 ցնա Յիսուս , Ես իսկ եմ յարութիւն
 եւ կեանք . որ հաւատայ յիս , թէպէտ
 26 եւ մեռանի , կեցցէ . եւ ամենայն սր
 կենդանի է եւ հաւատայ յիս՝ մի՛ մեւ-
 ցի ի յաւիտեան . հաւատամ այսմիկ :
 27 Ասէցնա , Այո , Տէր , ես հաւատացի
 եթէ դու ես Քրիստոսն , Որդի Աստու-
 28 ծոյ , որ յաշխարհ՝ զայոց էիր : Եւ զայս
 իրրեւ ասաց , զնաց եւ կոչեաց զՄա-
 րիամ , զքոյր իւր , լռեցայն եւ ասէ ,
 Վարդապետն եկեալ է եւ կոչէ զքեզ :
 29 Եւ իրրեւ լուսն , յարեաւ վազվազակի
 30 եւ եկն առ նա : Չեւ եւս էր եկեալ
 Յիսուս ի գեղն , այլ էր անդէն ի տեղ-
 ւոջն ուր ընդ առաջ եղեւ նմա Մար-
 31 թա : Իսկ Հրեայքն որ էին ընդ նմա
 ի տան անդ եւ մխիթարէին զնա , իւր-
 րեւ տեսին զՄարթամ թէ յարեաւ վազ-
 վազակի եւ զնաց , զնացին եւ նոքա
 զհետ նորա , համարէին թէ ի գերեզ-
 32 մանն երթայ զի լացցէ անդ , Իսկ Մա-
 րիամ իրրեւ եկն ուր էրն Յիսուս եւ
 ետես զնա , անկաւ առ ոտս նորա եւ
 ասէ , Տէր , եթէ աստ էիր զիպեալ ,
 33 ոչ էր մեռեալ եղբայրն իմ : Յիսուս
 իրրեւ ետես զնա զի լայր , եւ որ ընդ
 նմայն էին Հրեայքն՝ լային , խոռովեցաւ :
 34 Եղի իւր իրրեւ զայրացեալ , եւ ասէ ,
 Ո՛ւր եղիք զնա . ասենցնա , Տէր ,

1 Ո՛ւր , հաւատասջիք 3 ի Յասէն ուր
 2 Ռովմաս յաւուրս , արգարեւ

35 եկ եւ տես : Եւ արտասուեաց Յիսուս :
 36 Ասէին Հրեայքն , Տեսէք , որչափ սիրէր
 37 զնա : Կէսքն ի նոցանէ ասէին , Ո՞չ
 կարէր սա , որ երաց զաչս կուրին ,
 38 առնել զի եւ սա մի՛ մեռցի : Յիսուս
 գարձեալ զայրացեալ ընդ միտս իւր ,
 39 վէմ մի եղեալ ի վերայ նորա : Եւ ասէ
 Յիսուս , Ի բաց արարէք զվէմդ : Ասէ
 40 է : Ասէցնա Յիսուս , Ո՞չ ասացի քեզ ,
 եթէ հաւատասցես , տեսցես զփառսն
 41 Աստուծոյ : Եւ իբրեւ ի վեր աորին
 ՚ զվէմն , Յիսուս ամբարձ զաչս իւր
 ի վեր եւ ասէ , Հայր , գոհանամ զքէն
 42 զի լուար ինձ : Եւ ես զիտէի զի յա-
 մենայն ժամ լսես ինձ . այլ փասն ժո-
 ղովրդեանս որ շուրջ կան՝ 2 առնեմ ,
 զի հաւատասցեն թէ գու առաքելք
 43 զիս : Զայս իբրեւ ասաց , ի ձայն մեծ
 աղաղակեաց եւ ասէ , Ղազարէ , արի
 44 եկ արտաքս : Եւ ել մեռեալն ոտիւք
 կապելովք եւ ձեռքն երկդայնպօք եւ
 երեսօքն վարչամակապատօք . եւ ասէ
 ցնոսս Յիսուս , Լուծէք զդա եւ թո-
 45 ղէք երթալ :
 45 Բազումք ի Հրէիցն որ եկեալ էին
 առ 3 Մարեմանս , իբրեւ տեսին զոր 4 ա-
 46 բարն՝ հաւատացին ի նա : Եւ ոմանք
 ի նոցանէ գնացին առ փարիսեցիսն ,
 պատմեցին նոցա զոր արարն Յիսուս :
 47 ԶԶ . Ժողովեցին քահանայապետքն
 եւ փարիսեցիքն առեան , եւ ասնն ,
 48 Զի՞նչ արասցուք , զի այրն այն բա-
 զումնչանս առնէ : Եթէ թողու՞մք զնա
 այնպէս , ամենեւին հաւատան ի նա .
 եւ գայցին Հռոմք եւ բառնալցին
 49 զազգս մեր եւ զտեղի : Մի ոմն ի նա-
 ցանէ , անուն կայիափա , որ քահա-
 նայապետ էր տարւոյն այնորիկ , ասէ
 50 ցնոսս , Դուք ոչի՞նչ գիտէք , եւ ոչ
 51 բնաւ խորհել իսկ , թէ լաւ է մեզ զի
 այր մի մեռանիցի ի վերայ ժողովր-
 դեանս , եւ մի՛ ամենայն ազգս կորի-
 51 ցէ : Զայս ոչ յանձնէ ինչ ասաց , այլ
 զի քահանայապետ էր տարւոյն այնո-
 րիկ , մարգարէացաւ եթէ մեռանելոց

52 էր Յիսուս ի վերայ աղղին . Եւ ոչ ի
 վերայ աղղին միայն , այլ զի եւ զոր-
 53 զիսն Աստուծոյ զցրուեալսն ժողովեա-
 ցէ ի մի :
 54 Ապա յայնմ օրէ խորհուրդ արարին
 զի սպանցեն զնա : Եւ Յիսուս այնու-
 54 հետեւ ոչ եթէ համարձակ չըլէր ի մէջ
 Հրէիցն , այլ զնաց անտի յերկիր մի
 որ մերձ էր յանապոստ , ի քաղաք մի
 որում անուն էր Եփրայիմ , եւ անդ
 լինէր աշակերտօքն հանգերձ :
 55 ԶԵ . Եւ էր մերձ զատիկն Հրէից ,
 եւ բազումք ելին յԵրուսաղէմ ի գա-
 ւառէ անոր յառաջադոյն քան զգա-
 տիկն , զի սրբեցնեն կանձինս իւրեանց :
 56 Խնդրէին զՅիսուս , եւ ասէին ընդ մի-
 մեանս մինչ կային ի տաճարին , Զիա՞րդ
 թուի ձեզ , եթէ ո՞չ գայցէ ի տօն այսր :
 Պատուէր տուեալ էր քահանայապե-
 տիցն եւ փարիսեցւոց , զի թէ ոք գի-
 տասցէ թէ ուր է , դուշակեսցէ զնմա-
 նէ զի կալցին զնա :

ԳԼ ԺԲ

1 Իսկ Յիսուս վեց աւուրս յառաջ քան
 զգատիկն եկն ի Բեթանիա , ուր էր
 2 Ղազար մեռեալն , զոր յարոյցն ի մե-
 2 տելոց : Եւ արարին անդ նմա ընթրիս ,
 եւ ի սպասու կայր Մարթա , եւ Ղա-
 3 զար մի էր ի բաղմելոց ընդ նմա : Իսկ
 Մարեմայ տեսալ յիտր մի իւզոյ նար-
 գեանս այնուի մեծաղոյս , օժ զոտան
 Յիսուսի , եւ հերով իւրով մաքրէր
 զոտս նորա . եւ տունն լի եղև ի հո-
 4 տոյ իւզոյն : Ասէ մի ոմն յաշակերտաց
 անտի , Յուզա Իսկարիովսացի , որ
 5 մասնելոցն էր զնա , Ընդէ՞ր ոչ եւզդ
 այդ վաճառեցաւ երեք հարևու դենա-
 6 լի եւ տուաւ աղքատաց : Զայս ատաց ,
 ոչ զի զաղքատաց ինչ փոյթ էր նմա ,
 այլ զի զոզ էր եւ զարկին ինքն ունէր ,
 7 եւ որ ինչ անկանէրն՝ նա կրէր : Ասէ
 Յիսուս , Թոյլ տուր դմա , զի յօրն պա-
 8 տանաց իմոց 5 պահեսցէ զայդ . Զաղ-
 քատս յամենայն ժամ ընդ ձեզ ունիք ,
 զիս ոչ հանապաղ ընդ ձեզ սնիք :
 9 Իբրեւ զիտաց ժողովուրդ բազում
 ի Հրէիցն թէ անդ է , եկին , ոչ միայն
 վասն Յիսուսի , այլ զի եւ զՂազար

1Ո՞ր՞ա՜ , զվէմն ուր զներ մեռեալն
 2Յոյն , ոտացի
 3Յոյն , Մարթա
 4Ո՞ր՞ա՜ , արարն Յիսուս

5Ո՞ր՞ա՜ , պահեաց

40 տեսցեն , զոր յարդոցն ի մեռելոց : Խորհուրդ արարին քանանայապետքն , զի
 41 եւ զՂազար սպանցեն . Քանդիլ բազումք ի Հրէից Կերթային եւ հաւատային ի Յիսուս :
 42 ԷԿ . Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում որ եկեալ էր ի տօնն , իրրեւ լուան
 43 եթէ գայ Յիսուս յերուսաղէմ , Առին ոտս արմաւենեաց եւ ելին ընդ առաջ նորա , աղաղակէին եւ ասէին , Ովսաննա , օրհնեալ որ գասդ յանուն Տեառն ,
 44 Թագաւորդ Իսրայելի : Եւ գտեալ Յիսուսի էչ մի , նստաւ ի վերայ նորա ,
 45 որպէս եւ գրեալ է , Մի՛ երկնչիր , գուտոր Սիրովի , ահաւասիկ թագաւոր քո գայ նստեալ ի վերայ յաւանակի
 46 իշոյ : Եւ զայն ինչ ոչ գիտացին աշակերտքն նորա զառաջինն , այլ յորժամ փառաւորեցաւ Յիսուս , յայնժամ յիշեցին եթէ այն էր որ գրեալն էր վասն
 47 նորա , եւ զայն արարին նմա : Եւ ժողովուրդն վկայէր որ էր ընդ նմա , եթէ զՂազար կոչեաց եւեթ ի գերեզմանէն ,
 48 եւ յարոյց զնա ի մեռելոց : Եւ վասն այնորոց ընդ առաջ եղև նմա ժողովուրդն , զի լուան եթէ զայն նշանս արարեալ էր նորա : Իսկ փարիսեցիքն ասէին ընդ միմեանս , Տեսանէ՞ք զի ոչինչ օգտիք . ահաւասիկ աշխարհ ամենայն զկնի նորա գնաց :

20 Էին անդ ոմանք եւ հեթանոսք յելիսոս անդր , զի երկիր պաղանիցեն
 21 ի տօնին : Նօքա մատաննս առ Փիլիպպոս որ ի Բեթսայիզայ Գալիլեացւոցն էր , ազաչէին զնա եւ ասէին , Տէր ,
 22 կամիր՞ք զՅիսուս տեսանել : Գայ Փիլիպպոս եւ ասէ ցԱնդրէաս , Անդրէաս
 23 եւ Փիլիպպոս ասեն զՅիսուս : Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա եւ ասէ , Եհաս ժամ զի փառաւորեսցի Որդի մարդոյ :

24 ԷԲ . Ամէն ամէն ասեմ ձեզ , Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի , ինքն միայն կայ . ապա եթէ մեռանիցի , բազում արդիւնս առնէ : Որ սիրէ զանձն իւր՝ 2 արձակէ զնա . եւ որ ատեաց զանձն իւր յաշխարհիս յայտնիկ ի կեանսն յաւիտեանականս պահեսցէ
 26 զնա : Եթէ ոք զիս պաշտիցէ , զկնի իմ

եկեսցէ . եւ ուր եսն եմ , անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի . եթէ ոք զիս պաշտիցէ , պատուեսցէ զնա Հայրն իմ :
 27 ԷԳ . Բայց այժմ անձն իմ խոտկեալ է . եւ զի՞նչ ասացից , եթէ , Հայր , ապրեցս զիս ի ժամէ աստի յայտմանէ . այլ
 28 վասն այնորիկ եկի ի ժամս յայս : Հայր , փառաւորեա զանուն քո : Եկի բարբառ յերկնից , Եւ փառաւոր արարի , եւ
 29 դարձեալ փառաւոր արարից : Եւ ժողովուրդն որ կայր եւ լսէր , ասէին Որստուան լինել . կէսքն ասէին , Հրէշտակ խօսեցաւ ընդ նմա : Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ , Ոչ վասն իմ ինչ եկն բարբառս այս , այլ վասն ձեր :
 31 Այժմիկ զատաստան է աշխարհիս այսորիկ , այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեացի արտաքս : Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ , զամենեւին
 32 ձգեցից առ իս : Զայս ասէր նշանակեալ թէ որով մահու մեռանելոց իցէ :
 34 Պատասխանի ետ նմա ժողովուրդն , Մեք լուաք յորինաց եթէ Քրիստոսն յաւիտեան կայ , եւ զու զիս՞րդ ասես թէ Պարտ է բարձրանալ Որդւոյ մարդոյ . ո՞վ է այն Որդին մարդոյ : Ասէ ցնոսա Յիսուս , Փոքր մեւս եւս ժամանակ լոյս ընդ ձեզ է . գնացէք մինչդեռ զլոյսն ունիք , զի մի՛ խաւար ձեզ հասցէ . զի որ զնայ ի խաւարի՞ ոչ գիտէ
 36 յո երթայ : Մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ունիք , հաւատացէք ի լոյսն , զի որդիք լուսոյ եղիջիք : Զայս խօսեցաւ Յիսուս , եւ չոգաւ թաքեալ ի նոցանէ :
 37 Եւ այնչափ նշանս արարեալ էր առաջի նոցա , եւ նոքա ոչ հաւատային
 38 ի նա . Զի լցցի բանն Եսայեայ մարգարէի զոր ասացն , Տէր , ո՞ հաւատաց ի լուր մեր , եւ բազուկ Տեառն ո՞ւմ
 39 յայտնեցաւ : Վասն այնորիկ ոչ կարէին հաւատալ , զի միւտանդամ ասէ Եսայի ,
 40 Թէ կուրացոյց զաչս նոցա եւ ասչեցոյց զսիրտս նոցա , զի մի՛ տեսցեն աչօք եւ իմացին սրտիւք եւ դարձան
 41 ցին , եւ բժշկեցից զնոսա : Զայս ասոյց Եսայի , զի ետես զիստս նորա եւ խօսեցաւ վասն նորա , Բայց սակայն եւ յիշխանաց անտի բազումք հաւատացին ի նա , այլ վասն փարիսեցւոցն ոչ յայտնէին , զի մի՛ ժողովրդեանէն կրանիցեն :
 43 Քանզի սիրեցին զիստս մարդկան առաւել քան զիստս Աստուծոյ :

1 Գ. 22, երկնային վասն նորա
 2 Գ. 22, կորուսցէ . Դե. Մատթ. ժ. 39, ժ. 9. 25.

44 ԵՊ. Եւ Յիսուս աղաղակէր եւ ասէր, Որ հաւատայ յիս՝ ոչ հաւատայ յիս, 45 այլ յայն որ առաքեալացն զիս : Եւ որ տեսանէ զիս՝ զայն տեսանէ որ առա- 46 քեացն զիս : Ես լոյս յաշխարհ եկի, զի ամենայն որ հաւատայ յիս՝ ի խաւարի 47 մի՛ մնացէ : Եւ եթէ ոք լուիցէ բանից իմոց եւ ոչ պահեցէ, ես ոչ դատիմ զնա . քանզի ոչ եկի թէ դատեցայց զաշխարհ, այլ զի փրկեցից զաշխարհ : 48 Որ անարդէ զիս եւ ոչ ընդունի զբանս իմ, գոյ որ դատի զնա . բանն զոր ես խօսեցայ, նա դատի զնա յաւուրն յեւ- 49 նում : Զի ես յանձնէ իմմէ ոչ խօսեցայ, այլ որ առաքեալացն զիս Հայր, նա ետ ինձ պատուէր զինչ ասացից եւ 50 զինչ խօսեցայց : Եւ գիտեմ եթէ պատուէրն այն կեանք են յաւիտենականք . արդ զոր ենն խօսիմ, որպէս ասաց ինձ Հայրն, այնպէս խօսիմ :

ԳԼ. ԺԳ

1 ԷՆ . Յառաջագոյն քան զտօնն զատկի զիտաց Յիսուս թէ հասեալ է ժամնորա զի փոխեսցի յաշխարհէ աստի առ Հայր, սիրեաց զիւրսն որ յաշխարհի աստ են, ի սպառ սիրեաց զնոսա : 2 Եւ ի լինելոյ ընթերեացն (Սատանայի իսկ արկեալ էր ի սիրա, զի մատնեացէ զնա, Յուդայ Սիմոնի իսկարիովտա- 3 ցւոյ) Գիտաց Յիսուս զի զամենայն ինչ ետ Հայր ի ձեռս նորա, եւ թէ յԱստուծոյ ել եւ առ Աստուած երթայ, 4 Յառնէ յընթերեաց անտի եւ զնէ զհանդերձան, եւ առեալ զենջակ մի սպա- 5 ծաւ : Եւ ապա առեալ ջուր արկ ի կոնք, եւ սկսաւ լուանայ զոտս աշակերտացն, եւ սրէր զենջակաւն զոր 6 սիածեալ էր : Գայ առ Սիմոն Պետրոս . եւ նա ասէ ցնա, Տէր, զո՞ւ զիմ զոտս 7 լուանաս : Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ, Չոր ինչ եսս գործեմ՝ զու այժմ ոչ գիտես . բայց ապա զի- 8 տասջիր Ասէ ցնա Պետրոս, Ոչ լուսացես զոտս իմ յաւիտեան . պատասխանի ետ նմա Յիսուս, Եթէ ոչ լուացից գրեզ, ոչ ունիս ընդ իս մասն : 9 Ասէ ցնա Սիմոն Պետրոս, Տէր, մի՛ միայն զոտս իմ, այլ եւ զձեռս եւ 10 զգլուխ : Ասէ ցնա Յիսուս, Լուացելոյն չէ ինչ պիտոյ, բայց զի զոտսն

լուանայցէ, քանզի ամենեւին սուրբ է . եւ դուք սուրբ էք, այլ ոչ ամենեքին : 11 Զի գիտէր զայն որ մատնելոցն էր զնա . վասն այնորիկ տայց թէ Ոչ ամենեքին 12 սուրբ էք : Եւ յորժամ լուաց զոտս նոցա, ա՛ռ զհանդերձան իւր եւ դարձեալ բազմեցաւ, եւ ասէ ցնոսա, Գի- 13 տէ՛ք զինչ արարից ձեզ . Դուք կոչէք զիս Վարդապետ եւ Տէր, եւ բարեոք 14 ասէք, քանզի եմ իսկ : Իսկ արդ եթէ ես լուացի զոտս ձեր, Տէրս եւ Վարդապետս, եւ դուք պարտիք զմիմեանց 15 ոտս լուանայ : Զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես ձեզ արարի, եւ դուք առնիջիք : 16 ԷԶ . Ամէն ամէն ասեմ ձեզ, Ոչ է ծառայ մե՞ծ քան զտէր իւր, եւ ոչ առաքեալ մե՞ծ քան զայն որ առաքեացն 17 զնա : Եթէ զայս գիտէք, երանելի եւս 18 էք, եթէ ասնիրցէք զայս : Ոչ վասն ամենեցուն ձե ասեմ, զի ես գիտեմ զորս ընտրեցիք . այլ զի լցցի զիւրն թէ Որ ուտէր ընդ իս հաց՝ արար ինձ խա- 19 րէութիւն : Յայսմհետէ իսկ ասեմ ձեզ մինչչև . եղեալ, զի յորժամ լինիցի, 20 հաւատասջիք թէ ես եմ : Ամէն ամէն ասեմ ձեզ, Որ ընդունի զոր ոք ես առաքեցից՝ զիս ընդունի . եւ որ զիս ընդունի՝ ընդունի զայն որ առաքեացն զիս : 21 Զայս իբրեւ ասաց Յիսուս, խոսկեցաւ յոզի իւր, վկայեաց եւ ասէ, Ամէն ամէն ասեմ ձեզ զի մի ոմն ի ձէնջ 22 մատնելոց է զիս : Հայեին ընդ միմեանս աշակերտքն տարակուսեալք թէ 23 զու՞մէ՛ ասիցէ : Եւ էր մի ոմն յաշակերտացն իսկուալ առ Յիսուսիւ, զոր 24 սիրէրն Յիսուս : Ակնարկէ նմա Սիմոն Պետրոս հարցանել, ո՛վ իցէ վասն 25 որոյ ասէն : Եւ նա անկեալ զամբօքն 26 Յիսուսի՝ ասէ ցնա, Տէր, ո՛վ է : Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ, Այն է, որում ես թացից զպատանն եւ տաց . եւ թացեալ զպատանն տայ ՝ Յուդայի 27 իսկարիովտացւոյ : Եւ յետ պատասոյն ապա հիտու ի նա Սատանայ . եւ ասէ ցնա Յիսուս, Արդ որ զինչ ասնելոց 28 ես՝ արա վաղվաղակի : Եւ զայս ոչ ոք իմացաւ ի բազմակահաց անտի, թէ 29 առ ինչ ասաց ցնա : Զի ոմանք հա-

Իբրևսի, ցՅուդա Ամեգեի

մարէին թէ զի զարկզն ունէր Յուզա,
ասաց նմա Յիսուս, Գնես ինչ որ պի-
տայ իցէ մեզ ի տօնիս, եւ կամ, զի
30 ազքատայ ինչ սացէ: Իսկ նորա առ-
եալ զպատանն՝ ել արտաքս վազիւ-
զակի, եւ էր զիչեր:
31 Էէ. եւ իբրեւ ել, ասէ Յիսուս,
Այժմ փատաւորեցաւ Որդի մարդոյ,
եւ Աստուած փատաւորեցաւ ի նմա:
32 Ձի եթէ Աստուած փատաւորեցէ գնա-
յանն իւր. եւ վազվազակի փատաւո-
33 րեացէ գնա: Որցեակք իմ, փորը ինչ
մամանակ ընդ ձեզ եմ. ինդրիցէք զիս-
եւ որպէս ասայի ց՛ընեսցան եթէ Ուր
եան երթամ, զուք ոչ կարէք գայ, եւ
34 արդ ձեզ ասեմ: Պատուիրանն նոր սում
ձեզ, զի սիրիցէք զմիմեանս. որպէս
սիրեցի ես զձեզ, զի եւ զուք սիրես-
35 չիք զմիմեանս: Յայսմ զիտասցին ա-
մենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ
36 սիրիցէք զմիմեանս: Ասէ ցնա Սիմօն
Պետրոս, Տէր, յո՞վ երթաս: Պատաս-
խանի եւ Յիսուս, Ուր եան երթամ՝
զու ոչ կարես այժմ զալ զկնի իմ, բայց
37 ապա եկեսցես զկնի իմ: Ասէ ցնա Պե-
տրոս, Տէր, ընդէ՛ր ոչ կարիցեմ զալ
այժմ զկնի քո, արգէն զանձն իմ իսկ
38 եղից ի վերայ քո: Պատասխանի եւ
Յիսուս, Չա՞նձն քո զիցես ի վերայ
իմ. ամէն ամէն ատեմ քեզ, Չեւ իցի
հաւու խօսեալ, մինչ զու երիցս ու-
րասցիս զիս:

ԳԼ ԺԳ

1 **Մ**ի՛ խոռվեցին սիրտք ձեր. այլ հա-
ւատացէք յԱստուած եւ յիս հաւա-
2 տացէք: Ի տան չօր իմոյ ոխեկանք
բազում են. ապա թէ՛ ոչ՝ ասացեալ էր
իմ ձեզ, Կեթէ՛ երթամ, եւ պատրաս-
3 տեմ ձեզ տեղի: Եւ եթէ՛ երթամ եւ
պատրաստեմ ձեզ տեղի, զարձեալ զամ
եւ առնուց զձեզ առ իս. զի ուր եան
4 իցեմ, եւ զուք անդ իցէք: Եւ ուր
երթամն՝ զիտիցէք, եւ զճանապարհն
զիտիցէք:
5 Ասէ ցնա Թովմաս, Տէր, ոչ զի-
տեմք յո՛ երթաս, եւ զիա՞րդ զճանա-
6 պարհն կարասցուք զիտել: Ասէ ցնա

Յիսուս, Ես եմ ճանապարհն եւ ճըչ-
մարտութիւն եւ կեանք. ոչ ոք զայ
7 առ Հայր եթէ՛ ոչ ինեւ: Եթէ՛ զիս զի-
տելք, ապա եւ զՀայր իմ զիտելք,
եւ այսուհետեւ զիտասջիք զնա եւ
տեսէք գնա:
8 Ասէ ցնա Փիլիպպոս, Տէր, ցոյց մեզ
9 զՀայր, եւ շատ է մեզ: Ասէ ցնա Յի-
սուս, Այսչափ ժամանակս ընդ ձեզ
եմ, եւ ո՛չ ծանեար զիս, Փիլիպպէ.
որ ետեսն զիս՝ ետես զՀայրն. եւ զու
զիա՞րդ ասես եթէ՛ Յոյց մեզ զՀայր:
10 Ո՞չ հաւատաս եթէ՛ ես ի Հայր եւ Հայր
յիս է. զբանս զոր ես խօսիմ ընդ ձեզ,
ոչ եթէ՛ յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն
որ յիս բնակեալ է՝ նա զործէ զգործսն:
11 Հաւատասք ինձ, եթէ՛ ես ի Հայր եւ
Հայր յիս է. ապա թէ՛ ոչ՝ զոնէ՛ վասն
12 զործոցն հաւատացէք ինձ: Ամէն ա-
մէն ատեմ ձեզ թէ՛ որ հաւատայն յիս,
զգործսն զոր եւ զորձեմ, եւ նա զոր-
ծեսցէ, եւ մեծամեծս եւս քան զնոցնս
զործեսցէ. զի ես առ Հայր երթամ:
13 Եւ զոր ինչ ինդրիցէք յանան իմ՝ ա-
րարից զայն, զի փատաւորեսցի Հայր
յՈրդիս:³
14 ԸԿ. Եթէ սիրէք զիս, զպատուի-
15 րանս իմ պահեալիք, եւ ես ազաչե-
ցից զՀայր, եւ այլ Միտիմարիչ սացէ
ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցէ ի յաւի-
17 տեան. ՉՀոգին ճմարտութեան զոր
աշխարհս ոչ կարէ ընդունել, զի ոչ
տեսանէ գնա եւ ոչ ճանաչէ գնա. բայց
զուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնա-
18 կեսցէ եւ ընդ ձեզ եղիցի: Ոչ թողից
19 զձեզ որքս, զամ առ ձեզ. Փորք մեւս
եւս՝ եւ աշխարհս ոչ եւս տեսանէ զիս,
բայց զուք տեսանիցէք զիս, զի եւ
կենդանի եմ, եւ զուք կենդանի լինե-
20 լոց էք: Յայնմ աւուր զիտասջիք զուք,
զի ես ի Հօր իմում, եւ զուք յիս, եւ
21 ես ի ձեզ: Որ ունի զպատուիրանս իմ
եւ պահէ գնոսս՝ նա է որ սիրէ զիս.
եւ որ սիրէն զիս՝ սիրեսցի ի Հօրէ իմմէ.
եւ ես սիրեցից զնա, եւ երեւեցուցից
նմա զիս:
22 Ասէ ցնա Յուզա (ոչ Իսկարիոփոա-
ցին), Տէր, զի՞ եղև զի մեզ յայսնելոց
23 ես գրեզ եւ ոչ աշխարհի: Պատասխանի

² Գ. Ն. Հաւատացէք
³ Բ. Վ. Ե. Կ. Լ. Ն. (14) Եթէ խնդրիցէք ինչ
յանուն իմ՝ արարից զայն:

¹ Ի Բ. Վ. Ե. Կ. Լ. Ն. Գնանքի. յաման պատուի

եա Յիսուս եւ ասէ ցնա, Եթէ ոք սիրէ
 զիս, զբանն իմ պահեցէ, եւ Հայր իմ
 սիրեացէ զնա. եւ առ նա եկեացուք
 24 Եւ թիւովանս առ նմա արասցուք. եւ
 որ ոչն սիրէ զիս՝ զբանս իմ ոչ պահէ.
 եւ բանն իմ զոր լսէք՝ ոչ է իմ, այլ
 25 Հօրն որ առաքեալցն զիս: Չայս խօ-
 սեցայ ընդ ձեզ, մինչ առ ձեզս եմ:
 26 Իսկ Մխիթարիէն, Հօրին Սուրբ, զոր
 առաքեացէ Հայր յանուն իմ, նա ու-
 սուսցէ ձեզ զամենայն, եւ յիշեցուցէ
 27 զամենայն զոր ինչ ասացի ձեզ: Խա-
 զազուեթիւն թողում ձեզ, զխազազու-
 թիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշ-
 խարհս տայ, տամ ես ձեզ. մի՛ խոտ-
 վեացին սիրտք ձեր եւ մի՛ զանգիտեա-
 28 ցեն: Լուայք զի ասացի ես ձեզ թէ
 Եթեմ եւ զամ առ ձեզ. եթէ սիրէիք
 զիս, ապա ուրախ լեալ էր ձեր եթէ
 ես առ Հայր երթամ, զի Հայր իմ մեծ
 29 է քան զիս: Եւ այժմ ասացի ձեզ
 մինչչեւ եղեալ, զի յորժամ լինիցի,
 30 հաւատասցիք: Ոչ եւս այլ շատ խօսե-
 ցայ ընդ ձեզ. դայ իշխան աշխարհիս
 31 այսորիկ եւ յիս ինչ ոչ գտանէ: Այլ
 զի ծանօցէ աշխարհ եթէ սիրեմ զՀայր,
 եւ որպէս պատուիրեաց ինձ Հայր,
 այնպէս առնեմ. օ՛ն արիք զնասցուք
 աստի:

ԳԼ ԺԵ

1 Ես եմ որթն ճշմարիտ, եւ Հայր իմ
 2 մշակ է: Ամենայն ուս որ յիս է եւ ոչ
 բերէ պտուղ՝ կտրէ զնա. եւ ամենայն
 որ բերէ պտուղ՝ սրբէ զնա, զի առա-
 3 ընդ եւս պողարեր լիցի: Դուք արդէն
 իսկ սուրբ էք վասն բանին զոր խօսե-
 4 ցայ ընդ ձեզ: Կացէք յիս եւ ես ի ձեզ.
 որպէս ուսն ոչ կարէ պտուղ բերել
 յանձնէ իւրմէ, եթէ չիցէ հաստատեալ
 յորթն, նոյնպէս եւ զուք եթէ ոչ յիս
 5 հաստատեալ իցէք: Ես եմ որթ եւ զուք
 ուս. որ հաստատեալ է յիս եւ ես ի նա,
 նա բերէ պտուղ յոյժ. զի առանց իմ
 6 ոչինչ կարէք առնել: Եթէ ոք ոչ է
 հաստատեալ յիս, ել նա արտաքս իր-
 7 րեւ զուսն եւ ցամաքեցաւ, եւ ժողո-
 վին զնա եւ ի հուր արկանեն, եւ այրի:
 8 Եթէ կացէք յիս եւ բանք իմ ի ձեզ
 կայցեն, զոր ինչ կամիցիք խնդրեա-
 9 ջիք, եւ լինիցի ձեզ: Յայսմիկ փառա-

ւորեցաւ Հայր իմ, զի պտուղ յոյժ բե-
 րիցէք, եւ եղիջիք իմ աշակերտք:
 9 Որպէս սիրեաց զիս Հայր, եւ ես
 սիրեցի զձեզ. հաստատուն կացէք ի
 10 սէր իմ: Եթէ պահիցէք զպատուիրանս
 իմ, կայցիք ի սէր իմ. որպէս ես
 զպատուիրանս Հօր իմոյ պահեցի, եւ
 11 կամ ի սէր նորա: Չայս խօսեցայ ընդ
 ձեզ, զի ուրախութիւնն իմ ի ձեզ իցէ,
 եւ ձեր ուրախութիւնն լցեալ եղիցի:
 12 Այս է պատուէր իմ, զի սիրեսցիք
 զմիմեանս, որպէս եւ ես սիրեցի զձեզ:
 13 Եթէ եւս քան զայս սէր ոչ ոք ունի,
 եթէ զանձն իւր զիցէ ի վերայ բարե-
 14 կամաց իւրոց: Դուք բարեկամք էք
 իմ, եթէ առնիցէք զոր եսն պատուի-
 15 րեմ ձեզ: Ոչ եւս կոչեմ զձեզ ծառայս,
 զի ծառայն ոչ զիտէ զինչ գործէ աէրն
 նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս,
 զի պամենայն զոր լուայ ի Հօրէ իմմէ՝
 16 ծանուցի ձեզ: Ոչ եթէ զուք բնորե-
 ցէք զիս, այլ ես բնորեցի զձեզ, եւ եզի
 զձեզ զի զուք երթայցէք եւ պողա-
 17 րերք լինիցիք, եւ պտուղն ձեր կաց-
 ցէ, եւ զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ:
 18 Եթէ աշխարհ զձեզ ատեայ, զիտաս-
 19 ջիք զի նախ զիս ատեաց: Եթէ յաշ-
 խարհէ աստի էիք, աշխարհ զիւրն սի-
 20 րէր արդեւք. բայց զի չէք յաշխարհէ,
 այլ ես բնորեցի զձեզ յաշխարհէ, վասն
 21 այնորիկ ատեայ զձեզ աշխարհ: Յիշե-
 ցէք զբանն զոր ասացի ձեզ, թէ Ոչ է
 ծառայ մեծ քան զսէր իւր. եթէ զիս
 հալածեցին, ապա եւ զձեզ հալածեա-
 22 ցեն. եթէ զբանն իմ պահեցին, ապա
 եւ զձերն պահեցեն: Այլ զնոյնս ա-
 23 րասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ,
 զի ոչ գիտեն զայն որ առաքեալցն զիս:
 24 Իմ եթէ չէր եկեալ եւ խօսեցեալ ընդ
 նոսա, մեզ ինչ ոչ գոյր նոցա. բայց
 արդ չիք ինչ պատճառք վասն մեզաց
 25 իւրեանց: Որ զիս ատեայ, եւ զՀայրն
 իմ ատեայ: Եթէ զգործսն չէր գործեալ
 ի նոսա, զոր ոչ այլ ոք գործեաց, մեզ
 ինչ ոչ գոյր նոցա, բայց արդ տեսին
 եւ ատեցին եւ զիս եւ զՀայր իմ:
 26 Այլ զի լցիլ բանն որ յօրէնս նոցա
 գրեալ է թէ՛ Ատեցին զիս տարապար-
 27 տուց: Բայց յորժամ եկեացէ Մխիթա-
 րիւն զոր եւ առաքեցից ձեզ ի Հօրէ:

զՀոգին ճշմարտութեան որ ի Հօրէ
27 երանէ, նա վիպեացէ վասն իմ. Եւ
գուք վիպեք, զի ի սկզբանէ ընդ իս
էք:

ԳԼ ԺԶ

4 Չայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ գայ-
2 իմակդեաջիք: Ի մողովրդոց իւրեանց
հանիցեն զձեզ. այլ եկեացէ ժամանակ
զի ամենայն որ սպանանիցէ զձեզ՝ հա-
3 մարիցի պաշտօն մատուցանել Աստու-
3 ծոց: Եւ զայն արասցեն ընդ ձեզ,
քանզի ոչ ծանեան զՀայր եւ ոչ զիս:
4 Այլ եւ զայս խօսեցայ ընդ ձեզ, զի յոր-
ժամ եկեացէ ժամանակ, յիշիցէք թէ
եւ ասացի ձեզ. զայս ի սկզբանէ ոչ
ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի:

5 Բայց արդ երթամ ես առ առաքիչն
իմ, եւ ոչ ոք ի ձէնջ հարցանէ ցիս թէ

6 Յո՞ երթաս: Այլ զի զայս խօսեցայ ընդ
ձեզ, արտօնութիւն ելից զսիրտս ձեր:

7 Այլ եւ զճշմարտուն ստեմ ձեզ, բաւ է
ձեզ եթէ ես երթամ. զի եթէ ես ոչ
երթայց, Միսթարիչն ոչ եկեացէ առ
ձեզ. ապա եթէ երթամ, ասարեցից

8 զիս առ ձեզ: Եւ նա եկեալ յանդի-
մանեացէ զաշխարհ վասն մեզաց եւ
վասն արգարութեան եւ վասն զա-

9 տաստանի: Վասն մեզաց՝ զի ոչ հա-

10 ւատան յիս. Վասն արգարութեան՝ զի
առ Հայր իմ երթամ, եւ ոչ եւս սե-

11 անէք զիս. Վասն զատաստանի՝ զի
իշխան աշխարհիս այսորիկ զատապար-

12 տեալ է: Եւս բազում ինչ ունիմ ասել
ձեզ, այլ ոչ կարէք հանդարտել այժ-

13 միկ: Յորժամ եկեացէ նա, Հոգին ճշ-
մարտութեան, առաջնորդեացէ ձեզ ա-

մենայն ճշմարտութեամբ. զի ոչ եթէ
յանձնէ ինչ խօսիցի, այլ զոր իրից՝

14 խօսիցի, եւ զգալոցն պատմեացէ ձեզ:

15 Եւ զիս փառաւորեացէ, զի յիմէ՛ անտի
16 առնուցու եւ պատմեացէ ձեզ, Չամե-

նայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է. վասն
այնորիկ ասացի ձեզ թէ յիմէ՛ անտի

17 առնուցու եւ պատմեացէ ձեզ: Փոքր
մի՛ եւ ոչ եւս տեսանէք զիս, եւ ասոք

ստեղծիկ մի՛ եւ տեսանիցէք զիս, եւ
եւ երթամ առ Հայր:

18 Ասէին ոմանք յաշակերտաց անտի
ցմիմեանս, Զի՞նչ է այս զոր ասէս ցմեզ

19 թէ Փոքր մի՛ եւ ոչ տեսանէք զիս, եւ

20 զորձեալ ստեղծիկ մի՛ եւ տեսանիցէք

21 զիս, եւ թէ ես առ Հայր երթամ՝ եւ
ասէին, Զի՞նչ իցէ այն Փոքր մեւս

22 եւսն. չգիտեմք զի՞նչ խօսի: Գիտայ
Յիսուս եթէ կամէին ցնա հարցանել,
եւ ասէ ցնոսս, Վասն այդորիկ խնդրեք
23 ընդ միմեանս զի ասացի թէ Փոքր մի՛
եւ ոչ տեսանէք զիս, եւ զորձեալ ա-

24 կաւիկ մեւս եւս՝ եւ տեսանիցէք զիս:

25 Ամէն ամէն ասեմ ձեզ, զի լայջիք եւ
ողբասցիք գուք, եւ աշխարհ խնդաս-

26 զէ. գուք արամեացիք, այլ արամու-

27 թիւն ձեր յուրախութիւն եղիցի, կին
յորժամ ծնանիցի, արամութիւնէ նմա,
զի հասեալ է ժամ նորոս. այլ յորժամ
ծնցի զմանուկն, ոչ եւս յիշէ զնեղու-

28 թիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ

29 մարդ յաշխարհ: Եւ գուք այժմ արա-

մութիւն ունիք, այլ զորձեալ տեսից
զձեզ, եւ ուրախ լիցին սիրոք ձեր.

30 եւ զուրախութիւնն ձեր ոչ ոք հանիցէ

31 ի ձէնջ: Եւ յայնմ առ ուր զիս ինչ ոչ
հարցանիցէք: Ամէն ամէն ասեմ ձեզ,
զի զոր ինչ խնդրեցէք ի Հօրէ իմմ յա-

32 նուն իմ՝ ասացէ ձեզ: Մինչեւ ցայժմ
ոչինչ խնդրեցէք յանուն իմ. խնդրե-

33 ցէք եւ տնուցուք, զի ուրախու-

34 թիւնն ձեր լցեալ եղիցի: Չայս ասա-

կօք խօսեցայ ընդ ձեզ. եկեացէ մա-

մանակ յորժամ ոչ եւս աստակօք խօսե-

35 ցայց ընդ ձեզ, այլ յայնտապէս զՀօրէ

36 պատմեցից ձեզ: Յայնմ առ ուր ինդ-

րեացիք յանուն իմ. եւ ոչ ասեմ ձեզ
եթէ ես ազաչեցից զՀայր վասն ձեր:

37 Զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ, զի
զուք զիս սիրեցէք, եւ հաւատացէք

38 եթէ ես յԱստուծոց ելի: Եկի ի Հօրէ
եւ եկի յաշխարհ, զորձեալ թողում

զաշխարհ եւ երթամ առ Հայր:

39 Ասեն ցնա աշակերտքն, Ահա արդ
յայտնութեամբ խօսիս, եւ ասակ եւ

40 ոչ մի ինչ ասես: Այժմ միկ դիտեմք եթէ
դիտես զամենայն, եւ ոչինչ սիրոց է

41 եթէ ոք հարցանիցէ զքեզ. յայտնիկ հա-

42 ւատամք եթէ յԱստուծոց ելեր: Պա-

տասխանի ետ նոցա Յիմուս եւ ասէ,
43 Այժմ հաւատամքք. Ահա եկեաց ժամ

44 եւ եկեալ իսկ է, զի ցրուեցիք յիւ-

րաքանչիւր տեղիս, եւ զիս միայն թո-

գուցուք. եւ չեմ միայն, զի Հայր ընդ

45 իս է: Չայս խօսեցայ ընդ ձեզ, զի ընդ

իս խաղաղութիւն ունիցէք. յաշխարհի

աստ նեղութիւն ունիցիք, այլ քաջա-
լիրեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի:

ԳԼ. ԺԷ

1 Չայս իբրեւ խօսեցաւ Յիսուս, ամ-
բարձ դաշս իւր յերկինս եւ ասէ, Հայր,
հասեալ է ժամ, փառաւորեա զՈրդի
քո, զի եւ Որդի քո փառաւորեացէ
2 զքեզ: Որպէս ետուր նմա իշխանու-
թիւն ամենայն մարմնոց, զի ամենայնի
զոր ետուր նամ՝ տացէ զկեանսն յա-
3 շխարհի: Այս եւ յաւիտենական
կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշ-
մարիտ Աստուած, եւ զոր ատաքեցեր
4 զՅիսուս Քրիստոս: Ես զքեզ փառա-
ւորեցի յերկրի. զզորձն կատարեցի
5 զոր ետուր ցիս զի արարից: Եւ այժմ
փառաւորեա զիս, Հայր, առ ի քէն
փառօքն զոր ունէի յառաջ քան զլինեցն
6 աշխարհի առ ի քէն: Յայտնեցի զա-
նուն քո մարդկան զորս ետուր ինձ
7 յանոս, եւ զբանն քո պահեցին: Արդ
զիտացին եթէ զամենայն ինչ զոր ե-
8 տուր ինձ՝ ետուր նոցա. Եւ նոքա ըն-
կայան եւ ծանեան ճշմարտութեամբ
թէ առ ի քէն ելի, եւ հաւատացին
9 եթէ զու ատաքեցեր զիս: Արդ ես վասն
նոցա աղաչեմ. եւ ոչ վասն աշխարհի
աղաչեմ, այլ վասն նոցա զորս ետուրն
10 ինձ, զի քո են. Եւ որ ինչ իմ է՝ ա-
մենայն քո է. եւ որ ինչ քո է՝ այն
իմ է, եւ փառաւորեալ եմ ի նոսա:
11 Եւ ես ոչ եւս եմ յաշխարհի, եւ նոքա
յաշխարհի են, եւ ես առ քեզ դամ.
Հայր սուրբ, պահեա զնոսա յանուն
քո, 2 որով ետուրն ինձ, զի եղիցին
12 մի, որպէս եւ մեք մի եմք: Մինչ էի
3 յաշխարհի ընդ նոսա, ես պահէի զնո-
սա յանուն քո, 2 որով ետուրն ինձ,
եւ պահեցի. եւ ոչ ոք ի նոցանէ կոր-
եալ, բայց որդին կորստեան, զի զիրն
13 լցցի: Բայց արդ առ քեզ գամ, եւ զայս
խօսիմ յաշխարհի, զի ունիցին զուրա-
խութիւնն իմ լիով յանձինս իւրեանց:
14 Ես ետուր նոցա զբանն քո, եւ աշ-
խարհս ատեաց զնոսա. զի չեն յաշ-

խարհէ, որպէս եւ ես չեմ յաշխարհէ:
15 Ոչ զայս աղաչեմ զի բարձցես զնոսա
յաշխարհէ, այլ զի պահեսցես զնոսա
16 ի շարէ: Յաշխարհէ աստի չեն, որպէս
17 եւ ես չեմ յաշխարհէ: Սուրբ արա
զնոսա ճշմարտութեամբ քով, զի քո
18 բանդ ճշմարտութիւն է: Որպէս զիս
ատաքեցեր յաշխարհ, եւ ես ատաքեցի
19 զնոսա յաշխարհ: Եւ ի վերայ նոցա ես
սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին
եւ նոքա սրբապաք ճշմարտութեամբ:
20 Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ
եւ վասն ամենայն հաւատացեալոց բա-
21 նինս նոցա յիս. Չի ամենեքին մի
իցեն, որպէս զու, Հայր, յիս, եւ ես
ի քեզ, զի եւ նոքա ի մեզ իցեն. զի
եւ աշխարհ հաւատասցէ եթէ զու ա-
22 տաքեցեր զիս: Եւ ես զփառսն զոր
ետուր ինձ՝ ետուր նոցա, զի իցեն մի,
23 որպէս եւ մեք մի եմք: Ես ի նոսա,
եւ զու յիս, զի եղիցին կատարեալք
ի մի. եւ զիտասցէ աշխարհ եթէ զու
ատաքեցեր զիս. եւ սիրեցի զնոսա,
24 որպէս զու զիս սիրեցեր: Հայր, զորս
ետուրն ինձ, կամիմ զի ուր եմն եմ,
եւ նոքա իցեն ընդ իս, զի տեսանիցեն
զփառսն զիմ զոր ետուրն ցիս. զի սի-
րեցեր զիս յառաջ քան զլինեցն աշ-
25 խարհի: Հայր արգար, եւ աշխարհ
զքեզ ոչ ծանեալ, այլ ես զքեզ ծա-
նեալ. եւ նոքա ծանեան եթէ զու ա-
26 տաքեցեր զիս: Եւ ծանուցի նոցա զա-
նուն քո եւ ծանուցից. զի սէրն զոր
սիրեցեր զիս ի նոսա իցէ, եւ ես ի
նոսա:

ԳԼ. ԺԸ

1 Չայս իբրեւ ասաց Յիսուս, ել աշա-
կերտօքն հանգերձ յայնկոյս ձորոյն
Կեզրոփնի, ուր էր պարտէզ, յոր ե-
2 մուտ ինքն եւ աշակերտքն իւր: Գի-
տէր եւ Յուզա որ զնայն մասնկոյց
էր՝ զտեղին, զի բազում անգամ ժո-
ղովեալ էր անդր Յիսուսի աշակեր-
3 տօքն հանդերձ: Եւ Յուզայի ատեալ
ընդ իւր զզուեղն, եւ ի քահանայա-
պետիցն եւ ի փարիսեցեոց սպասա-
ւորս, զայ անդր ջահիւք եւ լապտե-
4 րօք եւ զինուք, Իսկ Յիսուս իբրեւ
ետես զայն ամենայն եկեալ ի վերայ
նորա, ել եւ ասէ ցնոսա, Չո՞ խնդրէք:

1 Յնն, քնձ՝ առ ի քէն էն. (8) Չի զբանն զորս
ետուր ինձ՝ ետուր նոցա. և
2 Բուզա՞ն, զոր, այլ՝ զորս
3 ի Բուզա՞ն դաւանե

5 Պատասխանի ետուն նմա, ՉՅիսուս
 6 Նազովրեցի: Ասէ ցնոսա Յիսուս, Ես
 եմ: Կայր ընդ նոսա եւ Յուզա որ
 7 ժատնէրն զնա: Իբրեւ ասաց թէ Ես
 եմ, յետս յետս չողան եւ զարկան
 8 զգեանի: Դարձեալ ենարց զնոսա, Չժ
 խնդրէք: Եւ նոքա ասեն, ՉՅիսուս
 9 Նազովրեցի: Պատասխանի ետ նոցա
 Յիսուս, Ասացի ձեզ թէ Ես եմ. արդ
 եթէ զիս խնդրէք, թոյլ տուք զոցս
 10 երթալ: Զի լցցի բանն որ ասաց թէ
 11 Չորս ետուրն յիս՝ ոչ կորուսից ի նո-
 12 ցանէ եւ ոչ զոր: Իսկ Սիմօն Պետ-
 13 րոս քանզի ունէր սուր, ձգեաց զնա,
 եհար զքահանայապետին ծառայ, եւ
 14 ի բաց առ զուսկն նորա զաջոյ. եւ էր
 15 անունն ծառային Մազքոս: Ասէ Յիսուս
 16 ցՊետրոս, Արկ զսուրդ անդրէն ի պա-
 տեանս իւր. զբաժակն զոր ետ ինձ
 17 Հայր՝ ոչ բմպիցեմ զնա:
 18 Իսկ զուսկն եւ հազարապետն եւ
 19 սպասաւորք Հրէիցն կարան զՅիսուս
 20 եւ կապեցին. Եւ ամին զնա նախ առ
 21 Աննա որ էր աներ Կայիափայի, որ
 22 քահանայապետն էր տարւոյն այնորիկ:
 23 Այս այն Կայիափա էր որ խրատն ետ
 24 Հրէից եթէ Լաւ է ասն միւսմ մեռա-
 25 նկն ի վերայ ժողովրդեանն: Եւ երթա-
 26 յին զհետ Յիսուսի Սիմօն Պետրոս
 27 եւ մեւս աշակերտն. եւ աշակերտն
 28 այն, քանզի ծանօթ էր քահանայա-
 29 պետին, եմուս ընդ Յիսուսի ի զաւիթ
 30 քահանայապետին: Եւ Պետրոս կայր
 31 առ դրանն արտաքոյ. ել մեւս աշա-
 32 կերտն որ էր ծանօթ քահանայապե-
 33 տին, եւ ասաց զդոնապանն եւ եմոյծ
 34 ի ներքս զՊետրոս: Ասէ ազջիկն որ
 35 զոնապանն էր՝ ցՊետրոս, Միթէ եւ
 36 դո՞ւ յաշակերտաց անոն այնորիկ իցես:
 37 Եւ նա ասէ, Ոչ եմ: Կային անդ ծա-
 38 ռայքն. եւ սպասաւորք խարոյկ ար-
 39 կեալ, քանզի ցուրտ էր, եւ ջեռնուիւ.
 40 Կայր ընդ նոսա եւ Պետրոս եւ ջեռնույր:
 41 Եւ քահանայապետն հնարց զՅիսուս
 42 վասն աշակերտացն եւ վասն վարդա-
 43 պետութեան նորա: Պատասխանի ետ
 44 նմա Յիսուս, Ես յայնասպէս խօսե-
 45 ցայ աշխարհի. ես յամենայն ժամ ու-
 46 սուցի ի ժողովրդեանն, եւ ի տաճարի
 47 անդ ուր ամենայն Հրեայք ժողովեալ
 48 էին, եւ ի ծածուկ ինչ ոչ խօսեցայ:
 49 Զի՞ հարցանես զիս, հարց զայնոսիկ

որ լուանն, թէ զինչ խօսեցայ ընդ նո-
 սա. ահաւասիկ նոքա զիտեն զինչ խօ-
 սեցայ: Իբրեւ նա զայն ասաց, մի ոմն
 ի սպասաւորացն որ անդ կայր, ած
 ապտակ Յիսուսի եւ ասէ, Մյգպէս
 պատասխանի տաս քահանայապետի:
 23 Եւ Յիսուս ասէ ցնա, Եթէ չար ինչ
 խօսեցայ, վկայեա վասն չարին, իսկ
 24 եթէ բարի, ընդէ՞ր հարկանես զիս: Եւ
 25 յիտիա քահանայապետ, Եւ Սիմօն
 Պետրոս կայր անդ եւ ջեռնույր. ասեն
 ցնա, Միթէ եւ զո՞ւ յաշակերտաց ան-
 տի նորա իցես: Եւ ուրացաւ եւ ասէ
 26 թէ, Չեմ: Եւ ասէ մի ոմն ի ծասայից
 քահանայապետին, ազգական այնորիկ
 27 զորոյ զուսկն եհաա Պետրոս, Ո՞չ ես
 իսկ տեսի զքեզ ի պարտիզի անդ ընդ
 28 նմա: Դարձեալ իւրացաա Պետրոս, եւ
 վազվազակի հաւ բուսեցաւ:
 29 Եւ ամին զՅիսուս ի վանայն Կայիա-
 փայ յապարանս գատաւորին, եւ էր
 այգուց. եւ նոքա ոչ մտին յապա-
 րանսն, զի մի՛ պղծեցին, այլ զի ու-
 30 տիցեն զզատիկն: Ել առ նոսա Պի-
 զատոս արտաքս եւ ասէ, Զի՞նչ չա-
 31 րախօսութիւն մատուցանէք զանձն
 32 զայնմանէ: Պատասխանի ետուն եւ
 33 ասեն ցնա, Եթէ չէր չաքազործ այրն
 34 այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ:
 35 Ասէ ցնոսա Պիզատոս, Առէք զնա դուք,
 եւ ըստ ձերոց օրինացն զատեցարուք:
 36 Ասեն ցնա Հրեայքն, Մեզ ոչ է արժան
 37 սպանանել զոր: Զի լցցի բանն Յի-
 սուսի զոր ասաց, նշանակեալ թէ ո-
 38 թով մահու մեռանելոց իցէ: Եմուտ
 միւսանգամ յապարանսն Պիզատոս,
 39 կոչեաց զՅիսուս եւ ասէ ցնա, Դո՞ւ
 40 ես թագաւորն Հրէից, Պատասխանի
 ետ Յիսուս, Ի՞քէ՞ն ասես զայդ եթէ
 41 այք ասացին քեզ զինչն: Պատասխա-
 42 նի ետ Պիզատոս, Միթէ՞ եւ ես Հրեայ
 իցեմ. ազգն քո եւ քահանայապետք
 մատնեցին զքեզ ինձ. զի՞նչ գործ գոր-
 43 ծեալ է քո: Պատասխանի ետ Յիսուս,
 44 Իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ.
 45 եթէ յաշխարհէ աստի էր արքայու-
 46 թիւնն իմ, սպասաւորքն իմ մարտն-
 47 չէին արդեւ զի մի՛ մատնեցայ Հրէից,
 48 բայց արդ թագաւորութիւնն իմ չէ
 49 աստի: Ասէ ցնա Պիզատոս, Ապա թէ
 այգպէս իցէ, թագաւոր ոմն ես զու:

Պատասխանի ետ Յիսուս, Դու ասես թէ թագաւոր իցեմ. բայց ես յայդ իսկ ծնեալ եմ, եւ ի դոյն իսկ եկեալ եմ յայխարհ, զի վկայեցից ճշմարտութեանն. ամենայն որ ի ճշմարտութենէ 38 է՝ լսէ բարբառոյ իմոյ: Ասէ զնա Պիղատոս, Զի՞նչ է ճշմարտութիւն: Զայս իբրեւ ասաց, դարձեալ ել առ Հրեայսն եւ ասէ զնոսա, Ես եւ ոչ մի ինչ 39 պատճառ դտանեմ ի նմա: Բայց է ձեր սովորութիւն, զի զմի ոք արձակեցից ձեզ ի զատկիս. արդ կամի՞ք զի ար- 40 ձակեցից ձեզ զԹագաւորն Հրէից: Ազաղակեցին ամենեքեան եւ ասէին, Մի՛ զղա, այլ զԲարաբբա. եւ էր Բարաբբայն այն աւաղակ:

ԳԼ ԺԹ

1 Յայնժամ ա՛ռ Պիղատոս զՅիսուս եւ 2 զան եհար: Եւ զինուորայն արարեալ պսակ ի փշոց՝ եղին ի զլուխ նորա, եւ զպեղուցին նմա հանդերձ ծիրանի: 3 1 Եւ զային առ նա՝ եւ ասէին, Ողջ եր, արքայ Հրէից. եւ հանէին նմա 4 ապտակս: Ել դարձեալ Պիղատոս արտաքս եւ ասէ զնոսա, Ահա ամեմ զնա արտաքս առ ձեզ, զի զիտասջիբ թէ 5 ես յնաս ինչ ի նմա ոչ գտանեմ: Ել Յիսուս արտաքս, եւ ունէր պսակ ի փշոց եւ հանդերձ ծիրանի. եւ ասէ 6 զնոսա, Ահա այրո՞ց ձեզ: Իբրեւ տեսին զնա քահանայպետքն եւ սպասաւորք, զազաղակ բարձին եւ ասեն, Ի խաչ հան, ի խաչ հան ՚զղա. ասէ զնոսա Պիղատոս, Առէք զղա ի ձեզ. եւ ձեզէն հանէք ի խաչ. զի ես ի դմա 7 յնաս ինչ ոչ գտանեմ: Պատասխանի ետուն նմա Հրեայքն, Մէք օրէնս ունիմք, եւ ըստ օրինաց մերոց պարտի մեռանել, զի զանձն իւր Որդի Աստու- 8 ծոյ արար: Իբրեւ լուաւ զբանս զայս Պիղատոս, առաւել եւս երկեաւ: Եւ մուտ զարձեալ անդէն յապարանսն, եւ ասէ զՅիսուս, Ուստի՞ ես զու. եւ 40 Յիսուս ոչ ետ նմա պատասխանի: Ասէ զնա Պիղատոս, Ընդ իս ո՞չ լսօսիս, ո՞չ զիտես եթէ իշխանութիւն ունիմ հանել զքեզ ի խաչ, եւ իշխանութիւն 41 ունիմ արձակել զքեզ: Պատասխանի

եւ Յիսուս, Ոչ ունէիր զու իշխանու- թիւն ի վերայ իմ եւ ոչ մի, եթէ ոչ էր տուեալ քեզ ի վերուստ. վասն այ- նորիկ որ մատնեացն զիս քեզ, նորա 42 մեծ մեղք են: Եւ յայնմանէ Պիղատոս խնդրէր արձակել զնա. եւ Հրեայքն ազաղակէին եւ ասէին, Եթէ զղա ար- ձակես, չես բարեկամ կայսեր. ամե- 43 նայն ոք որ թագաւոր կոչէ զանձն իւր, հակառակ է կայսեր: Իսկ Պիղա- տոս իբրեւ լուաւ զբանս զայսոսիկ, ամ զՅիսուս արտաքս. եւ նստաւ ի վերայ բեմին ի սեղուծն որ կոչէր Գարայատակ, եւ Երբայեցերէն կապ- 44 պաթա: (էր ուրբաթն զատկի, եւ էր ժամ իբրեւ վեցերորդ,) եւ ասէ զՀրեայսն, Ահա թագաւորդ ձեր 2ցձեզ: 45 Եւ նորա ազաղակէին, Բարձ ՚ի մէնջ, բարձ ՚ի մէնջ, եւ հան զղա ի խաչ: Ասէ զնոսա Պիղատոս, Ես զԹագա- տորդ ձեր ի խաչ հանիցեմ: Պատաս- խանի ետուն քահանայպետքն, Զիք 46 մեր թագաւոր բայ ի կայսերէ: Յայն- ժամ ետ զնա ի ձեռս նոցա, զի ի խաչ երանիցէ: 47 Եւ նորա առեալ տանէին զնա. եւ բարձեալ էր ինքնին զխաչափայտն, եւ երանէր ի սեղին որ անուանեալ էր Գաղաթան, եւ կոչէր Երբայեցերէն 48 Գողգոթամ. Ուր եւ ի խաչս իսկ հանին զնա, եւ ընդ նմա երկուս եւս այլս անտի եւ անտի, եւ ի միջի զՅիսուս: 49 Գրեաց եւ տախտակ մի Պիղատոս, եւ եզ ի վերայ խաչին. եւ էր գրեալ, ՅԻՍՈՒՍ ՆԱԶԱՐԵՅԻ, ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ: 20 Զայն տախտակ ընթերցան բազումք ի Հրէից, զի մօտ էր ի քաղաք անդր տեղին ուր խաչեցան Յիսուս. եւ էր գրեալ Երբայեցերէն, Դադատերէն եւ 21 Յունարէն: Ասեն զՊիղատոս քահա- նայպետքն Հրէից, Մի՛ զրեր Թա- գաւոր Հրէից, այլ թէ նա ասաց, Թա- 22 գաւոր եմ Հրէից: Պատասխանի ետ Պիղատոս, Զոր ինչ գրեցի՞ր գրեցի: 23 Իսկ զինուորքն իբրեւ հանին ի խաչ զՅիսուս, աօին զհանդերձս նորա եւ արարին չորս մասուտս, իւրաքանչիւր զինուորի մասն. իսկ զպատմութեանն, քանզի էր առանց կարանի ի վերուստ 24 փորանկեալ ամենեւին, Ասեն զմի- մեանս, Մի՛ պատառեսցուք զայդ, այլ արկցուք վիճակս ի վերայ զորա ում

եւ ելցէ՝ զի լցցի զիրն որ ասէ, Բա-
 ժանեցան զհանգերձս իմ յիւրեանս, եւ
 ի վերայ պատմուճանի խնդ Վիճակ
 արկին: Զինուորքն զայս ինչ գործե-
 ցին:

25 Եւ կային առ խաչին Յիսուսի մայրն
 նորա, եւ քոյր մօր նորա, Մարիամ
 Կղէովսայ, եւ Մարիամ Մագղապե-

26 նացի: Յիսուս իրրեւ ետես զմայրն
 եւ զաշակերան զոր սիրէր, զի կայր
 մօտ, ասէ զմայրն, Կին զու, անա

27 որդի քո: Ապա ասէ ցաշակերան, Անա
 մայր քո: Եւ յայնմ ժամանակէ ա՛ռ
 աշակերան զնա առ իւր:

28 Յետ այսորիկ իրրեւ զիտաց Յիսուս
 եթէ անա ամենայն ինչ կատարեալ է,
 (զի կատարեսցի զիրն) ասէ, Ծարաւի

29 եմ: Եւ անդ կայր աման ինչ լի քա-
 ցախով. եւ նոցա սպունդ լցեալ քացա-
 խով՝ ընդ ըզուոյ՝՝ շուրջ եղեալ զմշտը-
 կաւ զոպայի մատուցին իւրերան նորա:

30 Իրրեւ ա՛ռ Յիսուս զքացախն անա-
 զերձ ըզուով՝՝ ասէ, Ս, ամենայն ինչ՝
 կատարեալ է. եւ խոնարհեցուցեալ
 զզուլին՝ աւանդեաց զոյլին:

31 Իսկ Հրեայքն, քանզի ուրբաթ էր,
 զի մի՛ անդէն ի խաչին ազանիցին մար-
 մինքն մինչեւ ցշարաթն, (զի էր օր
 մեծ շարաթուռն այնորիկ,) ազանցին
 զՊիղատոս զի խորտակեցնին զբարձս

32 նոցա եւ բարձցին: Եկին զինուորքն
 եւ զառաջնոյն խորտակեցին զբարձս,
 նոյնպէս եւ զմիւսոյն որ ընդ նմա ի

33 խաչն ելեալ էր: Բայց իրրեւ եկին առ
 Յիսուս, եւ տեսին զի այն ինչ մեռ-
 եալ էր, ոչ խորտակեցին զբարձս նո-

34 րա: Այլ մի ոմն ի զինուորացն տիգաւ
 խոցեաց զիոզս նորա, եւ վաղովազակի

35 եւ արեւն եւ ջուր, եւ որ ետեսն՝
 վկայեաց, եւ ճշմարիտ է վկայութիւն
 նորա, եւ նա զիտէ թէ ճշմարիտ ասէ,

36 զի եւ զուր հաւատասցիք: Այս եղեւ
 զի լցցի զիրն եթէ Ոսկր նորա մի՛

37 փշրեսցի: Եւ զարձեալ մեւս զիր ասէ
 եթէ Հագեցին ի նա յոր խոցեցինն:

38 Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս
 Յովսէփ որ յԱրիմաթեայ էր, աշա-
 կերա Յիսուսի ի ծածուկ վասն անին
 Հրէից, զի բարձցէ զմարմինն Յիսու-

սի. եւ հրամայեաց Պիղատոս. Եկին
 39 եւ բարձին զնա՝ Եկն եւ Նիկողեմոս
 որ եկեալն էր առ Յիսուս ի դիչերի
 զառաջինն, եւ երեք զմուսս խառն
 ընդ հարուէս իրրեւ լտերս հարեւր:

40 Ասին զմարմինն Յիսուսի, եւ պատե-
 ցին կտաւովք խնկովքն հանդերձ, որ-

41 պէս օրէն էր Հրէից պատել: Եւ էր
 ի տեղուոյն յորում խաչեցաւ՝ պարտեղ-
 եւ ի պարտիղի անդ՝ զերեզման նոր

42 յորում ոչ ոք երբեք էր եղեալ: Անդ
 վասն ուրբաթուռն Հրէից, զի մօտ էր
 զերեզմանն, եղին զՅիսուս:

Գ. Ի

1 Եւ ի միաշարաթուոյն Մարիամ Մագ-
 զազենացի դայ առաւօտուն ընդ ար-
 շալցսն ի զերեզման անդր, եւ տեսա-
 նէ զվէմն բարձեալ ՚ի զրաց զերեզմա-

2 նին՝: Ապա ընթանայ եւ դայ առ Սի-
 մոնը Պետրոս եւ առ մեւս աշակերան
 զոր սիրէր Յիսուս, եւ ասէ ցնոսա,
 Բարձին զՏէր ի զերեզմանէ անտի, եւ

3 ոչ գիտեմք ուր եղին զնա: Եւ Պետ-
 րոս եւ մեւս աշակերան եւ զային ի

4 զերեզմանն: Ընթանային երկուքին ի
 միասին, եւ մեւս աշակերան յառա-
 ջեաց ընթացաւ զվաղոցն քան զՊետ-

5 րոս եւ եկն նախ ի զերեզմանն: Եւ
 խոնարհեալ տեսանէ զի կային անդ
 կտաւքն, բայց ի ներքո ոչ եմուտ:

6 Եկն եւ Սիմոնը Պետրոս որ զայրն
 զկնի նորա, եւ եմուտ ի զերեզմանն,
 եւ տեսանէ զկտաւսն զի կային անդ:

7 Եւ վարչամակն որ էր ի զլուսն նորա,
 ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն

8 ծախեալ ի մի կողմն: Յայնժամ եմուտ
 եւ մեւս աշակերան, որ եկեալն էր
 յառաջագոյն ի զերեզմանն, ետես եւ

9 հաւատաց: Զի չեւ եւս գիտէին զզիրս
 թէ պարտ է նմա ի մեռելոց յառնել:

10 Չողան զարձեալ առ միմեանս աշա-
 կերաքն:

11 Բայց Մարիամ կայր արտաքոյ զե-
 րեզմանին եւ լայր. եւ մինչդեռ լայր,

12 խոնարհեցաւ ի զերեզմանն. եւ տեսա-
 նէ երկուս հրեշտակս ի սպիտակս, զի
 նստէին մի ի սնարից եւ մի յանտից

1 ի Բաղսս գալստի
 2 ի Յանն գալստի

3 Բաղսս, եկն և երարձ զմարմինն նորա, այլ՝
 եկն և երարձ զմարմինն Յիսուսի
 4 Ուստի, ի զերեզմանէն

13 ուր կայր մարմինն Յիսուսի: Եւ նորք
 ասենց ցնա, կին գու, զի՞ լաս: Ասէ
 ցնոսա, Զի բարձին զՏէրն իմ ՚ի գե-
 րեգմանէ աստի՞, եւ ոչ գիտեմ ուր
 14 եղին ցնա: Զայս իբրեւ ասաց, գար-
 ձաւ ի թիկունս կոյս, եւ տեսանէ զՅի-
 սուս զի կայր. եւ ոչ գիտէր թէ Յի-
 15 սուս իցէ: Ասէ ցնա Յիսուս, կին գու,
 զի՞ լաս, զո՞ խնդրես: Եմա այսպէս
 թուեցաւ թէ սրարտիզպանն իցէ, ասէ
 ցնա, Տէր, եթէ գու բարձեր ցնա,
 առա ինձ ուր եղիր ցնա, զի ես առից
 16 ցնա: Ասէ ցնա Յիսուս, Մարիամ: Եւ
 նա գարձաւ եւ ասէ ցնա ՝ Երբայեղե-
 րէն, Բարբուռի, որ թարգմանի Վար-
 17 զապեա: Ասէ ցնա Յիսուս, Մի՛ մեր-
 ձենար յիս, զի չեւ եւս ելեալ եմ առ
 Հայր իմ. այլ երթ գու առ եղբարսն
 իմ, եւ ասա ցնոսա, Ելանեմ ես առ
 Հայրն իմ եւ առ Հայր ձեր, եւ Աս-
 18 տուածն իմ եւ Աստուած ձեր: Գայ
 Մարիամ Մագդաղենացի եւ պատմէ
 աշակերտացն եթէ ետես նա զՏէր, եւ
 զայս ինչ ասաց ցնա:
 19 Եւ էր երեկոյ ի միաշաբաթուոյ ա-
 լուրն, եւ զրօք փակելովք ուր էին
 աշակերտքն ժողովեալ վասն աճին
 Հրէից, եկն Յիսուս եւ եկաց ի միջի
 նոցա, եւ ասէ ցնոսա, Ողջոյն ընդ
 20 ձեզ: Իբրեւ զայս ասաց, եղոյց նոցա
 զձեռս եւ զկողսն իւր. եւ խնդացին
 21 աշակերտքն իբրեւ տեսին զՏէր: Ասէ
 ցնոսա զարձեալ, Ողջոյն ընդ ձեզ, որ-
 պէս առաքեաց զիս Հայր ՚իմ, եւ ես
 22 առաքեմ զձեզ: Եւ զայս իբրեւ ասաց,
 փչեաց ի նոսա եւ ասէ, Ասէք Հոգի
 23 Սուրբ. Եթէ ումեք թողուցուք զմեզս,
 թողեալ լիցի նոցա. եթէ զուրուք ու-
 նիցիք, կարեալ լիցի:
 24 Իսկ թովմաս, մի յերկոտասանիցն,
 անուանեալն Երկուորեակ, ոչ էր ընդ
 25 նոսա յորժամ եկն Յիսուս: Ասէին ցնա
 այլ աշակերտքն, եթէ Տեսաք զՏէր.
 եւ նա ասէ ցնոսա, Եթէ ոչ տեսից ի
 ձեռս նորա ցնան բեւեռացն, եւ ար-
 կից գմատուեն իմ ի աեղիս բեւեռացն,
 եւ միտցից զձեռս իմ ի կողս նորա,
 ոչ հաւատամ:
 26 Եւ յետ ութ աւուր զարձեալ էին
 ի ներքս աշակերտքն, եւ թովմաս ընդ

նոսա. զայ Յիսուս զրօքն փակելովք
 եւ եկաց ի մէջ, եւ ասէ, Ողջոյն ընդ
 27 ձեզ: Այս ասէ ցթովմաս, Ինք զմա-
 տուեն քո եւ արկ այսր եւ տես զձեռս
 իմ, եւ բեր զձեռն քո եւ միտա ի կողս
 իմ, եւ մի՛ լինիր անհաւատ, այլ հա-
 28 լատացեալ: Պատասխանի ես թովմաս
 եւ ասէ ցնա, Տէր իմ եւ Աստուած իմ:
 29 Ասէ ցնա Յիսուս, Այդ զի տեսերդ
 զիս եւ հաւատացեր. երանի որոյ ոչ
 իցէ տեսել եւ հաւատացեն:
 30 Իսաղում եւ այլ նշանս արար Յիսուս
 առաջի աշակերտաց իւրոց, որ ոչ է
 31 զրեալ ի զիրս յայտմիկ: Այլ այս այն-
 չափ ինչ գրեցաւ, զի հաւատացցէք եթէ
 Յիսուս՝ Քրիստոս է, Որդի Աստուծոյ.
 եւ զի հաւատացցէք եւ զկեանսն յաւի-
 տենականս ընդունիցիք յանուն նորա:

ԳԼ ԻԱ

1 Յետ այսորիկ զարձեալ յայտնեաց
 զանձն իւր Յիսուս աշակերտացն իւ-
 րոց առ ծովեղերըն Տիրերեայ, եւ
 2 յայտնեաց այսպէս. Էին ի միասին Սի-
 մոնի Պետրոս, եւ թովմաս անտան-
 եաին Երկուորեակ, եւ Նաթանայել որ
 ի կանայ Գալիլացուց, եւ որդիքն Զե-
 լուդեայ, եւ այլք յաշակերտաց անտի
 3 երկու: Ասէ ցնոսա Սիմոն Պետրոս,
 Երթամ ձուկն որսալ: Ասեն ցնա,
 Գամբ եւ մեք ընդ քեզ: Գնացին եւ
 մտին ի նաւ, եւ յայնմ զիչերի կայան
 4 եւ ոչինչ: Իբրեւ այդ եղեւ, կայր Յի-
 սուս յեզր ծովուն, բայց ոչ ծանեան
 5 աշակերտքն թէ Յիսուս իցէ: Ասէ
 ցնոսա Յիսուս, Մանկունք, միթէ ու-
 նիք ինչ ուտելոյ: Պատասխանի ետուն
 6 եւ ասեն ցնա, Ոչ: Ասէ ցնոսա, Ար-
 կէք յաջակողմն նաւին զուռկանդ եւ
 դտանիցէք: Արկին, եւ ոչ կարէին
 ձգել ի բազմութենէ անտի ձկանցն:
 7 Ասէ աշակերտն այն զոր սիրէին Յի-
 սուս՝ ցՊետրոս, Տէր է այն: Սիմոն
 Պետրոս իբրեւ լուաւ թէ Տէր է, ար-
 կաւ զերբեւ զսիւսն անտիսն, քանզի
 8 մերկ էր, եւ ընկէց զմեքն ի ծով: Եւ
 այլ աշակերտքն նաւաւն իսկ զային,
 քանզի չէին հետի ի ցամաքէն, այլ
 իբրեւ երկերիւր կանդնաւ, քարչէին
 9 զզործին հանդերձ ձկամբքն: Իբրեւ
 ելին ի ցամաք, տեսանեն կրակեալ


1ի ցոսնի գտուտ 2ցոսն գտուտ

կայծականց եւ ձուկն մի ի վերայ եւ
 10 հաց, Ասէ ցնոսա Յիսուս, Բերէք ի
 ձկանց այսի զոր զուքդ կարարուք
 11 այժմիկ, Եմուս Սիմոն Պետրոս, եւ
 ձգէր զգործին ի ցամաք լի մեծամեծ
 ձկանիք հարեւր յիսուն եւ երկուք, եւ
 այնչափ ինչ կայր եւ ոչ սլատանեցաւ
 12 գործին: Ասէ ցնոսա Յիսուս, Եկայք
 ճաշեցէք, եւ ոչ որ յաշակերտացն իշ-
 13 խէր հարցանել թէ Դու ո՞վ ես, զի զի-
 13 աէին թէ Տէրն է: Դոյ Յիսուս եւ առ-
 նու զհացն եւ սաց նոցա, նոյնպէս եւ
 14 զձուկնն: Չայս երիցս անդամ երեւե-
 րու Յիսուս աշակերտացն յարուցեալ
 ի մետերց:
 15 Եւ իբրեւ ճաշեցին, ասէ յՍիմոն
 Պետրոս Յիսուս, Սիմոն Յովնանու,
 սիրե՞ս զիս առաւել քան զդոսա: Ասէ
 ցնա, Այո, Տէր, եւ զու զիտես զի սի-
 րեմ զքեզ: Ասէ ցնա, Արածեա զվա-
 16 ոինս իմ: Դարձեալ ասէ ցնա, Սիմոն
 Յովնանու, սիրե՞ս զիս: Ասէ ցնա,
 Այո, Տէր, եւ զու զիտես զի սիրեմ
 զքեզ: Ասէ ցնա, Արածեա զսխարս
 17 իմ: Ասէ ցնա երիցս անդամ, Սիմոն
 Յովնանու, սիրե՞ս զիս: Տրամեցաւ
 Պետրոս, զի ասացն ցնա երիցս թէ
 Սիրե՞ս զիս: Եւ ասէ ցնա, Տէր, զու
 զամենայն զիտես, եւ ՝ զու իսկ զամե-
 նայն ճանաչես եւ եթէ՞՝ սիրեմ զքեզ:
 Ասէ ցնա Յիսուս, Արածեա զոչխարս

18 իմ: Ասէն ամէն ասեմ քեզ, զի մինչ
 մահուկն էիր, անձամբ անձին զօտի
 ամէիր եւ երթայիր յս եւ կամէիր, եւ
 յորժամ ձերացիս, ձեռս ի վեր կալ-
 ցես, եւ այլք ածցին քեզ գօտի, եւ
 19 տարցին սւր սչն կամիցիս: Չայս ա-
 սաց նշանակեալ թէ որով մահու փա-
 ռաւոր անիցէ զԱստուած: Եւ զայս
 իբրեւ ասաց, ասէ ցնա, Եկ զինի իմ:
 20 Դարձաւ Պետրոս եւ սեռանէ զաշա-
 կերտն զոր սիրէր Յիսուս, զի երթայր
 զինի, (որ եւ անկաւ զԼանջօքն նորս
 եւ ասէ, Տէր, ո՞վ է որ մատնեցոյն է
 21 զքեզ): Չնա սեռեալ Պետրոսի, ասէ
 22 յՅիսուս, Տէր, իսկ սա զի՞ս Ասէ ցնա
 Յիսուս, Եթէ կամիմ, զի կացցէ զա
 մինչեւ ես գամ: քեզ զի՞ փոյթ է, զու
 23 եկ զինի իմ: Եւ ել բանս այս յեղբարս,
 եւ համարեցան թէ աշակերտն այն ոչ
 մեռանիցի: Եւ ոչ ասաց նմա Յիսուս
 եթէ Ոչ մեռանիցի, այլ ՝ թէ կամիմ
 ես թէ կացցէ զա մինչեւ ես գամ³,
 24 Այս աշակերտ է որ վկայէ վասն
 այսոցիկ, որ եւ գրեացն իսկ զայսու-
 սիկ: Եւ զիտեմք եթէ ճշմարիտ է
 25 վկայութիւն նորս: Բայց է եւ այլ ինչ
 բազում զոր արար Յիսուս, զոր եթէ
 գրեալ էր մի բստ միովէ, կարծեմ թէ
 եւ ոչ աշխարհս բաւական էր տանել
 զգիրսն որ թէ գրեալ էին:

¹Յոյն, զու ճանաչես եթէ

²Յոյն, եթէ
³Բողոքէ յասելան, քեզ զի՞ փոյթ է



ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ

ՂՈՒԿԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ՝

ՎՈՒԽ Ա

1 **ԶՐԱՆՆ** առաջին ¹զոր արարի վասն
ամենայնի, ո՛ր Թէոփիլէ, զոր սկսաւ
2 Յիսուս աննել եւ ուսուցանել, Մինչեւ
յօրն պատուիրելոյ առաքելոցն ի ձեռն
Հողոցն Սրբոյ՝ զորս ընտրեացն, եւ
3 վերացաւ. որոց յանդիման կացոյց
զինքն կենդանի յետ չարչարանացն
իւրոց ի բազում արուեստս յաւուրս
քառասուն երեւելի նոցա, եւ անել վասն
4 արքայութեանն Աստուծոյ: Եւ ի հա-
զորդել ընդ նոսա հացիւ՝ պատուէր
տայր նոցա յերուսաղեմէ մի՛ մեկնել,
այլ սարսել աւետեացն Հօր զոր բւա-
5 րուքն յինէն: Զի Յովհաննէս մկրտեաց
ի ջուր, այլ զաւր մկրտիցիք ի Հոգին
Սուրբ, ոչ յետ բազում ինչ աւուրցս
6 այսոցիկ: Եւ նորա ²մատուցեալ հոր-
ցանէին սնա եւ ասէին, Տէր, եթէ
ի ժամանակի՞ ատտ յայսմիկ հասուցա-
նելոց իցես զարքայութիւն Իսրայելի:
7 Ասէ ցնոսա, Ոչ է ձեզ գիտել զժամն
եւ զժամանակս, զոր Հայր եզ յիւ-
8 րում իշխանութեան. Այլ առջիք զօ-
րութիւն ի հասանել Հողոցն Սրբոյ
ի վերայ ձեր. եւ եզիջիք ինձ վկայք
յերուսաղեմ եւ յամենայն Հրէաստա-
նի եւ ի Սամարիա եւ մինչեւ ի ծագս
9 երկրի: Եւ գայ իբրև սասց, մինչ-
զեւ հայէին նորա, վերացաւ. եւ ամսն
10 կարաւ գնա յաչաց նոցա: Եւ մինչդեռ
պշուցեալ հայէին ընդ երկինս երթա-
լոյ նորա, եւ տնաւատիկ արք երկու
երեւելցան նոցա ի հանդերձս սպիտակս,
11 որք եւ ասացին, Արք Գայիլեացիք,
զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս. ոյս
Յիսուս որ վերացաւն ի ձէնջ յերկինս
սայնպէս եկեացէ՞ զոր օրինակ տեսէք
12 գնա երթեալ յերկինս: Ապա զարձան

յերուսաղէմ յանուանեալ լեռնէն Զի-
թենեաց, որ է մերձ յերուսաղէմ ըստ
13 շարաթուն ճանապարհի: Եւ իբրև
մտին, ելին ի վերնատունն ուր վանքն
իսկ էին, Պետրոս եւ Յակովբոս, Յով-
հաննէս եւ Անդրէաս, Փիլիպպոս եւ
Թովմաս, Բարթողոմէոս եւ Մատ-
թէոս, Յակովբոս Արիւեան եւ Շմաւոն
Նախանձալոյց եւ Յուզա Յակովբեան:
14 Սորա ամենեքեան էին հանապազոր-
դեալ մտաբան յաղօթն հանդերձ կա-
նամիք եւ Մարեմաւ մարլն Յիսուսի
եւ ելլարբք նորա:

15 **Ա.** Եւ յաւուրն յայնսմիկ յարու-
ցեալ Պետրոս ի մէջ ³եղբարցն՝ ասէ,
(եւ էր անդ բազմութիւն անուանց
16 իբրև հարևար եւ քսանից) Արք եզ-
բարք, պարտ էր կատարել զրոյն, զոր
յատաջագոյն սասց Հոգին Սուրբ ի բե-
րանոց Գաւթի վասն Յուզայի, որ ե-
զեւ առաջնորդ ունեւեացն Յիսուսի:

17 Զի ի թիւս մեր էր ընդ մեզ, եւ հաս-
եալ էր նմա վիճակ սպաշտամանս այ-
18 սորիկ: Սա ստացաւ զեզ ի վարձուց
անիրաւութեան, եւ ⁴ուսուցեալ հեր-
ձաւ ընդ մէջ եւ հեղաւ ամենայն փոր
19 նորա: Եւ յայտնի եղև ամենեցուն
որ ընակեալ են յերուսաղէմ մինչև
կոչել զեզջն այնմիկ բարրատուն իւր-
եանց Ակեղղամա, այսինքն է՝ Գեղ

20 արեան: Զի զրեալ է ի գիրս Սաղմո-
սաց, Եզիցի բնակութիւն նորա աւե-
րակ, եւ մի՛ ոք իցէ որ ընակիցէ ի
նմա. եւ, Զկարգ նորա ասցէ այլ:
21 Արք պարտ է յարանցս յայցանէ եկե-
լոցս ընդ մեզ յամենայն ժամանակի
յորում մուտ եւ ել աս մեզ Տէր Յի-
22 սուս, Սկսեալ ի մկրտութենէն Յով-
հաննու մինչև յօրն յորում վերացաւ

¹ Ի Յաննէս գալտի

² Ո՛րք, Ժողովեալ

³ Ո՛րք, աշակերտացն
⁴ Յոյն, անկեալ գլխեկար

ի մէջ, վկայ յարութեան նորա ընդ
 23 մեզ լինել միում ի սոցանէ : Եւ կա-
 յուցին Երկուս , զՅովսէփ որում Բար-
 սարայն կոչէին , որ անուանեցաւն
 24 Յուստոս , եւ զՄատաթիա : Եւ կայ-
 եալ յաղթն ասեն , Գու , Տէր , սրտա-
 ղէտ ամենայնի , յայտնեալ զմի ոք զոր
 25 ընտրեցեր ի սոցանէ յերկրոցունց , Առ-
 նուլ զվիճակ սրաշտամանս այսորիկ եւ
 զառաքելութեան , յորմէ անկաւ Յու-
 26 դաս զնալ ի տեղի իւր : Եւ ետուն վի-
 ճակս նոցա , եւ ելանէր վիճակն Մա-
 տաթեայ , եւ համարեցաւ ընդ մնաս-
 սանս առաքելարն :

ՎՋ

ԳԼ Բ

1 Եւ ի կատարել լաւուրցն Պենտակոս-
 2 ակոց՝ Էին ամենեքեան միարան ի մի-
 3 ասին : Եւ եղև յանկարծակի հնչին
 յերկնից՝ եկեալ իբրև սասակի հողմոյ ,
 եւ ելոց զամենայն տունն յորում նրա-
 3 ակին : Եւ երևեցան նոցա բաժանեալ
 լեզուք իբրև ի հոյ , եւ նստաւ իւ-
 4 րաքանչիւր ի վերայ նոցա : Եւ յցան
 ամենեքեան Հոգւով Սրբով , եւ սկսան
 խօսել յայլ լեզուս որպէս եւ Հոգին
 5 ապր բարբառել նոցա : Եւ Էին յերու-
 սաղէմ բնակեալ Հրեայք , արք երկիւ-
 6 ղաձք , յամենայն ազգաց որ ի ներքոյ
 7 երկնից : Եւ իբրև եղև լարբաստ այս ,
 եկն միաբան լազմութիւնն եւ իսնե-
 8 ցաւ , զի լսէին յիւրաքանչիւր լեզուս
 7 խօսել նոցա : Աքանչանային ամենե-
 քեան եւ զարմանային եւ ասէին ընդ
 միմեանս , Ո՛չ աւասիկ ամենեքեան
 սոքա որք խօսինս՝ Գայիլեացիք են .
 8 Եւ զիսոց լսեմք մեք յիւրաքանչիւր
 9 բարբառս մեր յորում ծնեալ ենք . Պար-
 թեւք եւ Մարք եւ Իղառացիք եւ որ
 բնակեալ են ի Միջագետս , ի Հրէաս-
 10 սանի եւ ի Գամիրս , ի Պանտոս եւ
 11 յԱսիա , ի Փոնուղիա եւ ի Պամփիլիա ,
 յԵգիպտոս եւ ի կողմանս Լիբէացւոց
 որ ընդ կիւրենացիս եւ որ եկք Հսով-
 11 մացիք , Հրեայք եւ եկք նոցուն ,
 Կրեացայիք եւ Արաբացիք , լսեմք խօ-
 սից նոցա ի մեր լեզուս զմեծամեծս
 12 Աստուծոյ : Աքանչանային ամենեքեան
 զարմացեալք , եւ ասէին զմիմեանս ,

13 Ձի՞նչ կամիցի այս լինել : Եւ կիտոցն
 ընդ խաղ արկեալ ասէին թէ՛ Քաղ-
 ցուալից իցին :
 14 Յարուցեալ Պետրոս հանցերձ մե-
 տասանիւքն՝ ամբարձ գձայն իւր եւ
 խօսեցաւ ընդ նոսա , Արք Հրէաստա-
 նեայք եւ որ բնակեալ էք յերուսաղէմ ,
 ամենեքին , այս ձեզ յայտնի լիցի , եւ
 45 ունին զիք լանից իմոց . Ոչ որպէս
 զուրք կարծէք թէ՛ սոքա արբեալ իցին ,
 16 զի գեռ երեք ժամք են աւուրս : Այլ
 այս է որ ասացաւ ի ձեռն մարդարէին
 17 Յովեւայ . Եւ եղիցի յես այսորիկ յա-
 ւուրս յետինս , ասէ Աստուած , հեղից
 յմեզ իմմէ ի վերայ ամենայն մարմ-
 նոյ , եւ մարդարէացայն ուստերք ձեր
 եւ զստերք ձեր , եւ երիտասարդք ձեր
 սուսիրս անսցին , եւ ձերք ձեր երա-
 18 զովք յերազեցայն : Եւ ի վերայ ծառու-
 յից իմոց եւ ի վերայ ազախնանց իմոց
 յաւուրսն յայնսոսիկ հեղից յմեզ իմմէ ,
 19 եւ մարդարէացայն : Եւ ասց նշանս
 յերկինս ի վեր , եւ նշանս յերկիր ի
 խոնարհ՝ արիւն եւ հուր եւ մրրիկ
 20 ծխոյ : Արեղակն զարծիք ի խաւար ,
 եւ լուսին՝ յարիւն , մինչչեւ եկեալ
 21 իցէ օր Տեառն մեծ եւ երևելի : Եւ
 եղիցի ամենայն որ կարգացէ զանուն
 Տեառն՝ կեցցէ :
 22 Բ. Արք Իսրայելացիք , լուարուք
 զբանս զայսոսիկ . զՅիսուս Նազովրե-
 ցի , զայր ցուցեալ յԱստուծոյ ի ձեզ
 զօրութեամբ եւ նշանօք եւ արուես-
 տիւք , զոր արար նովաւ Աստուած
 ի միջի ձերում , որպէս եւ զուրք իսկ
 23 զիսէք , Չնա , նկատեալ խորհրդով
 եւ կանխագիտութեամբն Աստուծոյ
 2 մատնեալ , ի ձեռս՝ անօրինաց բեւեւ-
 24 եալ ի փայտի սպանէք . Չոր Աստուած
 յարոց՝ լուծեալ զերկուսն մահու ,
 քանզի ոչ էք հնար ըմբռնել նմա ի
 25 նմանէ : Դաւիթ իսկ ասէ զնմանէ , Յու-
 սաֆազոյն տեսանէի զՏէր ատաջի իմ
 յամենայն ժամ , զի է ընդ աջմէ իմմէ ,
 26 զի մի՛ սասանեցայց . Վասն այսորիկ
 ուրախ եղև սիրտ իմ , եւ զնծայաւ
 լեզու իմ , եւս եւ մարմին իմ բնա-
 27 կեսցէ յուսով : Չի ոչ թողցես զանձն
 իմ ի դժոխս , եւ ոչ տացես Սրբոյ
 քում տեսանել զասպականութիւնս :

1) Գու-ժ , աւուրն Պենտակոստէի

2) Ու-ժ , մատնեալ աւէք ե ի ձեռն

28 Ծանուցե՛ր ինձ զճանապարհս կենաց և լցուցե՛ր զիս ուրախութեամբ երեսաց
 29 քոյ ¹ի քաղցրութենէ : Արք եղբարք , պարտ է համարձակութեամբ ասել վասն նահապետին Դաւթի , զի ե՛ւ մեռաւ ե՛ւ թաղեցաւ , եւ գերեզման նորա կայ ի միջի մերում մինչեւ ցայսօր :
 30 Զի մարգարէ էք , եւ զիտէր եթէ երգումար երդուաւ նմա Աստուած ի պտոյոյ որովայնի ²նորա նստուցանել՝ յաթոս
 31 նորա , Յասաջալոյն ծանուցեալ իօսեցաւ վասն յարութեանն Քրիստոսի , զի ոչ թողաւ ոգի նորա ի զժոխս , եւ ոչ մարմին նորա ետես զասպականու
 32 թիւն : Զայս Յիսուս յարոյց Աստուած ,
 33 որում ամենեքին մեք վկայ եմք : Աջոյն Աստուծոյ բարձրացեալ , զաւետիս Հոգւոյն Սրբոյ ընկալեալ ի Հօրէ՝ սփռեաց զայս , զոր զուք իսկ ասա
 34 նէք եւ լսէք : Զի ոչ եթէ Դաւթի ել յերկիրս , ասէ իսկ ինքն , Ասաց Տէր
 35 ցՏէր իմ , Նիստ ընդ աջմէ իմնէ՛ Մինչև եզից զթշնամիս քո սրատուանգան
 36 օտից քոյ : Արք ճշմարտիւ զիտասցի ամենայն տունդ Իսրայելի , զի ե՛ւ Տէր զնա ե՛ւ Օծեալ՝ Աստուած արար , զայն Յիսուս զոր զուքն խաչուցէք :
 37 Եւ յուեալ զայս՝ զղջացան ի սիրտս իւրեանց , եւ ասնն զՊետրոս եւ ցայ առաքեալսն , Զինչ զործեսցուք , արք
 38 եղբարք : Ասէ ցնոսա Պետրոս , Ապաշաւեցէք եւ միտեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ յանուն ³Տեառն Յիսուսի Քրիստոսի ի թողութիւն մեզաց , եւ ընկալջիք զաւետիս Հոգւոյն Սրբոյ :
 39 Զի ձեզ են աւետիքս եւ որդւոց ձերոց , եւ ամենայն հեռաւորաց զորս կոչես
 40 ցէ Տէր Աստուած մեր : Եւ այլովք բանիւք բազմօք վկայութիւն զնէք , եւ միտիթարէր զնոսա եւ ասէր , Ապրեցարուք յազգէ աստի խոտորելոյ յայս
 41 մանէ : Ոմանք յօժարութեամբ ընկալեալ զբան նորա մկրտեցան , եւ յաւելան յաւուր յայնմիկ ողիք իրրեւ երեք հազարք :
 42 Գ. Եւ էին հանապազորդեալք վարձապետութեան առաքելոցն եւ հազորութեան եւ բեկանելոյ հացին եւ ա

43 զօթից : Եւ լինէր ամենայն անձին ահ եւ երկեւզ , եւ բազում նշանք եւ արուեստք ի ձեռս առաքելոցն զործէին :
 44 Ամենայն հաւատացեալքն էին ի միասին , եւ ունէին զամենայն ինչ հասարակաց : Եւ զստացուածս եւ զինչս վաճառէին , եւ բաշխէին զայն ամենեցուն ուս զիարդ սիրտոյ ինչ լինէր : Հանապազոր կանխեալ միաբանութեամբ ի առձարն , եւ առանին բեկանէին զհացն , եւ անուելն կերակուր ուրախութեամբ եւ միամտութեամբ սրտի :
 47 Օրհնէին զԱստուած եւ ունէին չընորհս առ ամենայն ժողովուրդն . եւ Տէր յաւելոյր ⁴ի փրկեալսն հանապազոր ի նոյն՝ :

ԳԼ Գ

1 Պետրոս եւ Յովհաննէս ելանէին ի տաճար անդր յիններորդ ժամու ազօ
 2 թիցն : Եւ էր այր մի կազ յորովայնէ մօր իւրոյ զոր բարձեալ զնէին հանապազ առ դրան տաճարին , որ կոչէր Գեղեցիկ , ինդրել ողորմութիւն յայն
 3 ցանէ որ մտանէին ի տաճարն : Որոյ տեսեալ զՊետրոս եւ զՅովհաննէս զի մտանէին ի տաճարն , ազաչէր ողորմութիւն անուել : Հայեցաւ ի նա Պետրոս Յովհաննու հանդերձ եւ ասէ ,
 5 Հայեաց ի մեզ : Նա դարձաւ ի նոսա եւ ահն ունէր առնուլ ինչ ի նոցանէ :
 6 Եւ ասէ Պետրոս , Արձաթ եւ ոսկի ոչ ունիմ , բայց զոր ունիմ՝ զայս տացքեզ . յանուն Յիսուսի Քրիստոսի Նա
 7 զովրեցւոյ արի եւ զնա : Եւ կալեալ զաջոյ ձեռանէ նորա՝ յարոյց զնա . եւ անդէն հաստատեցան ⁵բարձք նորա
 8 եւ սրունք՝ : Ի վեր վազեաց եւ սկսաւ զնալ , եւ եմուս ընդ նոսա ի տաճարն , զնայր եւ վազվազէր եւ օրհնէր զԱստուած : Եւ ետես ամենայն ժողովուրդն զնա , զի գնայր եւ օրհնէր զԱստուած : Եւ զիտէին զնա զի սա էր որ նստէր վասն ողորմութեան առ Գեղեցիկ դրան տաճարին , եւ լցան զարմանալիօք ի վերայ նշանին որ եղև :
 11 Եւ մինչ նա ունէր զՊետրոս եւ զՅովհաննէս , ընթացաւ ամենայն ժո

¹ի ցանին գոլոսի
²Ունիմ , նորա ըստ մարմնոյ յարուցանել զՔրիստոս նստել
³Յովհանն գոլոսի

⁴Ունիմ , զփրկեալսն հանապազոր յեկեղեցին
⁵Յայն , թաթք օտից նորա եւ կոճք

զովուրդն առնոսա ի սրահն որ կոչէր
 12 Սողոմոնի՛ զարմացեալք : Իբրև եւ-
 տես Պետրոս, սրատասխանի ետ ժո-
 ղովրդեանն, Աբք Իսրայելացիք, զի՞
 զարմացեալ էք ի վերայ այսորիկ, կամ
 ընդ մեղ զի՞ էք սչուցեալ, իբրու թէ
 անձին զօրութեամբ ինչ կամ լքաջու-
 թեամբ արարեալ իցէ զգնայդ զմա :
 13 Աստուած Աբրահամու եւ Աստուած
 Իսահակայ եւ Աստուած Յակովբայ,
 Աստուած հարցն մերոց, փառաւորեաց
 զՈրդի իւր զՅիսուս, զոր զուքն մատ-
 նեցէք եւ ուրացարուք առաջի Պիղա-
 14 տոսի ի դատել նորա արձակել : Եւ
 զուք զՍուրբն եւ զԱրդարն ուրացա-
 րուք եւ խնդրեցէք այր մի մահապարտ
 15 չնորհել ձեզ : Եւ զԱռաջնորդ կենացն
 սպանէք, զոր Աստուած յարոյց ի մե-
 16 սելոց, որում մեզ խակ վկայ եմք : Եւ
 հաւատովք անուան նորա զսա զոր
 տեսանէք եւ զիտէք՝ հաստատեաց ա-
 նուն նորա : եւ հաւաքն որ նովաւ
 ետուն զմա զառողջութիւն զայս յան-
 17 զիման ձեր ամենեցուն : Եւ արդ, եղ-
 րարք, զիտեմ զի անզիտութեամբ
 18 րարէք, որպէս եւ իշխանքն ձեր : Այլ
 Աստուած որպէս յառաջագոյն պատ-
 մեաց ի բերանոյ ամենայն մարդարէից
 զչարհարեւն Քրիստոսի իւրոյ, նոյնպէս
 19 եւ կատարեաց : Արդ ապաշաւեցէք եւ
 20 դարձարուք ի ջնջել զմեզս ձեր : Որպէս
 զի կեկեցնն ժամանակք հանգստեան
 յերեսաց Տեառն, եւ առաքեացէ զյա-
 ռաջագոյն նկատեալն ձեզ, զՅիսուս
 21 Քրիստոս : Զոր պարտ է երկնից բն-
 զունել մինչեւ ի ժամանակս ամենե-
 ցուն հաստատելոյ : զորոց խօսեցաւ
 Աստուած ի բերանոյ սրբոց իւրոց
 մարդարէից՝
 22 Դ. Մովսէս ասաց Յհարսն մեր՝, թէ
 Մարդարէ յարուցէ ձեզ Տէր Աս-
 տուած ձեր յեղբարց ձերոց իբրև զիս,
 նմա լուիջիք ըստ ամենայնի, որ զինչ
 23 եւ խօսեցի առ ձեզ : Եւ եղիցի ամե-
 նայն անձն որ ոչ լուիցէ մարդարէին
 այնմիկ՝ սատակեցի ի ժողովրդեանն :
 24 Եւ ամենայն մարդարէք որ ի Սամուե-
 լէ եւ այսր՝ խօսեցան եւ պատմեցին
 25 զաւուրսս զայսոսիկ : Դուք էք որդիք

մարդարէիցն եւ ուխտին զոր ուխ-
 տեաց Աստուած ընդ հարսն մեր, եւ
 26 ասէ ցԱյրահամ, Ի զաւակիբում օրհ-
 նեցին ամենայն ազգք երկրի : Զեղ
 նախ յարոյց Աստուած զՍրգի իւր եւ
 առաքեաց զնա օրհնել զձեզ ի դատնայ
 ձեզ իւրաքանչիւր ի չարեաց ձերոց :

ԳԼ Գ

1 Եւ մինչդեռ խօսէին նոքա ընդ ժողո-
 վրդեանն, հասին ի վերայ նոցա Յքա-
 հանայքն եւ իշխանք տաճարին եւ
 2 սագուկեցիքն, Զայրազնեալք վասն
 ուսուցանելոյ նոցա զժողովուրդն եւ
 պատմելոյ Յիսուսի զյարսութիւն մե-
 3 սելոց : Մխեցին ի նոսա զձեռս իւր-
 եանց, եւ եղին գնոսա ի բանախ մին-
 4 չեւ ի վաղիւն, զի էր ընդ երեկս : Իսկ
 բազումք ի յողաց բանին հաւատացին,
 եւ եղեւ թիւ մարդկանն իբրև հա-
 զարաց հնդից :
 5 Եւ եղև ի վաղիւ անդր ժողովել
 նոցա զիշխանան եւ զերիցունս եւ
 6 զզոյիրսն յերուսաղէմ, եւ զԱննա քա-
 հանայապետ եւ զԿայրափա եւ զՅով-
 հաննէս եւ զԱղեքսանդրոս, եւ որք
 միանգամ էին յազգէ Յքահանայու-
 7 թեանն : Եւ կացուցեալ զնոսա ի մէջ՝
 հարցանէին, Որով զօրութեամբ կամ
 որով անուամբ արարէք զուք զայս :
 8 Յայնժամ Պետրոս լցեալ շողով Սրբով
 անէ ցնոսա, Իշխանք ժողովրդեան եւ
 9 երիցունք Իսրայելի, Յեթէ արժան
 ինչ իցէ զատել զմեզ՝ այսօր վասն եւ-
 րախտեաց առն միոյ տկարի որով ստ
 10 բժշկեցաւ, Յայնի լիցի ամենեցուն
 ձեզ եւ ամենայն ժողովրդեանդ Իսրա-
 յելի, զի յանուն Յիսուսի Քրիստոսի
 Նազովրեցւոյ զոր զուքն խաչեցէք,
 զոր Աստուած յարոյց ի մեռելոց, նու-
 վաւ սա կայ աւասիկ առաջի ձեր ող-
 11 ջացեալ : Նա է յէմն անարպեալ ի ձէնջ
 շինողաց, որ եղև զլուխ անկեան :
 12 Եւ չիք ոչով իւրք փրկութիւն, զի
 եւ ոչ անուն այլ զոյ ի ներքոյ երկնից
 տուեալ ի մարդիկ, որով արժան իցէ
 կեալ մեզ :
 13 Եւ Հայեցեալ ի համարձակութիւնն

1 Ունէ, բարեպաշտութեամբ
 2 Յուն յաւելու, ի յաւիտենից
 3 Յունս զախտի

4 Ունէ, քահանայապետք
 5 Ունէ, քահանայապետութեանն
 6 Յուն, եթէ զատիցելք

Պետրոսի եւ Յովհաննու, եւ ի վերայ հասեալ թէ արքա տղաք եւ առանց զպրօթեանն, զարմանային, զի ճանաչէին զնոսա թէ ընդ Յիսուսի էին։

14 Եւ զայրն եւս տեսանէին զբժշկեալս զի կայր ընդ նոսա, եւ ոչինչ կարէին

15 տալ պատասխանի : Եւ հրամայեալ նոցա արտաքս յան զառեանն երանել,

16 խորհեցան ընդ միմեանս, եւ ասեն, Ձի՛նչ արատցուք արանցս այսոցիկ, զի երեւելի նշան եղև ի ձեռն սոցա. ամենայն իսկ բնակչաց Երուսաղեմի

17 յայտ է եւ ոչ կարեւոր ուրանալ : Այլ զի մի՛ առաւել ճարակեցի ի ժողովորդն, սպաննացուք նոցա մի՛ եւս խօսել յանուան յայն մի՛ ումեք ի մարգ-

18 կանէ : Եւ կոչեղեալ զնոսա պատուիրեցին ամենեւին մի՛ խօսել եւ մի՛ ու-

19 սուցանել յանուն Յիսուսի : Իսկ Պետրոս եւ Յովհաննէս պատասխանի եւ տուն եւ ասեն զնոսա . Եթէ արժան իցէ առաջի Աստուծոյ ձեզ յսել առ-

20 ւել քան Աստուծոյ, ընտրեցէք : Այլ մեք ոչ կարեւոր զոր տեսաքն եւ լուար-

21 չխօսել : Նորա սպաննացեալ արձակեցին զնոսա, եւ ոչինչ զանալ թէ որ-պէս պատուհասեցեն զնոսա վասն ժողովրդեանն, զի ամենեքեան վառաւոր առնէին զԱստուած վասն ի-

22 րացն եղևոց : Ձի ամաց էր այրն աւելի քան զքառասուն, յորոյ վերայ եղև նշանս այս բժշկութեան :

23 Եւ անտի արձակեալ եկին առ իւրեանցսն, եւ պատմեցին որչափ ինչ ասացին զնոսա քահանայապետքն եւ

24 երիցունքն : Եւ նոցա լուեալ շամբարձին զձայնս իւրեանց առ Աստուած եւ ասեն, Դու, Տէր ²Աստուած, որ արարեր զերկինս եւ զերկիր եւ զծով

25 եւ զամենայն որ ի նոսա, Որ ի բերանոյ ²Տօր մերոյ՝ Դաւթի ծառայի քո՝ ²ի ձեռն Հոգւոյն Սրբոյ՝ ասացեր, Ձմէ՞ խաղկեցան հեթանոսք, եւ ժողովորդք

26 խորհեցան ի սնտիս . Յանդիման եղեն թաղաւորք երկրի եւ իշխանք ժողովեցան ի միասին վասն Տեառն եւ վասն

27 Սմելոյ նորա . ժողովեցան արդարեւ ի քաղաքիս յայսմիկ ի վերայ սրբոյ Որդւոյ քո Յիսուսի զոր օժերն՝ Հե-

րովդէս եւ Պոնտոս Պրիզանոս ազգօք

28 եւ ժողովրդովք Իսրայելի, Առնել որչափ ձեռն քո եւ կամք յատաճաղոցն

29 սահմանեցին լինել : Եւ արդ, Տէր, հայեաց ի սպաննայիս նոցա, եւ տուր ծառայից քոզ ամենայն համարձակու-

30 թեամբ խօսել զբանն քո . Ի ճգել զձեռն քո ի բժշկութիւնս, եւ նշանս եւ արուեստս լինել անուամբն սրբոյ Որդւոյ

31 քո Յիսուսի : Եւ մինչ կային նորա յաղօթս, շարժեցաւ տեղին յորում էին ժողովեալ, եւ բոսն ամենեւին Հոգւով Սրբով, եւ խօսէին զբանն Աստուծոյ համարձակութեամբ :

32 Զ. Եւ բազմութեան հաւատացելոցն էր սիրա եւ անձն մի . եւ ոչ որ ի նոցանէ ասեր զընչից իւրոց թէ իւր իցէ, այլ էր նոցա ամենայն ինչ հասարա-

33 կաց : Եւ զօրութեամբ բազմաւ տային վկայութիւնս առաքելաւքն զյարութեանն Տեառն Յիսուսի ²Քրիստոսի . եւ շնորհք մեծամեծք էին ի վերայ ա-

34 մենեցուն նոցա : Եւ ոչ որ կարօտեր ի նոսա, զի որ միանգամ ակարբ էին զեղից կամ սպարանից՝ վաճառէին եւ

35 բերէին զղինս վաճառելոցն, Դնէին առ ոտս առաքելոցն . եւ բաշխէին իւրաքանչիւր որպէս ումեք պիտոյ ինչ

36 լինէր : ³Յովսէփ որ կոչեցաւն Բառնարաս յառաքելոց անտի, (որ թարգմանի որդի միսիթարութեան,) Ղեւ-

37 տայի, յաղգէ կիպրացի, էր նորա զեզ, վաճառեաց եւ երեք զղինսն, եզ առ ոտս առաքելոցն :

ԳԼ Ե

4 Իսկ այր ոմն Անանիա անուն հանդերձ կնաւ իւրով Սափիրաւ վաճառեաց ազարակ . Եւ խորեաց ի վնոց անտի՝ զիտելով եւ կնոջն, եւ երեք մասն ինչ եզ առ ոտս առաքելոցն :

3 Ասէ Պետրոս, Անանիա, ընդէր ելից Աստանայ զսիրտ քո ստել քեզ Հոգւոյն Սրբոյ, եւ խորել ի վնոց զեզջն .

4 Ո՞չ ապաքէն մինչ կայրն՝ քո էր, եւ ի վաճառելն՝ ընդ քո իշխանութեամբ էր . զի է զի եղիր ի սրտի քում զիրս զայս . ոչ ստեցեր մարդկան, այլ Աստուծոյ : Եւ լուեալ Անանիա զբանս

¹Յանն, ամբարձին միաբան
²Յովանն զստեւտ

³Ումնք, Յովսէփ

զայսոսիկ՝ անկաւ եւ եհան զողի . եւ
 եղև աճ մեծ ի վերայ ամենեցուն որ
 6 լուանն զայն : Յոսն կացին երիտա-
 սարգըն եւ ամփոփեցին զնա , եւ տա-
 7 րան թաղեցին : Եւ եղև իբրև ժամբ
 երեք անցին , եւ կին նորա ոչ գիտէր
 8 զինչ եղևան էր , եմուտ ի ներքս : Պա-
 տասխանի կտ նմա Պետրոս եւ ասէ ,
 Ասա զու ինձ թէ ա՛յնչտի գնաց զվեղն
 վաճառեցէք : Եւ նա ասէ , Այո , այն-
 9 չափ : Եւ ասէ զնա Պետրոս , Ձի՞ է զի
 միարանեցէք զուք փորձել զՀողին
 Տեառն . ահա ոտըն որ թաղեցին զայրն
 10 քո ի գրանն՝ հանցեն եւ գրեզ , Եւ
 անկաւ անդէն առ ոտս նորա եւ եհան
 զողի , մտին երկուսսարգըն , գտին զնա
 մեռեալ եւ հանին թաղեցին առ առն
 11 իւրում : Եւ եղև երկեւզ մեծ ի վերայ
 ամենայն եկեղեցւոյն , եւ ի վերայ ա-
 մենեցուն որ լուանն զայն :
 12 Է . Եւ ի ձեռս առաքելոցն լինէին
 նշանք եւ արուեստք բազումք ի ժո-
 զովրդեանն . եւ էին միարան ամենեւ-
 13 քանս ի սրահին Սողոմոնի : Եւ յայլոց
 քնտի ոչ սք իշխեր մերձեալ առ նոսա ,
 14 այլ յարդէր զնոսա ժողովուրդն : Եւ
 առաւել եւս յաւելումն հաւատացեալքն
 ի Տէր , բազմութիւն արանց եւ կա-
 15 նանց . Մինչև ի հրապարակոն հանել
 զհիւանդս , եւ զնել պատգարակօք եւ
 մահճօք իւրեանց , զի բնդ անցանէն
 Պետրոսի՝ զոնէ հովանի նորա հասցէ
 16 ումէք ի նոցանէ : Եւ ժողովէր բազ-
 մութիւնն շուրջ ի քաղաքաց անտի
 յերուսաղէմ , բերէին զհիւանդս եւ
 զնեղեալս յայտոց պղծոց , որք եւ բժըշ-
 կէին ամենեքեան :
 17 Յարուցեալ քահանայապետն եւ ա-
 մենեքին որ բնդ նմա , աղանդ սաղու-
 18 կեցոց , լցան նախանձու : Եւ արկին
 զձեռս յառաքելոսն եւ եղին զնոսա
 19 ՚հրապարակաւ ի բանտի՝ : Ապա հրեշ-
 տակ Տեառն զիշխի կրաց զղուրս բան-
 20 տին , եւ հանեալ զնոսա՝ ասէ , Գնացէք
 կացէք ի տաճարին , եւ խօսեցարուք
 բնդ ժողովրդեանն զամենայն պատ-
 21 զամս կենացս այսոցիկ : Եւ իբրև
 լուան , մտին բնդ ասուսան ի տաճարն
 եւ ուսուցանէին : Եկն քահանայա-
 պետն եւ որ բնդ նմա , կոչեցին մի-

արան զատեանն եւ զամենայն ծերա-
 կոյտ որդւոցն Իսրայելի , եւ ստաքե-
 22 յին ի բանան ածել զնոսա : Եւ իբրև
 եկին սպասաւորքն , ոչ գտին զնոսա
 ի բանտին . զարձեալ անդրէն պատմե-
 23 յին , Եւ ասին թէ Ջրանան զտաք
 փակեալ ամենայն զզուշութեալի , եւ
 զպահապանն՝ զի կային առ դրանն ,
 բացաք եւ ի ներքս գոք ոչ զտաք :
 24 Իբրև լուան զրանս զայս ՚իշխանք
 տաճարին եւ քահանայապետքն՝ , հիա-
 նային վասն նոցա , թէ զի՛նչ արդեւք
 25 լինիցի այն : Եւ եկն ոմն պատմեաց
 նոցա թէ Ահա արքն զորս եղիք ի
 բանտին՝ կան ի տաճարին , եւ ուսու-
 26 յանեն զժողովուրդն : Յայնմամ եւր-
 թեալ իշխանն սպասաւորքն հանդերձ
 ամ զնոսա ոչ բռնութեամբ , քանզի
 երկնչէին ի ժողովրդենէն զի մի՛ քար-
 27 կոծեցին : Եւ ածեալ զնոսա՝ կացու-
 ցին յատենի . եհարց զնոսա քահանա-
 28 յապետն Եւ ասէ , Ո՞չ պատու իրելով
 պատու իրեցաք ձեզ մի՛ ուսուցանել
 յանունն յայն . եւ արդ անատիկ լցէք
 զերուսաղէմ ուսմամբ ձերով , եւ
 կամիք ածել ի վերայ մեր զարեւն
 զսունն զայնորիկ :
 29 Պատասխանի կտ Պետրոս եւ սոա-
 քելքն եւ ասեն , Հնազանդել պարտ
 է Աստուծոյ առաւել քան մարդկան :
 30 Աստուած հարցն մերոց յարցոյ զՅի-
 սուս զոր գուքն սպանէք կախեալ
 31 զպայտէ : Ձնա Աստուած Առաջնորդ
 եւ Փրկիչ բարձրացոյց սձոյն իւրով
 տալ՝ սպաշխարութիւն Իսրայելի եւ
 32 թողութիւն մեզաց : Եւ մեք եմք նորա
 վկայք բանիցս այսոցիկ , եւ Հսովն
 Սուրբ զոր կտ Աստուած հնազանդե-
 33 լոց իւրոց : Եւ նոքա իբրև լուան ,
 աւատանային եւ խորհէին սպանանել
 զնոսա :
 34 ԲԱ . Յարուցեալ ոմն ի մէջ ատենին ,
 փարիսեցի , որում անուն էր Փամա-
 զիէլ , օրէնսուսոց , պատուական ամուս-
 նայն ժողովրդեանն , հրամայեաց սա-
 կաւիկ մի՝ զարսնս արատքս տունել :
 35 Եւ ասէ զնոսա , Այք Իսրայելացիք ,
 հպեցարուք ի ձեզ վասն արանցս սչ-
 36 սոցիկ զինչ արժան իցէ զործել : Յոսանձ

18-22, ի հասարակաց բանտի

21-24, քահանայն եւ իշխան տաճարին եւ քահանայապետքն
 31-34, զտաքեալն

քան զաւուրս զայսոսիկ յարեաւ թեւ-
 7 զաս ասել զանձնէ թէ իցէ ոմն . յոր
 անկան արք թուով իրբեւ հորեք-
 հարեւր , որ սպանաւ , եւ ամենեքեան
 որ միտարանեալ էին ընդ նմա՝ քակտե-
 37 ջան եւ եղեն յոչինչ : Յետ նորա յա-
 րեաւ Յուդաս Գալիլեացի յաւուրս աշ-
 խարհապրին , եւ ասպտամբեղոյց ժո-
 ղովուրց բազում զկնի իւր . եւ նա
 կրեաւ , եւ ամենեքեան որ նմայն
 38 հաւանեալ էին՝ ցրուեցան : Եւ զարդիս
 ասեմ ձեզ , Ի բաց կացէք յարանոց
 յաղջանէ եւ թոյլ սուք դոցա , զի թէ
 ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ կամ
 39 զործդ , քակտեցի . Ապա թէ յԱստու-
 ծոյ է , սչ կարեք քակտել զդոսա ,
 զուցէ եւ աստուածամարտք գտանի-
 40 ջիք : Հաւանեցան նմա , եւ կոչեցեալ
 զտարեալսն՝ զան հարին , եւ պառու-
 ուիւրեցին մի՝ եւս խօսել յանուն Յի-
 41 սուսի , եւ արձակեցին զնոսա : Եւ նո-
 քա զնացին խնդարով յերեսաց ատենին ,
 զի վասն Նանուսանն արժանի եղին ա-
 42 նարկերոյ : Եւ զամենայն օր ի տաճա-
 րին եւ ատանին ոչ զաղարելին ու-
 սուցանել եւ աւետարանել զՅիսուս
 Բրիստոս :

ԳԼ Զ

1 Եւ յաւուրսն յայնոսիկ ի բազմանայ
 աշակերտացն եղև արտունջ Յունացն
 առ Հերբայեցիսն , զի արհամարհեալ
 լինէին ի պաշտամանն հանապազորդի
 2 այրիք նոցա : Կոչեցին երկոտասանքն
 զբազմութիւն աշակերտացն եւ ասին ,
 Ոչ է հաճոյ մեզ թողուլ զբանն Աս-
 3 տուծոյ եւ պաշակ զսեղանս : Ընարե-
 ցէք , եղբարք , վիպեալս ի ձէնջ արս
 4 եւ ինն , զորս կացուցուք ի վերայ պի-
 4 սայիցս այսոցիկ . Եւ մեք աղօթից եւ
 պաշտաման բանին հոգատակ լիցուք :
 5 Եւ հաճոյ թուեցաւ բանն ասալի ա-
 մենայն բազմութեանն . եւ ընտրեցին
 զՍտեփանոս , այր լի հաւատով եւ
 Հոգւով Սրբով , եւ զՓիլիպպոս եւ
 զՊրոքորոսն եւ զՆիկիանովրա եւ զՏի-
 մոփիա եւ զՊարմենա եւ զՆիկողայոս ,
 6 զեկն Անտիոքացի . Չորս կացուցին

¹ ՈՒՆԿ , անուան Տեսուծ , այլ՝ անուան նորա
² Բարդուէ , եւթն , լի Հոգւով Սրբով եւ իմաս-
 տութեամբ

առաջի առաքելոցն , եւ աղօթիս արար-
 7 եալ՝ եղին ի վերայ նոցա զձեոս : Եւ
 բանն Աստուծոյ աճէր , եւ բազմանայր
 թիւ աշակերտացն յոյժ յերուսաղէմ .
 եւ բազում ժողովք ի քահանայիցն ան-
 սային հաւատոցն :
 8 ԲԲ . Ստեփանոս , այր լի ³ շնորհօք
 եւ զօրութեամբ , առնէր արուեստս
 եւ նշանս մեծամեծս ի ժողովրդեանն :
 9 Յարեան ոմանք ի ժողովրդենէն , որ
 կոչէր ⁴ Լիբեացոց եւ Կիւրենացոց .
 եւ Ալեքսանդրացոց եւ որ ի Կիլի-
 կեցոց եւ յԱսիա , վիճել ընդ Ստեփա-
 10 նոսի . Եւ ոչ կարէին զգէմ ունել զի-
 մաստութեանն եւ զհոյւոցն որով խօ-
 11 սէր : Յայնժամ հրասպարեցին արս ո-
 մանս ասել թէ Լուաք զգորս խօսել
 բանս հայհոյութեան ի Մովսէս եւ յԱս-
 12 տուած : Եւ խոտվեցին զժողովուրդն
 եւ զերիցունսն եւ զղալրսն . եւ հաս-
 եալ ի վերայ՝ յափշտակեցին զնա եւ
 13 ամին յատենն : Եւ կացուցին վիպս
 սուսոս որ ասէին , Այրս այս ոչ զազա-
 րէ խօսել բանս հայհոյութեան զսեղ-
 14 ւոցն սրբոյ եւ զօրինացն : Լուաք ի
 զմանէ զի ասէր թէ Յիսուս հաղով-
 12 րեցի , նա քակեցէ զտեղիս զայս , եւ
 փոխեցէ զօրէնս զոր ետ մեզ Մովսէս :
 15 Եւ հայեցեալ ի նա ամենեցուն որ նրս-
 տէին յատենն , տեսին զերեսս նորա
 իրբեւ զերեսս հրեշտակի :

ԳԼ Ե

1 Ասէ քահանայապետն՝ եթէ Արդարեւ
 2 այդ սոյցոյէս լցէ : Եւ նա ասէ , Արք
 եղբարք եւ հարք , լուարուք ինձ . Աս-
 տուած փառաց երեւեցաւ հօր մերում
 Արքահամու մինչդեռ ի Միջագետս էր ,
 մինչև ⁵ Երևակեցուցեալ էր զնա՝ ի իմա-
 3 րան . եւ ասէ զնա , Ել յերկրէ քումմէ
 եւ յազդէ քումմէ , եւ եկ յերկիր զոր
 4 ցուցից քեզ : Յայնժամ ելեալ յերկրէն
 Գաղղեացոց բնակեցաւ ի իմառան , եւ
 անտի յետ մեռանելոյ հօր նորա՝ փոխ-
 եաց պանդխտեցոյ զնա յերկրիս յայս-
 միկ , յորում զուք այժմ բնակեալ էք :
 5 Եւ ոչ ետ նմա ժառանգութիւն ի սմա
 եւ ոչ քայլ մի ոտին . եւ խոստացաւ

³ ՈՒՆԿ , հաւատով
⁴ Յոյն , Լիբերտինացոց
⁵ Բարձր , բնակեալ էր նորա

տալ նմա զառ ի բնակուցիսն, և զաւակի նորա յետ նորա, մինչ ոչ զոյր
 6 նորա որդի. Խօսեցաւ Աստուած այսպէս, թէ եզիցի զաւակ նորա պանդուխտ յօտար երկրի, և ծառայեցուցեն զնա և չարչարեցեն ամս
 7 չորեքնարեւր. և զազգն սրում ծառայեցեն՝ զատեցայց ևս, առէ Աստուած, և և յետ այտորիկ ելցեն և պաշտեցեն զիս ի սեղուջս յայսմիկ
 8 և ևա նմա սելիս թրիատութեան. և ապա ծնաւ զԻսահակ, և թրիատեաց զնա յառուր ութերորդի. և Լսահակ՝ զՅակովբ, և Յակովբ՝ զեր
 9 կոտասան նահապետն. և նահապետն նախանձեալ ընդ Յովսեփայ՝ սաճատեցին յեզրպոսս. և էր Աս
 10 տուած ընդ նմա, և զիրկեաց զնա յամենայն նեղութեանց նորա, և ևա նմա չնորհս և իմաստութիւն ատաջի Փարաւոնի արքային եզրպոստացոյ. և կացոյց զնա իշխան եզրպոստացոյն
 11 և ամենայն տան նորա. և ևին սով յամենայն երկիրն եզրպոստի և ի Բանան, և էր նեղութիւն մեծ, և ոչ
 12 գտանէին կերակուր հարքն մեր. և լուեալ Յակովբայ թէ գտանի կերակուր յեզրպոստ, առաքեաց զհարսն
 13 մեր յառաջագոյն. և յերկրորդուն ևա ծանօթս Յովսէփ եզրպոստ իւրոց. և յայտնի եղև Փարաւոնի ազգն Կո
 14 բա. Առաքեաց Յովսէփ և կոչեաց զՅակովբ զհայր իւր և զամենայն ազգատունն, ոպև և թանառուեն և հինգ
 15 և էջ Յակովբ յեզրպոստ, և վախ
 16 ճանեցաւ ինքն և հարքն մեր. և փոխեցան ի Սիւքեմ և եզան յայրին զոր ստացաւ Արրահամ զնոց արծաթոյ յարդուցն և մովբայ ի Սիւքեմ
 17 Իբրև մերձեցաւ ժամանակ աւետեացն զոր խոտացաւ Աստուած Արրահամու, աճեաց ժողովուրդն և բազմա
 18 ցաւ յեզրպոստ. Մինչև յարեաւ այլ թագաւոր յեզրպոստ որ ոչ ճանաչէր
 19 զՅովսէփ. ևա հնարեցաւ ազգին մերում, և չարչարեաց զհարսն մեր առնել ընկեցիկ զմանկունս նոցա զի մի
 20 ապրեցին. և Յորում ժամանակի ծնաւ և Մովսէս, և էր կայտատ առաջի Աստուծոյ, որ և սնաւ ի տան հօր

21 իւրոյ ամիսս երիս. և յընկեցիկն աննէ զնա՝ երարձ զնա զուսարն Փարաւոնի, և սնոյց զնա իւր յարկերիս
 22 և վարժեցաւ Մովսէս ամենայն իմաստութեամբ եզրպոստացոյն, և էր զօրաւոր բանիւք և զարձակ իւրով
 23 Իբրև լցաւ նորա քառասնամեայ ժամանակ, անկաւ ի սիրտ նորա չրջել զեզրարք իւրովք, զարդ սկսի իորա
 24 յելի. և ևա սեռեալ զան զրկեալ՝ զչարեցաւ, և ինչրեաց զիւրձ զրկերցն
 25 սպանեալ զԵզրպոստացին. Զմտաւ աճէր թէ իմացին եզրարք նորա, զի Աստուած ի ձեռն նորա տալոց էր զվերկութիւն նոցա, և նորա ոչ իմացան
 26 և ի վաղիւ անզր երեւեցաւ նոցա մինչցեալ մարանչիւնն, և վարեաց զնոսս ի խաղաղութիւն, առէ Արք, եզրարք էր, բնդէր զրկէր զմիմանս
 27 Խակ որ զրկէր զընկերն՝ մերձեաց զնա և առէ, Ո՞ կացոյց զրեզ իշխան և
 28 գատաւոր ի վերայ մեր. Միթէ սպանանել կամիցիս զիս զոր օրինակ սպաներ երկ զԵզրպոստացին. և փախեալ Մովսէս ի բանիցս յայտանէ, և եզրպոստացաւ յերկիրն Մադիամու, ուր ծնաւ երկուս որդիս
 30 ԲՊ. և ի կատարի ամացն քառասնից՝ երեւեցաւ նմա յանապատի լերինն Մինայ հրեշտակ Տեառն իւրոց հար մա
 31 բնուոյն. և Մովսիս սեռեալ՝ զարմացաւ ընդ տեսին, և ի մտայն
 32 նորա նշմարել՝ եղև ձայն Տեառն, և ևա Աստուած հարց քոց, Աստուած Արրահամու և Չահովբայ՝. և զահի հարեալ Մովսէս՝
 33 ոչ իշխէր հայել. և ևա առէ ցնա Տէր, Լոյձ զիօշիկս ոտից քոց, զի տեղիզ յորում զուգ կացեր՝ երկիր սուրբ է
 34 Տեսանելով տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ որ յեզրպոստ, և լուայ հեծութեան նոցա և իջի փրկիլ զնոսս. և արդ ևկ տաքեցից զրեզ յե
 35 զրպոստ. Զայն Մովսէս զոր ուրացան և ևա սկսին, Ո՞ կացոյց զրեզ իշխան և գատաւոր ի վերայ մեր, զնա Աստուած իշխան և փրկիլ տաքեաց ի ձեռն հրեշտակին որ երեւեցաւ նմա ի մա
 36 բնուոյն. և ևան զնոսս՝ արարեալ

1 Բազմա, Բզգեցայ

2 Ուս, Աստուած Իսահակայ և Աստուած Յակովբայ

նշանս եւ արուեստս յերկրին Եգիպտացւոց եւ ի Կարմիր ծովուն եւ յա-
 37 նապատին ամս քառասուն : Այս Մովսէս է որ ասաց յորդան Իսրայելի , Մարգարէ յարուսցէ ձեզ Տէր Աստուած ձեր յեղբարց ձերոց իբրեւ զիս , նմա
 38 լուիջիք : Սա է որ եղև յեկեղեցւոջն յանապատին ընդ հրեշտակին , որ խօսեցաւ ընդ նմա ի լերինն Մինայ եւ ընդ հարսն մեր , որ ընկալաւ զպատ-
 39 դամս կենդանիս տալ մեզ , Որում ոչ կամեցան հնազանդ լինել հարքն մեր , այլ մերմեցին եւ զարձան սրտի . ք իւր-
 40 եանց յեգիպտոս : Եւ ասն ցեհարովն , Արա մեզ աստուածս , որ երթայցեն ատաջի մեր . զի Մովսէսն այն որ եւ հան զմեզ յերկրէն Եգիպտացւոց ոչ
 41 զիտեմք զի՛ եղև նմա : Եւ արարին յաւուրսն յայնսիկ որթ , եւ մատուցին զոնս կոտց , եւ ուրախ լինէին ի զործս
 42 ձեռաց իւրեանց : Դարձոց Աստուած եւ մատնեաց վնասս ի պաշտօն զօրութեան երկնից , որպէս եւ զրեալ է ի զիրս մարգարէից , Միթէ զոնս եւ պատարս յս մատուցէք ինձ զամս քառասունս յանապատին , տունդ Իսրայելի :
 43 Եւ ասէք զլրանն Մողքայ եւ զաստղն յաստուածոյն Հոեմիայ , զպատկերսն զոր արարէք երկիր պազանել նոցա . եւ փոխեցից զձեզ յայն կողմն Բարե-
 44 լացւոց , Խորանն վկայութեան էր ընդ հարսն մեր յանապատին . որպէս հրամանս եւ որ խօսէին ընդ Մովսիսի , ասնել զայն ըստ օրինակին զոր ետես :
 45 Չոր եւ ընկալաւ թերէին հարքն մեր հանգերձ Յեսուաւ . ի վիճակ աղղացն , զարս մերժեաց Աստուած յերեսաց հարցն մերոց մինչեւ յաւուրս Դաւթի ,
 46 Որ եղիս շնորհս ատաջի Աստուծոյ , եւ ինդրեոց դտանել զյարկս Աստու-
 47 ծոյ Յակոբայ : Եւ եւ Մողմովն շին-
 48 եաց նմա տուն : Այլ ոչ եթէ Բարձրեան ի ձեռագործ տաճարս ընակէ . այլ որ-
 49 պէս մարդարէն ասէ , Երկինք ամոռս իմ են , եւ երկիր՝ պատուանդան ուրից իմոց . որպիսի՞ տուն 2 յինեցէք ինձ , ասէ Տէր , կամ զի՛նչ տեղի հանդըս-
 50 տեան իմոյ . Ո՛չ ձեռն իմ արար զայս
 51 ամենայն : Խստապարանոց եւ անթիլիսաք սրտիւք եւ ականջօք , զուք

հանապազ Հոգւոյն Սրբոյ հակառակ
 52 կայք , որպէս հարքն ձեր՝ եւ զուք : Չո՞ ի մարդարէիցն ոչ հալածեցին հարքն ձեր , եւ սպանին զայնոսիկ որ յտաջագոյն պատմեցին վասն գալստեան Արդարոյն , որոյ զուք այժմ մատնիչք
 53 եւ սպանողք եղերուք : Ոյք ասէք զօրէնս ի հրամանս հրեշտակաց , եւ ոչ պահեցէք :
 54 Եւ լուեալ զայս գայրանային ի սիրտս իւրեանց , եւ կրճէին զատամունս ի
 55 վերայ նորա : Եւ նա էր լի Հոգւով Սրբով , հայեցաւ յերկինս եւ ետես զփառս Աստուծոյ եւ զՅիսուս զի կայր ընդ աջմէ Աստուծոյ , եւ ասէ , Ահա տեսանեմ զերկինս բացալ , եւ զՈրդի մարդոյ զի կայ ընդ աջմէ Աստուծոյ :
 56 Աղաղակեալ ի ձայն մեծ՝ խցին զականջս իւրեանց , եւ զիմեցին առ հասարակ ի վերայ նորա : Եւ հանեալ արտաքոյ քաղաքին՝ քարկոծէին . եւ վկայքն զնէին զձորձս իւրեանց առոտս երիտասարդի միոջ որ կոչէր Սա-
 57 լուղ , Եւ քարկոծ անէին զՍտեփանոս , որ կարդայր եւ ասէր , Տէր Յի-
 59 սուս , ընկալ զողի իմ : Եդ ծուր , աղաղակեաց ի ձայն բարձր , Տէր , մի՛ համարիր զոցա զայս մեզս : Եւ զայս իբրեւ ասաց , ննջեաց . եւ Սաւղոս էր կամակից սպանման նորա :

ԳԼ Ը

1 Եւ եղև յաւուր յայնմիկ հալածունն մեծ ի վերայ եկեղեցւոյն յերուսաղէմ . եւ ամենաքեան ցրուեցան ի գեղս Հրէաստանի եւ Սամարիայ բայ յառաքե-
 2 լոցն : Եւ բարձին զՍտեփանոս արք երկիւղածք , եւ արարին կոծ մեծ ի վերայ նորա :
 3 Բայ Սաւղոս մնասակար էր եկեղեցւոյն , ի տունս տունս մտանէր , քարչեալ զարս եւ զկանայս՝ մատնէր ի բանտ :
 4 Եւ սփռեալքն շրջէին , աւետարանս նէին զբանն : Իսկ Փիլիպպոս իջեալ ի քաղաքն Սամարայւոց քարոզէր նոցա զԲրիստոս : Ունկն զնէին ժողովուրդքն բանիցն Փիլիպպոսի միաբան ի լսել նոցա եւ ի տեսանել զնշանսն 7 զոր անէր : Բանդի բազումք որ ունէին զայսս պիղծս՝ աղաղակէին ի ձայն

1Պատմ. , աստուածոյն ձերոյ
 2Յովն , շինեցէք

8 մեծ եւ ելանէին : Եւ բազում անդա-
 9 մալոյձք եւ կաղբ բժշկէին : Եւ ելե-
 ուրախութիւն մեծ ի քաղաքին յայն-
 միկ : Այր ոմն Սիմոն անուն յառա-
 10 ջազոյն էր ի քաղաքին , մուղէր եւ ապ-
 ջեցուցանէր զազոյն Սամարացոց , ա-
 11 նկ զանձնէ թէ իցէ մեծ ոմն : Յոր
 հայէին ամենեքեան ի փոքուէ մինչեւ
 ի մեծամեծս , եւ ասէին , Սա է զօրու-
 12 թիւն Աստուծոյ որ կոչի մեծ , Հայէին
 ի նա վասն բազում ժամանակաց մո-
 զութեամբքն ապշեցուցանելոյ զնոսա :
 13 Բայց յորժամ հաւատացին Փիլիպպոսի
 որ աւետարանէր վասն արքայութեանն
 Աստուծոյ եւ անուանն Յիսուսի Քրիս-
 14 տոսի , մկրտէին ամենեքեան արք եւ
 15 կանայք : Այլ եւ ինքն Սիմոն հա-
 ւատաց , եւ մկրտեալ կանխէր առ Փի-
 16 լիպպոս : տեսեալ զնշանսն եւ զմեծա-
 մեծ զօրութիւնսն ուրք լինէին զար-
 17 մանայր : Իրրեւ լուան որ յերուսաղէմ
 ատաքեալքն էին թէ եւ ի Սամարիա
 ընկալան զբանն Աստուծոյ , ատաքե-
 18 ցին առ նոսա գՊետրոս եւ զՅովնան-
 19 նէս : Որք իջեալ կացին յաղօթս ի վե-
 րայ նոցա , որպէս զի առցեն զՀոզին
 20 Սուրբ : Զի ցայնժամ չեւ եւս էր եւ
 ոչ ի վերայ միոյ նոցա հասեալ , բայց
 միայն մկրտեալք էին յանուն Տեառն
 21 Յիսուսի : Յայնժամ եզին զձեռս ի վե-
 րայ նոցա , եւ անունէին Հոզի Սուրբ :
 22 Տեսեալ Սիմոն թէ ձեռս ի վերայ
 զնելով ատաքելոցն՝ տուեալ լինի Հո-
 23 զին Սուրբ , մատոց նոցա ինչս եւ
 24 ասէ , Տուք եւ ինձ զիշխանութիւնս
 զայս , զի յոյր վերայ զնիցեմ զձեռս՝
 25 առցէ Հոզի Սուրբ : Եւ Պետրոս ասէ
 26 ցնա , Արժաթ քո ընդ քեզ լիցի ի կո-
 րուստ , զի զպարզեանս Աստուծոյ հա-
 27 մարեցար ընչիւք ստանալ : Ոչ գոյ քեզ
 մասն եւ վիճակ ի բանիդ յայդմիկ ,
 28 քանզի սիրտ քո ոչ է ուղիղ ատաջի
 29 Աստուծոյ : Ապաչաւեա զու ի չարեացդ
 քոց յայլցանէ , եւ աղաչեա զՏէր ,
 30 թերեւս թողութիւն լիցի քեզ ի մեղ-
 31 մնխ խորհրդոց սրտի քո : Քանզի ի
 զառնութիւն մաղձի եւ ի կնճիռն ա-
 32 նիրաւութեան տեսանեմ զքեզ : Պա-
 տասխանի ետ Սիմոն եւ ասէ , Աղա-
 33 չեցէք զուք վասն իմ զՏէր , զի մի՛ ինչ
 եկեացէ ի վերայ իմ յորոց զուքդ ա-
 34 սացէք : Եւ նոցա եղեալ վկայութիւն

խօսեցան զբանն Աստուծոյ , եւ գար-
 35 ձան յերուսաղէմ : Եւ ի բազում զեղս
 Սամարացոցն աւետարանէին :
 26 ԲԵ . Հրեշտակ Տեառն խօսեցաւ առ
 Փիլիպպոս եւ ասէ , Արի եւ գնա զու
 ի կողմն հարաւոյ ընդ ճանապարհ՝ որ
 իջանէ յերուսաղէմէ ի Գաղա , զի այս
 27 է անապատ : Եւ յարեաւ զնաց . եւ
 ա՛նաւասիկ այր մի Եթէովպացի , ներ-
 28 քինի հօր Կանդակայ տիկնոջ Եթէով-
 պացոց , որ էր ի վերայ ամենայն գան-
 ձուց նորա . որ եկեալ էր երկիր պա-
 29 զանկ յերուսաղէմ : Եւ անորէն զար-
 ձեալ եւ նստեալ ի կոտս իւրում՝ ըն-
 30 թեոնոյր գմարարէն զԵսայի : Ասէ
 Հոզին ցՓիլիպպոս , Մատիւր եւ յարեաց
 31 ի կոտոզ յայդոսիկ : Եւ ընթացեալ Փի-
 լիպպոս լսէր զի ընթեոնոյր զԵսայի
 մարգարէ : Եւ ասէ , Գիտիցնս արգեւք
 32 զոր ընթեոնոցուսդ : Եւ նա ասէ ,
 Զիա՛րդ կարիցեմ , եթէ ոչ որ ատաջ-
 նորդեացէ ինձ : Եւ ազաչեաց զՓիլիպ-
 33 պոս ելանել նստել ընդ նմա : Եւ կրելս
 զորոցն զոր ընթեոնոյր էր այս . Իրրեւ
 զոչխար ի սպանդ վարեցաւ , եւ իրրեւ
 զորոջ ատաջի կարչի իւրոյ անմուռն՝
 34 այնպէս ոչ բանայ զբերան իւր : Ի խո-
 նարհութեան նորա զատաստան նորա
 բարձաւ , եւ զազգատոնմ նորա ո՛ պատ-
 մեսցէ , զի բառնան յերկրէ կեանք նո-
 35 րա : Պատասխանի եւ ասէ , Ներքինին Փի-
 լիպպոսի եւ ասէ , Ազաչեմ զքեզ , վասն
 ո՛յր ասէ մարգարէն զայս , վասն ի՛ւր
 36 եթէ վասն այլոյ ուրուք : Եբաց Փիլիպ-
 պոս զբերան իւր , եւ սկսեալ ի գրոցս
 յայսցանէ՝ աւետարանեաց նմա զՅի-
 37 սուս : Իրրեւ երթալին զճանապարհայն ,
 եկին ի ջուր ինչ , եւ ասէ ներքինին ,
 Ա՛նաւասիկ ջուր , զի՛նչ արգելու զիս
 38 ի մկրտելոյ : ՆԵւ ասէ ցնա , Եթէ հա-
 ւատաս բոյորով սրտիւ քով , մարթ է :
 Պատասխանի ետ եւ ասէ , Հաւատամ
 եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աս-
 39 տուծոյ : Եւ հրամայեաց կացուցանել
 զկատան . եւ իջին երկուքեան ի ջուրն ,
 Փիլիպպոս եւ ներքինին , եւ մկրտեաց
 40 զնա : Եւ իբրեւ ելին ի ջրոյ անտի , ² Հո-
 զին Սուրբ եկն ի վերայ ներքինւոյն ,
 եւ հրեշտակ Տեառն յափշտակեաց՝

¹ Այս հոմոթ պատմ է Բողոմոս
² Բողոմոս , Հոզի Տեառն յափշտակեաց

զՓիլիպպոս , եւ ոչ եւս ետես զնա ներ-
քինին , եւ զնայր զճանապարհ իւր ու-
40 րախոսութեամբ : Բայց Փիլիպպոս զտա-
լԱզովտոս . եւ շրջեալ աւետարանէր
ամենայն քաղաքացն՝ մինչեւ ի գալ
նորա ի Կեսարիա :

ԳԼ Թ

1 ԲԶ . Իսկ Սաւղոս տակաւին ¹լցեալ
սպաննայեօք եւ սպանմամբ աշակեր-
տացն Տեսոն՝ , մատուցեալ առ քահա-
2 նայապետն՝ Խնդրեաց ի նմանէ թուղթս
ի Դամասկոս առ ժողովուրդսն . որպէս
թէ զոք զոցէ զայնր ճանապարհաւ ,
արս կամ կանայս , կայեալս անցէ յՆ-
3 րուստագէմ : Եւ ընդ երթալն նորա՝ ե-
ղև մերձեկնալ ի Դամասկոս . յանկար-
ժակի չուրջ զնովաւ փայտակեաց
4 լոյս յերկնից : Եւ անկեալ յերկիր՝ լուա-
րարբառ որ ասէր ցնա , Սաւուզ , Սա-
5 սուզ , զի՞ հարածես զիս : Եւ ասէ , Ո՞վ
ես , Տէր : Եւ նա ասէ , Ես եմ Յիսուս
6 զոր զուս հարածես .² Այլ յոսն կաց
եւ մուտ ի քաղաքդ , եւ պատմեսցի
7 քեզ զինչ պարտ իցէ ատենել : Իսկ արքն
որ ընդ նմայն երթային , կային ան-
չչունջ , զձայնն միայն լսէին , բայց
8 տեսանէին եւ ոչ ինչ : Յարեաւ Սաւ-
ղոս յերկրէ անտի , եւ աչօք բացօք
ոչ զոք տեսանէր . զձեռանէ ատեալ նո-
9 րա՝ մուծին ի Դամասկոս : Եւ էր անդ
աւուրս երիս եւ ոչ տեսանէր . եւ ոչ
եկեր եւ ոչ արբ :

10 Եւ էր ոմն աշակերտ ի Դամասկոս
Անանիա անուն . ասէ ցնա Տէր ի տես-
լեան , Անանիա , Եւ նա ասէ , Ահաւա-
11 սիկ եմ , Տէր : Եւ ասէ ցնա Տէր ,
Յոտն կաց եւ գնա ընդ փողոցն որ
կոչի Ուղիղ , եւ խնդրեցես յապա-
րանսն Յուզայ Սաւղոս անուն զՏար-
12 սոնացի . զի կայ զեռ յազօթս : Եւ եւ
տես ի տեսպետն այր մի Անանիա ա-
նուն , մտեալ եւ եղեալ ի վերայ նորա
13 զձեռն , որպէս զի տեսցէ : Պատասխա-
նի ետ Անանիա , Տէր , լուայ ի քաղ-

մաց վասն անն այնորիկ , որչափ ա-
րար չարիս սրբոց քոց յերուսագէմ .
14 Եւ աստ ունի իշխանութիւն ի քահա-
նայապետիցն , կապել զամենեւեան որ
15 կարգան զանուն քո : Ասէ ցնա Տէր ,
երթ գու , զի անօթ ընարութեան է
ինձ նա , կրել զանուն իմ ատաջի հե-
թանոսաց եւ թաղաւորաց եւ որդւոցն
16 Իսրայելի : Քանզի ես իսկ ցուցից նմա
որչափ պարտ իցէ նմա չարչարել վասն
17 անուան իմոյ : Եւ զնաց Անանիա եւ
եմուտ յապարանսն , եւ եղեալ ի վե-
րայ նորա ձեռս՝ ասէ , Սաւուզ եղբայր ,
՝ զի վեր հայեաց ,՝ Տէր ատարեաց զիս ,
Յիսուս որ երեւեցան քեզ ի ճանա-
պարհին յորում զայլրն , որպէս զի
18 տեսցես եւ լցցիս Հոգւով Սրբով : Եւ
վաղվազակի անկան յաչաց նորա իր-
րեւ կեզեւանք .⁴ Ետես եւ յարեաւ
19 մկրտեցաւ : Եւ ատեալ կերակուր՝ զօ-
րացաւ . եւ եղև ի Դամասկոս ընդ
աշակերտան աւուրս ինչ :

20 Եւ վաղվազակի ի ժողովուրդսն քա-
րոզեաց զՅիսուս , թէ սա է Որդին
21 Աստուծոյ , Ջարմացեալ էին ամենեւ-
քեան որ լսէինն , եւ ասէին , Ո՞չ սա էր
որ աւար հարկանէր յերուսագէմ զայ-
նոսիկ , որ կարգային ⁵զանուն Յի-
սուսի՞ : Եւ այսր նմին իրի եկեալ է ,
զի կայեալս զսոսա տարցի առ քահա-
22 նայապետսն : Այլ Սաւղոս առաւել եւս
զօրանայր եւ յազթահարէր զՀրեայն
որ բնակեալ էին ի Դամասկոս . եւ
խելամտեղուցանէր թէ սա է Քրիս-
23 տոսն : Իրրեւ կատարէին աւուրք բա-
ղումք , իսորհեցան Հրեայքն սպանանել
24 զնա : Յայանեցաւ Սաւղոսի նենդու-
թիւնն նոցա , քանզի պահէին զզրուանն
ի տուէ եւ ի զիշերի որպէս զի սպան-
25 ցեն զնա : Եւ ատեալ զնա աշակեր-
տացն ի զիշերի՝ ընդ պարիսպն կախ-
եալ ի լծուցին փանդակաւ :

26 Իրրեւ եկն Սաւղոս յերուսագէմ ,
ընդկանէր յարել յաշակերտան . եւ ա-
մենեքեան երկնչէին ի նմանէ , չհաւա-
27 տային թէ իցէ աշակերտ : Բայց Բառ-
նարայ ատեալ զնա՝ ամ առ ատարեալսն ,
եւ պատմեաց նոցա որպէս ի ճանա-
պարհին ետես զՏէր , եւ զի խօսեցաւ

¹ Յ-ձձ , շնչեալ սպանուալիս եւ սպանումն յա-
շակերտան Տեսոն
² Ո՞րչափ , յաւելան , խիտ է քեզ ընդգէմ խթանի
սքսցել : (6) Եւ զարհուրեալ եւ անչչունջ լեալ
ասաց , Տէր , զի՞նչ կամիս աւանել ինձ : Եւ ասէ
ցնա Տէր :

³ Ի քաղաւս զսխաւ
⁴ Ո՞րչափ , ետես ատժամայն
⁵ Յ-ձձ , զանունս զայս

ընդ նմա, եւ զի ի Գամասկոս համար-
 28 ձակեցաւ յանուն Յիսուսի: Եւ էր ընդ
 նոսա ի մտանել եւ երանել յերուսա-
 ղէմ, համարձակեալ յանուն ¹Տեառն:
 29 Կոսէր եւ վիճէր ընդ Յոյնսն. եւ նորա
 30 խոսկայն սարանանել զնա: Եւ իմացեալ
 եղբարց՝ իջուցին զնա ի Կեսարիա, եւ
 առաքեցին զնա ի Տարսոն:
 31 Բայց եկեղեցին ընդ ամենայն Հրէ-
 աստան եւ ի Սամարիա եւ ի Գալիլեա
 ունէր խաղաղութիւն, շինեալ եւ եր-
 թեալ զհետ երկիւղի Տեառն եւ մխի-
 թարութեամբ Հովուոյն Սրբոյ բաղ-
 մանայր:
 32 Բէ. Եւ եղեւ ի շրջելն Պետրոսի առ
 ամենեկոսմբ, իջանել նմա եւ առ
 սուրբան որ բնակեալ էին ի Լիւզղա:
 33 Եւ եղիտ անգ այր մի, որու՞մ անուն
 էր Ենեա, ութիմեան զնէր ի մահիճս
 34 անգամալոյժ: Եւ ասէ զնա Պետրոս,
 Ենեա, բժշկէ դքս ²Տէր Յիսուս Քրիս-
 տոս՝, արի եւ քեղն թօթախեա զան-
 կողինս քո: Եւ վաղվաղակի յարեաւ:
 35 Եւ տեսին զնա ամենեկեան որ բնա-
 կեալ էին ի Լիւզղա եւ ի Սարոփեա,
 36 որք եւ դարձան իակ ի Տէր: Եւ ի Յուդ-
 պէ էր կին ոմն աշակերտեալ անուն
 Տարթիթա, (որ թարգմանեալ կոչի Այ-
 ծեմնիկ.) սա էր լի դորձովք բարեօք
 37 եւ ողորմութեամբք զոր առնէր: Եւ
 եղեւ յաւուրն յայնոսկի հիւանդանալ
 նմա եւ մեռանել. լուացին զնա եւ
 38 կղին ի դատիկոնի անգ: Եւ մերձ էր
 Լիւզղա ի Յուպպէ. աշակերտացն լու-
 եալ եթէ Պետրոս անդ է, առաքեցին
 երկուս արս առ նա աղաչել զի մի՛
 39 զանգաղեսցի զայ առ նոսա: Եւ յա-
 բուցեալ Պետրոս եկն ընդ նոսա, զոր
 իրրեւ եկն՝ հանրս ի վերանատուն. եւ
 կացին եւ յուցանէին զձորձս եւ զհան-
 դերձս, որչափ առնէր նոցա Այծեմ-
 40 նիկն: Եւ հանեալ արտաքս զամենե-
 սեան Պետրոսի՝ եզ ծունր, եկաց յա-
 ղօթն, եւ դարձաւ ի մարմինն եւ ասէ,
 Տարթիթա, արի կաց ³յանուն Տեառն
 Յիսուսի Քրիստոսի: Եւ նա երաց
 զաչս իւր, եւ տեսեալ զՊետրոս նստաւ

41 կանգուն: Չեռն ետ նմա եւ յարոյց
 զնա. կոչեաց զսուրբսն եւ զայրիսն,
 42 առաջի կացոյց զնա կենդանի: Եւ յայտ-
 նի եղեւ ընդ ամենայն Յուպպէ, եւ հա-
 43 ւատացին բազումք ի Տէր: Եւ եղև
 աւուրս բազումս լինել նմա ի Յուպպէ
 առ ումեմն Սիմոնի խաղախորդի:

ԳԼ Ժ

1 ԳԱ. Այր մի էր ի Կեսարիա անուն
 Կոռնելիոս, հարիւրապետ ի գնդէ որ
 2 կոչէր Իտալացի. Բարեպաշտօն եւ եր-
 կիւղած յԱստուծոյ ամենայն տամբ իւ-
 րով, առնէր ողորմութիւնս բազումս
 ի ժողովրդեանն, եւ յաղօթս կայր առ
 3 Աստուած յամենայն ժամ: Ետես ի
 տեսեան յայտնապէս զիններորդ ժա-
 մու աւուրն զհրէշտակ Աստուծոյ, զի
 մտանէր առ նա եւ ասէր զնա, Կոռ-
 4 նելիէ: Եւ նա հայցեալ ընդ նա՝ զար-
 հուրեցաւ եւ ասէ, Ձի է, Տէր: Եւ
 ասէ զնա, Աղօթք քո եւ ողորմու-
 թիւնք քո ելին յիշատակաւ առաջի
 5 Աստուծոյ: Եւ արդ յղեա արս ի Յուդ-
 պէ եւ կոչեա զՍիմոն զոմն որ կոչի
 6 Պետրոս. նա մտեալ է առ Սիմոնի
 ումեմն խաղախորդի, որպէ տունն
 7 մերձ ի ծով: Եւ իրրեւ զնաց հրէշ-
 տակն որ խօսէր ընդ նմա, կոչեաց
 երկուս ի ծառայեցն եւ զինուոր մի
 բարեպաշտօն ի սպասաւորացն իւրոց,
 8 Եւ պատմեալ նոցա զամենայն՝ առա-
 քեաց զնոսա ի Յուպպէ:
 9 Եւ ի վաղիւ անդր ի ճանապարհ ան-
 կանել նոցա եւ մօտ ի քաղաքն լինել,
 ել Պետրոս ի տանին կալ յաղօթս
 10 զվեցերորդ ժամուն: Քաղցեաւ եւ կա-
 մէր ճաշակել. եւ ի պատրաստեելն ու-
 յա՝ եղև եւ ի վերայ նորա զարմայնումն:
 11 Եւ տեսանէր զերկինս բացեալ, եւ զչո-
 րեցունց տանոց կապեալ անօթ ինչ
 իրրեւ զվտաւոյ մեծի, իջեալ նստեալ
 12 ի վերայ երկրի. Յորու՞մ էին ամենայն
⁵չորքոտանիք եւ սոզունք երկրի՝ եւ
 13 թռչունք երկնից: Եւ եղև ձայն առ
 14 նա, Արի, Պետրոս, զեն եւ կեր: Եւ
 Պետրոս ասէ, Կաւ լիցի, Տէր, զի ոչ

¹Ունտ, Տեառն Յիսուսի
²Յայ օրն-ւոյ սուտ, Տէր Յիսուս, այլ, Յի-
 սուս Քրիստոս
³Ի Յունիս պատմ

⁴Ունտ յաւուրն, նա խօսեցի քեզ զինչ պարտ
 էք քեզ առնել
⁵Ունտ, շորքոտանիք երկրի և քաղանք և սո-
 զունք

երբեք կերայ խառնակ ինչ եւ անսուբրյ
 45 Զայն եղև կրկին անգամ առ նա , Զոր
 Աստուած սրբեաց՝ դու մի՛ պղծեր ,
 46 Այս եղև երկուս , եւ վերադառ անօթն
 47 յերկինս : Եւ մինչդեռ զարմացեալ էր
 ընդ միաս Պետրոս թէ զի՛նչ իցէ տե-
 սին դոր ետես , ահա արքն առաքեալք
 ի Կոնստելայ հարցին զասլարանիցն Սի-
 48 մոնի , կացին առ զբանն . Կոչեցին
 եւ հարցանէին , եթէ Սիմոն որ կոչի
 49 Պետրոս աստ մտեալ իցէ : Եւ մինչ-
 դեռ Պետրոս զմտաւ ածէր վասն տես-
 յանն , ասէ Հոգին ցնա , Ահաւասիկ
 20 ՚արք ոմանք՝ խնդրեն զքեզ : Այլ արի
 էջ եւ երթ ընդ նոսա առանց իրիք
 21 խղճելոյ , զի ես առաքեցի զնոսա : Եւ
 իբրեւ էջ Պետրոս առ նոսա , ասէ ,
 Ահաւասիկ ես եմ զոր խնդրէքն . զի՛նչ
 22 իրք են վասն որոյ եկիքդ : Եւ նոքա
 ասեն , Կոնստելիոս հարիւրապետ , այր
 արդար եւ երկիւզած յԱստուծոյ , վկայ-
 եալ յամենայն ազգէն Հրէից , հրաման
 առ ի հրեշտակէ սրբոյ Կոչել զքեզ ի
 23 տուն իւր եւ լսել բանս ի քէն : Կոչ-
 եաց զնոսա ի ներքս եւ առ իւր ազոյց :
 Եւ ի վազիւ անդր յարուցեալ Պետ-
 րոս զնաց ընդ նոսա , եւ ոմանք յեղ-
 բարց անտի որ ի Յոպպէ էին՝ եկին
 24 ընդ նմա : Եւ ի վազիւ անդր մտին
 ի Կեսարիա . եւ Կոնստելիոս մնայր նո-
 ցա , կոչեցեալ զազգաստոհմն իւր եւ
 զկարեւոր բարեկամսն :
 25 ՔՅ . Եւ եղև ի մտանեխն Պետրոսի՝
 ընդ առաջ եղև նմա Կոնստելիոս , ան-
 26 կեալ առ ոտան երկիր պապանէր : Եւ
 Պետրոս կանդնեաց ցնա եւ ասէ , Յոսան
 27 կաց , եւ ես ինքն մարդ եմ : Եւ խօ-
 սելով ընդ նմա եմուտ ի ներքս . եւ
 զասնէր անդ ժողովեալ զբազումս :
 28 Եւ ասէ ցնոսա , Դուք ինքնին գիտէք
 ս՛րպէս անմարթ է ամն Հրէի հպել
 կամ մերձեանալ առ այլազգի . եւ ինձ
 Աստուած եցոյց մի՛ զոր խառնակ կամ
 29 անսուբր . ասել ի մարդկանէ : Վասն
 այսորիկ եւ առանց ընդ բանս ինչ ա-
 ծելոյ եկի կոչեցեալ . բայց արդ հար-
 ցանեմ , Յի՛նչ պէտա կոչեցէք զիս :
 30 Եւ Կոնստելիոս ասէ , Յառաջ քան զչորս
 աւուրս մինչ ցայս ՝ ժամ կայի յաղօթս

յինն ժամն ի տան իմուծ . եւ ահա այր
 մի եկն եկաց առաջի իմ ի հանդերձս
 31 սպիտակս , եւ ասէ , Կոնստելիէ , լսելի
 եզեն ազօթք քո , եւ ողորմութիւնք
 32 քո յիշեցան առաջի Աստուծոյ . Եւ արդ
 յղեա ի Յոպպէ եւ կոչեա զՍիմոն որ
 կոչեցեալն է Պետրոս . սա մտեալ է
 ի տուն Սիմոնի ուրումն խաղախոր-
 զի մերձ ի ծովն . Յոր եկեացէ եւ խօ-
 33 սեացի ընդ քեզ : Եւ ես իսկ եւ իսկ
 յղեցի առ քեզ , դու բարեոք արարեր
 զի եկիր . արդ ամենքին միք առաջի
 Ս.Աստուծոյ կամք լսել զամենայն , որ
 հրամայեալ է քեզ ի Տեսոնէ :
 34 Երաց Պետրոս զբերան իւր եւ ասէ ,
 Ծշմարտութեամբ հասեալ եմ , զի ոչ
 գոյ ակնառութիւն առ ի յԱստուծոյ .
 35 Այլ յամենայն ազգս որ երկնչին ի նմա-
 նէ եւ գործէ զարդարութիւն , ընդու-
 36 նելի է նմա : Չբանն առաքեաց որդ-
 ւոցն Իսրայելի աւետարանել զխաղա-
 դութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի .
 37 (սա է ամենայնի Տէր .) Դուք ինքնին
 գիտէք զբանն որ եղև ընդ ամենայն
 Հրէաստան սկսեալ ի Գալիլէէ , յետ
 մկրտութեանն զոր քարոզեաց Յով-
 38 հաննէս . ԶՅիսուս որ ի նազարեթէ ,
 զոր օծն Աստուած Հոգւով Սրբով եւ
 զօրութեամբ , որ չրջեցաւ բարի առ-
 նել եւ բժշկել զամենայն բնորենեալն
 ի Սատանայէ , զի Աստուած էր ընդ
 39 նմա : Եւ մեք վկայ եմք ամենայնի զոր
 արար յերկրին Հրէաստանի եւ յերու-
 սաղէմ . զոր եւ սպանին կախեալ զփայ-
 40 տէ : Զնա Աստուած յարոյց յերրորդ
 41 աւուր , եւ ետ նմա յայտնի լինել , Ոչ
 ամենայն ժողովրդեանն , այլ մեզ վկա-
 յիցս յառաջագոյն ընտրելոցս յԱստու-
 ծոյ , որք եւ կերպք եւ արբաք ընդ
 նմա յետ յարութեան նորա ի մեռե-
 42 լոց : Եւ պատուիրեաց մեզ քարոզել
 ժողովրդեանն եւ վկայութիւն գնել
 թէ նա է սահմանեալն յԱստուծոյ զա-
 43 տաւոր կենդանեաց եւ մեռելոց , նմա
 ամենայն մարգարէք վկայեն , թողու-
 թիւն մեղաց ամուսլ անուամբ նորա
 ամենայն հաւատացելոց ի նա :
 44 Եւ մինչդեռ խօսէր Պետրոս զբանս
 զայս , հանդեաւ Հոգին Սուրբ ի վերայ

¹Բաւասէ , արք երեք
²Ուսն , ժամ պահէի ե

³Յոսանս պապան
⁴Ուսն , Զբանն զոր

45 ամենեցուն որ լսէին զբանն : Չարմա-
ցան որք ի թրիատու թենէ անախ հա-
ւատացեալք եկեալ էին ընդ Պետրոսի,
զի եւ ի հեթանոսս պարզեւք Հոլւոյն
46 Արքայ զեզուին : Քանզի լսէին ի նո-
ցանէ խօսել լիզուս եւ մեծացուցանել
47 զԱստուած : Յայնժամ պատասխանի
եա Պետրոս, Միթէ զՂուբն ոք արդե-
լուլ կարէ՞ առ ի չմկրտելոյ զսոսս,
որք եւ զՀոլին Սուրբ ընկալոյն որպէս
48 եւ մեք : Եւ հրամայեաց նոցա մկրտել
յանունն ՝ Յիսուսի Քրիստոսի : յայն-
ժամ ազաչեցին զնա լինել անդ ա-
ւուրս ինչ :

ԳԼ ԺԱ

1 ԳԳ. Լուան առաքեալքն եւ եղբարք
որ էին ի կողմանս Հրէաստանի, զի
եւ ի հեթանոսս ընկալան զբանն Աս-
2 տուծոյ, Բայց յորժամ ել Պետրոս յե-
րուսաղէմ, խզճէին ի նմանէ որ ի թըլ-
փատութենէ անախ ՝ հաւատացեալքն
3 էին : Եւ ասէին եթէ ՝ Յմուտ առ արս
4 անթրիատս եւ եկիր՝ ընդ նոսս : Եւ
սկսաւ Պետրոս պատմել նոցա կար-
5 դաւ եւ ասէ, Ես էի ի քաղաքին ի
Յոպպէ յազօթս, եւ տեսանէի ի զար-
մացման տեսիլ, ի ջանել անօթ ինչ իր-
6 րեւ կտաւոյ մեծի զչորեցունց տանոց
կախեալ յերկնից, եւ հնաս մինչեւ առ
7 իս : Յոր պշուցեալ հայէի, եւ տեսի
զչորքոտանիս երկրի եւ զզազանս եւ
8 զտայ բարբառ որ ասէր ցիս, Արի,
9 Պետրոս, զին եւ կեր : Եւ ասեմ, Քաւ
լիցի, Տէր, զի խառնակ ինչ եւ ան-
սուրբ ոչ երբեք հմուտ ի բերան իմ :
10 Պատասխանի եա ինձ երկիցս անդամ
բարբառն յերկնից, Չոր Աստուած
սրբեաց՝ զու մի՛ խառնակ համարիր :
11 Այս եղև երկից, եւ վերացաւ ամե-
41 նայն դարձեալ յերկինս : Եւ անա ան-
զէն երևա արք եկին կացին առ սպա-
րանիցն ուր եմն էի, առաքեալք ի կե-
42 սարիայ առ իս : Եւ ասէ ցիս Հոլին
երթալ ընդ նոսս եւ մի՛ ինչ խզճել
եկին ընդ իս եւ սոքա վեցերկն եզ-
բարբս, եւ մտաք ի տունն առնն այ-

13 նորիկ : Եւ պատմեաց մեզ ո՛րպէս եւ
տես զհրեշտակն ի տան իւրում զի
կայր եւ ասէր ցնա, Առաքեա ի Յոպպէ,
եւ կոչեա զՍիմոն զկոչեցեալն Պետ-
14 ռոս : Որ խօսեացի բանս ընդ քեզ, ո-
րովք կեցցես դու եւ ամենայն տուն
15 քո : Եւ իբրեւ սկսայ խօսել, եկն Հո-
զին Սուրբ ի վերայ նոցա, որպէս եւ
16 ի վերայ մեր ի սկզբանն : Յիշեցի զբանն
Տեառն զոր ասէին, Յովաննէս մկրտ-
տեաց ի ջուր, բայց դուք մկրտիցիք ի
17 Հոլին Սուրբս, Իսկ արդ եթէ՞ վնասա-
բախաց պարզեւն եա Աստուած եւ նո-
ցա որպէս եւ մեզ՝ ի հաւատալն ի Տէր
Յիսուս Քրիստոս, ես զի՛նչ կարող էի
18 արդելուլ զԱստուած : Եւ լուեալ զայս
լոցին, եւ փառաւոր առնէին զԱս-
տուած եւ ասէին, Ուրեմն եւ ի հե-
թանոսս եա Աստուած զապաշխարու-
թիւն կենաց :
19 Եւ ցրուեալքն ի նեղութենէն որ եւ
զու ի վերայ Ստեփանոսի՝ հասին մին-
չեւ ի Փիւնիկէ եւ ի Կիպրոս եւ յԱն-
տիոքիա : ոչ ումեք խօսէին զբանն,
20 բայց միայն Հրէից : Եւ էին ոմանք
ի նոցանէ արք Կիպրոցիք եւ կիւրե-
նայիք, որք մտեալ յԱնտիոք խօսէին
ընդ Յոյնսն աւետարանեալ զՏէր Յի-
21 սուս, Եւ էր ձեռն Տեառն ընդ նոսս,
եւ բազմութիւն հաւատացելոց զար-
22 ձաւ ի Տէր : Լու եղև բանս այս յա-
կանջս եկեղեցւոյն որ էր յերուսաղէմ
վասն նոցա, եւ առաքելին զբաճնա-
23 քաս մինչեւ յԱնտիոք : Որ իբրեւ եկն
եւ ետես զնորհոն Աստուծոյ, ուրախ
եղև, եւ միւլթարէր զամենեսեան յօ-
ժարութեամբ սրտի կայ նոցա ի Տէր :
24 Ձի էր այր զուարթամիտ եւ լի Հոլւով
Արքով եւ հաւատովք : Եւ յուեկաւ
25 ժողովուրդ բազում Տեառն : Եւ էլ ի
Տարսոն խնդրել զՍաւղոս, եւ զտեալ
26 զնա ամ յԱնտիոք : Եւ եղև նոցա
զամն ողջոյն ժողովել յեկեղեցին եւ
ուսուցանել ժողովուրդ բազում, եւ
անուանել նախ յԱնտիոք ՝ զաշակերտ-
եալսն Քրիստոսեայս :
27 ԳԳ. Ընդ աւուրսն ընդ այնոսիկ ի ջին
յերուսաղեմէ մարդարէք յԱնտիոք :
28 Յարուցեալ մի ոմն ի նոցանէ անունն
Աղաբոս՝ նշանակեաց Հոգւովն սուլ մեծ

1Ո՛ւմն, Տեառն
2Ի Յոպպէ քաղաք
3Քաղաք, Մտեր առ արս անթրիատոս ե կերար

4Յոպպէ, զաշակերտոն

լինել ընդ ամենայն աշխարհ, որ եղև
 29 առ Կրաւզեաւ : Բայց յաշակերտաց
 անախ, որպէս զիարդ կարող ոք էր՝ իւ-
 րաքանչիւր ոք ի նոցանէ որոշեցին ա-
 րաքել ի պէտս եղբարցն որ բնակեալ
 30 էին ի Հրէաստանի . Զոր եւ արարին
 իսկ առաքեալ առ երկցունան ի ձեան
 Բառնաբայ եւ Սաւղոսի :

ԳԼ. ԺԲ

1 ԳԾ. Ընդ ժամանակն ընդ այնոսիկ
 արկ Հերովդէս արքայ ձեռն չարչարել
 2 դոմանս յեկեղեցոյն : Եւ սպան զՅա-
 կովրոս, զեղբայր Յովհաննու, սրով :
 3 Ետևս եթէ հաճոյ է Հրէիցն, յաւել եւս
 ունել զՊետրոս . եւ էին աւուրքն բա-
 4 զարձակեալաց : Զոր իբրեւ կայաւ, եւ
 ի բանախ, եւ մասնեաց չորից չորբոր-
 ցաց զինուորաց պահել զնա . եւ կա-
 5 մէր յետ դատկին ածել զնա ժողովր-
 6 զեանն : Եւ Պետրոս ի պահեստի էր ի
 բանախն, եւ ազօթք ստէպ լինէին յե-
 կեղեցոյն վասն նորա առ Աստուած :
 7 Իբրեւ կամեցաւ զնա ածել Հերովդէս,
 ի զիշերին յայնմիկ էր Պետրոս ի քուն
 ի մէջ երկուց զինուորաց՝ կայեալ
 կրկին շլթայիւք, եւ պահապանքն ա-
 8 տալի զբանն պահէին զբանան : Եւ
 առա հրեշտակ Տեստն եկն եկաց ի վե-
 9 րայ, եւ ըյս ծագեաց ի սանն, եւ
 խթեաց զկոպն Պետրոսի, յարոյց զնա
 եւ ասէ, Արի վաղվաղակի . եւ անկան
 10 շլթայքն ի ձեռաց նորա : Եւ ասէ զնա
 հրեշտակն, Ա՛՞՞՞ զգօսի քո, եւ արկ
 զհողաթափս յստս քո . եւ արար այն-
 11 պէս . եւ ասէ զնա, Արկ զձործս քո
 12 եւ եկ զինի իմ : Եւ երևոյ երթայր
 զնա, եւ ոչ զիտէր եթէ ճշմարիտ իցէ
 որ ինչ եղևն ի հրեշտակէն . զի հա-
 13 մարէր երազ տեսանել : Եւ իբրեւ ան-
 ցին նորա ըստ մի պահ եւ բոտ եր-
 կուս, եկին մինչեւ ի գուռնն երկաթի
 որ հանէր ի քաղաքն . որ ինքնին բա-
 ցաւ նոցա, եւ մտեալ անցին ընդ փու-
 ղոց մի . եւ վաղվաղակի ի բայ եկաց
 14 ի նմանէ հրեշտակն : Եւ Պետրոս իբրեւ
 ի միտս եղև, ասէ, Արդ զիտեմ ճըշ-
 մարիտ եթէ առաքեալ Տէր զհրեշտակ
 իւր, եւ փրկեաց զիս ի ձեռաց Հե-
 15 րովդի եւ յամենայն ակնկալութենէ
 12 Ժողովրդեանն Հրէից : Եւ լեալ ի միտս

եկն ի տուն Մարեմու մօր Յովհաննու,
 որ կոչեցաւն Մարկոս . ուր էին բա-
 զումք ժողովալ եւ ազօթս անէին :
 13 Եւ ի բախել զգուրս սանն, մասեաւ
 աղախին մի, ունին զնէր, որում ա-
 14 նուն էր Հոռովէ : Եւ ծանուցեալ
 զձայնն Պետրոսի՝ ի խնդարոյն ոչ երաց
 զգուռնն, ի ներքս ընթացեալ պատ-
 մեաց թէ Պետրոս առ զբանն կայ :
 15 Նորա ասնն ցնա, Մոյիս . եւ նա եւս
 սնդէր թէ այսպէս է . եւ նորա ասէին,
 16 Հրեշտակ նորա իցէ : Եւ Պետրոս ստէպ
 բախէր . իբրեւ բացին, տեսին զնա
 17 եւ զարմացան : Եւ նա ձեռամբ ցու-
 ցանէր նոցա լուկ, եւ ՚պատմեաց որ-
 պէս եւ Տէր հնան զնա ի բանտէն, եւ
 18 ասէ, Պատմեքք Յակովբայ եւ եղբարց
 զայս . եւ եկեալ զնաց յայլ տեղի : Եւ
 իբրեւ այդ եղև, էր խոտութիւն մեծ
 ի մէջ զինուորացն, զի՞ արդեւք Պե-
 19 տոսն եղև : Իսկ Հերովդէս իբրեւ
 խնդրեաց զնա եւ ոչ եղիտ, հարցեալ
 զպահապանն՝ հրամայեաց սպանանել .
 եւ իջեալ ի Հրէաստանէ ի Կեսարիա
 եւ անդ լինէր :
 20 Եւ էր Հերովդէս ցասմամբ ընդ Տիւ-
 րացիս եւ ընդ Սիրիոնացիս . եւ նորա
 առ հասարակ եկին առ նա, եւ ի բանի
 արարեալ զինստոս սենեկապետ ար-
 քայի, խնդրէին զխաղաղութիւն, վասն
 կերակրելոյ երկրն նոցա յարքու-
 21 նուստ : Յաւուր միում յերեւելուջ
 Հերովդէս զկեցեալ էր զհանդերձ թա-
 դուորութեան եւ նստէր յատենի, եւ
 22 խօսէր ընդ նոսա հրապարակաւ : Եւ
 ամբոխն աղաղակէր թէ Աստուծոյ
 23 բարբառ է, եւ ոչ մարդոյ : Եւ անդէն
 եհար զնա հրեշտակ Տեստն, փոխա-
 նակ զի ոչ եւ փասս Աստուծոյ . եւ
 եղևալ որդնայից՝ սատակեցաւ :
 24 Եւ բանն Աստուծոյ աճէր եւ բազ-
 մանայր :
 25 ԳԶ. Բառնաբաս եւ Սաւղոս զար-
 ձան յերուսաղեմէ, իբրեւ կատարեցին
 զպաշտօնն . առեալ էր ընդ իւրեանս եւ
 զՅովհաննէս որ կոչեցեալն էր Մարկոս :

ԳԼ. ԺԳ

1 Էին ոմանք յԱնտիօք ըստ եկեղեցոյն
 1 Ունա, պատմեաց նոցա

մարդարէք եւ դարգապետք, Բառնա-
 քաւ եւ Շմաւոն կոչեցեալն Նիւզէր,
 եւ Ղուկիոս կիրեւնացի եւ Մանայէն
 2 եւ Սաւղոս : Մինչդեռ ի սլաշտաման
 Տեառն կային եւ սրահին, առէ Հոյին
 Սուրբ, Արշեղէք ինձ զԲառնաքաւ եւ
 3 զՍաւղոս ի գործ յոր կոչեցեալ է իմ
 զդոսա : Յայնժամ պահեալ եւ աղօթս
 արարեալ եզին զձեռս ի վերայ նոցա
 եւ արձակեցին :
 4 Եւ նորքա առաքեալք ի Հոգւոյն Սըր-
 քոյ՝ իջին ի Սեղեկիա, եւ անտի նա-
 5 լեցին ի կիպրոս : Եւ հասեալ ի Սա-
 զամինա սրատէին զբանն Աստուծոյ
 ի ժողովուրդս Հրեայն. ունէին եւ
 6 զՅովհաննէս պաշտօնեայ : Երջեալ ընդ
 ամենայն կղզին մինչեւ ի Պափոս, գաին
 անդ այր զամս մոզ սուտ մարդարէ
 Հրեայ, որում անուն էր Բարեկետու.
 7 Որ էր ընդ փոխանակի բղեշխին Սերպ-
 եայ Պաւղոսի, առն իմաստնոյ. նորա
 աղաչեալ զԲառնաքաւ եւ զՍաւղոս
 8 խնդրէր լսել զբանն Աստուծոյ : Ընդզմ
 եկաց նոցա ելլիմաս մոզ, քանզի այս-
 9 պես թարգմանի անուն նորա. խնդրէր
 զըջել զփոխանակ բղեշխին ի հաւա-
 9 սոց : Իսկ Սաւղոս որ եւ Պաւղոսն
 լցեալ Հոգւով Սըրքով հայեցու ի նա,
 10 Եւ առէ, Ոյ լի ամենայն նենդութեամբ
 եւ խորամանկութեամբ, որդի Սա-
 տանայի, թշնամի ամենայն արդարու-
 11 թեան, ո՛չ լսես ի թիւրեկոյ զճանա-
 պարհս Տեառն զուղիղս : Եւ արդ՝ ա՜նա
 ձեռն Տեառն ի վերայ քո, եւ եղիցիս
 կոյր՝ չտեսանել զարեւ մինչեւ ի մա-
 մանակ մի. եւ անդէն անկաւ ի վի-
 12 րայ նորա մէզ եւ խաւար, եւ չըջեալ
 ինչորէք առաջնորդս : Յայնժամ տե-
 13 եայ փոխանակի բղեշխին զիրոն որ ե-
 զին հաւատաց, զարմացեալ ընդ վար-
 14 գապետութիւնն Տեառն :
 13 Եւ ամբարձեալ ի Պափեայ Պաւղոս-
 14 եանց՝ եկին ի Պերդէ Պամփիւլեայ.
 Յովհաննէս մեկնեալ ի նոցանէ՝ դար-
 14 ձաւ յերուսաղէմ : Եւ նորքա զնացեալ
 ի Պերդեայ՝ եկին յԱնտիոք Պիսիդեայ,
 եւ մտեալ ի ժողովուրդն յաւուր չա-
 15 բաթու՝ նստան : Եւ յետ ընթեանոյ
 զօրէնսն եւ զմարդարէս, առաքեցին առ
 նոսա ժողովրդապետքն եւ ասնն, Արք
 եղբարք, եթէ իցեն ի ձեզ բանք միսի-

թարութեան առ ժողովուրդդ, խօսե-
 ցարուք :
 16 ԳԷ. Յոան եկաց Պաւղոս շարժեաց
 զձեռն եւ առէ, Արք Խորացեալցիք եւ
 ոչք երկնչիք յԱստուծոյ, լուարուք :
 17 Աստուած ժողովրդեանս պատրիկ Խա-
 րայիլի ընտրեաց զհարսն մեր, եւ զժու-
 զովուրդն բարձրացց ի պանդխտու-
 18 թեան յերկրին ելիպրտացեոյ, եւ ի բա-
 իրբեւ քառասնամեայ ժամանակ կե-
 19 րակրեաց զնոսա յանապատիւ : Եւ քակ-
 եալ ազգս եւթն յերկրին՝ Քանանու՝
 ժառանգեցոց նոցա զերկիր՝ Կոնցա իր-
 20 բեւ ամս չորեքճարիւր եւ յիսուն : Եւ
 յետ այսորիկ՝ ես նոցա դատուարս
 21 մինչեւ ի Սամուէլ մարգարէ, եւ ան-
 տի յառաջ խնդրեցին թագաւոր, եւ
 ես նոցա Աստուած զՍաւուրդ որդի
 կիսեայ՝ այր յազգէ Բենիամինի ամս
 22 քառասուն : Եւ իրբեւ փոխեաց զնա,
 յարոյց նոցա զԴաւիթ թագաւոր, ո-
 րում եւ ասաց վիպութեամբ, Գոփ
 զԴաւիթ որդի Յեսսեայ այր բոս սրափ
 իմում, որ արասցէ զամենայն զկամս
 23 իմ : Ի սորա դաւակէ Աստուած բոս
 աւետեացս յարոյց Խորայիլի զՓրկիչն
 24 Յիսուս : Բոս յառաջադոյն բարեզու-
 թեանն Յովհաննու առաջի երեսաց
 մաի նորա մկրտութիւնս սպաշխա-
 րութեան ամենայն ժողովրդեանն Խա-
 25 րայիլի : Եւ իրբեւ յուր Յովհաննէս
 զրնթացան, առէր, Զո՞ ոք կարծէր զի-
 նէն թէ իցեմ. չեմ ես այն, այլ ա՜նա
 26 գայ զին իմ, որում չեմ արժանի զի-
 յիկս ստիցն լուծանել : Արք եղբարք,
 որդիք Արքաճամեան տոմին, եւ որ
 ի ձեզ երկիւղածք իցեն յԱստուծոյ,
 ձեզ բանս այս փրկութեանս առաքե-
 27 ցաւ : Բայց որ բնակեալ են յերուսա-
 զղէմ, եւ իշխանք նոցա անմասոյն ելլեն
 ի նմանէ, եւ Չբոս բարբառոյ՝ մարգա-
 28 րէիցն, որ զամենայն շարաթսն ըն-
 թեանուին, դատեալ կատարեցին : Եւ
 ոչ մի ինչ պատճառս մահու գտեալ
 խնդրեցին ի Պիղատոսէ սպանանել զնա :
 29 Եւ իրբեւ կատարեցին զամենայն որ
 վասն նորա գրեալ էր՝ իջուցեալ ի փայ-
 30 տէն եղին ի զերեզմանի : Այլ Աստուած

1 Ուրտ, նոցա (20) Եւ յետ այսորիկ երբեւ
 ամս չորեքճարիւր եւ յիսուն
 2 Յոան, ի բարբառոյ

յարոյց զնա ի մտեկոյց . որ երեւեցաւ
 34 աւուրբք բազմօք այնոցիկ Որ ելեալ էին ընդ նմա ի Գալիլէէ յԵրուսաղէմ . որք եւ արդ իսկ վկայք են նորա առ
 32 ժողովուրդն : Եւ մեք ձեզ աւետարանեմք զխոստումն որ առ հարսն եղեալ
 33 էր : Զի զնոյն Աստուած կատարեաց առ մեզ որդիս նոցա՝ յարուցեալ զՅիսուսս , որպէս եւ ի Սաղմոսին զրեալ է յերկրորդում , Որդի իմ ես զու , եւ ես
 34 այսօր ծնայ զքեզ : Եւ զի յարոյց զնա ի մտեկոյց , եւ ոչ եւս դառնայոց է յապականութիւն , այսպէս ասէ թէ Տաց ձեզ զսրբութիւնսն Դաւթի զհաւա-
 35 տարիմս : Քանզի եւ ի միւստումն ասէ , Ոչ տացես Սրբոյ քում տեսանել զա-
 36 պականութիւն : Այլ Դաւթի յազգիանդ իւրում պաշտեաց եւ ի կամս Աստուծոյ ննջեաց , եւ յաւելաւ առ հարս
 37 իւր եւ ետես զապականութիւն : Բայց զոր Աստուածն յարոյց՝ ոչ ետես զա-
 38 պականութիւն : Յայտնի լիցի ձեզ , արք եղբարք , զի սովաւ ձեզ թողու-
 39 թիւն մեղաց աւետարանի . Եւ յամենայնէ յսրմէ ոչ կարացէք օրինօքն Մովսիսի արդարանալ՝ սովաւ ամե-
 40 նայն որ հաւատայ արդարանայ : Զորոչ կացէք , զուցէ եկեացէ ի վերայ ձեր որ
 41 ասացեալն է ի մարդարէս . Տեսէք , արհամարհոտք , եւ զարմացարուք եւ եղծարուք , զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր , գործ՝ որում ոչ հաւատայցէք , եթէ ոք պատմեացէ ձեզ :
 42 Եւ իբրեւ ելին անտի , աղաչէին ի միւսում շարաթու խօսել նոցա զնոյն
 43 բանս : Իբրեւ արձակեցաւ ժողովուրդն , զհետ երթային բազումք ի Հրէից անտի եւ ի պաշտօնէիցն եկամտից զՊաւղոսի եւ զԲառնարայ . որք խօսէին ընդ նոսա , եւ հաւանեցուցանէին զնոսա կալ մնալ ի շնորհսն Աստուծոյ :
 44 ԴԱ . Եւ ի գալ միւսոյ շարաթուն , յաւելէ ամենայն քաղաքն ժողովեցաւ
 45 լինի զբանն Աստուծոյ : Իբրեւ տեսին Հրեայքն զամբոխն՝ լցան նախանձու , եւ ընդդէմ դարձեալ ասացելոցն ի Պաւ-
 46 զոսէ՝ հայնոյէին : Համարձակեալ Պաւղոսի եւ Բառնարայ՝ ասէին , Առ ձեզ նախ պարտ էր խօսել զբանն Աստուծոյ . եւ քանզի գուք մերժէք զնա , եւ ոչ արժանիս համարիք զձեզ կինացն

յաւիտենականաց , ահաւասիկ գաւ-
 47 նամք ի հեթանոսս : Զի այսպէս պատուիրեաց մեզ Տէր . Եզի զքեզ ի լոյս հեթանոսաց՝ լինել քեզ ի փրկութիւն
 48 մինչեւ ի ծագս երկրի : Զայս լուեալ հեթանոսացն ուրախ լինէին , եւ փա-
 49 սաւոր անէին զբանն Տեառն . եւ հաւատացին որք էին կարգեալ ի կեանսն
 50 յաւիտենականս : Եւ շրջեր բանն Աստուծոյ ընդ ամենայն գաւառն : Բայց Հրեայքն զրգոնցին զպաշտօնեայ կանայս զգաստս , եւ զզխաւորս քաղաքին , եւ յարուցեալ հալածանս ի վերայ Պաւղոսի եւ Բառնարայ՝ հանին զնոսա
 51 ի սահմանացն իւրեանց : Եւ նոցա թօթաիեալ զիոչի ոտից ի վերայ նոցա՝
 52 եկին յԻկոնիոն : Եւ աշակերտքն ընտելին ինդութեամբ եւ Հողուով Սրբով :

ՎԼ ԺԴ

1 Եւ եղև յԻկոնիոն ի միասին մտանել նոցա ի ժողովուրդ Հրէիցն եւ խօսել նոյնպէս , մինչև հաւատալ Հրէից եւ
 2 Յունաց բազմաց յոյժ : Բայց անհաւան Հրեայքն յարուցին եւ շարացուցին զանձինս հեթանոսացն ի վերայ եղբարց :
 3 Բաղում ժամանակս շրջէին , համարձակեալք ՝ Տեառն վկայութեամբ , բանի շնորհաց իւրոց , եւ տալ՝ նշանս եւ արուեստս լինելոյ ի ձեռս նոցա :
 4 Եւ եղև հերձուածք բազմութեան քաղաքին , ոմանք էին ի Հրեայնս , եւ
 5 ոմանք յառաքեալնս : Իբրև եղև զիմել հեթանոսացն եւ Հրէից իշխանօքն իւրեանց ի թշնամանել եւ ի քարկոծել
 6 զնոսա , Աղդ եղեալ նոցա՝ փախեան ի քաղաքսն Լիկայոնացուց ի Լիւստրա եւ ի Դերբէ եւ շուրջ զգաւառաւն , եւ անդ աւետարանէին :
 7 ԴԲ . Եւ այր մի Լիւստրացի տկար յոտից նստէր՝ կազ յորովայնէ մօր իւ-
 8 ըրոյ , որոյ երբեք չէր գնացեալ : Սա լուաւ զխօսան Պաւղոսի , որոյ հայեցեալ ի նա եւ տեսեալ թէ ունի հա-
 9 լատս փրկութեան , Ասէ մեծաձայն , Քեզ ասեմ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի , Յոսն կաց ի վերայ ոտից քոց ուղիղ . եւ վազլազէր եւ

18-22, ի Տէր որ վկայէր բանի շնորհաց իւրոց , տուեալ 2ի քաղաքն պատե

10 գնայր : Եւ ժողովրդոցն անսեալ զոր
 արարն Պաւղոս՝ բարձին զձայնս իւր-
 եանց Լիկայոնարէն եւ ասեն , Աս-
 տուածք նմանեալք մարդկան իջին առ
 11 մեզ : Եւ կոչէին զհառնաբաս Դիոս ,
 եւ զՊաւղոս՝ Հերմէս , քանզի նա էր
 12 առաջնորդ բանին : Իսկ քուրմն Դիայ
 որ կայր առաջի քաղաքին , ցուրս եւ
 պսակս հասուցեալ ի գուռնն՝ հանդերձ
 13 բազմութեամբքն կամէր զոհել : Եւ
 լուեալ առաքելոցն Բառնաբայ եւ Պաւ-
 ղոսի , պատառեալ զհանդերձս իւրեանց՝
 արտաքս վազեցին Կամբոխէն . ազա-
 14 ղակէին եւ ասէին , Արք , զի՛նչ գոր-
 ծէք զայդ . մեք ձեզ նմանողք կարեօք
 մարդիկ եմք , աւետարանել ձեզ յայդ-
 պիսի ունայնութեանց դառնալ յԱս-
 տուած կենդանի , որ արար զերկինս
 եւ զերկիր եւ զծով եւ զամենայն որ
 15 ի նոսա : Որ յանցեալ ազգան թոյլ ետ
 ամենայն հեթանոսաց զնալ ի ձանա-
 16 պարսս իւրեանց : Եւ սակայն ոչ եթէ
 առանց վկայութեան զինքն եթող՝ բա-
 րերարութեամբն տալ յերկնից ձեզ
 անձրեւս եւ ժամանակս պտղաբերս ,
 ընուկ կերակրովք եւ ուրախութեամբ
 17 զսիրտս ձեր : Եւ զայս ասացեալ՝ հաղիւ
 լուցուցանէին զժողովուրդան ի չզոհե-
 լոյ նոցա . 2այլ գնալ յիւրաքանչիւր
 տեղիս :
 18 ԴԳ . Եւ ի չրջեւն նոցա եւ յուսու-
 ցանել , եկին հասին յԱնտիոքէ եւ յԻ-
 կոնիոնէ Հրեայք . 2եւ ի միձեղ նոցա
 համարձակութեամբ , պատրեցին զժո-
 ղովուրդան 2ի բաց կալ ի նոցանէ , եւ
 ասէին թէ Ոչինչ ձշմարտութիւն ա-
 սեն , այլ դամենայն ստեն . եւ քար-
 կոծեալ զՊաւղոս՝ քարչեցին արտաքս
 քան զքաղաքն , եւ համարէին զնա
 19 մեռեալ : Եւ ի պատել զնովաւ աչա-
 կերտացն՝ յարեաւ եմուտ ի քաղաքն ,
 եւ ի վաղիւ անդր ել Բառնաբաւ հան-
 20 դերձ ի Դիերբէ : Աւետարանեալ ի քա-
 ղաքին յայնմիկ եւ աշակերտեալ զբա-
 ղումս՝ դարձան ի Լիւսարա եւ յԻկո-
 21 նիոն եւ յԱնտիօքիա , Հաստատել զան-
 ձինս աշակերտելոցն եւ մխիթարել կալ
 հաստատուն ի հաւատսն . եւ թէ՛ Բա-
 ղումնեղութեամբք պարտ է մեզ մտա-
 22 նել յարքայութիւնն Աստուծոյ : Զեւ-

նադրեցին նոցա ըստ եկեղեցւոյ՝ երի-
 ցունս , աղօթիս արարեալ հանդերձ
 պահովք՝ յանձն արարին զնոսա Տեառն
 23 յոր հաւատացեալ էին : Եւ չրջեալ ընդ
 24 Պիսիդիա եկին ի Պամփիլիա : Եւ իս-
 սեցեալ ի Պերգէ զբանն Տեառն՝ իջին
 25 յԱտտալիա : Եւ անտի նաւարկեալ
 զնացին յԱնտիօք , ուստի էին յանձն
 արարեալ շնորհացն Աստուծոյ ի գործն
 26 զոր կատարեցին : Եկեալ եւ ժողովեալ
 զեկեղեցին՝ պատմեցին որչափ արար
 Աստուած ընդ նոսա . եւ զի երաց հե-
 27 թանոսաց զուռն հաւատոց : Շրջէին
 ժամանակս ոչ սակաւս ընդ աչա-
 կերտան :

ԳԼ ԺԵ

1 ԴԿ . Եւ ոմանք իջեալ ի Հրէաստանէ
 ուսուցանէին զեղբարս , եթէ ոչ թրիա-
 տիք ըստ օրինացն Մովսիսի՝ ոչ կարէք
 2 ապրել : Եւ ի յինել ոչ սակաւ հակա-
 ռակութեան եւ խնդրոյ Պաւղոսի եւ
 Բառնաբայ ընդ նոսա , եղին ելանել
 Պաւղոսի եւ Բառնաբայ եւ ոմանց ի
 նոցանէ առ առաքեալսն եւ երիցունս
 յերուսաղէմ վասն խնդրոցն այնորիկ :
 3 Նօքա յուղարկեալք յեկեղեցւոյն չրջե-
 ցան ընդ Փիւնիկէ եւ ընդ Սամարիա .
 պատմէին զգարձն հեթանոսաց , եւ
 աննէին ուրախութիւն մեծ ամենայն
 4 եղբարց : Եւ հասեալ յերուսաղէմ , ըն-
 կարեալք յեկեղեցւոյն եւ յառաքելոցն
 եւ յերիցանց՝ պատմեցին որչափ ինչ
 5 արար ընդ նոսա Աստուած : Յարեան
 ոմանք ի հերձուածոյն փարիսեցւոց հա-
 ւատացեալք , եւ ասեն թէ Պարտ է
 թրիատել զգոսա , եւ պատուիրել պա-
 5 նել զօրէնսն Մովսիսի :
 6 Եւ ժողովեցան առաքեալքն եւ ե-
 րիցունք տեսանել վասն բանիս սցսո-
 7 րիկ : Եւ յետ բազում խնդիր յինելոյ
 յստն եկաց Պետրոս եւ ասէ ցնոսա ,
 Արք եղբարք , զուք ինքնին գիտէք ,
 զի յաւուրցն առաջնոց ի միջի ձերում
 բնարեաց Աստուած բերանով իմով լսել
 հեթանոսաց բանին աւետարանել եւ
 8 հաւատալ : Եւ սրտաղէտն Աստուած
 վկայեաց նոցա , տալով նոցա զՀոգին
 9 Սուրբ որպէս եւ մեզ : Եւ ոչինչ ընտ-
 րութիւն արար ի մէջ նոցա եւ մեր ,
 հաւատովք սրբեալ զօրրոս նոցա :

40 Արդ ընդէ՞ր փորձէ՞ք զԱստուած, զնեւ լուծ ի վերայ պարանոցի աշակերտացն, զոր ոչ հարքն մեր եւ ոչ մեր կարաւ:

41 ցաք բառնալ: Այլ չնորձօքն Տեառն Յիսուսի Քրիստոսի հաւատաւոր ապրել, զոր օրինակ եւ նորա:

42 Լուեաց ամենայն ժողովուրդն եւ լսէին Բառնաբայ եւ Պաւլոսի պատմութն, որչափ արար Աստուած նշանս եւ արուեստս ի հեթանոսս ի ձեռն նոցա:

43 ԳԵ. Եւ յետ լսելոյն նոցա պատասխանի եւ Յակոբոս եւ ասէ, Արք եղբարք, լուարուք ինձ. Շմաւոն պատմեաց որպէս յառաջագոյն Աստուած այց արար անուել ժողովուրդ ի հեթանոսաց անուան իւրոյ: Եւ այնմ միաբանին բանք մարդարէլոցն որպէս

44 եւ զրեալ է: Յետ այսորիկ դարձայց եւ շինեցից զյարկն Իսաւրի վանկեալն, եւ զկործանեալն նորա վերստին շինեցից, եւ կանոնեցից զնա. Արպէս զի խնդրեացնն մնացորդք մարդկան զՏէր, եւ ամենայն հեթանոսք յորոյ վերայ կոչեցեալ է անուն իմ, ասէ Տէր,

48 որ անէ՞ զայս ամենայն, Յայանի՜ է

49 ի յաւիտեանցն:՝ Վասն որոյ եւ ես խրաւունս համարիմ մի՛ նեղել զայնս սիկ սքք ի հեթանոսացն զանուան առ

20 Աստուած: Այլ սալ թուղիս առ նոսա խորշիկ ի կերակրոց կոտց եւ ի պոսնրկուելնէ եւ ի մնտկոսուոյ եւ յարենէ:

21 Զի Մովսէս յաղպայն ասաջնոց բոսքազարաց զբարոյգիշտն իւր ունի՛ ի ժողովնն ըստ ամենայն շարաթոց ընթերցեալ:

22 Յայնժամ հաճոյ թուեցաւ առաքելոցն եւ երկրանայն ամենայն եկեղեցեալսն, արս բնարեալս ի նոցանէ առաքել յԱնտիոք ընդ Պաւլոսի եւ ընդ Բառնաբայ, զՅուզա վիտչեցեալն Բարսաբա եւ զՇիղա՝ արս զխաւորս:

23 Գրեալ առ եզրարս՝ ի ձեռն նոցա զայս ինչ.

Առաքեալք եւ երկրուերք եւ ելբարք, յԱնտիոք եւ ի Սիւրիս եւ ի Կիլիկիս եղբարցդ որ ի հեթանոսաց չք, ողջոյն: Վանդի լուաք թէ ոմանք իրրեւ

ի մէնջ խոտկեցուցին զձեզ բանիք խախտել զանձինս ձեր, ասեն Թլփատել եւ պահել զօրէնսն, որոց ոչ հրարան ժողովելոցս, արս բնարեալս յղել առ ձեզ ընդ սիրելիս մեր, ընդ Բառնաբայ եւ ընդ Պաւլոսի, Արք՝ որք մասնեցին զանձինս իւրեանց յասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Արդ առաքեցաք զՅուզա եւ զՇիղա, եւ նոցա ի բանից զնոյն պատմել: Զի հաճոյ թուեցաւ զողոյն Սըբրոյ եւ մեզ մի՛ ինչ աւելի բնոն զնեւ ձեզ, բայց միայն ի կարեւորացս յայտոցիկ. ի բաց կալ ի զոհերոյ կոտց եւ յարենէ եւ ի հեղձուցելոյ եւ ի պոսնրկուելնէ. յորոց պահեալ զանձինս բարուք գործէք. ողջ լերուք:

30 Եւ նոքա արձակեալս իլլին յԱնտիոք, եւ ժողովեալ զժողովուրդն՝ եւ ասուն զթուղթն: Եւ ընթերցեալ ուրախ եղեն ի վերայ միսթարուելեանն:

32 Յուզա եւ Շիղա, զի եւ նոքա մարդարէք էին, բանիւք բազմօք միսթարուցին զեղբարս եւ հաստատեցին: Եւ եղեալ անդ ժամանակս՝ արձակեցան խաղաղութեամբ յեղբարք ՝ առ առաքեալսն: ՝ Եւ հաճոյ թուեցաւ Շիղայի

35 մեալ անդէն:՝ Բայց Պաւլոս եւ Բառնարաս չըջէին յԱնտիոք, ուսուցանել եւ աւետարանել եւ այլովք բազմօք զբանն Տեառն:

36 ԳԶ. Իսկ յետ աւուրոյ ինչ ասէ Պաւլոս յեմանարաս, Դարձցուք եւ չըջեսցուք զեղբարքք ըստ ամենայն քաղաքաց յորս քարոզեցաք զբանն Տեառն

37 թէ սրայէս ունիցին: Բառնարաս կամեր անուել եւ զՅովհաննէս զկոչեցեալն Մարկոս. Բայց Պաւլոս աղաչէր թէ զմեկնեալն ի նոցանէ ի Պամփիլեայ եւ զԵկեղեալն ընդ նոսա ի զործն

39 մի՛ անուել ընդ ինքեանս: Եւ եղեւ զժամութիւն՝ մինչեւ մեկնել նոցա ի միմեանց, Բառնարայ անուել զՄարկոս նաւել ի Կիպրոս: Եւ Պաւլոսի բնարեալ զՇիղա եւ՝ յանձն արարեալ չնորհայն Աստուծոյ յեղբարց անտի,

41 Եւ չըջէր ի կողմանս Աստուծոյ եւ Կիլիկեոց, եւ հաստատէր զեկեղեցիսն:

¹ Ուստ, եւ ի յաւիտեանց Տեառն ամենայն գործք իւր

² Յուզ, արս զխաւորս ի մէջ եղբարց. (23) Գրեալ

³ Ուստ, առ որս առաքեցինն զնոսա

⁴ Յաննա պատմ

ԳԼ. ԺԶ

1 Եկին հնաւ ի Դերրէ եւ ի Լիւսարա .
 եւ աճա աշակերա ոմն էր անդ անունն
 Տիմոթէոս , որդի կնոջ Հրէի հաւա-
 2 սացելոյ եւ հօր հեթմանոսի . Որ վկայ-
 եալ էր ի Լիւսարացեոց եւ յիկոնաց-
 3 ւոց եզրարց : Չաա կամեցաւ Պաւղոս
 բնոյ իւր ասնել , եւ առեալ թրիատեազ
 գնա վասն Հրէիցն որ էին ի տեղիան
 յայնասիկ , թանգի վրաւին ամեներին
 4 զհայր նորա թէ հեթմանու էր : Իրրեւ
 անցանէին ընդ քաղաքն , աւանդէին
 նոցա պահել զհրամանսն պատուիրեալս
 յատարելոցն եւ յերիզանցն որք յերու-
 5 սագէմ : Եւ եկեղեցիքն հաստատէին
 ի հաւատս , եւ յաւելուին ի թիւն հա-
 նապաղօր :
 6 Ի՛նչ . Եւ շրջեցան ընդ Փոսելիա եւ
 ընդ կոզման Գալատացեոց , արդել-
 եալք ի Հողւոցն Սրբոյ խօսել զրանն
 7 յԱսիա : Բայց եկեալ առ Միւսետե-
 թեակոսիէին երթալ ի Բիւլթանիա , եւ
 ոչ համարձակեաց նոցա Հողին Յիսու-
 8 սի : Եւ անցեալ ըստ Միւսիա՝ իջին
 9 ի Տրովաղա : Եւ տեսիլ երեւեցաւ ի
 զիշերի Պաւղոսի . այր ոմն Մակեդո-
 նոցի կայր , աղաչէր զնա եւ ասէր ,
 Անցեալ ի Մակեդոնիա օգնեսցես մեզ :
 10 Եւ իրրեւ զտեսին ետես , վազվազակի
 խնդրեցաք ելանել ի Մակեդոնիա , տե-
 զեկացեալք թէ հրաւիրեաց զմեզ Տէր
 աւետարանել նոցա :
 11 Եւ ելեալ ի Տրովաղայ դէպ ուղիղ
 զնացաք ի Սամոթրակէ , եւ ի վաղիւ
 12 անդր ի Նոր քաղաք . Եւ անտի ի Փի-
 լիպոլուս , որ է առաջին վիճակ Մա-
 կեդոնացեոց՝ քաղաք կոզսլիա . եւ
 անդ ի քաղաքին զաղարեալ մեր ա-
 13 լուրս ինչ , Յաւուր շարաթու ելաք
 արտաքոյ քաղաքին առ գետափնն ուր
 համարէին աղօթս մատուցանել , եւ
 նստեալ խօսեալք ընդ ժողովեալ կա-
 14 նայսն : Եւ կին ոմն անուն Լիդիա ,
 ծիրանաւաճառ ի Թիւսատր քաղաքէ ,
 երկիւղած յԱստուծոյ , լուաւ , զորոյ
 Տէր իսկ երաց զսիրան սնասլ խօսիցն
 15 Պաւղոսի : Եւ իրրեւ մկրտեցաւ ինքն
 եւ տուն իւր , աղաչէր եւ ասէր , Եթէ
 համարիք զիս հաւատացեալ Տեառն ,
 մտեալ ի տուն իմ ապերուք . եւ բնաւ

զատեաց տարաւ զմեզ :
 16 Եւ եղև մինչ երթալաք մեք յա-
 զօթս , պատահեաց մեզ աղախին ոմն
 զոր ունէր այս հարցուկ . որ շաճս բա-
 զուան տայր տերանոց իւրոց մոլեղումն :
 17 Եւ զհեա եկեալ Պաւղոսի եւ մեր՝ ա-
 զաղակէր եւ ասէր , Արքս այս ծառայր
 Աստուծոյ Բարձրելոյ են , որ պատմեն
 18 ձեզ զճանապարհս յիբուեթեան : Եւ
 զայս ասնէր ի բաղուեմ աւուրս . զայ-
 բացեալ Պաւղոս՝ դարձաւ եւ ասէ
 ցայսն , Պատուիրեմ քեզ յանունն Յի-
 սուսի Քրիստոսի ելանել ի զմանէ .
 19 եւ ել ի նմին ժամուս : Իրրեւ տեսին
 տեարք նորա եթէ հատաւ յոյս շահի
 նոցա , առեալ զՊաւղոս եւ զՇիղա՝
 ձգեցին ի հրապարակ առ իշխանսն :
 20 Եւ ամեալ զնոսս առ զօրապետիսն
 ասին , Արքս այս խոռվեցուցանին զքա-
 21 ղաքս մեր . ինքեանք Հրեայք են , եւ
 պատմեն մեզ օրէսս զոր չէ արժան
 մեզ բնդունել եւ ոչ աննել , զի Հոռվ-
 22 մացեցիք եմք : Եւ կուտեցաւ ամրոխն
 ի վերայ նոցա . եւ զօրապետիքն պա-
 տուեցին զհանդերձս Կլեբանոց , հրա-
 23 մացեցին զան հարկանել . Եւ բաղուեմ
 վէրս եկեալ ի վերայ նոցա՝ արկին ի
 բանս , պատուիրեցին բանտապետին
 24 զգուշութեամբ պահել զնոսս : Որոյ
 առեալ զայսպիսի պատուէր՝ արկ գնո-
 սա ի ներքին բանան , եւ զոսս նոցա
 սնդեաց ի կոճեղ :
 25 Եւ ի մէջ զիշերոցն Պաւղոս եւ Շի-
 ղա կային յաղօթս եւ օրհնէին զԱս-
 տուած . ունին գնէին նոցա կալանա-
 26 ռորքն : Եւ եղև յանկարծակի շարժ-
 ւումն մեծ մինչև եւ յարժեշիմանոց բան-
 տին , եւ բազան անգէն զրուհքն ամե-
 նայն , եւ ամենեցուն կապանք լուծանս
 27 Իրրեւ զարթեաւ բանտապետն եւ եւ-
 տես բացեալ զգուրս բանտին , ձրեաց
 զսուսեր եւ կամէր երթալ զիւրօվին ,
 28 կարծէր փախուցեալ զկապեալսն : Եւ
 կոչեաց ի ձայն մեծ Պաւղոս եւ ասէ ,
 Մի՛ ինչ դործեր ընդ անձն իր չար ,
 29 քանզի ամենեքին աստ եմք : Ինդրեաց
 լոյս եւ գիմեաց ի ներքս , եւ զահի
 հարեալ անկաւ առաջի Պաւղոսի եւ
 30 Շիղայի . Եւ ամեալ զնոսս արտաքս
 ասէ , Տեարք , զի՛նչ պարտ է ինձ առ-

31 նել զի ապրեցայց : Եւ նորա առնն ,
 Հաւատա ի Տէր Յիսուս Քրիստոս , եւ
 ապրեցիս զու եւ ամենայն տուն քո :
 32 Եւ խօսեցան նմա զբանն Տեառն՝ եւ
 33 ամենեցուն օր էին ի տան նորա : Եւ
 առեալ զնոսա ի նմին ժամու զիշե-
 րոյն՝ լուայ ի վիրաց անտի , եւ մկրտե-
 ցաւ ինքն եւ իւրքն ամենեքեան ան-
 34 զէն վաղվազակի : Եւ ածեալ զնոսա
 ի տուն իւր՝ հզ առաջի նոցա սեզան ,
 եւ ուրախ եղեւ ամենայն տամբն հա-
 35 ւատացեալ յԱստուած , Եւ իբրեւ այգ
 հղեւ , առաքելին զօրագլուխքն զնուի-
 րակսն եւ սանն , Արձակեա զարսզ
 36 զայդոսիկ : Եւ պատմեաց բանտապանն
 զբանն՝ Պաւղոսի , եթէ Առաքելցին
 զօրագլուխքն զի արձակիցիք . արդ ե-
 37 լէք եւ երթաք խաղաղութեամբ : Իսկ
 Պաւղոս ասէ ցնոսա , Գան հարեալ
 զմեզ հրապարակաւ , արս անմեղս
 Հոտովայեցիս , արկին ի բանտ , եւ արդ
 լռելեալն հանն զմեզ . ոչ այդպէս ,
 այլ եկեցան ինքեանք իսկ հանցին
 38 զմեզ : Եւ պատմեցին զօրալլխացն
 նուիրակքն զբանն . զահի հարան իր-
 րեւ լուան թէ Հոտովայեցիք են , եւ
 39 եկեալ աղաչեցին զնոսա : Եւ իբրեւ
 հանին , աղաչէին զնալ ի քաղաքէն :
 40 Եւ երեալ ի բանտէն մտին առ Լիդիա ,
 եւ տեսեալ զեղբարս՝ մխթարեցին
 զնոսա եւ զնացին :

ԳԼ ԺԷ

1 Եւ չրջեալ ընդ Ամիլիպոլիս եւ
 ընդ Ապոզոնիս եկին ի Թեսաղոնիկէ ,
 2 ուր էր ժողովուրդ Հրէիցն : Եւ ըստ
 սովորութեանն Պաւղոս եմուտ առ
 նոսա , եւ ի շաբաթս երիս խօսեցաւ
 3 ընդ նոսա ի զրոց : Բանայր եւ զնէր
 առաջի եթէ պարտ էր Քրիստոսի չար-
 չարել եւ յառնել ի մեռեոց , եւ թէ
 Նա է՝ Քրիստոսն՝ Յիսուս զոր ես պատ-
 4 մեմ ձեզ : Եւ ոմանք ի նոցանէ հաւա-
 նեցան , եւ վիճակեցան Պաւղոսի եւ
 Շիդայի , բայց պաշտօնէիցն հեթանո-
 սաց էր բազմութիւն յոյժ , եւ ի կա-
 5 նանց զյիսուսոց ոչ սակաւք : Եւ նա-
 խանձեցան ² Հրեայքն , եւ առեալ արս

ոմանս գոհիկս անօրէնս , ամբոս ա-
 րարեալ խառվեցին զքաղաքն . եւ կու-
 տեալ յապարանն Յասովելի , խնդրէին
 6 զնոսա ածել ի հրապարակ : Եւ իբրեւ
 ոչ գտին զնոսա , քարշէին զՅասովել եւ
 զոմանս եղբարս առ քաղաքապետն ,
 բողոք բարձեալ թէ Որք գաշխարհս
 7 խառվեցին՝ սոքա եւ այսր հասին . Զորս
 բնկալեալ է Յասովելի . եւ սոքա ամե-
 նեքեան հակառակ հրամանացն Կայսեր
 գործեն , թաղաւոր զոմն ասեն զՅի-
 8 սուս : Եւ խառվեցուցին զժողովուրդսն
 եւ զքաղաքապետն օր լսէին զայս :
 9 Եւ առեալ երաշխաւորութիւն առ ի
 Յասովելայ եւ յայրոցն՝ արձակեցին զնո-
 10 սա : Բայց եղբարք վաղվազակի գիշե-
 րայն յուզարկեցին զՊաւղոս եւ զՇիդա
 ի Բերիա . որք իբրեւ հասին անդր ,
 11 ի ժողովուրդն Հրէից գնացին : Զի սո-
 քա էին աղնուազոյնք քան որ ի Թե-
 սաղոնիկն էին . որք բնկալան զբանն
 ամենայն յօժարութեամբ , հանապազ
 քննէին Գիորս եթէ իցէ այս այսպէս :
 12 Եւ թաղումք ի նոցանէ հաւատացին
 եւ ի Յունաց կանանց զդաստից եւ յա-
 13 րանց ոչ սակաւք : Բայց իբրեւ գիտա-
 ցին որ ի Թեսաղոնիկէ Հրեայքն էին
 եթէ եւ ի Բերիա պատմեցաւ ի Պաւ-
 զոսէ բանն Աստուծոյ , եկին եւ անդր
 շարժել եւ խառվեցուցանել զժողո-
 14 վուրդսն : Յայնժամ զՊաւղոս վաղվա-
 զակի առաքելցին եղբարք զնալ մինչեւ
 ի ծովեզր . եւ մնացին Շիդա եւ Տիմո-
 15 թէոս անդէն : Եւ որք տանէին զՊաւ-
 զոս՝ ածին զնա մինչեւ յԱթէնս . եւ
 առեալ պատուէր առ Շիդա եւ Տիմո-
 թէոս զի վաղվազակի եկեցան առ նա ,
 եւ զնացին :
 16 Ե՛՛՛՛ Եւ յԱթէնս ի մնալն նոցա Պաւ-
 զոսի՝ զայրանայր հողի նորա ի նմա ,
 զի տեսանէր ի կուսպաշտութեան զքա-
 17 ղաքն : Եւ խօսէր ի ժողովրդեանն ընդ
 Հրեայս եւ ընդ պաշտօնեայսն , եւ ի
 հրապարակսն զամենայն օր որոց եւ
 18 պատահէին : Ոմանք յԵպիկուրեանցն
 եւ ի Ստոյիկեանց փիլիսոփայից հակա-
 ոակէին ընդ նմա . եւ ոմանք ասէին ,
 Զինչ կամիցի սերմանաքաղս այս խօ-
 սել . իսկ այլք՝ թէ Օտարոտի իմն զից
 թուի պատմիչ լինելոյ . քանզի զՅի-
 սուս եւ զյարութիւնն աւետարանէր :
 19 Եւ առեալ զնա ածին յԱրիսպագոսն ,

¹ Ի Բուզան գաւառի
² Որք, անհաւան Հրեայքն

19 եւ ասէին, Կարացոց՝ ք իմանալ թէ
 20 զի՛նչ է նոր վարդապետութիւնոց որ
 բերես ի յսելիս մեր, կամ իմք զիտել
 21 թէ զի՛նչ կամիցի այս լինել, (Ձի Ա-
 թենացիք ամենեւին եւ եկքն օտարք
 ոչ յայլ ինչ պարապէին, յայց ասել
 22 ինչ կամ լսել նորագոյնս) Եկաց Պաւ-
 զոս ի մէջ Արիսպաղին եւ ասէ, Արք
 Աթենացիք, ըստ ամենայնի իբրեւ
 23 պաշտօնասէրս տեսանեմ զձեզ, Քանզի
 չըջեալ եւ տեսեալ զպաշտամունս ձեր,
 դո՛ս բաղին մի յորում գրեալ էր Ան-
 ծանօթի Աստուծոյ. դոր դուքն յան-
 ծանօթս պաշտէք՝ ես զնոյն պատմեմ
 24 ձեզ, Աստուած որ արար զաշխարհս
 եւ զամենայն որ ի նմա, նա երկնից
 եւ երկրի է Տէր. ոչ ի ձեռագործ տա-
 25 ճարս բնակէ, Եւ ոչ ի ձեռաց մարդ-
 կան պաշտի իբրեւ կարօտ իմիք. նա
 տայ ամենայնի կեանս եւ չունչ եւ
 26 զամենայն ինչ, Արար ի միօնջէ արեւնէ
 զամենայն տղոս մարդկան՝ բնակել ի
 վերայ ամենայն երեսաց երկրի, հաս-
 տատեաց կարդեալ ժամանակս եւ սահ-
 մանադրութիւնս բնակութեան նոցա՝
 27 խնդրել զԱստուած. Ձի թիբեւս զննի-
 ջեն զնա եւ դատնիցեն. նա՛ եւ ոչ
 հեռի իսկ է յիրաքանչիւր ումեքէ ի
 28 մէնջ, Ձի նոյաւ կեանք եւ շարժիմք
 եւ եմք, որպէս եւ ոմանք ի ձերոց
 ճարտարաց ասացին, թէ նորս եւ աղգ
 29 իսկ եմք, Եւ արգ՝ որովհետեւ աղգ
 եմք Աստուծոյ, ոչ պարտիմք համա-
 րել ոսկւոյ կամ արծաթոյ կամ քարի
 որ ի ճարտարութենէ եւ ի մտաց մար-
 ցոյ քանդակեալ իցէ, զԱստուածա-
 30 կանն լինել նմանող, Բայց զժամա-
 նակս անպիտութեանն անտես արար-
 եալ Աստուծոյ, արգ զայս պատուիրէ
 1 մարդկան՝ ամենայն ումեք՝ ապաշ-
 31 խարել, Քանզի հաստատեաց օր յո-
 րում պարտ է դատել զաշխարհս ար-
 զարութեամբ ի ձեռն աննն որով սահ-
 մանեաց տալ հաւատս ամենեցուն՝ յա-
 րուցեալ զնա ի մեռելոց,
 32 Իբրեւ լուան զյարութիւն մեռելոց,
 ոմանք ծաղր առնէին, կէսքն ասէին,
 Լուիցուք ի քէն վասն այդորիկ մեւս
 33 անդամ, Եւ ապա Պաւղոս ել զնաց

34 ի միջոյ նոցա : Եւ ոմանք արք ան-
 կեայք ի նա՝ հաւատացին, ընդ որս էր
 եւ Դիոնեսիոս Արիսպաղացի եւ կին մի
 անուն Դամարիս եւ այլք ընդ նոսս :

ԳԼ ԺԸ

1 ԵՊ. Յետ այսորիկ մեկնեալ Պաւղոսի
 յԱթենացւոց անտի՝ եկն ի Կորնթոս .
 2 Եւ եզրտ զումն Պոնտացի, անուն Ակիւ-
 զաս, յաղէ Պոնտացի, այն ինչ եկեալ
 յիտալիայ, եւ զՊրիսկիդա կին նորա,
 վասն հրամանին Կղաւղեայ՝ որոջել
 զամենայն Հրեայս ի Հռովմայ, եւ յա-
 3 բեցաւ ի նոսս : Եւ վասն զի համա-
 րուեստ էր, եզեւ առ նոսս եւ գործէր,
 քանզի էին խորանակարք արուեստիւ :
 4 Եւ խօսէր ի ժողովրդեանն ըստ ամե-
 նայն շարաթիւց, եւ հաւանեցուցանէր
 5 զՀրեայս եւ զհեթմանոսս, Իբրեւ իջին
 ի Մակեդոնիայ Շիգա եւ Տիմոթէոս,
 ստիպէր հոգւոյն Պաւղոս զնել վկայու-
 թիւն Հրէիցն թէ Յիսուս է Քրիստոսն :
 6 Եւ յընդդէմ զանալ նոցա եւ ի հայհո-
 յել, թօթափեաց զձորձս եւ ասէ ցնո-
 սա, Արիւն ձեր ի գլուխ ձեր, քաւեալ
 եմ ես, յայսմ հետէ ի հեթմանոսս եր-
 7 թամ : Եւ զնացեալ անտի՝ եմուտ ի
 տուն ուրումն, որոյ անուն էր 2 Տի-
 տոս Յուստոս, պաշտօնեայ Աստուծոյ .
 որոյ ապարանքն էին մերձ ի ժողո-
 8 վեոզն : Կրիստոս ժողովրդապետ հա-
 ւատաց ի Տէր ամենայն տամբ իւրով .
 եւ բազմաց ի Կորնթացւոցն լուեալ
 9 հաւատացին եւ մկրտեցան, Եւ ասէ
 Տէր ի զիշերթ տեսեամբ յՊաւղոս,
 Մի՛ երկնչիր, այլ խօսեաց եւ մի՛ լսեր,
 10 Քանզի ես ընդ քեզ եմ, եւ ոչ ոք ընդ-
 դէմ դարձցի քո՝ ի շարչարել զքեզ .
 քանզի ժողովուրդ է իմ բազում ի քա-
 11 ղաքիս յայսմիկ : Եւ նստաւ անդ տարի
 մի եւ ամիսս վեց՝ ուսուցանել նոցա
 զքանն Աստուծոյ :
 12 ԵՊ. Առ Գաղիովնաւ փոխանակաւ
 բղեչխին Աքայեւոց յարեան միաբան
 Հրեայքն ի վերայ Պաւղոսի, եւ ամին
 13 զնա յատեան. Եւ ասէին եթէ Արտա-
 քոյ օրինաց սլատրէ սա զմարդիկ՝ պաշ-
 14 տել զԱստուած : Եւ իբրեւ մերձ էր
 Պաւղոս բանալ զբերան իւր, ասէ

19-22, ամենայն մարդկան ամենայն ուրեք

28-ման պատիւ

Գաղիովն ցՀրեայն, եթէ էր ինչ ա-
 նիրաւութիւն կամ խարդախութիւն
 չարեաց, ով Հրեայք, ի դէպ էր ինձ
 15 անսալ ձեզ: Ապա եթէ լնդիրք ինչ
 են վասն բանի եւ անուանց եւ օրի-
 նաց ձերոց՝ տեսէք ձեզէն, քանզի դա-
 տաւ որ այգոյիս իրաց չկամիմ լինել:
 16 Եւ մերժեաց զնոսա յատենէ անտի:
 17 Եւ ատեալ ամենեցուն Յուսայն զՍու-
 թենէս ժողովրդապետն՝ հարկանէին
 առաջի ատենին, եւ ոչինչ զայնմանէ
 Գաղիովնի փոյթ լինէր:
 18 Բայց Պաւղոսի սակաւին մնացեալ
 աւուրս բազումս, յեղբարց հրաժար-
 եալ՝ նաւէր յԱսորիս, եւ ընդ նմա
 Պրիսկիղոս եւ Ակիլեզաս, փոքրիկ զղը-
 լուի ի Կենքրաս, քանզի ուխտազիր
 19 էր: Եւ հասան յԵփեսոս՝ զնոսա եթող
 անց, եւ ինքն մտեալ ի ժողովուրդն
 20 խօսէր ընդ Հրեայնս: Եւ ազաչեցին
 զնա բազում ժամանակս լինել անց,
 21 եւ ոչ առ յանձն: Այլ հրաժարեաց ի
 նոցանէ եւ ասէ, ¹Գարձեալ չըջեցայց
 22 Աստուծոյ կամօքն առ ձեզ: Ամբար-
 ձաւ յԵփեսոսոց, եւ իջեալ ի Կեսարիա՝
 եւ ետ ուղջոյն եկեղեցւոյն, էջ յՄն-
 23 փոքր: Եւ եղեալ անց ժամանակ ինչ՝
 ել չըջել կարգաւ ընդ Գաղատացոց
 աշխարհն եւ ընդ Փոսիւղիս, հաստա-
 տել զամենայն աշակերտեալսն:
 24 Հրեայ ոմն ²Ապղեզէս անուն Աղեր-
 սանդրացի յաղղէ, այր ճարտարարան,
 եկն հնաս յԵփեսոս, զօրաւոր էր
 25 գրովք: Սա էր տեղեկացեալ ճանա-
 պարհին Տեառն, եւ ետայր հոգւով,
 խօսէր եւ ուսուցանէր ճշմարտու-
 թեամբ վասն ³Յիսուսի: զիտէր մի-
 26 այն զմկրտութիւնն Յովհաննու: Սա
 սկսաւ համարձակել ի ժողովրդեանն.
 եւ լուեալ ի նմանէ Ակիլեզայ եւ Պրիս-
 կիղայ՝ առին զնա առ իւրեանս, եւ
 ճշմարտագոյնս սրատմեցին նմա զճա-
 27 նապարհն Աստուծոյ: Երբեւ կամեցաւ
 նա գնալ յԱքայիս, ⁴յօժարեալ եղ-
 բարց՝ զրեցին առ աշակերտան ընդու-
 անց գնա. որ իրբեւ եճաս անցր, բա-
 զում նպատտ լինէր հաւատացելոցն

28 ի ձեռն չնորհացն: Քանզի պնդագոյն
 զՀրեայնս յանդիմանէր հրապարակաւ
 ցուցանել գրովք՝ եթէ Բրիստոսն է
 Յիսուս:

ԳԼ ԺԹ

1 ԵՆ. Եւ եղև մինչդեռ Ապողոսն ի
 Կորնթոս էր, Պաւղոսի չըջեալ զվերին
 կողմամբքն եւ իջանել յԵփեսոս, եւ
 2 դռանել դռմանս գաշակերտս, Ասէ
 ցնոսա, եթէ Հոգի Սուրբ ընկալարո՞ւք
 ի հաւատաւն: Նոքա ասեն ցնա, Այլ
 եւ ոչ թէ Հոգի Սուրբ դուցէ՞ լուեալ
 3 է մեր: Եւ ասէ, Լսի յի՞նչ մկրտու-
 ցարօք: Նոքա ասեն, ի Յովհաննու
 4 մկրտութիւնն: Եւ ասէ Պաւղոս, Յով-
 հաննէս մկրտեաց մկրտութիւն ապաշ-
 խարութեան ⁵Վանայն ժողովրդեանն
 եւ ասէր՝ զի որ զալոցն է յետ նորա՝
 ի նա հաւատասցեն, այսինքն է ի Յի-
 5 սուս Բրիստոս: Եւ իրբեւ լուան,
 մկրտեցան յանուն Տեառն Յիսուսի:
 6 Եւ ի գնել ի վերայ նոցա Պաւղոսի
 զձեռն՝ եկն Հոգին Սուրբ ի վերայ նո-
 ցա, խօսէին յեղուս եւ մարդաբէա-
 7 նային: Եւ էին ամենեքեան արք իը-
 8 բեւ երկուսասան: Եւ մտեալ ի ժողո-
 վուրդն՝ համարձակէր ամիսս երկս,
 խօսէր եւ հաւանեցուցանէր վասն ար-
 9 քայութեանն Աստուծոյ: Իրբեւ ու-
 մանք խտանային եւ ընդդէմ դառ-
 նային թամբասել զճանապարհն առաջի
 թաղմութեանն, մեկնեալ ի նոցանէ՝ ու-
 թոչեաց գաշակերտան, հանապազօր խօ-
 սէր ի զլուանին Տիւրանեայ ուրումն:
 10 Եւ այս եղև զերկեամ մի, մինչեւ
 ամենայն ընակչայն Ասիացոց լսել
 զբանն Տեառն, Հրէից եւ հեթանոսաց:
 11 Եւ զօրութիւնս ոչ սակաւս առնէր Աս-
 12 տուած ի ձեռն Պաւղոսի: Մինչեւ ի
 հիւանդս տանել ⁶ի քրտանէ նորա
 թաշկինակս կամ վարչամակս, եւ մեր-
 ժել ի նոցանէ ամառցն, եւ այսոց չա-
 13 րաց երանել: Յանդգնեցան ոմանք եւ
 ի չըջալ Հրէիցն, որ երզմնեցուցիչքն
 էին, անուանել ի վերայ այնացիկ որք
 ունէին այսս չարս՝ զանուն Տեառն
 Յիսուսի, եւ ասէին, Երզմնեցուցանեմ

¹Ունէ, Պարտ է ինձ ապաքէն զառաջիկայ
 տօնն կատարել յԵրուսաղէմ, բայց գարձեալ
²Բաւլոս, Ապողոս
³Ունէ, Տեառն
⁴Յունէ, քաջալերեցին եղբարքն

⁵Յունէ, և ասէր ժողովրդեանն
⁶Յունէ, ի մարմնոյ

զձեզ ի Յիսուս գոր Պաւղոսն քարոզէ :
 14 Էին ուրումն Ակեւեայ Հրէի քահա-
 նայապետի եւթն որդի , որ զայս առ-
 15 նէին : Պատասխանի ետ այսն չար եւ
 առէ ցնտս , ՉՅիսուս գիտեմ եւ զՊաւ-
 16 զս ճանաչեմ , բայց գուք ո՞վ էք : Եւ
 վաղեայ այրն յորում էր այսն չար
 բորնեալ Կերկոսեան յաղթանարեաց
 գնտս , մինչեւ մերիս եւ վերաւորս
 17 փախչել ի տանէ անտի : Եւ այս յայսնի
 եղև ամենայն Հրէից եւ հեթանոսաց
 որ բնակեալ էին յԵփեսոս . եւ անկաւ
 երկեւզ յամենեսեան ի նոսա , եւ մե-
 18 ծանայր անուռն Տեառն Յիսուսի : Եւ
 բազումք ի հաւատացելոցն զային , եւ
 խոստովան լինէին եւ պատմէին զգործս
 19 իւրեանց : Եւ բազումք ի կախարդա-
 սարայն բերէին զիրոսն , այրէին սոսա-
 ջի ամենեցուն . եւ համարեցան զղինս
 նոցա եւ զտանէին արծաթոյ բերս
 հինգ :
 20 Ե՞՞ք . Եւ այսպէս բանն Աստուծոյ ա-
 ճէր եւ դորանայր :
 21 Եւ իրբեւ կատարեցաւ այս , եւ Պաւ-
 զոս ի մտի շրջել ընդ Մակեդոնիա եւ
 ընդ Աքայիա եւ զայ յերուսաղէմ . ա-
 սէր եթէ Յեռ երթալոյն իմ անդր՝
 22 պարտ է ինձ եւ զՀոովմ տեսանել : Ա-
 ոաքեաց ի Մակեդոնիա երկուս ի պաշ-
 տունէիցն իւրոց , զՏիմոթէոս եւ զԵ-
 րաստոս , եւ ինքն մնաց ժամանակս
 ինչ յԱսիա :
 23 Եւ եղև ի ժամանակին յայնմիկ խոռ-
 վութիւն ոչ սակաւ վասն ճանապար-
 24 հին : Իսկ Դեմետրիոս ոմն անուռն ար-
 ծաթագործ գործէր մեհեանս արծաթիս
 Արտեմիս զից , եւ ապր ճարտարացն
 25 լինել ոչ սակաւ շահ . Որ ժողովեաց
 իսկ եւ զձեռագէտս արուեստին եւ
 առէ , Արք , գուք ձեզէն իսկ գիտէք ,
 26 զի յայսմ գործոյ է շահ մեղ : Եւ տե-
 սանէք եւ լսէք եթէ ոչ միայն զԵփե-
 սացոոց , այլ զբոթէ զամենայն իսկ Ա-
 սիացոոց , Պաւղոսս այս հաւանեցու-
 ցեալ շրջեաց բազում ժողովս ասել թէ
 27 Ոչ են աստուածք ձեռագործք : Եւ ոչ
 միայն այս ճոյնէ զմեր կողմս զայ ի
 յանդիմանութիւն , այլ եւ զմեծին աս-
 տուածոյ Արտեմեայ զմեհեանն յոչինչ
 համարել . նա եւ քակելոց եւս իցէ

մեծութիւն նորա , զոր ամենայն Ասիա
 28 եւ Եփեսոս պաշտեն : Եւ զայս իրբեւ
 լուան , լի եղևն բարկութեամբ . սղա-
 զակէին եւ առէին , Մեծ է Արտեմիս
 29 Եփեսացոոց : Եւ լցաւ քաղաքն խոռ-
 վութեամբ , զիմեցին առ հասարակ ի
 թէաորոնն , յափշտակեցին զԳայիոս
 եւ զԱրիստարքոս Մակեդոնացի , զու-
 30 զեկիցոն Պաւղոսի : Բայց Պաւղոս իր-
 բեւ կամեցաւ մտանել յամբոխն , ոչ
 31 թողին զնա աշակերտքն : Ոմանք եւ
 յԱսիապետացն որ էին նորա բարե-
 կամք՝ յղէին առ նա եւ ազաչէին , մի՛
 32 տալ զանձն ի թէաորոնն : Այլք այլ
 ինն ազաղակէին , զի էր ժողովն նոցա
 խոռվեալ . եւ բազումք ի նոցանէ ոչ
 33 գիտէին թէ վասն ոյր ժողովեալ իցեն :
 Եւ յամբոխն բազմութենէ յառաջ կա-
 լան զԱղեքսանդրոս . եւ իրբեւ ամին
 զնա յառաջ Հրեայքն , Աղեքսանդրոս
 շարժեաց զձեռն եւ կամէր սպասաւ-
 34 խանի աննել ամբոխին : Իրբեւ գիտա-
 ցին թէ այրն Հրեայ է , միապարտա
 եղեալ յամենեցունց իրբեւ ժամս եր-
 կուս ազաղակել թէ Մեծ է Արտեմիս
 35 Եփեսացոոց : Լուեցոյց զպրապետն զամ-
 բոխն եւ առէ , Արք Եփեսացիք , իսկ
 ո՞վ է ի մարզկանէ որ ոչ գիտէ զԵփե-
 սացոոց քաղաքս մեհեանագարդ մեծին
 36 Արտեմեայ զիցն եւ Դիոպեաեայ : Եւ
 զի այդ այգպէս է անշուշտ , ձեզ պարտ
 է հանդարտել եւ մի՛ ինչ յանդգնու-
 37 թեամբ գործել : Ա՞՞՞ք վարսզ զայտո-
 սիկ այսր , ոչ մեհեանկապուսա եւ ոչ
 38 հայհոյիչս աստուածոյն մերոյ : Չի եթէ
 Դեմետրիոս եւ որք ընդ նմա ճարտարք
 ունիցին ինչ ընդ ումեք բանս , յատ-
 39 եւ ամբաստան լիցին զվիմեանց : Ապա
 եթէ վասն այլ իրիք ինդիր իցէ , յո-
 40 ըրնաւոր ժողովն վճարեցի : Գանդի
 եւ մեզ վիշտ փասնգի է ընդ կուուոցս
 այսր աւուր՝ առանց իրիք յանդանաց
 լինելոյ , զորմէ ոչ կտրասցուք սպ-
 տասխանի տալ վասն ժողովոյս այսո-
 րիկ : Եւ զայս ասացեալ՝ արձակեաց
 զժողովսն :

ԳԼ Ի

1 Ե՛՛՛՛ Եւ յետ դադարելոյ ամբոխին՝
 40

1 Ո՛՛՛՛՛, զնոսս

կոչեաց Պաւղոս զաշակերտան , ¹եւ մխիթարեաց . ոգջոյն ետ եւ ել զնաց
 2 ի Մակեդոնիա : Եւ շրջեալ ընդ կողմանսն ընդ այնոսիկ , եւ մխիթարեալ զնոսա բանիւք բազմօք՝ եկն յԵլլադա :
 3 Իբրեւ արար անդ ամիսս երիս , եղև նմա դաւ ի Հրէիցն , մինչդեռ կամէր ելանել յԱսորիս . խորհուրդ կայաւ
 4 դառնալ ընդ Մակեդոնիա : Եւ երթալոյ ընդ նմա մինչեւ յԱսիա Սոսիպատրոս Պիւռեայ Բերիացի , եւ ի Թեսաղոնիկեցւոց Արիստարքոս եւ Սեկունդոս , եւ Գայիոս Դերբացի եւ Տրիոթէոս , եւ Ասիացիք՝ Տրիքիկոս եւ Տրոփիմոս :
 5 Սորա յառաջ երթեալ մնային մեզ ի 6 Տրովադա : Եւ մեք նաւեցաք յետ աւուրցն բաղարջակերաց ի Փիլիպպեայ , եւ եկաք առ նոսա ի Տրովադա՝ մինչեւ յաւուրս հինգ . անդ դաղարեցաք աւուրս եւթն :
 7 Եւ յաւուրն շաբաթուց՝ մինչդեռ ժողովեալ էաք բեկանել զհացն , Պաւղոս խօսեր ընդ նոսա զի զնայոց էր ի վաղիւ անոյր . եւ երկայնեաց զբանն
 8 մինչեւ ի մէջ զիչերոյն : Էին լապտերք բաղումք ի վերնատանն ուր էաք ժողովեալ : Եւ նստէր ոմն երիտասարդ անուն Եւտիքոս ի վերայ պատուհանին , նիրհէր ի քուն թանձրութեան . ի խօսեցն Պաւղոսի յաճախ , ընկզմեալ ի քնոյ անտի՝ անկաւ յերրորդ դստիկոնէն ի վայր , եւ բարձաւ մտեալ :
 10 Եւ իջեալ Պաւղոսի անկանէր զնովաւ , առնոյր զնա ընդ զիրկս եւ ասէր . Մի՛ խռովիք , քանզի հոգի սորա ի սմին է :
 11 Եւ ել երեկ զհացն եւ ճաշակեաց . եւ բաղում եւս խօսեցաւ մինչեւ յառաւուսն , եւ ասլաւ ել զնաց : Եւ ածին զպատանին կենդանի , եւ մխիթարեւ
 13 ցան ոչ սակաւ : Եւ մեք մտեալ ի նաւն՝ ամբարձաք յԱսոսն , անտի ակն ունէաք միւսանոցամ առնուլ զՊաւղոս , զի այնպէս պատուիրեալ էր , մինչ ինքն
 14 զցամաքան երթալոց էր : Եւ իբրեւ զիպեցաւ մեզ ի յԱսոսն , առեալ զնա
 15 եկաք ի Միտիլինէ : Եւ անտի նաւեալ ի վաղիւ անդր հասաք հանդէպ Քիայ , եւ ի մեւս օրն հասաք ի Սամոս , եւ

46 ²ի վաղիւ անդր եկաք ի Միլետոն : Զի ի մտի եղեալ էր Պաւղոսի նաւել առ Եփեսոսաւ , որպէս զի մի՛ լիցի նմա ժամանակ ինչ յամել յԱսիա . քանզի փուլթայր , եթէ հնար ինչ իցէ նմա , զօրն Պենտակոստէից երթալ յերուսաղէմ :
 47 ԶԱ . Եւ ի Միլետայ յլեալ յԵփեսոս՝
 48 կոչեաց զերիցունս եկեղեցւոյն : Եւ իբրեւ եկին առ նա , ասէ ցնոսա , Դուք ձեզէն զիտէք յօրէ յառաջմէ յորմէ եկի յԱսիա , որպէս ընդ ձեզ զամենայն
 49 ժամանակսն եղէ . Ծառայել Տեառն ամենայն խնտարութեամբ , եւ բազում արասուօք եւ փորձութեամբք որ զիպիցան ինձ ի նենգութեանց Հրէ-
 20 ից : Որպէս ոչինչ զանգիտեցի յօգտակարացն չպատմել ձեզ եւ ուսուցանել
 21 զձեզ հրապարակաւ եւ առանին . Տալ վկայութիւն Հրէից եւ հեթանոսաց զապաշխարութեանն որ առ Աստուած , եւ գհաւատոցն որ ի Տէր մեր Յիսուս
 22 Քրիստոս : Եւ արդ անաւասիկ ես կապեալ հոգով երթամ յերուսաղէմ , եւ որ ինչ անդ ընդ իս անցանելոց իցէ՛ չգիտեմ : Իայց զի Հոգին Սուրբ ըստ քաղաքաց քաղաքաց վկայէ ինձ , եւ ասէ եթէ կապանք եւ նեղութիւնք մնան
 23 քեզ , Այլ՝ եւ ոչ՝ իւրք համարիմ զանձն իմ պատուական որպէս զկատարել զընթացս իմ ուրախութեամբ , եւ զպաշտօնս զոր առի ի Տեառնէ Յիսուսէ՝ վկայ լինել աւետարանի շնորհացն Աստուծոյ : Եւ արդ անաւասիկ զիտեմ ես , թէ ոչ եւս տեսանելոց էք զերեսս իմ զուրք ամենեքեան յորս շրջեցայ քարոզել զարքայութիւնն Աստուծոյ :
 26 Վասն որոյ վկայութիւն զնեմ ձեզ յաւուր յայմիկ զի սուրբ եմ յարինէ ա-
 27 մենեցուն : Քանզի ոչ խորշեցայ ի չպատմելոյ ձեզ զամենայն կամս Աստուծոյ : Զյորշ կացէք անձանց եւ ամենայն հօտիք , յորում եզ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ
 6 Տեառն , զոր ապրեցոյց արեամբ իւրով , Քանզի զիտեմ ես եթէ յետ իմոյ մեկնելոյ դայցեն դայք յափշտակողք
 29 ի ձեզ , որ ոչ խնայեսցեն հօտին : Եւ ի ձէնջ յարիցին արք որք խօսիցին

¹Գաւան գաւառ
²Գալլի , ի միաշարաթուօջն
³Կամ , հետի

⁴Ուսու , Թնացեալ ի Տրոպիլիոնի վաղիւ
⁵Ուսու , ոչ ինչ փոյթ է ինձ , ե ոչ
⁶Ուսու , Աստուծոյ
⁷Գալլի , ստացաւ

Թեւ ըստ՝ ձգել զաշակերտսն զկնի իւր-
 31 Կանց, Վասն այսորիկ արթուն կացէք
 եւ յիշեցէք զի՝ զգերեամ մի զցայց եւ
 զցերեկ ոչ դադարեցի արտասուօք
 32 Խրատել զմի մի իւրաքանչիւր, Եւ
 արդ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ եւ
 բանի շնորհաց նորա, որ կարողն է
 շինել եւ տալ ձեզ ժառանգութիւն ընդ
 33 սուրբսն ամենեւեան, Արծաթոյ կամ
 ոսկւոյ կամ հանդերձից ոչ ուրուք ի
 34 ձէնջ ցանկացայ, Դուք ինքնին գիտէք
 զի զպէտսն իմ եւ որոց ընդ իսն էին՝
 35 պաշտէին ձեռքս այս, Եւ զամենայն
 ինչ ցուցի ձեզ, զի այսպէս պարտ է
 վաստակել եւ դարմանել զհիւանդս,
 եւ յիշել զբանն Տեառն Յիսուսի, զոր
 ինքն իսկ ասաց, Երանելի է մահաւանդ
 36 տալն քան անունն, Եւ զայս իրրեւ
 ասաց, եղեալ ծուր ամենեքումք՝
 37 եկաց յաղօթս, Բազում լալիւն եղեւ
 ամենեցուն, եւ անկեալ զպարանոցաւն
 38 Պաւղոսի՝ համբուրէին զնա, Մարմո-
 քէին մահաւանդ ի վերայ բանին զոր
 ասէր թէ՛ ոչ եւս տեսանելոց են զիւ-
 րեան նորա, եւ յուղարկեցին զնա ի
 նաւ անդր:

ԳԼ. ԻԱ

1 ՋԲ. Եւ իրրեւ եղեւ ելանել մեզ եւ
 մեկնել ի նոցանէ, հանդէպ գնացեալ
 եկաք ի Կով, եւ ի վաղիւ անդր ի Հոռ-
 2 զոն եւ անտի ի Պատարա, Եւ գտեալ
 նաւ մի զի երթայր ի Փիւնիկէ, երեալ
 3 ի նա գնացաք, Եւ յայտ եղեալ կիպ-
 րեայ՝ թողաք զնա ի ձախակողմն, նա-
 ւեցաք յԱսորիս եւ իջաք ի Տիւրոս,
 քանզի անդ էր նաւն թափելոց զբե-
 4 ոխնսն, Եւ գտեալ զաշակերտսն՝ կա-
 ցաք անդ աւուրս եւթն, որք ասէին
 ց Պաւղոս ի ձեռն Հոգւոյն՝ մի՛ ելանել
 5 յերուսաղէմ, Եւ իրրեւ եղեւ մեզ կա-
 տարիկ զաւուրսն՝ ելեալ գնացաք, յու-
 զարկեալ զմեզ ամենեցուն հանդերձ
 կանամբք եւ որդուղք մինչեւ արտա-
 քոյ քաղաքին, եւ եղեալ ծուր առ
 6 ծովեզերին՝ կացաք յաղօթս, Եւ հրա-
 ժարեցաք ի միմեանց եւ կաք ի նաւն,
 եւ նոքա դարձան յիւրեանց տեղիս:

7 Եւ մեր գնաւն առիթեալ ի Տիւրոսէ՝
 հասաք ի Պատղեմայիդա, եւ ողջոյն
 տուեալ եղբարց եղեսք օր մի աւնու-
 8 սա, Եւ ի վաղիւ անդր ելեալ անտի՝
 եկաք ի Կեսարիա, եւ մտեալ յապա-
 րանսն Փիլիպպոսի աւետարանչի որ
 էր յեւթանց անտի, աղաք առ նմա,
 9 նորա էին դասերք չորք կոյսք՝ մար-
 10 գարէք, Եւ ի լինեցն մեր անդ աւուրս
 րազումս, էջ ոմն ի Հրէաստանէ մար-
 11 գարէ՝ անուն Ագարոս, Եւ եկեալ առ
 մեզ, առեալ զգօտին Պաւղոսի՝ կապ-
 12 Կաց զոտս եւ զձեռս իւր, եւ ասէ,
 Այսպէս ասէ Հոգին Սուրբ, Չայցն
 որոյ պօտիս այս է՝ այսպէս կապիսցեն
 յերուսաղէմ Հրեայք եւ մասնեացեն
 13 ի ձեռս հեթանոսաց, Եւ իրրեւ յուաք
 զայն, աղաչէք մեք եւ որ ի տեղուոյն
 14 էին՝ չելանել նմա յերուսաղէմ, Յայն-
 ժամ պատասխանի ետ Պաւղոս, Չինչ
 գործէք զի լայքդ եւ ճմլեցուցանէք
 զսիրտ իմ, քանզի ես ոչ միայն կա-
 պելոյ, այլ եւ մեռանելոյ յերուսաղէմ
 պատրաստ եմ վասն անուանն Տեառն
 14 Յիսուսի՝ Քրիստոսի, Եւ ի չանսայն
 նորա՝ լոնցաք, ասեմք, Տեառն կամք
 լիցին:
 15 ՋԳ. Եւ յետ աւուրցն այնոցիկ հան-
 16 դերձեալ ելանէաք յերուսաղէմ, Եկին
 ընդ մեզ եւ յաշակերտաց անտի Կեսա-
 րացւոց, եւ տանին զմեզ առ որում
 վանս ունեւորէք՝ Մնասովիս ումնն
 17 կիպրացւոց առաջին աշակերտի, Եւ
 ի մտանեցն մեր յերուսաղէմ, խնդու-
 18 թեամք ընկալան զմեզ եղբարք, Ի վա-
 զիւ անդր եմուտ Պաւղոսս ընդ մեզ
 առ Յակովբոս, եւ եկին ամենայն ե-
 19 ռիցուէքն, Եւ ողջոյն տուեալ նոցա՝
 պատմէր մի ըստ միսջէ՝ զոր արար Աս-
 տուած ի հեթանոսս ի ձեռն պաշտա-
 20 ման նորա, Եւ նոցա լուեալ փառա-
 ւոր աննէին զԱստուած, եւ ասեն ցնա,
 Տեսանես, եղբայր, քանի բերք են
 հաւատացելոցն Հրէից, եւ ամենեքեան
 21 նախանձաւոր օրինացն են, Բայց ի-
 րագեկ եղեն վասն քո թէ՛ ապստամ-
 բութիւն ուսուցանես ի Մովսիսէ որոց
 ի հեթանոսս ամենայն Հրեայք են,
 ասես, մի՛ թրխատի նոցա զորդիս,
 22 եւ մի՛ ըստ կրօնիցն գնալ, Արդ զինչ

1 Ունեւոր թիւն օրինակաց, որդեւ եւ փրոյ՝ զեր-
կեամբ

2 Յուսեւ գաւառի

3 ի Բազան գաւառի

լինիցի . Կապքէն լսեն՝ եթէ հկեալ
 23 եւ : Արդ զայս արա զոր ասեմք քեզ .
 24 ձինս իւրևանց . Չնոսա առեալ սրբեւ-
 ցիս ընդ նոսա . եւ ծախեա ինչ ի նոսա
 զի զերծցեն զգլուխս . եւ զիտասցեն
 ամենեքին թէ զորոց իրազեկն եղեն
 25 զքէն՝ ոչինչ է , այլ միաբանիս եւ զու
 25 սրահկ զօրէնսն : Բայց վասն հաւատա-
 ցելոցն հեթանոսաց՝ մեք ստաքեցաք
 որպէս ընտրեցաք , մի՛ ինչ այնպիսի
 պահել նոցա . բայց միայն զգուշանալ
 նոցա ի կոտոց զոհելոյ եւ յարենէ եւ ի
 26 հեզձուցելոյ եւ ի սրտնկութենէ : Յայն-
 ժամ Պաւղոսի առեալ զարսն՝ ի վաղիւ
 անդր ընդ նոսա սրբեալ եմուտ ի տա-
 ճարն . յայտ առնել զկատարումն ա-
 1ւուրցն սրբութեան , մինչեւ մատեաւ
 ի վերայ իւրաքանչիւր ուրուք ի նո-
 ցանէ պատարագ :
 27 ԶԴ . Եւ իբրեւ մերձ էին եւթն ա-
 ւուրքն ի կատարել , տեսեալ զնա ի
 տաճարին Ասիացեոց Հրէիցն՝ զեզուին
 զնոյաւ զամենայն զամբոխն . եւ ար-
 28 կեալ ի նա ձեռս՝ աղաղակէին , Արք
 Իսրայելացիք , օհնեցէք . սյս այր է որ
 հակառակ ժողովրդեանն եւ օրինացն
 եւ տեղւոյս այսորիկ ամենեղուն ա-
 մենայն ուրեք ուսուցանէ , մինչեւ հե-
 թանոսս եւս եմոյժ ի տաճարն եւ սրդ-
 29 ծեաց զսուրբ տեղին : (Քանզի էր յա-
 սաջադոյն տեսեալ զՏրօփիմոս զԵփե-
 սացի ի յապարիս ընդ նմա . զոր կար-
 ծէին եթէ ի տաճար անդր եմոյժ Պաւ-
 30 զոս :) Եւ արժեաւ քաղաքն ամենայն ,
 եւ կուտեցաւ ժողովուրդն , եւ առեալ
 զՊաւղոս՝ ձգէին արտաքոյ տաճարին .
 եւ վազվազակի վախեցան զրուսքն :
 31 Եւ խնդրէին զնա սպանանել . եհաս
 զրոյց ի հազարապետ զնդին , եթէ խը-
 32 սովալ է ամենայն երուսաղէմ : Որոյ
 անդէն առեալ զօրականս եւ հարիւ-
 րապետս՝ զիմաց ի վերայ նոցա . եւ
 նոցա տեսեալ զհազարապետն եւ զզօ-
 րականսն , զաղարեղին ի հարկանելոյ
 33 զՊաւղոս , Յայնժամ մատուցեալ հա-
 զարապետն կայաւ զնա , եւ հրամայ-
 եաց կասել կրկին չղթայիւք , եւ հար-
 ցանէր թէ ո՞ իցէ , եւ զի՛նչ իցէ ա-
 34 րարեալ : Այլք այլ իմն աղաղակէին

զնմանէ յամբոխն . իբրեւ ոչ կարաց
 զիտել զստոյգն վասն ամբոխին , հրա-
 35 մայեաց ածել զնա ի բանակն : Եւ իբ-
 րեւ եհաս յաստիճանսն , զէպ եղեւ
 բառնալ բերել զնա ի զօրականացն
 36 վասն բռնութեան ամբոխին : Քանզի
 զնա երթայր բազմութիւն ժողովրդ-
 37 դեանն եւ ասէին , Բարձ զգա : Մինչ-
 դեւ մտանելոց էր Պաւղոս ի բանակն ,
 ասէ ցհազարապետն , Եթէ արժան իցէ
 ինձ խօսել ընդ քեզ . եւ նա ասէ ,
 38 Յուշարէն զիտե՛ս . Մի՛ արդեւք զու
 իցես Եզիպտացին , որ յառաջ քան
 զայս աւուրս ապտտաբեցուցեր եւ
 հաներ յանապատ չորս հազարս արս
 39 սիկարեանս : Եւ ասէ Պաւղոս , Ես եմ
 այր Հրեայ ի Տարսոնէ կիլիկեցեոց , ոչ
 աննչան քաղաքի քաղաքացի . ազաչեմ
 զքեզ հրամայեա ինձ խօսել առ ժողո-
 վուրդդ :
 40 Եւ ի հրամայեն նորա , Պաւղոս կա-
 ցեալ ի վերայ աստիճանացն՝ շարժեաց
 զձեռն ժողովրդեանն . իբրեւ բազում
 լուութիւն լինէր , սկսաւ բարբառել
 Հերբայեցեոց բարբառոյն եւ ասէ ,

ԳԼ . ԻԲ

4 Արք եղբարք եւ հարք , լուարուք ինձ
 այժմ՝ առ ձեզ սրտասխանատուու-
 2 թեանս : (Իբրեւ լուան եթէ Հերբա-
 յեցեոց լեզուաւն բարբառեցաւ նոցա՝
 առաւել եւս զաղարեցին ի լուութիւն .
 3 Եւ նա ասէ .) Ես եմ այր Հրեայ ծնեալ
 ի Տարսոն կիլիկեցեոց՝ անեալ ի քաղա-
 քիս յայտմիկ առ ոոս Դամաղիելի ,
 խրատեալ ըստ ճշմարտութեան հայ-
 րենի օրինացն , նախանձայոյզ էի Աս-
 տուծոյ՝ որպէս ամենեքեան զուք այս-
 4 օր : Որ զսոյն ճանապարհ վարեցի
 մինչեւ ի մահ , կասել եւ մատնել ի
 5 բանտս արս եւ կանայս . Որպէս եւ
 քահանայապետդ վկայէ ինձ եւ ամե-
 նայն ձերակոյսոյ , յորոց եւ թուղթս
 առեալ առ եղբարս ի Դամասկոս եր-
 թայի , ածել եւ անտի կապեալս յե-
 6 բրուսաղէմ , զի պատժեցին : Եւ եղեւ
 ինձ ի գնալն եւ ի մերձեանալ ի Դամաս-
 կոս , զմիջաւուրքն յանկարծակի յերկ-
 նից փայլատակեալ լոյս սաստիկ զինեւ .
 7 Եւ անկալ յերկիր , եւ լուայ բարբառ
 որ ասէր յիս , Սաւուղ , Սաւուղ , զի՞

Դ՛՛՛՛ , ապաքէն խոնկեց է ամբոխ , զի լսեն

8 հալածես զիս : Եւ ես ետու պատաս-
 խանի թէ Ո՞վ ես, Տէր . եւ ասէ ցիս,
 9 Ես եմ Յիսուս Նազովրեցի զոր դուն
 10 հալածես : Բայց որ ընդ իսն էին՝ գրչան
 տեսանէին¹, այլ զձայնն ոչ յէին որ
 11 խօսէր ընդ իս : Եւ ասեմ, Ձի՞նչ արա-
 րից, Տէր . եւ ասէ ցիս Տէր, Յարու-
 12 ցեալ երթիցես ի Դամասկոս, եւ անդ
 պատմեսցի քեզ վասն ամենայնի որ
 13 հրաման է քեզ անել : Իրրեւ ոչ ան-
 սանէի ի փառաց լուսոյն այնորիկ, զձե-
 14 ուանէ ձգեալ ի նոցանէ որ ընդ իսն էին,
 15 մտի ի Դամասկոս : Անտնիա ոմն այլ
 երկիւղած ըստ օրինացն, վկայեալ
 16 յամենայն . բնակչաց որ ի Դամասկոս
 17 Հրեայքն էին, Եկն եկաց առ իս եւ
 18 ասէ, Սաւուղ եղբայր, ի վեր հայեաց :
 19 Եւ ես նպնձամայն ի վեր հայեցայ ի նա .
 20 եւ նա ասէ ցիս, Աստուած հարցն մե-
 21 րոց յառաջագոյն ընտրեաց զքեզ ձա-
 նաչել զկամս նորա, եւ տեսանել զԱր-
 22 զարն եւ լսել բարբառ ի բերանոց նա-
 23 րա . Ձի եղիցես վկայ նորա առ ամե-
 24 նայն մարդիկ որոց տեսերն եւ լուար :
 25 Եւ արդ զի՞ հեղղաս, արի, միրտեաց
 26 եւ լուս զմեզս քո ի կարող զանուն
 27 նորա : Եւ եղեւ ինձ ի դասնայն յե-
 28 րուսագէմ եւ կալ յաղօթս ի տաճարին,
 29 լինել ի զարմացման, եւ տեսանել զնա
 զի ասէր ցիս, Փութա ել յերուսա-
 30 զեմէ վազվազակի, քանզի չեն ընդու-
 31 ներդ գքո վկայութիւնդ վասն իմ : Եւ
 32 ես ասեմ, Տէր, ինքեանք իսկ զիտեն
 33 զի ես էի որ ի բանսն տայի եւ զան
 հարկանէի ըստ ժողովրդոցն զհաւա-
 34 տացեալս ի քեզ : Եւ յորժամ հեղոյր
 35 արիւնն Ստեփանոսի վկայի քո, ես
 36 ինքն էի որ ի վերայ կայի, եւ կամա-
 37 կից լինէի սպանման նորա, եւ սպհէի
 38 զհանդերձս սպանողացն նորա : Եւ ասէ
 39 ցիս, Գնա, զի ես ի հեթանոսս հե-
 40 ուսորս առաքեցից զքեզ :
 41 Եւ ունին զնէին նմա մինչեւ ցայս
 42 բան, ապա բարձին զձայնս իւրեանց
 43 եւ ասեն, Բարձ յերկրէ զայդպիսիդ,
 44 զի չէ սրբալս այդպիսեոյդ կեալ : Եւ
 45 յազազակեին նոցա եւ ընկնուլ զհան-
 46 զերձս եւ զփոշին ցանել յօգսն, Հրա-
 47 մայեաց հազարապետն մուծանել զնա
 ի բանակն, ասէր, զանիւ հարցանել

զնա, զի գիտացից վասն որոյ յանդ-
 25 ման այնպէս ազազակէին զնմանէ : Եւ
 իրրեւ պրկեցին զնա փոկովք, ասէ
 Պաւղոս ցհարիւրապետն որ ի վերայ
 կայր, եթէ զայր Հոովմայեցի եւ ան-
 26 արատ պա՛րտ իյէ ձեզ զան հարկանել :
 27 Իրրեւ լուսա հարիւրապետն, մատու-
 ցեալ առ հազարապետն պատմեաց եւ
 28 ասէ, Ձի՞նչ կամիս ատնել, քանզի այրս
 29 այս Հոովմայեցի է : Եւ մատուցեալ
 հազարապետն՝ ասէ ցնա, Ասա զու-
 ցիս, Հոովմայեցի՞ ես . եւ նա ասէ,
 30 Այս : Պատասխանի եւ հազարապետն,
 31 Ես բազում գլխոց զգինուորութիւնս
 զայս ստացայ . ասէ Պաւղոս, Ես ծնեալ
 32 իսկ ի զմին եմ : Եւ վաղվաղակի ի բաց
 կացին ի նմանէ՝ որ ²հարկանեոյցն էին
 զնա . եւ հազարապետն իսկ երկեաւ,
 իրրեւ զիտաց եթէ Հոովմայեցի է, եւ
 զի կապեալ եւս էր զնա :
 33 ԶԶ. Եւ ի վաղիւ անդր կամէր գիտել
 զճշմարտան, թէ զի՞նչ չարախօսութիւն
 իցէ Հրէիցն, արձակեաց զնա, եւ հրա-
 մայեաց կոչել զքահանայապետն եւ
 զամենայն առեանն . եւ իջուցեալ ըզ-
 Պաւղոս՝ կացոյց ի մէջ նոցա :

ԳԼ ԻԳ

1 Եւ հայեցեալ Պաւղոսի յատեանն՝ ասէ,
 Արք եղբարք, ես ամենայն ուղիղ մտօք
 2 գնացեալ եմ առաջի Աստուծոյ մինչեւ
 3 ցայսօր : Եւ քահանայապետն Անտնիա
 հրամայեաց սպասաորացն հարկանել
 4 զբերան նորա : Յայնժամ Պաւղոս ասէ
 5 ցնա, Հարկանեաց է զքեզ Աստուած,
 որմ բուսալ, եւ զու նստիս դատել զիս
 ըստ օրինաց, եւ առանդ օրինաց հրա-
 6 մայես զիս հարկանել : Եւ որ շուրջն
 կային՝ ասեն, Զքահանայապետս Աս-
 7 տուծոյ հայնոյս : Եւ ասէ Պաւղոս,
 Ոչ զիտէի, եղբարք, եթէ իցէ քահա-
 նայապետ . զրեալ իսկ է, Ձիչքան ժո-
 8 ղովրդեան քո ոչ հայնոյսցես : Իրրեւ
 զիտաց Պաւղոս եթէ մի կողմն սա-
 9 դուկեցուց է եւ մեան փարիսեացոց,
 10 ազազակէր ի մէջ առեանին, Արք եղ-
 11 բարք, ես փարիսեցի եմ, որդի փարի-
 սեցեոյ . վասն յուսոյ եւ յարութեան
 12 մեռելոց եւ աւաստիկ դատիմ : Եւ զայս

¹ Իմանէ յասելան, եւ զահի հարան

² Կ-հ, հարցանելոցն

իբրեւ ասաց, եղեն հերձուածք փարիսեցւոցն եւ սաղուկեցւոց, եւ պատահեցաւ բազմութիւնն, Քանզի սաղուկեցիքն ասեն, Ձիք յարութիւն եւ ոչ հրեշտակ եւ ոչ հոգի, բայց փարիսեցիքն խոտովանին զերկոսեան: Եւ եղեւ ազազակ մեծ. յոտն կացին ումանք ի դպրաց անտի ի կողմանէ փարիսեցւոց, հակառակէին եւ ասէին, Ոչինչ չարութիւն գտանուք յաննս յայսմիկ, բայց եթէ հոգի խօսեցաւ ի զմա կամ հրեշտակ: Եւ ի բազմանալ ամբոխին՝ երկուցեալ հաղարապետն թէ գուցէ ճեղքիցի Պաւղոս ի նոցանէ, հրամայեաց զօրականին իջանել յափըշտակել զնա ի միջոյ նոցա, եւ ածել ի բանակն, Եւ ի վաղուեան գիշերին եկաց առ նմա Տէր եւ ասէ, Քաջալերեաց, Պաւղէ, զի որպէս վկայեցեր վասն իմ յերուսաղէմ, սոյնպէս պարտ է քեզ եւ ի Հոռով վկայել:

12 Զէ. Եւ իբրեւ այգ եղեւ, Յարարեալ ժողով Հրէիցն՝ նողովեցին զանձինս, ոչ ուտել եւ ոչ ըմպել մինչեւ սպանցնն:

13 ՂՊաւղոս: Եւ էին աւելի քան զքառասուն որոց զայս ընդ միմեանս երգ:

14 մաւնս արարեալ էր: Որք մատեանս առ քահանայապետն եւ երիցունս եւ ասեն, Նզովիք նզովեցաք զանձինս ոչ ինչ ճաշակել մինչեւ սպանցուք ՂՊաւղոս:

15 Իայց զուք զգացուցէք հաղարապետին հանդերձ ատենիւն, զի իջուցէ զնա առ ձեզ, որպէս թէ կամիցիք ճշմարտագոյնս ինչ գիտել զնմանէ. եւ միք յատալ քան ղմօտել նորա՝ պատ:

16 բաստ եմք ի սպանանել զնա: Եւ լուեալ քեռորդուցն Պաւղոսի զգաւածանութիւնն՝ եկն եմուտ ի բանակ անդր, պատմաց Պաւղոսի: Եւ կոչեցեալ Պաւղոսի առ իւր զմի ի հարիւրապետաց անտի՝ ասէ, Չպատանիս զայս սար առ հազարապետն, զի ունի:

18 Ինչ պատմել նմա: Եւ նորա ատեալ զնա տարաւ առ հազարապետն եւ ասէ, Կապիալն Պաւղոս կոչեաց զիս, եւ աղաչեաց զպատանիս զայս ածել առ քեզ:

19 ունի ինչ խօսել ընդ քեզ: Առեալ զձեռանէ նորա հաղարապետին՝ զնաց մեկուսի, հարցանէր թէ Ձի՞նչ ունիս

20 խօսել ընդ իս: Եւ նա ասէ, Հրեայք միաբանեցին աղաչել զքեզ, զի ի վաղիւ զՊաւղոս իջուցես յատեան, իբրեւ թէ կամիցին ինչ ճշմարտագոյնս:

21 հարցանել վասն նորա. Արդ զու մի՛ անսպցես նոցա, քանզի դարան գործեալ է նմա ի նոցանէ արանց աւելի քան զքառասուն, որ նողովեցին զանձինս ոչ ուտել եւ ոչ ըմպել մինչեւ սպանցնն զնա. արդ պատրաստ են եւ սպասեն քում հրամանի: Ապա հազարապետն արձակեաց զպատանին՝ պատուիրեալ մի՛ ումեք ասել թէ զայս զգացուցեր ինձ:

23 Եւ կոչեաց երկուս ի հարիւրապետացն եւ ասէ, Պատրաստեցէք զօրականս երկերիւր, որպէս զի երթիցեն մինչեւ ի Կեսարիա, եւ հեծեալս եւ թանասունս եւ տիգաւորս երկերիւր,

24 յերից ժամուց գիշերոյն, Եւ գրաստս պատրաստական՝ որպէս զի իջուցեալ զՊաւղոս ապրեցուցենս առ Փելիքս:

25 դատաւոր. Գրեալ թուղթ որ ունէր օրինակ զայս. Կղաւղիոս Լիւսիաս, առ քալ դատաւորդ Փելիքս, ողջոյն:

27 Չայրս զայս կարեալ ի Հրէից եւ մերձ ի սպանանել ի նոցանէ, հասեալ ի վերայ զօրականս ապրեցուցի, իմացեալ թէ Հոռովայեցի է: Կամեցայ գիտել զլնասն վասն որոյ ամբաստանէին զդմանէ, իջուցի զգա յատեան նոցա:

29 Չոր գտի ամբաստանեալ վասն խնդրոյ իրիք իւրեանց օրինաց. եւ ոչ ինչ արժանի մահու կամ կապանաց ունէր:

30 Վասն իբրեւ ազդ եղեւ ինձ նենգութեան յայրդ լինելոյ ՝ ի նոցանէ՝ յղեցի՝ առ քեզ. հրաման տուեալ եւ չարախօսացն խօսել զգմանէ առաջի քո. ողջ լեր:

31 Եւ զօրականացն ըստ հրամանի նորա ատեալ զՊաւղոս՝ ածին գիշերայն:

32 յԱնտիպատրիս, Եւ ի վաղիւ անդր արձակեալ զհեծեալսն ընդ նմա երթալ:

33 դարձան ի բրանակն, Նոքա մտին ի Կեսարիա, եւ տուեալ ցգատաւորն զթուղթն՝ առաջի կացուցին նորա եւ զՊաւղոս: Իբրեւ ընթերցաւ, եհարց թէ յորմէ՞ նահանգէ իցէ. եւ ստուգեալ եթէ ի Կիլիկիայ է, Լուայց քեզ, ասէ, յորժամ եւ չարախօսցն քո ե-

1Ո՛ւնչ, յատեան, մի՛ մարտիցուք ընդ Աստուծոյ
2Ո՛ւնչ, միաբանեալ ոմանց ի Հրէից

3Ո՛ւնչ, ի Հրէից իսկզմ յղեցի

կեսցեն . եւ հրամայեաց յապարանսն
Հերովդի պահել զնա :

ԳԼ ԻԻ

1 ԷԱ. Եւ յետ հինգ աւուր էջ քահա-
նայապետն Անանիա հանգերձ ծերովք
ումամբք , եւ ճարտարախօսաւ Տեր-
տիւղեաւ ումամբ , որք եւ զգացուցին
2 զատուորին վասն Պաւղոսի : Եւ ի կո-
չին զնա՝ սկսաւ Տերտիւղոսն ամբաս-
տան լինել եւ ասել , Բազում խաղա-
ղութիւն գտեալ է ի քէն եւ իրաց ուղ-
ղութիւն ազգիս այսորիկ քով խնամով .
3 Ամենայնիւ եւ ամենայն ուրեք շնոր-
հակալ եմք , քաջդ Փելիքս , ամենայն
4 գոհութեամբ : Բայց զի մի՛ աւելի եւս
այխտաւ արարից գքեղ , աղաչեմ լսել
մեզ կարճ ի կարճոյ քոյին հեզու-
5 թեամբք : Քանզի դտաք զայրս պոյս
ապականիչ եւ խտովիչ ամենայն Հրէից
որք են ընդ տիեզերս , եւ առաջնորդ
6 Նազովրացւոց հերձուածոյն : Որ եւ
զտաճարն իսկ կամեցաւ պղծել . զոր
եւ կայաք , ՚եւ ըստ մերոց օրինաց
7 զատել կամեցաք : Եկեալ Լիւսիաս հա-
ղարապետ՝ մեծաւ բոնութեամբ ի ձե-
8 ռաց մերոց եհանաւ : Հրամայեաց եւ չա-
րախօսացն նորա գալ առ քեզ . յորմէ
զու իսկ բաւական լինիցիս վերստին
զատեալ , ամենայնի հասու լինել զորոց
9 մեքս ամբաստանմբ զզմանէ : Միա-
բանեցին եւ Հրեայքն , ասեն , Այդ-
պէս է :

10 Պատասխանի ետ Պաւղոս , յակնար-
կել նմա զատուորին խօսել , ի բա-
զում ամաց լինել քեզ զատուոր ազ-
գիս այսորիկ գիտեմ , յօժարութեամբ
վասն իմոց իրաց պատասխանի առնեմ ,
11 Քանզի կարող ես զիտել , զի ոչինչ
աւելի է իմ քան զաւուրս երկոտասան
յորմէ հետէ ելի երկիր պաղանել յե-
12 բուսողէմ : Եւ ոչ ի տաճարի սնդ զտին
գիս ընդ ումեք խօսեցեալ , եւ կամ
ժողովս արարեալ բազմաց , ոչ ի ժո-
13 ղովուրդս , եւ ոչ ի քաղաքի . եւ ոչ
յանդիման առնել կարեն քեզ վասն որոյ
14 այժմս չարախօսեն զինէն : Բայց զայս
խոստանամ քեզ , եթէ ըստ ճանապար-
հին զոր ասեն հերձուած , այնպէս պաշ-

տեմ զհայրենի Աստուածն . հաւատա-
ցեալ ամենայնի որ ինչ յօրէնսն եւ ի
15 մարգարէս զրեալ է : Ունիմ յոյս առ
Աստուած , որում եւ զօքս իսկ ակն
ուենին թէ յարութիւն լինելոց է² ար-
16 զարոց եւ մեղաւորաց : Յորում եւ
ես իսկ ճգնիմ , անխիղճ միաս ուենել
առ Աստուած եւ առ մարդիկ յամե-
17 նայն ժամ : Ի բազում ամաց ողորմու-
թիւնս եկի առնել յազգիդ իմում , եւ
18 ետու պատարաղիս . Որովք գտին զիս
սրբեալ ի տաճարին , ոչ բազմօք եւ ոչ
19 ամբոխիւ , Ոմանք յԱսիացւոց անտի
Հրեայք , որոց պարտ էր գալ առաջի
քո եւ ամբաստան լինել , եթէ ունիցին
20 ինչ զինէն . Եւ կամ ինքեանք սօքա
ասասցեն , զինչ զտին յիս անիրաւու-
21 թիւն մինչդեռ կայի յատենին : Բայց
զոր աղաղակեցի մինչ կային ի մէջ նո-
ցա , եթէ վասն յարութեան մեռելոց
22 զատիմ ես այսօր ի ձէնջ , Եւ յապաղ-
եաց զնոսա Փելիքս , զի ստուգագոյնս
զիտէր վասն ճանապարհին , ասէ , Յոր-
ժամ Լիւսիաս հաղարապետ իջցէ այսր՝
23 տեղեկացայց վասն ձեր , Հրամայեաց
հարիւրապետին պահել զնա եւ ուենել
յընդարձակի , եւ մի՛ զօք յիւրոց անտի
արգելուլ ի պաշտելոյ ³զնա :

24 ԷԲ. Եւ յետ աւուրց ինչ եկն Փելիքս
հանդերձ Դրուսիղաւ կնաւ իւրով , որ
էր Հրեայ , կոչեաց զՊաւղոս եւ լուաւ
ի նմանէ վասն որ ի Յիսուս Քրիստոս
25 հաւատոցն : Եւ ի խօսելն նորա վասն
արդարութեան եւ ժուժկայութեան
եւ հանդերձեալ գատաստանին , զահի
հարեալ Փելիքս՝ ետ պատասխանի ,
Դու առ այժմ երթ , եւ յորժամ ժամ
26 լիցի , կոչեցից քեզ , Միանգումայն եւ
ակն ուենէր թէ տացի ինչ նմա ի Պաւ-
ղոսէ , վասն որոյ եւ սակալ կոչեցեալ
27 զնա խօսէր ընդ նմա : Եւ ի կատարել
երկուց ամաց՝ եկն փոխանակ Փելիք-
սի Փեստոս Պորկիոս . իրրեւ կամեցաւ
չնորս առնել Հրէիցն Փելիքս , եթող
զՊաւղոս կապեալ :

ԳԼ ԻԵ

1 Փեստոս իրրեւ եհաս յիշխանութիւնն ,

¹ Ի բազում գալուստ

² Ունիմ , յոյսելու , մեռելոց ,
³ Ունիմ , զնա , կամ յերթալոյ առ նա

յեա երից աւուրց ել յԵրուսաղէմ ի
 2 Կեսարեայ : Եւ զգացուցին նմա ՚բա-
 հանայապետքն եւ զյխաւորք Հրէիցն
 3 զՊաւղոսէ, Եւ աղաչէին խնդրեալ
 շնորհս ի նմանէ : զի կոչեցցէ զնա յԵ-
 4 րուսաղէմ : զարանս գործեալ սպանա-
 4 նել զնա ի ճանապարհի : Իսկ Փետտոս
 արար ստատախոսնի պահել զնա ի կե-
 սարիա, թէ ինքն իսկ ընդ հուսկ անդր
 5 երթալոց էր : Եւ որ ի ձէնջ կարողոյ
 իցեն, ասէ, ընդ իս իջցեն, եւ եթէ
 իցէ ինչ յառնն վնաս, ամբաստան լի-
 6 ցին զնմանէ : Եւ լեալ անդ աւուրս ոչ
 աւելի քան զութ կամ զաասն, եկն էջ
 ի Կեսարիա : եւ ի վաղիւ անդր նստեալ
 յատենի՝ հրամայեաց ածել զՊաւղոս :
 7 Եւ իբրեւ եկն, կացին չուրջ զնոյաւ
 որ յԵրուսաղէմէ իջեալ էին Հրեայքն,
 բազում եւ ծանր վնասս գնէին զորս ոչ
 8 կարէին ցուցանել : Քանզի առնէր պա-
 տասխանի Պաւղոս եթէ Ոչ յօրէնս Հը-
 րէից եւ ոչ ի տաճարն եւ ոչ ի կայսր
 9 ինչ վնասակար եմ : Բայց Փետտոս կա-
 մեցեալ Հրէիցն շնորհս առնել ստատա-
 խանի ետ Պաւղոսի եւ ասէ, Կամիս
 յԵրուսաղէմ երանել, եւ անդ վասն գո-
 10 ցին իրաց դատել առաջի իմ : Եւ ասէ
 Պաւղոս, Յատենի կայսեր հասեալ կամ
 ուր պարտ է ինձ դատել : Հրէից ինչ
 չեմ վնասակար, սրպէս եւ զու իսկ
 11 քաջ զիտես : Ասար եթէ վնասակար ի-
 ցեմ եւ արժանի ինչ մահու գործեցի,
 ոչ զանդիտեմ ի մեռանելոյ : Իսկ եթէ ոչ
 ինչ իցէ զորոց սորա ամբաստան լինին
 զինէն, ոչ ոք կարէ զիս զոցս շնորհել :
 12 Ի կայսր բողոքեմ : Յայնժամ Փետտոսի
 խօսեցեալ ընդ խորհրդակցին՝ արար
 պատասխանի, ի կայսր բողոքեցեր,
 առ կայսր երթիջիր :
 13 Է՞՞ : Իբրեւ անցին աւուրք ինչ, Ագ-
 րիպպաս արքայ եւ Բերինիկէ եկին
 14 ի Կեսարիա յողջոյն Փետտոսի : Եւ իբ-
 րեւ աւուրս բազումն հանէին անդ,
 Փետտոս զեկոյց արքայի զՊաւղոսէ եւ
 ասէ, Այր մի է ստտ մնացեալ կտայեալ
 15 ի Փեյլիքսէ : Վասն որոյ իբրեւ չոյայ
 յԵրուսաղէմ, զգացուցին ինձ քահա-
 նայապետքն եւ զյխաւորք Հրէիցն,
 խնդրէին յինէն առնել նմա ստատու-
 16 նաս : Որոց ետու պատասխանի եթէ

2 Զէ օրէն Հոովմայեցուց շնորհել ումէք
 2 զորք, մինչչեւ ամբաստանեալն յան-
 զիման ունիցի զպատասխանս, եւ տեղի
 ստատախանուոյ ամուսուցու վասն ամ-
 17 բաստանութեանն : Եւ իբրեւ եկին
 այսր, ոչինչ յապաղեցի, այլ ի վաղիւն
 նստեալ յատենի՝ հրամայեցի ածել
 18 զայսրն : Վասն որոյ մատուցեալ ամբաս-
 տանքն եւ ոչ մի ինչ վնաս չարութեան
 ի մէջ բերէին զորոց ան կարծէի :
 19 Բայց խնդիրս ինչ որ վասն իւրեանց
 սլաշտաման ունէին ընդ նմա, եւ վասն
 Յիսուսի ուրումն մեռելոյ, զորմէ ա-
 20 սէր Պաւղոս թէ կենդանի է : Իբրեւ
 յանձնարս մտի վասն այսպիսի իրաց
 քննութեան, ասեմ եթէ կամիցի՝ եր-
 թալ յԵրուսաղէմ, եւ անդ դատել վասն
 21 նոցին իրաց : Բայց ի Պաւղոսի բողո-
 քին զի պահեցի ի Քաջի արանցն
 յանդիմանութիւն, հրամայեցի պահել
 զնա՝ մինչչեւ տաց տանել առ կայսր :
 22 Ագրիպպաս ցՓետտոս ասէ, Կամէի եւ
 ես լսել առնն : եւ նա ասէ, ի վաղիւ
 լուիցես :
 23 Եւ ի վաղիւ անդր իբրեւ եկն Ագ-
 րիպպաս եւ Բերինիկէ բազում երե-
 ւելի սպասուք, եւ մտին յատեանն
 հանդերձ հաղարայեաօքն եւ արամբք
 պատուականօք քաղաքին : եւ հրա-
 24 մայեալ Փետտոսի՝ ածին զՊաւղոս : Եւ
 ասէ Փետտոս, Արքայ Ագրիպպա, եւ
 ամենայն արք որք ընդ մեզ էք, տե-
 սանէ՞ք զսա : վասն սորա ամենայն ժո-
 զովք Հրէից ամբաստան եղեն ինձ յԵ-
 րուսաղէմ եւ աստ, աղաղակէին թէ
 25 Զէ պարտ գմա կեալ : Բայց ես ի վե-
 րայ հասի թէ ոչինչ է զորա արժանի
 մահու գործեալ, եւ զորա ինքնին
 բողոք կարեալ առ Քաջ արանցն, խոր-
 26 հեցայ յղել : Վասն որոյ ստուգութեամբ
 ինչ զրել տեսնն իմում ոչ ունիմ :
 վասն այնորիկ ամի զղա առաջի ձեր,
 եւ մահաւանդ առաջի քո, արքայ Ագ-
 րիպպա, որպէս զի վերստին քննեալ՝
 27 մարթաջիցի ինչ զրել : Քանզի անպատեհ
 իմն թուի ինձ առ տանել կապեալ
 մի, եւ ոչինչ վնաս զնմանէ նշանա-
 կել :

1Ո՛ւն, քահանայապետն

2Ո՛ւն, զք ի ստատուումն

ԳԼ ԻԶ

1 Եւ Ագրիպպաս ասէ ցՊաւղոս, Հրամայեալ է քեզ փասն քո խօսել: Յայնժամ Պաւղոսի ձեռնալ գձեռն ամենք
 2 պատասխանի: Վասն ամենայն ամբաստանութեանն Հրէից զիննն, արքայ Ագրիպպա, համարիմ զանձն երանելի, զի քո առաջի այսօր տալոց եմ պատասխանի: Մանաւանդ զի զիտակ իսկ եւ ամենայն կրօնից եւ խնդրոց Հրէից փասն որոյ սպառնալ երկայնամտութեամբ
 4 լսել ինձ, Քանզի կենաց իմոց որ ի մանկութեանն, ի սկզբանէ լեալ յազգի մեզ իմում յերուսաղէմ, տեղեակ են
 5 ամենայն Հրեայք: Յատկապէս զիտակն ի փաղօց հետէ, եթէ կամիցին վկայել, զի ըստ ճշմարտագոյն կրօնից օրինացն մերոց կեցեալ եմ փարիսեցի:
 6 Եւ արզ փասն յուսոյն առ հարսն եւ զելոյ աւետանացն յԱստուծոյ՝ զատեալ
 7 կամ յատենի: Յոր երկոտասան ապագատնմին մերոյ անպակաս զցայց եւ զցերեկ պաշտեալ ահն ունին հասանել: փասն որոյ յուսոյ ամբաստանիմ,
 8 արքայ, ի Հրէից: Զինչ անհաւատ թուի ձեզ եթէ Աստուած զմտեալս
 9 յարուցանէ: Ես իսկ ինքնին պատշաճ համարէի զբազում ինչ հակառակ անուանն Յիսուսի նազովրեցոյ զործել:
 10 Զոր եւ արարի իսկ յերուսաղէմ. եւ զբազումս ի սրբոցն եւ բանաբարգիլ ատենի, ի քահանայապետիցն ատեալ իշխանութիւն. եւ չգապանելոցն նոցա
 11 բերէի համար: Եւ ըստ ամենայն ժողովրդոցն բազում անգամ պատժեալ զնոսա՝ բոնապատէի հայհոյել. առաւել եւս մտեալ ի վերայ նոցա՝ հալածէի մինչեւ յարտաքին. քաղաքսն:
 12 Եւ Որովք զնացեալ ի Դամասկոս՝ իշխանութեամբ եւ հրամանօք քահանայապետիցն, Զմիջառուրին ի ճանապարհի տեսի, արքայ, յերկնից ասաւել քան զլուսաւորութիւն արեգական ծագեալ զինեւ լոյս, եւ զնորօք որ
 14 ընդ իսն երթային: Եւ յամենեցուն մեր անկանեն յերկիր, լուս ձայն որ ասէր ցիս Հերբայեւոց բարբառովն, Սաւուղ, Սաւուղ, զի հալածես զիս,

խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացիլ:
 15 Եւ ես ասեմ, Ո՞ ես, Տէր. եւ Տէր ասէ, Ես եմ Յիսուս զոր զուն հարածես: Այլ արի եւ կաց ի վերայ սաից քոց, զի փասն այսօրիկ երեսեցայ քեզ անուղ զքեզ ի ձեռն պաշտօնեայ եւ վկայ որոց տեսերդ Չիս, եւ որոց եւ
 17 բուեցայց քեզ. Փրկել զքեզ ի ժողովրդեանէդ եւ ի հեթանոսաց, յորս ես
 18 առաքելից զքեզ. Բանալ զաչս նոցա, զարձուցանել ի խաւարէ ի լոյս, եւ յիշխանութեանն Սատանայի՝ յԱստուածանուլ նոցա զթողութիւն մեկաց, եւ վիճակ ընդ սուրբս հաւատովքն որ
 19 յիս: Առտի, արքայ Ագրիպպա, ոչ եղէ անհաւան երկնաւոր տեսեանն:
 20 Այլ նախ որոց ի Դամասկոս եւ յերուսաղէմ էին, եւ ընդ ամենայն զաւառն Հրէաստանի եւ ի հեթանոսս, պատմեցի զլջանալ եւ զառնալ յԱստուած չկենդանի, արժանի ասպախարութեան
 21 զործս զործել: Վասն այսօրիկ Հրէից կարեալ զիս ի տանարին՝ կամէին սպառնանել:
 22 նանել: Օղնութիւն հասեալ առ յԱստուծոյ՝ մինչեւ ցայսօր կացի վկայեալ փոքու եւ մեծի, ոչ ինչ արտաքոյ ասել քան զոր մարգարէքն եւ Մովսէս
 23 խօսեցան զհանդերձելոցն իննելոյ: Եթէ չարչարելոց է Քրիստոսն, եթէ առաջին ի յարութեանն մտելոց՝ լոյս պատմելոց է ժողովրդեանն եւ հեթանոսաց:
 24 Եւ նորա զայս պատասխանի տուեալ, Փեստոս ի ձայն մեծ ասէ, Մովսէս, Պաւղէ, բազում զպրովիւնք քեզ
 25 ի մոլութիւն զարձուցանեն: Իսկ Պաւղոս ասէ, Ոչ մոլիմ, քաջ Փեստոս, այլ զցածութեան եւ զճշմարտութեան
 26 բանս բարբառիմ: Միտակ իսկ է այսօրիկ արքայ, ընդ որում եւ համարձակեալ լսօսիմ. քանզի ծածկել ի քէն իմիք ի սոցանէ չառնում յանձն. զի ոչ եթէ յանկեան ուրեք զործեալ իցէ
 27 այս: Հաւատաս, արքայ Ագրիպպա, մարգարէից. զիտեմ զի հաւատաս: Եւ ասէ Ագրիպպաս ցՊաւղոս, Փոքու իմն հաւանեցուցանես զիս իննել քրիստոսն
 29 եայ: Եւ Պաւղոս ասէ, Մնայրէի յԱստուծոյ եւ վարու եւ մեծաւ ոչ միայն զքեզ, այլ զամենեւեան որ լսեն ինձ

¹Գլխ, ի սպանանել նոցա տայի հաւանութիւն

²Յաննս պատմ

այսօր՝ լինել այսպիսի որպէս եւ եսս եմ,
բաց ի կապանաց աստի։
30 Յոսն եկաց արքայն եւ դատաւորն
եւ Բերինիկէ, եւ որ ընդ նոսայն նրս-
31 տէին։ Եւ իբրեւ գնացին, խօսէին ընդ
միմեանս եւ ասէին թէ Ոչ ինչ արժա-
նի մահու կամ կապանաց գործէ այրս
32 այս։ Իսկ Ագրիպպաս ցճեստոս ասէ,
Արձակել մարթ էր զայրս զայս, եթէ
ոչ էր բողոքեալ ի կայսր։

ԳԼ ԻԷ

1 Է՛՛՛. Իբրեւ հրամայեցաւ մեզ նաւել
յիտալիա, տային զՊաւղոս եւ զայս
ովմանս կապեալս ցհարիւրապետ մի,
որում անուն էր Յուլիոս, Սերաստեան
2 գնդին, Եւ ելեալ ի նաւ մի Ադրամին-
տացի, որ երթալոց էր ի կողմանս Ա-
սիացոց, գնացաք. էր ընդ մեզ եւ
Արիստարքոս Մակեդոն Թեսաղոնի-
3 կեցի։ Եւ ի վաղիւ անդր իջաք ի Մի-
դոն. եւ մարդասիրութիւն ցուցեալ
Յուլեայ առ Պաւղոս, հրամայեաց առ
բարեկամն երթալ եւ զարման դտա-
4 նել։ Եւ անտի ելեալ խոնարհագոյն
նաւեցաք ի Կիպրոս վասն հողմոյն ընդ-
5 դէմ լինելոյ, Յայնժամ ընդ մէջ ծովուն
Կիլիկեայ եւ Պամփիլեայ նաւեալ իջաք
6 ի Միւռա Լիկիացոց։ Եւ անդ գտեալ
հարիւրապետին նաւ մի Աղիքսանդ-
րացի որ երթայր յիտալիա՝ եմոյժ զմեզ
7 անդր։ Եւ ի բազում աւուրս ծանրա-
նաւեալք՝ հազիւ հասաք առ Կնիդեաւ.
եւ ի թողացուցանել մեզ հողմոյն,
նաւեցաք խոնարհագոյն ի Կրետէ առ
8 Սաղմոնեաւ։ Հազիւ անցեալ առ նո-
վաւ՝ եկաք ի տեղի ինչ որ կոչէր Գե-
ղեցիկ նաւահանգիստ, յոր հուպ էր
9 քաղաքն Ղասեա։ Եւ իբրեւ բազում
ժամանակք անցանէին, եւ սխալ եւս
լինէր նաւելոյն. եւ վասն այն ինչ եւս
պահոցն անցանելոյ, տայր խրատ Պաւ-
10 ղոս, Եւ ասէր ցնոսա, Արք, տեսա-
նեմ զի թշնամանօք եւ բազում վնասոս
ոչ միայն բեռինդ եւ նաւիդ, այլ եւ
անձանց մերոց լինելոց է նաւարկու-
11 թիւնս։ Իսկ հարիւրապետն նաւապե-
տին եւ նաւաւարին առաւել անսայր
12 քան բանիցն Պաւղոսի, իբրեւ դժպա-
տեհ իմն թուէր նաւահանգիստն առ
ի ձմերկ, բազումք խորհեցան զնալ

անտի. Թերեւս կարասցեն հասանել
ի Փիւնիկէ՝ ձմերկ ի նաւահանգստին
Կրետացոց որ հայեր ընդ հարաւա-
13 կողմն եւ ընդ ալխարհն։ Եւ ի շնչել
հարաւոյն, համարեցան ուր զիմեան
էին՝ հասանել. եւ արկեալ մօտ ան-
14 ցանէին առ Կրետեաւ։ Եւ ոչ յետ բա-
զում ժամուց անկաւ զնովաւ հողմ
15 ուռուցիկ, որ կոչի Եւրակիկոնիւ։ Ընդ
յափշտակել նաւին եւ ի հանդուրժել
ընդդէմ հողմոյն, թոյլ տուեալ երթա-
16 յաք եւ զայաք։ Ի կղզի ինչ զիմեալ
որ կոչէր Կղաւղա, հազիւ կարացաք
17 ըմբռնել զմակոյկն. ¹Ձոր առեալ յօգ-
նականութիւն կապէին ընդ նաւն.
երկուցեալք թէ գուցէ ի յորձանուտն
անկանիցին, իջուցեալ զառագաստն
18 այնպէս երթային եւ զային, Եւ ի
սաստկագոյն վշտանայոյն մերոյ ի վա-
ղիւ անդր զկարասին ընկեցի առնէին.
19 Եւ յերիւր աւուր ընդ ²իւրեանց ձեռն
20 զգործին նաւին ³ընկեցին, Իբրեւ ոչ
արեւ եւ ոչ աստեղք երեւէին ի բա-
զում աւուրս, եւ ձմեռն ոչ սակաւ
կայր ի վերայ, ապա բառնայր ամենայն
21 յոյս փրկութեան մերոյ։ Եւ զի բա-
զում աւուրս նօթի էին, յայնժամ
Պաւղոս կացեալ ի մէջ նոցա՝ ասէ,
Պարտ էր ձեզ, ով արք, անսալ ինձ եւ
ոչ ելանել ի Կրետեայ եւ շահել զվիշտս
22 զայս եւ զվնաս։ Եւ արդ խրատեմ
զձեզ քաջալերել, զի վնաս անձին եւ
ոչ միում ի ձէնջ լինիցի բաց ի նաւէդ.
23 Քանզի երեւեցաւ ինձ յայսմ գիշերի
հրկշտակ Աստուծոյ որոյ եսն եմ եւ
24 պաշտեմ զնա, Եւ ասէ, Մի՛ երկնչիր,
Պաւղէ, կայսեր եւս պարտ է քեզ յան-
գիման լինել. եւ անա շնորհեալ է քեզ
Աստուծոյ զամենեւեան որ են ընդ քեզ
25 ի նաւիդ։ Վասն այսորիկ քաջալերե-
ցարուք, արք, զի հաւատամ յԱս-
տուած եթէ այսպէս լինի զոր օրինակ
26 խօսեցաւ ընդ իս։ Բայց ի կղզի ինչ
հասանէ մեզ անկանել։
27 Է՛՛՛. Իբրեւ չորեքտասաներորդ գիշեր
լինէր, մինչդեռ ծիէաք ի Հանդրին
անդունդս, ի մէջ գիշերին կարծէին
նաւաւարքն եթէ հասեալ իցեն յաշ-

¹ Յոսն, Ձոր առին, և օգնութիւնս ի կեր ար-
կեալ՝ ամին պարտն զնաւուն
² Ուստի, մեր
³ Ուստի, ընկեցաք

28 խորհրդով, եւ ընկեցեալ զգունդան՝
 գտին գիրկս քսան, եւ սակաւ ինչ
 29 դիրկս հնգետասան: Ձահի հարեալ թէ՛ 44
 գուցէ ի խիստ ինչ տեղիս անկանիցին,
 յետուստ կողմանէ ընկեցին խարիսխս
 30 չորս, ըզձանային այգուն լինելոյ: Բայց
 նաւավարքն խնդրէին փախչել ի նաւէ
 անտի, եւ իջուցեալ զկուրն ի ծով
 անդր՝ պատճառանօք որպէս թէ՛ յառա-
 ջոյ կողմանէ խարիսխս ձգելոց իցեն: 31
 Ասէ Պաւղոս ցհարիւրապետն եւ ցզօ-
 րականսն, Եթէ ոչ զոքս մնան ի նա-
 32ւիս, զուք ապրել ոչ կարէք: Յայն-
 ժամ զօրականքն հատին զլարս կրին
 33 եւ ի բաց ընկեցին: Եւ մինչդեռ այդն
 կամէր լինել, աղաչէր Պաւղոս զամե-
 նեսեան առնուլ կերակուր, ասէ, Այս
 չորեքտասաներորդ օր է որում ակն
 ունիք նօթիս կատարել, եւ չէ ինչ ճա-
 34շակեալ: Վասն որոյ աղաչեմ զձեզ ճա-
 շակել կերակուր, զի այն իսկ վասն
 ձերոյ փրկութեան է: զի ոչ ուրուք 35
 ի ձէնջ մազ մի ի գլխոյ կորիցէ: Եւ
 իբրեւ ասաց զայս, առեալ հաց՝ զո-
 ցացաւ զԱստուծոյ առաջի ամենեցուն,
 36 երեկ եւ սկսաւ ուտել: Եւ քաջալի-
 րեցան ամենքին, եւ նոքա առին կե-
 37րակուր: Եւ էաք ամենայն հոգիք ի
 նաւին երկերիւր եւ թանասուն եւ վեց,
 38 իբրեւ յագեցան կերակրովն, թեթե-
 ւացուցին զնաւն՝ թափեալ զցորիանն
 ի ծովն:
 39 Եւ իբրեւ սյգ եղեւ, զերկիրն ոչ ճա-
 նաչէին, բայց զգոգ մի նշմարէին թէ
 ափն ծովուն իցէ: յոր խորհէին, թէ
 40 հնար ինչ իցէ, զերծուցանել զնաւն: Եւ
 զխարիսխսն հատեալ ընկեցին ի ծովն,
 թողացուցին զխառնելիս թեւոցն, եւ
 ի բաց առին՝ զառագաստն, եւ ետուն 41
 հողմոյն սպին կոյս ծովուն: Անկեալ
 ի տեղի մի երկձող՝ թիւրեցին զնաւն:
 եւ առաջին կողմն նաւին խրեալ ան-
 շարժ մնայր, եւ յետին կողմն քակէր
 42 ի բռնութենէն: Եւ զօրականացն
 խորհուրդ արարեալ զի զկապիարն
 սպանցեն, եւ զի մի՛ ոք լուղիցի եւ
 43 փախիցէ: Եւ հարիւրապետն քանդի
 կամեցաւ ապրեցուցանել զՊաւղոս

արգել զնոսա ի խորհրդոյն. հրամայ-
 եաց զի որ կարողն իցեն լուղի՝ ան-
 կանիցին նախ եւ ի ցամաքն ելանի-
 44 ցեն: Եւ զայսն՝ զո՛րս ի տախտակս,
 եւ զո՛րս յայ ինչ կահ ի նաւէ անտի.
 եւ այսպէս եղեւ ամենեցուն փրծանել
 յերկիր:

ԳԼ ԻԸ

1 Եւ ապրեալք՝ յայնժամ գիտացաք թէ՛
 Պիլիպինէ էր անուն կղզւոյն. բայց
 բարբարոսքն շնորհեցին ոչ սակաւ
 2 մարդասիրութիւն մեզ. Գանդի լուցին
 խարոյկ, եւ ընկալան զամենեսեան
 զմեզ վասն անձրեւին որ ստիպէր եւ
 3 վասն ցրտոյն: Եւ ի ժողովել Պաւղոսի
 խոիւ ինչ բազում եւ զնել ի վերայ
 խարուկին, իժ մի ի ջերմութենէն ել-
 4 եալ կալաւ զձեռանէ նորա, Եւ իբրեւ
 տեսին բարբարոսքն կասեալ զգազանն
 զձեռանէ նորա, ասէին ցոխմեանս,
 Ուրեմն սպանող է այրս այս, որ թէ-
 պէտեւ ապրեցաւ ի ծովէն, իրաւունքն
 5 չետուն կեալ, Եւ նորա թօթափեալ
 զգազանն ի հուրն, եղեւ նմա չար եւ
 6 ոչինչ: Եւ նոքա ակն ունէին նմա
 այտնոյ կամ անկանելոյ եւ յանկար-
 ծակի մեռանելոյ. իբրեւ շատ ակն կալ-
 եալ եւ տեսանէին թէ՛ ոչինչ վնաս եղեւ
 նմա, դարձեալ դարձուցին զբանսն եւ
 7 ասէին թէ՛ աստուած ոմն է: Եւ շուրջ
 զտեղեւան զայնուիկ էին զեղք զլիսա-
 ւորի կղզւոյն որում անուն էր Պոպ-
 զիոս. որ առ զմեզ յերաշխի զերիս
 8 աւուրս եւ սիրով ընկալաւ: Եւ եղեւ
 հօրն Պոպղեայ ի ջերմն եւ յախտ թան-
 չից հիւանդանալ զնել. առ որ մտեալ
 Պաւղոս եւ կացեալ յաղօթս՝ եղ զձեռն
 9 եւ բժշկեաց զնա: Եւ իբրեւ այս եղեւ,
 այլ հիւանդք որ էին ի կղզւոյն՝ զային
 10 եւ բժշկէին: Որք եւ բազում պա-
 տուովք պատուեցին զմեզ. եւ իբրեւ
 զնացաք, ետուն որ ինչ պէտք էին,
 11 էէ. Եւ յետ երկից ամսոց ելաք ի նաւ
 մի Աղեքսանդրացի որ ձմերեալ էր ի
 կղզւոյն նշանաւորաւ Դիոսկուրա-
 12 ցուց: Եւ իջեալ ի Միրակուսա՝ եղեաք
 13 աւուրս երիս: Ուստի զնացեալ հա-
 սաք ի Հոնգրիովն. եւ յետ աւուրս միոյ

1 Յոյն, բացին
 2 Ուրս, ի բռնութենէ ալեայ

1 Յոյն, Մելիտէ

ի չնչել հարաւոյն, երկօրեայք եկաք
 14 Ի Պատիոզոս: Ուր եւ գտաք եղբարս,
 աղաչեցեալք ի նոցանէ լինել աւուրս
 15 եւ թն: Եւ ապա ելաք ի Հոովմ: Եւ
 անտի լուեայ եղբարց զմէնջ՝ եյին ընդ
 առջ մեր մինչեւ յՈրգոստայն Ապփեայ
 եւ Երբին Կրպակայ. զորս տեսեալ
 Պաւղոսի գոհացաւ զԱստուծոյ եւ քա-
 ջալերեցաւ:
 16 Եւ իբրեւ մտաք ի Հոովմ, Կրամա-
 յեցաւ Պաւղոսի լինել առանձինն հան-
 դերձ զինուորաւն պահպանաւ իւրով:
 17 Եւ եղև յետ երկից աւուրց կոչել նմա
 զՀրէիցն զԴիսաւորս. եւ իբրեւ եկին,
 ասէ ցնոսա, ես, արք եղբարք, ոչինչ
 հակառակ զործեալ ժողովրդեանն կամ
 կրօնիցն հայրենեաց, կապեալ յերու-
 նազեմէ մասնեցայ ի ձեռս Հոովմայե-
 18 ցւոց: Որք իբրեւ գատեցան զիս, կա-
 մեցան արձակել, վասն եւ ոչ մի ինչ
 19 մնաս մահու գտանելոյ յիս: Ի հակա-
 ռակել Հրէիցն՝ հորկ եղև բողոքել ի
 Կայսր, իբր ոչ եթէ վազդէն իմմէ ու-
 20 նէի ինչ չարախօսել: Վասն այսր պատ-
 ճառանաց աղաչեցի զձեզ՝ տեսանել եւ
 խօսել: Քանզի վասն յուսոյն Իսրայելի
 21 կամ ի չղթայս յայտոսիկ: Եւ նոքա
 ասեն ցնա, Մեք ս'չ թուղթս ինչ վասն
 քո ընկալաք ի Հրէաստանէ, եւ ս'չ եկ-
 եալ ոք յեղբարց պատմեաց կամ խօսե-
 22 ցաւ ինչ վասն քո չարութիւն: Բայց
 աղաչեմք ի քէն լսել թէ զինչ խորհի-
 ցիս. զի վասն հերձուածոյց այգորիկ
 յայտ իսկ է մեզ, զի ամենայն ուրեք

23 հակառակութիւն կրէ: Ժամ եղեալ
 նմա օր մի, եկին ի վանսն առ նա բա-
 զումք, որոց պատմէր վկայութեամբ
 զարքայութիւն Աստուծոյ. եւ հաւա-
 նեցուցանէր զնոսա վասն Յիսուսի յօ-
 րինացն Մովսիսի եւ ի մարգարէից
 24 յայգուէ մինչեւ ցերեկոյ: Եւ ոմանք
 հաւանէին բանիցն, եւ կէսք չհաւա-
 25 տային: Եւ անմիաբանք լինալ ի մի-
 մեանց՝ արձակէին, յասելն Պաւղոսի
 բան մի թէ Բարեոք խօսեցաւ Հոզին
 Սուրբ ի ձեռն Եսայեայ մարգարէի առ
 26 հարսն մեր, Եւ ասէ, Երթ առ ժողո-
 վուրդն, եւ ասացես, Լսելով լուիջիք
 եւ մի՛ իմասջիք, եւ տեսանելով տես-
 27 ջիք եւ մի՛ տեսջիք. Զի թանձրացաւ
 սիրտ ժողովրդեանն այնորիկ, եւ ա-
 կանջօք իւրեանց ծանր լուան, եւ զաչս
 իւրեանց կախուցին, զի մի՛ երբեք
 տեսցին աչօք, եւ ալկանջօք լուիցեն, եւ
 սրտիւք իմասցին եւ դարձցին, եւ բժշչ
 28 կեցից զնոսա: Եւ արդ յայտնի լիցի ձեզ,
 զի հեթանոսաց առաքեցաւ փրկու-
 թիւնս Աստուծոյ, նոքին եւ լուի-
 29 ցին: ²Եւ իբրեւ գայս ասաց, արտաքս
 զնացին ի նմանէ Հրեայքն, որք ունէ-
 ին ի մէջ ինքեանց զբազում խնդիրս:
 30 Եւ եղև զերկեամ մի բովանգակ
 31 իւրով վարձու: Եւ ընդունէր զամե-
 32 նեսեան որ մտանէին առ նա: Քարո-
 զէր զարքայութիւնն Աստուծոյ, եւ ու-
 սուցանէր վասն Տեառն Յիսուսի Քրիստոսի
 անխորիան ամենայն համարձա-
 կութեամբ:

¹Ուր, յանձն արար հարեբապետն զկապ-
 եալն զօրապետին, և հրամայեցաւ

²Այս հատը պատահ յոման



ՊԱԻՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳՂՈՒԽ Ա

1 ԱԲ. ՊԱԻՂՈՍ, ծառայ Յիսուսի Քրիստոսի, կոչեցեալ առաքեալ, որոչեալ
 2 յաւետարանն Աստուծոյ. Որ յասաջ
 խոստացաւ ի ձեռն մարգարէից իւրոց
 3 գրովք սրբովք, Վասն Որդւոյ իւրոյ
 եղևոյ ի զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ,
 4 Սահմանելոյ Որդւոյն Աստուծոյ զօրու
 թեամբ ըստ Հոգւոյն սրբութեան. ի
 յարութենէ մեռելոց Յիսուսի Քրիստոսի
 5 Տեսն մերոյ. Որով ընկալաք
 շնորհս եւ առաքելութիւն՝ ի հնազան
 6 զութիւն հաւատոց յամենայն հեթա
 7 տոս վասն անուան նորա. Յորս եւ
 զուք էք կոչեցեալ Յիսուսի Քրիստոս
 8 սի. Ամենեցուն որոց էք ի Հոռով, սի
 ընկեաց Աստուծոյ կոչեցելոց սրբոց,
 շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն
 9 յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեսանէ
 Յիսուսէ Քրիստոսէ:
 10 Նախ զո՞հանամ զԱստուծոյ իմոյ ի
 ձեռն Յիսուսի Քրիստոսի վասն ձեր
 11 ամենեցուն. զի հաւատք ձեր պատ
 12 մեալ են ընդ ամենայն աշխարհ: Վկայ
 է ինձ Աստուած, զոր պաշտեմն հոգ
 13 ւով իմով յաւետարանի Որդւոյ նորա,
 թէ ո՞րպէս գլխատակս ձեր յանեմ:
 14 Յամենայն ժամ յազօթս իմ աղաչելով
 զի թերեւ երբեք յաջողեցի ինձ կա
 15 մօքն Աստուծոյ դալ առ ձեզ: Քանզի
 16 անձկացեալ եմ տեսանել զձեզ, զի վո
 խեցից ի ձեզ շնորհս ինչ հոգեւորս առ
 17 թարսկից լինել ձեզ վասն ընդ միմեանս
 18 իմոյ եւ ձերզ հաւատոց: Ոչ կամիմ
 19 եթէ տգէտք իցէք, եղբարք, զի բա
 20 ղում անգամ յօժարեցի դալ առ ձեզ,

եւ արդեալ մինչեւ ցայժմ. զի եւ
 ի ձեզ դտից պտուղ ինչ որպէս եւ յայ
 21 հեթանոսս: Քանզի Յունաց եւ Բար
 22 քարոսաց, իմաստնոց եւ անմտից պար
 23 տապան եմ. Այնպէս՝ որչափ իմով
 24 սանն յօժարութեամբ, եւ ձեզ որ ի
 Հոռովք էք աւետարանել:
 25 Ձի ոչ եթէ ամօթ ինչ համարիմ զա
 26 ւետարանն, քանզի զօրութիւն Աս
 27 տուծոյ է ի փրկութիւն ամենայն հա
 28 ւատացելոց. նախ Հրէի եւ ապա հե
 29 թանոսի: Ձի արդարութիւնն Աստու
 30 ծոյնովաւ յայտնի հաւատոց ի հաւատս
 31 որպէս եւ զրեալ է թէ Արդարն ի հա
 32 ւատոց կեցցէ:
 33 ԱԳ. Քանզի յայտնելոց է բարկու
 34 թիւն Աստուծոյ յերկնից ի վերայ ա
 35 մենայն ամբարշտութեան եւ անիրա
 36 ւութեան մարդկան, որք զճշմարտու
 37 թիւնն անիրաւութեամբ ունին. Վասն
 38 զի զիտութիւնն Աստուծոյ յայտնի է
 39 ի նոսա. քանզի Աստուած իսկ յայտ
 40 նեաց նոցա: Ձի աներևոյթք նորա
 41 ի սկզբանէ աշխարհի արարածովքս ի
 42 մացեալ տեսանին, այսինքն է մշտն
 43 ջնաւորութիւն եւ զօրութիւն՝ եւ
 44 աստուածութիւն նորա. զի ոչ գտա
 45 նիցեն ամենեւին առ պատասխանի:
 46 Ձի ծանկան զԱստուած, եւ ոչ իբրեւ
 47 զԱստուած փառաւորեցին կամ զո՞հա
 48 ցան. այլ նանրացան ի խորհուրդս
 49 իւրեանց, եւ խաւարեցան անմատ
 50 թեամբ սիրտք նոցա: Չանձինս առ
 51 իմաստունս ունէին, յիմարեցան եւ
 52 փոխեցին զվատս անեղծին Աստուծոյ
 53 ի նմանութիւն պատկերի եղծանելի
 54 մարդոց եւ թռչնոց եւ չորքոտանեաց
 55 եւ սողնոց: Վասն որոյ մասնեաց զնո

18-ին, տունեմ՝ անդադար

18-ին, մշտնջնաւոր զօրութիւն

սա Աստուած ի ցանկութիւն սրտից նոցա ի պղծութիւն, անարգիլ զմար-
 25 մինս իւրեանց յանձինս իւրեանց. Որք փոխանակեցին զճշմարտութիւնն Աստուծոյ ընդ ստութեան. Կնազանդեցան եւ պաշտեցին զարարածս եւ ոչ զԱրարիչն, որ է օրհնեալ յաւիտեանս:
 26 Ամէն: Վասն այնորիկ մատնեաց զնոսա Աստուած ի կարիս անարգութեան, զի էգք նոցա փոխանակեցին զպէտս
 27 բնականս ի պէտս անբնականս: Նոյնպէս եւ արուացն թողեալ զբնական պէտս ի գութեանն, բորբոքեցան ցանկութեամբք իւրեանց ի միմեանս, արուք ընդ արուս զխայտառակութիւն գործէին, եւ զգարձ փոխարինին որ պարա էր մոլորութեանն նոցա՝ յան-
 28 ձինս իւրեանց ընդունէին: Եւ որպէս զի ոչ ընտրեցին զԱստուած ունել ի գիտութեան, մատնեաց գնոսա Աստուած ի միտս անարգութեան՝ գոր-
 29 ծնել զանբժանս. Զլլգեալսն ամենայն անիրաւութեամբ, պոռնկութեամբ, անզգամութեամբ, ազահութեամբ, չարութեամբ, լի նախանձու, սպանութեամբ, հեռիւ, նենգութեամբ, չարաբարութեամբ. շողմոզք, Զարախօսք, աստուածատեացք, թշնամանողք, ամբարտաւանք, ամբարհաւանք, գտիչք շարեաց, զծնողս անարգուք,
 31 Անմիտք, ուխտադրութք, անագոր-
 32 ըոյնք, աննուէրք, անողորմք. Որք հասեալ էին յԱստուծոյ իրաւանցն վերայ եթէ ոչք զայսպիսիսն գործեն արժանի են մահու. եւ ոչ միայն որ զայն առնեն, այլ եւ որ կամակիցն լինին գործեալեացն:

ԳԼ Բ

1 Վասն որոյ առանց պատասխանի տալոյ ես, ով մարդ, որ դատիսդ. զի որով դատիս զընկերն՝ զանձն քո դատապարտես, զի դու զնոյն գործես՝ որով դատիսն:
 2 Ա՛ր. Բանզի գիտեմք, եթէ Աստուծոյ դատաստանն ճշմարտութեամբ է ի վերայ այնոցիկ որ զայնպիսիսն գործեն:
 3 Իսկ արդ խորհցիս զայս, ով մարդ, որ դատիս զայնոսիկ որ զայնպիսիսն

գործեն, եւ դու զնոյն գործես, եթէ դու ապրեցոց իցես ի դատաստանացն
 4 Աստուծոյ, Եթէ զմեծութեամբ քաղցրութեան նորա եւ զնեղեղութեան եւ զերկայնմտութեամբն արհամարհիցես, չգիտիցիս զի քաղցրութիւնն Աստուծոյ
 5 զքեզ յապաշխարութիւն ածէ: Այլ ըստ խտութեան քում եւ ըստ անզեղջ սրտի՝ զանձես անձին քում բարկութիւն յաւուր բարկութեան եւ յայտնութեան արդար դատաւորու-
 6 թեանն Աստուծոյ. Որ հատուցանէ իւ-
 7 բաքանչիւր ըստ գործս իւրեանց. Որ համբերութեամբ են ի գործս բարութեան՝ զփառս եւ զպատիւ եւ զանեղծութիւն խնդրեն, զկեանսն յաւիտեանից, Իսկ որ ի հակառակութենէ անտի են եւ ապստամբք ի ճշմարտութեանն եւ զհետ երթեալ զանիրաւու-
 8 թեան բարկութիւն եւ սրտամտութիւն, 9 Նեղութիւն եւ անձկութիւն ի վերայ ամենայն մարդոյ որ գործէ զչար, նախ
 10 Հրէի եւ ապա հեթանոսի: Փառք, պատիւ եւ խաղաղութիւն ամենայնի որ գործէ զբարի, նախ Հրէի եւ ապա
 11 հեթանոսի: Զի ոչ է ակնատութիւն առաջի Աստուծոյ:
 12 Ա՛Ե. Որք միանգամ արտաքոյ օրինացն մեղան՝ արտաքոյ օրինացն եւ կորնչին. եւ որք ընդ օրինօքն մեղան
 13 օրինօքն եւ դատեցցին. (Զի ոչ եթէ որ լսելիք օրինացն են՝ արդարացեալ են առաջի Աստուծոյ, այլ առնելիք օ-
 14 թինացն արդարացին: Այլ յորժամ հեթանոսք որ զօրէնս ոչ ունին՝ բնութեամբ զօրինացն գործիցեն, նոքա որ զօրէնս ոչ ունին՝ անձանց իւրեանց
 15 իսկ են օրէնք. Որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ ի սիրտս իւրեանց՝ վկայութեամբ մտաց իւրեանց, եւ յանդիմանել զմիմեանս ի խորհրդոց իւրեանց, կամ թէ պատասխանի իսկ տալ.)
 16 Յաւուրն յորում դատիցի Աստուած զզգաղմիս մարդկան ըստ աւետարանիս իմում ի ձեռն Յիսուսի Քրիստոսի:
 17 Ապա եթէ դու Հրեայ անուանեալ ես, եւ յեցեալ ես յօրէնսն, եւ պարծիս
 18 յԱստուած, Եւ գիտես զկամս նորա, եւ ընտրես զլաւն, եւ խրատեալ ես յօ-
 19 թինացն. Վստահ ես յանձն քո առաջնորդ լինել կուրաց, լոյս խաւարե-
 20 լոց: Խրատիչ անզգամաց, վարդապետ

18-22, երկր պագին

28-անս գ-լ-ս-է

տղայոց, ունել զկերպարանս գիտութեան եւ ճշմարտութեան յօրինայն:

21 Իսկ արդ որ ուսուցանեսս զրնկերն՝ զանձնքս ո՛չ ուսուցանեսս. որ քարոս:

22 զես չգողանալ՝ գողանաս. Որ ասես չչնալ՝ չնաս. որ գարչիս ի մեհենայ՝

23 զսեղանս կողպտես. Որ օրինօքն պարծիս՝ յանցանել ըստ օրէնսն զԱստուած անարգես:

24 Զի անունն Աստուծոյ վասն ձեր հայնոյի ի մէջ հեթանոսաց, սրպէս եւ գրեալ է:

25 Աք. Թրիատութիւն օգնէ, եթէ զօրէնսն սլահիցես. ապա եթէ յանցաւոր օրինացն իցես, Թրիատութիւնքո

26 անթրիատութիւն եղես: Իսկ եթէ անթրիատութիւնն զիրաւունս օրինացն սլահիցէ, ո՛չ ապաքէն անթրիատութիւն նորս ի թրիատութիւն հա-

27 մարեացի. եւ զատիցի սր ի բնէ անթրիատութիւնն է, զօրէնսն կատարելով, գքեղ որ գրովն եւ թրիատու-

28 Թեամբն յանցաւոր օրինացն իցես: Զի ոչ եթէ որ յայտնի Հրեայն է, եւ ոչ որ յայտնի մարմնով թրիատութիւնն,

29 Այլ որ ի ծածուկ Հրեայն է, եւ թրիատութիւն սրտի, հոգևով եւ ոչ գրով. որոյ գովութիւնն ոչ ի մարդկանէ է, այլ յԱստուծոյ:

ԳԼ. Գ

1 Իսկ արդ զի՛նչ աւելի է Հրէին, կամ զի՛նչ օգուտ ի թրիատութենէ անտի:

2 Բազում ինչ ամենայն իրօք. նախ այն իսկ զի հաւատարիմ եղին սլատգամքն:

3 Աստուծոյ, Իսկ արդ եթէ չէր հաւատացեալ ոմանց, միթէ անհաւատութիւն նոցա զԱստուծոյ հաւատսն խափանէ՞ր. քաւ լիցի: Արդ եղիցի Աստուած ճշմարտ, եւ ամենայն մարդ սուտ, որպէս եւ գրեալ է, Որպէս արդար եղիցես ի բանս քո, եւ յաղթես:

4 ցես ի դատել քեզ, Իսկ արդ եթէ ապիրատութիւն մեր զԱստուծոյ արդարութիւնն յանդիման կացողանէ, զի՛նչ ասեմք. միթէ անիրաւ ինչ է:

5 Աստուած որ անէ զբարկութիւն. Ըստ մարդկութեան ասեմ. քաւ լիցի. ապա թէ ոչ զիմարդ դատի Աստուած զաշխարհ, Զի եթէ ճշմարտութիւնն Աստուծոյ յիմում ստութեանն առաւելաւ ի փառս նորա, զի՛ եւս եւ իբրեւ

8 զմեղաւոր դատիմ, եւ կամ թէ որպէս հայնոյիմքն, եւ որպէս ասին ոմանք զմէնջ ասել թէ Արասցուք զչար զի եկեսցէ բարի. որոյ դատաստանքն յիրաւի են:

9 Եւ արդ ի՛ւ իւրիք առաւել իցեմք. ապաքէն եւ ոչ իւրիք. քանզի յառաջագոյն իսկ մեղադիր եղեաք Հրէից եւ հեթանոսաց, ամենեցուն ընդ մե-

10 զօք լինելոյ. Որպէս եւ գրեալ է թէ

11 Ոչ ոք է արդար եւ ոչ մի. եւ ոչ գոյ որ իմանայ, եւ ոչ ոք է որ խնդրէ զԱստուած:

12 Ամենեքեան խոտորեցան ի միասին եւ անպիտանացան. ոչ ոք է որ անէ զքաղցրութիւն, ոչ ոք է

13 մինչեւ ի մի: Գերեզման բաց է կոկորդնոցա. լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն. Թոյնք իժից ի ներքոյ չրթանց

14 նոցա. Որոց բերանք անիծիւք եւ զառու-

15 նութեամբ լի են: Երբզ են ոտք նոցա

16 հեղուլ զարիւն. Բեկումն եւ թշուա-

17 ռութիւն ի ճանապարհս նոցա. Եւ զճանապարհն խաղաղութեան ոչ ծանեան:

18 Ոչ է երկեւղ Աստուծոյ առաջի աչաց նոցա:

19 Բայց գիտեմք, որ ինչ միանգամ օրէնքն ասեն՝ այնոցիկ որ ընդ օրինօքն են, ասեն. զի ամենայն բերան խցցի, եւ դատապարտ լիցի ամենայն

20 աշխարհ՝ Աստուծոյ: Զի ի գործոց օրինաց ոչ արդարասցի ամենայն մարմին առաջի նորա, քանզի օրինօքն է գիտութիւն մեղաց:

21 Բայց արդ առանց օրինացն իսկ արդարութիւնն Աստուծոյ յայտնեալ է՝ վկայեալ յօրինաց անտի եւ ի մարդա-

22 ըէից: Քանզի արդարութիւնն Աստուծոյ ի հաւատոց անտի Յիսուսի Քրիստոսի յամենայն հաւատացեալս. եւ

23 ոչինչ է խտիր: Քանզի ամենեքեան մեղան, եւ նուազեալ են ի փառաց անտի

24 Աստուծոյ: Եւ արդարանան ձրի նորին չնորհօք ի ձեռն փրկութեանն որ ի

25 Քրիստոս Յիսուս. Զոր յառաջն եգ Աստուած ի քաւութիւն ի ձեռն հաւատոցն արեամբն նորա, ի հանդէս արդարութեան նորա՝ վասն թողութեան յառաջագոյն մեղացն գործելոց ի ներքն

26 Աստուծոյ, ի հանդէս արդարութեան

1) Կաւ, յամենայն է ի վերայ ամենեցուն որ հաւատան

նորա ի ժամանակի յայսմիկ . զի եղիցի նա արդար , եւ արդարացուցէ զայն
 27 որ ի հաւատոցն Յիսուսի : Իսկ արդ ո՞ւր են սլարժանքն . արդեւան . յորո՞ց օրինաց , ի գործոց անախ . ոչ , այլ ի
 28 հաւատոցն օրինաց : Քանզի համարիմք հաւատովք արդարանալ մարդոյ ա-
 29 ռանց գործոց օրինաց : Եթէ Հրէից միայն իցէ Աստուած եւ հեթանոսաց
 30 ոչ . այո , եւ հեթանոսաց : Ձի եթէ մի է Աստուած որ արդարացուցանէ զթլխատութիւնն ի հաւատոց , ապա եւ զանթլխատութիւնն նովին հաւա-
 31 տովք : Արդ զօրէնսն ինչ խափանեմք հաւատովքս . քաւ լիցի . այլ զօրէնսն հաստատեմք :

ԳԼ . Գ

1 ԲՁ . Իսկ արդ զի՞նչ ասիցեմք զդտանելն Աբրահամու նահապետին մերոյ
 2 ըստ մարմնոյ : Ձի եթէ Աբրահամու գործովք էր արդարացեալ , ունիլ ու-
 նէր սլարժանս , այլ ոչ առ Աստուած :
 3 Իսկ զի՞նչ ասիցէ զիր . Հաւատաց Աբրահամ յԱստուած եւ համարեցաւ նմա
 4 յարդարութիւն : Բայց այնմ որ գործիցէն , ոչ համարին վարձքն ըստ չնոր-
 5 հաց՝ այլ ըստ պարեակաց , Իսկ այնմ որ ոչն զործիցէ , բայց հաւատացէ յայն որ արդարացուցանէ զամպարիշտս , հա-
 մարին հաւատք նորա յարդարութիւն
 6 Որպէս եւ Դաւիթ սաէ զերանութիւն մարդոյ որում Աստուած համարի ար-
 7 դարութիւն առանց գործոց : Երանի որոց թողան անօրէնութիւնք , եւ ո-
 8 ռոց ծածկեցան մեղք իւրեանց : Երանեալ է այր որում ոչ համարեցի Տէր
 9 զմեղս նորա : Արդ երանութիւնս այս ի վերայ թրխատութեան է եթէ ի վերայ անթրխատութեան . քանզի սանք ե-
 թէ Համարեցան Աբրահամու հաւատքն
 10 յարդարութիւն : Արդ զի՞արդ համարեցան . մինչդեռ ի թլխատութեան էր՝ եթէ յանթլխատութեան . ոչ ի թլխատութեանն , այլ յանթլխատութեանս :
 11 Եւ նշանակ առ զթլխատութիւնն , կնիք արդարութեան հաւատոցն որ յանթլխատութիւնէ անախ . զի եղիցի նա հայր ամենայն հաւատացելոց որ յանթլխատութիւնէ անախ իցեն , առ ի համարելոյ եւ նոցա յարդարութիւն .

12 Եւ հայր թլխատութեան՝ որոց ոչ ի թլխատութիւնէ անախ եւեթ , այլ եւ որոց երթացեն ընդ հետս անթլխատութեան հաւատոց հօր մերոյ Աբրահամու :
 13 ԳԳ . Ձի ոչ եթէ օրինօքն են աւետիքն Աբրահամու եւ զաւակի նորա ժառանգ լինել աշխարհի , այլ ի հաւա-
 14 տոցն արդարութիւնէ : Ձի եթէ սրք յօրինացն են՝ ժառանգք իցեն , ապա ընդունայն են հաւատքն , եւ զատարկ՝
 15 աւետիքն : Քանզի օրէնքն զբարկութիւն գործեն . բայց ուր ոչ են օրէնք ,
 16 եւ ոչ յանցանք ինչ : Վասն այնորիկ ի հաւատոց անախ , զի ըստ չնորայն իցէ , առ ի լինելոյ հաստատուն աւետեացն ամենայն զաւակին , ոչ այնմ միայն որ յօրինաց անախ , այլ եւ այնմ՝ որ ի հաւատոցն Աբրահամու , որ է հայր
 17 մեր ամենեցուն . Որպէս եւ գրեալ է եթէ Հայր աղղաց բաղմաց արարի զքեզ , առաջի Աստուծոյ որում հաւատաց ՚Եթէ կենդանի առնէ զմեռեալս ,
 18 եւ կոչէ զզգոյն իբրեւ զոյոյ : Որ յանյոյսն յուսով հաւատայ՝ լինել նմա հայր աղղաց բաղմոց . որպէս եւ տտացան
 19 թէ Այնպէս եղիցի զաւակ ըս : Եւ նա ոչ երկմտեաց ի հաւատոցն "Թէպէտ եւ հայեցաւ" ի մարմին իւր այնուհետեւ իբրեւ ի մեռեալ , յանդի զհարիւրամնիք ուրեմն էր , եւ ի մեռելութիւնն արդանդին Ստոյայի : Բայց յաւետեացն Աստուծոյ ոչ երկմտեաց անհաւատութեամբ , այլ զօրացաւ հա-
 21ւատովք , ետ փաստ Աստուծոյ , Եւ հաստատեցաւ ի միտս իւր եթէ որ
 22 խոստացան՝ կարող է առնել : Վասն որոյ համարեցաւ նմա յարդարութիւնս
 23 Արդ զի զրեցան ոչ թէ վասն նորա
 24 միայն թէ համարեցաւ նմա . Այլ եւ վասն ³մերոյ համարելոց է , որք հաւատամք յայն որ յարոյցն զՅիսուս ,
 25 զՏէր մեր , ի մեռելոց . Որ մասնեցաւ վասն յանցանաց մերոց , եւ յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ :

ԳԼ . Ե

1 Այսուհետեւ արդարացեալք ի հաւա-

¹Գ. 22, որ
²Ուստի, ոչ հայեցաւ
³Գ. 22, մեր որոց

տոց անտի , խաղաղութիւն կայցուք
 2 ան Աստուած ի ձեռն Տեառն մերոյ
 3 Յիսուսի Քրիստոսի . Որով եւ զընծա-
 յութիւնն իսկ ընկալաք հաւատովք ի
 4 չնորն յայտոսիկ յորում կամք եւ պար-
 5 ծիւր յուսով փառացն Աստուծոյ : Եւ
 6 ոչ այսչափ միայն , այլ եւ պարծիմք
 7 եւս ի նեղութիւնս մեր . քանզի զի-
 8 տեմք եթէ նեղութիւնք զհամբերու-
 9 թիւն գործեն , Համբերութիւն զհան-
 10 դէս , հանգէս զոյցս . Յոյս ոչ երբեք
 11 ամաչեցուցանէ . զի սէրն Աստուծոյ
 12 սփռեալ է ի սիրտս մեր ի ձեռն Հոգ-
 13 ւոյն Սրբոյ որ տուաւ մեզ : Զի մինչ-
 14 զեռ տկարքն էաք , Քրիստոս ՚վասն
 15 մեր՝ ի ժամանակի ի վերայ ամպարչ-
 16 տաց մեռաւ : Զի վասն արգարոյ հա-
 17 զիւ ոք թէ մեռանիցի , այլ վասն բար-
 18 ւոյ թերեւս համարձակիցի ոք մեռա-
 19 նել , Յայտնեաց Աստուած զսէրն իւր
 20 ի մեզ , զի մինչզեռ մեղաորքն էաք ,
 21 Քրիստոս վասն մեր մեռաւ . ո՛րչափ
 22 եւս առաւել յարգարանալս մերում
 23 այժմիկ արեամբն նորա՝ ապրեսցուք
 24 նովաւ ի բարկութենէ անտի : Զի եթէ
 25 մինչ թշնամիքն էաք , հաշտեցաք ընդ
 26 Աստուծոյ մահուամբ Որդւոյ նորա ,
 27 ո՛րչափ եւս առաւել ի հաշտելս մերում
 28 ապրեսցուք կենօքն նորա : Եւ ոչ այս-
 29 չափ միայն , այլ եւ պարծիմք եւս յԱս-
 30 տուած ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի
 31 Քրիստոսի , որով եւ զհաշտութիւնն
 32 իսկ ընկալաք :

42 ԳԶ. Զի որպէս ի միոջէ մարդոյ մեղք
 43 յայխարհ մտին եւ ի մեղաց անտի՝ մահ,
 44 եւ այնպէս յամենայն մարդիկ տարա-
 45 ծեցաւ մահ՝ զորով ամենեքին մեղան :

46 Քանզի մինչեւ յօրէնսն մեղք էին յաշ-
 47 խարհի , բայց մեղք ոչ համարին , ուր
 48 օրէնք ոչ իցին : Այլ թագաւորեաց մահ
 49 յԱդամայ մինչեւ ի Մովսէս եւ ի վերայ
 50 չյանցուցելոցն ըստ նմանութեան յան-
 51 ցուածոցն Ադամայ , որ է օրինակ հան-
 52 զերձեցոյն : Այլ ոչ որպէս յանցանքն
 53 նոյնպէս եւ չնորձքն . զի եթէ միոյն
 54 յանցանօք բազումք մեռան , ո՛րչափ
 55 եւս առաւել չնորձքն Աստուծոյ եւ
 56 պարգեւք , չնորձք միոյն մարդոյ Յի-
 57 սուսի Քրիստոսի , ի բազումս առա-

16 ւելան : Եւ ոչ որպէս ի միոջէ յանցու-
 17 ցելոյն պարգեւքս . զի դատաստանն՝
 18 ի միոջէ ՚յանցուածոյ անտի՝ ի դատա-
 19 պարտութիւն , այլ չնորձքն ի բազմաց
 20 յանցուածոցն յարգարութիւն : Զի եթէ
 21 ի միոյն յանցանաց մահ թագաւորեաց
 22 միովն , ո՛րչափ եւս առաւել , որք դա-
 23 րաւելութիւն չնորձաց եւ զպարգեւաց
 24 արգարութեանն ամնուցուն , կենօք
 25 թագաւորեսցին ի ձեռն միոյն Յիսու-
 26 սի Քրիստոսի : Ապա ուրեմն որպէս
 27 միոյն յանցանօք յամենայն մարդիկ
 28 դատապարտութիւն , նոյնպէս եւ միոյն
 29 արգարութեամբն յամենայն մարդիկ
 30 արգարութիւն կենաց : Զի որպէս ան-
 31 հնազանդութեամբ միոյն մարդոյ մե-
 32 զաւորք բազումք եղին , նոյնպէս եւ
 33 հնազանդութեամբ միոյն արգարք բա-
 34 զումք եղցին : Բայց օրէնք ի ներքս
 35 անկան , զի յանցանքն բազմացին .
 36 զի ուր առաւել եղին մեղքն , առաւել
 37 եւս յաւելան չնորձքն : Զի որպէս թա-
 38 գաւորեցին մեղքն ի մահու անդ , նոյն-
 39 պէս եւ չնորձքն թագաւորեսցին ար-
 40 գարութեամբ ի կեանսն յաւիտեանից ի
 41 ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մե-
 42 րոյ :

ԳԼ. Զ

1 Իսկ արդ զի՞նչ ասիցեմք . յաճախես-
 2 ցուք ի մեղան զի չնորձքն բազմաս-
 3 ցին : Քաւ լիցի . որք մեռաք մեղացն՝
 4 զիմքդ տակաւին ի նմին կեցցեմք :
 5 Եթէ ո՛չ գիտէք զի որ միանգամ մկր-
 6 տեցաք ի Քրիստոս Յիսուս՝ ի մահ
 7 անդր նորա մկրտեցաք : Թագեցաք ընդ
 8 նմին մկրտութեամբն ի մահ , զի որ-
 9 պէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փա-
 10 րօքն Հօր , նոյնպէս եւ մեք ի նորո-
 11 ցումն կենաց չըջեսցուք : Զի եթէ
 12 տնկակից եղեաք նմանութեան մահու
 13 նորա , այլ եւ յարութեան նորա լինի-
 14 ցիմք : Զայս գիտասցիք զի հին մարդն
 15 մեր խաչակից եղեւ նորա , զի խափա-
 16 նեսցի մարմին մեղացն , մի՛ եւս ծա-
 17 ղայել մեղ մեղացն : Զի որ մեռանին
 18 արգարացեալ է ի մեղաց անտի : Իսկ
 19 եթէ մեռաք ընդ Քրիստոսի , հաւա-
 20 տամք թէ եւ կեցցուք ընդ նմա :

1 ի բազմա գալուսի
 2 Յիսուս , բայց յայտնեաց

3 կամ, զի

4 ի Յիսուսի գալուսի

9 Գիտեմք եթէ Քրիստոս յարուցեալ է
 10 ի մեռելոց, այսուհետեւ ոչ մեռանի,
 11 եւ մահ նմա ոչ եւս տիրէ: Չի որ մե-
 12 առանձն մեղացն մեռաւ մի անգամ, եւ
 13 որ կենդանին է՝ կենդանի է Աստուծոյ:
 14 Նոյնպէս եւ զուր համարեալիք զան-
 15 ձինս մեռեալս մեղացն, եւ կենդանիս
 Աստուծոյ ի Քրիստոս Յիսուս ի Տէր
 մեր:

12 ԴՎ. Մի՛ այսուհետեւ թաղաւորես-
 13 զին մեղք ի մահկանացու մարմինս ձեր՝
 14 հնազանդել ցանկութեանց նորա. եւ
 15 մի՛ պատրաստէք զանդամս ձեր զէն
 16 անիրաւութեան՝ մեղացն, այլ պատ-
 17 րասուեցէք զանձինս ձեր Աստուծոյ,
 18 որպէս ի մեռելոց ի կենդանիս, եւ
 19 զանդամս ձեր՝ զէն արդարութեանն
 Աստուծոյ: Չի մեղք ձեզ ոչ տիրես-
 20 ցեն. քանզի ոչ էք ընդ օրինօք, այլ
 21 ընդ չնորձօք:

15 Իսկ արդ զի՞արդ. մեղիցսք զի
 22 չեմք ընդ օրինօք, այլ՝ ընդ չնորձօք.
 23 քաւ լիցի ի Ո՛չ գիտէք թէ որում
 24 պատրաստէք զանձինս ձեր ծառայս ի
 25 հնազանդութիւն՝ ծառայ էք որում
 26 հնազանդիքն. եթէ մեղայ՝ մահու, եւ
 27 եթէ ի հնազանդութիւն՝ արդարու-
 28 թեան: Այլ չնորձք Աստուծոյ. զի էիք
 29 ծառայք մեղաց, հնազանդեցարուք ի
 30 սրտէ որում աւանդեցայք յառակ վար-
 31 18 զտպիտութեան: Արդ ազատեալք ի
 32 մեղայ՝ ծառայեցէք արդարութեան:

19 Մարդկօրէն ասեմ վասն տկարութեան
 33 մարմնոյ ձերոյ. զի որպէս պատրաս-
 34 տեցէք զանդամս ձեր ծառայս սղծու-
 35 թեան եւ անօրէնութեան յանօրէնու-
 36 թիւն, նոյնպէս եւ այժմ պատրաստե-
 37 ցէք զանդամս ձեր ծառայս արդարու-
 38 թեան ի սրբութիւն: Չի մինչ ծա-
 39 րայքն էիք մեղաց, ազատացեալք էիք

21 19 յարդարութիւնէն: Իսկ արդ զի՛նչ
 40 պատու ունէիք յայնժամ, որովք այժմ
 41 զամօթի հարեալ էք. զի վախճան նո-
 42 22 ցա մահ է: Բայց արդ ազատացեալք
 43 ի մեղացն եւ ծառայեալք Աստուծոյ,
 44 ունիք զպտուղ ձեր ի սրբութիւն, եւ

23 վախճան նորա կեանք յաւիտեանից: Չի
 45 թոշակն մեղաց մահ է, այլ չնորձքն
 46 Աստուծոյ կեանք յաւիտեանից ի Քրիս-
 47 տոս Յիսուս ի Տէր մեր:

ԳԼ Է

1 ԴԳ. Եթէ ո՛չ գիտէք, եղբարք, (զի
 2 ընդ զիսուս օրինացն լսօսիմ,) զի օ-
 3 ընէք տիրեն մարդոյ որչափ ժամանակս
 4 կենդանի իցէ: Քանզի կին առնակին
 5 ի կենդանի այր իւր կապեալ կայ օրի-
 6 նօք. իսկ եթէ մեռանիցի այրն, ար-
 7 ձակեալ է յօրինաց առնն: Ապա ու-
 8 թեմն մինչ կենդանի է այրն, չուն կո-
 9 չի, եթէ լինիցի առն այլում. եւ եթէ
 10 մեռանիցի այրն, ազատ է յօրինացն,
 11 չհամարեալ չուն՝ եթէ լինիցի առն այ-
 12 յում: Այսուհետեւ եւ զուրք, եղբարք,
 13 մեռարուք օրինացն մարմնովն Քրիս-
 14 տոսի, լինել այլում որ ի մեռելոցն յա-
 15 րուցեալ է, զի պողարերք լիցուք Աս-
 16 տուծոյ. Քանզի մինչ էքքն մարմնով
 17 կարիք մեղաց որ օրինօքն էին՝ զօրա-
 18 նային յանդամս մեր, առ ի պողարերս
 19 6 առնելոյ զմեզ մահու: Բայց այժմ դա-
 20 տարկացաք յօրինաց անտի. քանզի
 21 մեռաք այնմիկ որով ամբոնեալս էքք
 22 առ ի ծառայել մեզ նորոգութեամբ
 23 Հոգւոյն եւ ոչ հնութեամբ գրոյն:

7 Իսկ արդ զի՛նչ ասեմք. օրէնքն
 24 մեղք իցեն. քաւ լիցի. այլ զմեզս ոչ
 25 գիտէի: Եթէ ոչ օրինօքն. եւ զցան-
 26 կութիւն ոչ ճանաչէի, եթէ ոչ օրի-
 27 նացն էր ասացեալ, Մի՛ ցանկանայ-

8 ցես: Գատճառս առին մեղքն պատ-
 9 ուիրանաւն, եւ դործեցին յիս զամե-
 10 նայն ցանկութիւն. զի առանց օրի-
 11 նաց մեղքն մեռեալ էին: Եւ ես առանց
 12 օրինացն երբեմն էի կենդանի, այլ
 13 իրբեւ եհաս յիս պատուիրանն, մեղքն
 14 կենդանացան, եւ ես մեռայ. եւ գտաւ
 15 ինձ պատուիրանն որ ի կեանսն էր,
 16 11 նոյն ի մահ: Չի մեղացն պատճառս առ-
 17 եալ այսուիրանաւն լսարեցին զիս,
 18 եւ նովին սպանին:

12 ԴԶ. Այսուհետեւ օրէնքն սուրբ են,
 19 եւ պատուիրանն սուրբ եւ արդար
 20 եւ բարերար:

13 Իսկ արդ ինձ բարին մահ եղեւ.
 21 քաւ լիցի. այլ մեղքն, զի երեւեսցին
 22 մեղքն բարեաւն գործել ինձ զմահ, զի
 23 եղիցին ըստ առաւելութեան մեղքն
 24 14 մեղաւոր ի ձեռն պատուիրանին: Գի-
 25 տեմք զի օրէնքն հոգեւոր են, այլ ես
 26 մարմնաւոր եմ՝ ընդ մեղօք վաճառեալ:

15 Զի զոր գործեմն ոչ գիտեմ, ոչ եթէ
 16 ատեսմն՝ զայն գործեմ: Ապա թէ զոր
 ոչն կամիմ՝ զայն առնեմ, վկայեմ օ-
 17 ըինացն եթէ բարեք են: Այլ արդ՝
 ոչ եթէ ես գործեմ զայն, այլ բնակեալ
 18 յիս մեղքն: Գիտեմ զի ոչ բնակեալ է
 յիս, այսինքն է ի մարմնի իմում, բարի
 ինչ: զի կամքն առաջի կան ինձ, եւ
 19 առնել զբարին՝ ոչ: Զի ոչ եթէ զոր
 կամիմ զբարին առնեմ, այլ զոր ոչն
 20 կամիմ զչարն՝ զայն գործեմ: Ապա եթէ
 զոր ոչն կամիմ՝ զայն առնեմ, ոչ եւս ես
 առնեմ զայն՝ այլ բնակեալ յիս մեղքն:
 21 Եւ արդ՝ գտանեմ զօրէնս այնորիկ՝
 որ կամիցին առնել յիս զբարին. եւ
 22 ինձ՝ չարն առաջի կայ: Հաճեալ եմ
 ընդ օրէնսն Աստուծոյ ըստ ներքին
 23 մարդոյն. Բայց տեսնեմ այլ օրէնս
 յանդամս իմ, զինեալ հակառակ օրի-
 նաց մտաց իմոց, եւ զերեալ զիս օրի-
 24 նօքն մեղաց՝ որ են յանդամս իմ, Այր
 մի տառապեալ եմ ես. ո՞վ ապրեցու-
 25 ցէ զիս ի մարմնոյ աստի մահու: Այլ
 չնորձք Աստուծոյ ի ձեռն Յիսուսի
 Քրիստոսի Տեառն մերոյ:

ԵԿ. Ապա ուրեմն ես ինքնին մտօք
 իմովք ծառայեմ օրինացն Աստուծոյ,
 եւ մարմնով օրինացն մեղաց:

ԳԼ Ը

1 Թէ այդպէս իցէ, ոչ ինչ գատապար-
 տութիւն է այնոցիկ որ ի Քրիստոս
 2 Յիսուս: Զի օրէնք հոգւոյն կենաց
 ի Քրիստոս Յիսուս ազատեցին զիս
 3 յօրինաց մեղացն եւ մահու: Զի որ
 անհնարինն էր օրինացն՝ որով տկա-
 րանայրն՝ մարմնով, Աստուած զՈրդին
 իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ
 մեղաց, եւ վասն մեղաց, եւ գատա-
 4 պարտեաց զմեզս ի մարմնի անդ. Զի
 արգարութիւն օրինացն կատարեսցի
 ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ զնայցեմք,
 5 այլ՝ ըստ հոգւոյն: Զի որք ըստ մարմ-
 նոյն են՝ զմարմնոյն խորհին, եւ որք
 6 ըստ հոգւոյն՝ զհոգւոյն: Զի խորհուրդ

մարմնոյ մահ է, եւ խորհուրդ հոգւոյն՝
 7 կեանք եւ խաղաղութիւն: Քանզի
 խորհուրդ մարմնոյ թշնամութիւն է
 յԱստուած, զի օրինացն Աստուծոյ ոչ
 8 հնազանդի. նա եւ կարէ իսկ ոչ: Զի
 որ մարմնովն են՝ Աստուծոյ հաճոյ լինել
 9 ոչ կարեն: Բայց զուրք ոչ էք մարմնով,
 այլ՝ հոգւով, եթէ իցէ Հոգին Աստու-
 ծոյ ի ձեզ բնակեալ. ապա եթէ որք
 զՀոգին Քրիստոսի ոչ ունի, սա չէ
 10 նորա: Իսկ եթէ Քրիստոս ի ձեզ է,
 ապա մարմին մեռեալ է վասն մեղաց.
 եւ հոգին կենդանի է վասն արգարու-
 11 թեան: Եթէ Հոգի այնորիկ որ յարոյց
 զՅիսուս ի մեռելոց՝ բնակեալ է ի ձեզ,
 ապա եւ որ յարոյցն զՔրիստոս ի մե-
 ռելոց՝ կենդանացուցէ զմահկանացու
 մարմինս ձեր բնակեալ Հոգւովն իւ-
 րով ի ձեզ: ՎԶ

12 Այտուհետեւ, եղբարք, սյարտապան
 եմք ոչ մարմնոյ ըստ մարմնոյ կեալ:
 13 Զի թէ ըստ մարմնոյ՝ կեցէք, մտա-
 նելոց էք. իսկ եթէ Հոգւով զգործս
 14 մարմնոյ սպանանիցէք, կեցցիք: Զի
 որ Հոգւովն Աստուծոյ վարին, նոքա
 15 են որդիք Աստուծոյ: Զի ոչ առէք
 զհոգին ծառայութեան միւսանկամ
 յերկեզ, այլ առէք զհոգին որդեգրու-
 թեան, որով ազազակեմք՝ Սրբա Հայր:
 16 Նոյն ինքն Հոգին վկայէ հոգւոյս մե-
 17 ըում, եթէ եմք որդիք Աստուծոյ: Եւ
 եթէ որդիք, ապա եւ ժառանգք. ժա-
 ռանդք Աստուծոյ, եւ ժառանգակիցք
 Քրիստոսի. եթէ չարչարանացն կցորդ
 լինիմք, եւ փառացն հաղորդ լինելոց
 եմք:

18 Ինձ այսպէս թուի եթէ ոչ են ար-
 ժանի չարչարանք ժամանակիս հան-
 զերձելոց փառացն որ յայտնելոց են
 19 ի մեզ: Զի անկախութիւն արարա-
 ծոց յայտնութեան որդւոյն Աստուծոյ
 20 սպասէ: Զի ընդունայնութեան արա-
 րածքն հնազանդեցան, ոչ իւրեանց
 կամաւ, այլ վասն այնորիկ որ հնա-
 21 զանդեցոյն յուսով, Զի եւ ինքեանք
 իսկ արարածքն սղատանցին ի ծառա-
 յութեանէ ապականութեան յազատու-
 թիւն փառաց որդւոյն Աստուծոյ:
 22 Քանզի զիտեմք եթէ ամենայն արա-
 րածք հեծնեւ եւ երկնն մինչեւ ցայժմ:

1 Յայն, Եւ արդ գտանեմ զօրէնս, զի յորժամ
 կամիմ առնել զբարին, ինձ
 2 Ունչ, Յիսուս, որ ոչ գնան ըստ մարմնոյ,
 այլ ըստ հոգւոյ
 3 կամ, զի տկարանայր

4 Յայն, կեայք

23 Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ մեք իսկ որ զպտուղ Հոգւոյն ունիմք՝ անձամբ յանձինս մեր հեծեմք, որդեգրութեանն ակն կայեալ՝ փրկութեան մարմնոյ մե-

24 րոյ: Զի յուսով ապրեցաք. այլ յոյս տեսանելի չէ յոյս. զի զոր տեսանէ 25 ոք՝ զի՞ եւս յուսայ: Ապա եթէ զոր ոչն տեսանեմք՝ յուսամք, համբերու-

26 թեամք ակն ունիմք: Նոյնպէս եւ Հոգին ի թիկոնս հասանէ տկարու- թեանս մերում. զի զոր կամքն յա- զօթս՝ որպէս արժան իցէ ոչ զիտեմք. այլ ինքնին Հոգին բարեխօս լինի ի

27 հեծութիւնս անմտունչս: Բայց որ քննէն զսիրտս՝ զիտէ զինչ խորհուրդ է Հոգւոյն, զի ըստ Աստուծոյ բարե- իսօսէ վասն սրբոց:

28 Բայց զիտեմք եթէ որոց սիրենն զԱս- տուած՝ յամենայն գործակից լինի ի բարիս՝ որք հրաւիրանաւն կոչեցան:

29 Զի զորս յառաջն ճանաչէր՝ յառաջա- զոյն եւ հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի Որդւոյն իւրոյ. զի եղիցի նա անդրանիկ ի մէջ եղբարց

30 բազմաց: Եւ զորս յառաջադոյնն հրա- լիրեաց՝ զնոսին եւ կոչեաց. եւ զորս կոչեացն՝ զնոսին եւ արդարացոյց. եւ զորս արդարացոյցն՝ զնոսին եւ փա-

31 աւորս արար: Իսկ արդ զի՞նչ ասեմք առ այս. եթէ Աստուած ի մեր կոյս

32 է, ո՞վ իցէ մեր հակառակ: Որ յիւր Որդին ոչ ինայեաց, այլ վասն մեր ա- մենեցուն մասնեաց զնա, զիարդ ոչ նովաւ հանդերձ զամենայն շնորհիցէ

33 մեզ: Ո՞վ իցէ որ մեզադիր լինիցի ընտ- րելոց Աստուծոյ. Աստուած է որ ար-

34 զարացուցանէ իսկ արդ ո՞վ է որ զատապարտ առնիցէ. Քրիստոս Յիս- տուս՝ որ մեռաւն, մանաւանդ թէ յա- րուցեալ իսկ է, եւ է բնդ այմէ Աս- տուծոյ, որ եւ բարեխօս իսկ է վասն

35 մեր: Արդ ո՞վ մեկնեացէ զմեզ ի սի- րոյն Քրիստոսի. նեղութիւն, թէ անձկութիւն, թէ հարածանք, թէ սով, թէ մերկութիւն, թէ վիշտք, թէ

36 սո՛ւր. Որպէս եւ գրեալ է, վասն քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք

37 իբրեւ զոչխար ի սպանդ: Այլ յայսմ ամենայնի առաւել յաղթեմք նովաւ

38 որ սիրեացն զմեզ: Քանզի հաստատեալ

եմ եթէ ոչ մահ եւ ոչ կեանք եւ ոչ հրեշտակք եւ ոչ իշխանութիւնք, եւ ոչ որ կանս եւ ոչ հանդերձեալքն, եւ ոչ զօրութիւնք, եւ ոչ բարձրութիւն

39 եւ ոչ խորութիւն, եւ ոչ այլ ինչ արա- րած կարէ մեկնել զմեզ ի սիրոյ անտի Աստուծոյ, որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր:

ԳԼ Թ

1 Ե՛ր. Ստուգութեամբ ասեմ ի Քրիս- տոս եւ ոչ ասեմ, վկայեն ինձ միտք

2 իմ ի Հոգի Սուրբ, Զի տրտմութիւն է ինձ յոյժ եւ անպակաս ցաւք սրտի

3 իմոյ: Զի ուխտիւք խնդրէի ես իսկ ինքնին նդով լինել ի Քրիստոսէ վասն եղբարց իմոց եւ ազգականաց ըստ

4 մարմնոյ, Որ են Խօրայելացիք. որոց որդեգրութիւնն եւ փառքն եւ կտա- կարանքն եւ օրէնսդրութիւնն եւ պաշ-

5 տունն եւ աւետիքն. Որոց հարքն, յո- րոց եւ Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ

6 յաւիտեանս: Ամէն: Ոչինչ է մարթ եթէ անկամ լինիցի բանն Աստուծոյ, զի ոչ ամենեքեան որ յիօրայելէն են,

7 նոքա Խօրայելեանք իցեն. Եւ ոչ որ զաւակն Աքրահամու են՝ ամենեքեան որդիք իցեն: այլ Խաճակաւ կոչեացի

8 քեզ զաւակ: Այսինքն թէ ոչ որ որդիք մարմնոյն են՝ են որդիք Աստուծոյ, այլ որդիք աւետեացն համարին ի զաւակ:

9 Քանզի աւետեաց իսկ է բանս այս, թէ ի ժամանակի յայսմիկ եկից, եւ եղևից՝

10 որդի Սառայի: Եւ ոչ այնչափ միայն այլ ի Հոբեբեկայ, ի միոջէ անկողնոյ Ի-

11 սահակայ հօր մերոյ: Զի մինչչեւ ծնեալ էին, եւ մինչչեւ բարի ինչ կամ չար զործեալ էր, (զի ըստ ընտրութեանն յառաջադրութիւնն Աստուծոյ հաստա-

12 տեցի, Ոչ ի գործոց, այլ յայնմանէ որ 13 կոչեացն,) ասացաւ նմա թէ, Երէցն կրտսերոյն ծառայեացէ. որպէս եւ գրեալ է թէ, ԶՅակովբ սիրեցի, եւ զնասաւ ատեցի:

14 Իսկ արդ զի՞նչ ասեմք. միթէ անի- րաւութիւն իցէ յԱստուծոյ. քաւ լիցի

15 Զի Մովսիսի ասէ, Ոգորմեցայց որում ոգորմեցայցն, եւ զթացայց յոր զթա-

16 ցայցն: Ապա ոչ ըստ այնմ ինչ է որ կամիցին, եւ ոչ ըստ այնմ՝ որ ընթա-

19124, ամենայն ինչ

Նայցէ, այլ ըստ Աստուծոյ որ ողորմի:

17 ԵՁ. Քանզի սաէ գիր ցՓարաւոն թէ, վասն այնորիկ գրգեցիլ գըեզ, զի ի քեզ ցուցիլ զգորութիւն իմ, եւ պատմեցի առնուն իմ ընդ ամենայն երկիր:

18 Ապա ուրեմն ում կամի ողորմի, եւ

19 ¹ում կամի խտտանայ: Իսկ արդ ասիցես թէ, Մեզ եւս զի՞ զնէ, զի կա-

20 մաց նորա ²ոչ ոք կայ՝ հակառակ: Իսկ արդ զու ³մի ես, մարդ, որ Յպատասխանի տաս Աստուծոյ. միթէ ասիցէ ստեղծուածն ցտեղծիչն թէ Ընդէր

21 այդպէս արարեր զիս: Եթէ ո՞չ ունիցի իշխանութիւն բրուան կաւոյն, ի նմին զանգուածոյ առնել անօթ՝ զունն

22 ի պատիւ եւ զունն յանարգանս: Ապա եթէ կամէր Աստուած ցուցանել զբարկութիւն, եւ յայտնի առնել զգորութիւն իւր, ⁴զոր համբերն՝ բազում երկայնատութեամբ անօթոցն բարկութեան պատրաստելոցն ի կորուստ: Չի յայտնի արասցէ զմեծութիւն փառաց յարոց ի վերայ անօթոցն ողորմութեան, զոր ⁵պատրաստեաց ի փառս:

24 Չորս եւ կոչեաց զմեզ, ոչ միայն ի

25 Հրէիդ, այլ եւ ի հեթանոսաց: Որպէս եւ յովսէէ սաէ, Կոչեցի զոր ոչ ժողովուրդն իմ՝ ժողովուրդ ինձ, եւ

26 զչսրեցեալն՝ սիրեցեալ: Եւ եղիյի ի ստեղծել յորում ասացաւ նոցա թէ, Ոչ ժողովուրդ իմ զուք, անդ կոչեացին նոքա որդիք Աստուծոյ կենդանւոյ:

27 Եսայի ազգակէ վասն Իսրայելի, Եթէ իցէ թիւ որդւոցն Իսրայելի իբրեւ զաւազ ծովու՝ ճակաւ ինչ մնացորդք

28 մնացեն: Չի բան մի հակիրճ եւ համառոտ արդարութեամբ, զբանն հակիրճ արասցէ Տէր ի վերայ երկրի:

29 Եւ որպէս սաէ Եսայի, Եթէ ոչ Տեառն զօրութեանց թողեալ էր մեզ զաւակ, իբրեւ զՍողոմ լինէաք եւ Գոմորոյ նմանէաք:

30 ԶԿ. Իսկ արդ զի՞նչ ասիցեմք. զի հեթանոսք որ ոչ երթային զհետ արդարութեան՝ հասին արդարութեան, այնմ արդարութեան՝ որ ի հաւատոց անտի:

31 Այլ Իսրայէլ երթայր զհետ օրինացն արդարութեան, եւ յօրէնս արդարութեանն ոչ ժամանեաց: Ընդէր՝ զի ոչ ի հաւատոց այլ իբրեւ ի գործոց օրինաց. քանզի զթեցին նոքա առ վիսին

33 զայթակղութեան. Որպէս եւ գրեալ է, Ահաւասիկ զնեմ ի Միովն քար վայթակղութեան եւ վէմ գորուման, եւ ամենայն որ հաւատասցէ ի նա մի՛ աւժեացէ:

ԳԼ Ժ

1 Եղբարք, իմ կամք սրտի եւ աղօթք առ Աստուած վասն Նոցա են ի փրկութիւն:

2 Քիւն, Քանզի վկայեմ նոցա՝ թէ զնախանձ Աստուծոյ ունին, այլ՝ ոչ զիտութեամբ: Չի տգէտ են Աստուծոյ արդարութեանն, եւ զիւրեանցն խնդրեն կացուցանել, զի արդարութեանն

4 Աստուծոյ ոչ հնազանդեցան: Քանզի կատարած օրինացն Քրիստոս է յարդարութիւն ամենայն հաւատացորոց:

5 ԶԿ. Մովսէս զրէ զարդարութիւնն որ յօրինաց անտի է, Եթէ արասցէ

6 զայն մարդ, կեցցէ նովին: Իսկ զհաւատոցն արդարութեանէ այսպէս սաէ, Մի՛ ասիցես ի սրտի քում, Ո՞վ երանիցէ յերկինս, այսինքն է զՔրիստոս

7 Իշուցանել. Կամ, Ո՞վ իջանիցէ յանդունդս, այսինքն է զՔրիստոս հանել

8 ի մեռելոց: Այլ զի՞նչ սաէ ճգիր. Մերձ է ջբանն, ի բերան քո եւ ի սրտի քում է, այսինքն է բանն հաւատոց զոր քարոզեմք: Չի եթէ խոստովանեցես բերանով քով Տէր զՅիսուս, եւ հաւատասցես ի սրտի քում թէ Աստուած

10 յարոց զնա ի մեռելոց, կեցցես: Չի սրտիւ հաւատայք յարդարութիւն, եւ բերանով խոստովանիք ի փրկութիւն

11 Քանզի սաէ գիր, Ամենայն որ հաւատասցէ ի նա՝ մի՛ ամաչեացէ: Չի ոչ զոյ խտիր Հրէի եւ հեթանոսի. քանզի նոյն Տէր է ամենեցուն, բաւական յամենայն ոչք կարդան առ նա: Չի ամենայն որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ:

14 Իսկ զիմրդ կարդասցեն յոր ոչն հաւատացին. կամ զիմրդ հաւատասցեն

¹Յ.ն., զոր կամի խտտացուցանէ
²Յ.ն., ո՞ եկաց
³Յ.ն., հակառակ պատասխանի
⁴Յ.ն., համբեր
⁵Յ.ն., յառաջադրին պատրաստեաց
⁶Յ.ն., մնացորդն ապրեցի

⁷Ո՞վն, Իսրայելի
⁸Յ.ն., զմիւս

որում ոչն լուան . կամ զիա՛րդ լուի-
 15 ցեն առանց ուրուք քարոզելոյ . կամ
 զիա՛րդ քարոզեսցեն , եթէ ոչ առաքես-
 ցին . որպէս եւ զրեալ է , Լբրեւ զի՛
 զեղեցիկ են ոտք աւետարանչացն խա-
 զաղութեան եւ աւետարանչացն բա-
 16 րութեան : Այլ ոչ ամենեքեան հնա-
 զանդ եղեն աւետարանին . Եսայի ա-
 զաղակէ , Տէր , ո՞ հաւատաց լրոյ մե-
 17 բում : Ապա ուրեմն հաւատք ի լսելոյ
 են , եւ լուր ի բանէն ¹ Բրիտտոսի : ՎՋ
 18 Այլ ասեմ , Միթէ ո՞չ լուան . մա-
 նաւանդ զի Ընդ ամենայն երկիր ել
 բարբառ նոցա , եւ ընդ ծաղո տիեզե-
 19 յրաց՝ խօսք նոցա : Այլ ասեմ , Միթէ
 Իսրայէլ ո՞չ զիտաց . նախ Մոխէս ասէ ,
 Ես նախանձեցուցից զձեզ ոչինչ ժո-
 զովորդեամբ , եւ ազգու անմտաւ զկծե-
 20 ցուցից զձեզ : Բայց Եսայի համարձակի
 իսկ եւ ասէ , Գտայ այնոցիկ որ զիս
 ոչ խնդրէին , յայտնի եղէ այնոցիկ որ
 21 զինէն ոչ հարցանէին : Այլ առ Իսրա-
 յէլ ասէ , Զօր ամենայն ձկեցի զձեռս
 իմ առ ժողովուրդ անհաւան եւ հա-
 կառակող :

ԳԼ ԺԱ

1 ԶԶ . Իսկ արդ ասեմ , Միթէ մերժեա՞ց
 Աստուած զժողովուրդ իւր . քաւ լիցի-
 քանդի եւ ես Իսրայելացի եմ , ի դա-
 ւակէ Աբրահամու , յազգէ Բենիամնի :
 2 Ոչ մերժեաց Աստուած զժողովուրդ
 իւր զոր յառաջն ծանեաւ . թէ ո՞չ զի-
 տէք յեղիա զի՛նչ ասէ զիր , ո՛րպէս
 ամբաստան լինի Աստուծոյ զԻսրայելէ ,
 3 Տէր , զմարգարէս քո կոտորեցին եւ
 զսեզանս քո կործանեցին . ես մնացի
 4 միայն , եւ խնդրեն զանձն իմ : Այլ
 զի՛նչ ասէ նմա պատասխանին . Թողի
 ինձ , ասէ , եւթն հազար այր , որ ոչ
 5 կրկնեցին ծունր Բահազու : Նոյնպէս
 եւ յայսմ ժամանակի մնացորդք բստ
 6 ընտրութեան շնորհացն եղեն : Իսկ
 եթէ շնորհօք , ոչ եւս ի դործոց . ապա
 թէ ոչ՝ շնորհքն ոչ եւս շնորհք լինին :²
 7 Իսկ արդ զոր խնդրէին Իսրայէլ , այնմ
 ոչ եհառ . բայց ընտրութիւնն եհաս ,

8 եւ այլքն կուրացան , (Որպէս գրեալ է ,
 Ետ նոցա Աստուած հոգի յիմարու-
 թեան , աչ՝ որովք ոչ տեսանիցեն , եւ
 ականջս՝ որովք ոչ լսիցեն) մինչեւ
 9 ցայսօր ժամանակի : Եւ Դաւիթ ասէ ,
 Եղիցին սեզանք նոցա յորոգայթ եւ
 յորս եւ ի զայթակղութիւն եւ ի հա-
 10 տուցումն նոցին : Խաւարեսցին աչք
 նոցա զի մի՛ տեսցեն , եւ զթիկունս
 11 նոցա հանապազ կորացո : Իսկ արդ
 ասեմ , Միթէ վասն այնորիկ յանցեան
 զի կործանեցին . քաւ լիցի . այլ նոցա
 յանցանօքն փրկութիւն հեթանոսաց ,
 12 զի նախանձ արկցէ նոցա : Իսկ եթէ
 յանցանքն նոցա մեծութիւն աշխարհի ,
 եւ պարտութիւն նոցա մեծութիւն հե-
 թանոսաց , ո՛րչափ եւս առաւել լրու-
 թիւն նոցա :

13 ԷԿ . Այլ ձեզ ասեմ հեթանոսաց , ցոր-
 քան ժամանակս իցեմ հեթանոսաց ա-
 ռաքեալ , զպաշտօնն իմ փառաւոր առ-
 14 նեմ , Զի թերեւս ³ նախանձ արկից
 նոցա մարմնով իմով՝ եւ ապրեցուցից
 15 զոմանս ի նոցանէ : Զի եթէ մերժումն
 նոցա հաշտութիւն աշխարհի է , իսկ
 ընդունելութիւնն զի՛նչ իցէ , եթէ ոչ՝
 16 կենդանութիւն ի մեռելոց : Իսկ եթէ
 սկիզբն սուրբ է , եւ զանգուածն . եւ
 17 եթէ արմատն՝ ապա եւ ոստքն : Եթէ
 յոստոց անտի ոմանք փշրեցան , եւ գու
 որ ձիթենիով վայրենի էիր՝ պատուաս-
 տեցար ի նոսա , եւ բաժնորդ եղեր
 արմատոյն եւ պարարտութեան ձի-
 18 թենուցն , Մի՛ պարծիր առ ոստովքն .
 ապա եթէ պարծիցիս , ոչ եթէ դու
 զարմատն ի վեր ունիս , այլ՝ արմատն
 19 զքեզ : Իսկ արդ ասիցես , Ոստքն փըշ-
 20 րեցան , զի ես պատուաստեցայց : Բար-
 ւոք է , անհաւատութեամբն փշրեցան ,
 եւ գու հաւատովք հաստաւոցն . մի՛
 21 հպարտանար , այլ երկիր : Զի եթէ Աս-
 տուած ի բուն ոստան ոչ խնայեաց ,
 զուցէ երբեք եւ ի քեզ ոչ խնայեսցէ :
 22 Արդ տես զքաղցրութիւն եւ զսաստ-
 կութիւնն Աստուծոյ . ի վերայ կործա-
 նելոցն սաստկութիւն , եւ ի վերայ քո՝
 քաղցրութիւն ⁴ Աստուծոյ , եթէ կայ-
 ցես ի նմին քաղցրութեան . ապա թէ
 23 ոչ՝ եւ դու կոծոպեսցիս : Եւ նոքա

¹ Դ՛ւն , Աստուծոյ
² Ո՛րչա՞ յաւելան , իսկ եթէ ի գործոց , ոչ եւս
 են շնորհք . ապա թէ ոչ՝ գործն ոչ եւս գործ
 լինի :

³ Գ՛նչ , նախանձեցուցից զմարմն իմ
⁴ Գ՛նչն պատե

եթէ ոչ ի նմին անհաւատութեանն կայցեն, պատուաստեցին. զի կարող է Սատուած միւսանդամ պատուաստել
 24 դնոսա : Զի եթէ զու ի բուն ի վայրենի ձիթենուոյ անտի հատար, եւ յանրունքս ի բարի ձիթենուոջն պատուաստեցար, որչափ եւս ստուել նորա սրբունքն իսկ են՝ պատուաստեցին յիւրեանց ձիթենուոջն :

25 Ե՛ճ. Ոչ կամիմ, եղբարք, եթէ տղէսք իցէք խորհրդոյս այսմիկ, զի մի՛ յանձինս ձեր իցէք իմաստունք. զի կու՝ ձութիւն փոքր ի չափէ եղև Իսրայելի, մինչև յրումն հեթանոսաց մտցէ,
 26 եւ ապա ամենայն Իսրայէլ կեցցէ. որպէս եւ գրեալ է, Եկեացէ ի Սիոնէ՛ Փրկիչ, եւ զարձուցցէ դամպարշտու
 27 թիւնան ի Յակովբայ : Եւ այս նոցա որ յինէն ուխտ, յորժամ բարձից դմեզս
 28 նոցա : Ըստ աւետարանիս թչնամիք են փանձեր, ըստ ընտրութեանն՝ սի-
 29 րելիք վասն հարցն : Քանզի անղեզմ են շնորհքն եւ կոչումն Սատուոյ :
 30 Զի որպէս եւ զուք երբեմն ապստամբք էիք յՍատուծոյ, եւ արդ ողորմութիւն գտէք առ նոցա ապստամբութեամբն,
 31 Նոյնպէս եւ նորա այժմ ապստամբք չեղեն առ ձերով ողորմութեամբդ, զի
 32 եւ՝ նորա ողորմութիւն գտցին : Քանզի արդև Սատուած դամենեօն յանհաւանութիւն, զի ամենեցուն ողորմացի :

33 Ո՛վ խորք մեծութեան եւ իմաստութեան եւ զիտութեանն Սատուծոյ, որպէս առանց քննելոյ են գատասանք նորա, եւ առանց գննելոյ են
 34 ճանապարհք նորա : Զի ո՛վ զիտաց զմխտ Տեառն, կամ ո՛վ խորհրդակից
 35 եղև նմա. Կամ ո՛վ ետ նմա փոխ,
 36 եւ ամուսցու փոխարէն ի նմանէ : Զի ի նմանէ եւ նովաւ եւ ի նոյն ամենայն. նմա փառք յաւիտեանս : Ամէն :

ԳԼ. ԺԲ

1 Աղաչեմ զձեզ, եղբարք, զթու՝ թեամբքն Սատուծոյ՝ պատարաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Սատուծոյ, զիօսուն
 2 պաշտօնդ ձեր. Եւ մի՛ կերպարանիք

կերպարանօք այխարհիս այսորիկ, այլ նորոգեցարուք ի նորոգութիւն մտաց ձերոց, առ ի քննել ձեզ զլաւն, եւ՝
 եթէ զինչ են կամքն Սատուծոյ՝ բարին եւ հաճոյն եւ կատարեալն :

3 Զայս ասեմ շնորհօքն Սատուծոյ որ տուեալ են ինձ, ամենայնի որ է ի ձեզ, մի՛ առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ, այլ խորհել ի զգաստանալ իւրաքանչիւր՝ որպէս եւ բաժանեաց
 4 Սատուած չափ հաւատոց : Որպէս ի միում մարմնի անդամս բազումս ունիմք, եւ անդամքն ամենայն ոչ զնոյն
 5 զործ ունին. Նոյնպէս եւ բազումքս մի մարմին եմք ի Քրիստոս, այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք :
 6 Բայց ունիմք մեք շնորհս ըստ շնորհացն, որ տուեալ են մեզ ազգս ազգս. եթէ մարդարէութիւն՝ բաս չափոյն
 7 հաւատոց, եթէ պաշտօն՝ ըստ պաշտամանն, եթէ որ ուսուցանէն՝ ըստ
 8 վարդապետութեանն, Եթէ որ մխիթարէն՝ ըստ մխիթարութեանն. որ առասն է՝ զուարթութեամբ, որ վերակացուն է՝ փութով, որ ողորմին՝
 9 յըջմտութեամբ : Սէր առանց կեղծաւորութեան, ասեալ զչար, զհեա երթալ բարեաց : Յեղբարսրութեան առ միմեանս զմեզք. ի պատիւ զմի-
 11 մեամբք ելանել. Ի փոյթ՝ մի՛ վնհւերօք. հողով եռացէք. Տեառն ծառայեցէք. Յուսով խնդացէք. նեղութեան համբերեցէք. աղօթից ստէպ
 13 կացէք. Ի պէտս սրբոց հազորդեցարուք. զհիւրասիրութեան զհեա երթալք. Օրհնեցէք զհալածիչս ձեր, օրհնեցէք եւ մի՛ անխմանէք. Խնդալ ընդ խնդացողս, լալ ընդ լացողս : Զնոյն միմեանց խորհիջիք. մի՛ ամպարաւանէք, այլ ընդ խոնարհս զիջանիցիք. մի՛ լինիք իմաստունք յանձինս ձեր :
 17 Մի՛ ումեք չարի չար հատուցանէք. խորհեցարուք զբարիս առաջի ամենայն մարդկան, Եթէ հնար ինչ իցէ ձեզ, ընդ ամենայն մարդկան զխաղա-
 19 ցութիւն կալլիք : Մի՛ դոմնձանց վրէժ խնդրէք, սիրելիք, այլ սուր տեղի բարկութեան. քանզի գրեալ է, Իմ է վրէժ խնդրութիւն, եւ ես հատուցից
 20 ստէ Տէր : Այլ եթէ քաղցեալ իցէ

1 Գ-նն, եղեն, զի առ ձերով ողորմութեամբդ և

2 Ի բուսմա պոխտի

Թշնամին քո, հաց տուր նմա, եւ եթէ
 ծարաւի՝ ջուր տուր նմա. զայս ա-
 րարեալ՝ կայծակուն հոյ կուտեսցես
 21 Ի գլուխ նորա: Մի՛ յազթիր ի չարէ,
 այլ յազթեա բարեաւն չարին:

ԳԼ ԺԳ

4 Ամենայն անձն որ ընդ իշխանու-
 թեամբ իցէ՝ ի հնազանդութեան կաց-
 ցէ. քանզի ոչ ուստեք է իշխանու-
 թիւն, եթէ ոչ յԱստուծոյ. եւ որ ենն՝
 2 յԱստուծոյ կարգեալ են: Այսուհետեւ
 որ հակառակ կայ իշխանութեանն՝ Աս-
 տուծոյ հրամանին հակառակ կայ, եւ
 որք հակառակն կան՝ անձանց գատաս-
 3 տանս ընդունին: Զի իշխանքն ոչ են
 յերկեւզ բարեաց գործոց, այլ՝ չարաց.
 կամիս չերկնչել յիշխանութենէ անտի-
 զրարիս գործեա, եւ ընկացիս գոյու-
 4 թիւն ի նմանէ. Զի Աստուծոյ պաշ-
 տօնեայ է քեզ ի բարիս. ապա եթէ
 չար գործիցես, երկիր. զի ոչ եթէ
 վարապար ածեալ է սուսեր ընդ մէջ.
 Աստուծոյ սպասաւոր է վրէժխնդիր ի
 բարկութիւն այնմ՝ որ զչարն գործի-
 5 ցէ: Վասն որոյ հարկ է հնազանդ լի-
 նել՝ ոչ միայն վասն բարկութեանն,
 6 այլ եւ վասն խղճի մտացն: Վասն այ-
 նորիկ եւ հարկի հարկանէք, զի Աս-
 տուծոյ սպասաւորք են՝ ի նոյն կան-
 7 խեայք: Արդ հատուցէք իւրաքանչիւր
 զպարտս. որում զհարկ՝ զհարկն, ու-
 բում զմաքս՝ զմաքսն, որում զերկեւզ՝
 զերկեւզն, որում զպատիւ՝ զպատիւն:
 8 Եւ մի՛ ումեք պարտապան գտանի-
 ցիք. բայց զմիմեանս սիրելոյ. զի որ
 9 սիրէ զընկերն՝ զօրէնսն կատարէ. ԶՄի՛
 չնայցեան, եւ Մի՛ սպանանիցես, եւ
 Մի՛ զովանայցես, եւ Մի՛ սուտ վկայի-
 ցես, եւ Մի՛ գանկանայցես, եւ եթէ
 այլ ինչ սպտուրբան է՝ յայն բան բո-
 վանդակի, եթէ Սիրեսցես զընկեր քո
 10 Իրբեւ զանձն քո: Սէր ընկերի իւրում
 չար ոչ անէ. լրումն օրինացն սէր է:
 11 Եւ զայս զիտասջիք վասն ժամանա-
 կիս, զի արդ ժամ իսկ է մեզ ի քնոյ
 զարթնուլ. զի այժմ մերձ է մեզ վեր-
 կութիւն քան յորժամ հաւատացաքն.
 12 Գիշերն մերժեցաւ եւ տիւն մերձեցաւ.
 Ի բաց արասցուք այսուհետեւ զգործսն
 խաւարի, եւ զգեցցուք զգէնն լուսոյ:

13 Իրբեւ ի տուընջեան զգաստացեալք
 չըջեցուք, մի՛ անառակութեամբք եւ
 արբեցութեամբք, եւ մի՛ խառն ան-
 կողմովք եւ պղծութեամբք, եւ մի՛ նա-
 14 խանձու եւ հակառակութեամբ. Այլ
 զգեցարուք զՏէր Յիսուս Քրիստոս,
 եւ մարմնոյ խնամ մի՛ տանիք ի ցան-
 կութիւնս:

ԳԼ ԺԴ

4 Այլ զակարացեալն ի հաւատք ընկա-
 արուք՝ մի՛ խղճիւ երկմտութեանց:
 2 Ոմն հաւատայ ուտիլ զամենայն, եւ
 3 որ հիւանդն է՝ բանջար կերիցէ: Որ
 ուտէն, զայն որ ոչն ուտէ՝ մի՛ անգոս-
 նեսցէ, եւ որ ոչն ուտէ, զայն որ ու-
 տէն՝ մի՛ գատեոցի. քանզի Աստուած
 4 քնա ընկալաւ: Դու ո՞վ ես որ գափս
 զայլոյ ծառայ. իւրում Տեառն կայ
 կամ անկանի. բայց կայցցէ, զի կարող
 5 է՝ Տէրն հատառել զնա, Ոմն օպահէ
 որ ըստ օրէ եւ ոմն օպահէ զօրհանա-
 պալ. իւրաքանչիւր ոք զիւր միտս
 6 հաճեսցէ: Որ խորհի զօրն՝ Տեառն
 խորհի, եւ որ ոչն խորհի զօրն՝ Տեառն
 չխորհի. եւ որ ուտէ՝ Տեառն ուտէ,
 եւ զոհանայ զԱստուծոյ. եւ որ ոչն
 ուտէ՝ Տեառն չուտէ, եւ զոհանայ զԱս-
 7 տուծոյ: Զի ոչ ոք ի մէնջ անձամբ
 8 կեցայ, եւ ոչ անձամբ մեռանի: Եթէ
 կեամք, Տեառն կեամք, եւ եթէ մե-
 ռանիմք, Տեառն մեռանիմք. եւ արդ
 եթէ՝ կեամք եւ եթէ՝ մեռանիմք,
 9 Տեառն եմք: Քանզի ի նոյն իսկ եւ
 Քրիստոս մեռաւ եւ կեցաց, զի մեռե-
 10 լոց եւ կենդանեաց առ հասարակ տի-
 կամ ընդէր անդոսիս զեղբայր քո,
 քանզի ամենքին կայոց եմք առաջի
 11 աստիին Քրիստոսի: Զի գրեալ է,
 կենդանի եմ ես, ասէ Տէր, զի ինձ
 կրկնացի ամենայն ծուր, եւ ամենայն
 12 լեզու խոստովան լիցի Աստուծոյ: Ապա
 ուրեմն իւրաքանչիւր ոք ի մէնջ ընդ
 13 անձին համարս տացէ Աստուծոյ: Այս-
 սուհետեւ մի՛ զմիմեանս գատեցուք,
 այլ առաւել զայնս զիւր ի մտի՝ չդնել
 14 զայթակղութիւն եղբօրն: Զայս զի-

1Ուտէ, Աստուած
 2Յ-ն, դատի
 3Բ-ւ-ւ, խոչ եւ գայթակղութիւն

տեմ եւ հաստատեալ եմ ի Քրիստոս Յիսուս, զի ոչինչ է պիղծ նովա, բայց այնմ որ համարիցի ոք ինչ պիղծ՝
 15 նմա է պիղծ: Զի եթէ վասն կերակրոյ եղբայրն քո սրամի, ոչ եւս սիրով դնայեր. մի՛ կերակրովն քով գնա կրուսաներ, վասն որոյ Քրիստոսն մե-
 16 ռաւ: Մի՛ հայնոյեացի բարին՝ ձեր:
 17 Զի ոչ է արքայութիւնն Աստուծոյ կերակուր եւ ըմպելի, այլ՝ արգարութիւն եւ խաղաղութիւն եւ խնդութիւն ի Հոգին Սուրբ: Զի որ յայտմ
 18 ծառայէ Քրիստոսի, հաճոյ է Աստու-
 19 ծոյ, եւ ընտիր՝ մարգկան: Ապա ստուհեաեւ զհետ երթիցուք զխաղա-
 20 ղութեան եւ զչինութեան որ առ մի-
 21 մասն: Մի՛ վասն կերակրոյ քակեր զործ Աստուծոյ. ամենայն ինչ սուրբ է, սյլ չար այնմ մարդոյ է որ ՚խղճիւն
 21 ուտիցէ: Լաւ է ոչ ուտել միս եւ ոչ ըմպել զինի, եւ ոչ որով եղբայրն քո
 22 զայթակղի կամ զթէ կամ տկարանայ:
 22 Դու այսպէն հաւատս ունիս, կայ առանձինն առաջի Աստուծոյ. երանի որ ոչ զատիցի զանձն որով ՚զընկերն
 23 փորձիցէ: Բայց որ խղճէն, թէսլէտ եւ ուտիցէ, գատապարտեալ է, զի ոչ
 24 ըստ հաւատոյ է, զի ամենայն ինչ որ ոչ ի հաւատոյ է՝ մեղք են: ՅԱյլ այնմ որ կարողն է հաստատել զձեզ ըստ ա-
 25 լետարանի իմում եւ ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյն ժամանակօրն յայ-
 25 լիսեմից լռեցելոյ, Եւ յայտնելոյ այմ-
 26 միկ ի ձեռն զրոց մարդարէականաց ըստ հրամանի մշտնջևնաւորին Աստուծոյ ի հնազանդութիւն հաւատոյ,
 26 յամենայն հեթանոսս ծանուցելոյ, Միայնոյ իմաստնոյն Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւերտանաս: Ամէն:”

ԳԼ. ԺԵ

1 ԷԳ. Պարտ է մեզ որ կարողս եմք՝ զտկարութիւն տկարացն բառնալ, եւ
 2 մի՛ անձանց եւեթ հաճոյ լինել, Այլ

իւրաքանչիւր ոք ի մէնջ ընկերին հաճոյ լիցի ի բարիս փասն շինութեան:
 3 Քանզի եւ Քրիստոս ոչ եթէ անձին հաճոյ եղև, այլ սրպէս եւ զրեալ է, նախատինք նախաաչաց քոց անկան ի
 4 վերայ իմ: Բայց որ ինչ գրեցան՝ ի մեր վարդապետութիւն գրեցաւ, զի համբերութեամբ եւ մխիթարութեամբ
 5 գրոց զյոյսն ընկալցուք: Այլ Աստուած համբերութեան եւ ՚ամենայն մխիթարութեան՝ սացէ ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս ըստ Յիսուսի Քրիստո-
 6 սի: Զի միաբանութեամբ ի մի բերան փառաւոր աննիցէք զԱստուած եւ զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
 7 տոսի: Վասն որոյ ընկալարուք զմիմեանս, սրպէս եւ Քրիստոս ընկալաւ ՚զձեզ ի փառս Աստուծոյ:
 8 Այլ ասեմ թէ ՚Քրիստոսի սպասաւոր թրփատութեանն լինել վասն ճշմարտութեանն Աստուծոյ էր, առ ի հաստատուն աննելոյ զաւետիս հարցն:
 9 Այլ հեթանոսք վասն ողորմութեան փառաւոր աննեն զԱստուած. սրպէս եւ զրեալ է, Վասն այսորիկ գոհացոյց զքէն ի հեթանոսս, եւ անուսն քում
 10 սաղմոս ասացից: Եւ գարձեալ ասէ թէ՝ Ուրախ լերուք, հեթանոսք, ընդ ժո-
 11 զովրդեան նորա: Եւ գարձեալ թէ՝ Օրհնեցէք, ամենայն հեթանոսք, զՏէր, եւ զովեցէք զնա, ամենայն ժողովուրդք:
 12 Եւ գարձեալ Եսայի ասէ, Եղիցի արաման Յեսսեայ, եւ որ կանգնելոյն է իշխան հեթանոսս, ի նա հեթանոսք
 13 յուսասցին: Այլ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առուելուլ ձեզ յուսով զորութեամբ Հոգոյն Սրբոյ:
 14 ԷԳ. Հաստատեալ եմ եւ ես ինքնին, եղբարք իմ, վասն ձեր, զի եւ զուք լի էք բարութեամբ, լի էք ամենայն գիտութեամբ, կարող էք եւ զմիմեանս
 15 խրատել: Այլ համարձակադոյս գրեցի առ ձեզ, ՚կարարք, փոքր ի շատէ, իբրեւ յիշեցուցանելով ձեզ վասն չնորհացն որ տուեալ են ինձ Աստուծոյ:
 16 Լինել ինձ սպասաւոր Յիսուսի Քրիստոսի ի հեթանոսս, ըզձակերաս աննել զաւետարանն Աստուծոյ, զի եղիցի

1 Գռն, ի գայթակղութիւն
 2 Ի ցուէն գախտէ
 3 Զայս հարստած սանն սանն ասք փոյն, բազումս է Կարսածէ ժՁ քիւնն է-էթ. Էս սակատ, էբբեւ զէբն, ե՛ սար ե՛ անդ:

4 Ունն, զմեզ
 5 Ունն, Յիսուսի Քրիստոսի
 6 Ի բազումս գախտէ

պատարազն հեթանոսաց ընդունելի՝
 17 սրբեալ Հոգւոջն Սրբով: Ունիմ այ-
 սուհեանեւ սլարծանս ի Քրիստոս Յի-
 18 սուս առ Աստուած: Քանզի ոչ իշխեմ
 խօսել ինչ զոր ոչ զործեաց Քրիստոս
 ինեւ ի հնազանդութիւն հեթանոսաց
 19 բանիւք եւ արդեամբք, Չորութեամբ
 նշանաց եւ արուեստից, զորութեամբ
 Հոգւոյն՝ Սրբոյ, որպէս ինձ յերուսա-
 զմէ եւ շուրջ մինչեւ ի կողմանս Լիւ-
 ըրկացոց լնուլ զաւետարանն Քրիս-
 20 տոսի: Այնպէս առատացեալ յաւետա-
 րանել, ոչ ուր անուանեցաւ Քրիստոս,
 զի մի՛ իբրեւ յայց հիման վերայ չի-
 նիցեմ, այլ որպէս եւ գրեալ է թէ,
 21 Որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տես-
 ցին, եւ որոց ոչ իցէ լուեալ՝ ի միտ
 22 առցեն: Վասն որոյ շատ խափանեցայ
 23 զալ առ ձեզ: Բայց արդ ոչ եւս զոյ
 ինձ տեղի ի կողմանս յայտոսիկ, եւ
 անձուկ յոյժ ունիմ ի բազում ամաց
 24 զալ առ ձեզ, Յորժամ անցանիցեմ ի
 Սպանիա, ահն ունիմ յանցանելն առ
 նոսա՝ տեսանել զձեզ, եւ ի ձէնջ յու-
 զարկել անգր, եթէ նախ իսկ փոքր
 25 ի շատէ՛ ձեւք լցայց: Բայց այժմ եր-
 թամ յերուսաղէմ պաշտել զսուրբն:
 26 Քանզի հաճոյ թուեցաւ Մակեդոնա-
 ցւոցն եւ Աքայեցւոցն հաղորդութիւն
 ինչ առնել ընդ աղքատս սրբոցն որ
 27 ենն յերուսաղէմ: Հաճոյ թուեցաւ,
 քանզի եւ պարտապան իսկ են նոցա.
 զի եթէ հոգեւորացն նոցա հազորդ եւ
 զեն հեթանոսք, պարտին եւ մարմնա-
 28ւորացն կցորդ լինել: Արդ զայս կա-
 տարեալ եւ կնքեալ զպտուղ նոցա,
 29 անցից առ ձեւք ի Սպանիա: Չայս զի-
 տեմ, զի ի զայն իմում առ ձեզ՝ լրու-
 թեամբ օրհնութեան՝ շաւետարանին
 Քրիստոսի եկից:
 30 Է՛՛՛: Ազայնմ զձեզ, եղբարք, ի ձեռն
 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
 եւ սիրով Հոգւոյն, պատերազմակից
 լինել ինձ յազօթս վասն իմ առ Աս-
 31 տուած: Չի ասորցայց յայտատամ-
 բացն որ ի Հրէաստանի են. եւ պաշ-
 տօնն իմ որ յերուսաղէմ՝ ընդունելի
 32 լիցի սրբոցն: Չի խնդութեամբ եկեալ
 առ ձեզ ի կամս Աստուծոյ, հանգեայց

33 ընդ ձեզ: Եւ Աստուած՝ խաղաղու-
 թեան եղիցի ընդ ձեզ ամենեւեան:
 Ամէն:

ԳԼ ԺԶ

4 Յանձն առնեմ ձեզ զՓիրէ դքոյր
 մեր, որ է սպասաւոր եկեղեցւոյն
 2 Կենքրացոց: Չի զնա ընկալջիք ի
 Տէր արժանի սրբոց, եւ վերակացու-
 լինիջիք նմա յոր պէտս իրաց եւ կո-
 չեսցէ զձեզ. քանզի եւ նա վերա-
 կացու եղեւ բազմաց, եւ ինձ իսկ ի
 զլիսովին:
 3 Ողջոյն տաջիք Պրիսկեայ եւ Ակիւ-
 զայ՝ գործակցաց իմոց ի Քրիստոս Յի-
 4 սուս: Որք ընդ անձին իմոյ զիւրեանց
 պարանոցս մասուցին՝ գորոց ոչ ես
 միայն դո՛սնում, այլ եւ ամենայն եւ
 5 կեղեցիք հեթանոսաց. Եւ առանին
 եկեղեցւոյն նոցա: Ողջոյն տաջիք Ե-
 պենտեայ սիրելւոյ իմոյ՝ որ է պտուղ
 6 Ստրացւոց ի Քրիստոս: Ողջոյն տաջիք
 Մարեայ՝ որ բազում վաստակս վաս-
 7 տակեաց ի ձեզ: Ողջոյն տաջիք Անդ-
 րոնիկեայ եւ Յուսեայ աղգականաց
 իմոց եւ գերեկաց, որք երեւելիքն
 իսկ են յառաքեալս, որք եւ յառաջ
 8 իսկ քան զիս եղեն ի Քրիստոս: Ողջոյն
 տաջիք Ամպղեայ սիրելւոյ իմոյ ի Տէր:
 9 Ողջոյն տաջիք Ուրբանեայ գործակցի
 իմոյ ի Տէր, եւ Ստաքեայ սիրելւոյ
 10 իմոյ: Ողջոյն տաջիք Սպեղեայ՝ որ ըն-
 11 տիրն է ի Տէր: Ողջոյն տաջիք նոցա
 որ յԱրիստարուղեայ տանէ անտի են:
 Ողջոյն տաջիք Հերովդիտոնեայ ազգա-
 կանի իմոյ: Ողջոյն տաջիք այնոցիկ
 որք ի Նարկիսեայ տանէն իցեն ի Տէր:
 12 Ողջոյն տաջիք Տրիփոսեայ եւ Տրիփո-
 նեայ վաստակաւորաց ի Տէր: Ողջոյն
 տաջիք Պերսիգեայ սիրելւոյ, որ բա-
 13 զում վաստակս վաստակեաց ի Տէր:
 14 Ողջոյն տաջիք Ռուփայ ընտրելոյ ի
 Տէր, եւ մօր նորա եւ իմոյ: Ողջոյն
 տաջիք Սալուկրիտեայ, Փղեգոնտեայ,
 Երմայ, Պատրոբայ, Երմեայ, եւ որ
 15 ընդ նոսա եղբարք իցեն: Ողջոյն տա-
 ջիք Փիլոզողոսեայ, եւ Յուդեայ, Ներ-
 կայ եւ քեռ նորա, եւ Ողիմպեայ, եւ
 որ ընդ նոսա սուրբք ամենեքին իցեն:

1ՊԼԵԿ, Աստուծոյ
2ՅԵՄԵՍ պատե

3ՊԼԵԿ, Աքայեցւոց

16 Ողջոյն տաջիք միմեանց ի համբոյր սրբութեան. ողջոյն տան ձեզ ¹ամենայն եկեղեցիք Քրիստոսի:

17 Էջ. Աղաչեմ զձեզ, եղբարք, զիտել զայնպիսիսն որ հերձուածս եւ գայթակղութիւնս առնիցեն արտաքոյ վարդապետութեանն զոր դուքն ուսարուք. եւ խորշեցարուք ի նոցանէ:

18 Ձի այնպիսիքն Տեառն մերում ²Քրիստոսի ոչ ծառայեն, այլ իւրեանց որովայնին. եւ քաղցրաբանութեամբ եւ օրհնութեամբ պատրեն զսիրտս անմեղաց:

19 Ձի ձեր հնազանդութիւնդ առ ամենեսեան հասեալ է. եւ արդ ի ձեզ ուրախ եմ. բայց կամիմ զձեզ իմաստունա վինել ի բարիս, եւ անմեղս՝ ի շարիս: Եւ Աստուած խաղաղութեան խորտակեսցէ զՍատանայ ընդ ոտիւք ձերովք մերձ ընդ մերձ: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ:

21 Ողջոյն տայ ձեզ Տիմոթէոս ³եղբայր եւ՝ գործակից իմ եւ Ղուկիոս եւ Աս-

տովն եւ Սոսիպատրոս՝ ազգականք իմ:

22 (Ողջոյն տամ ձեզ եւ ես Տերտիոս, որ զթուղթս զրեցի, ի Տէր:) Ողջոյն տայ ձեզ Գայիոս ասպնջական իմ եւ ամենայն եկեղեցւոյն: Ողջոյն տայ ձեզ Երաստոս շահապ քաղաքիս եւ Կուարտոս եղբայր:

24 Այլ այնմ, որ կարողն է հաստատել զձեզ ըստ աւետարանիս իմում, եւ ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյն ⁵ժամանակօքն յաւիտենից լոցեցելոյ, եւ յայտնելոյ այժմիկ ի ձեռն զրոց մարգարէականաց ըստ հրամանի մշտնջենաւորին Աստուծոյ, ի հնազանդութիւն հաւատոց, յամենայն հեթանոսս ծանուցելոյ, Միայնոյ իմաստնոյն Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, նմա ⁶փառք յաւիտեանս: Ամէն: ⁷Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ամենեսեան:

Աս Հռոմայեցիէն գրեցաւ է Կորնելոսէ է յեռն Փիլէպայ սարկաւազի:

¹Յման պատ
²Ուրէ, Յիսուսի Քրիստոսի
³Ի Յաննէ պատ

⁴Ուրէ, յաւիտեն, Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ընդ ամենեօրն: Ամէն:

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԱՌԱԶԻՆ ԹՈՒՂԹ



ՎՈՒԽ Ա

1 ԱՌ. ՊԱՒՂՈՍ, կոչեցեալ առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամօքն Աստուծոյ, եւ Սոսթենէս եղբայր. եկեղեցւոյդ Աստուծոյ որ է ի Կորնթոս, նուերելոց ի Քրիստոս Յիսուս, կոչեցելոց սրբոց, ամենեքուհրք հանգերձ որք կարդան զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յամենայն տեղիս՝ նոցա

3 եւ մեր. Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ:

4: Գոհանամ զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ վասն ձեր ի վերայ շնորհացն Աստուծոյ որ տուեալ են ձեզ

5 ի Քրիստոս Յիսուս. Ձի յամենայնի մեծացարուք զուք նովաւ ամենայն

6 բանիւ եւ ամենայն զիտութեամբ. Որպէս վկայութիւնն իսկ Աստուծոյ հաստատեցաւ ի ձեզ. Ձի զուք մի՛ նուազիցիք եւ մի՛ իւրիք շնորհօք, ակնկալելալ յայտնութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Որ եւ հաստատեցէ զձեզ մինչեւ ի կատարած աշխատաս յորն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Հաւատարիմ է Աստուած, որով կոչեցարուք ի հաղորդութիւն Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ:

10 ԱՋ. Աղաչեմ զձեզ, եղբարք, անուամբն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի զնոյն բան ունիցիք ամենեքեան, եւ մի՛ իցեն ի ձեզ հերձուածք. Դբանդի էիք՝ հաստատեալք

11 ի նոյն միտս եւ ի նոյն հանձար: Ազգեղեւ լինձ վասն ձեր, եղբարք, ի Քղուացւոց անտի, թէ հակառակու-

12 թիւնք են ի ձեզ: Եւ արդ ասեմ իսկ, եթէ իւրաքանչիւր ոք ի ձէնջ ասէ, Ես Պաւղոսեան եմ, եւ մեւսն՝ եթէ Ես Ապողոսեան եւ մեւսն՝ եթէ Ես Կեփայեան. եւ մեւսն՝ եթէ Ես Քրիստոսեան: Իսկ արդ բաժանեալ ինչ իցէ Քրիստոս. միթէ Պաւղոս ի խաչ ելեալ իցէ վասն ձեր, կամ յանուն

14 Պաւղոսի՞ մկրտեցարուք: Գոհանամ զԱստուծոյ իմոյ զի՝ ոչ զուք ի ձէնջ մկրտեցի բայց միայն զԿրիստոս եւ

15 զՊայտիոս, զի մի՛ ոք ասիցէ, Թէ յիմ

16 անուն մկրտեցարուք: Տալ ետու կնիք եւ տանն Ստեփանեայ. զայլ ոք ոչ զիտեմ ամենեւին թէ մկրտեցի:

17 Ձի ոչ առաքեաց զիս Քրիստոս մկրտեալ, այլ աւետարանել. ոչ ճարտարութեամբ բանից, զի մի՛ ընդունայն լիցի

18 խաչն Քրիստոսի: Ձի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ՝ զօրութիւն Աստուծոյ: Ձի գրեալ է, Կորնտից զիմաստութիւն իմասանոց, եւ զխորհուրդս խորհրդա-

20 կանաց արհամարհեցից: Ո՛ւր իմաստուն, ո՛ւր զպիր, ո՛ւր քննիչ աշխարհիս այսորիկ. ո՛չ ապաքէն յիմարեցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս

21 այսորիկ: Քանզի իմաստութեամբն Աստուծոյ ոչ ծանեաւ աշխարհ իմաստութեամբն զԱստուած, հաճեցաւ Աստուած յիմարութեամբ քարոզութեանն ասրեցուցանել զհաւատացեալս:

22 Բայ. Իսկ որովհետեւ Հրեայք նշան հայցեն, եւ հեթանոսք իմաստութիւն

23 խնդրեն, Մէք քարոզեսցուք զխաչելեան Քրիստոս, Հրէից գայթակղու-

21 Յիսուսն զսուտ
 23 Ուստի, Գոհանամ զի. այլ՝ Գոհանամ զԱստուծոյ զի. Գոհանամ զիստ, էքիւս զիստ, Գոհանամ զԱստուծոյ իմոյ զի

թիւն եւ հեթանոսաց յիմարութիւն .
 24 Բայց նոցին իսկ կոչեցերցն Հրէից եւ
 հեթանոսաց , զՔրիստոս՝ Աստուծոյ
 զօրութիւն եւ Աստուծոյ իմաստու-
 25 թիւն : Զի յիմարն Աստուծոյ իմաստ-
 նագոյն է քան զմարդիկ , եւ տկարն
 Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ :
 26 Թէպէտ եւ զձեր իսկ կոչուինդ տեսէք ,
 եղբարք , զի ոչ բազում իմաստունք
 ըստ մարմնոյ , եւ ոչ բազում հօրք , եւ
 27 ոչ բազում ազնուականք . Այլ զյիմարս
 աշխարհիս ընտրեաց Աստուած , զի յա-
 մօթ արտոցէ զիմաստունս . եւ զտկարս
 աշխարհիս ընտրեաց Աստուած , զի յա-
 28 մօթ արասցէ զհօրս . եւ զանատոնմս
 աշխարհի եւ զարհամարհեալս ընտրեաց
 Աստուած եւ զոչինչն , զի զէսն իմն
 29 խափանեցէ . Որպէս զի մի՛ պարծեսցի
 ամենայն մարմին ատօջի Աստուծոյ :
 30 Զի ի նմանէ դուք էք ի Քրիստոս Յի-
 սուս , որ եղև մեզ իմաստութիւն յԱս-
 տուծոյ , արդարութիւն եւ սրբութիւն
 31 եւ փրկութիւն . Զի որպէս եւ զրեալ
 է , Որ պարծին ի Տէր պարծեսցի :

ԳԼ Բ

1 Եւ ես ¹թէպէտ եւ եկի առ ձեզ , եղ-
 բարք , ոչ՝ ըստ առաւելութեան ինչ
 բանից ²իմաստութեան պատմել ձեզ
 2 զվկայութիւնն Աստուծոյ : Զի ոչ եթէ
 ի մտի եզի գիտել ինչ ի ձեզ , բայց
 միայն զՅիսուս Քրիստոս , եւ զնոյն
 3 ի խաչ ելեալ : Եւ ես տկարութեամբ
 եւ կրկնաբար եւ զոգոթեամբ բազմաւ
 4 եղէ առ ձեզ . եւ բանն իմ եւ քարո-
 զութիւնն ոչ պատիւ բանիւք ³իմաս-
 տութեան , այլ՝ արդեամբք Հոգւոյն
 5 եւ զօրութեամբ . Զի հաւատք ձեր
 մի՛ իցեն իմաստութեամբ մարդկան ,
 այլ՝ զօրութեամբ Աստուծոյ : ՎՋ
 6 Զիմաստութիւն խօսիւք ընդ կա-
 տարեալս , զիմաստութիւն , ոչ զաշ-
 խարհիս այտորիկ եւ ոչ զիշխանաց աշ-
 7 խարհիս այտորիկ զխափանելեացս , Այլ
 խօսիւք զԱստուծոյ իմաստութիւնն
 ծածուկ խորհրդով , զոր յառաջ քան
 զյաւիտեանս սահմանեաց Աստուած
 8 ի փառս մեր . Զոր ոչ ոք յիշխանաց

աշխարհիս այտորիկ ծանեալ . զի եթէ
 էր ծանուցեալ , ոչ արդեւք զՏէրն փա-
 9 րաց ի խաչ հանէին : Այլ որպէս եւ
 զրեալ է , Զոր ահն ոչ ետես եւ ունկն
 ոչ լուաւ եւ ի սիրտ մարդոյ ոչ ան-
 կաւ , պատրաստեաց Աստուած սիրե-
 կաց իւրոց :

40 ԲԳ . Այլ մեզ յայտնեաց Աստուած
 Հոգւովն իւրով . զի Հոգին զամենայն
 41 քննէ եւ զիտոս Աստուծոյ : Զի ո՞ որ
 ի մարդկանէ զիտէ ինչ զմարդոյն , եթէ
 ոչ հոգի մարդոյն որ ի նմա . նոյնպէս
 եւ ոչ զԱստուծոյն որ զիտէ , եթէ
 42 ոչ Հոգին Աստուծոյ : Այլ մեք ոչ եթէ
 զհոգի աշխարհիս այտորիկ առաք , այլ
 զՀոգին որ յԱստուծոյ . զի ծանկոյժք
 զայն որ յԱստուծոյն շնորհեալ մեզ :
 43 Եւ զոր խօսիմք՝ ոչ եթէ մարդկեղէն
 ուսմամբ ճարտարութեան բանից , այլ
 վարդապետութեամբ ⁴Հոգւոյն , ընդ
 հոգեւորս զհոգեւորսն համեմատեմք :
 44 Քանզի շնչաւոր մարդ ոչ ընդունի
 զՀոգւոյն Աստուծոյ , զի յիմարութիւն
 է նմա . եւ ոչ կարէ զիտել , ⁵եթէ հո-
 45 զեպէս քննիցի՝ : Իսկ հոգեւորն քննէ
 զամենայն , եւ ինքն յուսմեքէ ոչ քննի :
 46 Իսկ արդ ո՞վ զիտոս զմիտս Տեառն ,
 որ եւ խրատտու լինիցի նմա . այլ մեք
 զմիտս Քրիստոսի ունիմք :

ԳԼ Գ

1 Եւ ես , եղբարք , ոչ կարացի խօսել
 ընդ ձեզ իբրեւ ընդ հոգեւորս , այլ իբ-
 2 րեւ ընդ մարմնաւորս : Իբրեւ տղայոց
 ի Քրիստոս կաթն ջամբեցի ձեզ եւ ոչ
 կերակուր , զի ոչ եւս կարէիք . նա
 եւ արդ իսկ ոչ կարէք , քանզի զեռ
 3 մարմնաւոր էք : Ուր եւ արդ են իսկ
 ի ձեզ հեռ եւ ⁶նախանձ , ոչ ապաքէն
 մարմնաւոր էք եւ ըստ մարդկան գնայք :
 4 Յորժամ ասէ ոք ⁷ի ձէնջ , Ես Պաւ-
 զոսեան եմ , եւ մեւսն՝ եթէ Ես Այդո-
 զոսեան , ոչ՝ մարդիկ էք . իսկ արդ
 ո՞վ է Պաւզոսն կամ ո՞վ է Այդոսն .
 5 Պաշտօնեայք՝ որովք հաւատացէքն ,
 եւ իւրաքանչիւր որպէս եւ Տէր ետ :

¹Գռն , որ եկի առ ձեզ , եղբարք , եկի ոչ
²Գռն , կամ իմաստութեան
³Ո՛րք , մարդկեղէն իմաստութեան

⁴Ո՛րք , Հոգւոյն Որբոյ
⁵Գռն , զի Հոգեպէս քննի
⁶Ո՛րք , նախանձ եւ հերձուած
⁷Ի Գռնի գովուի
⁸Ո՛րք , մարմնաւոր

6 Ես տնկեցի, Ապողոս ջուր ետ, այլ
 7 Աստուած անեցոյց, Այսուհետեւ ոչ
 այն ինչ ոք է որ տնկեացն, եւ ոչ այն՝
 որ զջուրն ետ, այլ որ անեցոյցն՝ Աս-
 8 տուած: Որ տնկեացն եւ որ զջուրն
 ետ՝ մի են. բայց իւրաքանչիւր ոք
 զիւր վարձս առնուցու ըստ իւրում
 9 վաստակոց: Զի Աստուծոյ գործակից
 եմք, Աստուծոյ Վարդիւն էք, Աստու-
 10 ծոյ շինած էք: Ըստ շնորհացն Աստու-
 ծոյ որ տուեալ են ինձ, իբրեւ իմաս-
 տուն ճարտարապետ հիմն եղի, բայց
 այլ է որ շինէն. այլ իւրաքանչիւր ոք
 11 զգոյշ լիցի թէ որպէս շինիցէ: Զի հիմն
 այլ՝ ոք ոչ կարէ դնել քան զեղեալն,
 որ է Յիսուս Քրիստոս: ՎՋ
 12 Եթէ ոք շինէ ի վերայ հիմանս այ-
 սորիկ ոսկի, արծաթ, ականս սլա-
 13 տականս, փայտ, խոտ, եղէգն, Իւ-
 րաքանչիւր գործն յայտնելոց է. զի
 օրն ընտրեսցէ. զի հրով յայտնելոց է.
 եւ զիւրաքանչիւր գործն զիարդ եւ
 14 իցէ, հուրն փորձեսցէ: Եթէ ուրուք
 գործն զոր շինեաց՝ կացցէ, վարձս
 15 սոցէ. Եւ եթէ ուրուք գործն այրես-
 յի՛ տուեանց, բայց ինքն կեցցէ, այլ
 16 պիտէ՛ս՝ որպէս ոք ՚ի հուր: Ո՛չ զի-
 տէք եթէ տաճար էք Աստուծոյ, եւ
 17 Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ: Եթէ
 ոք զտաճար Աստուծոյ ապականէ, ա-
 պականեսցէ զնա Աստուած. զի տա-
 ճար Աստուծոյ սուրբ է, որ էք դուք:
 18 Մի՛ ոք զանձն խաբեսցէ. եթէ ոք
 կամիցի ի ձէնջ իմաստուն լինել յաշ-
 19 խարհիս յայսիկ, յիմար լիցի, զի ե-
 զիցի իմաստուն: Զի իմաստութիւն
 աշխարհիս այսորիկ յիմարութիւն է
 20 թէ, Որ բարձնէ զիմաստունս ի խո-
 21 նոց, Տէր ճանաչէ զխորհուրդս իմաստ-
 22 մի՛ ոք պարճեսցի Յի մարդկանէ. Զի
 ամենայն ինչ ձեր է, եթէ Պաւղոս,
 եթէ Ապողոս, եթէ Կեփաս, եթէ աշ-
 23 նայն ինչ ձեր է. Դուք Քրիստոսի,
 Քրիստոս՝ Աստուծոյ:

1 Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ,
 իբրեւ զպաշտօնեայս Քրիստոսի եւ
 հազարապետս խորհրդոցն Աստուծոյ:
 2 Արդ խնդիր է ի մէջ հազարապետաց
 3 եթէ ոք հաւատարիմ գացի: Այլ ինձ
 եւ այս ⁴անարգանք են՝, եթէ ի ձէնջ
 գատեցայց կամ ⁵բնաւ իսկ ի մարդկա-
 4 նէ՛. նաեւ զանձն իմ ոչ քննեմ: Զի
 ոչինչ գիտեմ զանձին իմոյ. այլ ոչ
 եթէ այսու արդարանամ, զի որ քննէն
 5 զիս՝ Տէր է, Այսուհետեւ մի՛ յառաջ
 քան զժամանակն դատիք, մինչեւ ե-
 կեսցէ Տէր, որ լուսաւոր առնիցէ
 զպաշտօնիս խաւարի, եւ յայտնիցէ
 զխորհուրդս սրտից. եւ ապա իւրա-
 6 քանչիւր գովութիւն եղիցի յԱստուծոյ:
 7 Զայս, եղբարք, առակեցի յանձն իմ
 եւ յԱպողոս վասն ձեր. զի ի մէնջ ուս-
 ջիք մի՛ ինչ առաւել քան զզրեալն ի-
 մանալ, զի մի՛ այր քան զընկեր հպար-
 7 տանայցէք ի վերայ ընկերին, իսկ արդ
 ո՛վ է ⁶որ քննիցէ՛ զքեզ. զի՛նչ ունիս
 զոր ոչ իցէ առեալ. եւ եթէ առեր,
 զի՛ պարծիս իբրեւ զչառեալ:
 8 Արդէն իսկ յաղեալ իցէք եւ արդէն
 մեծացարուք, առանց մեր թագաւո-
 րեցէք, եւ երանի թէ թագաւորէիք,
 զի եւ մեք ընդ ձեզ թագաւորէաք:
 9 Ինձ այսպէս թուի թէ զմեզ զառաք-
 եալս յետնորդս արար Աստուած իբրեւ
 զմահապարտս. զի տեսիլ եղեաք աշ-
 խարհի եւ հրեշտակաց եւ մարդկան:
 10 Մեք յիմարք վասն Քրիստոսի, եւ զուք
 իմաստունք ի Քրիստոս. մեք տկարք
 եւ զուք հզօրք. զուք փառաւորեալք՝
 11 եւ մեք անարդք: Մինչեւ ցայսօր ժա-
 մանակի ե՛ւ քաղցեաք ե՛ւ ծարաւե-
 ցաք ե՛ւ մերկ գնացաք ե՛ւ կոփահա-
 12 րեցաք ե՛ւ անհանդիստ եղեաք, եւ
 աշխատեցաք ձեռք մերովք. բամբա-
 սէին զմեզ, օրհնէաք. հայածէին,
 13 յանձն առնուաք. Հայրոյէին, աղա-
 չէաք. իբրեւ առակ նշաւակի եղեաք
 7 ամենայն աշխարհի, ամենեցուն փա-
 14 րելի լինել մինչեւ ցայժմ: Ոչ եթէ

¹ Կ=ժ, արտ
² Յ=ն, ընդ հուր
³ Յ=ն, ի մարդիկ

⁴ Յ=ն, դոյզն ինչ է
⁵ Յ=ն, ի մարդկեղէն օրէ (զատաստանէ)
⁶ Յ=ն, որ խառնէ
⁷ Ի Յ=նին դոյզն

յամօթ ինչ առնելով դձեզ գրեմ զայս, այլ իրբեւ զորդիս սիրելիս խրատեմ: 15 Թէպէտ եւ լիւր զաստիարակս ունիրցիք ի Քրիստոս, այլ ոչ եթէ բազում հարս, զի ի Քրիստոս Յիսուս աւել 16 ատարանուն ես ծնայ դձեզ: Արդ ազաչեմ դձեզ, նմանողք ինձ ՚Եղիջիք: 17 Վասն այնորիկ առաքելցի առ ձեզ զՏիմոթէոս, որ է իմ որդի սիրելի եւ հաւատարիմ ի Տէր. որ յիշեցուցէ ձեզ զճանապարհս իմ որ ի Քրիստոս Յիսուս. որպէս եւ ամենայն ուրեք յաւանանայն եկեղեցիս ստուգանեմ: Որպէս թէ ես չիցեմ զաւրց առ ձեզ, ոմանք 19 հպարտացան: Այլ եկից հուպ ընդ հուպ, եթէ Տէր կամեսցի. եւ ի միա առից սչ զբանս հպարտացելոցն, այլ 20 զգորութիւն: Չի ոչ եթէ բանիւք է արքայութիւնն Աստուծոյ, այլ զօրութիւնն: Արդ, որպէս կամիք, գաւազանաւ եկից առ ձեզ, եթէ ՚սիրով հողոյն հեղութեան եւ արգարութեան եւ խոնարհութեան:՝

ԳԼ Ե

1 Բնաւ եւ անուանի իսկ ի ձեզ ՚ընդէ՞ր պոռնկութիւն, եւ այնպիսի պոռնկութիւն՝ որ ոչ եւ ի հեթանոսս, որպէս 2 թէ զկին հօր իւրոյ ունել: Եւ զուրք հպարտացեալ էք, եւ ոչ առաւել սգացարուք, զի բարձցի ի միջոյ ձերմէ որ 3 զգործն զայն գործեաց: Չի եւ թէպէտ եւ մարմնով մեկուսի եմ, սակայն հոգւով մերձ եմ. բայց արդէն իսկ իրբեւ ի մօտոյ ընտրեցի, զայն որ այնպէսն 4 գործեաց, Յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ժողովել ձեզ ի միասին եւ իմոյ հողոյս՝ զօրութեամբն հանդերձ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Մասնել զայնպիսին Սատանայի ի ստատկունն մարմնոյ, զի ողին 5 արկեսցի յաւուրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ոչ բարեք են պարծանքդ ձեր. ո՞չ զիտէք եթէ փոքր մի խմոր զամենայն զանդուածն խմորէ: 7 Սրբեցէք ի բաց զձին խմորն, զի եղիջիք նոր զանդուած, որպէս էքդ անխմորք. քանզի զատիկ մեր զենաւ

8 Քրիստոս: Այսուհետեւ արասցուք տօնս՝ մի ի խմորն հին եւ մի ի խմորն չարութեան եւ անզգամութեան, այլ յանխմոր ստուգութեան եւ ճշմարտութեան: 9 ԲՁ. Գրեցի ձեզ ի թղթի այդք չխտունակել ընդ պոռնիկս: Եւ ոչ եթէ ընդ պոռնիկս աշխարհիս այսորիկ կամ ընդ ազահս կամ ընդ յափշտակողս կամ ընդ կոսպարիչս. ապա թէ ո՞չ պարտէիք եւ յաշխարհէ իսկ ելանել: Բայց արդ գրեցի ձեզ չխտնակել, եթէ ոք կամ կոսպարիչա կամ ազահ կամ բամբասող կամ արբեցող կամ յափշտակող, ընդ այնպիսուան եւ հաց մի՞ 12 ուտել: Չի՞ կայ իմ եւ զարտաքինսն զատելոյ. ո՞չ ապաքէն զուրք գնելք: 13 քինսն զատելիք. եւ զարտաքինսն Աստուած զատելցի. բարձէք զչարն ի միջոյ ձերմէ:

ԳԼ Զ

1 Իչխս՞ ոք ի ձէնջ, եթէ իւրք ինչ իցնն ընդ ընկերի իւրում, զատել առաջի 2 անիրաւաց, եւ ոչ առաջի սրբոց: Եթէ ո՞չ զիտէք զի սուրբք զաշխարհ զատին եւ եթէ ձեւք զատն աշխարհ, ապա ՚ոչ էք արժանի անարգ ատենից: 3 Ո՞չ զիտէք եթէ զհրեշտակս զատիւք, 4 թող թէ գերկրաւորս: Չերկրաւոր ատեանս եթէ յանձն առնուցուք, ՚զանարդս եկեղեցւոյ զասուորս նստուցանէք:՝ Առ ամօթոյ ձերոյ ասեմ. այնչափ ո՞չ գոյ ոք իմաստուն ի ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտրել ի մէջ 6 եղբոր իւրոյ. Այլ եղբայր ընդ եղբոր զատի, եւ զայն ի մէջ անհաւատից: 7 Եւ արդ ամենեւին իսկ վատթարութիւն է ի ձեզ, զի գատաստանք իսկ զոն ի միջի ձերում. ընդէ՞ր ոչ զուրք զրկիք, եւ ոչ զուրք ստաւել նեղիք: 8 Այլ զուրք զրկէք եւ նեղէք. եւ այդ 9 գեղբարս եւս: Եթէ ո՞չ զիտէք զի անիրաւք զարքայութիւն Աստուծոյ ոչ ժասանդեն. մի՞ խորեք, ոչ պոռնիկք, 10 ոչ կոսպարիչաք, ոչ շուսք, Ոչ իրացեալք, ոչ արուապէտք, ոչ գողք, ոչ ազահք, ոչ արբեցողք, ոչ լամբասողք

1 Ո՞չ է, եղիջէք, որպէս եւ Քրիստոսի
2 Յիսուս, սիրով և հոգեով հեղութեան
3 ի Յիսուսի պոռնիք

4 Յիսուս, ո՞չ էք արժանի զանարգս զատելոյ
5 Յիսուս, զանարգս յեկեղեցւոյ, զնոսմ նստուցանէք, իւր, զնոսս նստուցէք

եւ ոչ յափշտակողք զարքայութիւնս
 11 Աստուծոյ ոչ ժառանգին: Եւ զուք
 այնպիսիք ոմանք էիք. այլ լուացա-
 րուք, այլ սրբեցարուք, այլ արդարա-
 ցարուք յանուն Տեառն մերոյ Յիսու-
 սի Քրիստոսի եւ ի Հոգին Աստուծոյ
 մերոյ:
 12 ԳԿ. Ամենայն ինչ ինձ մարթ է, այլ
 ոչ ամենայն ինչ օգուտ է. ամենայն
 ինչ ինձ մարթ է, այլ ոչ եթէ ես ընդ
 13 իշխանութեամբ ուրուք լինիցիմ: Կե-
 րակուր՝ որովայնի, եւ որովայն կե-
 րակրոյ. այլ Աստուած զսա եւ զնոսա
 խափանեացէ. Բայց մարմին ոչ պոտնը-
 կութեան, այլ Տեառն, եւ Տէր՝ մարմ-
 14 նոյ: Այլ Աստուած որ եւ զՏէրն յա-
 րոյց՝ եւ ՚զձեզ յարուցէ զօրութեամբ
 15 իւրով, Ո՞չ գիտէք եթէ մարմինք ձեր
 անդամք են Քրիստոսի. արգ առեալ
 զանդամս Քրիստոսի՝ առնիցեմք ան-
 16 զամս պոտնկի՞. քաւ լիցի: Եթէ ո՞չ
 գիտէք, զի որ մերձենայ ի պոտնիկ
 մի մարմին է. եղիցին, ասէ, երկոքին
 17 ի մարմին մի: Եւ որ մերձենայ ի Տէր՝
 18 մի հոգի է: Փախերուք ի պոտնկու-
 թեանէ. զամենայն մեզս զոր եւ զործէ
 մարդ, արտաքոյ մարմնոյ իւրոյ է. իսկ
 որ պոտնկին՝ յիւր մարմինն մեզանչէ,
 19 Եթէ ո՞չ գիտէք, զի մարմինք ձեր
 սաճար են՝ շողւոյն որ է ի ձեզ, զոր
 ունիքն յԱստուծոյ, եւ չէք անձանց
 20 տէր: Քանզի զնոց գնեցայք. փառաւոր
 արարէք զԱստուած ի մարմինս ձեր՝:

ՊԼ. Է

1 Այլ վասն որոյ գրեցէքն առ իս, բար-
 ւոք է մարդոյ ի կին մարդ չմերձենալ,
 2 Բայց վասն պոտնկութեան իւրաքան-
 չիւր ոք զիւր կին կայցի, եւ իւրա-
 քանչիւր ոք կին զիւր այր կայցի,
 3 Կնոջ այր իւր զպարտան հատուցէ,
 4 նոյնպէս եւ կինն՝ առն իւրում: Չի
 կին մարմնոյ իւրում ոչ իշխէ, այլ
 այրն. նոյնպէս եւ այրն իւրում մարմ-
 5 նոյ ոչ իշխէ, այլ կինն: Մի՛ զրկէք
 զմիմեանս, բայց եթէ ինչ ի միաբա-
 նութենէ առ ժամանակ մի, զի ՚ուխ-

տիցն պարապիցէք, եւ զարձեալ ի նոյն
 զարձիւք, զի մի՛ փորձեսցէ զձեզ Սա-
 տանայ վասն անխառնութեան ձերոյ,
 6 Չայս ասեմ ներելով եւ ոչ հրաման
 7 տալով: Քանզի կամիմ եթէ ամենայն
 մարդ լինէր իբրեւ զիս. այլ իւրա-
 քանչիւր ոք զիւր շնորհս ունի յԱս-
 տուծոյ, ոմն այսպէս՝ եւ ոմն այնպէս:
 8 Բայց ամուրեացն եւ այրեացն ասեմ,
 Լաւ է նոցա եթէ կայցեն իբրեւ զիս:
 9 Ապա թէ ոչ ունիցին ժոյժ, ամուս-
 նասցին, զի լաւ է ամուսնանալ քան
 10 զՂեոնուլ: Այլ կանամբեացն պատ-
 ուիրեմ ոչ ես, այլ Տէր, Կնոջ յառնէ
 11 մի՛ մեկնել. Ապա եթէ մեկնեցի, ան-
 այր մնացէ կամ անդրէն ընդ առն
 իւրում հաշտեսցի, եւ առն զկին իւր
 մի՛ թողուլ:

ՎՋ

12 Բայց այլոց ես պատուիրեմ, ոչ եթէ
 Տէր. Եթէ ոք եղբայր կին ունիցի ան-
 հաւատ, եւ նմա հաճոյ իցէ բնակել
 13 ընդ նմա, մի՛ թողէ գնա: Եւ կին
 որ ունիցի այր անհաւատ, եւ նմա
 կամ իցէ յնակել ընդ նմա, մի՛ թողցէ
 14 զայրն: Չի սուրբ է այրն անհաւատ՝
 կնան, եւ սուրբ է կինն անհաւատ՝
 արամին. ապա թէ ոչ՝ որդիքն ձեր
 15 պիղծ են, բայց այժմ սուրբ են: Ապա
 եթէ անհաւատն մեկնիցի, մեկնեսցի.
 զի ոչինչ հարկ ի վերայ կայ եղբօրն
 կամ քեոն յայնպիսի իրս, քանզի ի խա-
 զազութիւն կոչեաց զմեզ Աստուած:
 16 Չի՞ գիտես, կին գու, եթէ զայր քո
 ապրեցուցես. կամ զի՞ գիտես, այր
 դու, եթէ զկին քո ապրեցուցես.
 17 Եթէ ոչ՝ իւրաքանչիւր ումեք որպէս
 եւ բաժանեաց Տէր, զիւրաքանչիւր ոք
 որպէս եւ կոչեաց Աստուած՝ այնպէս
 գնացէ. եւ այսպէս ընդ ամենայն եւ
 կեղեցիս պատուէր տամ:
 18 Թի՛խտեալ ոք կոչեցաւ, մի՛ ցան-
 կացի անթրիատութեան. յանթրիա-
 տութենէ՞ ոք կոչեցաւ, մի՛ թրիա-
 19 տեսցի. Չի թրիատութիւն ոչինչ է,
 եւ անթրիատութիւն՝ ոչինչ, այլ պահ-
 պանութիւն Աստուծոյ պատուիրա-
 20 նացն: Բայց իւրաքանչիւր ոք յոր կո-
 21 չուսն կոչեցաւ՝ ի նմին կացցէ, Ծառայ
 կոչեցար, մի՛ փոյթ լիցի քեզ. այլ թէ
 կարիցես եւս ազատ լինել, քեզ այնպէս
 22 լաւ իցէ: Չի որ ի Տէր կոչեցայ իցէ
 ձառայն՝ ազատ Տեառն է. նոյնպէս եւ

1 Բ-ւ-է, զմեզ
 2 Յ-ն, Հոգւոյն Որոյ
 3 Ու-ն, յ-է-լ-ւ, և յոգիս ձեր որ են Աստուծոյ
 4 Յ-ն, աղօթից. Կ-ն, աղօթից և պահոց

որ ազատն կոչեցեալ է՝ ծառայ Քրիստոսի է ։ Գնոց զնեցայք , մի՛ լինիք 23 ծառայք մարդկան ։ Իւրաքանչիւր յոր կոչուան կոչեցաւ , եղբարք , ի նմին կացցէ ստաջի Աստուծոյ ։

25 ԳԿ . Այլ վասն կուսանաց հրաման ինչ ի Տեառնէ ոչ ունիմ , բայց խրատ տամ Կորնթոս ողորմելոյ ուրուք՝ ի 26 Տեառնէ հաւատարիմ լինել ։ Համարիմ թէ այնպէս յաւ իցէ , բայց վասն վտանգին՝ որ ի վերայ կայ , Յարուռք է 27 մարդոյ թէ այնպէս իցէ ։ Կապեալ ես ի կին , մի՛ խնդրեր արձակել . արձակեալ ես ի կնոջէ , մի՛ խնդրեր կին ։ 28 Ձի եթէ ամուսնանայցես , ոչ մեղար . եւ եթէ ամուսնանայցէ կոյսն , ոչ մեղաւ , բայց նեղութիւն մարմնոյ ունիցին այնպիսիքն . այլ ես խնայելի ի 29 ձեզ , Բայց զայս ասեմ , եղբարք , եթէ ժամանակս Կարճեալ է այսուհետեւ . զի՝ որ ունիցին կանայս՝ որպէս թէ 30 չունիցին , եւ որ լայցենն՝ որպէս թէ ոչ լայցեն , եւ որ խնդանն՝ որպէս թէ ոչ խնդայցեն , եւ որ զնենն՝ որպէս թէ 31 չունիցին , եւ որ վարենն զաշխարհս՝ որպէս թէ չվայելիցեն . զի անցեալ է վայելչութիւն աշխարհիս այսորիկ ։ 32 Այլ կամիմ զձեզ անհոգ լինել . զի որ անկինն է՝ հոգայ զՏեառն , թէ՛ որպէս 33 հաճոյ լիցի Տեառն . եւ որ կանամորին է , հոգայ զաշխարհիս , թէ՛ որպէս հաճոյ 34 ճոյ լիցի կնոջ իւրուամ ։ Եւ ահա մեկու նեցան ի միմեանց առնակինն եւ կոյսն . զի կոյսն հոգայ զՏեառն , զի իցէ սուրբ մարմնով եւ հոգւով , եւ առնակինն հոգայ զաշխարհիս , թէ՛ որպէս հաճոյ 35 լիցի առն իւրուամ ։ Այլ զայս վասն ձերոյ օգտի ասեմ . ոչ եթէ խեղ ինչ արկանեմ ձեզ , այլ վասն պարկեշտութեան եւ հպատակութեան Տեառն առանց զբաղանաց ։

36 ԳԶ . Ապա թէ ոք ամօթ համարեցի վասն կուսին իւրոյ , եթէ իցէ երես ըստ չափ , եւ այնպէս ինչ պարտ իցէ լինել . զոր կամի արասցէ , ոչ մեղան 37 չէ , Յամուսնացիս Իսկ որ հաստատեալ է ի սրտի իւրուամ , եւ վտանգ ինչ

ոչ իցէ նմա , իշխանութիւն ունի ի վերայ կամաց իւրոց . եւ զայն բնորեաց ի սրտի իւրուամ՝ պահել զկոյսն իւր ։ 38 Բարուք առնէ ։ Եւ որ ամուսնացուցանէ՝ զկոյսն իւր՝ բարուք առնէ . եւ որ ոչն ամուսնացուցանէ՝ լաւ եւս առնէ ։ Կին Կապեալ է՝ , ջորքան ժամանակս կենդանի է այր նորա . ապա եթէ ննջիցէ այր նորա , ապա է , ում կամիցի ամուսնանալ , բայց միայն Տեա 40 բամբ ։ Բայց երանելի եւս է թէ այնպէս կացցէ ըստ իմում խրատու ։ Ես այսպէս համարիմ թէ եւ յիս իցէ Հոգի Աստուծոյ ։

ԳԼ Ը

4 Այլ վասն զոնից կոսցն , զիտեմք եթէ ամենեքին զիտութիւն ունիմք . զիտութիւն հոյարտացուցանէ , այլ սէր 2 չինէ ։ Եթէ ոք Կամիցի զխակ ինչ , չեւ եւս զիտաց որպէս արժան է զիտել ։ Բայց սր սիրէ զԱստուած , նա է 3 տեղեկացեալ ի նմանէ ։ Այլ վասն կերակրոցն զոնեկոց զիտեմք եթէ ոչինչ իսկ կուռքք են յաշխարհի , զի չիք ոք 4 Աստուած բաց ի միոյն ։ Ձի թէպէտ եւ իցին անուանեալ ստուռածք եթէ յերկինս եւ եթէ յերկրի , որպէս եւ են ստուռածք բազումք եւ տեարք բա 6 զուռք ։ Այլ մեզ մի է Աստուած , Հայր , յորմէ ամենայն , եւ մեք ի նա . եւ մի Տէր Աստու Քրիստոս՝ որով ամենայն , եւ մեք նովաւ ։

42 Այլ ոչ յամենեւեան զիտութիւն է . ոմանք առ խզի մտաց մինչեւ ցայժմ զկոյսն իրրեւ զգոհեալ ուսեն . եւ իսկզմ մտաց նոցա , քանզի տկար է , 8 պղծի ։ Այլ կերակուր զմեզ առաջի Աստուծոյ ոչ կացուցանէ . ոչ եթէ չուտեմք , պակասեմք ինչ , եւ ոչ եթէ 9 ուտեմք , առաւելումք ինչ , Բայց զգոյ լերուք , զուցէ իշխանութիւնդ ձեր այգ զայնիակզութիւն լինիցի տկարացն ։ 10 Եթէ ոք տեսանիցէ զքեզ որ զիտութիւնդ ունիմ՝ բաղմեալ ի մեհենի , ոչ ապաքէն խիզմ մտաց նորա որ տկարութեամբն զգածեալ է՝ անգրէն չի 11 նիցի ուտել զգոհեալն . Եւ կորնչիցի

1 Գ-նն , որպէս ողորմեալ ոք
 2 Գ-նն , լաւ իցէ վասն վտանգին
 3 Գ-նն , զի բարուք
 4 Կ-մ , կարճեալ է . այսուհետեւ
 5 Գ-նն , ամուսնացին

6 Գ-մնն պ-լաւ
 7 Ո-նն , կապեալ է օրինոց
 8 Գ-նն , համարիցի

տկար եղբայրն ի քում գիտութեանն,
 12 վասն որոյ Քրիստոսն մեռաւ: Եւ այնպէս յանցուցեալ յեղբարս, եւ զխիզճ մտաց տկարացն զայրացուցեալ, ի
 13 Քրիստոս մեղանչէ: Վասն որոյ եթէ կերակուր գայթակղեցուցանէ զեղբայրն իմ, ոչ կերայց միս յաւիտեան, զի մի՞ զեղբայրն իմ գայթակղեցուցից:

ԳԼ Թ

1 Ո՞չ ապաքէն ազատ եմ, ո՞չ ապաքէն առաքեալ եմ, ո՞չ ապաքէն զՏէր մեր Յիսուս Քրիստոս աչօք իմովք՝ տեսի, ո՞չ ապաքէն գործ իմ գուր էք ի Տէր,
 2 Թէսպէս եւ այլոց չիցեմ առաքեալ, այլ զէպ ձեզ եմ: զի կնիք իսկ առաքելութեան իմոյ գուր էք ի Տէր: Իմ պատասխանի, ուր զիս հարցանիցեն,
 4 այս է: Միթէ ո՞չ ունիցիմք իշխանութիւն ուտել եւ ըմպել: Միթէ ո՞չ ունիցիմք իշխանութիւն՝ զքորս կանայս՝ շրջեցուցանել ընդ մեզ՝ որպէս եւ այլ առաքեալքն եւ եղբարքն Տեառն
 6 եւ կնիսս: Եթէ միայն ես եւ Բառնարանս ոչ ունիցիմք իշխանութիւն
 7 չգործել ինչ: Ո՞ ոք երբեք զինուորիցի իւրովք թոչակօք: ո՞ ոք անկիցէ այգի, եւ ի պտղոյ նորա ոչ ուտիցէ: ո՞ ոք արածիցէ խաչն, եւ ի կաթանէ խաչինն ոչ ուտիցէ: Միթէ ըստ մարդկութեան խօսիցիմ զայս: կամ թէ եւ
 9 օրէնքն զսոյն ո՞չ ասիցեն: Ի Մովսիսի իսկ յօրէնսն զրեալ է, Ոչ կապեցես զցոռկ եզին կալուտոյ: միթէ զեւ
 10 զա՞նց ինչ փոյթ էր Աստուծոյ: Ո՞չ ապաքէն վասն մեր ասէ, քանզի վասն մեր գրեցաւ: զի յուսով պարտի որ սերմանէն՝ սերմանել, եւ որ կասուն՝
 11 յուսով վայելի: Եթէ մեք ի ձեզ զհոգեւորան սերմանեցաք, մեծ ի՞նչ է եթէ
 12 ի ձէնդ զմարմնուորսզ հնձիցելք: Եթէ ոչ մեք ձերով իշխանութեամբդ վայելեն, ո՞չ առաւել եւս մեք: այլ ոչ ի գործ ինչ արկաք զիշխանութիւնս զայս: բայց ամենայնի համբերեմք, զի մի՛ խաբան ինչ լինիցիմք՝ աւետարանին:
 13 Ո՞չ զիտէք, եթէ որ ի տաճարին գործեն ի տաճարէ անտի ուտեն, եւ որ

սեղանոյն պաշտօնեայք են՝ ի սեղանոյ
 14 անտի վայելեն: Նոյնպէս եւ Տէր հրաման ետ որոյ զաւետարանն աւետարանեն՝ յաւետարանէ անտի կեալ:
 15 Բայց ես եւ ոչ զմի ինչ յայսցանէ արկի ի գործ, եւ ոչ գրեցի զայդ զի ինձ այսպէս ինչ լինիցի: լաւ է ինձ մանաւանդ մտանել, եւ ոչ զի զպարծանս իմ ոք ընդունայն համարիցի:
 16 Զի եթէ աւետարանեմ, ոչինչ են ինձ պարծանք, քանզի հարկ ի վերայ կայ: բայց վայ է ինձ՝ եթէ ոչ աւետարանեմ:
 17 Եթէ կամաւ զայն առնեմ, վարձք են ինձ: եւ եթէ ակամայ՝ անատուութիւն
 18 յանձն է ինձ: Եւ արդ զի՞նչ վարձք իցեն ինձ: ⁵Եթէ յաւետարանիւն ձրի տաց ⁵զաւետարանն՝ զի մի՞ զեղծիցիմ ինչ իշխանութեամբս իմով յաւետարանի անդ: Քանզի ազատ էի յամենայնէ, եւ ամենեցուն զանձն ի ծառայութեան կացուցի, զի զրազուծս
 20 շահեցայց: Եղէ ընդ Հրեայն իբրեւ
 21 զՀրեայ, զի զՀրեայն շահեցայց: Եղէ ընդ օրինօք իբրեւ զայնոսիկ որ ընդ օրինօքն էին, ⁶իբր ոչ եթէ ընդ օրինօքն էի, այլ՝ զի որ ընդ օրինօքն իցեն՝ եւ զնոսա շահեցայց: ընդ անօրէնս եղէ իբրեւ զանօրէն, իբր ոչ եթէ անօրէն ինչ էի Աստուծոյ, այլ ընդ օրինօքն Քրիստոսի, զի շահեցայց զանօրէնսն: Եղէ ընդ տկարս իբրեւ զտկար, զի զտկարն շահեցայց: ընդ ամենայնի ամենայն եղէ, զի թերեւս ապրեցուցից
 23 զոմանս: Զայս ամենայն առնեմ վասն աւետարանին, զի կցորդ եղցէ նմա:
անձառս , զոր ոչ է պարտ մարդոյ խօ-
5 սել : Վասն այնպիսուոցն պարծեցայց .
այլ վասն անձին ինչ ոչ պարծեցայց .
6 բայց եթէ ի տկարութիւնս : Զի եթէ
եւ կամիցիմ պարծել , ոչ եղէց անդգամ,
քանզի զարդարն ասեմ . այլ անխայեմ,
զուցէ ոք համարիցի ինչ յիս աւելի
քան զոր տեսանիցէ յիս կամ լսիցէ
7 յինէն : եւ զի մի՛ առաւելութեամբ
յայտնութեանցն հպարտացայց , տուաւ
ինձ խայթ մարմնոյ , հրեշտակ Սատան ,
8 կուփել զիս , զի մի՛ հպարտացայց : եւ
վասն այնորիկ երիցս անդամ աղաչեցի
9 զՏէր զի ի բաց արացէ յինէն : եւ
ասէցիս , Շատ են քեզ չնորհք իմ , զի
զօրութիւն իմ ի տկարութեան կա-
տարի . եւ արդ լաւ եւս լիցի ինձ

պարծել ի տկարութիւնս , զի բնակես-
ցէ յիս զօրութիւնն Քրիստոսի :
10 ԳԿ . Վասն որոյ հաճեալ եմ ընդ
տկարութիւնս , ընդ թշնամանս , ընդ
վիշտս , ընդ հարածանս եւ ընդ նեղու-
թիւնս վասն Քրիստոսի . զի յորժամ
11 տկարանամ , յայնժամ զօրանամ : Եղէ
²անդգամ , քանզի դուք ³ստիպեցէք .
զի ինձ պարտ էր ի ձէնջ վկայութիւն
առնուլ թէ ոչինչ պակաս գտայ քան
զլաւ առաքեալսն , ⁴զի թէպէտ եւ ես
12 ոչինչ եմ : Սակայն նշանք առաքելոյ
գործեցան ի ձեզ ամենայն համբերու-
թեամբ , նշանօք եւ արուեստիւք եւ
13 զօրութեամբք : եւ արդ զի՛նչ իցէ ո-
րով պակաս դտայք քան զայլ եկեղե-
ցիս , բայց եթէ այնու զի ես զձեզ ոչ
ձանձրացուցի . չնորհեցէք ինձ զվստոյ
զայդ :
14 Ահաւասիկ այս երիցս անդամ պատ-
րաստեալ եմ գալ առ ձեզ , եւ ձեզ բեռն
ինչ ոչ եղէց , զի ոչ խնդրեմ ինչ զձեր ,
այլ զձեզ . քանզի ոչ պարտին որդիք
15 հարց դանձել , այլ հարք որդուոց : Բայց
եւ մտադիւրութեամբ ծախեցից , եւ
ծախեցայց վասն անձանց ձերոց , զի
թէպէտ եւ յառաւել սիրոյն զձեզ՝ սա-
կաւ սիրելիմ :
16 Այլ գրեթէ ես ոչինչ ծանրացայ ձեզ ,
այլ քանզի խորագէտ էի , խելօք կալայ
17 զձեզ : Միթէ որովք առաքելցին առ ձեզ՝
18 նոքօք ինչ աղահեցի՞ ի ձէնջ : Աղաչեցի
զՏիտոս եւ առաքելցի ընդ նմա զեզ-
բայրն , միթէ աղահեցայ ինչ զձեր Տի-
տոս . ո՞չ նովին ոգւով գնացաք . ո՞չ
նովին շաւղօք ⁴չըջեցաք :
19 ԳԶ . Դարձեալ համարիցիք եթէ յողոք
անկեալ ինչ ձեզ աղերսիցեմք . առա-
ջի Աստուծոյ ի Քրիստոս խօսիմք , զի
ամենայն ինչ , սիրելիք , վասն ձերոյ
20 յիսութեան է : Այլ երկնչիմ , զուցէ
եկեալ , ոչ որպէս ես կամիմն՝ գտա-
նիցեմ զձեզ . եւ ես զտամիցիմ ձեզ՝
որպէս եւ դուք ոչ կամիցիք . զուցէ
²դարձեալ հեռ , նախանձ , սրամտու-
թիւնք , զրդուութիւնք , չարախօսու-
թիւնք , քսութիւնք , ⁴հպարտու-
թիւնք , ամբարտաւանութիւնք , խոռ-
21 վութիւնք . Գուցէ դարձեալ , յորժամ

¹Զ-նն , Թող զորս արտաքինքն են , որ նեղեն զիս հանապազ է հոգ ամենայն եկեղեցեացն

²Ո՞րտա , անդգամ , զի պարծեցայ
³Զ-նն , ստիպեցէք զիս
⁴Ի Յուսնն պատմութեանս

դայցեմ, նկուեն ինչ առնիցէ զիս Աստուած իմ առ ձեզ. եւ սուզ առնուցում վասն բազմաց յառաջագոյն մեզուցեցրոց, եւ ոչ ապաշխարելոց ի վերայ պղծութեան եւ պիտակութեան եւ զիջութեան զոր գործեցին:

ԳԼ ԺԳ


1 Այս երիցս անգամ գամ առ ձեզ, զի ի բերանոյ երկուց եւ երից վկայից
 2 հաստատեցի ամենայն բան: Յառաջ ստացի, եւ զարձեալ կանխաւ ասեմ յանդիման երկիցս անգամ, եւ այժմ ի բացուստ զբեմ յառաջագոյն յանցուցեցրոցն եւ այլոցն ամենեցուն, զի եթէ եկից դարձեալ, ոչ խնայեցից:
 3 Եթէ զիորձ ինչ խնդրէք զՔրիստոսի որ ինեւս ընդ ձեզ խօսի, որ հզօրացեալն է ի ձեզ, եւ ոչ տկարացեալ:
 4 Զի թէպէտ եւ խաչեցաւ ի մերմէ տկարութենէ, այլ կենդանի է զօրութեամբն Աստուծոյ. եւ մեր թէպէտ եւ տկարանայցեմք յիսան նորա, այլ կենդանի լիցուք ընդ նմա զօրութեամբն Աստուծոյ:
 5 ԳԿ. Փորձեցէք զանձինս ձեր, եթէ կայցէք ի նոցն հաւատս. ըննեցէք զանձինս, եթէ ոչ զիտէք զանձինս, զի

Քրիստոս Յիսուս ի ձեզ է, բայց եթէ անպիտանք իցէք: Այլ ակն ունիմ թէ զիտիցէք, զի մեր ոչ եմք անպիտանք:
 7 Այլ խնդրեմք յԱստուծոյ զի մի՛ ինչ արասցէ ձեզ չար. ոչ զի մեր ընտիրք երեւեսցուք, այլ զի զուք զբարիս գործիցէք, եւ մեր անպիտանք գտանիցիմք: Զի ոչ կարեմք ինչ հակառակ կալ ճշմարտութեանն, այլ վերահացու եմք ճշմարտութեանն: Խրախ եմք, յորժամ մեր տկարանայցեմք, եւ զուք զօրաւորք լիցէք. զզոյն խկ եւ ազօթս առնեմք՝ զձեր հաստատութիւնդ: Վասն այնորիկ զայս ի հետուստ գրեմ, զի մի՛ յորժամ եկից, սասակութեամբ վարեցայց ըստ խխանութեանս, զոր ետ ինձ Տէր ի շինել եւ ոչ ի քակել:
 11 Այսուհետեւ, եզբարք, ողջ լերուք, հաստատուն կացէք, մխիթարեցարուք, միարան լերուք, խաղաղութիւն արարէք. եւ Աստուած խաղաղութեան եւ սիրոյ եզրիցի ընդ ձեզ: Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան. ողջոյն տան ձեզ սուրբք ամենայն:
 13 Ծնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ սէրն Աստուծոյ եւ հազարգութիւն Հոգւոյն Սրբոյ ընդ ձեզ ամենեսին: Ամէն:

Աս Կորնթոսի երկրորդ գրեցումն ի Փիլիպեոյ ի յեւն Տէրոսի եւ Դոսիոյ:

¹ Ունիմ, որպէս թէ յանդիման
² Յանայն պիտակ
³ Յայն, ի տկարութենէ
⁴ Ի Յանայն, ունիմ, ի նմա, այլ՝ ընդ նմա
⁵ Բարեմք, Աստուծոյ ի ձեզ

⁶ Յայն, առնիցէք զուք չար



ԱՌ ԳԱՂԱՏԱՅԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԳՌ. ՊԱՒՂՈՍ, առաքեալ ոչ ի մարդկանէ եւ ոչ ի ձեռն մարդոյ, այլ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եւ Աստուծոյ Հօր որ յարոյց զնա ի մեռելոց,
 2 Եւ որ ընդ իս են եղբարք ամենեքին,
 3 Եկեղեցեացոց Գաղատացւոց: Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ ի Հօրէ եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Բրիստոսէ, Որ ետ զանձն իւր վասն մեղաց մերոց, զի զմեզ փրկեացէ յաշխարհէ աստի չարէ ըստ կամացն Աստուծոյ եւ Հօր մերոյ: Որում փառք յաւիտեանս յաւիտենից: Ամէն:
 6 Զարմանամ զի այդպէս վազվազակի փոփոխիք յայնմանէ որ կոչեացն զձեզ ի շնորհան Բրիստոսի յայլ աւետարան:
 7 Որ ոչ զոյ այլ, բայց եթէ իցեն ոմանք որ խոռվեցուցանիցեն զձեզ, եւ կամիցին չըջել զաւետարանն Բրիստոսի:
 8 Այլ թէ մեք կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեսցաքն ձեզ, նզովեալ լիցի:
 9 Որպէս յառաջագոյնն ասացաք, եւ արդ զարձեալ ասեմ, եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր ատէքն,
 10 նզովեալ լիցի: Արդ մարդկա՞ն հաճոյ լինիցիմ, թէ՛ Աստուծոյ: Կամ խնդրիցեմ մարդկա՞ն հաճոյ լինել: Եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Բրիստոսի ծառայ ոչ էի:
 41 ԳՁ. Յուցանեմ ձեզ, եղբարք, զաւետարանն որ աւետարանեցաւ յինէն,
 42 զի ոչ է ըստ մարդոյ: Քանզի եւ ոչ ես ի մարդոց ատի, եւ ոչ ուսայ յուսմեքէ, այլ ի յայտնութենէն Յիսուսի
 43 Բրիստոսի: Քանզի լուեալ իսկ է ձեր զիմ զնացսն որ երբեմն ի Հրէութեան անդ, զի անչափ հալածէի զեկեղեցին

Աստուծոյ, եւ աւար հարկանէի զնա:
 14 Եւ յառաջագոյն էի ի Հրէութեանն քան զբարում հասակակիցս իմ որ յազգին իմում էին: առաւել նախանձախնդիր էի իմոյ հայրենի աւանդութեանցն:
 15 Այլ յորժամ կամեցաւ Աստուած (որոշեաց զիս յորովայնէ մօր իմոյ, եւ կոչեաց ի ձեռն շնորհաց իւրոց,) Յայտնել զՈրդին իւր Ինեւ, զի աւետարանեցից զնա ի հեթանոսս, անդէն վազվազակի ոչինչ զգացուցի մարմնոյ
 17 Եւ արեան, Եւ ոչ ելի յերուսաղէմ առ որ յառաջագոյն քան զիս առաքեալքն էին, այլ չոզայ յԱրաբիա, եւ զարձեալ զարձայ ի Գամասկոս: Ապա յետ երկից ամաց ելի յերուսաղէմ տեսանել զՊետրոս, եւ եղէ առ նմա աւուրս հնդեատասան: Զայլ ոք յառաջելոց անտի ոչ անտի, բայց միայն զՅաւոյթոս զեղբարցն Տեառն: Այլ զոր զրեմա առ ձեզ, անհասիկ առաջի
 21 Աստուծոյ, զի ոչ ստեմ: Ապա եկի ի 22 կողմանս Ասորոց եւ կիրիկեցւոց, Եւ յանձանօթս էի երեսօք եկեղեցեացն որ ի թլիատութենէ անտի էին՝ ի 23 Բրիստոս: Բայց զի լսելով լուեալ էր թէ Որ հալածէրն զմեզ յայնժամ, արդ աւետարանէ զհաւատսն զոր երբեմն 24 խախտէր: Եւ փառաւոր անէին ինեւ զԱստուած:

ԳԼ Բ

1 ԵԿ. Ապա յետ ամաց չորեքտասանից միւսանգամ ելի յերուսաղէմ ընդ Բառ- 2 նարայ՝ առեալ ընդ իս եւ զՏիտոս: Եւ ելի ըստ յայտնութեանն. եւ զգացուցի նոցա զաւետարանն զոր քարոզէի
 14*1, յիս 23*12, Հրէաստանի որ

ի հեթանոսս , առանձինն այնոցիկ որ կարծեալքն էին , գուցէ ընդունայն ինչ ընթացեալ իցեմ կամ ընթանայցեմ :

3 Այլ եւ ոչ Տիտոս որ ընդ իս ի հեթանոսաց էր՝ բռնադատեցաւ թրիատել :

4 Այլ վասն սպրդողաց սուտ եղբարցն , որք սպրդեցին մտանել զիտել զաղատութիւնն մեր զոր ունիւմք ի Բրիստոս Յիսուս . զի զմեզ ծառայեցուս :

5 ցեն : Որոց եւ ոչ առ ժամանակ մի անսացաք հնազանդութեանն , զի ճշմարտութիւն աւետարանին հաստատեցի առ ձեզ : Բայց զկարծելոցն եթէ իցեն ինչ , որպիսիք ոք երբեմն էին , չէ ինչ ինձ փոյթ . քանզի Աստուած աին մարդկան ոչ առնու . զի ինձ կարծեալքն այնպիսի ինչ ոչ զղացուցին :

7 Այլ զնորին հակառակն , իրբեւ տեսն եթէ հաւատացեալ է ինձ աւետարանն անթրիատութեան , որպէս Պետրոսի՝

8 թրիատութեան . (Ձի որ յաջողեացն Պետրոսի յառաքելութիւն թրիատութեանն , յաջողեաց . եւ ինձ ի հեթանոսս .)

9 Իրբեւ զիտացին զչնորհան որ տուեալ էին ինձ , Յակովրոս եւ Կեփաս եւ Յովհաննէս որ կարծեալ սիւնքն էին , ձեռն ետուն հաւանութեան ինձ եւ Բառնաբայ . զի մեք՝ ի հեթանոսս ,

10 եւ նորք՝ ի թրիատութեանն . Բայց միայն զի զաղքատսն յիշեցուք , զոր եւ ես փութացայ զնոցն ստնել :

11 Ե՛ր . Այլ յորժամ եկն ՚Կեփաս յԱնտիոք , ընդէմ զարձայ նորա , քանզի

12 զոգ իրբեւ ստղտեալ իմն էր : Քանզի մինչեւ եկեալ էին ոմանք առ ի Յակովրայ , ընդ հեթանոսս ուտէր ՚անխտիր . իսկ իրբեւ եկին , զատանէր եւ որոչէր զանձն՝ երկուցեալ յայնցանէ որ ի թրիատութիւնէ անտի էին :

13 Եւ կեզմաւորեցան ընդ նմա եւ այլ Հրեայքն , մինչեւ Բառնաբաս անպամ խոնարհեցաւ ի նոցա կեզմաւորութիւնն : Այլ իրբեւ տեսի թէ ոչ ուզիլ զնան ի ճամարտութիւն աւետարանին , ասեմ ՅԿեփաս առաջի ամենեցուն , եթէ զու որ Հրեայդ ես՝ հեթանոսաբար եւ ոչ հրէաբար կեաս , զի՛որդ ստիպես հեթանոսաց յինել հրեարէն :

15 Ձի մեք բուն Հրեայք եմք , եւ ոչ

16 ի հեթանոսաց մեղաւորք : Չայս զիտելք եթէ ոչ արդարանայ մարդ ի զործոց օրինաց , եթէ ոչ ի հաւատոցն Յիսուսի Բրիստոսի . եւ մեք ի Բրիստոս Յիսուս հաւատացաք , զի արդարացուք ի հաւատոցն Բրիստոսի , եւ ոչ ի զործոց օրինաց . զի ի զործոց օրինաց ոչ արդարացի ամենայն մարդ :

17 մին : Իսկ եթէ մինչ խնդրիցեմք արդարանալ ի Բրիստոս , եւ զտանիցիմք մեղաւորք . ապա ուրեմն Բրիստոս մեղաց պաշտօնեայ եղեւ . քաւ լիցի :

18 Ձի եթէ զոր քակեցին՝ զնոցն միւսանալամ չինիցեմ , ապա յանցաւոր զանձն

19 իմ ես ինձէն երեւեցուցանեմ : Ձի ես օրինօք օրինացն մեռայ , զի Աստուծոյ

20 կեցիլք . ՚Եւ ընդ Բրիստոսի ի խաչ ՚Կելից . եւ կենդանի եմ այսուհետեւ , ոչ ես՝ այլ կենդանի է յիս Բրիստոս :

Ե՛Ձ . Այլ որ այժմս կեամ մարմնով , հաւատովք Որդւոցն Աստուծոյ կեամ , որ սիրեացն զիս , եւ մատնեաց զանձն

21 վասն իմ : Եւ ես ոչ անարդեմ զչնորհան Աստուծոյ . զի եթէ յօրինաց անտի էր արդարութիւն , ապա Բրիստոս զուր մեռա :

ԳԼ. Գ

1 Ո անմիտ Գաղատացիք , ո՞նախանձ արար զձեզ⁵ . որոց զրեթէ առաջի աչաց Յիսուս Բրիստոս զրեցաւ ի խաչ

2 երեալ : Չայս միայն կամիմ ուսանել ի ձէն՝ . ի զործոց օրինաց զՀոգին ընկալարուք , եթէ ի լրոյ հաւատոց :

3 Այդչափ անմիտ էք . սկսեալ հոգւով ,

4 եւ արդ մարմնով վախճանիք : Եւ այնչափ անցք անցին ընդ ձեզ զ՞ուր , եթէ

5 իցէ զուր : Իսկ արդ որ բաշխեաց ի ձեզ զՀոգին եւ յաջողեաց ի ձեզ զգորութիւնն . ի զործոց օրինաց էր , եթէ

6 ի լրոյ հաւատոց : Որպէս Աբրահամ հաւատաց յԱստուած , եւ համարեցաւ

7 նմա յարդարութիւն : ⁶Գիտիցէ՛ք արդեւք՝ , զի որք ի հաւատոց անտի են ,

8 նորք են որդիք Արրահամու : Յառաջագոյն զիտէր զիր , եթէ ի հաւատոց անտի արդարացուցանէ Աստուած զհեթանոսս , յառաջագոյն խոստացաւ

¹Ո՛ւնէ , Պետրոս ³Ո՛ւնէ , ցՊետրոս
²Ի Յաննէս պատմէ

⁴Յաննէս , ելի
⁵Ո՛ւնէ , յաւելու , ոչ հնազանդել ճշմարտութեան
⁶Յաննէս , Ապա զիտացիք

Աբրահամու, թէ Ի քեզ օրհնեսցին ա-
 9 մենայն ազգք: Այսուհետեւ որք ի հա-
 10 տայեւոյն Աբրահամու: Զի որ միան-
 զամ ի գործոց օրինացն են, ընդ ա-
 նիծելք են. քանզի գրեալ է թէ Անի-
 ծեալ ամենայն մարդ որ ոչ կացցէ յա-
 մենայն գրեալսն ի գիրս օրինաց՝ առ-
 նել զամենայն: **ՎՋ**
 11 Զի օրինօքն ոչ ոք արդարանայ ա-
 ռաջի Աստուծոյ, այն յայտ իսկ է. զի
 Արդարն, ՚ստէ, ի հաւատոց կեցցէ:
 12 Բայց օրէնքն չեն ի հաւատոց, այլ որ
 13 արասցէ զայն կեցցէ ի նոսին: Քրիս-
 տոս գնեսց զմեզ յանիծից օրինացն,
 եղեալ վասն մեր անէծք, (զի գրեալ է
 թէ Անիծեալ ամենայն որ կախեալ
 14 կայցէ զփայտէ,) Զի ի հեթանոսս օրհ-
 նութիւնն Աբրահամու եղիցի ի Քրիս-
 տոս Յիսուս. զի մեք զաւետիս Հոգ-
 15 ւոյն Աբրոյ ընկայցուք հաւատովք:
 16 Ըստ մարդկութեան ասեմ, եղբարք.
 Ապարէն զմարդկան հաստատեալ կտակ
 ոչ ոք կարէ անարգել, եւ ոչ այլ հրա-
 16 ման ի վերայ այնր տալ, իսկ Աբրա-
 համու խոտտացան աւետիքն եւ զա-
 ւակի նորա. եւ ոչ ասէ, Զաւակաց
 իբրեւ բազմաց, այլ իբրեւ զմիոյ, թէ
 եւ զաւակի քում, որ է Քրիստոս:
 17 Բայց զայս ասեմ, Զկտակն յառաջա-
 զոյն հաստատեալ յԱստուծոյ ի Քրիս-
 տոս, օրէնքն որ յետ չորեքարեւր եւ
 երեսուն ամի եղան, ոչ կարեն խախ-
 18 տել առ ի խախտելոց զաւետիսն: Եթէ
 յօրինաց անտի է ժառանգութիւնն,
 ապա ոչ եւս յաւետեացն. բայց Աբրա-
 համու աւետեօք չնորհեաց Աստուած:
 19 Իսկ զի՞նչ իցեն օրէնք. յանցուածոց
 վասն յաւելան, մինչեւ եկեսցէ զա-
 ւակն, որուով խոտտացեալն էր կար-
 գեալ հրէշտակօք ի ձեռն միջնորդի:
 20 Իսկ միջնորդ միոյ ուրուք ոչ է, բայց
 21 Աստուած մի է: Իսկ արդ օրէնքն հա-
 կատակ ինչ իցեն աւետեացն Աստու-
 ծոյ. քաւ լիցի. զի եթէ տուեալ էին
 օրէնքն որ կարող էին կենդանի առնել,
 ապա հաստատ յօրինաց անտի էր ար-
 22 ժարութիւն: Այլ փակեցին գիրք զա-
 մենակն ընդ մեղօք, զի աւետիքն ի
 հաւատոց անտի Յիսուսի Քրիստոսի

23 տացին հաւատացելոց: Մինչեւ հա-
 ւատքն եկեալ էին՝ ընդ օրինօք փակեալ
 պահէտք ի հանգերձեալ հաւատան, որ
 24 յայտնելոց էին ի մեզ: Ապա օրէնքն
 զաստիարակ եղեն մեզ ի Քրիստոս Յի-
 սուս, զի ի հաւատոցն արդարացուք:
 25 Այլ իբրեւ եկին հաւատքն, ոչ եւս ընդ
 26 զաստիարակաւ եմք: Քանզի ամենե-
 քին որդիք Աստուծոյ էք հաւատովք
 27 ի Յիսուս Քրիստոս: Որք միանգամ
 ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս
 28 զպեցեալ էք. չիք խախր, Ոչ Հրէի եւ
 ոչ հեթանոսի, ոչ ծառայի եւ ոչ աղա-
 տի, ոչ արուել եւ ոչ իղի. զի ամե-
 նեքեան զուք մի էք ի Քրիստոս Յի-
 29 սուս: Ապա եթէ զուք Քրիստոսի էք,
 ուրեմն Աբրահամու զաւակ էք, ըստ
 աւետեացն ժառանգք:

ԳԼ. Դ

1 ԶԿ. Զայս ասեմ, զորքան ժամանակս
 ժառանգն տղայ է՝ չէ ինչ առաւել քան
 զժառայն, թէպէտ եւ Տէր իցէ ամե-
 2 նեցուն. Այլ ընդ հազարապետօք է եւ
 ընդ զաւատապետօք մինչեւ ի ժամա-
 3 նակակէտ հօրն: Նոյնպէս եւ մեք մինչ
 տղայքն էաք, ընդ տարերբք աշխար-
 4 հիս ի ծառայութեան կայաք: Այլ իբ-
 րեւ եկն լրումն ժամանակին, առա-
 քեաց Աստուած զՈրդին իւր որ եղեւ
 5 ի կնօջէ, եւ եմուս ընդ օրինօք. Զի
 գնոսա որ ընդ օրինօքն իցեն՝ գնեսցէ,
 զի մեք զորեւրութիւն ընկայցուք:
 6 Եւ զի էք զուք որդիք, առաքեաց Աս-
 տուած զՀոգի Որդոյն իւրոյ ի սիրտս
 7 մեր՝ որ ազգազակէ Աբրա, Հայր: Այ-
 սուհետեւ չես ծառայ, այլ որդի. եթէ
 որդի, եւ ժառանգ ³Աստուծոյ:
 8 Այլ յայնժամ մինչ ոչն զիտէիք զԱս-
 տուած՝ ծառայէիք այնոցիկ որ ոչն էին
 9 ի բնէ Աստուածք: Այլ այժմիկ ծանե-
 րուք զԱստուած, մանաւանդ թէ ծա-
 նուցայք իսկ յԱստուծոյ, զիա՞րդ զառ-
 նայք միւսանգամ ի տարերս տկարս եւ
 յաղքատս, որոց միւսանգամ զանձինս
 10 ծառայեցուցանել կամիք: Զաւուրս
 խարէք եւ զամիսս եւ զժամանակս
 11 եւ զտարիս: Երկնչիմ ի ձէնջ, զուցէ
 թէ ի զուր ինչ վաստակեցի ի ձեզ:
 12 Եղերուք իբրեւ զիս, քանզի եւ ես

¹ Ի Յոանն պատմ

² Ունտ, ձեր ³ Ունտ, Աստուծոյ ի Քրիստոս

լրբեւ զձեզդ էի . եղբարք, աղաչեմ զձեզ, չիք ինչ ձեր մեղուցեալ առ իս :

13 Գիտէք զուրբ զի տկարութեամբ մարմնոյ աւետարանեցի ձեզ զառաջինն . եւ զփորձանան որ ի մարմնի իմում

14 էին՝ Ոչ անարգեցէք եւ ոչ անգոսնեցէք, այլ իրբեւ զհրեշտակ Աստուծոյ ընկալարուք զիս, իրբեւ զՔրիստոս

15 Յիսուս : Իսկ արդ ո՛ւր է երանութիւնն ձեր . վկայեմ ձեզ, եթէ հնար ինչ էր, զաչս ձեր հանէիք եւ տայիք

16 ինձ : Արդ զի՞ թշնամի իմն եղէ ձեզ, զի զստոյգն խօսեցայ : Այլ նախանձեցուցանեն զձեզ ոչ ի բարի, եւ արգելուլ կամին զձեզ զի նոցա նախանձանձաւոր լինել ի բարիս յամենայն ժամ, եւ ոչ միայն յորժամ ի ձերում միջի իցեմ :

19 ԶԳ. Որդեակք իմ, զորս զարձեակ վերստին երկնեմ, մինչեւ նկարեցի

20 Քրիստոս ի ձեզ, կամէի այժմ զայ առ ձեզ եւ փոխել զբարբառ իմ, զի տարակուսեալ եմ ես վասն ձեր :

21 Ասէք ինչ ինձ՝ որ ընդ օրինօքն կամիք լինել, չիցէ՞ ընթերցեալ ձեր զօրէնս : Զի զրեալ է թէ Աբրահամու երկու որդիք էին, մի՞ յաղախնոյ անատի, եւ մի՞ յաղատէն : Այլ որ յաղախնոյն էր՝ ըստ մարմնոյ ծնեալ էր, եւ որ յաղատէն՝ ըստ աւետեացն . Որ է առակ օրինակի . զի այս ինքն են երկու կտակարանք, մի՞ ի լեռնէ Սինայ ի ծառայութիւն ծնեալ, որ է Հագար :

25 Քանզի Հագարն լեռն Սինայ է յԱրարիա, հաւասար է յայսմ Երուսաղեմի, զի ծառայէ որդուիք իւրուիք հանդերձ :

26 Այլ վերինն Երուսաղեմ ազատ է, որ է մայր մեր Յամենեցուն, Զի զրեալ է, Ուրախ լեր, ամուլ, որ ոչ ծնանէիր . գոչեա եւ աղաղակեա որ ոչգ երկնէիր . զի բազում են որդիք սկնզկից առաւել քան զարամբոյն : Այլ մեք, եղբարք, ըստ Իսահակայ աւետեացն որք զիք եմք : Այլ որպէս յայժամ, որ ըստ մարմնոյն ծնեալ էր՝ հալածէր զայն որ ըստ հոգւոյն, նոյնպէս եւ այժմ :

30 Այլ զի՞նչ ասէ գիր, Ի բաց հան զալսխինգ եւ զորդի դորա, զի մի՞ ժա-

ռանգեցէ որդի աղախնոյ ընդ որդույ աղատին : Վասն որոյ, եղբարք, չեմք որդիք աղախնոյն, այլ աղատին, յազատութեամբն, որով Քրիստոս զմեզ ազատեցոյց :

ԳԼ. Ե

1 Պինգ կացէք այսուհետեւ, եւ մի՛ միւսանգամ ընդ լծով ծառայութեան մտանէք :

2 ԶԶ. Ահաւատիկ ես Պաւղոս ասեմ ձեզ, զի եթէ թլլիատիք, Քրիստոս ինչ ձեզ ոչ օղնէ : Վկայեմ ամենայն մարդոյ որ թլլիատիցի, թէ պարտական է զամենայն օրէնսն կատարել, յաւիանեալ էք ի Քրիստոսէ որ օրինօքն արգարանայք, եւ անկեալ էք ի չնորհաց անտի : Զի մեք Հոգւօվն ի հաւատոց յուսոյն արգարութեան ակն ունիմք :

6 Զի ի Քրիստոս Յիսուս ոչ թլլիատութիւն ինչ կարող է, եւ ոչ անթլլիատութիւն, այլ հաւատք սիրով աջողեալք : Բարեք ընթանայիք . ո՞ կասեցոյց զձեզ ճշմարտութեանն հաւանել, Զի այն հրապոյրք ոչ յայնմանէ են որ կօչեացն զձեզ : Փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ : Այլ ես յուսացեալ եմ ի ձեզ Տերամբ, թէ ոչ այլազգ ինչ խորհիցիք, եւ որ խոռվեցուցանէ զձեզ՝ կրեսցէ զատաստան :

11 ո ոք եւ իցէ : Այլ ես, եղբարք, եթէ թլլատութիւն քարոզէի, ընզէ՛ր տակաւին հալածիմ . ապա ուրեմն խափանեալ իցէ գայթակղութիւն լաչին :

12 Երանի թէ մօտակտուր իսկ լինէին որ զձեզն խոռվեցուցանեն :

13 Զի զուրք յազատութիւն կօչեցեալ էք, եղբարք . միայն զի ազատութիւն ձեր ոչ լինիցի ի սլատաստ մարմնոյ, այլ սիրով ծառայեցէք միմեանց : Զի ամենայն օրէնք ի մի բան կատարին, ի Սիրեցեսն զընկերքս իրբեւ զանձնքոս : Ապա եթէ զմիմեանս խածատիցէք եւ ուտիցէք, զզոյչ լերուք, գուցէ ի միմեանց սատակիցիք :

16 ԷԳ. Բայց զայս ասեմ . Հոգւով դնացէք, եւ զցանկութիւն մարմնոյ մի՛ կատարէք : Զի մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, եւ հոգի՛ հակառակ

18-նն, լուեալ
23-նն, այժմն

38-ման գալտի

Ի Բազմոս աստեմ սխանէ յաւորք էլուտի

մարմնոյ . եւ զի սոքա միմեանց հա-
կառակ են , մի՛ զոր կամիցիքն՝ զայն
18 առնիցէք : Իսկ եթէ Հոգւով վարիք ,
19 ապա չէք ընդ օրինօք : Զի յայտնի են
զործք մարմնոյ , այսինքն են շնու-
թիւն , պոռնկութիւն , պղծութիւն ,
20 զիջութիւն , կռապաշտութիւն , կա-
խարգութիւն , թշնամութիւն , հեռ,
նախանձ , բարկութիւն , հակառակու-
թիւնք , երկպառակութիւնք , հեր-
21 ձուածք , Զարակնութիւն , սպանու-
թիւնք , արբեցութիւնք , անառակու-
թիւնք , եւ որ ինչ սոցին նման են .
զոր յառաջագոյն իսկ առեմ ձեզ , որպէս
եւ կանխաւն ասէի , թէ որ զայսպիսի
ինչ գործեն՝ դարբայութիւն Աստուծոյ
22 ոչ ժառանդն : Իսկ պտուղ Հոգւոյն
այս է . սէր , խնդութիւն , խաղաղու-
23 թիւն , երկայնմտութիւն , Քաղցրու-
թիւն , բարութիւն , հաւատք , հեղու-
թիւն , ժուժկայութիւն . զայսպիսեաց
24 աստի օրէնքն չեն հակառակ : Իսկ որ
Քրիստոսեանքն են՝ զմարմին իւրեանց
ի խաչ հանին կարեօքն եւ ջանկու-
25 թեամբք հանդերձ : Եթէ կեամբ Հոգ-
ւով , ընդ Հոգւոյն եւ միաբանեցուք ,
26 Եւ մի՛ լիցուք սնապարծք՝ միմեանց
ձայն տալով եւ ընդ միմեանս նախան-
ձելով :

ԳԼ . Զ


1 ԷՁ . Եղբարք , եթէ յանկարծ ըմբռնես-
ցի ոք ՚ի ձէնջ յինչ եւ իցէ յանցանս ,
զուք որ հողեւորքդ էք՝ հաստատեցէք
զայնպիսին հողւով հեղութեան . զպոչ
լինիցիք անձանց զի մի՛ եւ զուք փոր-
2 ձիցիք : Զմիմեանց բեռն բարձէք , եւ
այնպէս կատարեցէք զօրէնսն Քրիս-
3 տոսի : Եթէ համարիցի ոք լինել ինչ ,
4 եւ չիցէ , զանձն իւր խաբէ : Զգործ
իւր կշռեսցէ իւրաքանչիւր ոք , եւ ա-
պա անձին իւրում միայն պարծանս
5 տացէ , եւ մի՛ առ ընկերաւն : Զի իւ-

¹ի բազումս պոլոսէ

րաքանչիւր ոք զիւր բեռն բառնալոց է :
6 Հաղորդութիւն արասցէ ²աչակերան
վարդապետին յամենայն բարութիւնս :
7 Մի՛ խաբիք , Աստուած ոչ արհամարհի :
8 Զի զոր ինչ սերմանէ մարդ՝ զնոյն եւ
հնձեսցէ . որ սերմանէ ի մարմին իւր՝
ի մարմնոյ անտի հնձեսցէ զապակա-
նութիւն . եւ որ սերմանէ ի Հոգին՝
ի Հոգւոյ անտի հնձեսցէ զկեանսն յա-
9 լիսենից : Այլ զբարիս գործել մի՛
ձանձրասցուք , զի ի ժամանակի իւ-
րում հնձեսցուք ³առանց լքանելոյ :
10 Այսուհետեւ մինչդեռ ժամանակս ի
ձեռս է , գործեսցուք զբարիս առ ա-
մենեսեան , մանաւանդ առ ընտանիսն
հաւատոյ :
11 Տեսէք որպիսի գրով զբեցի առ ձեզ
12 իմով ձեռամբ : Զի որ միանդամ կա-
մին բարեմարդիկ լինել մարմնով , նո-
քա ստիպեն զձեզ թրխատել , միայն
զի մի՛ ⁴լիսաչին Քրիստոսի զհետ եր-
13 թայցեն : Քանզի եւ որ թրխատեալքն
իսկ են՝ նոքա զօրէնսն ոչ պահեն , այլ
կամին զի զուք թրխատեսցիք , զի ձե-
րով մարմնովդ պարծեսցին : ՎՋ
14 Այլ ինձ քաւ լիցի պարծել , բայց
միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի , որով ինձ աշխարհ ի խաչ
15 ելեալ է , եւ ես՝ աշխարհի : ⁵Զի ոչ՝
թրխատութիւն ինչ է եւ ոչ անթրխա-
16 տութիւն , այլ նոր արարած : Եւ որ
միանդամ այսմ կանոնի միաբան լինին ,
խաղաղութիւն ի վերայ նոցա եւ ողոր-
մութիւն , եւ ի վերայ Խորայելին Աս-
17 տուծոյ : Այսուհետեւ աշխատ ոք զիս
մի՛ արասցէ , զի ես ⁶զչարչարանսն
Քրիստոսի ի մարմնի իմում կրեմ :
18 Ծնորք Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի ընդ ողւոյդ ձերում , եղբարք :
Ամէն :

Աւ Գաղատացի գրեցաւ է Հուովմէ :

²Յայն , որ ուսանին զբանն
³Յայն , եթէ ոչ լքանցիմք
⁴Յայն , վասն խաչին Քրիստոսի հալածեսցին
⁵Ուստ , զի ի Քրիստոս Յիսուս ոչ
⁶կուտ , զերաչխեսպն



ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԸԿ. ՊԱՒՂՈՍ,՝ առաքեալ Յիսուսի Բրիստոսի կամօքն Աստուծոյ, սրբոց որ են յԵփեսոս, եւ հաւատացելոց 2 Քի Բրիստոս. Շնորհք ընդ ձեզ եւ խազազութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Բրիստոսէ:

3 Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի, որ օրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնութեամբ 4 յերկնաւորս ի Բրիստոս. Որպէս ընտրեաց զմեզ նովա յառաջ քան զլիններն աշխարհի, լինել մեզ սուրբս եւ անարատս առաջի նորա սիրով: Յառաջագոյն սահմանեաց զմեզ յորդեգրութիւն ի ձեռն Յիսուսի Բրիստոսի ի նոյն՝ ըստ հաճութեան կամաց իւրոց, 6 ի գովեստ փառաց շնորհաց իւրոց, ուրով զուարճացոց զմեզ Սիրելեալն:

7 Որով ունիմք զիրկութիւն ի ձեռն արեան նորա, զթողութիւն մեզաց ըստ 8 մեծութեան շնորհաց իւրոց. Որ առաւելաւ ի մեզ ամենայն իմաստութեամբ եւ զիտութեամբ: Եցոյց մեզ զխորհուրդս կամաց իւրոց ըստ հաճութեան իւրում, զոր յառաջագոյն 10 եզ 3 նովաւ, ի սնտեսութիւն յրման ժամանակաց, բովանդակել զամենայն Բրիստոսիւ, որ ինչ յերկինս եւ որ 11 ինչ յերկրի ի նոյն, Որով եւ վիճակեցաք յառաջագոյն հրաւիրեալք՝ ըստ յառաջագորութեանն 2 Աստուծոյ, որ զամենայն յաջողէ ըստ խորհրդոց կամաց իւրոց: 12 Լինել մեզ ի գովեստ փառաց նորա՝ յառաջագոյն յուսացելոցս 13 ի Բրիստոս. Որով եւ զուրք իբրեւ

լուարուք զբանն ճշմարտութեան, զաւետարանն յիրկութեան ձերոց, որով եւ հաւատացեալ կնքեցաք Հոգւոյն 14 Սրբոյ աւետեաց. Որ է առհաւատչեայ ժառանգութեան մերոյ, ի յիրկութիւն 5 նուաճութեան, ի գովեստ փառաց նորա:

15 ԸԳ. Վասն այնորիկ եւ ես իբրեւ լուայ զհաւատսն ձեր որ ի Տէր Յիսուս, եւ գսէրն որ ընդ ամենայն սուրբս, 16 Ոչ զազարեմ ի գոհանալոյ վասն ձեր՝ 17 յիչել զձեզ յազօթս. Զի Աստուած Տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի, Հայրն փառաց, տացէ ձեզ զհոգին իմաստութեան եւ յայտնութեան զիտութեամբն իւրով: 18 Լուսաւոր առնել զաչս 6 սրտից՝ առ ի զիտելոյ մեզ զինչ է յոյս կոչման նորա, եւ զինչ է մեծութիւն փառաց ժառանգութեան նորա ի սուրբս, 19 Եւ զինչ է առաւելութիւն մեծութեան զօրութեան նորա ի մեզ հաւատացեալս՝ ըստ յաջողութեան կարողութեան զօրութեանն իւրոց, 20 Զոր յաջողեաց ի Բրիստոս, զի յարոյց զնա ի մեռելոց, եւ նստոց ընդ 21 աջմէ իւրմէ յերկնաւորս ի վերայ ամենայն իշխանութեան եւ սլետութեան եւ զօրութեան եւ տէրութեան եւ ամենայն անուան անուանելոյ, ոչ միայն յաշխարհիս յայսմիկ, այլ եւ ի հանջ 22 զերձեկումն. Եւ զամենայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից նորա, եւ զնա եզ զլուս ի վերայ ամենայն իրիք 23 եկեղեցւոց, Որ է մարմին նորա, լրումն՝ որ զամենայն յամենայն լնու:

1 Գ-ման 4-1-տ 4 Բ-դու-տ, նորա
2 Գ-ն, ի Բրիստոս Յիսուս
3 Ո-մ, յերեւան

5 Գ-ն, սեպհականութեան, 1-տ՝ ստացուածոյ
6 Բ-զու-տ, սրտից ձերոց
7 Գ-ն, ձեզ

ԳԼ Բ

1 Եւ զուրք որ մեռեալն էիք ի մեղս ձեր
 2 եւ յանցանս , Յորս երբեմն զնայիք
 ըստ յաւիտենի աշխարհիս այսորիկ ,
 ըստ իշխանին իշխանութեան օգոյս ,
 այսոյ՝ որ այժմս ընդմտեալ է յորդինս
 3 ապստամբութեան . Յորս եւ մեք ա-
 մենեքեան շրջեաք երբեմն ի ցանկու-
 4 թիւնս մարմնոյ մերոյ , եւ առնէաք
 զկամս մարմնոյ եւ զմտաց , եւ էաք
 5 արդարեւ սրգիք բարկութեան իրրեւ
 այլքն :
 6 ԸՁ . Այլ Աստուած որ մեծն է ողոր-
 մութեամբ , վասն բազում սիրոյն իւ-
 7 րոյ զոր սիրեացն զմեզ , Մինչդեռ մեռ-
 եալն էաք ի մեղս մեր , կենդանիս ա-
 8 րար զմեզ ի Քրիստոս . (Քանզի չնորհօք
 9 ապրեցաք .) Ընդ նմին յարոց , եւ ընդ
 10 նմին նստոց յերկնաւորս ի Քրիստոս
 Յիսուս : Ձի ցուցցէ ի յաւիտեանսն
 որ պալոցն են՝ զառաւել մեծութիւն
 11 չնորհացն իւրոց քաղցրութեամբ ի մեզ
 ի Քրիստոս Յիսուս : Ձի չնորհօք չնոր-
 12 եա էք իրկեալք ի ձեռն հաւատոցն .
 եւ այս ոչ ի ձէնք , այլ Աստուծոյ պար-
 13 զեւ է . Ոչ ի գործոց , զի մի՛ ոք պար-
 14 ձեացի : Ձի նորա արարած եմք՝ հաս-
 տատեալք Քրիստոսիւ Յիսուսիւ ի
 զործս բարութեան , յորս յառաջագոյն
 պատրաստեաց Աստուած , զի ի նոյնս
 զնացուք :
 15 Վասն որոյ եւ զուրք իշխեցէք զի եր-
 բեմն հեթանոսք էիք մարմնով , (որ
 կոչեցեալն են անթլփատութիւն յան-
 16 ուանեալ թրիատութենէ անտի մարմ-
 նաւոր ձեռագործին ,) Ձի էիք ի ժա-
 մանակին յայնմիկ առանց Քրիստոսի ,
 եւ օտարացեալք յառաքինութենէն Իս-
 17 րայելի , եւ տարազիրք յուխտից ա-
 լեւեալացն , եւ յոյս ինչ ոչ ունէիք եւ
 18 անաստուածք էիք յաշխարհի : Իսկ
 այժմիկ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի
 զուրք որ երբեմն հեռաւորքն էիք՝ մեր-
 19 ձաւորք եզերուք արեամբն Քրիստոսի :
 20 Ձի նա է խաղաղութիւն մեր որ արար
 զերկոսեան մի , եւ զմիջնորմն ցանկոյն
 21 քակեաց , զթշնամութիւն ի մարմնի
 22 իւրում . եւ զօրէնս պատուիրանացն

¹Այսինքն, զնացցեց
²Յիսուս, ի ընէ
³Յիսուս, չնորհօք ապրեցարուք

հրամանօքն՝ խափանեաց . զի զերկո-
 սին հաստատեցէ ինքեամբ ի մի նոր
 1 մարդ , եւ արասցէ խաղաղութիւնս . եւ
 հաշտեցուցէ զերկոսին միով մարմնով
 ընդ Աստուծոյ խաչիւն իւրով . քանզի
 սոյան զթշնամութիւն յանձին իւ-
 2 ղում : եւ եկն աւետարանեաց խաղա-
 զութիւնն ձեզ հեռաւորաց , եւ խաղա-
 3 զութիւնն՝ մերձաւորաց . Ձի նովաւ
 4 ունիմք զնուաճութիւն երկոքին միով
 5 Հողւով առ Հայր . Ապա այսուհետեւ
 ոչ էք օտարք եւ պանդուխտք , այլ քա-
 զաքակիցք սրբոց եւ ընտանիք Աս-
 6 տուծոյ , Շինեալք ի վերայ հիման ա-
 սաքելոց եւ մարդարէից , որոյ է զլուխ
 7 անկեանն Քրիստոս Յիսուս . Յորում
 8 ամենայն շինուածն յօղեալ եւ պատ-
 չաճեալ՝ աճէ ի տաճար սուրբ Տերամբ ,
 9 Յորում եւ զուրք ընդ նմին շինիք ի
 ընակութիւն Աստուծոյ Հողւով :

ՎՁ

ԳԼ Գ

1 Վասն այսորիկ եւ Պաւղոս , կապեալ
 Յիսուսի Քրիստոսի վասն ձեր հե-
 2 թանոսաց . Թերեւս լուեալ իցէ ձեր
 զտնտեսութիւն չնորհացն Աստուծոյ ,
 3 որ տուեալ են ինձ ի ձեզ , Ձի ըստ
 յայնութեան ցուցաւ ինձ խորհուրդն ,
 որպէս յառաջագոյն գրեցի առ ձեզ սա-
 4 կաւուրք . Առ ի կարող լինելոյ ընթեռ-
 նով եւ ի միտանուլ զիմաստութիւնն
 5 զիմ ի խորհրդեանն Քրիստոսի . Ձի
 այլոց ազգաց ոչ ցուցաւ որդւոց մարդ-
 կան , որպէս այժմ յայանեցաւ սրբոց
 իւրոց առաքելոց եւ մարդարէից Հող-
 6 ւովն . Լինել հեթանոսաց ժառանգա-
 կիցս եւ մարմնակիցս , եւ հազորդս
 7 աւետեացն ի Քրիստոս Յիսուս աւե-
 8 տարանաւն , Որոյ եղէ եւ սոսաւոր
 ըստ պարզեւաց չնորհացն Աստուծոյ
 որ տուան ինձ ըստ յաջողութեան զօ-
 9 րութեան նորա , (ինձ՝ որ արուպս եմ
 10 ամենայն սրբոց , տուան չնորհքս այս ,)
 ի հեթանոսս աւետարանել զանքնին
 11 մեծութիւնն Քրիստոսի , եւ լուսաւոր
 առնել զամենեպէս , թէ զինչ է տնտե-
 12 սութիւն խորհրոցն որ ծածկեալ էր
 13 ամենայն յաւիտեանց առ Աստուծոյ
 14 որ զամենայն ինչ արար . Ձի յայտ-

⁵Յիսուս գլխով
⁶Որպէս յաւելան , ի ձեռն Յիսուսի Քրիստոսի

հետոյ արդ իշխանութեանց եւ պետու-
 11 Ստուծոյ : Ըստ յառաջադրութեան
 12 Սրբոյ Յիսուսի Քրիստոսի . Որով ու-
 13 Վասն որոյ ազաչեմ, մի՛ ձանձրանալ
 14 է, որ է փառք ²մեր : Վասն այսորիկ
 15 Յիսուսի Քրիստոսի, Ուստի ամենայն
 16 անուանի, Ձի տացէ ձեզ ըստ մեծու-
 17 ներքին մարզն : Բնակել Քրիստոսի
 18 մատացեալք եւ հաստատեալք : Ձի
 19 բովիւն . Ճանաչել զառաւելութիւն
 20 ծոյ : Այլ այնմ որ կարողն է առաւել
 21 եախն է ի մեզ, նմա փառք յեկեղեցւոյն
³եւ ի Քրիստոս Յիսուս յամենայն ազգս
 յաւիտեանից յաւիտեանս : Ամէն :

ԳԼ Դ

1 Արդ աղաչեմ զձեզ ես որ կայեալս
 2 յոր կոչեցարուք, Ամենայն խոնարհու-
 3 փութեամբ անսալ միմեանց սիրով .
 4 Փութալ պահել զմիաբանութիւն Հոգ-
 5 րուք ի մի յոյս կոչման ձերոյ . Մի է
 6 Մի Աստուած եւ Հայր ամենեցուն ,
 որ ի վերայ ամենայնի եւ ընդ ամե-

7 նեան եւ յամենեանիս ⁴ի մեզ : Այլ իւ-
 8 տոսի : Վասն որոյ եւ ասէ, Ել ի բար-
 9 պարգեւս մարդկան : Որ եքն զի՛նչ է,
 10 երկրի : Որ էջն նոյն է եւ որ եքն ի
 11 զամենայն : Եւ նա ետ զոմանս առա-
 12 զեալս, զոմանս մարդարէս, զոմանս ա-
 13 նուարանիչս, զոմանս հովիւս եւ վար-
 14 զապետս . Ի հաստատութիւն սրբոց,
 15 ի գործ սլաշտաման, ի շինուած մարմ-
 16 նոյն Քրիստոսի . Մինչեւ հասցուք ա-
 17 մենեքեան ի մի միաբանութիւն հա-
 18 ւատոց եւ զիտութեան Որդւոցն Աս-
 19 տուծոյ, յայր կատարեալ ի չափ հա-
 20 սակի կատարմանն Քրիստոսի : Ձի մի՛
 21 յայսմնետէ իցեմք տղայք խոտկեալք եւ
 22 տատանեալք յամենայն հողմոց վար-
 23 զապետութեան խարէութեամբ մարդ-
 24 կան, խորամանկութեամբ ի խարէու-
 25 թիւն մոլորութեան . Այլ ճշմարտեալք
 26 սիրով աճեցուցուք ի նա զամենայն,
 27 որ է զըռիս, Քրիստոս . Ուստի ամե-
 28 նայն մարմինն յօգեալ եւ պատշաճեալ
 29 ամենայն խաղալեօք տարաբերութեան,
 30 ըստ ազգեցութեան չափով ըստ իւ-
 31 րաքանչիւր մասին զաճումն մարմնոց
 32 զործէ ի շինած անձին իւրոյ սիրով :
 33 Արդ զայս ասեմ եւ ուխտեմ ի Տէր,
 34 մի՛ եւս ձեզ զնոյն օրինակ զնալ որ-
 35 պէս եւ այլ հեթանոսք զնանս ունայ-
 36 նութեամբ մտաց իւրեանց . Որոք խա-
 37 ւարեալ են սիրաք իւրեանց, եւ օտա-
 38 րացեալ են ի կենաց անտի Աստուծոյ
 39 վասն տգիտութեանն որ է ի նոսա,
 40 վասն կուրութեան սրտից իւրեանց :
 41 Որք ⁵զանձանց իւրեանց զյոյսն հա-
 42 տին, եւ՝ մատնեցին զանձինս զիջու-
 43 թեան, ի գործս ամենայն պղծութեան
 44 ազահութեամբ : Այլ զոք ոչ այսպէս
 45 ուսարուք զՔրիստոս, Թէպէտ եւ
 46 լուարուք զնմանէ եւ նովաւ ուսայք,
 47 որպէս է ճշմարտութիւնն Յիսուսի .
 48 Ի բաց մերկանալ ի ձէնջ ըստ առաջին
 49 զնացիցն զմարզն հին, զապականեալն
 50 ցանկութեամբք խարէութեանն . Եւ

¹Յ.ն., իմում
²Բ.դ., հեր

³Ի Բ.դ.՝ ու գ.՝ ու

⁴Ի Բ.դ.՝ ու գ.՝ ու . յոման՝ ի ձեզ
⁵Յ.ն., անզայեալք

24 նորոգել հողուփն մտաց ձերոց, Եւ զգնեալ զնոր մարդն որ ըստ Աստուծոյն հաստատեալ է արդարութեամբ եւ
 25 սրբութեամբ ճշմարտութեանն: Վասն որոյ ի բաց ընկեցէք զստութիւն, խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում, զի եմք
 26 միմեանց անդամք: Բարկանայք, եւ մի՛ մեղանչէք, արեգակն ի վերայ բար-
 27 կութեան ձերոյ մի՛ մտցէ: Եւ մի՛ տայք
 28 տեղի Սատանայի: Որ զողանայրն՝ մի՛ եւս զողացել, այլ մանաւանդ վաստակեսցէ զործել ձեռօք իւրովք զբարիս. զի բաւական իցէ տալ ում պիտոյ իցէ:
 29 Ամենայն բան աղեղ ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ, այլ որ ինչ բարին է ի շինած սիտոյից, զի տացէ
 30 շնորհս այնոցիկ որ լսենն: Եւ մի՛ տրտմեցուցանէք զՀոգին Սուրբ Աստուծոյ, որով կնքեցարուք ՚յաւուրն
 31 փրկութեան: Ամենայն դատութիւն եւ բարկութիւն եւ սրտատութիւն եւ ազազակ եւ հայհոյութիւն բարձցի ի ձէնջ ամենայն չարութեամբն հանդերձ:
 32 Կերուք ընդ միմեանս քաղցունք, զթածք, շնորհել միմեանց, որպէս եւ Աստուած Բրիստոսիւ շնորհեաց մեզ:

ՊԼ Ե

1 Եղբրուք նմանողք Աստուծոյ իբրեւ
 2 որդիք սիրելիք. Եւ գնացէք սիրով, որպէս եւ Բրիստոս սիրեաց զմեզ, եւ մատնեաց զանձն իւր վասն մեր պատարազ եւ զենումն Աստուծոյ ի հոտ
 3 անուշից: Այլ սրտնկութիւն եւ ամենայն պղծութիւն կամ ազանութիւն եւ անուանեսցի մի՛ ի միջի ձերում,
 4 որպէս եւ վայելէ սրբոց, Եւ զաղրութիւն կամ լսօք յիմարութեան կամ իեզկատակութիւն որ ոչ վայելէ, այլ
 5 մանաւանդ զոնութիւն: Զայս տեղեկացեալ զիտասլիք թէ ամենայն սրտնիկ կամ սիղծ կամ ազան որ է կոպարչալ՝ ոչ ունի ժառանգութիւն յարքայութեանն Բրիստոսի եւ Աստուծոյ:
 6 Մի՛ ոք զձեզ խաբեսցէ բանիւք սնոտութիւն, զի վասն այսորիկ իսկ զայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ որդւոցն անհաւանութեան: Մի՛ այսուհետեւ լինիք բաժանորդք նոցա: Զի

թէպէտ եւ երբեմն էիք խաւար, արդ լոյս էք ի Տէր. իբրեւ զորդիս լուսոյ
 9 գնացէք. Զի պտուղ չլուսոյ ամենայն բարութեամբ է եւ արդարութեամբ եւ
 10 ճշմարտութեամբ: Փորձեցէք զինչ է
 11 հաճոյ Տեառն. Եւ մի՛ կցորդ լինիք անպաղուծեան զործոցն խաւարի, այլ
 12 մանաւանդ յանդիմանեցէք: Զի որ ի ծածուկ: Ինչ գործի ի նոսա՝ զայն եւ
 13 խօսել աղտեղի է: Այլ ամենայն ինչ յանդիմանեալ ի լուսոյ յայտնի լինի. զի ամենայն ինչ որ յայտնի է՝ լոյս է:
 14 Վասն որոյ եւ ասէ, Արի որ ննջեաղ, եւ կանգնեաց ի մեռելոց, եւ լուսատու լիցի քեզ Բրիստոս:
 15 ԹԿ. Տեսլիք ո՛րպէս ճշմարտիւ գնայ-
 16 ցէք. մի՛ իբրեւ անիմաստք, Այլ իբրեւ իւմարտուք. զնեցէք զժամանակս,
 17 զի աւուրքս չարութեան են: Վասն այնորիկ մի՛ լինիք անմիաք, այլ իմացարուք զինչ են կամք Տեառն: Եւ մի՛ արբենայք զինուով յորում զեղխութիւն է, այլ մանաւանդ յցարուք Հոգւոյ.
 18 Խօսել ՚ի սիրտս ձեր՝ սաղմոսիւք եւ օրհնութեամբք եւ երգովք հոգեւորօք, երգել եւ սաղմոս ասել ի սիրտս
 20 ձեր Տեառն: Գոհացարուք յամենայն ժամ ի վերայ ամենայնի յանուն Տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի չորն եւ Աստուծոյ:

21 Հնազանդ լերուք միմեանց երկիւր զիւրն ՚Բրիստոսի: Կանայք իւրեանց արանց հնազանդ լիցին իբրեւ Տեառն.
 22 Զի այր է զլուխ կնոջ, որպէս եւ Բրիստոս զլուխ է եկեղեցւոյ, եւ ինքն
 23 է Փրկիչ մարմնոյ: Այլ որպէս եկեղեցին հնազանդ լինի Բրիստոսի, նոցնպէս եւ կանայք իւրեանց արանց յամենայնի: Արք, սիրեցէք գիւնայս ձեր, որպէս եւ Բրիստոս սիրեաց զեկեղեցին, եւ զանձն իւր մատնեաց վասն
 24 նորա. Զի գնա սրբեսցէ սրբութեամբ
 25 աւաղանիս՝ բանիւ. Զի կացուցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի ինչ արատ կամ
 26 աղտեղութիւն կամ այլ ինչ յայսպիսեաց, այլ զի իցէ սուրբ եւ անարատ:
 27 Նոյնպէս պարտին արք սիրել զիւրեանց

2Ուսն, Հոգւոյն 6Յոնն, աւաղանին ջրոյ
 3Կա՛, ընդ միմեանս 7Կա՛, թորչ
 6Յոնն, զԱստուծոյ ե զՀօրե
 5Ուսն, Աստուծոյ

1Յոնն, յօրն

կանայս իբրեւ զիւրեանց մարմինս . որ սիրէ զկին իւր՝ զանձն իւր սիրէ .
 29 Ձի ոչ ոք երբեք ատեալ զանձն իւր , այլ մնուցանէ եւ զարմանէ զնա , որ-
 30 պէս եւ Պփրիստոս զեկեղեցի . Ձի ան-
 զամբ եմք մարմնոյ նորա , ի մարմնոյ
 31 նորա եւ յոսկերաց նորա : Վասն այսո-
 րիկ թողցէ այր զնայր եւ զմայր իւր ,
 եւ երթիցէ զնետ կնոջ իւրոյ , եւ եղիցին
 32 երկոքին ի մարմին մի : ինորհուրդս այս
 մեծ է , բայց ես ասեմ ի Քրիստոս եւ
 33 յեկեղեցի : Այլ եւ զուրք ²նոցնպէս մի
 ըստ միովէ , զի՝ իւրաքանչիւր ոք զիւր
 կին այնպէս սիրեսցէ իբրեւ զիւր անձն ,
 եւ կին երկնչիցի յառնէ իւրով :

ԳԼ Զ

1 ԹԳ . Որդիք , հնազանդ լերուք ծնու-
 զաց ձերոց ի Տէր , զի այն է արժանն :
 2 Պատուեա զնայր քո եւ զմայր , որ է
 3 առաջին սլատուիրան յաւետիսն , Ձի
 քեղ բարի եղիցի , եւ երկայնակեաց
 4 լինիցիս ի վերայ երկրի : Հարք , մի՛
 զայրացուցանէք զորդիս ձեր , այլ մնու-
 ցանիջիք զնոսա խրատու եւ ուսմամբ
 5 Տեառն : Ծառայք , հնազանդ լերուք
 տերանց ձերոց մարմնաւորաց անիւ
 եւ զողովթեամբ եւ միամտութեամբ
 սրտից ձերոց՝ որպէս եւ Քրիստոսի :
 6 Մի՛ առ ականէ ծառայել իբրեւ մար-
 զանձնոք , այլ իբրեւ ծառայք Քրիս-
 7 տոսի աննել զկամես Աստուծոյ . Սրտի
 մտօք ծառայել իբրեւ Տեառն , եւ մի՛
 8 իբրեւ մարդկան : Գիտասցիք թէ իւ-
 րաքանչիւր ոք որ զինչ աննէ զբարին ,
 զնոցն ընդունի եւ ի Տեառնէ , եթէ՛
 9 ծառայ , եւ եթէ՛ աղատ : Եւ զուրք ,
 տեսիք , զնոցն առնիջիք առ նոսա ,
 ներելով աննել զպատուհասն , զիտաս-
 ցիք թէ եւ նոցա եւ ձեր Տէր զոյ յեր-
 կինս . եւ ակնառութիւն ոչ զոյ առա-
 ջի նորա :
 10 ³Այսուհետեւ զօրացարուք Տերամբ
 եւ կարողութեամբ զօրութեան նո-
 11 րա : Եւ զգեցարուք զսպառազինու-
 թիւնն Աստուծոյ , զի կարող լինիջիք

12 կալ ընդդէմ հնարից Սատանայի : Ձի
 ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ
 ընդ արեան , այլ ընդ իշխանութիւնս
 եւ ընդ պետութիւնս եւ ընդ աշխար-
 հակալս խաւարիս այսորիկ , ընդ այսս
 չարութեան որ ի ներքոյ երկնից :
 13 ԹԶ . Վասն այսորիկ առէք զսպառա-
 զինութիւնն Աստուծոյ , զի կարող լի-
 նիջիք ի զիմի հարկանել ⁴չարին յա-
 14 ւուրն չարութեան : Եւ իբրեւ զամե-
 նայն ինչ կատարիցէք , հաստատուն
 կացէք , զտեղի կալջիք , սնդեալ զմէջս
 ձեր ճշմարտութեամբ , եւ զղեցեալ
 15 զգրանն արգարութեան , եւ ազու-
 ցեալ զոտս սպարաստութեամբ աւե-
 16 տարանին խաղազութեան : Եւ ի վե-
 րայ ամենայնի առէք զվահանն հաւա-
 տոց , որով կարող լինիջիք զամենայն
 17 նետս մուխս չարին չիջուցանել : Եւ
 առէք զսաղաւարտն փրկութեան եւ
 զսուսեր Հողոցն , որ է բանն Աստու-
 18 ծոյ . Ամենայն աղօթիւք եւ խնդրուա-
 ծովք աղօթս աննել յամենայն ժամա-
 նակի Հողով , եւ ի նոցն տքնեծիք ա-
 մենայն ժուժկալութեամբ եւ խըղդ-
 19 րուածովք վասն ամենայն սրբոց , Եւ
 վասն իմ , զի ինձ տացի բան ի բանալ
 բերանոյ իմոյ համարձակութեամբ զու-
 20 ցանել զինորհուրդ աւետարանին . Վասն
 որոյ պատգամաւորիմ կասկանօքս , զի
 նովին համարձակեցայց որպէս եւ
 պարտ իցէ ինձ խօսել :
 21 Բայց զի զիտիցէք եւ զուրք զինէն
 զինչ զործիցեմ , զամենայն ինչ ցուցցէ
 ձեզ Տիւքիկոս սիրելի եղբայր եւ հա-
 22 ւատարիմ սլաշտօնեայ ի Տէր . Չոր ա-
 տաքեցի առ ձեզ զմին իրի , զի զիտաս-
 ջիք զուրք զմէնջ , եւ մխլթարեսցէ
 23 զսիրտս ձեր : Խաղազութիւն ընդ եզ-
 րարս , եւ սէր հաւատովն հանդերձ
 յԱստուծոյ է ձօրէ եւ ի Տեառնէ Յի-
 24 սուսէ Քրիստոսէ : Ծնորնք ընդ ամե-
 նեսին ոչք սիրեն զՏէր մեր Յիսուս
 Քրիստոս անեղծութեամբ :⁵

Առ Եփեսոսիս բրեցաս ի Հռովմէ ի յեռն
 Տիւքիկոս :

¹Ուստի, Տէր
²Ի Յռովմէ պատու
³Ուստի, Այսուհետեւ, եղբայր իմ,

⁴Ի Յռովմէ պատու
⁵Ուստի ի Յոյն եւ է Հայ յեռասփոյց յառեւտն, Ամեն :

ԱՌ ՓԻԼԻՊԵՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ՅԿ. ՊԱՒՂՈՍ եւ Տիմոթէոս, ծառայք Յիսուսի Քրիստոսի, ամենայն սրբոց ի Քրիստոս Յիսուս, որ են ի կողմանս Փիլիպեցոց, եպիսկոպոսակցօք եւ 2 սարկաւազօք. Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ:

3 Գոհանամ զԱստուծոյ իմոյ ի վերայ 4 ամենայն յիշատակաց ձերոյ, Յամենայն ժամ յամենայն խնդրուածս իմ վասն ձեր ամենեցուն առնել աղօթս 5 խնդութեամբ, Վասն հաղորդութեան ձերոյ ընդ աւետարանին յօրէ յառաջ 6 նրմէ մինչեւ ցայժմ. Վստան եմ յայդ թէ որ սկսան ի ձեզ զգործս բարեաց կատարեացէ մինչեւ յօրն Յիսուսի 7 Քրիստոսի. Որպէս իրաւ իսկ թուի ինձ խորհել զայս վասն ձեր ամենեցուն, վասն ունեկոյ ՝ ինձ զձեզ՝ ի սրտի ի կապանս իմում, եւ ի պատասխանատուութեան իմում եւ ի հաստատութեան աւետարանին, կցորդս ինձ 8 չնորհազ զձեզ ամենեւին լինել, 2 վկայ է ինձ Աստուած, որպէս անձկացեալ եմ առ ձեզ ամենեւին զթովքն Քրիստոսի Յիսուսի. եւ զայն աղօթս առնեմ, զի սէրն ձեր եւս քան զեւս առաւել լիցի ի զիտութեան եւ յամենայն իմաստութեան, Ընտրել ձեզ զլան՝ զի իցէք 3 հաստատունք եւ առանց զայթակրութեան յօրն Քրիստոսի. Լցեալ պտղովք արդարութեան ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ի փառս եւ ի գովեստ Աստուծոյ:

12 ԺԴ. Կամիմ թէ զիտիցէք, եղբարք,

զի որ ինչ վասն իմ էր, եւս քան զեւս ի յառաջադիմութիւն աւետարանին եկն. Մինչեւ կապանաց իմոց յայտնի լինել ի Քրիստոս յամենայն հրապարակիս եւ առ այս ամենեւեան.

14 Եւ առ բազում եղբարս ի Տէր, որ վստան են կապանօքս իմովք առաւել եւս համարձակել առանց երկիւղի 15 զբանն Աստուծոյ խօսել: Ոմանք առ նախանձու եւ հակառակութեան, եւ ոմանք մտազիւրութեամբ իսկ զՔրիստոս քարոզեն. Եւ ոմանք ի սիրոյ, քանզի զիտեն եթէ ի պատասխանատուութիւն աւետարանին կամ. Եւ ոմանք առ հետութեան զՔրիստոս պատմեն, այլ ոչ սրբութեամբ. քանզի համարին նեղութիւնս յարուցանել ի 18 վերայ կապանաց իմոց: Բայց այս զինչ է. որով օրինակաւ եւ իցէ, եթէ՛ պատճառանօք եւ եթէ՛ ճշմարտութեամբ, Քրիստոս պատմի, եւ ընդ այս խնդամ, այլ եւ ուրախ եւս եղէց:

19 Զի զիտեմ եթէ այս պահի ինձ ի փրկութիւն ի ձերոց խնդրուածոց եւ ի պարզեւաց Հոգւոյն Յիսուսի Քրիստոսի, 20 Ըստ ակնկալութեան եւ յուսոյն իմոյ, զի մի՛ իւրիք յամօթ եղէց, այլ ամենայն համարձակութեամբ, որպէս յամենայն ժամ եւ այժմ, մեծացի Քրիստոս ի մարմնի իմում, եթէ՛ կենօք եւ 21 եթէ՛ մահու: Զի ինձ կեանք Քրիստոս է, եւ մեռանել՝ չահ: Ապա եթէ կեանքս մարմնոյ այս ինձ պտուղ գործոց է, եւ զինչ ընտրեցից՝ զայն ոչ 23 զիտեմ: Նեղեալ եմ յերկոցունց, զցանկալն ելանել եւ ընդ Քրիստոսի լինել 24 առաւել լաւ համարիմ. Եւ կալ մնալ աստէն ի մարմնի՛ կարեւոր եւս վասն 25 ձեր: Եւ զայս յուսացեալ զիտեմ, եթէ կացից եւ մնացից ամենեցուն ձեզ,

1Կ-Մ, ձեզ զիս
 2Յ-ՆՆ, Զի վկայ
 3Յ-ՆՆ, առանց կեղծաւորութեան

ի ձեր զարգանալ եւ խրախ լինել ի
 26 հաւատս . Զի պարծանք ձեր առաւել
 լիցին ի Քրիստոս Յիսուս ինեւ ի միւս-
 անդամ գայտեան իմում առ ձեզ : ՎՋ
 27 Միայն թէ արժանի շաւտարանին
 գնայցէք . զի եթէ՛ գայցեմ եւ տեսա-
 նիցեմ զձեզ , եւ եթէ՛ հեռի իցեմ եւ
 լսիցեմ զձէնջ զի հաստատուն կայցէք
 ի մի հողի , եւ միով շնչով նահատա-
 28 կիցիք ի հաւատս աւետարանին . Եւ
 մի՛ զանդիտիցէք եւ մի՛ իւրիք ի հա-
 կառակորդաց անտի , որ է նոցա հան-
 զէս կորստեան , եւ ձերոյ փրկութեան :
 29 Եւ այդ Աստուծոյ է , որ ձեզ շնորհե-
 ցաւ վասն Քրիստոսի , ոչ միայն ի նա
 հաւատալ , այլ եւ վասն նորա չարչա-
 30 րել : Զնոյն պատերազմ ունել՝ զոր
 յին տեսէք եւ այժմ լսէք շիրին :

ՔԼ . Բ

1 Արդ եթէ միթարութիւն ինչ իցէ
 ի Քրիստոս , եթէ սփոփութիւն սիրոյ ,
 եթէ հաղորդութիւն Հոգւոյ , եթէ
 2 զիմութիւն եւ ողորմութիւն , լցէք
 զինգութիւնս իմ , զնոյն խորհիջիք ,
 զնոյն սէր յանձին ունիջիք , համա-
 3 շունչք , միախորհուրդք . Մի՛ ինչ ըստ
 գրդոութեան , եւ մի՛ ինչ ըստ սնա-
 պարծութեան , այլ խոնարհութեամբ
 զմիմեանս լաւ համարել առաւել քան
 4 պանծինս . Մի՛ զանձանց եւեթ զիտել ,
 5 այլ իւրաքանչիւր ոք զընկերին : Զայն
 խորհեցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ որ
 6 եւ ի Քրիստոս Յիսուս . Որ ի կերպա-
 րանս Աստուծոյ էր , ոչինչ յափշտակու-
 թիւն համարեցաւ զլինելն հաւատար-
 7 Աստուծոյ . Այլ զանձն ունայնացոյց՝
 զկերպարանս ծառայի առեալ , ի նմա-
 նութիւն մարդկան եղեալ , եւ կերպա-
 8 րանօք գտեալ իրրեւ զմարդ , ինտար-
 հեցոյց զանձն , լիեալ հաւալանց մահու
 9 չափ եւ մահու խաչի : Վասն որոյ եւ
 Աստուած զնա առաւել բարձրացոյց ,
 եւ շնորհեաց նմա սնունն որ ի վեր է
 10 քան զամենայն անուն . Զի յանուն
 Յիսուսի Յիսուսի 3 փրիստոսի ամենայն ծուր
 կրկնեսցի , երկնաւորաց եւ երկրաւո-
 11 րաց եւ սանդարամետականաց , Եւ

ամենայն լեզու խոստովան լիցի թէ
 Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աս-
 տուծոյ Հօր :
 12 ԺՁ . Այսուհետեւ , սիրելիք իմ , որ-
 պէս յամենայնի հնազանդեցարուք ,
 մի՛ միայն ի գալստեան իմում , այլ ա-
 ռաւել եւս այժմ յորժամ հեռիս եմ ի
 ձէնջ , ահիւ եւ զողութեամբ զանձանց
 13 փրկութիւն գործեցէք : Զի Աստուած
 է որ յաջողէ ի ձեզ զկամելն եւ պառ-
 14 նելն վասն հաճութեան : Զամենայն
 ինչ գործեցէք առանց տրտնջելոյ եւ
 15 քրթմնջելոյ . Զի եղիջիք ամբիժք եւ
 անարաք , որզիք Աստուծոյ , անմեղք
 ի մէջ կամակոր եւ խեղաթեւր ազգին ,
 յորոց միջի երեւիցիք իբրեւ լուսա-
 16 լորք յայխարհի , Զբանս կենաց ունել
 յանձինս ի պարծանս ինձ յաւուրն
 Քրիստոսի , զի ոչ ընդունայն ինչ ըն-
 թացայ եւ ոչ ընդունայն վաստակեցի :
 17 Այլ թէպէտ եւ նուիրիմ ի վերայ պա-
 տարագի եւ պաշտաման հաւատոցն ձե-
 18 րոց , խնդամ եւ ուրախակից եմ ամե-
 նեցուն ձեր : Նոյնպէս եւ զուրք խնդա-
 19 ցէք եւ ուրախակից եղերուք ինձ :
 19 Բայց յուսամ ի Տէր Յիսուս զՏիմո-
 թէոս վազպազակի արձակել առ ձեզ ,
 զի եւ ինձ սրտի գեւր յինիցի , յորժամ
 20 զիտիցեմ ինչ զձէնջ : Զի ոչ զոք ունիմ
 համաշունչ , եթէ ընտաներար հոգայցէ
 21 վասն ձեր : Զի ամենեքին զանձանց
 խնդրեն , եւ ոչ զՅիսուսի Քրիստոսի :
 22 Բայց զփորձ նորա զիտէք եւ զուրք ,
 զի իբրեւ որզի հօր ծառայեաց ընդ իս
 23 յաւետարանին : Արդ զսա ակն ունիմ
 24 արձակել՝ որպէս նոյնհետայն զանձնէ
 25 ստուպեցից : Այլ յուսացեալ եմ ի Տէր
 26 թէ եւ ես իսկ ընդ հուպ եկից : Բայց
 լաւ համարեցայ զԵպափորոզիտոս զեզ-
 րայր եւ զգործակից եւ զինտորակից
 իմ , զձեր առաքեալ եւ զպաշտօնեայ
 26 իմոց պիտոյից՝ առաքել առ ձեզ : Քանզի
 եւ ինքն իսկ յոյժ անձկացեալ է տե-
 սանել զամենեսին զձեզ . եւ հոգայր ,
 27 զի ձեր լուեալ էր թէ խօթացաւ : Եւ
 արդարեւ խօթացաւ մերձ ի մահ , այլ
 Աստուած ողորմեցաւ նմա . ոչ նմա
 միայն՝ այլ եւ ինձ , զի մի՛ տրտմու-
 թիւն ի վերայ տրտմութեան կրիցեմ :
 28 Արդ փութապէս յեցի զնա , զի տեսեալ

1 Բաւաւտ , աւետարանին Քրիստոսի
 2 Ի Յիսուսի յամենայն , ինս , յամենայն գոյսի
 3 Ի Բաւաւտ գոյսի

4 Բաւաւտ , անձկացեալ է ամենեցուն ձեզ

զնա միւսանգամ ուրախ լինիցիք, եւ
 29 ես առանց արտուութեան եղէց : Ընկալ-
 ջիք զնա ի Տէր ամենայն խնդութեամբ,
 եւ զայնպիսինս առ պատուականս ու-
 30 նիջիք . Զի վասն զործոյ Տեառն մին-
 չեւ ի մահ մերձեցաւ, գուն զործեալ
 ոգևովք չափ, զի լցցէ զձեր պակասու-
 թիւն իմոյ սպասաւորութեան : ՎՋ

ԳԼ. Գ

1 Այսուհետեւ, եղբարք իմ, ուրախ
 լերուք ի Տէր . զնոյն զրեւ առ ձեզ ինձ
 ոչ զանդազեկի է, եւ ձեզ կարի զգու-
 2 շալի : Զգոյ՛ ճեղերուք ի շանց անտի,
 զգոյ՛ ճեղերուք ի չար մշակաց անտի,
 զգոյ՛ ճեղերուք ի կրճատութիւնէ անտի :
 3 Զի թրխատութիւնն մեք եմք, որ ¹ Հաղ-
 ւոյն Աստուծոյ՝ սաչտեմք, եւ սար-
 ծիմք ի Քրիստոս Յիսուս, եւ ոչ ի
 4 մարմին սրանձացեալ եմք : Թէպէտ եւ
 ես իսկ զնոյն վատահովիւն ունիմ
 եւ ի մարմնի . եթէ ² որ համարիցի այլ-
 ազգ վտահ՝ լինել ի մարմին, առաւել
 5 եւս ես . Թրխատութեամբ ութօրեայ,
 յազգէ Իսրայելի, ի ցեղէ Բենիամինի,
 Երրայեցի յերրայեցուոյ, ըստ օրինացն
 6 փարիսեցի . Ըստ նախանձայոյդն լինե-
 լոյ՝ հարձէի զեկեղեցիս . ըստ արդա-
 րութեան օրինացն՝ լիեալ անարատ :
 7 Այլ որ ինչ ինձ շահն էք՝ զայն յլեաս
 8 համարիմ վասն Քրիստոսի : Այլ եւ
 համարիմ իսկ զամենայն յլեաս վասն
 առաւել զիտութեանն Յիսուսի Քրիս-
 տոսի Տեառն մերոյ . վասն որոյ յամե-
 նայնէ զրկեցայ, եւ համարիմ կզկզանս,
 9 զի զՔրիստոս շահեցայց, եւ զտայց
 ի նմա . իբրեւ ոչ եթէ զիմ ինչ ար-
 դարութիւն որ յօրինաց անտի է՝ ու-
 նիցիմ, այլ ³ զհաւատոցն Քրիստոսի,
 որ յԱստուծոյ արդարութիւնն է՝ հա-
 10 ճատովք . Ճանաչել զնա եւ զզօրու-
 թիւն յարութեան նորա եւ զհազօր-
 դութիւն չարչարանաց նորա, կերպա-
 11 րանակից լինել մահու նորա . Թէ որ-
 պէս հասից ի մեռելոցն յարութիւն :
 12 Իբր ոչ եթէ արգէն առեալ իցեմ, կամ
 արգէն կատարեալ իցեմ . զհետ մտեալ

եմ թէ հասից, ⁴ մանաւանդ թէ ըմբռ-
 նեալ իսկ իցեմ՝ ի Քրիստոսէ Յիսու-
 13 սէ : Եղբարք, ես ոչ համարիմ զանձն
 իմ թէ հասեալ իցեմ . բայց մի ինչ է՝
 զի զառ ի յետոյսն մոտացեալ է, եւ ի
 14 յառաջադէմն նկրտեալ եմ . Ուշ եղեալ
 ընթանամ ի կէտ ⁵ կոչմանն Աստուծոյ
 15 ի Քրիստոս Յիսուս : Այսուհետեւ որ
 միանգամ կատարեալք էք՝ զայս խոր-
 հեցարուք, եւ եթէ այլազ ինչ խոր-
 հիցիք, սակայն եւ զայն Աստուած
 16 ձեզ յայտնեցէ : Բայց յոր ժամանե-
 ցաքս, զսոյն խորհել եւ սմին կանոնի
 17 միաբան լինել : Նմանողք ինձ եղիջիք,
 եղբարք, եւ զիտասլիք զայնպիսինս
 որ այնպէսն գնայցիս, որպէս ունիւք
 18 զմեզ՝ ձեզ օրինակ : Զի բարձրք զնան,
 զորոց բազում անգամ ասէի ձեզ, բայց
 արդ եւ չաղով իսկ ասեմ, զթշնամեաց
 19 խաչին Քրիստոսի : Որոց կատարածն
 կորուստ է, որոց աստուած որովայնս
⁶ իւրեանց է, եւ փառք՝ ամօթն իւր-
 եանց, որք զերկրաւորս եւեթ խորհին :
 20 Այլ մեր առաքինութիւն յերկինս է,
 եւստի եւ Փրկչին ակն ունիմք, Տեառն
 21 Յիսուսի Քրիստոսի . Որ նորոգեցէ
 զմարմին խոնարհութեան մերոյ՝ կեր-
 պարանակից լինել մարմնոյ փառաց իւ-
 րոց, ըստ զօրութեանն առ ի կարող
 լինելոյ հնազանդեցուցանել ընդ իւրեւ
 զամենայն :

ԳԼ. Գ

1 Այսուհետեւ, եղբարք իմ սիրելիք եւ
 անձկալիք, ուրախութիւն իմ եւ սրտակ,
 այսպէս հաստատուն կացէք ի Տէր,
 սիրելիք :
 2 Զեւողիա աղաչեմ եւ զՍիււաթիք ա-
 3 զաչեմ, զնոյն խորհել ի Տէր : Այլ, ա-
 զաչեմ եւ զքեզ, մտերիմ իմ եւ լծա-
 կից, եւ գու օղնական լինիջիք նոցա
 որք յաւետարանին նահատակեցան ընդ
 իս կղեմաւ հանդերձ եւ այլովք զօր-
 ծակցօք իմովք, որոց անուանքն ի
 4 զպրութեան կինաց : Ուրախ լերուք
 ի Տէր յամենայն ժամ . զարձեալ ա-
 5 սեմ, Ուրախ լերուք : Հեղութիւն ձեր
 յայտնի լիցի ամենայն մարդկան . Տէր

¹ Ուրախ, հոգևով զԱստուած
² Բարձր, այլ որ համարիցի վտահ
³ Կամ, զարդարութիւն հաւատովքն Քրիստոսի
 որ յԱստուծոյ է

⁴ Գնի, որոյ վասն ըմբռնեալ եմ
⁵ Գնի, վերին կոչմանն ⁶ Ի Գնին պաշտ

6 մերձ է : Մի՛ ինչ հոգայք , այլ ¹ամեն-
 նայն ազօթիւք եւ խնդրուածովք , գո-
 հութեամբ խնդրուածք ձեր յայտնի
 7 լիցին առ Աստուած : Եւ խաղաղու-
 թիւնն Աստուծոյ որ ի վեր է քան զա-
 մենայն միտս՝ պահեցէ զսիրտս ձեր
 եւ զմիտս ի Քրիստոս Յիսուս :
 8 Ապ. Այսուհետեւ , եղբարք , որ ինչ
 ճշմարտութեամբ է , որ ինչ պարկեշ-
 տութեամբ , որ ինչ արդարութեամբ ,
 որ ինչ սրբութեամբ , որ ինչ սիրով ,
 որ ինչ համբաւ բարեաց , որ ինչ քա-
 ջութեամբ , որ ինչ գովութեամբ՝ զայն
 9 խորհի՛ջիք : Զոր ուսարուքն եւ ըն-
 կայարուք եւ լուայք եւ տեսէք յիս-
 զայն արարէք . եւ Աստուած խաղա-
 զութեան եղիցի ընդ ձեզ :
 10 Ուրբախ եղէ ես ի Տէր յոյժ , զի եւ
 զուք զմտաւ ածէք հոգալ ինչ վասն
 11 բարէիք իմնէ՛ : Իբր ոչ առ կարօտու-
 թեան ինչ ասեմ , զի ես ուսայ որովք
 12 կարեմ բաւական լինել : Գիտեմ՝ նուա-
 ղել , գիտեմ առաւելուլ . յամենայնի
 ամենեւին խելամուտ եմ ե՛ւ յագել ե՛ւ
 քաղցնալ , ե՛ւ առաւելուլ ե՛ւ նուա-
 13 ղել : Յամենայնի կարող եմ ³այնու որ
 14 զօրացոյցն զիս : Բայց բարւոք արարէք


զի կցորդ եղերուք ինձ ի նեղութեանս
 15 Գիտէք եւ զուք , Փիլիպեցիք , զի ի
 սկզբան աւետարանին իբրեւ ելի ես
 ի Մակեդոնիայ , եւ ոչ մի եկեղեցի հա-
 զորդեաց ինձ յաղազս տալոյ եւ առնլոյ,
 16 բայց միայն զուք . Զի եւ ի Թեսալո-
 նիկ միանգամ եւ երկիցս զպէտս իմ
 17 հաուք բերել : Իբր ոչ կի՛է խնդրեմ
 զտուրսն , այլ խնդրեմ զպտուղն որ
 18 յաճախէ ի բան ձեր : Այլ իմ առեալ
 զամենայն եւ առաւելելալ եմ . ընկա-
 լայ , եւ լի եմ ի ձեռն Եպափրոզիտեայ,
 որ է ի ձէնջ հոտ անուշից , պատարագ
 19 ընդունելի՛ հաճոյ Աստուծոյ : Եւ Աս-
 տուած իմ յի արասցէ զամենայն պէտս
 ձեր ըստ իւրում մեծութեանն փառօք
 20 ի Քրիստոս Յիսուս : Այլ Աստուծոյ
 եւ Հօր մերում փառք յաւիտեանս յա-
 ւիտենից : Ամէն :
 21 Ողջոյն տալիք ամենայն սրբոց ի
 22 Քրիստոս Յիսուս : Ողջոյն տան ձեզ
 23 որ ընդ իս են եղբարք : Ողջոյն տան
 ձեզ ամենայն սուրբք , մանաւանդ որ
 24 ի տանէ կայսեր են : Շնորհք Տեառն
 Յիսուսի Քրիստոսի՝ ⁴ընդ ողւոյդ ձե-
 րում : Ամէն :

Առ Փիլիպեցիս գրեցաւ ի Հռովմէ ի յեռն
 Եպափրոզիտեայ :

¹ Գուն , յամենայնի
² Ունն , Քրիստոսին

³ Այսինքն , չէր մարթ

⁴ Ունն , ընդ ձեզ ընդ ամենեկն



ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԱՐ. ՊԱՒՂՈՍ, առաքեալ Յիսուսի Բրիստոսի կամօքն Աստուծոյ, եւ Տի-
 2 մոթէոս եղբայր, Առ Կողոսացիս սուրբս
 եւ հաւատացեալս եղբարս ի Բրիս-
 տոս. շնորհք ընդ ձեզ եւ խաղաղու-
 թիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ՝ ¹եւ ի
 Տեառնէ Յիսուսէ՝ Բրիստոսէ՝։
 3 Գոհանամք զԱստուծոյ եւ զՀօրէ
 Տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի, յա-
 մենայն ժամ վասն ձեր աղօթս ²առնել,
 4 Իբրեւ լուաք՝ զհաւատան ձեր որ ի
 Բրիստոս Յիսուս ³ի Տէր մեր՝, եւ
 զսէրն զոր ընդ ամենայն սուրբս ունիք։
 5 Վասն յուսոյն որ պահի ձեզ յերկինս,
 զորմէ յառաջագոյն լուարուք բանին
 6 ճշմարտութեան աւետարանին, Որ ե-
 հաս առ ձեզ, որպէս ընդ ամենայն
 աշխարհ աճէ եւ պողաբերէ, որպէս
 եւ ի ձերում միջի, յօրէ յորմէ լուա-
 րուք եւ ծանեայք զշնորհան Աստուծոյ
 7 ճշմարտութեամբ. Որպէս եւ ուսա-
 րուք յեպափրեայ սիրելոյ ծառայակցէ
 մերմէ, որ է հաւատարիմ վասն ձեր
 8 պաշտօնեայ ⁴Յիսուսի. Որ եւ պատ-
 մեաց մեզ զձեր սէրն Հոգւով։
 9 Վասն այնորիկ եւ մեք, յօրէ յորմէ
 լուաք, ոչ զաղարեմք վասն ձեր
 զօթս առնել եւ խնդրուածս մատու-
 ցանել, զի ինուցուք ⁵զգիտութիւն կա-
 մաց նորա ամենայն իմաստութեամբ
 10 եւ հոգեւոր հանճարով. Գնալ ձեզ ար-
 ժանի Տեառն յամենայն հաճութեան,
 յամենայն զործս բարութեան պողա-
 բերք եւ աճեցունք զիտութեամբն Աս-

11 տուծոյ. Ամենայն զօրութեամբ զօրա-
 ցեալք ըստ զօրութեան փառաց նո-
 րա յամենայն համբերութիւն եւ եր-
 կայնմտութիւն ուրախութեամբ։
 12 ԱՅ. Գոհանալ ⁶զՀօրէ որ ⁷կոչեացն
⁸զմեզ ի մասն վիճակի սրբոցն ի լոյս.
 13 Որ փրկեացն զմեզ յիշխանութենէ խա-
 ւարի, եւ փոխեաց ³զմեզ յարքայու-
 14 թիւն Որդւոցն իւրոյ սիրելոյ. Որով
 ունիմք զփրկութիւն արեամբն նորա,
³եւ զթողութիւն մեղաց՝ ³մարմնովն
 15 նորա.՝ Որ է պատկեր աներեւութին
 Աստուծոյ, անդրանիկ ամենայն արա-
 16 րածոց. Զի նովաւ հաստատեցաւ ա-
 մենայն որ ինչ յերկինս եւ որ ինչ
 յերկրի, որ երեւին եւ որ ոչն երեւին,
 եթէ՛ աթոռք, եթէ՛ տէրութիւնք, եթէ՛
 պետութիւնք, եթէ՛ իշխանութիւնք.
 17 ամենայն ինչ նովաւ եւ ի նոյն հաս-
 տատեցաւ. Եւ նա է յառաջ քան զա-
 մենայն, եւ ամենայն ինչ նովաւ եկաց
 18 բովանդակ. Եւ նա է զլուս մարմնոյ,
 եկեղեցւոյ. որ է սկիզբն, անդրանիկ
 ի մտելոց, զի եղիցի ինքն յամենայնի
 19 յառաջացեալ. Զի ի նմա հաճեցաւ ա-
 մենայն լրումն ³Աստուածութեանն
 20 բնակել. Եւ նովաւ հաշտեցուցանել
 զամենայն ի նոյն, արար խաղաղու-
 թիւն արեամբ խաչին իւրոյ, ⁹որ ինչ
 յերկրի եւ որ ինչ յերկինս։
 21 Եւ զձեզ որ երբեմն օտարացեալքն
 էիք եւ թշնամիք խորհրդովք ի զործան
 22 չարութեան, Այժմ աւաղիկ հաշտե-
 ցոյց անդամովք մարմնոյ իւրոյ ի ձեռն
 մահուան ¹իւրոյ, յանդիման կացու-
 ցանել զձեզ սուրբս եւ ամբիծս եւ

¹ Յոհանն պաւստ
² Յոյն, արարեալ, (4) Լուեալ
³ Ի Յոհանն պաւստ
⁴ Յոյն, Բրիստոսի ⁵ կամ, գիտութեամբ

⁶ Ուստ, զԱստուծոյ Հօրէ
⁷ Բարեբախտ, բաւականս արար
⁸ Ուստ, զձեզ
⁹ Յոյն, նովաւ, որ

23 անարատս առաջի նորա . Եթէ կայցէք
 ի հաւատոս արմատացեալք եւ հաս-
 տուեալք, եւ անչարք ի յուսոյ ա-
 լետարանին զոր լուարուք, քարոզե-
 լոյ ընդ ամենայն արարածս ի ներքոյ
 երկնից, որոյ եղէ ես Պաւղոս պաշ-
 տօնեայ :

24 ԱՂ. Եւ արդ ուրախ եմ ի չարչա-
 րանս իմ վասն ձեր, եւ չնու՛մ զպակա-
 սութիւն նեղութեանցն Քրիստոսի ի
 մարմնի իմում վասն մարմնոյ նորա,

25 որ է եկեղեցի . Որոյ եղէ ես Պաւղոս
 պաշտօնեայ ըստ անտեսութեանն Աս-
 տուծոյ, որ տուեալ է ինձ ի ձեզ կա-

26 տարել զբանն Աստուծոյ, Չխորհուրդն
 որ ծածկեալ էր ի յաւիտեանցն եւ յազ-
 գաց, որ այժմ յայտնեցաւ սրբոց իւ-

27 բոց . Որոց կամեցաւ Աստուած ցու-
 ցանել թէ զինչ է մեծութիւն փառաց
 խորհրդոյն նորա ի հեթանոսս, որ է

28 Քրիստոս ի ձեզ, յոյսն փառաց . Չոր
 մէքն քարոզեմք, եւ խրատեմք զամե-
 նայն մարդ, եւ ուսուցանեմք զամե-
 նայն մարդ ամենայն ՚հոգեւոր իմաս-
 տութեամբ, զի կացուցուք զամենայն
 մարդ կատարեալ ի Քրիստոս Յիսուս :

29 Յոր եւ աշխատիմ պատերազմեալ ըստ
 յաջողութեան նորա որ յաջողեալ է
 յիս զօրութեամբ :

ԳԼ Բ

1 Կամիմ զի զիտիցէք զուք որպիսի՛
 ճգնութիւն ունիմ յանձին վասն ձեր եւ
 վասն Լաւոզիկեացոցն, եւ որոց չիցէ
 2 տեսեալ զերեսս իմ մարմնով . Չի միս-
 թարեացին սիրտք նոցա տեղեկացեալք
 սիրով, եւ յամենայն մեծութիւն լու-
 թեան իմաստութեան՝ ի զիտութիւն
 խորհրդոյն Պատուծոյ ի Քրիստոս Յի-
 3 սուս . Յորում ամենայն զանձք իմաս-
 տութեան եւ զիտութեան ծածկեալ
 4 կան : Այլ զայս ստեմ, զի մի՛ ոք զձեզ
 5 զառանցուցել պատիր բանիւք : Չի
 թէպէտ եւ մարմնով հետի եմ, այլ հոգ-
 ւով ընդ ձեզ եմ . խնդամ, իբրեւ տե-
 ւանեմ զկարդն ձեր եւ զհաստատու-
 թիւն հաւատոցն ձերոց որ ի Քրիստոս
 6 Յիսուս : Արդ որպէս ընկալարուք

զՔրիստոս Յիսուս զՏէր, նովին զնաս-
 7 ջիւք . Արմատացեալք եւ շինեալք ի նա
 եւ հաստատեալք ի հաւատս որպէս
 ուսարուքն, առաւելեալք ի նմին գո-
 հութեամբ : ՎՃ

8 Չդոյ՛ լերուք մի՛ ոք իցէ որ զձեզ
 կողոսկրիցէ ճարտարմութեամբ եւ
 անտի խաբէութեամբ, որք ըստ մարդ-
 կան աւանդութեան եւ ըստ տարերց
 աշխարհիս, եւ ոչ ըստ Պիտուսի Քրիս-
 9 տոսի . Չի ի նմա բնակէ ամենայն
 լրումն Աստուածութեանն մարմնա-
 10 սէս : Եւ էք զուք նովաւ ցեալք, որ
 է զլուսն ամենայն իշխանութեան եւ
 11 սետութեան . Որով թրխանցարուք
 ՚հաւատովք զանձեռագործ թլփատու-
 թիւնն՝ ի մերկանալ զանդամս մարմ-
 նոյ թրխատութեամբն Քրիստոսի .
 12 Թաղեալք ընդ նմին ի մկրտութեանն,
 որով եւ ընդ նմին յարեալք հաւա-
 տովք Աստուծոյ աղղցելութեանն, որ
 13 յարոյց զնա ի մեռելոց : Եւ զձեզ որ
 երբեմն մեռեալն էիք ի մեզս եւ յան-
 թրխատութեան մարմնոյ ձերոյ՝ կեն-
 զանացոյց յանձին իւրում . չնորհեաց
 14 մեզ զամենայն յանցանս մեր, Եւ ջրնջ-
 եաց զձեռագիր մերոյ հակառակու-
 թեանն հրամանօքն Յիսուսի որ կայր
 մեզ հակառակ, երարձ զայն ի միջոյ
 եւ բեւեռեաց ընդ խաչափայտին .
 15 Մերկեաց զիշխանութիւնս եւ զպե-
 տութիւնս, յայտ յանդիման խայտա-
 ռակեաց նշաւակեալ զնոսս յանձին
 իւրում Յիսուսի յարութեան իւրում :

16 Մի՛ ոք այտուհետեւ զձեզ պատեսցի
 ուտելով կամ ըմպելով կամ մասամբք
 տօնից, կամ ամսամտիւք, կամ շա-
 17 բաթուք . Որ են ստուերք հանդերձե-
 18 լոցն, այլ մարմինն Քրիստոս է : Մի՛
 ոք զձեզ խաբեսցէ, որ կամիցի խո-
 նարհութեամբ եւ կրօնիւք հրեշտա-
 կաց, զոր չիցէ տեսեալ, զրահտ վա-
 19 մարմնոյ իւրոյ . Եւ ոչ ունիցի զՊլուին
 Քրիստոս, ուստի ամենայն մարմինն
 յօղիւք եւ խաղալեօք տարաբերեալ
 եւ խառնեալ՝ աճէ զաճումն Աստու-
 20 ծոյ : Եթէ մեռարուք ընդ Քրիստոսի
 ի տարերց աշխարհիս, զի՞ եւս իբրեւ

1ի Բազմոս պատմութիւն 3ի Գառնի պատմութիւն
 2Ունի, Աստուծոյ Հօր եւ Քրիստոսի

4Ունի, մարմնոյ մեղաց
 5Յանն, Քրիստոսի

զկենդանիս աստէն յայխարհի կրօնա-
 21 ւորիք . Մի՛ մերձենար , մի՛ ճաչա-
 22 կեր , մի՛ հուպ լինիր . Որ է ամենայն
 ինչ ի պէտս ասլականութեան , ըստ
 պատուիրանաց եւ վարդապետութեան
 23 մարդկան , Որ յիմաստութիւն իմն հա-
 մարէ ինքնակամ կրօնիւք եւ խոնար-
 հութեամբ եւ անխայռութեամբ մարմ-
 նոյ , եւ ոչ ի պատիւ ինչ լրութեան
 մարմնոյ :

ԳԼ . Գ

1 Եթէ յարերուք ընդ Քրիստոսի , ապա
 զվերինն խնդրեցէք , ուր Քրիստոսն
 2 նստի ընդ աջմէ Աստուծոյ : Զվերինն
 խորհեցարուք , մի՛ զայս որ յերկրի
 3 աստ է : Քանզի մեռարուք , եւ կեանքն
 ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱս-
 4 տուած : Իսկ յորժամ Քրիստոս յայտ-
 նեցի , կեանքն ձեր , յայնժամ եւ դուք
 ընդ նմա յայտնեալիք փառօք :
 5 Սպանէք այսուհետեւ զանդամս ձեր
 զերկրաւորս . ¹ի բաց ընկեցէ՞ զպոռ-
 կուութիւն , զպղծութիւն , զբիծ , զցան-
 կութիւն չարեաց , եւ զագահութիւն
 6 որ է կոստայտութիւն . Վասն ²որոյ
 վայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ
 7 որդւոցն անհաւանութեան . Որովք
 եւ Կուք երբեմն զնայիք , մինչ կեն-
 8 զանիքն էիք ի նոսա : Արդ ի բաց
 թօթափեցէք եւ դուք զայն ամենայն .
 զբարկութիւն , զսրտմտութիւն , զչա-
 րութիւն , զչայնոյութիւն , զխեղկա-
 9 տակութիւն ի բերանոց ձերոց : Մի՛
 ստէք միմեանց . մերկացարուք զհին
 10 մարդն գործովքն իւրովք . Եւ զգեցա-
 րուք զնորն՝ նորոգեալ ի զիտութիւն
 11 ըստ պատկերի Արարչին իւրոյ . Ուր
 ոչ է Հրեայ եւ ոչ հեթանոս , թրիա-
 տութիւն եւ անթրիատութիւն , խուժ
 դուժ , Սկիւթացի , ծառայ , ազատ .
 այլ ամենայն եւ յամենայնի Քրիստոս :
 12 Զդեցարուք այսուհետեւ իբրեւ ընա-
 րեալք Աստուծոյ , սուրբք եւ սի-
 րեցեալք , զզուժ , զոգորմութիւն ,
 զքաղցրութիւն , զխոնարհութիւն ,
 13 զհեղութիւն , զերկայնմտութիւն . Նե-
 րել միմեանց , շնորհել իրեաց , եթէ
 ուրուք զումեքէ տրտունջ ինչ իցէ .

որպէս ՅԱստուած Քրիստոսիւ՞ շնորհ-
 14 եաց ձեզ , նոյնպէս եւ դուք : Եւ ի
 վերայ այսր ամենայնի զսէքն՝ որ է
 15 զօղ կատարմանն . Եւ խաղաղութիւնն
³Քրիստոսի հաստատեցի ի սիրտս ձեր ,
 յոր եւ կոչեցարուքն միով մարմնով .
 եւ զոհացողք լինի՛լիք :
 16 ԱՅ . ¹Զի բանն Քրիստոսի բնակեցէ
 ի ձեզ առատապէս , ամենայն իմաս-
 տութեամբ ուսուցանել եւ խրատել
 զմիմեանս , սաղմոսիւք եւ օրհնու-
 թեամբք եւ երգովք հողեւորօք՝ ¹եւ
 շնորհօք օրհնել ի սիրտս ձեր զԱս-
 17 տուած : Եւ զամենայն զոր եւ առնի-
 ցէք բանիւք եւ արդեամբք , զամենայն
 յանուն Տեառն Յիսուսի արասլիք . գո-
 հացողք լինի՛լիք զԱստուծոյ եւ զՀօրէ
 նովաւ :
 18 Կանայք , հնազանդ լերուք արանց
 19 ձերոց , որպէս եւ վայել է ի Տէր : Արք ,
 սիրեցէք զկանայս ձեր , եւ ⁵մի՛ դառ-
 20 նացուցանէք զնոսա՝ Որդիք , հնա-
 զանդ լերուք ծնողաց ձերոց յամե-
 նայնի , զի այն է հաճոյ առալի Տեառն :
 21 Հարք , մի՛ զայրացուցանէք զորդիս
 22 ձեր , զի մի՛ տրտմեցին : Ծառայք ,
 հնազանդ լերուք տերանց ձերոց յա-
 մենայնի , մի՛ առ ազանէ ծառայու-
 թեամբ իբրեւ մարդահաճոյք , այլ միա-
 մտութեամբ սրտի երկնչել ի Տեառնէ .
 23 Զոր ինչ առնիցէք՝ սրտի մտօք զոր-
 ծեսլիք , իբրեւ Տեառն եւ ոչ իբրեւ
 24 մարդկան : Գիտասլիք զի ի Տեառնէ
 առնուցուք զհատուցունն ժառանգու-
 թեան ⁶ձերոյ . քանզի Տեառն Քրիս-
 25 տոսի ծառայէք : Իսկ ապիրատն ըն-
 կացի ըստ իւրում ապիրատութեանն ,
 զի էիք ազնառութիւն ⁶առալի Աս-
 տուծոյ՝ :

ԳԼ . Գ

1 Տեարք , զիրաւունս եւ զհաւասարու-
 թիւն ծառայից ձերոց շնորհեցէք , զի-
 տասալիք զի եւ ձեր Տէր գոյ յերկինս :
 2 Ազօթից ստէպ կացէք , աքնել ի նմին
 3 գոհութեամբ : Ազօթս արարէք միանա-
 զամայն եւ վասն մեր , զի Աստուած

³ի ցոյս օրհնուց ամեն՝ Տէր , այլ՝ Քրիստոս
⁴Որհնէ , Աստուծոյ
⁵Յճոյն , մի՛ դառնասլիք առ նոսա
⁶ի բուզամո պոխօսի

¹ի ցոյսին պոխօսի ²ցոյնն , որոց

բացցէ մեզ դուռն բանին՝ խօսել զխորհուրդն Գրիստոսի, վասն որոյ եւ կապեալս կամ, Չի յայտնի արարից զնա, որպէս արժան իցէ ինձ խօսել :

5 ԱՁ. Իմաստութեամբ զնասջիք առ արտաքինսն՝ զնոց առեալ զժամանակս :

6 Եւ բանն ձեր յամենայն ժամ լի շնորհօք ¹Տեառն՝ իբրեւ՝ աղիւ համեմեալ լիցի, զիտել որպէս արժան իցէ ձեզ իւրաքանչիւր ումեք տալ պատասխանի :

7 Այլ որ ինչ զինէն իցէ՝ ցուցցէ ձեզ զամենայն Տիւքիկոս սիրելի եղբայր եւ հաւատարիմ պաշտօնեայ եւ ծառայակից ի Տէր . Չոր առաքեցի առ ձեզ զմին իրի, զի զիտասջիք վասն մեր, եւ մխիթարեցէ զսիրտս ձեր :

9 Ոնեսիրմաւ հանդերձ եղբարբ հաւատարմաւ եւ սիրելեաւ որ է ի ձէնջ . զամենայն ինչ ցուցցեն ձեզ որ ինչ աստ է : Ողջոյն տայ ձեզ Արիստարքոս զերեկից իմ, եւ Մարկոս եղբորորդի Բառնաբայ . (վասն որոյ առէք պատուէր եթէ եկեացէ առ ձեզ, ընկալջիք զնա .) Եւ Յիսուս որ անուանեալն է Յուստոս, որք են ի թլիատութենէ անտի . զի գորթա միայն զորձակից եւ

զեն ինձ յարքայութեանն Աստուծոյ, որք եւ եղեն իսկ ինձ մխիթարութիւն :

12 Ողջոյն տայ ձեզ Եպափրաս որ ի ձէնջ ծառայ Գրիստոսի Յիսուսի է . յամենայն ժամ պատերազմեալ վասն ձեր յաղօթս, զի կայցէք կատարեալք եւ լցեալք յամենայն կամս Աստուծոյ :

13 Վկայեմ նմա, զի բաղում աշխատութիւն ունի վասն ձեր եւ վասն Լաւոզիկեցւոցն, եւ վասն այնոցիկ որ յեւրապոլիսն են : Ողջոյն տայ ձեզ Դուկաս բժիշկ ¹եւ սիրելի, եւ Դեմաս :

15 Ողջոյն տաջիք եղբարց որ են ի Լաւոզիկիա, եւ Նիմիայ եւ որ առտնին


16 Եկեղեցին է նորա : Եւ յորժամ ընթեոնուցու առ ձեզ թուղթդ, արասջիք զի եւ ի Լաւոզիկեցւոց եկեղեցւոջն ընթերցցի . եւ զառ ի Լաւոզիկեցւոցն՝

17 զի եւ դուք ընթեոնուցուք : Եւ սասաջիք ցԱրքիպպոս, Չգոյշ լեր սպասաւորութեանդ զոր ընկալար ի Տէր, զի զայդ կատարեացես : Ողջոյնդ՝ ձեռին իմոյ Պաւղոսի է . յուչ լիցին ձեզ կապանքս իմ : Շնորհք ընդ ձեզ :²

Առ Կողոսացիս գրեցաւ է Հուովէ ի յեռն Տիւքիկոսի եւ Ոնեսիմոյ :

¹ Ի Յուսի պատու

² Ոնեսիմոս է Յուսի եւ է Հայ յեռագրոց յատուան, Ամեն :



ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ ԱՌԱԶԻՆ

ԹՈՒՂԹ

ԳՂՈՒԽ Ա

1 ԲԿ. ՊԱՒՂՈՍ ԵՒ ՍԻԳՆԱՆՈՍ ԵՒ ՏԻ-
 մոթէոս, եկեղեցւոյդ Թեսաղոնիկե-
 ցւոց յԱստուած Հայր մեր եւ ի Տէր
 2 Յիսուս Քրիստոս. Շնորհք ընդ ձեզ
 եւ խաղաղութիւն¹։
 Գոհանամք զԱստուծոյ յամենայն
 Ժամ վասն ձեր ամենեցուն յիշատակ
 3 աննել յազօթս մեր, Անդադար յիշել
 զձեր գործն հաւատոց եւ զվաստակ
 սիրոյ եւ զհամբերութիւն յուսոյ Տեառն
 մերոյ Յիսուսի Քրիստոսի առաջի Աս-
 4 տուծոյ եւ Հօր մերոյ. Գիտէք, եզ-
 րարք սիրեցեալք յԱստուծոյ, զընտ-
 5 րութիւնն ձեր. Զի աւետարանն մեր
 ոչ եղև առ ձեզ միայն բանիւ, այլ եւ
 զօրութեամբ եւ Հոգւով Սրբով եւ
 6 լրութեամբ բազմաւ, որպէս եւ գիտէք
 իսկ թէ որպիսիք եղևաք ի միջի ձե-
 7 րում վասն ձեր. Եւ դուք նմանեալք
 մեզ եւ Տեառն ընկալայք զբանն ի բա-
 8 զում նեղութեան խնդութեամբ Հոգ-
 9 ւոյն Սրբոյ. Լինել ձեզ օրինակ ամե-
 նայն հաւատացեոց որ են ի Մակեդո-
 10 նիա եւ յԱքայիա։ Զի ի ձէնջ հնչեաց
 բանն Պատուծոյ, ոչ միայն ի Մակե-
 զոնիա եւ յԱքայիա, այլ յամենայն
 անգիս հաւատքն ձեր որ առ Աստուած
 են սիրեցան, զի այսուհետեւ ոչինչ
 9 է պիտոյ մեզ եւ խօսել ինչ։ Զի նո-
 քին իսկ պատմեն վասն մեր, թէ որ-
 պէս եղև մեզ մուտ առ ձեզ, եւ որ-
 պէս դարձայք առ Աստուած ի կոոց
 անտի՝ ծառայել Աստուծոյ կենդանուց
 10 եւ ճշմարտի, Եւ ակն ունել Որդւոյ
 նորա յերկնից, զոր յարոյցն ի մեռե-

լոց, զՅիսուս, որ Յփրկելոցն է՝ զմեզ
 ի բարկութենէ անտի որ գալոցն է։

ԳՂ. Բ

1 ԲԿ. ԴՐՈՒՔ ԻՆՔՆԻՆ զԻՏԷՔ, ԵԿԲԱՐՔ,
 զմուտն մեր առ ձեզ, զի ոչ ընդու-
 2 նայն ինչ եղև. Այլ յառաջագոյն չար-
 չարեալք եւ թշնամանեալք որպէս եւ
 դուք իսկ գիտէք, ի մէջ Փիլիպեցւոց,
 համարձակեցաք Աստուծով մերով
 պատմել ձեզ զաւետարանն Աստուծոյ
 3 մեծաւ պատերազմաւ։ Զի Պիսիթա-
 րութիւնն մեր ոչ ի մոլորութենէ է եւ
 ոչ ի պղծութենէ եւ ոչ նենգութեամբ.
 4 Այլ որպէս ընտրեցաք յԱստուծոյ հա-
 ւատարիմ լինել աւետարանին, նոյն-
 պէս եւ խօսիմք, ոչ իբրև մարդկան
 հաճոյ լինել, այլ Աստուծոյ որ քննէ
 5 զսիրտս մեր։ Զի ոչ երբեք բանիւք
 ողորմանաց եղևաք առ ձեզ, որպէս եւ
 դուք իսկ գիտէք, եւ ոչ ի սպառճառս
 ազահոութեան, որպէս եւ Աստուած
 6 վկայէ. Եւ ոչ խնդրէք փառս ի մարդ-
 7 կանէ, ոչ ի ձէնջ եւ ոչ յայլոց։ Կա-
 րող էաք որպէս Քրիստոսի առաք-
 10 եալս ծանրանալ, այլ եղևաք հեղք ի
 միջի ձերում, որպէս դայեակ մի՝ որ
 8 սնուցանիցէ Պատուծոյն։ Նոյնպէս եւ
 մեք զթայաք ի ձեզ, հաճոյ թուէք մեզ
 ալ ձեզ ոչ միայն զաւետարանն Աս-
 10 տուծոյ, այլ եւ զանձինս մեր, քանզի
 9 սիրելիք մեր եղբրուք։ Յիշէք, եզ-
 րարք, զվաստակն մեր եւ զՉան, զի
 զցայգ եւ զցերեկ գործէաք վասն չճան-
 րանալոյ ումեք ի ձէնջ, եւ քարոզէաք
 10 ձեզ զաւետարանն Աստուծոյ։ Դուք

¹Ուրիշ, յաւելուի, յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ
 ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ
²Բաւարէ, Տեառն

³Յոյն, փրկէն
⁴Կալ, յորդորումս
⁵Յոյն, զմանկունս եւք

ինքնին վկայէք, եւ Աստուած, որպէս սրբութեամբ եւ արդարութեամբ եւ անբժուլթեամբ ձեզ հաւատացելոցդ եղ-

11 եաք. Որպէս եւ գիտէք իսկ, զի զիւրաբանչիւր ոք ի ձէնջ, իբրեւ հայր

12 գորդիս, Մխիթարէաք եւ սփոփէաք եւ զնէաք վկայութիւն զնալ ձեզ արժանապէս Աստուծոյ, որ կոչեացն զձեզ

13 յիւր արքայութիւնն եւ ի փառս: Վասն այնորիկ եւ մեք գոհանամք զԱստուծոյ անպակաս, զի առեալ զլուր բանին Աստուծոյ առ ի մէնջ՝ ընկալարուք, ոչ իբրեւ զբան մարդկան, այլ որպէս ճշմարտիւ զբան Աստուծոյ, որ եւ յաջողեալ իսկ է ի ձեզ հաւատարուք, եղբարք, եկեղեցեացն Աստուծոյ որ են ի Հրէաստանի ի Քրիստոս Յիսուս. զի գնոյն չարչարանս չարչարեցայք եւ զուրք ի ձերոց ազգակա-

15 նաց, որպէս եւ նոքայն ի Հրէից. Որք եւ զՏէրն Յիսուս սպանին եւ Ղմարգարէան, եւ զմեզ հալածեցին, եւ Աստուծոյ յաջաց ելին, եւ ամենայն

16 մարդկան հակառակ եղեն. Եւ արգելուին զմեզ խօսել հեթանոսաց զի ապրեւոյին, զի կատարեցեն զմեզս իւրեանց յամենայն ժամ. քանզի հասաւ է ի վերայ նոցա բարկութիւն մինչեւ ի սոլառ:

17 ԲԶ. Այլ մեք, եղբարք, թէպէտ եւ որք մնացաք ի ձէնջ առ ժամանակ մի երեսօք եւ ոչ սրտիւք, առաւել եւս փութացաք տեսանել զերեսս ձեր մե-

18 ծաւ ցանկութեամբ: Վասն այսորիկ կամեցայ զալ առ ձեզ եւ Պաւղոս մի անգամ եւ երկիցս, եւ իսփանեաց

19 զմեզ Սատանայ: Քանզի ո՞վ է մեր յոյս կամ խնդրութիւն կամ պատի պարծանաց մերոց, եթէ ոչ զուրք ՚ի Տէր առաջի Տեառն մերոյ Յիսուսի ՚Քրիստոսի ի նորա պալատեանն: Ձի գուրք ք փառք մեր եւ խնդրութիւն:

ԳԼ. Գ

1 Վասն որոյ ոչ եւս ունիմք ժոյժ, զի բարւոք թուեցաւ մեզ միայն մնալ 2 յԱթէնս. Եւ առաքեցաք զՏիմոթէոս զեղբայր ՚մեր եւ զդործակից աւետա-

րանին Աստուծոյ եւ Հօրն Քրիստոսի՝, հաստատել զձեզ եւ մխիթարել վասն հաւատոցն ձերոց:

3 Ձի մի՛ տաղտկայցէք ի նեղութիւնսս յայստիկ. քանզի զուրք ինքնին իսկ

4 զիտէք զի ի սոյն կամք. Քանզի մինչ առ ձեզն իսկ էաք, յատաջագոյն առ սէաք ձեզ ինչ նեղութիւնք հասանելոց են ի վերայ մեր, որպէս եւ եղև իսկ,

5 եւ զփտացէք: Վասն այնորիկ եւ ես, զի ոչ եւս ունէի ժոյժ, առաքեցի զիտել զհաւատսն ձեր, զուրք արգելք փորձեաց եւ զձեզ փորձիչն, եւ ընդունայն լինիցի ջանս մեր: Բայց արդ իբրեւ եկն Տիմոթէոս ի ձէնջ առ մեզ, եւ ես մեզ զաւետիս հաւատոցն ձերոց եւ զսիրոյ, զի ունիք ի մտի զյիշատակս մեր բարեաց յամենայն ժամ, ցանկացեալ էք տեսանել զմեզ, որպէս

7 եւ մեք զձեզ. Վասն այնորիկ մխիթարեցաք ի ձեզ, եղբարք, ի վերայ ամենայն վշտաց եւ նեղութեանց մերոց:

8 Ի ձեռն հաւատոցն ձերոց. Ձի այժմ կենդանի եմք, եթէ զուրք հաստատուն

9 կայցէք ի Տէր: Ձի՞նչ կարեմք գոհութիւն մատուցանել Աստուծոյ վասն ձեր ի վերայ ամենայն խնդրութեանն զոր խնդամք վասն ձեր առաջի Աստուծոյ մերոյ, Զցայգ եւ զցերեկ առաւել եւս աղաչեմք տեսանել զերեսս ձեր, եւ հաստատել զպահպանութիւն

11 հաւատոցն ձերոց: Այլ ինքն Աստուած եւ Հայր մեր եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս ուղղեսցէ զճանապարհս մեր առ

12 ձեզ: Եւ զձեզ ինքն Տէր բաղմապատիկս եւ առաւելս արասցէ սիրով ընդ միմեանս եւ առ ամենեանս, որպէս

13 եւ մեք ի ձեզ, Հաստատել զսիրտս ձեր անարատս ի սրբութիւն առաջի Աստուծոյ եւ Հօր մերոյ ի զպալատեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հանդերձ ամենայն սրբովք իւրովք:

ԳԼ. Դ

1 Գ. Սյուռհետեւ, եղբարք, աղաչեմք զձեզ եւ մխիթարեմք ՚ի Քրիստոս Յիսուս՝, զի որպէս ընկալարուք ի մէնջ,

¹ Ի Գալ. Գ. 1-2, մեր և զպաշտօնեայ Աստուծոյ և զգործակից մեր յաւետարանին Քրիստոսի. այլ՝ մեր և զպաշտօնեայ Աստուծոյ յաւետարանին Քրիստոսի

² Ի Գալ. Գ. 1, ի Տէր Յիսուս

¹ Ի Գալ. Գ. 1, զմարգարէս իւրեանց

² Ի Գալ. Գ. 1, զմարգարէս

³ Ի Գալ. Գ. 1, զմարգարէս

1 թէ որպէս պարտ իցէ ձեզ գնալ եւ հա-
 ճոյ լինել Աստուծոյ . որպէս եւ գնայքդ
 2 ի նոյն : եւ զիտէք թէ որպիսի պատ-
 ուիրանս տուաք ձեզ ի Տէր Յիսուս :
 3 Զի այս են կամք Աստուծոյ՝ սրբու-
 թիւն ձեր , ի բաց լինել ձեզ ի պոռնը-
 4 կութեանէ . Գիտել իւրաքանչիւր ումեք
 ի ձէնջ զիւր աման ստանալ սրբու-
 5 թեամբ եւ պատուով . Մի՛ իցաւս ցան-
 կութեան , որպէս եւ ՚այլ հեթանոսք
 6 որ ոչ զիտեն զԱստուած : Մի՛ զան-
 ցանել եւ զրկել յիրիդ յայգմիկ գեղ-
 բայր իւր , քանզի վրէժխնդիր է Տէր
 ի վերայ ամենայնի այդորիկ . որպէս
 յատաջադոյն ասացաք ձեզ եւ եղաք
 7 վկայութիւն : Քանզի ոչ կոչեաց զմեզ
 Աստուած ի պղծութիւն , այլ ի սրբու-
 8 թիւն : Այտուհետեւ որ անարգէ , ոչ
 զմարդ անարգէ , այլ զԱստուած , որ
 եւ ետ զՀոգին Սուրբ ²ի ձեզ :
 9 Այլ վասն եղբայրսիրութեան չէ ինչ
 սխտոյ գրել առ ձեզ , զի գուք ինքնին
 իկի աստուածուսոյցք էք առ ի զմիմ-
 10 եանս սիրելոյ : Քանզի եւ առնէք իսկ
 զգոյն յամենայն եղբարս որ են յամե-
 նայն կողմանս Մակեդոնացւոց . աղա-
 չեմք զձեզ , եղբարք , առաւել եւս ա-
 11 ռաւելուլ եւ առատանալ . Հանգարտել
 եւ գործել զիւրաքանչիւր , եւ գործել
 ձեռօք ձերովք , որպէս եւ պատուիրե-
 ցաք ձեզ , զի գրասցէք պարկեշտու-
 թեամբ առ արաքիսնս , եւ մի՛ իւրիւր
 կարօտեալք իցէք :
 12 Ոչ կամիմ , եղբարք , եթէ տղէտք
 իցէք վասն ննջեցելոցն , զի մի՛ արտմի-
 ցիք որպէս եւ այլքն որոց ոչ գոյ յոյս :
 13 Եթէ հաւատամք եթէ Յիսուս մեռաւ
 եւ յերեւաւ , նոյնպէս եւ Աստուած
 զննջեցեալսն ի ձեռն Յիսուսի ամցէ
 14 ընդ նմա : ³Բայց զայս ասեմք՝ Տեառն
 բանիւ , եթէ մեք որ կենդանիքս մեք
 մնացեալք ի գալստեանն Տեառն՝ ոչ
 15 ⁴ժամանեմք ննջեցելոցն : Զի ինքնին
 Տէր հրամանաւ , ի ձայն հրեշտակապե-
 տի եւ ի փող Աստուծոյ իջանէ յերկ-
 նից , եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն
 16 յատաջադոյն : Ապա եւ մեք որ կեն-

գանւոյն մնացեալ իցեմք՝ նոքօք հան-
 դերձ յափշտակեսցուք ամպովք ընդ
 առաջ Տեառն յօրս , եւ այնպէս յամե-
 17 նայն ժամ ընդ Տեառն լինիցիմք : Այ-
 սուհետեւ միսիթարեցէք զմիմեանս բա-
 նիւքս այսոքիւք :

ԳԼ. Ե

1 ԳԳ. Այլ վասն ժամուց եւ ժամանա-
 կաց , եղբարք , չէ ինչ պիտոյ գրել առ
 2 ձեզ . Զի գուք ինքնին իսկ ստոյգ գի-
 տէք , թէ օրն Տեառն իբրեւ զգող գի-
 3 չերի՝ այնպէս հասանէ : Յորժամ ասի-
 ցեն թէ խաղաղութիւն եւ շինութիւն
 է , յայնժամ յանկարծակի հասցէ նոցա
 սատակումն , որպէս երկն յղւոյ , եւ
 4 մի՛ ասրեցեն : Այլ դուք , եղբարք ,
 ոչ էք ի խաւարի թէ օրն ձեր իբրեւ
 5 զգող ի վերայ հասանիցէ . Զի ամենե-
 քին դուք որդիք յուսոյ էք եւ որդիք
 տուրնջեան . չեմք գիչերոյ , չեմք խա-
 6 ւարի : Ապա մի՛ զքնով անկանիցիմք
 որպէս եւ այլքն , այլ արթունք եւ
 7 գուարթունք եղիցուք : Զի որ ննջենն՝
 գիչերի ննջեն , եւ որ արբենանն՝ գի-
 8 չերի արբենան : Այլ մեք զի տուրնջեան
 եմք , արթունք եղիցուք , եւ զղեցուք
 զղրահան հաւատոյ եւ զսիրոյ , եւ զի-
 ցուք զսաղաւարտն յուսոյն փրկու-
 9 թեան : Զի ոչ եդ զմեզ Աստուած ի
 բարկութիւն , այլ ի փրկութիւն կեն-
 դանութեան ի ձեռն Տեառն մերոյ Յի-
 10 սուսի Քրիստոսի , Որ մեռաւն վասն
 մեր . զի եթէ՛ արթունք իցեմք եւ
 եթէ՛ ննջիցեմք , նովաւ հանդերձ կեց-
 11 ցուք : Վասն որոյ միսիթարեցէք զմիմ-
 եանս եւ շինեցէք զիրեարս , որպէս
 եւ առնէրդ իսկ :
 12 ԳԶ. Աղաչեմք զձեզ , եղբարք , ձա-
 նաչել զվաստակաւորս եւ զվերակա-
 ցուս ձեր ի Տէր , եւ զխրատիչս ձեր .
 13 Եւ համարեցարուք գնոսս արժանիս
 առաւել սիրոյ վասն գործոյ նոցա .
 խաղաղութիւն արարէք ընդ միմեանս .
 14 Աղաչեմք զձեզ , եղբարք , խրատեցէք
 զստահակս , միսիթարեցէք զկարճա-
 միտս , պատասպարան լերուք տկարաց ,
 երկայնամիտ լերուք առ ամենեսին :
 15 Զգոյ՛ լերուք գուցէ ոք չարի չար հա-
 տուցանիցէ . այլ յամենայն ժամ զբար-
 եաց զհետ երթայք առ միմեանս եւ

¹ի Յաննիս գլխի
²Ուրի , ի մեզ
³Յաննիս , Քանզի զայս ասեմք ձեզ
⁴կա՛մ , յատաջեմք քան զննջեցեալսն

46 առ ամենեսին : Յամենայն ժամ ուրախ
 47 լերուք : Անդազար աղօթս արարէք :
 48 Յամենայնի զոհացարուք , զի այս են
 կամք Աստուծոյ Քրիստոսիւ Յիսուս
 49 սիւ ի ձեզ , ՉՀոգին մի՛ շիջուցանէք ,
 20 Զմարդարէութիւնս մի՛ արհամարհէք ,
 21 Զամենայն ինչ փորձեցէք , զբարին ըն-
 22 կայարուք : Յամենայն իրաց չարաց
 23 ի բաց կացէք : Եւ ինքն Աստուած խա-
 ղազուութեան սուրբս արասցէ զձեզ հա-
 մօրէնս . եւ բովանդակ ձեր ոգի եւ
 շունչ եւ մարմին անարատ ի գալուստ
 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պա-

24 հեսցի : Հաւատարիմ է որ կոչեացն
 զձեզ , որ եւ արասցէ զնոյն :
 25 Եղբարք , աղօթս արարէք եւ ի մեր
 26 վերայ : Ողջոյն տաջիք եղբարց ամենեւ-
 27 ցուն ի համբոյր սրբութեան : Երդմեւ-
 ցուցանեմ զձեզ ի Տէր բնթեանու
 զթուղթոյ առաջի ամենայն եղբարց
 28 սրբոց : Շնորհք Տեառն մերոյ Յիսուս-
 սի Քրիստոսի ընդ ձեզ :¹

Աւ թեառննիկնիս առջին խոյն Գրեցա-
 յԱլեկեսայ :

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ

ԹՈՒՂԹ

ԳՆՈՒԽ Ա

1 ԴԿ. ՊԱՒՂՈՍ եւ Սիզուանոս եւ Տի-
 մոթէոս , եկեղեցւոյդ թեաղանիկեցւոց
 յԱստուած Հայր մեր եւ ի Տէր Յի-
 2 սուս Քրիստոս . Շնորհք ընդ ձեզ եւ
 խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ
 եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ :
 3 Գոհանալ պարտիմք զԱստուծոյ յա-
 մենայն ժամ վասն ձեր , եղբարք , որ-
 պէս եւ արժան իսկ է . զի եւս քան
 զեւս աճես հաւատք ձեր , եւ յաճախէ
 սէր իւրաքանչիւր ամենեցուն ձեր առ
 4 միմեանս . Որպէս եւ մեզ ձեւք պար-
 ձել յեկեղեցիսն Աստուծոյ վասն համ-
 բերութեան ձերոյ եւ հաւատոց յամե-
 նայն հալածանս ձեր եւ ի նեզութիւնս ,
 5 որում զուքն համբերէք . Յօրինակ
 արդար դատաստանին Աստուծոյ , ար-
 ժանի լինել ձեզ արքայութեանն Աս-
 տուծոյ , վասն որոյ եւ զճզնութիւնդ
 6 կրէք . Եթէ պարտէ առաջի Աստուծոյ
 հատուցանել նեղչացն ձերոց նեզու-
 7 թիւն . Եւ ձեզ նեղկոյող հանդիսա-
 ընդ մեզ ի յայտնութեանն Տեառն մե-

րոյ Յիսուսի յերկնից հրեչտակօք զօ-
 8 ճրութեան իւրոյ , ի բոց հրոյ առնուլ
 զյրէժս յայնցանէ ոյք ոչ ճանաչեն զԱս-
 տուած , եւ որ ոչ հնադանդին աւետա-
 րանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
 9 տոսի . Որք տայցեն վրէժս ի սատա-
 կումն յաւիտեանից յերեսաց Տեառն եւ
 10 ի փառաց զօրութեանն նորա , Յորժամ
 գայցէ փառաւոր լինել ի մէջ սրբոց
 իւրոց , եւ սքանչելի ի մէջ ամենայն
 հաւատացելոց , (զի հաւատարիմ եղեւ
 վկայութիւնն մեր ի վերայ ձեր) յաւուր
 11 յայնմիկ : Յոր եւ աղօթս առնեմք վասն
 ձեր յամենայն ժամ , զի զձեղ արժա-
 նիս արասցէ կոչմանն ²ձերում ³Աս-
 տուած , մինչեւ լցցէ զամենայն հա-
 ճութիւն բարութեան , եւ զգործս հա-
 12ւատոցն զօրութեամբ . Զի փառաւոր
 լիցի անուն Տեառն մերոյ Յիսուսի
 Քրիստոսի ի ձեզ , եւ զուք՝ ի նմա ,
 ըստ շնորհացն Աստուծոյ մերոյ եւ
 Տեառն Յիսուսի Քրիստոսի :

¹ Ունս յաւելուս Ալեկէ :
² Յամենայն պարտիմք :
³ Բազմաթիւ , Աստուած մեր , և

ԳԼ. Բ

1 ԳՂ. Ազաչեմ զձեզ, եղբարք, վասն գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ մերոյ ժողովելոյն առ
 2 նա, Մի՛ վազվազակի խոռովել ձեզ ի մտաց եւ մի՛ զարհուրել, մի՛ հողուով եւ մի՛ բանիւ եւ մի՛ թղթովք իրրեւ թէ ի մէնջ, որպէս թէ եկեալ հասեալ
 3 իցէ օր Տեառն, Մի՛ ոք զձեզ խաբեսցէ եւ մի՛ իւրիք իրօք. զի եթէ ոչ նախ եկեսցէ ապստամբութիւնն, եւ յայտնեսցի մարդն անօրէնութեան, որզին
 4 կորստեան, Հակառակորդն հսլարտացեալ ի վերայ ամենայնի որ անուանեալ իյէ Աստուած կամ սլաշտօն, մինչեւ նստել նմա ի տաճարին ¹Աստուծոյ, եւ ցուցանել զանձն թէ Աստուած
 5 իցէ, Ո՞չ յիշիցէք զի մինչ առ ձեզն
 6 իսկ էի, ասէի զայս: Եւ արզ դուք ինքնին զիտէք զայն որ ունին, յայտնել նմա յիւրում ժամանակի: Զի խորհուրդն անօրէնութեան արգէն իսկ զօրանայ. բայց ցայնժամ՝ մինչ ի միջոյ
 8 քարձցի որ այժմզ ունի: Եւ ապա յայանեսցի անօրէնն. զոր Տէր ²Յիսուս սատակեսցէ հողուով բերանոյ իւրոյ, եւ խախանեսցէ յայտնութեամբ
 9 գալստեանն իւրոյ. Որոյ զալուստն ըստ ազդեցութեան Սատանայի է ամենայն զօրութեամբ եւ նշանօք եւ ար-
 10 ունեանիք ստովք, եւ ամենայն պատրանօք անիրաւութեան ի վերայ կորուսելոյն. փոխանակ զի զսէրն ճշմարտութեան ոչ ընկալան, զի ապրեսցին. եւ վասն այնորիկ առաքեսցէ նոցա Աստուած ազդեցութիւն մոլորութեան
 11 հաւատայ նոցա ստութեանն. Զի դատապարտեսցին ամենեքեան որ ոչ հաւատացին ճշմարտութեանն, այլ հաճեսցան ընդ անօրէնութիւնն:
 12 Այլ մեք պարտիմք զոհանալ զԱստուծոյ յամենայն ժամ վասն ձեր, եղբարք սիրեցեալք ի Տեառնէ, զի ընտրեաց ³զմեզ Աստուած ի սկզբանէ ի փրկութիւն սրբութեամբ Հոգւոյն եւ
 13 հաւատովքն ճշմարտութեան. Յոր եւ կոչեսցն զձեզ աւետարանաւն մերով

ի փրկութիւն փառացն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:
 14 Այսուհետեւ, եղբարք, հաստատուն կացէք եւ պինդ կալարուք զաւանգութիւնն զոր ուսարուք, եթէ՛ բանիւ եւ եթէ՛ թղթով մերով, Այլ ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ Աստուած եւ Հայր մեր, որ սիրեացն զմեզ եւ ետ մեզ մխիթարութիւն յաւիտենից եւ յոյս բարեաց շնորհօք,
 16 Մխիթարեսցէ զսիրտս ձեր եւ հաստատեսցէ յամենայն բանս եւ ի գործս բարութեան:

ԳԼ. Գ

1 ԳՁ. Այսուհետեւ, եղբարք, ազօթս արարէք ի վերայ մեր, զի բանն Տեառն ընթանայցէ, եւ փառաւոր լինիցի յամենայն տեղիս, որպէս եւ առ ձեզդ.
 2 Զի ապրեսցուք յանօրինաց եւ յանդամաց մարդոց. զի ոչ ամենեցուն են
 3 հաւատք: Այլ հաւատարիմ է Տէր, որ եւ հաստատեսցէ զձեզ եւ պահեսցէ
 4 ի չարէ անտի: Վստահ եմք ի ձեզ Տերամբ, թէ զոր պատուիրեցաքն ձեզ, եւ առնէք եւ առնիցէք, Այլ Տէր ուզղեսցէ զսիրտս ձեր ի սէրն Աստուծոյ եւ ի համբերութիւնն Քրիստոսի,
 6 Պատուիրեմ ձեզ, եղբարք, յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, խորշել ձեզ յամենայն եղբօրէ որ ստահական գնացեն, եւ ոչ ըստ աւանգութեանն զոր ընկալարուք ի մէնջ,
 7 Զի դուք ինքնին զիտէք թէ որպէս պարտ է ձեզ նմանել մեզ. զի ոչ երբեք ստահակեցաք առ ձեզ, եւ ոչ ձրի զուրուք հաց կերաք, այլ ջանիւ եւ վաստակով զցայգ եւ զցերեկ գործէաք
 9 վասն չժանրանալոյ ումեք ի ձէնջ. Ոչ եթէ չունէք իշխանութիւն, այլ զի զանձինս օրինակ արասցուք ձեզ նմա
 10 նոզս լինել մեզ: Քանզի մինչ առ ձեզն իսկ էաք, զայս պատուիրէք ձեզ, թէ Որ ոչն կամիցի գործել, եւ կերիցէ
 11 մի: Արգ լսեմք զօմանց ի ձէնջ թէ ստահակութեամբ գնան, գործ ինչ ոչ գործեն, այլ յուլացեալ հետաքրքիր
 12 չըջին: Այնպիսեացն պատուէր տամք, եւ ազաչեմք ի Տէր Յիսուս Քրիստոս, զի հանգատութեամբ գործեսցեն եւ
 13 զիւրեանց հաց կերիցեն: Այլ դուք,

¹Ուստ, Աստուծոյ իբրեւ զԱստուած
²Յիսուս պիւստ ³Բաւուս, զձեզ

եղբարք , մի՛ ձանձրանայք զբարիս
 14 գործել : Ապա եթէ ոչ ոք հնազանդե-
 ցի բանիս մերում թղթովդ այդուիկ ,
 զուք նշանակեսձիք զնա , եւ մի՛ խառ-
 նակեսձիք ընդ նմա , զի պատկառեսցէ :
 15 Բայց մի՛ իբրեւ զթշնամի համարեա-
 ջիք , այլ խրատեսձիք իբրեւ զեղբայր :
 16 Եւ ինքն Տէր խաղաղութեան տացէ
 ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ

յամենայն իրս . Տէր ընդ ամենեսին
 17 ընդ ձեզ : Ողջոյնս իմոյ ձեռին Պաւղոս
 սի է , որ է նշանակ յամենայն թուղթս .
 18 այսպէս դրեմ : Շնորհք Տեառն մերոյ
 Յիսուսի Քրիստոսի ընդ ամենեսին
 ձեզ :

Առ Թեառնէկէնցի երկուրդ՝ գրեցու-
 յԱրեւայ :

ԱՌ ՏԻՄՈԹԵՆՍ ԱՌԱԶԻՆ

ԹՈՒՂԹ

ԳՂՈՒԽ Ա

1 ԱԿ. ՊԱՒՂՈՍ , առաքեալ Յիսուսի
 Քրիստոսի ըստ հրամանի Փրկչին մե-
 րոյ Աստուծոյ եւ Քրիստոսի Յիսուսի
 2 յուսոյն մերոյ . Տիմոթեայ , որզւոյ սի-
 րելւոյ հաւատովք , շնորհք , ողորմու-
 թիւն , խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ
 եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիս-
 տոսէ :
 3 Որպէս աղայեցի զքեզ կալ յԵփե-
 սոս , մինչ երթայի ի Մակեդոնիա , զի
 պատուէր տացես ոմանց չլինել օտար-
 4 ուսմունս , եւ չհայել յառասպելս եւ
 ի տոհմաթիւս անչափս . որ մանաւանդ
 ինդիրս յուզեն , եւ ոչ ¹զտնտեսու-
 5 թիւն Աստուծոյ հաւատովք : Քանզի
 զլուխ պատուիրանին սէր է , ի սուրբ
 սրտէ եւ ի մտաց բարեաց եւ յանկեղ-
 6 ծաւոր հաւատոց . Յորոց ոմանք վրի-
 պեցան խոտորեալք յունայնութիւն
 7 բանից . կամին լինել վարդապետք օ-
 րինաց , ինքեանք ոչ իմանան զինչ
 խօսին , եւ ոչ վասն որոց պնդեալն են :
 8 Քիտեմք եթէ բարեոք են օրէնք , եթէ
 9 ոք զնոսս օրինօք կրեսցէ : Բայց զայս
 զիտասցէ , զի ի վերայ արդարոց օրէնք

ոչ կան , այլ ի վերայ անօրինաց եւ
 անհնազանդից , ամբարշտաց եւ մեղա-
 ւորաց , անսրբոց եւ պղծոց , զհայր եւ
 զմայր ²անարգողաց , մարդասպանաց ,
 10 Պոռնկաց , արուաղիտաց , մարդերու-
 զաց , ստոց , ստերգմանց , եւ եթէ այլ
 ինչ իցէ հակառակ ողջամիտ վարդա-
 11 պետութեանս , Որ ըստ աւետարանի
 փոռաց երանելոյն Աստուծոյ է , ո-
 րում եղէ ես հաւատարիմ : ՎՋ
 12 Շնորհ ունիմ այնմիկ որ զօրացոյցն
 զիս , ³ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր՝ ,
 զի հաւատարիմ համարեցաւ կարգել
 13 ի սպասաւորութիւն . Որ յառաջագոյն
 հայհոյիչն էի եւ հալածիչ եւ թշնա-
 մանիչ , այլ զտի ողորմութիւն , զի
 զայն յանդիտութեան եւ յանհաւա-
 14 նութեան գործէի . Եւ առաւել եղեն
 շնորհք Տեառն մերոյ հաւատովքն եւ
 15 սիրով որ ի Քրիստոս Յիսուս : Հաւա-
 տարիմ է բանս եւ ամենայն ընդու-
 նելութեան արժանի է , զի Քրիստոս
 Յիսուս եկն յայսար՝ փրկել զմեզա-
 16 ւորս որոց զլուխն ես եմ : Այլ վնան
 այնորիկ զտի ողորմութիւն , զի նախ
 յիս կցոյց Յիսուս Քրիստոս զամենայն

¹Ունէ , զչնութիւն

²Յռն , հարկանողաց

³Յռն , Քրիստոսի Յիսուսի Տեառն մերում

երկայնատուժիւն յորինակ այնոցիկ որ հաւատարոցն իցեն ի նա ի կեանսն յա-
 17 ւիտենից: Այլ Թագաւորին յաւիտե-
 նից, անեղծի եւ աներեւութի, միոյն
 Աստուծոյ՝, փառք եւ պատիւ յաւիտե-
 18 անս յաւիտենից: Ամէն:
 18 Չայս պատուիրան աւանդեմ քեզ,
 որդեակ իմ Տիրոթէոս, ըստ կանխե-
 19 ղի ի քեզ մարգարէութեանցն, զի դու
 զինուորիցիս նոքօք զղեղեցիկ զինուո-
 19 րութիւնն. Ունիցիս հաւատս սրբովք
 մտօք, զոր ոմանց մերժեալ յանձանց
 իւրեանց նաւակոծեցան ի հաւատսն.
 20 Որոց սակի եւ Հիմնոս եւ Աղեք-
 սանդրոս, զորս մատնեցի Սատանայի,
 զի խրատեսցին չհայհոյել:

ԳԼ. Բ

1 Եւ արդ աղաչեմ նախ քան զամենայն
 առնել աղօթս, խնդրուածս, սպաղա-
 տանս, դոճութիւնս վասն ամենայն
 2 մարդկան. Վասնաւանդ վասն թաղա-
 տորաց եւ ամենայն իշխանաց, զի խա-
 զաղութեամբ եւ հնազարտութեամբ
 վարեացուք զկեանս մեր ամենայն
 3 աստուածայաշտութեամբ եւ սրբու-
 3 թեամբ: Չի այն է բարի եւ ընդունելի
 4 աստ՛ջի Փրկչին մերոյ Աստուծոյ, Որ
 զամենայն մարդիկ կամի զի կեցցեն եւ
 ի դիտութիւն ճշմարտութեան եկես-
 5 ցեն: Չի մի է Աստուած, եւ մի միջ-
 նորդ Աստուծոյ եւ մարդկան, մարդն
 6 Յիսուս Քրիստոս, Որ ետ զանձն փրո-
 կանս ընդ ամենեցուն՝ վկայութիւն
 7 ժամանակաց իւրոց. Յոր եղայ ես քա-
 րոզ եւ առաքեալ, (ճշմարիտ ասեմ
 3ի Քրիստոս եւ ոչ ստեմ,) Չեղէ վար-
 զայտա հեթանոսաց հաւատովք եւ
 ճշմարտութեամբ:
 8 ԱԳ. Կամիմ զի արք կայցեն յաղօթս
 յամենայն տեղսն, բառնայցեն զսուրբ
 ձեռս ի վեր զոմանց բարկութեան եւ
 9 երկմտութեան: Նոյնպէս եւ կանայք
 ի զարդ խոնարհութեան ակնածու-
 թեամբ եւ զղաստութեամբ զարգարել
 զանձինս, մի՛ ի հիւսս ոսկեմանս ըն-
 զելուղեալս մարգարտով, կամ ի հան-
 10 զերձս սաճուճեալս, Այլ, որպէս վա-

յեղէ կանանց զաստուածայաշտութիւն
 յանձն առելոց, գործովք բարութեան:
 11 Կին մարդ ճշմութեամբ ուսցի, ամե-
 12 նայն հնազանդութեամբ: Այլ ուսու-
 ցանել կնոջ մարդոյ ոչ հրամայեմ, եւ
 ոչ ճոխաբան լինել քան զայր մարդ,
 13 այլ ի լուծութեան կալ: Չի Աղամ նախ
 14 ստեղծաւ եւ սպա Եւս: Եւ Աղամ
 ոչ սպտեցաւ, այլ կինն պատրեցաւ
 15 եւ յանցեաւ. Բայց կեցցէ վասն որ-
 գեծնութեանն, եթէ կայցեն ի հաւատս
 եւ ի սէր եւ ի սրբութիւն պարկեշ-
 տութեամբ:

ԳԼ. Գ

1 Հաւատարիմ է բանս, եթէ ոք եպիս-
 կոսոսութեան ցանկայ, բարւոյ գոր-
 2 ծոյ ցանկայ: Պարտ է եպիսկոպոսին
 անարատ լինել, միոյ կնոջ այր, ճեղ,
 ցած, պարկեշտ, հիւրասէր, ուսուցիչ:
 3 Մի՛ թշնամանող, մի՛ հարկանող, այլ՝
 հանդարտ. մի՛ կոռոզ, մի՛ արծաթա-
 4 սէր. Չի իւրում տանն իսկ բարւոք
 վերակացու լինել իցէ, որդեակս ու-
 նիցի որ ի հնազանդութեան կայցեն
 5 ամենայն պարկեշտութեամբ: (Յ.պա
 եթէ ոք իւրում տանն վերակացու
 չզիտիցէ լինել, զիւրդ եկեղեցւոյ Աս-
 6 տուծոյ խնամակալ լիցի:) Մի՛ մատա-
 զատունկ, զի մի՛ հպարտացեալ ի դա-
 7 տաստանս Սատանայի անկանիցի: Այլ
 յարտ է նմա վկայութիւն բարի եւ
 յարտաքնոցն ունել. զի մի՛ ի նախա-
 տինս անկանիցի եւ յորողայթս Սա-
 տանայի:
 8 Նոյնպէս եւ զսարկաւաղունս սպար-
 կեշտս. մի՛ երկբանս, մի՛ զինեսէրս, մի՛
 9 զօշաքաղս. Այլ ունիցին զսորհուրդ
 10 հաւատոցն սուրբ մտօք: Ինքեանք
 նախ փորձեսցին, եւ սպա ի սպառօնն
 11 մատրցեն, զի անարատք իցեն: Նոյն-
 պէս եւ կանայք նոցա պարկեշտք. մի՛
 չարախօսք, ճեղք, հաւատարիմք յա-
 12 մենայնի: Սարկաւաղք լինիցին միոյ
 կնոջ արք, որոց որդւոց իւրեանց բար-
 13 իւրեանց. Չի որ բարւոքն սպառիցեն՝
 աստիճան բարի անձանց իւրեանց շա-

1ՂԼԷ, միայնոյ իմաստնոյն Աստուծոյ
 2ի Յոանն պալտէ 3Յոանն պալտէ

4Յոանն, լուծութեամբ
 5Յոանն, արթուն, լա՛մ, զգաստ
 6Ո՛րան, մի՛ հարկանող, մի՛ զօշաքաղ, այլ

հին, եւ բազում համարձակութիւն ի հաւատան որ ի Գրիստոս Յիսուս: ՎՋ
 14 Չայս գրեմ առ քեզ, զի ահն ունիմ
 15 ի մօտոյ զայ: Ապա թէ յամեցից, զի
 զիտասցես թէ որպէս պարտ իցէ քեզ
 ի տան Աստուծոյ շրջել, որ է եկեղեցի
 16 հաստատութիւն ճշմարտութեան: Եւ
 յայտնի իսկ մեծ է խորհուրդն աստուածապաշտութեան, չոր երեւեցաւ մարմնով, արդարացաւ Հոգւով, յայտնեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ ի հեթանոսս, հաւատարիմ եղեւ յաշխարհի եւ վերացաւ փառօք:

ԳԼ. Դ

1 ԱՋ. Այլ Հոգին Սուրբ յայնապէս
 2 ասէ թէ ի ժամանակ յետինս քահեցիին ոմանք ի հաւատոցն, եւ հայեացին յայս մոլորութեան եւ ի վարդապետութիւնս զիւաց, կեզձաւորութեամբ ստարանք, խարեալք իւրեանց խզճիւն
 3 մտաց: Որ արդեւոցուն յամուսնանալոյ, եւ մեկնիցեն ի կերակրոց զոր Աստուած հաստատեաց ի վայելել² հաւատացելոց, եւ ոչք հասեալ իցեն ի
 4 ճշմարտութեանն վերայ: Զի ամենայն արարածք Աստուծոյ բարի են, եւ չիք ինչ խտտան. մանաւանդ որ գոհու
 5 թեամբ ընդունիցին: Զի սրբի բանիւն
 6 Աստուծոյ եւ ազօթիւք, Չայս խրատ տուեալ եղբարց՝ բարեք պաշտօնեայ լինիցիս Գրիստոսի Յիսուսի, սնանիցիս բանիւք հաւատոց եւ բարեք վարդապետութեամբն զորոյ զհետն իսկ
 7 եզեր: Այլ ի պիզձ բանից եւ յառասպելաց պատուանց հրաժարեսցիր, բայց կրթեա զանձն քո յաստուածապաշտու
 8 թիւն: Զի մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ օգտակար է, իսկ աստուածապաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է, եւ զաւետիս կենաց ունի
 9 զարգիս եւ զհանդերձելոցն: Հաւատարիմ է բանս եւ ամենայն ընդու
 10 նեղութեան արժանի է: Զի ի սոյն իսկ փաստակեմք եւ նախատինս յանձն առնումք, զի յուսացեալ եմք յԱստուած կենդանի, որ է Փրկիչ ամենայն մարդկան, մանաւանդ հաւատացելոց:

¹ Ունա, Աստուած
² Բարեք, գոհութեամբ հաւատացելոց

11 ԲԿ. Պատուէր տալիր զայդ եւ ու
 12 սուցանիցիր: Զի մի՞ ոք զքո մանկու
 թիւնդ արհամարհիցէ. այլ օրինակ լինիցիր հաւատացելոց բանիւք, զհացիւք, սիրով, հաւատովք, սրբութեամբ: Մինչեւ գամ ես, միտ զիր ընթացուածոց, մխթարութեան, վարդապետութեան: Մի՞ անփոյթ առներ զչնորհացդ որ ի քեզ են, որ առաւ քեզ մարգարէութեամբ ի ձեռնադրու
 13 թեանէ երիցութեան: Յայդ խորհեաց եւ ի դոյն կանխեսցիր, զի քո յատաջազիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի:
 14 Զգոյ լինիցիր անձին եւ վարդապետութեանդ եւ ի դմին յամեսցիր. զայդ եթէ առնիցես, ե՛ւ զանձն ասրեցուցես, ե՛ւ զայնոսիկ որ քեզն լիցին:

ԳԼ. Ե

1 Զձերն մի՞ պատուհասիցես, այլ մխթարեսցիր իբրեւ զհայր. զերիտա
 2 սարդս՝ իբրեւ զեղբարս, Զպառուունս՝ իբրեւ զմարս, զմանկամարդս՝ իբրեւ
 3 զքորս ամենայն սրբութեամբ: Զայրիս պատուեա որ ստոյգ այրիքն իցին:
 4 Ապա թէ ոք այրի որգիս եւ թոռունս ունիցի, ուսանիցին նախ իւրեանց տանց բարի առնել, եւ զվոխարէնն հատուցանել ճնողացն. զի այն է բարի
 5 եւ ընդունելի առաջի Աստուծոյ: Իսկ որ ճշմարտիւ այրին իցէ եւ մենացեալ, յուսացեալ յԱստուած, եւ ճկանխեալ յազօթս եւ ի խնդրուածս զցայդ եւ
 6 զցերեկ: Իսկ զիրգ այրին կենդանւոյն
 7 մուռեալ է: Զայս պատուիրեա զի ա
 8 նարատք իցին: Իսկ եթէ ոք իւրոց եւ մանաւանդ ընտանեաց ինամ ոչ ամանիցի, ի հաւատոցն ուրացեալ է,
 9 եւ չար եւս քան զանհաւատան է: Այրի ընդ այրիս անուանեսցի որ չիցէ պակաս ի վաթմասմենից, միոյ առն կին լիեալ, եւ ի գործս բարիս վկայեալ. եթէ մանկունս անուցեալ իցէ, եթէ զհիւրս ընկալեալ իցէ, եթէ զսրբոց զոտս լուացեալ իցէ, եթէ նեղելոց բաւական լիեալ իցէ, եթէ զամենայն գործոց բարեաց զհետ երթեալ իցէ: Այլ ի մանկամարդաց այրեացն հրաժարեա, զի յորժամ խայտան զԳրիստոսիւ,

¹ Յոյն, յուսայ
² Յոյն, կանխէ

12 ամուսնանալ կամին . Իսկ զղատաս-
 13 տանս ընդունին , զի զառաջին հա-
 եւ զատան արհամարհեցին : Միանգամայն
 եւ զատարկանձունք ուսանին , չըջողք
 տանէ ի տուն . եւ ոչ միայն զատարկք ,
 այլ եւ փասքուսք եւ հետաքրքիրք .
 14 եւ խօսին որ ինչ ոչ է պիտոյ : Կամիմ
 զմանկամարդացց ամուսնանալ , որդիս
 ծնանել , անարարս լինել , եւ մի' ինչ
 պատճառս տալ հակառակորդին ի հայ-
 15 հոյութեան ազագս : Ձի արդէն իսկ
 ոմանք խտորեցան զկնի Սատանայի :
 16 Եթէ ոք հաւատացեալ այրիս ունիցի ,
 բաւական լիցի նոցա , եւ մի' ծանրաս-
 ցի եկեղեցւոյն , զի ճշմարիտ այրեացն
 բաւական լինիցի :
 17 Եւ Որ բարեոք վերակացու լինին
 երիցունքը կրկին պատուոյ արժանի ե-
 շիցին , մանաւանդ որ այլատիցին բա-
 18 նիւ եւ վարդայետութեամբ : Քանզի
 ասէ զիր , Մի' կապեսցես ղցողկ եզին
 կալոտուոյ , եւ Արժանի է մշակն վար-
 19 ձու իւրոյ : Ձերիցուէ չարախօսու-
 թիւն մի' ընդունիցիս , բայց եթէ եր-
 20 կուք եւ երիւք վկայիւք : Իսկ որ մե-
 ղանչենն՝ առաջի ամենեցուն յանդի-
 21 մանեա , զի եւ այլքն երկիցեն : Վկա-
 յութիւն զնեմ առաջի Աստուծոյ եւ
 Յիսուսի Քրիստոսի եւ բնարեւոյց հրեչ-
 տակաց , զի զայդ պահեսցես առանց
 մտահաճութեան , մի' ինչ առնել աչա-
 22 ռանօք : Ձեռս վազվազակի յուրուք
 վերայ մի' դնիցես , եւ մի' կցորդ լինի-
 ցիս մեղաց օտարաց . զանձն քո սուրբ
 պահեսջիր :
 23 Այսուհետեւ մի' ջուր եւեթ ըմպիւ-
 ցես , այլ սահաւիկ մի եւ զինի խառ-
 նեաջիր վամն ստամոքսի եւ ստէպ
 հիւանդութեանց :
 24 Են մարդք որոց մեղքն յայտնի են ,
 եւ յառաջադոյն հասեալ ի զատաստան ,
 25 եւ են՝ որոց զկնի երթան : Նոյնպէս
 եւ բարի գործքն յայտնի են . եւ որ այ-
 լազդ եւս ինչ իցեն՝ թաքել ոչ կարեն :

ԳԼ . Զ

1 Որ միանգամ ընդ լծով ծառայութեան
 իցեն , զիւրաքանչիւր տեարս պատուի
 արժանի համարեսցին , զի մի' անուսն

13-15, ամենայն պատուոյ

Աստուծոյ եւ վարդապետութիւնն հայ-
 2 հոյեսցի : Իսկ որ հաւատացեալ տեարս
 ունիցին , մի' արհամարհեսցեն զի եղ-
 բարք են , այլ առաւել ծառայեսցեն ,
 զի հաւատացեալքն են եւ սիրունք ,
 որք զբարերարութիւնն յանձին ունի-
 ցին . զայս ուսուցանիջիր եւ միսթա-
 3 թեսջիր : Իսկ եթէ ոք այլազգ ինչ ու-
 սուցանիցէ , եւ ոչ անսայցէ ողջմտու-
 թեան բանից Տեառն մերոյ՝ Յիսուսի
 Քրիստոսի , եւ ըստ աստուածպաշ-
 4 տութեան վարդապետութեանն , Այն-
 պիսին հոյարտացեալ է եւ ոչինչ ոչ
 զիտէ , այլ տասի ի ինդիրս եւ ի բանս
 հակառակութեան . ուստի լինին նա-
 խանձ , հեռ , հայհոյութիւնք , կարծիք
 5 չարեաց , իյարդախութիւնք սպակա-
 նելոց մտաց մարդկան եւ օտարացելոց
 ի ճշմարտութենէ անտի , որք չահա-
 վաճառ համարին զաստուածպաշտու-
 թիւնն . բայց դու մերժեսջիր յայն-
 պիսեաց անտի :
 6 Եւ Այլ չահավաճառ մեծ աստուած-
 պաշտութիւնն է բաւականութեամբ
 7 հանդերձ : Ձի ոչ բերաք ինչ յաշխարհս ,
 8 եւ ոչ՝ տանիլ ինչ կարասցուք : Այլ
 ունիմք կերակուր եւ հանդերձս , եւ
 9 այնու շատասցուք : Իսկ որք կամինն
 մեծանալ՝ անկանին ի փորձութիւն եւ
 յորոգայթ եւ ի բաղում ցանկութիւնս
 անմիտս եւ մխասակարս , որք ընկղմեն
 զմարդիկ ի սատակումն եւ ի կորուստ :
 10 Ձի արմատ ամենայն չարեաց արծաթ-
 սիրութիւն է . որում ոմանց ցանկա-
 ցեալ վրիպեցան ի հաւատոցն , եւ զան-
 ձինս արկին ընդ բաղում ցաւովք :
 11 Այլ դու , ո՛վ մարդ Աստուծոյ , փա-
 խիր յայնցանէ , եւ երթ զհետ արդա-
 րութեան , զաստուածպաշտութեան ,
 զհաւատոց , զսիրոյ , զհամբերութեան ,
 12 զհեղութեան . եւ մարտիր զբարեոք
 մարտն հաւատոց , եւ բուսն հար զկե-
 նացն յաւիտեանականաց յոր կոչեցարն ,
 եւ զաւանեցեր զբարեոք զաւանու-
 13 թիւն առաջի բաղում վկայից : Պատ-
 ուիրեմ քեզ առաջի Աստուծոյ որ կեն-
 զանի առնէ զամենայն , եւ Յիսուսի
 Քրիստոսի որ վկայեաց առաջի Պոն-
 տացւոյ Պիղատոսի զբարեոք զաւա-
 14 նութիւնն , Պահել քեզ զպատուիրանն

2 ղիւնէ , և յայտ իսկ է թէ և ոչ

անբիծ , անարատ , մինչև ի յայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի . 2 որ յիւր ժամանակս ցուցցէ Երանելին եւ միայն Հօր , Թաղաւոր 16 Թագաւորաց եւ Տէր տերանց . Որ միայն ունի զանմահութիւն՝ բնակեալ ի լոյս անմատոյց . զոր ոչ ոք ետես ի մարդկանէ եւ ոչ տեսանել կարող է , որում պատիւ եւ զօրութիւն յաւիտեանս : Ամէն :

17 Մեծատանց որ են յայսմ աշխարհի՝ պատուէր տալիք մի՛ հպարտանալ եւ մի՛ յուսալ ի մեծութիւն սնտոսի , այլ 1 յԱստուած որ տայ մեզ զամենայն ա- 48 ռատապէս ի վայելել , Զբարիս զործել ,

մեծանալ զործովք բարութեան , ա-
նատս , 2 սիրունս , հաղորդս լինել .
49 Գանձել անձանց հիմն բարի ի հան-
դերձեալսն , զի բուն հարկանիցեն
3 զճշմարիտ կենացն :
20 Ով Տիմոթէէ , պահեա զաւանդն՝
խտորեալ 4 ի պղծոց եւ ի նորածայն
բանից եւ ի հակառակութենէ եւ ի
21 մոլարանուն գիտութենէ՝ , Զոր ոմանց
յանձն առեալ՝ վրիպեցան ի հաւատոց
անտի : Շնորհք ընդ քեզ : 5

Ա- Տիմոթէս առաջին Բարեցա-
նէ Լատարիկէայ , որ է Եայր Կառապոյ Պա-
կարդիանացաց :

ԱՌ ՏԻՄՈԹԷՆՍ ԵՐԿՐՈՐԴ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԳԿ. ՊԱՒՂՈՍ , առաքեալ Յիսուսի Բրիստոսի կամօքն Աստուծոյ , ըստ աւետեաց կենացն որ ի Բրիստոս Յիսուսուս , Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ շնորհք , ողորմութիւն եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ եւ ի Բրիստոսէ Յիսուսէ Տեառնէ մերմէ :

3 Շնորհ ունիմ Աստուծոյ զոր պաշտեմն ի նախնեաց մտօք սրբովք . իբրև զի անպակաս ունիմ զքէն յիշատակ 4 յաղօթս իմ զցայց եւ զցերեկ . Յանկացեալ եմ տեսանել զքեզ՝ յիշատակեալ զարտասունքս , զի լցայց ու- 5 րախութեամբ . Զմտաւ ածեալ զանխիղճ հաւատան որ են ի քեզ , որ յառաջադոյն բնակեցաւ ի հանոյ քում Լաւողեայ , եւ ի մօր քում Եւնիկեայ . 6 հաստատեալ եմ թէ եւ ի քեզ է : Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արձարծել

զնորհան Աստուծոյ որ են ի քեզ ի 7 ձեռնադրութենէ իմմէ : Զի ոչ ետ մեզ Աստուած հոգի վհատութեան , այլ զօրութեան եւ սիրոյ եւ զգաստութեան : 8 Մի՛ այտուհետեւ ամօթ համարիցիս զվկայութիւն Տեառն մերոյ , եւ մի՛ զիս զկապեալ նորա . այլ կցորդ լեր չարչարանաց աւետարանին ըստ զօրութեանն Աստուծոյ . Որ փրկեացն զմեզ եւ կոչեաց ի կոչումն սուրբ , ոչ ըստ զործոց մերոց , այլ ըստ իւրում յատաջաղրութեանն եւ շնորհաց , որ տուաւ մեզ ի Բրիստոս Յիսուս յատաջ քան զժամանակսն յաւիտեանից :

10 ԳԿ. Բայց յայտնեցաւ այժմիկ յերևել Փրկչին մերոյ Յիսուսի Բրիստոսի . որ խափանեաց զմահ եւ լուսաւոր արար զկեանս եւ զանեղծութիւն ի ձեռն

1 Ո՛ւստ , յԱստուած կենդանի

2 Ի Յաննիս գ-յ-տէ
3 Ո՛ւստ , զկենացն յաւիտեանականաց
4 Յաննիս , ի պղծոց բանից սնտեաց (Բ Տիմ. Բ. 46) եւ հակառակութեանց մոլարանուն գիտութեան
5 Ո՛ւստ յաւիտեան , Ամէն :

11 աւետարանին . Որոյ եղայ ես քարոզ
 եւ առաքեալ եւ վարդապետ հեթանոս-
 12 սաց : Վասն որոյ եւ զայս չարչարանս
 կրեմ , այլ ոչինչ ամօթ համարիմ ,
 քանզի զիտեմ յո հաւատացեալն եմ ,
 եւ հաստատեալ եմ թէ կարող է զա-
 13 ւանդն իմ պահել յօրն յայն : Ունիցիս
 օրինակ ողջմտութեան բանիցն զորս
 յինէն լուար , հաւատովք եւ սիրով
 14 որ ի Քրիստոս Յիսուս : Զբարւոք
 աւանդն պահեսցիր ի ձեռն Հոգւոյն
 Սրբոյ ի մեզ բնակելոյ :
 15 Զայս զիտասցիր զի մեկնեցան ի
 մէնջ ամենեքին որ էին յԱսիա , որոց
 սակի են Փիգեղոս եւ Հերմոգենէս :
 16 Տացէ Աստուած ողորմութիւն տանն
 Ունիսիրոայ , զի բաղում անդամ հան-
 զոյց զիս , եւ զկապանս իմ ոչ ամօթ
 17 համարեցաւ . Այլ իբրեւ եկն ի Հռովմ ,
 սնդագոյնս խնդրեաց զիս եւ եզիտ .
 18 (Տացէ նմա Տէր ողորմութիւն գտանել
 ի Տեառնէ յաւուրն յայնմիկ .) եւ որ-
 չափ ինչ միանգամ յեփեսոս սպաս կա-
 լաւ ՚ի ննձ զայն գու ինքնին քաջ զիտես :

ԳԼ Բ

1 Այլ գու , որգեակ իմ , զօրացիր չնոր-
 2 հօքն որ ի Քրիստոս Յիսուս : Եւ զոր
 լուար յինէն բաղում վկայիւք զայն
 աւանդեացես հաւատարիմ մարդոց ,
 որք բաւական իցեն եւ զայլս ուսու-
 ցանել :
 3 ԳԶ . Վշտակից լնր իբրեւ զբարւոք
 4 զինուոր Քրիստոսի Յիսուսի : Ոչ ոք
 զինուորեալ աստէն ընդ կեանս աշ-
 խարհիս պատազի , եթէ զօրավարին
 5 հաճոյ լինիցի : Եւ եթէ մարտիկ ոք
 իցէ , ոչ պսակի , եթէ ոչ ըստ օրինին
 6 մարտիցէ : Եւ հոգապօրծին աշխատելոյ
 7 պարտ է նախ ի սրտոյն վայելել : Իմա՛
 զինչ ստեամ . տացէ քեզ Տէր իմաս-
 8 տութիւն յամենայն . Յիւշա զՔրիս-
 տոս Յիսուս յարուցեալ ի մեռելոց , ի
 զաւակէ Դաւթի , ըստ աւետարանիս
 9 իմում . Յորում չարչարիմ կապանօք
 չափ իբրեւ զչարագործ , այլ բանն Աս-
 10 տուծոյ ոչ եթէ կապեալ իցէ : Վասն
 այնորիկ ամենայնի համբերեմ վասն
 ընտրելոցն , զի եւ նոքա փրկութեանն

հասանիցեն որ ի Քրիստոս Յիսուս
 11 երկնաւոր փառօքն հանդերձ : Հաւա-
 տարիմ է բանս . զի եթէ ընդ նմա մե-
 12 ոսք , ընդ նմին եւ կեցցուք . Եթէ
 համբերեմք , ընդ նմին եւ թաղաւո-
 13 րեսցուք . եւ եթէ ուրանամք , եւ նա
 ուրանայ զմեզ . Եւ եթէ չհաւատամք ,
 նա հաւատարիմ մնայ , ուրանալ զանձն
 իւր ոչ կարէ :
 14 ԿԻՐ . Զայս յուշ արասցիր՝ վկայու-
 թիւն եղեալ առաջի Ստտուծոյ , մի՛
 բանակո՛ւ լինել յոչինչ այէտս ի կոր-
 15 ծանուէն լսողաց : Փութասցիր զանձն
 քո ընտիր կացուցանել առաջի Աս-
 տուծոյ , մշակ առանց ամօթոյ , ուղիղ
 համառօտել զբանն ճշմարտութեան :
 16 Այլ ի պղծոց եւ ի սնտոի խօսից մեր-
 ժեացիր , զի առաւել յառաջ զայցեն
 17 յամբարշտութիւնս . Եւ բանք նոցա
 իբրեւ զքաղցիկ ճարակ գտանեն . ու-
 րոց սակի են Հիմենոս եւ Փիգետոս .
 18 Որք վրիպեցան ի ճշմարտութենէ , եւ
 ասենեթէ Յարութիւն մեռելոց արգէն
 իսկ եղեալ է , եւ կործանեն զհաւատս
 19 ումանց : Այլ հաստատուն հիմն Աս-
 տուծոյ կայ եւ ունի զկնիքս զայս , թէ
 Ծանեաւ Տէր զայնոսիկ որ իւրն են .
 եւ՝ Ի բաց լիցի յանիրաւութենէ ամե-
 նայն որ անուանէ զանուն Տեառն :
 20 Այլ ի տան մեծի ոչ միայն են անօթք
 ոսկեղէնք եւ արծաթեղէնք , այլ եւ
 վայտեղէնք եւ խեցեղէնք . են որ ի
 պատուի են եւ են որ յանարգութեան
 21 եթէ ոք սրբեցէ զանձն իւր յայնպիս-
 եաց անտի , եզիցի անօթ պատուական՝
 սրբեալ եւ պիտանի Տեառն Վերում՝
 յամենայն գործս բարութեան պատ-
 22 րաստեալ : Այլ յերիտասարդական ցան-
 կութեանց փախիր , եւ երթ զհետ ար-
 զարութեան , զհաւատոց , զսիրոց ,
 զխաղաղութեան , զսրբութեան , ընդ
 այնոսիկ որ կարգան զանուն Տեառն
 23 սուրբ սրտից : Այլ ի յիմար եւ յան-
 խրատ խնդրոց հրաժարեա , զիտասցիր
 24 թէ անտի ծնանին կոիւք . Բաց ծա-
 ոայի Տեառն ոչ է պարտ կոուել , այլ
 հեղ լինել առ ամենեսեան , ուսուցիչ ,
 25 անտխակալ . Հանդարտութեամբ խրա-
 տել զհակառակողան , թերեւս տացէ

2 Յոյն , յաւիտենական
 3 Ուրեք , Տեառն
 4 Ի Յունի պատուի

նոցա Աստուած ապաշխարութիւնն ի
26 գիտութիւնն ճշմարտութեան . եւ սթա-
փեացին յորդայթից Մատանայի՝ որ-
սացեալք ի նմանէ ի նորա կաման :

ԳԼ. Գ

1 ԿԻՐ. Չայս գիտաստիք եթէ յաւուրս
յետինս եկեացեն ժամանակը չարք .
2 Ձի եզրիցին մարդիկ անձնասէրք , ար-
ծաթասէրք , հպարտք , ամբարտաւանք ,
հայհոյիչք , անհաւանք ծնողաց , ան-
3 չնորհք , անսուրբք , Աննուէրք , ան-
ղութք , բանասարկութք , անժոյժք , վէսք ,
4 անբարեւէրք , Մատնիչք , յանդողունք ,
ամբարհաւածք , ցանկասէրք մանա-
5 ւանդ քան աստուածասէրք . Որ ունի-
ցին զկերպարանս աստուածպաշտու-
թեան , եւ ի գորութիւնէ անտի նորա
ուրացեալ իցեն . եւ խորշուժիր ի նո-
6 ղանէ : Քանզի ի նոցանէ են որ մտա-
նեն տանէ ի տուն , եւ գերեն զկանայս
չեղձակուտեալս մեղօք՝ վարեալս ի
7 պէսպէս ցանկութիւնս , Որ յամենայն
ժամ ուսանին , եւ երբեք ի գիտու-
թիւնն ճշմարտութեան ոչ հասանեն :
8 Այլ որպէս Յանէսն եւ Յամբէս հա-
կառակ կացին Մովսիսի , նոյնպէս եւ
սոքա նակառակ կան ճշմարտութեանն .
մարդք սուրկանեալք մտօք՝ անպի-
9 տանք ի հաւատս : Այլ ոչ երբեք զայ-
ցեն յառաջ ի լաւ անդր . քանզի ան-
մտութիւնն սոցա յայտնի լիցի ամենե-
ցուն , որպէս եւ նոցայն իսկ եղեւ :
10 Այլ զու զհետ եկիր վարդապետութեան
իմոյ , առաջնորդութեան , յօժարու-
թեան , հաւատոց , երկայնմտութեան ,
11 սիրոյ , համբերութեան , Հալածանաց ,
չարջարանաց , որպիսիք եղեն ինձ յԱն-
տրոք եւ յԿոնստնուս եւ ի Լիւստրոս ,
որպիսի՝ հալածանաց համբերի , եւ յա-
12 մենայնէ փրկեաց զիս Տէր : Եւ ամե-
նեքին որ կամիցին աստուածպաշտու-
թեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս՝ ի
13 հալածանս կացցեն : Այլ մարդք չարք
եւ կախարդք յառաջ եկեացեն ի չար
անդր . մոլորեալք եւ մոլորեցուցա-
14 նիցեն : Այլ զու հաստատուն կաց յոր
ուսարդ եւ հաւատարիմ եղեր , գիտես
15 ուստի ուսար . Ձի ի մանկութենէ
զգիրս սուրբս գիտես , որ կարող են
իմաստուն առնել զքեզ ի փրկութիւնն

ի ձեռն հաւատոցն որ ի Քրիստոս Յիսուս :

16 ՔՇ. Ամենայն Գիրք աստուածա-
չունչք եւ օգտակարք ի վարդապետու-
թիւնն են եւ ի յանդիմանութիւնն եւ
յուզղութիւնն եւ ի խրատս արդարու-
17 թեան . Ձի կատարեալ իցէ մարդն Աս-
տուծոյ յամենայն գործս բարութեան
հաստատեալ :

ԳԼ. Գ

1 Չայս վկայութիւնն զնեմ առաջի Աս-
տուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի , որ
դատելոց է զկենդանիս եւ զմեռեալս
ի յայտնութեան իւրում եւ յարքու-
2 թեան . ¹Եւ զու՝ քարոզեալ զբանն ,
հաս ի վերայ ժամու եւ տարաժամու ,
յանդիմանեա , սաստեա , մխիթարեա
ամենայն երկայնմտութեամբ եւ վար-
3 դապետութեամբ : Քանզի եկեացէ ժա-
մանակ զի ողջմտութեան վարդապե-
տութեանն ոչ անսայցեն , այլ ըստ
իւրաքանչիւր ցանկութեանց կուտես-
ցեն իւրեանց վարդապետս , ըստ մար-
4 մաջելոյ լսելեաց իւրեանց . Եւ ի ճըշ-
մարտութենէ անտի զարձուցանիցեն
զսելիս , եւ յառասպելս կործանեցին .
5 Այլ զու զուարթ կաց յամենայնի ,
ճգնեաց , զգործս աւետարանչի գոր-
ծեա , զպաշտօնն քո կատարեալ կալ :
6 Ձի ես այսուհետեւ նուիրեալ եմ , եւ
ժամանակ զարձի իմոյ հասեալ կայ :
7 Չբարեոք պատերազմ պատերազմեցայ ,
զրնթացսն կատարեցի , զհաւատսն պա-
8 հեցի : Այսուհետեւ կայ մնայ ինձ ար-
դարութեան պատկն , զոր հատուցէ
ինձ Տէր յաւուր յայնմիկ արդարն Դա-
տաւոր , ոչ միայն ինձ , այլ եւ ամե-
նեցուն որ սիրեցին զյայտնութիւնն
նորա :


9 ՁՇ. Փութաստիք զալ առ իս վաղվա-
դակի . զի Դեմաս եթող զիս եւ սիր-
եաց զայխարհ , եւ զնաց ի Թեսաղո-
10 նիկէ . Կրեսկէս՝ ²ի Գալիլեա , Տիտոս՝
ի Դադմատիա . Ղուկաս միայն է ընդ
11 իս : ՉՄարկոս առեալ ընդ քեզ ածի-
ցես , զի է ինձ պիտանի ի սպասա-
12 ւորութիւնն : ՉՏիւքիկոս առաքեցի

¹ի Գալիլեա պատկ
²ի Գալիլեա , Բաղսսի՝ ի Գաղատիա , Բաղսսի
ի Գաղատիա

13 յեփեսոս, Չփիլոնն ¹Թողի ի Տրովադա առ Կարպոսի, յորժամ գայցես, բեր-
 14 ջիր, եւ զգիրսն, մանաւանդ զմատ-
 15 ինանս: ²Աղեքսանդրոս բազում չար-
 16 չարանս եցոյց ինձ. հատուցէ նմա
 17 Տէր ըստ գործս նորա, Յորմէ եւ
 18 դու անձնապահ լինիջիր, զի շատ
 19 հակառակ եկաց բանից մերոց: Յա-
 20 ռաջնում ատենին ոչ ոք ինձ ի թի-
 21 կունս եկաց, այլ ամենեքին թողին
 22 զիս. մի՛ համարեսցի նոցա այն: Այլ
 Տէր օգնեաց ինձ, եւ զօրացոյց զիս,
 զի ինեւ քարոզութիւնն հաստատեա-
 ցի, եւ լուիցեն ամենայն հեթանոսք.
 եւ ապրեցայ ես ի բերանոյ առիւծունս
 Քրկեսցէ զիս Տէր յամենայն գործոց
 չարաց, եւ զերծուցէ զիս յարքայու-


թիւն իւր որ յերկինս է, որում փառք
 յաւիտեանս յաւիտենից, Ամէն:
 19 Ողջոյն տալիր Պրիսկեայ եւ Ակիւ-
 20 ղեայ եւ Ռնեսիփորայ տանն: Երաս-
 21 տոս մնաց ի Կարնիթոս. զՏրովիմոս
 22 թողի ի Մեկիտոս հիւանդագին, Փու-
 թասլիր յառաջ քան զձմեռն գալ,
 Ողջոյն տան քեզ Երուղոս եւ Պուզէս
 եւ Ղինոս եւ Կղաւդիա եւ եղբարք
 22 ամենեքեան: Տէր Յիսուս Բրիստոս
 ընդ ողբոյդ քում: Շնորհք ընդ քեզ ³

Առ Տիմոթէոս երկրորդ Լուդի, որ էր
 Եփեսոսացոց եկեղեցոյն Եպիսկոպոս առաջն
 յեանաբրեււ, գրեցաւ է Հռովմէ, յորժամ
 երկրորդ անգամ էկաց յարեւել Պապոս առա-
 ջի Ներսէի կայսեր Հռովմայ:



ԱՌ ՏԻՏՈՍ

ԹՈՒՂԹ



ԳՂՈՒԽ Ա

1 ԿԻՐ. ՊԱԻՂՈՍ, ծառայ Աստուծոյ եւ
 առաքեալ Յիսուսի Բրիստոսի, ըստ
 հաւատոց ընտրելոցն Աստուծոյ, եւ
 ի գիտութիւն ճշմարտութեան որ ընդ
 2 աստուածապաշտութեանն է, Յուսով
 կենացն յաւիտենից, զոր խոստացաւ
 3 անսուսն Աստուած յառաջ քան զժա-
 4 մանակս յաւիտենից, Բայց յայանեաց
 իւրովք ժամանակօք զբանն իւր քա-
 5 րոզութեամբ, որոյ եղէ ես հաւատա-
 6 րիմ ըստ հրամանի Փրկչին մերոյ Աս-
 7 տուծոյ, Տիտոսի սրբւոյ սիրելւոյ ըստ
 հասարակաց հաւատոց, շնորհք եւ
 խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ եւ
 8 Գի Բրիստոսէ Յիսուսէ՝ Փրկչէ մերմէ:

5 Վասն այնորիկ իսկ թողի զքեզ ի
 Կրեատէ, զի որ ինչ միանգամ պակաս
 իցէ՝ ուղղեացես, եւ կացուցես ըստ
 6 քեզ պատուիրելի. Եթէ ոք անարատ
 իցէ, միոյ կնոջ այր, որդեակս ունիցի
 հաւատացեալս, եւ ոչ յամբաստանու-
 7 թիւն անատակութեան կամ անհաս-
 8 ղանդս: Չի սլարտ է եպիսկոպոսին
 անարատ լինել, որպէս եւ Աստուծոյ
 սնտեսի. մի՛ յանդուզն, մի՛ բարկա-
 9 ցող, մի՛ թշնամանող, մի՛ հարկանող,
 10 մի՛ ղօշաքաղ, Այլ հիւրասէր, բարե-
 11 սէր, ցած, արդար, սուրբ, ժուժկալ,
 12 վերակացու լինել հաւատարիմ բանին
 վարդապետութեան, զի կարող իցէ
 եւ միսիթարել ողջմտութեամբ վար-
 13 ղապետութեանն, եւ զհակառակորդն
 14 կշտամբել: Գանդի բազումք են ան-
 հաղանդք, զրախօսք եւ մտախաբք,
 մանաւանդ որ ի թրփատութեանէ անտի-

¹Յուդ, զօր թողի
²Յուդ, Աղեքսանդրոս դարբին
³Ողև, յաւիտենի, Ամէն:
⁴Ողև, ի Տեառնէ Յիսուսէ Բրիստոսէ

11 են . Ջորս պարտ է ըմբերանել սրք զամենայն տունս կործանեն , եւ ուսուցանեն զոր չէ արժան , վասն զօշաքազութեան :

12 ԴՇ . Ասաց ոմն ի նոցանէ , իւրեանց իսկ մարդարէ , կրետացիք հանապազատուաք , չարածճիք , դատարկա-

13 պորտք : Եւ ստոյգ է վկայութիւնս այս . վասն որոյ կշտամբեացես զնոսս խստագոյնս , զի առողջասցին ի հա-

14 ւասս . Եւ մի՛ հայեցին ի Հրէական առասպելս , եւ ի պատուէրս մարդկան զառածեղոյն ի ճշմարտութենէ :

15 Ամենայն ինչ սուրբ է սրբոց , բայց պղծոցն եւ անհաւատից ոչինչ է սուրբ , այլ պղծեալ են միտք եւ խորհուրդք :

16 Նոցա : Խոստանան զիտել զԱստուած , եւ զործովք իւրեանց ուրանան . պիղծք եւ անհաւանք եւ յամենայն գործս բարեաց անպիտանք :

ԳԼ . Բ

1 Այլ զու խօսեաց որ ինչ վայելէ ող-

2 ջամիտ վարդապետութեանդ . Ծերոց զգաստս լինել , պարկեշտս , ցածունս , ողջամիտս ի հաւատս , ի սէր , ի համբերութեան , ՚ի ժուժկալութեան :

3 Պատուանց նոյնպէս ի զդաստութեան , ի սուրբ վայելչութեան , մի՛ բանտարկուս , մի՛ զինեմոյս , այլ բարեխրատս .

4 Ձի զգաստացուցեն զմանկամարդան

5 այրասէրս լինել , որդեսէրս , Յաճունս , սուրբս , տնարարս , բարեգործս , հնազանդս իւրեանց արանց . զի մի՛ բանն Աստուծոյ ²եւ վարդապետութիւնն՝

6 հայոցեացի : Ձերիտասարգս նոյնպէս

7 ազաչեսլիր ցածունս լինել . ³Ամենեցուն զանձն՝՝ օրինակ կացուցանել գործոց բարութեան , վարդապետութեամբ զանեղծութիւն ունել , ²զսրբութիւն ,

8 զպարկեշտութիւն , Ձբանն ողջմտութեան , անպարսաւ լինել , զի որ հակառակորդն իցէ՝ յամօթ լիցի , եւ մի՛ ինչ ունիցի սակ զմէնջ չարութիւն : Ծառայից՝ իւրեանց սերանց հնազանդ լինել եւ հաճոյս յամենայնի :

10 մի՛ հակառակորդս , Մի՛ հատուս , այլ զամենայն հաւատս ցուցանել բարու-

¹ի Յանն պատե
²ի բարեմ պատե
³Յանն , Յամենայն զանձն քո

թեամբ . զի զվարդապետութիւն Փրկչին մերոյ Աստուծոյ զարդարեացեն յամենայնի :

11 Քանզի երեւեցաւ Հնորն Աստուծոյ

12 փրկիչ ամենայն մարդկան . Որ խրատէն զմեզ զի ուրասցուք զամբարըշտութիւն եւ զաշխարհական ցանկութիւնս , զգաստութեամբ եւ արդարութեամբ եւ աստուածպաշտութեամբ :

13 Կեցցուք յաշխարհիս , Եւ ակնկալցուք երանելի յուսոյն , եւ յայսնութեան փառաց մեծին Աստուծոյ եւ Փրկչին

14 մերոյ Յիսուսի Քրիստոսի . Որ եւ զանձն վասն մեր , զի փրկեաց զմեզ յամենայն անօրէնութենէ , եւ սրբեացէ իւր ժողովուրդ սեպհական , նա-

15 խանձաւոր գործոց բարութեան : Ձայգ խօսեաց եւ միտխարս եւ յանպիտանեա ամենայն սասաիւք , զի մի՛ ոք իցէ որ զքեզ արհամարհիցէ :

ԳԼ . Գ

1 ԶԵ . Եւ յուչ արասլիր նոցա , իշխանութեանց եւ պետութեանց հնազանդ լինել եւ հպատակ կալ , եւ ամենայն գործոց բարութեան պատրաստ դատանել . Մի՛ զոք հայոցել , անկուրս լինել , հեզս , զամենայն ցածութիւնս առ

3 ամենայն մարդիկ ցուցանել : Ձի էաք երբեմն եւ մեք անմտք , անհաւանք , մոլորեալք , ծառայէաք ցանկութեանց եւ պէսպէս անատակութեանց . չարութեամբ եւ նախանձու շրջէաք , ա-

4 տեցեալք՝ եւ զմիմեանս ատէաք : Իսկ յորժամ քաղցրութիւն եւ մարգարութիւն Փրկչին մերոյ Աստուծոյ

5 յայսնեցաւ , Ոչ ի գործոց արդարութեան զոր արարաք մեք , այլ ըստ իւրում ողորմութեան ասրեցոյց զմեզ ի ձեռն աւազանին միւսանդամ ծնունդեանն , եւ նորոգութեամբ Հսկւոյն

6 Սրբոյ , Ձոր եհեզ ի մեզ առատութեամբ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Փրկչին

7 մերոյ , Ձի արդարեացեալք չնորճքն՝ եղիցուք ժառանգաւորք յուսով կե-

8 նացն յաւիտենականաց : Հաւատարիմ է բանս . եւ ի սոյն կամիմ զքեզ հաստատուն լինել , զի փոյթ արասցեն զործոց բարեաց վերակացու լինել հաւատացեալքն յԱստուած , զի այն է

9 բարի եւ օգտակար մարդկան : Այլ

զյնմարութեան խնդիրս եւ զտոհմա-
 թիւս եւ գհնո եւ զօրինական կոխան
 ի բայ մերժեսջիր . զի անօգուտք են
 10 եւ սնտալք : Յասնէ հերձուածողէ ,
 յետ մի անգամ եւ երկիցս խրատերոյ ,
 11 հրաժարեսջիր . Գրասսջիր զի թիւր-
 եալ է այնպիսին , եւ մեղանչէ՝ ան-
 ձամբ դանձն դատապարտեալ :
 12 Այլ յորժամ յղեցից առ քեզ զԱրտե-
 մա կամ զՏիւքիկոս , փութասսջիր զալ
 առ իս ի նիկոպոլիս , զի անդ եղի ի
 13 մահ ձմերիւ : Եւ զՋենոն զօրինական
 զպիր եւ զԱպողոս փութով արձակես-

ջիր , զի մի՛ ինչ պակասիցէ նոցա :
 14 Ուսցին եւ մերքն եւս բարեաց գոր-
 ծոց վերակացու լինել ի պէսս կարե-
 15ւորս, զի մի՛ անպտուղք լինիցին : Ող-
 ջոյն տան քեզ որ ընդ իս են ամենե-
 քին . ողջոյն տուր սիրելեաց մերոց
 հաւատովք . շնորհք ընդ ձեզ ամենե-
 սին :¹

Առ Տիրոս, Կրեոսոցոց Էկեղէցոցոյն առա-
 ջին յեւանաբերէալ Էպիսկոպոս, Գրեցաւ է նէ-
 կոպուէ Մակեդոնացոց :

Ձ ԱՌ ՓԻԼԻՄՈՎՆ

ԵՒ ԱՌ ԱՐԳԻՊՊՈՍ ՍԱՐԿԱՒԱԳ ԵՒ ԱՌ ԱՊՓԻՍ

ԹՈՒՂԹ՝

1 ՊԱՒՂԱՍ , կապեալ Յիսուսի Բրիս-
 տոսի , եւ Տիմոթէոս եղբայր , Փիլի-
 մոնի Սիրելւոց եւ զործակցի մերոյ ,
 2 եւ Ապրիկոյ ³ քու , եւ Արքիպպեայ
 զինուորակցի մերոյ , եւ առանին եւ
 3 կեղեցւոյդ . Շնորհք ընդ ձեզ եւ իս-
 զազութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ
 եւ ի Տեաննէ Յիսուսէ Բրիստոսէ :
 4 Գոհանամ զԱստուծոյ խոյ յամե-
 նայն ժամ յիշատակեալ յաղօթս իմ
 5 վասն քո , իբրեւ լսեմ զքո հաւատոն
 եւ զսէր զոր ունիս առ Տէր Յիսուս
 6 եւ առ ամենայն սուրբս , Ջի հազոր-
 զութիւն հաւատոցն քոց արդոյ լինի-
 ցի զիստութեամբ ամենայն բարու-
 թեան որ ի ձեզ է ի Բրիստոս Յիսուս :
 7 Խնդութիւն յոյժ ընկալայ եւ մխիթա-
 ղութիւն ի վերայ սիրոյն քո , զի
 գութք սրբոց քեւ հանդուցեալ են ,
 եղբայր :

8 վասն որոյ բազում համարձակու-
 թիւն ունիմ ի Բրիստոս՝ հրաման տալ
 9 քեզ զարժանն , վասն սիրոյ մանա-
 ւանդ թէ աղաչեմ իսկ , այնպիսի լի-
 նել որպէս ես Պաւղոս ձերացեալ , արգ
 եւ կապեալ եւս Յիսուսի Բրիստոսի :
 10 Աղաչեմ քեզ վասն սրգւոյ իմոյ զոր
 11 ծնայ ի կապանս իմ , զՈնեսիմոս . Որ
 երբեմն անպիտան էր քեզ , բայց արգ
 12 քեզ եւ ինձ պիտանի . Չոր յղեցի առ
 քեզ . եւ դու զգա ընկալջիր , այսինքն
 13 է զիմ աղիւս . Չոր կամէի առ իս ար-
 դելուլ , զի ընդ քո սննիցի ինձ ոպաս
 14 ի կապանս աւետարանին , Բայց ա-
 ռանց քո կամաց ոչինչ կամեցայ առ-
 նել , զի մի՛ բարիքդ քո ի հարկէ լի-
 15նիցին , այլ կամաւ : Եւ թերեւս վասն
 այնորիկ մեկնեցաւ առ ժամանակ մի ,
 16 զի յաւիտեան ունիցիս զգա , Մի՛ եւս
 իբրեւ զժառոյ , այլ ի վեր քան զժա-
 ռոյ , իբրեւ զեղբայր սիրելի . եթէ ինձ
 պապէս , ո՞րչափ եւս առաւել քեզ
 17 մարմնով եւ Տերամբ : Եթէ զիս քեզ
 հազորդ համարիցիս , ընկալ զգա իր-
 18 րեւ զիս : Եւ եթէ յանցուցեալ ինչ իցէ

¹ Ունիւս , յաւելուս , Ամեն :
² Ունիւս , Էփ , Աւ Փիլիմոնիս , այլ՝ թուղթ Պաւ-
 զոսի առաքելոյ առ Փիլիմոնիս
³ Ունիւս , սիրելւոյ

կամ պարտիցի, զայն ինձ համարեաց :
 19 Ես Պաւլոս գրեցի իմով ձեռամբ, ես
 հատուցից զի մի՛ ասիցեմ քեզ թէ եւ
 20 դու զանձն քո ինձ պարտիս : Այո,
 եղբայր, ¹եւ քո փոխանակ եղէց՝ ի
 Տէր. հանգո զաղիսդ իմ ի Քրիստոս :
 21 Յուսացեալ ի հնազանդութիւնդ քո
 զրեցի առ քեզ, քանզի զիտեմ թէ ա-
 սուել եւս քան զոր ասեմդ՝ տանիցես :
 22 Միանպամայն եւ պատրաստեալիք
 ինձ վանս, քանզի յուսամ եթէ ազօ-
 23 թիւք ձերովք շնորհեցայց ձեզ : Ողջոյն

տայ ձեզ Եպափրաս դերեկից իմ ի
 24 Քրիստոս Յիսուս, Եւ Մարկոս եւ Ա-
 ըրիստարքոս եւ Դեմաս եւ Դուկաս՝
 25 զործակիցք իմ : Ծնորդք Տեառն մերոյ
 Յիսուսի Քրիստոսի ընդ սպւոյզ ձե-
 րում :²

Աս Փիլիմոն եւ Ապֆիա, որեսք Ուեւիմայ,
 և առ Արտիպպոս, սարկասաք Կոլոսացոց
 էկեղէցայն, քրէցաւ է Հրոմէի է յեռն Ո-
 նեւիմայ Զառայի :

ԱՌ ԵՐՐԱՅԵՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳՂՈՒԻՍ Ա

1 ԵՎ. ԲԱԶՈՒՄ մասամբք եւ բազում
 օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած
 2 ընդ հարսն ³մեր մարդարէիւք. ի վախ-
 ձան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ
 մեզ Որդւո՞վք զոր եզ ժառանգ ամե-
 նայն, որով եւս զյաւիտեանն արար :
 3 Որ է յոյս փառաց եւ նկարագիր էու-
 թեան նորա, որ կրէ զամենայն բա-
 նիւ զօրութեան իւրոյ, ⁴սրբութիւն
 մեղաց մերոց արարեալ՝ նստաւ ընդ
 4 աջմէ՛ Մեծութեանն ի բարձունս : Այն-
 ճափ առաւել եղեալ քան զհրեշտակս,
 որչափ լու եւս քան զնոսս սնուն
 5 ժառանգեաց : Քանզի զո՞ երբեք սասց
 ի հրեշտակաց, Որդի իմ ես զու, ես
 այսօր ծնայ զքեզ. եւ գարձեալ թէ
 Ես եղէց նմա ի Հայր, եւ նա եղիցի
 6 ինձ յՈրդի : Այլ յարժամ միւսօրն զամ
 մուծցէ զանդրանիկն յաշխարհ, ասէ,
 Երկիր սրպոցին նմա ամենայն հրեշ-

7 տակք Աստուծոյ : Այլ ⁵առ հրեշտակն՝
 ասէ, Ո արար զհրեշտակս իւր հոգիս,
 8 եւ զպաշտօնեայս իւր՝ բոց հրոյ : Իսկ
 զՈրդին ⁶ասէ, Աթոս քո, Աստուած,
 յաւիտեանս յաւիտենից. զաւազան
 ուղղութեան՝ զաւազան արքայու-
 9 թեան քո : Սիրեցեր զարգարութիւն եւ
 ատեցեր զանօրէնութիւն. վասն այսօ-
 րիկ օծ զքեզ, Աստուած, Աստուած քո
 իւզով ուրախութեան առաւել քան
 10 զընկերս քո : Եւ, Դու, Տէր, ի սկզբա-
 նէ զերկիր հաստաակեցեր, եւ գործք
 11 ձեռաց քոց երկինք մաս. նոքա կորնչին,
 եւ գու կար ինաս. ամենեքեան
 12 իրբեւ զձորձս մաշեցին, Եւ իրբեւ
 զվերարկու ⁷զալարեացես զնոսս՝ ⁸Իր-
 բեւ զճանդերձ, եւ ⁹զալարեացին. բայց
 դու նոյն իսկ ես, եւ ամբ քս ոչ պա-
 13 կասեցին : Յո՞ երբեք սասց ի հրեշ-
 տակաց, Նիստ ընդ աջմէ իմմէ, մին-
 ճեւ եղից զվշնամիս քս սպասուանդան
 14 ոտից քոց : Ո՞չ ապաքէն ամենեքեան

¹Յայն, օգտեցայց, իմ, ուրախ եղէց քեւ
²Ո՞րնս՝ յաւելան, Ամէն :
³Ի բազմաւ պատե
⁴Ո՞րնս, անձամբ սրբութիւն

⁵Կամ, զհրեշտակաց
⁶Ի Յաննի պատե
⁷Յայն, փոխեցին
⁸Ո՞րնս, փոխեցես

հողիք են հարկաւորք որ առաքին ի սպասաւորութիւն վասն այնոցիկ որ ժառանգելոցն են զվրկութիւն :

ԳԼ Բ

1 ԵՂ. Վասն այնորիկ պարս է մեզ առաւել եւս ունկնդիր լինել բանիցն ասացելոց, զի մի՛ երբեք նուազես : 2 Եւս. Զի եթէ որ ի ձեռն հրեշտակաց յօսեցաւ բանն՝ հաստատուն եղեւ, եւ ամենայն յանցաւորութիւն եւ անհնազանդութիւն ընկալաւ զպատիժ : 3 պատուհասի, Մեք զիա՛րդ ասրեսցուք հեղձացեալք յայնպիսի փրկութենէ, որ սկիզբն ա՛ռ խօսելոյ ի Տեառնէ, եւ ի ձեռն այնոցիկ որ լուսնն՝ ի մեզ հաս :

4 Կառեցաւ. Վկայեալ յԱստուծոյ նշանօք եւ արուեստիւք եւ սխալէս զօրութեամբք եւ մասամբք Հոգւոյն Սրբոյ բսա իւրոց կամաց : 5 Զի ոչ եթէ հրեշտակաց հնազանդեցայց զհանդերձեալ աշխարհն, վասն 6 որոյ մեքս խօսիմք : Վկայեաց ոք ուրեք եւ ասէ, Զինչ է մարդ եթէ յիշեացես զնա, կամ որդի մարդոյ թէ չայց արասցես նմա : Փոքր մի խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս. փառօք եւ պատուով պսակեցեր զնա, եւ կացուցեր զնա ի վերայ ձեռակերտաց 8 քոց. Զամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ սոխց նորա. արդ ի հնազանդեցուցանենք զամենայն՝ ոչինչ եթող անհնազանդ ի նմանէ. բայց այժմ ոչ եւս տեսանեմք հնազանդեալ նմա :

9 զամենայն : Այլ զփոքր մի խոնարհեալ քան զհրեշտակս տեսանեմք զՅիսուս վասն չարչարանաց մահուն, փառօք եւ պատուով պսակեալ, զի չնորհօքն Աստուծոյ վասն ամենեցուն զմահ ճա : 10 չակեսցէ : Զի վայել էր իսկ նմա (վասն որոյ ամենայն եւ որով ամենայն) բաղում որդիս ի փոսս ածէլ՝ զառաջնորդ փրկութեան նոցա չարչարանօք կատարել :

ՎԶ

11 Զի որ սրբէն եւ որ սրբին՝ ի միտջէ չէին ամենեքեան, վասն որոյ ոչ ամօթ համարի եղբարս անուանել զնոսս եւ 12 ասել, Պատմեցից զանուն քո եղբարց իմոց, ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ :

13 Եւ զարձեալ թէ՛ Ես եղէց յուսացեալ ի նա. եւ զարձեալ՝ Ահաւասիկ ես եւ մանկունք ՚իմ, զոր ես ինձ Աստուած :

14 Արդ որովհետեւ մանկունք հազորդեցին արեան եւ մարմնոյ, եւ ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղեւ նոցունց, զի մահուն ՚իւրով խափանեսցէ զայն որ զիշխանութիւն մահուն :

15 ունէր, այսինքն է՝ զՍատանայ. Եւ ասրեսցուցէ զայնոսիկ որ մահուն երկրէիւ հանապաղ կէին վտարանդեալք :

16 ի ծառայութիւն : Քանզի ոչ երբեք զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ զզաւակէն Արքաճամու բուռն հարկանէ :

17 Ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանել, զի ողորմած լինիցի եւ հաւատարիմ քահանայապետ յաստուածակոյս կողմանէ անսի, առ :

18 ի բաւելոյ զմեզս ժողովրդեանն : Զի որով ինքն չարչարեցաւ զփորձ առեալ կարող է եւ փորձանաւորացն օգնական լինել :

ԳԼ Գ

1 Աւստի, եղբարք սուրբք, երկնաւոր կոչմանն բաժանորդք, նայեցարուք ընդ Առաքեալն եւ ընդ Քահանայապետ խոստովանութեան մերոյ ընդ Յիսուս :

2 Քրիստոս. Որ հաւատարիմ է արարչին իւրոյ, որպէս եւ Մովսէս յամենայն տան նորա :

3 Զի առաւել եւս փառաց քան զՄովսէս արժանի եղեւ, որչափ առաւել պատիւ ունիցի քան :

4 զտունն՝ տանն առնելի : Զի ամենայն տուն կազմի յումէ կազմի. իսկ որ :

5 զամենայնն արար՝ Աստուած է : Մովսէս հաւատարիմ է յամենայն տան նորա իրբեւ զժառայ առ ի վկայութե :

6 նէ բանից ասացելոց. Այլ Քրիստոս իբրեւ որդի ի վերայ տան իւրոյ. որոյ տունն մեք իսկ եմք, միայն թէ զհամարձակութիւն եւ զպարճանս յուսոյն մինչեւ ի վախճան հաստատուն ունիցիմք :

7 Վասն որոյ այսպէս ասէ Հոգին Սուրբ, Այսօր եթէ ձայնի նորա լուսնցէք, Մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր իբրեւ ի դառնութեանն՝ յաւուրն փորձութեան յանապատի, Ուր փորձեցին :

զիս հարքն ձեր, քննեցին զիս եւ տե-
 10 սին զգործս իմ զքառասուն ամ. վասն
 որոյ տաղտկացայ ազգաւն այնուիկ,
 եւ ասացի, Միշտ մորբերալ են սրտիւք,
 եւ նոքա ոչ ծանեան զճանապարհս
 11 իմ. Որպէս երգուայ ի բարկութեան
 իմում թէ Մտցեն ի հանդիստ իմ:
 12 ԵՁ. Տեսէք, եզրարք, գուցէ երբեք
 լինիցի յումեք ի ձէնջ սիրտ չար ան-
 հաւատութեան՝ ապտամբ լինել յԱս-
 13 տուծոյ կենդանուոյ: Այլ միխիթարեցէք
 զմիմեանս զօրհնապաղ՝ մինչդեռ՝ աշ-
 14 օրդ առաջի կայ՝ զի մի՛ ոք խտտացի
 ի ձէնջ խաբէութեամբ մեղաց: Քանզի
 բժէ զսկիզբն հաստատութեանն մինչեւ
 15 ի վախճան պինդ կայցուք. Յասեյն,
 Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք, մի՛
 խտտացուցանէք զսիրտս ձեր իբրեւ ի
 16 դառնութեանն: Քանզի 2 ոմանք լուան
 եւ գառնացուցին, այլ ոչ ամենքեան
 որ՝ ելեալ էին յԵզրիպտոսէ ի ձեռն
 17 Մովսիսի: Յու՛մէ՞ տաղտկացաւ զքա-
 ռասուն ամն. ո՞չ ապաքէն ի յանցու-
 18 ցելոցն, որոց ոսկերքն անկան յանա-
 19 պատի անդ: Ո՞ւմ երգուաւ չմտանել
 ի հանդիսան իւր, եթէ ոչ՝ անհաւա-
 19 տիցն: Եւ տեսանեմք զի ոչ կարացին
 մտանել վասն անհաւատութեանն:

ԳԼ. Գ

1 Երկիցուք այսուհետեւ, 3 զուցէ ի թո-
 ղուլ զաւետիսն՝ ի մտանելոյ՝ ի հան-
 զիստ նորա, գտանիցի ոք ի ձէնջ
 2 նուազեալ: Քանզի եմք աւետարան-
 եալք որպէս եւ նոքայն. այլ նոցա
 ոչինչ օգնեաց լուր բանին, 3 չամօքե-
 լոցն ի հնազանդութիւն հաւատոց՝:
 3 Այլ մեք մտանեմք ի հանդիսան որք
 հաւատացաքս. որպէս եւ ասացն թէ
 Որպէս երգուայ ի բարկութեան իմում,
 թէ Մտցեն ի հանդիստ իմ. թէպէտ
 եւ արդինքնն ի սկզբանէ աշխարհի
 4 լինեալ էին: Քանզի ասէ ուրեք վասն
 աւուրն եւ թներորդի այսպէս. Եւ

1 Յ-նն, այսօր կոչի
 2 Կ-ի, ո՞ք լուան եւ դառնացուցին. ո՞չ ամե-
 նքեան որ
 3 Յ-նն, գուցէ, մինչդեռ կան մնան աւետիքն
 մտանելոյ
 4 Կ-ի, զի ոչ ամօքեցաւ հաւատովք յոր լուանն

հանգեաւ Աստուած յաւուրն եւ թնե-
 5 րորդի յամենայն գործոց իւրոց: Եւ
 6 աստ դարձեալ ասէ թէ Մտցեն ի հան-
 զիստ իմ: Եւ արգ՝ 5 քանզի արդեւան
 ոմանք մտանել՝ ի նա, եւ որք յառա-
 ջագոյն աւետարանեալն էին՝ չմտին
 7 վասն անհաւատութեանն: Դարձեալ
 այլ օր սահմանէ, զԱյսօրն ի Դաւթի
 եւ ասէ յետ այնչափ ժամանակաց,
 որպէս յառաջագոյնն ասաց, Այսօր
 եթէ ձայնի նորա լուիցէք, մի՛ խտտա-
 8 ցուցանէք զսիրտս ձեր: Զի եթէ զնո-
 սա Յետուայ հանգուցեալ էր, ապա
 վասն այլոց աւուր ոչ խօսել յետ այ-
 9 նորիկ: Արգ ուրեմն 6 նուազեալ է՝
 չարաթումն ժողովրդեանն Աստուծոյ:
 10 Զի որ եմուտ ի հանգիստն նորա, եւ
 նա հանգեաւ յիւրոց գործոց անտի,
 որպէս եւ Աստուած յիւրայոցն: ՎՁ
 11 Փութագուք այսուհետեւ մտանել
 յայն հանդիստ, զի մի՛ ոք ընդ նովին
 օրինակաւ անհաւատութեանն անկա-
 12 նիցի: Զի կենդանի է բանն Աստուծոյ
 եւ ազդող եւ հատու քան զամենայն
 սուր երկսայրի, եւ անցանէ մինչեւ
 ցորոշումն շնչոյ եւ ողւոյ եւ յօղից
 եւ ուզող, եւ քննիչ է մտաց եւ խոր-
 13 հրգոց սրտից. Եւ չիք արարած անե-
 րեւոյթ յերեսաց նորա, այլ ամենայն
 ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց
 նորա՝ զորմէ մեր բանքս են:
 14 Ունիմք այսուհետեւ Քահանայապետ
 մեծ անցեալ ընդ երկինս, զՅիսուս
 զՈրդին Աստուծոյ, պինդ կայցուք
 15 զխոստովանութիւնն: Քանզի ոչ եթէ
 ունիմք քահանայապետ որ չիցէ կարող
 չարչարակից լինել տկարութեան մե-
 րոյ, այլ փորձ է ամենայնիւ ըստ
 նմանութեան, առանց մեղաց:
 16 ԶԿ. Մատիցուք այսուհետեւ համար-
 ձակութեամբ առաջի աթոռոյ շնոր-
 հացն նորա, զի ընկայցուք զողոր-
 մութիւն եւ գոցուք շնորհս ի դէպ
 ժամանակի օգնականութեան:

ԳԼ. Ե

1 Զի ամենայն քահանայապետ ի մարդ-
 կանէ առեալ վասն մարդկան կայ

5 Յ-նն, քանզի կայ մնայ ոմանց մտանել
 6 Յ-նն, կայ մնայ 7 ի Յ-նն պ-իս-ի

յաստուածակոյս կողմն անդր, զի մատուցէ պատարագս եւ զոնս վասն
 2 մեղաց . Չափով չարչարակից կարող է լինել տղիտաց եւ մորթելոց , քանզի եւ ինքն իսկ տկարութեամբ զգածեալ
 3 է . Վասն այնորիկ հարկ է որպէս վասն ժողովրդեանն , նոյնպէս եւ ընդ անձին մատուցանել պատարագս վասն
 4 մեղաց : Եւ ոչ եթէ անձամբ ոք առնու պատիւ , այլ կոչեցեալն յԱստուծոյ ,
 5 որպէս եւ Ահարոն : Նոյնպէս եւ Քրիստոս ոչ եթէ անձին ինչ չուք եղ լինել քահանայապետ , այլ որ խօսեցանս առ նա՝ թէ Որդի իմ ես դու , ես այս-
 6 օր ծնայ դքեղ . Որպէս եւ ի միւսուումս սսէ , Դու ես քահանայ յաւիտեան
 7 ըստ կարգին Մելքիսեղեկի : Որ յաւուրս մարմնոյ իւրոյ աղօթիս եւ պաղատանս առ այն որ կարողն էր ասլրեցուցանել դիւս ի մահուանէ՝ ուժղին զոչմամբ եւ արտասուօք մատուցանէր , եւ լսելի լինէր առ լաւութեանն :
 8 Թէպէտ եւ Որդի է , ուսաւ ի չարչարանաց անտի զհնչողութիւն . Եւ իբրեւ կատարեալ , եղեւ ամենայն հնազանդելոց իւրոց պատճառք փրկու-
 10 թեանն յաւիտենից . Եւ անուանեցաւ յԱստուծոյ քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեղեկի :
 11 ԶԻ . Վասն որոյ բազումք են մեղքանք , եւ զժուարպատում ի մեկնել , քանզի խօթամիտք եղերուք լսելուք .
 12 Փոխանակ զի պարտ էր ձեզ լինել վարդապետս վասն ժամանակին , դարձեալ պիտոյ է ձեզ ուսանել թէ զինչ են նշանակիրք սկզբան բանիցն Աստուծոյ . եւ եղերուք կարօտք կաթին ,
 13 եւ ոչ հաստատուն կերակրոյ : Զի ամենայն որ կաթնկեր է՝ տղէտ է բանին արդարութեան , քանզի տղայ է :
 14 Այլ կատարելոցն է հաստատուն կերակուր , որոյ Վասն ի չափսն հասանելոյ՝ ճաշակելիքն կիրթ են ընտրութեան բարւոյ եւ չարի :

ԳԼ Զ

1 Վասն որոյ թողեալ զբան սկզբանն Քրիստոսի՝ ի կատարումն եկեցուք .

¹ Ի բազմա պատե
² Յայն , առ ընդելութեան

մի՛ միւսանգամ արկանել հիմն ապաշխարութեան ի մեռելոտի գործոց ան-
 2 տի , եւ հաւատոցն որ յԱստուած , եւ մկրտութեանցն վարդապետութեան , եւ ձեռնադրութեան ձեռաց , եւ յարութեան մեռելոց , եւ դատաստանին
 3 յաւիտենից : Եւ արք արասցուք զայն ,
 4 եթէ Աստուած հրամայեցէ : Քանզի անհնար է միանգամ ³ մկրտելոցն որ ճաշակեցին յերկնաւոր պարզեացն ,
 5 եւ հաղորդք եղեն Հոգւոյն Սրբոյ , եւ զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշակն ճաշակեցին , եւ զդօրութիւնս հան-
 6 դերձելոյ աշխարհին , եւ կործանեսցին , միւսանգամ նորոգել յապաշխարութիւն , եւ վերստին ի խաչ հանել անձանց զՈրդին Աստուծոյ , եւ դար-
 7 ձեալ խայտառակել : Քանզի երկիր որ ըմպիցէ զանձրեւ բազում անգամ եկեալ ի վերայ նորա , եւ ծնանիցի արդինս չայեկանս նոցա վասն որոց գործիցին , ընդունի զօրնութիւն յԱս-
 8 տուծոյ . Իսկ որ բերէ փուշ եւ տատակ , անպիտան է եւ մերձ յանէծս , եւ վախճան նորա յայրումն :
 9 ԶԶ . Բայց հաստատեալ եմ վասն ձեր սիրելիք , ի լաւ անդր եւ որ լին է փրկութեամբ , ⁴ զի թէպէտ եւ այսպէս
 10 խօսիմք : Ոչ եթէ անիրաւ ինչ է Աստուած մոռանալ զգործն ձեր եւ զսէրն զոր ցուցէք յանուն նորա , զի պաշ-
 11 առիք զսուրբանս եւ պաշտէք : Եւ մեք ըղձանամք զի իւրաքանչիւր ոք ի ձէնջ զնոյն փոյթ ցուցանիցէ ի հաստատու-
 12 թիւն յուսոյն մինչեւ յվախճան . Զի մի՛ հիւանդամիտք լինիցիք , նմանողք եղերուք այնոցիկ որ հաւատովքն եւ երկայնամտութեամբ ժառանգեցին զա-
 13ւետիսն : Զի Աբրահամու խոստացեալ զաւետիսն՝ Աստուծոյ , քանզի յայլ ոք
 14 ի մեծ ոչ գոյր երդնուլ , Յանձն իւր երկուաւ եւ ասէ , Այո , օրհնելով օրհնեցից զքեզ , եւ բազմացուցանելով
 15 բազմացուցից զքեզ : Եւ այնպէս երկայնամիտ եղեալ՝ եհաս աւետեացն :
 16 Ապաքէն մարդիկ որ ինչ ի վեր է քան զինքեանս՝ յայն երդնուն , եւ ամեհ նայն հակառակութեան նոցա վճիռ ի
 17 հաստատութիւն՝ երդումնն է : Որով առաւել եւս կամեցեալ Աստուծոյ

³ Յայն , լուսաւորելոցն ⁴ Ի հանին պատե

յուզանել ժառանգաւորաց աւետեացն
 զհաստատութիւն խորհրդոյն իւրոյ,
 18 միջնորդեաց երգմամբ . Ձի երկու ան-
 փոփոխելի իրօքն որովք անհնար իցէ
 ստել Աստուծոյ՝ հաստատուն մխիթա-
 ռութիւն ունիցիմք, որք ասպասան
 եղեաք բուռն հարկանել զհանդերձեալ
 19 յուսոյն . Ձոր իբրեւ զխարխիս հաս-
 տատուն եւ անշարժ ունիցիմք ան-
 ձանց մերոց, որ եւ մտանիցէ ի ներքին
 20 կողմն վարագուրին . Ուր կարգապետն
 մեր Յիսուս եմուտ վասն մեր, ըստ
 կարգին Մեքիսեղեկի եղև քահանա-
 յապետ յաւիտենից :

ԳԼ Է

1 Քանզի այս Մեքիսեղեկ թաղաւոր էր
 Սաղիմայ, քահանայ Աստուծոյ բարձ-
 րելոյ, որ ել ընդ առաջ Աբրահամու,
 յորժամ դարձեալ գայր ի կոտորածէ
 2 թագաւորացն, եւ օրհնեաց զնա . Ու-
 ռում եւ տասանորդս յամենայնէ ետ
 Աբրահամ . նախ թարգմանի թագաւոր
 արդարութեան, ապա թագաւոր Սա-
 ղիմայ՝ որ է թագաւոր խաղաղութեան .
 3 Անհայր, անմայր, չհամարեալ յաղզս,
 որոյ ոչ սկիզբն աւուրց եւ ոչ կատա-
 րած կենաց . նմանեալ Որդւոյն Աս-
 տուծոյ՝ կայ մնայ քահանայ մշտնջե-
 նաւոր :
 4 Արդ տեսէք որպիսի ոք էր սա, ու-
 ռում եւ Աբրահամ տասանորդս ետ
 5 յաւարէ անտի, նահապետն : Եւ որք
 յորդուցն Ղեւեայ զքահանայութիւնն
 առնուն՝ պատուէր ունին տասանորդել
 զժողովուրդն ըստ օրինացն, այսինքն
 է զեղբարս իւրեանց . թէպէտ եւ ել-
 6 եալ իցեն յերանացն Աբրահամու . Իսկ
 չհամարեան յաղզս ի նոցանէ՝ տասա-
 նորդուց զԱբրահամ, եւ զնա որոյ
 7 զաւետութիւն ընկալեալ էր՝ օրհնեաց : Ձի
 առանց ամենայն հակառակութեան՝
 նուազն ի լաւէ անտի օրհնեսցի :
 8 Եւ աստ մարդք մահկանացուք տա-
 սանորդս առնուն . բայց անդ՝ ՚վկայե-
 9 ցաւ թէ կենդանի է : Եւ որպէս բա-
 նից կարդ է ասել, թէ Աբրահամաւ
 եւ Ղեւի իսկ որ զտասանորդան աւ-
 10 նոյր՝ տասանորդեցաւ . Ձի դեռ եւս

յերանս հօր իւրոյ էր, յորժամ ընդ
 առաջ եղև նմա Մեքիսեղեկ :
 11 Իսկ արդ՝ եթէ կատարումնն ի ձեռն
 Ղեւեացուց քահանայութեանն էր,
 (քանզի ժողովուրդն յայն օրէնսդրե-
 ցաւ,) զինչ պիտոյ էր ըստ կարգին
 Մեքիսեղեկի այլում քահանայի յառ-
 նել, եւ ոչ ասել թէ ըստ կարգին Ա-
 12 հարոնի : Այլ ի փոփոխել քահանայու-
 թեանն հարկ էր եւ օրինացն փոփո-
 13 խումն լինել : Ձի զորմէ այսպէսն ասի՝
 յայրմէ ազգէ կալաւ հազորութիւն,
 յորմէ ոչ ոք երբեք եղև հազորդ սե-
 14 զանոյն : Արդ յայտ իսկ է թէ յաղգէ
 Յուդայ ծաղեաց Տէր մեր, յորմէ ազգէ
 վասն քահանայից Մովսէս ինչ ոչ ճառ-
 15 եաց : Եւ եւս առաւել յայտ է թէ ըստ
 նմանութեան Մեքիսեղեկի յամենայն
 16 է այլ քահանայ, Որ ոչ ըստ մարմնա-
 ւոր պատուիրանին եղև, այլ ըստ
 զօրութեան կենացն անվախձանից :
 17 Քանզի վկայեցաւ թէ Դու ես քահա-
 նայ յաւիտեան ըստ կարգին Մեքի-
 18 սեղեկի : ՉԱբրահամարութիւն լինէր ա-
 ռաջին պատուիրանին վասն նորին
 տկարութեանն եւ անշահութեան .
 19 Քանզի ոչինչ կատարումն գործեցին
 օրէնքն, ³եւ մուտ ազնուական յու-
 սոյն որով մերձենամք առ Աստուած :
 20 Եւ այնչափ զի ոչ առանց երգման .
 (զի են ոմանք որ առանց երգման են
 21 կացեալ քահանայք . Բայց սա երդ-
 մամբ ի ձեռն այնորիկ որ ասացն ի նա,
 Երդուաւ Տէր եւ ոչ եւս զըջացի,
 22 Դու ես քահանայ յաւիտեան⁴.) Եւ
 այնչափ լաւագոյն ուխտի եղև երաշ-
 լաւոր Յիսուս :
 23 Եւ բաղում են կացեալ քահանայք
 վասն մահու արդել լինելոյ ի մշտնջե-
 24 նաւորել : Իսկ սա վասն յաւիտեան
 կալոյ՝ առանց սնցանելոյ ունի գրա-
 25 հանայութիւնն . Ուստի եւ կենդանի
 առնել համօրէն կարող է զմատու-
 ցեալսն նովաւ առ Աստուած . քանզի
 միշտ կենդանի է լինել բարեխօս վասն
 նոցա :
 26 Ա. Ձի այսպիսի իսկ եւ վայել էր
 մեզ քահանայապետ, սուրբ, անմեղ,

¹Յոնն, որ վկայեցաւն

²Յոնն, Ձի արհամարհութիւն
³Յոնն, այլ
⁴Բաւարժ յաւիտեան, ըստ կարգին Մեքիսեղեկի

անարատ, զատեալ ի մեղաւորաց եւ
 27 բարձրացեալ քան զերկինս . Որում ոչ
 հանապազ հարկ է, որպէս այլոց քա-
 հանայապետիցն, նախ վասն իւրեանց
 մեղացն պատարագս մատուցանել եւ
 ապա վասն ժողովրդեանն . իսկ սա
 զայն միանգամայն կատարեաց, զի
 28 զանձն իւր մատոյց պատարադ : Օ-
 շննքն զմարդիկ կացուցանեն քահա-
 նայապետս, զղածեալս տկարութեամբ,
 իսկ բանն երդման յետ օրինացն՝ զՈր-
 զի, որ յաւիտեան կատարեալ է :

ԳԼ Ը

1 Եւ բանից զուրի խօսիցս՝ այնպիսի
 ունիմք քահանայապետ, որ նստաւ
 ընդ աջմէ Մեծութեան աթոռոյն յեր-
 2 կինս, Սրբութեանցն պաշտօնեայ, եւ
 խորանին ճշարտութեան զոր Տէրն
 3 կանդնեաց եւ ոչ մարդ : Զի ամենայն
 քահանայապետ վասն մատուցանելոյ
 զղոճա եւ զպատարագս կայ . ուստի
 հարկ է եւ նմա ունել ինչ զոր մատու-
 4 ցանիցէ : Զի եթէ էր յերկրի, թերեւս
 չէր իսկ քահանայ . զի ՚գոյնն որ՝ մա-
 տուցանէին ըստ օրինացն պատարագ .
 5 Որք առակաւ եւ օրինակաւ պաշտէին
 երկնաւորացն, որպէս եւ հրամայեցաւ
 Մովսիսի, յորժամ գործելոց էր զվրան
 ժամուռն, Տեսչիբ, ասէ, արասցես
 զամենայն ըստ օրինակին որ ցուցաւ
 6 քեզ ի լերինն : Բայց արդ առատագոյն
 եւս պաշտաման եհաս Յիսուս, որչափ
 լաւագոյն եւս ուխտի է միջնորդ՝ որ
 յառաւել աւետիսն օրինադրեցաւ :
 7 Զի եթէ առաջինն անարատ էր, ա-
 8 պա երկրորդին տեղի ոչ խնդրէր : Նա
 աւանիկ բամբասէ զնոսա . եւ ասէ,
 Ահաւասիկ աւուրք եկեցեան, ասէ
 Տէր, եւ կատարեցիցի ի վերայ տանն
 Խորայելի եւ ի վերայ տանն Յուզայ
 9 ուխտ նոր . Ոչ ըստ ուխտին զոր եղի
 ընդ հարս նոցա յաւուրն յորում առի
 ի ձեռն հանել զնոսա յերկրէն Եդիպ-
 տացոց . եւ զի նոքա ոչ կացին յուխ-
 տին իմում, եւ ես անփոյթ արարի
 10 զնոցանէ, ասէ Տէր շամենակալ : Այլ
 այս է ուխտն զոր եղից տանն Խորա-

յելի յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր,
 տաց զօրէնս իմ ի միտս նոցա, եւ ի
 սիրտս նոցա գրեցից զնոսա, եւ եղէց
 նոցա Աստուած, եւ նոքա եղիցին ինձ
 11 ի ժողովուրդ : Եւ ոչ եւս ուսուցանի-
 ցեն իւրաքանչիւր զքաղաքակից իւր
 եւ իւրաքանչիւր զեղբայր իւր, եւ ա-
 սիցեն թէ Ծանիր զՏէր . զի ամենե-
 քին ծանոցեն զիս ի փոքրիկանց մինչեւ
 12 ցամեծամեծս նոցա . Զի քաւիչ եղէց
 անիրաւութեանց նոցա, եւ զմեզս նո-
 ցա եւ զանօրէնութիւնս այլ ոչ եւս
 յիշեցից :

13 Արդ ասելովն նոր՝ հնայոց զառա-
 ջինն . եւ որ հնանայն եւ ձերանայ՝
 մերձ է յապականութիւնս : ՎՋ

ԳԼ Թ

1 Ունել ունէր եւ առաջինն իրաւունս
 պաշտաման Յայնժամ զաշխարհական
 2 սրբութիւնն : Զի խորանն առաջին
 հանդերձեցաւ շայսպէս, յորում աշ-
 տանակն եւ սեղանն եւ հացն նուի-
 3 րաց, որ Սրբութիւնն կոչէր : Եւ յետ
 երկրորդ վարազուրին խորանն որ կո-
 4 չէր Սրբութիւն սրբութեանց . Յորում
 կայր բուրվառն ոսկի, եւ արկղն կտա-
 կարանաց պատեալ ներքոյ եւ արտա-
 քոյ ոսկւով, յորում սափօրն ոսկի լի
 մանանայիւ, եւ գաւազանն Ահարոնի
 որ ծաղկեցաւ, եւ տախտակը կտակա-
 5 րանացն . Եւ ի վերայ նորա քերտվէքն
 փառաց որ հովանի ունէին ի վերայ
 քաւութեանն, վասն որոյ ոչ է այժմ
 ասել մի ըստ միոջէ :
 6 Եւ այն ամենայն իբրեւ այնպէս
 հանդերձեալ կայր, յառաջին խորանն
 յամենայն ժամ մտանէին քահանայքն
 7 զպաշտամունսն կատարել . Բայց յերկ-
 րորդն մի անգամ ի տարւոջն քահա-
 նայապետն . եւ զայն ոչ առանց ար-
 եան, զոր մատուցանէր վասն իւր եւ
 վասն ժողովրդեանն անդիտութեան .
 8 Զայս ցուցեալ Հոգւոյն Սրբոյ մինչ-
 չեւ յայտնեալ էր ճանապարհի սրբու-
 թեանցն, քանզի դեռ առաջին խորանն
 9 ունէր զհաստատութիւն . Որ է առակ
 ժամանակին որ առաջի կայր, յորում
 պատարագքն եւ զոհք մատչէին, որք

1 Ունէր, գոյին քահանայք որ
 2 ի Եւսեօն պատե

3 կու, և

ոչ կարէին ըստ միտս կատարել զպաշ-
տօնեայան, բայց միայն կերակրովք
10 եւ ըմպելեօք, Եւ պէսպէս մկրտու-
թեամբք՝ մարմնոյ արգարութիւնքն
որ մինչեւ ի ժամանակս ուզողութեանն
11 ի վերայ կային: Այլ Քրիստոս եկեալ
Քահանայապետ հանգերձելոցն բար-
եաց, մեծաւն եւ կատարելով եւ ան-
ձեռագործ խորանաւն, այսինքն է՝ որ
12 ոչ յայց արարածոց, Եւ ոչ արեամբ
նորիացաց եւ զուարակաց, այլ իւրով
արեամբն եմուտ մի անգամ ի սրբու-
թիւնսն, չաւիտենականս գտեալ զիբը-
13 կութիւն: Զի եթէ արիւն ջրուցն եւ
նորիացաց եւ մոխիր երնջոցն ցանեալ՝
զպղծեալսն սրէր առ ի մարմնոյ սրբու-
14 թիւնէ, Ո՛րչափ եւս առաւել արիւնն
Քրիստոսի, որ ի ձեռն Հոգւոցն յա-
ւիտենականի մատոյց զանձն անարատ
՚պատարագ Աստուծոյ, սրբեցէ զսիղծ
մտաց ձերոց ի մեռելոտի գործոց ան-
15 տի՝ պաշտել զԱստուած կենդանի: Եւ
վասն այնորիկ նորոյ ուխտիս է միջ-
նորդ, զի յորժամ մահ լինիցի ի փրկու-
թիւն վասն առաջին ուխտին յանցա-
նաց, զաւետիս առցեն հրաւիրեալքն
16 ի ժառանգութիւնն յաւիտենից: Քան-
զի ուր կտակ է, հարկ է զմահ ի մէջ
17 բերել զկտակազրին: Զի կտակ յետ
մահու հաստատուն է. ապա թէ ոչ՝
զիւրդ իցէ հաստատուն, մինչ կտա-
18 կազիրն կենդանի է: Ուստի եւ ոչ
առաջինն առանց արեան նորոգէր:
19 Քանզի իբրեւ սլատմեցան ամենայն
պատուիրանք օրինացն ի Մովսիսէ
ժողովրդեանն, առեալ զարիւն ջրուցն
եւ նոխազացն, ջրով եւ բրդով կար-
մրով եւ զոպայիւ, զկտակարանօքն իսկ
եւ զամենայն ժողովրդեամբն սրսկեաց,
20 Եւ սսէ, Այս է արիւն կտակին զոր
21 պատուիրեաց ձեզ Աստուած: Եւ զսո-
րանաւն եւ զամենայն կահիւ սպա-
22 սուն նոյնպէս սրսկեաց զարիւնն: Եւ
զրեթէ ամենայն ինչ արեամբն սրբէր
ըստ օրինացն, եւ առանց հեղման ար-
եան չլինէր թողութիւն:
23 Ապա հարկ էր Յօրինաւորացն այն-
պիսեօքն սրբել. եւ բուն իսկ երկնա-
ւորացն՝ առաւել եւս պատարագօք

24 քան զնոյնս: Զի ոչ եթէ ի ձեռագործ
սրբութիւննս մեռու Քրիստոս յօրի-
նակս ճշմարտութեանն, այլ ի բուն
իսկ յերկինս, ՚յանդիման լինել երե-
25 սացն Աստուծոյ վասն մեր: Ոչ զի բա-
զում անգամ մատուցանիցէ զանձն
՚պատարագ՝ որպէս քահանայապետն
որ մտանէր ՚սրբութիւն սրբու-
թեանցն՝ ամի ամի արեամբ օտարաւ:
26 Ապա թէ ոչ՝ սլարտ էր նմա բազում
անգամ չարչարել ի սկզբանէ աշխարհի.
բայց արգ աւասիկ մի անգամ ի կա-
տարած յաւիտեանց յանարգութիւն
մեղաց իւրով պատարագաւն յայտ-
27 նեալ է: Եւ զոր օրինակ կայ մնայ
մարդկան մի անգամ մեռանել եւ յետ
28 այնորիկ գատատան, Նոյնպէս եւ
Քրիստոս մի անգամ մատուցեալ ՚պա-
տարագ առ ի բառնալոյ զմեզս բազ-
մաց. իսկ յերկրորդումն առանց մեղաց
յայանեսցի այնոցիկ, որ ակն ունիցին
նմա ՚հաւատովք ի փրկութիւն:

ԳԼ Ժ

1 Բ. Քանզի զստուեր հանգերձելոյ
բարեացն ունէին օրէնքն եւ ոչ զնոյն
կերպարանս իրացն, ամի ամի զնոյն
պատարագս մատուցանեն ցանդ, որք
ոչ են կարող զմատուցեալսն կատա-
2 րել. Ապա թէ ոչ՝ զազարէին ի մա-
տուցանելոյ, վասն եւ ոչ մի ինչ այ-
նունետեւ խիղճ մտաց ունելոյ սլաշ-
3 տօնէիցն մի անգամ սրբեցելոյ. Այլ
անգէն ի նմին ի յիշատակս մեղացն
4 կային ամի ամի. Քանզի ոչ կարէր
արիւն նոխազացն եւ ջրուց բառնալ
5 զմեզս: Վասն որոյ ի մտանել իւրում
յաշխարհ՝ ասէ, Զգոհս եւ զպատա-
6 տատեցր ինձ. Ընդ ողջակէզս եւ ընդ
7 վասն մեղացն ոչ հաճեցար: Յայնժամ
ասացի թէ Ահաւասիկ եկի (ի ճառս
զրոց յրեալ է վասն իմ) առնել զկամս
8 քո, Աստուած: Վերադոյնն ասէ թէ
Ընդ գոհս եւ ընդ պատարագս եւ ընդ
ողջակէզս եւ ընդ վասն մեղացն ոչ
հաճեցար, եւ ոչ կամեցար (որք ըստ
9 օրինացն մատչէին), Ապա ասէ,

13-նն, յաւիտենական փրկութիւն գտեալ
14-նն, զմիայն պատու
15-նն, օրինակացն երկնաւորաց

4-նն, այժմ յանդիման
5-նն, ի սրբութիւնն
6-նն, ի բառնալոյ

Ահաւատիկ զամ առնել զկամս ըր, Աստուած. մերժէ զառաջինն զի զերկ-
 10 րորդն հաստատեցէ. Որով կամօք եւ մեր սրբեցաք ի ձեռն պատարագի մարմնոյն Յիսուսի Քրիստոսի մի անգամ,
 11 Եւ ամենայն քահանայապետ կայ հանապազորդ ի պաշտաման, եւ զնոյն պատարագս մատուցանէ բազում անգամ, որք ոչ երբեք կարող են բառ-
 12 նալ զմեզս. Իսկ սա զմին վասն մեզաց մատոյց պատարագ, եւ մշանջենաւոր
 13 նստաւ ընդ աջմէ Աստուծոյ. Եւ այստուհետեւ ակն ունի, մինչեւ զիցին թշնամիք իւր ի ներքոյ օտից իւրոց:
 14 Քանզի միով պատարագաւ կատարեաց զսրբեալսն ի մշանջենաւորս:
 15 Այլ վկայէ մեզ եւ Հոգին Սուրբ
 16 յետ ասելոյ յառաջագոյն, Եթէ՛ Այս է ուխտն զոր եպից² ընդ հարս նոցա՝ յետ աւուրոյն այնոցիկ, ասէ Տէր, տաց զօրէնս իմ ի սիրտս նոցա, եւ ի
 17 խորհուրդս նոցա զրեցից զնոսա, Ապա՝ ասէ թէ՛՝ Ձմեզս նոցա եւ զանօրէնութիւնս նոցա այլ ոչ եւս յիշեցից:
 18 Իսկ ուր թողութիւն է, ոչ եւս պիտոյ է վասն մեզաց պատարագ: ՎՋ
 19 Ունիմք այստուհետեւ, եղբարք, համարձակութիւն ի մուտս սրբութեանցն
 20 արեամբն Յիսուսի, Չոր նորոզեաց մեզ ճանապարհ նորոզ եւ կենդանի ի ձեռն վարագործին, այսինքն է՝ մարմնոյն իւրոյ, եւ քահանայ մեծ ի վերայ
 22 տանն Աստուծոյ, Մատիցուք ճշմարիտ սրտիւք, լուծթեամբ հաւատոց, լուացեալ զսիրտս ի իւզձէ՛ չարեաց եւ մկրտտեալ զմարմին ի ջուրն սրբութեան:
 23 Պինդ կայցուք զխոստովանութիւն անչարժ յուսոյն, զի հաւատարիմ է
 24 որ խոստացաւս: Եւ զգուշացուք միմեանց յորդորմամբք սիրոյ եւ զօր-
 25 ծոց բարեաց. Եւ մի՛ թողցուք զժողովս միմեանց, սրպէս եւ սոյնոր են ոմանք. այլ միսխարեսցուք, եւ այնչափ եւս առաւել՝ որչափ տեսանիցէք զօրն մերձեալ:
 26 Ձի կամակար մտք եթէ յանցանիցեալք յետ ընդունելութեան պիտուցեան ճշմարտութեանն, այնուհետեւ ոչ եւս պիտոյ է վասն մեզաց պատար-

27 րագ, Այլ անեղ ակնկալութիւն դատաստանին, եւ նախանձ հրոյն որ ու-
 28 տիցէ զհակառակորդան: Արհամարհեալ ուրուք զօրէնսն Մովսիսի, առանց ո-
 29 վկայիւք մեռանէք. Իսկ ո՛րչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն, որ վրդին Աստուծոյ առ օտն ենար. եւ զարիւն Յնորոյ ուխտին խառնակ համարեցաւ որով եւ սրբեցաւն, եւ զՀոգին չնորհաց թշնամա-
 30 նեաց: Այլ զիտեմք զայն որ ասացն, Իմ են վրէժխնդրութիւնք, եւ ես հատուցից, ասէ Տէր. եւ զարձեալ թէ՛
 31 Դատի Տէր զժողովուրդ իւր: Ահ մեծ է անկանել ի ձեռս Աստուծոյ կենդանոյ:
 32 Արդ յիշեցէք զաւուրսն զատաջինս, յորս լուսաւորեալք բազում ճգանց
 33 եւ չարչարանաց համբերէք. Մերթ ի նախատինս եւ ի նեղութիւնս խացտառակեալք, մերթ կցորդ այնպիսեաց
 34 վաստակաւորացն լինել: Քանզի եւ ընդ կասեալս՝ չարչարեցարուք, եւ զյայտաւորութիւն ընչից ձերոց խնդու-
 35 թեամբ ընկալարուք, քանզի զիտէիք թէ լաւագոյն եւս ստացուածս ունիք անձանց յերկինս, ուր կանն եւ մնան:
 36 Արդ մի՛ մերժէք ի ձէնջ զհամարձակութիւնն ձեր, յորում կայ մեծաց
 37 վարձուց հատուցումն: Պիտոյ է ձեզ համբերութիւն, զի զկամս Աստուծոյ
 38 արարեալ՝ հասջիք աւետեացն: Ձի փոքր մեւս եւս քան որչափ որ դա-
 39 լոցն իցէ՛ եկեցէ, եւ ոչ յամեցէ: Ձի արդարն ծիմ ի հաւատոց կեցցէ. եւ եթէ յերկմիտս ոք իցէ, ոչ հաճեցիք
 40 ընդ նա անձն իմ: Բայց մեր ոչ եթէ երկմտութեամբ եմք ի կորուստ, այլ հաւատովք ի վերկութիւն հողուց:

ԳԼ ԺԱ

1 Ձինչ են հաւատք, եթէ ոչ յուսա-
 2 զիմանութիւն որոց ոչն երեւին: Ձի նովաւ վկայեցան առաջինքն:
 3 Հաւատովք իմանամք հաստատեալ զյաւիտեանս բանիւ Աստուծոյ, յաներեւութից զերեւելիսս եղեալ:
 4 Հաւատովք լաւ պատարագս Հարէլ

¹Թշնն, զի յետ
²Յոյն, ընդ նոսա

³Ի Յոանին պատմե

⁴Որհն, ի կապանս իմ

⁵Յօանն պատմե

քան զկայէն մատուցանէր Աստուծոյ, որով վկայեցաւ իսկ արդար լինել. զի ի վերայ պատարագացն եղև վկայութիւն նմա յԱստուծոյ. զի թէպէտ եւ մեռաւ ի նմին, սակայն տակաւին խօսի:

5 Հաւատովք Ննովք փոխեցաւ, զի մի՛ զմահ՝ ճաշակեսցէ. եւ ոչ ուրեք գտանէր, քանզի փոխեաց զնա Աստուած. եւ յառաջ քան զփոխելն նորա վկայեցաւ հաճոյ լինել Աստուծոյ:

6 Բայց առանց հաւատաց անհնար է հաճոյ լինել. այլ հաւատալ արժան է այնո՛ր որ մերձեհայ առ Աստուած՝ թէ է՛ Աստուած. եւ որ խնդրենն զնա՝ լինի պարգեւատր:

7 Հաւատովք առեալ հրաման Նոյի վասն չիւ եւս երեւելեացն, գահի հարեալ կալմէր զտապանն ի փրկութիւն տան իւրոյ, որով դատեցաւ զաշխարհ, եւ հաւատոցն արդարութեան եղև ժառանգաւոր:

8 Հաւատովք ²որ Աբրահամն կոչեցաւ՝ ունկնդիր եղև երանելի տեղին զոր առնլոց էր ի ժառանգութիւն. ել զնաց, եւ ոչ գիտէր յո՛վ երթիցէ:

9 Հաւատովք պանդխտեցաւ յերկրին աւետեաց իբրև յօտարութեան, խորանօք բնակեաց Իսահակաւ եւ Յակոբաւ հանդերձ, ժառանգակցօք նոցին աւետեաց: Քանզի ակն ունէր հիմարք հաստատելոյ քաղաքին, որոյ ճարտարարև եւ արարիչ Աստուած է:

11 Հաւատովք եւ ինքն Սառա ³որ աժուըն էր՝ զօրութիւն առնլոյ զսերմն ³որդեծնութեան՝ բնդունէր, եւ ի սարժառ հասակի ³ծնանէր. քանզի հաւատարիմ համարեցաւ զայն որ խոստացան:

12 Վասն որոյ եւ ի միօջէն ծնանէին, եւ այն՝ ⁴յանցեալ ժամանակի՝, իբրև զառտեղս երկնից բազմութեամբ, եւ իբրև զաւազ առ ափն ծովու առանց թուոյ:

13 Ըստ հաւատոյ մեռան ամենեքին սոքա, եւ չիւ եւս ընկալեալ զաւետիսն. այլ ի հոռուստ տեսին զնոսա՝ ⁵եւ զնծացան, եւ խոստովան եղևն եւ թէ օտարք եւ պանդուխտք են յերկրի:

14 Զի որք զայնպիսինս խօսին՝ յայտ առնեն եթէ գաւառ իմն խնդրեն: Զի եթէ զայն յիշէին ուստի ելինն՝ գոյր

16 ժամանակ դառնալոյ անդրէն: Նա աւանիկ աղնուականի իմն ցանկացեալ են, այսինքն է երկնաւորին. վասն որոյ ոչ ամօթ համարի Աստուած կոչել նոցա Աստուած, քանզի պատրասեաց նոցա քաղաք:

17 Հաւատովք մատոյց Աբրահամ ի փորձութեան իւրում զԻսահակ՝ չպատարազ. եւ զմիամօրն մատուցանէր, որոյ զաւետիսն ընկալեալ էր: Որում ասացան, թէ Իսահակաւ կոչեսցի:

18 Բեզ զաւակ. եզ ի մտի իւրում թէ եւ ի մեռելոց կարող է յարուցանել Աստուած. ուստի եւ յառակս իսկ ընկալաւ զնա:

20 Հաւատովք վասն հանդերձելոց իրաց օրհնեաց Իսահակ զՅակովբ եւ զՆսաւ:

21 Հաւատովք Յակովբ ի մեռանէն իւրում զիւրաքանչիւր ոք յորդոցն Յովսեփու օրհնեաց, եւ երկիր եպազ ի ծագ զաւազանի իւրոյ:

22 Հաւատովք Յովսեփ ի վախճանել իւրում յիշեաց զբն որդւոցն Իսրայելի, եւ վասն ոսկերաց իւրոց սլատուերեաց:

23 Հաւատովք ⁶զՄովսէս իբրև ծնան՝, թաքուցաւ ամիսս երիս ի հարց իւրոց, քանզի տեսին կայտառ զմանուկն, եւ ոչ զանգիտեցին ի հրամանէ թագաւորին:

24 Հաւատովք Մովսէս, իբրև աճեաց, ուրացաւ կոչել որդի գտներն Փարաւոնի: Լաւ համարեցաւ չարչարել ընդ ժողովրդեանն Աստուծոյ, քան առ ժամանակ մի վայելի ի մեզս:

26 Կարեւոր համարեցաւ զնախատիսն Քրիստոսի քան ⁸զմեծութիւն զանձուցն՝՝ Եգիպտացւոց, զի հայեցեալ ակն ունէր վարձուցն հատուցման:

27 Հաւատովք թողոյր զերկիրն Եգիպտացւոց, եւ ոչ երկնչէր ի ցասմանէ թագաւորին, զի ⁹զաներեւոյթման իբրև զտեսեալ համարութեամբ համարեցաւ: Հաւատովք արար զղատիկն եւ զհեղունն արեանն, զի մի՛ սատակիչն անդրանկաց մերձեհայցէ ի նոսա:

¹ Ի Զաւն, Կալուստ
² Կալ, կոչեցեալ Աբրահամու
³ Ի Բաւալ, Կալուստ
⁴ Զաւն, ի մեռելոյ

⁵ Ուստ, և հաւատոցին և
⁶ Զաւն, Մովսէս իբրև ծնաւ
⁷ Զաւն, Առաւել մեծութիւն
⁸ Զաւն, զգանձս ⁹ Զաւն, զԱներեւոյթն

29 Հաւատովք անցին ընդ ծոփն Կարմիր իրբեւ ընդ ցամաք երկիր . զորոյ զփորձ առեալ եղիպտացւոցն՝ ընկզմեցան :

30 Հաւատովք պարիսպքն Երիքովի անկան , չուրջ եկեալ զնորօք զեւթն օր :

31 Հաւատովք Րախաբ պոռնիկ ոչ կորեաւ ընդ անհաւատսն , որոյ ընկալեալ էր զըրտեսսն խազազուծեամբ :

32 Եւ արգ զինչ եւս ասացից . զի չէ բաւական ժամանակս պատմելոյ վասն Գեղէնի , Բարակայ , Սամիսոնի , Յեփթայեայ , Դաւթի եւ Սամուելի եւ :

33 Վայոյց մարգարէիցն . Որք հաւատովք պարտեցին զժագաւորութիւնս , գործեցին զարգարութիւն , հասին աւելտեաց , խցին զբերանս առիւծուց , Շիջուցին զզօրութիւն հոյ , ապրեցան ի բերանոյ սրոյ , զօրացան ի սկարութիւնէ , եղևն զօրաւորք ի պատերազմի ,

35 ասին զրանակն օտարաց . Ընկալան կանայք ի յարութիւնէ զմեռեալս իւրեանց . կէսք կոչկոծեցան , եւ չեւ եւս ընկալեալ զբիրկութիւն , զի լաւագոյն

36 յարութեանն հասանիցեն . Եւ կէսք զտանջանաց եւ զզանից զփորձ ափն ,

37 զկապանաց եւ զբանտից . Քարկոծեցան , սղոցիցան , փործեցան , սպանմամբ սրոյ մեան , չըջեցան լաշկամաշկօք եւ մորթովք այծենօք . կաբօտեալք , նեղեալք , չարչարեալք :

38 (Զորս ոչ արժէ աշխարհս .) յանապատի մոլորեալք եւ ի լերինս եւ յայրս եւ ի փապարս երկիր :

39 Եւ սօքա ամենեքին վկայեալք ի հաւատոցն , չեւ եւս ընկալան զաւելտին . Սատուծոյ վասն մեր Չլաւագոյն համարեալ՝ , զի մի՛ առանց մեր կատարեսցին :

ԳԼ ԺԲ

1 Այսուհետեւ եւ մեք որ այսչափ չուրջ զմեկք մածեալ ունիմք զբազմութիւն վկայից . Յիշարտութիւն զամենայն իրաց ընկեսցուք եւ զմեզ ⁴կարեւորս , համբերութեամբ ընթացուք ի պատերազմ որ առաջի կայ մեզ :

¹ Ի Բաղւառ պատմ
² Յայն , լաւագոյն տեսեալ կանխաւ
³ Կաթ , զծանրութիւն
⁴ Յայն , որ զիւրաւն պաշարեն

2 Հայեսցուք ի զօրագլուխն հաւատոց եւ ի կատարինն Յիսուս , որ փոխանակ ուրախութեանն որ նմա առաջի կայր՝ յանձն առ զխաչն , արհամարհեաց զամօթն , նստաւ ընդ աջմէ աթոռոյն Աստուծոյ :

3 Աղէ ամէք զմտաւ , որ զայսպիսի համբերութիւն ի մեզաւորաց հակառակութենէ անտի կրեաց , զի մի՛ աշխատք լինիցիք անձամբք ձերովք եւ լքանիցիք :

4 Զի չեւ եւս արեամբ չափ պատերազմեալք հակառակ կացէք մեզացն . Եւ մոռացարուք զմխիթարութիւնն որ ընդ ձեզ իբրեւ ընդ որդեակս խօսի :

5 Գ . Որդեակ իմ , մի՛ լքանիր ի խրատու Տեառն , եւ մի՛ վատիցիս յանդիմանեալ ի նմանէ :

6 Զի զօր սիրէ Տէր՝ խրատէ , տանջէ զամենայն սրղի զոր ընկուսի :

7 Ի խրատու համբերութեան կայք , իրբեւ յորդիս մատուցեալ է ի ձեզ Աստուած . ո՞ր որդի է զոր ոչ խրատիցէ հայր :

8 Զի եթէ առանց խրատու լինիցիք , որով ամենեքին բաժանորդք եղևն , ապա խորթք իցէք եւ ոչ որդիք :

9 Զի եթէ ի մարմնաւոր հարցն մերոց զոր ունիմք խրատիչս՝ պատկանեմք , բ՛րչափ եւս առաւել հնազանդեսցուք Տօրն հողոց ,

10 եւ կեցցուք : Զի սօքա առ սակաւ ժամանակս ըստ կամաց իւրեանց խրատեն . իսկ նա վասն օգտի , առ ի յընդունելոյ զարբութիւն նորա : Ամենայն խրատ առ ժամանակն ոչ ուրախութեան թուի , այլ՝ տրտմութեան , բայց յետոյ օտուղ խազազուծեան նովաւ կրթեցելոցն հատուցանէ յարգարութիւն :

11 Վասն որոյ զձեռս լքեալս եւ զծուկս կթոտս հաստատեցէք . Եւ զշաւիզս ուղիզս արարէք ոտից ձերոց , զի մի՛ որ կազն իցէ՛ զլորիչի , այլ մանաւանդ բժշկեսցի :

12 Զխազազութեան զհետ երթայք ընդ ամենեկին եւ զսրբութեան , առանց իրոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր :

13 Զգոյշ ըրուք , զուցէ ոք յեսնեալ գտանիցի ի շնորհացն Աստուծոյ . մի՛ ոք արմատ զանութեան ի վեր երեւեալ նեղիցէ , եւ նովաւ բազումք պղծիցին :

14 Մի՛ ոք պոռնիկ եւ պիղծ իբրեւ զԵսաւ , որ ընդ միոյ կերակրոյ զանդրանկութիւնն վաճառեաց , Գիտէք

զի թէպէտեւ յետոյ կամեցաւ ժառանգել զօրհնութիւնսն, խոտան զտաւ . զի եւ ապաշխարութեան տեղի ոչ եզրիտ, թէպէտեւ արտասուօք խնդրեաց զնա :

- 18 Դ. Զի ոչ էք մատուցեալ առ լեառն շօշափելի, որ հրովն վառեալ էր, ¹եւ միտով եւ մատախողով եւ խաւարաւ
- 19 եւ մթով, Ուր փողն հնչէր եւ բարբառ պատգամացն՝. ուստի որք լուանն՝ ²հրաժարեցին, զի մի՛ կրկնեսցի առ
- 20 նոսա բանն . Բանզի ոչ հանդարտէին հրամանին . ³Թէպէտեւ դազան մերձենայր ի լեառն, քարկոծ լինէր՝
- 21 եւ այնպէս անազին էր տեսին, զի եւ Մովսէս ասէր եթէ Զահի հարեալ
- 22 եմ եւ գողամ : Այլ մատուցեալ էք ի Սիովն լեառն, եւ ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ, յերուսաղէմ յերկինս, եւ
- 23 ի բերաւոր բանակս հրեշտակաց, եւ յեկեղեցիս անդրանկաց զրկոց յերկինս, եւ առ դատաւորն ամենեցուն Աստուած, եւ յոգիս արդարոց կատարելոց, եւ ի նորոց կտակարանաց միջնորդն Յիսուս, եւ ի հեղումն արեան նորա որ առաւել խօսի քան զՀաբելին :
- 25 Զոյոյ լերուք, զուցէ հրաժարիցէք յայնմանէ որ խօսեցաւս . զի եթէ նոքա ոչ կարացին զերծանել, հրաժարեալք յայնմանէ որ յերկրին հրաման տայր, ս՛րչափ եւս առաւել մեք, եթէ յերկնաւորէն թիկոնս դարձուցանիցցեմք . Որոյ ձայնն զերկիր շարժեաց յայնժամ, եւ այժմ խոստացեալ է եւ ասէ, Միւսանդամ շարժեցից ոչ միայն
- 27 զերկիր, այլ եւ զերկինս : Այլ միւսանդամն յայտ առնէ զշարժելոցն իբրեւ զեկելոց փոփոխումն, զի հաստատուն
- 28 կացցեն անարժքն : Վասն որոյ թագաւորութիւն անշարժ ընկալեալ սինդ կայցուք զչնորհան, որով սլաշտեմք զԱստուած հաճութեամբ՝ անհր եւ զորութեամբ . Բանզի Աստուած մեր հուր ծախիւ է :

ԳԼ. ԺԳ

- 1 Եղբայրս թրութիւն հաստատեցի ⁴առ
- 2 ձեզ՝ : Զօտարս թրութիւն մի՛ մոռանայք, զի այնու ոմանք յանպէտս ընկալան զհրեշտակս : Յուշ լիցին ձեզ կապեալքն, որպէս թէ զուք ընդ նոսա կապեալք իցէք . եւ չարչարեալքն, որպէս թէ եւ զուք իսկ ⁵մարմնաւորք
- 4 էք՝ : Պատուական է ամուսնութիւն ամենեւին, եւ սուրբ՝ անկողինք . բայց զչունս եւ զսլոտնիկս դասի Աստուած :
- 5 Բարք անարձաթասէրք լինիցին, բաւական համարել որչափ ինչ ի ձեռս իցէ . քանզի ինքն իսկ սաց, Ոչ թողից զքեզ եւ ոչ ընդ վայր հարից .
- 6 Որպէս զի համարձակ լիցուք ասել, Տէր է իմ օգնական եւ ես ոչ երկեաց, զի՛ արասցէ ինձ մարդ : Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ . հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողք եղբորուք հաւատոցն :
- 8 Յիսուս Բրիտոս երէկ եւ այսօր,
- 9 նոյն եւ յաւիտեանս : Յուսմունս պէտս եւ յօտարաձայնս մի՛ զանդաչէք . զի լաւ է շնորհօք հաստատել զսիրտս եւ ոչ կերակրովք . որովք ոչինչ օտանեցան որ այնպէսն զնացին :
- 10 Ե. Ունիմք մեք սեղան, ուստի ոչ ունին իշխանութիւն ձաշակել որք
- 11 սլաշտն զպաշտօն խորանին . Զի որոց անասնոց մատչէր արիւնն ի սրբութիւնսն վասն մեղաց ի ձեռն քահանայապետին, նոցուն մարմինք այրէին
- 12 արտաքոյ բանակին : Վասն որոյ եւ Յիսուս, զի սրբեսցէ իւրով արեամբն զժողովուրդն, արտաքոյ զբանն չար
- 13 չարեցաւ : Արդ եկալք ելցուք առ նա արտաքոյ բանակին՝ առեալ յանձն զնա
- 14 խատինս նորա : Բանզի ոչ եթէ ունիմք քաղաք որ աստէն մալոց իցէ,
- 15 այլ զհանդերձեալսն խնդրեմք : Արդ ի ձեռն նորա մատուցուք պատարագ օրհնութեան յամենայն ժամ Աստուծոյ . այսինքն է՝ զպտուղ չբթանց խոտ
- 16 տովանկոց յանուն նորա : Զբարերարութիւնս եւ զհաղորդութիւնս մի՛ մոռանայք, զի ընդ այնպիսի սլատարագս
- 17 հաճի Աստուած : Ունինդ լերուք

¹ Յօնն, եւ ոչ ի մեզ եւ ի խաւար եւ ի մրբիկ,
 (19) Եւ ի հնչումն փողոյ եւ ի բարբառ պատգամոց
² Ամ, աղաչեցին
³ Յօնն, Մինչեւ իսկ գազան մերձենայցէ ի լեառն, քարկոծեսցի, սննդ յառեւան, կամ նետիւք խոցոտեսցի

⁴ Ի Յօնն ուստի ⁵ Յօնն, էք ի մարմնի

առաջնորդաց ձերոց, եւ հպատակ կացէք ¹նոցա, զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց, որպէս թէ համարս տալոց իցեն ²ընդ ձեզ: զի խնդութեամբ արասցեն զայն եւ մի՛ յոգւոց հանելով, զի այն ոչ յօգուտ ձեր է:

18 ԿԻՐ. Աղօթս արարէք վասն մեր, զի հաստատեալ գիտեմք եթէ բարւոք միտս ունիմք, յամենայնի կամիմք

19 բարւոք զնացս ցուցանել: Եւ առաւել ազաչեմ զի զայն առնիցէք, զի վա-

20 զաղոյն պատասպարեցայց ձեզ: Եւ Աստուած խաղաղութեան որ եհան ի մեռելոց զՀովիւն հօտից, զմեծն արեամբ յաւխտեալսն ուխտին, զՏէր

21 մեր Յիսուս, Հաստատեսցէ զձեզ ի

գործս բարութեան առնել զկամս նորա, եւ արասցէ ³ի մեզ զհաճոյսն առաջի իւր ի ձեռն Յիսուսի Բրիստոսի, որում փառք յաւխտեանս: Ամէն:

22 Ազաչեմ զձեզ, եղբարք, անսալ բանիս մխիթարութեան, քանզի սակա-

23 ւուք գրեցի ձեզ: Եւ ճանաչէք զեղբայրն ⁴մեր զՏիմոթէոս զարձակեալն ⁵առ ձեզ: Ընդ որում, եթէ վաղադոյն

24 դայցէ, տեսից զձեզ: Ողջոյն տալիք ամենայն առաջնորդաց ձերոց եւ ամենայն սրբոց. ողջոյն տան ձեզ որ

25 ի կողմանս Խալիպացւոց են: Շնորհք ընդ ամենեսին ձեզ:⁵


Առ Եբբայեցիս Գրեցաւ յԻրաբնոյ է յեռն Տէմաբեայ:



ԹՈՒՂԹ

ՄՐԲՈՅ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՅԱԿՈՎԲԱՅ

ԿԱԹՈՂԻԿԷ՝



ԳԼՈՒԽ Ա

1 ԱՐ. ՅԱԿՈՎԲՈՍ, Աստուծոց եւ Տեառն Յիսուսի Բրիստոսի ծառայ, երկոտասան ազդացդ որ ի սփիւռոզ էք՝ ողջոյն:

2 Ամենայն ուրախութեան արժանի համարիչիք, եղբարք, յորժամ ի պէսպէս փորձութեանց ի մէջ անկանիցիք.

3 Գիտասալիք զի հանգէս ձերոց հաւատոցն յօրինեալ գործէ զհամբերութիւնս:

4 Իսկ համբերութիւնն գործ կատարեալ ունիցի, զի իցէք ողջանդամք եւ կատարեալք, եւ ոչ ինչ իւրիք նուազեալք:

5 Ապա թէ ոք ի ձէնջ իցէ նուազեալ յիմաստութեանէ, ինչորեսցէ յԱստուծոց որ տայն ամենայնի առատապէս

6 եւ ոչ նախատէ, եւ տացի նմա: Բայց

խնդրեսցէ հաւատովք եւ մի՛ երկմտեսցէ. զի որ երկմտան է՝ նման է հողմակոծեալ եւ տատանեալ պեաց ծո-

7 վու: Մի՛ ակնկայցի մարդն այն առ-

8 նուլ ինչ յԱստուծոց. Զի այր երկմտատանց հաստատութեան է յամենայն ճանապարհս իւր:

9 Պարծեսցի եղբայր խոնարհ ի բարձ-

10 րութիւնս իւր, եւ որ մեծատունն իցէ՝ ի խոնարհութիւնս իւր. քանզի իբրեւ

11 զծագիկ խոտոց անցցէ. Զի ծագեաց արեւ հանդերձ խորշակաւ եւ ցամաքեցոց զիտոսն, եւ թօթափեցաւ ծաղիկն նորա, եւ կորեաւ վայելչութիւն երեսաց նորա. նոյնպէս եւ մեծատունն ⁶հանազերձ շահիւքն իւրովք՝ թարշամեսցի:

¹ի բարձրագուստս
²ի բարձրագուստս
³Որման, ի ձեզ
⁴Յամենայն պատեմ
⁵Բարձրագուստ յաստուծոց, Ամէն:

⁶Որման, Թուղթ Յակովբայ կաթողիկէ. այլ, որպէս եւ մասն է Հայեցի յեռնագրաց, Թուղթ Յակովբայ
⁷Յայն, ի Տեառնէ
⁸Յայն, ի գնացս իւր

42 Երանեալ է այր որ համբերիցէ փորձանաց . զի եթէ ընտիր եւս գտանիցի, առցէ գպսակն կենաց՝ զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ¹Տէր :

43 ԱԵ. Մի՛ ոք որ ի փորձութեան իցէ ասիցէ թէ յԱստուծոյ փորձիմ . զի Աստուած անփորձ է չարեաց , փորձէ նա

44 եւ ոչ զոր : Իւրաքանչիւր ոք փորձի առ ի յիւրոցն ցանկութեանց ձգեալ

45 եւ պատրեմալ : Ապա այնուհետեւ ցանկութիւնն յղացեալ՝ զմեղս ծնանի , եւ

46 մեղքն կատարեալ՝ զմահ ծնանին : Մի՛

47 խարիք , եղբարք իմ սիրելիք . Ձի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի Հօրէն լուսոյ , յորում չիք փոփոխումս եւ կամ չըջկոյ ստուեր :

48 Կամեցեալ ծնաւ զմեղ բանիւն ճշմարտութեան , լինել մեղ ²պտուղ ինչ ստացուածոց նորա :

49 ³Փիտասջիք , եղբարք իմ սիրելիք , եղիցի ամենայն մարգ արագ առ ի լսել , եւ ծանր առ ի խօսել , եւ ծանր առ ի բարկանալ : Ձի բարկութիւն մարգոյ զարգարութիւն Աստուծոյ ոչ զոր :

21 ծէ : Որով ի բաց թօթափեալ զամենայն ազտեղութիւն եւ գյաւելուածս չարեաց , հեղութեամբ ընգունիջիք զբանն ընդարդս , որ կարօղն է կեցուցանել զոգիս ձեր : Լինիջիք առնելիք բանին , եւ մի՛ լսելիք միայն ⁴համարեսիք զանձին : Ձի եթէ ոք լսելի միայն իցէ բանին եւ ոչ առնելի , նման է նա մարդոյ որ պուցեալ հայիցի ընդ ⁵երեսս իւր որ ծնանիցին՝ ի հայելուջ . Ձի հայեցեալ ետես զինքն եւ զանց արար , եւ անդէն մոռացաւ թէ

25 որպիսի ոք էր : Իսկ որ յառեալ ի կատարեալ օրէնս ազատութեանն հայիցի եւ ի նմին կացցէ , ոչ եղև նա լսող մոռացութեան , այլ՝ առնելի զործոյն . նա յառնեն իւրում լիցի երանելի :

26 Եթէ ⁶ոք կամիցի կրօնաւոր լինել եւ ոչ սանձահարիցէ զեղու իւր , այլ ⁷զբաղեցուցանիցէ զսիրտն իւր , այնպիսւոյն վայրապար է կրօնաւորութիւնն : Կրօնաւորութիւն սուրբ եւ

անարատ առ ի յԱստուծոյ եւ ի Հօրէ այս է , Այցելու լինել որոց եւ այրեաց ի նեղութեան իւրեանց , անարատ պանել զանձն յայխարհէ :

ԳԼ Բ

1 ԱԶ. Եղբարք իմ , մի՛ աչառանօք ունիցիք զհաւատսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի , ⁸որ Տէրն է՝ փառաց : Եթէ մտցէ ի ժողովուրդ ձեր այր որ ունիցի մատանի ոսկի եւ հանաղերձս պայծառս , մտանիցէ անդր եւ աղբատ ոք ի հանդերձս աղտեղիս ,

3 Հայիցիք ընդ այն որ ունիցի զհանաղերձսն պայծառս , եւ ասիցէք եթէ Դու նիստ աստ պատուով , եւ ցաղքատն ասիցէք եթէ Յսան կաց զուպոյի , կամ թէ՛ Եկ նիստ առ պատուանդանիս իմում , Ո՛չ լաղճիցէ յանձինս եւ լինիցիք զատաւորք չարացն

5 խորհրդոց , Լուարուք ⁹ինձ , եղբարք իմ սիրելիք . ո՛չ ապաքէն Աստուած ընտրեաց զաղքատս աչխարհիս , որ են մեծատունք հաւատովք , եւ ժառանգաւորք արքայութեանն զոր խոստացաւ սիրելեաց իւրոց : Եւ զուրք անարգէք զաղքատս . ո՛չ մեծատունք յաղթահարեն զձեզ , եւ նոքա քարչեն զձեզ ի զատաստան : Ո՛չ նոքա հայհօյնս զբարւոք անունն որ կոչեցեալ է

8 ի վերայ ձեր : Ապա թէ՛ զօրէնսն կատարիցէք զարքունականս ըստ Գրոց , եթէ՛ Սիրեսցես զընկեր քո իբրեւ

9 զանձն քո , բարւոք առնէք . Իսկ եթէ աչառիցէք , մեղս գործէք յանդիմանեալք յօրինացն իբրեւ օրինազանցք :

10 Որ ոք զամենայն օրէնսն պահիցէ , եւ միով իւրիք ինչ զթիցէ , եղև ամենայն

11 օրինացն պարտապան : Ձի որ ասացն թէ՛ ⁹Մի՛ սպանանիցես , ասաց թէ՛ Եւ մի՛ չնայցես . զի եթէ սպանանիցես ոչ , բայց չնայցես՝ , եղև յանցաւոր

12 օրինացն : Այնպէս խօսեցարուք եւ այնպէս արարէք , որպէս զի ազատութեան օրինօքն իցէք զատկոյն : Ձի անողորմ զատաստան լինելոց է այնմ որ ոչ առնիցէ զողորմութիւն , ¹⁰քանզի

¹Յօւան է Յօն եւ է Հոյ յեռօրաց պատե
²Յօն , երախայրի
³Որտե՛ս , Ուստի
⁴Կա՛մ , խարելով
⁵Յօն , երեսս ծնանիան իւրոյ
⁶Որտե՛ս , ոք ի ձեզ
⁷Յօն , խարիցէ

⁸Ի Յանն պատե
⁹Եւրօտ , Մի՛ չնայցես , ասաց թէ՛ Եւ մի՛ սպանանիցես . զի եթէ չնայցես ոչ , բայց սպանանիցես
¹⁰Ի Յօն յեռօրաց յօւան , և , յայլ՝ պատե

բարձր ի գլուխ պարծի ողորմութիւնս առ դատաստանաւն :

- 14 ԱԵ. Զինչ օգուտ իցէ, եղբարք իմ, եթէ ասիցէ ոք հաւատս ունել եւ դործս ոչ ունիցի. միթէ կարիցիս հաւատքն
- 15 ապրեցողանել զնա : Եթէ եղբայր ոք կամ քոյր իցին մերկք կամ կարօտեալ
- 16 առուրն կերակրոյ, Ասիցէ ոք ի ձէնջ ցնոսս, Երթայք խաղաղութեամբ, ջեռարուք եւ յագեցարուք. եւ տայցէք ոչ նոցա զպէտս մարմնոցն, զինչ օ-
- 17 գուտ իցէ : Սոյնպէս եւ հաւատք եթէ գործս ոչ ունիցին, մեռեալ են առան-
- 18 ձինն : Այլ թերեւս ասիցէ ոք, եթէ՜ Դու հաւատս ունիս, եւ ես գործս ունիմ. ցոյց ինձ զհաւատսն քո առանց գործոց, եւ ես ցուցից քեզ ի գործոց
- 19 իմոց զհաւատսն : Դու հաւատաս զի մի է Աստուած, բարևոք առնես. եւ
- 20 դեւք հաւատան եւ սարսեն : Կամիս գիտել, ով մարդ մտախ, զի հաւատք
- 21 առանց գործոց ¹դատարկ են : Աբրահամ հայր մեր ո՞չ ապաքէն ի գործոց արդարացաւ՝ հանեալ ի սեղան զորդին
- 22 իւր զԻսահակ ²պատարադ : Տեսանէս զի հաւատքն եզեն գործակից գործոց նորա, եւ ի գործոց անտի հաւատքն
- 23 կատարեցան : Եւ կատարեցաւ Գիբն որ ասէ, Հաւատաց Աբրահամ յԱստուած, եւ համարեցաւ նմա յարդարութիւնս. եւ կոչեցաւ բարեկամ Աս-
- 24 տուծոյ : Տեսանէք զի ի գործոց արդարանայ մարդ, եւ ոչ ի հաւատոց
- 25 միայն : Սոյնպէս եւ Բախար պոռնիկ ո՞չ ապաքէն ի գործոց արդարացաւ, ընկալեալ զյրաւսան, եւ ընդ այլ ճա-
- 26 նապարհ արձակեաց : Զոր օրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է, սոյնպէս եւ հաւատք առանց գործոց մեռեալ են :

ԳԼ. Գ

1 ԲԱ. Մի՛ բազում վարդապետս լինել, եղբարք իմ, զիտասջիք զի մեծ դատաստան ընդունելոց հմբ. Իանդի բազում ինչ յանցանեմք ամենեքեան. եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ, նա է մարդ կատարեալ, որ կարօզն է սան-

3 ձահարել զամենայն մարմին իւր : Տես

զի ձիոց սանձս ի բերան զնեմք առ անսալոյ նոցա մեզ, եւ զամենայն մարմինս նոցա նուաճեմք : Ահաւասիկ եւ նաւք որպիսի՛ ինչ են, եւ ի սաստիկ հողմոց վարին. եւ փոքր թեւոյն շրջին յոր կոյս եւ միտք ուղղին կամիցին :

5 Սոյնպէս եւ լեզու փոքր ինչ անդամ է եւ մեծամեծս բարբառի. անա եւ սակաւ ինչ հուր զորպիսի՛ անտասս հրդեհէ : Եւ լեզու հուր՝ ³զարդ անիրաւութեան. լեզու հաստատեալ է յանգամս մեր, որ զամենայն մարմինս ապականէ, եւ վառէ հրով զանի՞ծննդեան, եւ բորբոքեալ տոչորի ⁴ի

7 գեհենի : Ամենայն բնութիւն զազանաց եւ թոչնոց եւ սողնոց եւ որ ի ծովու են, հնազանդեալ է եւ հնազան-

8 զի մարդկեղէն բնութեան. Բայց զլեզու մարդկան ոչ ոք կարէ հնազանդել, զչարն եւ զանկարգ եւ զի թու-

9 նօք մահաբերին : Նովաւ օրհնեմք ⁵դՏէրն եւ զՀայր. եւ նովաւ անիծանեմք զմարդիկ որ ըստ նմանութեան

10 Աստուծոյ արարան : Ի նմին բերանոյ ելանեն օրհնութիւնք եւ անէծք. ոչ է պարտ, եղբարք իմ, այսմ այսպէս լինել :

11 Միթէ աղբւր անզատին ի միոյ

12 ականէ բլխիցէ՞ քաղցր եւ դառն : Միթէ մա՛րթ ինչ իցէ, եղբարք իմ, թղենւոյ ձէթ բերել, կամ որթոյ թուզ, ⁶եւ ոչ աղտաղտին տեղոյ ջուր քաղցր առնել :

13 ԲԲ. Ո՛վ իցէ իմաստուն եւ հանձարեղ ի ձեզ, ցուցցէ ի բարևոք զնացից զգործս իւր հեղութեամբ իմաստութեան :

14 Ապա եթէ նախանձ եւ զանութիւն եւ հակառակութիւն ունիցիք ի սիրտս ձեր, մի՛ պարծիք սուտ

15 առնել զճշմարտութիւնս : Ոչ է իմաստութիւնս այս իջեալ ի վերուստ, այլ

16 երկրաւոր, շնչաւոր եւ զիւրական : Զի ուր հեռ եւ նախանձ, անդ է անկար-

17 զութիւն եւ ամենայն իրք չարք : Իսկ վերին իմաստութիւնն նախ զի սուրբ է, եւ ասյա խաղաղարար, հեղ, զիւրահաւան, լի ողորմութեամբ եւ պտղովք բարեաց, անխիղճ, առանց

³Կ-ժ, աշխարհ
⁴Յ-ն, ի գեհենէ
⁵Ո՛ւն, զԱստուած
⁶Ո՛ւն, նոյնպէս և ոչ իմիք տղերք ջուր քաղցր և աղտաղտին առնել

¹Բազում, մեռեալ ²Ի Յ-նին պատե

18 կեղծաւորութեան : Պտուղ արգարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ՝ որ առնեն զխաղաղութիւն :

Գ. Գ

1 Աւստի՞ պատերազմունք, եւ ուստի՞ կոիւք ի ձեզ . ո՞չ յայդպիսի ցանկութեանց ձերոց որ զօրացեալ են յանդամս ձեր : Յանկայք, եւ ոչ ունիք . սպանանէք եւ նախանձիք, եւ ոչ կարէք հասանել . պատերազմիք, կոտիք, եւ ոչ ունիք, վասն զի ոչ խնդրէք .
3 Խնդրէք եւ ոչ առնուք, վասն զի չարաչար խնդրէք . զի անդէն ի ցանկութիւնս ձեր մաշեցիք : Ենացողք, ո՞չ զիտէք զի սէր աշխարհիս թշնամութիւն է առ Աստուած . զի որ ոք կամիցի սիրել զաշխարհ, թշնամի առնէ զանձն Աստուծոյ : Կամ թէ վայրապա՞ր համարիցիք զոր ասէ Գիւրն, ¹Առ նախանձ ինչ որում փափաքէ հոգին՝ որ
6 քնակեաց ի մեզ . ²Տայ զառաւել չբնորհան՝ . վասն որոյ ասէ, Տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց :

7 ԲԳ. Հնազանդեցարուք այսուհետեւ Աստուծոյ . եւ կացէք հակառակ չարախօսին, եւ ինչի փախտական առ
8 ի ձէնջ : Մերձեցարուք առ Աստուած, եւ մերձեցի առ ձեզ . սրբեցէք զձեռս, մեղաւորք, եւ ուզիղ արարէք զսիրտս, երկմիտք . Տառապեցարուք, սգացարուք եւ լացէք . ծաղր ձեր ի սոզ գարձցի, եւ ուրախութիւն ձեր՝ ի
10 տրտմութիւն : Խոնարհեցարուք առաջի Տեառն եւ բարձրացուցէ զձեզ :
11 Մի՛ բամբասէք զմիմեանս, եղբարք . որ բամբասէ զեղբայր իւր կամ զատի զեղբայր իւր՝ զօրէնսն բամբասէ եւ զօրէնսն զատի . իսկ եթէ զօրէնսն զատիցիս, ոչ առնելի օրինացն ես, այլ
12 զատաւոր : Մի է Օրէնսդիր ³եւ Դատաւոր՝, որ կարօն է փրկել եւ կորուսանել . զու մ՛ ես որ զատիս զքնկերն :
13 Ահաւասիկ են որ ասեն, Այսօր եւ վաղիւ երթիցուք յայս անուն քաղաք, եղիցուք անդ տարի մի, վաճառեցուք

14 եւ շահեցուք . Որք ոչ զիտէք զվա
15 զիւն . Որպիսի՞ ինչ իցեն կեանք ձեր, զի իբրեւ զմըրիկ էք, որ առ սակաւ մի երեւեալ եւ ասոյա ապականեալ . փոխանակ զի ասէիք, Եթէ Տէր կամեսցի, եւ կեցցուք, արասցուք զայս
16 ինչ կամ զայն : Եւ արդ սլարծիք յամբարտաւանութեան ձերում . ամենայն ինչ այսպիսի պարծանք չարութեան
17 են : Որ ոք զիտիցէ զբարին եւ ոչ առնիցէ, մեղք են նմա :

Գ. Ե

1 ԲԳ. Արդ այսուհետեւ, մեծատունք, լացէք եւ ողբացէք ի վերայ թշուառութեանցն, որ զայոց են ի վերայ ձեր :
2 Զի մեծութիւնդ ձեր յոչինչ է, եւ
3 հանդերձք ձեր՝ կերակուր ցեցոյ : Եւ արծաթ ձեր եւ ոսկի ժանդահար, եւ ժանգ նոցա լիցի ձեզ ի վկայութիւն, եւ կերիցէ զամբօմինս ձեր իբրեւ զհօուր .
4 զանձեցէք աւուրցն յետոց : Ահաւասիկ վարձք մշակաց որ զօրձեն զանդս ձեր, ⁴առ ձեզ են,՝ զրկեալն ի ձէնջ, աղաղակէ, եւ բողոք հնձողացն եհաս
5 յականջս Տեառն զօրութեանց : Փափկացայք ի վերայ երկրի եւ զբօսայք, սնուցէք զսիրտս ձեր իբրեւ աւուր
6 սպանման : Զրկեցէք, սպանէք զարգարն, որ ոչ կայ ձեզ հակառակ :
7 Երկայնամիտ լերուք, եղբարք իմ, մինչեւ ի զարուստն Տեառն . ահա մշակ երկայնամտեալ սպասէ պատուական պաղօնս երկրի, մինչեւ ասցէ ⁵զկասնոխ եւ զանագան՝ Երկայնամտեցէք եւ զուք, հաստատեցէք զսիրտս ձեր .
9 զի զայլուստն Տեառն մերձեալ է : Մի՛ ⁶տրտմեցուցանէք զմիմեանս,՝ եղբարք, զի մի՛ զատիցիք . ահաւասիկ Դատաւորն առ զուքս կայ : Օրինակ ասէք, եղբարք, չարչարանաց եւ երկայնմտութեան զմարդարէսն որ խօսեցան
11 յանուն Տեառն : Ահաւասիկ երանեմք համբերողաց . զհամբերութիւնն Յովբայ տարուք, եւ զվատարումն Տեառն տեսէք, զի բաղմագուծ է Տէր եւ ողորմած :

¹Գ. Գ, Առ նախանձ ինչ փափաքէ հոգին . Կամ, Առ նախանձ ինչ փափաքեցէ հոգին
²Գ. Գ, Այլ տայ առաւել շնորհս
³Գ. Գ, Կարօնս

⁴Ի Գ. Ե, Կարօնս
⁵Ի Գ. Ե, զպատուին զկանուխ եւ զանագան . այլ, զանձրեւն զկանուխ եւ զանագան
⁶Գ. Գ, լինիք տրտունջ զմիմեանց

12 ԲԵ. Յառաջ քան զամենայն ինչ, եղբարք իմ, մի՛ երզնուցուք, մի՛ յերկինս, մի՛ յերկիր, մի՛ յայլ ինչ երզուան, այլ եղիցի ձեր այոն՝ այո, եւ ոչնչ՝ ոչ, զի մի՛ ՚ի կեղծաւորութիւնս 13 ինչ՝ անկանխիցիք: Վշտանայցէ՞ ոք ի ձէնջ, յաղօթս կայցէ. բերկրիցի՞ ոք, 14 սաղմոս ասասցէ: Հիւանդանայցէ՞ ոք ի ձէնջ, կոչեսցէ զերեցունս եկեղեցւոյն, եւ արասցեն ի վերայ նորա աղօթս, օծցեն լուղով յանուն Տեառն. 15 Եւ աղօթքն հաւատովք փրկեսցեն զայլսատեալսն, եւ յարուսցէ զնա Տէր. եւ եթէ մեղս ինչ իցէ զործեալ, թողցի 16 նմա: Խոստովան եղերուք միմեանց զմեզս, եւ աղօթս արարէք ի վերայ

միմեանց որպէս զի բժշկեսլիք. քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արգարոյ 17 յօղնականութիւն: Եղիա մարգ էր իբրեւ զմեղ չարչարելի. եւ յաղօթս ²եկաց, եւ ոչ տեղաց յերկիր զերիս 18 ամս եւ զվեց ամիս: Եւ զարձեալ եկաց յաղօթս, եւ ետուն երկինք զանձարեւ, եւ բուսոյց երկիր զպտուղ իւր: 19 Եղբարք իմ, եթէ ոք ի ձէնջ մոլորեսցի ³ի ճանապարհէ ճշմարտութեան, 20 եւ զարձուսցէ ոք զնա, Գիտասցէ զի որ զարձուսցէ զմեղաւորն ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ զոզի ⁴իւր ի մահուանէ եւ ծածկեսցէ զբազմութիւն մեղաց:

ԹՈՒՂԹ
ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՋԻՆ՝

ԳԼՈՒԽ Ա.

1 ԲՁ. ՊԵՏՐՈՍ, առաքեալ Յիսուսի Քրիստոսի, ընտրելոցդ՝ նժդեհից որ ի սիրիւոս Պոստոսղոս, Գաղատացւոյ եւ Կապադոկեացւոյ եւ Ասիացւոյ եւ 2 Բիւթանացւոյ, Ըստ կանոնի դիտութեանն Աստուծոյ Հօր, սրբութեամբ Հոգւոյն, ի հնազանդութիւն եւ ի հեղուան արեանն Յիսուսի Քրիստոսի. շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն բաղմապի: 3 Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ բաբազում սղորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի ի

4 մեռելոց, Յանկոծ եւ յանարատ եւ յանթառամ ժառանգութիւնն որ պահեալ է յերկինս ձեզ, Որ զօրութեամբն Աստուծոյ պահեալ ⁶էիք հաւատովք ի պատրաստեալ փրկութիւնն, յայտնել 6 ի յետին ժամանակս. Որով ուրախ լինիջիք որք այժմ սակաւի ինչ ըստ պատշաճի իրացդ տրտմեալ էք ի պէս- 7 պէս փորձութիւնս. Զի հանդէս ձերոց հաւատոցն ՚առաւել քան զոսկի կորստական պատուական է, որ հրով փորձեալ զտաւ՝ ի գոյութիւն եւ ի փառս եւ ի պատիւ ի յայտնութեանն 8 Յիսուսի Քրիստոսի, Զոր ոչն տեսէք եւ ⁸սիրեցէք, ընդ որ այժմ ոչ հայեցեալք բայց ⁹հաւատացէք, եւ ուրախ էք անձառ եւ փառաւորեալ ինդու- 9 թեամբն. Ընկալեալ զկատարումն

¹ Գլ. 1, ընդ դատաստանաւ
² Գլ. 1, եկաց զի մի՛ տեղացցէ
³ Ո՛րհնէ, ի ճշմարտութեանէ
⁴ Ի Գլ. 1, պատիւն Գլ. 1, նորա
⁵ Ո՛րհնէ, Թուղթ Պետրոսի կաթողիկեայ Առաջին. այլ՝ Թուղթ Պետրոսի Առաքելոյ կաթողիկեայ Առաջին

⁶ Կ. 1, էք
⁷ Գլ. 1, որ առաւել քան զոսկի կորստական, թէպէտեւ հրով փորձեալ, պատուական է, գտանիցի
⁸ Գլ. 1, սիրէք
⁹ Գլ. 1, հաւատացք

հաւատոցն ձերոց՝ զողոտցն փրկու-

10 Թիւն : Վասն որոյ փրկութեան խնդ-
րեցին եւ քննեցին մարգարէքն, որք
վասն որոյ ի ձեզ լինելոց էին շնորհքն՝

11 մարգարէանային : Քննէին յորում եւ
յորպիսի ժամանակի գուշակէր ի նո-
սա Հոգին՝ Քրիստոսի, որ նախ զչար-
շարանացն՝ Քրիստոսի վկայէր, եւ յետ

12 այնորիկ զփառացն : Որոց եւ յայտնե-
ցաւ իսկ զի ոչ եթէ անձանց, այլ մեզ
մատակարարք լինէին նոցին, որք
այժմ պատմեցան այնորեւք որ աւե-
տարանեցինն ձեզ Հոգւովն Սրբով, որ
առաքէրն յերկնից . զոր ցանկային տե-
սանել ՚գոնեայ ընդ ազօս՝ հրեշտակք :

13 Բէ . Որով սնուեալ զմէջս մտաց ձե-
րոց, զուարթացեալք, բովանդակ սպա-
սեցէք հասելոց ձեզ շնորհացն ի յայտ-

14 նութեանն Յիսուսի Քրիստոսի, իբրեւ
զորդին հնազանդութեան, մի՛ կեր-
պարանեալք առաջին ձերովք անգի-

15 տութեանն ցանկութեամբք . Այլ ըստ
Սրբոցն որ կոչեաց զձեզ՝ եւ գուք
սուրբք յամենայն զնացս ՚ձեր լինիջիք :

16 Վասն որոյ զրեալ է եթէ եղերուք

17 սուրբ, զի ես սուրբ եմ : Եւ եթէ Հայր
կոչիցէք զայն որ առանց ակնառու-
թեան զատի ըստ իւրաքանչիւր գոր-
ծոց, ապա երկիւղեւ զձերոյ պանդխ-

18 տութեան ժամանակդ զնասլիք : Գի-
տասլիք զի ոչ ապականացու արծա-
թեղինօք եւ ոսկեղինօքն փրկեցարուք
ի ձերոց ունայնութեան հայրենատուր

19 զնացիցն, Այլ պատուական արեամբն
Քրիստոսի, իբրեւ անրիժ եւ անարատ

20 գառին . Որ յառաջմանօթն էր նախ
քան զիսկղբանէ աշխարհի, եւ երե-
ւեցաւ ի վախճան ժամանակաց վասն

21 ձեր, Որք նովաւ հաւատացէք յԱս-
տուած որ յարոյց զնա ի մեռելոց, եւ
ետ նմա փառս . զի հաւատքն ձեր եւ

22 յոյս իցեն յԱստուած : Ձանձինս ձեր
սրբել հնազանդութեամբ ՚ճշմարտու-
թեան, յեղբայրսրբութեան առանց
կեղծաւորութեան, ի սուրբ սրտէ սի-

23 բել սերտիւ զմիմեանս : Ծնեալք վե-
րըստին ոչ յապականութեան սերմա-
նէն, այլ յանապականացուէն՝ կենդա-
նի եւ մշտնջենական բանին Աստու-

24 ծոյ : Քանզի ամենայն մարմին իբրեւ
զխոտ է, եւ ամենայն փառք մարդոյ
իբրեւ զծաղիկ խոտոյ . խոտն ցամա-

25 քեցաւ եւ ծաղիկն թօթափեցաւ . Եւ
բան Տեառն մնալ յաւիտեան, այսինքն
է բանն որ ի ձեզ աւետարանեցաւ :

ԳԼ Բ

1 ԳԱ . Ի բաց թօթափել այսուհետեւ
զամենայն չարութիւն եւ զամենայն
նենգութիւն եւ զկեղծաւորութիւնս
եւ զնախանձ եւ զամենայն չարախօ-

2 սութիւն, իբրեւ զարդի ծնեալ ման-
կունս խօսուն եւ անխարզախ կա-
թիւնս փափաքիցէք, զի նովաւ աճիցէք

3 ի փրկութիւն, եթէ ճաշակիցէք զի

4 քաղցր է Տէր . Առ որ մատուցեալ,
ի վէմն կենդանի, որ թէպէտ ի մարդ-
կանէ անարդեալ, այլ առ ի յԱստու-

5 ծոյ ընտրեալ եւ պատուական է . Եւ
գուք իբրեւ զվէմն կենդանիս չինիք
տաճար հոգեւոր, յանարատ քահա-

նայութիւն, մատուցանել զնոգեւորն
պատարագս հաճոյս Աստուծոյ ի ձեռն

6 Յիսուսի Քրիստոսի : Քանզի կայ իսկ
ի գրի եթէ Ահաւասիկ զնեմ՝ ի Սիւրբ
վէմ ընտիր, դուրս անկեան պատուա-

կան, եւ որ ի նա հաւատացե՛մ մի՛ ա-

7 մաչեացէ՛ Ձեզ այսուհետեւ հաւատա-

ցելոցդ ՚վէմ պատուական, իսկ անհա-

ւատիցն՝ վէմն զոր անարգեցին չի-

8 նողքն, նա եղեւ զլուս անկեան . Եւ
վէմ զլորման եւ վէմ զայթակղու-

թեան, որ զայթակղին ապստամբեալք

9 ի բանէն յոր եւ եղան : Այլ գուք աղդ
էք ընտիր, ՚Թաղաւորութիւն, քա-

հանայութիւն՝, ազգ սուրբ, ժողո-

վուրդ սեպհական, որպէս զի ՚զձեր
առաքինութիւնսն նուիրիցէք այնմ,
որ՝ զձեզ ի խաւարէն կոչեաց յիւր

10 սքանչելի լոյսն : Որք երբեմն չժողո-

վուրդ, բայց արդ ժողովուրդ Աստու-

ծոյ . որք չողորմեալք, այժմ ողոր-

մութիւն զտէք :

11 Սիրելիք, ապաչեմ իբրեւ զպան-

դուխտս եւ զնժգեհս ի բաց մեթեյ ի
մարմնաւոր ցանկութեանցն որ զին-

12 ուորին ընդդէմ ողոց, Զվարս ձեր

1 ի ցանկն պատե
2 Ուն, ճշմարտութեան ի ձեռն Հոգւոյն

3 ցանկն պատե
4 ցանկն, Թաղաւորական քահանայութիւն
5 ցանկն, ցուցանեցէք զառաքինութիւնս այնու-
րիկ որ

ի մէջ հեթանոսաց պարկեշտս ցուցանել, զի որով բամբաստիցեն զձեզ իբրեւ զչարագործս: Ի բարւոք գործոցն ձերոց զիտեալ՝ փառաւոր առնիցեն զԱստուած յաւուրն այցելութեան:

- 13 ԳԲ. Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն ստեղծուածոյ վասն Տեան, եթէ թագաւորի՝ իբրեւ առաւել ու-
- 14 մեք, եթէ դատաւորաց՝ իբրեւ ի նմանէ առաքելոց ի վրէժիւնգրութիւն չարագործացն եւ ի գովութիւն բարե-
- 15 գործացն: Զի այսպէս են կամք Աստուծոյ, բարեգործացն սպասանձեցուցանել զանգրամ մարդոց զանդիտու-
- 16 թիւն: Իբրեւ զազատս լինել, եւ մի՛ իբրեւ պատրուակ չարութեան ունել զազատութիւնն, այլ իբրեւ Աստուծոյ
- 17 ծառայք: Զամենեսեան պատուեցէք. զեղբայրսիրութիւն սիրեցէք. յԱստուծոյ երկերուք. ¹ զթագաւորս պատուեցէք:
- 18 Ծառայք հնազանդ լինել յամենայնի երկիւղել տերանց, ոչ միայն բարե-
- 19 րացն եւ հեղոցն, այլ եւ կամակորացն: Զի այս՝ շնորհք ² յԱստուծոյ են, եթէ բարւոք ինչ մտօք տանիցի ոք
- 20 վշտաց՝ յանիրաւի: Քանզի զինչ ³ եւրաստիք իցեն, եթէ յորժամ մեղանչիցէք՝ տանջիցիք եւ համբերիցէք. այլ եթէ բարև գործիցէք, չարչարիցիք եւ համբերիցէք, այն շնորհք ⁴ յԱստուծոյ են: Քանզի ի դոցն իսկ կոչեցարուք, զի եւ Քրիստոս վասն ձեր
- 22 ⁵ մեռաւ, եւ ձեզ եթող օրինակ՝ զի զհետ երթացէք հետոց նորա. Որ ոչն արար մեզս եւ ոչ գտաւ նենգութիւն
- 23 ի բերան նորա. Որ բամբաստել, եւ ոչ փոխարէն բամբասէր. չարչարեալ, եւ ոչ սպանէր սպանալիս, բայց ⁶ իրաւամբք մատնէր դատաւորին. Որ զմեր մեզս իւրով մարմնովն վերացոյց ի խաչափայտն, զի լիցուք զերծեալք ի մեղաց անտի, եւ իցեմք արգարութեանն կենակիցք. որոյ վիրօքն բժշկե-
- 25 ցայք: Քանզի էիք իբրեւ զոչխարս

մոլորեալս, այլ այժմ դարձարուք առ Հովիւն եւ Տեսուչ ոգւոց ձերոց:

ԳԼ Գ

- 1 ԳԳ. Սոյնպէս եւ կանայք հնազանդ լինել արանց իւրեանց, զի եթէ իցեն նոքա ապստամբք ի բանէ անտի, յազադս կանանց գնացից եւ առանց բանի
- 2 իսկ շահեսցին, Դիտել երկիւղել զձեր՝
- 3 պարկեշտ գնացս, Որոց լինիցի ոչ արտաքուստ հիւսիւք եւ ոսկեհուռ ծամակալօք կամ պաճուճեալ զգեստուք
- 4 զարդ. Այլ ծածուկ սրտին մարդն անեղծութեամբ հեղութեան եւ հանազարտութեան հոգւոցն, որ է առաջի
- 5 Աստուծոյ բազմապատիկ: Քանզի այսպէս երբեմն եւ ⁸ կանայք որ յուսացեալ էին յԱստուած՝ զարդարէին զանձինս ⁹ հնազանդել իւրեանց արանց: 6 Որպէս եւ Ստու զի հնազանդ էր Աբրահամու, եւ տէր իւր կոչէր զնա, որոյ եղբուքն ուրք որդիք, ¹⁰ Բարեգործք էին եւ ոչ կասկածէին՝ եւ ոչ ի միտջէ ինչ երկիւղէ:
- 7 Սոյնպէս եւ արք իմաստութեամբ բնակեցեն ընդ նոսա, իբրեւ տկար անօթոյ ստնիցեն սրտիւ կանանց, իբրեւ ժառանգակցաց նորհացն կենաց, զի մի՛ խափան լիցին աղօթիցն
- 8 ձերոց: Եւ զլուս ամենայնի՝ զի համամիտք իցէք, համակարիք, եղբայրասէրք, ազնուագութք, խոնարհք:
- 9 Մի՛ չար փոխանակ չարի հատուցանել, կամ բամբասանս ընդ բամբասանաց. այլ զնորին հակառակն օրհնել, զի յայս իսկ կոչեցարուք, զի զօրհնութիւնն ժառանգիցէք:
- 10 ԳԴ. Զի որ կամիցի զկեանս սիրել եւ տեսանել աւուրս բարութեան, լռեցուցէ զեղու իւր ի չարութենէ, եւ զչրթունս իւր ի չխօսելոյ զնեն-
- 11 գութիւն. Խոտորեցի ի չարէ եւ արացէ զբարի, խնդրեցէ զխաղաղու-
- 12 թիւն եւ երթիցէ զհետ նորա: Զի այնք Տեանն ի վերայ արգարոց, եւ ականջք նորա՝ յաղօթս նոցա. երեսք Տեանն

¹ Գ-ն, զթագաւորն
² Գ-ն, են, եթէ իղձիւ առ Աստուած տանիցի որ վշտաց զոր կրեցէ
³ Գ-ն, պարծանք
⁴ Գ-ն, են առ Աստուծոյ
⁵ Ու-ն, չարչարեցաւ
⁶ Գ-ն, յանձն առնէր զանձն որում դատէն իրաւամբք

⁷ Գ-ն, զձեր երկիւղել
⁸ Գ-ն, սուրբ կանայք
⁹ Ա-ն, հնազանդեալ
¹⁰ Գ-ն, եթէ բարեգործք լինիցէք, եւ ոչ կասկածիցէք

13 ի վերայ չարագործաց : Եւ ո՞ իցէ որ չարչարիցէ զձեզ, եթէ զուրբ բարւոյնս
 14 նախանձաւորք լինիցիք : Այլ թէ եւ չարչարիցիք եւս յազազս արդարութեան, երանելի էք . բայց յերկիւզէ նոցա մի՛ երկնչիցիք եւ մի՛ խոսովես-
 15 ջիք : Այլ զՏէր, ¹ զնոյն զՔրիստոս սուրբ առնիջիք ի սիրտս ձեր . սլատրաստ իցէք տալ պատասխանի ամենայնի որ խնդրիցէ զբանն՝ որ է վասն յուսոյն ձերոյ, ² այլ հեղութեամբ եւ
 16 երկիւզիւ . Ունիցիք բարւ քաղցունս, զի որով չարասօսիցեն զձէն՝ ³ յամօթ լիցին որք բամբասեն զձեր բարւոր զնացս ի Քրիստոս : Զի լաւ է բարեգործաց, եթէ կամիցին ըստ Աստուծոյ կամացն չարչարել, քան չարագործացն՝ : Զի եւ Քրիստոս մի անգամ վասն մեզաց ի վերայ մեր ⁵ մեռաւ, արդարն ի վերայ անարդարոց, զի զմեզ մերձեցուցէ առ Աստուած . զի թէ պէտեւ մեռաւ մարմնով, այլ կենդանի է հոգևով . Որով եւ ոգւոցն որ էին ի բանտին՝ երթեալ քարոզեաց .
 20 Երբեմն ապստամբելոցն, յորժամ ներէր նոցա Աստուծոյ երկայնատութիւնն յաւուրս Նոյի յորս տապանն կազմէր, ⁶ յորս նուազունք, այսինքն ոգիք իբրեւ ութ, ապրեցան ի ջրոյն .
 21 Որ եւ ⁷ զձեզ ըստ նմին օրինակի կեցուցէ մկրտութիւնն, (ոչ զմարմնոյ ազան ի բաց ընկենուլ, այլ զբարւոր մտաց հանդէս առ Աստուած) ի ձեռն
 22 յարութեան Յիսուսի Քրիստոսի . Որ է ընդ աջմէ Աստուծոյ, երթեալ յերկինս, ի հնազանդել նմա հրեշտակաց եւ իշխանութեանց եւ զօրութեանց :

ԳԼ. Դ

1 ԳԵ. ⁸ Քրիստոսի չարչարելն՝ մարմնով վասն մեր, եւ զուրք ի նոյն միտս վանեցարուք . զի որ չարչարի մարմնով, ² գազարէ ի մեղաց . Զի մի՛ եւս ըստ

¹ Ո՛հ, զԱստուած :
² Զ՛հ, զաշուիտ :
³ Ո՛հ, յաւելու, իբրեւ զչարագործս
⁴ Զ՛ն, լաւ է բարիս գործեալ, եթէ կամք իցեն Աստուծոյ, չարչարել, քան չար գործեալ
⁵ Երկուս, չարչարեցաւ
⁶ Զ՛ն, յորում
⁷ Ո՛հ, զմեզ այժմ
⁸ Կ՛մ, եւ զի Քրիստոս չարչարեցաւ

մարդկան ցանկութեանց, այլ ըստ կամացն Աստուծոյ ⁹ կեցցէ գայլ եւս
 3 ժամանակն : Բանգի ¹⁰ բաւական է անցեալ ժամանակն՝ լինելոյ կամացն հեթանոսաց, ¹¹ որք գնային՝ զիջութեամբք, ցանկութեամբք, գինեհարութեամբք, անտակութեամբք, արբեցութեամբք, անօրէն կոտորատութեամբք : ¹² Որով օտարացեալք՝ ոչ ընդ ձեզ վարին՝ ի նոյն անկարգութեան զեզխութիւն, եւ հայոցն : Որ տացեն պատասխանի այնո՛ր որ ի պատրաստին ունի զատել զկենդանիս եւ
 6 զմեռեալս : Զի ի սոյն իսկ եւ մտելոց խոտացեալ է, զի զատեսցին ըստ մարդկան մարմնով եւ կենդանի լիցին ըստ Աստուծոյ հոգևով :
 7 Ամենեցուն վախճան մերձեալ է . զպատացարուք այսուհետեւ եւ լեւ
 8 ըուրք զուարթունք յազօթս : Նախ քան զամենայն սէր սերտ ունել ընդ միմեանս . զի սէր ծածկէ զբազմութիւն
 9 մեղաց : Օտարասէրք լինել ընդ միմեանս առանց տրանջելոյ : Իւրաքանչիւր ոք որպէս եւ ընկալաւ շնորհս ինչ, ի միմեանս զնոյն մատակարարել իբրեւ զբարւորք հազարապետս այէսպէս
 11 շնորհացն Աստուծոյ : Եթէ ոք խօսիցի, իբրեւ զԱստուծոյ պատգամս . եթէ ոք մատակարարիցէ, իբրեւ ի զօրութենէ զոր շնորհէ Աստուած, զի յամենայնի փառաւորեսցի Աստուած ի ձեռն Յիսուսի Քրիստոսի . որում փառք եւ զօրութիւն յաւիտեանս յաւիտենից : Ամէն :
 12 ԳԶ. Սիրելիք, մի՛ օտարոտի համարել զեռանգն ինչ որ ի փորձութիւն ձեզ լինիցի, որպէս թէ օտար ինչ իրք
 13 ձեզ զիպիցին . Այլ իբրեւ հազորդեալք Քրիստոսի չարչարանացն ուրախ լինիջիք, զի եւ ի յայտնութեան փառաց
 14 նորա ցնծացեալք բերկրեսջիք : Իսկ եթէ նախատիցիք եւս վասն փառեանն Քրիստոսի, երանելի էք . զի փառացն ² եւ զօրութեանն ¹³ անուն եւ Աստուծոյ

⁹ Զ՛ն, կեցցէ ի մարմնի
¹⁰ Ո՛հ, բաւական է մեզ անցեալ ժամանակն կենաց
¹¹ Կ՛մ, որ գնայաք
¹² Զ՛ն, Զայն իմն օտարոտի համարին զի ոչ վարիք ընդ նոսա
¹³ Ի ց՛նիս զաշուիտ

15 Հոգին ի վերայ ձեր հանգուցեալ է՝ Մի՛
 ոք ի ձէնջ չարչարեցի իբրեւ զսպա-
 նող, կամ իբրեւ զգող, կամ իբրեւ
 զչարագործ, կամ իբրեւ զօտարատե-
 16 սուչ: Ապա եթէ իբրեւ զբրիտոնեայ՝
 մի՛ ամաչեսցէ, այլ փառաւոր առնիցէ
 17 զԱստուած ՝անուամբս այսուիկ՝: Զի
 ժամանակ է սկիզբն լինելոյ դատաս-
 տանին ի տանէն Աստուծոյ. զի եթէ
 նախ ի մէնջ, իսկ զի՛նչ կատարած իցէ
 այնոցիկ որ ոչ հաւանեցան Աստուծոյ
 18 աւետարանին: Եւ եթէ արդարն հա-
 զիւ կեցցէ, իսկ ամբարիշտն եւ մե-
 19 շարուն ո՞ւր գտանիցի: Որպէս զի որ
 չարչարիցին ըստ Աստուծոյ կամացն՝
 հաւատարիմ Հասաչին աւանդեսցեն
 զիւրեանց ոգիս բարերարութեամբք:


ԳԼ Ե

1 ԳԵ. Զերիցունս այսուհետեւ աղա-
 չեմ, իբրեւ զերիցակից եւ վկայ չար-
 չարանացն Քրիստոսի, որ եւ հանդեր-
 2 ձեալ փառացն յայտնելոյ հաղորդ. Ա-
 րածեցէք՝ որ ի ձեզ հօտ է Աստուծոյ,
 վերակացու լինել մի՛ իբրեւ ազամայ,
 այլ կամաւ ՝ ըստ Աստուծոյ՝. մի՛ զօ-
 չաքաղութեամբ, այլ յօժարութեամբ:
 3 Մի՛ իբրեւ արիւրով վիճակացն, այլ
 4 լինել օրինակ հօտին: Զի յերեւել Հով-
 ոււապետին ընդունիջիք զանթառամ
 փառաց պսակն:
 5 Սոյնպէս եւ, երիտասարդք, հնա-

զանդ լերուք ծերոց. ամենեքին ընդ
 միմեանս զխոնարհութիւն ունիցիք.
 զի Աստուած ամբարտաւանից հակա-
 6 խոնարհեցարուք ընդ հօր ձեռամբն
 Աստուծոյ, զի զձեզ բարձրացուցէ
 7 ի ժամանակի: Զամենայն հոգս ձեր
 ընկեցէք ի նա, զի նա է որ հոգայ
 վասն ձեր:
 8 ԴԱ. Արթուն լերուք, հսկեցէք, զի
 ոտին ձեր Սատանայ իբրեւ զառեւծ
 գոչէ, չըջի եւ խնդրէ թէ զո՛՛ կլանիցէ:
 9 Որում ի դիմի հարկանիցիք հաստա-
 տեալք հաւատովք. զիտասջիք զնոյն
 անցս չարչարանաց եղբայրութեան ձե-
 10 րոյ յաշխարհի յանձինս կատարեալ:
 Եւ Աստուած ամենայն չնորհաց որ
 կոչեաց ՝ զձեզ յիւր ի յաւիտենական
 ի փառսն Քրիստոսիւ Յիսուսիւ, ո-
 րում փոքր մի եղերուք չարչարակիցք,
 նա կաղզուրեցուցէ, կարողացուցէ,
 11 հաստահինս ՝ արասցէ: Նմա իշխանու-
 թիւն եւ փառք յաւիտեանս: Ամէն:
 12 Ի ձեռն Սիղուանոսի հաւատարիմ
 եղբօր, որպէս կարծեմ, փոքր ի շատէ
 դրեցի ձեզ՝ միսիթարել եւ ի վերայ սո-
 րին վկայել, զի եւ այս ճշմարիտ
 չնորհք յԱստուծոյ են յոր հաստատեալ
 13 կայցէք: Ողջոյն տայ ձեզ որ ի Բաբե-
 լոն ընտրելակիցն ՝ եկեղեցի է, եւ
 14 Մարկոս որդի իմ, Ողջոյն սաջիք մի-
 մեանց ի համբոյր ՝ սրբութեան: Խա-
 զաղութիւն ընդ ձեզ ամենեւեան, որ
 էք ի Քրիստոս Յիսուս: Ամէն:

¹ Ունչ, յաւիտեն, թէպէտ եւ ի նոցանէ հայհոյի,
 այլ ի ձէնջ փառաւորի
² Ունչ, յայսմ մասին
³ Յ. 22, Զերիցունս որ ի ձեզ
⁴ Յ. 12, պատի

⁵ Ունչ, զձեզ
⁶ Ունչ, արասցէ զձեզ
⁷ Ի Բաւաթի պատի
⁸ Յ. 22, սիրոյ



ԹՈՒՂԹ

ՊԵՏՐՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա

ԴԲ. ՇՄԱԽՈՆ Պետրոս, ծառայ եւ առաքեալ Յիսուսի Քրիստոսի, որոց հանդիտապատիւ մեզ հասէքդ հաւատոց յարգարութիւն Աստուծոյ մերոց եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի .

2 Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն բազմասցի զիտութեամբն Աստուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ .

3 Որպէս ամենայն ինչ մեզ իւրոյ ատուածեղէն զօրութեանն առ ի կեանս եւ յաստուածայաշտութիւն շնորհեալ ի ձեռն զիտութեան այնորիկ, որ կոչեացն զմեզ յիւր ի փառսն եւ ի վայելութիւն՝. Որովք մեծամեծքն եւ պատուական աւետիք պարգեւեալ են թեանն լինիցիք հաղորդակիցք, փախուցեալք ի ցանկութեանց աշխարհիս 5 եւ յապականութեանց՝. Եւ ոմին այսմիկ զամենայն փոյթ ի մէջ առեալ ձերովքն հաւատովք մատակարարեսցիք զառաքինութիւն, եւ առաքինութեամբն զղիտութիւն, Եւ զիտութեամբն զժողովակալութիւն, եւ ժողովակալութեամբն զհամբերութիւն, եւ համբերութեամբն զաստուածայաշտութիւն, Եւ աստուածայաշտութեամբն զեղբայրսիրութիւն, եւ եղբայրսիրութեամբն զաւեր, Զայսոսիկ ձեր յանձին կայեալ եւ ի սոյն յաճախեալ՝ ոչ դատարկս եւ անպատուզս հաստատիցեն զձեզ ի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զիտութիւնն . Իսկ յոր ոչն իցեն սոքա մերձ՝ կայր է եւ զաչացու . ի

մոռացոնս զարձուցեալ զսրբութիւն 10 առաջնոց իւրոցն յանցանաց . Վասն որոյ, եղբարք, առաւել փութասցիք զի ՚բարեացն գործովք՝ հաստատուն զձեր կոչումնն եւ զընտրութիւն պահեցէք . զայս արարեալ ոչ երբեք յանցանիցէք . Զի այսպէս առատապէս 11 շնորհեսցի ձեզ մուտ ի յաւիտենական արքայութիւն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի .

12 ԴԳ. Որով պատրաստ իցեմ միշտ ձեզ յիշեցուցանել վասն սոցին, առաւել եւս՝ զիտակացն եւ հաստատելոցն եկեալ հասեալ ճշմարտութեանն . Քանզի իրաւունս համարիմ, մինչդեռ եմ ի մարմնի աստ, զարթուցանել զձեզ յիշատակօք . Գիտեմ թէ վաղվազակի է լինելոց մերկանալ յինէն մարմնոյս, որպէս եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս 13 եցոյց ինձ . Եւ փութամ ձեպիմ միշտ զձեզ յորդորել, զի եւ յետ իմոյ եւ յանելոյ յաշխարհէս առնիցէք զյիշատակս այսոցիկ . Քանզի ոչ եթէ պաճուծեալ ինչ առասպելաց զհետ երթեալ ցուցաք ձեզ զՏեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զզօրութիւն եւ զզայուսան, այլ մեղէն եղեալ ականատեսք նորա 14 մեծութեանն . Քանզի առեալ յԱստուծոյ Հօրէ զփառս եւ զպաաիւ, յեկեալ յայնպիսի բարբառոյ ի մեծվախելութեան փառաց անտի, եթէ Գա է Որդի իմ սիրելի ընդ որ ես հաճեցայ . Եւ զայս բարբառ մեք իսկ լուար եկեալ յերկնից սր ընդ նմա իսկ էաք ի սուրբ 15 յերինն . Եւ ունիմք հաստատադոցն զբանն մարգարէական, սրում եթէ անսայցէք, բարեոք առնէք, իրբեւ ճրաղի որ տայցէ լոյս ի խաւարչտին

1 ի բազմա գլխոսի
 2 Ոմն, փառք եւ զօրութեամբ
 3 Ոմն, յապականութեանն որ յաշխարհի ցանկութեամբ

4 ի Յաննի գլխոսի

տեղուով, մինչեւ տիւն լուսաւորեացէ
 եւ արուսեակն ծագեացէ ի սիրտս ձեր :
 20 ԳԴ. Բայց նախ այսմ զիտակ լինի-
 ջիք, զի ամենայն մարդարեւթիւն
 21 Լուրոց զրոց լուծուան ոչ ունի : Բանդի
 ոչ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ
 մարդարեւթիւն երբեք, այլ ի Հող-
 ւոյն Սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկ
 յԱստուծոյ :

ԳԼ. Բ

1 Լինէին եւ սուտ մարդարեւք ի ժողո-
 վրդեանն, որպէս եւ այժմ ի ձեզ լինի-
 ցին սուտ վարդապետք, որք սպրդեալ
 մուծանեն հերձուածս կորստեան, եւ
 2 Զոր Տէր զնեաց զնոսա՝ ուրացեալ, ա-
 ծին ի վերայ անձանց զարագահասն կո-
 2 բուստ : Եւ բազումք անկեալ երթիցեն
 զհետ նոցա անառակութեանցն, վասն
 որոյ ճշմարտութեանն ճանապարհ
 3 հայհոյիցի : Եւ ազահուլթեամբ մոտ-
 ցածին բանիւք առնիցեն զձեզ լիտա-
 րանդիս . որոց դատաստանն ի բնէ
 ոչ դատարկանայ, եւ կսրուսան նոցա
 ոչ նիրհէ :

4 Զի եթէ ի հրեշտակն յանցուցեալս
 Աստուած ոչ խնայեաց, այլ խաւարին
 կասպանօք արկեալ ի տարտարոսն՝ եւ
 5 պահել ի դատաստան . նա՛ եւ ոչ ի
 սկզբանն աշխարհի խնայեաց . բայց
 զութերորդն զնոյ, զարդարութեանն
 քարոզ, պահեաց ի ջրհեղեղէ աշխարհի
 6 ամբարշտեղոցն ամեալ, եւ զբազաքս
 Սողոմոնացոցն եւ Գոմորացոց զար-
 ձուցեալ յաճիւն՝ դատեցաւ, օրինակ
 առ յապայ ամբարշտեղոցն կացուցա-
 7 նէր : Եւ զարդարն զՂովոս ձանձրա-
 ցեալ յանկարգ զիջութեան զնացից՝
 8 փրկեաց . Բանդի ապանատես եւ ա-
 կանջարուր արդարոս բնակեալ ի մէջ
 նոցա, օր ըստ օրէ զիւր սուրբ ողիմն
 նոցա անօրէն զնացիւքն տանջէր :

9 ԳԵ. Գիտէ Տէր զաստուածապաշտս
 փրկել ի փորձութենէ, եւ զանիրաւս
 պահել ի տանջանս աւուրն դատաս-
 10 տանի : Մանաւանդ որ զհետ մարմնոյ
 պղծակից ցանկութեանց իցեն երթեալ
 արհամարհողք տէրութեանն, ժպիրհք,
 յանդուներ, չզանդիտեն զփասն հայ-
 11 հոյել : Ուր հրեշտակք զօրութեամբ

եւ կարողութեամբ քան զնոսա մե-
 ծամե՞ք չածեն զնոքօք ի Տեառնէ
 12 զհայհոյութեանն դատաստան : Այլ սո-
 քա իբրեւ զանխօս անասունս ըստ
 բնածին բարուցն յեղծունն եւ յապա-
 կանութիւն, որոց չենն զիտակ՝ հայ-
 հոյեն, յապականութեան իւրեանց՝³ եւ
 13 ապականեցին, Տանջեալք որ վար-
 ձուցն՝ անիրաւութեան . որ ցանկու-
 թիւն զաւուրն փափկութիւն համա-
 րին . բժկանք, արատաւորք, փափ-
 կացեալք ի պատիրս իւրեանց՝ լիեալ
 14 ձեզ խրախճանակիցք . Աչս ունին հան-
 դոյնս սյունկաց, անդադալս ի մեղաց,
 պատրեն զանձինս յողորդաց . որ ու-
 նին սիրս հարեալ զազահութեան ,
 15 մանկուներ անիծից : Թողեալ զուղորդ
 ճանապարհն՝ մոլորեցան, զհետ երթեալ
 ճանապարհին Բաղամայ Բէռօրեան՝
 4 զվարձս անիրաւութեան սիրեցին :
 16 Որ կշտամբանս իւրոյ անօրէնութեանն
 5 ստացաւ զէչն անխօսուն . մարդկե-
 ղէն՝ բարբառո՞ղք բարբառեալ արդեւ
 17 զմարդարեւք զանօրէնութիւնն : Այս-
 պիսիքն են աղբուրք անջրդիք եւ մէգք
 վարեալք ի մրրիէ, որոց աղջամուղջք
 խաւարին յաւիտեան պահեալ կան :
 18 Քանզի մեծաբանս մոտեաց բարբառ-
 եալ պատրեն զիջութեամբք, ցանկու-
 թեամբք մարմնոյ զայնոսիկ՝ որ ստոյգն
 19 իախչիցին յայնօրէնէ՝ որ ի մոլորուն
 թեանն չըջիցին . նոցա ազատութիւն
 խոստանան, եւ ինքեանք ապականու-
 թեանն ծառայք են . զի որով իւրք եւ
 20 յաղթիցի ոք, նորին եւ ծառայ է : Զի
 եթէ փախուցեալք ի պղծութեանց աշ-
 խարհի՝ զիտութեամբ Տեառն մերոյ եւ
 Փրկչին Յիսուսի Քրիստոսի, եւ դար-
 ձեալ ընդ նոցն չաղեալք պատիցին,
 եղեւ նոցա վախճանն չար քան զա-
 21 ոռայնն : Զի լաւ էր նոցա եթէ բնաւ
 իսկ չէր ծանուցեալ զարդարութեանն
 ճանապարհ, քան, զի ծանեան եւ յետս
 կացին ի սուրբ պատուիրանէն որ նո-
 22 ցա աւանդեցաւ : Եկեալ ի զէպ նոցա
 ճշմարիտ առակին զգծութեան, եթէ
 Շուն դառնայ անդրէն ի փխսած իւր,
 եւ խոզ լուացեալ ընդ տիղմ թաւալեալ :

զնեացն զնոսա զՏէրն ³Բաղամայ, ապականեցին,
 (13) Ընկալեալք վարձս ⁴Բաղամայ, որ զվարձս
 անիրաւութեան սիրեալք ⁵Գ. Եւ, ստացաւ. էչն
 անխօսուն մարդկեղէն ⁶Գ. Եւ, զանմտութիւնն

¹Ուր, մարդիկ սուրբք Աստուծոյ ²Գ. Եւ, որ

ԳԼ. Գ

1 ԴԶ. Չայս ¹ձեզ, սիրելիք, երկրորդ
 թուղթ գրեմ, որով զարթուցից ի յի-
 2 շատակ զհաստատուն միտս ձեր, Յի-
 շել զյառաջագոյն ասացեալ պատգամն
 ի սրբոց մարգարէից եւ յասարերոցն
 3 Իայց զայս նախ զիտասջիք, զի յա-
 ռուրս յետինս եկեացեն արհամարհողք,
 4 կուլեանցն գնայցեն. Եւ ասիցեն,
 Ո՛ւր են աւետիք զարտեան նորա.
 5 զի յորմէ հետէ հարքն ննջեցին, ամե-
 նայն ինչ նոյնպէս կայ մնաց ի սկզբանէ
 6 արարածոց: Եւ զայն մտապահել իցէ
 նոցա, որք զայսն կամին, եթէ եր-
 7 կինք եղեն ի սկզբանէ, եւ երկիր ի
 ջրոց եւ ²Չուրք հաստատեալ կան բա-
 8 նիւն Աստուծոյ. Վասն որոյ երբեմն
 աշխարհ ջրեցեղաւ ապականեալ կոր-
 9 եաւ: Եւ այժմ երկինք եւ երկիր նո-
 10 վին բանիւ գանձեալ են, հրոյ պահ-
 եալք յօրն զատաստանի եւ կորստեան
 11 ամբարիշտ մարզկան: Եւ այս եւս մի՛
 լիցի ի ձէնջ ծածկեալ, սիրելիք, զի
 մի օր Տեառն իբրեւ զհազար ամ է,
 12 եւ հազար ամ՝ իբրեւ զմի օր: Ոչ յա-
 մեցուսցէ Տէր զաւետիան, որպէս ու-
 13 մանք յամբ համարին, այլ երկայնա-
 միտ լինի առ ³ձեզ. քանզի ոչ կամի
 եթէ ոք կորիցէ, այլ զամենեցուն հա-
 սանել յապաշխարութիւն:


14 ԴԷ. Այլ եկեացէ օր Տեառն իբրեւ
 15 զզոռ, յորում երկինք տազնասպաւ

անցցեն, եւ բնութիւնք հրով կրկեալ
 լուծցին, եւ երկիր եւ որ միանգամ
 16 ի նմա գործք ⁵գտանիցին: Եւ ի լու-
 ծանել այսպէս այսր ամենայնի, որ-
 պիտի՞ ինչ պարտ իցէ ձեզ գտանել,
 17 այլ սուրբ եւ աստուածադաշտ կար-
 զաւ ահն ունել Եւ փութալ հասանել
 զարտեան աւուրն Տեառն. յորում
 երկինք հրայրեացք լուծանիցին, եւ
 18 բնութիւնք հրգեհեալ հալիցին: Նորոյ
 երկինից եւ նորոյ երկրի ըստ աւետ-
 եացն հայեցեալ սպասեմք, յորս ար-
 զարութիւնն բնակէ:

19 Վասն որոյ, սիրելիք, այսոցիկ
 սպասեալ, փոյթ յանձին ունիջիք ան-
 20 լիծք եւ անարատք գտանել նմա՝ ի
 խաղաղութիւն. Եւ զՏեառն երկայն-
 մտութիւնն փրկութիւն համարեալիք.
 21 զոր օրինակ եւ սիրելի եղբայրն մեր
 Պաւղոս ըստ շնորհելոյ իմաստութեանն
 22 նմա ⁶Աստուծոյ զրեաց ձեզ. Որպէս
 եւ յամենայն իսկ թուղթսն խօսի վասն
 այսոցիկ. յորս գտանի ինչ ինչ զժուա-
 23 րիմաց, զոր անուամունքն եւ յող-
 փոզքն կամակորեն, որպէս եւ զա-
 մենայն իսկ զիրս առ իւրեանց ան-
 24 ձանցն կորուստ: Դուք այսուհետեւ,
 սիրելիք, իբրեւ զկանխադէտս զյու-
 շասջիք, զի մի՛ անատակ մուրու-
 25 թեամբն զգածեալք՝ անկանիջիք ⁷յաս-
 տեաց հաստատութեանն՝, Աձեցէք
 շնորհօք եւ զիտութեամբն Տեառն մե-
 26 րոյ եւ Փրկչին Յիսուսի Բրիստոսի.
 27 Նմա փառք եւ այժմ եւ յօրն յաւիտե-
 սից: Ամէն:


¹Յայն, ձեզ այժմ ⁴Ունեւ, զզոռ է գիշերի

⁵Ունեւ, սյրեացին
⁶Ի Յայնիս պիտի
⁷Յայն, յանձանց հաստատութեանէ



ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՋԻՆ՝



ԳԼՈՒԽ Ա

1 ԵՍ. Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուաքն, որում ականատեսն իսկ եղեաք, ընդ որ հայեցաքն, եւ ձեռք մեր շօշափեցին

2 ի վերայ Բանին կենաց. (եւ կեանքն յայտնեցան, եւ տեսաք եւ վկայեմք եւ պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն, որ էրն առ Հօր եւ երեւեցաւ

3 մեզ.) Զոր տեսաքն եւ լուաք, պատմեմք եւ ձեզ, զի եւ զուք հաղորդութիւն ունիցիք ընդ մեզ, եւ մեր հաղորդութիւնն ընդ Հօր եւ ընդ Որդւոյ իւրում Յիսուսի Քրիստոսի:

4 Եւ զայս զրեմք ձեզ, զի ձեր ուրախութիւնն կատարեալ իցէ:

5 Եւ այս են աւետիք զոր լուաք առ ի նմանէ եւ պատմեմք ձեզ, զի Աստուած լոյս է, եւ խաւար ի նմա չիք

6 եւ ոչ մի: Եթէ ասիցեմք եթէ Հաղորդութիւն ունիմք ընդ նմա եւ ի խաւարի չըջիցիմք, ստեմք եւ ոչ առնեմք

7 զճշմարտութիւնն: Իսկ եթէ ընդ լոյս գնայցեմք, որպէս նա ի լոյս է, հաղորդութիւն ունիմք ընդ միմեանս, եւ արիւնն Յիսուսի Որդւոյ նորա սրբէ

8 զմեզ յամենայն մեղաց: Եթէ ասիցեմք եթէ Մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք, եւ ճշմարտութիւն ի մեզ

9 ոչ գոյ: Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեզս մեր, հաւատարիմ է նա եւ արգար առ ի թողուլ մեզ զմեզս մեր, եւ սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ:

10 Եւ. Եթէ ասիցեմք, եթէ Ոչինչ մեզաք, սուտ առնեմք զնա, եւ բանն նորա ոչ է ի մեզ:

ԳԼ. Բ

1 Որդեակք իմ, զայս զրեմ ձեզ զի մի՛ մեղիցէք. եւ եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Աստուած զՅիսուս Քրիստոս, զարդարն ³եւ զանարատ՝. Եւ նա է քաւութիւն մեղաց մերոց, եւ ոչ եթէ մերոցն միայն, այլ եւ ամենայն աշխարհի:

2 Եւ յայսմիկ զիտեմք եթէ ծանեաք զնա, եթէ զպատուիրանս նորա պա-

3 հիցեմք: Որ ասիցէ եթէ Ծանեայ զնա, եւ զպատուիրանս նորա ոչ պահիցէ, սուտ է եւ ճշմարտութիւն ի նմա ոչ

4 գոյ: Իսկ որ պահէ զբանս նորա, արգարեւ ի նմա կատարեալ է սէրն Աստուծոյ. այսուիկ ճանաչեմք եթէ ի

5 նմա եմք: Որ ասիցէ ի նմա բնակել՝ այնպէս պարտի զնալ, որպէս եւ նայն գնաց:

6 ԵՊ. ⁴Սիրելիք, ոչ եթէ նոր ինչ պատուիրան զրեմ ձեզ, այլ զին պատուիրանն զոր ի սկզբանէ ունէիք. եւ հին պատուիրան բանն է զոր ⁵լուա-

7 բուք: Դարձեալ նոր պատուիրան զրեմ ձեզ որ է ճշմարտիւ ի նմա եւ ի ձեզ. զի խաւարն անցանէ, եւ լոյսն

8 ճշմարտ արդէն իսկ երեւի: Որ ասէ եթէ ի լոյսն իցէ եւ զեղբայր իւր ա-

9 տիցէ, ⁶սուտ է եւ՝ ի խաւարի է տա-

10 կաւին: Որ սիրէ զեղբայր իւր՝ ի լոյս բնակէ, եւ զայթակղութիւն ի նմա

11 չիք. Իսկ որ ատեայ զեղբայր իւր՝ ի խաւարի է, եւ ընդ խաւար չըջի, եւ ոչ զիտէ յո երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նորա:

¹Ունի, Թուղթ Յովհաննու Կաթողիկեայ Առաջին. այլ, Թուղթ Յովհաննու Առաքելոյ Կաթողիկեայ Առաջին
²Ունի, Յիսուսի Քրիստոսի

³Ի Յաննի պատմէ
⁴Ունի, Եղբայր
⁵Ունի, լուարուք ի սկզբանէ
⁶Ի Բաւստի պատմէ

12 Գրեմ ձեզ, որդեակք, զի թողեալ են ձեզ մեղքն ձեր վասն անուան նո-
 13 րա: Գրեմ ձեզ, հարք, զի ծանեայք զուրբ զայն որ ի սկզբանէն է: Գրեմ ձեզ, երիտասարդք, զի յաղթեցէք ձեզ, ի սկզբանէն է: Գրեցի ձեզ, զի ծանեայք զուրբ զՀայրն: Գրեցի ձեզ, հարք, զի ծանեայք զուրբ զայն որ ի սկզբանէն է: Գրեցի ձեզ, երիտասարդք, զի էք զուրբ հղորացեալք, եւ բանն Աստուծոյ ի ձեզ բնակէ, եւ
 15 յաղթեցէք զուրբ չարին: Մի՛ սիրէք զայշխարհս, եւ մի՛ որ ինչ յաշխարհի
 16 է: Եթէ ոք սիրէ զայշխարհ, ոչ է ի նմա սէր Հօր, զի ամենայն որ ինչ յաշխարհի է՝ ցանկութիւն է մարմնոյ եւ ցանկութիւն է աշաց եւ ամբարտաւանութիւն աստի կենացս, ոք չէ առ ի Հօրէ, այլ յաշխարհէ աստի է:
 17 Ե՛ւ աշխարհս անցանէ եւ զցանկութիւնն, իսկ որ առնէ զկամս Աստուծոյ՝ մնայ յաւիտեանս:
 18 Ե՛ր. Որդեակք, յետին ժամանակ է, եւ որպէս լուարուք եթէ նեոն զալոց է, եւ արդէն իսկ նեոինք բազումք եկեալ են, որով մարթեմք իմանալ
 19 եթէ յետին ժամանակ է: Առ ի մէջ ելին, այլ ոչ էին ի մէջ. զի եթէ ի մէջ էին, ապա առ մեզ մնային. այլ զի յայտնի լինիցին եթէ ոչ էին ամենքեանս նոքա ի մէջ: Եւ զուրբ օծութիւն ունիւք առ ի Սբբոյն, եւ զի-
 21 տէք Յամենեկին: Ոչ գրեցի ձեզ եթէ ոչ զիտէք զճշմարտութիւնն, այլ թէ զիտէք զնա եւ թէ՛ զի ամենայն ստու-
 22 թիւն ոչ է ի ճշմարտութենէ անտի: Իսկ ո՞րպէս սուտ, եթէ ոչ՝ որ ուրա-
 23 նայ եթէ Յիսուս չէ Քրիստոսն. նա իսկ է նեոն, որ ուրանայ զՀայր եւ
 24 զՈրդի: Ամենայն որ ուրանայ զՈրդի՝ եւ ոչ զՀայր ընդունի. զիսկ որ խոստովանի զՈրդի՝ նա եւ զՀայր ընդուն-
 25 չի: Ի՞նչ գործ զոր ստարուքն ի սկզբանէ՝ ի ձեզ բնակեցէ. զի եթէ ի ձեզ բնակեցէ զոր ի սկզբանէն լուարուք, եւ զուրբ յՈրդի եւ ի Հայր բնակեցէք:
 25 Եւ այս են աւետիքն զոր աւետարանեաց նա մեզ, զկեանսն յաւիտեանա-
 կանս:

26 Ե՛ւ. Զայս գրեցի ձեզ, զի մի՛ ոք զձեզ մոլորեցուցանիցէ: Եւ զուրբ օծութիւնն զոր ընկալարուք ի նմանէ՝ բնակեցէ ի ձեզ. եւ չէ ինչ պիտոյ եթէ ոք զձեզ ուսուցէ, այլ որպէս զի նորա օծութիւնն ուսուցանիցէ՝ զձեզ վասն ամենայնի, եւ ճշմարիտ է եւ չէ սուտ. եւ որպէս ուսոյցն զձեզ, կայք ի նմա:
 28 Եւ այժմ, որդեակք, կացէք ի նմին, զի եթէ յայտնեցի, ունիցիւք համարձակութիւն, եւ մի՛ ամաչեացուք ի նմանէ ի զայստեանս նորա: Զի եթէ զիտեցէք եթէ արգար է նա, իմասջիք եթէ ամենայն որ առնէ զարգարու-
 29 թիւն՝ առ ի նմանէ է ծնեալ:

ԳԼ. Գ

1 Տեսէք, որպիսի՛ սէր չնորհեաց մեզ Հայր, զի որդիք Աստուծոյ կոչեցուք մեք. վասն այսորիկ աշխարհ ոչ ճանաչէ զմեզ, քանզի ոչ ծանեաւ զնա:
 2 Ե՛ւ. Մի՛րեկիւք, այժմ որդիք Աստուծոյ եմք, եւ չեւ եւս է յայտ եթէ զինչ լինելոց իցեմք. զիտեմք, զի յորժամ նա յայտնեցի, նման նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա որպէս
 3 եւ էն: Եւ ամենայն որ ունի զայս յոյս յամենին՝ սրբէ զանձն իւր, որպէս
 4 եւ նայն սուրբ է: Ամենայն որ զմեզս գործէ, նա եւ զանօրէնութիւնն առնէ, եւ ինքն իսկ մեղքն անօրէնութիւն է:
 5 Եւ զիտեմք զի նա յայն սակա յատնեցաւ, զի զմեզս բարձցէ, եւ ի նմա
 6 մեղք ոչ են: Ամենայն որ ի նա է հատատեալ՝ ոչ մեղանչէ. եւ ամենայն որ մեղանչէ՝ ոչ ետես զնա եւ ոչ
 7 ծանեաւ զնա: Մանկունք, մի՛ ոք զձեզ խաբեցէ. որ առնէ զարգարու-
 8 թիւն, արգար է՝ որպէս եւ նայն ար-
 9 գար է: Եւ որ առնէ զմեզս ի Սատանայէ է, ի ի սկզբանէ Սատանայ մեղանչէ. վասն այսորիկ յայտնեցաւ Որդին Աստուծոյ, զի լուծցէ զգործս
 10 Սատանայի: Ամենայն որ յԱստուծոյ է ծնեալ՝ մեզս ոչ առնէ, զի սերմն նորա ի նմա մնայ. եւ ոչ կարէ մեղանչել,

1 Ի Յաննի գլխի 4
 2 Եւս, ցանկութիւն նորա
 3 Որպէս, զամենայն
 4 Յոսիան գլխի 4

5 Որպէս, օծութիւնն այն ուսուցանէ. այլ՝ Հօրն նորա ուսուցանէ
 6 Որպէս, կացէք
 7 Յոսիան, ի նմա
 8 Բաւաւտ, զիտէք
 9 Բաւաւտ, զմեզս մեք

10 զի յԱստուծոյ է ծնեալ: Այսուիկ յայտ-
նի են ՚ի միմեանց որդիք Աստուծոյ
և ողիք Սատանայի:

Ե՛ք. Ամենայն որ ոչ առնէ զարդա-
րութիւն՝ չէ նա յԱստուծոյ, և ուր ոչ
11 սիրէ զեղբայր իւր. Զի այս է պատ-
ուիրանն զոր լուարուք ի սկզբանէ,
12 զի սիրեցողք զմիմեանս: Ոչ որպէս
կայէնն ի չարէ անտի էր և սպան
զեղբայրն իւր. և յո՞ր սակս սպան
գնա. զի իւր գործքն չար էին, և
13 եղբորն՝ բարի: Եւ մի՛ ինչ զարմանայք,
եղբարք, եթէ աշխարհ զձեզ ատեայ:
14 Մեք զիտեմք զի փոխեցաք ի մահ-
ուանէ ի կեանս, քանզի սիրեմք զեղ-
բարս. իսկ որ ոչն ՚սիրէ, անդէն ի
15 մահու մնայ: Ամենայն որ ատեայ զեղ-
բայր իւր՝ մարդասպան է, և զիտէք,
զի ամենայն մարդասպան ոչ ունի
զկեանս յաւիտեականս յանձին հաս-
16 տատեալ: Այսուիկ զիտացաք զսէրն,
զի նա զանձն իւր եզ վասն մեր, և
մեք վասն եղբարց ՚մերոց պարտիմք
17 գնել զանձինս: Որ ունիցի զկեանս
ինչ զաշխարհիս, և տեսանիցէ զեղ-
բայր իւր կարօտեալ իւրք, և փա-
կիցէ զգուժս իւր առ ի նմանէ, զի մըդ
սէրն Աստուծոյ ի նմա իցէ բնակեալ:
18 ԶԱ. Որդեակք, մի՛ բանիւք եւ լեղ-
ուօք սիրեցողք, այլ արդեամբ և
ճշմարտութեամբ:

19 Եւ այսուիկ լիցուք ծանուցեալք
եթէ ի ճշմարտութենէ անտի իցեմք,
և առաջի նորա արացողք հանդէս
20 սրտից մերոց: Եթէ սողտանիցեն զմեզ
սիրտք մեր, այլ Աստուած մեծ է քան
21 զսիրտս մեր և զիտէ զամենայն: Սի-
րելիք, եթէ սիրտք մեր զմեզ ոչ
սողտանիցեն, համարձակութիւն ու-
22 նիմք առ Աստուած. Եւ զոր ինչ հայ-
ցեմք՝ առնումք ի նմանէ, զի զպատ-
ուիրանս նորա պահեմք, և զհաճոյս
23 առաջի նորա առնեմք: Եւ այս է պատ-
ուիրանն նորա, զի հաւատացողք յա-
նուն Որդւոյ նորա Յիսուսի Քրիս-
տոսի, և սիրեցողք զմիմեանս, որ-
24 պէս և ետ մեզ պատուէր: Եւ որ
պահէ զպատուիրանս նորա՝ ի նմա է
հաստատեալ և նա ի սմա. և յայս-

մանէ զիտեմք եթէ բնակէ ի մեզ, ի
Հոգւոյ անտի զոր ետ մեզ:

ԳԼ. Դ

1 ԶԲ. Սիրելիք, մի՛ ամենայն հոգւոյ
հաւատայք, այլ ընտրեցէք զհոգիսն՝
եթէ յԱստուծոյ իցեն. զի բազում
սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ:
2 Եւ ՚մեք այսուիկ ճանաչեմք՝ զՀոգին
Աստուծոյ. ամենայն հոգի որ խոս-
տովանի զՅիսուսս Քրիստոս մարմնով
3 եկեալ՝ յԱստուծոյ է նա: Եւ ամե-
նայն հոգի որ ոչ խոստովանի զՅիսուսս
Քրիստոս մարմնով եկեալ՝ չէ նա յԱս-
տուծոյ, և և այս Նեոխնն է, զորմէ
լուարուք եթէ զալոց է, և արդէն
4 իսկ յաշխարհի է: Դուք յԱստուծոյ
էք, որդեակք, և յաղթեցէք նոցա.
5 յաշխարհին է: Նորա յաշխարհէ են,
վասն այնորիկ յաշխարհէ խօսին, և
6 աշխարհ լսէ նոցա: Մեք յԱստուծոյ
եմք. որ զԱստուած ճանաչէ՝ լսէ մեզ,
և ուր չէ յԱստուծոյ՝ ոչ լսէ մեզ.
այսուիկ ճանաչեմք զՀոգին ճշմար-
տութեան և զհոգին խաբէութեան:

7 ԶԳ. Սիրելիք, սիրեցողք զմիմեանս,
զի սէր յԱստուծոյ է. և ամենայն որ
սիրէ՝ յԱստուծոյ է ծնեալ և ճանաչէ
8 զԱստուած: Եւ որ ոչն սիրէ՝ ոչ ճա-
նաչէ զԱստուած, զի Աստուած սէր է:
9 Եւ զի յայսմ երեւեցաւ սէրն Աստու-
ծոյ ի մեզ, զի զՈրդին իւր միածին
ասաքեաց Աստուած յաշխարհ, զի ե-
10 զիցուք նովաւ կենդանիք: Յայսմ է
սէրն, ոչ զի մեք սիրեցաք զԱստուած,
այլ զի նա սիրեաց զմեզ, և առաք-
եաց զՈրդին իւր ի քառութիւն մեղաց
11 մերոց: Սիրելիք, եթէ Աստուած այս-
պէս սիրեաց զմեզ, ապա և մեք պար-
տիմք զմիմեանս սիրել:

12 ԶԲ. ՉԱստուած ուրուք երբեք չիք
տեսեալ. եթէ սիրեցողք զմիմեանս,
Աստուած ի մեզ բնակէ, և սէր նորա
13 ի մեզ կատարեալ է: Այսուիկ զիտեմք,
եթէ մեք ի նմա եմք բնակեալ, և նա՝
ի մեզ, զի ի Հոգւոյն իւրմէ ետ մեզ:
14 Եւ մեք տեսաք եւ վկայեմք, զի Հայր
առաքեաց զՈրդին իւր Փրկիչ աշխարհի:

1 ի Յաննէս պատմ
2 Ուրուք, սիրէ զեղբայրն

3 Քրիստոս, ճանաչէք

45 Որ ոք խոստովանեսցի եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ, Աստուած ի նմա
 46 բնակէ, եւ նա՝ յԱստուած: Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք զսէրն Աստուծոյ զոր ունի առ մեզ. Աստուած սէր է. եւ որ կայ ի սէրն՝ բնակեալ է յԱստուած, եւ Աստուած ի նմա բնա-
 47 կէ: Յայսմիկ կատարեալ է սէրն ընդ մեզ. զի համարձակութիւն ունիմք յաւուրն զատաստանի. զի որպէս եւ նայն է՝ նոյնպէս եւ մեք եմք յաշխար-
 48 հնա յայսմիկ: Երկեւզ ոչ գոյ ի սէր, այլ սէրն կատարեալ ի բաց մերժէ զերկեւզն. զի երկեւզ ընդ տանջանօք է. իսկ որ երկնչին՝ չէ կատարեալ ի սէրն:
 49 Մեք ²սիրեսցուք զԱստուած՝, վասն
 20 զի նա նախ սիրեաց զմեզ: Եթէ ոք ասիցէ եթէ Սիրեմ զԱստուած, եւ զեղբայր իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն ետես զիա՞րդ կարիցէ
 21 սիրել: Եւ զայս պատուէր ունիմք՝ առ ի նմանէ, զի որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա եւ զեղբայր իւր:

Գ. Ե

1 ՁԵ. Ամենայն որ հաւատայ եթէ Յիսուս է Քրիստոսն՝ յԱստուծոյ ծնեալ է, եւ ամենայն որ սիրէ զճնորդն՝ սիրէ
 2 եւ զծնեայն ի նմանէ: Այսուիկ ճանաչեմք եթէ սիրեմք ³զՈրդին Աստուծոյ, յորժամ զԱստուած սիրեսցուք եւ զպատուիրանս նորա արասցուք:
 3 Քանզի այս է սէրն Աստուծոյ, եթէ զպատուիրանս նորա պահեսցուք. եւ պատուիրանս նորա չեն ինչ ծանուցի:
 4 Զի ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է՝ յաղթէ աշխարհի. եւ այս է յաղթութիւնն որ յաղթէ աշխարհի, հաւատքն
 5 մեր: Եւ ո՞ իցէ որ յաղթիցէ աշխարհի, եթէ ոչ՝ որ հաւատայցէ եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ:
 6 Մա է որ եկն ջրով ⁴եւ հողով՝՝ եւ արեամբ, Յիսուս Քրիստոս. ոչ ջրով
 7 միայն, այլ եւ արեամբ եւ ջրով. Եւ Հոդին է որ վկայէ, զի Հոդին իսկ է
 8 ճշմարտութիւն: ⁵Սոքա երեքին՝՝ են

որ վկայեն, Հոդին, ջուրն եւ արեւն.
 9 եւ երեքին մի են: Եթէ զմարդկան ինչ վկայութիւն ունիցիմք, այսքէն Աստուծոյ վկայութիւնն մեծ իցէ. այս է վկայութիւնն Աստուծոյ, որ վկայեաց ի վերայ Որդւոյն իւրոյ: ՎՁ.
 10 ՁԶ. Որ հաւատայ յՈրդին Աստուծոյ՝ ունի յանձին զվկայութիւնս զայս. որ չհաւատայ ⁶Որդւոյ Աստուծոյ՝ սուտ առնէ զնա. քանզի հաւատայ վկայութեանն զոր վկայեաց Աստուած ի վերայ Որդւոյն իւրոյ: Եւ այս իսկ է վկայութիւնն, զի կեանս յաւիտենականս ետ մեզ Աստուած, եւ այս են
 12 կեանքն որ յՈրդին նորա են: Որ ընդ ունի զՈրդին, ընդունի եւ զկեանսն. եւ որ ոչ ընդունի զՈրդին Աստուծոյ, եւ ոչ զկեանսն ընդունի:
 13 ՁԷ. Զայս վրեցի ձեզ զի զիտասցիք եթէ կեանս յաւիտենականս ունիք, եւ զի հաւատայցէք յանուն Որդւոյն
 14 Աստուծոյ: Եւ այս է համարձակութիւնն զոր ունիմք մեք առ նա, զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա՝ լսէ մեզ: Զի եթէ զիտիցեմք եթէ լսէ հայցուածոցն մերոց, այսա զիտեմք եթէ առնումք զհայցուածսն զոր հայցեմք առ ի նմանէ:
 16 Եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ մեզս որ ոչ առ ի մահ, խնդրեսցէ եւ տացէ նմա կեանս մեղուցելոյն ոչ առ ի մահ. են մեզք որ մահուչափ են, ոչ վասն այնորիկ ասեմ եթէ ⁶խնդրեսցես:
 17 Մե: Ամենայն անիրաւութիւն մեզք են. եւ են մեզք որ մահուչափ են:
 18 Գիտեմք եթէ ամենայն որ յԱստուծոյ է ծնեալ ոչ մեղանչէ. այլ որ յԱստուծոյն է ծնեալ՝ պահէ զանձն,
 19 եւ չարն առ նա ոչ մերձենայ: Գիտեմք եթէ յԱստուծոյ եմք, եւ աշխարհ ա-
 20 մենայն ի չարի կայ: Եւ զիտեմք եթէ Որդին Աստուծոյ եկն, եւ ետ մեզ միտս զի ծանիցուք զճշմարտիւն. եւ եմք ի ճշմարտին Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի. ⁸զի նա է ճշմարտ Աստուած եւ կեանք յաւիտենական:
 21 Որդեակք, պահեցէք զանձինս ի կուսապաշտութենէ:

¹Բ-դ-ւ-է, ունիցիմք

²Ունչ, սիրեմք զնա. այլ՝ սիրեմք զԱստուած

³Յայն, զորդիս

⁴Ի Բ-դ-ւ-է գ-լ-ու-է

⁵Յայն, Զի երեք


⁶Բ-դ-ւ-է, խնդրեսցէ

⁷Բ-դ-ւ-է, չեն

⁸Ի Յ-ւ-էն գ-լ-ու-է

ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ՝




1 Էս. ՅԵՐԻՅՈՒԷ առ ընտրեալդ Կիւրիա
 եւ առ որդեակս իւր, զոր ետդ սիրեմ
 ճշմարտութեամբ, եւ ոչ եթէ ես միայն,
 այլ եւ ամենեքեան ոյք զիտակ են
 2 ճշմարտութեանն . վասն զորոյ ճշմար-
 տութեանն որ ի մեզ հաստատեալ է,
 3 զի եւ ընդ ձեզ իցէ՞ . 2 եւ դուք յա-
 3 Լիտենից ընդ մեզ իցէք՝ Շնորհք, ու-
 զորմութիւն, խաղաղութիւն յԱստու-
 ծոյ ի Հօրէ եւ ի Տեառնէ Յիսուսէ
 Քրիստոսէ Որդւոյն Հօր, ճշմարտու-
 թեամբ եւ սիրով եզիցին ընդ ձեզ .
 4 Ուրախ եղէ յոյժ, զի դատի յորդե-
 կացդ քոց որ դնան ճշմարտութեամբ
 ըստ պատուիրանին զոր առաք ի Հօրէ .
 5 Եւ այժմ ազաչեմ զքեզ, Կիւրիա, իբ-
 րեւ ոչ եթէ նոր ինչ պատուիրան
 գրեմ քեզ, այլ զոր ի սկզբանէն ու-
 6 նէաք, զի սիրեսցուք զմիմեանս . Եւ
 այս է սէրն, զի դնասցուք ըստ պատ-
 ուիրանաց նորա . եւ այս է պատուի-
 րանն, զի որպէս լուարուք ի սկզբա-
 7 նէ՝ ըստ նմին գնասցիք . Զի բազում

մոլորեցուցիչք ելին յաշխարհ . 2 որ ոք
 ոչ խոստովանի՝ զՅիսուս Քրիստոս
 եկեալ մարմնով, նա մոլորեցուցիչ է
 եւ Նեոն .
 8 Է՛հ . Զգոյ՛ լինի՛ջիք անձանց զի մի՛
 5 կորուսանիցէք՝ զոր վաստակեցէքն,
 այլ զի առնուցուք՝ բովանդակ զվարձանս .
 9 Ամենայն որ յանցանիցէ եւ ոչ կայցէ ի
 վարդապետութեանն Քրիստոսի՝ զԱս-
 տուած ոչ ճանաչէ . որ կայ ի վարդա-
 պետութեանն՝ նա եւ զՈրդին եւ
 10 զՀայր ընդունի . Եթէ ոք գայցէ առ
 ձեզ եւ զվարդապետութիւնս զայս ոչ
 ունիցի, մի՛ ընդունիցիք զնա ի տուն,
 11 եւ մի՛ ողջոյն տայցէք նմա . Որ ա-
 սասցէ նմա Ողջոյն՝ կցորդ լիցի չարաց
 զործոց նորա .
 12 Բազում ինչ ունէի գրել առ ձեզ,
 այլ ոչ կամեցայ քարտիսիւ եւ գեղով .
 զի ակն ունիմ ինձէն իսկ գալ առ
 ձեզ, եւ բերան ի բերան խօսել . զի
 ուրախութիւնն մեր իցէ կատարեալ .
 13 Ողջոյն տան քեզ որդիք քո ընտ-
 րելոյ . 6 Շնորհք ընդ ձեզ .


1 Ունէ, Թուղթ Յովհաննու Առաքելոյ Երկրորդ
 2 Ի Յաննի պատմութեան
 3 Բազում, եւ ընդ մեզ իցէ յաւիտեան

4 Յանն, որ ոչ խոստովանի
 5 Ունէ, կորուսանիցեմք զոր վաստակեցաքն,
 այլ զի առնուցուք 6 Ի Բազում պատմութեան



ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐՐՈՐԳ՝




1 ԷԳ. ՅԵՐԻՑՈՒԷ առ Գայիոս սիրելի,
2 զոր եսդ սիրեմ ճշմարտութեամբ: Սիրելի,
վասն ամենայն իրաց քոց յաջողութեան եւ առողջութեան աղօթս աննեմ. որպէս է իսկ յաջողութիւն
3 անձինդ քո: Յոյժ ուրախ եղէ ի զայլ եղբարց եւ լինել վկայ քոյոյ ճշմարտութեանդ,
որպէս զնասոջ զու ճշմարտութեամբ:
4 Մեծ եւս ինչ ուրախութիւն քան զայս ոչ ունիմ, զի լսեմ եթէ իմ որդեակքն ճշմարտութեամբ
5 զնան: Սիրելի, հաւատարիմ գործես զայդ,
զոր եթէ անսիցես առ եղբարս՝ 6 զդոյն եւ առ օտարս. Որք վկայեցին քոյոյ սիրոյդ առաջի եկեղեցւոյ. որոց բարիս արարեալ յուղարկես արժանիս
7 Աստուծոյ, Զի վասն 2 անուանն ելին, եւ 3 ոչինչ յումեքէ անուուն զհեթանոս
8 սականացն: Մեք այսուհետեւ սլարտիմք ընդունել զայնպիսիսն, զի զործակիցք լիցուք ճշմարտութեանն:
9 ԷԳ. Գրեցի ինչ եկեղեցւոյն. այլ որ

10 յառաջագէմն ի նոցանէ է Դիոտրեիէս, ոչ ընդունի զմեզ, վասն այսորիկ եթէ եկից,
յիշեցուցից զգործս նորա զոր աննէ,
բանիւք չարօք շատխօսութեան աննէ զմեզ աշխատ. եւ ոչ այսոքիւք շատացեալ,
ոչ ինքն ընդունի զեղբարս, եւ զայնոսիկ որ ընդունինն՝ արգելու,
11 նա՛ եւ յեկեղեցւոյ եւս հանէ: Սիրելի, մի՛ լիցիս նմանող չարի, այլ բարւոյ. զի որ զբարին աննէ՝ յԱստուծոյ է. եւ որ զչարին գործէ՝ նա ոչ ետես երբեք
12 զԱստուած: ԶԴեմեարեայ վկայեալ է յամենեցունց 4 եւ յեկեղեցւոյն՝ եւ ի ճշմարտութենէն, եւ մեք վկայեմք. եւ զու գիտես զի ճշմարիտ է մեր վկայութիւնն:
13 Բազում ինչ ունէի գրել քեզ, այլ ոչ կամիմ 5 քարտիսիւ եւ դեղով գրել. Զի ակն ունիմ ի մօտոյ իսկ տեսանել զքեզ,
եւ բերան ի բերան խօսել: 14 Խաղաղութիւն ընդ քեզ. որչոյն տան քեզ 6 սիրելիք. որչոյն տաջիր սիրելեաց 7 մերոց իւրաքանչիւր յանուանէ:

1 Ո՛հնէ, Թուղթ Յովհաննու Առաքելոյ Երրորդ
2 Ո՛հնէ, անուան նորա
3 Ո՛հնէ, ոչինչ անուուն ի հեթանոսաց

4 Ի Բաղարի գլխաւ
5 Յոյն, դեղով եւ եղեգամբ գրել քեզ
6 Ո՛հնէ, եղբարք
7 Ի Յասնի գլխաւ



ԹՈՒՂԹ

ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ

1 Է՛՛՛ Ե. Յուդա, Յիսուսի Քրիստոսի ծառայ, եւ եղբայր Յակովբայ, ¹հեթանոսաց որ՝ յԱստուծոյ Հօրէ էք սիրեցեալք, եւ Յիսուսի Քրիստոսի պահ-
2 եալք եւ ²ընտրեալք, Ողորմութիւն ձեզ եւ խաղաղութիւն եւ սէր բազմասցի։

3 Սիրելիք, զամենայն փոյթ յանձին կալեալ գրել ձեզ վասն մերոյ հասարակաց փրկութեանն, հարկ յանձին կալայ գրել ձեզ, եւ աղաչել զի ճգնիցիք ի վերայ հաւատոցն, որ միանգամ ⁴աւանդեցան սրբոց։ Քանզի սպրդեցին մայրն ոմանք, որ յառաջագոյն իսկ ³կատարեալ էին ի սոյն դատաստան, ամբարիչաք, որ զԱստուծոյ մերոյ շնորհան դարձուցին յանկարգութիւն։ եւ զմի միայն ²զիշխանն եւ զՏէր մեր Յիսուս Քրիստոս ուրացեալք։

5 Յիշեցուցանել ձեզ այսուհետեւ կամ է ինձ որ զիսէքք ⁵զամենայն, զի Աստուած միանգամ՝ զժողովուրդն փրկեաց յԵգիպտոսէ, երկրորդ անգամ ⁶զանհաւատսն կորոյս։ Եւ զհրեշտակս որ ոչ պահեցին զիւրեանց իշխանութիւնն, այլ թողին զիւրեանց բնակութիւնն, ի դատաստանս մեծի աւուրն մշտնջենաւոր կապանօք պահեաց ի ⁷խաւարի։ Որպէս Սողոմն եւ Գոմոր եւ որ շուրջ զնոքօք քաղաքքն, որ ըստ նմին օրինակի պոռնկեցան զհետ ընկերացն մարմնոց, կան առաջի օրինակ՝ զյաւիտեանական հրոյն ընկալ-
8 եալ զդատաստան։ Ըստ նմին օրինակի

եւ սոքա իբրեւ քնով դանդաչեալք՝ զամբմին պղծեն, զսէրութիւնս քա-
9 մանեն, զփառան հայհոյեն։ Ուր Միքայէլ հրեշտակապետն յորժամ բանսարկուն Սատանայի վիճեալ տայր պատասխանի վասն Մովսիսեանն մարմնոյ, ոչ ժպրհեցաւ հայհոյութեանն դատաստանի հանդուրժել. այլ ասէ,
10 Սատեսցէ ի քեզ Տէր։ Իսկ սոքա զոր ինչ ոչն իմանան՝ հայհոյեն. եւ զայլն եւս զոր բնութեամբ իբրեւ զանխօս անասուն զիսեն, ի նոսին ապա-
11 կանեսցին։ Վայ է նոցա, զի ըստ ճանապարհին Կայենի զնացին, եւ ըստ մորորութեանն Բաղամայ զեղիւնցան զհետ վարձուց, եւ ըստ հակառակու-
12 թեանն կորիսայ կորեան։ ⁶Սոքա են ատեցեալք շողմոյք՝ երթեալ զհետ ցանկութեանց իւրեանց, ի սէրս իւրեանց խորախոսութեամբ, լինին ընդ ձեզ ուրախակիցք, աներկեղ՝ զանձինս ճարակին. ամաք անմըղիք հողմակոծեալք, ծառք պտղակորոյսք, անպտուղք, կրկնամեռք, խրեալք ար-
13 մատաքի։ Անաստ ալիք ծովու, որ միշտ փրփրեն զիւրեանց անձանցն զամօթ. աստեղք մոլաքք, որոց ⁷վիհ խաւարին յաւիտենից պահեալ է։

14 Է՛՛՛ Ե. Մարգարէացաւ վասն նոցա եւ եւթներորդն յԱղամայ Ենովք, եւ ասէ, Ահաւասիկ եկն Տէր բիւրովք սրբովք ⁸հրեշտակօք, Առնել դատաստան ⁹ըստ ամենայնի՝, եւ յանդիմանել զամենայն ամբարիչտս վասն գործոց իւրեանց զոր ամբարչտեցին. եւ վասն ամենայն

¹Յ.Ն., որոց
²Յ.Ն., կոչեցեալք
³Յ.Ն., գրեալ
⁴ՈՒՆԻ, զիշխանն զԱստուած
⁵ՈՒՆԻ, միանգամ զայս զԵ Տէր


⁶Բազմութ, Սոքա են ի սէրս ձեր արատք, խրախճանակիցք իւր ձեզ աներկեղ
⁷Յ.Ն., աղջամուղջ
⁸Բազմութ, իւրովք
⁹Կ.Մ., ի վերայ ամենեցուն

խիստ բանից զոր խօսեցան զնմանէ
 16 մեղաւորք ¹եւ ամբարիշտք : Սոքա
 են տրանջողք եւ չողմոզք, երթեալ
 ըստ իւրեանց անձանց ցանկութեանց,
 եւ բերանք նոցա զամբարտաւանս բար-
 բառին, առնուն ակն երեսաց վասն
 օգտի :
 17 Էջ. Բայց դուք, սիրելիք, յիշեցէք
 զկանխասաց բանս զառաքելոցն Տեառն
 18 մերոյ Յիսուսի Գրիստոսի . Ձի ասէին
 ձեզ եթէ ի յետին ժամանակս եղիցին
 մարդք արհամարհողք, երթեալ ըստ
 իւրեանց ամբարշտութեանցն ցան-
 կութեանց :
 19 Սոքա են ²նշաւակեալք, ³նշաւորք,
 20 որ զՀոգին ոչ ունիցին : Այլ ³մեք,
 սիրելիք, եղիցուք՝ շինել զանձինս
 սրբութեամբն ³նաւատոց, ի Հոգին
 21 Սուրբ ⁵կայցուք յաղօթս՝, Պահել զան-

ձինս սիրովն Աստուծոյ ակն ունել ու-
 զորմութեանն Տեառն մերոյ Յիսուսի
 Գրիստոսի ի կեանսն յաւիտենականս :
 22 Եւ ⁶ոմանց զատապարտելոց լինիջիք
 23 կշտամբելչք՝ . Եւ զոմանս ապրեցու-
 ցանիջիք յափշտակեալ ի հրոյ . եւ ու-
 մանց ողորմեսջիք երկիւղիւ, ⁷դատել
 եւ զպատմուճանն որ ի մարմնոյն իցէ
 աղտեղեալ :
 24 Եւ այնմ, որ կարօղն իցէ սլահել
 զձեզ անարատս եւ ⁸ամբիծս, հաս-
 տատեալ առաջի իւրոց վառաց աներ-
 25 կեանն ցնծութեամբ, Միոյն Աստու-
 ծոյ ¹եւ Փրկչին մերոյ ⁹Յիսուսի Գրիս-
 տոսի Տեառն մերոյ վառք, մեծու-
 թիւն, զօրութիւն եւ իշխանութիւն
¹⁰յառաջ քան զամենայն յաւիտեանս՝,
 եւ այժմ՝ եւ յամենայն յաւիտեանս :
 Ամէն :

¹ Ի Գ. անի գ. 1-11 ⁵ Գ. ան, կալ յաղօթս
² Գ. ան, զատուցեալք
³ Բ. ան, գուք, սիրելիք, եղիջիք
⁴ Ի Գ. անի, աման՝ հաւատոց ձերոց . այլ՝ հա-
 ւատոց մերոց

⁶ Գ. ան, ոմանց երկմտելոց ողորմեսջիք
⁷ Գ. ան, ատել
⁸ Ի Բ. ան, գ. 1-11
⁹ Ոման, ի ձեռն Յիսուսի
¹⁰ Գ. ան, գ. 1-11



ՅԱՅՏՆՈՒԹԻՒՒՆ

ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՒ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱԻԵՏԱՐԱՆԶԻ՝

ԳԼՈՒԽ Ա

1 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ Յիսուսի Քրիստոսի,
 2 ի ձեռն որոյ ետ Աստուած՝, ցուցանել
 ծառայից իւրոց որ ինչ ինչերոց է վաղ-
 վաղակի, եւ նշանակեաց առաքելով
 ի ձեռն հրեշտակի իւրոց առ ծառայ
 2 իւր Յովհաննէս, Որ վկայեաց զբանէն
 Աստուծոյ, եւ զվկայութիւն Յիսուսի
 Քրիստոսի՝ զոր ետես, 3 որ էր՝ եւ որ
 3 ինչերոցն էր յետ այնորիկ՝՝ Երանի
 4 որ ընթեանուն զբան մարդարէու-
 թեանս այսորիկ, եւ որ լսէ եւ պահէ՝
 զոր ինչ ի նմա զրեալ է. զի ժամա-
 նակս մերձեալ է։
 4 ի Յովհաննէս առ եւթն եկեղեցիս որ
 են յԱսիա, չորհրդ ընդ ձեզ եւ խա-
 զաղութիւն յեկն եւ որ էն՝՝ եւ որ
 գալոցն է, եւ յեւթն՝՝ զօրութեանց
 Հոգւոյն՝ որ է՝՝ առաջի աթոռոցն իւրոց։
 5 Եւ ի Յիսուսէ Քրիստոսէ հաւատարիմ
 վկայէն, որ է անզրանիկ ի մեռելոց,
 եւ իշխան թաղաւորութեանց երկրի.
 որ սիրեաց զմեզ, եւ 7 ելոյծ զկա-
 պանս մեզաց մերոց՝՝ արեամբն իւրով։
 6 Եւ արար զմեզ 8 թաղաւորս եւ քա-
 հանայս՝՝ Աստուծոյ եւ Հօր իւրոյ.
 նմա փառք եւ զօրութիւն յաւիտեանս
 յաւիտենից։ Ամէն։
 7 Ահաւասիկ 9 զալոց է՝՝ ընդ ամպս.

եւ տեսցեն զնա ամենայն աչք, եւ
 որք խոցեցինն զնա. եւ կոծեսցին ի
 վերայ նորա ամենայն ազգք երկրի։
 8 Այս, Ամէն։ Ես եմ Այս եւ ես եմ
 Քէ¹⁰, առէ Տէր Աստուած, որ էն եւ
 11 որ է՝՝ եւ որ գալոցն է, Ամենակալ։
 9 Ես Յովհաննէս եղբայր ձեր եւ հա-
 ւատարակից նեղութեան եւ արքայու-
 թեան եւ համբերութեան սր ի 12 Քրիս-
 տոս Յիսուս. եղէ ես ի կղզւոջն որ
 անուանեալ կոչի Պատմոս՝ վասն բա-
 նին Աստուծոյ եւ վասն վկայութեան
 10 Յիսուսի 12 Քրիստոսի։ Եւ 13 եղեւ յիս
 Հոգի՝՝ յաւուր կիրակէի, եւ լուայ
 զինի իմ ձայն մեծ իբրեւ զփողոց, որ
 11 առէր յիս, 12 Ես եմ Աբիա եւ Ով, Ա-
 11 աջին եւ վերջին։՝՝ Ձոր տեսանես
 զրեա ի գիրս, եւ սուր տանել յեւթն
 եկեղեցիս, որ յեփեսոս եւ ի Չմիւս-
 նիա եւ ի Պերդամոն եւ ի Թիւատիր
 եւ ի Սարգիկէ եւ ի Փիղազիզիւա
 12 եւ ի Լաւոզիկիա։ Եւ դարձայ տեսա-
 նել զձայնն որ խօսէր յիս. եւ ի դառ-
 նայն իմում տեսի եւթն ճրագարան
 13 ոսկի։ Եւ ի մէջ եւթն ճրագարանացն
 նման Որդւոյ մարդոյ, զգեցեալ պատ-
 մուձան պճղնաւոր. եւ զօտեւորեալ
 14 առ ստեամբքն գօտի ոսկեղէն. Եւ
 զլուսն նորա եւ հերքն իբրեւ զասր
 սպիտակ եւ որպէս զձիւն. եւ աչք
 15 նորա որպէս բոց հրոյ. Եւ ոտք նորա
 նմանեալ պղնձոյ ծխելոյ ի մէջ հնոցի
 հրաչէկ. եւ ձայն նորա իբրեւ զձայն
 16 ջուրոց բաղմայ։ Եւ ունէր յաջոյ ձե-
 սինն իւրում աստեղս եւթն, եւ ի
 բերանոյ նորա սուր երկսայրի սրեալ

1 Ուստ, Յայտնութիւն Յովհաննու. այլ՝ Յայտ-
 նութիւն Սրբոյ Յովհաննու Աստուածաբանի
 2 Յան, զոր ետ նմա Աստուած
 3 ի Յաննի պատմ
 4 Յան, որ ընթեանու, և որ լսեն զբանս մար-
 դարէութեանս և պահեն
 5 Յան, յԱյսմանէ որ էն և որ էրն
 6 Յան, Հոգւոց որ են
 7 ի Յաննի, մանտ՝ ելոյծ զմեզ ի մեզաց մերոց,
 այլ՝ լուաց զմեզ ի մեզաց մերոց
 8 Ուստ, թաղաւորութիւն, քահանայս
 9 Յան, գայ

10 Ուստ, յաւելու, Սկզբն և վախճան
 11 Յան, որ էրն
 12 Յան, պատմ
 13 Յան, եղէ Հոգւով

երանէր, եւ երեսք նորա իրբու ¹ դա-
 17 րեղահն ճառագայթեալ երեւէին՝: Եւ
 իրբու տեսի զնա, անկայ առ ոտս նո-
 րա իրբու զմեռեալ. եւ եղ ի վերայ
 իմ զաջ իւր եւ ասէցիս, Մի՛ երկնչիբ,
 ես եմ Սկիզբն, եւ ես եմ Վախճանս:
 18 Եւ ես եմ ² կեանք եւ ես եմ որ մե-
 ռայն. եւ աւասիկ կենդանի եմ յա-
 շխտեանս յաւիտեանից: ³ Սմէնս Եւ ու-
 նիմ զիականս մահու եւ զժոխոց:
 19 Գրեա զոր տեսանեսդ, որ էն, եւ որ
 հանդերձեալ է լինել յետ այնորիկ:
 20 Զխորհուրդ եւթն աստեղացդ զոր տե-
 սերդ յաջ իմ, եւ զեւթն ճրագարանս
 ոտկիս. եւ եթն աստեղքն հրեշտակք
 եւթն եկեղեցեացն են, եւ եւթն ճրա-
 գարանքն եւթն եկեղեցիքն են:

ԳԼ Բ

1 Առ հրեշտակ Նփեսացւոց եկեղեցւոցն
 զրեա. Այսպէս ասէ որ ունի զեւթն
 աստեղս յաջ իւր, եւ չրջի ի մէջ եւթն
 2 աշտանակաց ոսկւոյ. Գիտեմ զզործս
 քս եւ զվաստակս քս եւ զհամբերու-
 թիւն քս. եւ զի ոչ կարես ³ բառնալ
 զչարսն՝, եւ փորձեցեր որ ասեն զինք-
 եանս առաքեալս եւ ոչ են, եւ զտեր
 3 զնոսս սուտս: Եւ համբերեցեր եւ
 վշտացար վտոն անուան իմոյ՝ եւ ⁵ աշ-
 4 խտեցար: Այլ ⁶ ասեմ առ քեզ, զի
⁵ զսէրն քո զառաջին թողեր: Յիշեա
 այժմ ուստի անկարն, եւ ասպշաւեա,
 եւ զառաջին զործան ⁷ քո արա. ապա
 թէ ոչ՝ ⁸ զամ ես՝ ⁹ վազվազակի, եւ
 շարժեցից զաշտանակս քո ի տեղս յէ
 6 իւրմէ, եթէ ոչ ասպշխարեցես: Արդ
 զայս ¹⁰ արա՝ զի ատեցես՝ զզործան
 7 Նիկողայոսի, զոր ես ատեամ: Որ ու-
 նի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ ասէ
 Հոպին առ եկեղեցիս. Որ յաղթէն,
 տաց նմա ուսել ի փայտէն կենաց որ է
 ի մէջ դրախտին Աստուծոյ:
 8 Եւ առ հրեշտակ Զմիւսնացւոց եւ

կեղեցւոցն զրեա. Այսպէս ասէ ¹¹ Ան-
 սկիզբնն եւ Անվախճանն՝, որ եղեւ
 9 մեռեալ եւ կենդանացաւ. ¹² Տեսի
 զզործս քս եւ զնեղութիւնս եւ զաղ-
 քատութիւնս, (¹³ այլ աղքատութիւնս
 քս մեծութիւնս եղիցի՝,) եւ զհայհոյու-
 թիւնն, որ ասէին վինքեանս Հրեայս
 զոչ եւ չէին ինչ, այլ ժողով Սատա-
 10 նայի: Մի՛ երկնչիբ, ¹⁴ վասն որոյ կա-
 միս չարչարել՝. անա հանդերձեալ է
 Բանասարկունս արկանել ի ձէնջ ի բանտ,
 զի փորձիցիք, եւ ունիցիք նեղու-
 թիւնս աւուրս տանս. լեր հաւատարիմ
 մինչեւ ի մահ, եւ տաց քեզ զսպահն
 11 կենաց: Որ ունի ականջս լսելոյ՝ լուի-
 ցէ զինչ Հոպին ¹² Սուրբ ասէ առ եւ-
 կեղեցիս. Որ յաղթէ, ¹⁵ ոչ անիրաւի՝
 յերկրորդ մահուանէ:
 12 Եւ առ հրեշտակն որ ի Պերդամոյ
 եկեղեցին՝ զրեա. Այսպէս ասէ որ
 13 ունի զսուրն երկսայրի սրեալ. ¹² Տեսի
 թղործս քս, եւ՝ զի բնակեալ ես ուր
 ամոռն է Սատանայի, եւ ունիս զա-
 նունս իմ, եւ ոչ ուրացար զհաւատս
 իմ յաւուր յորում Անթիպոսս վկայն
 իմ հաւատարիմ ¹⁶ եղեւ. զի վկայ է
 իմ հաւատարիմ ամենայն հաւատա-
 ցեալ որ սպանաւ ի ձէնջ, որ կայք՝
 14 ուր Սատանայ է բնակեալ: Այլ ունիմ
 տու քեզ սակաւ, զի ¹⁷ կայ առ քեզ
 վարդապետութիւնն՝ Բաղամուս, որ
 ուսոյց զԲաղակ զնել վայթակղութիւնս
 առաջի որդւոցն Իսրայելի, ուսել նո-
 15 ցա զոհեալ եւ սրտնկել: Այսպէս եւ
 զու ունիս զվարդապետութիւնն Նի-
 16 կողայեցեաց զոր ես ատեամ: Արդ ա-
 պաշխարեա, ապա թէ ոչ ¹⁸ զամ վաղ-
 վաղակի, եւ պատեցար զմեցոյց ընդ
 17 նոսս սրով բերանոյ իմոյ: Որ ունիցի
 ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ Հոպին
 ասէ առ եկեղեցիս. Որ յաղթէ՝ տաց
 նմա ուսել ի մանանայէն թաքուցելոյ,
 եւ տաց նմա ¹⁹ զղիրն սրբութեան՝,

¹ Գ-նն, զարեգակն որ ծագէ ի զօրութեան
 իւրում
² Գ-նն, որ կեամ
³ Ի Բաւոսն պատե
⁴ Կ-մ, տանել չարաց
⁵ Գ-նն, ոչ թուլացար
⁶ Գ-նն, ունիմ
⁷ Ի Զատին պատե
⁸ Գ-նն, զամ առ քեզ
⁹ Գ-նն, զմանս պատե
¹⁰ Գ-նն, ունիս զի ատես

¹¹ Գ-նն, Առաջինն եւ վերջինն
¹² Գ-նն, Գիտեմ
¹³ Գ-նն, այլ մեծատուն ես
¹⁴ Գ-նն, յորոց կրեցն իցես
¹⁵ Կ-մ, ոչ փնտեսցի
¹⁶ Գ-նն, որ սպանաւ ի միջն ձերում
¹⁷ Գ-նն, ունիս անդ զորս ունին զվարդապե-
 տութիւնն
¹⁸ Գ-նն, զամ առ քեզ
¹⁹ Գ-նն, իիճ սպիտակ

եւ զրեալ անուն նոր ¹ի գրին , զոր
 ոչ ոք զիտէ՝ բայց միայն որ անունն :
 18 Եւ առ հրեշտակն որ ի Թիւատրոյ
 եկեղեցին՝ զրեա . Այսպէս ասէ Որդին
 Աստուծոյ , որոյ անք իւր են իբրեւ
 զրոց հրոյ , եւ ոտք նորա նման պղնձի
 19 ծխելոյ . ²Տեսի զգործս քո եւ զսէր
 եւ զհաւատ եւ զպաշտօն քո ³համբե-
 րութեամբ , զի բազում է վաստակ քո
 20 վերջինն քան զառաջինն : Այլ ⁴ասեմ
 առ քեզ ⁵բազում . զի թողեր զկիրն
 զՅեզարէլ , որ ասէր զինքն մարգարէ ,
 եւ ուսուցանէր ⁶մտրութիւն զծա-
 21 ւայս իմ՝ պունկիլ եւ ուտել զզոհեալ ,
 եւ ետու ⁷նոցա ժամանակ ապաշխա-
 րել ⁸զպտոնկութիւնն իւրեանց եւ ոչ
 22 ապաշխարեցին : Ահաւասիկ ես ար-
 կանեմ զնա ⁹ի հնոց , եւ զգործակիցս
 իւր ընդ որս չնացաւ՝ ի նեղութիւնս
 մեծամեծս , եթէ ոչ ապաշխարեցն
 23 ի գործոց իւրեանց : Եւ զորդիս ¹⁰նո-
 ցա սպանից մահուամբ , եւ ծանիցն
 ամենայն եկեղեցիք թէ ես եմ որ յան-
 զիմանեմ զերիկամունս եւ զսիրտս ,
 եւ տամ ձեզ իւրաքանչիւր ըստ զոր-
 24 ծոց իւրեանց : Այլ ձեզ ասեմ , որք
 ի Թիւատիր էք եւ ոչ ունիք զվարդա-
 պետութիւնս զայս , որ ոչ ծանեայք
 զխսրս Սատանայի զոր խօսին , Ոչ
 25 արկից զձեւք այլ ծանրութիւն . Այլ
 զոր ունիք , պահեցէք մինչեւ ես գամ :
 26 Եւ ուր յաղթէ եւ պահէ զգործս իմ
 մինչեւ ցլախճան , տաց նմա իշխա-
 27 նութիւն ի վերայ ազգաց : Եւ հով-
 ուեացէ զնոսա զաւագանաւ երկա-
 թեաւ , եւ իբրեւ զանօթ բրտի փշրե-
 28 ցէ զնոսա : Որպէս եւ ես ընկալայ ի
 Հօրէ իմմէ , եւ տաց նոցա զաստղն
 29 առաւօտուն : Որ ունի ականջս՝ լուիցէ
 զինչ Հոգին ասէ առ եկեղեցիս :

ԳԼ. Գ

1 Եւ առ հրեշտակ Սարգիսցոց եկե-

¹Յ-յն , ի վերայ խճին
²Յ-յն , Գիտեմ
³Յ-յն , և զհամբերութիւն
⁴Յ-յն , ունիմ
⁵Ու-ւ+ , սակաւ . յայլ՝ պատե
⁶Յ-յն , և մտրեցուցանէր
⁷Յ-յն , նմա
⁸Յ-յն , ի պունկութենէ իւրմէ , և ոչ ապաշ-
 խարեաց
⁹Յ-յն , ի մահիւնս 10 Յ-յն , նորա

զեցւոյն զրեա . Այսպէս ասէ որ ունի
 զեւթն ¹¹Հոգին Աստուծոյ եւ զեւթն
 2 աստեղս . ²Տեսի զգործս քո զի անուն
 2 կենդանւոյ ունիս եւ մեռեալ ես : Լեր
 արթուն եւ հաստատեա ¹²այսուհետեւ ,
 զի հանդերձեալ ես՝ մեռանել . քանզի
 ոչ գտի զգործս քո կատարեալ առաջի
 3 Աստուծոյ : Արդ յիշեա թէ որպէս
 լուարն , եւ սլահեա եւ ապաշխարեա .
 ապա թէ ոչ զուարթանաս , գամ սր-
 պէս զող . եւ ոչ ¹³ոք իմանայ՝ զգա-
 4 լուստ իմ առ քեզ : ¹⁴Ունիս սակաւ
 մի զանուն Սարգիսցոցն՝ որք ոչ
 ազտեղացուցին զհանդերձս իւրեանց ,
 եւ ¹⁵չրջին ի սպիտակս որուում արժանի
 5 եղևն : Որ յաղթէ ¹⁶այսպէս զեղեցի
 սպիտակս , եւ ոչ ¹⁷ջնջեսցի անունն՝
 նորա ի զարութենէն կենաց . եւ խոս-
 տովանեցայց զանուն նորա առաջի
 Հօր իմոյ եւ առաջի ¹⁸հրեշտակաց :
 6 Որ ունի ականջս՝ լուիցէ զինչ ասէ
 Հոգին առ եկեղեցիս :
 7 Եւ առ հրեշտակն Փիղագեղփեաց ե-
 կեղեցւոյն զրեա . Այսպէս ասէ Սուրբն ,
 Ճշմարիտն՝ որ ունի զփականս Դաւթի .
 բանայ՝ եւ ոչ ոք է որ փակէ , եւ փակէ՝
 8 եւ ոչ ոք է որ բանայ . ²Տեսի զգործս
 քո . ահա ետու առաջի քո զուսն բայ-
 հալ , զոր ոչ ոք կարէ փակել . զի սա-
 կաւիկ ունիս զօրութիւն , եւ պահեցեր
 զբանս իմ , եւ ոչ ուրացար զանուն
 9 իմ : Ահաւասիկ ես տամ քեզ ¹⁹զժո-
 զովն Սատանայի , որք ասին զինքեանս
 Հրեայս գո՛ւ՝ եւ ոչ են , այլ ստին . ա-
 րարից զնոսա , զի եկեսցեն եւ երկիր
 պաղցեն առաջի օտից քոյ , եւ ծանի-
 10 ցեն զի ես սիրեցի զքեզ : Զի պահեցեր
 զբան համբերութեան իմոյ , եւ ես
 պահեցից զքեզ ի ժամ փորձութեան
 քո . որ հանդերձեալ է զալ յամենայն
 տիեզերս՝ փորձել զամենայն բնակեալս
 11 յերեսս երկրի : Ահա գամ վազլազակի .
 կալ զոր ունիսդ , զի մի՛ ոք ատցէ
 12 զպսակ քո : Որ յաղթէ՝ արարից զնա

¹¹Յ-յն , Հոգին
¹²Յ-յն , զմնացեալն որ հանդերձեալ են
¹³Ու-ւ+ , իմացիս
¹⁴Յ-յն , Այլ ունիս սակաւ անունս ի Սարգիկէ
¹⁵Յ-յն , չրջեսցեն ընդ իս ի սպիտակս , քանզի
 արժանի են
¹⁶Ու-ւ+ , նա ¹⁹Յ-յն , ի ժողովոյն
¹⁷Յ-յն , ջնջեցից զանուն
¹⁸Յ-յն , հրեշտակաց նորա

ԳԼ Ե

1 Եւ տեսի յաջոյ ձեռինն որ նստէր ի վերայ աթոռոյն զիրս գրեալ ներքոյ եւ արտաքոյ, եւ կնքեալ եւթն կնքով:

2 Եւ տեսի հրեշտակ մի զօրաւոր զի քարոզէր ի ձայն մեծ, Ո՞ է արժանի բանալ զգիրս եւ լուծանել զկնիք նո-

3 րա: Եւ ոչ ոք կարէր ոչ յերկինս եւ ոչ յերկրի եւ ոչ ի ներքոյ երկրի բա-

4 նալ զգիրսն, ՚՛գի ոչ տեսին զնա՞: Եւ ես լայի ուժգին զի ոչ ոք գտաւ ար-

5 Եւ մի յերիցանցն ասէ ցիս, Մի՛ լար. առեա՛սիկ յաղթեաց Առեւծն յազգէն Յուդայ յարմատոյն Դաւթի՛ բանալ զգիրսն եւ լուծանել Դեւթն կնիքսն

6 նորա: Եւ տեսի ի մէջ աթոռոյն եւ ի մէջ չորից կենդանեացն եւ ի մէջ ե-

7 ընդ ամենայն երկիր: Եւ Յեկն ընկալաւ՝ յաջոյ ձեռանէ նորա որ նստէր

8 ի վերայ աթոռոյն: Եւ յորժամ առ զգիրն, չորք կենդանիքն եւ քսան եւ չորք երիցունքն անկանէին առաջի Գառինն. եւ ունէին իւրաքանչիւր քնար եւ բուրվառ ոսկի յի խնկով:

9 որ է աղօթք սրբոցն: Եւ օրհնէին երգս նորա եւ ասէին, Արժանի ես առնուլ զգիրդ եւ ընկալ զկնիք դորա, զի զենար եւ զնեցեր զմեզ Աստուծոյ ար-

10 Եւ արարեր ՚՛զսոսա Աստուծոյ մերոյ ՚՛Թագաւորս եւ քահանայս՝ Թագաւո-

11 րել ի վերայ երկրի: Եւ տեսի, եւ լուայ զձայն հրեշտակաց բազմաց որք կային շուրջ զաթոռոյն եւ զչորիւք կենդանեօքն եւ ՚՛ղքահանայիւքն, եւ էր թիւն նոցա բերք ըիւրուք եւ հա-

12 զարք հաղարաց: Ասէին ձայնիւ մե-

13 Եւ արհնութիւնս եւ ամենայն արա-

14 Եւ արհնութիւնս եւ ամենայն արա-

զորութիւն եւ զպատիւ եւ զփառս
 13 եւ արհնութիւնս: Եւ ամենայն արա-
 րածք որ են յերկինս եւ ՚՛յերկրի եւ
 ի ծովու եւ որ ի նոսա՝ լուայ զի ա-
 սէին, ՚՛Որ նստի յաթոռն եւ Գառնն՝
 օրհնեալ, բարձրացեալ եւ փառաւոր-
 14 եալ՝ յաւիտեանս յաւիտենից: Եւ չորք
 կենդանիքն ասէին, Ամէն. եւ ՚՛երի-
 ցունքն անկանէին առաջի նորա եւ
 ՚՛Երկիր պագանէին՞:

ԳԼ Զ

1 Եւ տեսի զի երաց Գառնն՝ զմին
 12 յեւթն կնքոցն՞, եւ լուայ ի միոյ ի
 չորից կենդանեացն իբրեւ զձայն ո-

2 րոտման զի ասէր ՚՛Թէ Գամ՞: Եւ տե-

3 սի եւ ահա ձի սպիտակ, եւ որ հեծ-

4 եալն էր ի նմա՝ ունէր աղեղն, եւ
 տուաւ նմա պսակ, եւ ՚՛Եկն յաղթողն
 զի յաղթեցէ՞:

5 Եւ յորժամ երաց զկնիքն երկրորդ,
 լուայ յերկրորդ կենդանուոյն զի ասէր,
 6 ՚՛Գամ: Եւ ել այլ ձի կարմիր, եւ որ
 հեծեալն էր ի վերայ նորա՝ տուաւ նմա
 առնուլ զլսադադութիւն յերկրէ, զի
 զմիմեանս զենցեն, եւ տուաւ նմա
 սուր մի մեծ:

7 Եւ յորժամ երաց զկնիքն երրորդ,
 լուայ յերրորդ կենդանուոյն զի ասէր
 8 ՚՛Թէ Գամ՞: Եւ տեսի, եւ ահա ձի
 չրոտս, եւ որ նստէին ի վերայ նորա՝
 9 ունէր զՄահ՞, եւ Դժոխք երթային

1 Յ-ն, ե ոչ հայել ի նա
 2 Յ-ն, իբրեւ զենեալ
 3 Ո-ն, եկն եւ առ զգիրն
 4 Յ-ն, ի ժողովրդոց ե ի հեթանոսաց
 5 Ո-ն, զմեզ
 6 Ո-ն, Թագաւորութիւն եւ քահանայութիւն
 7 Յ-ն, զերիցամբքն

8 Բազմ-ի, յերկրի ե ի ներքոյ երկրի
 9 Յ-ն, Ա-նմ որ նստի յաթոռն եւ Գառնն
 օրհնութիւն եւ պատիւ եւ փառք եւ զօրութիւն
 10 Ո-ն, քսան եւ չորք երիցունք
 11 Ո-ն, երկիր պագանէին կենդանուոյն յաւիտեանս
 12 Ո-ն, ի կնքոցն
 13 ի Յ-ն, սահմ ի կ, այլ ի կ եւ տես
 14 ի Յ-ն, սահմ եւ յաղթող ե զի յաղթեցէ
 այլ եւ յաղթող ե յաղթեաց
 15 Յ-ն, կենդանեացն որ ասէր
 16 Յ-ն, անուն նմա Մահ

եւ 1 շնորհք Տեառն Աստուծոյ մերոյ |
 43 յաւիտեանս յաւիտենից : Ամէն : Եւ
 ասէ ցիս մի յերիցանց անտի , Սոքա
 որ զդեցեալ են զհանդերձս սպիտակս՝
 44 ո՞ք են , եւ 2 կամ ուստի՞ զան : Ես
 ասացի ցնա , Տէր , դու գիտես . եւ
 ասէ ցիս , Սոքա են որ զան ի վշտաց
 մեծաց , եւ լուացին զարկանելիս իւր-
 եանց եւ սպիտակացուցին արեամբ
 45 Գառինն : Վասն այնորիկ են առաջի
 անթոռոյն Աստուծոյ , եւ պաշտեն զնա
 զտիւ եւ զգիշեր ի տաճարի նորա , եւ
 որ նստի ի վերայ անթոռոյն՝ 3 բնակեալ
 46 է ի նոսա՝ : 4 Ոչ քաղցիցեն եւ 5 ոչ ծա-
 րաւիցեն , եւ ոչ մտիցիցէ նոցա ոչ ա-
 47 րեզակն եւ ոչ տօթ : 6 Եւ Գառնն ի
 միջոյ անթոռոյն 2 իւրոյ հովուեսցէ զնո-
 սա , եւ առաջնորդեսցէ նոցա 6 ի կենաց
 աղբեր ջրոյ կենդանւոյ . քանդի ե-
 հատ՝ Աստուած զամենայն արտօսր
 յաշաց նոցա :

ԳԼ Ը

1 Եւ յորժամ երաց զկնիքն եւ թնքերոյդ ,
 եղեւ լուծիւն յերկինս որպէս կէս
 2 ժամու : Եւ տեսի 7 հրեշտակս եւ թն՝
 որ առաջի Աստուծոյ կային . եւ տուաւ
 3 նոցա եւ թն փող : Եւ այլ հրեշտակ
 եկն եւ եկաց առ սեղանն , եւ ունէր
